ՄԱՐԴԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒՆ ԱՌՈՒՏԼԵՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԻ ՄԻՏԵԼԻՑ ԱՌՈՒՄՈՎ ԱՆՏԻԿԻ ՍԻՆԴՐԻ ԺԳ ԴԱՐ

Ձեր ԿԳՄՍՆ-ից ստացված նամակի
համաձայն տեղեկացնում ենք,
որ Ձորք համայնքում
հերթական ընտրություններ
չեն նշանակվել:

26.01.2021

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մենագրութիւնը հրատարակութեան է երաշխաւորել
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական խորհուրդը

Գրախօսներ՝ պատմական գիտ. դոկտոր Հայրապետ Մարգարեան,
պատմական գիտ. դոկտոր Ազատ Բոզոյեան

Տպագրւում է Գուրգէն Մելիքեանի՝ Քաշաթաղի բազմազաւակ ընտանիքների հիմնադրամի եւ «Փիւնիկ» բարեգործական հիմնադրամի մեկենասութեամբ

Ա 1063 30

ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՐՔԱՅԱՏՈՀՄԵՐՆ ՈՒ ԻՇԽԱՆԱՏՈՀՄԵՐԸ ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔՈՒՄ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔՈՒՄ ԱՆՏԻԿԻՑ ՄԻՆՉԵՒ ԺԳ ԴԱՐ

(ՊԱՏՄԱ-ԱՂԲԻՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ)

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹԻՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
ԵՐԵՒԱՆ – 2020

ALEKSAN HAKOBYAN

THE ROYAL AND PRINCELY HOUSES OF PROPER ALBANIA AND EASTERN REGIONS OF ARMENIA FROM ANTIQUITY TO THE 13TH CENTURY
(HISTORICAL AND SOURCE STUDY EXAMINATION)

АЛЕКСАН АКОПЯН

ЦАРСКИЕ И КНЯЖЕСКИЕ РОДЫ СОБСТВЕННО АЛБАНИИ И ВОСТОЧНЫХ КРАЕВ АРМЕНИИ С АНТИЧНОСТИ ДО XIII ВЕКА
(ИСТОРИКО-ИСТОЧНИКОВЕДЧЕСКИЙ АНАЛИЗ)

YEREVAN – ЕРЕВАН
2020

ԳՈՒՐԳԷՆ ՄԷԼԻՔԵԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՒԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ՓԻՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՈՒՌԵՆԻ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ. Բ

Գիրքը հեղինակը կարօտով նուիրում է իր գիտական ու քաղաքական մարտակից ընկեր եւ «Ուռենի» հայագիտական մատենաշարի նախաձեռնող Համբարձում Գալստեանի (1955-1994) անանց յիշատակին:

«...եթէ բախտ ունենամ մէկ անգամ էլ ծնուել ու մարդու տեսքով աշխարհ գալ, ապա այդ բոլոր յիմարութիւնները թողնելու եմ ու միայն պատմութեամբ եմ զբաղուելու...»

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱԼՍՏԵԱՆ

1992 թ.

ՀՏԴ 930.2:94(479.25)
ԳՄԴ 63.2+63.3(5Հ)
Յ 251

Յ 251 ՅԱԿՈԲԵԱՆ ԱԼԵՔՍԱՆ

Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԴ դար (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն) / Ալեքսան Յակոբեան, – ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, Երեւան, 2020.- 440 էջ + 2 ներդիր։

Մենագրութեան մէջ քննութեան են առնուած աշխարհագոյցեան Հայաստանի Արցախ եւ Ուտիք նահանգների, ինչպէս նաեւ յարակից Բուն Աղուանք երկրի չորս հիմնական հայկական իշխանատոհմերի (Խաչէնի, Փառիսոսի, Գորոգուի եւ Շաքիի) ծագման, պատմութեան եւ ճիւղագրութեան հարցերը վաղ շրջանից մինչեւ զարգացած միջնադարի ժամանակաշրջան, երբ նրանք վերածուեցին նաեւ արքայատոհմերի։ Յատուկ ուշադրութեան առարկայ են դարձել քննարկուած հիմնահարցերի գրաւոր եւ վիմագիր սկզբնաղբիւրները, որոնց մեծ մասը հեղինակը վերջին տարիներին հրատարակել է գիտա-քննական բնագրերով։ Նորովի են ներկայացուած նաեւ պատմաաշխարհագրական եւ էթնիկական պատմութեան յարակից հարցերը։ Հետազօտութեան յաւելուածներում տրուած են քարտէզներ, յատակագծեր, տոհմածառեր եւ գրչանկարներ։

Աշխատանքը նուիրուած է հեղինակի գիտական եւ քաղաքական մարտակից ընկերոջ՝ Համբարձում Գալստեանի (1955-1994) յիշատակին եւ տպագրւում է որպէս վերջինիս յղացած «Ուռենի» հայագիտական մատենաշարի Բ հատոր (մատենաշարի Ա հատորով 2006 թ. հրատարակուել է Կարէն Իւզբաշեանի «Հայագիտութեան ներածութիւն» մենագրութիւնը)։ Այն նախատեսուած է պատմաբանների, բանասէրների, ինչպէս նաեւ ընթերցող լայն շրջանակների համար։

ՀՏԴ 930.2:94(479.25)
ԳՄԴ 63.2+63.3(5Հ)

ISBN 978-5-8080-1413-8

© Գուրգէն Մէլիքեանի՝ Քաշաթաղի բազմազաւակ ընտանիքների հիմնադրամ, 2020
© ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2020
© Ալեքսան Յակոբեան, 2020

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

428 թ. Իրանի արքայից արքայ Վռամ (Վարահրան, Բահրամ) Ե Գուրն իր մի հրամանագրով վերացրեց Արշակունեաց թագաւորութիւնը դեռ 385 (կամ 387) թուականին Հռոմէական կայսրութեան ու Սասանեան Պարսկաստանի միջեւ բաժանուած՝ հազարամեայ անկախ պետականութիւն ունեցող Մեծ Հայքի արեւելեան հատուածում, եւ մարզպանութեան վերածուած Արմն/Հայք երկրից կտրելով նրա հիւսիս-արեւելեան Ուտիք նահանգը՝ ընդգրկեց այն իր տէրութեան նորաստեղծ մարզպանութիւններից միւսի կազմում, որն ստացել էր «Առան» անունը (տարբերակները՝ «Աղուանք», «Ալբանիա», «Ռան», «Ռանի»): Նրա որդի Յազկերտ Բ արքայից արքան 449-451 թթ. իր հակաքրիստոնեական հալածանքների շրջանում նոյն մարզպանութեան մէջ մտցրեց նաեւ Ուտիքի հարեւան Արցախ հայկական նահանգը: «Առան» – «Ռան» անունը Սասանեանները վերցրել էին Վռամ Ե-ի նոյն հրամանագրով այդ մարզպանութեան մի մասը դարձուած Բուն Աղուանքի (անտիկ Ալբանիայի՝ Կապաղակ մայրաքաղաքով) թագաւորութեան անուանումից, որը ձեւաւորուել էր Ք. ա. Ա դ. սկզբներին՝ տարածուելով Կուր գետի ստորին հոսանքից հիւսիս, մինչեւ Կովկասեան լեռնաշղթան՝ դէպի Կասպից ծով իջնող նրա Դերբենդի (Ջալգանի) լեռնաբազուկով. այդ թագաւորութիւնն իր նոր՝ Արշակունեաց արքայատոհմով գոյատեւեց նաեւ մարզպանութեան կազմում եւ վերացուեց Կաւատ արքայից արքայի հրամանագրով, ենթադրաբար՝ 523 թ.:

Ե դ. առաջին կէսի այս վարչական փոփոխութիւններից յետոյ Հայաստանի հիւսիս-արեւելեան Արցախ եւ Ուտիք աշխարհների ու Կուրի ձախափնեայ Բուն Աղուանից երկրի (որի լեզգիալեզու աղուանական ցեղերի էթնոհամախմբման գործընթացը կանգ առաւ մետաէթնիկ ընդհանրութեան մակարդակի վրայ՝ այդպէս էլ չաւարտուելով միասնական էթնոսի կազմաւորմամբ) ճակատագրերը մի քանի դար շարունակ՝ մինչեւ զարգացած միջնադար, ընթացան նոյն հունով եւ այդ նոյնականութիւնը որոշ չափով պահպանեցին նաեւ ուշ միջնադարում ու նոր ժամանակներում: Աղուանք/Առան մարզպանութեան մէջ, որի քրիստոնեայ բնակչութեան վրայ տարածւում էր «հաւասարների մէջ առաջինի» կարգավիճակ ունեցող Հայոց կաթողիկոսութեանը յայտնի չափով ենթակայ, բայց այնուամենայնիւ առանձին հոգեւոր կառոյց՝ Աղուանից եկեղեցու իրաւազօրութիւնը, հասարակական ու մշակութային զարգացումներն ընթանում էին համախմբման միտումներով: Սակայն Մաշտոցի եւ աղուան վարդապետ Բենիամինի ջանքերով ստեղծուած աղուանից գիրն ու գրաւոր մշակոյթը համեմատաբար սահմանափակ զարգացում ունեցան, եւ շուտով, յատկապէս Զ դարում Աղուանքի վարչական ու հոգեւոր կենտրոնների՝ Կուրի էթնիկապէս հայկական աջափնեակ (նորակառոյց Պարտաւ մայրաքաղաք) տեղափոխուելուց յետոյ, այդ երկրի քրիստոնեայ հասարակութեան զարգացումն ընթացաւ առաւելապէս հայկական գրաւոր մշակոյթի հիմնաբազայի վրայ:

Արաբական խալիփայութեան տիրապետութեան տակ յայտնուած Արեւելեան Այսրկովկասում մահմեդականութեան տարածման դարաշրջանում աղուանական մետաէթնիկ ընդհանրութեան քրիստոնեայ մնացած հատուածը վերջապէս համախմբուեց իբրեւ «ուդիներ» (նաեւ՝ ուտիներ) ինքնանուամբ միասնական էթնոս, իսկ մահմեդականացած հատուածի գերակշիռ մասն՝ իբրեւ «լեզգիներ» ինքնանուամբ էթնոս-ժողովուրդ (պահպանուեցին նաեւ մի քանի փոքր մահմեդական եւ լեզգիալեզու ժողովուրդներ՝ թաբասարանցիներ, ծախուրներ, ռութուլներ, ագուլներ, բուդուղներ, կռիզներ, խինալուղցիներ եւն)։ Քրիստոնեայ աղուանական զանգուածի արեւմտեան հատուածում (Հերէթ) նաեւ լայն թափով ընթացաւ վրացիացումը, իսկ արեւելեան մահմեդականացած հատուածում (Շիրուան)՝ պարսկացումը, որը ԺԹ դարում աւարտուեց «թաթեր» անուամբ էթնոսի ձեւաւորմամբ (բայց նաեւ՝ որոշ մասի թիւրքացմամբ-ադրբեջանացմամբ)։ Ցընթացս հնարաւոր է արձանագրել նաեւ քրիստոնեայ աղուանական զանգուածի ինչ-որ մասի հայացման գործընթաց (հիմնականում՝ էթնոհամախմբուած ուդիների գործառամարզից (արեալից) արեւելք ընկած շրջաններում՝ «հայ թաթեր» եւն)։ Միասնական մարզպանութիւն-«երկրում» բնակուելը, անշուշտ, նպաստում էր նաեւ ժողովրդագրական տեղաշարժերի համեմատաբար բարձր ինտենսիւութեանը՝ յանձին արցախ-ուտիքցի հայերի յաճախակի տեղափոխութեան Կուրից հիւսիս եւ ուդիների տեղափոխութեան այդ գետի աջափնեակ (արձանագրուած առաւելապէս նախալեռնային եւ դաշտաբերանի շրջաններում՝ Գիւլիստան, Սարովի գիւղախումբ)։

Սասանեան Իրանի նորաստեղծ մարզպանութեան «Աղուանք» երկրանունը, որը հայերէնի յոգնակի -Ք իւրայատուկ վերջածանցի շնորհիւ նշանակում էր հաւասարապէս ե՛ւ տուեալ երկիրը, ե՛ւ նրա բնակիչներին, արդէն Ե դարի վերջերին լիովին ընդունուեց նաեւ Կուրի աջափնեակի էթնիկապէս հայ բնակչութեան կողմից իբրեւ «սեփական» երկրի անուանում։ Միջնադարեան աղբիւրները, իրենց դարաշրջանի աշխարհընկալմանը բնորոշ չափանիշներով, հազուադէպ են յատուկ արձանագրում տուեալ կոնկրետ տարածքի էթնիկ դէմքը (յայտնի բացառութիւններով, որոնք շատ կարեւոր են մեր օրերի ազգագրագէտ-պատմաբանի համար)՝ լիովին բաւարար համարելով երկրանուան, այս դէպքում՝ «Աղուանք»-ի նշումը (սեռականով՝ «Աղուանից»)։ Զուգահեռաբար նաեւ Բուն Աղուանքի վրայ էր տարածւում «Արեւելք» անուանումը (սեռականով՝ «Արեւելից», ի վերջոյ դասականացուած՝ իբրեւ «Հայոց Արեւելից կողմանք»), որն սկզբնապէս վերաբերում էր միայն Մեծ Հայքի հիւսիս-արեւելեան կողմերին՝ Արցախ-Ուտիքին։ Նման իւրայատուկ եզրութաբանութիւնը շատ դէպքերում յանգեցնում էր լուրջ շփոթութիւնների, ինչն առանձնապէս արտայայտուեց նոր ժամանակների ազգագրական մշակումներում, սակայն նոյն արդիւնը (էֆեկտը) ունէր դեռեւս միջնադարում։ Մեր դէպքում այս գործօնն իր յայտնի «բացասական» արտայայտութիւնը գտաւ Ժ դարավերջի արցախցի հայ պատմիչ Մովսէս Դասխուրանցու մօտ, ով, ելնելով աւատական մասնատուածութեան խորացման շրջանում իր հայրենի երկրամասի հայ աշխարհիկ եւ եկեղեցական վերնախաւի կենտրոնախոյս ձգտումներից (Անիի

Բագրատունիների ու Հայոց գերակայ կաթողիկոսների հանդէպ) եւ դասային շահերից՝ փորձեց ուղղակի «ստեղծել» իր «Արեւելեայց» կամ «Աղուանք» երկրի պատմութիւնը, որի ակունքն ու կենտրոնը նա, գիտակցաբար կամ թիւրընկալմամբ անտեսելով վաղմիջնադարեան աւանդոյթը՝ համարում էր հայկական աջափնեակը: Այդ դարաշրջանի հասարակական միտումները գրեթէ դարձել էին էթնիկ միասնութեանը սպառնացող՝ հայ ազգի էթնոմասնատման (էթնոսեպարացիայի) եղանակով դուստր հայալեզու էթնոսի ձեւաւորման իրական վտանգով, որը, սակայն, յաջողուեց յաղթահարել արդէն յաջորդ՝ ԺԱ դարի ընթացքում:

1860-ական թթ. Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի հրատարակումից յետոյ («Կաղանկատուացի» անուամբ)[1] մասնագէտները համարեցին, որ, հետեւելով նորայայտ «տեղացի» հեղինակի վերոնշեալ պատկերացմանը՝ կարիք կայ սրբագրելու անտիկ եւ վաղմիջնադարեան աւանդոյթից բխող նախկին գիտական դրոյթը, ըստ որի՝ մինչեւ Սասանեանների կողմից 428 թ. Մեծ Հայքի թագաւորութեան վերացումը էթնիկ Ալբանիա/Աղուանքը տեղորոշւում էր լոկ Կուրից հիւսիս[2]: Ի դարի առաջին կէսի գիտնականները շտապողաբար հակուեցին այն մտքին, թէ Կուրի աջ ափին էլ նախապէս բնակուել են բուն-աղուանական ցեղեր, որոնք երկար ժամանակ ապրելով Հայոց պետութեան մէջ՝ ինչ-որ պահի, գուցէ՝ մինչեւ Ե դարը (կամ աւելի ուշ՝ վաղ միջնադարում) հայացել են: Սակայն Ի դարի երկրորդ կէսի հայագիտական-կովկասագիտական աշխատանքներում յստակ ցոյց տրուեց, որ իրապէս տեղի է ունեցել ոչ թէ աջափնեայ երեւակայական կովկասալեզու բնակչութեան ուծացում հայ էթնոսի մէջ, այլ ընդամենը՝ վարչական վերափոխումներից յետոյ «Աղուանք» անուան տարածում նաեւ բնիկ հայկական աջափնեակի վրայ: Նոյն շրջանում ադրբեջանական պատմագրութիւնը, քաղաքական յայտնի պատճառներով, ամեն գնով ձգտում էր ոչ միայն կառչած մնալ հին տեսակէտին, այլեւ գիտական հանրութեանը փաթաթել այն յիրաւի «գիւտը», իբրեւ թէ Արցախի եւ Ուտիքի բնակչութիւնն «ուծացել-հայացել» է շատ աւելի ուշ՝ լոկ ԺԹ դ. սկզբին, Գանձասարի կաթողիկոսութեան վերացումից յետոյ:

---

[1] **Մովսեսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1860; Պատմութիւն Աղուանից՝ արարեալ **Մովսիսի Կաղանկայտուացւոյ**, Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք **Կ. վրդ. Շահնազարեան**, Փարիզ, 1860; История Агван **Моисея Каганкатваци**, писателя X века, Пер. с армянского [**К. Патканяна**], СПб., 1861. Քննական բնագիրն է. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածությունը՝ **Վ. Առաքելյանի**, Եր., 1983 (յետայսու՝ **Դասխ.**): Ժ դարավերջին Մովսէս Դասխուրանցու շարադրած «Պատմութիւն Աղուանից» երկի մասին մանրամասն տե՛ս **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970; The History of the Caucasian Albanians by **Movsēs Dasxurançi**, Translated by **C. J. F. Dowsett**, London, Oxford University Press, 1961, p. XI-XX; **А. А. Акопян**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 150-272.

[2] Տե՛ս, օր.՝ ԺԹ դ. առաջին կէսի հեղինակ Աբասկուլի-Աղա Բաքիխանովի մօտ. «*Շիրւան մարզի սահմաններն են. արեւելքից՝ Կասպից ծովը; հարաւ-արեւմուտքից՝ Կուր գետը, որը բաժանում է այն Հայաստանից եւ Մուղանից; հիւսիս-արեւմուտքից՝ Կանըկ գետը (Ալազան)...*» (**А. Бакиханов**, Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 3, հմմ. նաեւ էջ 8-9, 26):

Արցախեան ազատագրական իրադարձութիւններից եւ յայտնի քաղաքական փոփոխութիւններից յետոյ նշուած հակագիտական միտումները, որոնք իրաւացիօրէն ընդհանրացուել են «բունիաթովականութիւն» դիպուկ եզրոյթի տակ, էլ աւելի են խորացել՝ հասնելով պատմական աղբիւրների տուեալների անսքող խեղաթիւրման (սկզբնաղբիւրների հրատարակութիւն՝ այն հատուածների դուրսնետումով, որտեղ ներկայացուած է հակառակ պատկերը, բնագրերի զաւեշտալի փոփոխութիւն, եզրութաբանութեան աղճատում, հիմնազուրկ պնդումների տարափներ եւն)։ Գրականութեան մէջ մատնանշուած է նաեւ «բունիաթովականութեան» նպատակադրումը՝ հայերին եւ Ադրբեջանի Հանրապետութեան միւս փոքր ազգութիւնների ներկայացուցիչներին «զրկել» հայրենի երկրում բնակուելու պատմական շարժառիթից (մոտիւացիայից), նրանց մէջ ներարկել եկուորի ու ադրբեջանցիների «տնուորի» հոգեբանութիւն, անլիարժէքութեան մի զգացում, որը պիտի բացառէր ոչ ադրբեջանցի քաղաքացիների՝ սեփական էթնո-մշակութային կեանքը լիարժէք կազմակերպելու հեռանկարը, քանի դեռ նրանք չեն լուծուել ադուանակիր ազգութեան մէջ կամ հեռացել իբրեւ թէ «ուրիշի» երկրից[1]։ Այս կապակցութեամբ, անշուշտ, պիտի նաեւ արձանագրել, որ Ադրբեջանի պետական քարոզչամեքենայի լրջագոյն ճնշումներին (ուղեկցուած՝ մտաւորականութեան ուղիղ հալածանքներով) հայ մասնագէտները եւ տեղի հայութիւնը կարողացել են դիմակայել ըստ արժանւոյն։ Եթէ միւս ազգութիւնները, յատկապէս մահմեդական կրօնի հետեւորդները մեծ մասամբ դարձան քարոզչական դաժան պատերազմի զոհը՝ հասնելով կիսաուծացուած վիճակի, ապա հայերի դէպքում (որոնց խնդիրը Արցախի Հանրապետութեան տարածքից դուրս Ադրբեջանը կարողացաւ լուծել լոկ ուղղակի ցեղասպանութեան ու բռնագաղթեցման ճանապարհով) դիմակայութեան մեխանիզմն ապահովեց է՛ւ տեղաբնիկ ժողովրդի ֆենոմենալ հաւատարմութիւն իր ազգային էութեանը, է՛ւ անհաշտ պայքար բունիաթովականների պատմական խեղաթիւրումների դէմ հայ մասնագէտների կողմից՝ Յակոբ Անասեան, Աստուր Մնացականեան, Բագրատ Ուլուբաբեան եւ ուրիշներ։ Վերջին-

---

[1] Հմմ., օր.՝ **П. М. Мурадян, Г. Х. Саркисян**, "Буниятовщине" не видно конца, – В кн.: **П. М. Мурадян**, История – память поколений. Проблемы истории Нагорного Карабаха, Ер., 1990, с. 146-158; **Г. С. Асатрян, Н. Х. Геворгян**, Азербайджан: принцип присвоения и иранский мир, Ер., 1990; **Հ. Լ. Պետրոսյան**, Մշակութային էթնոցիդն Արցախում (մշակութային ժառանգության բռնայուրացման մեխանիզմը), – Ադրբեջանի պետական ահաբեկչությունը եւ էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ. 2010 թ. Մարտի 21-24-ը Ստեփանակերտում եւ Շուշիում կայացած միջազգային գիտա-գործնական կոնֆերանսի զեկուցումներ. «Կաճառ» ԳԿ-ի տարեգիրք, 4, Շուշի, 2010, էջ 137-149; **Ա. Ց. Յակոբեան**, Բունիաթովականների «յայտնագործութիւնները» հայ միջնադարեան պատմութեան մէջ (Շաքիի տեղորոշման օրինակով) որպէս Ադրբեջանի հակահայկական քաղաքականութեան դրսեւորում, – Ադրբեջանի պետական ահաբեկչությունը եւ էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ..., «Կաճառ» ԳԿ-ի տարեգիրք, 4, Շուշի, 2010, էջ 172-187; **Հ. Ս. Սվազյան**, «Ուշ աղվաններ» առասպելը, – «ՎԷմ» համահայկական հանդէս, 2009, թիւ 3 (28), էջ 129-140; **Б. А. Арутюнян**, Фальсификация на государственном уровне, – «ՎԷմ» համահայկական հանդէս, 2010, թիւ 4 (32), էջ 24-57:

ներս հանդէս եկան իբրեւ սեփական հայրենիքի բոլոր դարերի պատմութեան ու մշակոյթի պաշտպանութեան իսկական մարտիկներ (կարելի է ասել՝ պատմական հայրենիքի սահմանապահներ) եւ, ըստ էութեան, կարողացան կասեցնել «բունիաթովականութեան» արմատաւորումը միջազգային պատմագիտութեան մէջ (որի վրայ այս կամ այն չափով յենւում է համաշխարհային քաղաքականութիւնը):

Այնուամենայնիւ, ներկայումս էլ չափազանց արդիական են Կովկասեան Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանք երկրամասի անկողմնակալ ու խորը հետազօտութիւնները: Դա իրօք մեր օրերի հայագիտութեան եւ կովկասագիտութեան կարեւոր բնագաւառներից մէկն է, որի ուսումնասիրութիւնն անհրաժեշտ է կատարել թէ՛ լայնութեամբ, այսինքն՝ աղբիւրագիտական նորանոր, այդ թւում՝ նորայայտ մատենագրական, վիմագրական եւ հնագիտական նիւթերի ընդգրկումով (նաեւ՝ մասսայականացումով), եւ թէ՛ խորութեամբ, այսինքն՝ այդ նիւթերի հետազօտութեան մակարդակը մշտապէս պահելով դասական եւ ժամանակակից գիտութեան տեսական մշակումների ճշմարիտ բարձրութեան վրայ:

Հին ու միջնադարեան հայ եւ օտար մատենագիրների գլխաւոր առանձնայատկութիւնը, թերեւս, այն է, որ նրանք սեփական ու օտար հասարակութիւնների եւ ժողովուրդների պատմութիւնը ներկայացնում են գերազանցապէս տիրակալների ու տիրապետող դասի կենցաղավարութեան նկարագրութեան ձեւով: Նոր դարաշրջանի պատմագիտութիւնն իր առջեւ, բնականաբար, դնում է հին հասարակութիւնները, պետութիւններն ու էթնոսները շատ աւելի լայն ընդգրկումով պատկերացնելու եւ հետազօտելու խնդիրներ, սակայն ոչ պակաս գիտական կարեւորութիւն է վերագրում հէնց տիրապետող դասակարգերի, այդ թւում՝ իշխանական եւ արքայական տոհմերի համակողմանի հետազօտութեանը: Ակնյայտ է, որ ամեն մի ժամանակաշրջանի ներքին ու արտաքին քաղաքական «մակընթացութիւններն ու տեղատուութիւնները» համարժէք արտացոլում են գտել բոլոր հասարակութիւնների (տուեալ դէպքում՝ նաեւ Հայաստանի ու հարեւան այսրկովկասեան երկրների)՝ նախ եւ առաջ իշխող վերնախաւի, աշխարհիկ ու հոգեւոր աւագանու ներկայացուցիչների կեանքում ու ճակատագրում: Միւս կողմից՝ առաւել մեծ չափով հէնց նրանց կենսավճակով, սեփական շահերի ու տնտեսական խնդիրների ընկալումով, ազգային-մշակութային եւ գաղափարախօսական մղումներով ու արած գործերով է պայմանաւորուած եղել տուեալ հասարակութեան, պետութեան եւ ժողովրդի ճակատագիրը իւրաքանչիւր պատմական ժամանակաշրջանում: Ինչպէս գրում է խնդիրը յատուկ ուսումնասիրութեան առարկայ դարձրած Հայրապետ Մարգարեանը, «Պատմութեան շրջադարձային պահերին հայ աւատատէրերի այդ շերտն է առաջին հերթին կողմնորոշուել եւ մշակել (ազգային եկեղեցու ղեկավարութեան մասնակցութեամբ) հայոց քաղաքական ուղեգիծը»[1]:

---

[1] **Հ. Գ. Մարգարյան**, Ռազմաքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արեւելքում եւ հայ ավատատիրական ավագանին ԺԲ դարում – ԺԴ դարի առաջին կեսում, Պատմ. գիտ. դոկտորի ... ատենախոսության սեղմագիր, Եր., 1996, էջ 4: Հմմ. **Նոյնի**՝ Տիրապետող դասակարգը Հայաստանում XII-XIII դարերում, – ՊԲՀ, 1990, հմր 4, էջ 36-46:

Վերը նշուած հանգամանքների լոյսի ներքոյ զարգացած միջնադարի, այսինքն՝ աւատական մասնատուածութեան դարաշրջանի Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց արքայատոհմերի եւ իշխանատոհմերի ուսումնասիրութիւնը, նրանց ծագման, կառուցուածքի, էթնիկ պատկանելութեան ճշգրիտ վերհանումն ու զարգացման առանցքային ուղղութիւնների գիտական քննութիւնը կարելի է համարել հայագիտութեան եւ կովկասագիտութեան առաջնահերթ խնդիրներից մէկը: Ընդ որում պարզ է, որ այդ խնդրի ամբողջական լուսաբանումը հնարաւոր չէ առանց՝ գոնէ իբրեւ յետնախորք՝ նախորդող ժամանակահատուածի պատմական իրողութիւնների լիարժէք վերհանման: Նշուած հանգամանքներն էլ պայմանաւորել են սոյն մենագրութեան ժամանակագրական սահմանները: Դրանք ընդգրկում են անտիկ, վաղ միջնադարի եւ զարգացած աւատատիրական յարաբերութիւնների դարաշրջանները, թէկուզ եւ ընկալելի ծաւալի մէջ հնարաւոր է կատարեալ մանրակրկիտութիւնն ապահովել հէնց այս մենագրութեան համար առանցքային ժամանակի՝ Թ-ԺԳ դարերի իրողութիւնների համար: Դա երկարատեւ, բարդ ու տարաբնոյթ հարցադրումներ պարունակող ժամանակաշրջան է (շուրջ մէկուկէս հազարամեակ), բայց միայն այդ բոլոր՝ պատմա-քաղաքական, բանասիրական-լեզուաբանական, պատմաաշխարհագրական, ազգագրական, մատենագրական, վիմագրագիտական, տոհմաբանական եւ անգամ անձնաբանական (պրոսոպոգրաֆիկ) հարցադրումների հնարաւորինս սպառիչ գիտական քննութիւնն ու լուծումներն են ապահովում ճշգրիտ պատկերացումներ Թ-ԺԳ դարերի Հայոց Արեւելից կողմանց եւ յարակից երկրամասերի աւատատոհմերի վերաբերեալ: Դրանով էլ պայմանաւորուած է ներկայ աշխատանքի նպատակների ու խնդիրների բաւականին լայն շրջանակը:

Վերջին մէկուկէս տասնամեակի ընթացքում Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց էթնո-քաղաքական պատմութեանն ու պատմական աշխարհագրութեանը վերաբերող հետազօտութիւններին զուգահեռ մեր ուշադրութիւնը մեծապէս սեւեռուած է եղել մատենագրական աղբիւրների գիտա-քննական բնագրերի կազմման եւ վիմագրական նորայայտ նիւթերի վերծանութեան ու հրատարակման վրայ: Այդ աշխատանքներն առնչուել են ե՛ւ հայ դասական մատենագրութեան երկերին (Փիլոն Տիրակացու «Ժամանակագրութիւն»-ը, Յովհան Մամիկոնեանի «Պատմութիւն Տարաւնոյ» երկը, Յովհան Օձնեցի կաթողիկոսի կազմած «Կանոնագիրք Հայոց»-ը, Մաշտոց Եղիվարդեցու «Պատմութիւն»-ը, է դարի անանուն հեղինակի «Աշխարհացոյց»-ը եւն), ե՛ւ վաւերագրերին ու կանոնական փաստաթղթերին («Գահնամակ», «Ջօրանամակ», Աբրահամ Աղբաթանեցի, Եղիա Արճիշեցի կաթողիկոսների եւ այլ «Թղթեր», եկեղեցական ժողովների հաստատած կանոնախմբեր, այդ թւում՝ Աղուանից Վաչագան Բարեպաշտ թագաւորի հրաւիրած Աղուէնի ժողովի կանոնները), ե՛ւ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից» երկում բառացի արտագրութեամբ պահպանուած եւ արցախեան ծագում ունեցող մեծ ու փոքր ծաւալով բազմաթիւ երկերի գիտական բնագրերի կազմմանը («Վաչագանի վէպ», Անանուն Կաղանկատուացու «Վիրոյ կաթողիկոսի

պատմութիւն», «684 թուականի պատմութիւն» են), ե՛ւ նորայայտ կամ նորովի ու ճշգրիտ ընթերցուած վիմագրերին: Այդ բնագրերի բանասիրական վերլուծութիւնը, որոշ դէպքերում հեղինակների ու գրութեան ժամանակի պարզաբանումը, ձեռագրածառերի կազմումը եւ նոր աղբիւրագիտական նիւթի ընթացիկ պատմամշակութային ծանօթագրումներն, անշուշտ, կարող են դասուել մերօրեայ պատմագրութեան գիտական նորոյթների շարքին: Բայց միաժամանակ՝ աղբիւրագիտական այդ էապէս նոր ծաւալը հնարաւորութիւն տուեց ամբողջապէս նորովի ընկալել ու գնահատել գրականութեան մէջ վաղուց արծարծուող բազմաթիւ իրողութիւններ, այդ թւում՝ Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոհմերի ու արքայատոհմերի ուսումնասիրութեան բնագաւառում:

Նշուած բնագաւառը վաղուց գրաւել է նոր ժամանակների գիտութեան ուշադրութիւնը: Դեռեւս ԺԹ դ. վերջերին նրան վերաբերող մշակումներն իր երեք աշխատութիւններում ամբողջացրել է Մակար եպ. Բարխուդարեանցը[1]: 1900-ական թթ. նրա ներկայացրած պատկերի ճշգրտմանը ձեռնարկեց Կարապետ եպ. Տէր-Մկրտչեանը[2]: Մի քանի տարի անց իրենց հիմնարար աշխատանքները տպագրեցին Նիկողայոս Ադոնցը[3] եւ Գարեգին Յովսէփեանը[4]: Այնուհետեւ խնդրոյ առարկայ իշխանատոհմերին վերաբերող հարցադրումներն էապէս ճշտուեցին Սեդրակ Բարխուդարեանի ընդարձակ յօդուածում, որը, ցաւօք, լոյս տեսաւ յետմահու[5]: Դրան յաջորդեց Բագրատ Ուլուբաբեանի հիմնարար մենագրութիւնը, որտեղ աղբիւրագիտական աւելի համակարգուած նիւթերի, յատկապէս՝ ամբողջական վիմագրական դիւանների եւ յիշատակարանների ժողովածոների մատուցած նիւթի հիման վրայ բազմաթիւ ճշտումներ մտցուեցին նախորդող պատկերացումներում[6] (աւելի ուշ դրանցում նոր ուղղումներ կատարեց Գեղամ Կիրակոսեանը)[7]: Գրեթէ նոյն ժամանակ խնդրոյ առարկայ իշխանատոհմերի շատ մանրակրկիտ տոհմա-

---

[1] **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին-Դաղստան), Թիֆլիս, 1893; **նոյնի՝** Արցախ, Բագու, 1895; **նոյնի՝** Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, Վաղարշապատ, 1902, հտ. Բ, Թիֆլիս, 1907:

[2] **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1914:

[3] **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, – Պատմական ուսումնասիրութիւններ, Լոյս ընծայեց **Ա. Խոնդկարեան**, Պարիս, 1948: Տե՛ս նաեւ նրա նախորդ գործերը. **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарскаго строя, СПб., 1908 (վերահրատ.՝ Ер., 1971, աշխարհաբար թարգմ.՝ Եր., 1987); **նոյնի՝** Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, – «Անահիտ» (Փարիզ), 1939, հմր 3, 4-5, 6 եւ 1940, հմր 1-3:

[4] **Գ. կաթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969 (3 պրակով առաջին հրատարակութիւնը՝ Վաղարշապատ, 1928, Երուսաղէմ, 1942 եւ Նիւ-Եորք, 1943):

[5] **Ս. Գ. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանութիւնները IX-X դարերում, – ՊԲՀ, 1971, հմր 1, էջ 52-76: Հմմ. նաեւ յատուկ գլուխները հեղինակի յետմահու հրատարակուած մենագրութեան մէջ. **С. Бархударян**, Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, Научн. редакторы **А. Акопян** и **К. Асатрян**, Ер., 2011.

[6] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975:

[7] **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386-1500 թթ.), Եր., 1997:

բանական աղիւսակներ ներկայացրեց եւրոպացի գիտնական Կիրիլ Թումանովը[1]: Վերջերս համեմատաբար աւելի ճշտուած աղիւսակներ կազմեց ու հրատարակեց Արմէն-Քլօդ Մութաֆեանը, ով արդէն որոշ չափով օգտագործել է նաեւ մեր վերջին տարիների մշակումները[2]: Իհարկէ, զուգահեռաբար հարկ է նշել նաեւ հարեւան արքայատոհմերին ու իշխանատոհմերին (Լօռու եւ Տաւուշի Բագրատունիներ, Օրբէլեաններ, Զաքարեաններ, Վահրամեաններ եւն) նուիրուած աշխատանքների ի յայտ գալը Կարօ Ղաֆադարեանի, Գրիգոր Գրիգորեանի, Ռաֆայէլ Մաթեւոսեանի, Համլետ Մկրտումեանի, Արտաշէս Շահնազարեանի, Հայրապետ Մարգարեանի եւ այլոց հեղինակութեամբ[3]:

Սակայն, ինչպէս նշեցինք, վերջին տարիների նորայայտ աղբիւրագիտական նիւթը անհրաժեշտութիւն առաջացրեց նորովի ձեռնարկել ամբողջական ճշգրտումների խնդրին՝ լրացնելով եւ սրբագրելով մեր գիտելիքները բազմաթիւ հարցերում: Կատարուած նոր եւ համապարփակ քննութեան շնորհիւ այսօր կարող ենք խօսել այն մասին, որ աւատական մասնատուածութեան շրջանում թագաւորական կարգավիճակ են ձեռք բերել ոչ միայն Շաքիի եւ Փառիսոսի, այլեւ Գորոզուի (հետագայում՝ Դիզակ) եւ Խաչէնի իշխանութիւնները: Ներկայումս, թերեւս, կարելի է վերջնականապէս յաղթահարուած համարել Շաքիի Բագրատունեաց արքայատոհմի եւ Կուրի աջափնեակի Առանշահիկների ազգակցական կապի մասին՝ Ն. Ադոնցից եկող վրիպեալ պատկերացումները: Կարելի է պարզաբանուած համարել հարեւան կրտսեր դաշնակից երկրների վրայ Հայոց բդեշխ-կուսակալների կարեւոր զինական գործառոյթների տարածման, «Իշխան Աղուանից» հաստատութեան ստեղծման ժամանակի (616 թ.), «Առանշահիկներ» եւ «Միհրանեաններ» կոչուած իշխանատոհմերի իրական ծագման, Ներքին ու Վերին Խաչէնի իշխանութիւնների բաժանումը Հասան Մեծ Կրօնաւորեալի նոյնանուն որդիների (Վախտանգ Խօխանաբերդցու եւ Վախտանգ Հաթերքցու) հետ կապելու, Դօփեանների իշխանութեան հիմքում վերջիններիս միւս եղբայր Գրիգոր Ա Մարեցուն (Դօփ իշխանուհու ամուսին Հասան Ա-ի հօրը) տեսնելու խնդիրները եւն:

Այս աշխատութեան մէջ կատարուած մշակումներն առանձնանում են նրանով, որ, լինելով, ըստ ամենայնի՝ աղբիւրագիտական, պատմաաշխարհագրական

---

[1] **C. Toumanoff**, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasie chrétienne (Arménie – Géorgie – Albanie), Roma, 1976.

[2] **Cl. Mutafian**, L'Arménie du Levant (XI^e^-XIV^e^ siècle), t. I-II, Paris, 2012.

[3] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Պատմա-հնագիտական դիտողություններ Նոր բերդի Կյուրիկյան իշխանության մասին, – «Տեղեկագիր» Արմֆանի, 1940, հմր 4-5, էջ 165-180; **Գ. Մ. Գրիգորյան**, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր), Եր., 1981; **Ռ. Ի. Մաթեւոսյան**, Տաշիր-Զորագետ (X դար – XII դարի սկիզբ), Եր., 1982; **Г. Г. Мкртумян**, Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв. и его взаимоотношения с Арменией, Ер., 1983; **Ա. Ի. Ծառնազարյան**, Վաճրամյանների իշխանութիւնը, Եր., 1990; **Հ. Գ. Մարգարյան**, Զաքարյանների ծագումը, – ՊԲՀ, 1994, էջ 156-175; **նոյնի՝** Ռազմաքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արեւելքում եւ հայ ավատատիրական ավագանին ԺԲ դարում – ԺԴ դարի առաջին կեսում, էջ 7-31:

եւ վիմագրագիտական բնոյթի՝ դրանք այնուամենայնիւ չենւում են մատենագրական բազմակողմանի հետազօտութեան, այսինքն՝ ծագող պատմական ու բանասիրական խնդիրների առաւել մանրակրկիտ քննութեան վրայ, որը բնորոշ է հայ դասական աղբիւրագիտութեանը (Նորայր Բիւզանդացի, Հ. Ներսէս Ակինեան, Հ. Պօղոս Անանեան, Յակոբ Անասեան եւ այլոք)։ Նման մօտեցումով հնարաւոր է դառնում նաեւ բուն պատմա-քաղաքական, պատմաաշխարհագրական, աղբիւրագիտական այլեւայլ կնճիռների՝ բազմաբնոյթ աղբիւրների սպառիչ ընդգրկման ու դաշտային որոնումների արդիւնքների վրայ չենւած առաւել մանրամասն վերհանումը ամենալայն պատմական հիմնագոյնի վրայ՝ այդպիսով յաւակնելով ներկայացնելու նախկին ու նոր եզրայանգումների բոլոր հիմքերի վերաբերեալ ամբողջական տեղեկատու։ Միւս կողմից, թւում է, թէ յաղթահարւում է հայագիտութեան մէջ աւանդական դարձած այն ցաւալի մօտեցումը, երբ Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք աշխարհներին կամ նրանց հարեւան Բուն Աղուանքին վերաբերուող խնդիրները քննարկւում էին առաւելապէս ընդհանուր ձեւով՝ առանց գուցէ եւ տեղային նշանակութեան մանրամասների մէջ մինչեւ վերջ խորանալու։

Այս աշխատանքին ուղեկցում են քարտէզներ, յատակագծեր, տոհմածառեր եւ գրչանկարներ, որոնք որոշեցինք զետեղել գրեթէ միեւնոյն հին (մեր առաջին հրապարակումների) վիճակով՝ միայն ամենից աւելի անհրաժեշտ դէպքերում առանձին ոչ մեծ շտկումներ անելով։ Այդ օժանդակ նիւթերը տրուած են աշխատութեան վերջում՝ որպէս յաւելուածներ եւ ներդիրներ։ Զափազանց օգտակար պատեհութիւն եղաւ նշուած մի քանի քարտէզների ու աղիւսակների կազմման հնարաւորութիւնը, որի յաջող իրագործման համար երախտապարտ եմ ինձ հետ սիրայօժար համագործակցած մասնագէտ-ընկերներիս (Գեղամ Բադալեան, Գրիգոր Բեգլարեան, Վազգէն Ղազարեան, Յովհաննէս Կիզողեան, Ռուբէն Թարումեան, Սամուէլ Կարապետեան եւ Յոլակ Յակոբեան)։

Երախտագիտութեան խօսքեր պէտք է ասեմ նաեւ բազմաթիւ գործընկերներիս (առաջին հերթին՝ երջանկայիշատակ երեք ուսուցիչներիս՝ Կարէն Իւզբաշեան, Պարոյր Մուրադեան եւ Բաբկէն Յարութիւնեան, այդպէս նաեւ՝ Արեւելագիտութեան ինստիտուտի հարազատ՝ Քրիստոնեայ Արեւելքի բաժնի աշխատակիցներին), որոնց հետ պարբերաբար քննարկումները, թէ՛ պաշտօնական (այդ թւում՝ հանրապետական ու միջազգային մի քանի գիտաժողովներում), թէ՛ անձնական, էապէս նպաստել են ընթերցողին ներկայացուող աշխատանքում հնարաւոր թերիների պակասին։ Ջմոռանամ նշել, որ աշխատանքի հիմնական մասը 2014 թ. Սեպտեմբերին նոյն Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական խորհրդում պաշտպանուել է իբրեւ դոկտորականատենախօսութիւն։

ԳԼՈՒԽ Ա
ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐՑԱԽ – ՈՒՏԻՔ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԸ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Բաժին 1
ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԸ ԵՒ ՆՐԱ ԱՐՔԱՅԱՏՈՀՄՆ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆՈՒՄ

Անտիկ սկզբնաղբիւրների առաջին յիշատակութիւնը Կովկասեան աղուան – ալբանների մասին[1] կապուած է Ալեքսանդր Մակեդոնացու արեւելեան արշաւանքի հետ: Ք. յ. Բ դարի յունալեզու զօրավար եւ պատմիչ Փլաւիոս Արրիանոսի հաղորդումների համաձայն՝ Դարեհ Գ Աքեմենեանի եւ Ալեքսանդր Մակեդոնացու միջեւ Ք. ա. 331 թ. տեղի ունեցած Գաւգամելայի վճռական ճակատամարտին պարսից տարացեղ բանակի կազմում մասնակցում էր նաեւ աղուանների զօրաջոկատը: Կադուսների եւ սակեսինների ցեղային զօրաջոկատների հետ միասին այն գտնւում էր մեդացիների (մարերի) առաջնորդ Ատրոպատէսի ընդհանուր հրամանատարութեան տակ[2]: Տեղին է նշել, որ սակեսիններին, ովքեր յիշատակուած են միմիայն Արրիանոսի կողմից, ճիշտ կը լինի համարել ոչ թէ Մեծ Հայքի Ուտիք նահանգի Շակաշէն գաւառի բնակիչներ կամ լազիկայում Պլինիոս Աւագի ճանաչած սակասան-ճաներ, այլ առաւել մեծ հաւանականութեամբ՝ մերձկասպեան դաշտավայրային շրջանում, կուրից հիւսիս հանգրուանած սակա-սկիւթական ցեղեր[3]:

Գաւգամելայի դաշտում վճռական բախման պահին աղուանների զօրաջոկատը կանգնած էր Աքեմենեանների բանակի դասաւորութեան աջ թեւում, կենտրոնին մօտիկ («Աջ թեւում կանգնած էին Կոյլեսիրիայի եւ Միջագետքի զինուորները, ինչպէս նաեւ մեդացիները, նրանցից յետոյ պարթեւները եւ սակերը, այնուհետեւ տապուրները եւ վրկանները, ապա ալբանները եւ սակեսինները, սրանք եւս՝ աւելի մօտ զօրքի կենտրոնին»)[4]: Ուսումնասիրողներից ոմանք, հետեւելով Կ.

---

[1] Հայերէն մասնագիտական գրականութեան մէջ շրջանառուած անուանաձեւերից՝ «աղուան», «ալբան», «աղվան», «ալբանացի», «աղվանացի», յարմար ենք գտնում կիրառել հայ մատենագրութեանը հարազատ առաջին տարբերակը, որը նոր ուղղագրութեան անցնելիս ըստ հնչման վերածուել է *աղվան*-ի, սակայն կարող է նաեւ օգտագործուել իր աւանդական գրութեամբ (եւ հնչումով)՝ զերծ պահելով մեզ այլատեսակ շփոթներից:

[2] **Arrian**, History of Alexander and Indica, Vol. 1-2 (Edit. and Transl. **P. Brunt** and **E. I. Robson**), Cambridge/Mass., 1976, 1988 (յետայսու՝ **Arr.** Anab.), III, 8, 4 («Մեդացիների հրամանատարը Ատրոպատէսն էր. նրանց հետ էին կադուսիները, ալբանները եւ սակեսինները»):

[3] Տե՛ս **M.-L. Chaumont**, Albania, – EI, T. I, New-York, 1985, p. 86; **Հ. Խորիկյան**, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Եր., 2010, էջ 33-35: Իր վերջին աշխատանքում Յովհ. Խորիկեանը հնարաւոր է համարում *սակեսիններին* համադրել Աքեմենեան Իրանի 18-րդ՝ այսրկովկասեան սատրապութեան երեք մեծ ցեղամիութիւններից մէկի՝ *սասպեյրների* հետ (**О. Хорикян**, О локализации топонима Акауфачия, – "Иран-наме". Научный востоковедческий журнал, Алматы, 2017, № 3-4, с. 378-388), սակայն առայժմ դա կարող է դիտարկուել լոկ որպէս քննարկելի վարկած:

[4] **Arr.** Anab. III, 11, 4. Հմմ. նաեւ III, 13, 1 («Երբ զօրքերն իրար մօտեցան, երեւաց, որ Դարեհն ու նրան շրջապատողները՝ խնձորակիր պարսիկները, հնդիկները, ալբանները,

Տրեւերի ենթադրութեանը, այդպիսի դիրքի մէջ տեսնում են աղուաններուն զօրաջոկատի ինչ-որ առանձնաշնորհեալ կարգավիճակի նշան, սակայն դա չի հաստատում աղբիւրագիտական տուեալների համադիր քննութեամբ[1], քանի որ Արրիանոսը եւ այլ աղբիւրներ յատուկ նշումներ ունեն Աքեմենեաններուն բանակի իրապէս առանձնաշնորհեալ զօրագնդերի մասին[2]:

Արրիանոսի տեղեկութիւնների աղբիւրը, ինչպէս հէնց ինքն է նշում, Ք. ա. Դ-Գ դարերի հեղինակ, Ալեքսանդրի ուղեկից Արիստոբուլոսն էր[3], եւ դա թոյլ է տալիս մտածել, որ Գաւգամելայի ճակատամարտին աղուաններուն (որպէս էթնիկ առանձին խումբ կամ վարչական միաւորի բնակչութիւն) մասնակցութիւնը հաւաստի է: Տարակուսանք է յարուցում լոկ այն, որ նրանց չեն յիշատակում Ալեքսանդրի արշաւանքի մասին մանրամասն պատմող այլ հեղինակներ, օր՝ Ք. յ. Ա դ. հռոմէացի պատմիչ Կուրցիոս Ռուփոսը[4]: Սակայն դա կարող է տարբեր բացատրութիւններ ունենալ, օր.՝ որ նոյն Ռուփոսի նկարագրութեան մէջ բացակայում են Գաւգամելայում մարտնչած բազմաթիւ այլ ժողովուրդների անուններ եւս:

Վաղ շրջանում աղուաններին յիշատակել են նաեւ Ք. ա. Գ դ. երկու հեղինակներ՝ Սելեւկեան առաջին արքայի հրամանով կասպից ծովի ափերի հետազօտութիւնը կատարած Պատրոկլէսը եւ նրանից օգտուած աշխարհագէտ էրատոսթենէսը, որոնք արձանագրել են աղուաններուն բնակուելը կասպից ծովի ափին՝ կադուսներից (հայկական աղբիւրներում՝ կատիշներ) հիւսիս[5]: Ընդ որում, Ստրաբոնի եւ Պլինիոսի պահպանած տուեալների համադրմամբ՝ Պատրոկլէսի եւ էրատոսթենէսի մօտ կադուսական ափի երկարութիւնը ստացւում է շուրջ 5000 ստադիոն, իսկ «ալբանական» (ըստ Պլինիոսի՝ «Ալբանիայի») ափինը՝ 300 կամ 400: Սակայն թե՛ անտիկ, թե՛ միջնադարեան աղբիւրների վկայութիւններով՝ կադուսները զբաղեցրել են կասպից ափամերձ շերտի լոկ մի փոքր հատուածը՝ կուր եւ Արաքս/Երասխ գետերից հարաւ եւ հարաւկասպիական իրանական ժողովուրդներից հիւսիս-արեւմուտք, որոնք յանուանէ յիշուած են տուեալ հեղինակների նոյն դրուագներում: Դրանից կարելի է ենթադրել, որ Ստրաբոնին ու Պլինիոսին հասել է Պատրոկլէսի հաշուետուութեան որոշ չափով աղճատուած տարբերակը (գուցէ՝ էրատոսթենէսի երկում կամ դրա մի արտագրութեան մէջ), որտեղ աղուանական եւ կա-

---

տարաբնակ կարիացիները եւ աղեղնակիր մարդերը, կանգնած են Ալեքսանդրի եւ արքայական ջոկատի դիմաց»):

[1] Տե՛ս **К. В. Тревер**, Очерки по истории и культуре Кавказской Албании. IV в. до н. э. – VII в. н. э., Москва-Ленинград, 1959, с. 52-53; **И. А. Бабаев**, Города Кавказской Албании в IV в. до н. э. – III в. н. э.: Автореф. дисс... докт. ист. наук, Москва, 1982, с. 11.

[2] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 52-53.

[3] **Arr.** Anab. III, 11, 3 («Զօրքերի դասաւորութեան գծագիրը, որ կազմել էր Դարեհը, հետագայում, ըստ Արիստոբուլոսի խօսքերի՝ աւգրաւուել էր»): Հմմ. **Strabonis** Geographica, Recognoverunt **A. Meineke**, Vol. I-III, Lipsiae, 1915-1925 [*յետայսու՝* **Strab.**], XI, 6, 1.

[4] **Curtius Rufus**, Historiarum Alexandri regis Macedonum..., Moskow, 1963, IV, 12, 4-9.

[5] **Strab.** XI, 6, 1; 7, 1; 7, 3; **Plinii Secundi** Naturalis historiae, Vol. I-X, Cambridge/Mass. – London, 1950-1962 (*յետայսու՝* **Plin.** Nat. Hist.), VI, 36.

դուսական ափամերձ տարածքների չափերի շփոթ է սպրդել՝ անուանումների փոխատեղման ձեւով: Իսկ իրականում հարկ է ուղղել այդ վրիպումը եւ ենթադրել, որ Պատրոկլէսն աղուանական ափի համար արձանագրել է հէնց շուրջ 5000 ստադիոն ձգուածութիւն (իսկ 300 կամ 400 ստադիոն էլ՝ կադուսական ափի համար): Դա մօտաւորապէս համապատասխանում է հետագայում առաջացած Աղուանից թագաւորութեան ափագծի ձգուածութեանը (Կուրի գետաբերանից մինչեւ Դերբենդի անցքը), մանաւանդ որ գրեթէ նոյն իրական երկարութիւնն ունեցող հարաւկասպիական իրանական ժողովուրդների (Վրկան/Հիւրկանիայի) զբաղեցրած ափագիծը Պատրոկլէսը հաշուել էր մօտ նոյնքան՝ 4800 կամ 4900 ստադիոն:

Ք. ա. Դ դարից աւելի վաղ աղուանների անունը որեւէ հաւաստի աղբիւրում չի հանդիպում, իսկ Յասոնի եւ Հերակլէսի յունական առասպելների տարբերակները ներկայացնող մի քանի թուացեալ բացառութիւններ ակնյայտ ուշ գրական-գեղարուեստական ծագում ունեն[1]: Ընդ սմին, Ք. ա. Ե դ. առաջին կէսում Հերոդոտոսը Կասպից ծովի արեւմտեան ափին՝ Կովկասեան լեռների շրջանում, գիտէր միայն բարբարոսական ցեղերի գոյութեան մասին, որոնք մաս են կազմել Աքեմենեանների տէրութեան[2]: Նորագոյն ուսումնասիրութիւններում պարզաբանուած է, որ այս տարածքը, ամենայն հաւանականութեամբ, մաս է կազմել Աքեմենեան առաջին արքաների ստեղծած սատրապութիւններից (Հերոդոտոսի պնդմամբ՝ դրանք 20-21-ն էին, իսկ ըստ Աքեմենեանների արձանագրութիւնների՝ մի քանիսով աւելի) 18-րդի, որը գրաւում էր Կովկասեան լեռներից հարաւ մինչեւ Թռեղքի լեռնաշղթայ (կամ, գուցէ՝ Վիրահայոց լեռներ) եւ ապա Կուրի գետագիծն ընկած տարածքը, Կողքիս/Կոլխիդայի սահմանից մինչեւ Կասպից ծով[3]: Հերոդոտոսը բնութագրում է այդ սատրապութիւնը հետեւեալ կերպ. «Մատիենների, սասպեյրների եւ ալարոդների վրայ սահմանուած էր 200 տաղանդ հարկ»[4]: Այստեղ նշուած երեք ցեղերից կամ ցեղամիութիւններից առաջինը՝ մատիենները, համապատասխանում են հետագայի Վիրք (Իբերիա, Քարթլի) երկրի հարաւ-արեւմտեան հատուածի բնակչութեանը եւ ըստ Հեկատէոս Միլեթացու (Ք. ա. Զ դար)՝ հարեւան է-

---

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս **Дж. Томсон**, История древней географии, Москва, 1953, с. 313; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 157; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 18 сл.

[2] **Herodotus**, Historiarum libri IX, Vol. 1-3, Cambridge/Mass. – London, 1946-1960 (յետայսու՝ **Her.**), I, 203 («Կովկասում ապրում են բազմապիսի ազգեր, որոնց մեծ մասն ապրում է վայրի պտուղներով: ... Այս մարդիկ իրար հետ բացայայտ խառնւում են, ինչպէս անասունները»): Հմմ. նաեւ III, 97. «մինչեւ Կովկաս լեռը ... տիրում են պարսիկները, իսկ Կովկասից հիւսիս [ընկած երկիրը] հաշուի չի առնում պարսիկներին»):

[3] **Բ. Յարութիւնեան**, Աքեմենեան Պարսկաստանի XVIII սատրապութեան տեղադրութեան շուրջ, – ՀԱ, ՃԺԳ տարի, 1999, սն. 45-114; **Հ. Խորիկյան**, Հայաստանը եւ Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (Պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն), Պատմ. գիտ. թեկն. աստիճանի հայցման ատենագիր, Եր., 2007, էջ 25-35; **նոյնի**՝ Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 17-18; **О. Хорикян**, О локализации топонима Акауфачия, с. 378-388.

[4] **Her.** III, 94.

ին աւելի հարաւ բնակուող մոսխերին (իմա՛ մեսխերին՝ հետագայի Մեսխէթում եւ յարակից շրջաններում)[1]: Ցեղերից երկրորդը՝ սասպեյրները, ըստ ամենայնի՝ հետագայ Վիրքի բնակիչներն էին (Կուր գետի զոյգ ափերին), իսկ երրորդ, այլուստ անծանօթ «ալարոդներ» անուան տակ հանդէս էր գալիս նրանցից արեւելք, այսինքն՝ հետագայ Բուն Աղուանք երկրի բնակչութիւնը, թերեւս, Ալազան գետի ստորին հովտից մինչեւ Կասպից ծով[2]: Այս անուան մէջ առկայ «ռոդ» բաղադրիչը մեծ հաւանականութեամբ կարող է դիտարկուել որպէս իրանական լեզուների «գետ», «ջուր» նշանակութեամբ «ռոդ/ռուդ» բառը (rōδ, ճիշտ է՝ հին պարսկերէնում այն հնչել է rautah) եւ կապուել Կուրի հետ: Այդ դէպքում ալա՝ չպարզաբանուած նշանակութեամբ բաղադրիչը կարելի է հնարաւոր այլ տարբերակների կողքին գնահատել իբրեւ հետագայ «Ալբանիա», «Աղուանք», «Առան», «Հերէթ» անուանաձեւերի՝ նոյնպէս դեռեւս վերջնականապէս չպարզաբանուած նշանակութեամբ իմաստային հիմքերի հետ ինչ-որ կապ ունեցող (այսպիսի մօտեցումը տարիներ առաջ բանաւոր զրոյցում մեզ յուշել է երախտաշատ Բաբկէն Յարութիւնեանը)[3]:

Յաւելենք, որ Հերոդոտոսի 18-րդ սատրապութիւնն Աքեմենեան արքաների վիմագրերում, թերեւս, կոչւում էր Ակաուֆակա (Âkaufaciyā): Այդ անուանաձեւն առայժմ վկայուած է միայն մէկ՝ Քսերքսէս արքայի «Persepolis-h» վիմագրում[4]: Չի

---

[1] «Մատիեններ» անունով Հերոդոտոսը եւ ուրիշ աղբիւրներ նշում են նաեւ այլ տարածքների կոնկրետ ժողովուրդների (Կապադովկիայում, Միջագետքի հիւսիս-արեւելքում եւ Մարաստանի արեւմուտքում), որոնց նոյնացնելու շտապողական փորձերը նախորդ ուսումնասիրողների համար լուրջ եւ ցայժմ մինչեւ վերջ չյաղթահարուած շփոթութիւններ պատճառ են դարձել: Հմմ. **Н. В. Хазарадзе**, К вопросу о локализации матиенов в свете древнегреческих источников (VI-V вв. до н. э.), – ИФЖ, 1973, № 2, с. 201 сл.; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 76; **Հ. Խորիկյան**, Հայաստանը եւ Այսրկովկասը, էջ 25-35:

[2] **Բ. Յարութիւնեան**, Աքեմենեան Պարսկաստանի XVIII սատրապութեան տեղադրութեան շուրջ, էջ 65-102:

[3] *Ալբանիա, Աղուանք, Առան, Հերէթ* անունների ստուգաբանութեան փորձեր տե՛ս **Ю. Б. Юсифов**, О наименованиях "Албания" и "Арран", – "Известия" АН Азерб. ССР, Серия обществ. наук, 1961, № 10, с. 23-31; **В. В. Полосин**, Об арабском названии Кавказской Албании (Аррана), – В кн.: Письменные памятники Востока. Историко-филологические исследования, Москва, 1979, с. 162-167; **Я. С. Вагапов**, Некоторые нахские топонимы и этнонимы с корнем а (Этимологические заметки), – В кн.: Вопросы вайнахской лексики, Грозный, 1980, с. 66-82; **Բ. Ա. Ուլուբաբյան**, Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության (V-VII դդ.), Եր., 1981, էջ 39-53; The Geography of **Ananias of Širak** (Ašxarhac'oyc'). The Long and the Short Recensions. Introduction, Translation and Commentary by **R. H. Hewsen**, Wiesbaden, 1992, p. 141; **С. Н. Муравьёв**, Новый труд по древней географии Кавказа и Закавказья, – ВДИ, 1997, № 2, с. 230; **Մ. Ա. Աղաբեկյան**, Ստուգաբանական դիտողություններ «Աղուանք» տեղանվան վերաբերյալ, – ՊԲՀ, 1990, հմր 1, էջ 168-177; **А. Аликберов, О. Мудрак**, Еще раз о происхождении названий Алуан и алан, – «Հայաստանը եւ Քրիստոնյա Կովկասը». Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Կովկասյան Աղուանքում եւ Վրաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին. Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Եր., 2015, էջ 16-19:

[4] **R. G. Kent**, Old Persian. Grammar. Texts. Lexicon. Second edition, New Haven, 1953, p. 151; **R. Schmitt**, Die altpersischen Inschriften der Achaimeniden, Wiesbaden, 2009, S. 166. Հմմ. **Հ. Խորիկյան**, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 33, 39:

Հ Հ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

բացառում, որ այդ անունն էլ, իր հերթին, կապ ունենայ Պոնտականից Կասպից ծով ձգուող յայտնի լեռների «Կաւկաս» / «Կովկաս» անուան հետ՝ արձանագրուած մօտաւորապէս նոյն դարերի անտիկ հեղինակների երկերում[1]:

Արեւելեան Այսրկովկասի եւ հարաւային Դաղստանի նուաճումը ոմանք են-թադրաբար կապել են Աքեմենեան առաջին արքաների հետ (օր.՝ Կ. Տրեւերը՝ Դարեհ Ա-ի, Հ. Սվազեանը՝ Կիւրոս Մեծի)[2]: *Բայց Հերոդոտոսի մի տեղեկութիւնը մտածել է տալիս, որ վերոնշեալ Աքեմենեան 18-րդ սատրապութեան տարածքի արեւելեան մասը, որը յարում էր կոլխերի երկրից (կոչուած նաեւ՝ Եգերք, Լազիկա, իսկ Սասանեանների վիմագրերում՝ Սիկան/Մախելոնիա*[3]*) արեւելք ընկած սասպեյրներին (հետագայում՝ Վիրք, Քարթլի), մաս է կազմել դեռեւս Մարերի տէրութեան (Մեդիայի)*[4]*, որի վերջին արքային յաղթելուց յետոյ Իրանում Ք. ա. 560-ական թթ. իր տոհմի իշխանութիւնը հաստատեց պարսիկ Կիւրոս Ա Աքեմենեանը: Դերբենդի անցքով սկիւթների՝ Ք. ա. է դարի կէսերով թուագրուող մեծ ներխուժման մասին բաւականին առարկայաբար պատմող Հերոդոտոսը գրում է այսպէս. «Կոլխիսից Մեդիա աւելին չէ ճանապարհը, բայց նրանց միջեւ բնակւում է մի ազգ՝ սասպեյրները, սրանց միջով անցնելուց յետոյ կարելի է հասնել Մեդիա: Այսուհանդերձ, սկիւթներն այս ճանապարհով չներխուժեցին Մեդիա, այլ շեղուեցին դէպի վերին, շատ աւելի երկար ճանապարհը՝ Կովկաս լեռը ունենալով իրենց աջ կողմում: Այստեղ մեդացիները ճակատեցին սկիւթների դէմ եւ մարտում պարտուելով, կորցրին իրենց իշխանութիւնը»*[5]: *Ի դէպ, սկիւթ – սակերի նոյն մեծ արշաւանքին է վերաբերում Ստրաբոնի երկում պահպանուած ուշագրաւ տեղեկութիւնը, ըստ որի՝ «...սակերը գրաւեցին Բակտրիանան եւ ձեռք գցեցին Հայաստանի լաւագոյն հողը [երկրամասը], որին իրենց անունից թողեցին Սակասէնէ անուանումը»*[6]: *Մեծ Հայքի՝ Կուրի աջափնեակում գտնուող Շակաշէն/Սակասէնէ գաւառի մասին այս ու-*

---

[1] **Յ. Խորիկեան**, Սատրապութիւնների Հերոդոտեան ցուցակը (Պատմաաշխարհագրական քննութիւն), – ՀԱ, 2012, սն. 150; **նոյնի**՝ О локализации топонима Акауфачия, с. 378.

[2] Տե՛ս **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 51; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Եր., 2006, էջ 91:

[3] Ըստ՝ Ա. Մարիկի (**E. Honigman, A. Maricq**, Recherches sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, 1953, p. 64; **A. Maricq**, Res Gestae divi Saporis, – "Classica et Orientalia", Paris, 1965, p. 48). Սւաներէն *Լա-զան = Զանների երկիր* (**Г. А. Меликишвили**, К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 67), ուստի, թերեւս, *Լա-զիկա = Սիկա-ն երկիր*: Նշենք նաեւ, որ Սիկան-ը երբեմն շփոթուել է Մեծ Հայքի *Սիսական* նահանգի հետ (նոյն կերպ նաեւ՝ արեւմտավրացական Սւանէթի *Սւանիա* անունը՝ հայերէն *Սիւնիք* անուանաձեւի հետ):

[4] Հմմ. **M.-L. Chaumont**, Albania, p. 86.

[5] **Her.** I, 104; **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Թարգմ.՝ **Ս. Կրկյաշարյանի**, Եր., 1986:

[6] **Strab.** XI, 8, 4. Կուրի աջափնեակում սկիւթ-սակերի նիւթական մշակոյթի հետքերի մասին տե՛ս **М. Н. Погребова**, Памятники скифской культуры в Закавказье, – Кавказ и Средняя Азия в древности и средневековье (история и культура), Москва, 1981, с. 43, 47, 55; **նոյնի**՝ Закавказье и его связи с Передней Азией в скифское время, Москва, 1984, с. 39-46, 207-211; **Г. Гошгарлы**, Типология погребальных памятников античного периода на территории Азербайджана, Баку, 2012, с. 102 сл.

ղիղ վկայութիւնից երեւում է նաեւ, որ անտիկ պատմական աւանդոյթում պահպանուած տուեալների համաձայն՝ Մեդիա/Մարաստանի հզօրութեան պահին (Ք. ա. է դ. վերջ եւ Զ դ. սկիզբ) գոյատեւած Երուանդեան կամ, որ նոյնն է՝ «ուշ Ուրարտական», թագաւորութեան օրերում[1], երբ Կուրի ձախափնեակի արեւելեան ընդարձակ հատուածը (մինչեւ Կովկասեան լեռներ եւ Դերբենդի անցք) արդէն մտնում էր մարական տիրոյթների մէջ, այդ գետի աջափնեայ երկրամասերը մինչեւ Երասխի գետակիցը շարունակում էին Հայոց պետութեան մաս կազմել, ինչպէս եղել էր դեռեւս Բիաինական աւելի վաղ ժամանակաշրջանում[2]:

Գրականութեան մէջ նաեւ պարզաբանուած է, որ Կուրի՝ որպէս Հայաստանի եւ աղուանների բնակութեան տարածքի միջեւ սահմանի մասին, կարելի է խօսել նաեւ Ք. ա. Բ դ. սկզբների համար, երբ աղբիւրները նկարագրում են Սելեւկեաններից անկախութիւն ձեռք բերած Հայոց երկու երկրների արքաներ Արտաշէսի եւ Զարեհի (Մուիքում) «նուաճումները»: Ներկայացնելով իրեն հասած տուեալները՝ Ստրաբոնը մանրամասն թուարկում է նրանց ձեռքբերումները Ատրպատականի մարերից, ապա իբերներից եւ արեւմուտքի ու հարաւի միւս հարեւան ժողովուրդներից[3], եւ այդ ընթացքում ոչինչ չի ասում աղուանների կամ Կուրի աջափնեայ շրջանների վերաբերեալ: Դրանից ուղղակիօրէն հետեւում է, որ նշուած շրջանները (այսինքն՝ հետագայ Ուտիք եւ Արցախ նահանգները) հայ վերջին Երուանդուններից բնականոն ձեւով էին ժառանգուել Արտաշէսի թագաւորութեան մէջ[4]:

Աղուանքի տարածքի Ք. ա. Դ-Ա դարերի էթնիկ պատկերն առարկայօրէն արտացոլում է նաեւ հնագիտական նիւթը: Կուրի ձախափնեակում մինչեւ Կովկասեան լեռների հիւսիս-արեւելեան փեշերը (Միջին Դաղստան) Ք. ա. Ե – Ք. յ. Ա դարերում տարածուած՝ այսպէս կոչուած «Ծալոյլութեփէի հնագիտական մշակոյթն» էապէս տարբերւում է հարեւան երկրների հնագիտական նիւթից եւ հետազօտողների կարծիքով՝ կապուած է աղուանական ցեղերի կենսագործունէու-

---

[1] Այդ պահի իրական վարչա-քաղաքական վիճակի մասին տե՛ս **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների եւ Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դ.դ.), Եր., 1998; **Ա. Յակոբեան**, Հայ ժողովրդի էթնոհամախմբման գործընթացի պատմա-մշակութային առանձնայատկութիւնները, – «ՎԷմ» հասարակական հանդես, Ե (ԺԱ) տարի, 2013, թիւ 1 (41), էջ 34-69; **նոյնի՝** Հայկական լեռնաշխարհում բիացիների եւ խորենացիական Հայկեաններ տարածման ուղիների համադրութեան փորձ, – Հայկազուններ, Եր., 2013, էջ 181-205:

[2] Հմմ. **Գ. Տիրացյան**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» եւ Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. ա. III-II դարերի պատմության մասին, – ԲՄ, 6, Եր., 1962, էջ 7-23; **Գ. Խ. Սարգսյան**, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 139-241; **Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հտ. I, գիրք 1. Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում), Եր., 1998, էջ 210-211:

[3] **Strab.** XI, 13, 4.

[4] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 14-15; **M. Bais**, Albania Caucasica. Ethnos, storia, territorio attraverso le fonti greche, latino e armeno, Milano, 2001, p. 68; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 55:

թեան հետ[1]: Իսկ ժամանակով նրան զուգահեռ եւ Կուրից հարաւ մասնագետներն առանձնացնում են մէկ այլ՝ այսպէս կոչուած «Կարասային թաղումների մշակոյթը» (Ք. ա. Ե – Ք. յ. Գ դար)[2]: Իր գլխաւոր գծերով վերջինս նոյնանում է անտիկ Հայաստանի միւս շրջանների (Արարատեան դաշտ, Շիրակ, Նախիջեւան եւն) հնագիտական մշակոյթի հետ եւ այդպիսով մատնանշում ոչ միայն հայկական պետութեան, այլեւ հայ էթնոսի՝ մինչեւ Կուր գետ տարածուած լինելը: Յատկանշական է «Կարասային թաղումների մշակոյթին» բնորոշ նիւթերի առկայութիւնը Կուրից հիւսիս, յատկապէս Մինգեչաուրի հինաւուրց գետանցի հատուածում (այդպէս՝ նաեւ վերջինից հարաւ առկայ է «Ծալոյլութեփէի մշակոյթին» յատուկ նիւթի ոչ մեծ տարածում), որը ցոյց է տալիս հայերի որոշ ներթափանցումը Կուրից հիւսիս արդէն Ք. ա. վերջին դարերում[3]:

Ք. ա. Ա դ. 60-ական թթ. սկսած, դէպի արեւելք Հռոմի առաջխաղացման հետ կապուած, անտիկ աշխարհը մանրամասն եւ բազմակողմանի տեղեկութիւններ ստացաւ նաեւ Աղուանքի եւ նրա բնակիչների մասին: Ըստ Ստրաբոնի՝ Ք. ա. 65 թ. Աղուանք ներխուժած եւ գրեթէ մինչեւ նրա Կասպիական ծովամերձ շրջաններն անցած[4] Գնէոս Պոմպէոսի լեգիոններին ուղեկցում էր նաեւ պատմիչ Թէոփանէս Միտիլենացին, որի շարադրած՝ արշաւանքի նկարագրութիւնն օգտագործուեց անտիկ հեղինակների բազմաթիւ սերունդների կողմից[5]: Հայոց արքայ Տիգրան Մեծի եւ Միհրդատ Եւպատորի դէմ տարած յաղթանակներից յետոյ Հռոմն ամուր հաստատուեց Փոքր Ասիայում եւ յարաբերութիւնների զարգացած համակարգ ձեւաւորեց նրանից արեւելք ընկած Մեծ Հայքի, Պարթեւստանի, Իբերիա/Վիրքի եւ Աղուանքի հետ: Անկիւրայում Օկտաւիանոս Օգոստոս կայսեր անունից փորագրուած լատիներէն արձանագրութեան մէջ խօսւում է Աղուանքի թագաւորի

---

[1] **Е. Лалаян**, Раскопки в селах Нидж и Варташен Нухинского уезда, – "Известия" КОМАО, вып. V, Тифлис, 1919; Очерки истории СССР. Первобытно-общинный строй и древнейшие государства на территории СССР, Москва, 1956, с. 439-440 (բաժնի հեղ.՝ **А. И. Болтунова**); **О. Ш. Исмизаде**, Ялойлутепинская культура, Баку, 1956; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 62-66.

[2] **Т. И. Голубкина**, Материалы к истории албанских племён Кавказа по данным кувшинных погребений Азербайджана (II в. до н. э. – III в. н. э.), Тбилиси, 1962; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 62-63; **Г. А. Тирацян**, Урарту и Армения (К преемственности материальной культуры), – ВОН, 1968, № 2, с. 62-63; **И. А. Бабаев**, Города Кавказской Албании, с. 23-24; **А. И. Нонешвили**, Погребальные обряды народов Закавказья (Кувшинные погребения VIII в. до н. э. – VIII в. н. э.), Тбилиси, 1992, с. 7-10, 55-118; **В. А. Асадов**, К хронологии обряда кувшинных погребений Азербайджана, – ВИИАЭ (Баку), 2010, № 4, с. 90-97; Атлас Азербайджанской ССР, Баку-Москва, 1963, с. 205.

[3] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 16-17. Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 66.

[4] Տե՛ս **Plutarchi** Vitae parallelae, Recogn. **C. Lindskog** et **K. Ziegler**, Vol. 1-4, Lipsiae, 1914-1939 (յետայսու՝ **Plut.**), Pomp. XXXVI (**Պլուտարքոս**, Կենսագրություններ, Կազմեց, ... թարգմանեց, առաջաբանը եւ ծանոթագրությունները գրեց՝ **Ս. Գրքաշարյան**, Եր., 2001, էջ 268); **Plin.** Nat. Hist. VI, 51.

[5] **Strab.** XI, 5, 1.

«դեսպանների» գործունէութեան մասին[1], որը Հռոմի հետ դիւանագիտական յարաբերութիւնների առկայութեան տպաւորութիւն է ստեղծում: Ք. ա. 34 թ. Աղուանքի տարածք մտան նաեւ Մարկոս Անտոնիոսի զօրավար Պուբլիոս Կանիդիոս Կրասոսի լեգիոնները, եւ այդ արշաւանքին մասնակցում էր նաեւ պատմիչ Քուինտոս Դելլիոսը)[2]: Դոմետիանոս կայսեր օրօք (Ք. յ. Ա դ. վերջ) ծովամերձ Կոբուստանի շրջանում իրենց ներկայութեան մասին լատիներէն արձանագրութիւն էր թողել Ֆուլմինատի XII լեգիոնի ցենտուրիոնը[3]: Ենթադրելի է, որ Հռոմի խաղաղ առաքելութիւններն Աղուանքում լինում էին էլ աւելի յաճախ:

Անտիկ հեղինակների տեղեկանու (ինֆորմացիայի) աւելացման առումով բնութագրական են Ստրաբոնի մտորումները. «Առաւելապէս մեր ժամանակակիցներն են կարող հաւաստի ինչ-որ բան յայտնել այն մասին, ինչ վերաբերում է բրիտանացիներին, գերմանացիներին եւ Իստրի ափերին բնակուողներին, ինչպէս նաեւ կովկասեան ժողովուրդներին, օրինակ՝ աղուաններին եւ իբերներին... Քանի որ վերջերս հռոմէացիները զօրքով ներխուժեցին Երջանիկ Արաբիա..., այդ շրջանները եւս մեզ աւելի ծանօթ դարձան, քան մեր նախորդներին»[4]: Իրօք, Աղուանքի ու նրա բնակիչների մասին տուեալ ժամանակի հաղորդումներն աւելի կանոնաւոր են դառնում. ի յայտ են գալիս երկրի համակարգուած նկարագրութիւններ աշխարհագրական երկերում (Կլաւդիոս Պտղոմէոսը տալիս է նաեւ աշխարհագրական կոորդինատներ), աղուաններին յիշում են անգամ գեղարուեստական երկերը: Սկզբնաղբիւրները յետայսու համեմատաբար ճշգրիտ սահմանազատում են արեւելքում մինչեւ Կասպից ծովի ընդարձակ ափագիծը (Կուրի գետաբերանից մինչեւ Դերբենդի անցքը[5]) հասնող Աղուանից թագաւորութիւնն իր հա-

---

[1] Բնագրում (տե՛ս Res Gestae Divi Augusti. Monumentum Ancyranum, Edit. **Th. Mommsen**, Berolini, 1883) ի մասնաւորի ասւում է. «Մեր բարեկամութիւնը [խնդրում էին] *դեսպանների միջոցով* (per legat[os]) Բաստարնները, Սկիւթները, Տաճայիս գետի այս եւ այն կողմում բնակուող Սարմատները, ինչպէս նաեւ Ալբանների թագաւորը ([Alba]norumque rex) եւ Հիբերների եւ Մեդերի [թագաւորները]»: Հմմ. **В. В. Латышев**, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, т. II, вып. I, СПб., 1904, с. 41. Հմմ. **W. Tomaschek**, Albanoi, – PWK, Hb. I, Stuttgart, 1893 (1958), S. 1305; **G. Traina**, Roman Perceptions of Caucasian Albania, – «ԼՂՀ անցյալը, ներկան եւ ապագան». Միջազգային գիտաժողով (Ստեփանակերտ, 2006), Եր., 2007, էջ 223-225:

[2] **Strab.** XI, 13, 3; **Dionis Cassii Cocceiani** Historia Romana, Vol. I-V, Cambridge/Mass., 1954-1961 (յետայսու՝ **Dio Cass.**), XLIX, 24, 1; 39, 2-3; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս** (Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 9. Հին հունական աղբյուրներ, Ա), Թարգմ. ... առաջաբան եւ ծանոթագր.՝ **Ս. Մ. Կրկյաշարյանի**, Եր., 1976, էջ 177-178, 185:

[3] Տե՛ս **Е. А. Пахомов**, Римская надпись I в. н. э. и легион XII фульмината, – "Известия" АН Азерб. ССР, Серия истории, философии и права, 1949, № 1, с. 86; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 127.

[4] **Strab.** II, 3, 12.

[5] **Tacitus Cornelius**, Historiae. Annales, Vol. 1-4, Cambridge/Mass. – London, 1956 (յետայսու՝ **Tac.**), Ann. VI, 33. Հմմ. **Կ. Տակիտուս** (Օտար աղբիւրները հայերի մասին, հմր 3), Քաղեց եւ լատիներենից թարգմանեց... **Պ. Սոտնիկյան**, Եր., 1941, էջ 27: Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 33-35.

րեան երկրներից՝ հիւսիսում՝ Ասիական Սարմատիայից (Կովկասեան լեռների շղթաներից մէկով), հարաւում՝ Մեծ Հայքից (Կուր գետով), արեւմուտքում՝ Իբերիայից (Ալազան եւ Կամբիւսէս/Իորի վտակների միջնահովիտների հատուածով)[1]: Յղելով Պոմպէոսի ուղեկիցներին՝ Ստրաբոնը նշել է այդ երկրի զարմանալի բերքառատութիւնը[2]: Նա, Պոմպոնիոս Մելան եւ Պլինիոս Աւագը թուարկել են մի քանի գետանուն, վերջինը նշել է նաեւ թագաւորութեան գլխաւոր քաղաքի, այսինքն՝ մայրաքաղաքի անունը՝ Կաբալակա (այն հետագայ հայկական աղբիւրներում կոչւում էր Կապաղակ, իսկ արաբա-պարսկական գրականութեան մէջ՝ Կաբալա)[3]: Աղուանքով հոսող 6 գետերը եւ երկրի 29 բնակավայրերը թուարկել է Պտղոմէոսը՝ նշելով դրանց կոորդինատները[4]: Ըստ Ստրաբոնին հասած տեղեկութիւնների՝ աղուանները երկրպագում էին Հելիոսին, այսինքն՝ Արեւի աստուած Միհրին, Զեւս – Դիոսին (Արամազդ) եւ ամենից շատ՝ Սելենէին, այսինքն՝ Լուսնի աստուածուհի Անահիտին, որի սրբատեղին գտնւում էր Իբերիայի սահմանից ոչ հեռու[5]: Նոյն հատուածում հեղինակը նկարագրում է նաեւ աղուանական քրմերին եւ հեթանոսական այն սովորոյթը, որն ուղեկցւում էր մարդկային զոհաբերութեամբ[6]:

Քննարկուած աղբիւրագիտական նիւթի հետ հնագիտական գտածոների համադրումը որոշ մասնագէտներ հիմք են համարել՝ մտածելու, թէ Ք. ա. Դ-Գ դարերի անտիկ գրողներին յայտնի Աղուանքում արդէն միասնական թագաւորութիւն էր ձեւաւորուած[7]: Սակայն Ստրաբոնի լաւ յայտնի տեղեկութեան ուշադիր վերլու-

---

[1] **W. Tomaschek**, Albanoi, p. 1303; **А. П. Новосельцев**, К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период, – КВ, вып. I, Ер., 1979, с. 10-18; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 21-36; **M. Bais**, The southern border of Caucasian Albania (1st B. C. – 2nd A. D.): calling up the sources, – «Բազմավէպ», ՃՀԲ 153, 2005, էջ 331-345; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 54-71; **նոյնի՝** Снова о южной границе Албании (I в. до н. э. – сер. V в. н. э.), – Albania Caucasica, Сб. статей, вып. I, Предисловие, подгот. **А. К. Аликберов, М. С. Гаджиев**, Москва, 2015, с. 48-56.

[2] **Strab.** XI, 4, 3.

[3] **Plin.** Nat. Hist. VI, 29. Պտղոմէոսի մօտ «Խաբալա» անունով նշուած է մի հասարակ քաղաք: Ի դէպ, Պլինիոս Աւագը մի ուշագրաւ վկայութիւն ունի Ք. յ. Ա դ. կէսերին Հայաստան արշաւած Կորբուլոնի ուղեկիցների կողմից «տեղում կազմուած» քարտէզների՝ «տեղանքի գծագրերի» մասին: Տե՛ս **Plin.** Nat. Hist. VI, 15. Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 121-122.

[4] **Ptolemaei** Geographica, Edit. **C. Müller**, Parisiis, 1901 (յետայսու՝ **Ptol.** Geogr.), V, 11, 2-7.

[5] **Strab.** XI, 4, 7.

[6] Աղուանների հաւատալիքների մանրամասն վերլուծութիւնը տե՛ս, օր.՝ **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 150-157.

[7] Տե՛ս, օր.՝ **И. Алиев**, К интерпретации параграфов 1, 3, 4 и 5 IV главы XI книги "Географии" Страбона, – ВДИ, 1975, № 3, с. 180; **И. А. Бабаев**, К вопросу о возникновении государства Албании (Кавказской), – "Известия" АН Азерб. ССР, Серия истории, философии и права, Баку, 1976, № 4, с. 51; **Дж. А. Халилов**, Материальная культура Кавказской Албании, Баку, 1985, с. 206. Կ. Տրեւերը Ք. ա. Դ-Գ դարերով թուագրում էր Աղուանքում պետականութեան սաղմերի ձեւաւորումը, իսկ միասնական թագաւորութեան կազմաւորման աւարտն աւելի հաւանական էր համարում Ք. ա. Բ դարում (**К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 60, 144 сл.).

ծութիւնը ստիպում է մտածել, որ թագաւորութեան ձեւաւորումը հիմնաւորուած կը լինէր թուագրել միմիայն Պոմպէոսի արշաւանքներին անմիջապէս նախորդած ժամանակահատուածով, այսինքն՝ Ք. ա. Ա դ. սկզբներով[1]: Աղուանքին նվիրուած գլխում յոյն աշխարհագէտն, ի թիւս այլ ուշագրաւ տուեալների, գրում է. «...հիմա բոլոր [ալբաններ]ի վրայ մէկն է թագաւորում, իսկ սրանից առաջ ամեն մի առանձին լեզու [ունեցող ցեղ] առանձին էր թագաւորում, լեզուներն էլ քսանվեցն էին՝ միմեանց միջեւ չաճախակի առնչութիւններ չլինելու պատճառով»[2]: Ե՛ւ ժամանակային միջակայք, ե՛ւ պատճառ մատնանշող՝ իւրայատուկ տրամաբանական կառուցուածք ունեցող («հիմա ... իսկ սրանից առաջ [νυνὶ ... πρότερον δε] ... պատճառով») այս վկայութիւնն, անշուշտ, պիտի վերագրել Պոմպէոսի ուղեկիցներին, քանի որ նրանք իրենց առջեւ ոչ թէ աղուանական ցեղերի խումբ էին տեսել կանգնած, այլ արդէն միասնական թագաւորութիւն: Բայց միաժամանակ կարեւոր է, որ տասնամեակներ անց ինքը՝ Ստրաբոնը, տեղին է գտել շարադրել այն հէնց նոյնատիպ կառուցուածքով («հիմա ... սրանից առաջ»): Դրանից բխում է, որ մէկ թագաւորի իշխանութեան տակ աղուանից 26 ցեղերի միաւորումը տեղի էր ունեցել Ք. ա. 69-65 թթ. հռոմէա-աղուանական բախումներից ոչ շատ առաջ, կարելի է ասել՝ ինչ-որ իմաստով գրեթէ Պոմպէոսի ժամանակակիցների «աչքի առջեւ», որոնց, ասես, չափազանց լաւ էր ծանօթ նախորդ, բաժան-բաժան լեզուներով ու թագաւորիկներով ցեղային վիճակը՝ իր ակնյայտ ու, թերեւս, մինչեւ Ստրաբոն շարունակական (ցեղերի՝ իրարից կտրուածութեան) գլխաւոր պատճառով:

Ինչ վերաբերում է հնագիտական պեղումներից ի յայտ եկող եւ սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների որոշակի զարգացած աստիճան մատնանշող նիւթական մշակոյթի յուշարձաններին, որոնց վրայ յղում են Աղուանքում աւելի վաղ շրջանի (Ք. ա. Դ-Բ դդ.) միասնական թագաւորութիւն ենթադրող մասնագէտները, ապա պիտի նկատի ունենալ, որ հասարակական զարգացման տուեալ մակարդակից ինքնաբերաբար ամենեւին չի բխում անկախ ու միասնական պետութեան գոյութիւնը: Զարգացման նոյն մակարդակի վրայ էին գտնւում Մարական, Աքեմենեան եւ Սելեւկեան տէրութիւններին ենթակայ եւ հնագիտօրէն լաւ հետազօտուած այլ երկրներ եւս (Պարթեւք, Բակտրիա, Խորեզմ, Արիա, Վրկան, Կադու-

---

[1] Հմմ. **W. Tomaschek**, Albanoi, c. 1306; Очерки истории СССР. Первобытно-общинный строй и древнейшие государства, с. 441; **Г. А. Меликишвили**, К истории древней Грузии, с. 297; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 17 сл.; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 60-63:

[2] **Strab.** XI, 4, 6. Ցուցարէն γλῶττα իւրայատուկ եզրոյթի («լեզու», «խօսուածք», այս դէպքում՝ «լեզուով [խօսող ցեղ, ժողովուրդ]») կիրառման պատճառով բարդ ընկալուող բնագրի թարգմանութիւնը տուել ենք հնարաւորինս բառացի: Հմմ. **Страбон**, География, Пер. **Г. А. Стратановского**, Москва, 1964, с. 476; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 59; **С. М. Кркяшарян**, К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении, – В кн.: Проблемы античной истории и культуры, т. I, Ер., 1979, с. 132; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 110: Կովկասի հնակառոյց՝ արեւմտեան լանջերին (Դիոսկուրիա քաղաքից վեր) նոյնանմանն եւ Է՛լ աւելի բազմախառնացեղ վիճակի մասին տե՛ս **Strab.** XI, 2, 16-19; **Plin.** Nat. Hist. VI, 15.

սիա եւն), որտեղ Աքեմենեանների կամ Սելեւկեանների տիրապետութեան աւարտից յետոյ անմիջապէս չեն ծագել ինքնիշխան պետութիւններ, իսկ դրանց ծագումն այս կամ այն չափով իր արտացոլումն է գտել գրաւոր աղբիւրներում: Ք. ա. Գ դ. հեղինակներ Պատրոկլէսը եւ Էրատոսթենէսը աղուաններին միեւնոյն շարքում էին յիշատակում կադուսների, ամարդների, անարիակների եւ վրկանների հետ, որոնցից ոչ մէկն ինքնանկախ պետականութիւն չէր ձեւաւորել ո՛չ այդ ժամանակ, ո՛չ հետագայում մինչեւ Պոմպէոսի արշաւանքները[1]: Արդարացուած է նաեւ մէկ այլ դիտարկում. Աղուանից միասնական պետութեան ձեւաւորումը Ք. ա. Ա դ. սկզբից ոչ աւելի վաղ ժամանակի վերագրելու օգտին է վկայում այն, որ Աղուանքի տարածքում յայտնաբերուած Գ-Ա դարերի մակեդոնական, սելեւկեան եւ պարթեւական դրամների թուում եղած տեղական թողարկման սելեւկեան դրահմաների նմանողութեամբ նմուշները թուագրւում են Ք. ա. Ա դ. լոկ երկրորդ կէսով[2]:

Աղուանից նորակազմ թագաւորութեան առաջին բախումը հռոմէական բանակների հետ տեղի ունեցաւ Ք. ա. 60-ական թթ. սկզբին, Հայոց արքայի հաւաքած դաշնակցային զօրքի կազմում՝ Լուկուլլոսի լեգիոնների դէմ մղուած ճակատամարտերում[3]: Ըստ Պլուտարքոսի պատմածի՝ Միհրդատ Եւպատորին հետապնդելու պատրուակով Ք. ա. 69 թ. գարնանը Հայաստանի սահմանները ներխուժած Լուկուլլոսի դէմ Տիգրանակերտ մայրաքաղաքի մատոյցներում մեծ ճակատամարտի նախապատրաստուող Տիգրան Բ-ի մօտ «...իրենց բոլոր ուժերով հաւաքուեցին հայերն ու կորդուացիները, ներկայացան մեդերի եւ ադիաբէնցիների ամբողջ բանակները իրենց թագաւորների գլխաւորութեամբ, Բաբելոնի ծովի [կողմերի]ց եկաւ արաբների բազմութիւնը, իսկ կասպիցի [կողմերի]ց՝ ալբանների բազմութիւնը եւ ալբանների հարեւանութեամբ բնակուող իբերներինը, ժամանեցին ոչ քիչ թուով Արաքսի [իմա՛ միջինասիական Օքս գետի] կողմերում անասնապահութեամբ ապրող [եւ] թագաւորներ չունեցող ցեղեր, որոնց համոզել էին պարգեւ-

---

[1] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 17. Այստեղ տե՛ս նաեւ հնդկական արշաւանքի օրերին Ալեքսանդր Մակեդոնացուն հնդիկ Սոպիթ արքայի կողմից նուէր ուղարկուած շների վերաբերեալ անտիկ մի շարք հեղինակների հաղորդումը Պլինիոս Աւագի (եւ նրան կրկնող Յուլիոս Սոլինոսի) մօտ թիւրիմացաբար Աղուանից թագաւորին վերագրուած լինելու մասին, որը եւս հիմք է դարձել Աղուանից թագաւորութեան ձեւաւորումն աւելի վաղ ժամանակի վերագրելու համար:

[2] Տե՛ս **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 115-116 (հմմ. **Е. А. Пахомов**, Монетные клады Азербайджана и других республик, краев и областей, вып. IX, Баку, 1966, с. 20; **Խ. Ա. Մուշեղյան**, Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, Եր., 1983, էջ 30): Նոյն գրքում տե՛ս նաեւ Աղուանից միասնական պետութեան ձեւաւորումը շատ աւելի ուշ՝ Ք. յ. Ա դար բերող մի քանի պատմաբանների (Ս. Երեմեան, Բ. Ոլուբաբեան, մասամբ՝ Վ. Լեւիատով) փաստարկումների անընդունելիութեան մասին (էջ 110-111):

[3] **Plut.** Luc. XXVI-XXXII; **Dio Cass.** XXXVI, 1,1; 54, 1-5; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 126, 142-143; **Appiani** Alexandrini Historia Romana, Vol. I-II (BT), Lipsiae, 1879 (յետայսու՝ **App.** Mithr.), § 103, p. 84-87. Մանրամասն տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հտ. Ա, Եր., 1977, էջ 193-220; **Ռ. Լ. Մանասերյան**, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի եւ Պարթեւստանի դեմ, Եր., 1987, էջ 164-179 (նոյն գրքի ռուսերէն լրամշակուածը՝ Ер., 2007).

ներով ու նուէրներով»[1]: Այս խօսքերից իրաւացիօրէն եզրակացւում է, որ, ի տարբերութիւն յանուանէ նշուած Մարական Ատրպատականի եւ Ադիաբէնէի, Աղուանքի եւ Վիրքի բանակները Տիգրանի մօտ էին հասել առանց իրենց թագաւորների, թէպէտ, ըստ ամենայնի՝ նոյնպէս լրիւ կազմով[2]: Միաժամանակ, դրանից չի կարելի բխեցնել, թէ Աղուանքում այդ ժամանակ չի եղել կամ անգամ թոյլ է ձեւաւորուած եղել թագաւորական իշխանութիւնը[3], քանի որ «թագաւորներ չունեցող» դաշնակից ցեղերի մասին (Օքս – Արաքս – Ամու-Դարիայի աւերից, այսինքն՝ այժմեան արեւմտեան Թուրքմենստանի կողմերից) աղբիւրը նշում է յատուկ ձեւով: Պարզ է նաեւ, որ ի տարբերութիւն վերջինների՝ Աղուանքը միւս թուարկուած թագաւորութիւնների նման մասնակցել է Տիգրանի գործողութիւններին դաշնակցային հիմունքներով, այլ ոչ թէ «պարգեւներով ու նուէրներով»[4]:

Տիգրանակերտի ճակատամարտն աւարտուեց հռոմէացիների յաղթանակով, սակայն Հայոց արքան կարողացաւ ապահովել իր տարացեղ բանակի կորիզի նահանջը երկրի խորքերը եւ պահպանեց այն: Դրա շնորհիւ յաջորդ տարուայ Սեպտեմբերին Արածանիի ափին տեղի ունեցած ճակատամարտում Տիգրանը Միհրդատի հետ միասին կասեցրեց Լուկուլլոսի առաջխաղացումը եւ ստիպեց նրան հեռանալ Հայոց երկրի սահմաններից դէպի Միջագետք[5]: Թէպէտ առկայ աղբիւրներն ուղղակի նշում չեն պահպանել, սակայն նրանց հաղորդումների մէջ հակառակ տեղեկութեան բացակայութեան հիման վրայ կարելի է եզրակացնել, որ Արածանիի վերնահովտում եւս աղուանական բանակը Հայոց արքայի միւս դաշնակիցների հետ միասին մասնակցել է հռոմէացիների դէմ մղուած յաղթական ճակատամարտին (Պլուտարքոսի մօտ պահպանուել է միայն իբերների եւ մարդերի թեթեւ հեծելազօրերի մասին ուղիղ յիշատակութիւն[6]):

Լուկուլլոսին փոխարինած հռոմէացի զօրավար Գնէոս Պոմպէոսը երկու տարի անց՝ Ք. ա. 66 թ., մի շարք յաղթանակներ տարաւ Միհրդատ Պոնտացու եւ Տիգրան Բ-ի զօրքերի նկատմամբ, որի շնորհիւ կարողացաւ գրաւել Հայոց Արտաշատ մայրաքաղաքը, ստիպել Մեծ Հայքի արքայից արքային՝ վճարելու ռազմատու-

---

[1] **Plut.** Luc. XXVI; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 64: Արաքս-Օքսի կողմերի այս վերջին քոչուոր ցեղերի նոյնականացման մասին (իբրեւ Ամու-Դարիայի գետաճովտի սագաուսուկա-սկիւթներ) մանրամասն տե՛ս **Р. Л. Манасерян**, Международные отношения на Переднем Востоке в 80-70-х годах до н. э. (Тигран II и войска с берегов Аракса), – ВДИ, 1992, № 1, с. 152-160. Հարկ է նշել, որ այսօր էլ դեռ չեն դադարում պարզամիտ փորձերը (յատկապէս ադրբեջանցի պատմաբանների կողմից)՝ նշուած ցեղերի տակ տեսնելու այսրկովկասեան Արաքս/Երասխի ափերի ինչ-որ բնակչութիւն, բայց նման փորձերի լրջութեան բացակայութիւնը որեւէ չափով կասկած չի յարուցում:

[2] Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 88 сл.

[3] Այդպէս տե՛ս **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 120:

[4] Աւելի մանրամասն տե՛ս **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 89-90; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 120-121:

[5] Մանրամասն տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հտ. Ա, էջ 209-220; **Ռ. Լ. Մանասերյան**, Տիգրան Մեծ, էջ 164-179:

[6] **Plut.** Luc. XXXI; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 73-74:

գանք եւ ընդունելու Հռոմի «բարեկամի ու դաշնակցի» պարտադրուած կարգավիճակը: Դրանից յետոյ Պոմպէոսի լեգիոնները վերսկսեցին Միհրդատի հետապնդումը, ով Հայաստանի հիւսիսային շրջանների եւ Վիրքի վրայով անցել էր Լազիկա/Կողքիս, այնտեղից էլ՝ Պոնտոս: Աղբիւրների տեղեկութիւնների համադրմամբ հնարաւոր է ենթադրել, որ Աղուանից եւ Վրաց պետութիւնները ոչ թէ պարզապէս դաշնակցում էին Տիգրան Բ-ի հետ, այլ մտնում էին ստեղծուած մի աւելի լայն դաշինքի մէջ՝ Պոնտոսից մինչեւ Ատրպատական, որի անդամներից մէկի՝ Մեծ Հայքի դուրս հանուելը չէր նշանակում միւսների դաշնակցային պարտաւորութիւնների դադարեցում: Թերեւս, էապէս սրանով պիտի բացատրուեն Պոմպէոսի արշաւանքները Աղուանքի ու Վիրքի դէմ եւ վերջիններիս հետեւողական մարտաշունչ դիրքորոշումը Հայաստանին արդէն հնազանդեցրած հռոմէացիների նկատմամբ[1]:

Ըստ բազմաթիւ հեղինակների մօտ պահպանուած պատմութեան՝ Պոմպէոսն իր հիմնական ուժերով 66 թ. ձմռան սկզբին հասաւ Մեծ Հայքի եւ Աղուանքի՝ Կուր գետով անցնող սահմանին, սակայն որոշեց չանցնել այն, այլ ձմեռել Կուրի աջափնեայ դաշտավայրում, ոչ հեռու նաեւ Իբերիա/Վիրքի սահմաններից: Անկասկած, այդ տեղանքը պէտք է համադրել Հայոց թագաւորների խաղխաղի ձմերոցի հետ՝ Ուտիք նահանգի արեւմուտքում (Կուրի Հախում վտակի գետաբերանի շրջանում), որի մասին հետագայում յայտնում է Ագաթանգեղոսը[2]: Որոշ ուսումնասիրողներ ճիշտ չեն մեկնաբանել սկզբնաղբիւրների վկայութիւնը եւ այդ տեղը նոյնացրել են անտիկ Մեծ Հայքի Անահտական կոչուած գաւառի հետ: Սակայն աւելի մանրամասն վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ աղբիւրները նշում են Պոմպէոսի որոշման մասին՝ լեգիոնները բաժանել երկու մասի, որոնցից մէկը ձմեռեց Անահտական գաւառում (Անահիտիս, Փոքր Հայքի սահմանի մօտ, հետագայի Բարձր Հայք նահանգում), իսկ երկրորդն՝ իր գլխաւորութեամբ՝ Աղուանքի սահմանի վրայ, Կուրի հարաւային ափերին (տեղում՝ երեք մասի բաժանուած)[3]: Աղբիւրները գրում են, թէ այստեղ հռոմէացիները «ուխտադրուժ» յարձակման ենթարկուեցին Կուր գետի (բնագրերում պահպանուել է գետանուան «կիւռնոս» ձեւը) այս ափին անցած Աղուանից թագաւոր Օրոյսի (նաեւ՝ Ορոյզ, Ορոյսէս) կողմից:

Ենթադրելի է, որ Պոմպէոսը դիմել էր Օրոյսին՝ Տիգրան Մեծի օրինակով հպատակուելու եւ Միհրդատի դէմ Հռոմի կողմն անցնելու առաջարկով: Դժուար չէ գուշակել, որ այդ դիմումը պիտի աւարտուէր՝ հակառակ դէպքում պատերազմի

---

[1] Այդ մասին հմմ. Տիտոս Լիւիոսի պնդումը (**Titi Livii** ab urbe condita libri. Editio altera, quam curavit **M. Müller**, Vol. I-II, Lipsiae, 1905-1906, § CI).

[2] **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ՝ **Գ. Տէր-Մկրտչեան** եւ **Ստ. Կանայեանց**, Թիֆլիս, 1909 (յետայսու՝ **Ագաթ.**), § 28, էջ 21 (վերահրատ.՝ «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 1320):

[3] **Dio Cass.** XXXVI, 53, 5; 54, 1; **Հովսեպոս Փլաւիոս, Դիոն Կասսիոս**, էջ 142; **Plut.** Pomp. XXXIV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 266: **App.** Mithr. 103. **Հմմ. А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 23, 26; **Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 125: Համեմատաբար վերջերս մանրամասն տե՛ս նաեւ **М. Дреер**, Помпей на Кавказе: Колхида, Иберия, Албания, – ВДИ, 1994, № 1, с. 20-32.

պատրաստուելու սպառնալիք-առաջարկով. եւ Աղուանքը նախընտրեց վերջինը: Կուրի աջ ափին Սատուրնալիաների տօնի օրերին տեղի ունեցած ծանր ճակատամարտը, այնուամենայնիւ, աւարտուեց հռոմէացիների յաղթանակով, իսկ պարտուած աղուանները նահանջեցին գետի ձախափնեակ եւ, ըստ Պլուտարքոսի, կնքեցին «դաշնակցութեան ու բարեկամութեան» ստանդարտ պայմանագիրը[1], դրանով թոյլ տալով Պոմպէոսին անխափան ներխուժել Վիրք, ապա անցնել Կողքիս եւ փորձել հասնել արդէն դէպի Մէովտիս (Ազովի ծով) նահանջող Միհրդատին:

Սակայն, չնայած կնքուած պայմանագրին՝ Աղուանքը մէկ տարի չանցած անսպասելի ներխուժման ենթարկուեց հռոմէացիների կողմից, որոնք Վիրքում ու Լազիկայում Միհրդատին անյաջող հետապնդելուց յետոյ մօտաւորապէս նոյն տեղում խախտեցին Կուրով անցնող՝ Մեծ Հայքի եւ Աղուանից թագաւորութեան սահմանը[2]: Ըստ մեզ հասած վկայութիւնների՝ նրանք գաղտնի մնալու նպատակով երկարատեւ ու դժուարին գիշերային անցումներով հասան նախ՝ Կամբիւսէս գետին (=Իորի), ապա Աղուանքի արեւմտեան տափաստանային Կամբիւսէնէ/Կամբէճան գաւառը կենտրոնական շրջաններից բաժանող՝ Ալազան գետի ստորին հոսանքին (ըստ պահպանուած հատուածների՝ «Աբանտոս» անուանումով[3]), որի այն կողմում երկու մեծ ճակատամարտ տուեցին: Դրանցից առաջինը, թերեւս, տեղի էր ունեցել աղուանական բանակի փոքրաթիւ ուժերի դէմ, որոնց գլխաւորում էր թագաւորի՝ անունով չիշուած Կոտիս (կամ՝ Կոսիս) եղբայրը. ըստ աղբիւրների վկայութեան՝ Պոմպէոսն անձամբ մենամարտեց նրա դէմ եւ կարողացաւ նիզակահար անել[4]: Երկրորդ ճակատամարտն արդէն Օրոյս թագաւորի գլխաւորած ամբողջ աղուանական զօրքի դէմ էր, այսինքն, ինչպէս աղբիւրներն են նշում՝ 60 հազ. հետեւակի եւ 12 կամ 22 հազ. հեծելազօրի[5]: Իբրեւ մանրամասնութիւն նշւում է այդ բանակում ամազոնուհիների ներկայութիւնը, թէպէտ միաժամանակ ասւում է, որ յաղթողները ճակատամարտից յետոյ կանացի ոչ մի դիակ չյայտնաբերեցին, այլ միայն ինչ-որ կանացի կիսակօշիկներ[6]: Լրացուցիչ յայտնւում է, որ

---

[1] **Plut.** Pomp. XXXIV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 267: Հմմ. **Dio Cass.** XXXVI, 54, 3-5; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 142-143; **App.** Mithr. 103.

[2] **Plut.** Pomp. XXXV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 267; **Dio Cass.** XXXVII, 3, 3-6; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 145:

[3] Բացառուած չէ, որ խօսքն *Ալազան* գետանուան (Պլինիոսի մօտ՝ «*Օ*լազանէս», *var.* «*Օ*լազանէ», Ստրաբոնի մօտ՝ «Ալազոնիոս», իսկ Պտղոմէոսի մօտ՝ անանուն) ոչ թէ մի տարբերակի, այլ գրչական խաթարուած ձեւի մասին է: Հնարաւոր է, որ Պոմպէոսի ուղեկիցները (օր.՝ ենթադրաբար, հէնց Թէոփանէսը) արձանագրել են տեղացիներից լսած «Ալազան» անունը՝ «Ալաս» ուղղական ձեւով, որն արդէն յունարէնի քերականական կանոններով սեռական հոլովում դարձել է «Ալանտոս», իսկ վերջինս էլ ինչ-որ մի վաղ գրչական վրիպման հետեւանքով վերածուել է «Աբանտոս»-ի՝ յունարէն *Λ* եւ *Β* գլխատառերի՝ որոշ չափով նման գրութիւնից առաջ եկած շփոթութեան պատճառով:

[4] **Plut.** Pomp. XXXV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 267; **Dio Cass.** XXXVII, 4, 1; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 145-146:

[5] **Plut.** Pomp. XXXV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 267-268; **Dio Cass.** XXXVII, 4, 4; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 146; **Strab.** XI, 4, 5.

[6] **Plut.** Pomp. XXXV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 268:

հռոմէացիների թուաքանակը զիջել է Օրոյսի բանակին, թէպէտ ուսումնասիրողները դրանում կասկածելու լուրջ հիմքեր են տեսնում[1]: Ըստ էութեան, յաջողութիւն էր ապահովել Պոմպէոսի հիմնական մարտավարական հնարքը՝ ներխուժման սկզբից մինչեւ վճռական բախումը անակնկալի բերել հռոմէական մեծ ուժերի չսպասող հակառակորդին: Իզուր չէ, որ մարտնչող լեգիոներները բացականչում էին «է՛ո Սատուրնալիա»՝ մատնացոյց անելով, որ նախորդ տարի Կուրի հարաւային ափերին աղուանների «գաղտագողի» յարձակման դիմաց, իրօք, նոյն կերպ են վրէժը լուծում[2]:

Յաղթական ճակատամարտից յետոյ հռոմէացիները շարժուեցին Կասպից ծովի ուղղութեամբ, բայց շուտով դադարեցրին առաջխաղացումը՝ չհասնելով նրան (Պլուտարքոսի խօսքերով՝ մինչեւ ծովափ մնացել էր միայն երեք օրուայ անցում, իսկ հետախոյզներն անգամ ծովի ջուր էին բերել Պոմպէոսին)[3]: Իբրեւ վարկած՝ կարելի է ենթադրել, որ Պոմպէոսի սկզբնական նպատակն է եղել՝ Կասպից ծովի ափերով անցնել Հիւսիսային Կովկասի տափաստաններ եւ Թիկունքից հարուած հասցնել Մէովտիսի կողմերում ապաստանած Միհրդատին[4], սակայն Կասպիցի ծովափին մօտենալիս զօրավարին համոզել էին, որ դա ոչ պակաս երկար ու վտանգաւոր ռազմուղի է (Սեւ ծովի՝ Պոնտոսի ափերով Եւպատորին հետապնդելը կիսատ էր թողնուել հէնց նմանատիպ պատճառաբանութեամբ): Իսկ պարտուած, սակայն գերուելուց խուսափել կարողացած Օրոյս թագաւորը նորից հաշտութիւն խնդրեց եւ ստացաւ այն, ըստ պատմիչների՝ իբրեւ Պոմպէոսի «ողորմածութիւն»[5]:

Գրելով այս մասին՝ Դիոն Կասսիոսը յիշատակում է նաեւ Կասպից ծովի ափամերձ ցեղերի հետ յաղթողների պայմանադրութիւնների մասին («Պոմպէոսը ... ալբաններին խաղաղութիւն պարգեւեց, ինչպէս նաեւ մի շարք այլ ցեղերի հետ, որոնք բնակւում են այն տարածքի վրայ, որն ընկած է Կովկասից մինչեւ Կասպից ծով, որտեղ եւ վերջանում է Կովկասից սկիզբ առնող լեռը, դաշինք կնքեց, երբ սրանք իր մօտ այդ նպատակով դեսպաններ ուղարկեցին»)[6]: Ափամերձ երկրամասի ցեղերի՝ ինչ-որ կարգի ինքնուրոյնութեան մասին վկայող, թերեւս, նոյն աղբիւրի (գուցէ՝ Թէոփանէս Միտիլենացու[7]) հաղորդումների արդիւնքն է թւում նաեւ Ստրաբոնի արտայայտութիւնը Աղուանից ծովափի Կասպիանա մարզի մասին («Ալբանների [մի] երկրամասն է նաեւ Կասպիանան՝ անուանուած, ինչպէս եւ ծո-

---

[1] Հմմ. **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 130:

[2] **Dio Cass.** XXXVII, 4, 4; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 146:

[3] **Plut.** Pomp. XXXVI; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 268: Հմմ. **Plin.** Nat. Hist. VI, 51, ուր յղում է արւում արշաւանքի մէկ այլ մասնակցի՝ Մարկոս Վարրոնի պատմածին:

[4] Աշխարհագրական հին, վրիպեալ աւանդոյթներից մէկի համաձայն՝ Կասպիցի ափերով դէպի Մէովտիս-Ազովի ծով ուղին այնքան էլ երկար չէր: Անգամ Կոստանդին Ծիրանածին կայսեր երկն էր խառնակ արձանագրում (De Cerem. II, 48). «...Մո[վա]կանի իշխանին (Մո[վա]կանից է *սկսւում Մէոտիս լիճը*)»: Մանրամասն տե՛ս ստորեւ (գլ. Դ, բաժին 1):

[5] **Dio Cass.** XXXVII, 5, 1; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 146:

[6] Անդ:

[7] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 52.

վը՝ կասպերի ցեղից, որը ներկայումս անհետացել է»)[1]. այդ աղբիւրին է հեղինակը յղում, երբ իբրեւ աղուանների հիւսիս-արեւելեան հարեւան նշում է «գելերի ու լեգերի» ցեղը՝ ներկայիս լեզգիների վաղ նախնիներին[2]. «Ալբանիայից վեր լեռներում, ըստ պատմածների, բնակւում են ամազոնուհիները: Թէոփանէսը, որ Պոմպէոսի հետ մասնակցել է արշաւանքին եւ եղել ալբանների մօտ, ասում է, որ ամազոնուհիների ու ալբանների միջեւ բնակւում են գելեր եւ լեգեր սկիւթները»[3]: Պլուտարքոսի մօտ նոյնն է. «Ամազոնուհիները զբաղեցնում են Կովկասի [լեռների]՝ Կասպից ծովին յարող գօտին, բայց ո՛չ ալբանների կողքին, քանի որ նրանց միջեւ բնակւում են դեռ գելերը եւ լեգերը»[4]: Իսկ Լուցիոս Ֆլորոսի եւ Աւրելիոս Վիկտորի (Դ դար) խօսքերով՝ Պոմպէոսին հնազանդուած Կովկասի ժողովուրդների թւում հայերից, իբերներից, կոլխերից, հենիոխներից ու աղուաններից բացի եղել են իբրեւ թէ նաեւ «կասպերը»[5]: Թէեւ այդ ուշ հեղինակները վերապատմել են Տիտոս Լիւիոսի (Ք. ա. Ա դար) երկի՝ մեզ չհասած գլուխը, բայց հնարաւոր է, որ այս դէպքում նրանք ոչ թէ բառացի են կրկնել աղբիւրում եղած ցանկը, այլ ներկայացրել են Ք. յ. Դ դ. սկզբի քաղաքական փոփոխութիւններին յաջորդած իրավիճակը (երբ Աղուանից թագաւորութիւնը կորցրել էր իր տարածքի ծովափնեայ կէսը): Դա աւելի լաւ է արտայայտուած Դ դարի միւս հռոմէացի պատմիչի՝ Ամմիանոս Մարկեղինոսի մօտ, ըստ որի գեղարուեստապաճոյճ ներկայացման (Յուլիանոս կայսեր ճառի մէջ)՝ Պոմպէոսն «անցել էր ալբանների երկրով եւ մասսագետների [իմա՛ մասքութների], որոնց այժմ ալաններ ենք կոչում, ջախջախել էր նաեւ այդ ժողովրդին ու տեսել Կասպիական լիճը»[6]: Ի դէպ, ուշ իրողութիւնների (ռեալիաների) ինչ-որ չափով արտայայտման նոյն երեւոյթը բացառուած չէ անգամ Դիոն Կասսիոսի (Դ դ. առաջին կէս)՝ վերը բերուած ձեւակերպման մէջ:

Պոմպէոսի արշաւանքների շնորհիւ Հռոմը հաստատապէս ամրապնդուեց Այսրկովկասում՝ յենուելով «դաշնակից եւ բարեկամ» հռչակուած տեղական թագաւորների իշխանութեան վրայ, այդ թւում՝ Աղուանից արքայի: Սակայն այդ «բարեկամութիւնը» չխանգարեց, որպէսզի Ք. ա. 61 թուականին Հռոմում տեղի ունեցած

---

[1] **Strab.** XI, 4, 5. Տե՛ս նաեւ **Ա. Հ. Հակոբյան**, Կասպերի եւ Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրութեան մասին, – ԼՀԳ, 1983, հմր 1, էջ 87-99; **նոյնի**՝ Албания-Алуанк..., с. 37-55.

[2] Ըստ Մ. Իխիլովի՝ «գելեր»-ը ոչ թէ առանձին ցեղի տրուած անուն էր, այլ «լեգեր» (=լեզգի) ցեղանուան մի դրափոխուած տարբերակ (**М. М. Ихилов**, К вопросу о происхождении народностей лезгинской языковой группы, – Ученые записки Дагестанского филиала АН СССР, кн. 2, Махачкала, 1969, с. 78-79). Համմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 56.

[3] **Strab.** XI, 5, 1.

[4] **Plut.** Pomp. XXXV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 268:

[5] **Florus Lucius Annius**, Epitome de Tito Livio Bellorum omnium annorum DCC, Edit. **E. S. Forster**, Cambridge/Mass., 1929, I, 40, 21; **Aurelius Victor Sextus**, De viris illustribus urbis Romae, Edit. **F. Pichlmayr** (BT), Lipsiae, 1911, 76.

[6] **Amm. Marcell.** XXIII, 5, 16. Համմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 105. Կասպից ծովից արեւմուտք մասսագետ-ալանների ներթափանցման մասին տե՛ս, օր.՝ **И. Алиев, Г. Асланов**, Племена сармато-массагето-аланского круга на территории Азербайджана, – ДВ, вып. 2, Ер., 1976, с. 221-225.

յաղթահանդէսում, ի թիւս մի քանի նուաճուած թագաւորների ու նրանց հարազատների, Պոմպէոսի յետեւից տարուէին նաեւ Աղուանքից բերուած երկու պատանդները (Վիրք/Իբերիայից այդպիսիք երեքն էին), որոնց Ապպիանոս պատմիչը կոչում է «ալբանական առաջնորդներ» («հեգեմոններ»)[1]:

Աղուանքի մասին անտիկ աղբիւրների յաջորդ տեղեկութիւնը վերաբերում է Ք. ա. 30-ական թթ., երբ Մարկոս Անտոնիոսը հռոմէական դիրքերն ուժեղացնելու համար փոփոխական յաջողութեամբ փորձում էր Պարթեւքի հզօրացած տէրութիւնից կտրել Հայաստանը (ուր թագաւորում էր Արտաւազդ Բ-ն) եւ հարեւան այսրկովկասեան երկրները: Այստեղ նա լուրջ դիմադրութեան հանդիպեց (տե՛ս ստորեւ՝ Խորենացու պահպանած վկայութիւնը), որից յետոյ նրա լեգիոնները Ք. ա. 34 թ. Կանիդիոս Կրասոս զօրավարի գլխաւորութեամբ ստիպուած եղան արշաւել Հայաստանով մինչեւ Կովկասեան լեռները[2],- սկզբում՝ Վիրք, ապա Վրաց զօրքն իրենց հետ վերցնելով՝ Աղուանք, ուր թագաւորում էր Զոբեր անունը կրող արքան (նաեւ՝ Զոբերոս): Ըստ Դիոն Կասսիոսի պատմածի՝ «Կանիդիոս Կրասոսը, արշաւելով իբերների դէմ, այդ կուում յաղթեց նրանց թագաւոր Փառնաբազոսին, ստիպեց նրան դաշնակից դառնալ եւ նրա հետ միասին ներխուժելով հարեւան Ալբանիա եւ յաղթելով սրանց եւս ու սրանց թագաւոր Զոբերոսին, սրանց նոյնպէս իր կողմը գրաւեց»[3]: Ստրաբոնի մի արտայայտութիւնից երեւում է, որ Աղուանից թագաւորութիւնում այս պարտութեանը յաջորդած շրջանում, այսինքն՝ դարավերջին, ինչ-որ պարբերականութեամբ հռոմէական կուսակալներ են նշանակուել (այդպէս՝ նաեւ Հայաստանում ու Վիրքում)[4], ըստ ամենայնի՝ զինուորական:

Մովսէս Խորենացու մօտ պահպանուել է Ք. ա. 30-ական թթ. Հռոմի դէմ Արտաւազդ Բ-ի հետ աղուանների դաշնակցութեանը վերաբերող հետեւեալ ուշագրաւ տեղեկութիւնը. «...զայրացեալ [իմա՛ Արտաւազդը]՝ հրաման տայր զաւր յարուցանել զբիւրաւորս Ատրպատական նահանգին եւ զբնակիչս լերինն Կաւկասու՝ հանդերձ Աղուանիւք եւ Վրաւք [եւ Խաղտեաւք][5], խաղայ իջանէ ի Միջագետս եւ

---

[1] **Plut.** Pomp. XLV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 275; **App.** Mithr. 117. Հմմ. **Florus Lucius Annius**, Epitome, I, 40, 28.

[2] **Plut.** Ant. XXXIV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 291:

[3] **Dio Cass.** XLIX, 24, 1. Հմմ. **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 177-178: Այս ժամանակաշրջանի մասին յատուկ տե՛ս **Ռ. Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչեւ Տրդատ Մեծ, Եր., 1997, էջ 9-60:

[4] **Strab.** VI, 4, 2 («Փասիսից եւ Եփրատից այս կողմ բոլորը... հռոմէացիներին են ենթակայ եւ նրանցից նշանակուած իշխանաւորներին: Իսկ հայերը եւ Կողքիսից վեր բնակուող ալբաններն ու իբերները պէտք ունեն միայն [հռոմէական] կառավարչի ներկայութեան եւ լաւ են զսպւում. ըմբոստանում են այն բանից [յետոյ միայն], եթէ հռոմէացիները զբաղուած են [ուրիշ տեղում]»). հմմ. **Ստրաբոն**, Քաղեց եւ թարգմանեց **Հ. Աճառյան**, Եր., 1940, էջ 22-23:

[5] Քառակուսի փակագծերում մեր կողմից վերականգնուած «եւ Խաղտեաւք» բառերը բացակայում են Պատմահօր երկի մեզ հասած ձեռագրերում, սակայն «եւ զԽախտեաց» ձեւով կան Ուխտանէսի մօտ, որն օգտուել է Խորենացուց («զզաւրս Աղուանից եւ զՎրաց եւ զԽախտեաց»). տե՛ս **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871 (յետայսու՝ **Ուխտ.**), Ա.լ, էջ 44: Ենթադրելի է, որ Ե դարի սկզբնօրինակի

հալածական առնէ զզաւրս Հռոմայեցւոց»[1]: Այս տեղեկութեան պատմական հաւաստիութեանն անհրաժեշտ է որոշակի վստահութեամբ վերաբերուել, քանի որ Պատմահայրը, ամենայն հաւանականութեամբ, այն վերցրել է Ք. յ. Գ դարի ժամանակագիր Յուլիոս Ափրիկանոսի հինգերորդ գրքից (պահպանուած՝ միայն հատուկենտ կտորներով), որը, ինչպէս պարզ է դարձել վերջին տարիների ուսումնասիրութիւններից, իրօք պարունակել է Խորենացու մօտ յատուկ մատնանշուած (գլ. Բ.ժ) եւ ապա վերարտադրուած պատմութիւնները Մեծ Հայքի Արտաշէս Ա, Տիգրան Բ եւ Արտաւազդ Բ արքաների մասին[2]:

Ք. յ. Ա դ. սկզբներին իր գերիշխանութիւնը Մերձաւոր Արեւելքում լիովին հաստատած Հռոմէական կայսրութեան արտաքին քաղաքականութեան կարեւոր կէտերից մէկը Հիւսիսային Կովկասից եկող քոչուոր ժողովուրդների աւերիչ յարձակումներից պաշտպանութեան ապահովումն էր, որի պատասխանատուութիւնը մինչ այդ կրում էին միայն Արտաշիսեան Հայաստանը եւ Պարթեւական Իրանը (այդ գործում լուրջ աւանդոյթներ էին ձեւաւորուել դեռեւս Մարական եւ Աքեմենեան տէրութիւնների ժամանակներից)[3]: Աղուանքը եւ նրա ցեղերն ու ժողովուրդները երկար դարեր մեծ դեր էին խաղալու «Կասպիական» կամ «Աղուանական» դարպասներ կոչուած Դերբենդ/Ջողի անցքի պաշտպանութեան գործում: Նման դերակատարում ունէր նաեւ հարեւան Վիրք/Իբերիան, որի տնօրինութեան տակ էր գտնւում Դարիալի լեռնանցքը կամ «Ալանաց դուռն»-ը (այն եւս աղբիւրներում երբեմն կոչւում էր «Կասպիական դուռն»): Դարասկզբին Կայսրութիւնը հասել էր նրան, որ Կովկասի լեռնանցքների պաշտպանութեան խնդրում Պարթեւքի եւ Հայաստանի դերակատարումն էապէս թուլացել էր եւ դրա պատասխանատուութիւնն անցել էր Հռոմի «բարեկամի եւ դաշնակցի» կարգավիճակում հանդէս եկող Վիրքին ու Աղուանքին. հռոմէացի պատմիչի խօսքերով՝ տարածաշրջանում «թագաւորում էին արտաքին տէրութիւններից մեր հզօրութեան շնորհիւ պաշտպանուած Հիբերների, Ալբանների եւ միւս [ժողովուրդ]ների թագաւորները»[4]:

Միւս կողմից՝ նշուած գործառոյթի իրականացման բովում հմտացած Աղուանքն ու Վիրքն ինքնուրոյն գործօն էին դարձել եւ յարմար պահի լուծում էին

այդ բառերը վրիպուել են մի վաղ արտագրութեան մէջ՝ յաջորդող «խաղալ» կամ «խաղաց» բառի նմանութիւնից առաջացած շփոթութեան պատճառով:

[1] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ՝ **Մ. Աբեղեան** եւ **Ս. Յարութիւնեան**, Տփղիս, 1913 (յետայսու՝ **Խոր.**), գլ. Բ.իբ, էջ 137 (վերահրատ.՝ «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 1885): Պատմաճոր երեք հիմնական ձեռագրախմբերից (*ԱՏՄ*) *Ա*-ի գրչագրերի մեծ մասն ունի «*Կովկասու*» *փխմ.* «*Կաւկասու*» եւ «*Աղուանաւք*» *փխմ.* «*Աղուանիւք*» ընթերցումները: Նրա այս տեղեկութիւնը Ժ դարում տարբեր ճշտութեամբ կրկնում են Ուխտանէսը եւ Մովսէս Դասխուրանցին (*Ա.ը*, էջ 13. «կոչեաց զհզաւր ազգս լերինն Կաւկասու եւ զզաւրս Աղուանից եւ Վրաց եւ խաղաց ի Միջագետս...»), ԺԳ դարում՝ Վարդան Արեւելցին եւ այլ ուշ պատմիչներ:

[2] Տե՛ս **Ա. Թոփչյան**, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Եր., 2001, էջ 85-133:

[3] Այդ աւանդոյթները պէտք է շարունակուէին նաեւ յաջորդ դարերում, Արաբական խալիփայութեան եւ անգամ Սեֆեան Պարսկաստանի տիրապետութեան ժամանակներում:

[4] **Tac.** Ann. IV, 5. Հմմ. **Կ. Տակիտուս**, էջ 21:

նաեւ սեփական ժողովուրդների ու պետականութիւնների հզօրացման խնդիրը: Դարասկզբին Աղուանքի ինքնուրոյնութեան մասին մի վկայութիւն է պահպանել Տակիտոսը: Նրա խօսքերով՝ Պարթեւքում, ապա Մեծ Հայքում թագաւորած եւ դահընկէց արուած, ապա հռոմէացիների կողմից Կիլիկիայում պահուող Վոնոն Արշակունին 19 թ. փորձեց իր աքսորավայրից փախչել Հայաստան (ճանապարհին նա դաւադրաբար սպանուեց), որպէսզի անցնի «այնտեղից ալբանների եւ [կամ] հենիոխների, եւ [ապա] իրեն արիւնակից սկիւթական թագաւորի մօտ»[1]: Նշենք, որ Տակիտոսի բնագրի Albanos Heniochosque բառերը, հետեւելով Ա. Ջեռնեակին, պիտի ընկալել «ալբանների եւ [կամ] հենիոխների» վերականգնումով (հեղինակի բազմակողմանի վերլուծութեան համաձայն՝ վերոբերեալ բառախմբի վերջում գրչական վրիպում է սպրդել, որը պէտք է ուղղել Albanos Heniochos[que]ve)[2], քանի որ Ք. յ. առաջին դարերում «Հենիոխների թագաւորութիւն» (կամ՝ «Հենիոխների եւ մախելոնների») անուամբ անտիկ աղբիւրները գիտէին նոյն Կոլխիդա – Լազիկա – Եգերքը[3] (կամ նրա հիւսիս-արեւմտեան մասը)՝ Այսրկովկասի հակառակ, այսինքն՝ արեւմտեան կողմում: Այնտեղից եւս (ինչպէս եւ Աղուանից թագաւորութիւնից՝ Դերբենդով) կարելի էր հասնել հիւսիսկովկասեան տափաստանների «սկիւթ»-ալանների մօտ: Վերջինների անուան տակ Դերբենդից հարաւ Մասքթաց թագաւորութիւնն ընկալելու մասին Ս. Երեմեանի վարկածը[4] պիտի համարել ժամանակավրէպ 1-2 դարով, քանի որ ըստ Յովսէպոս Փլաւիոսի՝ 72 թ. Հիւսիսային Կովկասից դէպի Հայաստան եւ Մարաստան արշաւած «ալանների ցեղը այն սկիւթներն են, որ Տանայիսի եւ Մէովտիս լճի շուրջն են բնակւում»[5]:

Մի քանի տարի անց՝ 34 թուականին, Աղուանքն ու Վիրքը Հռոմի օգնութեամբ պատերազմի մէջ մտան Պարթեւքի դէմ եւ կարողացան կասեցնել Արտաւան Գ-ի (12-38) փորձերը՝ ամրապնդելու իր գերիշխանութիւնը Հայաստանում, որտեղ թագաւոր էր հռչակուել նրա որդի Արշակը: Այդ պատերազմում Վիրքը Դարիալի լեռնանցքով ստացաւ հիւսիսկովկասեան ալանական ցեղախմբերի օգնութիւնը, որոնք աւերածութիւններ գործեցին Հայաստանում եւ Ատրպատականում: Ըստ Յովսէպոսի՝ «Տիբերիոս [կայսր]ը թուղթ է ուղարկում [Ասորիքի կառաւարիչ] Վիտելիոսին, հրահանգելով նրան բարեկամութիւն հաստատել պարթեւների թագաւոր Արտաբանոսի հետ... [դրանից բացի նա] մեծ գումարներ տալով համոզում է ե՛ւ իբերների, ե՛ւ ալբանների թագաւորներին՝ առանց վարանելու պատերազմի ելնել Արտաբանոսի դէմ: Իսկ նրանք թէեւ դէմ կանգնեցին, սակայն կասպեան դո-

---

[1] **Tac.** Ann. II, 68. Հմմ. **Կ. Տակիտուս**, էջ 19:

[2] Տե՛ս **А. Б. Черняк**, К интерпретации сообщения Тацита о Вононе, – ИФЖ, 1984, № 4, с. 208-215 (յատկապէս էջ 212 յաջ.):

[3] Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 116-117.

[4] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն [յետայսու՝ ՀԺՊ], հտ. I, Եր., 1971, էջ 713, ծն. 21:

[5] **Josephus Flavius**, The Jewish War, Edit. and translated by **H. St. J. Thackeray**, Vol. I-III, Cambridge/Mass., 1927 (յետայսու՝ **Joseph**, De bell. Jud.), VII, 7, 4. Հմմ. **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 52: Ալանների 72-74 թթ. արշաւանքների մասին տե՛ս, օր.՝ **Р. А. Габриелян**, Армяно-аланские отношения (I-X вв.), Ер., 1989, с. 65-69.

ները բաց անելով ալանների առաջ, իրենց երկրի միջով ճանապարհ տուեցին նրանց Արտաբանոսի դէմ»[1]: 35 թուականին Վիրքի թագաւոր Փարասման (կամ՝ Փարսման) Փառնաւազեանը, որն ազգակից էր հայ Արտաշիսեան արքաներին, կարողացաւ թունաւորել տալ Հայաստանի պարթեւ թագաւոր Արշակին, եւ վրացաղուանական մեծաքանակ զօրքով մտնելով երկիր՝ գրաւեց Արտաշատ մայրաքաղաքն ու Հայոց գահին բազմեցրեց իր եղբայր Միհրդատին: Հայաստանի եւ Պարթեւքի դէմ այս պատերազմին մասնակցած Աղուանից թագաւորը, որի անունն աղբիւրներում բացակայում է, կասպից ծովի ափով բաց էր թողել սարմատական դաշնակից ցեղերին՝ միաժամանակ փակելով մուտների ճանապարհը, որոնք գալիս էին կռուելու պարթեւների կողմում: Այդպէս իբերներն ու աղուանները հիւսիսկովկասեան ցեղերի օժանդակութեամբ շահեցին պատերազմը եւ պարթեւահայկական զօրքերի դէմ վճռական ճակատամարտում սպանեցին Արտաւանի միւս որդի Օրոդէսին, որը պէտք է փոխարինէր Արշակին Հայոց գահի վրայ[2]:

Աղբիւրներն արձանագրում են նաեւ Հռոմի օժանդակութեամբ հզօրացած Աղուանքի եւ Վիրքի միջեւ առկայ հակասութիւններն ու դրանց հանգուցալուծման որոշ դրուագներ, որոնցից ամենայայտնին Ա դ. 50-ական թթ. իբերա-աղուանական պատերազմն էր: Ըստ Տակիտոսի՝ Վրաց («Հիբերիայի») թագաւոր Փարասմանը 51 թ. պատերազմ էր սկսել Աղուանքի դէմ, օգնութեան խնդրանքով դիմել կայսրութեանը եւ, չնայած վերջինիս մերժմանը, յաղթանակ տարել[3]: Դրա հետեւանքով երկու երկրների միջեւ սահմանը տեղափոխուել էր աւելի արեւելք եւ հասել Ալազան գետին (ըստ երեւոյթին՝ նրա գետաբերանին). հետագայում Աղուանից թագաւորութիւնը վերադարձրեց այդ գրաւուած տարածքը՝ կամբէճան գաւառը[4]: Հռոմի դաշնակիցների միջեւ հակասութիւնների պատճառներից մէկը պիտի համարուի նաեւ Պարթեւստանի քաղաքականութեան կենսունակութիւնը, որն այդ շրջանում լիովին ընդունելի էր Հայաստանի համար: Դրա արդիւնքում Մեծ Հայքում այնուամենայնիւ հաստատուեց պարթեւ արքայ Վաղարշ Ա-ի (51-75) եղբայր Տրդատ Ա-ի թագաւորութիւնը, որը 62 թ. Հռանդէայի համաձայնագրի շրջանակներում վաւերացուեց Ներոն կայսեր կողմից:

Յաջորդող շրջանում Տակիտոս, Սուետոնիոս եւ Դիոն Կասսիոս պատմիչներն արձանագրել են դէպի Աղուանք եւ «Կասպիական դարպասներ» արշաւելու համար Ներոն կայսեր լուրջ նախապատրաստական աշխատանքները: Առաջինի խօսքերով՝ «պատրաստուելով ալբանների դէմ պատերազմի՝ [կայսրն իր հաւաքած լեգիոններն] ուղարկեց դէպի Կասպիական անցքը, սակայն ճանապարհից

---

[1] **Flavii Josephi** Opera omnia, Post **I. Bekkerem** recognovit **S. A. Naber**, Vol. I, Lipsiae, 1888, Ant. Jud., XVIII, 96-97 (հմմ. **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 78):

[2] **Tac.** Ann. VI, 33-35; **Dio Cass.** LVIII, 26, 3-4; **Joseph**, Ant. Jud. XVIII, 98. Հմմ. **Կ. Տակիտուս**, էջ 25-31; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 78, 196: Մանրամասն տե՛ս **Հ. Մանանդյան**, Երկեր, հտ. Ա, էջ 306-309:

[3] **Tac.** Ann. XII, 45. Հմմ. **Կ. Տակիտուս**, էջ 55:

[4] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 28.

յետ կանչեց՝ Վինդեքսի ապստամբութիւնը ճնշելու»[1]: Ներոնի նպատակակէտի տակ այս դէպքում, առաւել մեծ հաւանականութեամբ, պէտք է ընկալել Դերբենդի անցքը[2], ուստի նաեւ արձանագրելի է, որ Հռանդէայի պայմանագրով Հռոմը պահպանել էր իր պարտականութիւնները Կովկասեան սահմանի պաշտպանութեան խնդրում, ինչը կարող էր յաջող իրականացուել լոկ Աղուանից եւ Վրաց թագաւորների հետ համագործակցելով: Ներոնի մեծ արշաւանքը չկայացաւ՝ արեւմուտքում 68 թ. բռնկուած խռովութեան պատճառով: Փոխարէնը՝ 72 թ. հետեւեց Դարիալով անցած հիւսիսկովկասեան ալանական ցեղերի ասպատակութիւնն Այսրկովկաս, Հայաստան (ուր թագաւորում էր Տրդատ Ա-ն) եւ Ատրպատական (Մեդիա)[3]: Եւ լոկ տարիներ անց Կասպիական ծովափին հասաւ Դոմետիանոս կայսեր (81-96) ուղարկած զօրքը. նրա օրօք էր Կոբուստանի շրջանում լատիներէն վիմագիր փորագրել Ֆուլմինատի XII լեգիոնի զօրապետ Յուլիոս Մաքսիմոսը[4]:

Հարկ է նշել, որ Դերբենդի անցքի պաշտպանութեան հարցում Հռոմի ստեղծած համակարգում էական դեր էր կատարում նաեւ Մեծ Հայքի թագաւորութիւնը: Դրա մասին տեղեկութիւններ են պահպանուել ոչ միայն յունա-հռոմէական պատմիչների, այլեւ Մովսէս Խորենացու մօտ: Պատմահայրն արձանագրել է Տրդատ Ա-ի (Արտաշէս անուան տակ) բախման պատմութիւնը հիւսիսկովկասեան ալաններ հետ, ինչպէս նաեւ Բ դ. երկրորդ կէսի թագաւորների՝ Վաղարշ Ա-ի եւ Խոսրով Ա-ի պատերազմներն Աղուանքում եւ «Ճորայ դռնից» այն կողմ[5], ընդ որում՝ երկու դէպքում էլ նշւում է այդ խնդրում հայ-հռոմէական դաշնակցութեան մասին: Յունա-հռոմէական պատմիչները փաստում են Կովկասեան անցքերի պաշտպանութեանը Աղուանքի թագաւորների մասնակցութիւնը, սակայն, ցաւօք, ոչ մի անգամ չեն նշում նրանց անունները: Յայտնի են Տրայանոս կայսեր (98-117) ջանքերը Աղուանքը պաշտպանական այդ համակարգում հաստատուն պահելու ուղղութեամբ, որի համար նա ստիպուած է եղել երկրի գահին դնել իր թեկնածուին: Եւտրոպիոսի եւ Ռուփոս Փեստոսի նոյնանման խօսքերով՝ «Տրայանոսը Հայաստանը յետ խլեց Պարթեւներից... Նա Ալբաններին թագաւոր տուեց, իսկ Հիբերների, Սաւրոմատների, Բոսպորցիների, Արաբների, Օսրոյէնցիների ու Կոլխերի թագաւորներին [իր] ենթակայութեան տակ առաւ»[6]: Նշելի է, որ Աղուանքի տուեալ անանուն

---

[1] **Tac.** Hist. I, 6. Հմմ. **Suetonii Tranquilli** De vita Caesarum, Recognoverunt **M. Ihm**, Lipsiae, 1907, Ner. 19; **Dio Cass.** LXIII, 8, 1; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 206:

[2] Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 121-125. Հակառակ կարծիքը տե՛ս **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 144-145:

[3] **Joseph**, De bell. Jud. VII, 7, 4 (**Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 52-53); **Խոր.**, Բ.ծ, էջ 177-178; «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, էջ 1926; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 146-147; **Р. А. Габриелян**, Армяно-аланские отношения, с. 65-69.

[4] Տե՛ս **Пахомов Е. А.**, Римская надпись I в. н. э. и легион XII фульмината, с. 86; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 127-129.

[5] **Խոր.**, Բ.կե, էջ 200; ՄՀ, հտ. Բ, էջ 1949-1950:

[6] **Eutropii** Breviarum historiae Romanae, Recognoverunt **F. Ruehl** (BT), Lipsiae, 1897 (յետայսուն՝ **Eutrop.**), VIII, 3; **Rufi Festi** Breviarum rerum gestarum populi Romani, Edit. **E. S. Fors-**

թագաւորը պարթեւների նկատմամբ Հռոմի յաջողութիւնների այս շրջանում դժուար թէ կարող էր պարթեւ Արշակունի լինել (անկախ՝ գրականութեան մէջ տարածուած նման a priori վարկածից), ուստի վստահօրէն հարկ է ընդունել, որ նա պիտի պատկաներ վաղնջական արքայական տոհմին (Օրոյսի, Զոբերի եւն)[1]:

Տրայանոսին յաջորդած Հադրիանոս կայսեր (117-138) իշխանութեան աւարտին, 135 կամ 136 թ. կրկնուեց դէպի Այսրկովկաս ալանների ներխուժումը, որոնց համար Դիոն Կասսիոսը ծանօթագրում է. «սրանք մասսագետներ են»[2]: Կրկին Դարիալով անցած (Փարասման Բ Վրաց թագաւորի թողտուութեամբ) տափաստանաբնակների արշաւանքը «մեծապէս վնասեց Ալբանիային եւ Մեդիային [Ատրպատականին], շոշափեց նաեւ Հայաստանն ու Կապադովկիան»[3]: Ըստ Դիոնի հետագայ խօսքերի՝ պատերազմը դադարեց միայն Վաղարշ թագաւորի (Մեծ Հայքի) նուէրների շնորհիւ, ինչպէս նաեւ Կապադովկիայի հռոմէական կառավարիչ Փլաւիոս Արրիանոսի (ըստ երեւոյթին՝ լուրջ գործողութիւնների պատրաստուած) վախից[4]: Ըստ Հադրիանոսի կենսագիր Էլիոս Սպարտիանոսի երկի («Օգոստոսների պատմութիւն» կոչուած ժողովածոյի կազմում)՝ կայսրն «ամենաջերմ բարեկամութիւն էր պահպանում Ալբաննների ու Հիբերների հետ եւ առատ ընծաներ տալիս նրանց թագաւորներին, թէպէտ նրանք չէին բարեհաճում գնալ նրա առջեւ»[5]:

Ենթադրւում է, որ Բ դ. երկրորդ կէսին եւ Գ դ. սկզբին եւս Աղուանքը նոյն կերպ, ինչպէս հարեւան Մեծ Հայքը եւ Վիրքը (ուր հռոմէական լեգիոնները լատիներէն վիմագրեր են թողել), առաւելապէս կայսրութեան ազդեցութեան ոլորտում է գտնուել՝ շարունակելով մնալ անկախ[6]: Իրավիճակը, թերեւս, չէր փոխուել, եւ Աղուանքի վաղնջական թագաւորական տոհմը շարունակում էր երկրում իշխել նաեւ Իրանում պարթեւ Արշակունիների փոխարէն Սասանեան արքայական հարստութեան հաստատումից յետոյ 220-ական թթ.:

Առաջին Սասանեանների բազմալեզու վիմագրերը (Շապուհ Ա-ի, մոգպետ Կարտիրի եւն) յիշատակում են Աղուանք/Առանը որպէս թագաւորութիւն՝ չտալով, սակայն, նրա տիրակալի անունը[7]: Միւս կողմից՝ Զ դ. ամենասկզբին շարադրուած՝ «Վաչագանի վէպ» անուանուած աղբիւրը (Ժ դարում արտագրուած Մով-

---

ter, Hannover, 1874, § XX. Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре Кавказской Албании, с. 129.

[1] Հմմ. անդ, էջ 130; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 151:

[2] **Dio Cass.** LXIX, 15, 1; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 214:

[3] Տե՛ս նաեւ **Р. А. Габриелян**, Армяно-аланские отношения, с. 69-70.

[4] Անդ: Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 130-131.

[5] **Aelius Spartianus**, De vita Hadriani, – Scriptores Historiae Augustae, In 2 vol., Edidit **E. Hohl**, Vol. I, Leipzig, 1927, I, 21; ibid, De vita Hadriani, – Scriptores Historiae Augustae, In 3 vol., With an English translation by **D. Magie**, Vol. I, Cambridge/Mass. – London, 1961, XXI, 13, p. 66. Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 130; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 151:

[6] Տե՛ս **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 131-132; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 152-153:

[7] Հմմ. անդ, էջ 154-160:

սէս Դասխուրանցու կողմից)[1] ուղղակի յայտնում է Աղուանքում Գ-Դ դդ. սահմանագծին Արշակունեաց արքայատոհմի հաստատման մասին՝ յանձին Վաչագան Ա Քաջի[2]: Դա ժամանակով համընկնում է Մեծ Հայքում Արշակունիների վերահաստատման հետ Գ դ. ամենավերջին՝ յանձին Դիոկղետիանոս կայսեր (284-305) կողմից Տրդատ Գ-ի (298-330) թագադրման, որն իրագործուեց 298/299 թ.[3]՝ 40 տարով կնքուած Մծբինի հաշտութեան համաձայնագրի պայմանների շրջանակում:

Տեղին նշենք, որ, գուցէ, նոյն պատմական դէպքերի արդիւնքում է արքայատոհմի փոփոխութիւն եղել նաեւ հարեւան Վիրք/Քարթլիում: Այստեղ վրացական ուշ (զարգացած միջնադարի) պատմական աւանդոյթը յայտնում է Գ դարում տեղի ունեցած՝ Փառնաւազեան արքայատոհմի փոխարինման մասին Միհրանեան նոր արքայատոհմի հիմնադիր եւ Տրդատ Մեծի ժամանակակից Միրիանով, ում Սասանեան ծագում է վերագրուում[4]: Սակայն հաշուի առնելով իւրայատուկ պատմական պահը (Սասանեանների զիջումները Հռոմին), իրանական լաւ յայտնի Միհրան տոհմի պարթեւական ակունքները, ինչպէս եւ հայկական (ու ահա նաեւ՝ աղուանական) զուգահեռը՝ կարելի է կասկածի տակ առնել այդ ուշ աւանդոյթի պնդումը (թերեւս, ծագած տարբեր պատմական սիւժէների միախառնումից) եւ

---

[1] Տե՛ս **Անանուն**, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեանի**, – «Մատենագիրք Հայոց» [*յետայսու՝* ՄՀ], հտ. Գ, Ջ դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112: Հմմ. **Ա. Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ջ դարերի Աղուանքում, – ՀԱ, ՃԺԷ տարի, 2003, սն. 45-142:

[2] **Դասխ.**, գլ. Ա.ժդ-ժե, էջ 40-41: Պարթեւ Արշակունիների հետ Աղուանքի մշակութային վաղ կապերի մասին տե՛ս, օր.՝ **А. М. Акопян**, Связи Армении и Кавказской Албании с Парфией (градостроительство и архитектура), – СА, 1979, № 4, с. 26-39.

[3] Ժամանակագրութեան ճշգրտումը տե՛ս **Կ. Իւզբաշեան**, Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, Եր., 2005, էջ 287. «Մծբինի պայմանագիրը ստորագրուած է եղել ոչ թէ 298 թ., ինչպէս ընդունւում էր մինչեւ վերջին ժամանակներս, այլ յաջորդ՝ 299 թ.: Հէնց այս թուականից էլ պիտի հաշուենք Տրդատ Մեծի գահակալութիւնը: Գրականութեան մէջ նա յայտնի է որպէս Տրդատ Երրորդ: Սակայն հիմք կայ ենթադրելու, որ գուցէ նա եղել է Չորրորդը, եւ նրանից առաջ Հայաստանում իշխել է ոչ թէ նրա Խոսրով հայրը, այլ Տրդատ Գ հօրեղբայրը: Կ. Թումանովի կարծիքով՝ հէնց նա է յիշատակուած Պայկուլիում գտնուած պարսկերէն յայտնի արձանագրութեան մէջ. միւսների հետ միասին Տրդատը ողջունում է շահանշահ Ներսեհի՝ Պարսից գահ բարձրանալը (տե՛ս **C. Toumanoff**, The third-century Arsacids – RÉArm., t. VI, 1969, p. 257)»: Հմմ. **Բ. Հ. Հարությունյան**, Էրիխ Քեթենհոֆեն, Տրդատը եւ Պայկուլիի արձանագրությունը..., Վիսբադեն, 1995..., – ՊԲՀ, 1996, հմր 1-2, էջ 353-355: Պայմանագրի մասին նորերս տե՛ս նաեւ **G. Traina**, Maping the New Empire: A Geographical Look at the 4th Century, – "East and West in the Roman Empire of the 4th Century. An End to Unity?", Leiden – Boston, 2015, p. 56; **А. Ж. Арутюнян**, Армения, государства Восточного Средиземноморья и Иран (189 г. до н. э. – 298 г. н. э.), Ростов-на-Дону, 2015, с. 285-288; **նոյնի՝** Столица Великой Армении Тигранакерт в контексте армяно-римско-ближневосточных межгосударственных отношений (296-301 гг.), Ростов-на-Дону – Таганрог, 2019, с. 86-118.

[4] Տե՛ս, օր.՝ **Мровели Леонти**, Жизнь Картлийских царей, Извлечение сведений об абхазах, народах Северного Кавказа и Дагестана, Пер. с древнегрузинского, предисловие и комментарии **Г. В. Цулая**, Москва, 1979, с. 37-38; **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Ա, Եր., 1934, էջ 162-165:

ենթադրել Միրիան Ա-ի սերումը հէնց պարթեւ Արշակունի արքայատոհմի որեւէ ճիւղից, ինչպէս որ դա արդէն արել է ակադ. Շալւա Ամիրանաշվիլին[1]:

Գ դարում աղբիւրները խիստ ուշագրաւ փոփոխութիւն են արձանագրում անտիկ Աղուանից թագաւորութեան տարածքային ընդգրկման առումով՝ նրա արեւելեան հատուածում: Այստեղ՝ Կասպից ծովի ողջ ափամերձ գօտում՝ մինչեւ Կովկասեան լեռները, յիշատակւում են արդէն Մասքթաց թագաւորութիւնը կամ (եւ) Բաղասական երկիրը, որն իր թագաւորական շրջանում ընդգրկում էր Կասպից ծովի առափնեայ տարածքը Կուր գետի ստորին հոսանքից մինչեւ Ջող/Դերբենդի անցքը՝ ներառելով Մասքութք երկրամասը[2]: Եւ որեւէ աղբիւր այլեւս չի խօսում այն մասին, որ այդ տարածքը նաեւ «Աղուանք» է, թէկուզ՝ ժողովրդագրական իմաստով: Այս փաստը կարեւոր ցուցիչ է էթնիկական պատմութեան համար, քանի որ եթէ մինչեւ Գ դարի նշուած փոփոխութիւնն իր աւարտին հասած լինէր աղուանական 26 ցեղերից միասնական էթնոսի կազմաւորումը, ապա քաղաքական կամ վարչական սահմանների փոփոխութիւնը չէր կարող դառնալ ամբողջից կտրուած տարածքի բնակչութեան ինքնանուանման (էթնանուան) կորստի պատճառ: Ըստ այսմ՝ անտիկ հեղինակների յիշատակած «ալբան» («աղուան») եզրոյթի տակ գոնէ Գ դարի կտրուածքով դեռեւս պէտք է հասկանալ ոչ թէ կազմաւորուած էթնոս, այլ «Ալբանիա» («Աղուանք») անունը կրող թագաւորութեան հիմնական (կովկասալեզու) բնակչութեան հաւաքական, էթնոպոտեստար ընդհանրութիւնը. այն թէպէտ եւ, ըստ ամենայնի՝ էթնոհամախմբման որոշակի աստիճանի էր հասել եւ ունէր օտար աղբիւրներում արձանագրուած բաւականին կայուն այլանուանում-արտանուն (էքզոէթնանուն-էքզոէթնոնիմ), սակայն իր ներսում շարունակում էր բաժանուած մնալ կովկասեան լեզուաբնտանիքի լեզգիական ենթախմբի լեզուներով խօսող առանձին ցեղային էթնոսների, որոնցից իւրաքանչիւրն ունէր կայուն էթնիկական ինքնագիտակցութիւն եւ ինքնանուանում (էնդոէթնոնիմ)[3]:

---

[1] **Շ. Ամիրանաշվիլի**, Վաղ-սասանեան դարաշրջանի արձաթեայ սկիհը Արմազիսխեւիի պեղումներից, – Թբիլիսի 1500. Յոբելեանական ժողովածոյ, Թբիլիսի, 1958 (վրացերէն), էջ 93: Համմ. այլ կարծիքով՝ **Г. А. Меликишвили**, К истории древней Грузии, с. 40.

[2] Բաղասականի տեղադրութեան մասին տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, – ԲԵՀ, 1971, հմր 1, էջ 178-182; **Б. Арутюнян**, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, – КВ, вып. 1, Ер., 1979, с. 31 сл.; **Բ. Հարությունյան**, Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, – ԼՀԳ, 1981, հմր 6, էջ 76-77; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 100 сл.; **Հ. Խորիկյան**, Բաղասական երկրի տեղադրությունը, – ՊԲՀ, 2010, հմր 2, էջ 150-168:

[3] Մանրամասն տե՛ս **М. М. Ихилов**, К вопросу о происхождении народностей лезгинской языковой группы, с. 88; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 106-107; **Ճոյնի՝** К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании в период ослабления Арабского Халифата, – "Caucasica" (Труды Ин-та политических и социальных исследований Черноморско-Каспийского региона), т. 2, Москва, 2013, с. 34-37; **Ա. Հակոբյան, Հ. Գալստյան**, Էթնալեզվական գործընթացները Բուն Աղուանքում, – Հայերենագիտական միջազգային 2-րդ գիտաժողով. Նյութերի ժողովածո, Եր., 1987, էջ 92-93; **A. Akopyan, A. Galstyan**, Concerning the study of ethnic processes in the Caucasian Albania (Antiquity and Early

Իրանում պարթեւ Արշակունիների փոխարէն Գ դ. 20-ական թթ. Սասանեանների հաստատման առիթով հայկական աղբիւրները գրում են վերջիններից դէմ ուղղուած հայ-աղուանական զինակցութեան մասին: Ըստ Ագաթանգեղոսի՝ աղուանները Վիրքի եւ այլ հարեւանների հետ մասնակցում էին Հայոց արքայ Խոսրով Մեծի (=Տրդատ Բ, 216-252) բազմամեայ արշաւանքներին դէպի Իրանի խորքը («...ի միւս եւս ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել եւ զաւր բովանդակել, գումարել զզաւրս Աղուանից եւ Վրաց, եւ բանալ զդրունս Ալանաց եւ զՃորայ պահակին, հանել զզաւրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչեւ ի դրունս Տիսբոնի... Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր եւ քաջ առն եւ ձիոյ եւ բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք եւ Ճիղպք, Կասպք եւ այլ եւս՝ որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտեւանայ խնդրեսցեն»)[1]: Ի դէպ, այս տեղեկութիւնը պահպանել է նաեւ վրաց պատմական աւանդոյթը, թէպէտ այնտեղ բացակայում է (թերեւս, պատահաբար) Աղուանքի (Հերէթ կամ Ռան) յիշատակութիւնը[2]:

Աղուանքը եւ Հայքը միասին են հանդէս գալիս նաեւ իբրեւ առաջին Սասանեաններին ենթակայ դարձած թագաւորութիւններ (252 թ. Տրդատ Բ-ի սպանութիւնից յետոյ, ըստ ագաթանգեղեան աւանդութեան՝ Անակ Պարթեւի կողմից, որին ուղարկել էր Պարսից արքան): Սասանեան վիմագրերում՝ Նախշ-է Ռուստամում կարտիր մոգպետի երկլեզու, Քաաբա-է Զարդուշտում Շապուհ Ա-ի (241-272)՝ եռալեզու եւ Պայկուլիում Նարսեհ (Ներսեհ) արքայի (293-302, մինչ այդ նա «Հայաստանի մեծ թագաւորն» էր) թողած երկլեզու բնագրերում երկու երկրները Իրանշահրի մէջ մտնող կիսանկախ երկրներ՝ շահրեր են: Երեք դէպքում էլ միջին պարսկերէնով «Առան» կոչուած (պահլաւերէնում՝ «Արդան», յունարէնում՝ «Ալբանիա») երկրի կողքին նշուած է բաղասական երկրի անունը (Բալասագան ձեւով), ինչպէս նաեւ «Ալբանական դուռն»-ը (որը, ըստ ամենայնի՝ Ջող/Դերբենդն էր)[3]:

Middle Ages), – 12th International Congress of Anthropological and Ethnological Sciences (Zagreb, 1988), Moscow, 1988, p. 3-5; **А. Акопян**, Этнические процессы в Кавказской Албании в период античности и в раннем средневековье, – ВА (Ер.), 2015, № 2(8), с. 69-83.

[1] **Ագաթ.**, գլ. Ա, § 19, էջ 16-17; ՄՀ, հտ. Բ, էջ 1316:

[2] Տե՛ս «Քարթլիս ցխովրեբա»-յում ընդգրկուած Լէոնտի Մռովելու երկում. «Եւ այս Խոսրով [Մեծ] Հայոց թագաւորը սկսեց պատերազմել Քասրէ[-Ծարւաձ] Պարսից թագաւորի հետ, եւ նրան օգնում էր Վրաց Ասփագոր թագաւորը: Եւ այս Ասփագորը բացեց Կասկասացւոց դուռն եւ դուրս բերեց օսերին, լեկերին եւ խազարներին եւ գնաց Խոսրով Հայոց թագաւորի մօտ՝ Պարսից հետ պատերազմելու» (տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները, հտ. Ա, էջ 162; **Мровели Леонти**, Жизнь Картлийских царей, с. 37).

[3] **E. Honigman, A. Maricq**, Recherches sur les Res Gestae divi Saporis, p. 64, 88-90; **A. Maricq**, Res Gestae divi Saporis, p. 48, 307; **С. Т. Еремян**, Страна "Махелония" надписи Кааба-и-Зардушт, – ВДИ, 1967, № 4, с. 47-59; **В. Г. Луконин**, Древний и раннесредневековый Иран, Москва, 1987, с. 169, 218-219, 255; **С. Ю. Касумова**, Южный Азербайджан в III-VII вв. (проблемы этно-культурной и социально-экономической истории), Баку, 1983, с. 50, 53-55; **Նոյնի՝** Le sceau du Catolicos d'Albanie et du Balāsagān, – SI, t. 20, fasc. 1, 1991, p. 31-32; **Ph. Huyse**, Die dreisprachige Inschrift Šabuhrs I. An der Kaʿba-i Zardušt (ŠKZ), London, 1999.

*Այս ժամանակաշրջանում եւս հռոմէացի պատմիչները յիշում են Ալբանիայի թագաւորների ինչ-ինչ գործեր: «Օգոստոսների պատմութիւն» ժողովածոյի մէջ ընդգրկուած Տրեբելիոս Պոլիոնի (Դ դ. վերջ) «Երկու Վալերիանոսներ» երկում նշւում է, որ Շապուհ Ա-ի կողմից Վալերիանոս կայսերը գերի վերցնելուն (260 թ.) խիստ բացասաբար վերաբերուելով՝ Աղուանից եւ Վրաց թագաւորները (անունները տրուած չեն) երկու ուրիշ տիրակալների նման պատրաստակամութիւն են յայտնել՝ օգնելու ազատել հռոմէացի կայսերը («Բակտրիացիները, Հիբերները, Ալբանները եւ Տաւրոսկիւթները չընդունեցին Շապուհի նամակները [կայսերը գերելու աւետիսով], այլ դիմումներ գրեցին հռոմէացի զօրապետներին՝ օգնութիւն խոստանալով Վալերիանոսին գերութիւնից ազատելու [գործում]»)[1]: Իսկ նոյն պահին Հայաստանի՝ «Արտաւազդ» անուանուած արքան նամակ է յղել Շապուհին (այդպէս նաեւ՝ «կադուսների թագաւոր Բելենոս»-ը)՝ բողոքելով, որ «Վալերիանոսի պէս մի ծերունու» գերի պահելով նա իր եւ իր դրացիների ու դաշնակիցների դէմ է հանել «ամբողջ աշխարհը»[2]: Տեղին նշենք, որ Հայոց այս Artavasdes արքան, անկախ գրականութեան մէջ ձեւաւորուած ծաւալուն աւանդոյթից, չպիտի համարուի առանձին տիրակալ, կամ էլ «ոչ պատմական անձ»[3], այլ, առաւել մեծ հաւանականութեամբ, պէտք է նոյնացուի Շապուհ Ա-ի աւագ որդի, «Հայաստանի մեծ թագաւոր» կոչուած Որմիզդ-Արտաշիրի հետ (252-272, ապա մէկ տարի՝ Իրանի արքայից արքայ՝ 272-273 թթ.), որը Մովսէս Խորենացուն յայտնի էր «Արտաշէս» անունով (հմմ. *Ohrmazd-Artašir – Artavasdes հնարաւոր դրափոխուած անցումը): Քաաբա-է Զարդուշտում Շապուհ Ա-ի եռալեզու վիմագրի յայտնաբերումից յետոյ Սասանեանների գերիշխանութեան ոլորտում յայտնուած Հայաստանում Որմիզդ-Արտաշիր – «Արտաւազդ» – «Արտաշէս» թագաւորից բացի մի այլ տիրակալ ընդունելու անհաւանականութեան մասին փաստարկները յատուկ ներկայացրել է իրանագէտ Մարի-Լուիզ Շօմոնը[4]: Իսկ նախնական զգուշաւորութեամբ՝ Որմիզդ-Արտաշիր – Արտաւազդ նոյնացման մասին այդ իրաւացի պնդումն առկայ է դեռեւս Հայկ Պէրպէրեանի մօտ (իբրեւ «ձեռագրական վրէպ մը»)[5]:*

---

[1] **Trebellii Pollionis** Valeriani duo, – Scriptores Historiae Augustae, With an English translation by **D. Magie**, In 3 vol., Vol. III, Cambridge/Mass. – London, 1961, IV, 1, p. 6; **Требеллий Поллион**, Двое Валерианов, Пер. **С. П. Кондратьева**, – ВДИ, 1959, № 2, с. 236.

[2] **Trebellii Pollionis** Valeriani duo, III, 1-2, p. 4-6. Տեղին նշենք, որ Կ. Տրեւերի գրքում (Очерки по истории и культуре Кавказской Албании..., с. 133-134, 308), ինչ-որ մի անհմանալի վրիպմամբ՝ այս երկի հեղինակ է կոչուած ոչ թէ Տրեբելիոսը, այլ Ցուլիոս Կապիտոլինոսը, որը Բ դարի մի քանի կայսրերի պատմութիւնների հեղինակն էր:

[3] Այդպէս տե՛ս, օր.՝ ՀԺՊ, հտ. II, Եր., 1984, էջ 46-48 (հատուածի հեղ.՝ **Ս. Տ. Երեմեան**); **Ռ. Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչեւ Տրդատ Մեծ, էջ 128-129; **А. Ж. Арутюнян**, Армения, государства Восточного Средиземноморья и Иран, с. 276-278.

[4] **M.-L. Chaumont**, Recherches sur l'histoire d'Arménie de l'avénement des Sassanides à la conversion du royaume, Paris, 1969, p. 85-86.

[5] **Հ. Պէրպէրեան**, Որմիզդ-Արտաշիր՝ մեծ արքայ Հայաստանի, – «Ջուարթնոց». Տարեգիրք գրականութեան եւ արուեստներու, հտ. Բ, Փարիզ, 1944, էջ 167-173, յատկ.՝ էջ 172: Նոյն էջում հեղինակը քննում է նաեւ Տրեբելլիոս Պոլիոնի միւս երկում (**Trebellii Pollio-**

Այսպիսով, թէպէտ «Օգոստոսների պատմութեան»՝ երբեմն գեղարուեստական չափազանցութիւններով համեմուած պնդումների հաւաստիութիւնը խնդրառու է[1], բայց, թերեւս, Տրեբելիոս Պոլիոնի հաղորդածն ընդհանուր գծերով ճիշտ էր արտացոլում Սասանեան տէրութեան կազմի մէջ մտնող Աղուանքի՝ Գ դ. կէսերին իշխած մի կիսանկախ, բայց խիստ ինքնավստահ արքայի (ցաւօք՝ անանուն) որոշակի ինքնուրոյնութիւնը: Այդպէս պիտի մտածենք նաեւ «Հայաստանի մեծ թագաւոր» Որմիզդ-Արտաշիր Սասանեանի (նաեւ՝ Արտաշէս, գրական հողի վրայ, ինչպէս տեսանք, նաեւ՝ Արտաւազդ) եւ Վիրքի անանուն արքայի մասին:

Արդէն յաջորդող շրջանում, Իրանական տէրութեան ներքին ու արտաքին մի թուլացման պահին, ուշ անտիկ աղբիւրներն արձանագրում են Հռոմի ազդեցութեան որոշակի վերականգնումը Սասանեաններին ենթակայ մի շարք ժողովուրդների վրայ, այդ թւում՝ Այսրկովկասում եւ մասնաւորապէս Աղուանքում: Նոյն «Օգոստոսների պատմութեան» կազմում Փլաւիոս Վոպիսկոս պատմիչի պնդման համաձայն՝ կայսր Աւրելիանոսին (270-275) «Սարակինոսները, Բլեմմերը, Աքսոմիտները, Բակտրիացիները, Սերերը, Հիբերները, Ալբանները, Հայերը, ինչպէս նաեւ հնդկական ցեղերը ներկայումս մեծարում են՝ գրեթէ իբրեւ հովանաւոր-աստծոյ»[2]:

Բաժին 2

ԱՆՏԻԿ ԱՂՈՒԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՒԴԻՈՍ ՊՏՂՈՄԷՈՍԻ

Իր կեանքի գլխաւոր երկը գրելիս Բ դարի յոյն նշանաւոր աշխարհագէտ Կլաւդիոս Պտղոմէոսը, ըստ ամենայնի՝ ծանրակշիռ աղբիւրներ է ունեցել Ալբանիա երկրի նկարագրութեան համար[3]: Դա երեւում է ե՛ւ հարեւան Իբերիայի հետ

---

nis Tyranni triginta, – Scriptores Historiae Augustae, With an English translation by **D. Magie**, In 3 vol., Vol. III, Cambridge/Mass. – London, 1961, II, 2, p. 66) Որմիզդ-Արտաշիրին տրուած *Ոդոմազդէս* անուանաձեւը (տպագր. վրիպակով՝ *Որոմազդէս*), որի մէջ դեռ Թ. Նէօլդեքէն տեսնում էր (Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden. Aus der arabischen Chronik von **Tabari** übersetzt von **Th. Nöldeke**, Leyden, 1879, S. 43) Շապուհ Ա-ի առաջին որդու «Որոմազդէս, այսինքն՝ Որմիզդ անունը» ("Odomastem [*resp.* Oromastem] primum"). Հ. Պէրպէրեանը նշում է նաեւ Փլաւիոս Վոպիսկոսին յայտնի «Արտաբասսիս [*resp.* Արտաւա՞զդ] Ասորու» մասին ("Artabassis Syrus", տե՛ս **Flavii Vopisci Syracusii** Probus, – Scriptores Historiae Augustae, With an English translation by **D. Magie**, In 3 vol., Vol. III, Cambridge/Mass. – London, 1961, IV, 1, p. 342), թէպէտ, ըստ պատմիչի, նա Հռոմի կողմնակիցն էր ու կարող էր եւ կապ չունենալ «մեծ թագաւոր Հայոց»-ի հետ:

[1] Հմմ. **Ռ. Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչեւ Տրդատ Մեծ, էջ 128-129:

[2] **Flavii Vopisci Syracusii** Divus Aurelianus, – Scriptores Historiae Augustae, Edit. **E. Hohl**, In 2 vol., Vol. II, Leipzig, 1927, p. 163, 14; **ibid.**, Divus Aurelianus, – Scriptores Historiae Augustae, With an English translation by **D. Magie**, In 3 vol., Vol. III, Cambridge/Mass. – London, 1961, XLI, 10, p. 276. Հմմ. **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 159-160:

[3] Բնագիրը տե՛ս **Ptol.** Geogr., V, 11, 1-8; **В. В. Латышев**, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, т. I, Греческие писатели, вып. I, СПб., 1893, с. 242-243, 247; **Klaudios Ptolemaios**, Handbuch der Geographie, Griechisch – Deutsch, Herausgegeben von **A. Stückelberger** und **G. Grasshoff**, Basel, 2006, S. 88-89.

համեմատելիս, որի բնակավայրերի թիւը հեղինակի մօտ եռակի պակաս է (9), քան Աղուանքում (5 սեկտորներում՝ 29 քաղաք, նաեւ՝ 6 գետ ու 2 կղզի), ե՛ւ Մեծ Հայքի, որտեղ քաղաքների թիւն ընդամենը 2,7 անգամ է աւելի (85), թէպէտ երկիրը մեծ էր Աղուանքից 5 անգամ: Այդպիսի աղբիւրներ էին, օր.՝ Աղուանքի դէմ ռազմարշաւների մասնակիցների անմիջական ու հաւաստի գրառումները, ինչպէս նաեւ դրանց վրայ հիմնուած աշխարհագրական նկարագրութիւնները ու ճանապարհային քարտէզ-գծագրերը՝ իտիներարիաները[1]: Չնայած դրան, Ալբանիայի բնակավայրերի ու գետերի համադրման եւ տեղորոշման փորձերը՝ սկսուած դեռ ԺՀ դարում, մինչ այժմ չեն բերել վերջնական համոզիչ արդիւնքի: Կ. Տրեւերը նոյնիսկ հոռետեսօրէն գրում էր. «Յունական այբուբենի իւրայատկութեան հետեւանքով, որի տառերով հնարաւոր չէ արտայայտել կովկասեան լեզուների իւրատեսակութիւնը, տուեալ դէպքում՝ աղուաներէնինը իր կոկորդային ու շչական հնչիւններով, մենք հազիւ թէ կկարողանանք այդ անուանումների յունական գրութեան մէջ վերհանել նրանց տեղական հնչողութիւնը: Այդ պատճառով ներկայիս տոպոնիմիկայի օգնութեամբ Պտղոմէոսի անուանումները հասկանալու փորձը հազիւ թէ կարող է համոզիչ եզրայանգումների բերել»[2]: Սակայն այսօր մենք կարող ենք էապէս փարատել հեղինակների այսպիսի անհանգստութիւնը:

Ալբանիայի պտղոմէոսեան տեղանունների համադրման վերջին փորձերը, օր.՝ վրաց-աղուանական կրկնագրի 2008 թուականի հրատարակողներինը (Յ. Գիպերտ, Վ. Շուլցէ, Զ. Ալեքսիձէ եւ Ժ.-Պ. Մահէ)[3], չենւում են Սերգեյ Մուրաւիեւի մօտեցումների վրայ, ով առաւելապէս խորացել էր Կասպից ծովի տրանսգրեսիայի խնդիրներում[4], ինչպէս նաեւ Ռոբերտ Հիւսընի, ով 1992-ին հրատարակեց է դարի «Աշխարհացոյց»-ի մանրամասն ծանօթագրուած անգլերէն թարգմանութիւնը[5]: Իրենց որոշ արժանիքներով հանդերձ՝ դրանք բոլորը մեծ սխալներով են: Աղուանքի պտղոմէոսեան նկարագրութեանը մեր մանրակրկիտ անդրադարձը եղաւ մի քանի տարի առաջ Ք. յ. է դարի հայկական «Աշխարհացոյց»-ի գիտական բնագրի կազմման աշխատանքից յետոյ[6]: Արդիւնքում պարզուեց, որ ուշադիր քննութեան դէպքում լիովին հնարաւոր է փաստարկել ու ճշգրիտ որոշել թէ՛ Պտղոմէոսի, թէ՛

---

[1] Անտիկ Աղուանքի աշխարհագրական նկարագրութիւնների մասին գրուել է բազմիցս: Վերջիններից տե՛ս, օր.՝ **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 20-95; **G. Traina**, Roman Perceptions of Caucasian Albania, – «Լ ՂՀ անցյալը, ներկան եւ ապագան»..., էջ 223-228:

[2] **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 137.

[3] The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai, Vol. I, Edited by **J. Gippert, W. Schulze, Z. Aleksidze, J.-P. Mahé**, Turnhout, 2008, p. II-94-95.

[4] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия, – ВДИ, 1983, № 1, с. 117-147.

[5] The Geography of **Ananias of Širak** (Ašxarhac'oyc'). The Long and the Short Recensions. Introduction, Transl. and Commentary by **R. H. Hewsen**; **R. H. Hewsen**, Armenia: A Historical Atlas, Chicago – London, 2001.

[6] Տե՛ս **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեանի**, – ՀԱ, ՃԻԷ տարի, 2013, սն. 35-194:

Ստրաբոնի, Պլինիոս Աւագի, Պոմպոնիոս Մելայի եւ «Աշխարհացոյց»-ի իմացած գետերի համադրումները, որի հիման վրայ էլ՝ արդէն նաեւ բնակավայրերինը:

Պտղոմէոսեան քաղաքների յաջող համադրման խնդիրը բարդացնում է նախ եւ առաջ՝ անտիկ Ալբանիայի թագաւորութեան հիւսիս-արեւելեան սահմանակէտի ճշտման դժուարութիւնը: Ըստ անտիկ բազմաթիւ հեղինակների՝ Աղուանքն արեւելքում հասնում էր Կասպից/Հիւրկանիա ծովին (Պլինիոս Աւագն ափագծի այդ կտորը կոչում էր «Ալբանական ծով»[1]), իսկ հիւսիսում Սարմատիայից բաժանւում էր Կովկասի լեռնաշղթայով[2] (այն կտրում էին երկու լեռնանցքներ՝ կոչուած «Սարմատական դռներ» եւ «Ալբանական դռներ»[3]) ու նրա բազուկներից մէկով, որը Ստրաբոնը եւ Պոմպոնիոս Մելան կոչում էին «Կերաունիա»[4]: Բայց ո՞րն էր երկրի հիւսիս-արեւելեան սահմանը կազմող այդ լեռնաբազուկը: Որոշ ուսումնասիրողներ (օր.՝ Ս. Երեմեանը եւ յիշատակուած Ռ. Հիւսընը) տանում են տուեալ սահմանագիծը Լեանգեաբիզի լեռնաշարով (Շամախիից արեւմուտք) եւ Կուրի ամենաարեւելեան Աղսու վտակով[5] կամ էլ տարածում մինչեւ Ապշերոն ու Սումգայիթ գետ (Ա. Եանովսկի, Ս. Մուրաւիեւ, Հ. Սվազեան եւն)[6]: Ոմանք էլ (օր.՝ Ս. Եուշկովը, եւ Ս. Կովալեւսկին[7]) հասցնում են այն բաւական հեռու հիւսիս՝ Միջին Դաղստան: 1987 թ. գրքում մեզ, թւում է, թէ յաջողուեց ճշգրիտ որոշել այդ հիւսիս-արեւելեան սահմանակէտը՝ նկատելով Ք. յ. Ա դարի հռոմէացի պատմիչ Կոռնելիոս Տակիտոսի «Աննալների» մի վկայութիւնը (իբերա-պարթեւական պատերազմի նկարագրութեան մէջ, գլ. VI, 33), որը սահմանը տանում էր հէնց Դերբենդի անցքով՝ այն կոչելով փոթորիկների ժամանակ ողողուող «անցք ծովի ու Ալբանիայի լեռների ծայրի

---

[1] **Plin.** Nat. Hist., VI, 38.

[2] Տե՛ս **Strab.** XI, 2, 15; 4, 1; 5, 6-7; **Plin.** Nat. Hist., VI, 38-39; **Tac.** Ann., VI, 33 (**Կ. Տակիտուս**, էջ 27); **Ptol.** Geogr., V, 8, 1; 8, 7; 8, 11; 8, 14-15; 11, 1.

[3] **Ptol.** Geogr., V, 8, 15; 11, 6 (Σαρματικαὶ ... Ἀλβάνιαι δὲ Πύλαι).

[4] **Strab.** XI, 4, 1; **Ստրաբոն**, 1940, էջ 31 («արեւելքից [Աղուանքի] սահմանը հասնում է [Կասպից] ծովին, իսկ արեւմուտքից սահմանակից է Վիրքին: Մնացեալ կողմերից հիւսիսը պաշտպանուած է Կովկասեան լեռներով (հէնց սրանք են բոնում [Աղուանից] դաշտավայրի վերեւը, իսկ ծովին մօտիկ [մասը] աւելի կոչւում է Կերաունիա»); **Pomponius Mela**, Chorographie, Texte établi, traduit et annoté par **A. Silberman**, Paris, 1988, III, 39-41 (յետայսու՝ **Pomp. Mela**). Անտիկ աւանդոյթում *Կերաունիա* լեռնանուան («Աշխարհացոյց»-ում՝ *Ծաղթայիճ*, տե՛ս **Անանուն /Է դար/**, սն. 109, 112) մեծ ափոուածութեան մասին (Բալկաններից մինչեւ Հիմալայներ) տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 53.

[5] **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Եր., 1963, էջ 34; **նոյնի՝** «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի (II դար), – ՀՍՀ, հտ. 9, Եր., 1983, էջ 416-417-ի միջեւ; **R. H. Hewsen**, Armenia, p. 77, 100.

[6] **А. Яновский**, О древней Кавказской Албании, – ЖМНП, 1846, т. 52, ч. 2, с. 120, 132-134; **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 130-131, 135, 141; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 292-294; **Ա. Վարդանյան**, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Եր., 2013, էջ 84-87:

[7] **С. В. Юшков**, К вопросу о границах древней Албании, – ИЗ, 1937, № 1, с. 129-148; **С. А. Ковалевский**, "Карта Птолемея" в свете исторической географии Прикаспия, – ИВГО, 1953, т. 85, вып. 1, с. 31-48.

միջեւ»[1]: Աւելին, հնարաւոր եղաւ նկատել, որ դեռեւս Ք. ա. Գ դարում «աղուաննե-րի» բնակութեան սահմանը համարուել է նոյն Դերբենդի լեռնաբազուկը: Վերե-ւում տեսանք, որ Սելեւկեաններուն հրամանով կասպից ծովի ափաշերտը հետազո-տած Պատրոկլէսի «Պերիպլուսը» (Ք. ա. Գ դ. սկիզբ) եւ նրանից օգտուած Էրատո-սթենէսը (դարավերջում) արձանագրել են աղուանների բնակուելը կադուս/կա-տիշներից հիւսիս ընկած կասպիական ափին՝ իրականում 5000 ստադիոն ձգուա-ծութեամբ, Կուրի գետաբերանից մինչեւ Դերբենդի անցքը[2]: Այսպիսով, անտիկ Ալբանիա երկրի հիւսիս-արեւելեան սահմանագիծը վերջինից դէպի արեւմուտք պիտի անցած լինէր Ջալգանի լեռնաշարով, ապա Ռուբաս եւ Ուլլուչայ գետերի ջրբաժան լեռնաշղթայով մինչեւ Ջուֆուդաղ լեռնագագաթը, ապա Ալախունդաղ եւ Դիւլթիդաղ գագաթներով մինչեւ Գլխաւոր Կովկասի Գուտոն լեռնագագաթը[3]:

Պտղոմէոսը յիշատակում է Աղուանքի 29 բնակավայր (երեքը՝ նաեւ կրկնա-կի)՝ դրանց կոօրդինատներով, ընդ որում՝ հինգ հատուած-սեկտորների մէջ, ո-րոնց սահմանները իր թուարկած վեց գետերն են: Դրանցից մէկի համար՝ ամենից արեւմտեանի, որ անանուն է, ասւում է՝ «Կովկասից հոսող, որ լցւում է Կուր», ընդ որում՝ «Իբերիայի հետ սահմանի գծից [արեւելք]»[4] (V, 11, 3-4): Միւս հինգ գետե-րը՝ Կուր, Ալբանոս, Կայսիոս, Գերրոս եւ Սոանա, թափւում են Հիւրկանիա/Վրկան ծով: Դրանց գետաբերանների կոօրդինատները Պտղոմէոսը նշում է ալբանական ափագծի նկարագրութեան մէջ, ընդ որում՝ մօտակայ մէկական ծովափնեայ «քա-ղաքի»՝ πόλις-ի (արդեօ՞ք նաեւ՝ նաւահանգիստ) կոօրդինատներով հանդերձ (V, 11, 2): Ստրաբոնին յայտնի չորս աղուանական գետերն էլ (Ալազոնիոս/Ալազան, Սանդոբանէս, Ռոյտակէս, Խանէս) թափւում էին Կուր[5], այդպէս նաեւ՝ Պլուտարքո-սին ու Դիոն Կասսիոսին յայտնի Կամբիւսէս/Իորի գետը[6]: Իսկ Աղուանքից դէպի ծով հոսող գետեր յիշատակում են նաեւ Պլինիոս Աւագը եւ Պոմպոնիոս Մելան: Պլինիոսը թուարկում է չորս գետ՝ Կուր, Կամբիս, Ալբանոս եւ Կասոս[7], իսկ Մելան՝ երկուսը՝ Կուր եւ Կայսիոս. նա գիտի նաեւ Կամբիս գետը, որը, սակայն, թափւում է Կուր, ընդ որում՝ ծովից ոչ հեռու[8]: Ի դէպ, Հիւրկանիա թափուող Կամբիւսոս ա-նունով գետ ունի նաեւ Պտղոմէոսը. այն հոսում էր Կուրից հարաւ եւ սահմանա-գատում Մեծ Հայքը (=նրա Փայտակարան նահանգը) Մեդիա/Մարաստանից («Աշ-

---

[1] **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 33-35. Հմմ. **Ա. Յակոբեան**, Բուն Աղուանքի քաղաք-ները եւ գետերը ըստ Կլաւդիոս Պտղոմէոսի եւ Է դարի Աշխարհացոյցի, – «Գարդմանի եւ Շիրվանի հայության պատմա-մշակութային ավանդները (պատմություն եւ արդիա-կանություն)». Հանրապետական գիտաժողով. Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթ-ներ, Եր., 2016, էջ 136-141:

[2] Տե՛ս աստ, էջ 15-16:

[3] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 34-35.

[4] Պլինիոսը սահման էր նշում Ալազան գետը (Nat. Hist., VI, 29), որը Պտղոմէոսը չունի:

[5] **Strab.** XI, 3, 2; **Ստրաբոն**, 1940, էջ 28-29:

[6] **Plut.** Pomp. XXXV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 267; **Dio Cass.** XXXVII, 4, 1; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 145-146:

[7] **Plin.** Nat. Hist., VI, 39.

[8] **Pomp. Mela**, III, 39-41.

խարհացոյց»-ը Պտղոմէոսից քաղել է Կամբիսեաս անուանաձեւով)[1]: Գուցէ՝ հէնց այս թալիշեան գետն է հիմք ծառայել նաեւ Մելայի եւ Պլինիոսի աղբիւր(ներ)ի համար, թերեւս, զուգորդուած Կամբիւսէս/Իորիի մասին տեղեկանու հետ[2]:

Պտղոմէոսի վերոնշեալ վեց գետերի յաջող տեղորոշումը (կրկնենք՝ շնորհիւ երկրի հիւսիս-արեւելեան սահմանակէտի ճշտման) նախ եւ առաջ ցոյց է տալիս աղուանական ափագծի երկարութեան մասին հեղինակի պատկերացման հաւատարիմութիւնը, ինչքան էլ որ նրա մօտ աղճատուած է այդ ափագծի երկրորդ կէսի իրական պատկերը (Ապշերոնի թերակղզուց յետոյ կտրուկ դէպի հիւսիս-արեւմուտք շեղուող իր ուղղութեամբ): Իսկ այդ յաջողութեանն էլ արդէն հետեւում են թուարկուած բնակավայրերի՝ որոշակի վստահութիւն ներշնչող համադրումներն ու տեղորոշումները, յատկապէս՝ երբ պահպանում ենք այդ համադրումների ու տեղորոշումների առաւելագոյն ճշգրտութիւնն իրօք ապահովող այն չորս սկզբունքները, որ ձեւակերպուել են Ս. Մուրաւիեւի կողմից[3]:

Արդ՝ մեր քննութիւնից հետեւում է, որ Պտղոմէոսի՝ Սարմատիայի հետ սահման Սոանա գետը («Աշխարհացոյց»-ում՝ «Սըւանաս»[4], վերականգնելի՝ Ս[ո]ւանաս), ըստ ամենայնի՝ համապատասխանում է Ռուբասին, որը հոսում է Դերբենդի մօտ ծովափին հասնող՝ անտիկ Աղուանքի սահմանային Ջալգանի լեռնաշղթային[5] հարաւից անմիջապէս զուգահեռ: Սոանայից արեւմուտք յիշուած են երկու

---

[1] **Ptol.** Geogr., VI, 2, 1 (Καμβύσου ποταμοῦ ἐκβολαί); **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 73 («...եւ Կաղշաւք, յորում Գաբաւոու Բաւգինք, մինչեւ ի մուտս գետոյն, որ կոչի Կամբիսեաս»): Այդ գետանունը վերջերս համադրել ենք Լենքորան սահմանագետի (թալիշերէն՝ *Լանկոն*) *Կոնժաւու* վտակի՝ վերականգնելի **Կոմշ-աբ* կամ **Կոմշա-ոու* (<**Կոմշա-ոուդ*) ձեւի հետ, քանի որ իրան. *Կամբիս*-ի իմաստն է «գոմէշ» (**Ա. Յակոբեան**, Աշխարհացոյցեան Փայտակարան նահանգի գաւառների տեղորոշման նոր փորձ, – «Հայաստանը եւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Գ». Ծանաչված հայագետ-կովկասագետ Պավել Չոբանյանի /1948–2017/ ծննդյան 70-ամյակին նվիրված Հանրապետական գիտաժողով, Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Եր., 2018, էջ 244):

[2] Այլ կարծիք տե՛ս **С. А. Ковалевский**, "Карта Птолемея" в свете исторической географии Прикаспия, с. 34-35. Հմմ. **А. А. Ельницкий**, Знания древних о северных странах, Москва, 1961, с. 205; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 32-33.

[3] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 131-132: "Современный топоним отождествим с древним, если он: 1) с ним фонетически и палеографически сопоставим, 2) находится в той же, что и тот, зоне, 3) занимает относительно других локализованных пунктов этой зоны примерно такое же положение, какое указано у Птолемея; а в случаях несоблюдения одного из вышеприведенных условий, 4) если предполагаемое отклонение поддается рациональному и – предпочтительно – системному (т. е. касающемуся сразу нескольких взаимосвязанных названий) объяснению".

[4] **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 109 «...առ Կաւկասիւն լերինսն՝ առ Վրաւք եւ Աղուանիւք, մինչեւ ցԿասբից ծովն, ի մուտս Սըւանաս գետոյ. Սըւանաս գետ չկայ ուրեք»):

[5] Ըստ Ալ. Կուդրեաւցեւի՝ *Ջալգան*-ը համեմատելի է *Ձոր – Ձող – Ձոլայ – Ճորայ* տեղանունաւ հետ, որը, թերեւս, աղուաներէն տարբերակն է իրան. *Դերբենդ*-ի («Աշխարհացոյց»-ի բառերով՝ «Կապ եւ դուռն»), յայտնի՝ իր հզօր ամրութիւններով. տե՛ս **А. А. Кудрявцев**, О датировке первых сасанидских укреплений в Дербенте, – СА, 1978, № 3, с. 243-258; **նոյնի**՝ Древний Дербент, Москва, 1982, с. 86: "Раннесредневековый топоним Чор,

բնակավայրեր, որոնցից մէկը՝ ծովափնեայ Տելայբա *«քաղաքը» (V, 11, 2), կարող է վերականգնուել կա՛մ որպէս* Գելայբա *(յուն. Γ եւ Τ մեծատառերը մօտ գրութիւն ունեն) եւ համադրուել Ռուբասի աջ ափին, ծովից ոչ հեռու գտնուող Սգլաբի յորջորջուած աւանի հետ, կա՛մ էլ՝ որպէս* Զելայբա *(Τ-ին մօտ գրութիւն ունի նաեւ մեծատառ եւ փոքրատառ Z-ն)՝ համադրուելով տեղական լեզուներում նոյն Դերբենդ («Կապ եւ դուռն») իմաստն ունեցող ճորայ – Զոլայ (նաեւ՝* Զող, *արաբ.՝* Սուլ, *յուն.՝* Sզուր[1]*) տեղանուան հետ (Ե – Ո անցումով եւ -բա /<-բի՞/ վերջածանցով):*

Սոանա գետից արեւմուտք միւս քաղաքը՝ Թիլբիս-*ը (var.* Թելբիս*), կարող է վերականգնուել որպէս դրափոխուած* Բելիտիս *եւ համադրուել քիչ հարաւ ընկած Բելիջի գիւղի հետ՝ Ռուբասի ու Սամուրի միջեւ հոսող Գիւլգերի գետի (ԺԹ դարում կոչուած նաեւ՝* Փոխր Սամուր[2]*) գետաբերանից 5 կմ արեւմուտք, որի տեղում, ինչպէս ենթադրել ենք ժամանակին[3], պիտի գտնուած լինէր Զ դ. կէսերի Բաղախատ (var.* Բաղասատ*) եպիսկոպոսանիստը՝ Զողից ոչ շատ հեռու, ինչը երեւում է Մովսէս Դասխուրանցու երկում եւ «Գիրք Թղթոց»-ում պահպանուած՝ Յովհաննէս Գաբեղենացի Հայոց կաթողիկոսի (557-574)՝ Աղուանից կաթողիկոս Աբասին յղած Թղթի եպիսկոպոսացանկի հերթականութիւնից[4]: Ի դէպ, Բելիջիից 4 կմ հարաւ է գտնւում Նիւգդի գիւղը՝ իր Սբ. Գրիգորիսի տաճարով, որը նշանաւոր սրբատեղի է դաղստանցի հայերի (ու նաեւ՝ մահմեդականների) համար[5]:*

Պտղոմէոսի՝ ծով թափուող երկրորդ գետը՝ Գերրոս-*ը («Աշխարհացոյց»-ում՝ «Գեռաս»), թերեւս, այս տարածաշրջանում ամենից նկատելի Սամուրն էր, բայց գուցէ եւ նրանից հարաւ՝ Վելվելին (նաեւ՝* Վալվալա[6]*). մեր երկմտութեան պատճառն այն է, որ չի կարելի լրիւ բացառել *Սո[ւ]անա (*Ս[ո]ւանաս) եւ* Սամուր *(Մեծ կամ* Փոխր*) գետանունների համադրման հնարաւորութիւնը, քանի որ յայտնի է գործառամարզային (արեալային) Խ/Վ→Բ→Մ լեզուական անցումը, իսկ իրան. տեղանուանակերտ -ան եւ կովկասեան -ար/-ուր վերջածանցները համարժէք են:*

Джор, Джол, обозначавший в раннесредневековых... источниках "ворота" Дербента, отложился в названии горы Джалган, на отроге которой построен Дербент, и в наименовании селения, расположенного в 3 км выше города, – Верхний Джалган, а также в дагестанских языках, в которых Дербент и ныне называется Чурул (лакский), Чулли (даргинский)".

[1] **Հմմ. В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963, с. 52.

[2] **Տե՛ս Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 50, 123-124:

[3] **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 131.

[4] **Տե՛ս Դասխ.**, գլ. Բ.է, էջ 122; Գիրք թղթոց, Մատենագրութիւնք նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 81; Գիրք թղթոց, Երկրորդ հրատ. [Պատրաստեց՝ **Ն. արք. Պողարեան**], Երուսաղէմ, 1994, էջ 210; **Յովհաննէս Գաբեղենացի**, Թուղթ առ Տէր Աբաս՝ Աղուանից կաթողիկոս, Գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 448:

[5] **Տե՛ս Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 105-106; **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 134; **Д. П. Геворкьян**, От истоков христианства. Церковь святого Григориса. Махачкала-Дербент, 2016.

[6] **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 51, 139:

*Գերրոսից արեւմուտք մինչեւ Կայսիոս գետը յիշուած են երեք քաղաքներ, որոնցից մէկը՝ Թիաունա-ն, վերականգնելի է Թւում Թրաունա (հմմ. յուն. I եւ P մեծատառերը, որ բաւականին մօտ գրութիւն ունեն), որը կը համապատասխաներ ուշ անտիկ Σαποθρηνή – Սապո-թրէնէ (իմա՛, ըստ Ս. Երեմեանի՝ մասքաթեան ծովափի *Շապոթրան – Շապորան քաղաքի)[1] անուան վերջին բաղադրիչին:*

Գերրոսից արեւմուտք (=հարաւ) միւս քաղաքը՝ Թաբիլակա-ն, կարող է համադրուել (իր կէսով եւ դրափոխուած) Շահդաղեան մի լեզուով խօսող Ալիկ լեռնային գիւղի անուան հետ, կամ էլ նոյնացուել Խաչմաս քաղաքից 20 կմ հարաւ-արեւմուտք, Վելվելիի ափին գտնուող հայաբնակ յայտնի Թալաբի գիւղի հետ[2] (էլի դրափոխուած). թերեւս, այս նոյն տեղանունն է նշել ժ դ. արաբ աշխարհագէտ ալ-Մուկադդասին Թեբլա ձեւով[3], որն աւելի մօտ է պտղոմէոսեան Թաբիլակա-ին:

Իսկ Գերրոսից արեւմուտք (=հարաւ) երրորդ «քաղաքի» անունը՝ Գելդա (var. Խելդա), որը ծովափնեայ էր (V, 11, 2), կարող է համադրուել կա՛մ այդ շրջանում հոսող Գիլգին/Գիլգիլչայ գետի անուան հետ, որի գետաբերանի մօտ նշմարւում է «Աշխարհացոյց»-ում յիշուած՝ սասանեան շրջանի «խորսվէմ» պարիսպը (նոր աշխատանքներում՝ Բեշբարմակի կամ Գիլգիլչայի)[4], կա՛մ էլ՝ 25 կմ աւելի հարաւ ընկած ծովափնեայ Գիլեազի (նաեւ՝ Քիլեազի) աւանի, որից 20 կմ արեւմուտք գտնուող հայ-թաթական Քիլվար գիւղի անունը նոյնպէս նմանահունչ է Գելդային[5]:

Պտղոմէոսի՝ ծով թափուող երրորդ գետը Կայսիոս-ն է (var. Կասիոս), *«Աշխարհացոյց»-ում՝ Կեսիոս՝ որպէս Կասպից ծովափում Աղուանքի եւ Ասիական Սարմատիայի սահման («Եւ սահմանէ յարեւմտից՝ աշխարհաւք [Հայաւք], եւ յարեւմտից հիւսիսո[յ]՝ Աղուանիւք առ Կեսիոս գետով, ապա մուտք Գեռաս եւ Սոնդաս եւ Ալանդաս եւ Ոդոն գետովք՝ հոմանուն ազգաց, որ ի Կաւկասա[յ] ելանեն»)[6]: Նրա ճիշտ համադրումը Ջեյրանկեչմաս գետի հետ է՝ իր նմանահունչ վերջնամասով, որը ծով է թափւում նշանաւոր Կոբուստան հնավայրից քիչ արեւելք, իսկ ակունքը՝ Շամա-*

---

[1] **С. Т. Еремян**, "Σαποθρηνή" Птолемея в связи с историей скифского царства прикаспийского побережья, – Вопросы истории народов Кавказа, Тбилиси, 1966, с. 76-79; **նոյնի՝ «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի...:**

[2] **Տե՛ս Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 136-138; **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 133, 136.

[3] **Տե՛ս Н. А. Караулов**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, – СМОМПК, вып. XXXVIII, Тифлис, 1908, с. 7.

[4] **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 115 («Եւ ապա Կաւկաս բաժանի յերկուս բազուկս, մինն գնա[յ] դէպ ուղիղս կոյս, յորում՝ Շրւան եւ Խսրւան ազգ[ք]՝ միմեանս ցԽոսրովէմ ... Բագանք, ուստի առնու պարիսպն երկայն, որ կոչի Ապզուտ Կաւատ [=Շապորանի], միմեանս ցԱլղմինսն մաւրս եւ ցծով»): Հմմ. նաեւ **Е. А. Пахомов**, Крупнейшие памятники Сасанидского строительства в Закавказье, – ПИМК, 1933, № 9-10, с. 37-47.

[5] **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 139-141: Քիլվարին մօտիկ Խըզի գիւղը համարում են Խուրսան մարզի կենտրոն Խայզանը (**Ս. Տ. Երեմյան**, «Հայաստանը եւ հարեւան երկրները 855-953 թթ.», ներդիր քարտէզ ՀԺՊ, հտ. III-ում, Եր., 1976):

[6] **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 69: Պտղոմէոսի մօտ վերջին 3 գետերն են. *Սոանա, Ալոնտա, Ուդօն*, որից յետոյ գալիս է *Ռա/Վոլգան* (Ptol. Geogr., V, 8, 11-12).

խիի եւ Մարազայի միջակայքում է (այսինքն՝ ճիղը-սիլւերի երկրամասում, ինչպէս գիտէր Պլինիոսը[1]), որից էլ քիչ հիւսիս անցնում էր տարածքի ամենայարմար՝ Խալթանի լեռնանցքը (դէպի Գիլգիլչայի հովիտ)՝ է դարում՝ Վարդեգրուակ/Վարդեդրուակ[2] (արդեօ՞ք Դ → Ր անցումով՝ գրուակ < գեղուկ – պրսկ.՝ «լեռնանցք»):

Կայսիոսից արեւմուտք մինչեւ Ալբանոս գետը (=Տուրիան կամ Դուրկան) ընկած սեկտորում Պտղոմէոսը յիշատակում է հետեւեալ եօթ քաղաքները.

Ալամոս (var. Ալանոս)՝ *սեկտորի հարաւ-արեւելքում, որը լիովին կարող էր լինել ներկայիս ծովափնեայ Ալեատ աւանը (գուցէ՝ նաեւ Т → М վրիպումո՞վ):*

Խոբօտա (var. Խոբատա, Խօբատա)՝ *սեկտորի հիւսիսային մասում, որը Մ. Փաշայեւայի դիտարկմամբ՝ կարող էր համադրուել Կովկասի զոյգ լանջերի մի քանի գիւղերում ապրող լեզգիալեզու (Շահդաղեան լեզուախմբի) խապուտցիների ժողովրդի անունը կրող Խապուտ (մեծամասշտաբ քարտէզներում՝ Գապըտ) գիւղի հետ՝ Կուդիալ գետի (Վելվելիին հիւսիսից զուգահեռ հոսող) վերնահովտում[3]: Սակայն դա կը նշանակէր, որ Պտղոմէոսը (կամ նրա աղբիւրը) շփոթել է սեկտորները, ուստի աւելի ճիշտ կը լինէր Խոբօտա-ն կա՛մ համադրել Կոբուստան-ի հետ, որն ընկած է Կայսիոս/Ջեյրանկեչմասի ստորին հոսանքի արեւմտակողմում, կա՛մ էլ, որ ամենահաւանականն է՝ նոյնացնել սեկտորի հէնց հիւսիսում գտնուող Խապուտլու/Գապըտլի գիւղի հետ՝ Իսմայիլլի շրջկենտրոնից 10 կմ հարաւ-արեւմուտք, հայաբնակ Ուշտալ գիւղից 2 կմ հիւսիս, Դաւապաթան գետակի ափին, այդպիսով՝ Աւթարանի երկայնաձիգ դաշտավայրի արեւելեան կտորում[4], որը կազմում էր «Աշխարհացոյց»-ի Համբասի գաւառը (ըստ Ղեւոնդ վարդապետի՝ Հաբանդ):*

Միսիա՝ *սեկտորի կենտրոնական մասում. այն կարող է կա՛մ դրափոխուած Իսմիա տարբերակով համադրուել խեղայորջորջուած Իսմայիլլի քաղաքանուանը, կա՛մ էլ նոյնացուել նրա արեւմտեան արուարձանը դարձած Միջան գիւղի հետ:*

---

[1] **Plin.** Nat. Hist., VI, 29 («Ողջ դաշտավայրը, սկսած Կուրից, զբաղեցնում էր *ալբանների* ցեղը, իսկ լեռների ճակատին ապրում էին վայրի *սիլւերը*, [նրանցից] ներքեւ էլ՝ *լուպեհիները* [=լփինները]»): Հմմ. **Բ. Հարությունյան**, Լփինքի տեղադրության հարցի շուրջը, – ԲԵՀ, 1971, հ՝ 1, էջ 122-123; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 88-89. Ի դէպ, մասնագէտներից ոմանց առաջարկած՝ *Շամախի* քաղաքանուան համադրումը Պտղոմէոսի ցուցակում երկու սեկտոր յետոյ նշուած *Մամեխիա*-ի հետ (մի ուշ ձեռագրում՝ *Կամեխիա*) շատ դժուար է ընդունել: Զնայած դրան՝ Շամախիի կողքին է պեղուած (1 կմ հիւսիս) անտիկ շրջանի նիւթով յայտնի Խընհիսլի հնավայրը (տե՛ս **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 177; **Ф. Л. Османов**, История и культура Кавказской Албании IV в. до н. э. – III в. н. э. (на основании археологических материалов), Баку, 2006, с. 18-21).

[2] Տե՛ս **Դասխ.**, Բ.լթ, էջ 239; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Դ-Ե, Անթիլիաս, 2005, էջ 870: Հմմ. **А. А. Акопян**, К хронологии завершения этноконсолидации удинов и лезгин (период ослабления Арабского халифата), – Albania Caucasica, Сб. статей, вып. I, Предисловие, подгот. **А. К. Аликберов, М. С. Гаджиев**, Москва, 2015, с. 137.

[3] **М. Т. Пашаева**, К этнической истории "шахдагских народов", – Albania Caucasica, с. 151.

[4] Գետանուանը ըստ՝ Մ. Բարխուդարեանցի (էջ 206): Հմմ. նաեւ **И. Алиев, Ф. Л. Османов**, Бассейн рек Геокчай–Гирдыманчай–Ахсучай в античное время, – СА, 1975, № 1, с. 188-202.

Խալախա (var. *Խադախա, Խալակա*)՝ նախորդից մի փոքր հարաւ, այն, ըստ ամենայնի՝ կենտրոնն էր միջնադարեան Քաղայ (ըստ Ս. Երեմեանի եւ այլոց՝ Քաղադաշտ) գաւառի[1], որը Գիրգիման եւ Աղսու գետերի ստորին հովտում էր, այլ ոչ թէ Տուրիանի, ինչպէս շտապողաբար տեղորոշում էր Ս. Երեմեանը: «Քարթլիս Ցխովրեբա»-ում, անշուշտ, այդ կենտրոնն է կոչուած Քալաձորի (=Քաղաձոր)[2]:

Բոզիատա (var. Մոզիատա)՝ սեկտորի արեւմտեան մասում, այն կա՛մ վերականգնելի է որպէս Իոզիատա (հմմ. յուն. երբեմն պատահող՝ I > B/M)՝ յիշեցնելով Մովսէս Դասխուրանցու երկում, «Կանոնագիրք Հայոց»-ում եւ առանձին պահպանուած թղթերում մի քանի անգամ վկայուած Հոշի – Հոշաչա տեղանունը (var. Հոշոյ, Հոշոյ, Հաշուայ, Հաշէոյ, Հոշայ, Շոհայ)[3], որը համադրելի է Հոշաւանդ բլրի (Գեօգչայ/Կոկիսոն գետից արեւելք) եւ Խոշաւանտ հայաբնակ գիւղի հետ (Գեօգչայ քաղաքից 8 կմ հիւսիս-արեւելք), կա՛մ էլ՝ կարող է իր Բոզիատա տարբերակով համադրուել Խոշաւանտին հարեւան Բօզաւանդ/Բզաւանդ հայաբնակ գիւղի հետ[4]: Նշենք, որ բլրաշարի հարաւային փեշերին պեղուել են երկու անտիկ հնավայրեր՝ Մոլլախասակլին եւ Շըխդերէն[5], որոնցից մէկը, անշուշտ, եղել է պտղոմէոսեան քաղաքը (իսկ 60 հա հսկայ տարածքով Շըխդերէն էլ՝ արդեօ՞ք մի երկրորդը՝ Հոշին):

Խաբալա (var. *Խալաբա*)՝ սեկտորի հիւսիս-արեւմտեան մասում. նրա համապատասխանութեանը մայրաքաղաք Կաբալա/Կապաղակին («Աշխարհացոյց»-ում՝ Քավաղակ՝ *Ուստան-ի Մարծպանան գաւառում*), որը ներկայիս Ջուխուր-Կաբալա գիւղի մօտ մանրակրկիտ պեղուած քաղաքատեղին է (ուդիաբնակ Նիժ գիւղից 3 կմ հարաւ-արեւելք), մասնագէտները գրեթէ չեն կասկածել[6]: Ճիշտ է, լոկ Պլինիոսն է Cabalaca-ն Աղուանքի գլխաւոր քաղաք՝ "praevalent oppida" կոչել (*VI, 29*):

Երկիցս յիշուած ծովափնեայ «քաղաք» Ալբանա-ն էլ (*V, 11, 2; VIII, 19, 8*) պիտի փնտրել, թերեւս, խեղայորջորջեալ Ալիբայրամլիի մօտ՝ մինչխորհրդային տա-

---

[1] **Անանուն** (Է դար), Աշխարհացոյց, սն. 123:

[2] **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89:

[3] **Դասխ.**, գլ. Ա.իզ, էջ 89; Գ.գ, էջ 294; Գ.ը, էջ 300; Կանոնագիրք Հայոց, Աշխատասիրութեամբ՝ **Վ. Յակոբեանի**, հտ. Բ, Եր., 1971, էջ 91; **Վաչագան Աղուանից արքայ**, Սահմանադրութիւն կանոնական՝ եդեալ ի ժողովոյն, որ յԱղուէնն եղեւ, Գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Գ, Անթիլիաս, 2004, էջ 133; **Ա. Յակոբեան**, Եղիա Արճիշեցի կաթողիկոսի թղթերը, – ՀԱ, ՃԻԶ տարի, 2012, սն. 20:

[4] Համադրումը՝ դեռ Ս. Երեմեանի («Ասիայի երրորդ քարտեզը»...): Հայկական այս երկու գիւղերի մասին տե՛ս **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 209; **Ս. Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Եր., 1997, էջ 18-19:

[5] **Ф. Л. Османов**, История и культура Кавказской Албании..., с. 56-63.

[6] Տե՛ս **А. Е. Крымский**, Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании), – В кн.: С. Ф. Ольденбургу: к 50-летию научно-общественной деятельности, 1882-1932, Ленинград, 1934, с. 289; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 142, 256-261; **Дж. А. Халилов, И. А. Бабаев**, О городах древней Кавказской Албании, – СА, 1974, № 4, с. 100-103; **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 139 (սակայն՝ Պտղոմէոսի բնագրում նաեւ *Խաբալա – Խալախա* շփոթ ենթադրելով); **Ա. Վարդանյան**, Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, էջ 126:

րիներին՝ Աջիքաբուլ: Լեռնագեաբիզի լեռնաբազուկը, իջնելով հարաւ դէպի Կուր, այդ քաղաքի մօտ է աւարտւում մի ուշագրաւ ընդարձակ բլրախմբով (ռազմական մեծամասշտաբ քարտէզներում կոչւում է Կիւրովդաղ՝ 128 եւ 155 մ գագաթներով), որի փեշերին պիտի հասած լինէին տրանսգրեսիայի պահին մօտաւորապէս մինչեւ –16 մ նիշը հասած կասպից ծովի ջրերը (այսօր նիշը –28 է)[1]: Թերեւս, հէնց այդ բլրաշարի վրայ էլ արժէ փնտրել պտղոմէոսեան քաղաքը[2]:

Եւ միայն չորրորդ գետը՝ Ալբանոս-ն է, որը լինելով արդի Տուրիան/Դուրկանը (ստորին հոսանքում՝ Կարասու) եւ հարաւ իջնելով կապաղակ մայրաքաղաքի արեւմտակողմով՝ այսօր թափւում է Կուր, այնինչ, ըստ Պտղոմէոսի՝ ծովին էր հասնում: Թէպէտ, հաշուի առնելով դաշտավայրի բերածոյ ու խիստ հարթ լանդշաֆտը, լիովին ենթադրելի է, որ ժամանակին Տուրիանի ստորին հոսանքն առանձին է հոսել ծով, ընդ որում՝ Կուրին հիւսիսից զուգահեռ եւ հէնց նրա արդի հունով: Այդ հին ժամանակներում մօտաւորապէս Եաստիեօլ գիւղի գետանցից (Զարդոբ քաղաքից 15 կմ արեւմուտք) Կուրը հոսել է քիչ աւելի հարաւով՝ այսօր Սարիսու կոչուող ճահճալճերի միջով կամ Գլխաւոր Միլի-Ղարաբաղեան ջրանցոյցի (կոլեկտորի) մօտաւոր հունով (այդ գետահունից մնացած մի կտորը ռազմական մեծամասշտաբ քարտէզներում կոչւում է Բոզնոբի), իսկ Երասխի այսօրուայ գետագիծը հատելուց յետոյ՝ Շահումեանի անուան ջրանցոյցի մօտաւոր հունով, որի ստորին հատուածը նոյն քարտէզները կոչում են Կոբու (երկու զուգահեռ հոսող գետերի ուշագրաւ պատկերն առկայ է անգամ ԺՀ-ԺԹ դդ. մի քանի քարտէզներում[3]):

---

[1] Բ. Ցարութիւնեանի եւ Ռ. Հիւսընի քարտէզներում ծովի տրանսգրեսիան անտիկից վաղ միջնադար հասցուած է լոկ -20 մ նիշի: Յաւելենք, որ ոչ մի կերպ հնարաւոր չէ ընդունել Ս. Մուրաւիեւի կարծիքը, ըստ որի՝ Պտղոմէոսի կամ նրա աղբիւրների օրերում Կասպից լիճը եղել է Ովկիանոսի մակարդակից +15/20 մ բարձր՝ ողողելով անգամ Ալիջանի գետաբերանը (**С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 128-129, 142 сл.). Թէեւ ուսումնասիրողի գլխաւոր եզրայանգումները հէնց այդ չյաջողուած վարկածի վրայ են յենուած, սակայն նրա միւս՝ անտիկ աշխարհագէտի աշխատաեղանակի, ձեռագրերի ճիւղագրութեան, հնչիւնափոխութեան եւ գրչական վրիպակների (նաեւ՝ կոօրդինատների) քննութեան մասին մշակումները հաւաստի լուծումներ են տալիս յարակից մեծ ու փոքր հարցերին եւ այլ հետազօտողներին ընձեռում՝ ոչ մի կարեւոր իրողութիւն բաց թողած չլինելու մեծարժէք ու երախտագիտութեան արժանի վստահութիւն:

[2] Ի դէպ, Դասխուրանցու երկի Բ.լթ գլխում (էջ 238), այսինքն՝ «684 թ. պատմութեան» մէջ (ՄՀ, հտ. Ե, էջ 869) յիշուած «Լփնացւոց քաղաք»-ը (հմմ. ըստ Ս. Երեմեանի՝ վրիպմամբ Վիրքի արեւելքում Պտղոմէոսի նշած Λούβιων κώμη /V, 10, 2/), գուցէ՝ կարող էր համեմատուել *Ալբանա*-ի հետ, բայց իրականում շատ հեռու է ծովափից եւ, թերեւս, համադրելի է Իսմայիլլիի շրջանի հայաբնակ Գանձա գիւղի մօտ՝ Գիրդիման գետի աջ ափին նշմարուող անտիկ հնավայրի հետ (տե՛ս **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 195-196; **Ս. Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 19-20; **Ф. Л. Османов**, История и культура Кавказской Албании..., с. 64).

[3] Տե՛ս, օր.՝ **Ռ. Գալչեան**, Հայաստանը համաշխարհային քարտէզագրութեան մէջ, Եր., 2005 [հայերէն եւ ռուսերէն], էջ 230, 232, 233, 234, 235, 237: Ի դէպ, «Աշխարհացոյց»-ը նկարագրում է Վրկանի ծովը («որ կոչի Կասբից») Պտղոմէոսին հետեւելով, բայց ինչպէս տեսանք վերեւում (էջ 46, ծն. 6), Կուրից հիւսիս յիշում է Ալբանիայի լոկ 3 գետ՝ *Կեսիոս, Գեռաս* եւ *Սոնդաս* (=*Սոանա*՞), այսինքն՝ առանց *Ալբանոս*-ի (**Անանուն /Է դար/**, Աշխարհացոյց, սն. 69): Դժուար է ճշտել՝ արդեօ՞ք սա գրչական վրիպում է, թէ՞ հայ հեղինակն իրեն թոյլ է տուել սրբագրել անտիկ աշխարհագէտի բնագիրը:

Տեղին նշենք, որ Տուրիան/Ալբանոս սահմանագետի առիթով կարեւոր լուծում է եղել վերջերս մեր առաջ քաշած վարկածը Աղուանքի գետերի մասին Ստրաբոնի մեզ հասած բնագրի վերաբերեալ. («[Կուրը] ընդունում է իր մէջ նաեւ ուրիշ շատ գետեր, ինչպէս են՝ Ալազոնիոս, Սանդոբանէս [Σανδοβάνης], Ռոյտակէս եւ Քանէս [Χάνης]՝ բոլորն էլ նաւարկելի, եւ թափւում է Կասպից ծովը»)[1]: Ըստ այդ վարկածի՝ Սանդոբանէս գետանունն իրականում կարելի է ընկալել որպէս Սանի *(յիշուած՝ նաեւ «Աշխարհացոյց»-ում) եւ* *Լոբանէս *(փխն.* *Դոբանէս-ի. յուն. Δ եւ Λ մեծատառերը գրութեամբ նման են) գետանունների վրիպեալ միախառնում (որեւէ գրչի կողմից՝ Ստրաբոնից առաջ կամ յետոյ, ի հնչիւնի կորստով), ընդ որում՝* Լոբանէսը *կարող է համադրուել Պտղոմէոսի* Ալբանոս գետանուան հետ[2]: *Այս վարկածն ընդունելուց յետոյ դժուար չէ տեսնել, որ վերջինիս նշած միւս անանուն գետը՝ «Կովկասից հոսող, որ լցւում է Կուր» (V, 11, 3-4), ամենայն հաւանականութեամբ, Ալազանի ստորին հոսանքն է եւ իր Կուրմուխ վտակը (Կախաւան/Կախի քաղաքով անցնող), որը Ալազանին խառնուելուց յետոյ նրա գետագծի հետ մէկտեղ մօտաւոր հիւսիս – հարաւ գիծ է կազմում: Այստեղ նկատում ենք նաեւ, թէ ինչպէս ենք մենք շահում, երբ ամենեւին պարտադիր չենք համարում մտածել, որ Աղուանքում արեւմուտքից արեւելք թուարկուած անպայման բոլո՛ր ստրաբոնեան գետերը պիտի համընկնէին Պտղոմէոսի ճանաչած աղուանական գետերի հետ (այսինքն՝ բացի* *Լոբանէս/Ալբանոսից, նաեւ՝* Ալազանը, *Սան[ի]ն, Ռոյտակէսը եւ* *Խալէսը):*

Մեր խնդրի համար շատ հետաքրքիր է, որ վերջին դիտարկումը վերաբերում է նաեւ «Աշխարհացոյց»-ին ծանօթ Կուրի վտակներին: Իր «զԲուն աշխարհն Աղուանից» երկրի նկարագրութեան սկզբում նրա անանուն հեղինակը յիշատակում է Ալազանը՝ կոչելով այն Աղուան, *որից յետոյ թուարկում է Կովկասից իջնող* Գէգաու, *ապա* Սանի *եւ* Սէբոջ *գետերը («...Եխնի գաւառ առ* Աղուան *գետովն, եւ Քամբէճան առ* Կուրաւ... *Յորոյ յելից կողմանէ՝ Գըւգաւ քաղաք առ* Աղուան *գետով, եւ [Հողմաղ գաւառ, եւ] Բիխ գաւառ առ Կաւկասաւ, եւ յելի[ց] ն[որ]ա՝ Շաքէ, եւ Գէգաու գետ, առ որով՝ հոմանուն գաւառ առ* Սանի *գետով. այս ամենայն հոսին ի Կովկասա[յ], եւ խառնեալ ի յԱղուան գետ՝ անկանին ի Կուր գետ: Իսկ ի յելից կուսէ՝ Քավաղակ քաղաք Աղ[ու]անից..., ընդ որո[յ] մէջն՝ գետն* Սէբոջ *դէպ ի հարաւո[յ]...»)[3]: Հէնց դրանից յետոյ բնագիրը ցաւալիօրէն խաթարւում է 1604 թ. գրչի խիստ անուշադրութեան պատճառով, ով այդ հատուածում վրիպել է «ռէկորդային» 2-3 պարբերութիւն (մինչեւ Մեծ Հայքի նկարագրութեան սկզբները)[4]: Ի դէպ,*

---

[1] **Strab.** XI, 3, 2; **Ստրաբոն**, 1940, էջ 28-29: Թերեւս, վերջին գետանունը կարելի է վերականգնել **Խալէս* ձեւով (յուն. *N* եւ *Λ* մեծատառերը գրութեամբ նման են), որին ակնյայտօրէն համադրելի է թուում Պտղոմէոսի *Խալախա* քաղաքանունը (=*Քալա-Քաղաձոր*). վերեւում տեսանք, որ այն տեղորոշւում է *Աղսուի* ստորին աւազանում (հմմ. *Աղ – Խալ*):

[2] **Ա. Յակոբեան**, Բուն Աղուանքի քաղաքները եւ գետերը..., էջ 139:

[3] **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 122-123:

[4] Տե՛ս անդ, սն. 37, 48, 123, ծն. 6:

*Ալազանի ամենաարեւելեան վտակ Աղրիչայի աշխարհացոյցեան Գէգաւու (var. Գեգաւու) անուան հետ[1] (որը նաեւ շրջակայ գաւառի անունն էր) կարող է զուգորդուել նոյն աղբիւրի Գլուգաւ քաղաքանունը (Ալազանի ձախ՝ արեւելեան ափին), որը, թերեւս, ՊԱ-ի եւ «Աղուէնի կանոններ»-ի Գայէգոճ-ն է (var. Գայէգուճ, Գեգաճ)[2]՝ ձայնաւորների միջեւ Յ – Ի կիսաձայների եւ -աւ – -ոջ վերջածանցների հերթագայութեամբ[3]: Սանի գետն էլ իրաւացիօրէն համադրւում է Կուրի Ալիջան վտակի հետ (նաեւ՝ Արջկան[4], Ալջիգան), իսկ մայրաքաղաք կապաղակով անցնող Սէբոջ-ը՝ Տուրիան վտակի[5], որը, կրկնենք՝ Պտղոմէոսի Ալբանոս-ն է եւ Ստրաբոնի Լոբանէս-ը: Դրանից յետոյ՝ Կուրի Գեօգչայ/Կոկիսոն[6] վտակի հետ մեծ հաւանականութեամբ համադրւում է Ստրաբոնի Ռոյտակէս-ը[7], իսկ Աղսու վտակի հետ էլ՝ նրա *Խալէս-ը (Գիրգիման վտակի կամ Փիրսահաթ գետի հետ սրա համադրումը պակաս հաւանական է), որը, կրկնենք, համեմատելի է Խալախայի հետ՝ Աղսու վտակի ափին:*

Արդ՝ Ալբանոս-Լոբանէս-Սէբոջ-Տուրիան-Դուրկան եւ Կուրմուխ-Ալազան-Աբանտոս-Աղուան գետագծերի միջեւ ընկած պտղոմէոսեան սեկտորի քաղաքները հետեւեալ 12-ն էին.

---

[1] Ս. Երեմեանի կատարած *Գետառոու* փխն. *Գէգաւու* (1883 թ. հրատ.՝ *Դէգաւոու*) վերականգնումը (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 47), թերեւս, շտապողական է:

[2] **Դասխ.**, գլ. Ա.իզ, էջ 90; Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 92; **Վաչագան Աղուանից արքայ, Սահմանադրութիւն կանոնական՝ եդեալ ի ժողովոյն, որ յԱղուէնն եղեւ**, էջ 133:

[3] Վերջածանցների հերթագայութեան մասին առանձին տե՛ս ստորեւ, էջ 294, ծն. 3: Տեղին նշենք, որ երբ նկատի ենք առնում համաոտ «Աշխարհացոյց»-ի բնագրից Ղեւոնդ վարդապետի քաղածոն («...առնուին [խազիրք] բազում գաւառս՝ զՀէջար, զՔաղա[յ], զՈստան-ի Մարզպանեաց, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲիխ, զԽեճի, զԿամբեխճան, զԽոզմազ. այս՝ գաւառք աշխարհին Աղուանից: Առին եւ զցանկալի դաշտն Բաղասական...»), ուր Բուն Աղուանքի գաւառները ճիշտ հակառակ ուղղութեամբ են թուարկուած, պարզ է դառնում, որ գետի հետ նոյնանում *Գէգաւու – Գեղաւու* գաւառը պետք է տեղորոշել Ալազանի Աղրիչայ վտակի վերնահովտում՝ Կովկասեան լեռների տակ, Օրաբան եւ Դահնա գետակների միջեւ, իսկ *Հողմաղ – Խոզմազ* գաւառը տանել հարաւ՝ Կուրի ափ եւ Կամբէճանին հարեւան (տե՛ս Պատմաբանութիւն **Ղեւոնդեա[յ] մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի...** /**Łewond Vardapet**. Discours Historique. Traduit et commentée par **B. Martin-Hisard**. Avec en annexe: La correspondence d'Omar et de Léon. Traduit et commentée par **J.-P. Mahé**. Texte arménien établi par **A. Hakobian**, Paris, 2015, յետայսու՝ Պատմաբանութիւն **Ղեւոնդեայ**/, գլ, Լ.Զ, էջ 148-151; Պատմութիւն **Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց**, Ս. Պետերբուրգ, 1887 /յետայսու՝ **Ղեւոնդ**/, գլ, Լ.Ա, էջ 132): Ս. Երեմեանը, Բ. Յարութիւնեանը եւ Ռ. Հիւսընը շտապողաբար արել են հակառակը:

[4] Գետանունն ըստ՝ **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 50, 53...:

[5] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 80; **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Եր., 2004, էջ 43: Ռ. Հիւսընը չգիտես ինչու անտեսում է Սանի գետանունը, ապա, հետեւելով Ս. Մուրաւիեւին, *Աղուան-Ալբանա* է կոչում Ալիջան-Արջկան վտակը, իսկ *Ռոյտակէս*՝ Տուրիանը (**R. H. Hewsen**, Armenia, p. 100, հմմ. **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 131). Այդ տարբերակները պէտք է պակաս հաւանական համարել:

[6] Գետանունն ըստ՝ **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 50, 53...:

[7] *Ռոյտակէս* անունը, գուցէ՝ համեմատելի է հայաբնակ *Ռուշա*նաշէն գիւղի անուան հետ՝ Գեօգչայի գետահովտի ձախափնեակում: Տե՛ս անդ, էջ 200-201 (ուր կոչուած է նաեւ *Ռուշանայ շէն*); **Ս. Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 27-29:

Մոսէգա՝ *սեկտորի ծայր հիւսիսում, որը, թերեւս, ցարական 5, 10-վերստանոց եւ Հենրի Լինչի քարտէզներում նշուած՝ Տուրիան/Դուրկանի վերնահովտում, գետի ակունքների տակ գտնուող Միչիխ գիւղն է, Կուտկաշէն/Ղութղաշէն քաղաքից 10 կմ հիւսիս*[1] *(այլ ոչ թէ հարեւան սեկտորի Մացեխ-ը՝ Ջաքաթալա քաղաքից 4 կմ արեւմուտք, ինչպէս ենթադրում էին Ս. Մուրաւիեւը եւ Ռ. Հիւսընը*[2]*)*:

Սամուռիս՝ *նախորդից մի փոքր հարաւ. ըստ Ս. Մուրաւիեւի եւ Ռ. Հիւսընի շտապողական համադրման՝ սա Ալազանի գետաբերանից հարաւ գտնուած Սամուխ գիւղն էր՝ կուրի աջ ափին (!), ներկայումս՝ Մինգեչաուրի ջրամբարի տակ: Սակայն հաշուի առնելով նշուած դիրքը՝ շատ աւելի հաւանական է տեղանունը վերականգնել Սակունիս ձեւով (յուն. M եւ K տառերի գրութիւնը որոշ նմանութիւն ունի) եւ համադրել հէնց սեկտորի հիւսիսում գտնուող Շաֆի քաղաքի հետ:*

Իոբուլա՝ *սեկտորի հիւսիս-արեւմուտքում. Ս. Մուրաւիեւը համադրել է Ալիբէյլի գիւղի հետ՝ կուրմուխ վտակի վրայ*[3]*, թէեւ նրան աւելի նման է 3 կմ արեւելք ընկած Իբալլու գիւղի անունը: Բայց ամենահրապուրիչը Իոբուլա-ի համադրումն է ժթ դ. հայաբնակ Ջովլան-շէն գիւղի հետ (հմմ. Ի/Յ → Ջ եւ Բ → Վ)՝ վարդաշէնից 5 կմ հարաւ («քահանան գալիս է Ճալէթից»)*[4]*, թէկուզ եւ դա սեկտորի արեւելքն է:*

Իուձա՝ *սեկտորի կենտրոնում, որն ակնյայտօրէն նման է արդի Ջուձուտ գիւղի անուանը (հմմ. Ի/Յ → Ջ)՝ կուրմուխին արեւելքից զուգահեռ հոսող Ջունուտ գետակի վերնահովտում, որի հետ էլ համադրել են Ս. Մուրաւիեւը եւ Ռ. Հիւսընը*[5]*:*

Եմբոլայա (var. Եմբոլայոն, Եբլայա)՝ *սեկտորի կենտրոնական մասում, որը Ռ. Հիւսընը եւ ուրիշներ փորձել են նոյնացնել ներկայիս Եւլախ քաղաքի հետ՝ կուրի աջ ափին (այդ սխալը կայ նաեւ մեր նախորդ աշխատանքում)*[6]*: Իրականում շատ աւելի ճիշտ է այն համադրել Էմբեռչայ յորջորջուած գիւղի անուան հետ, որը գտնւում է կուրմուխի ափից եւ Կախաւան (Կախի) քաղաքից 5 կմ հարաւ-արեւելք:*

Աղիաբլա (var. Աղիաբդա)՝ *սեկտորի կենտրոնական մասում, Եմբոլայայից արեւելք. այն, թերեւս, Ալիաբլա վերականգնումով (հմմ. յուն.՝ Λ > Δ) կարող է համադրուել Ալեար գիւղի հետ (մինչ 1918 թ. եղեռնը՝ հայաբնակ*[7]*, այսօր՝ Ալիար)՝ 20*

---

[1] Տե՛ս Հայաստան եւ հարեւան երկիրներ. ըստ **Լինչի**..., Խմբ.՝ **Ա. Աբեղեան**, Թիֆլիս, 1914:

[2] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 136; **R. H. Hewsen**, Armenia, p. 100. Նրանց պատկերացրած այս սեկտորը դեռ մօտաւոր է համընկնում մերի հետ:

[3] Տե՛ս նոյն էջերում:

[4] **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 252 (այժմ կայ լոկ գետանուն՝ *Ջոյլեճչայ*): Նախորդ յօդուածում (էջ 139) *Իոբուլա*-ն (<**Իոռուլա*. հմմ. յուն.՝ P > B) համադրել էինք հարեւան սեկտորի *Ջորլու* գիւղի հետ՝ ժԹ-Ի դդ. դեռ ուդիաբնակ (ուդիական հիմնաճարցերի մասին այժմ տե՛ս **Г. Харатян**, Официальные этно-демографические показатели в Азербайджане. Удины: крах всех усилий самосохранения, Москва, 2015).

[5] **С. Н. Муравьев**, Птолемеева карта... Албании, с. 136; **R. H. Hewsen**, Armenia, p. 100.

[6] Տե՛ս նոյն էջերում եւ **Ա. Յակոբեան**, Բուն Աղուանքի քաղաքները եւ գետերը..., էջ 139:

[7] Տե՛ս **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 261; **Ս. Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 76-77:

կմ Շաքիից հարաւ, Աղրիչայի վերին հոսանքի եւ Ալիջանի միջեւ հոսող Դահնա գետակի ափին: Ս. Մուրաւիեւը եւ Ռ. Հիւսընը Ալիարի հետ համադրել են յաջորդ քաղաքը (վերականգնելով՝ Աբլիարա), իսկ այս մէկը վերականգնելով Ալիաբդա՝ համարել են Ալիաբադ գիւղը[1]՝ Ջաքաթալայից 12 կմ հարաւ եւ վերոնշեալ Ալիբէյլիից 15 կմ արեւմուտք (որը շատ է հեռու մեր սեկտորի սահման կուրմուխ գետից):

Աբլիանա (var. Աբլիալա, Աբլիամա, Աբլանա)՝ սեկտորի կենտրոնից արեւմուտք. սա, թերեւս, խեղայորջորջուած Ալիբէյլի-ն է՝ կուրմուխի միջնահովտում, կամ, որ աւելի հաւանական է՝ նրանից 5 կմ հարաւ-արեւմուտք, այդ վտակի գետաբերանին աւելի մօտ գտնուող՝ Ալմալի դարձած (*Ալբիալա-ից, դրափոխում եւ Բ – Մ հնչիւնափոխութիւն ենթադրելով) գիւղը: Վերջինից մի քանի կմ հարաւ՝ Ալազանի եւ Աղրիչայի գետակիցի մօտ պեղուած է Թորփախ-ղալա անտիկ-միջնադարեան հնավայրը[2], որն էլ հէնց կարող էր լինել պտղոմէոսեան քաղաքը:

Մամեխիա (var. Կամեխիա, մէկ գրչագրում)՝ սեկտորի կենտրոնից արեւելք, որը յաճախ իր երկրորդ տարբերակով համադրուել է Շամախիի հետ (երկու սեկտոր արեւելք)[3]: Բայց Ս. Մուրաւիեւը, իրաւացիօրէն վերականգնելի համարելով Մալեխիա ձեւը (հմմ. յուն. ΛΛ > Μ)՝ գտել է նրա ճիշտ համադրումը Ալիյարից 8 կմ արեւելք, Մալիխ – Մալըղ-շէն գիւղի հետ (ԺԹ դարում հայաբնակ)՝ Շաքիից հարաւ փոռուած «դաշտակի մէջ» («քահանան գալիս է Աղփլաքեան գիւղից», որը նորօրեայ մեծամասշտաբ քարտէզների Աղ-Պելիքենդ աւերակ գիւղատեղին է)[4]:

Երկիցս է նշուած Օսիկա – Օսսիկա-ն (var. Օսիմա, *V, 11, 5; VIII, 19, 9*)՝ սեկտորի հարաւ-արեւմտեան անկիւնում: Թէպէտ շատերն այն համադրել են Շաֆի (նաեւ՝ Նուխի) քաղաքի հետ[5], սակայն վերջինս սեկտորի հիւսիսային մասում է, ուստի աւելի հաւանական է պտղոմէոսեան քաղաքը տեղորոշել նրանից մօտ 25 կմ հարաւ եւ կուր գետից 8 կմ հիւսիս գտնուող համանուն Շաֆի (նաեւ՝ Շեֆի) գիւղի տեղում, որից արեւելք տարածուող հարթութիւնն էլ, ի դէպ, Շեֆիի սարահարթ է

---

[1] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 138; **R. H. Hewsen**, Armenia, p. 100.

[2] Атлас Азербайджанской ССР (1963), с. 205; Атлас Азербайджанской ССР, Москва, 1979, с. 40; **Р. М. Ваидов**, Керамические печи Торпаккала, – МКА, т. IX, Баку, 1980, с. 40-51.

[3] Տե՛ս **А. Бакиханов**, Гюлистан-Ирам, с. 10-11; **Ս. Տ. Երեմյան**, «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի...; **Ա. Վարդանյան**, Աղվանքի պատմաաշխարհագրական քննութիւն, էջ 131: Մեր նախորդ աշխատանքում (**Ա. Յակոբեան**, Բուն Աղուանքի քաղաքները եւ գետերը..., էջ 140) *կամեխիա* ձեւը շտապել էինք համադրել Կախի քաղաքից 4 կմ հիւսիս-արեւմուտք գտնուող *Կում* (*Ղում*) գիւղի հետ (լեզգիազգի պոէտ Նիզամու ծննդավայրը, որը յայտնի է նաեւ իր եռանաւ բազիլիկ տաճարով):

[4] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 137; **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 261: Ռ. Հիւսընի քարտէզում *Mallix*-ը դրուած է 10 կմ հիւսիս, կարծես թէ՝ *Մուխաս* գիւղի տեղում:

[5] Տե՛ս, օր.՝ **А. Е. Крымский**, Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании). Шеки, – В кн.: Памяти академика Н. Я. Марра (1864-1934). Сб. статей, Москва-Ленинград, 1938, с. 370; **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 137 (առաջարկելով՝ *Սասկա* վերականգնումը):

կոչւում[1]: Այդ գիւղից մի քանի կմ արեւմուտք պեղուել է Բեյուկ Դահնա հնավայրը (ուր նաեւ յունարէն փոքր վիմագիր է գտնուել)[2], որն էլ, գուցէ, հէնց Օսիկան էր:

Սիոդա՝ սեկտորի հարաւային մասի կենտրոնում, որը կա՛մ 1434 թուից յիշատակուող Սոկութլու գրչօջախ գիւղն է (նաեւ՝ Սեօգիւթլու Մեծ եւ Փոքր)՝ կապաղակից 8-9 կմ արեւմուտք[3], կա՛մ էլ, որ աւելի հաւանական է՝ հէնց հարաւ ընկած Մինգեչաուր քաղաքի ձախափնեայ Սուդագիլան թաղամասը[4] (թերեւս, Աղուանքի կուրամերձ մայրուղու վրայ[5]), որի պեղումներից անտիկ, վաղ միջնադարի եւ անգամ բիւինեական շրջանի նիւթեր են ի յայտ եկել («ուրարտական տիպի» սրեր)[6]:

Բարուկա՝ սեկտորի հարաւ-արեւելքում. չնայած այս դիրքին՝ այն համադրուել է ուղիղ հակադրաբնակ Վարդաշէն քաղաքի կամ 8 կմ հարաւ ընկած Վարդանի գիւղ – Վարդանլուի հետ[7] (վերականգնելով՝ Բարուդա եւ Բարուձա), իսկ մենք, ենթադրելով սեկտորների շփոթ՝ անգամ փորձում էինք նոյնացնել միւս սեկտորի Բելոկան քաղաքի հետ[8]: Սակայն, թերեւս, ամենահաւանականն է Բարուդա-ի լրացուցիչ վերականգնումը որպէս Ջարուդա (հմմ. յուն. երբեմն պատահող՝ Z > B) եւ համադրումը կուրով աւելի ներքեւ, այսինքն՝ մեր սեկտորի հէնց հարաւ-արեւելքում ընկած Ջարդոբ/Ջարդաբ քաղաքի անուան սկզբնամասի հետ՝ միւս մասի տակ էլ դիտարկելով «ջուր», «գետ» նշանակող իրանական աբ/օբ բառը: Ի դէպ, Ս. Երեմեանը կուրի վրայ Ջարդոբի գետանցը կոչում է Մուբարաֆ (արաբ.՝ «սրբութիւն» /ʿ/), որի -բարաֆ բաղադրիչը, թերեւս, կարող է համադրուել Բարուկա-ի հետ, իսկ ափին էլ նշում է յայտնի Բերզենջ քաղաքը[9], որի Բերզե- բաղադրիչը նման է Բարուձա-ին:

Այս սեկտորի՝ երկիցս յիշուած ծովափնեայ Գաիտարա «քաղաքը» (var. Գանգարա, Գագարա, *V, 11, 2; VIII, 19, 7*), ըստ ամենայնի՝ պէտք է համադրել Կուրերասխ գետակիցի ու մի հինաւուրց գետանցի մօտ գտնուող եւ միջնադարից Ջաւատ (նաեւ՝ Ջեւադ) անունով յայտնի աւանի հետ: Նման համադրման մէջ օրինա-

---

[1] Դա արել է արդէն Ս. Երեմեանը («Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի...), ընդ որում՝ նաեւ հաշուի առնելով *Հոշի*-ի հետ, որը, սակայն, շտապողական ենք համարում:

[2] **Ф. А. Османов**, История и культура Кавказской Албании..., с. 64, 154.

[3] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն I (1401-1450 թթ.), Կազմեց՝ **Լ. Ս. Խաչիկյան**, Եր., 1955, էջ 439; **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 219-222; **Ս. Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 91-93:

[4] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 137 (յղելով Ս. Երեմեանին):

[5] Կասպից ծով – Պոնտոս առեւտրական ուղու մաս (**Strab.** XI, 7, 3; **Plin.** Nat. Hist., VI, 52).

[6] Տե՛ս **М. Н. Погребова**, Закавказье и его связи..., с. 48-49, 207-209 (մնացեալ գրականութեան յղմամբ); **Ф. А. Османов**, История и культура Кавказской Албании..., с. 64-65; Атлас Азербайджанской ССР (1963), с. 205; Атлас Азербайджанской ССР (1979), с. 40.

[7] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 137; **R. H. Hewsen**, Armenia, p. 100. Հմմ. **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 245: Ի դէպ, Վարդանլուի մօտ կատարուած պեղումներով անտիկ բնակավայր է ի յայտ եկել. տե՛ս Атлас Азербайджанской ССР (1963), с. 205; Атлас Азербайджанской ССР (1979), с. 40.

[8] **Ա. Յակոբեան**, Բուն Աղուանքի քաղաքները եւ գետերը..., էջ 141:

[9] Տե՛ս ՀԺՊ, հտ. III-ում նրա «Հայաստանը եւ հարեւան երկրները 855-953 թթ.» քարտէզը եւ հմմ. **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի պատմության ատլաս, էջ 57, 59, 65, 69, 81:

չափ է թէ՛Գ – Ջ լեզուական անցումը, թէ՛ ձայնաւորների միջեւ Յ – Ի կիսաձայների հերթագայութիւնը (իսկ ծովից հեռու գտնուող Մինգեչաուր-ի անուան երկրորդ կէսի հետ Ս. Մուրաւիեւի համադրումը խիստ թէական է[1]): Երասխի ջաւատեան ափից 5 կմ հարաւ ընկած է Ջաֆարխանի հնավայրը[2], եւ ուշագրաւ է, որ աղուանական մետաէթնիկ հանրոյթը բնորոշող՝ «Ծալոյլութեփէի հնագիտական մշակոյթին» յարող հարուստ նիւթով այդ անտիկ դամբարանադաշտը գտնուում է ներկայիս Կուրի աջ, հարաւային ափին, բայց աւելի հիւսիս՝ մեր նշած հին Կուրի գետահունից (=Շահումեանի անուան ջրանցոյցից), որն այստեղ եւս, իրօք, սահմանազատում էր անտիկ Ալբանիան Մեծ Հայքից[3] ու նրա անտիկ դարաշրջանի՝ այսպէս կոչուած «կարասային թաղումների» հնագիտական մշակոյթի համալիրից[4]:

Եւ վերջապէս՝ իր ամենաարեւմտեան սեկտորում, Իբերիայի սահմանի ու անանուն գետի (=վերոյիշեալ Կուրմուխ–Ալազան գետագծի) միջակայքում Պտղոմէոսը թուարկում է հետեւեալ 5 քաղաքները.

Տագոդա (var. Տրագոդա)՝ սեկտորի հիւսիսում, որը բոլորի համոզմամբ՝ վերականգնելի է Լագոդա, որից էլ՝ նրա համադրումը արդի Լագոդեխի քաղաքի հետ[5]:

Բակխիա՝ սեկտորի հիւսիս-արեւմուտքում, որը Վ. Լատիշեւի թարգմանութեան մէջ տպագրական վրիպակով դարձել է Բակրիա, սակայն Ս. Մուրաւիեւի կարծիքով կարող է նաեւ վերականգնուել հէնց որպէս այդպիսին[6]: Այն յիշեցնում է աշխարհացոյցեան Բիխ – Բէխ գաւառի անունը, ուրեմն կարող էր համադրուել նրա՝ ենթադրաբար նոյնանուն կենտրոնի հետ: Բայց այս գաւառը զբաղեցնում էր սեկտորի հիւսիս-արեւելքը, ուստի, թերեւս, արդարացուած է նշուած Բակրիա ձեւի ընդունումն ու նոյնացումը Ալազան գետի աջափնեայ հովտի Վակիրի գիւղի հետ (Ցնորի քաղաքից 2 կմ հիւսիս). Ս. Երեմեանի առաջարկած համադրումը Բակուր-ցիխէ գիւղի հետ պակաս հաւանական է, քանի որ այն գտնուում է բաւականին արեւմուտք, այսինքն, ըստ ամենայնի՝ կախէթի սահմաններում[7]:

Սանուա՝ սեկտորի հիւսիս-արեւելքում. գուցէ, կարելի էր ընդունել Ս. Մուրաւիեւի վերականգնումը որպէս Սանորա եւ համադրումը վերոնշեալ Ցնորի քաղաքի

---

[1] Տե՛ս, օր.՝ **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 137. Ըստ ոմանց էլ՝ *Գահտարա-Գանձարա*-ն կարող էր լինել Բաքուի կամ Ալեատի տեղում կամ մօտակայքում (տե՛ս **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 139-140).

[2] **Т. С. Пассек**, Джафарханский могильник (археологические разведки в Муганской степи), – ВДИ, 1946, № 2, с. 169-188; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 160.

[3] Ըստ Ստրաբոնի եւ միւս անտիկ հեղինակների՝ Աղուանքը հարաւում ողջ երկայնքով Մեծ Հայքից բաժանւում էր Կուր գետով: Տե՛ս **Strab.** XI, 3, 2; 4, 2; 14, 4; **Plin.** Nat. Hist., VI, 28-29; 39; **Ptol.** Geogr., V, 11, 1; 11, 3; 12, 1; **Dio Cass.** XXXVI, 53, 5; **App.** Mithr. 103.

[4] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 16-17 (նաեւ՝ վերեւում, էջ 19-20):

[5] **Ս. Տ. Երեմյան**, «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի...; **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 132-135; **R. H. Hewsen**, Armenia, p. 100.

[6] **С. Н. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 132, прим. 31; 142, 145.

[7] Անդ, էջ 132: Հմմ. **Ս. Տ. Երեմյան**, «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի...:

հետ[1], սակայն ուշադիր նկատի առնելով պտղոմէոսեան սեկտորում նրա տեղը՝ ճիշտ ենք համարում վերականգնել Սարուա ձեւով (հմմ. յուն. երբեմն շփոթուող՝ N – P), որը համադրելի է հէնց աւելի արեւելք ընկած պատմական Ճար/Ջար-ի հետ, ներկայումս՝ Ջաքաթալա քաղաք (որից 2 կմ հիւսիս կայ նաեւ Ջար գիւղը):

Դեգլանէ (var. Դէգլանէ, Դիգլանէ, Դէխլանէ)՝ սեկտորի կենտրոնում, նախորդից հարաւ. այն Ս. Մուրաւիեւն առաջարկում էր վերականգնել որպէս Զիգաանէ եւ համադրել Ցնորիի կողքին գտնուող մի գիւղի հետ (Զուգաանի)[2], սակայն կրկին նկատի ունենալով պտղոմէոսեան սեկտորում նրա տեղը՝ ճիշտ կը լինէր վերականգնել որպէս Լեգլանէ (հմմ. յուն. Δ – Λ տառերի յաճախակի շփոթը), որը մեծ հաւանականութեամբ կապւում է Ջաքաթալա քաղաքից 20 կմ հարաւ-արեւելք ընկած Լեֆիթ գիւղի հետ (իր նշանաւոր զուարթնոցատիպ տաճարով):

Ինչ վերաբերում է այս սեկտորի կենտրոնից արեւելք նշուած Նիգա քաղաքին (var. Նէգա), որը Ս. Երեմեանը համարում էր հարեւան սեկտորի հիսիսում գտնուող Նուխի/Շաքի քաղաքը, ապա Ս. Մուրաւիեւն առաջարկում է համադրել այն (վերականգնելով՝ Նագա) նոյն Ցնորիից 5 կմ հարաւ ընկած՝ նմանահունչ Զեղի-Անագա գիւղի հետ[3]: Սակայն այս դէպքում, հաշուի առնելով ակնյայտ նմանութիւնը, թերեւս, կարող է լիովին արդարացուած համարուել նոյնացումը հարեւան սեկտորի արեւելքում գտնուող նշանաւոր ուդիաբնակ Նիժ/Նիջ գիւղի հետ՝ թէկուզ եւ ստիպուած ենթադրելով Պտղոմէոսի թոյլ տուած՝ սեկտորների այս մէկ շփոթը:

Յաւարտս՝ փորձենք հնարաւորինս ճշգրտել, թէ որ գծով է անցել անտիկ Աղուանքի արեւմտեան սահմանը, որի մասին իրար չյանգող ուղիղ եւ անուղղակի տեղեկութիւններ են հաղորդում Ստրաբոնը, Պլինիոս Աւագը եւ այլոք: Առաջինը Ալբանիայի նկարագրութեան գլխում գրում է, որ Իբերիայից մտնող ճանապարհն ընթանում էր «անջուր ու քարքարոտ կամբիւսէնէ մարզով եւ հասնում Ալազոնիոս [=Ալազան] գետին»[4]: «Իբերիայի սահմանից ոչ հեռու» դրուած իրենց խաղխաղի ճամբարից կուրը գետանցելով՝ հէնց այդ մայրուղին էին մտել եւ գիշերային անցումներով ու չորային մարզի զրկանքներից դժգոհելով այն յաղթահարել Պոմպէոսի լեգիոնականները՝ հասնելով Կամբիւսէն/Իորի գետին, ապա Աբանոս/Ալազանին[5]: Այնինչ՝ Պլինիոսի խօսքերով՝ վիրքի հետ սահմանը Օլազանէս/Ալազան գետն էր («[Հիբերները], որ բաժանուած են առաջիններից [=ալբաններից] Օլազանէս [var. Օկազանէ] գետով, որը Կովկասեան լեռներից հոսում է Կուր»)[6]: Թէեւ՝ բարդ

---

[1] **C. H. Муравьев**, Птолемеева карта Кавказской Албании, с. 132.

[2] Անդ:

[3] Անդ: Հմմ. **Ս. Տ. Երեմյան**, «Ասիայի երրորդ քարտեզը» ըստ Պտղոմեոսի...: Նուխին Նիգայի հետ նամադրում էր դեռ Ա. Բաքիխանովը (**А. Бакиханов**, Гюлистан-Ирам, с. 11).

[4] **Strab.** XI, 4, 5.

[5] **Plut.** Pomp. XXXIV-XXXV; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 266-267; **Dio Cass.** XXXVI, 53, 5; 54, 1; XXXVII, 4, 1; **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, էջ 142-146.

[6] **Plin.** Nat. Hist., VI, 29.

չէ ենթադրել, որ նրա նշած սահմանագծի տակ պէտք է ընկալենք հիւսիս-արեւմուտք – հարաւ-արեւելք ուղղութեամբ հոսող Ալազանի ոչ թէ ամբողջ գետագիծը, այլ դրա մի կտորը, ընդ որում, ըստ ամենայնի՝ այդ կտորով պիտի անցած լինէր երկու հարեւան երկրներն իրար կապող մի մայրուղի (դառնալով Պլինիոսի տեղեկատուի նմանատիպ նկարագրութեան հիմքը)։ Իսկ այդ սահմանային կտորը, որը դիպուկ նկարագրում է նաեւ Ստրաբոնը՝ վիրքին նուիրուած գլխում («Ալբանիայից անցումը [Իբերիա] սկզբից ընթանում է ժայռերի միջով՝ քարի մէջ փորուած արահետով, իսկ ապա՝ կովկասից հոսող Ալաձոնիոս գետի գոյացրած իջուածքով»)[1], առաւել մեծ հաւանականութեամբ՝ Կովկասի գագաթներից Ախալսոփէլի գիւղի (հին՝ Գաւազնի) արեւմտակողմով իջնող՝ Աւանի կոչուող վտակի[2] գետկիցից սկսուող Ալազանիի այն հատուածն է, որտեղ գետի վերոնշեալ ուղղութիւնը փոխւում է՝ մօտ 15 կմ դառնալով գրեթէ հիւսիս – հարաւ, եւ որտեղ այսօր էլ արեւելքից արեւմուտք անցնում է (ձախափնեայ Օնանուրի գիւղի մօտակայ գետանցով ու կամրջով) Լագոդեխին Կախէթի Գուրջաանի քաղաքի հետ կապող մայրուղին։

Այսպիսով, անտիկ Աղուանքի արեւմտեան սահմանը գծելիս եթէ հարաւում պիտի նկատի ունենանք նրա, ըստ ամենայնի՝ Խաղխաղի ձմերոցի, այսինքն՝ Աղստեւի եւ Հախումի գետաբերանների դիմաց սկսուելու իրողութիւնը, ապա հիւսիսում մեզ պիտի օգնի Աւանի վտակով ու Ալազանի կից կտորով անցնելու պատկերը։ Ուշագրաւ է, որ ըստ ցարական շրջանի քարտէզների՝ գաւառային հէնց այդ պիսի սահմանագծերի երկու կտորներ են անցնում՝ Աղստեւի գետաբերանից հիւսիս՝ Թիֆլիսի ու Ղազախի, իսկ Կովկասից հարաւ՝ Թելաւի ու Սղնախի ուեզդների միջեւ։ Եւ վերջապէս՝ նշելի է, որ անտիկ Աղուանքի արեւմտեան սահմանը մօտաւորապէս այդ գծերով է տարուած արդէն Բ. Յարութիւնեանի քարտէզներում[3]։

Բաժին 3

ԱՐՑԱԽԸ ԵՒ ՈՒՏԻՔԸ ՅՈՒՆԱ-ՀՌՈՄԷԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ

Աշխարհացոյցեան Մեծ Հայքի 15 նահանգներից 10-րդի՝ Արցախի անուան առաջին յիշատակութիւնը պահպանուել է Ստրաբոնի «Աշխարհագրութեան» մէջ։ Այն տեղ է գտել հէնց Հայաստան/Արմենիա երկրի նկարագրութեան հատուածում՝ XI գրքի XIV գլխում (§ 4) եւ մեզ է հասել որոշակիօրէն դրափոխութեան ենթարկուած Օրխիստէնէ (Ὀρχιστηνή <*Ὀρτσιχηνή – *Օրտսիխէնէ) ձեւով[4]։ Ըստ ենթա-

---

[1] **Strab.** XI, 3, 5.

[2] Արդեօ՞ք այս *Աւանի* գետանունը, զուտ իբրեւ վարկած, հնարաւոր է համեմատել Ալազան գետին Պոմպէոսի լեգիոնականների տուած «*Աբանտոս*» յորջորջման հետ։ Ի դէպ, նկատուած է, որ աղուանական մետաէթնիկ զանգուածը բնորոշող վերոնշեալ «Եալոյլութեփէի հնագիտական մշակոյթը» տարածուած է դէպի արեւմուտք հէնց մինչեւ Ախալսոփէլիի շրջակայքը (**Г. Ниорадзе**, Раскопки в Алазанской долине, Тбилиси, 1940).

[3] **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի պատմության ատլաս, էջ 29, 31, 34, 39, 41, 43...։

[4] **Strab.** XI, 14, 4. Հմմ. **Г. А. Капанцян**, Chetto-Armeniaca, Ep., 1931, c. 104; **Ա. Ծ. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Եր., 1966, էջ 259-262;

տեքստի՝ Հայաստանի Փաւէնէ *կամ* Ֆաւէնէ *(*Փաւոնի. *ձեռագրերում՝ նաեւ* Փաւնոնի *–* Փաւնէննէ, Փաոնոնի *–* Փաննէննէ*),* Կոմիսէնէ *(*Կոմիսոնի*) եւ* Օրխիստէնէ *(կամ* Օրհիստէնէ*) երկրամասերը (յուն.՝ «եպարխիա» – բառացի՝ «գաւառ») յիշուած են Արաքսի եւ Կուրի գետակիցից Կուրի ափով դէպի հիւսիս-արեւմուտք տարածուող* Արաքսէնէ *(*Արաքսոնի*, իր ծայր արեւելեան հատուածով),* Սակասէնէ *(*Սակասոնի*, աշխարհացոյցեան Շակաշէն գաւառ եւ շրջակայք) եւ* Գոգարէնէ *(*Գոգարոնի. *աշխարհացոյցեան Գուգարք նահանգի արեւելեան կէս[1]) գաւառներին յաջորդող շարքում։ Հր. Աճառեանի թարգմանութիւնն է (որոշ սրբագրումներով)[2]. «Հայաստանի գաւառներից են նաեւ Փաւնէննէն, Կոմիսէննէն եւ Օրխիստէննէն, որ հայթայթում է մեծաքանակ [պատերազմական] ձի։ Խորձէննէն [Խորշնոնի] եւ Կամբիւսէննէն [Կամբսոնի] ամենահիւսիսային [գաւառներն] են եւ շատ ձիւնառատ, որովհետեւ մօտ են Կովկասեան լեռներին եւ Վիրքին ու Կողքիսին»։ Քանի որ այս Օրխիստէննէին յաջորդում է արդէն Գոգարէննէից արեւմուտք ընկած* Խորձէնէ/Կղարջի *յիշատակումը (այլ անտիկ երկերում՝ նաեւ* Խոլարձէննէ*,* Կաթարձէննէ*, «Աշխարհացոյց»-ում՝ Գուգարքի կազմում)[3], նոր աշխատանքներում պարզաբանուած է, որ Ստրաբոնի* Փաւնէննէ *–* Կոմիսէննէ *–* Օրխիստէննէ *շարքն անհրաժեշտ է ընկալել նախորդից (*Արաքսէննէ *–* Սակասէննէ *–* Գոգարէննէ*) հարաւ եւ հակառակ՝ հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք ուղղութեամբ[4]։ Դրա շնորհիւ առաջին՝* Փաւնէննէ *եպարխիան՝* Փառնէննէ *վերականգնումով, համադրւում է Մեծ Հայքի* Փառնէս/Փառիոս *գաւառի («Աշխարհացոյց»-ի՝ Քուստ-ի* Փառնէս*, իրանական իզաֆետային ձեւից բառացի թարգմանած՝ «Փառնէսի քուստ», իմա՛ «Փառնէսի կողմն, գաւառ»[5]) ու նրա շրջակայքի հետ, երկրորդ եպարխիան՝* Կոմիսէնէն*՝ նոյնահունչ* Գեամիշ/Գո-

---

Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության, էջ 6-7; **Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան**, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան [*յետայսու՝* ՀՀՇՏ բառարան], հտ. 1, Եր., 1986, էջ 506; **Ռ. Հարությունյան**, Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, – ՊԲՀ, 1994, հ՝՛ 1-2, էջ 260; **Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 184-185; **Ա. Հ. Ղարագյոզյան**, Սյունիքի տարածքը եւ ազգաբնակչությունը հին եւ միջին դարերում, – ԼՀԳ, 2002, հ՝՛ 1, էջ 113-116:

[1] Հմմ. **Ռ. Հարությունյան**, Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (Պատմա-աշխարհագրական դիտարկումներ), – ՊԲՀ, 2003, հ՝՛ 1, էջ 139: Այստեղ առաւել մանրամասն տե՛ս նաեւ Սակասենի մարզի լայն ընդգրկման մասին:

[2] **Ստրաբոն**, 1940, էջ 55-57:

[3] Խորձէնէի հետ յիշատակուող Կամբսոնի գաւառանունը շտկելու անհրաժեշտութեան մասին տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 28-30. Այստեղ չխորանալով քերականական, բնագրագիտական եւ այլ մանրամասների մէջ՝ նշենք, որ Ստրաբոնի բուն աղբիւրում «Կամբիւսէնէ»-ի փոխարէն որոշ հաւանականութեամբ կարող էր նաեւ լինել «Կալարձէնէ», գուցէ եւ՝ արձանագրուած ոչ թէ իբրեւ առանձին գաւառ, այլ որպէս Խո-[լար]ձէնէ-Կղարջքի անուան մի երկրորդ տարբերակ (փոփոխակ):

[4] Տե՛ս, օր.՝ **Ս. Սարգսյան**, Արցախ. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, Եր., 1996, էջ 13-15; **Ա. Հ. Ղարագյոզյան**, Սյունիքի տարածքը, էջ 114:

[5] Հմմ. **Հ. Հիւբշման**, Հին Հայոց տեղւոյ անունները, Թարգմ.՝ **Հ. Բ. Պիլէգիկճեան**, Վիեննա, 1907, էջ 421:

մէջ ամենաբարձր գագաթով Մռաւի լեռնաշղթայի շուրջն ընկած՝ Արցախի կենտրոնական գաւառների տարածքի հետ, իսկ երրորդն էլ՝ Օրխիստէնէն՝ այդ նահանգի՝ աւելի հարաւ ընկած գաւառների (Մեծ Իրանք եւ շրջակայք) հատուածի հետ[1]:

Ստրաբոնի Կօմիսէնէ եպարխիայի շատ յստակ տեղորոշումն Արցախի կենտրոնական մասում թոյլ է տալիս աւելի վստահ փնտրել նրա համարժէքը միջնադարում եւ կանգ առնել նրա հետ «Աշխարհացոյց»-ի ու հայկական ուրիշ աղբիւրների յիշատակած Մեծ Կուանք (var. Մեծ Կուենք, Մեծ Կողմանք) գաւառի համադրման տարբերակի վրայ: Հնդեւրոպական լեզուաընտանիքի մի շարք լեզուախմբերում կայ Մ – Ի անցումը, ուստի ԿՈՒ-ան-ի եւ ԿՈՄ-իս-էնէ երկրանունները կարող են պարզապէս նոյնարմատ համարուել[2]: Յաւելենք, որ Յովհ. Կարագեոզեանը «Մեծ Կուանք» անունը համադրում է բիւինական Սարդուրէ Բ արքայի Գանձադուան տարեգրութեան «Կուալբա» երկրանուան հետ, որը յիշատակուած էր Ուխունէ (>Խօխանա/բերդ/՝ Խաչէնագետի հովտում) եւ Տերիա (Թերեւս, >Տրա/կետ/) անուններից առաջ. նա հակուած էր այդ *Կու-Ալբա-ի երկրորդ բաղադրիչի մէջ դիտարկել «մեծ» իմաստն արտայայտող ալբա չստուգաբանուած բառը, որը, ենթադրաբար, վերականգնելի է նաեւ Աղբակ գաւառանուան հիմքում[3]:

Մեծ Հայքի Ուտիք աշխարհի (նահանգի) անուան յիշատակութիւնը երկրի հիւսիս-արեւելեան գաւառների շարքում պահպանել են յոյն եւ հռոմէացի մի քանի հեղինակներ: Կլաւդիոս Պտղոմէոսը (Բ դար), վաղ քրիստոնեական ժամանակագիր Եւսեբիոս Կեսարացին, պատմիչ Կուադրատոսը (Դ դար) եւ վերջինիս "Παρθικά" երկից մի քանի կարեւոր վկայութիւն պահպանած ուշ հռոմէական բանաքաղող (կոմպիլիատոր) Ստեփանոս Բիւզանդացին (Ե դար) յիշատակում են յուն. Օտէնէ (Ὠτηνή) տարբերակը, իսկ Պլինիոս Աւագը (Ա դ. վերջ)՝ լատիներէն Օտենա (Otena, Otene) ձեւը[4]: Պտղոմէոսը եւ Ստեփանոս Բիւզանդացին (=Կուադրա-

---

[1] Հմմ. **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 13-15; **Ա. Հ. Ղարագյոզյան**, Սիւնիքի տարածքը, էջ 113-114: Ս. Սարգսյանն իրաւացիօրէն մերժում է *Փաւիէնէի* համադրումը Ստրաբոնի այլ գլխում յիշուած *Փաւիտիսի* հետ (**Strab.** XI, 14, 5; **Բ. Հարությունյան**, Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի..., էջ 263-264; **նոյնի**՝ Մեծ Հայքի Սյունիք աշխարհն..., էջ 136-137), քանի որ Փաւիտիս մարզը, անկասկած, գտնուել է Երասխից հարաւ: Ի դէպ, լիովին մերժելի է նաեւ Հ. Հիւբշմանի ակնարկը (Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 95)՝ *Փաւիտիս* անունը *Սիւնիտիս* վերականգնելու եւ նրա տակ *Սիւնիք* մարզն ընկալելու մասին: Մերժուում են նաեւ Բ. Յարութիւնեանի վարկածները (Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի..., էջ 263-265, **նոյնի**՝ Մեծ Հայքի Սյունիք աշխարհն..., էջ 137-144)՝ Կօմիսէնէի ընկալման մասին որպէս վերականգնելի *Սովմիսէնէ-ի գրչական վրիպում եւ համադրումը *Սիւնիք*-ի հետ, նոյն կերպ՝ Փաւիտիս-Փաւիէնէի համադրման մասին Մարդպետական մարզի կամ Վասպուրականի Բագան-Բաքան գաւառի հետ:

[2] Հմմ. **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, Индоевропейские языки и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, т. I, Тбилиси, 1984, с. 196.

[3] **Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 201:

[4] **Ptol.** Geogr., V, 12, 4; **Stephani Byzantii** Ἐθνικόν quae supersunt, Edidit **A. Westermann**, Lipsiae, 1839, s. v. Ὠβαρηνοί, Ὠτηνή; **Plin.** Nat. Hist. VI, 16, 41.

տոսը՝ II, III եւ VI գրքերում) այդ անուան կողքին յիշատակում են Օբարէնէ (Ωβαρηνή, Ὠβαρηνοί) երկրանունը: Այն համարուել է Ուտիքին հարեւան Գուգարքի՝ Գոսարէնէ/Գօգարէնէ անուանաձեւ վրիպակ, բայց իբրեւ վարկած՝ կարող էր լինել Ստրաբոնի ճանաչած *Փաունէնէ (>*Փաոէնէ) երկրանուան վրիպման արդիւնք[1]:

Պտղոմէոսը յիշատակում է նաեւ Արցախի արեւմտեան հարեւան Սիւնիք աշխարհը՝ Սիսակէնէ, այսինքն՝ Սիսական տարբերակով: Ճիշտ է, դա գրչի վրիպումով մեզ հասել է Սիբակէնէ (Σιβακηνή) գրութեամբ (V, 12, 9), եւ ուսումնասիրողները յաճախ վերականգնել են այն *Սիրակէնէ տարբերակով ու շտապողաբար կապել Այրարատ աշխարհի Շիրակ գաւառի հետ[2]: Աշխարհագէտի տուեալ հատուածի կարեւորութիւնից ելնելով՝ տալիս ենք այն ամբողջութեամբ ու մեր՝ հնարաւորինս բառացի ներկայացուած թարգմանութեամբ (եւ ընդգծումներով). "Χῶραι δὲ εἰσιν ἐν τῆ Ἀρμενία ἐν τῶ απολαμβανομένῳ μεταξύ Εὐφράτου καὶ Κύρου καὶ Ἀράξου ποταμῶν, τμήματι παρὰ μὲν τὰ Μοσχικὰ ὄρη ἥ Καταρζηνὴ ὑπέρ τοὺς καλουμένους Βόχας, παρὰ δὲ τὸν Κύρον ποταμὸν ἥ τὲ Ὠβαρηνὴ καὶ ἥ Ὠτηνὴ, παρὰ δὲ τὸν Ἀράξην ποταμὸν ἥ δὲ Κολθηνὴ καὶ ἥ ὑπ' αὐτήν Σοδουκηνὴ, παρὰ δὲ τὸν Παρυάδρην τὸ ὅρος ἥ τὲ Σιβακηνὴ καὶ ἥ Σακασηνή"[3] *(«Իսկ մարզերը Հայաստանում [սրանք] են. [առաջինը՝] Եփրատ, Կուր եւ Արաքս գետերի միջեւ շրջափակուած հատուածում. Մոսխիկա լեռների մօտ [=գրաբարի՝ «ըստ», այս դէպքում՝ «երկայնքով»]՝ Կատարձէնէն, [որը գտնւում է] Բոխա կոչուածից [բառացի՝ Բոխաներ կոչուողներից] վերեւ; Կուր գետի մօտ [=երկայնքով]՝ Օբարէնէն [=Գոսարէ՞նէ] եւ Օտէնէն; Արաքս գետի մօտ [=երկայնքով]՝ Կոլթէնէն եւ նրանից վեր [գտնուող] Սոդուկէնէն; իսկ Պարիւադրէս լեռների մօտ [=երկայնքով]՝ Սիբակէնէն [=Սիսակէնէ] եւ Սակասէնէն: [Երկրորդը՝]...»):*

Ըստ Պլինիոս Աւագի վկայութեան՝ «Ատրոպատենայից Արաքս գետով բաժանւում էր Հայաստանի Օտենա մարզը»[4]: Դա ցոյց է տալիս, որ անտիկ շրջանում եւս Մեծ Հայքի Փայտակարան/Կասպք երկրամասը (Պլինիոսի գրելու պահին՝ Հայոց թագաւորութիւնից Ատրպատականին անցած) տարածուած է եղել միայն Արաքսի հարաւակողմում, ինչպէս նկարագրուած է նաեւ է դարի «Աշխարհացոյց»-ում («ԺԱ՝ Փայտակարան. յելից կայ Ուտիոյ, առ երասխաւ...» եւ «ԺԲ՝ Ուտի է. մտից կայ երասխայ...»)[5]: Հետաքրքիր է նաեւ, որ Փայտակարանին երասխով սահմանակից է նշւում լոկ Ուտիքը (իսկ Արցախը՝ ոչ). դա պիտի ստիպէր խուսա-

---

[1] Նման վրիպում տեղի կ'ունենար մի այնպիսի բուն աղբիւրից Պտղոմէոսի արտագրելու պահին, որում իրար կողքի յիշուած կը լինէին եւ՛ Փաունէնէն, եւ՛ Գոսարէնէն:

[2] Տե՛ս, օր.՝ **Հ. Հիւբշման**, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 250; **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 300; **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 9-13: Հմմ. **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Սյունիք աշխարհն..., էջ 138-139:

[3] Ձեռագրերում կան մեզ հետաքրքրող տեղանունների հետեւեալ տարընթերցումները. Օսարդնի, Օսսարդնի, Տոսարդնի, Տասարդնի *փխ* Ὠβαρηνὴ; Ὠκηνή, Մատηνή, Մοτηνή, Տωμηνή, Τοτηνή; Τατηνή *փխ* Ὠτηνή; Κονθηνὴ *փխ* Κολθηνὴ; Σακαπηνή *փխ* Σακασηνή.

[4] **Plin.** Nat. Hist., VI, 42 ("Atropatenae ab Armeniae Otene regione discrete Araxe"). Տե՛ս նաեւ VI, 16 եւ XII, 28 ("et Armeniae partae, quae vocatur Otene").

[5] Տե՛ս **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 139:

փել Մեծ Հայքի Կասպք նահանգի սահմանը դէպի արեւմուտք երկար տարածելուց, սակայն քննութեան արդիւնքում, այնուամենայնիւ, հէնց դա է կատարուած ե՛ւ Բ. Յարութիւնեանի, ե՛ւ Ռ. Հիւսընի, ե՛ւ մեր քարտէզներում[1]:

Ստեփանոս Բիւզանդացին իր Ծղեոյ բառայօդուածում պահպանել է հետեւեալ ուշագրաւ համառօտ վկայութիւնը. «Կուադրատոսը «Պարթիկա»-ի երրորդ գրքում ասում է. «Հայաստանի թագաւոր Պակորոսը [=Բակուր, Բ դար – Ա. Յ.] այդ ժամանակ գտնուելով Արտաքսատայի եւ Օտէնէի մօտ» (շարունակութեան մէջ կայ. «Բնակիչների անունը եւս ինքն է [տալիս]՝ [գիրք] երկրորդում. «Կուրի մօտ բնակւում են Օբարէննները եւ Օտէննները, որոնք կազմում են Հայաստանի զգալի մասը»): Ենթադրելի է, որ Դ դարի հռոմէացի պատմիչի խօսքը վերաբերել է ոչ թէ անձամբ Բակուրին, այլ նրա ցօրքին, ուստի այս վկայութիւնը կարող է միանալ Ագաթանգեղոսի եւ Պատմահօր տուեալներին, ըստ որոնց՝ Ուտիք նահանգը կամ նրա մի կտորը եղել է Հայոց արքաների ձմերոցը[2]: Տեղին նշելի է, որ վաղ հայկական աղբիւրներում եւս վկայուած է Ուտիք գաւառ-ի («Աշխարհացոյց»-ի՝ Ուտի Առանձնակ գաւառ եւ շրջակայք) անուան Ո (աւ) սկզբնահնչիւնով տարբերակը՝ Աւտիացւոց, Աւտէացւոց, Աւտիական գաւառ: Ընդ որում՝ դա առկայ է նաեւ «Պատմութիւն Աղուանից»-ում (յետայսու՝ ՊԱ) բառացի արտագրուած՝ «Վաչագանի վէպ» (Զ դար) եւ «684 թուականի պատմութիւն» անուանուող երկերում[3]:

Հայոց Արեւելից կողմանց Արաբսէնէ, Սակասէնէ, Փառնէնէ, Կօմիսէնէ եւ Օրխիստէնէ գաւառանուններից բացի, անտիկ աշխարհագրական աւանդոյթը պահպանել է նաեւ Ծաւդէք/Սաւդք (=Սոթք) գաւառի անուան Սոդուկէնէ (Σοδουκηνή) ձեւը: Այդ «խորա»-ն յիշատակում է Պտղոմէոսը[4], եւ նրա վերոբերեալ ենթատեքստից կարելի է ընկալել, որ այն ընդգրկել է աշխարհացոյցեան Արցախի կենտրոնի ու հարաւի հատուածները (վերջին կողմում, հաւանաբար, սահմանակցելով Կոլթէնէ/Գոլթէնէին), արեւմուտքում՝ Սեւանայ լճի արեւելեան ափերով հանդերձ: Այդպիսով՝ Սոդուկէնէն կարող էր համընկնել Ագաթանգեղոսի, Մովսէս Խորենացու երկերում եւ «Ջօրանամակ»-ում վկայուած «Ծաւդէացւոց իշխանութեան» հետ[5]:

Նկատելի է, որ Սոդուկէնէի կողքին պտղոմէոսեան Կոլթէնէ (Κολθηνή) երկրանունը, փաստօրէն, նոյնահունչ է աշխարհացոյցեան Արցախ աշխարհի Կողթ կամ վասպուրական աշխարհի Գողթն գաւառանունների հետ (երկուսն էլ՝ Երասխից

---

[1] Մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, Աշխարհացոյցեան Փայտակարան Նահանգի գաւառների տեղորոշման նոր փորձ, էջ 236-246:

[2] **Ագաթ.**, § 28, էջ 21; ՄՀ, հտ. Բ, էջ 1320 («յանդիման եղեւ թագաւորին Խոսրովու յՈւտի [*որոշ ՁՁ՝ յԱւտի*] գաւառի, ի խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց»); **Խոր.**, Բ.խդ-խե, էջ 169-170; ՄՀ, հտ. Բ, էջ 1917-1918:

[3] Երկուսն էլ հրատարակուած են մեր աշխատասիրած գիտա-քննական բնագրերով (ՄՀ, հտ. Գ, Անթիլիաս, 2004, էջ 51-112; հտ. Դ-Ե, Անթիլիաս, 2005, էջ 795-895):

[4] **Ptol.** Geogr., V, 12, 4.

[5] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, Ծաւդեացվոց իշխանությունը, – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1960, հմր 7-8, էջ 41-52; **Բ. Ուլուբաբյան**, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, էջ 182-186; **Ց. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 189:

հիւսիս)։ Առաջին տարբերակի հիման վրայ Կոլթէնէի եւ Կողթի նոյնացումն է ենթադրում Սլ. Սարգսեանը[1]։ Սակայն աղբիւրի ամբողջական ենթատեքստից ելնելով՝ մասնագէտները գերադասում են Գողթնի հետ Սոդուկէնէի հարեւան գաւառի նոյնացման տարբերակը[2]։ Վերջերս այլ համադրման փորձ արեց Բ. Յարութիւնեանը՝ առաջարկելով Պտղոմէոսի ձեռագրերի Կոլթէնէ անուանաձեւը համարել գրչական աղաւաղում եւ նրա փոխարէն վերականգնել Կասպէնէ, այսինքն՝ Մեծ Հայքի Կասպիանա/Կասպք/Փայտակարան աշխարհը՝ Երասխ գետի աջ ափին (!)[3]։ Այդ վարկածը եւս անհնար է ընդունել, քանի որ աղբիւրի ենթատեքստը, ինչպէս տեսանք, յստակ նշում է նկարագրուած տարածքի՝ Երասխից հիւսիս լինելը։

Նկատենք, որ ընդարձակ սահմաններով Գողթն գաւառի մասին Պտղոմէոսի պատկերացումը լիովին հնարաւոր է համադրել մեր ունեցած աղբիւրագիտական տեղեկանուն հետ։ Խորենացու՝ թէկուզ եւ կիսաառասպելական տեղեկութիւններից բխում է, որ Գողթնեցի իշխանները սերուել են Սիւնիքի աւանդական նախահայր Սիսակից եւ վաղ ժամանակ նկատելի դեր են խաղացել Հայոց արքունիքում[4]։ Յաւօք, Դ դ. կէսերի պատկերն արտացոլող «Ջօրանամակ»-ի՝ մեզ հասած ձեռագրում «Գողթնեցի» իշխանական տուն է նշուած ոչ թէ «Արեւելեան Դռան» պաշտպաններ ի թւում, ինչպէս սպասելի էր, այլ՝ «Հարաւային» (Կադմէացւոց կուսակալ իշխանի հրամանատարութեան տակ, 500 մարտիկների ոչ մեծ քանակով)[5]։ Բայց դա, ըստ ամենայնի՝ պէտք է գրչական վրիպման արդիւնք համարել ու վերականգնում կատարել, ամենայն հաւանականութեամբ՝ «Գողեննեցի» տարբերակով՝ համադրելով Վասպուրականի Գողեանք կամ Քողեանք իշխանատոհմի հետ, որին ճանաչում են Եղիշէն եւ «Ներսէսեան գահնամակ»-ը[6] (ելնելով նմանահունչ անուններից՝ այս իշխանատոհմի տիրոյթ պիտի համարել Վասպուրականի Կուղանովիտ գաւառը, որի իրական տեղորոշումն է Արճիշակ գետի ձախ, հարաւային Գիւխեր վտակի հովտում՝ Արճիշակովիտ եւ Մեծնունիք գաւառների միջեւ[7])։ Փոխարէնը՝ Ե դ.

---

[1] **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 13-15:

[2] ՀՀՇՏ բառարան, հտ. 3, Եր., 1991, էջ 190; **R. H. Hewsen**, Armenia, p. 67 ("Ptolemy's Map According to Modern Cartography" քարտէզում հարցականով նշուած է նաեւ Կողթը):

[3] Տե՛ս **Բ. Հարությունյան**, Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի..., էջ 263-264:

[4] **Խոր.**, Ա.լ, էջ 83-84, Բ.ը, էջ 117; ՄՀ, հտ. Բ, էջ 1828, 1863:

[5] Տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 252.

[6] Տե՛ս **Եղիշէի** Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Աշխատութեամբ՝ **Ե. Տէր-Մինասեան**, Եր., 1957 (յետայսու՝ **Եղիշէ**), յեղանակ Ե, էջ 100; ՄՀ, հտ. Ա, էջ 635 («եւ Քողեանքն եւ Ակէացիքն եւ Տրպատունիքն եւ զաւրքն Ռշտունեաց...»); **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 257; **Մեսրոպ Վայոցձորեցի**, Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի, Գիտա-քննական բնագիրը **Գ. Տէր-Վարդանեանի**, – ՄՀ, հտ. ԺԱ, Ժ դ., Անթիլիաս, 2010, էջ 682 («Ռշտունիք, Վահանունիք [*var.* Վահեւունիք], Աղձնեանք [*var.* Աղձնիք, Աղձնունիք], Քողեանք [*var.* Քաւշեանք, Քողանք, Գօշեանք]...»): Հմմ. **Ա. Ցակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ». Հետազոտութիւն եւ բնագրեր, – «Բազմավէպ», 2011, հմր 3-4, էջ 547, ծն. 51:

[7] **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 134-135 («զԱրճիշակովիտ. [զԿուղանովիտ. զԲառիղովիտ]. զԴաունի՝ մինչեւ ցգաւառն Կոգովիտ»): Նախորդ ուսումնասիրողները

սկզբի պատկերն արտացոլող «Գահնամակ»-ում Գողթան տէր-ը նշուած է «պատուաւոր» 16-րդ տեղում[1]: Գողթնի բարձր կարգավիճակի մասին է վկայում նաեւ Կորիւնը, ըստ որի՝ հէնց այնտեղ էր սկսուել եւ յետոյ շարունակուել Մաշտոցի վարդապետական առաքելութիւնը[2]: Ինքը՝ Բ. Յարութիւնեանն էլ ընդունում է, որ Գողթն վարչամիաւորը ժամանակին ունեցել է աւելի բարձր կարգավիճակ, քան աշխարհացոյցեան գաւառն է, մասնաւորապէս՝ իր կազմում ունենալով հետագայի Արեւիք գաւառի տարածքը[3]: Կարեւոր է նաեւ նրա այն դիտարկումը, որ Գողթնի տարածքն արդէն Բ-Գ դդ. մաս է կազմել Մարդպետական գործակալութեան[4], որը, ըստ Ալբերտ Մուշեղեանի քննութեան, մեծ հաւանականութեամբ, իբրեւ սահմանապահ կուսակալութիւն իրականացնում էր Մեծ Հայքի «Արեւելեան Դռան» պաշտպանութիւնը՝ մինչեւ այդ իրաւասութեան անցումը Սիւնեաց իշխաններին[5]:

Ք. յ. Բ դարում Մեծ Հայքի Գողթն մարզի ընդարձակ սահմանների եւ նրանից հիւսիս («վեր») Սոդուկէնէի մասին Պտղոմէոսի տեղեկութիւնը թոյլ է տալիս հնարաւոր համարել Գոլթէնէի համադրումը Ստրաբոնի յիշատակած Արաքսէնէ «եպարխիայի» հետ: Թւում է, թէ կարելի է հէնց ուղղակի ձեւով ընկալել աշխարհագէտի խօսքերն այն մասին, որ մինչեւ Կուրի ափերը հասնող այդ երկրամասը (Արաքսէնէն) սկսւում է, կարծես թէ, Արարատեան դաշտից յետոյ[6]: Հր. Աճառեանի թարգմանած բնագիրն է (մեր որոշ շտկումներով). «Հայաստանի քաղաքներն են՝ Արտաշատը, որը նաեւ կոչւում է Արտաշաշատ, հիմնուած Հաննիբալի [կողմից] Արտաշէս թագաւորի համար, եւ Արքշատ [resp. Մարաշատ][7], երկուսն էլ Արաքսի վրայ, Արքշատն Ատրոպատէնէի սահմանների մօտ, իսկ Արտաշատը՝ Աւարսէնէի դաշտի մօտ [πρὸς τῷ Ἀραξηνῷ πεδίῳ], գեղեցիկ քաղաք, որ եւ երկրի մայրաքաղաքն է՝ շինուած [գետի] թեւի [ձեւաւորած] թերակղզու վրայ...»[8]: Ընդ սմին, բոլոր մասնագէտներն իրաւացիօրէն համարել են, որ Ստրաբոնի կողմից որոշակիօրէն

Կուղանովիտը տեղորոշում են աւելի հարաւ՝ Խոշաբ – Հայոց ձոր գետի մի աջ վտակի հովտում, որը կրում է «Կելան» անունը (տե՛ս, օր.՝ **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 61): Բայց տուեալ տեղորոշմամբ «Աշխարհացոյց»-ում Վասպուրականի գաւառների թուարկման խիստ կանոնաւոր հերթականութիւնը կը խախտուէր:

[1] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 249; **Ա. Ցակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ», էջ 533:

[2] **Կորիւն**, Վարք Մաշտոցի, Բնագիրը ... առաջաբանով եւ ծանօթութիւններով ի ձեռն **Մ. Աբեղեանի**, Եր., 1941 (յետայսու՝ **Կորիւն**), էջ 40, 60; **Կորիւն**, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Աշխատութեամբ՝ **Ա. Մաթեւոսյանի**, Եր., 1994, գլ. Ե, էջ 88, գլ. ԺԳ, էջ 94; ՄՀ, հտ. Ա, Ե դար, Անթիլիաս, 2003 (ՄՀ-ում Արտաշէս Մաթեւոսեանի 1994 թ. բնագրի առաջաբանը՝ **Կ. Իւզբաշեանի** եւ **Պ. Մուրադեանի**), էջ 235, 242:

[3] **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Սյունիք աշխարհն..., էջ 141:

[4] **Նոյնի՝** Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա, Եր., 2001, էջ 382:

[5] **Ա. Վ. Մուշեղյան**, Մովսես Խորենացու դարը, Եր., 2007, էջ 219-221:

[6] **Strab.** XI, 14, 6. Տե՛ս նաեւ վերեւում, էջ 58, ծն. 1-2:

[7] Արքշատ → *Մարաշատ (<*Մարաւան)՝ 2009 թ. մեր վարկածը տե՛ս **Ա. Ցակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 231-232:

[8] **Ստրաբոն**, 1940, էջ 57-59:

աղաւաղուել է իր օգտագործած աղբիւրի տեղեկութիւնը, որտեղ պէտք է նշուած լինէր Արաքսէնէի դաշտի հետ հէնց երկրորդ՝ Արքշատ (իմա՛ Մարաշատ, Արտաշատից արեւելք) քաղաքի հարեւանութեան մասին:

Այս համադրումը կարեւոր է նաեւ նրանով, որ թոյլ է տալիս իրար համադրել նաեւ Սոդուկէնէ *եւ* Օրխիստէնէ *երկրամասերը՝ գոնէ այնքանով, որքանով Ստրաբոնի Օրխիստէնէն նշում է բաւականին յստակ տեղորոշուող Կօմիսէնէից հարաւ, իսկ Պտղոմէոսի Սոդուկէնէն՝ Գողթն–Արաքսէնէից հիւսիս: Այս դէպքում առաւել հաւանական ենթադրութիւնը կարող է լինել այն, որ Օրխիստէնէի մէջ անհրաժեշտ է պատկերացնել աշխարհացոյցեան Սոթք, Հարճլանք, Մեծ Իրանք եւ Պիանք գաւառների տարածքները (որոշ թէականութեամբ՝ գուցէ, նաեւ Մուխանքի, Պազկանքի եւ Վակունիքի), իսկ Արաքսէնէի մէջ՝ գրեթէ ողջ հարաւային Արցախի (հետագայի Դիզակի իշխանութեան), գումարած հետագայ Սիւնիքի հարաւային հատուածը, առնուազն՝ Հաբանդ գաւառի ընդգրկումով: Հարաւային այս ընդարձակ տարածքով մարզը (գուցէ՝ նաեւ սահմանապահ կուսակալութի՞ւնը), ենթադրաբար, ինչ-ինչ ժամանակահատուածներում կարող էր, բացի* Աւաբսէնէ *ու* Կոլթէնէ *անուանումներից, կրել նաեւ* Փոիր Սիւնիք *եւ* Հաբանդ *անունները, որոնցից առաջինն արձանագրուած է Խորենացու յայտնի վկայութեան հատուածում[1], իսկ երկրորդը՝ աշխարհացոյցեան Սիւնիք եւ Արցախ նահանգներում նոյնանուն Հաբանդ գաւառների (երկրորդը՝* Միւս *կամ* Փոիր*) ձեւաւորման իրողութեան մէջ:*

Ահա այս Կոլթէնէ – (ներանից վեր) Սոդուկէնէ *մարզերի զոյգից յետոյ է լոկ կարելի իրապէս պատկերացնել Պտղոմէոսի նշած յաջորդ զոյգը՝ Պարիւադրէս – Սեւանի լեռների երկայնքով ընկած (իսկ իրականում՝ աշխարհագէտի առջեւ փռուած սխեմա-քարտէզում իրենց անունների գրադաշտի պատկերին այդպէ՛ս համապատասխանող)* Սիսակէնէ–Սիսական *եւ* Սակասէնէ–Շակաշէն *երկրամասերը[2]: Նաեւ կարելի է ենթադրել, որ եթէ այս դարաշրջանի Սիսակէնէ–Սիսականն աւելի փոքր էր հետագայի Սիւնիքից, ապա պտղոմէոսեան Սակասէնէն, ընդհակառակը՝ իր կազմում ընդգրկել էր նաեւ ստրաբոնեան Փառնէնէ «եպարխիան»՝ այդպիսով յարելով Պարիադրէս լեռներին, ինչպէս որ նշուած է աղբիւրում: Վերջին իրողութիւնն ընկալել է արդէն Բ. Յարութիւնեանը, ըստ որի՝ այդ ընդարձակուած Սակասէնէ մարզին է իր տարածքով համապատասխանել հետագայի Գարդմանացւոց իշխանութիւնը՝ արեւելքում հասնելով մինչեւ Տրտու գետ[3]. իհարկէ, դա ընդունելի է՝ նշուած արեւելեան սահմանը ոչ աւելի, քան Ինջայի գետագծին հասցնելու մասին Սլ. Սարգսեանի վերապահումով[4]: Իրօք, աւելի հաւանական է մտածել, որ աշխար-*

---

[1] Խոր., Գ.գ, էջ 160 («[Գրիգորիսի մարմինը] բերելով [*var.* բերեալ] ի Փոքր Սիւնիս՝ թաղեցին յԱմարաս [*var.* յԱմարէն] աւանի»); ՄՀ, հտ. Բ, էջ 2011:

[2] Հմմ. Բ. Հարությունյան, Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի..., էջ 265 (շարունակութիւնը՝ ՊԲՀ, 1995, հ^{մր} 1, էջ 205-206):

[3] Անդ, էջ 260:

[4] Ս. Սարգսյան, Արցախ, էջ 9-13: Հեղինակն իրաւացի է նաեւ, երբ պնդում է, որ չի կարելի ԺԹ դ. երկրագիրների նկարագրութիւններում Ամիրվար գիւղի մօտակայ փոքրիկ ա-

հացոյցեան Մեծ Կուանքի տարածքը մաս է կազմել ոչ թէ Գարդմանացւոց, այլ Ծաւդէացւոց իշխանութեան: Այդ դէպքում կարելի է մտածել, որ առնուազն այս իշխանութիւնների ձեւաւորման պահին է տեղի ունեցել նրանց միջեւ ստրաբոնեան Կօմիսէնէ «եպարխիայի» բաժանումը, եւ դրանից են առաջ եկել աշխարհացոյցեան Կողթ եւ Մեծ Կուանք գաւառները: Ուշագրաւ է (ինչպէս նկատել է դեռ Բ. Յարութիւնեանը), որ 370-ական թթ. Մուշեղ Մամիկոնեանի կողմից Հայոց երկրի ապստամբած մարզերի հպատակեցումը նկարագրելիս Փաւստոսն առանձին գլուխներում է ներկայացնում «Արձախ երկիրը» (թերեւս, Ծաւդէացւոց իշխանութեան տարածքով) եւ Աղուանից թագաւորի հետ գործակցած միւս արեւելեան գաւառները, այդ թւում՝ աշխարհացոյցեան Արցախից լոկ Կողթը («զՈւտի, զՇակաշէն եւ զձորն Գարդմանայ, զԿողթ եւ այլ, որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք»)[1]: Նոյն տրամաբանութեամբ՝ Օտէնէ մարզը եւս (ուշ՝ Ուտէացւոց իշխանութիւնը) ինչ-որ պահի կարող էր կիսուած լինել Սակասէնէի եւ Արաքսէնէի միջեւ:

Անտիկ հեղինակներն ուրիշ տուեալներ էլ ունեն նշուած մարզերի մասին: Օր.՝ նրանք նշում են Արաքսէնէի եւ Սակասէնէի զարմանալի բերքառատութիւնը, ինչպէս նաեւ Օրխիստէնէում (կամ նաեւ՝ Փառնէնէում ու Կոմիսէնէում) ձիաբուծութեան զարգացած լինելը[2]: Սակասէնէում Ք. ա. է դարում սակերի հաստատման մասին Ստրաբոնի պահպանած վկայութիւնը («Սակերը նուաճեցին Հայաստանի լաւագոյն հողը, որը նրանց անունից կոչուեց Սակասէնէ»)[3] այն հազուագիւտ աղբիւրագիտական հիմքերից է, որ թոյլ են տալիս՝ կուրի աջափնեակը Հայոց պետութեան սահմաններում ընկալել ուշ բիւրինական – Երուանդեան թագաւորութեան դարաշրջանում (այդ մասին առաւել համակարգուած տե՛ս մեր վերջին աշխատանքներում)[4]: Եւ վերջապէս՝ անտիկ աղբիւրների տուեալների համադիր քննութեամբ արդէն կարելի է լիովին մերժել մի քանի այլ աշխարհագրական անունների կապը Հայոց Արեւելից կողմերի հետ՝ Ոփտիա (Մազանդարանում), Փաւնիտիս (=*Ջրաւնիտիս/Ջարաւանդ գաւառ), Բասորոպեդա (Պարսպատունիք գաւառ), ինչը մանրամասն փաստարկուել է մեր 1987 եւ 2009 թ. գրքերում[5]:

ւերակ բերդի (քարախունկի իր ճշաճաւոր հաճքերով յայտնի Փիփ – Ջագլիկից մի քանի կմ հարաւ-արեւմուտք)՝ *Քրթմանիկ* անուանման հիման վրայ աշխարհացոյցեան Գարդման գաւառի սահմանը տեղափոխել Ծամքոր գետից նաեւ արեւելք, այսինքն՝ Արցախի Կողթ գաւառի տարածքը (էջ 9), որի մասին «Աշխարհացոյց»-ում յատուկ ճշում կայ. «Կողթ, յորում լինի քարախունկ», տե՛ս **Անանուն** (Է դար), Աշխարհացոյց, սն. 140; ՄՀ, հտ. Բ, էջ 2153, 2172, 2188:

[1] **Փաւստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն Հայոց. Ի չորս դպրութիւնս, Վենետիկ – Ս. Ղազար, 1933 (յետայսու՝ **Բուզ.**), դպր. Ե, գլ. ԺԲ («Ցաղագս Արձախայ») եւ ԺԳ («Ցաղագս Աղուանից»), էջ 214-215; ՄՀ, հտ. Ա, էջ 389-390:

[2] Տե՛ս **Strab.** XI, 14, 4 (**Ստրաբոն**, 1940, էջ 55-57): Տե՛ս նաեւ վերեւում, էջ 21-22:

[3] Տե՛ս **Strab.** XI, 8, 4 (**Ստրաբոն**, 1940, էջ 37. թարգմանութիւնը՝ մեր շտկումներով):

[4] **Ա. Յակոբեան**, Հայ ժողովրդի էթնոհամախմբման գործընթացի պատմա-մշակութային առանձնայատկութիւնները, էջ 64; **նոյնի**՝ Հայկական լեռնաշխարհում բիւրինների եւ խորենացիական Հայկեաննների տարածման ուղիների համադրութեան փորձ, էջ 197:

[5] **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 74-83; **նոյնի**՝ Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ..., էջ 418-420:

ԳԼՈՒԽ Բ

ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Բաժին 1

«ՎԱՉԱԳԱՆԻ ՎԷՊ»-Ը ԵՒ ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԻ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ (Գ ԴԱՐԻ ՎԵՐՋ – Զ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Վաղ միջնադարեան Աղուանից պետութեան մասին առաւել մանրամասն տեղեկութիւններ է պահպանել պայմանականօրէն «Վաչագանի վէպ» անունը կրող երկը: Այն շարադրուած է Զ դ. ամենասկզբի ականատես հեղինակի կողմից, իսկ մեզ է հասել Ժ դ. վերջի արցախցի պատմիչ Մովսէս Դասխուրանցու (մատենագրութեան եւ պատմագրութեան մէջ կոչուած նաեւ «Կաղանկատուացի») ՊԱ-ի կազմում (Ա գրքի ԺԴ եւ ԺԶ-ԻԳ գլուխներում), ընդ որում՝ գրեթէ բառացի արտագրութեամբ[1]: Երկի շարադրանքն աւարտուել է, հաւանաբար՝ 500-502 թթ., այսինքն՝ կաւատ Ա Սասանեան արքայի՝ գահին վերադառնալուն (498 թ.) յաջորդած տարիներին, սակայն պարսկա-բիւզանդական եռամեայ պատերազմից (502-504) ու հիւսիսկովկասեան հոն-սաւիրների աւերիչ ներխուժումից (503-504) առաջ[2]:

Շարունակելով դասական հայագէտների սկսած պատմա-բանասիրական վերլուծութիւնները[3]՝ մեր նախորդ աշխատանքներում վերջնականապէս հիմնաւորել ենք, որ ՊԱ-ի արտագրութեան մէջ պահպանուած առաջին գլխագիրը (Ա.ԺԶ)՝ «Կեանք եւ վարք եւ կարգաւորութիւնք Աղուանից, որ ի Վաչագանայ արքայէ եդան, եւ գիւտք նշխարաց սրբոց», եղել է ամբողջ երկի վերտառութիւնը, որը Ժ դարի պատմիչն է բաժանել գլուխների ու գլխագրեր ստեղծել դրանց համար: «Վաչագանի վէպ»-ը (ռուսերէնով՝ "Повесть о Вачагане", անգլերէնով՝ "Tale of Vachagan", ֆրանսերէնով՝ "Conte de Vatchagan", գերմաներէնով՝ "Watschagans-Erzählung") դասական ոճի միջնադարեան իւրայատուկ ջատագովական երկ է կամ, այլ կերպ՝ վարքագրական վիպերգութիւն, որը չի տալիս դէպքերի ժամանակա-

---

[1] Առանձին հրատարակութիւնը (**Աղաւնուն**, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեանի**) կատարել ենք «Մատենագիրք Հայոց» ժողովածոյում (տե՛ս ՄՀ, հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112):

[2] «Վէպ»-ի պատմա-աղբիւրագիտական մանրամասն քննութիւնը տե՛ս **Ա. Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը, սն. 45-142; **նոյնի՝** Աղուանից թագաւոր Վաչագան Բ-ի «Բարեպաշտ» կերպարի կերտումը «Վաչագանի վէպ»-ում (Զ դարի սկիզբ), – «Հայաստանը եւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթությունը». ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արեւելքի բաժնի ստեղծման 40-ամյակին եւ նրա հիմնադիր, պրոֆ. Պարույր Մուրադյանի մահվան 5-րդ տարելիցին նվիրված Միջազգային գիտաժողով (դեկտեմբերի 12-13, 2016 թ.), Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Եր., 2016, էջ 183-193:

[3] Տե՛ս, օր.՝ **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի)..., էջ 124-150; **К. А. Каграманян**, Источники "Истории страны Агванк": Автореф. дисс. ... канд. ист. наук, Ер., 1987, с. 22.

գրութիւն ըստ տարիների, այլ միայն՝ հերոսի բարի գործերի շարադրանք տրամաբանական հերթականութեամբ: «Վէպ»-ի անանուն հեղինակի խնդիրն է եղել ոչ թէ Վաչագան Թագաւորի ու նրա արքայատոհմի կանոնաւոր պատմութիւնը շարադրելը, այլ ներկայացնելն ա՛յն «ծրագրային» գործերը, որ պիտի՛ կատարուէին ու կատարուեցին բարեպաշտ տիրակալի կողմից՝ ի շահ Սասանեաններին ենթակայ Աղուանից թագաւորութեան (=մարզպանութեան) քրիստոնեայ հասարակութեան ու եկեղեցու ամրապնդման («...կարգաւորութիւնք Աղուանից, որ ի Վաչագանայ արքայէ եղան»): Ընդ որում՝ Վաչագան Բ Արշակունու վարած իւրօրինակ քաղաքական գիծն այդ ամրապնդումը ապահովում էր ոչ թէ բուն-աղուանական իրողութիւնների, այլ կուրի՝ էթնիկապէս հայկական աջափնեակի պատմա-մշակութային աւանդների վրայ յենուելու եղանակով: Եւ «Վէպ»-ը ու այդպէ՛ս նաեւ՝ դարաշրջանի հասարակական կարեւոր միտումներն արձանագրած Աղուէնի եկեղեցական ժողովի կանոնները Աղուանից երկրում հաստատագրում էին Հայոց կանոնագրքերի դրոյթների գործառումը, վերացնում Հայոց եկեղեցու աթոռակալներին (Յովհան Մանդակունի եւն), ամրապնդում Թադէոս առաքեալի, Գրիգոր Լուսաւորչի, Հռիփսիմէ, Գայիանէ սրբերի ու Լուսաւորչի Գրիգորիս Թոռան պաշտամունքի համակարգը (վերջինիս ենթարկելով բուն-աղուանական՝ կապաղակեան-չողեան շրջանի սրբեր Զաքարիայի ու Պանդալէոնի պաշտամունքը) եւ ողջ Աղուանից եկեղեցու համար սրբագործում հայկական աջափնեակի պաշտամունքային կենտրոնները (Ամարաս, Դիւտական, Դարահոջ, Սուհառ/Սոհառն, Քարուէճ եւն):

Մովսէս Դասխուրանցու ՊԱ-ի Ա.ժդ գլուխը, որի բովանդակութեան մեծ մասի աղբիւրը եղել է Փաւստոս Բուզանդը[1], աւարտւում է տոհմաբանական հետեւեալ ցուցումով՝ «Քանզի ի Քաջն Վաչագանայ մինչեւ ի Վաչէ Թագաւորք էին Աղուանից թուով իննն՝ ըստ կարգի. որոց տասներորդ՝ բարեպաշտ եւ աստուածասէր Թագաւորն Վաչագան՝ Աղուանից արքայ», իսկ բուն «Վէպ»-ում այս պատեհ տեղում շարունակուել է այն միտքը, որը Դասխուրանցու մօտ յայտնուել է յաջորդ գլխի (Ա.ժե) երկրորդ մասում (Առան նախահօր յաբեթեան, այսինքն՝ իրականում հայկեան նախնիների՝ Խորենացուց քաղած մեծ ցանկից յետոյ)[2]. «Եւ թիւ աւուրցն յԱռանայ [bclrv ձեռ. անուանցն չէ յայտ փխ աւուրցն յԱռանայ] մինչեւ ցՔաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ: Եւ որ [bclrv ցՎաչագանն Քաջ, եւ զսոցայն ստոյգն, թէ յորմէ տոհմէ են, չունիմ ասել: Լոկ փխ որ էր ... Եւ որ[3]]

---

[1] Հմմ. А. Акопян, "История Армении" Фавста Бузанда как источник "Повести о Вачагане" (Снова о первом и втором апрутюнах Фавста Бузанда), – КВ, вып. 5, Ер., 1987, с. 72-81.

[2] Բնագրերը յետայսու տալիս ենք Դասխուրանցու երկի ձեռագրերի նոր քննութեան հիման վրայ կատարուած ուղղումներով՝ նշելով սկզբնօրինակին իրարից անկախ յանգող *a* կամ Բ խմբի *bclrv* (*bl* եւ *crv* ենթախմբերով) գրչագրերի կարեւոր ընթերցումները:

[3] Ցաւօք, 1983 թ. քննական բնագրի աշխատասիրող Վ. Առաքելեանը չի նկատել այս լուրջ խմբագրումը, որ կատարել էր Բ խմբի ձեռագրերի նախագաղափարի գրիչը (ով նկատել էր «Վաչագան վէպի»՝ «ի մեծ ազգէն Արշակունեաց» եզակի նշման խիստ հակասելը *ՊԱ*-ի հեղինակի անթաքոյց վստահութեանը՝ Վաչագանի տոհմի «Առանշահիկ» լինելու մասին), եւ այն դրել է *a* ձեռագրի անխաթար (սկզբնօրինակային) ընթերց-

ըստ կարգի կացին թագաւորք տանս Աղուանից [bclrv Աղուանից՝ տասն, որոց], անուանք են այսոքիկ [bclrv այսոցիկ]. Վաչագան Քաջ [bclrv չիf Քաջ], Վաչէ, Ուռնայր, Յաւչագան, Մերհաւան, Սատոյ, Ասայ, Եսվաղէն [bclrv Վաղէն], Վաչէ, ապա Բարեպաշտն Վաչագան»: Սրան էլ «Վէպ»-ում յաջորդել է այն միտքը, որը Դասխուրանցին դարձրել է յաջորդ գլխի սկիզբ՝ «Իսկ զերեսուն ամ ի Վաչէէ մինչեւ ցՎաչագան Բարեպաշտն առանց թագաւորի կացեալ աշխարհս Աղուանից»: Ինչպէս տեսնում ենք, «Վէպ»-ի հեղինակն ուղղակի յայտնում է, որ Աղուանից արքայ Վաչագան Բարեպաշտի տոհմը «Արշակունեաց» է եղել[1]:

Այդ մասին մի ակնարկ կայ նաեւ Փաւստոս Բուզանդի մօտ՝ Ուռնայր արքայի հետ կապուած մի դէպքի նկարագրութեան մէջ: Ըստ նրա գեղարուեստական շարադրանքի՝ 371 թ. Զիրաւի ճակատամարտում Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնեանը Պարսից բանակների թւում ջախջախում է նաեւ աղուանական գունդը, բայց փախչող Ուռնայրին չի սպանում եւ յայտարարում է (նիզակով նրա գլխին հարուածելով), որ չի սպանի թագ կրող արքայի, եթէ անգամ իրեն պատժեն դրա համար: Թագաւորին չսպանելու սովորոյթն, իրօք, լաւ յայտնի է[2], սակայն, թերեւս, Մուշեղի խօսքն իրականում վերաբերել է ոչ թէ ամեն արքայի, այլ հէնց Արշակունեաց տոհմի ներկայացուցիչներին, ում նկատմամբ Մամիկոնեանների հաւատարմութիւնը Փաւստոսը վիպական խորհրդապաշտութեան է հասցնում: Կարելի է յիշել նաեւ Մասքթաց Սանեսան թագաւորի դիակի վրայ Հայոց Խոսրով Կոտակ արքայի ողբալու դրուագը, ով այդպիսով սգում էր իր ազգակցի (բայց լոկ իբրեւ պարթեւական Արշակունի արքայատոհմի շառաւիղի) վախճանը. «իբրեւ ետես, լալ սկսաւ, ասէ. Եղբայր իմ էր՝ ազգաւ Արշակունի»[3]:

Տեղին նշենք, որ Փաւստոսը մանրամասն տալիս է Սանեսանի զօրքի ցեղային կազմը. «...գումարեաց ժողովեաց զամենայն զաւրս Հոնաց եւ Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց եւ Գղուարաց, Գուգարաց, Շչբաց եւ Ճղբաց եւ Բաղասճաց եւ Եգերսուանացն եւ այլոց խառնաղանճ բազմութեամբ, անթիւ բանակն վաչկատուն զաւրութեանց»[4]: Նոյն «հիւսիսականաց» արշաւանքը Մովսէս Խորենացին նկարագրում է Տրդատ Մեծի վախճանին յաջորդած՝ Փայտակարանի «գործակալ» Սանատրուկ Արշակունու խռովութեան ճնշման յիշատակութիւնից յետոյ եւ պակաս մանրամասն. «...միաբանեալ բնակիչք հիւսիսոյ կովկասու,

---

ման կողքին (!)՝ շփոթութեան մէջ գցելով շատ հետազօտողների (հմմ. **Ա. Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը, սն. 48-55):

[1] Այդ արքայատոհմին նրա պատկանելու հարցում վեճերի մասին վերջին անգամ մանրամասն տե՛ս **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից Վաչե Բ եւ Վաչագան Գ բարեպաշտ արքաների դինաստիական պատկանելության հարցի շուրջ, – ԼՀԳ, 2009, հ՝ 3, էջ 32-44:

[2] Օր.՝ ըստ Պրոկոպիոսի՝ Շապուհ Բ-ն Արշակ Հայոց թագաւորին բանտարկել է, այլ ոչ թէ սպանել, քանի որ «երբեք չէր կարող սպանել թագաւորական արիւն ունեցող մարդու» (Proc. De bello Pers. I, 5, 29; **Պրոկոպիոս Կեսարացի** /Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին. 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա/, Թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ՝ **Հ. Բարթիկյանի**, Եր., 1967, էջ 27):

[3] **Բուզ.**, Գ.Է, էջ 29; ՄՀ, հտ. Ա, էջ 285:

[4] **Բուզ.**, Գ.Է, էջ 27; ՄՀ, հտ. Ա, էջ 284:

գիտացեալ զթուլասրտութիւն նորա եւ զյուլութիւն, եւ առաւել ի հրապուրելոյ մաղթանաց Սանատրկոյ՝ ի գաղտնի հրամանէ Շապհոյ Պարսից արքայի, արշաւել ի միջոց աշխարհիս մերոյ...»[1]*: Ի դէպ, Մովսէս Դասխուրանցին իր Ա.ժբ գլխում համառօտ եւ խճողումներով է ընդօրինակել Պատմահօր այս վկայութիւնը:*

Մասքթաց Սանեսան թագաւորի (կամ՝ «հիւսիսականաց») արշաւանքին նախորդած՝ Գրիգորիս եպիսկոպոսի (Գրիգոր Լուսաւորչի թոռան) նահատակութեան դիպուածը մասքութների կենտրոնական Վատնեան դաշտում (ներկայիս Խաչմաս քաղաքի մօտ, Փաւստոսի մօտ՝ Վատնեայ[2]*, «Աշխարհացոյց»-ում՝ «Վարդանե[ա]ն դաշտ»*[3]*, Եղիշէի մօտ՝ «Վատն» ազգագաւառ*[4]*, «Դերբենդ-նամէ»-ում՝ «Բատուն[շահ]»*[5]*) Բ. Յարութիւնեանի ճշգրտումներից յետոյ թուագրւում է Տրդատ Մեծի վախճանին (330 թ.) անմիջապէս յաջորդող ժամանակով, այսինքն՝ 330-331 թթ.*[6]*: Ըստ Խորենացու՝ սպանուած Գրիգորիսի դին նրա ընկերակիցները Վատնեան դաշտից բերեցին եւ յուղարկաւորեցին «Փոքր Սիւնիքի» Ամարաս աւանում («Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի Փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»)*[7]*: Այդ նոյն վայրը Փաւստոսն անուանում է գիւղ եւ վերագրում «Հաբանդ գաւառին» («բարձին զնա, որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց, ի կողմանց Աղուանից ի սահմանս Հայոց, ի Հաբանդ, ի գեաւղն, որ անուանեալ կոչի Ամարաս: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի»)*[8]*: Ահա այս դէպքի նշումից յե-*

---

[1] **Խոր.**, Գ.թ, էջ 266; ՄՀ, հտ. Բ, էջ 2017:

[2] **Բուզ.**, Գ.զ, էջ 26; ՄՀ, հտ. Ա, էջ 283 («...կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագուոյ ձիոյն եւ արձակեցին ընդ ծովեզեր դաշտին Հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեայ»): Խորենացուց եւ Փաւստոսից քաղագրուած վարքագրական մի փոքր երկում եւս տեղանուան ձեւն է *Վատնեան*. տե՛ս Ներբողեան յորդիս եւ ի թոռունս սրբոյ Լուսաւորչին, – Սոփերք Հայկականք, հտ. Ժ [Հրատ.՝ **Հ. Ղ. Ալիշան**], Վենետիկ – Ս. Ղազար, 1854, էջ 70 («...զսքանչելի մանուկն Գրիգորիոս, զոր եպիսկոպոս Աղուանից կացուցեալ էին ի տոհմէ սրբոյն Գրիգորի, սպանանեն ձիախոռոխտ ընթադրութեամբ ի Վատնեան դաշտին»):

[3] Տե՛ս **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 116: Հմմ. Աշխարհացոյց **Մովսեսի Խորենացւոյ**, Ցաւելուածովք նախնեաց [հրատ.՝ **Հ. Ա. Սուքրեան**], Վենետիկ – Ս. Ղազար, 1881, էջ 27; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 102: Անհասկանալի է, թէ ինչ հիմքով է Ս. Երեմյանն այս դաշտը համարում Արաքսի հարաւային ափի «Վարդանակերտ քաղաքի շրջակայ դաշտավայրը» (տե՛ս անդ, էջ 83, քարտէզում՝ Գ 7):

[4] **Եղիշէ**, յեղանակ Դ, էջ 94; ՄՀ, հտ. Ա, էջ 629:

[5] Տե՛ս **И. Семёнов**, Топонимы Маскат и Мускур / Мушкур в "Дербенд-наме". К вопросу о локализации страны Маскутов, – «Հայաստանը եւ Քրիստոնյա Կովկասը». Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Կովկասյան Աղուանքում եւ Վրաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին. Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Եր., 2015, էջ 164-172; **В. Ю. Малашев, М. С. Гаджиев, А. С. Ильюков**, Страна Маскутов в Западном Прикаспии. Курганные могильники Прикаспийского Дагестана III-V вв. н. э., Махачкала, 2015, с. 157-158.

[6] **Բ. Հարությունյան**, Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, էջ 76:

[7] **Խոր.**, Գ.գ, էջ 260; ՄՀ, հտ. Բ, էջ 2011:

[8] **Բուզ.**, Գ.զ, էջ 7; ՄՀ, հտ. Ա, էջ 283: Կտորի բնագրագիտական քննութիւնը տե՛ս **А. Акопян**, "История Армении" Фавста Бузанда как источник "Повести о Вачагане", с. 74-75.

տոյ է Փաւստոսը նկարագրում Սանեսանի՝ մէկ տարուց աւելի տեւած արշաւանքը Հայաստան՝ «բազում եւ անթիւ զաւրաւքն Հոնաց», ու նրա պարտութիւնը եւ անփառունակ վախճանը Օշականի առապարի ճակատամարտում (331-332 թ.)[1]:

Հարկ է նաեւ նշել, որ նախկին ուսումնասիրողները, հետեւելով Կիրակոս Գանձակեցու գրչի տակ ծագած թիւրընկալմանը, հակուած էին՝ Սանեսան Մասքթաց թագաւորին նոյնացնելու Տրդատ Մեծի ոմն ազգակից, այսինքն՝ հայ Արշակունի Սանատրուկի հետ[2]: Վերջինս, սակայն, ինչպէս մանրամասն ցոյց է տուել Բ. Յարութիւնեանը, ուրոյն պատմական անձ էր[3], ում Տրդատ Գ-ն իր կեանքի վերջում հիւսիս-արեւելեան կողմերի կուսակալ («գործակալ») էր նշանակել Փայտակարան քաղաքում (Երասխի գետաբերանին մօտ, ներկայիս Պուշկինօ/Բիլեասուվար քաղաքի շրջանում) եւ ով, արքայի մահից յետոյ ապստամբելով, փորձեց հարեւան պարսիկների ու աղուանների օգնութեամբ խլել Հայոց գահը օրինական ժառանգորդ Խոսրով Կոտակից («զաւրութեամբ աւտար ազգաց խորհէր տիրել բոլորումս Հայոց»): Բայց վերջինս հռոմէական դաշնակից զօրքի օգնութեամբ պարտութեան մատնեց Սանատրուկին, ով փախաւ Շապուհ Բ Սասանեանի մօտ, որի հրահրումով քիչ անց, ըստ Խորենացու, սկսուեց «հիւսիսականաց» ցեղերի (այսինքն՝ նոյն Մասքթաց Սանեսան թագաւորի) արշաւանքը դէպի Հայաստան[4]:

Աղուանքում 330-ական թթ. դէպքերի մասին դատելու ուշագրաւ հնարաւորութիւն է տալիս Գրիգորիսի աշակերտների նահատակութեան ժամանակին վերաբերող հաղորդումը Դասխուրանցու Ա.ժդ գլխի վերջում. «Եւ լինէր այն առ քաջին Վաչէիւ՝ Աղուանից արքային» (էջ 40). այս Վաչէ Քաջը Ա.ժե գլխում առկայ Վաչագան Բարեպաշտի նախնի 9 թագաւորների ցուցակում երկրորդն է՝ Վաչագան Ա Քաջ Արշակունուց յետոյ: Մասքութների երկրի Վատնեան դաշտում Գրիգորիսի նահատակութիւնը եւ նրանց Սանեսան թագաւորի արշաւանքն ու պարտութիւնը Օշականի մօտ (332 թ.) Փաւստոսի հետեւողութեամբ նկարագրելուց յետոյ «Վաչագանի վէպ»-ը տալիս է այլ աղբիւրներին անծանօթ՝ Գրիգորիսի աշակերտ Դանիէլ երէցի եւ նրա աշակերտ ճիղբ մանկան նահատակութեան պատմութիւնը: Ըստ գլխի նախորդ տեղեկութիւնների (որ եւս չկան Փաւստոսի մօտ)՝ Գրիգորիսն իր հետ Աղուանք էր տարել Զաքարիա եւ Պանդալէոն սրբերի մասունքնե-

---

[1] Բ. Հարությունյան, Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, էջ 76; նոյնի՝ Մեծ Հայքի բդեշխութիւնների եւ բդեշխութեան հաստատութեան շուրջ, – ՀԱ, ՃԺԵ տարի, 2001, սն. 127:

[2] Տե՛ս, օր.՝ **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 188-192; **Т. М. Мамедов**, Албания и Атропатена по древнеармянским источникам (IV-VII вв.), Баку, 1977, с. 77; **Ф. Дж. Мамедова**, Кавказская Албания и албаны, Баку, 2005, с. 338-348; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 168-173:

[3] Բ. Հարությունյան, Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, էջ 65-77: Տե՛ս նաեւ **М. С. Гаджиев**, Южный Дагестан в III-V вв.: Автореф. дисс. ... канд. ист. наук, Москва, 1982, с. 14; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 108-109; **В. Ю. Малашев, М. С. Гаджиев, Л. С. Ильюков**, Страна Маскутов в Западном Прикаспии, с. 141.

[4] Խոր., Գ.գ, էջ 260; Գ.զ, էջ 262-263; Գ.թ, էջ 266-267; ՄՀ, հտ. Բ, էջ 2010-2011, 2013-2014, 2017-2019:

րը[1]*, դրանց մի մասը թողել Ցրի քաղաքում (Դանիէլին նշանակելով այդ նշխարների սպասաւոր), իսկ միւս մասն իր հետ տարել Մասքթաց աշխարհ*[2]*: Գրիգորիսի աշակերտների նահատակութեան նկարագրութեան մէջ՝ ԺԴ գլխի եզրափակիչ հատուածում, «Վէպ»-ը նշում է մի կարեւոր պատմական դէպք. «Իսկ ընդ ժամանակս ընդ այն [bclrv ընդ այն ժամանակս փխ իսկ ... այն] բերդաքաղաքն՝ անուանեալն Ցռի, ապստամբեալ յԱղուանից թագաւորէն [bclrv ապստամբեալ յԱղուանից՝ բերդաքաղաքացիքն Ցռւոյ փխ բերդաքաղաքն ... թագաւորէն] եւ ձեռն տուեալ ի Պարսից արքայն [bclrv ձեռնտու եղեն յարքայն Պարսից փխ եւ ձեռն ... արքայն], եւ եկեալ Արգեսացիք՝ ունէին զքաղաքն»*[3]*: Այսինքն՝ եթէ ոչ ամբողջ Աղուանից թագաւորութիւնը, ապա գոնէ նրա արեւելեան մի շրջան ճիղբքը իր Ցրի կենտրոնով*[4]*, ռազմակալել էին Սասանեանները (Արգեսացիք = «նուաճողներ» – պարսիկներ): Նրանք փորձում են մոգութեան վերադարձնել Դանիէլ երէցին եւ ճիղբ պատանուն («ստիպէին լինել մոխրապաշտ դիւացն աղտեղութեան»), բայց անյաջողութեան մատնուելով, գլխատում են երկուսին էլ: «Վէպ»-ը շարունակում է. «Ջորս առեալ Ասորեաց ուրումն աբեղայից՝ տանէին ի Հակու անուանեալ գիւղն, եւ անդ եդեալ ի գերեզմանի. եւ ինքեանք ի տեղ[ւ]ոջն վանս շինէին... Եւ լի-**

---

[1] Այս սրբերի մասին տե՛ս նաեւ Սուրբ Պանդալեոնի, Երմողիոս քահանայի եւ Երմոկրատեսի վկայաբանությունը, – Վարք սրբոց. Գրաբարից աշխարհաբար փոխադրեց **Գ. Մադոյանը**, հտ. Դ, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2010, էջ 5-18:

[2] Ի դէպ, ինչպէս դիպուկ նկատել է Ն. Ակինեանը, Զաքարիայի եւ Պանդալէոնի անուները Աղուանից եկեղեցու համար վաղագոյն, կապադակեան եպիսկոպոսապետութեան շրջանում, թերեւս, ունեցել են նոյն նշանակութիւնը, ինչ որ Հայոց եկեղեցու հարմար Յովհաննէս Մկրտչի եւ Աթանագինէսի անունները (Աթանագինէսը Սեբաստիայի եպիսկոպոսն էր եւ նահատակուեց 303 թուականին՝ մեծ հալածանքների առաջին ալիքի օրերին), որոնց մասունքները Կեսարիայից Հայաստան էր բերել Գրիգոր Լուսաւորիչը (**Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի /կոչուած Կաղանկատուացի/..., էջ 146): Ըստ այսմ, յանձին Զաքարիայի ու Պանդալէոնի մասունքների պատմութեան մենք ունենք բուն-աղուանական շրջանի քրիստոնէութեան մի հազուագիւտ նշխար:

[3] **Դասխ.**, Ա.ժդ, էջ 39: «Արգեսացիք» անուանումը (քիչ անց կայ նաեւ՝ «Գերգեսացիք» ձեւով) Աստուածաշնչից եկող քամահրական եզրոյթ է, որ տուեալ դէպքում պարզապէս «նուաճողներ» է նշանակում:

[4] Ցրիի «գործակալ» Խոճկորիկ նախարարը, ըստ «Վէպ»-ի, նշանակուած էր Վաչագան Բաքեպաշտի կողմից (**Դասխ.**, Ա.ժթ, էջ 57-59; Ա.իգ, էջ 78): Ճիղբքի տեղադրութիւնը Շամախի քաղաքի շրջակայ տարածքներում ճշտուած է ըստ՝ **Բ. Հարությունյան**, Լփինքի տեղադրության հարցի շուրջը, էջ 122-123 (հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 88-89): Իսկ նրա կենտրոն Ցրի քաղաքի տեղադրութիւնն աւելի է ճշգրտւում՝ ենթադրելով միջնադարեան *Ցրի* քաղաքանուան հետ նոր ժամանակների *Սաղիան* հայկական գյուղի (Շամախուց 10 կմ արեւմուտք) անուան համապատասխանութիւնը (**Ա. Յակոբեան**, Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման ժամանակի մասին, – ՄՄԱԵԺ, հտ. XXVI, Եր., 2008, էջ 85, ծն. 27): Վերջինս բաղկացած է թւում «Սաղի» հիմքից եւ իրանական «-ան» տեղանունանակերտ վերջածանցից, իսկ *Ց → Ս* եւ *Ր → Լ/Ղ* հնչիւնական անցումները, լաւ յայտնի լինելով իրանալեզու միջավայրում, լիովին հնարաւոր են միջնադարեան Շիրւանի տարածքում: Սաղիանի հարուստ յուշարձանների մասին տե՛ս **Մ. արք. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից՝ որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896; **Ս. Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 60-69:

նէր այն առ Քաջիւն Վաչէիւ»[1]: Այս իւրայատուկ մանրամասները (Ցրիի անցնելն Իրանին, մոգութեան վերադարձնելու դաժան քայլերը եւ յատկապէս ասորի աբեղաների յիշատակումը) մտածել են տալիս, որ նկարագրուած իրադարձութիւնները կապուած են Շապուհ Բ Երկարակեացի գործողութիւնների հետ Մծբինի 40-ամեայ հաշտութեան աւարտին՝ 337/338 թ.: Այդ ժամանակ ողջ արեւմտեան ճակատով խոշորամասշտաբ ռազմական գործողութիւններին զուգընթաց սկսուեցին նաեւ կրօնական խոշոր հալածանքները ասորաբնակ Միջագետքում եւ Սասանեան տէրութեան կամ նրա կողմից գրաւուած բոլոր քրիստոնէաբնակ շրջաններում[2]: Այսինքն՝ Ա.ժե գլխում Արշակունի արքաների ցուցակում Վաչագան Քաջին յաջորդող Վաչէ (Քաջ) թագաւորի ժամանակն ընկնում է 338 թ. շրջակայքում:

Նման թուագրումից երեւում է, որ Վաչագան Քաջ Արշակունու գահակալելու հանգամանքը հնարաւոր է համադրել հէնց 298/299 թ. Մծբինի հաշտութեան պայմանագրի ժամանակի ու պարագայի հետ, որի շնորհիւ Սասանեան տիրակալների ենթակայութիւնից փաստօրէն դուրս եկան մի շարք կախեալ պետութիւններ, այդ թւում՝ Մեծ Հայքն իր վերստին նշանակուած Արշակունի թագաւորով: Անտիկ աղբիւրներից գիտենք Բուն Աղուանքի թագաւորների մասին՝ սկսած Ք. ա. Ա դարից (Օրոյս եւ Զոբեր), որոնց տոհմը, հաւանաբար, տեղական ցեղերից մէկից էր ծագում. գիտենք նաեւ, որ թագաւորական իշխանութիւնը շարունակուել է յաջորդ դարերում, թէպէտ թագաւորների անուններ մեզ չեն հասել: Հաշուի առնելով «Վաչագանի վէպ»-ի պնդումը՝ հնարաւոր է մտածել, որ Ք. յ. Գ դարի ընթացքում Սասանեանների յաջողութիւնների շնորհիւ Աղուանից թագաւորների պատմութեան մէջ ինչ-որ մի խզում է տեղի ունեցել (Մեծ Հայքի պէս, ուր գահակալեցին Սասանեան արքայատոհմի երեք աւագ արքայազններ՝ Որմիզդ-Արտաշիրը, Որմիզդակ-Շապուհը եւ Նարսեհը[3]), որից յետոյ 297-298 թթ. դէպքերի արդիւնքում (Դիոկղետիանոս կայսեր յաղթանակը Սասանեան Նարսեհ – Ներսեհ արքայի դէմ) ինչպէ՛ս Հայաստանում, այնպէ՛ս էլ Աղուանքում գահ բարձրացուեց Արշակունի տոհմի ներկայացուցիչ: Մեծ Հայքում դա Տրդատ Գ-ն էր, իսկ Աղուանքում՝ Վաչագան Ա Քաջը (նա, առաւել մեծ հաւանականութեամբ, կարող էր հեռու ազգակցական

---

[1] Դասխ., Ա.ժդ, էջ 40: Ի դէպ, ըստ «Վէպ»-ի՝ Վաչագան Բարեպաշտի օրերում հէնց Հակու գիւղի երէց Յակոբին յայտնուած երազի շնորհիւ են հարեւան Ցրի քաղաքում գտնում Գրիգորիսի թողած Զաքարիայի եւ Պանդալէոնի նշխարները (Ա.ժթ, էջ 56-57):

[2] Տե՛ս **Աբրահամ Խոստովանող**, Վկայք Արեւելից, Թարգմ. յասորականէն, Աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Մկրտչեան**, Վաղարշապատ, 1897; **J. Labourt**, Le christianisme dans l'empire Perse sous la dynastie Sassanide (224-632), II édition, Paris, 1904, p. 43-52; Ասորական աղբյուրներ, Ա (Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 8), Թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ՝ **Հ. Գ. Մելքոնյանի**, Եր., 1976, էջ 96-100: Ի դէպ, հայ հեղինակները բաւականին վատ գիտեն այդ հալածանքների մասին:

[3] Նրանց մասին տե՛ս, օր.՝ ՀԺՊ, հտ. II, էջ 49-61; **В. Г. Луконин**, Культура Сасанидского Ирана. Иран в III-V вв. Очерки по истории культуры, Москва, 1969, с. 101-102; **Ա. Մելիքյան**, Սալմաստի ժայռաքանդակը (Պատմական Հայաստանի Սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն), Եր., 2016, էջ 119, 134-143, 171-174, 204: Վերջին հեղինակի վարկածով՝ միևչեւ արքայից արքայ հռչակուելը «մեծ թագաւոր Հայոց» կարող էր եղած լինել նաեւ Շապուհ Ա Սասանեանը (տե՛ս էջ 117-133):

կապ ունենալ հարեւան Մասքութքում, թերեւս, Գ դ. հէնց սկզբներից տիրակալող Արշակունեաց արքայատոհմի, այսինքն՝ մեզ յայտնի Սանեսանի տոհմի հետ[1]):

Այս դիտարկումն Աղուանից Արշակունի առաջին երկու թագաւորների ժամանակի մասին դատելու որոշ հիմքեր է տալիս. ընդ սմին, եթէ 298 թուականի հետ կապւում է Վաչագան Քաջի իշխանութեան սկիզբը, ապա 338-ի հետ, առաւել մեծ հաւանականութեամբ, հնարաւոր է կապել Վաչէ Քաջի իշխանութեան աւարտը՝ իբրեւ արդիւնք պարսկական զօրքերի կողմից երկրի ռազմակալման («եկեալ Արգեսացիք՝ ունէին զքաղաքն») եւ լայնամասշտաբ հալածանքների սկզբի: Այդ դէպքում, պայմանականօրէն հաւասար կիսելով երկու թագաւորների ժամանակը, կարող ենք զուտ վարկածի մակարդակով ընդունել, որ Վաչագան Ա-ն եւ Վաչէ Ա-ն իշխել են շուրջ 20-ական տարի՝ 298-318 եւ 318-338 թթ.:

«Վաչագանի վէպ»-ին է յանգում նաեւ Ա.զ գլխի սկզբի արտայայտութիւնը, ուր Դասխուրանցին իրեն յատուկ ոճով գրում է. «Պատմութիւն ճշմարիտ [bclrv աստ չիք պատմութիւն ճշմարիտ[2]], առաւել քան զնախագահելն [bclrv նախագահութեանց] Առանայ ի վաղարշակայ տանս Աղուանից, այլ ինչ ո՛չ գտաք մինչեւ ցՔաջն Վաչագան, որ միանգամայն [bclrv միանգամ] տիրեաց կողմանցս Աղուանից»: Դրանից յետոյ մէկ պարբերութեամբ ասւում է Թադէոս առաքեալի՝ Հայաստան գալու եւ Արտազում նահատակուելու մասին, ապա շարադրւում վերջինիս աշակերտ Եղիշայ առաքեալի քարոզչութեան ու նահատակութեան պատմութիւնը (ձեւաւորուած՝ է դ. սկզբներին): Պարզ է, որ այս երկու սիւժէները կապ չունեն Գ-Դ դարերում ապրած Վաչագան Քաջի ժամանակի հետ, այդ պատճառով «որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից» արտայայտութիւնը պիտի համարել հէնց այն միակ ու հազուագիւտ տեղեկութիւնը, որ պատմիչը յայտնաբերել է իր ձեռքի տակ եղած աղբիւրներում՝ ուրիշ բան չգտնելով («այլ ինչ ո՛չ գտաք»)[3]: Թերեւս, «Վէպ»-ի տոհմաբանական հատուածում (գլ. Ա.ժե) Վաչագանի մասին եղել է ոչ միայն վերջին նախադասութիւնը, այլեւ Աղուանքին «միանգամայն տիրելու» միտքը, որը Ժ դարի պատմիչն այնտեղից տեղափոխել է մի քանի գլուխ առաջ:

Վաչէ Քաջի իշխանութեան աւարտը ենթադրաբար 338 թուին դնելով՝ ստանում ենք նրա յաջորդ Ուռնայրի թագաւորութեան սկզբի հնարաւոր ամենավաղ ժամանակը (338 թ.): Հայ միւս հեղինակներից Ուռնայրի մասին պատմում են, ինչպէս ասուեց, Փաւստոս Բուզանդը եւ Մովսէս Խորենացին, որոնք նկարագրում են նրա մասնակցութիւնը Ձիրաւի ճակատամարտին, իբրեւ Շապուհ Բ Սասանեանի դաշնակից (371 թ.)[4]: Ըստ Փաւստոսի՝ Ձիրաւում պարտուելուց եւ Հայոց սպարա-

---

[1] Հմմ. նոյն մօտեցումը՝ **И. Г. Семенов**, Сведения Псевдо-Бардесана Эдесского о Кавказе: III – первая половина IV в., Махачкала, 2011, с. 34.

[2] Բ խմբի ձեռագրերում այս բառերը զետեղուած են գլխի վերնագրում. «Գիտութիւն երեւման Աստուծոյ մերոյ մերոցս արեւելեացս [*bc* արեւելեաց, *l* արեւելեայցս, *a* արեւելիցս], պատմութիւն ճշմարիտ»:

[3] Հակառակ դէպքում պիտի մտածէինք, թէ Մովսէս Դասխուրանցին չգիտես ինչու մոռացել է զետեղել Վաչագան Քաջի մասին «գտած» իր «պատմութիւն ճշմարիտ»-ը:

[4] **Բուզ.**, Ե.դ, էջ 203; ՄՀ, հտ. Ա, էջ 380-383; **Խոր.**, Գ.լէ, էջ 304; ՄՀ, հտ. Բ, էջ 2057-2058:

պետի կողմից ներուելուց յետոյ Ուռնայրն ինչ-որ ժամանակ անց օգնում է Մուշեղին՝ նրան լուր յայտնելով Շապուհի նոր յարձակման ծրագրի մասին[1]: Այս տուեալը թոյլ է տալիս Ուռնայրի իշխանութեան վերջը հասցնել մինչեւ 372-373 թթ.[2], եւ այդպէս ստացւում է մօտ 35 տարուայ թագաւորութիւն՝ 338-373:

Գուցէ, կարող է հաւաստի լինել նաեւ ՊԱ-ի Ա.թ գլխի մի պնդումը, թէ «էր Ուռնայր արքայ Աղուանից քեռայր Շապհոյ՝ Պարսից արքայի». յիշենք հարեւան կամ կախեալ թագաւորներին աղջիկ տալու Սասանեանների՝ Հայոց պատմութիւնից (նոյն կերպ եւ՝ Վրաց ու Աղուանից) լաւ յայտնի սովորութիւնը[3]: Հնարաւոր է, որ այդ տեղեկութիւնը յանգում է «Վաչագանի վէպ»-ի ինչ-որ մի չպահպանուած տոհմաբանական հատուածի, որտեղից այն կարող էր դուրս բերուել Դասխուրանցու կողմից եւ զետեղուել այն գլխում, ուր առաջին անգամ խօսւում է Ուռնայրի մասին (Ա.թ գլխի հիմնական աղբիւրը ուշ՝ է դարում ստեղծուած եւ տարբեր ուղիներով Դասխուրանցուն հասած, պատմիչի ու նրա նախորդների կողմից որոշ անհաւաստի մանրամասներով հարստացուած առասպելն է՝ Տրդատ Գ-ի հետ միաժամանակ Ուռնայրի մկրտուելու մասին): Թերեւս, աւելի հեշտ է Ուռնայրի՝ քրիստոնեայ մատենագիրների կողմից չսիրուած Շապուհ Երկարաձեռացի փեսան լինելու մասին պնդման սկզբնաղբիւր համարել «Վաչագանի վէպ»-ի նման մի անաշառ երկ, քան այդ թագաւորին Տրդատ Մեծի գործընկերոջ լուսապսակը յատկացնող՝ քրիստոնէացման առասպելը[4]:

Հնարաւոր է, որ Ուռնայրի մասին այդ վերջին տեղեկութիւնն է իր արտացոլումը գտել նաեւ նրա թոռան Թոռ Եսվաղէն արքայի (մօտ՝ 420-450) մասին Ստեփաննոս Օրբէլեանի մի ծագումնաբանական բնոյթի վկայութեան մէջ (բաւականին ճոխացուած վիճակում): Մաշտոցի աշակերտներից մէկը համարուող Անանիա Սիւնեաց եպիսկոպոսի՝ Աղուանք մեկնելու եւ Աղուանից գրերի ստեղծման ու տարածման գործում մասնակցութիւն ունենալու մասին պատմող հատուածում Օրբէլեանը Եսվաղէնին անուանում է «առաջին Շապհոյ Արտաշրեան Պարսից թագաւորի թոռն քեռ [var. քուէր]», ընդ որում՝ գլխի վերջում յղում է արւում Խորենացուն եւ Ջ դարի հեղինակ Պետրոս Սիւնեցու «Ներբողեանին» («Զայս ցուցանէ մեզ սուղ ինչ Մովսէս Քերթողահայրն եւ զբովանդակն ճշգրիտ՝ աշակերտ նորին Պետ-

---

[1] Բուզ., Ե.ե, էջ 205; ՄՀ, հտ. Ա, էջ 384:

[2] Հմմ. **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 199-200.

[3] Հմմ., օր.՝ **М. С. Гаджиев**, Гемма-печать царя Албании Асвагена, – ВДИ, 2003, № 1, с. 105.

[4] Թերեւս «Վաչագանի վէպ»-ին չի յանգում (ուստի եւ՝ Ուռնայրի առասպելից է գալիս) Ա.թ գլխի յաջորդ կտորը. «քաջազաւր այր, որ ի մեծամեծ պատերազմունս հոյակապ անուն ժառանգեաց՝ ի մէջ Հայաստանեաց ճշմարիտ յաղթութեան կանգնեալ»: Այս ոճը բնորոշ է Դասխուրանցու արտագրած Է դարի աղբիւրներին եւ բուն պատմիչին (երբ խօսքը Հայաստանում Աղուանքի իշխանների կատարած այլեւայլ քաջագործութիւնների մասին է), իսկ «Վաչագանի վէպ»-ին խորթ է: Տուեալ դէպքում «քաջազաւր այր... ի մէջ Հայաստանեաց» միտքը կարող էր յօրինուել Տրդատ Մեծի մասին Մովսէս Խորենացու հետեւեալ արտայայտութեան ազդեցութեամբ (եւ նմանեցնելով). «Իսկ քաջին ճարտարութեամբ եւ բազում ճակատս տուեալ, նախ ի Հայս եւ ապա ի Պարսս՝ իւրով անձամբ առնէր զյաղթութիւնն: Որ ի միում նուագի... կանգնեաց զնիզակն յոգնական համաթիւ վիրաւորաց» (**Խոր.**, Բ.ձբ, էջ 225; ՄՀ, հտ. Բ, էջ 1974):

րոս՝ եպիսկոպոս Սիւնեաց»)[1]: Զ դարում կամ, յամենայն դէպս, է դարից ոչ ուշ շարադրուած եւ մեզ առանձին չհասած այդ երկից կտորներ են օգտագործել ինչպէ՛ս Օրբէլեանը, այնպէ՛ս էլ՝ Եսվաղէնի մասին վերոնշեալ տեղեկութեանն անծանօթ Դասխուրանցին[2]: Նկատելի է, որ ժամանակային տեսանկիւնից Եսվաղէնը կարող էր լինել Գ դ. կէսերին ապրած «առաջին Շապուհ Արտաշրեան» արքայի (241-272) քրոջ ոչ թէ թոռը, այլ ծոռան ծոռը: Բացի այդ՝ վերեւում տեսանք, որ Վաչագան Քաջով սկսուող Աղուանից Արշակունիների արքայատոհմը երկրում իշխանութեան է անցել Գ դ. ամենավերջից ոչ վաղ: Ըստ այդմ՝ աւելի հաւանական է, որ Պետրոս Սիւնեցուն հասած աւանդազրոյցի հիմքում ընկած է եղել Ուռնայրի՝ հէնց Շապուհ Բ «Որմզդեան»-ի (309-379) քրոջ ամուսինը եղած լինելու իրողութիւնը (արձանագրուած նաեւ «Վաչագանի վէպ»-ում): Թէպէտ՝ գուցէ եւ հնարաւոր է կատարել մէկ ուրիշ վերականգնում եւ, ինչպէս ժամանակին արել է իրանագէտ Ֆ. Յուստին, մտածել, թէ բուն աղբիւրը (Պետրոս Սիւնեցին) նկատի է ունեցել ոչ թէ Շապուհ Ա-ին (եւ ոչ էլ՝ Շապուհ Բ-ին), այլ 383-388 թթ. տիրակալած Շապուհ Գ՝ նոյնպէս «Արտաշրեան» արքայից արքային[3]: Իրօք, նկատուած է, որ Խորենացու եւ Սեբէոսի արքայացանկերում Արտաշիր Բ Սասանեանի (379-383) որդի Շապուհ Գ-ն, ի տարբերութիւն իր նախորդների ու յաջորդների, բացակայում է[4], ուստի Ստեփաննոս Օրբէլեանը, իր աղբիւրում հանդիպելով պարզապէս «Շապուհ Արտաշրեան» անուանը եւ քաջածանօթ լինելով վաղ հայկական պատմիչների ցանկերին՝ լիովին կարող էր շտապողաբար «ծանօթագրել», թէ դա Սասանեան արքայատոհմի հիմնադիր Արտաշիր «Առաջինի» որդին է:

Ուռնայրի մասին յայտնի է եւս մի կարեւոր տեղեկութիւն. ըստ ամենայնի՝ նա է Շապուհ Բ-ի զօրաբանակի կազմում մասնակցել 359 թուականին հռոմէացիների եւ պարսիկների միջեւ տեղի ունեցած Ամիդի 73 օր տեւած ճակատամարտին, որի մասին գրում է Դ դ. վերջի հռոմէացի պատմիչ Ամմիանոս Մարկեղինոսը[5]: Ճիշտ է, նա նշում է լոկ «Ալբանիայի թագաւորի» զօրաջոկատի մասին՝ չտալով անունը, բայց, ինչպէս նկատել է դեռ Կ. Տրեւերը, ժամանակային տեսանկիւնից դա պիտի

---

[1] **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** Պատմութիւն տանն Սիսական, Ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1861 (յետայսու՝ **Օրբ.**), գլ. ԺԵ, էջ 39; Պատմութիւն նահանգին Սիսական. Արարեալ **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց**, Թիֆլիս, 1910, գլ. ԺԶ, էջ 56:

[2] **Դասխ.**, գլ. Բ.ա, էջ 106-112:

[3] Տե՛ս **F. Justi**, Iranisches Namenbuch, Hildesheim, 1963, S. 31. Հմմ. **М. С. Гаджиев**, Геммапечать царя Албании Асвагена, с. 105.

[4] Այդ մասին տե՛ս **Ա. Ցակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրաց Հայոց» եւ «Զաւրանամակ», էջ 515-516: Մենք նախընտրում ենք Է դարի պատմիչի անուան «Սեբէոս» ձեւը, որը կայ «Կանոնագիրք Հայոց»-ի Բ ենթախմբի ու Ասողիկի, Սամուէլ Անեցու, Մխիթար Անեցու եւ Մխիթար Այրիվանեցու վաղ ձեռագրերում: Տե՛ս **Հ. Ն. Ակինեան**, Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ, Վիեննա, 1924, էջ 17-21; **Ա. Ցակոբեան**, Սեբիոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը եւ Ջուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը, – ՀԱ, ՃԺԹ տարի, 2005, սն. 213-270:

[5] **Amm. Marc.**, De bello Pers. XVIII, 6, 22.

լինէր հէնց Ուռնայրը[1]*: Հ. Սվազեանը փորձում է փաստարկել, թէ այդ թագաւորը կարող էր լինել Վաչէ Ա-ն*[2]*, սակայն դա յարում է նրա այն շտապողական տեսակէտին, ըստ որի Աղուանքի՝ Վաչագան Ա-ից սկսուող Արշակունեաց տոհմը պիտի առաջացած համարուի «նոյնացուող» Սանեսան/Սանատրուկից, ուրեմն եւ՝ լոկ 330-ական թուերին: Իսկ վերեւում տեսանք, որ «Վաչագանի վէպ»-ի վկայութիւնների ուշադիր քննութիւնից յետոյ մեզ համար դժուար է ընդունել նման տեսակէտը:*

Վերը ճշտուած ժամանակագրութեամբ՝ Դ դ. առաջին երկու տասնամեակներում, երբ Աղուանքում քրիստոնէութիւն է տարածուել, երկրի թագաւորը, հաւանաբար, եղել է Վաչագան Ա Քաջը (թէպէտ եւ ուշ գրական աւանդոյթը նոր հաւատի ընդունումը ինչ-որ մի սխալի արդիւնքում վերագրել է Ուռնայր արքային՝ մօտ 338-373 թթ.): «Վաչագանի վէպ»-ի վերջին հատուածներից մէկի ուշադիր քննութիւնը ենթադրել է տալիս, որ բնօրինակի այդ տեղում, թերեւս, յիշուած է եղել ոչ թէ երկի գլխաւոր հերոսը, այլ նրա անուանակից վաղ նախնին եւ Աղուանից իրական լուսաւորիչ Վաչագան Քաջը: Ա.իգ գլխի վերջնամասում «Վէպ»-ի հեղինակը պատմում է, որ Գրիգորիսի՝ Ամարասում դժուարութեամբ յայտնաբերուած նշխարները մասամբ թողնում են տեղում, մասամբ յանձնում արքայական «բանակին» (դրա մէջ ընկալւում է ոչ միայն զօրքը, այլեւ հոգեւորականների ու արքունական ծառայողների՝ Ամարասում հաւաքուած բազմութիւնը), որն սկսում է իր վերադարձի երթը դէպի թագաւորի «սեփհական» Դիւտական գիւղը (Քարուէճ ամառանոցով եւ Ուտիացւոց/Աւտէացւոց գաւառի դաշտավայրով): Այս նկարագրութեան մէջ անսպասելիօրէն, ենթատեքստային նախադասութիւններում մէկընդմէջ յայտնւում են երկուսը՝ «լուսաւորիչ արքայ Վաչագանի» գնահատականի ու նրա նախնիների մասին. «Ապա չուէր բանակն ամենայն առաջին կարգադրութեամբն եւ սրբոցն դասիւք: Անդանաւր բարեացապարտն Վաչագան արքայ զհոգեւորական եւ զգերաշխարհիկն զայն աւար առեալ, nr էր անանց եւ անպատմելի բարեացն առիթ նմա, զոր նախ եղելոց թագաւորացն նախ fան զնա իւր իսկ նախնեացն ոչ ումեք համբարեցաւ այսպիսի մեծասքանչ պարգեւ: *Եւ քրիստոսաժողով բանակին աւարամասն առեալ՝ զողորմութեանցն Աստուծոյ զբերումն անճառաբար ստանային* ի ձեռն frիստոսազգեստ արհային Վաչագանայ, զորոյ գովութիւնն ոչ ինչ նուազ գոլ վարկանիմ, fան զարեւմտականին տիրող Կոստանդիանոսի կայսեր կամ զԱրշակունին Տրդատիոս՝ Մեծաց Հայոց փրկութեան գտող: Որ եւ մեզս *[bclrv մեզոյ]*՝ արեւելեացս, սա եղեւ դուռն լուսոյ աստուածգիտութեան եւ բազմազան բարեաց աւրինակ երջանիկն այն *[a երջանիկս այս]*: *Սա մեծապէս ելեալ ի հանդէսս յայս՝ դառնայ, ըստ որում զգալն էր պատրաստեալ՝ նոյնգունակ եւ առաւելագոյն եւս հայեցուցանող [bclrv հիացուցանող] պայծառութեամբ զճանապարհն յաւրինեալ [a յաւրինեաց]»*[3]*: Եթէ այդպիսի «խառնուածութիւնն» ընդունենք իբրեւ երկու*

---

[1] **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 198-199.
[2] **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 179-180:
[3] **Դասխ.**, Ա.իգ, էջ 83:

տարբեր սիւժէների (բանակի երթի եւ մասունքների յայտնաբերման շնորհն ստացած Վաչագան Բարեպաշտի գովաբանման) մէկընդմիջուած շարադրանք, ինչպէս որ բնագիրն ընկալել է Մովսէս Դասխուրանցին (կամ անգամ նախորդ մի գրիչ), ապա միեւնոյնն է, պիտի անսպասելի համարել երկրորդ ընդգծուած հատուածում Վաչագանին շուրջ երկու դար առաջ եղած ու իրենց երկրներն առաջին անգամ դարձի բերած Կոստանդիանոսի եւ Տրդատ Մեծի հետ համեմատելը: Բայց թւում է, թէ դա պարզապէս չափազանցուած գովաբանական զեղում չէ. քիչ վերեւում թագաւորի նախնիների յիշատակումը (առաջին ընդգծուած կտորում) եւ ապա նորից «քրիստոսաժողով բանակի» մասին խօսելը թոյլ է տալիս մտածել, որ բանակի մասին վերջին արտայայտութիւնն ուղղակի իր տեղում չէ: Այսինքն՝ ենթադրելի է, որ դրա փոխարէն «Վէպ»-ի բնագիրն ունեցել է ուրիշ բառեր, որոնցով երկրորդ ընդգծուած միտքը տրամաբանօրէն կապուել է առաջինի հետ: Դժուար չէ կռահել, որ այդ բառերով պիտի արտայայտուած լինէր «բացի ...» միտքը, որով մասունքների դիւտի շնորհին արժանացած բարեպաշտ արքան համեմատուել էր երկնային մէկ այլ շնորհի արժանացած, այն է՝ Աղուանքը դարձի բերած իր նախնու՝ Վաչագան Քաջի հետ, որն էլ այնուհետեւ շատ տեղին համեմատուել է (երկրորդ ընդգծուած մտքում) Կոստանդիանոսի ու Տրդատի հետ:

Անդրադառնանք քրիստոնէութեան ընդունման տարեթուին: Այժմ արդէն ճշտուած է, որ Հայաստանում քրիստոնէութիւնը պաշտօնապէս ընդունուեց Գալերիոս կայսեր (305-311)՝ 311 թ. Ապրիլի 30-ին (իր մահուանից 5 օր առաջ) Թրակիայի Սարդիկէ քաղաքում հրապարակած «Հանդուրժողութեան մասին» հրովարտակից (էդիկտից) 1,5-2 ամիս անց՝ Լուսաւորչի «Ելն ի վիրապէ» ակտով, որը 311-ին ընկել է Յունիսի 24-ին[1]: Այդ մասին Մարի-Լուիզ Շօմոնի՝ 1969 թ. առաջին պնդմանը հետեւեցին Ժ.-Պ. Մահէի, Ա. Մարտիրոսեանի եւ Կ. Իւզբաշեանի անդրադարձները[2]: Հայաստանում քրիստոնէութեան ընդունմանը, ըստ Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւն» երկի, 311-312 թթ. ձմռանը հետեւեց Հռոմի «բարեկամ եւ դաշնակից» քրիստոնեայ հայերի (իմա՛ Հայաստանի) դէմ արեւելեան պրովինցիաներին տիրող կայսերակից Մաքսիմինոս Դայայի «ամոթալի» եւ խիստ անյաջող պատերազմը՝ նշուած պրովինցիաների քրիստոնեաների դէմ նրա վերսկսած հալածանքների ընթացքում: Բնագիրն է. «Յարեաւ եւ պատերազմ ի

---

[1] **M.-L. Chaumont**, Recherches sur l'histoire d'Arménie de l'avénement des Sassanides à la conversion du royaume, p. 147-164 (գլուխ VII – "Le sacre à Césarée et le baptême à Bagawan"); **Մ.-Լ. Շօմոն**, Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը Կեսարիայում եւ մկրտութիւնը Բագաւանում [Թարգմանութիւնը եւ ծանօթագրումները՝ **Ն. Ղարիբեանի** եւ **Ա. Յակոբեանի**], – ՀԱ, ՃԻԷ տարի, 2013, սն. 29-31:

[2] **J.-P. Mahé**, Die Bekehrung Transkaukasiens: eine Historiographie mit doppeltem Boden, – Die Christianisierung des Kaukasus (Armenia, Georgia, Albania). Referate des Internationalen Symposions (Wien, 9-12 Dezember 1999), S. 111; **A. Mardirossian**, Le Synode de Vagarshapat (491) et la date de la conversion au christianisme du royaume de Grande Arménie (311), – RÉArm., t. 28, 2001-2002, p. 249-260; **Կ. Իւզբաշեան**, Հայագիտութեան ներածութիւն, Եր., 2006, էջ 12:

բռնաւորէն ընդդէմ Հայոց, որք ի սկզբանէ անտի բարեկամք եւ մարտակիցք էին *Հոռոմոց. զորս քրիստոնեայս եւ յերկրպագութիւն ճշմարտին Աստուծոյ փոյթս նեղելով բռնաւորին ատելոյն Աստուծոյ, զի կռոց եւ դիւաց զոհեսցեն, փոխանակ բարեկամաց՝ թշնամիս, եւ փոխանակ նիզակակցաց՝ պատերազմողս ընդդէմ իւր յարոյց զնոսա... Արդ՝ նա հանդերձ զաւրաւք իւրովք ի պատերազմի անդ ընդդէմ Հայոց՝ ի բազում ուրեք հարեալ վատթարէր առաջի նոցա»[1]:*

Իհարկէ, պէտք է նշել, որ գրականութեան մէջ շարունակւում է նաեւ Հայոց դարձի ինչպէ՛ս աւանդական՝ 301/302 թուի շրջանառութիւնը, որի փաստարկումներն ամենից համակարգուած ձեւով շարադրել է Մաղաքիա Օրմանեանը[2], այնպէ՛ս էլ Պօղոս Անանեանի տեսակէտի կրկնութիւնը, ըստ որի՝ Լուսաւորիչը Վիրապից ազատուել է Կեսարիայում Ղեւոնդիոս արքեպիսկոպոսի գլխաւորած եկեղեցական ժողովում ձեռնադրուելուց (314 թ. Սեպտեմբեր, արդէն 313 թ. Միլանի էդիկտից յետոյ, որով Կոստանդիանոս Մեծը եւ Լիկինիոսը քրիստոնէութիւնը պաշտօնապէս հռչակեցին Կայսրութիւնում ընդունելի կրօն) ոչ շատ առաջ, այսինքն՝ նոյն թուականի նախորդող ամիսներին[3]: Շարունակում են ի յայտ գալ նաեւ փորձեր՝ փաստարկելու այլ թուագրումների հնարաւորութիւնը, ինչպէս, օր.՝ Ռուբէն Մանասէրեանի եւ Բաբկէն Յարութիւնեանի մօտ է, ովքեր Հայոց դարձը դնում են 305-306 թթ., կամ Մաքսիմ Եւադեանի երկհատոր մենագրութեան մէջ, ով դնում է 294-296 թթ.[4]: Սակայն նշուած հեղինակները պարզապէս խուսափել են Մ.-Լ. Շօմոնի փաստարկումների քննարկումից, ըստ որոնց՝ Հայոց դարձը (Գրիգորի ելքը Վիրապից) տեղի է ունեցել մեզանից 1709 տարի առաջ:

Հայոց եւ Աղուանից դարձի մասին ամենից մանրամասն պատմում է Ագաթանգեղոսի երկի վաղագոյն տարբերակը՝ «Գրիգորի վարք» անունը կրող սկզբնաղբիւրը, որը մեզ հասել է միայն յունարէն եւ ասորերէն ու նրանցից կատարուած արաբերէն եւ քարշունի թարգմանութիւններով[5]: Բանասէրների կարծիքով՝

---

[1] **Եւսեբիոս Կեսարացի**, Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ – Ս. Ղազար, 1874, էջ 688-689 (գիրք Թ, գլ. Ը):

[2] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2001, սն. 77-101, § 49-66: Ի դէպ, պէտք է յիշել, որ այս թուագրումը, որը պաշտօնապէս ընդունւում է ՀՀ պետական կառոյցներում եւ Հայ Առաքելական եկեղեցում, ոչ թէ գալիս է նոր ժամանակների գրականութիւնից, այլ թէկուզ եւ վրիպմամբ՝ հաշուարկուել ու սրբագործուել է, ըստ ամենայնի՝ Է դ. սկզբներին, թերեւս, Վրթանէս Քերթողի կողմից:

[3] **Հ. Պ. Անանեան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վենետիկ – Ս. Ղազար, 1960 (վերահրատ.՝ 1998 թ.):

[4] **Ռ. Ա. Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչեւ Տրդատ Մեծ, էջ 197-201; **Բ. Յարութիւնեան**, Ե՞րբ է քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուել պետական կրօն, – ՀԱ, ՃԻ տարի, Վիեննա, 2006, սն. 85-195; **M. K. Yevadian**, Christianisation de l'Arménie, Retour aux sources, Vol. II, L'oeuvre de saint Grégoire l'Illuminateur, Lion, 2008, p. 365-370.

[5] Յունարէնը տե՛ս **G. Garitte**, Documents pour l'étude du livre d'Agathange, Rome, 1946 (աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Ագաթանգեղոսի պատմութեան հունական նորահայտ խմբագրությունը /Վարք/, Թարգմ. հունարեն բնագրից՝ **Հ. Բարթիկյանի**, Առաջաբան եւ ծանոթագրություններ՝ **Ա. Տեր-Ղեւոնդյանի**, – «Էջմիածին», 1966, հմր Է, էջ 28-34, հմր Ը, էջ 46-51, հմր Թ-Ժ, էջ 79-87. տպագրման ժամանակ սպրդած մի քանի վրիպում-

«Գրիգորի վարք»-ի թարգմանութեան համար հիմք ծառայած հայերէն բնագիրը շարադրուել է Ե դ. առաջին կէսում՝ հիմնուած Դ դարում յունարէն գրուած մի երկի (պայմանականօրէն կոչուած «Գիրք Գրիգորիսի») վրա[1], որը որոշ առասպելական տարրերի կողքին մեծ հաւաստիութեամբ ամփոփել է Գրիգոր Լուսաւորչի կողմից Հայոց լուսաւորութեան իրական դրուագներն ու հանգամանքները: Արդ՝ «Գրիգորի վարք»-ը յայտնում է, որ վճռելով ընդունել Վիրապից դուրս հանուած Գրիգորի քարոզած քրիստոնեական հաւատը, Հայոց Տրդատ թագաւորն իր մօտ է հրաւիրել իր կրտսեր դաշնակից ու բարեկամ Վրաց, Աղուանից (արաբերէն Վարքում ամենուր՝ «Ալանաց») եւ Լազերի (արաբերէն Վարքում առաւելապէս՝ «Աբխազաց») թագաւորներին: Նրանք ժամանել են Հայաստան, Հայոց թագաւորի ու իշխանների հետ միասին Գրիգորին ձեռնադրուելու համար ճանապարհ դրել Կապադովկիայի Կեսարիա քաղաքը (3000-անոց զօրքի եւ 16 գերագահ «սատրապ»-նախարարների ուղեկցութեամբ, որոնց գլխաւոր էր նշանակուած Արտաւազդ Մամիկոնեան սպարապետը) եւ Հռոմէացիների երկրից վերադարձին դիմաւորել նրան Հայոց արքայական բագաւան ամառանոցում (Արածանիի վերնահովտում): Կեսարիայում Ղեւոնդիոս եպիսկոպոսապետի հրաւիրած եպիսկոպոսական ժողովում Գրիգորն ամենայն հանդիսաւորութեամբ ձեռնադրուեց Հայոց քահանայապետ, այսինքն՝ եպիսկոպոս: Ի դէպ, Կեսարիայի ժողովին մասնակցում էին 20 եպիսկոպոսներ, ում անուններն այդ նոյն քանակով պահպանուել են «Կանոնագիրք Հայոց»-ում՝ 325 թ. Նիկիայի տիեզերական ժողովի 318 մասնակիցների ցանկի վերջում՝ «Եւ որք ի Կեսարիայն ժողովեցան» վերտառութեամբ[2]: Ժողովն սկսուել էր 314 թ. Սեպտեմբերի 14-ին՝ Նահատակաց յիշատակի տօնին (հետագայում վերածուած՝ Սուրբ Խաչի տօնի), ինչպէս որ պահանջում էին «Առաքելական

ներ ուղղել է Արմէն Քեշիշեանը, տե՛ս **Ա. Քեշիշեան**, Մամիկոնեաններ ծագումը Խաղբակեաններին առնչող տեսակէտի վերլուծութիւն, – Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. ԻԲ, Պէյրութ, 2002, էջ 112, ծն. 111): Նիկ. Մառը դրանից շատ առաջ յայտնաբերել եւ հրատարակել էր արաբերէն թարգմանութիւնը՝ **Н. Марр**, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия), – ЗВОИРАО, т. 16, 1904-1905, вып. II-III, СПб., 1906. Հմմ. **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Ագաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, – ՊԲՀ, 1973, հ՝ 1, էջ 209-236; **А. С. Жамкочян**, Житие Св. Григория Просветителя Армении по арабской синайской рукописи 455, Ер., 2016. «Գրիգորի վարք»-ի յունարէն խառը կամ օքրիդեան կոչուած տարբերակի ինքնուրոյն մասը հրատարակել է Ժերար Գարիտը (տե՛ս **G. Garitte**, La Vie grecque inédite de saint Grégoire d'Arménie (ms. 4 d'Ochrida), – AB, 1965, vol. 83, fasc. 3-4 (Bruxelles), p. 233-290), իսկ քարշունի (ասորատառ արաբերէն) եւ ասորական բնագրերը՝ Միշել Վան Էսբրուկը. տե՛ս **M. Van Esbroeck**, Un nouveau témoin du livre d'Agathange, – RÉArm., t. VIII, 1971, p. 13-167; նոյնի՝ Le résumé syriaque de l'Agathange, – AB, 1977, vol. 95, fasc. 3-4 (Bruxelles), p. 291-358 (վերջինի աշխարհաբար թարգմանութիւնը տե՛ս **Լ. Հ. Տեր-Պետրոսյան**, Ագաթանգեղոսի ասորական խմբագրությունը, – «Էջմիածին», 1987, հ՝ ԺԱ-ԺԲ, էջ 83-89; 1988, հ՝ Ե-Զ, էջ 44-54, 1989, հ՝ Դ-Ե-Զ, էջ 90-99):

[1] Հմմ. **Պ. Մ. Մուրադյան**, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Եր., 1982, էջ 10:

[2] Կանոնագիրք Հայոց, Աշխատասիրութեամբ՝ **Վ. Յակոբեանի**, հտ. Ա, Եր., 1964, էջ 150:

կանոնները»: Վերադարձին Գրիգորի շքախումբը Բարձր Հայքից մեծ շրջան կատարեց դէպի հարաւ՝ հասնելով Տարօն գաւառ, որի Աշտիշատ քաղաքում Սեբաստիայի եպիսկոպոս Պետրոսի կողմից պաշտօնապէս անցկացուեց նրա գահակալման արարողութիւնը, իսկ յետոյ հիմնադրուեց Մշոյ Սուրբ Կարապետ եկեղեցին, ուր թողնուեցին Կեսարիայից բերուած Յովհաննէս Մկրտչի եւ Աթանագինէսի մասունքները (Հայոց եկեղեցու համար՝ գլխաւոր): Բագաւանի մօտ՝ Արածանի գետում, 30-օրեայ պահքից յետոյ 370000 հայերի հետ միասին Լուսաւորչի ձեռքով մկրտուեցին նաեւ Վրաց, Աղուանից եւ Լազիկա/Եգերքի թագաւորները[1]:

Դրանից յետոյ Գրիգորը Հայաստանի տարբեր գաւառներ եւ նշուած երկրներ է ուղարկել երէցների ու եպիսկոպոսների: Վիրք ուղարկուեց Իրինարքոսը, Լազիկա՝ Սոփրոնիոսը, իսկ Աղուանքի համար եպիսկոպոս ձեռնադրուեց եւ ուղարկուեց «բարեպաշտ այր Թովման՝ Սատալա փոքր քաղաքից ["Εἰς δὲ Ἀλβανίαν Θωμᾶν ὅσιον ἄνδρα. ἐκ τῆν Σαταλέων τῆς μικρᾶς πόλεος"]»[2]: Ինչպէս նշել ենք ժամանակին, եթէ Գրիգոր Լուսաւորչի՝ Կեսարիայում քահանայապետ ձեռնադրուելը այս տեղեկութիւնների հիման վրայ թուագրում է 314 թ. աշնանով (Սեպտեմբեր)[3], ապա Աղուանից դարձը (թագաւորի մկրտութիւնը Բագաւան ամառանոցում) ճիշտ կը լինէր թուագրել 315 թուականով, թերեւս, գարնան աւարտով՝ հաշուի առնելով Կեսարիայից մինչեւ Բագաւան վերադարձող թափորի ուղեւորութեան երկարատեւ լինելը[4]: Այդ երկարատեւութեան մասին, բացի վերը շարադրուած փաստերից, խօսում է նաեւ «Գրիգորի վարք»-ի մի անմիջական զեղումը, թէ ինչպէս էր Լուսաւորչին ուրախացնում այն իրողութիւնը, որ ճանապարհորդութիւնից առաջ ամենուր նրա կանգնեցրած խաչերի տեղում արդէն հասցրել էին եկեղեցիներ կառուցել[5] (իսկ այդպիսի շինարարութիւնը, ըստ ամենայնի՝ 2-3 ամսից հաստատապէս աւելի երկար ժամանակ պահանջող եւ ոչ ամեռային աշխատանք էր):

Թէպէտ «Վարք»-ը Աղուանքի, Վիրքի եւ Լազիկայի դարձը դնում է Գրիգորի՝ Կեսարիայից վերադարձից յետոյ, սակայն Մովսէս Խորենացու բաւական մանրամասն տեղեկութիւնները ստիպում են մտածել, որ կարելի է խօսել գոնէ Վիրքում

---

[1] Տե՛ս **G. Garitte**, Documents pour l'étude du livre d'Agathange, p. 70-72, 97-99; **Н. Марр**, Крещение армян, грузин, абхазов и аланов, с. 126-136; **А. С. Жамкочян**, Житие св. Григория Просветителя Армении, с. 174-183.

[2] Տե՛ս **G. Garitte**, Documents pour l'étude du livre d'Agathange, p. 101-102.

[3] Հմմ. **Հ. Պ. Անանեան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը, էջ 68-78:

[4] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 126; **Ա. Յակոբեան**, Վիրքում, Լազիկայում եւ Աղուանքում քրիստոնեութեան մուտքի ժամանակագրման խնդիրը, – «Հայաստանը եւ Քրիստոնյա Կովկասը». Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Կովկասյան Աղուանքում եւ Վրաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին. Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Եր., 2015, էջ 3-15:

[5] Տե՛ս **G. Garitte**, Documents pour l'étude du livre d'Agathange, p. 95; **Н. Марр**, Крещение армян, грузин, абхазов и аланов, с. 130-131; **А. С. Жамкочян**, Житие св. Григория Просветителя Армении, с. 180. Հմմ. **Մ.-Լ. Ծօմոն**, Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը, սն. 10 (ծն. 20. «Ըստ արաբական տարբերակի տեղեկութեան՝ Գրիգորն այս եկեղեցիներում սեղաններ է կանգնեցնում, որոնք օծում է Սեբաստիայի եպիսկոպոսը»):

նոր կրօնի ընդունման մասին դեռ մինչեւ Գրիգորի ձեռնադրումը Կեսարիայում: Նախ՝ նշենք, որ վրաց պատմագրութիւնն անուշադրութեան է մատնել «Գրիգորի վարք»-ի վկայութիւնները՝ փոխարէնը շեշտը դնելով Ե դարի հռոմէացի հեղինակ Գեղասիոս Կեսարացու մի պատմութեան վրայ, որը պահպանուել է Ռուփինոսի մօտ՝ հետագայում կրկնուելով նաեւ Սոկրատ Սքոլաստիկոսի եւ այլոց երկերում (Գեղասիոսը լսել էր այդ պատումը ոմն Բակուրից, որը Դ դ. վերջերի անձ էր՝ վրաց արքայական տոհմից): Վրացի գիտնականները յղում են նաեւ «Քարթլիս Ցխովրեբա»-ի՝ ուշ ծագած պնդումները, ըստ որոնց՝ երկրի լուսաւորիչ Նունէ միանձնուհին նախապէս ապրել է Երուսաղէմում, մի փոքր էլ՝ Խորենացու տարբերակը եւ իրենց դարձը վերագրում են 330-ական թթ. (Ի. Ջաւախիշվիլուն յանգող՝ աւանդաբար շրջանառուող տարեթիւը 337-ն է)[1]: Այնինչ «Գրիգորի վարք»-ի յայտնաբերումից յետոյ պարզ է, որ դա պիտի յետ տարուի գոնէ մինչեւ 315 թիւը:

Սակայն Խորենացու Բ.ձզ գլխում («Յաղագս Նունէի երանելւոյ, եթէ որպէս եղեւ պատճառք փրկութեան Վրաց» վերտառութեամբ) կան որոշակի հաւաստիութիւն ներշնչող տեղեկութիւններ, որոնք, թերեւս, ստիպում են Վրաց դարձը հասցնել մինչեւ 311-ը եւ թուագրել լոկ շաբաթներով անց Գրիգորի «Ելն ի վիրապէ»-ից: Այսպէս, Պատմահայրը գրում է. «Եւ իսկոյն եհաս առ նա [=Վրաց արքայ Միհրանին] լուր սքանչելեացն, որ եղեն ի Հայս ի թագաւորն եւ ի նախարարսն, եւ զընկերացն երանելւոյն Նուննեայ...»[2]: Մի փոքր անց՝ «...յիշեաց [=Միհրան], զոր լուաւն վասն Տրդատայ, եթէ ի ճանապարհ ելեալ, կամելով յորս գնալ՝ հասին նմա հրուածք ի Տեառնէ. զոր համարեցաւ, թէ եւ նմա այնպիսի ինչ դիպելոց է»[3]: Եւս քիչ անց՝ «Իսկ երանելւոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս՝ յղեաց առ սուրբն Գրիգոր, եթէ զի՞նչ հրամայեսցէ նմա գործել այնուհետեւ, քանզի յաւժարութեամբ ընկալան վիրք զքարոզութիւն Աւետարանին: Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուռսն, որպէս ինքն արար, եւ կանգնել զպատուական նշան խաչին միջեւ gor տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա»[4]: Այս բնագրերի բնորոշ մանրամասներից (մեր ընդգծած) երեւում է, որ Վրաց լուսաւորիչ արքայ Միհրան/Միրիանի հակումը դէպի Հռիփսիմեանների ընկերակից Նունէ միանձնուհու քարոզած կրօնը (որսի պահի մի դիպուածի արդիւնքում) տեղի է ունեցել Վաղարշապատում Հռիփսիմեանների նահատակութիւնից եւ Տրդատի՝ ճշմարիտ հաւատքի գալուց ոչ շատ անց: Ուշագրաւ է, որ «Քարթլիս Ցխովրեբա»-ն տալիս է Միրիանի որսի օրը՝ 20 Յուլիսի (այսինքն՝ «Ելն ի վիրապէ»-ից ընդամենը մի քանի շաբաթ յետոյ):

---

[1] Տե՛ս, օր.՝ Очерки истории Грузии, т. II, Грузия в IV-X веках, Ред.: М. Д. Лордкипанидзе, Д. А. Мусхелишвили, Тбилиси, 1988, с. 25-31. Հմմ. Հ. Կ. Դավթյան, Վիրքի քրիստոնեացումը. Հայկական դարձերես, – «Վէմ» համահայկական հանդես, Ե (ԺԱ) տարի, 2013, թիւ 3 (43), էջ 21-50:

[2] Խոր., Բ.ձզ, էջ 232; ՄՀ, հտ. Բ, էջ 1982:

[3] Նոյն տեղերում:

[4] Նոյն տեղերում: Գլխաւարտի ամփոփումն է. «[Նունէն] առաքելուհի եղեալ՝ քարոզեաց ի կողարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց եւ Կասբից մինչեւ ի սահմանս Մասքթաց, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (Խոր., Բ.ձզ, էջ 234; ՄՀ, հտ. Բ, էջ 1984):

Արդ՝ եթէ ասուածի հիման վրայ Վրաց դարձը եւս թուագրենք 311-ով, պարտաւո՞ր ենք արդեօք նոյնը պնդել նաեւ Աղուանքի մասին: Թւում է, թէ՝ ո՛չ պարտադիր: Նախ՝ վերջինիս համար նոյնանման փաստեր չեն պահպանուել, բացի այդ, կարող ենք զուգորդաբար համեմատել նաեւ գրերի ստեղծման պատմութեան հետ Ե դ. սկզբներում, երբ նոյնանման ծրագրի շրջանակներում Աղուանքում ամեն ինչ մի փոքր աւելի ուշ կատարուեց, քան Վիրքում: Այսպիսով, Աղուանքի համար աւելի հաւանական է մնում 315 թուականը (դուցէ՝ նոյնը ենթադրելով նաեւ Լազիկա – Եգերք – Կողքիսի համար): Իհարկէ, ինչ-ինչ տրամաբանութեամբ՝ դա կարելի է վերագրել նաեւ 313 թ. կամ 314-ի սկզբին, երբ Աղուանից արքան ստացել էր Տրդատի նամակ-հրաւէրն ու այցելել Հայաստան, այսինքն՝ արդէն տրամադրուել էր այցելութեան բուն նպատակին, այն է՝ դարձին:

Ինչպէս նշեցինք վերեւում, չնայած քրիստոնէութիւն ընդունած Աղուանից թագաւորը, ամենայն հաւանականութեամբ, եղել է Վաչագան Ա Քաջ Արշակունին, սակայն ուշ աւանդոյթը դա կապել է այլ հայ պատմիչներին եւս ծանօթ Ուռնայր արքայի անուան հետ: Աղբիւրագիտական նիւթի պակասի հետեւանքով հնարաւոր է միայն ենթադրութիւններ անել վերջին առասպելի առաջացման հանգամանքների մասին: Տրամաբանօրէն այն կարող էր առաջանալ մի այնպիսի պահի, երբ անհրաժեշտութիւն էր զգացուել Աղուանքի քրիստոնէացման մասին հաւաստի տեղեկութիւնների կորստի պայմաններում բանաձեւել երկրի լուսաւորութեան հանգամանքները առաքելական կամ (եւ) լուսաւորչական ժամանակներում: Ամեն եկեղեցու համար կարեւոր նման ծրագրային բանաձեւումները ենթադրել են այնպիսի մանրամասների արձանագրում, ինչպէս լուսաւորիչ արքայի (կամ այլ աշխարհիկ տիրակալի) եւ առաջին հովուապետի (առաքեալի կամ կաթողիկոսի) անունները: Այդպիսիք եթէ աղբիւրները կամ պատմական յիշողութիւնը չէին պահպանել, ուրեմն պիտի յօրինուէին առկայ հնարաւորութիւնների սահմաններում[1]: Եւ ենթադրելի է, որ է դ. սկզբներին Աղուանից եկեղեցում նմանատիպ եղանակով են ստեղծուել սբ. Թադէոսի աշակերտ Եղիշայ առաքեալի եւ Ուռնայր թագաւորի «ծրագրային» առասպելները:

Նշենք, որ իր հիմնական միտումով Ուռնայրի առասպելը, գոնէ սկզբնապէս, չէր տարբերւում Աղուանքի քրիստոնէացման իրական պատկերից: Այն շեշտում է, որ երկիրը լուսաւորուել է շնորհիւ Հայաստանում Գրիգոր Լուսաւորչի կատարած հրաշագործութիւնների («Առնու եւ զվերստին ծնունդն ի սրբոյն Գրիգորէ՝ Հայոց Լուսաւորչէ եւ գայ լուսազգեստեալ ի Հոգւոյն Սրբոյ, առաւել լուսաւորէ զԱղուանս: ... սակս մեծասքանչ զաւրութեանն, որ կատարեցաւ ի Հայք [հ Հայս]»[2]): Թա-

---

[1] Եկեղեցական առասպելների առաջացման եւ գործառման (վանական դիցաբանութիւն) առանձնայատկութիւնների մասին մանրամասն տե՛ս **Ա. Ս. Սահակյան**, «Պատմութիւն Հացունեաց խաչին» զրույցը եւ նրա տիպաբանությունը, – ՊԲՀ, 1981, հ^{մր} 4, էջ 153-166:

[2] Դասխ., Ա.թ, էջ 14-15, տողատակ: Այս տեղում *a* ձեռագրում ԺԸ դ. դպիր Ղուկիա Անոսն «ուղղումներ» է արել, որոնք թէեւ պատմական հաւաստի փաստերին վերադառնալու միտք են ունեցել, բայց բնագրագիտական առումով աղճատել են ՊԱ-ի բնագիրը, որի մասին կարող ենք դատել *a*-ից 1730-ական թթ. արտագրուած *h* ձեռագրի ընթերցումնե-

գաւուրի մահից յետոյ խնդրել են իբրեւ Աղուանքի «առաջին կաթողիկոս» Լուսաւորչի թոռանը՝ պատանի Գրիգորիսին. «Իսկ զկնի մահուանն սորա [sic! = 373 թ.] խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց»[1]: Որոշ գծերով այս համագաղափարը (կոնցեպցիա) նմանւում է Մովսէս Խորենացու մօտ պահպանուած Վրաց աշխարհի լուսաւորութեան պատմութեանը Նունէ միանձնուհու եւ Միհրան թագաւորի ջանքերով: Համմ., օր.՝ «Վասն որոյ հարցեալ զնա Միհրանայ, ... իսկոյն եհաս առ նա լուր սքանչելեացն, որ եղեն ի Հայս ի թագաւորն եւ ի նախարարսն, եւ զընկերացն երանելւոյն Նունեայ»[2]: Այս ենթադրութեան շրջանակում հնարաւոր է վերականգնել է դ. առաջին տարիների այն իրավիճակը, երբ Հայոց կաթողիկոսութիւնն իրենից անկախացման ուղին բռնած Կիւրիոն Վրաց կաթողիկոսին համոզում էր պահել աւանդական կարգավիճակը, յղում էր անում նաեւ պատմական փաստարկումներին եւ պարբերաբար զուգահեռ բերում Աղուանից կաթողիկոսութեան ենթակայութեան հանգամանքը: Հէնց այս ժամանակաշրջանում պիտի փորձեր լինէին պատմական ճշգրտումներ կատարելու ոչ միայն Վրաց, այլեւ Աղուանից երկրի լուսաւորութեան հանգամանքների վերաբերեալ, որի արդիւնքում էլ, հաւանաբար, առաջացել է Գրիգոր Լուսաւորչի օրօք Աղուանքը քրիստոնէացնելու պատմութիւնը լաւ յայտնի Ուռնայր արքայի կողմից: Իհարկէ, Դասխուրանցու արձանագրած վիճակով՝ Ուռնայրի առասպելն արդէն լրացուած է ինչ-ինչ տարրերով, որոնցով այն «հարստացուել է» աւելի ուշ կամ հէնց ժ դարի պատմիչի գրչի տակ եւ որոնք պիտի այդ առասպելը ծառայեցնէին Աղուանից եկեղեցու բացարձակ ինքնագլխութեան միտումներին (օր.՝ «եւ այսք ի միում ժամանակի եղեն հրաշք յաստուածուստ», կամ՝ «ո՛չ թէ ի հարկէ ինչ կամ թէ աւագ գոլ զՀայս ըստ զԱղուանս հաշուեցաւ, այլ սակս մեծասքանչ զաւրութեանն, որ կատարեցաւ ի Հայս, եղեւ սոցա կամաւ հնազանդել արժանաժառանգ զարմին սրբոյն Գրիգորի. կոչեցին եւ հաճեցան»):

Ի դէպ, Ուռնայրի մասին տեղեկութիւնները շարադրուած են ոչ միայն Դասխուրանցու գրչին պատկանող Ա.թ գլխում կամ յաջորդող գլուխների առանձին

րով (**Ա. Հակոբյան**, Մովսես Կաղանկատվացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, – ԲՄ, 15, Եր., 1986, էջ 113; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 152-153). *a*-ի այլեւայլ յետնամոյծ թերիներն առաջինը նկատած Խ. վրդ. Դադեանը հրատարակել է նաեւ 1676 թուականի նորոգման ժամանակ կորսուած մի ամբողջ թերթի բնագիրը *Բ* խմբի գրչագրերից (**Խ. Վ.**, Մովսէս Կաղանկատուացւոյ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս Մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները, – «Արարատ», 1895, էջ 235-238, 333-348, 388-390, 424-426): *a*-ի այդ թերի վիճակից ԺԸ-ԺԹ դդ. բազմաթիւ ընդօրինակութիւններ են արուել, որոնք էլ հիմք են ծառայել 1860 թ. Մոսկուայի ու Փարիզի տպագրերի եւ 1861 թ. ռուսերէն թարգմանութեան համար: Ցաւօք, ԺԸ դարի փոփոխուած բնագիրն է հիմք դարձել նաեւ 1983 թ. քննական հրատարակութեան համար (*Բ* խմբի բնագիրը եւ *h*-ի ընթերցումներն իջեցնելով տողատակ), թէպէտ ուղղումները կատարել էր արդէն 1961 թ. անգլերէն թարգմանութեան աշխատասիրող Չարլզ Դովսեթը (The History of the Caucasian Albanians by **Movsēs Dasxurançi**, p. XIV).

[1] **Դասխ.**, գլ. Ա.թ, էջ 14-15:

[2] **Խոր.**, Բ.ձգ, էջ 232; ՄՀ, հտ. Բ, էջ 1982:

արտայայտութիւններում[1], այլեւ բաւական մանրամասն՝ Ա.ժա գլխի սկզբում, որը ժ դ. հեղինակի կողմից բառացի արտագրուած մի երկ է՝ «Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ» վերտառութեամբ[2]: Նրա լեզուաոճական առանձնայատկութիւնների քննութիւնը թոյլ է տալիս չկասկածել, որ դա, իրօք, Ե դ. երկրորդ կէսի երկ է (բաւական զուգորդուած Եղիշէի պատմութեան լեզուին ու ոճին), բայց կասկած է յարուցում նրա սկզբում Ուռնայր թագաւորի յիշատակութիւնը՝ իբրեւ Աղուանքը քրիստոնէութեան բերած արքայի: Եթէ ընդունենք, որ Ուռնայրի «սրբացումը» կատարուել է Վաչէի ապստամբութեան ժամանակներում կամ դրանից առաջ եւ արտացոլուել Գիւտ Արահեզացի կաթողիկոսի (461-478) կամ իր որեւէ ժամանակակցի երկում, ապա ստիպուած պիտի լինենք համարել, որ Աղուանքը դարձի բերած իրական թագաւորի անունը Ե դ. երկրորդ կէսին արդէն մոռացուել էր, բայց նոյն ժամանակ անհրաժեշտութիւն էր առաջացել՝ բանաձեւելու Աղուանից դարձի պատմութիւնն անգամ թագաւորի անունը յօրինելու պայմանով, իսկ այդ ժամանակից քիչ անց Ուռնայրի՝ իբրեւ Աղուանից լուսաւորիչ թագաւորի պատմութիւնն անտեսել էր «Վաչագանի վէպ»-ի հեղինակը: Նման լուծումը հաւանական համարուել չի կարող, փոխարէնը՝ Վաչէին ուղղուած «Թղթում» բերուած դարձի պատմութեան մանրամասների քննութիւնը յուշում է այլ հնարաւոր լուծում: Գիւտի ներկայացրած քրիստոնեացման պատումն իր գլխաւոր գծերով համընկնում է Աղուանից դարձի իրական պատմութեան հետ, որը շարադրել է Լուսաւորչի մեծագործութիւնները հաւաստի ամփոփած «Գրիգորի վարք»-ը: Ինչպէս տեսանք, ըստ «Վարք»-ի՝ Տրդատ արքայի կրտսեր դաշնակից Վրաց, Աղուանից եւ Լազերի թագաւորները ժամանել են Հայաստան, հայ աւագանու հետ Գրիգորին ճանապարհել Կեսարիա (314 թ. Սեպտեմբեր), ապա նրա ձեռքով մկրտուել Արածանիի ջրերում (315 թ. գարնան վերջ), որից յետոյ Լուսաւորիչը եպիսկոպոսներ է ուղարկել այդ երկրներ, ընդ սմին՝ «բարեպաշտ այր Թովմային [Θωμᾶν ὅσιον ἄνδρα]՝ Սատալա փոքր քաղաքից»՝ Աղուանք[3]: Գիւտի «Թղթում» եւս ասւում է, որ Աղուանից թագաւորն իր նախարարների ու զօրքի հետ միասին եկել է Հայոց ար-

---

[1] Օր.՝ Ա.ժ գլխում, որը եւս արտագրուած է Եղիշէից. «Զի էր նա [*bclrv չիք* նա = Վաչէ արքան] նոցա քեռորդի եւ յառաջ լեալ էր քրիստոնեայ ըստ հայրենական աւանդին, *զոր Ուռնայրն հաստատեաց*, եւ անաւրէնն Ցազկերտ արար բռնութեամբ զնա մոգ»: Ընդգծուած բառերն այստեղ Դասխուրանցու յաւելումն են Եղիշէից քաղուած հատուածին:

[2] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 202. Գիւտ Արահեզացու «Թղթի» քննական բնագիրը հրատարակել ենք «Մատենագիրք Հայոց» ժողովածոյի Ա հատորում (Անթիլիաս, 2003, էջ 1075-1090): Այն ամբողջապէս ջատագովական է եւ մանրակրկիտ ու բարձր ոճով գովաբանում է յանուն քրիստոնէութեան Սասանեանների դէմ ապստամբած Աղուանից Վաչէ թագաւորին՝ յորդորելով նրան հաւատարիմ մնալ իր զոհողական պահուածքին: Երկը որեւէ տեղեկութիւն չի յայտնում 459-461 թթ. ապստամբութեան մասին, որի միակ աղբիւրը մնում է Եղիշէի պատմութեան դրուագը (յեղ. Է, էջ 197-199; ՄՀ, հտ. Ա, էջ 756-758): Ի դէպ, Աղուանից ապստամբութեան շարադրանքում Եղիշէն չի տալիս թագաւորի անունը: Մովսէս Դասխուրանցին բառացի ընդօրինակել է նրա դրուագն իր Ա.ժ գլխում՝ սկզբնաղբյուրի մասին յղում չտալով եւ անուանելով թագաւորին *Վաչէ*: Պարզ է, որ այդ անունը նա գիտէր «Վաչագանի վէպ»-ից եւ Գիւտի «Թղթից»:

[3] Տե՛ս **G. Garitte**, Documents pour l'étude du livre d'Agathange, p. 101-102.

քայ Տրդատի մօտ եւ 40-օրեայ պահքից յետոյ մկրտուել սուրբ ջրում Գրիգոր Լուսաւորչի ձեռօք («...էջ թագաւորն յամենասուրբ ջուրն եւ ամենայն զաւրքն ընդ նմա»), ապա շարունակւում է. «...ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հռոմէ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքային: Այսու երկնաւոր բարեաւք եկն Ուռնայր արքայ, եմուտ յաշխարհդ Աղուանից, ուսոյց եւ կատարեաց զնոսա առաքելական կանոնաւք»[1]: Նմանութիւնը «Վարք»-ի հաղորդածի հետ ակնյայտ է, եւ Ուռնայրի անուան յիշատակութիւնը հէնց այդ պատճառով՝ աւելի հակասական: Տուեալ հակասութիւնը ժամանակին պատճառ է եղել Ն. Ակինեանի համար՝ անհաւաստի համարելու ամբողջ Գիւտի «Թուղթը»՝ իբրեւ է կամ Ը դարերում ստեղծուած[2]: Սակայն ներկայումս աւելի հաւանական է ենթադրել, որ անհաւաստի է ոչ թէ «Թուղթը», այլ միայն նրանում Աղուանից թագաւորի «Ուռնայր» անուան օգտագործումը (երիցս): Թերեւս, է դարից յետոյ, երբ Աղուանից դարձն արդէն «պաշտօնապէս» կապուել էր Խորենացու մօտ Դ դարի կտրուածքում յիշուած միակ Աղուանից թագաւորի՝ Ուռնայրի հետ, վերջինիս սրբացուած անունը ինչ-որ մի ուսեալ գրչի կողմից մուծուել է Գիւտի «Թղթի» բնագիր: Դա կատարուել է կա՛մ իրական թագաւորի առկայ անուան փոխարէն, կա՛մ այդ անուան բացակայութեան պարագայում. պարզ է, որ եթէ բնագրում եղած լիներ Աղուանից լուսաւորիչ արքայի անունը, ապա դա պիտի լիներ Վաչագան Քաջը, ինչպէս ճշտեցինք վերեւում:

«Վաչագանի վէպ»-ը կանոնաւոր տեղեկութիւններ չի հաղորդում Վաչագան Բարեպաշտին նախորդած թագաւորների գործերի մասին. հեղինակին լրիվ բաւարարել է նրանց անունների թուարկման կտորում համառօտ տրուած գնահատականը[3]: Այդ պատճառով Վաչագանին նախորդած թագաւորների մասին միայն պատահական եւ ոչ կանոնաւոր տեղեկութիւններ են պահպանուել երկի առանձին դրուագներում: Նման մի յիշատակութիւն առկայ է նաեւ Ե դ. առաջին կէսում թագաւորած Եսվաղէնի մասին (Ա.իգ գլխի վերնագրում), որի ոչ օրինական որդի («պոռնկորդի») է անուանւում Ցրի քաղաքի «գործակալ» կամ «կողմնապահ» Խոճկորիկ նախարարը: Տուեալ գլխագիրը, որն իրականում «Վաչագանի վէպ»-ի բնագրի մի մասն է, եւ գլխի առաջին արտայայտութիւնը տեղեկացնում են. «Եւ մինչ դեռ զայս ամենայն նշանագործութիւնս [bclrv չիf նշանագործութիւնս] պատմէին առաջի արքային, լսելի լինէր նմա [a չիf լսելի ... նմա] ի սոյն խորհուրդ տեսիլ մի

---

[1] **Դասխ.**, Ա.ժա, էջ 19-20:

[2] **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի)..., էջ 97-98, 115: Ցաւօք, նոյնն էր նաեւ մեր գրքում (**А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 126-127, 182-184).

[3] Հմմ. «Ցորոց բազումք ի սոցանէ աստուածասէր եւ բարեպաշտ վարուք կեցեալ՝ տարան զիւրաքանչիւր ժամանակի վաղճան» (**Դասխ.**, Ա.ժե, էջ 41-42): Պատճառը ջատագովական «վեպի» յուրահատուկ սկզբունքն է՝ իր հերոսին բարձր ներկայացնել բոլորից, անգամ նրա իսկ նախնիներից, որը փաստօրէն արձանագրուած է հէնց շարունակութեան մէջ. «...սակայն ոչ ինչ ումեք ի նոցանէ այսպիսի աստուածային եւ հոգեւոր ծածկեալ գանձ յայտնեալ ընձեռնեցաւ, որպէս վերջին Վաչագանայ» (էջ 42): «Վէպ»-ը բացառութիւն չի արել անգամ 459-461 թթ. ապստամբութեան հերոս Վաչէ Բ-ի համար, որին այնքան պատուաբեր բնութագրումների էր արժանացրել Հայոց Գիւտ կաթողիկոսը:

եւ խոճկորիկայ՝ պոռնկորդւոյն [bclrv խոճկորիկ պոռնկորդի] Եսվաղէնայ արքային Աղուանից [bclrv չիf Աղուանից], որ էր կարգեալ կողմնապահ: Եւ պատմէ արքայի այրն այն՝ խոճկորիկ անուն, որում ի Յոի [bclrv որոյ ի Յրի] յայտնեցան Ջաքարիա սուրբն եւ Պանդալէոն [a երանելին Ջաքարիաս եւ սուրբն Պանդալիոն յայտնեցան փխ յայտնեցան... Պանդալէոն]» (էջ 77-78): Այս աղբիւրագիտական փաստով Մաշտոցին ժամանակակից Եսվաղէնի թագաւորութեան վերջին տարիները հնարաւորինս մօտենում են Վաչագան Բարեպաշտի ժամանակներին:

Իսկ այդ թագաւորի գահակալութեան առաջին տարիները եւ աղուաներէնի համար Մաշտոցի կողմից գրերի ստեղծումից յետոյ վերջինիս երկրորդ հիւսիսային ուղեւորութիւնն Աղուանք ու հանդիպումը Երեմիա եպիսկոպոսի եւ Եսվաղէն արքայի հետ (ում Կորիւնը կոչում է Արսվաղ, Մովսէս Խորենացին՝ Արսվաղէն, իսկ Պետրոս Սիւնեցին ու Մովսէս Դասխուրանցին՝ Եսվաղէն) մասնագէտները, որպէս կանոն, թուագրում են մօտաւորապէս 6 դ. 10-ական թթ. կէսից մինչեւ 20-ականների կէսն ընկած ժամանակով[1]: Բայց սկզբնաղբիւրների համադիր քննութեան հիման վրայ անհրաժեշտ է նախապատուութիւնը տալ ժամանակակից ու եթէ ոչ ականատես, ապա գոնէ ականջալուր Կորիւնի անմիջականութեամբ տոգորուած ու յստակ վկայութիւններին եւ, չշփոթուելով Խորենացու՝ աւելի ընդհանուր գծերով մատուցուած շարադրանքում դէպքերի այլ դասաւորութիւնից, վերանայել Մաշտոցի Բուն Աղուանք ու Բաղասական հասնելու ժամանակի մասին աւանդական պատկերացումները եւ վարդապետի այդ ուղեւորութիւնը վերագրել Վռամշապուհ թագաւորի որդի Արտաշէսի վեցամեայ գահակալութեանը (422-428), այսինքն՝ 428-ի Սասանեան վարչական ռէֆորմին յաջորդած ժամանակին[2]: Իր երկրորդ հիւսիսային ուղեւորութիւնից մի քանի տարի առաջ Մաշտոցը, ըստ իր կենսագիր Կորիւնի, այցելել էր Վիրք, հանդիպել այդ երկրի Բակուր թագաւորին ու Մովսէս եպիսկոպոս(ապետ)ին, եւ Ջաղայ անունով «թարգմանի» օգնութեամբ ստեղծել ու տարածել վրացերէն գիրը[3]: Ընդ որում՝ Վիրքից վերադարձին նրան դիմաւորել է, աղբիւրի հաղորդմամբ՝ միայն Սահակ կաթողիկոսը, առանց Հայոց թագաւորի յիշատակութեան[4]: Դրա հիման վրայ պատմագրութեան մէջ իրաւացիօրէն եզրակացուել է, որ Մաշտոցի առաջին հիւսիսային ուղեւորութիւնը տեղի է ունեցել Հայոց

---

[1] **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի)..., էջ 155 («415-ին մօտաւորապէս»); **Հ. Աճառյան**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 381 («Եթէ Աղուանից քարոզութեան համար տանք մի տարի /423 թ./, յաջորդ տարին պէտք է դնել Վրաստան, ուր նոր էր թագաւոր նստել Արչիլը»); Очерки истории СССР, Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР III-IX вв., Москва, 1958, с. 326 (ըստ հեղինակ Ս. Տ. Երեմեանի՝ 415-420 թթ. միջեւ); Հայաստանի հարակից երկրների պատմություն, Եր., 1992, էջ 179 (ըստ գլխի հեղինակ Հ. Սվազեանի՝ 510-ական թթ.):

[2] Հմմ. **Ա. Ցակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը, սն. 86-91; նոյնի՝ Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները, – Միջազգային գիտաժողով՝ նվիրուած Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին. Երեւան, 12-17 սեպտեմբերի, 2005 թ., Զեկուցումների ժողովածո, Եր., 2006, էջ 122-131:

[3] **Կորիւն**, գլ. ԺԵ, էջ 62; ՄՀ, հտ. Ա, էջ 243, նախ. ԺԶ.1-8:

[4] **Կորիւն**, գլ. ԺԵ, էջ 64; ՄՀ, հտ. Ա, էջ 244, նախ. ԺԶ.11:

գրի ստեղծման ռահվիրայ Վռամշապուհ արքայի վախճանից (415 թ.) ու նրա եղբայր Խոսրով Գ-ի՝ նոյն կամ յաջորդ տարում աւարտուած երկրորդ կարճատեւ գահակալութիւնից յետոյ եւ մինչեւ 422 թուականին Վռամշապուհի որդի Արտաշէս Գ-ի գահ բարձրանալը[1]*: Թերեւս, կարելի է բացառել նաեւ Խոսրովից յետոյ Հայոց գահին բազմած Պարսից արքայազն Շապուհի 3-4 անփառունակ տարիները եւ Մաշտոցի առաջին հիւսիսային ուղեւորութիւնը վերագրել 419-421 թթ. միջակայքին կամ անգամ այդ ժամանակամիջոցի աւարտին:*

Վիրքից վերադառնալուց որոշ ժամանակ անց՝ արդէն Հայաստանի կայսերահպատակ հատուածում ծաւալած գործունէութեան օրերին[2]*, Մաշտոցն իր մօտ յատուկ եկած՝ ազգութեամբ աղուան*[3] *Բենիամին երէցի օժանդակութեամբ ստեղծեց նաեւ աղուաներէն լեզուի գիրը («Յայնմ ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց՝ աղուան ազգաւ, Բենիամէն անուն: Եւ նորա հարցեալ եւ քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին՝ առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում եւ յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն, կարգեալ եւ հաստատեալ կշռէր»)*[4]*: Ըստ Կորիւնի՝ կայսրութիւնից Մաշտոցի վերադարձի պահին Հայոց արքան Արտաշէս Գ-ն էր (422/423-428)*[5]*: Ենթադրելի է, որ այն ամենայարմար պահը, որին հնարաւոր է վերագրել Մաշտոցի եւ Սահակի քաղաքական ու լուսաւորական գործունէութեան ակտիւացումը հիւսիսում եւ արեւմուտ-*

---

[1] Հմմ. **Հ. Աճառյան**, Հայոց գրերը, էջ 174-179:

[2] Մաշտոցի արեւմտեան ուղեւորութեան խնդիրների եւ ժամանակի մասին տե՛ս **Կ. Իւզբաշեան**, Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, էջ 199-201; **Վ. Վարդանյան**, «Կէս ազգին Հայոց» լուսավորության պարագաների շուրջ, – ՊԲՀ, 2005, հմր 2, էջ 210-215; **K. Yuzbašyan**, L'invention de l'alphabet arménien: De la lange parlée à la lange écrite, – RÉArm., t. 33, 2011, p. 106-111; L'Alphabet arménien dans l'histoire et dans la mémoire. Vie de Machtots par **Korioun**. Panégyrique des saints traducteurs par **Vardan Areveltsi**. Textes traduits et annotés par **J.-P. Mahé**, Paris, 2018, p. 91-108.

[3] Կրկնենք, որ այս «աղուան» եզրոյթի տակ պիտի հասկանանք ոչ թէ կազմաւորուած էթնոս, այլ Աղուանից թագաւորութեան հիմնական բնակիչների՝ էթնոհամախմբման որոշ աստիճանի հասած հաւաքական, էթնոպոտեստար ընդհանրութիւնը, իսկ «աղուաներէնի» տակ՝ էթնիկական աւարտուն համախմբման այդպէս էլ չհասած ցեղային էթնոսներից մէկի՝ Կովկասեան լեզուաընտանիքի Լեզգիական ենթախմբին պատկանող մի լեզու, որի համար ստեղծուեց 52 տառով այբուբենը (տե՛ս **Ա. Հակոբյան, Հ. Գալստյան**, Էթնալեզուական գործընթացները Բուն Աղուանքում, էջ 92-93; **A. Akopyan, A. Galstyan**, Concerning the study of ethnic processes in the Caucasian Albania, p. 1-12; **Հ. Գալստյան**, Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Եր., 2002, էջ 90-98, 147-157; **А. Акопян**, К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании, с. 34-38; **Г. Айвазян**, – Об удинской этноконсолидации собственно албанцев-христиан в эпоху средневековья, – «Հայաստանը եւ Քրիստոնյա Կովկասը». Համրապետական գիտաժողով՝ ընծիրված Կովկասյան Աղուանքում եւ Վրաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին. Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Եր., 2015, էջ 20-44:

[4] **Կորիւն**, գլ. ԺԶ, էջ 68; ՄՀ, հտ. Ա, էջ 245-246, նախ. ԺԷ.22 (տողատման եւ կէտադրման փոքր սրբագրումներով): Աղուանից այբուբենի մասին տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց գրերը, էջ 677-686; L'Alphabet arménien dans l'histoire et dans la mémoire, p. 82-90.

[5] **Կորիւն**, գլ. ԺԶ, էջ 70; ՄՀ, հտ. Ա, էջ 246, նախ. ԺԷ.24 («բազում աշակերտաւք գայր, անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց. եւ հասեալ ի Նոր Քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին»):

քում, Մեծ Հայքում Արշակունիների թագաւորական իշխանութեան վերականգնմանն ուղղուած Սահակ Պարթեւի եռանդուն գործունէութեան ժամանակն է (արձանագրուած՝ Խորենացու մօտ)[1]: Ըստ այդմ՝ Մաշտոցի ուղեւորութիւնները դէպի Վիրք, ապա առանց մեծ ժամանակային միջակայքի՝ դէպի Կոստանդնուպոլիս ու կայսերահպատակ հայկական նահանգներ, հաւանական է թուագրել Արտաշէս Գ-ի իշխանութեան սկզբով եւ նախօրեակով, այսինքն՝ 420/421-423 թթ.[2]:

Իր երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ընթացքում Մաշտոցն ունենում է ոչ թէ մէկ-երկու, այլ չորս գլխաւոր կանգառ: Դրանցից առաջինը Բուն Աղուանքում ու Բաղասականում էր (Կուրի ձախափնեակ), երկրորդը՝ նրանց հարաւից սահմանակից Գարդմանաձոր գաւառում (Կուրի աջափնեակ), երրորդը՝ Վիրքում, իսկ չորրորդը՝ վերջինիս հարաւից սահմանակից Տաշիր գաւառում (Գուգարաց բդեշխութիւն): Բուն Աղուանքի մասին Կորիւնի հաղորդումն է. «Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհն, եւ հասեալ ի թագաւորական տեղիսն՝ տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ նոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատաւք հանդերձ... Իսկ իբրեւ հրամանն այն արդեամբք եւ գործովք յանկ ելանէր, ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր... Դարձեալ առաւել եւս երկիւղացն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր ... հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի: Եւ ... ձեռնտու եւս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին, որում անուն Մուշեղ կոչէին: Հրաժարէր ապա եւ ի թագաւորէն եւ յեպիսկոպոսացն եւ յամենայն եկեղեցւոյն Աղուանից: Եւ զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանէր, հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն, որում անուն Յովնաթան կոչէին...»[3]: Աղուանքից յետոյ այցելելով Գարդմանաձոր՝ Մաշտոցը հանդիպում է գաւառի իշխան Խուրսին[4], ապա հասնում է Վիրք, ուր արդէն թագաւորում էր Արձիւղը (=Արչիլ)՝ նախորդ ուղեւորութեան պահի Բակուրի փոխարէն («Առ որով ժամանակաւ Արձիւղ անուն թագաւորեալ [Վրաց], որոյ

---

[1] **Խոր.**, Գ.ծը, էջ 337; ՄՀ, հտ. Բ, էջ 2092:

[2] Հմմ. **Հ. Աճառյան**, Հայոց գրերը, էջ 190-213:

[3] **Կորիւն**, գլ. ԺԷ, էջ 70-72; ՄՀ, հտ. Ա, էջ 246-247, նախ. ԺԸ.1-8: Խորենացու պատկերացմամբ՝ Մաշտոցի այցելութիւնն Աղուանք եւ աղուանից գրի ստեղծումը եղել են դէպի Վիրք առաջին ուղեւորութիւնից յետոյ (**Խոր.**, Գ.ծդ, էջ 329; ՄՀ, հտ. Բ, էջ 2083):

[4] **Կորիւն**, գլ. ԺԸ, էջ 72; ՄՀ, հտ. Ա, էջ 247, նախ. ԺԹ.1-3 («Եւ հանդէպ հասեալ գայր Գարդմանական ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում [անուն] Խուրս կոչէին, եւ ... առաջի դնէր զանձն վարդապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով: Առաւելագոյն եւս վայելեալ ի հիւթ եւ ի պարարտութիւն վարդապետութեանն՝ յուղարկէ զերանելին...»): Խորենացու պատկերացմամբ (գլ. Գ.ծդ, էջ 329)՝ Մաշտոցի այցելութիւնը Գարդման կտրուած է դէպի Աղուանից թագաւորութիւն ուղեւորութիւնից եւ ներկայացուած է մի ուրոյն հատուածում, որտեղ, բացի նրանից, նկարագրուած են նաեւ այցելութիւնները Բաղասական (Մուշեղ եպիսկոպոսի յիշատակմամբ) եւ Գուգարքի Տաշիր գաւառ՝ Աշուշայ բդեշխի մօտ. վերջինիս հետ կապուած՝ պատմահայրը տուել է նաեւ նշում՝ «առ որով ժամանակաւ Արձիլ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց»:

առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն...»)[1]: Վերջապէս Բուն Վիրքից յետոյ վարդապետը, ըստ Կորիւնի յստակ շարադրանքի, մտնում է նաեւ Գուգարքի Տաշիր գաւառ՝ տեղի Աշուշայ «իշխանի» մօտ[2]: Եւ այս երկար ուղեւորութիւնից վերադարձին Մաշտոցին դիմաւորում է լոկ Սահակ Պարթեւը, այսինքն՝ առանց Հայոց թագաւորի ընկերակցութեան[3]: Եւ դա բաւարար հիմք է թւում՝ համարելու, որ վարդապետի երկրորդ հիւսիսային ուղեւորութիւնը թուագրելի է Սասանեանների կողմից Հայոց թագաւորութիւնը 428-ին վերացնելուց յետոյ ընկած ժամանակով (պարզ է նաեւ, որ այն միաժամանակ ընկնում է 431 թ. տեղի ունեցած Եփեսոսի տիեզերական ժողովից առաջ, քանի որ վերջինիս մասին հիւսիսային ուղեւորութիւնից անմիջապէս յետոյ են յիշատակում է՛ւ Կորիւնը, է՛ւ Խորենացին[4]): Այդ տարի Սասանեանները գահընկէց արեցին Հայոց վերջին Արշակունի արքային, եւ, բացի այդ, հանելով Հայաստանից՝ Ուտիք նահանգը (իր, ըստ ամենայնի՝ կենտրոնական Գարդման գաւառով) միացրեցին Աղուանքին (հարեւան Արցախի հետ նոյնն արուեց 451 թ.՝ վարդանանց ապստամբութիւնը ճնշելու պահին). յիշենք նաեւ, որ Գուգարք նահանգը (իր, անշուշտ, կենտրոնական Տաշիր գաւառով) Մեծ Հայքի կազմից հանուել եւ հարեւան Վիրքին էր միացուել քիչ աւելի վաղ՝ 387 թ. Կայսրութեան եւ Իրանի միջեւ երկրի բաժանումից յետոյ (եւ ոչ ուշ, քան մեզ հասած «Գահնամակի» եւ Ուխտանէս պատմիչի մօտ պահպանուած «30 եպիսկոպոսութիւնների ցուցակի» կազմման ժամանակը)[5]:

Կորիւնի տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ 428 թ. Սասանեան վարչական ռէֆորմի արդիւնքում ձեւաւորուած նոր վարչական միաւորների՝ Առան եւ Վարջան մարզպանութիւնների կազմում նշուած նահանգները՝ Ուտիքը եւ Գուգարքը, բարձր ինքնուրոյնութեան կարգավիճակ են ունեցել, քանի որ պատմիչի շարադրանքում, ըստ էութեան, չի զգացւում որեւէ ոճական տարբերութիւն Մաշտոցի

---

[1] **Կորիւն**, գլ. ԺԸ, էջ 72; ՄՀ, հտ. Ա, էջ 247, նախ. ԺԹ.5:

[2] **Կորիւն**, գլ. ԺԸ, էջ 72-74; ՄՀ, հտ. Ա, էջ 247, նախ. ԺԹ.6 («Ցայնժամ իշխանին Տաշրացւոց, առն պատուականի եւ աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով, եւ նորա ամենասփիւռ վարդապետութիւնն՝ ոչ ինչ պակասութեամբ, քան զայլոցն գաւառաց՝ անցուցեալ...»):

[3] **Կորիւն**, գլ. ԺԸ, էջ 74; ՄՀ, հտ. Ա, էջ 247, նախ. ԺԹ.7 («դառնայր ի կողմանս Հայոց Մեծաց, եւ եկեալ ի սովորական տեղիսն, զընդելական ողջոյնն սրբոյն Սահակայ եւ ամենայն պատահելոցն տուեալ՝ պատմէր նոցա վասն այնր եւս նորագործ իրացն»):

[4] **Կորիւն**, գլ. ԺԹ, էջ 76; ՄՀ, հտ. Ա, էջ 248, նախ. Ի.6; **Խոր.**, Գ.կա, էջ 342-343; ՄՀ, հտ. Բ, էջ 2097-2098:

[5] Մանրամասն տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Հյուսիս-արեւելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, – ԲԵՀ, 1975, հմր 2, էջ 149-164; **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի թագաւորության հյուսիս-արեւելյան մարզերի վարչա-քաղաքական կացութիւնը 387-451 թթ., – ԲԵՀ, 1976, հմր 2, էջ 77-95; **Б. Арутюнян**, Административное деление закавказских владений, с. 19-35 (այս երկուսի վերահրատ. տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայոց արեւելից կողմերի եւ Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր. Հոդվածների ժողովածո, կազմեց՝ **Ա. Ս. Եղիազարյան**, Եր., 2016, էջ 100-122 եւ 13-29); **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 109-114; **И. Г. Семенов**, Этнополитическая история Восточного Кавказа в III-VI вв.: Автореф. дисс. ... канд. ист. наук, Махачкала, 2002, с. 14; **Cl. Mutafian**, L'Arménie du Levant, t. I, p. 278.

ընդունելութիւնն իրականացնելու նկարագրութիւնների միջեւ՝ մի կողմից՝ թագաւորական իշխանութեան կարգավիճակ ունեցող Բուն Աղուանից եւ Վրաց արքունիքներում, իսկ միւս կողմից՝ Գարդման եւ Տաշիր գաւառների իշխանների՝ Խուրսի եւ Աշուշայի կողմից: Բացի այդ, կենսագիր պատմիչի տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Մաշտոցի՝ իւրօրինակ զոյգերով կատարուած՝ դէպի Աղուանք – Գարդման, եւ ապա՝ Վիրք – Գուգարք (նորօրեայ եզրոյթով ասած՝ «մաքոքային») այցելութիւնների գլխաւոր նպատակը, ըստ երեւոյթին, պարզապէս լուսաւորական չի եղել (ինչպիսին որ, թերեւս, աւելի շատ է՛ր հիւսիսային առաջին ուղեւորութեան պարագայում դէպի Վիրք): Ենթադրելի է, որ Մաշտոցի վերը նշուած «մաքոքային հանդիպումների» արդիւնքում է լուծուել պետականութիւնը հէնց նոր կորցրած հայ ժողովրդի եւ Հայոց եկեղեցու համար չափազանց կարեւոր ազգային-ռազմավարական մի խնդիր, այն է՝ Վիրքի եւ Աղուանքի թագաւորութիւնների եւ այս կամ այն չափով նրանց ենթակայացուած էթնիկապէս հայկական շրջանների միջեւ ձեւաւորուելիք յարաբերութիւնների կոնկրետ պայմանների ճշտումը: Ըստ ամենայնի՝ դրանից յետոյ է, որ պետական աջակցութիւնից արդէն զրկուած հայերէնը պահպանում է իր՝ նորօրեայ եզրոյթով՝ «պետական» լեզուի կարգավիճակը Ուտիքում եւ Գուգարքում, եւ բացի այդ, ամենայն հաւանականութեամբ, շարունակում մնալ որպէս ժամասացութեան երկրորդ լեզու Բուն Աղուանքում ու Վիրքում (աղուաներէնի ու վրացերէնի կողքին):

Ըստ Մովսէս Խորենացու՝ Եսվաղէնի մօտ հասնելուց յետոյ Մաշտոցը Սիւնիքից կանչել է տալիս Բենիամին «շնորհաւոր թարգմանին» եւ նրան մասնակից դարձնում Բուն Աղուանքում իր յաջող գործունէութեանը (ըստ մեզ հասած բնագրի՝ նաեւ տեղում գրերի ստեղծմանը). ընդ որում՝ Պատմահայրն այդ մասին գրում է իր առաջին հատուածում՝ դէպի Վիրք Մաշտոցի առաջին ուղեւորութեան նկարագրութիւնից յետոյ[1]: Ուշադիր դիտարկման դէպքում կարելի է նկատել, որ այս տեղեկութիւնն իր հիմնական գծերով իրականում լրացնում է Կորիւնին, այլ ոչ թէ հակասում նրա վկայութեանը՝ աղուաներէն գրերի ստեղծման նպատակով Մաշտոցի եւ աղուան երէց Բենիամինի աւելի վաղ հանդիպման մասին[2]: Այդ դէպ-

---

[1] **Խոր.**, Գ.ծդ, էջ 329; ՄՀ, հտ. Բ, էջ 2083. «Եւ ինքն յԱղուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր ընդա եւ առ եպիսկոպոսապետն Երեմիայ, որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա՝ ետուն մանկունս ընտիրս: Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր, ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ, որովք ստեղծ [*var.* եստեղծ, էստեղծ] զնշանագիրս կոկորդախաւս, աղխազուր, խժական, խեցբեկագունիհ այնորիկ Գարգարացւոց լեզուին: Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զՑովնաթան, միանգամայն եւ քահանայս կացուցեալ դրանն արքունի՝ ինքն դառնայ ի Հայս»: Պատմաճոր տեղեկութիւնը կրկնում են Մովսէս Դասխուրանցին, Ստեփաննոս Օրբէլեանը (յղելով նաեւ Պետրոս Սիւնեցուն) եւ ուրիշ ուշ հեղինակներ (տե՛ս **Դասխ.**, Բ.գ, էջ 117-118; **Օրբ.**, գլ. ԺԵ, էջ 39-40):

[2] Նման հակասութեան պատճառով Պատմաճոր վկայութիւնն ամբողջութեամբ խոտանում էր, օր.՝ Հր. Աճառեանի կողմից (տե՛ս Հայոց գրերը, էջ 216-217): Ուրիշ մասնագէտներ սովորաբար «մոռանում են» Կորիւնի վկայութեան մասին, կամ դրա հետ կապում ինչ-ինչ ֆանտաստիկ մեկնաբանութիւններ (օր.՝ «վարկածներ» աւարական եւ գոթական գրերի ստեղծմանը Մաշտոցի մասնակցութեան մասին):

քում ստացւում է հետեւեալ պատկերը՝ Վրաց գիրը հէնց տեղում, Ջաղայ թարգմանի հետ միասին ստեղծելուց ու ներդնելուց անմիջապէս յետոյ կամ, յամենայն դէպս՝ միեւնոյն ծրագրային մտայղացման շրջանակներում Մաշտոցը ո՛չ միայն Բենիամինի օժանդակութեամբ ստեղծել է նաեւ Աղուանից գրերը (կոնկրետ տեղը՝ Հայաստանի կայսերահպատակ հատուածում), այլեւ դրանք, հաւանաբար, փորձել է նոյն Բենիամինի միջոցով ներդնել Բուն Աղուանքում; ենթադրելի է, որ առանց վարդապետի ներկայութեան Բենիամինն այնտեղ անյաջողութեան է մատնուել, որից յետոյ տեղափոխուել է Սիւնիք ու ինչ-որ ծառայութեան անցել Նահանգի եպիսկոպոս Անանիայի մօտ (ով Մաշտոցի աշակերտներից էր)՝ հաւանաբար, զբաղուելով նաեւ թարգմանութիւններով; եւ այդպէս՝ մի քանի տարի, մինչեւ նորից Աղուանից թագաւորութեան մայրաքաղաք է հրաւիրուել 428-430 թթ. միջեւ այնտեղ եկած Մաշտոցի կողմից; Բենիամինը պատրաստակամօրէն կապաղակ է հասել (իր բարերարներ Սիւնեաց Վասակ իշխանի ու Անանիա եպիսկոպոսի օժանդակութեամբ) եւ արդէն Մաշտոցի գլխաւորութեամբ աւարտին հասցրել աղուաներէն գրի ներդրման առաքելութիւնը: Կորիւնն այս վերջին պահին չի տալիս Բենիամինի անունը, բայց փոխարէնը հաղորդում է, որ աղուան իշխանաւորները Մաշտոցի հետ միասին անմիջապէս ձեռնամուխ եղան աղուաներէն Սուրբ Գրքի քարոզին[1], որն ուրեմն արդէն թարգմանուած է եղել, եւ ենթադրաբար՝ հէնց Բենիամինի կողմից: Այսպիսով, մի քանի տասնամեակ ուշ Խորենացին լիովին կարող էր ե՛ւ Կորիւնի վկայութիւնները լրացնող տուեալներ ունենալ, ե՛ւ շփոթել կամ սխալ հերթականութեամբ դնել իր ունեցած տեղեկանին[2]:

Մաշտոցի ու Բենիամինի ստեղծած աղուաներէն գիրը հետագայում, գոնէ Հայոց եւ Վրաց գրերի համեմատութեամբ, մեծ բարձունքների չհասաւ (երկու վարդապետներից անկախ էթնո-քաղաքական պատճառներով): Թէպէտ, միեւնոյն ժամանակ, նշելի է, որ նրա գործածման մասին մեր գիտելիքները գնալով հարստանում են: Յատկապէս նկատի ունենք քառորդ դար առաջ Սինայում աղուաներէն–վրացերէն կրկնագիր բնագրերի յայտնաբերումը, վերծանութիւնը եւ հրատարակումը, որի շնորհիւ, բացի նախկինում յայտնի մէկ տասնեակի չափ վիմագիր փոքրածաւալ արձանագրութիւններից, արդէն մեր ձեռքի տակ են նաեւ աղուաներէն լեզուով գրուած «Ճաշոցի» մի քանի մեծ կտորներ[3]:

---

[1] **Կորիւն**, գլ. ԺԷ, էջ 70; ՄՀ, հտ. Ա, էջ 246, նախ. ԺԸ.5 («այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զԱստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր»):

[2] Հմմ. **Ա. Ս. Մաթեւոսեան**, Կորիւնի Մեսրոպ Մաշտոցի պատմութեան ձեռագրի մի թղթի տեղափոխութիւն, Վենետիկ – Ս. Ղազար, 1990, էջ 14 («Իսկ Մովսէս Խորենացին Դանիէլեան գրերի մասին ոչ միայն Կորիւնի մատեանից գիտէր, այլեւ իր ուսումնառութեան շրջանից, գուցէ եւ ուսուցչի բերանից»):

[3] **Z. Aleksidzé, J.-P. Mahé**, Découverte d'un texte albanien: une langue ancienne du Caucase retrouvée, – Comptes rendus de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, Paris, 1997, p. 517-532; **Պ. Մուրադյան**, – Ջազա Ալեքսիձե, Կովկասյան Աղվանքի գրչությունը, լեզուն եւ դպրությունը, Թբիլիսի, 2003 (վրացերեն), 224 էջ, – ՊԲՀ, 2005, հ^{մր} 2, էջ 330-336; The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai, Vol. I-II, Edited by **J. Gippert, W. Schulze, Z.**

Վերադառնալով Յրիի Խոճկորիկ նախարարին՝ նշենք, որ բոլոր դէպքերում նրա «ոչ օրինական» ծնունդը հնարաւոր չէ վերագրել իր հայր Եսվաղէնի եւ Մաշտոցի հանդիպման օրերին: Հակառակ դէպքում՝ Վաչագան Բարեպաշտի օրօք նա առնուազն 65-70 տարեկան կը լինէր, եւ «Վաչագանի վէպ»-ը դժուար թէ նրա մասին գրեր՝ «պոռնկորդի», «այրն այն» (Ա.իգ), «ինքն աշտանակեալ ի ձի՝ ճեպով հասանէր» (Ա.ժթ): Այս բնութագրումներից երեւում է, որ խօսքը ոչ աւելի, քան 40-45-ամեայ անձի մասին է, ով ուրեմն պիտի ծնուած լինէր 440-ական թթ. ոչ վաղ: Այսինքն՝ անկասկած է, որ պէտք է մինչեւ այդ թուերը հասցնել Խոճկորիկի հայր Եսվաղէնի կեանքի եւ իշխանութեան վերջին տարիները: Եւ ստացուող պատկերով՝ Եսվաղէնի գահակալութիւնը փաստօրէն տեւել է մինչեւ Վարդանանց ապստամբութիւնն ու ժառանգորդութեան իմաստով բարելաջող աւարտուել՝ թագը Վաչէ Բ-ին փոխանցելով: Հակառակ դէպքում, ընդհանուր առմամբ սպասելի կը լինէր, որ ժամանակով մօտ կանգնած սկզբնաղբիւր «Վաչագանի վէպ»-ը, որը գիտի, օր.՝ Վաչէ Բ-ի եւ Վաչագան Բ-ի միջեւ առկայ «առանց թագաւորի կացեալ» 30-ամեայ միջակայքի մասին (իրապէս՝ շուրջ 25-ամեայ), որեւէ յիշողութիւն պահպանած կը լինէր նմանատիպ ինչ-որ անհարթութեան վերաբերեալ:

Տեղին նշենք, որ դէպքերին ժամանակակից Եղիշէ պատմիչը ոչինչ չի յայտնում Վարդանանց պատերազմի ժամանակ Աղուանքում գահակալած արքայի մասին: Մի դրուագում նա յիշատակում է երկրի հազարապետին ու եպիսկոպոսին (առանց անունները տալու), որոնք 450 թ. ժամանում են Հայաստան եւ օգնութիւն խնդրում Վարդան Մամիկոնեանից Աղուանքում հալածանքներ սկսած Պարսից զօրքի (Ջող/Դերբենդից եկած) ու մոգերի դէմ: Դրանից յետոյ, ըստ պատմիչի՝ Հայոց զօրքի մի մասը սպարապետի գլխաւորութեամբ շարժւում է հիւսիս, Լոփնասի ճակատամարտում (Կուր գետի աջ ափին) ջախջախում «Ջողի մարզպան» Սեբուխտ/Մերսեբուխտի բազմացեղ զօրաբանակը[1] եւ աղուանների հետ միասին ազատագրում երկրի բոլոր ամրոցներն ու բնակավայրերը[2]: Վարդան Մամիկոնեանը գրաւում է նաեւ «Հոնաց պահակը» (=Ջողի ամրութիւնները), որոնց պաշտպանութիւնը յանձնում է Աղուանից արքայատոհմից ոմն Վահանի[3]: Վերջինս մեկնում

Aleksidze, J.-P. Mahé, Turnhout, 2008; **Ch. Renoux**, Le lectionnaire Albanien des manuscrits Géorgiens palimpsests № Sin. 13 et № Sin. 55 (X^{e}-XI^{e} s.), Turnhout/Belgique, 2012 [PO, t. 52, fasc. 4, № 234]. Աղուաներէն վիմագրերի ամբողջական դիւանը տե՛ս **S. N. Mouraviev**, Trois études sur l'écriture aluanienne, – RÉArm., t. 27, 1998-2000, p. 1-74.

[1] Ըստ Իգոր Սեմեօնովի կռահման՝ այս Սեբուխտի հետ հաւանական է նոյնացնել Ջուանշէր Ջուանշէրիանիի երկում յիշուած «Ռանի էրիսթաւ» Բորզաբոդը (**И. Г. Семенов**, Генеалогия Картлийских царей: от Мириана III до Вахтанга Горгасала, Махачкала, 2007, с. 50-51).

[2] Եղիշէ, Գ, էջ 77-78; ՄՀ, հտ. Ա, էջ 608-609 («յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ բերդիցն եւ քաղաքաց, զոր ունէին Պարսիկքն յաշխարհին Աղուանից... Եւ բազումք ի նախարարացն Աղուանից եւ յամենայն շինականացն, որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալ եւ վատնեալ էին յամուրս լերանց Կապկոհի ... գային ժողովէին ... եւ խառնէին ի զաւրս նոցա, եւ միաբանք եւ հաւասարք կցորդք լինէին գործոցն նահատակութեան»):

[3] Եղիշէ, յեղ. Գ, էջ 78; ՄՀ, հտ. Ա, էջ 609 («Խաղալիւն գնային այնուհետեւ ի վերայ պահակին Հոնաց, զոր ունէին բռնութեամբ Պարսիկքն, առնուին քաղդէին զպահակն, եւ կո-

է հիւսիսկովկասեան Հոնաց ցեղերի մօտ ու նրանց համոզում գալ Ջողղ եւ պայման կապել ապստամբ հայերի ու աղուաննների հետ Սասանեաննների դէմ պատերազմելու մասին: Եղիշէն չի նշում Վահանի՝ թագաւոր լինելու մասին, թէպէտ նրան վստահուած Հոնաց կամ Ճորայ (Ջողղի) պահակի հսկողութիւնն այս դարաշրջանում հէնց Աղուանից թագաւորների առանձնաշնորհն էր. այդպէս էր, օր.՝ քիչ անց ապստամբած Վաչէ Բ արքայի ժամանակ, ով դրանից օգտուելով էր քանդել ամրութիւնները եւ օգնութիւն ստացել հիւսիսկովկասեան ցեղերից[1]: Սակայն եթէ Վահանը (կամ մի ուրիշը) թագաւոր հռչակուէր Եսվաղէնի ու Վաչէի միջեւ, ապա սպասելի կը լինէր այդ մասին յիշատակութիւն գտնել «Վաչագանի վէպ»-ում:

Եղիշէն Վաչէ Բ-ի (իր՝ «Աղուանից արքայի») մասին հաղորդում է մի քանի ուշագրաւ մանրամասնութիւն: Նախ՝ արքան սկզբնապէս քրիստոնեայ էր եղել եւ Սասանեան Յազկերտի հարկադրանքով էր մոգութիւն ընդունել[2]: Ապա՝ ապստամբելով պարսիկների դէմ, նա ոչ միայն ինքն էր վերադարձել քրիստոնեայ հաւատքին, այլեւ ստիպել էր դա անել իր «ի բնէ մոգ» մօրը (հաւանաբար՝ խորթ) եւ կնոջը, թերեւս, խորթ քրոջը, քանի որ Պարսից թագաւորը նրան գրում էր՝ «Ձհոյդ իմ, ասէ, եւ զԵեռոդիդ ի բաց տուր ածել, զի ի բնէ մոգք էին եւ դու քրիստոնեայ արարեր», որից յետոյ բնագրում ասւում է. «Իսկ սքանչելի այրն... զմայրն եւ զկինն ետ տանել»[3]: Ի վերջոյ հեռանալով իշխանութիւնից՝ Վաչէն Պերոզի յորդորով իրեն է պահում լոկ «հազար երդ», որը մանուկ հասակում ստացել էր հօրից («Խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հաւր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն՝ հազար երդ, էառ զայն ի թագաւորէն, եւ նստաւ ի նմա միայնակեցաւք հանդերձ»)[4]: «Հազար երդի» մասին վկայութիւնը ցոյց է տալիս, որ Վաչէն չի եղել Եսվաղէնի աւագ որդին, որը պիտի ժառանգած լինէր հօր ամբողջ թագաւորութիւնը, իսկ մնացեալ որդիները կարող էին ծնողից ստանալ այսպէս կոչուած «սեպհական» («սեփհական») կալուածքներ: Եսվաղէնի աւագ որդին, թերեւս, այն Յազկերտն էր, որի որդի Վաչագան Բարեպաշտը 485 թ. օրինակարգ թագաւոր ճանաչուեց. ճիշտ է՝ ըստ «Վաչագանի վէպ»-ի՝ սա եւս «սեպհական» կալուածք ունէր Արցախում, բայց յիշենք, որ իր հայրն ինչ-որ պատճառով արքայ չէր դարձել:

Եղիշէի տեղեկութիւններից հետեւող առաւել հաւանական պատկերն այսպիսին է. Եսվաղէնի վախճանը, թերեւս, համընկել է Յազկերտ արքայից արքայի հալածանքների սկզբին (450 թ.); կա՛մ այդ ժամանակ, կա՛մ, գուցէ, Վարդանանց ապստամբութեան պարտութիւնից յետոյ (451 թ.) Սասանեաններն Աղուանից թա-

---

տորէին զզաւրսն, որ ի ներքս բնակեալ էին, եւ զդուռն տային ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից»):

[1] Եղիշէ, յեղ. Է, էջ 198; ՄՀ, հտ. Ա, էջ 757 («խրամատեաց զպահակն Ճորայ, եւ անցոյց յայս կոյս զզաւրսն Մասքթաց, միաբանեաց զմետասան թագաւորս լեռնորդեայսն...»):

[2] Եղիշէ, յեղ. Է, էջ 197; ՄՀ, հտ. Ա, էջ 756 («Եւ մինչդեռ նոքա [*իմա՛* Յազկերտի որդիներ Որմիզդը եւ Պերոզը] յայնմ խռովութեան էին, ապստամբեաց եւ Աղուանից արքայն, վասն զի քեռորդի էր նոցա, եւ ըստ կարգի հայրենի հաւատոցն՝ քրիստոնեայ էր յառաջ, եւ Յազկերտ արքայից արքայ բռնի մոգ արար»):

[3] Եղիշէ, յեղ. Է, էջ 198; ՄՀ, հտ. Ա, էջ 758:

[4] Եղիշէ, յեղ. Է, էջ 199; ՄՀ, հտ. Ա, էջ 758:

գաւոր են ճանաչել նրա ո՛չ աւագ որդի Վաչէին, որն ամուսնացած էր Եսվաղէնի՝ ազգութեամբ պարսիկ եւ հաւատով մոգ կնոջ դստեր, այսինքն՝ իր խորթ քրոջ հետ, եւ հաւատափոխ լինելով՝ նոյնպէս մոգութիւն էր ընդունել (թերեւս, ի տարբերութիւն իր աւագ եղբօր կամ եղբայրների); սակայն Վաչէն էլ մի քանի տարի անց ապստամբութիւն բարձրացրեց՝ քրիստոնէութեանն իր հաւատարմութեան պատճառով (459-461/462 թթ.), որը երկու տարի անց ճնշելուց յետոյ Պերոզ արքայից արքան վճռեց վերացնել թագաւորական իշխանութիւնն Աղուանքում[1]:

Վերադառնալով Եսվաղէնի թագաւորութեան տեւողութեանը՝ նկատենք, որ եթէ նա գահակալել է մինչեւ Ե դ. կէսերը, ապա հաւանական է, որ 420-ական թթ. վերջերին Կապաղակում Մաշտոցին հիւրընկալելիս նրա իշխանութիւնը պիտի նոր-նոր սկսուած լինէր (որպէսզի ըստ այդմ տեւէր շուրջ քառորդ դար): Այդ դէպքում «Վաչագանի վէպ»-ում թուարկուած նրա նախորդների՝ Ուռնայրի յաջորդ չորս թագաւորների իշխանութիւնը պիտի տեւած լինէր մօտ կէս դար: Ջուտ իբրեւ վարկած՝ պայմանականօրէն կարելի է համարել, որ մօտ 373 թ. վախճանուած Ուռնայրին յաջորդած Յաւշագանի եւ Մերհաւանի գահակալութիւնը վերագրելի է Դ դ. վերջին քառորդին, իսկ Սատոյ եւ Սասյ արքաներինը՝ Ե դ. առաջին երկուսուկէս տասնամեակներին[2]: Ի դէպ, կարեւոր է, որ բոլորովին վերջերս իրանագէտ Էդ. Խուրշուդեանը յայտնաբերել, արժեւորել ու հրատարակել է «Առանի Սասյ» արքայի (դեռեւս՝ արքայազնի) կնիքը, որը, ցաւօք, անթուակիր է[3]:

Համառօտ անդրադառնանք նաեւ Աղուանից եկեղեցու կենտրոնների խնդրին: Աղուանից կաթողիկոսարանը (նախապէս, 315-ից՝ եպիսկոպոսարանը), անշուշտ, սկզբնապէս տեղակայուած է եղել թագաւորական մայրաքաղաք Կապաղակում (շուրջ մէկուկէս դար)[4]: Նրա տեղափոխումը Ջող տեղի է ունեցել Աղուանից մարզպանութեան կազմաւորման արդիւնքում (428 թ.), որի կենտրոնը Սասանեանները տեղակայել էին Ջող/Դերբենդում: Սակայն այդ տեղափոխումը եղաւ ո՛չ միանգամից, այլ երեք տասնամեակ անց՝ 461/462 թ. Վաչէ թագաւորի ապստամբութեան ճնշումից եւ Աղուանից թագաւորական իշխանութեան վերացումից յետոյ: Ըստ Կորիւնի՝ 428-430 թթ. միջակայքում Մաշտոցը Աղուանից Երեմիա «եպիսկոպոսին» հանդիպել էր «ի թագաւորական տեղիսն», ուրեմն՝ Կապաղակում, որից յետոյ միայն մեկնել էր արեւելք՝ հանդիպելու Բաղասականի Մուշեղ եպիսկոպոսին (Բաղասականն իր թագաւորական շրջանում ընդգրկում էր նաեւ Մասքութք երկրամասը)[5]: Ըստ Եղիշէի՝ 450 թ. Հայաստան էին ժամանել Աղուանից հա-

---

[1] Աղուանքում 461/462 թ. թագաւորական իշխանութեան վերացման հանգամանքների մասին վերջին անգամ տե՛ս նաեւ **Т. Геворгян**, Формирование марзпанства Аран и включение в его состав армянских областей Арцах и Утик, – ИФЖ, 2012, № 2, с. 218-219.

[2] **Ա. Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը, սն. 95:

[3] Տե՛ս **Э. Ш. Хуршудян**, Печать наследного принца Арана Асая, – Commentationes Iranicae. Сб. статей к 90-летию В. А. Лившица, СПб., 2013, с. 191-201.

[4] Տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 132-135.

[5] **Կորիւն**, գլ. ԺԷ, էջ 72; ՄՀ, հտ. Ա, էջ 246-247, նախ. ԺԸ.7-9: Տեղին նշենք, որ եթէ Դասխուրանցու օգտագործած երկու աղբիւրներում՝ Վիրոյ կաթողիկոսի՝ «Վասն սաստկա-

զարապետը եւ «եպիսկոպոսը», ովքեր Վարդան Մամիկոնեանին յայտնել էին, որ «Ջողի» մարզպան Սեբուխտը եկել է («եկն եմուտ»)՝ «Աղուանքի» եկեղեցիներն աւերելու. սրանից բխում է, որ Աղուանից եպիսկոպոսարանը գտնուել է ո՛չ Ջողում, հետեւաբար, ըստ ամենայնի՝ դեռեւս թագաւորական կենտրոն Կապաղակում[1]:

Իսկ արդէն Ջ դ. ամենասկզբին գրուած «Վաչագանի վէպ»-ում տեսնում ենք ոմն Յունան «եպիսկոպոսապետի» յիշատակութիւն, որի մասին ասւում է, թէ նա «ի Մասքթաց աշխարհին» էր[2]: «Յոյժ ճշմարտախոհ [a ճշմարտախաւս]» այս եպիսկոպոսապետը չի կարող համարուել պարզապէս «Մասքթաց աշխարհի» կաթողիկոս, քանի որ այդպիսի կաթողիկոսութեան մասին աղբիւրներից ոչինչ յայտնի չէ: Փոխարէնը՝ գիտենք, որ Աղուանից կաթողիկոսարանը մինչեւ Կուր գետի աջափնեակ (Պարտաւ) տեղափոխուելը գտնուել է Ջողում, որն այլ աղբիւրների Դերբենդ քաղաքն է՝ իր հզօր պարիսպներով, իսկ դա հէնց Սասանեան տէրութեան Աղուանք կամ Առան մարզպանութեան բաղկացուցիչ մաս կազմող Մասքութք երկրամասի հիւսիսային կէտն էր: Ճիշտ է, ուսումնասիրողներից ոմանք (Ս. Երեմեան, Ե. Պախոմով, Կ. Տրեւեր եւ ուրիշներ) Դերբենդը տարանջատում էին Ջողից՝ համարելով, որ նրանում Խոսրով Անուշիրուան Սասանեան արքայի (531-579) կառուցած քարէ պարիսպներն առաջինն են եղել, իսկ Ջ դարից առաջ վկայուած Ջող/Ճորայի ամրութիւնները պիտի փնտրել աւելի հարաւ (Խորս-վէմ – Բեշբարմակ, Ապգուտ-Կաւատ – Շապորան, Շահրիստան-է Յազկերտ – Թորփախ-կալա)[3]: Բայց արդէն Միխ. Արտամոնովի եւ Ալ. Կուդրեւացեւի հնագիտական պե-

---

ցեալ սովոյն, սրոյն եւ գերութեանն...» վերնագրով Թղթում (գլ. Բ.ժե) եւ Աղուանից կաթողիկոսների ցանկում (գլ. Գ.իգ /իդ/) վերջիններիս պաշտօնը կոչուած է «կաթողիկոս Աղուանից, Լփնաց եւ Ձոլայ [*var.* Ձորայ»]: Իսկ դրա մէկ այլ պաշտօնական տարբերակը պիտի համարուի «Աղուանք երկրի եւ Բաղասականի մեծ կաթողիկոս»-ը՝ միջին պարսկերէնով արձանագրուած մի «իրանական» աղբիւրում, 40 տարի առաջ յայտնաբերուած կնքադրոշմի վրայ՝ "kwst i Albān ud Balāsagān wuzurg kātolikos" վերծանումով (**Ph. Gignoux**, Sceaux chrétiens d'époque sassanides, – IA, vol. XV, Leuven, 1980, p. 299-314; **А. И. Колесников**, Административные топонимы на сасанидских печатях, – XVIII годичная сессия ЛО ИВ АН СССР, Доклады и сообщения, Москва, 1985, с. 182-183; **С. Ю. Касумова**, Христианство (несторианство) в средневековом Азербайджане: Автореф. дисс. ... докт. ист. наук, Баку, 1992, с. 30; **М. С. Гаджиев**, Атрибуция геммы-печати Великого католикоса Албании и Баласакана и вопрос очередности патриаршества владык Албанской церкви, – Проблемы истории, филологии, культуры, вып. XIV, Москва-Магнитогорск, 2004, с. 465-479; **Хорикян О.**, Печать "Великого Католикоса Албании и Баласакана", – "Иран-наме". Научный востоковедческий журнал, Алматы, 2014, № 3-4, с. 363-366).

[1] **Եղիշէ**, յեղ. Գ., էջ 70-71; ՄՀ, հտ. Ա, էջ 599-600: Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 115-117, 127.

[2] **Դասխ.**, Ա.ժթ, էջ 56; **Անանուն**, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի, էջ 80:

[3] **Е. А. Пахомов**, Крупнейшие памятники Сасанидского строительства, с. 37-43, 47; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 271-276; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 76; **В. Г. Котович**, О местоположении раннесредневековых городов Варачана, Беленджера и Таргу, – В кн.: Древности Дагестана, Махачкала, 1974, с. 188-189, 201-211; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 188:

ղումներով բացուեցին Ջողի/Դերբենդի կաւաղիւսէ հզօր պարիսպները[1] (դրանց պեղումները շարունակւում են նաեւ այսօր[2]), որոնց հիմնադրումը Եղիշէ պատմիչը բառացի վերագրում է (կոչելով դրանք «դուռն» եւ «պահակն Հոնաց») իր ժամանակակից Յազկերտ Բ արքայից արքային (438-457)[3], իսկ Ղեւոնդ վարդապետը՝ Մարկիանոս կայսեր օրերին (450-457)[4], այսինքն՝ այդ կայսեր ժամանակակից նոյն Յազկերտին[5]: Ջողի/Դերբենդի կաթողիկոսարանի մասին վկայութիւն կայ նաեւ ՊԱ-ի վերջին գլուխներից մէկում (Գ.ժզ)[6], որը յանգում է Թ դարի Հայոց կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու՝ մեզ չհասած պատմական երկին (այն օգտագործել է նաեւ Ստեփաննոս Օրբէլեանը)[7] եւ որում ասւում է. «Եւ ի ՃՁ թուականին [180 = 731 թ.] դարձեալ Մսլիման շինէ զԴարբանդ յանուն Տաճկաց, այլ զկաթողիկոսարանն Արեւելից ոչ աւերէ, որ դեռ եւս կայ ի նմա»:

Իսկ Աղուանից կաթողիկոսանիստի՝ Ջողից Պարտաւ տեղափոխուելու մասին տեղեկութիւնը հաղորդում է Ժ դ. վերջում Մովսէս Դասխուրանցու կողմից օգտագործուած աղբիւրներից միւսը՝ այսպէս կոչուած «Աղուանից գաւազանագիրքը», որը պիտի համարել նոյն դարի առաջին կէսին ստեղծուած ժամանակագրական փոքր երկ[8]: Նրա բովանդակութեան մեծ մասը պատմիչն արտագրել է իր վերջին գլխում (Գ.իգ)՝ «Անուանք հայրապետացն Աղուանից, ամք եւ գործք նոցին» գլխագրով, սակայն նրա որոշ տեղեկութիւններ էլ տեղափոխել է ՊԱ-ի նախորդ գլուխներ: Հէնց այդ ձեւով են ստեղծուել Բ.դ գլխի վերնագիրը («Փոխումն հայրապետական աթոռոյն Աղուանից ի Ջողայ [bclrv Ջորայ] եւ նստուցանել ի մեծ քաղաքին [bclrv քաղաքն] Պարտաւ զաթոռակալութիւնն՝ սակս խազրաց հինին, որ

---

[1] **М. И. Артамонов**, Древний Дербент, – СА, № VIII, 1946, с. 121-144; **նոյնի՝** История хазар, Ленинград, 1962, с. 119-122; **А. А. Кудрявцев**, Древний Дербент, с. 83-84.

[2] **М. С. Гаджиев**, Исследования сырцовой фортификации цитадели Дербента сасанидского времени (по материалам раскопов Р-XI и Р-XIII), – Древняя и средневековая архитектура Дагестана, Махачкала, 1989, с. 61-76; **М. С. Гаджиев, А. Р. Магомедов**, Раскопки форта Горной стены (сезоны 1996, 1998 гг.), – Кавказ и степной мир в древности и средние века. Материалы международной научной конференции, Махачкала, 2000, с. 230-248.

[3] **Եղիշէ**, յեղ. Գ, էջ 78; յեղ. Զ, էջ 129; ՄՀ, հտ. Ա, էջ 609, 670:

[4] Պատմաբանութիւն **Ղեւոնդեայ**, գլ, ԺԷ, էջ 79 («Եւ մինչ դեռ քանդէին [արաբները] զպարիսպ ամրոցին, գտին վէմ մի ի հիմունս նորա, որ ունէր վերնագիր դրոշմեալ՝ աւրինակ զայս. «Մարկիանոս ինքնակալ կայսր շինեաց զքաղաք եւ զաշտարակս զայս բազում տաղանդաւք յիւրոց գանձուց, եւ ի յետին ժամանակս որդիքն Իսմայելի քանդեսցեն զսա եւ յիւրեանց գանձուց վերստին շինեսցեն»»): Համմ. **Ղեւոնդ**, գլ, ԺԲ, էջ 40-41:

[5] Համմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 121-122.

[6] **Դասխ.**, Գ.ժզ /ԺԷ/, էջ 320: *ՊԱ*-ի Ա.ց ենթախմբի 1761 թ. մայր ձեռագիրն ընդօրինակող Ղուկիասոսը մեծ խմբագրումներ է արել, իսկ Գ.ժզ գլուխը բաժանել է երկուսի՝ յօրինելով դրանց գլխագրերը (սխալ գլխահամարները կը տանք կոտորակային փակագծով):

[7] Տե՛ս ստորեւ (էջ 140-148) եւ **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 268-272; **նոյնի՝** Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոս, Պատմութիւն. Ուսումնասիրութիւն եւ Թ դարի բնագրի վերականգնման փորձ, – ՀԱ, ՃԻԸ տարի, 2014, սն. 177-234:

[8] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 210-211; **նոյնի՝** «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը, սն. 98-99:

յելան իւրեանց աւերեցին [a աւարեցին]») եւ շարադրանքը. «Յետ այսորիկ գերեցաւ ի խազրաց աշխարհս Աղուանից, հրկէզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք: Ապա յերկրորդ ամին խոսրովու՝ արքայից արքայի, յորժամ զսկիզբն Հայ թուականին եդին [a չիf եդին], ի սոյն ամի [=552 թ.] փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի Ջողայ [bclrv Ջորայ] քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ՝ վասն հինահալած արշաւանացն թշնամեաց խաչին Քրիստոսի: Եւ նստուցին հայրապետ զտէր Աբաս ի գաւառէն Մեծարանց [bclrv Մեծիւրեանց], որ կալեալ զաթոռն ամս ԽԴ [=552-596 թթ.]»[1]: Բուն Գ.իգ գլխում կաթողիկոսանիստի տեղափոխման մասին պատմիչը թողել է միայն այսքանը. «ԺԳ. Տէր Աբաս, որ ի սկզբանն թուականիս Հայոց փոխեաց զաթոռ հայրապետութեանն ի Ջորայ ի Պարտաւ, կալեալ ամս ԽԴ, յեպիսկոպոսութենէն Մեծիրանց [bclrv Մեծիւրեանց] կոչեցեալ»[2]:

Վերը նշուած Յունան Աղուանից կաթողիկոսի յիշատակութիւնը պահպանուել է նաեւ ՊԱ-ի վերջին դլխի սկզբներում. «ԺԱ. Սուրբն Յովհան, որ եւ Հոնացն եղեւ տէր[3] հայրապետական շնորհիւ, զորպէսն չգիտեմք»[4]: «Աղուանից գաւազանագրքի» այդ սկզբնական հատուածը՝ մինչեւ 552 թ. ձեռնադրուած Աբաս կաթողիկոսը, ակնյայտ խառնակ վիճակ ունի: Աբասին նախորդող Երեմիան («ԺԲ. Տէր Երեմիա. ի սորա աւուրս արար գիր Աղուանից երանելին Մեսրոպ [a Մեսրոբ], որ եւ Հայոց եւ Վրաց ետ զնշանագիր ջանիւ մեծաւ») իրապէս Աղուանից եպիսկոպոսապետ է եղել ե դ. սկզբին (ըստ Կորիւնի, Խորենացու եւն), իսկ Շուփհաղիշոն, որի անունը դրուած է երկրորդ տեղում, Եղիշայ առաքեալից յետոյ («Բ. Սուրբն Շուփհաղիշոյ [ab Շուփաղիշոյ]. կաթողիկոս Արեւելեաց [h Արեւելից]՝ յԵրուսաղէմէ եկեալ»)[5], իրականում Վաչագան Բարեպաշտի ժամանակակիցն էր (ըստ «Վաչագանի վէպ»-ի եւ «Աղուէնի կանոններ»-ի): Շուփհաղիշոյից մինչեւ Գրիգորիս յիշուած միւս անունները («Գ. Տէր Մատթէոս [bcv Մաթէ, 1 Մատթէ]: Դ. Տէր Սահակ: Ե. Տէր Մովսէս: Զ. Տէր Պանդ: է. Տէր Ղազար») որեւէ այլ աղբիւրից յայտնի չեն[6]: Նշելի է, որ

---

[1] Դասխ., Բ.դ, էջ 118-119:

[2] Դասխ., Գ.իգ /իդ/, էջ 342-343: Միշտ է, դրանից յետոյ Աբասի մասին հաղորդւում են ուրիշ ուշագրաւ տեղեկութիւններ եւս:

[3] Դասխուրանցու երկի *a* գրչագրում բոլորագիր «եղեւ» եւ «տէր» բառերի վերեւում նոտրագրով աւելացուած է «եպիսկոպոս» («եպս») բառը (թ. 375բ), որը, թւում է, թէ կատարել է Ղուկիանոս դպիրը, քանի որ առաջացած «եպիսկոպոս տէր» ընթերցումն առկայ է Ա խմբի՝ 1761 թ. նրա ընդօրինակութիւնից սկսած բոլոր գրչագրերում (ցաւօք՝ նաեւ 1983 թ. հրատարակութեան մէջ, որտեղ նաեւ յանիրաւի բաց են թողնուած գրեթէ բոլոր ձեռագրերում առկայ կաթողիկոսական թուահամարները):

[4] Դասխ., Գ.իգ /իդ/, էջ 342: Վերջին բառերը, անկասկած, Մովսէս Դասխուրանցուն են պատկանում: Նրա աղբիւրը պիտի գրած լիներ «որ եւ Հոնացն եղեւ տէր հայրապետական շնորհիւ»՝ պատմիչին անծանօթ միտքը, որպէսզի նա էլ աւելացներ՝ «զորպէսն չգիտեմք» (տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 211).

[5] Դասխ., Գ.իգ /իդ/, էջ 342: ԺԸ դ. «բնագրագէտ» Ղուկիանոսն այս հատուածում էլ ջնջումներ է արել, եւ Գրիգորիսի անունը յետ տանելով՝ դրել Եղիշայ առաքեալից յետոյ, իսկ իր տեղում թողել «Գրիգոր» կաթողիկոսին (Ը թուահամարով): Դա, ցաւօք, մտել է Ա խմբի բոլոր (բացի *h*) ձեռագրերի եւ երկի հրատարակութիւնների մէջ:

[6] Գուցէ պատահական չէ լոկ այն, որ Եղիշայից մինչեւ Գրիգորիս յիշուած կաթողիկոսների թուաքանակը՝ 6, մօտ է Հայոց եկեղեցում ընդունուած Թադէոս եւ Բարթուղիմէոս

Գրիգորիսի նախորդների թւում չկայ Թովմա Սատաղեցի եպիսկոպոսի անունը, ով, ըստ Ագաթանգեղոսի երկի «Գրիգորի վարք» խմբագրութեան՝ եղել է Հայոց Լուսաւորչի կողմից 315 թ. Աղուանք ուղարկուած առաջին քահանայապետը:

«Տէր Ղազար»-ից յետոյ բնագրում անսպասելի վերապահում է արւում՝ «Այս չէ՛ յայտ, թէ որք են յայս միջոցս մինչեւ ցսուրբն Գրիգորիս [հ Գրիգորիոս]», որից, սակայն, հնարաւոր չէ պարզել, թէ իրական պատմական ո՞ր հատուածի անյայտ անունների մասին է խօսքը[1]: Ապա հետեւում է Գրիգորիսի անունը («Ը. Տէր սուրբն Գրիգորիս Արշակունեաց [հ չիճ Արշակունեաց] ի Պահլաւիկն Գրիգորոյ [հ Գրիգորայ]՝ Հայոց Լուսաւորչէ, երկատեսակ փառաւք կացեալ ի նոյն աթոռ»), որին մինչեւ Յովհան (Յունան) ու Երեմիա յաջորդում են՝ «Թ. Տէր Զաքարիա: Ժ. Տէր Դաւիթ»: Նրանց մասին եւս հնարաւոր չէ ոչինչ ասել: Փոխարէնը, ըստ հայ քաղկեդոնական պատմական աւանդոյթի (լոկ յունարէն թարգմանութեամբ պահպանուած՝ «Նարրացիո» երկի)՝ Աբաս Աղուանից կաթողիկոսը, իբրեւ թէ մերժելով Հայոց Յովհաննէս Գաբեղենացի կաթողիկոսի (557-574)՝ միաբնակութեանը յարելու յորդորը, պատասխանել է. «Երանելի եպիսկոպոսքն, որ յառաջ քան զիս՝ Պետրոս եւ Գրիգոր, այսպէս ասէին զՍուրբ Աստուածն, եւ ես ո՛չ յաւելում եւ ո՛չ նուազեցուցանեմ»[2]. դրանից կարելի է եզրակացնել, որ նշուած Պետրոսն ու Գրիգորը եղել են Զ դ. առաջին կէսի, այսինքն՝ Շուփհաղիշոյին յաջորդած կաթողիկոսներ, ում անունները բացակայում են «Գաւազանագրքում»: Թէպէտ, պէտք է յիշել, որ «Նարրացիո»-ի պնդումները երբեմն ակնյայտ անհաւաստի են ու խառնակ[3]: Ինչեւէ, չափազանց դժուար է որոշել «Գաւազանագրքի» ցուցակի՝ այլուր չհանդիպող անունների եւ պատմական իրականութեան համապատասխանութիւնը: Փոխարէնը՝ նկատելի է մի այլ օրինաչափութիւն. կաթողիկոսական անունների հերթականութիւնը Մովսէս Դասխուրանցու համար ընդունելի է եղել այն աստիճան, որ շատ դէպքերում նա հէնց այդ խառնակ հերթականութեան համապատասխան է դասաւորել իր ունեցած նիւթերը: Այսպէս, օր.՝ «Գաւազանագրքում» Աբաս կաթողիկոսին նախորդում է Երեմիան, եւ նոյն կերպ՝ ՊԱ-ի Բ գրքում Աբասին վերաբե-

---

առաքեալներից մինչեւ Գրիգոր Լուսաւորիչ տիրակալած աւանդական քահանայապետների թուին (7)՝ ըստ «Արտազեան յիշատակարանի» (տե՛ս **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, սն. 29-56, § 18-33):

[1] Ի դէպ, «Արտազեան յիշատակարանում» եւս Գրիգոր Լուսաւորչից առաջ մի վերապահում է արւում ինչ-ինչ անունների կորստի մասին. «Զկնի սորին չկարացաք գտանել, թէ ո՞յք յաջորդեալ են ի տեսչութիւն եկեղեցւոյ առաքելական վիճակիս Արտազու» (**Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, սն. 55, § 33):

[2] La Narratio de rebus Armeniae. Édition critique et commentaire par **G. Garitte**, Louvain, 1952, p. 38. Հատուածի գրաբար թարգմանութիւնը տե՛ս **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի, էջ 156: Հմմ. **Հ. Բարթիկյան**, "Narratio de rebus Armeniae" հունարեն թարգմանութեամբ մեզ հասած մի հայ քաղկեդոնական սկզբնաղբյուր, – ԲՄ, 6, Եր., 1962, էջ 467:

[3] Տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 193-194. Հմմ. **В. А. Арутюнова-Фиданян**, Повествование о делах армянских (VII век). Источник и время, Москва, 2004, с. 41-43, 134; **Կ. Մելիքյան**, "Narratio de rebus Armeniae" հայ-քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան Հայոց եկեղեցու պատմության կարեւոր սկզբնաղբյուր, Եր., 2007, էջ 121-131:

րող Դ-Ը գլուխներից առաջ դրուած է Մովսէս Խորենացուց քաղուած՝ Երեմիա «հայրապետի» մասին պատմութեամբ սկսուող Գ գլուխը[1]:

Անկախ «Գաւազանագրքի» այս հատուածի պատմական անձանց (Գրիգորիս, Երեմիա, Յովհան եւ Շուփհաղիշոյ) հերթականութեան խաւնակութիւնից եւ միւս անունների հաւաստիութեան աստիճանից (այդ թւում՝ Գրիգորիսին յաջորդող Զաքարիայի եւ Դաւթի)՝ կարելի է ենթադրել, որ «ԺԱ. Սուրբն Յովհան»-ը նոյն՝ «Վաչագանի վէպ»-ի վերը բերուած Ա.ԺԲ գլխում յիշուած Յունան եպիսկոպոսապետն է: Իսկ նրա համար ասուած «որ ի Մասքթաց աշխարհին էր» միտքը հետագայում, թերեւս, պատճառ է դարձել «Գաւազանագիրքը» կազմողի համար՝ պնդելու, թէ Յովհանը նաեւ Հոնաց «հայրապետ» է եղել: Իրականում՝ այդ արտայայտութիւնը նշանակում է ընդամենը Զողի կաթողիկոսարանում աթոռակալած լինելը, այլ ոչ թէ հիւսիսկովկասեան հոների հետ ինչ-որ մի ուրիշ կապ: Ըստ այդմ՝ «ճշմարտախոհ Յունանը» Աղուանքում թագաւորական իշխանութեան բացակայութեան եւ պարսիկ մոգերի տիրապետութեան ժամանակներում (Ե դ. 60-80-ական թթ.) Զող/Դերբենդում աթոռակալած Աղուանից եպիսկոպոսապետն էր:

Շուփհաղիշոյի անունը յայտնւում է «Վաչագանի վէպ»-ի վերջին հատուածում (գլ. Ա.իգ)՝ Ամարասում Գրիգորիսի մասունքները յայտնաբերած «արքայական բանակի»՝ դէպի Դիւտական յետադարձ ճանապարհի նկարագրութեան մէջ: Ամարասի գետակն անցնելով՝ արքան փոքրիկ դադար է յայտարարում, որպէսզի գիւղում հաւաքուած շրջակայ ժողովրդին տներն ուղարկի: Մնում են միայն հոգեւորականները, որոնց հետ թագաւորը, թագուհին եւ արքունականները հասնում են Քարուէճ ամառանոցը («ցՔարուէճ աւթի տեղ»), որտեղ եկեղեցական ժողովի պէս մի բան է կայանում, որն օրհնում է արքային եւ Շուշանիկ աշխարհատիկնոջը[2]: «Վէպ»-ի հեղինակն այնուհետեւ գրում է. «Եւ առեալ ինքեան զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ [a Շուփհաղիշու], եւ յորժամ գեաւղջ ուրուք [bclrvz գեղջ ուրեք] յայտ ելանէր դեսպակ սրբոցն, իջանէր թագաւորն եւ հետեւակ սպասարկէր սրբոցն, մինչեւ տարեալ ընդ շինանիստն անցուցանէր... Այս ձեւով գային հասանէին ի սեփհական գիւղն Դուտական [a Գիւտական] եւ անդ հանգուցանէին»[3]: Այսպիսով, Շուփհաղիշոյ եպիսկոպոսապետը (նրա «աւագ» մակդիրը որեւէ տեղեկատուական արժէք չունի) մասնակցել է Վաչագանի երթին՝ սկզբից, կամ գոնէ Ամարասից յետադարձ ճանապարհից, Քարուէճի ժողովից սկսած:

Շուփհաղիշոն որպէս «Պարտաւայ արքեպիսկոպոս» յիշուում է նաեւ Աղուէնի եկեղեցական ժողովի արձանագրութեան մէջ, որը պահպանուել է «Կանոնագիրք

---

[1] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 211, 223-225.

[2] **Դասխ.**, Ա.իգ, էջ 84: Ի դէպ, նոյն կերպ արքային ու թագուհուն օրհնել է Աղուէնի եկեղեցաժողովը (Ա.իզ, էջ 94): Նշենք նաեւ, որ «Վէպ»-ում եկեղեցական ժողովների առատութիւնը (Կապաղակում՝ Ա.ժթ, էջ 61; Դիւտականում՝ Ա.իա, էջ 67; Քարուէճում՝ Ա.իգ, էջ 84) չպիտի զարմացնի. «Առաքելական կանոններից» ԼԵ-ն եպիսկոպոսներից պահանջում էր տարեկան երկու անգամ ժողով գումարել (Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 84. հմմ. **Հ. Պ. Անանեան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը, էջ 75):

[3] **Դասխ.**, Ա.իգ, էջ 85:

Հայոց»-ում («Սահմանադրութիւն կանոնի՝ Վաչագանայ Աղուանից արքայի եդեալ ի ժողովն, որ յԱղուանս եղեւ»)[1] եւ ՊԱ-ի՝ Վաչագան Բ Բարեպաշտին վերաբերող գլուխների վերջում՝ «ԻՋ. Սահմանադրութիւն կանոնական՝ ի Վաչագանայ Աղուանից [bclrv յԱղուանից] արքայէ եդեալ ի ժողովոյն [a ժողովէն], որ յԱղուէնն [r յԱղուէն, l յԱղուեն, c յԱլուէն, b յԱլուեն] եղեւ» գլխագրի տակ[2]։ Գրչական որոշ տարընթերցումներ ունեցող զոյգ տարբերակում էլ «Շուփհաղիշոյ [Կանոնագրում՝ Շուփաղիշոյ] Պարտաւայ արքեպիսկոպոս»-ը յիշւում է առանց լուրջ շեղումների՝ ժողովի արձանագրութեան ամենասկզբում, Վաչագան արքայի անունից անմիջապէս յետոյ («Ես՝ Վաչագան՝ Աղուանից արքայ, Շուփհաղիշոյ՝ Պարտաւայ արքեպիսկոպոս, Մանասէ՝ Կապաղակայ [a Կապաղայ] եպիսկոպոս...»)[3]։

Հետեւելով Ն. Ակինեանին՝ տեղին նշենք, որ «Աղուէնի ժողովի կանոնները սերտ կապի մէջ են Շահապիվանի ժողովին կանոններու հետ (հմմ. կան. Ժ=ԺԹ։ ԺԱ=Դ, Թ։ ԺԲ=ԺԱ։ ԺԵ=Բ։ ԻԱ=ԺԷ)։ ... Հոս քանիցս կը յիշուի Կանոնագիրք մը («որպէս ի Կանոնսն գրեալ է՝ պատուհաս դիցեն». ԺԵ. «կանոնիւք դատեսցին». ԺՋ. «որ ի կանոնս գրեալ է». ԻԱ.), որուն համաձայն կառաջնորդուին։ ...Կանոններս գրուած են ե դարու առաջին կէսին գործածական գրական հայերէնով, զոր սովոր ենք դասական անուանել»[4]։ Ի դէպ, բնագրի առաջին պարբերութիւնը («Ցամս Վաչագանայ՝ Աղուանից արքայի բազում հակառակութիւնք լինէին ի մէջ աշխարհականաց եւ եպիսկոպոսաց եւ քահանայից, քորեպիսկոպոսաց, ազատաց եւ ռամկաց։ Ապա կամ եղեւ արքայի՝ առնել ժողով յԱղուէնն՝ բազմամբոխ ատեան, յամսեանն Մարերի, որ աւր երեքտասան էր ամսոյն»), թերեւս, ոչ թէ Աղուէնի ժողովի բուն արձանագրութեան մաս է, այլ յաւելուած է «Կանոնագրքի» կամ մի այլ ժողովածոյ կազմողի կողմից (ինչպէս որ դա արուել է «բացատրագիր» չունեցած ուրիշ կանոնախմբերի համար), հետեւաբար՝ Դասխուրանցին է կանոնների բնագիրն ընդօրինակել որեւէ ժողովածոյից, ոչ թէ՝ հակառակը[5]։ Պէտք է նաեւ որոշ վերապահումով մօտենալ «Մարերի ամսի 13» ամսաթուի (Ջ դ. սկզբներին, ենթադրաբար՝ դեռ անշարժ տոմարով՝ 19 Ապրիլի[6]) հաւաստիութեանը, որը նշուած է առանց արքայի տիրակալութեան կոնկրետ տարուայ յիշատակման։ Թէպէտ, հնարաւոր է, որ «կանոնագիրք» կազմողն այդ ամսաթիւը քաղած լինէր ժողովական արձանագրութեան մագաղաթեայ փաստաթղթի լուսանցքի ինչ-որ նշումից։

Շուփհաղիշոյի՝ Պարտաւի արքեպիսկոպոս կոչուելու (նաեւ Պարտաւի Մատթէ երէցի յիշատակման) հանգամանքը նախկինում բաւարար հիմք է դիտուել՝ կասկածելու Աղուէնի կանոնների հաւաստիութեանը (նոյն կերպ եւ՝ «աւագ եպիս-

---

[1] Կանոնագիրք Հայոց, Աշխատասիրութեամբ՝ **Վ. Յակոբեանի**, հտ. Բ, էջ 91-100:

[2] **Դասխ.**, Ա.իզ, էջ 89-94; **Վաչագան Աղուանից արքայ**, Սահմանադրութիւն կանոնական՝ եդեալ ի ժողովոյն, որ յԱղուէնն եղեւ, էջ 127-140:

[3] Ի դէպ, ժողովի մասնակիցների թւում յիշւում է նաեւ «Մատթէ՝ *Պարտաւայ* երէց»-ը:

[4] **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի)..., էջ 139:

[5] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 185.

[6] Տե՛ս **Հ. Ս. Բադալյան**, Օրացույցի պատմություն, Եր., 1970, էջ 314:

կոպոսապետ Շուփհաղիշոյին» ճանաչող՝ համաժամանակեայ «Վաչագանի վէպ»-ի), քանի որ «Աղուանից գաւազանագիրքը» կաթողիկոսանիստը համարում է Ջողից Պարտաւ տեղափոխուած միայն 552 թ.[1]: Սակայն, նախ՝ ճիշտ չէ «Վաչագանի վէպ»-ը եւ Աղուէնի ժողովի արձանագրութիւնը լրիւ համաժամանակեայ համարելը. երկու աղբիւրում յիշատակուող միեւնոյն անձանցից առնուազն մէկի համար առկայ են ժամանակային որոշակի միջակայք ենթադրող տուեալներ: «Վէպի» երեք դրուագներում յիշւում է «թագաւորի դրան երէց» Մանասէն (Ա.ժթ գլխում Վաչագանը նրան ուղարկում է ճիղբերի Յրի քաղաքի մօտ գտնուող Հակու գիւղում յայտնաբերուած Ջաքարիա եւ Պանդալէոն սրբերի նշխարներն իր մօտ՝ անունով չյիշատակուած թագաւորանիստ տեղափոխելու համար; Ա.իա գլխում՝ Գրիգորիսի նշխարների յայտնաբերման պատմութեան մէջ, Արաժանք գիւղում Յովէլ դրան սարկաւագի տեսած երազից յետոյ արքան Մանասէին ու Յովէլին ուղարկում է Ամարաս՝ «նախքան զիւր երթալն»; նոյնը կրկնւում է քիչ անց՝ Քարուէճ գիւղում Վաչագանի տեսած երազից յետոյ)[2]. եւ նոյն Մանասէն Աղուէնի ժողովի արձանագրութեան մէջ հանդէս է գալիս արդէն որպէս «Կապաղակայ եպիսկոպոս»: Կապաղակը Աղուանից թագաւորութեան մայրաքաղաքն էր Ք. ա. Ա դարից[3], եւ բնական է, որ նրա եպիսկոպոս կարող էր դառնալ թագաւորական «դրան երէցը»: Իսկ Վաչագանի «դրան երէց»-ի՝ «Կապաղակի եպիսկոպոս» դառնալու փաստից բխում է, որ նրա երկու կարգավիճակների միջեւ եղել է ժամանակային որոշ միջակայք, որը եւ ընկնում է «Վէպ»-ի ստեղծման ու Աղուէնի ժողովի գումարման ժամանակի միջեւ: Ահա եւ՝ նոյն միջակայքում կարող էր փոխուած լինել նաեւ Շուփհաղիշոյի կարգավիճակը, ով «Վաչագանի վէպ»-ում կոչւում էր «աւագ եպիսկոպոսապետ», իսկ Աղուէնի ժողովում արդէն՝ «Պարտաւայ արքեպիսկոպոս»:

Ի դէպ, «Վէպ»-ում արքայի մայրաքաղաքի անունը չի տրւում, բայց նրա արքունիքի մասին խօսւում է Խոճկորիկի տեսիլքի առիթով (Ա.իգ գլխի սկզբում), ով Կուրի ձախափնեակում, հետագայ Շամախու մօտ գտնուած Յրի քաղաքի գործակալն էր (Կապաղակից 65 կմ արեւելք)[4]. «Եւ գայր այրն առ արքունիսն [bclrvz ի պալատն արքունի] եւ թուէր, եթէ արքայ ի քուն իցէ, եւ ինքն չիշխէր զարթուցանել»[5]: Իսկ Ա.ժթ գլխում Խոճկորիկը Յրիում Ջաքարիայի եւ Պանդալէոնի նշխարների գիւտից յետոյ ձիով շտապ հասնում է արքայի մօտ («աշտանակեալ ի ձի [a

---

[1] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 186-187. Ըստ այդմ շտապողաբար ենթադրել էինք, թէ «Վաչագանի վէպ»-ը եւ «Աղուէնի կանոններ»-ը ստեղծուել են Զ դ. երկրորդ կէսին (552 թ. յետոյ եւ դարավերջին սկսուած եկեղեցական հակամարտութիւններից առաջ)՝ իբրեւ Աղուանից եկեղեցու ծրագրային փաստաթղթեր, որոնց հեղինակներն իրենց ժամանակի իրողութիւնները, այդ թւում՝ Պարտաւի՝ կաթողիկոսանիստ լինելը, վերագրել են իրենց նկարագրած դարաշրջանին՝ Ե դ. վերջին:

[2] **Դասխ.**, Ա.ժթ, էջ 60; Ա.իա, էջ 71, 73:

[3] Очерки истории СССР. Первобытно-общинный строй и древнейшие государства, с. 484; **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 142; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 36; **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 20, 79:

[4] Ճիղբերի երկրի տեղորոշման մասին (Շամախու շրջանում) տե՛ս վերեւում, էջ 71, ծն. 4:

[5] **Դասխ.**, Ա.իգ, էջ 79:

դէսպան ձիով, bclrv հեծեալ յերիվար մի գեղեցիկ]՝ ճեպէր հասանել առ բարեպաշտն Վաչագան՝ պատմել զերեւումն մեծագոյն նշանացն [bclrvz հրաշիցն]»[1]), այսինքն՝ հէնց նրա մայրաքաղաքը, որն, այդու, պիտի շատ հեռու չլինէր Ցրիից[2]:

Գրականութեան մէջ աւանդաբար հաւաստի է համարուել ՊԱ-ի Ա.ժե գլխի տեղեկութիւնը՝ «Պերոզապատ..., որ այժմ կոչի Պարտաւ» քաղաքը Վաչէ Աղուանից թագաւորի կողմից եւ «ի հրամանէ Պերոզի՝ պարսից արքայի» կառուցուելու մասին[3]: Բայց Վաչէ Բ-ն ապստամբել էր Յազկերտ Սասանեանի մահից կամ նրա Որմիզդ ու Պերոզ որդիների միջեւ պատերազմի սկսուելուց անմիջապէս յետոյ, ուստի Պերոզից պարտուած հեռանալով գահից՝ չէր կարող քաղաք կառուցել նրա հրամանով: Այդ տեղեկութիւնը նաեւ զուգահեռ չունի որեւէ հայկական կամ օտար աղբիւրում: ՊԱ-ում արտագրուած «684 թուականի պատմութիւն» կոչուող երկը[4] Աղուանից երկրի մայրաքաղաքը 11 դէպքից 7 կամ 8-ում կոչում է «Պերոզկաւատ»[5] (այլ ոչ թէ «Պերոզապատ», ինչպէս ընդամենը մէկ դէպքում է[6], կամ «Պարտաւ», ինչպէս միայն 3-ում է), որը միջին պարսկերէն նշանակում է «կաւա-

---

[1] Դասխ., Ա.ժթ, էջ 60:

[2] Ըստ Բ. Ուլուբաբեանի (Դրվագներ..., էջ 141)՝ Վաչագանի նստոցը կարող էր լինել Արցախի Դիւտական-Գիւտական գյուղը, որը Դասխուրանցու արտագրած «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան» մէջ նշուած է Տրտուի ափին՝ Ուտի Առանձնակ գաւառի Կաղանկատոյք գիւղի մօտ (Դասխ., Բ.ժ, էջ 132-133. «եւ բանակեցաւ [Հերակլի զօրքը] յՈւտի գաւառի՝ առ հեղեղատովն, որ ի մէջ սահմանացն գեղջն Կաղանկատուաց... անտի չուեալ բանակեցաւ առ հեղեղատովն Տրտուայ՝ մօտ ի գիւղն Դիւտական»: Բայց դրա հիմքում այն միտքն է, թէ Վաչագանն Առանշահիկ էր (այլ ոչ թէ Աղուանից արքայատոհմից) եւ նրա տոհմական տիրոյթները եղել են «Հայկեան Առան» կուսակալի ստացած՝ աջափնեայ Արցախ-Ուտիքում: Իրապէս, Վաչագանն Աղուանքի Արշակունի արքայատոհմից էր, եւ նրա բուն տիրոյթները պիտի լինէին ձախափնեակում: «Վէպ»-ը կոչում է Դիւտականը «արքունի սեփհական *գիւղ*», նստոցներից մէկը, բայց ո՛չ երկրի մայրաքաղաք: Օր.՝ գլ. Ա.ժը, էջ 51՝ «Իսկ զյոլովս ի մանկանցն յիւր սեփհական գիւղն *Ո*ւտակ[ան] [*resp.* *Դ*ուտական] անուն»; գլ. Ա.իա, էջ 66՝ «ժողովեցաւ ի սեփհական գիւղն արքունի՝ անուանեալն *Դ*ուտական»; գլ. Ա.իգ, էջ 85՝ «հասանէին ի սեփհական գիւղն Գիւտական»; էջ 86՝ «մինչեւ կատարեսցի հիմնարկութիւն մատրանն, որ ի Դիւտական գեաւղջն՝ յանուն Պանդալէոնի»: Գիւղն անգամ եկեղեցի չունէր մինչ այս մատուռի կառուցումը, եւ նշխարները դնում էին «ի սուրբ եւ յազնուական սեղեկի» (էջ 86): Ի դէպ, տեղանուան հիմքում, գուցէ, եղել է *երդ, տուն, տոհմ, մեծ ընտանիք* նշանակող իրան. dutak եզրոյթը (**Ռ. Աբրահամյան**, Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Եր., 1965, էջ 111; **Ա. Վ. Մուշեղյան**, Մովսես Խորենացու դարը, էջ 280):

[3] Տե՛ս, օր.՝ ՀԺՊ, հտ. II, էջ 193: Թէպէտ արդեն ըստ Յոզէֆ Մարկուարտի՝ Պարտաւի կառուցողը Կաւատն էր (**J. Marquart**, Ērānšahr nach der Geographie des Ps. Mosēs Xorenaçi: Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Excursen, Berlin, 1901, S. 177). Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 217.

[4] Է դարի այդ հաւաստի աղբիւրի մասին տե՛ս ստորեւ եւ **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 196-201. Հրատ.՝ **Անանուն**, 684 թուականի պատմութիւն..., – ՄՀ, հտ. Ե, էջ 795-895:

[5] Տարբերակները՝ Պերոժ-Կաւատ, Պերոզ-Քաւատ (Քաղաք), Փերոզ-Քաւատ (Դասխ., Բ.ժթ, էջ 178; 180; Բ.իդ, էջ 187; Բ.իե, էջ 190; Բ.լա, էջ 212; Բ.լբ, էջ 213; Բ.լթ, էջ 238):

[6] Դասխ., Բ.ժթ, էջ 177: Թերեւս, «684 թուականի պատմութիւնն» այստեղ եւս ունեցել է «Պերոզ-Կաւատ», իսկ արտագրող Դասխուրանցին, առաջին անգամ հանդիպելով դրան՝ փոխել է իրեն ծանօթ «Պերոզապատ»-ով, բայց յետոյ վերստին տեսնելով նոյնը՝ արդէն հետեւել է սկզբնաղբիւրի գրութեանը:

տը՝ յաղթող»[1]՝ վկայելով, որ քաղաքի կառուցողը եղել է Կաւատ Ա Սասանեանը (488-496, 498-531)։ Նոյնն են պնդում նաեւ ուշ սասանեան պատմական աւանդոյթին հետեւող արաբ մատենագիրները՝ Իբն Խորդադբէհ, Իբն ալ-Ֆակիհ, ալ-Բալազուրի, Իբն ալ-Ասիր, Եակուտ, ըստ որոնց՝ իր տիրակալութեան սկզբում Կաւատը կարողացաւ յաղթահարել Պարսից ազնուականութեան հզօր դիմադրութիւնը (իրենց անգամ յաջողուել էր 3 տարով գահ բարձրացնել նրա եղբայր Ջամասպին՝ 496-498 թթ.), ապա յաղթել Կայսրութեան հրահրմամբ Իրանի հիւսիս-արեւմտեան շրջանները ներխուժած հիւսիսկովկասեան հոն-սաւիրների ցեղերին (503-504 թթ.), եւ նրանց դուրս մղելով՝ ամրացրեց Կովկասեան պաշտպանական ուղղութիւնը՝ մասնաւորապէս կառուցելով Բայլագան եւ Բերդաա (Պարտաւ) քաղաքները. իսկ Կաւատի որդի Խոսրով Անուշիրուանն էլ աւելի ամրապնդեց այդ սահմանագիծը՝ կառուցելով Դերբենդի քարաշէն պարիսպը[2]։ Այս պատմութեան հիման վրայ Պերոզ-Կաւատ – Պարտաւ քաղաքի կառուցման ամենից յարմար ժամանակը պիտի համարել Ջ դ. առաջին տասնամեակի երկրորդ կէսին սկսուած պարսկա-բիւզանդական հաշտութեան եօթնամեակը (506-512 թթ.), երբ Կաւատն Անաստաս կայսրից նաեւ մեծ գումար ստացաւ Կովկասեան պաշտպանական գիծը սաւիրների դէմ ամրապնդելու նպատակով[3]։ Եւ դժուար չէ կռահել, որ «Պերոզապատ» անուանատարբերակը, ըստ ամենայնի՝ առաջացել է «Պերոզ-կաւատ» անուան ձեւափոխման հետեւանքով՝ Դասխուրանցու կամ նրա որեւէ նախորդի գրչի տակ։ Դա տեղի է ունեցել, թերեւս, քաղաքանուան ժողովրդական պարզեցուած ընկալման եւ հայ մարդու համար սովորական «-պատ» վերջնամասով քաղաքանունների հետ զուգորդութեան արդիւնքում (հմմ. Վաղարշա-պատ)։ Իսկ «Պերոզ-ա-պատ», այսինքն՝ «Պերոզի քաղաք» ընկալումից էլ պիտի առաջացած համարել այն մտայնութիւնը, թէ քաղաքն իբր կառուցուել է Պերոզի հրամանով։

---

[1] Տե՛ս, օր.՝ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, Եր., 1948, էջ 262։

[2] Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, Կազմեց՝ **Հ. Նալբանդյան**, էջ 29; 125; **Н. А. Караулов**, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, – СМОМПК, вып. XXXI, Тифлис, 1902, с. 15; вып. XXXII, Тифлис, 1903, с. 15; вып. XXXVIII, с. 41, 43; Արաբական աղբյուրներ, Բ (Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 11), **Իբն ալ-Ասիր**, Թարգմ. բնագրից, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ **Ա. Տեր-Ղեւոնդյանի**, Եր., 1981 (յետայսու՝ **Իբն ալ-Ասիր**), էջ 42; Արաբ մատենագիրներ, Գ, Ներածությունը եւ բնագրից թարգմանությունները **Ա. Տեր-Ղեւոնդյանի** (Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 16), Եր., 2005, էջ 265, 448, 494-495; **М. А. Гизбулаев**, Арабский источник о средневековой истории Восточного Кавказа: *Китаб фл-булдан* Ибн ал-Факиха, – "Вестник" Томского ГУ, История, 2019, с. 134.

[3] Այդ շրջանի պարսկա-բիւզանդական առնչութիւնների մասին մանրամասն պատմում են Պրոկոպիոսը (De bello Pers. I, 7, 5. **Պրոկոպիոս Կեսարացի**, 1967, էջ 154) եւ ասորական ժամանակագրութիւնները (**Н. В. Пигулевская**, Месопотамия на рубеже V-VI вв. н. э. Сирийская хроника Иешу Стилита как исторический источник, Москва-Ленинград, 1940, с. 130; **Ցոյնի**՝ Сирийские источники по истории народов СССР, Москва-Ленинград, 1941, с. 155). Հմմ. ՀԺՊ, հտ. II, էջ 211; **А. В. Гадло**, Этническая история Северного Кавказа. IV-X вв., Ленинград, 1979, с. 86-91; **Ю. Р. Джафаров**, К вопросу о первом появлении сабир в Закавказье, – ВДИ, 1979, № 3, с. 163-172.

Այսպիսով, Շուփհաղիշոն կարող էր լինել Պարտաւի արքեպիսկոպոսը, քանի որ այդ քաղաքը կառուցուել էր, ըստ ամենայնի՝ 506-512 թթ. միջակայքում եւ մեծ խոչընդոտ չկայ՝ Վաղարշ արքայի (484-488) կողմից Աղուանից թագաւորական գահին հաստատուած Վաչագան Բ-ի օրօք աթոռակալած «աւագ եպիսկոպոսապետին» ժամանակակից համարելու նորակառոյց քաղաքի կեանքի գոնէ առաջին տարիներին: Ճիշտ է, մնում է միւս կարեւոր հակասութիւնը՝ նորակառոյց քաղաքի՝ արքեպիսկոպոսանիստ լինելու հանգամանքը: Թէպէտ արաբ մատենագիրների վերը բերուած պատմութիւնը թոյլ է տալիս մտածել, որ Կովկասեան ամրութիւնները եւ Ջողի կաւաղիւսէ պարիսպը յաղթահարած սաւիրների ասպատակութիւնների կասեցումից յետոյ կառուցուած Պարտաւն ի սկզբանէ իբրեւ մարզպանանիստ է յղացուել (այսինքն՝ Աղուանից մարզպանութեան վարչական կենտրոնը Ջողից տեղափոխուել է այնտեղ Ջ դ. երկրորդ տասնամեակի սկզբին), դա դեռ բաւարար չէ՝ հէնց նոյն ժամանակ Ջողից Պարտաւ տեղափոխուած համարելու նաեւ Աղուանից եկեղեցու նստոցը, ինչն «Աղուանից գաւազանագիրք»-ը վերագրում է Հայոց թուականութեան առաջին տարուան՝ 552 թ.: Բայց այդ թուագրման հաւաստիութիւնը եւս չի կարող անբեկանելի համարուել, քանի որ «Գաւազանագիրք»-ը կանոնաւոր, ոչ խառնակ ժամանակագրական փաստեր է հաղորդում միայն Աբաս Մեծիրանցուց սկսած, եւ դրանից տրամաբանօրէն բխում է, որ այդ կաթողիկոսի մասին տեղեկանին գտնւում է հեղինակի ունեցած առաւել եւ պակաս հաւաստի տուեալների սահմանագծում: Այսինքն՝ եթէ կարելի է մեծապէս վստահել Աբասի կաթողիկոսութեան աւարտին վերաբերող հաղորդումների ճշտութեանը (օր.՝ իշխած տարիների քանակին՝ 44), ապա դրա սկզբին վերաբերող տուեալների վրայ պիտի տարածուի նոյն կասկածը, ինչին արժանի են այդ կաթողիկոսի նախորդների մասին խառնակ տեղեկութիւնները: Օր.՝ աղբիւրը հաւաստի ոչինչ չի հաղորդում Աբասի անմիջական նախորդի մասին, որը, պարզ է՝ այնտեղ նշուած Երեմիան չի եղել, ով իրականում՝ Աբասից մէկ դար առաջ ապրած Մաշտոցի ժամանակակիցն էր. լրիւ վստահ չենք, որ Աբասի իրական նախորդը Վաչագանի ժամանակակից Շուփհաղիշոն է եղել, ով մինչեւ 552 թ. հասնելու համար պիտի աթոռակալած լինէր կէս դարից ոչ պակաս[1]: Փորձելով առանձին շերտերով տարանջատել Աբասի իշխանութեան սկզբի մասին «Գաւազանագրքի» յայտնած (աւելի ճիշտ՝ նրանից ՊԱ-ի Բ.դ գլուխ տեղափոխուած) տեղեկութեան մասերը՝ դրանցից առաջինը կարելի է համարել Ջ դ. սկզբների պատմական իրողութիւններին համապատասխանող տուեալը՝ Աղուանից կաթողիկոսութիւնը Ջողից Պարտաւ տեղափոխելու մասին (իր գլխաւոր պատճառով հանդերձ). «Յետ այսորիկ գերեցաւ ի խազրաց աշխարհս Աղուանից, հրկէզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք... ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի Ջողայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի»: Իսկ ենթադրեալ մի երկրորդ աղբիւրի յանգող կարելի է համարել

[1] «Գաւազանագրքում» Շուփհաղիշոյին յատկացուած երկրորդ տեղը՝ Եղիշայ առաքեալից յետոյ, բացարձակ եւ առայժմ անբացատրելի անաքրոնիզմ է:

Աբասի՝ կաթողիկոս դառնալու թուականին վերաբերող տուեալը. «Ապա յերկրորդ [resp. Ի-երորդ[1]] ամին Խոսրովու արքայից արքայի, յորժամ սկիզբն հայ թուականին եղին, ի սոյն ամի... նստուցին հայրապետ զՏէր Աբաս ի գաւառէն Մեծարանց»[2]: Ինչ-որ մի անհաւաստի աղբիւրից եկող եւ իրական պատմութեանը հակասող է նաեւ, ըստ ամենայնի՝ հայ քաղկեդոնական պատմական աւանդոյթին յանգող՝ Աբասի մասին կրկնուած յօրինուածքը, իբրեւ թէ նա չէր ընդունել «եւ խաչեցար վասն մեր» միաբնակ բանաձեւը, որն իբր ընդունեց լոկ Գարդմանի եպիսկոպոս Ստեփաննոսը Եզր Արահեզացի կաթողիկոս օրօք (իրապէս ե՛ւ Աբասի, ե՛ւ Ստեփաննոսի ու մոնոթելիզմին հարած Եզրի դէպքերում եղել է ճիշտ հակառակը[3]): Ի դէպ, ուրիշ աղբիւրներից ոչինչ յայտնի չէ հիւսիսկովկասեան «խազիրների»՝ 550-ական թթ. Իրան ներխուժելու մասին, կովկասեան սահմանը տարիներ առաջ հաստատապէս ամրացրել էր Խոսրով Անուշիրուան արքան[4]:

Այսպիսով, «Աղուանից գաւազանագրքի» խառնակ տուեալներից մէկի պատճառով չի կարելի անտեսել Աղուէնի ժողովի արձանագրութեան վկայութիւնը Աղուանից կաթողիկոսարանի՝ Ջողից Պարտաւ տեղափոխուած լինելու մասին արդէն Վաչագանի ու Շուփհաղիշոյ կաթողիկոսի օրօք: Աղուանից մարզպանանիստը եւ կաթողիկոսանիստը մեծ հաւանականութեամբ Ջողից Պարտաւ են տեղափոխուել Ջ դ. երկրորդ տասնամեակի սկզբներին, ուստի Աղուէնի ժողովը կարելի է թուագրել հէնց 510-ական թթ.: Իսկ աւելի վաղ տուեալներ հաղորդող «Վաչագանի վէպ»-ի ստեղծումը վերագրելի է Ջ դ. ամենաառաջին տարիներին, թերեւս, 501-502 թթ., երբ Պարտաւը դեռ կառուցուած չէր, իսկ երկիրը խաղաղ շրջան էր ապրում (սաւիրների ներխուժումից առաջ): «Վէպ»-ն իրօք չէր կարող գրուել Վաչագանի գահակալումից անմիջապէս յետոյ. թէպէտ իբրեւ միջնադարեան դասական ոճի հոգեւոր վիպերգութիւն՝ այն չի տալիս դէպքերի ժամանակագրութիւն ըստ տարիների (փոխարէնը՝ լոկ հերոսի բարի գործերի շարադրանք՝ տրամաբանական հերթականութեամբ), պարզ է, որ Վաչագանին վերագրուած գործերը ժամանակային մեծ միջակայք են ենթադրում՝ վաղարշ արքայի օրօք գահակալելը (ըստ ամենայնի՝ 485 թ. աշնանը, Նուարսակի պայմանադրութեան համատեքստում);

---

[1] Ըստ Հ. Ն. Ակինեանի (Մովսէս Դասխուրանցի..., էջ 164)՝ «յերկրորդ ամին Խոսրովու» հարկ է ուղղել «ի քսաներորդ ամին», հաւանօրէն «ի Ի ամին» «ի Բ ամին» կարդացուած է: Խոսրով Ա-ի քսաներորդ տարին է 551/552»: Նշելի է, որ Անուշիրուանի երկրորդ տարին է Դուինի ժողովի գումարման (այսինքն՝ Աբասի ձեռնադրման) տարի համարում նաեւ Թ դարի վրաց մատենագիր Արսէն Սափարելին, ով իր «Վրաց եւ Հայոց բաժանման մասին» երկում օգտուել է հայ քաղկեդոնական պատմական աւանդոյթի («Նարրացիոյի») տեղեկութիւններից (տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները, հտ. Ա, էջ 40):

[2] **Դասխ.**, Բ.դ, էջ 119:

[3] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 194.

[4] Հմմ. **Th. Nöldeke**, Geschichte der Perser und Araber, S. 340; **A. Christensen**, L'Iran sous les Sassanides, Copenhague, 1944, p. 359; **М. М. Дьяконов**, Очерк истории Древнего Ирана, Москва, 1961, с. 313-314; **А. В. Гадло**, Этническая история Северного Кавказа, с. 77-94; ՊԱ-ի Բ.դ գլխի «խազարական արշաւանքին» հաւաստիութիւն է փորձում վերագրել, օր.՝ Կ. Տրեւերը (Очерки по истории и культуре..., с. 228, տե՛ս նաեւ **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 218):

քրիստոնէութիւնը ողջ երկրում վերականգնելը; Արցախում, Կամբէճանում եւ Աղուանքում մի քանի աղանդների վերացումը; Զաքարիայի եւ Պանդալէոնի նշխարների գիւտը ճիղբերի Ցրի քաղաքում (այսինքն՝ Բուն Աղուանքում) եւ Գրիգորիսի նշխարների գիւտը Ամարասում (այսինքն՝ Արցախում)[1]: Եզրափակիչ սիւժէում սրբերի յիշատակն ամեն տարի երկիցս տօնելու մասին խօսքից երեւում է («եւ ինքն ի տարւոջն երկիցս անգամ կատարէր զյիշատակ սրբոցն զերիս երիս աւուրս»)[2], որ դա գրուել է Գրիգորիսի նշխարների գիւտից ու դրանք Դիւտական հասցնելուց ո՛չ անմիջապէս յետոյ. պարզ է, որ գոնէ մի քանի տարի արքան պիտի նման երկրպագութիւն կատարած լինէր, որպէսզի հեղինակը գրէր այդպէս: Նոյն կերպ՝ Ա.ժթ գլխում Զաքարիայի ու Պանդալէոնի նշխարների գիւտից յետոյ արքայի բերկրանքի եւ սրբերին երկրպագելու նկարագրութիւնն իր բարձրաոճ մանրամասներով թողնում է թարմ շարադրուածի տպաւորութիւն, բայց գլխի վերջին պարբերութիւնը՝ զաւակ չունեցող արքային նշխարների գիւտի շնորհիւ առաջնեկ Պանդալէոնի աստուածային շնորհման մասին, ցոյց է տալիս, որ շարադրելու պահին գիւտից գոնէ 9 ամիս պիտի անցած լինէր: Իսկ Ամարասում Գրիգորիսի մասունքների յայտնաբերման պահին (այս դպուագը եւս թարմ գրուածի տպաւորութիւն է թողնում) Վաչագանն արդէն նաեւ պատանեկան տարիքի («տղայ հասակաւ») դուստր ունէր (Խնչիկ անունով)[3], ուրեմն՝ գոնէ 11-12 տարեկան, որը մի նոր ժամանակային միջակայք է ցուցանում: Այսպիսով, «Վէպի» շարադրման ժամանակը (Զ դ. առաջին տարիները)՝ դա կաւատի՝ գահին վերադառնալուն (498 թ.) յաջորդած տարիներն էին՝ մինչեւ պարսկա-բիւզանդական կարճատեւ պատերազմը (502-504 թթ.) եւ հոն-սաւիրների ներխուժումը (503-504 թթ.), երբ «անիծեալ եւ չար Պարսիկք մարզպանքն» (Ա.ժը, էջ 52) երկրում չկային (իրենց գործառոյթները, թերեւս, փոխանցուած էին Աղուանից թագաւորին), եւ երբ Հայաստանում էլ շարունակւում էր Վահան Մամիկոնեանի մարզպանութեան բարեյաջող շրջանը, իսկ Վիրքում՝ Վախթանգ Գորգասալի թագաւորութեան:

Ամփոփելով «Վաչագանի վէպ»-ում ներկայացուած պատկերը՝ կարելի է նաեւ արձանագրել, որ Սասանեանների վարչական փոփոխութիւններից (ռէֆորմներից) յետոյ մօտ կէսդարեայ ժամանակահատուածում ձեւաւորուել էր «Աղուանք» հասկացութեան նոր իմաստը. նրա տակ ընկալւում էր արդէն ողջ մարզպանու-

---

[1] Բարեպաշտ արքան պէտք է յատուկ պաշտէր սրբերի մասունքները (տե՛ս **Mahé J.-P.**, Vačagan III le Pieux et la culte des reliques, – RÉarm., t. 35, 2013, p. 113-129; **Ա. Յակոբեան**, Աղուանից թագաւոր Վաչագան Բ-ի «Բարեպաշտ» կերպարի կերտումը, էջ 183-193):

[2] **Դասխ.**, Ա.իգ, էջ 86:

[3] «Էր դուստր մի Խնչիկ անուն՝ տղայ հասակաւ [*a հասակով*], յոյժ սիրելի արքայի, յորում անուամբ շինեալ էր դաստակերտ մի. տայ [*bclrvz* ետ] նմա մասն մի ի սրբոյն նշխարացն եւ ի նորին դաստակերտին մեծապէս կատարի յիշատակ պէսպէս պատուով» (**Դասխ.**, Ա.իգ, էջ 85-86): «Խնչիկ» անունը ուդիերէն եւ լեզգիերէն նշանակում է «աղջիկ», «քոյր» (տե՛ս **Ե. Լալայան**, Նիժի եւ Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից, – «Տեղեկագիր» ՀԽՍՌ գիտութեան եւ արվեստի ինստիտուտի, 1926, հմր 1, էջ 171; **В. Гукасян**, Удинские слова в "Истории Албан", – "Известия" АН Азерб. ССР, Серия литературы, языка и искусства, 1968, № 1, с. 57).

թեան տարածքը՝ Հակարի (Արցախի եւ Սիւնիքի սահմանագիծը) եւ Արաքս գետերից մինչեւ Կովկասեան լեռնաշղթայ եւ Դերբենդ[1]: Ուտիքի եւ Արցախի հայութիւնը միջնադարին բնորոշ աշխարհընկալման սկզբունքներով ընդունել էր այդ անունն իբրեւ «իր» երկրի անուանում, թէպէտ եւ նրա վրայ տարածւում էր Կապաղակ կենտրոնով Բուն Աղուանքի թագաւորութեան եւ Ջող/Դերբենդ կենտրոնով Աղուանից կաթողիկոսութեան իշխանութիւնը: Ժամանակի ընթացքում, յատկապէս՝ մարզպանական ու եկեղեցական կենտրոնները Կուրի աջափնեայ Պարտաւ տեղափոխելուց յետոյ, այդ մտայնութիւնն աւելացաւ ու հասաւ այն աստիճանի, որ Կուրի աջափնեակի հայութիւնն սկսեց իրեն համարել «Աղուանք» երկրի իսկական տէրը, իսկ ձախափնեակի բուն-աղուանական, անգամ քրիստոնեայ փոքր ժողովուրդների նկատմամբ քամահրական վերաբերմունք դրսեւորել՝ իբրեւ լեռնականների ու բարբարոսների: Դրանով խթանուեց նրանց մի ինչ-որ մասի հայացումը, ընդ որում՝ միւս մասի մի հատուածը հետագայ դարերում ձուլուեց վրացի էթնոսի մէջ (Հերէթ), իսկ մէկ այլ հատուած, մահմեդականութիւն ընդունելով, պարսկացաւ (Շիրւան). մինչեւ նոր ժամանակներն իրենց բուն-աղուանական էթնիկ դէմքը պահպանեցին լոկ քրիստոնեայ ուդիները (Կապաղակի եւ Շաքիի շրջակայքում), ինչպէս նաեւ Դաղստանի հարաւի ու Ադրբեջանի հիւսիսի՝ լեզգիական լեզուներով խօսող ժողովուրդները (լեզգիներ/լեկեր, թաբասարանցիներ, ագուլներ, ծախուրներ, ռութուլներ, բուդուղներ, կռիզներ, խինալուղցիներ եւն): Մետաէթնիկ «աղուան» ընդհանրութեան բազմացեղ մնալը եւ այդ անուան տակ միասնական էթնոսի չձեւաւորուելը պատճառներից մէկն էր «Աղուանք» եզրոյթի հեշտ ընկալման Կուրի աջափնեակի հայերի կողմից՝ ի տարբերութիւն, օր.՝ վրաց մարզպանութեան մէջ մտած Գուգարք նահանգի հայութեան, որը «Վիրք» եզրոյթի տարածումը դէպի հարաւ ընկալեց էական վերապահումներով, քանի որ այդ անուան տակ դարեր շարունակ ճանաչում էր վաղուց կայացած արեւելաքարթուեղական էթնոսին՝ վրացի ժողովրդին[2]: Ահա այս դարաշրջանի հասարակական բնորոշ ընկալումներն ակնառու են «Վէպ»-ում եւ «Աղուէնի կանոններ»-ում:

Այսպէս՝ Վաչագան Բ-ի երկարատեւ թագաւորութեան շրջանում տեղի ունեցած բազմաթիւ եկեղեցական ժողովների մասին յիշատակումներ են պահպանուել, բայց յատկանշական է, որ նշանաւոր «Աղուէնի կանոնները» հէնց աջափնեակում կայացած մի ժողովի արդիւնքն են, ընդ որում՝ դրանք երկրում հաստատագրում էին Հայոց կանոնագրքերի դրոյթների գործառումը: Աղուանից եկեղեցու կապաղակեան եւ չողեան կենտրոնների մասին «Վաչագանի վէպ»-ն ուղիղ տեղեկութիւններ չի հաղորդում, փոխարէնը՝ ողջ երկրում ամրապնդում է Գրիգոր Լուսաւորչի, Հռիփսիմէի եւ Գայիանէի, թերեւս՝ Թադէոս առաքեալի եւ յատկապէս՝

---

[1] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 142-149.

[2] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 242-271; **Ցոյնի՝** К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании, с. 37-38; **A. Akopyan, A. Galstyan**, Concerning the study of ethnic processes in the Caucasian Albania, p. 1-12; **Г. Айвазян**, Об удинской этноконсолидации собственно албанцев-христиан, с. 20-44.

Լուսաւորչի Գրիգորիս Թոռան պաշտամունքի համակարգը՝ ընդ որում՝ դրան ենթարկելով բուն-աղուանական (կապաղակեան-չողեան) շրջանի Զաքարիա եւ Պանդալէոն սրբերի պաշտամունքը: «Վէպ»-ը քիչ ջանք է թափում՝ վեհացնելու Աղուանից եկեղեցու նախորդ շրջանի հովուապետներին. Ջողում աթոռակալած Յունան եպիսկոպոսապետը յիշւում է մի պատահական դրուագում («յոյժ ճշմարտախոհ... որ ի Մասքթաց աշխարհին էր»), իսկ Շուփհաղիշոն, ով եւս դեռ Ջողում էր աթոռակալում, ընդամենը մէկ անգամ է ի յայտ գալիս (որպէս «աւագ եպիսկոպոսապետ»): Փոխարէնը՝ Յովհան Մանդակունի Հայոց կաթողիկոսը, ում մատանիով կնքուած՝ Լուսաւորչի, Հռիփսիմէի եւ Դայիանէի նշխարներն Աղուանք էր տարել նրա աշակերտ Մատթէ երէցը, հռչակւում է իբրեւ «հայրապետ» (ըստ Բ խմբի ձեռագրերի)[1]: Հեղինակը չի տալիս Աղուանից թագաւորութեան մայրաքաղաք Կապաղակի անունը (Կուրի ձախափնեակում յիշուած են լոկ ճիղբերի Ցրի քաղաքը եւ Հակու գիւղը), փոխարէնը՝ ողջ Աղուանից եկեղեցու համար սրբագործում են հայկական աջափնեակի պաշտամունքային կենտրոնները՝ Ամարասը, Դարահոջը, Սոհառնը, Քարուէճը, Վե[հ]կերտը, Դիւտականը եւն: Փաստօրէն՝ «բուն-աղուանական» իրողութիւններից «Վէպ»-ում լրջօրէն սրբագործման առարկայ է դարձել միայն ինքը՝ Վաչագան Բարեպաշտ Արշակունի թագաւորը՝ իր Շուշանիկ աշխարհատիկնոջով, ով իր իշխանութեան ամրապնդման երաշխիքը, ըստ ամենայնի՝ վստահօրէն կապել էր հայկական աջափնեակի վրայ յենուելու քաղաքական գծի հետ[2]:

Վաչագան Բ-ի եւ նրա թագաւորութեան վախճանն արձանագրուած չէ որեւէ հաւաստի աղբիւրում, իսկ գրականութեան մէջ աւանդաբար դրուել է կլորացուած 510 թ.[3]: Սակայն Աղուէնի ժողովի տուեալների հիման վրայ այդ ժամանակը հարկ է երկարաձգել գոնէ մինչեւ 510-ական թթ. կէսերը: Իսկ այդ դէպքում հնարաւոր է դառնում Վաչագանի իշխանութեան աւարտը ենթադրաբար հասցնել մինչեւ Սասանեանների այն վարչական ուէֆորմը (առայժմ՝ իր այլ մանրամասներով անյայտ), որով Կաւատ Ա-ն վերացրեց թագաւորական իշխանութիւնը նաեւ Վիրքում (Քարթլի). Պրոկոպիոս Կեսարացու վկայութեան հիմքով Գուրգէն Վրաց թագաւորի գահընկէց արուելը մասնագէտները թուագրում են մօտաւորապէս 523 թ.[4]: Դրամագիտական մի տուեալ թոյլ է տալիս լրացուցիչ փաստարկել Աղուանքի համար այդ թուականի հաւանականութիւնը: Էդ. Խուրշուդեանը բերում է Ֆ. Գըրնէի յայտնաբերած ու 1993 թ. հրատարակած՝ Կաւատ արքայի 35-րդ տարում (=522/523 թ.) թողարկուած երկու միատեսակ դրամների վրայ առկայ միացագրի

---

[1] **Դասխ.**, Ա.իա, էջ 67:

[2] Վաչագանի անընդող սրբագործումն էլ աջափնեակի հայութեան կողմից եղել է այնքան «յաջող», որ նրա կերպարը շարունակաբար ներոսացուել է հետագայ դարերի բազմաբնոյթ կրօնաբարոյագիտական գրուածքներում, մտել հայ իշխանական տների (Առանշահիկներ եւն) տոհմաբանութիւնների, ժողովրդական հեքիաթների ու նոր շրջանի ռոմանտիկ արձակի մէջ (Ղ. Աղայեանի «Անահիտ եւ Վաչագան»), դարձել բարեպաշտութեան ու նուիրումի պետական խորհրդանիշ (ԱՀ «Վաչագան Բարեպաշտի շքանշան»):

[3] Վերջինը տե՛ս **Հ. Ս. Սվազլյան**, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 215:

[4] **Proc.** De bello Pers. I, 12, 4-14; **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 154; Очерки истории СССР, Кризис рабовладельческой системы, с. 251; Очерки истории Грузии, т. II, с. 141-143.

(մոնոգրամ) ընթերցումը 'l'n ձեւով, այսինքն՝ ALAN կամ ARAN[1]: Առաջին անգամ 523-ին այդպիսի միացագրի ի յայտ գալն արդէն Ֆ. Գըրնէն (իբրեւ տարբերակ) կապում էր հէնց Վրաց թագաւորութեան հետ մէկտեղ նաեւ Աղուանից թագաւորութիւնը վերացնելու եւ երկուսում էլ զուտ մարզպանական վարչակարգ հաստատելու հետ: Ի դէպ, այս առումով սասանեան դրամագիտական նիւթը զարմանալի հետեւողականութիւն է դրսեւորում. նշելի է, որ ARM (=ARMINA/Հայաստան) մակագրութեամբ սասանեան դրամներն ի յայտ են գալիս միայն Վարահրան Ե Գուր (420-438) արքայի օրօք, որի հրամանագրով էր 428 թ. Հայաստանում վերացուել Արշակունեաց թագաւորութիւնը եւ մտցուել մարզպանական կառավարում[2]: Այսպիսով, Բուն Աղուանքի անտիկ եւ վաղմիջնադարեան թագաւորութեան վերջին ներկայացուցիչ Վաչագան Բ Բարեպաշտ Արշակունուն կարելի է վերագրել շուրջ 38-ամեայ իշխանութեան շրջան (485-523 թթ.):

Հարկ է նաեւ նկատի ունենալ, որ աղբիւրների բացակայութեան պայմաններում հնարաւոր չէ Վաչագանի թագաւորութեան բարեյաջող առաջին տասնամեակների հիման վրայ անպայման ենթադրել, թէ բարեյաջող է եղել նաեւ մեզ առայժմ անյայտ վերջին տասնամեակը (թէկուզ՝ Հայոց եւ Վրաց օրինակով): Ի դէպ, Ստեփաննոս Օրբէլեանի պնդումը Վաչագան Աղուանից թագաւորի եւ նրան «փեսայացուցեալ» Աբլ Աբասի՝ իբրեւ թէ Բարկուշատում վախճանուելու մասին («Ապա մեռան ի Բարկուշատ թագաւորքն Վաչագան եւ Աբլ Աբաս»)[3], իրապէս պիտի համարել լոկ Թ-ժ դարերի ինչ-որ անյայտ իրողութիւնների արձագանք: Առաւել մեծ հաւանականութեամբ՝ լոկ գրական հողի վրայ էր յղացուել նաեւ Վաչագանի տապանագիրը Մեծ Կուանք գաւառի՝ Ջրվշտիկ կոչուած Եղիշայ առաքեալի վանքում (մատուռներից մէկի բարաւորին, 7 տող). «Այս է հանգիս/տ Վաչագան թագաւ/որին. Աաաաած ողորմի Հայրապ/ետա[յ] եւ ոյր ծնողացն, որ / շինեց զեկեղեցիս՝ յառա/ջնորդութի[ւն] Տէր Սիմեւոնի. / Թիւ :ՉԼԵ: էր [=1286 թ.]»[4]:

Աղուանից թագաւորութեան վերացումից յետոյ Ջ դարի աղբիւրները խօսում են լոկ ինչ-ինչ իրադարձութիւնների մասին, որոնց մասնակից է եղել Աղուանից եկեղեցին, որի կենտրոնն արդէն աջափնեայ Պարտաւում էր: Հայոց կաթողիկոս Սահակ Ուղկացու (կամ Հարքացու) օրօք (528-538 կամ 534-539 թթ.) տեղի ունեցած կարինի (Թէոդոսուպոլսի) ժողովի արձանագրութեան մէջ կայ հետեւեալ՝

---

[1] **F. Gurnet**, A new Sasanian Mintmark? – "Journal of the Oriental Numismatic Society", № 138 London,1993, p. 5; **Э. Ш. Хуршудян**, Армения и Сасанидский Иран (Историко-культурологическое исследование), Алматы, 2003, с. 190-193.

[2] Հմմ. **Э. Ш. Хуршудян**, Армения и Сасанидский Иран, с. 186. Համեմատելով՝ նշենք, որ Է դարի ողջ առաջին կէսին, ընդհուպ մինչեւ Սասանեանների անկումը (652 թ.) Հայոց, Աղուանից եւ Վրաց մարզպանութիւնների քրիստոնեայ բնակչութիւնն օգտւում էր լայն ինքնավարութիւնից, սակայն Սասանեան արքաների անուններով դրամները, ի տարբերութիւն երեք երկրների կիսանկախ թագաւորների ժամանակի (Դ-Ե դարեր), հատւում էին անխափան կերպով (տե՛ս անդ, էջ 186-187, 193):

[3] **Օրբ.**, գլ. Ի, էջ 62: Հմմ., օր.՝ **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմությունն, էջ 215:

[4] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, Կազմեց՝ **Ս. Գ. Բարխուդարյան**, Եր., 1982, էջ 110, ճ[մր] 361:

թուագրում եւ մասնակիցների ցանկ ենթադրող վկայութիւնը. «որ ժողովեցան յամենայն քաղաքաց եւ յաշխարհաց Յունաց եւ ի Հռոմոց եւ ի մեծն Հռովմայ, հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ, որ ... ժողով հրամայեաց լինել ի միջասահմանս աշխարհին Հայոց, Վրաց եւ Աղուանից: Որ ժողովեցան բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ: ... Եւ ժողովեցան բազում եպիսկոպոսք Վրաց եւ Աղուանից ի քաղաքին Թէոդոսուպաւղիս եւ միաւորեցան ի հաւատս սրբոց առաքելոցն եւ ի կանոնս սուրբ ժողովոյն»[1]: Յուստինիանոս Ա-ի օրօք այդ ժողովի մասին հաղորդում է եւ ժողովի ընդունած կանոններին յղումներ անում Ը դարի հեղինակ Ստեփաննոս Սիւնեցին՝ «Գիրք Թղթոց» մտած մի երկում («Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, մեծի իմաստասիրի՝ Պատասխանի Թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալն էր»)[2]: Հասկանալի չէ միայն, թէ ինչու 530-ական թթ. ընդունուած այս ժողովական կանոնների բնագրում յիշատակուած չէ Սասանեան արքայից արքայի (Կաւատի կամ Խոսրով Անուշիրուանի) գահակալութեան տարին. թէպէտ՝ գուցէ, դա պարզապէս այն պատճառով էր, որ ժողովը տեղի էր ունեցել Կարինում, այսինքն՝ Հայաստանի բիւզանդական մասում: Յաւելենք, որ ըստ Փիլոն Տիրակացու «Ժամանակագրութեան»՝ իր իշխանութեան սկզբում Յուստինիանոս Ա-ն (527-565) յետ էր կանգնել Յուստինոս Ա-ի (518-527) գծից, ով մերժել էր Զենոն եւ Անաստաս կայսրերի (474-491 եւ 491-518 թթ.) հաշտեցուցիչ դիրքորոշումը Քաղկեդոնի ժողովի դէմ պայքարողների խնդրում[3]: Նոյն ժամանակ Հայոց եկեղեցու հակաքաղկեդոնական պահուածքի մասին անուղղակի հաղորդում է նաեւ Ներսէս Գ Շինող կաթողիկոսի՝ Կոստանդ կայսերն ուղղուած 648 թ. նամակը (Սերիոս պատմիչի մօտ), ուր ասւում է. «մինչեւ հրաման տալ Կաւատայ արքայի եւ որդւոյ նորին Խոսրովու, եթէ իւրաքանչիւր ոք զիւր հաւատս կալցի, եւ զՀայս նեղել ոք մի՛ իշխեսցէ»[4]:

Աղուանից եկեղեցին, անկասկած, պիտի մասնակցած լինէր նաեւ Հայոց կաթողիկոս Յովհաննէս Գաբեղենացու կողմից գումարուած Դուինի 554 թ. ժողովին, որտեղ վերջնականապէս խզուեց կապը Քաղկեդոնի հետեւորդների հետ[5]: Յայտ-

---

[1] Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 244; **Սահակ Բ կաթողիկոս Ուղկացի**, Կանոնք ժողովոյն Կարնոյ, Քննական բնագիրը **Ա. Ցակոբեանի**, – ՄՀ, հտ. Գ, Անթիլիաս, 2004, էջ 377: Այլ թուագրում տե՛ս **Մ. Վան Էսբրուկ**, Բիւզանդիայի հայկական քաղաքականութիւնը՝ սկսած Հուստինիանոս Բ-ից մինչեւ Լեւոն Գ, – «Էջմիածին», 1997, հմր Զ-Է, էջ 172:

[2] Գիրք թղթոց, Երկրորդ հրատ., էջ 500-501; **Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝** Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալն էր, – ՄՀ, հտ. Զ, Ը դար, Անթիլիաս, 2007, էջ 549-550 (բնագիրը՝ **Յ. Քեօսէեանի**): Համմ. նաեւ Գիրք թղթոց, 1901, էջ 326, որտեղ, սակայն, բնագրի հէնց այս հատուածը բացակայում է:

[3] **Փիլոն Տիրակացի**, Ժամանակագրութիւն, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Ցակոբեանի**, – ՄՀ, հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 960:

[4] **Սեբէոսի եպիսկոպոսի** Պատմութիւն, Չորրորդ տպագրութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթագրութեամբք ի ձեռն **Ստ. Մալխասեանց**, Եր., 1939, գլ. ԽԴ, էջ 122-123 (յետայսու՝ **Սեբիոս**); Պատմութիւն **Սեբէոսի**, Աշխատասիրութեամբ՝ **Գ. Աբգարյանի**, Եր., 1979, էջ 149:

[5] Այդ ժողովի մասին մանրամասն տե՛ս **Հ. Պ. Անանեան**, Քննութիւն հայ եկեղեցւոյ պատմութեան Ե եւ Զ դարերու շրջանին, Վենետիկ – Ս. Ղազար, 1991:

նի է նաեւ Յովհաննէս Գաբեղենացու նամակը Աղուանից կաթողիկոս Աբասին (պահպանուած Մովսէս Դասխուրանցու երկում)[1], ինչպէս նաեւ նոյն հայցէատիրոջն ուղղուած Յովհաննէս Բ Երուսաղէմացի պատրիարքի (575-592) «Թուղթը», որով անյաջող փորձ է արւում՝ կտրելու Աղուանից եկեղեցին Հայոց կաթողիկոսի որդեգրած հակաերկաբնակ դիրքորոշումից[2]:

Բաժին 2

ԱՐՑԱԽԻ ԵՒ ՈՒՏԻՔԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՆՈՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

ա) ՀԱՅՈՑ «ԳԱՀՆԱՄԱԿ»-Ը ԵՒ «ՋՕՐԱՆԱՄԱԿ»-Ը ՆՈՐ ԼՈՅՍԻ ՆԵՐՔՈՅ

«Գահնամակ» եւ «Ջօրանամակ» անուններով մեզ են հասել Հայոց վաղ միջնադարի երկու փաստաթղթերի եզակի գրչագրական պատճէններ: Դրանցից առաջինը պահպանուել է անյայտ մագաղաթեայ ժողովածոյ-ձեռագրից հանուած եւ պահպանակի վերածուած թերթի վրայ (անցման երկաթագրով, երկու էջերի երկուական սիւնակների 25-ական տողերում ամբողջութեամբ): Այն 1850 թ. Թիֆլիսցի Համբարձում եւ Աւետիք Էնֆիաճեանցների գրավաճառանոցում յայտնաբերել է ժամանակի յայտնի մշակութային ու պետական գործիչ, բժիշկ Գէորգ Ախվերդեանը (Եու. Ա. Ախվերդով), որը, ճիշտ գնահատելով գտածոն ու նախնաբար վերծանելով նրա բնագիրը, 1851 թ. ուղարկել է այն Մոսկուա (նախ՝ իր արտագրութիւնը, ապա մի քանի ամիս անց՝ նաեւ մագաղաթեայ թերթը)՝ իր բարեկամ, Լազարեան հաստատութեան ուսուցչապետ Մկրտիչ Էմինին[3]: Վերջինս էլ 1858 թ. իրագործել է «Գահնամակ»-ի հրատարակութիւնը Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի՝ իր թարգմանութեան յաւելուածում՝ կից սիւնակում տալով նաեւ ռուսերէնը եւ կոչելով այն «Վռամական»[4]: Մ. Էմինի բնագիրը մի քանի տարի անց նրանից ստացաւ եւ հրատարակեց Հայր Ղ. Ալիշանը[5], իսկ աւելի ուշ նրա տպագրից այն

---

[1] **Դասխ.**, Բ.Է, էջ 122-126; **Յովհաննէս Գաբեղենացի**, Թուղթ առ Վրթանէս Սիւնեաց եպիսկոպոսն, Թուղթ առ Տէր Աբաս՝ Աղուանից կաթողիկոն, Քննական բնագրերը՝ **Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 445-452:

[2] Այս թուղթ **Յովհաննու Երուսաղեմի եպիսկոպոսի** է առ Աբաս Աղուանից կաթուղիկոս, Հրատ. **Ա. Տէր-Միքելեան**, – «Արարատ», 1896, էջ 252-256:

[3] Տե՛ս 1851 թ. Փետրուարի 13-ին Մ. Էմինին Գ. Ախվերդեանի գրած նամակում (**Գ. Ախվերդյան**, Նամակներ, Եր., 1964 [«Գրական ժառանգություն», 3], էջ 212-213):

[4] История Армении **Моисея Хоренскаго**, Перевел с армянского и объяснил **Н. Эмин**, Москва, 1858, с. 358-360; История Армении **Моисея Хоренскаго**, Новый пер. **Н. О. Эмина**, Москва, 1893, с. 295-297.

[5] Տե՛ս Սոփերք Հայկականք, հտ. Զ [Հրատ.՝ **Հ. Ղ. Ալիշան**], Վենետիկ – Ս. Ղազար, 1853, էջ 132-134, ծն. 111 (ծանօթագրութեան սկզբում Ղ. Ալիշանը նշում է. «...նամակ գահուց Սահակայ, որ յառաջ քան զամս սակաւս գտաւ ի մասնէ ի մագաղաթի երկաթագիր, ի կողս մատենի միոյ, ի Մոսկով քաղաքի, զոր եւ գաղափարեալ բանասիրի ուրումն եւ բարեկամի՝ մասնաւորեաց եւ մեզ. յորում թուին բարձք եօթանասուն. եւ պակասի պատճենն, որոյ եւ սկզբանն բանք թերատք...»):

վերահրատարակեցին Կարապետ Կոստանեանցը եւ Խորէն Ստեփանէն[1]: Հետագայում Մ. Էմինը պահպանակն ուղարկել է Վենետիկ, եւ Ղ. Ալիշանը 1890 թ. «Այրարատ» աշխատութեան մէջ վերահրատարակել է «Գահնամակ»-ը՝ կոչելով այն «Սահակեան» կամ «Վռամական» եւ կից գետեղելով ցայսօր Մխիթարեան միաբանութեան Ս. Ղազարի վանքի մատենադարանում պահպանուող մագաղաթեայ թերթի զոյգ էջերի լուսանկարները[2]: Բնագրի սկզբում առկայ Սահակ Պարթեւի նամակ-նախաբանի ռուսերէն թարգմանութիւնն ի դարի սկզբին իրենց մենագրութիւններում ներկայացրել են նաեւ Գր. Խալաթեանցը[3] եւ Նիկ. Ադոնցը[4], իսկ աշխարհաբար թարգմանութիւնն աւելի ուշ կատարել է Ստ. Մալխասեանցը[5]:

Երկրորդ փաստաթուղթը՝ «Ջօրանամակ»-ը, յայտնաբերուել է (եւ 1842 թ. գծագիր-նմանահանութեամբ հրատարակուել) բոլորակ (օվալաձեւ) աղիւսակի պատկերի ձեւով Յովհ. եպ. Շահխաթունեանցի կողմից՝ Ս. Էջմիածնի մատենադարանի մի հին ձեռագրում («ի մատեանս հնոց»), գրչուհի Տիրամայրի ընդօրինակութեամբ, ըստ եպիսկոպոսի՝ կցուած Շիրակացու «Ժամանակագրութեանը»[6]: Իր գտածոյի մասին հեղինակը յայտնում է. «Որովհետեւ յիշատակեցաւ ձմերոց զօրաց Հայոց, կարեւոր է գիտել ... զանմեռ մշտապատրաստ զօրացն զթիւ ի ժամանակի անդ թագաւորացն Հայոց. զայս ծանօթութիւն ոչ ոք ի պատմագրաց եթող ի գրուածս իւր յաղագս ապագայից, այլ ի խուզարկութեան մերում ի մատեանս հնոց՝ գտաք զայն աշխատասիրեալ յԱնանիայ Շիրակունւոյ ի վախճանի ժամանակագրութեան նորին, զոր ձեւացուցեալ էր ի քառաբաժին բոլորակ աղիւսակի միում, եւ զբաժինսն որոշեալ անուամբ դրանց՝ «դրունք հիւսիսային, հարաւային, արեւելեան եւ արեւմտեան», եւ յիւրաքանչիւր բաժինսն դասաւորութեամբ շարակարգեալ զնախարարսն կամ զազնուականս եւ զաշխարհսն եւ զթիւ յատկացեալ

---

[1] **Կ. Կոստանեանց**, Հիւսուածք Հայոց մարզպանների պատմութեան առաջին մասի համար, Գիրք Գ, Վիեննա, 1877, ներդիր՝ էջ 32-ից յետոյ (այստեղ են նաեւ «Ներսէսեան գահնամակը» եւ մագաղաթեայ պահպանակի «Ջօրանամակ»-ը); **Մովսէս Խորենացու** Հայկական պատմութիւն, Աշխարհաբար թարգմանեց եւ լուսաբանեց **Խ. ծ. վրդ. Ստեփանէ**, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 260-262, ծն. 690:

[2] **Հ. Ղ. Ալիշան**, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ – Ս. Ղազար, 1890, էջ 430-431 (լուսանկարը՝ ներդիրով, այդ էջերի միջեւ):

[3] Տե՛ս **Г. Халатянц**, Армянские Аршакиды в "Истории Армении" Моисея Хоренскаго, Опыт критики источников, ч. I, Москва, 1903, с. 297.

[4] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 249-250. Տե՛ս նաեւ **N. Adontz**, Armenia in the Period of Justinian..., Translated with partial revisions, a bibliographical note and appendices by **N. Garsoïan**, Lisbon, 1970, p. 191-195; Appendice III, p. 67-69.

[5] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Թարգմանություն, ներածություն եւ ծանոթագրություններ **Ստ. Մալխասյանի**, Եր., 1940, ծն. 338, էջ 338-339 (էջ 336-338-ում՝ բնագիրը). տե՛ս նաեւ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հտ. 1, Եր., 1981, էջ 613-615 (հատուածի կազմող՝ **Ա. Գ. Աբրահամեան**):

[6] **Յովհ. եպ. Շահխաթունեանց Շահրիարեցի**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, բաժանեալ յերկուս հատորս, հտ. Բ, Վաղարշապատ, 1842 (վերահրատ.՝ **Շահխաթունեանց Յովհ. եպ.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Աշխատասիրությամբ՝ **Ա. Տեր-Ստեփանյանի**, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2014), էջ 58-ին յաջորդող ներդիրը:

զօրացն նոցին, որոց ամենեցուն գումար թէպէտ ոչ համեմատի ամբողջ թուոյն՝ որ ի լուսանցի անդ աղիւսակին նշանակի եւ այն թերեւս ի սխալմանց գրչաց մատենին, բայց այնուամենայնիւ դարձեալ հարկաւոր դատեցաւ ի մէնջ դնել աստ զօրինակն այնր աղիւսակի, զոր հազիւ ուրեմն ի հնութեանց անտի թղթոցն կարողացաք կենդանացուցանել»[1]: Գրչի յիշատակագրութիւնը բոլորակ աղիւսակն իր մէջ պարփակող ուղղանկիւն զարդաշրջանակի աջ կողադաշտի ներքեւում է (նրա վերեւից գրուած ամփոփում-աւարտից յետոյ, երկու նմանահանութիւնում էլ՝ ձեւաւոր փակագծի մէջ առած ու փոքրատառով) եւ առանց լուրջ տարընթերցումների. «յիշեա՛ Քրիստոս ողորմութեամբ քո զՏիրամայրն և թո՛ղ զյանցանս նորա [գեղագիր նմանահանութեան մէջ՝ նորայ]»: ՄՄ հմր 1379 ձեռագրում (գրիչ՝ Թորոս, 1334 թ., Երզնկայ, ստացող՝ Կիրակոս Երզնկացի վարդապետ) առկայ է փաստաթղթի «մի թերի օրինակ» (թ. 1բ). դա բոլորակ աղիւսակի երկթերթ տարբերակի աջ կէսն է[2]: Յիշատակագրողը ստացողն է (թ. 1բ). «Յիշեա՛ Քրիստոս Աստուած զմեղուցեալ ծառայքս՝ զԿիրակոս վարդապետ եւ զՅովաննէս վարդապետ եւ զՆերսէս հոգեւոր որդեակն մեր ի քում գալըստեանդ. եւ քեզ փա՛ռք»:

Յ. Շահխաթունեանցի աղիւսակի վերծանութիւնը 1877 թ. կատարեց Կ. Կոստանեանցը՝ ընթերցելով նրա տողերը շրջանաձեւ, վերեւի կենտրոնից ժամացոյցի սլաքի ուղղութեամբ, ցաւօք՝ բաց թողնելով նախարարական «ազգերի» ներցուցակային համարակալումը (2 x Ա-ԻԱ, 2 x Ա-ԻԲ), չնկատելով «Հիւսիսայինն» ու «Հարաւայինն» «Դռների» տեղերի՝ յուշարձանի առաջին գրչի կողմից թոյլ տրուած շփոթը եւ սխալ ընտրելով հետագայում կրկնուած «Արեւմտեան» ու «Արեւելեան» դռնանունների ուղղուածութիւնը. դրա հետեւանքով այդ վերծանութեան մէջ բոլոր չորս դռնանունները սխալ տեղերում են յայտնուել, իսկ «Հարաւայինն» եւ «Արեւելեան» նախարարական «ազգերի» հերթականութիւնը ստացուել է շրջուած[3]:

---

[1] Անդ, էջ 58: Շիրակացու «Ժամանակագրութիւն» ասելով ԺԹ դարում հասկանում էին՝ իրականում Փիլոն Տիրակացու հեղինակած երկը (վերջին հրատ. տե՛ս **Փիլոն Տիրակացի, Ժամանակագրութիւն, Գիտա-քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 899-969): Հմմ. ՆՀԲ-ում (հտ. Ա, էջ 17). «Շիր. քրոն: Քրոնիկոն կամ Ժամանակագրութիւն՝ քաղեալ ի նախնեաց, մանաւանդ յԵւսեբեայ եւ ի Խորենացւոյն... եւ հասուցեալ ցաւուրս իւր, եթէ չկայցեն եւ ինչ ինչ պատուաստեալ յայլոց. զի է գործ խառնակ յոյժ ըստ բազում գլխոց, եւ խառն յառասպելաց ասորւոց»:

[2] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ, Կազմեցին՝ **Ա. Քեօշկարեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան**, Եր., 2008, էջ 1107-1108: Հմմ. **Լ. Շահինյան**, Զորանամակ, – ՀՍՀ, հտ. 3, Եր., 1977, էջ 704: Այդ թերթը (մեր՝ *E*) լոյս է տեսել. Армянское войско в XVIII веке: из истории армяно-русского военного содружества. Исследование и документы, Подготовил к изданию **А. Н. Хачатрян**, Ер., 1968, с. 7.

[3] **Կ. Կոստանեանց**, Հիւսուածք Հայոց մարզպանների պատմութեան առաջին մասի համար, Գիրք Գ, ներդիր՝ էջ 32-ից յետոյ: Հմմ. **Հ. Ս. Անասյան**, Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ., հտ. Գ, Եր., 2004, էջ 165 («Կ. Կոստանեանցի կազմած ցուցակը 1877 թ. ակնյայտօրէն շփոթ ու սխալ էր՝ նախ յիշեալ վրիպման եւ ապա այն բանի հետեւանքով, որ ինքը, միօրինակօրէն հետեւելով գծագրութեան աշխարհագրական շրջագծին, անտեսել ու խախտել էր տոհմերի աստիճանական հերթականութիւնը խմբագրումների ներսում՝ երբեմն շարքում առաջին եղող տոհմը դարձնելով վերջին եւ վերջինը՝ առաջին»):

երկու դէպքում բիւրի նշանի վերականգնումն անտեսելով՝ Կ. Կոստանեանցը նաեւ բաց է թողել Կադմէացի եւ Սիւնի նախարարական «ազգերի» զօրաքանակների վերծանումն ու փոխարէնը հարցական նշան դրել: Թերեւս, նոյն պատճառով է ի յայտ եկել նաեւ Յ. Շահխաթունեանցի անիրաւացի բողոքը. «ամենեցուն գումար թէպէտ ոչ համեմատի ամբողջ թուոյն ... եւ այն թերեւս ի սխալմանց գրչաց մատենին»: Հետագայում նրա նմանահանած աղիւսակի արտատպութիւնն իր «Այրարատ»-ում հրատարակեց Ղ. Ալիշանը (բնագրի ամփոփում-աւարտը «գեղագիտօրէն» զետեղելով բոլորակի կենտրոնում ներգծած զարդաշրջանակի մէջ)[1], իսկ բնագրի ուշադիր ընթերցումը, անհրաժեշտ վերականգնումներով՝ Ն. Ադոնցը[2]:

Երկու փաստաթղթերի հրատարակիչների, ինչպէս նաեւ Գր. Խալաթեանցի, Սիրեկան Տիգրանեանի, Յ. Մանանդեանի քննական անդրադարձներից յետոյ[3] բնագրերի առաւել մանրամասն վերլուծութիւնը ներկայացրեց Կիրիլ Թումանովը, որը նորովի համեմատեց դրանց մատուցած նիւթը աւատական դարաշրջանի Եւրոպայի իրողութիւնների հետ[4], սակայն, նաեւ կրկնեց Ն. Ադոնցի մի խնդրառու վարկածը մեզ հասած «Գահնամակ»-ի՝ իբրեւ ոչ պաշտօնական գրուածք է դ. կէսերից յետոյ ստեղծուած լինելու մասին[5], ինչպէս նաեւ ոչ լրիւ արդարացուած մի փորձ կատարեց՝ վերանայելու «Ջօրանամակ»-ի կառուցուածքը: Փաստաթղթերի վերջին հանգամանալից հետազօտութիւններն իրականացրել են Գ. Սարգսեանը, Բ. Ուլուբաբեանը, Լ. Շահինեանը, Բ. Յարութիւնեանը, Ա. Փերիխանեանը, Յ. Անասեանը, Կ. Իւզբաշեանը եւ Ա. Մուշեղեանը[6]:

---

[1] **Հ. Ղ. Ալիշան**, Այրարատ, ներդիր՝ էջ 424-425-ի միջեւ, նոյն էջերում՝ նաեւ ընթերցումը:

[2] **H. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 251-252.

[3] Տե՛ս **Г. Халатянц**, Армянские Аршакиды, ч. I, с. 292-297; **Ս. Տիգրանյան**, Հայոց իրավունքի պատմության ներածություն, Եր., 1923, էջ 187-202; **Հ. Մանանդյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Եր., 1934, էջ 14-15; **նոյնի՝** Երկեր, հտ. Բ, Եր., 1978, էջ 326-330: Էրմիտաժի՝ Սասանեան շրջանի ոսկէ սկուտեղի զարդապատկերների եւ Մոկսի քուրդ բէկերի կենցաղի համադրութեամբ նախարարական բարձերի ու գահերի վերաբերեալ ուշագրաւ դիտարկումներ է կատարել Յովսէփ Օրբէլին (**И. А. Орбели**, Фольклор и быт Мокса, Москва, 1981, с. 33-34). Առիթն օգտագործում եմ՝ երախտագիտութիւնս յայտնելու ինձ օգնած երջանկայիշատակ ուսուցչիս՝ Պարոյր Մուրադեանին:

[4] **C. L. Toumanoff**, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, p. 229-253. Նշուած դիտանկիւնների մասին հմմ. **Գ. Խ. Սարգսեան**, Նիկողայոս Ադոնցի գլուխգործոցը, – **Ն. Ադոնց**, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում..., Եր., 1987, էջ 556, ծն. 7 (վերահրատ.՝ **Գ. Խ. Սարգսյան**, Պատմագիտական հետազոտություններ, Կազմեց եւ խմբագրեց **Պ. Մ. Մուրադյանը**, Եր., 2006, էջ 183):

[5] Հմմ. **H. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 295.

[6] **Գ. Խ. Սարգսյան**, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 158-161; **Բ. Ուլուբաբյան**, Հյուսիս-արեւելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, էջ 159-162; **նոյնի՝** Դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան, էջ 124-127; **Լ. Շահինեան**, Գահնամակ, էջ 662-664; **Բ. Հ. Հարությունյան**, «Գահնամակի» թուագրման հարցի շուրջը, – ՊԲՀ, 1976, հմր 2, էջ 57-74; **նոյնի՝** «Ջօրանամակ»-ը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» տեղեկությունների լույսով, – Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը. Միջազգային գիտաժողովի դրույթներ, Եր., 1991, էջ 28-30; **A.**

Մեզ հասած «Գահնամակ»-ը վաղ միջնադարի Հայոց արքունիքի համակարգում նախարարական տոհմերի զբաղեցրած եօթ տասնեակից աւելի պատուաստիճան-գահերի ցուցակն է՝ ներկայացուած Ս. Սահակ Պարթեւ կաթողիկոսի (388-439) նամակում, ուր նշուած է նաեւ, որ այն հաստատուել է Սասանեան արքայից արքայի կողմից: Նամակում ուղղակիօրէն տրուած է վաւերագրի անուանումը՝ «Գահնամակ», որն ակնյայտօրէն իրանական ծագման է[1] (բնագրում՝ «Ներսեհ՝ հրամանաւ արքայից արքայի, եւ ես՝ {Սա}հակ[2] Հայոց կաթողիկոս, կնքեցաք զԳահնամակին...»[3]. իմա՛ «այս Գահնամակի-ն»): Գահնամակ անուանումը յիշատակուած է նաեւ այլ հայ մատենագիրների երկերում, սակայն ո՛չ ամենավաղ շրջանի: Մովսէս Խորենացին նման պաշտօնական վաւերագրերի (առանց անունը տալու) սկզբնաւորումը կապում է այն «բարեկարգութիւնների» հետ, որ Հայաստանում կատարեց Արշակունեաց արքայատոհմի հիմնադիր Վաղարշակ թագաւորը (ըստ Պատմահօրը հասած աւանդութեան՝ Ք. ա. Բ դար)[4]: Ինչպէս նա, այնպէս էլ վաղ շրջանի միւս մատենագիրները (Եղիշէ, Փաւստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, Պետրոս Սիւնեցի, Սեբէոս), առանց յիշատակելու «Գահնամակ» վաւերագիրը, ընդարձակ տեղեկութիւններ են հաղորդում Արշակունեաց թագաւորութեան եւ մարզպանութեան դարաշրջանի նախարարների կայուն ժառանգական գահե-

---

Г. Периханян, Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды, Москва, 1983, с. 67-72, 312-314; **Հ. Ս. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Գ, էջ 159-168 («Գահնամակ» բառայօդուած); **Կ. Ն. Իւզբաշեան**, Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, Եր., 1989, էջ 23-30 (վերահրատ.՝ Եր. եւ Անթիլիաս, 2005); **Ա. Վ. Մուշեղյան**, Մովսես Խորենացու դարը, էջ 235-239, 327-328:

[1] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերէն արմատական բառարան, հտ. Ա, Եր., 1971, էջ 504 («ԳԱՀ-ՆԱՄԱԿ «նախարարների պատուոյ աստիճանի ցուցակը»... =Հիւս. պհլ. *gāhnāmak, իբր պրս. *gāhnāma «գահական թուղթ, գիրք կամ ցուցակ», որ կազմուած է gāh «գահ, պատուոյ աստիճան» եւ nāmak «գրութիւն, գրուածք» բառերից. – Հիւբշ. 125»); **Հ. Ս. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Գ, էջ 159 (հեղինակը նաեւ նկատում է, որ՝ «*Գահ* բառի ունեցած վերոյիշեալ իմաստով [«պատիւ, իշխանական աստիճան»] պատմական աղբիւրներում հաւասարապէս հանդէս է գալիս նաեւ *բարձ* բառը, այնպէս որ այդ երկու բառերը որպէս հոմանիշներ միասնաբար էլ գործածուած են Աստուածաշնչի Ե դարի հայերէն թարգմանութեան մէջ [Գ Մակաբ. Ե 8]»):

[2] Այս ենթաբաժնի բնագրերում օգտագործում ենք հետեւեալ փակագծերը. [...] - վերականգնում; {...} - կորսուած հատուած:

[3] Ի դէպ, եզրոյթի այս ձեւի մէջ՝ *Գահ-նամակ-ի* (ի տարբերութիւն «հայերէն» ձեւի, որն ընկալւում է՝ որպէս *Գահ-[ա]-նամակ*), թերեւս, կարող է դիտարկուել իրան. իզաֆետային կառուցուածքի նշան (թէկուզ եւ այդ դէպքում աւելի սովորական պիտի լիներ բաղադրիչների հակառակ շարադասութիւնը): Իսկ բառամիջի *Ճ*-ի առկայութիւնը կարելի է կապել անգամ հայկական բարբառային-խօսուածքային *Ա-Ե-Ա* յաճախադէպ անցման հետ (այն յատուկ է նաեւ իրանական լեզուներին), որի հետեւանքով ունենք *Արաքս – Երասխ*, *Առան – Էրան*, *Անձառացի – Անձեւացի*, *Զարեհան – Զարեւանդ* եւն:

[4] **Խոր.**, Բ.Է-ը, էջ 109-117; ՄՀ, հտ. Բ, էջ 1855-1864: Համմ., օր.՝ էջ 109. «Քանզի բազում ինչ աստ՝ կարգաց եւ յաւրինուածոց տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, եւ համայն ասել՝ *աւրէն* թագաւորութեան եւ որ ինչ շուրջ զթագաւորութեամբն՝ զաւրաց, զաւրապետաց կողմանց, կողմնակալաց, եւ որ նման այսոցիկ»; էջ 117. «Եւ *աւրէնս* իմն հաստատէ [Վաղարշակ] ի տան թագաւորութեան իւրոյ... Եւ՝ *կարգս* զինուորութեանց, եւ նոցունց առաջինս եւ երկրորդս եւ երրորդս եւ որ ի կարգին»: Բնագրերում որոշ կէտադրման փոփոխութիւններ կամ ընդգծումներ ենք կատարել՝ առանց ծանօթագրելու:

րի ու տեղակարգութեան հաստատութեան մասին[1], որոնց «գոյութեան փաստը հայերի մէջ կասկածի ենթակայ չէ»[2]։

Ուխտանէս եպիսկոպոսը 982 թ.[3] յանուանէ յիշատակում է «Գահնամակ»-ը՝ կարճ մէջբերում անելով նրանից, եւ նկատւում է, որ պատմիչի ձեռքի տակ եղել է հէնց մեզ հասած բնագրի մի տարբերակ[4]։ Ըստ նրա՝ Վաղարշակ Արշակունի թագաւորը խնդրել էր աւագ եղբօրը՝ Պարթեւքի արքայ Արշակ Մեծին՝ օգնելու իր պատգամաբեր Մարիբայ Կատինեային, որին յանձնարարել էր՝ «որոնել զդիւանն արքունի եւ տալ զԳահնամակ նախարարացն Հայոց... իսկ նա գտեալ զԳահնամակն՝ բերեաւ [առ] Վաղարշակ արքայն Հայոց։ Իսկ նա առեալ զաւրինակն՝ նախարարութիւնս կարգէ իւրաքանչիւր ումեք բարձ եւ պատիւ տալով նախարարացն՝ ըստ իւրաքանչիւր բարձի տալով իշխանութիւն միոյ միոյ ըստ արժանեաց՝ որում վայելէր...» (հետեւում է՝ «եւ զայլս մի ըստ միոջէ կարգէ եւ կոչէ անուանս. Առաջին՝ Սիւնեաց տէր, երկրորդն՝ ասպետ Բագրատունի, երրորդն՝ Արծրունի, չորրորդն՝ Մա[ղ]խազունի, հինգերորդն՝ Մամիկոնեան, եւ զայլ եւս...»)[5]։ Ինչպէս տեսնում ենք, ժ դարի հեղինակը զուտ գրական շեղում է կատարում իրեն աղբիւր ծառայած Խորենացուց, որի տեղեկանիով՝ Վաղարշակը Հայոց նախարարութիւնների գահակարգութիւնը սահմանել էր առանց աւելի հին փաստաթղթի ու կարդի[6]։

Նոյն դարում (ըստ յիշատակագրութեան՝ 967 թ.) Մեսրոպ երէց Վայոցձորեցին իր «ծաղկաքաղ արարած» «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց հայրապետի» երկի Ե գլխում բերում է 167 թագաւորական ու նախարարական տոհմանուններով մի ցուցակ, որը ներկայացնում է իբրեւ՝ «Գահք [կամ Բարձք չորեքհարիւր] իշխանացն Հայոց» (նախադրութիւնն է. «Եւ իբրեւ ձեռնադրեցաւ մեծն Ներսէս ի կեսարիա եւ եկեալ ի Հայս՝ նորոգէր զգաւիս իշխանացն Հայոց, զոր էր կարգեալ ի Խոսրովայ եւ յայլ թագաւորացն։ Զնոյն եւ նա կարգէր՝ ի ժամ ճաշոյն ի սեղան արքային Արշակայ՝ բարձս չորեքհարիւր, որ են այսոքիկ...»)[7]։ Բայց այս բնագրում որոշակի են ակնյայտ ուշ գրական ծագում յուշող իրողութիւնները[8], ուստի՝ այն կոչում են ոչ միայն «Ներսէսեան», այլեւ յաճախ՝ «կեղծ գահնամակ»,

---

[1] Դրանց ամփոփ քննութիւնը տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 272-277. Համմ. նաեւ **Հ. Ս. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Գ, էջ 159, ծն. 6։

[2] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 272. Շարունակութիւնը՝ "Оно [местничество] было принято как при дворе армянских Аршакидов, так и персидских царей. Об этом свидетельствуют отечественные историки".

[3] Տե՛ս **Հ. Ն. Ակինեան**, Բանասիրական հատակոտորներ. 3. Ե՞րբ գրած է Ուխտանէս իր Պատմութիւնը, – «Աւետիք», Բէյրութ, 1944, հ՛ր 5-8, էջ 57; **Ուխտանէս եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Վ. Առաքելեանի**, Եր., 2006, էջ 16-17։

[4] **Ուխտ.**, Ա.իէ, էջ 40։

[5] Անդ։ ԺԹ դ. հրատարակիչը քառակուսի փակագծով վերականգնումներ ունի։

[6] Համմ. նաեւ Ն. Ադոնցի դիպուկ դիտարկումները (Армения в эпоху Юстиниана, с. 253-254).

[7] Տե՛ս Սոփերք Հայկականք, հտ. Զ, Վենետիկ – Ս. Ղազար, 1853, էջ 32-38; **Հ. Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 432-433; **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 257-259.

[8] Մանրամասն տե՛ս անդ, էջ 259։

թէպէտ նաեւ կարեւորւում է, որ հեղինակը, ըստ ամենայնի՝ օգտագործել է մեզ հասած «Գահնամակ»-ը եւս (ի դէպ, հէնց այս տարբերակում է արձանագրուած «Գորոզուայք» հարաւարցախեան իշխանատոհմի անունը, որը թոյլ է տալիս մեզ նկատել նրան «Ջօրանամակ»-ում՝ «Գ[ո]ր[ո]զճունի ձեւով», ինչպէս նաեւ նրա վերականգնումը կատարել «Գահնամակ»-ի պակասող աւարտում)։

Եւ վերջապէս՝ ԺԳ դարի վերջին Ստեփաննոս Օրբէլեանը, յղելով Ղեւոնդին (որին Ն. Ադոնցը ենթադրաբար նոյնացնում է Ը դարի յայտնի պատմագրի հետ, թէպէտ մեզ հասած վերջինիս «Պատմաբանութեան» մէջ նման հաղորդում չկայ[1]), գրում է Տրդատ Մեծի արքունիքում գործածուած «Գահնամակ»-ի մասին, ընդ որում՝ զգացւում է հեղինակի ծանօթ լինելը է՛ւ մեզ հասած «Գահնամակ»-ին, է՛ւ «Ջօրանամակ»-ին (բնագիրն է. «հրամայէ մեծին Տրդատայ կարգել զթագաւորութիւն իւր ըստ սահմանի կայսերացն Յունաց եւ տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի գահ եւ պատիւ իշխանացն յաջմէ եւ յահեկէ։ Որ եւ գեղեցկապէս յօրինեալ՝ ի ժամ ճաշոց նստել բարձս չորեքհարիւր իշխանաց, որոց գահագլուխք՝ բդեաշխն Գուգարաց, իշխանն Աղձնեաց, իշխանն Անգեղտան, իշխանն Կորդուաց, ասպետն Բագրատունի, իշխանն Արծրունեաց, իշխանն Սիւնեաց եւ իշխանն Մամիկոնէից. սոքա էին գահագլուխք ամենայն իշխանացն Հայոց։ Իսկ զօրացն եւ աշխարհին վերայ չորս միայն կացուցանէ իւրոյ թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին. արեւելեան կողմանն՝ զիշխանն Սիւնեաց քսան եւ մի իշխանօք, հիւսիսային կողմանն՝ զբդեաշխն Գուգարաց քսան եւ երկու իշխանօք, արեւմտեան կողմանն՝ զԿորդուացին քսան եւ մի իշխանօք, հարաւային կողմանն՝ զիշխանն Անգեղտանն քսան եւ երկու իշխանօք։ Զայս այսպէս գտաք ի Գահնամակի իշխանացն Հայոց, զոր Ղեւոնդ գրեաց, եւ սակաւ մի ցուցանէ Ագաթանգեղոսին եւ Ներսիսին»)[2]։ Նշենք, որ չբացառելով «Գահնամակ»-ի առիթով յղուած աղբիւրի մասին Ն. Ադոնցի վարկածը՝ կարելի է նաեւ Սիւնեաց պատմիչի յղումը վերագրել ոչ պակաս յայտնի Ը դարի Վարդանանց նահատակ Ղեւոնդ երէցին, որը Մաշտոցի ու Սահակ Պարթեւի առաջին սաներից էր եւ Կորիւն վարդապետի աշակերտակիցը[3]. Ստեփաննոս Օրբէլեանն այլուր առիթ չի ունեցել՝ յիշատակելու Ը դարի պատմիչին, իսկ Ղեւոնդ երէցին յիշատակում է եւս մէկ անգամ[4]։

Ինչպէս նշեցինք, մեզ հասած՝ հայ ազնուականութեան պատուաստիճան-գահերի ցուցակ-«Գահնամակ»-ը ներկայացուած է Հայոց Սահակ կաթողիկոսի նամակում, իսկ առանձին, փաստաթղթային ձեւաւորմամբ ցուցակի տարբերակ մեզ չի

---

[1] Անդ, էջ 254-255; **Հ. Ս. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Գ, էջ 160, ծն. 13:

[2] **Օրբ.**, գլ. Զ, էջ 15-16; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. Է, էջ 24-25; **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Թարգմանութիւնը, ներածությունը եւ ծանոթագրութիւնները **Ա. Ա. Աբրահամյանի**, Եր., 1986, էջ 78-79:

[3] Տե՛ս **Կորիւն**, գլ. ԺԶ, էջ 66, ԺԹ, էջ 74; **Կորիւն**, Վարք Մաշտոցի, Ցառաջաբան, բնագրի վերակազմութիւն եւ ծանօթագրութիւններ, Աշխատասիրեց՝ **Հ. Պ. Անանեան** [Հանդերձ իտալերէն թարգմանութեամբ], Վենետիկ – Ս. Ղազար, 1998, § 51, էջ 50; § 69, էջ 62; ՄՀ, հտ. Ա, էջ 244, ձախ. ԺԷ.5; էջ 248, ձախ. Ի.5:

[4] **Օրբ.**, գլ. ԺԶ, էջ 42; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԺԷ, էջ 59:

հասել: Սակայն չբացառելով նման տարբերակ(ներ)ի գոյութիւն ունեցած ու գործառուած լինելը՝ հարկ է նշել, որ, ըստ ամենայնի՝ պարտադիր չէ կասկածել նաեւ հէնց նամակ-տարբերակի՝ պաշտօնապէս շրջանառուած-գործառուած լինելու հնարաւորութեանը (իհարկէ՝ իր ժամանակին): Աւելին՝ Օրբէլեանի մի դրուագից երեւում է, որ մարզպանական դարաշրջանի հասարակական մտածողութեան մէջ պատուաստիճանների ցուցակ-«Գահնամակ»-ի գործառումը յարիր է ընկալուել նաեւ պատմագրական երկի, այն է՝ Ագաթանգեղոսի «Պատմութեան» կազմում: Համապատասխան գլխագրում յղելով Զ դ. կէսերի եպիսկոպոս, մատենագիր եւ Մովսէս Խորենացու («Քերթողահօր») աշակերտ Պետրոսին («յասացուածոց սրբոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի»)՝ Օրբէլեանը շարադրում է Դ դարի յայտնի իշխան Անդոկի (Արշակ Բ-ի աներոջ) մասին մի կիսանովելային պատում, ըստ որի Շապուհ Բ Որմզդեան արքան կամեցել է ճշտել հայ աւագանու՝ «զազատատոհմսն եւ զնոցին նախապատիւ նախադաս նախագահութիւնս», ուստի հայերից պահանջել է այդ մասին վկայող պաշտօնական գրաւոր որեւէ նիւթ («զնախնականն գիր ըստ իւրաքանչիւր ըստ տանց ազատազարմն եկաց ձերոց զնախաստիճանն եւ զնախանիստ պատիւն»), որին ի պատասխան՝ «նոյնժամայն խորհուրդ արարեալ իշխանացն Հայոց Մեծաց՝ մատուցին առաջի թագաւորին զցանկալին ամենայն տառից... զգրաւորական գիրս սրբոյն Գրիգորի, որ Ագաթանգեղն կոչի... գտեալ նմա զգիր տաան եւ եօթն բարձի ազատացն Հայոց իշխանաց...»[1]:

Մեր երկրորդ փաստաթուղթը՝ «Զօրանամակ»-ը, ուղղանկիւն զարդաշրջանակի մէջ ներգծուած բոլորակ քառաբաժին աղիւսակ է, որի բաժինների (անուանուած՝ ըստ Հայոց Արշակունեաց թագաւորութեան չորս կուսակալ զօրավարութիւնների՝ «Արեւելեան Դուռն», «Հիւսիսային Դուռն», «Արեւմտեան Դուռն» եւ «Հարաւային Դուռն») ճառագայթաձեւ բացուող եռասիւնակ տողերում թուարկուած են 21-22-ական նախարարութիւններ (ընդամենը՝ 86), իրենց թուահամարներով (Ա – ԻԱ/ԻԲ՝ առաջին սիւնակում) եւ զօրականների քանակով (Մ – ԱՀՔՆ՝ երրորդ սիւնակում ու դէպի ներս շրջուած): Բացի այդ, ուղղանկիւն զարդաշրջանակի աջ կողագաշտի մէջ վերեւից ներքեւ կարճ տողերով տրուած է բնագրի աւարտն ու ամփոփումը. «եւ զոմանս՝ ի յայլ աշխարհս գրաւեալս. եւ լինի թիւ մարտիկ արանց, որ ընդ ազգաւք՝ ՁԴ-ից հազարաց, թող զսպասաւորս դրանն արքունի, որ է Ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի, եւ Մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն: Եւ ընդ ամենայնն թիւ զաւրացն Հայոց, որ է հարիւր եւ քսան հազարաց»[2]: Մատենագրութեան մէջ «Զօրանամակ» անուանումն արձանագրուած չէ, ուստի այն շարունակում է մնալ

---

[1] Օրբ., գլ. Ը, էջ 20-21; Պատմութիւն Ցաճաճգին Սիսական, գլ. Թ, էջ 30-31: Այս աւանդապատումի մանրամասն քննութիւնը եւ արժեւորումը տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, с. 273-277.

[2] Տե՛ս Ց. եպ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի, հտ. Բ, էջ 58-ին յաջորդող ներդիրը: Ղ. Ալիշանի «Այրարատ»-ի էջ 424-ին յաջողդող ներդիրի արտատպութեան մէջ բնագրի այս աւարտը տեղափոխուել է բոլորակ աղիւսակի կենտրոնում ներգծուած ուղղանկեան մէջ:

պայմանական: Զնայած դրան, ճիշտ չի թւում Ն. Ադոնցից ի վեր շրջանառուող այն դրոյթը, թէ տուեալ փաստաթուղթը պարզապէս «Գահնամակ»-ի մի տեսակ է:

«Զօրանամակ»-ի՝ վերեւում նկարագրուած իւրատեսակ ձեւաւորումը, մեծ հաւանականութեամբ, կարող էր ուղղակիօրէն կրկնած լինել աւելի հին հայերէն նախօրինակ-պատճէնի արտաքին պատկերը: Գրերի գիւտից յետոյ այն պիտի թարգմանուած-կազմուած լինէր մի վաղագոյն հրովարտակ-վաւերագրից, որը պաշտօնապէս սահմանում էր Արշակունեաց աւատական պետութեան զինուժի կառուցուածքն ու ձեւաւորման չափաքանակները՝ Մովսէս Խորենացու բնորոշմամբ՝ «կարգք զինուորութեանց»[1]: Այդ վաւերագրի լեզուն կարող էր է՛ւ յունարէնը լինել (գոնէ Տրդատ Մեծի օրօք՝ շատ բնական տարբերակ), է՛ւ ասորերէնը կամ պահլաւերէնը: Սակայն «Զօրանամակ»-ի արտաքին ձեւաւորման ուշադիր վերլուծութիւնը ստիպում է ընտրել վերջին տարբերակներից մէկը, քանի որ մեզ հասած աղիւսակում «Հիւսիսայինն» եւ «Հարաւայինն» դռնանունների տեղերն աջից ձախ ուղղութեամբ ակնյայտօրէն շփոթուած են: Պատահականութեամբ բացատրել այդ շփոթը, որն, անկասկած, գալիս է հայերէն թարգմանական նախօրինակից, իրաւացի չի թւում, ուստի՝ վրիպումը պիտի կապուի սեմական գրերին բնորոշ (արամէերէն տառերով էր նաեւ պահլաւերէնը) աջից-ձախ գրութիւնից արուած անուշադիր թարգմանութեան-փոխադրման հետ: Հաւանաբար, վերջինս կատարուել է հետեւեալ ձեւով. նախ՝ երեւում է, որ Դ դարի մինչհայերէն (ասորերէն կամ պահլաւերէն) նախօրինակում նախարարական զօրքերի թուարկումն սկսուել է բոլորակ աղիւսակի վերեւի կենտրոնից դէպի ձախ ընթացող «Արեւելեան Դռնից», եւ ժամացոյցի սլաքի հակառակ ուղղութեամբ շարունակուելով «Հարաւային Դռնով», ապա «Արեւմտեանով»՝ աւարտուել է «Հիւսիսայինով»: Ընդ սմին, վերարտադրելով բոլորակ գծագիրը (ենթադրաբար, հէնց Ե դարում)՝ առաջին թարգմանիչ-նկարիչը (կամ նկարիչը՝ թարգմանչի օգնութեամբ), թերեւս, գրել է նաեւ գեղագիր դռնանուանումները չորս ցանկասիւնակներից իւրաքանչիւրի առջեւում, ինչպէս որ եղել է աջից-ձախ գրութեամբ ու ժամացոյցի սլաքի հակառակ ուղղութեամբ բոլորուող նախօրինակում եւ ինչպէս որ առկայ է նաեւ մեզ հասած տարբերակի բոլոր չորս դէպքերում (երկուսում, ինչպէս նշեցինք՝ շփոթուած): Սակայն այդ աշխատանքը կատարելիս արուել է նաեւ մի լուրջ փոփոխութիւն. գծագրող նկարիչը աշխարհի կողմերի մասին իր պատկերացումներին (հայերէն ձախից-աջ գրութեան տրամաբանութեամբ՝ ժամացոյցի սլաքի ուղղութեամբ) անհամապատասխան է նկատել հորիզոնական գրուած դռնանուանումների տեղերը (աջ կող-

[1] **Խոր.**, Բ.ը, էջ 117; ՄՀ, հտ. Բ, էջ 1863 («Եւ աւրէնս իմն հաստատէ [Վաղարշակը]... Եւ՝ կարգս զինուորութեանց...»): Համմ. **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 280 ("Покуда действовало это положение относительно нахарарской кавалерии, необходимы были точные сведения о численности князей и их воинств. На почве такой необходимости должны были возникнуть соответствующие письменные документы официального или иного происхождения, родственные с тем памятником, который трактуется нами, – воинской грамотой").

մում պիտի վերեւի «Արեւելեանից» յետոյ գրուէր «Հիւսիսայինն է»՝ թէկուզ եւ դէպի վեր շրջուած, իսկ ձախում, ներքեւի «Արեւմտեանից» յետոյ՝ «Հարաւայինն է») եւ պարզապէս փոխել է դրանք[1]: Բայց երկրորդ աշխատողը՝ գրիչ-թարգմանիչը (կամ գրիչը՝ թարգմանչի հետ), երեւում է՝ անհաղորդ է եղել թէ՛ այդ փոփոխութեանը, թէ՛ փաստաթղթի բովանդակութեան մանրամասներին (նախարարութիւնների՝ այս կամ այն սահմանակողմին պատկանելուն), եւ լոկ նոյն հերթականութեամբ փոխադրել-լրացրել է ցանկասիւնակների անուններն ու դրանց կողքի թուերը: Սկսելով, անկասկած, վերեւի կենտրոնում գրուած եւ դէպի ձախ ուղղուած «Արեւելեան Դռնից»՝ նա խնամքով պահել է տողերի՝ ներսից դէպի դուրս ճառագայթաձեւ ուղղութիւնը, որի հետեւանքով երկու ձախ ցանկասիւնակների տոհմանունները փաստօրէն շրջուած են գրուել: Այդ շրջուածութիւնն, ի վերջոյ, անհարթութիւն համարելով՝ գրիչը կատարել է միայն մէկ լուրջ փոփոխութիւն. ձախից հասնելով բոլորակի ներքեւի կենտրոնին՝ նա չի շարունակել նոյն՝ «սեմագիր» նախօրինակի ուղղութիւնը. որպէսզի աջ ցանկասիւնակների տոհմանունները լրիւ շրջուած չգրուեն (ինչպէս որ մեզ հասել է նաեւ «Հարաւայինն է» անուանումը՝ իհարկէ, «սեմագիր» նախօրինակի «Հիւսիսայինի» փոխարէն), նա սկսել է դրանց անունները տող առ տող թարգմանել-լրացնել վերեւի կենտրոնից դէպի աջ բոլորուող-իջնող տարբերակով:

Իհարկէ, վերջին հանգամանքը կարող է տպաւորութիւն ստեղծել, թէ «Ջօրանամակ»-ի հայերէն պատճէն-նախօրինակը մտայղացուել է հէնց այդպիսի՝ ժամացոյցի սլաքի ուղղութեամբ ընթացող կառուցուածքով, ընդ որում՝ սկզբում ունենալով «Հիւսիսայինն»-ը, ապա՝ «Արեւմտեանը» եւն: Սակայն ամբողջական վերլուծութիւնից երեւում է, որ հայերէն տարբերակը մտայղացուել-իրագործուել է որպէս մինչ-գրերի գիւտը շրջանառուած փաստաթղթի պարզ թարգմանութիւն (իրագործման ընթացքում ի յայտ եկած թերիներով), այլ ոչ թէ իբրեւ յատուկ տարբերակ: Նշենք նաեւ, որ վերծանողները չեն փորձել խորանալ վաւերագրի կառուցուածքային առանձնայատկութիւնների մէջ եւ նրա ցանկասիւնակները ներկայացրել են պարզապէս նոր ժամանակների նախընտրութիւններին համապատասխանող դասաւորութեամբ («Արեւմտեան», «Արեւելեան», «Հիւսիսային», «Հարաւային»): Օգտակար կը լինէր այս խնդրում հնարաւորինս ճշգրիտ պատկերացում մշակելը, որն լուրջ պատմա-մշակութային եզրայանգումների կը բերէր:

---

[1] Մեզ հասած աղիւսակի միւս մեծ թերութիւնը ուղղաձիգ գրուած դռնանուանումների կրկնուած լինելն է («Արեւելեան Դուռն է»՝ բոլորակի վերեւի կենտրոնում, եւ «Արեւմտեան Դուռն է»՝ ներքեւի կենտրոնում), որի հետեւանքով կրկնուող դռնանունները շփոթութեան տեղիք են տալիս՝ յարելով համապատասխանաբար «Հիւսիսային Դռան» ցանկասիւնակի առաջին եւ «Հարաւային Դռան» վերջին տոհմանուններին: Սակայն դա, անկասկած, հետեւանք է ոչ թէ թարգմանութեան հանգամանքների, այլ մի ուշ գրչի անյաջող ձախաձեռնութեան. ըստ երեւոյթին, նախօրինակ մեծ մագաղաթաթերթի աղիւսակ-պատկերն աւելի փոքր չափի երկու թերթի վրայ արտագրելիս (ինչպէս որ ունենք Մաշտոցեան Մատենադարանի /յետայսու՝ ՄՄ/ ճ՟ր 1379 ձեռագրում) վերջինս գեղագիտական նկատառումներով որոշել է թերթերից միայն մէկի վրայ ընկնող ուղղաձիգ դռնանուանումներն արտապատկերել նաեւ միւս թերթին:

«Ջօրանամակ»-ի բնագիրը մեզ ամբողջական հասած լինելու տպաւորութիւն է թողնում, իսկ «Գահնամակ»-ը, ընդհակառակը, ըստ ամենայնի՝ բաղմաթիւ անունների պակաս ունի վերջից (Ն. Ադոնցի հաշուարկով՝ երկու տասնեակից աւելի)։ Բայց արդէն նկատուած է, որ դրա պատճառը զուտ տեխնիկական է. այդ՝ առանց բացառութեան փոքր նախարարութիւնների անուններն, անկասկած, եղել են մեզ հասած միակ թերթը պարունակած ձեռագրի յաջորդ թերթի սկզբում[1]։ Ընդ ամին, կորսուած անունների մեծ մասը կարող է որոշ հաւանականութեամբ վերականգնուել «Ջօրանամակ»-ից[2]։ Պակասում են նաեւ բնագրի վերնագիրը եւ առաջին տառը (կամ տառերը)։ Սկզբնատառը չկայ, թերեւս, որեւէ գրչի անփութութեան պատճառով. գրիչները յաճախ էին բուն արտագրութեան պահին բաց թողնում հաւտուածի սկիզբնատառը կամ տողը՝ մելանագիրն աւարտելուց յետոյ դրանք գունազարդ նկարելու նպատակով, սակայն երբեմն մոռանում էին անել դա։ Եթէ ընդունենք, թէ բնագիրն առանձին վերնագիր է ունեցել, ապա կարող ենք նաեւ ենթադրել, որ այն գրուած է եղել նախորդ մագաղաթաթերթի վերջում։

«Ջօրանամակ»-ի կազմման ժամանակը Տրդատ Գ-ի դարաշրջանին կամ ամենաուշը՝ Խոսրով Կոտակի իշխանութեան առաջին տարիներին վերագրելու տարբերակը վաւերագրի հաւաստիութիւնն ընդունող մասնագէտների մօտ կասկած չի յարուցում[3]։ Իրօք, փաստաթղթում արձանագրուած որոշ նախարարական տներ Հայաստանում հաստատուել էին, ըստ հաւաստի աղբիւրագիտական տուեալների՝ Տրդատ Գ-ի օրօք (298-330), իսկ մի քանիսն էլ ոչնչացուել էին նրա որդի Խոսրովի կողմից (Մանաւազեաններ, Որդունիներ եւն)։ Փոխարէնը՝ մեզ հասած «Գահնամակ»-ի թուագրման հարցում տեսակէտներն էապէս տարբերւում են։ Ն. Ադոնցի ու նրա հետեւորդների կարծիքով՝ Սահակ Պարթեւի նամակը գրուել է մարզպանութեան ստեղծումից (այսինքն՝ 428-ից) յետոյ[4]։ Բովանդակութեան ուշադիր վերլուծութեան հիման վրայ այդ կարծիքը չընդունելով՝ Բ. Ուլուբաբեանը ցոյց է տուել, որ «Գահնամակ»-ն արտացոլում է մինչմարզպանական շրջանի պատկերը, ուստի կարող է շարադրուած համարուել Ե դ. առաջին քառորդում[5]։ Այս խնդրում վճռորոշ է «Գահնամակ»-ում «ԻԳ. Գարդմանայ տէր» իշխանի յիշա-

---

[1] Հմմ. **Г. Халатянц**, Армянские Аршакиды, ч. I, с. 297: "Всех княжеств в списке – 70: быть может, их было больше, так как до нас сохранился лишь один лист, исписанный до конца".

[2] Իսկ վերջինիս համեմատութեամբ՝ «Գահնամակ»-ն աւելի ունի միայն երեք տոհմանուններ՝ ՕՄ. Նախճերին, Կ. Քաղաքապետն արքունի եւ ԿԴ. Ցուլն (եթէ, իհարկէ, չհաշուենք թուով 11 երկրորդ-երրորդ իշխանաճիւղերը)։ Հմմ. **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 256-257.

[3] Տե՛ս, օր.՝ **Լ. Շահինեան**, Ջօրանամակ, էջ 704; Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, էջ 618; **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 281-283։

[4] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 262-263; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 23; **C. L. Toumanoff**, Studies in Christian Caucasian History, p. 229-231.

[5] **Բ. Ուլուբաբեան**, Հիւսիս-արեւելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, էջ 159-163; **նոյնի**՝ Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության, էջ 124-127։

տակման փաստը, քանի որ միայն 428-ին Ուտիք աշխարհը (եւ նրա կազմում Գարդման գաւառը) վռամ Ե Սասանեանի կողմից անջատուեց մարզպանութեան վերածուած Հայաստանից ու կցուեց նոյն ժամանակ ստեղծուած Առան/Աղուանք մարզպանութեանը: Բացի այդ, «Գարդմանայ» եպիսկոպոսական «գահ» է յիշատակում Ուխտանէսի երկում պահպանուած 30 եպիսկոպոսական թեմերի ցանկը (գլ. Ա.Հ՝ «Յաղագս եպիսկոպոսաց, որք ընկալան աթոռ ի տեղիս տեղիս ի սրբոյն Գրիգորէ յիւրաքանչիւր գահս»), որը նոյնպէս իրականում արտացոլում է 387-ից 428 թթ. միջակայքի պատկերը[1]: Եւ վերջապէս՝ Բ. Ուլուբաբեանի ճշտումներից յետոյ պատմա-բանասիրական նոր քննութեան ենթարկելով «Գահնամակ»-ի բնագիրը՝ Բ. Յարութիւնեանը փորձել է փաստարկել, որ Սահակ Պարթեւի նամակը կարող է թուագրուել 432-ով (այսինքն՝ մարզպանական շրջանով), սակայն նրան յաջորդող ցանկը պէտք է համարել Հայոց թագաւոր Խոսրով Գ-ի եւ Շապուհ Գ Սասանեանի օրօք 388 թ. հաստատուած «Գահնամակ»-ը[2]:

Բոլոր դէպքերում, բնագիրը թուագրողները նախ եւ առաջ յենուել են նրա սկզբնամասի վրայ՝ ընկալելով բովանդակութիւնն այնպէս, իբրեւ թէ հայ նախարարների գահացուցակը Սահակ կաթողիկոսը (388-439, ընդմիջումներով) յայտնաբերել է Հայոց թագաւորի դիւանում (վերջին Արտաշէս/Արտաշիրի կամ Խոսրով Գ-ի) կատարած փնտրտուքի արդիւնքում («խնդիր արարեալ»), որից յետոյ այն

---

[1] Տե՛ս **Ուխտ.**, Ա.հ, էջ 100 (բնագրում. «շարադրեցից եւ յայտ արարից զիւրաքանչիւր գահս՝ որպէս Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի է կարգեալ եւ եդեալ զսեփհական աթոռընկալ եպիսկոպոսացն զկարգս... Այս երեսուն եպիսկոպոսք, որք աթոռակալութեամբ ընկալան ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ...»): 428-451 թթ. վարչական փոփոխութիւնների մասին մանրամասն տե՛ս նաեւ **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արեւելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը, էջ 77-95; **Б. Арутюнян**, Административное деление закавказских владений Сасанидского Ирана, с. 19-35; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 109-114; **И. Г. Семенов**, Этнополитическая история Восточного Кавказа, с. 14; **Т. Геворгян**, Формирование марзпанства Аран, с. 210-226; **Cl. Mutafian**, L'Arménie du Levant, t. I, p. 278.

[2] Բ. Յարութիւնեանը ենթադրում է («Գահնամակի» թուագրման հարցի շուրջը, էջ 62-74), որ «Շահապ Ծոփաց տէր»-ի տակ «Գահնամակ»-ը նկատի ունի Շահունեաց Ծոփք գաւառի իշխանին (որը երկրի «բաժանքից» յետոյ գտնւում էր Կայսրութեանն անցած հատուածում), իսկ դա կարող էր լինել լոկ այն տարիներին, երբ Արշակ Գ թագաւորի մահուանից յետոյ Խոսրով Գ-ն, Սասանեանների եւ Հռոմի միջեւ կայացած ժամանակաւոր համաձայնութեամբ, վերահսկում էր նաեւ Հայաստանի արեւմտեան մասը (**Խոր.**, Գ.խթ, էջ 319-320; ՄՀ, հտ. Բ, էջ 2073): Սակայն *Շահապ* եւ *Շահունի* անուանումների նոյնացումը խնդրառու է թւում, քանի որ Ագաթանգեղոսի իշխանացանկում դրանց տակ հանդէս են գալիս երկու տարբեր նախարարներ («եաւթերորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին... չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ Զարաւանդ եւ Հեր գաւառի»): Բացի այդ՝ «Գահնամակ»-ի «Ծոփք»-ը, մեծ հաւանականութեամբ, կարող է լինել «Մեծ Ծոփք»-ը (որը 387 թ. բաժանումից յետոյ երկրի պարսկական մասում էր), ինչպէս որ երեւում է յունարէն թարգմանութեամբ պահպանուած «Գրիգորի վարք»-ի իշխանացանկից՝ «եօթերորդ՝ իշխանը Մեծ Ծոփքի, որը *Միջագետքի մօտ է* գտնւում» (տե՛ս **G. Garitte**, Documents pour l'étude du livre d'Agathange, p. 73; **Ագաթանգեղոս**, Պատմություն Հայոց, Աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթություններով **Ա. Տեր-Ղեւոնդյանի**, Եր., 1977, էջ 178): Ըստ այդմ՝ նաեւ կարելի է «Գահնամակ»-ում վերականգնելի համարել՝ *Ե. Շահապն, [Զ.] Ծոփաց տէր* փխ *Ե. Շահապն Ծոփաց տէր:*

հաստատման է ուղարկուել Տիզբոն՝ արքայից արքայ Վռամ Ե-ին (420-438/439): Սակայն ամբողջ բնագրի ուշադիր վերլուծութիւնը եւ լեզուաբանօրէն հնարաւորինս ճիշտ տողատումն ու կէտադրումն աւելի հաւանական են դարձնում նրա ընթերցման այլ տարբերակ: Նախ՝ թւում է, թէ ուսումնասիրողներին պարզապէս կաշկանդել է բնագրի ամենասկզբի պակասի տեղում դեռեւս մէկուկէս դար առաջ Մ. Էմինի առաջարկած վերականգնումը՝ «[Սա]հակայ խնդիր արարեալ...» (Ն. Ադոնցն աւելի է շեշտել՝ «[Իմ՝ Սա]հակայ...»)[1]: Իրականում շատ աւելի հաւանական է, որ կորուել է միայն մէկ տառ, այն է՝ Ա սկզբնատառը «{Ա}հա կայ խնդիր արարեալ» պարզ արտայայտութեան մէջ, որը բաղկացած է «Ահա» եղանակաւորիչից եւ «կամ» բայից՝ գործածուած որպէս օժանդակ բայ «առնեմ» բայի անցեալ դերբայի հետ[2]: Այդ «կորած» (ինչպէս ենթադրում էր, օր.՝ Բ. Յարութիւնեանը) ստորոգեալը «յայտնաբերելով»՝ տեսնում ենք, որ բնագրի առաջին նախադասութեան գործող անձը ոչ թէ Հայոց կաթողիկոսն է, այլ «Արտաշէս թագաւոր»-ը («{Ա}հա կայ խնդիր արարեալ... յԱրտաշէսի թագաւորի»): Դրանից էլ պարզ է դառնում, որ «խնդիր արարեալ»-ն այստեղ ունի ոչ թէ «որոնելու», այլ ուղղակի՝ «հայցելու, հարցնելու, հարցում կատարելու» իմաստը[3] (ըստ այդմ՝ յաջորդող «եթէ»-ն էլ պահանջուող հարցական է դառնում), իսկ «զոր ի Տիսպոնն» հատուածը հարկ է ընկալել իբրեւ երկու բառով ընդմիջուած «ի դրան արքունի» հատուածին լրացնող (պայմանականօրէն պարզեցուած՝ «կայ խնդիր արարեալ յԱրտաշէսի թագաւորի՝ ի դրան արքունի, զոր[4] ի Տիսպոնն, ...եթէ՞ ես... տեսի»):

Այսպէս նաեւ հասկանալի է դառնում, որ «Արտաշրի ի դիւանին», ըստ ամենայնի՝ նշանակել է «Արտաշրական դիւան»՝ իբրեւ բնորոշում (եւ անգամ՝ գուցէ, անուանում) Իրանի պետական արխիւ-դիւանի (կամ առնուազն նրա՝ նորօրեայ

---

[1] Տե՛ս Գ. Ախվերդեանին հասցէագրած նրա 2 Ապրիլ, 1851 թուակիր նամակում (**Գ. Ախվերդյան**, Նամակներ, էջ 355) եւ История Армении **Моисея Хоренскаго**, 1858, с. 358.

[2] Հմմ. «Բաղադրեալ ժամանակ է կազմում նաեւ կամ բայը՝ խոնարհուող բայի անցեալ դերբայի հետ. հասեալ կամ (հասել եմ), եղեալ կայք (պառկած էք), եկեալ կայ (եկել է)» (**Վ. Առաքելեան**, Գրաբարի քերականութիւն, Եր., 2010, էջ 194, եղանակաւորիչների համար տե՛ս էջ 220): Մենագրութեան «Գրաբարի հատընտիր» բաժնի օրինակներից հմմ. «կայր կախեալ յերեւոյթ տեսիլ նշանակի, եւ փաղփաղէր մարմինն ի բարձուէն...» (էջ 244, **Բուզ.**, Դ.ծթ, էջ 185; ՄՀ, հտ. Ա, էջ 375): Ս. Գրքից եւս նշենք «ահա» եղանակաւորիչով, անցեալ դերբայով եւ օժանդակ բայ դարձած «կամ»-ով մի օրինակ՝ «Համբարձ Աբրահամ զաչս իւր եւ ետես, եւ *ահա* խոյ մի *կախեալ կայր* զծառոյն սաբեկայ զեղջերաց» (Ծննդ. ԻԲ 13), որի յունարէն տարբերակում էլ առկայ են «ահա»-ն եւ բաղադրեալ ստորոգեալը ("Καὶ ἀναβλέψας Ἀβραὰμ τοῖς ὀφθαλμοῖς αὐτοῦ εἶδεν καὶ *ἰδοὺ* κριὸς *εἷς κατεχόμενος* ἐν φυτῷ σαβεκ τῶν κεράτων").

[3] Ըստ ՆՀԲ-ի (հտ. Ա, էջ 952)՝ «խնդիր» գոյականի իմաստներն են. «խոյզ, յոյզ, որոնումն», «քննութիւն, հարցուփորձ, վէճ, տարակոյս լուծանելի, խուզարկութիւն բանից», «պահանջումն», «խնդրուած, հայցուած, իրն հայցեալ»: Ստացւում է. «Ահաւասիկ հարցում է արուել Արտաշէս թագաւորի կողմից...»:

[4] Գուցէ, իրօք, սրբագրելով՝ *որ* փխ *զոր*, ինչպէս ճիշտ նկատել է Բ. Յարութիւնեանը («Գահնամակի» թուագրման հարցի շուրջը, էջ 73)՝ նշելով նաեւ կտորի վերջում՝ «տեսի» բառից յետոյ նախադասութիւնն աւարտելու անհրաժեշտութիւնը (թէկուզ եւ չզգալով նրանում «եթէ»-ի հարցական բնոյթը):

եզրոյթով ասած՝ ֆոնդերից մէկին), ընդ որում՝ աւելի հաւանական է՝ հէնց առաջին Սասանեան արքայի անունով: Վերջինս, ինչպէս դա պատկերացնում էին և դ. հայ հեղինակները (Խորենացու օրինակով), բացի իրենց հայրենիքը նուաճելուց ու նրա մեծ մասն աւերածութեան ենթարկելուց («գերելով՝ զյոլով մասն աշխարհիս յաւեր դարձուցանէր»[1])՝ դրա հակառակն էլ էր արել. «գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին [այսինքն՝ նախկին, վաղարշակ թագաւորի օրերի!] հաստատէր»[2]: Եւ ահա, հերթական անգամ Տիզբոն ուղարկուած Սահակ Պարթեւից ակնկալել են հէնց այդտեղ՝ «Արտաշրի ի դիւանին» փնտրել ու գտնել («եթէ՞ ես ... տեսի») անհրաժեշտ փաստաթուղթը[3]: Այն, բարեբախտաբար, յայտնաբերուել է, ապա հաստատուելով արքայից արքայի ու կաթողիկոսի կնիքներով՝ Սահակի կողմից ուղարկուել է (բնականաբար՝ Հայաստան)՝ «Քաղոց ամսի 17» թուակիր մի նամակ-նախաբանով («գիր արարի ես՝ Սահակ կաթողիկոս»)՝ այն մասին, թէ «Նորին բարերարութիւն» Հայոց թագաւորը (այլ ո՛չ թէ Պարսից արքան) ինչպէ՛ս նախկին ժամանակների օրինակով կարգադրի (ապառնիով, այլ ո՛չ թէ յորդորական հրամայականով. «եթէ որպէ՛ս Ձեր բարերարութիւնդ հրաման տա-

---

[1] **Խոր.**, Բ.ին, էջ 215; ՄՀ, հտ. Բ, էջ 1964: Ի դէպ, մեծ բարեբախտութիւն կը լիներ, եթէ այս արտայայտութեան մէջ կէտադրման՝ մեր կատարած փոքրիկ փոփոխութիւնը (1913 թ. բնագրի համեմատ) նպաստէր՝ յաղթահարելու վերջին տասնամեակներում հայագիտութեան մէջ վաստակաշատ գիտնականների մի շտապողական վրիպման հետեւանքով սպրդած այն թիւրըմբռնումը, իբրեւ թէ տուեալ բնագրից բխում է, թէ Մեծ Հայքի թագաւորութիւնն արդէն Գ դ. կէսերին, հռոմէա-իրանական Միսիխիսի հաշտութեան պայմանագրի համաձայն բաժանուել էր Կայսրութեան եւ Սասանեանների միջեւ (տե՛ս, օր.՝ ՊԲՀ, 1976, հմր 1, էջ 67-88; ՀԺՊ, հտ. II, էջ 39-43; **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի պատմության ատլաս, էջ 38-39; ՀԱ, 2007, սն. 160-171; **Ա. Մելիքյան**, Սալմաստի ժայռաքանդակը, էջ 61-65, 139-143, 203; **А. Ж. Арутюнян**, Армения, государства Восточного Средиземноморья и Иран, с. 277-284). Սակայն այդ շտապողական պնդումը լոկ գրաբարի շարահիւսութեան նրբերանգների թոյլ իմացութիւն է ցուցանում (իսկ պիտի ընկալել, պայմանականօրէն պարզեցուած՝ «զյոլով մասն աշխարհիս գերելով-յաւեր դարձուցանէր») եւ կոպտօրէն անտեսում յարակից ենթատեքստերը, այդ թուում՝ հէնց շարունակութեան մէջ՝ «*Յորմէ* գաղթեալ նախարարքն Հայոց՝ ... *ի Յոյնս* ապաւինէին» (այսպէ՛ս, այլ ոչ թէ՝ «Հայքի *ոչ յոլով*, Յունաց *բաժին* ապաւինէին»): Ս. Երեմեանից եկող այս վրիպեալ պնդման միւս «փաստարկների» մանրամասն հերքումը տե՛ս **Ա. Ա. Մարտիրոսյան**, III դարում Մեծ Հայքի բաժանման վարկածը, – ՊԲՀ, 1987, հմր 3, էջ 201-212:

[2] **Խոր.**, Բ.հէ, էջ 215-216; ՄՀ, հտ. Բ, էջ 1965: Ուշագրաւ է նաեւ՝ «Եւ զերկիրս *գրով* ընդ հարկաւ իւրով արկանէ եւ ամենեւիմբ զիւր անուն հաստատէ»:

[3] Դիտարկումը դեռ Գր. Խալաթեանցինն է (Армянские Аршакиды, ч. I, с. 296. "...армянский католикос Саак ездил в Персию *в дни армянского царя Арташеса*, при персидском царе Враме V, *быть может, даже для утверждения Арташеса на престоле*... 17-го числа армянского месяца к'ах'оца... католикос Саак посетил в персидской столице Ктезифона персидскую государственную канцелярию и в архиве царя Арташира (379-383) видел касающийся армян ռամական նամա[կ] – податный список *крестян, составленный, быть может, по приказанию этого царя после разделения Армении* между Персией и Византией" (վերջին միտքն, իհարկէ, ճիշտ չէ): Համմ. **Հ. Կ. Քիպարեան**, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 75 («420-421 զինքը Տիզբոն կը գտնենք, ուր գուցէ կ'երթայ Արտաշէսի թագաւորութիւնը յաջողցնելու համար, եւ պարսիկ արքային վրայ իր ունեցած հեղինակութեամբ դադրեցնել կու տայ քրիստոնեաներու դէմ հանուած հալածանքը»):

*ցէ... որպէս յառաջ առ Հայոց ազգին...») գահակարգութեան խնդիրները «Հայոց ազատաց եւ տանուտէրանց» համար՝ առաջարկուած «արդար եւ ճշմարիտ» ձեւով նրանց իր «դիւանի շահ[ր]համարի» մէջ «առնելով» (դասակարգելով-հաշուառելով)[1]: Եւ դա, կրկին նշենք՝ ի պատասխան Արտաշէս թագաւորի՝ Սահակ Պարթեւի հետ նախապէս մտայղացուած ու պատրաստուած պաշտօնական հարցումի («խնդիր արարեալ ի դրան արքունի յԱրտաշէսի թագաւորի...»): Նախորդ վերծանողներին խանգարել է նաեւ բնագրի առաջին սիւնակի 7-րդ տողաւարտում պատուոյ նշանի տակ վերցուած ժէ (17) թուանշանից յետոյ գրչի դրած վերջակէտը (կրկնակէտը), որին նաեւ երկու խոշոր գլխատառեր են յաջորդում[2] («տեսի ի Քաղոց ամսոյ ի ժէ: Ի Վռամայ...»): Վստահելով դրան՝ հրատարակիչներն այդ նոյն տեղում են աւարտել իրենց վերականգնած բնագրի առաջին նախադասութիւնը (Բ. Յարութիւնեանը խախտեց այդ «աւանդոյթը»), որի հետեւանքով ամսաթիւը կտրուել է Սահակի յղած նամակից («դիր արարի ես՝ Սահակ կաթողիկոս...») եւ կապուել արքունի դիւանում «Ռամական նամակը» տեսնել-գտնելու հետ: Բայց իրականում դժուար չէ նկատել, որ գրչի համար հիմք են ծառայել, թերեւս, նախօրինակից եկած՝ թուանշան ցուցանող կրկնակէտերը («*ի :ժէ:»), որոնցից երկրորդը նա սխալմամբ ընկալել է իբրեւ վերջակէտ: Ի դէպ, շտապողական է թւում նաեւ վստահութիւնը գրչի յաջորդ վերջակէտի նկատմամբ՝ «նոյնպէս Ներսեհ» բառերից առաջ: Այն յետ տանելով ու դնելով «Որ յայսմ հետէ»-ից առաջ (դրանով ընկալւում է՝ «Որպէսզի այսուհետեւ... գահ[ակարգ]ը յայտնի լինէր, ... կնքեցինք Գահնամակը...»[3])՝ յաջողւում է միեւնոյն նախադասութեան մէջ չթողնել բայի տարբեր ժամանակներով խոնարհուած երկու ստորոգեալ («հրաման տացէ», «ի*

---

[1] «Առնեմ» բայի երկրորդ իմաստով (ըստ ՆՀԲ, հտ. Ա, էջ 308. «Կացուցանել, կարգել, հաստատել»): Նամակի հասցէատիրոջ հարցում Գր. Խալաթեանցի կարծիքը, ցաւօք, միւսներից չի տարբերւում (անդ. "Тут он письменно обращается к "царю царей и благодетелю" (по-видимому, таков был титул этого властелина) Враму, прося его о следующем: "чтобы твое благодеяние повелело, как то было прежде у армян, произвести для твоей канцелярии [новую] общую перепись армянских дворян и владетелей, дабы [сообразно с тем] места их в разрядном списке были определены"). Հմմ. նոյնը՝ Ստ. Մալխասեանցի ընկալման մէջ (էջ 338). «գրեցի Վռամ արքայից արքային եւ բարերարին, թէ թող [չկայ որպէս-ը] ձեր բարերարութիւնը հրաման տայ՝ Հայոց ազատների եւ տանուտէրների ցուցակագրութիւնը կազմել ձեր դիւանում...»: Բայց բնագրից ամենաշատ շեղումները Մ. Էմինինն են (վերծանութեան ցանկացած տարբերակով)՝ կրկնուած Ն. Ադոնցի կողմից (Армения в эпоху Юстиниана, с. 270) – "[Я Са]ак искал во дворе царя Арташеса того, о чем заговорил в Ктезифоне, что я видел ramakan nāma Арташира в диване [17 месяца k'ar'oc]. И обратился я католикос Саак к Враму... с просьбой: да прикажет Ваше Благодеяние сделать перепись армянским азатам и танутерам для вашего дивана..." (հմմ. История Армении **Моисея Хоренскаго**, 1858, с. 358). Դժուար է հասկանալ, թէ գիտնականների պատկերացմամբ՝ ինչպէ՞ս կարող էր Սահակը գրել՝ «Եւ է այսպէ՛ս արդար եւ ճշմարիտ», եթէ իր նամակն ուղղում էր Պարսից արքային: Նոյնը՝ Հայոց կաթողիկոսի կնիքը դնելու հարցում, եթէ կնքուող փաստաթուղթը պիտի պահուէր Տիզբոնի դիւանում:

[2] Դրանցից առաջինը մագաղաթեայ պատառիկի լուսանկարում յստակ երեւացող գլխատառ *ի* է, չնայած նրան, որ երեք հրատարակիչներն էլ դրա փոխարէն *Եւ* են վերծանել:

[3] Հմմ. **Լ. Գ. Խաչերեան**, Գրաբարի շարահիւսութիւն, – ՀԱ, ՃՁ տարի, 1992, սն. 15:

յայտ լինէր») եւ իրարից ոչ հեռու կրկնուած «Հայոց ազատաց եւ տանուտէրանց»-ներն ու «նոյնպէս»-ները: Այս խնդրին նուիրուած մեր նախորդ աշխատանքում («Բազմավէպ»-ում, 2011-ին) բերել ենք Սահակ Պարթեւի նամակ-նախաբանի սկզբում եղած «{Ա}հա» եղանակաւորիչ բառի օրինակով երկու տասնեակից աւելի դէպքեր՝ միջնադարեան Թղթերի, Ճառերի, ինչպէս նաեւ մէջբերուած ուղղակի խօսքի ու կարեւոր հատուածաբաժանումների սկզբում (նաեւ՝ «Եւ ահա», «Ջի ահա», «Արդ ահա», «Ահաւասիկ» տարբերակներով)[1]: Այստեղ լոկ կրկնենք, որ Ս. Գրքում, որի մեծ մասի թարգմանիչն ու խմբագիրը Սահակ Պարթեւն էր, «Ահա»-ն հանդիպում է 331 անգամ[2] (համեմատելու համար՝ Մովսէս Խորենացու մօտ 10-ից պակաս է), ընդ որում՝ դրա քառորդ մասը՝ նախադասութիւնների հէնց սկզբում:

Այս նոր տարբերակով «Գահնամակ»-ի նամակ-նախաբանի ամբողջ բնագիրը դառնում է լրիւ պարզ, եւ վերանում է քերականական անհարթութիւնները շրջանցելու, առանձին բառեր անտեսելու[3] կամ լրացուցիչ վերականգնումներ անելու[4] կարիքը: Թէպէտ, թւում է, թէ կարելի է փորձել կատարել ընդամենը մէկը՝ «արքայից արքայի եւ բարերարի» բառերին յաջորդող «եւ»-ի փոխարէն նախօրինակում ենթադրելով՝ «Եի», այսինքն՝ «հինգերորդի [ամի]»: Դրանով կը յաղթահարուէր դեռեւս Գր. Խալաթեանցի կողմից նկատուած քերականական բաւականին ակնյայտ անհարթութիւնը[5], ու նաեւ պարզ կը դառնար Սահակ Պարթեւի նամակի ոչ միայն ամսաթիւը (Քաղոց ամսի 17-ը), այլեւ ճշգրիտ տարեթիւը՝ Վռամի թագաւորութեան հինգերորդ տարին (=424 թ.՝ հաշուած 420 թ. Նաւասարդի 1-ից[6], որն Օգոստոսին էր): Հետեւաբար՝ ճշգրիտ ամսաթիւը ստացւում է 424 թ. Դեկտեմբերի 26-ը[7]:

---

[1] **Ա. Յակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զարանամակ», էջ 509-511: Հմմ. Գիրք թղթոց, 1901, էջ 185, 231-232, 234, 407, 460; Գիրք թղթոց, Երկրորդ հրատ., էջ 1, 10, 346, 467, 490, 492; Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 216; **Դասխ.**, գլ. Բ.իբ, լթ, խա, էջ 184, 237, 258; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 820, 868, 888; **Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ** Մատենագրութիւնք, Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ – Ս. Ղազար, 1833, էջ 171; **Ցոյցի՝** Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեանի**, – ՀԱ, ՃԻԳ տարի, 2009, էջ 130, 134:

[2] Ըստ՝ Համաբարբառ Հին եւ Նոր կտակարանաց, Աշխատասիրութիւն՝ **Թ. վրդ. Աստուածատուրեան Արապկերցւոյ**, Երուսաղէմ, 1895, էջ 28-30:

[3] Հմմ., օր.՝ Ստ. Մալխասեանցի թարգմանածը (**Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Թարգմ. ... եւ ծանոթագրություններ **Ստ. Մալխասյանի**, էջ 338-339):

[4] Տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 270; **Բ. Հարությունյան**, «Գահնամակի» թուագրման հարցի շուրջը, էջ 73:

[5] Տե՛ս **Г. Халатянц**, Армянские Аршакиды, ч. I, с. 297.

[6] Սասանեանները նոր արքայի առաջին տարին հաշւում էին նախորդին փոխարինելու տարուայ Նաւասարդի 1-ից (**A. Christensen**, L'Iran sous les Sassanides, p. 166).

[7] 424 թ. Նաւասարդի 1-ը Օգոստոսի 12-ին էր (428-431 թթ. քառամեակում այն Օգոստոսի 11-ին էր. տե՛ս, օր.՝ **Գ. Բրուտեան**, Օրացոյց Հայոց, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1997, էջ 130-131; **Ռ. Հ. Վարդանյան**, Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Եր., 1999, էջ 16-17), հետեւաբար՝ Քաղոցի 1-ը՝ Դեկտեմբերի 10-ին: Հմմ. **Г. Халатянц**, Армянские Аршакиды, ч. I, с. 296 ("17-го числа армянского месяца к'ах'оца, соответствовавшего декабрю месяцу – не показано, однако, какого года...").

Ըստ Մ. Էմինի եւ Ղ. Ալիշանի՝ «զռամականն զնամա[կ]» բառերը վերականգնելի են «զ[Վ]ռամականն զնամա[կ]»[1]: Բայց Գր. Խալաթեանցը եւ Ն. Ադոնցը իրաւացիօրէն նկատել են, որ նման լրացման կարիք չկայ, քանի որ «ռամ» պահլաւերէն «ժողովուրդ» (նաեւ՝ «հասարակ ժողովուրդ») է նշանակում (որից կան «երամ» եւ «ռամիկ»), իսկ «նամակ/նամա»-ն իրան. լեզուներում էլ նոյնն է՝ իր նաեւ «գրուածք», «վաւերաթուղթ» իմաստով[2]: Այդպիսով՝ Սահակ Պարթեւի նամակն աղբիւրագիտական ուշագրաւ փաստերի թւում յիշատակութիւն է պահպանել նաեւ իրանական այն վաւերագրերի մասին (Ռամական նամակ), որոնք ամփոփում էին Սասանեան պետական աշխարհագրերի (բառացի թարգմանութեամբ՝ «ժողովրդագրերի», նորօրեայ եզրոյթով ասած՝ մարդահամարների[3]) արդիւնքները[4]:

«Գահնամակ»-ի ժամանակի մասին նոր ընկալումից նաեւ երեւում է, թէ Հայոց վերջին Արշակունի արքայի առաջին տարիներին երկրի հասարակական-պետական կառոյցն ամրապնդելուն ուղղուած որքա՛ն ծանօթ եւ պատմական դիտանկիւնով օրինակելի ջանքեր են գործադրել հայ պատասխանատու-նուիրեալները (ճիշտ այնպէս, ինչպէս դա արել ու անելու էին դարեր շարունակ, անցեալում եւ ապագայում, հայրենի հողի վրայ ու տիզբոններում)՝ ի հեճուկս յարաբերուն եւ ամեն ազգային-կենսականը կաթուածահարող հանրային յոռետեսութեան:

Յաւարտս տանք Սահակ Պարթեւի նամակ-նախաբանն աշխարհաբարով.

«Ահաւասիկ Արտաշէս թագաւորի կողմից արքունի դռանը, որը Տիզբոնում է, հարցում է արուել, [որում] խօսուած [է այն մասին], թէ արդեօ՞ք ես այն Ռամական-նամակը, որը [կար] Արտաշիրի դիւանում, գտել եմ [գտայ, տեսայ]:

Քաղոց ամսի տասնեօթին՝ վռամ արքայից արքայի եւ բարերարի հինգերորդ [տարուայ], նամակ գրեցի ես՝ Սահակ կաթողիկոս [այն մասին], թէ Ջերդ բարե-

---

[1] История Армении **Моисея Хоренскаго**, 1893, с. 296; **Գ. Ախվերդեան**, Նամակներ, էջ 355; **Հ. Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 430:

[2] Տե՛ս **Г. Халатянц**, Армянские Аршакиды, ч. I, с. 295; **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 297. Հմմ. **H. Hübschmann**, Armenische Grammatik, Bd. 1, Leipzig, 1895, S. 147, 201, 233; **Հ. Աճառեան**, Հայերէն արմատական բառարան, հտ. Գ, Եր., 1977, էջ 425; հտ. Դ, Եր., 1979, էջ 140:

[3] Այդ աշխարհագրերի մասին գիտէր նաեւ Պատմահայրը (**Խոր.**, Գ.ծա, էջ 323; ՄՀ, հտ. Բ, էջ 2077 («եւ զգիր դիւանին յայլ փոխեալ նորա անուամբ՝ սուղ ինչ զանազանեալ, ոչ բառնալով զհինն: Իսկ եթէ յամիցէ ի տէրութեանն ամս բազումս եւ արասցէ *աշխարհագիր* նոր, թողուին զայն, որ ի հնոյն փոխեցաւ, զի միայն նորոյն վերագրեացի անուն: Արդ՝ Արտաշիր ոչ ժամանեալ ի կարճութենէ աւուրցն այլ առնել *աշխարհագիր*՝ յայնմ որ յառաջնոցն փոխեաց, իւր անուամբն հրամայեաց գրել...»):

[4] Ն. Ադոնցը (Армения в эпоху Юстиниана, с. 297) փորձել է վիճարկել Գր. Խալաթեանցի կողմից արուած (որոշ շեղումով) այս դիտարկումը (հմմ. **Г. Халатянц**, Армянские Аршакиды, ч. I, с. 296. "...в архиве царя... видел касающийся армян ռամական նամա[կ] – податный список крестьян...") եւ «ռամական» եզրոյթի տակ «հեծելազօրային» («երամակ-ային») իմաստ տեսնել: Սակայն դա չի բխում ենթատեքստի բովանդակութիւնից. հակառակ հետազօտողի պնդումների՝ «Զօրանամակ»-ում ուղղակի նշուած է Հայոց «մարտիկ արանց» (թարգմանւում է՝ «զօրական», «ռազմիկ») քանակը, այլ ոչ թէ միայն հեծելազօրի: Ընդ սմին՝ հայ նախարարական հեծելազօրը չէր կարող 84 հազ. կազմել (հմմ. փաստաթղթի ամփոփման մէջ՝ «թիւ *մարտիկ արանց*, որ *ընդ ազգաւք*՝ ՋԴ-ից հազարաց»):

բարութիւնը ինչպէ՛ս հրաման տայ՝ Հայոց ազատներին եւ տանուտէրերին Ձեր դիւանի շահհամարում [աշխարհագրում] այժմ եւս նոյն կերպ դասակարգել, ինչպէս որ նախկինում [էր] Հայոց ազգի մօտ:

Նաեւ [նոյնպէս], որպէսզի այսուհետեւ Հայոց ազատների եւ տանուտէրերի գահ[ակարգ]ը յայտնի [պարզ] լինէր, արքայից արքայի հրամանով՝ Ներսեհը եւ ես՝ Սահակ Հայոց կաթողիկոս, կնքեցինք այս Գահնեմակին [Գահնամակը] եւ դրեցինք [վրան] արքայից արքայի մատանեդրոշմը եւ մերը:

Եւ այսպէ՛ս է արդարը եւ ճշմարիտը.

Նախ եւ առաջ՝ Հայոց իշխանը եւ Մաղխազը, [ապա՝]

Առաջին՝ Սիւնեաց տէրը ...»[1]:

բ) Է ԴԱՐԻ ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ը

Դեռեւս ըստ 1940 թ. Աշ. Աբրահամեանի կատարած ամփոփման՝ ««Աշխարհացոյցի» ստեղծման «ժամանակի վերաբերեալ բանասէրները յայտնել են իրարից տարբեր չորս հիմնական կարծիք. 1) Մխիթարեաններն «Աշխարհացոյցը» համարել են Մովսէս Խորենացու աշխատութիւն՝ Խորենացուն համարելով Ե դարի հեղինակ. 2) Սեն-Մարտէնն «Աշխարհացոյցը» համարել է կեղծ (սուտ) Մովսէսի գործ՝ գրուած Թ դ. վերջերում կամ Ժ դարի սկզբներում. 3) ակադ. Յ. Մանանդեանն «Աշխարհացոյցը» համարել է Խորենացու աշխատութիւն՝ Խորենացուն բերելով Թ դար. եւ, վերջապէս, պրոֆ. Ք. Պատկանեանն «Աշխարհացոյց»-ը համարել է Անանիա Շիրակացու գործ՝ գրուած Է դարում»[2]*: Յետագայում սրան աւելացել է, ըստ էութեան, լոկ ակադ. Ս. Երեմեանի կարեւոր տեսակէտը, ըստ որի՝ խնդրոյ առարկայ երկը կարող էր գրուել անանուն հեղինակի կողմից 618 թուից ոչ ուշ, քանի որ այդ տարի է վաղարշապատում կառուցուել (կամ գոնէ հիմնադրուել), Ս. Հռիփսիմէի եկեղեցին (ըստ նրա շինարարական վիմագրի), իսկ «Աշխարհացոյց»-ն այդ տաճարի փոխարէն դեռեւս գրում է «մարտիրոսուհիների մատուռների» մասին. ճիշտ է՝ հեղինակն, ի վերջոյ, նախընտրում է 610 թ. նախօրեակը*[3]*:*

Սակայն վերջերս «Աշխարհացոյց»-ի ամբողջական գիտական բնագրի կազմման եւ հրատարակման առիթով[4] *մեր կատարած վերլուծութիւնը թոյլ տուեց պն-*

---

[1] Հմմ. **Ա. Յակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Ջուրանամակ», էջ 541: Քառակուսի փակագծերի մէջ տրուած են նաեւ նախորդող բառի բացատրական նշումներ եւ լրացումներ՝ սահուն շարադրանք ստանալու նպատակով:

[2] **Ա. Աբրահամյան**, Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, Եր., 1940, էջ 48: Հմմ. **Հ. Մանանդյան**, Խորենացու առեղծվածի լուծումը: «Աշխարհացոյց»-ը եւ Մովսես Խորենացին, Եր., 1934:

[3] **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 24-26: Գրականութեան 2000 թ. կատարուած հիմնարար ամփոփումը տե՛ս **Բ. Հ. Հարությունյան**, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 5-51:

[4] Տե՛ս **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 35-194: Նրա նախորդ հիմնական տպագրերն են. Սրբոյ հօրն մերոյ **Մովսէսի Խորենացւոյ** Մատենագրութիւնք, Վենետիկ – Ս. Ղազար, 1848; Армянская география VII века по Р. Х., Текст и перевод издал **К. П. Пат-**

դել, որ հայկական վաղ միջնադարի այդ բացառիկ աշխարհագրական յուշարձանի ստեղծման գաղափարն ու գաղափարախօսութիւնը, ըստ ամենայնի՝ ուղիղ ներշնչուած են 610-ական թթ. սկզբներին Իրանի արքայից արքայ Խոսրով Բ Ապրուէզի տիրապետութեան տակ վերամիաւորուած Հայք աշխարհ-շահրում վարչական սպասելի բարեփոխման (ռէֆորմի), մասնաւորապէս՝ «Հայոց իշխանի» ինստիտուտի հաստատման հեռանկարից եւ իրողութիւնից: Հայոց, Վրաց եւ Աղուանից «իշխանների» մասին աղբիւրները խօսում են սկսած է դարից: Երեք այսրկովկասեան երկրների իշխանների հաստատութիւնները ձեւաւորուեցին այդ դարասկզբին, ենթադրաբար՝ 615/616 թ. «Պարսից ժողովի» հաւմատեքստում, որին մասնակցող Աղուանից Վիրոյ կաթողիկոսն էր (596-629) Սասանեան Խոսրով արքայից «խնդրել» (ըստ ՊԱ-ի մի տեղեկութեան) Աղուանից «իշխան»-ի տիտղոսը շնորհել Գարդմանի իշխան Վարազ Գրիգորին: Դա այն պատմական պահն էր, երբ Բիւզանդիայի կայսր Փոկասը (602-610) սպանուել էր իր Հերակլ զօրավարի կողմից (ով գահին տիրեց երեք տասնամեակ՝ 610-641 թթ.), որից յետոյ կայսրութիւնն ապրեց մի ոչ կարճատեւ ճգնաժամային շրջան: Այդ պահին էր, որ արձանագրուեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար մի կարեւորագոյն փաստ: Օգտուելով Բիւզանդիայի խառնակ վիճակից՝ Խոսրով Ապրուէզի յաղթական բանակները գրաւել էին նրա բոլոր արեւելեան պրովինցիաները (612-ին՝ Փոքր Ասիայի մեծ մասը, 614-ին՝ Պաղեստինը, 617-ին՝ Եգիպտոսը)[1]: Եւ այդ պատմական պահին տեղի ունեցաւ 385/387 եւ 591 թթ. բաժանումներով երկատուած Հայաստանի զոյգ մասերի վերամիաւորումը Սասանեանների տէրութեան կազմում, որն արդէն պարտաւոր էր մշակել իր նորանուաճ տիրոյթների կառավարման ինչոր մի լրիւ նոր համակարգ, ինչը եւ արեց Տիզբոնի համաժողովում՝ հայ մատենագրութեան մէջ կոչուած «Պարսից ժողով»:

Մենք ձգտել ենք ցոյց տալ, որ չհամառօտուած-չխմբագրուած վիճակով լոկ մէկ գրչագրում պահպանուած (Վենետիկի հմր 1245՝ ընդօրինակուած Հայոց ՌԾԳ /=1604/ թ., ցաւօք, խիստ անուշադիր գրիչ Ստեփաննոսի կողմից[2]) «Աշխարհացոյց»-ը[3] սկզբնապէս կազմուել-շարադրուել է նախ եւ առաջ՝ իբրեւ մի յատուկ

канов, СПб., 1877; Աշխարհացոյց **Մովսեսի Խորենացւոյ**..., Վենետիկ, 1881; **Ա. Գ. Աբրահամյան**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944; **Ս. Տ. Երեմյան**, «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ, – ՊԲՀ, 1972, հմր 4, էջ 209-230; 1973, հմր 1, էջ 238-252; 1973, հմր 2, էջ 210-230:

[1] Տե՛ս, օր.՝ **Թ. Նէօլդէքէ**, Պատմութիւն Սասանեան տէրութեան, Թարգմ. **Ն. Քարամեան**, Վաղարշապատ, 1896, էջ 76-78; История Византии, т. 1, Москва, 1970, с. 364-366.

[2] Նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Բ, Ձօրինեց **Հ. Բ. վրդ. Սարգիսեան**, Վենետիկ – Ս. Ղազար, 1924, էջ 811-818: Նիւթի վերտառութիւնն է. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենաց[ւ]ոյ ասացեալ» (թ. 1ա):

[3] Նրա «ընդարձակ խմբագրութիւն» անուանումը հէնց այդ պատճառով մերժելի է: Համառօտ խմբագրութեան հնագոյն ընդօրինակութիւնը մեզ է հասել Ժ դարի յայտնի գրչագրում (ՄՄ Ձեռ. 2679, հմմ. Մատեան գիտութեան եւ հաւատոյ **Դաւթի քահանայի**, Հայերեն թղթյա հնագոյն ձեռագիր, 981 թ., Նմանահանությունը տպագր. պատրաստեց եւ աշխատասիրեց **Ա. Ս. Մաթեւոսյանը**, հտ. Ա, Եր., 1995, հտ. Բ, Եր., 1997):

ծրագրային փաստաթուղթ-տեղեկատու՝ Տիզբոնում 615/616 թ. Խոսրով Ապրուէզի հրաւիրած[1] «Պարսից ժողովին» մեկնած հայ «պատուիրակների» օգտագործման համար: Ըստ 643 թ. իր աշխատանքն սկսած եւ 659 թ. առաջին կէսին գրիչը վայր դրած Սեբիոս պատմիչի ուղիղ վկայութեան՝ հայ ժողովականներն իրենց հետ էին վերցրել նաեւ «զգիր սրբոյն Գրիգորի»[2]: Միւս զուգահեռն էլ «Կնիք հաւատոյ» ժողովածոն է, որի ստեղծումը եւս կապւում է Կոմիտաս կաթողիկոսի եւ «Պարսից ժողովի» համատեքստի հետ[3]: Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունի իշխանի եւ անձամբ արքայի գլխաւորութեամբ անցկացուած ժողովն, ըստ Սեբիոսի՝ քննարկել է լոկ դաւանական մի խնդիր, որի լուծմամբ Հայոց եկեղեցու հաւատքը պարտադրուել է Իրանի բոլոր քրիստոնեաներին («Յորոյ վերայ հրաման ետ արքայ Խոսրով, եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»)[4]: Բայց աղբիւրագիտական համադիր նիւթը թոյլ է տալիս մեծ հաւանականութեամբ մտածել, որ նոյն ժողովի համատեքստում քննարկուել ու լուծում են ստացել նաեւ տարածքային մեծ ձեռքբերումներ ունեցած Իրանի տէրութեան համար կարեւոր այլ պետական, վարչա-քաղաքական խնդիրներ:

Ըստ Մովսէս Դասխուրանցու ՊԱ-ում պահպանուած մի քանի ուշագրաւ տեղեկութիւնների՝ Աղուանից աշխարհի «առաջին իշխան» Վարազ Գրիգորը «մկրտութիւն» էր ստացել Վիրոյ Աղուանից կաթողիկոսի ձեռքով եւ նրա իսկ խնդրանքով Խոսրով արքայի կողմից նշանակուել իր այդ պաշտօնում: Համմ. բնագրերը. «Վարդ ծնանի զվարաղման եւ զՇուշիկ տիկին եւ զվարազ Գրիգոր՝ առաջին իշխանն Աղուանից, որ առ [եւ էառ] զմկրտութիւն ի Վիրոյէ՝ Աղուանից կաթողիկոսէ»[5]; «եւ յԱղուանից իշխանութեանն վարազ Գրիգորի՝ Գաւդմանայ տեառն՝ գնացի ես Յովսէփ անապատական...»[6]; «Այս վարազ Տրդատ ի Մհրհրական տոհմէ էր, որք զԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնլով: Սա ութերորդ էր ի վարազ Գրիգորէ առաջին իշխանէն Աղուանից»[7]; «Վարդ ծնանի զվարազ Գրիգոր՝ զառաջին իշխանն Աղուանից, որ ծնաւ Դ որդիս»[8]; «Տէր Վիրոյ, ամս Լ Դ: ...եւ սա խնդրեաց ի Խոսրովայ

---

[1] Համմ. **Է. Լ. Դանիելյան**, Հայ եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարվեզի վարած քաղաքականութիւնը, – ՊԲՀ, 1981, հ՝ր 4, էջ 197: Մէկ այլ հաշուարկով՝ «Պարսից ժողովի» թուագրումը 617/618-ն է (**M. van Esbroeck**, L'encyclique de Komitas et la réponse de Mar Marutha /617/, – "Oriens Christianus", 2001, 85, p. 162-175).

[2] Տե՛ս **Սեբիոս**, գլ. ԽԴ, էջ 124; Պատմութիւն **Սեբէոսի**, էջ 150:

[3] Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ... յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համահաւաքեալ, Հրատարակեց՝ **Կարապետ եպ.**, Վաղարշապատ, 1914; **Կոմիտաս կաթողիկոս**, Կնիք հաւատոյ, – ՄՀ, հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005; **M. van Esbroeck**, L'encyclique de Komitas, p. 162-175.

[4] Տե՛ս **Սեբիոս**, գլ. ԽԴ, էջ 125; Պատմութիւն **Սեբէոսի**, էջ 151: Համմ. **Ա. Յակոբեան**, Սեբիոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը, սն. 213-270:

[5] **Դասխ.**, Բ.ժէ, էջ 172 (մեր կատարած որոշ ուղղումներով):

[6] Անդ, Բ.ծ, էջ 280; **Յովսէփ Բրտիայրեցի (Անապատական)**, Յիշատակագրութիւն, Գիտա-քննական բնագիրը **Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 583:

[7] **Դասխ.**, Գ.ժթ /ի/, էջ 326:

[8] Անդ, Գ.իբ /իգ/, էջ 339:

առեալ գրել պատիւս Գարդմանայ տէր եւ իշխանաց [bcelv իշխան] Աղուանից ի վերայ թղթոց «առ կուսակալս աշխարհիս», զոր եւ դեռ եւս գրեն»[1]: Բայց Աղուանից Վիրոյ կաթողիկոսը, որը 630-632 թթ. միջակայքում «Անանուն» կաղանկատուացու կողմից շարադրուած եւ Դասխուրանցու կողմից բառացի արտագրուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն» անուանուող միաբնակ երկի վկայութիւններով՝ իր իշխանութեան առաջին տարիներից (ճշգրիտ՝ 602-ից) մինչեւ նախավերջին տարին (628 թ.) պատուաւոր աքսորեալի կարգավիճակով պահւում էր Տիզբոնում[2], ըստ Սեբէոսի՝ 610-ական թթ. կէսերին Տիզբոնի «Պարսից ժողովի» մասնակիցն էր, ընդ որում՝ երկաբնակ, քաղկեդոնական դաւանանքով (պատմիչի հատուածն է. «Իսկ որք զՔաղկեդոնին՝ զՎիրոյ զԱղուանից կաթուղիկոսն, եւ այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, եւ իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին»)[3]: Նշենք, որ երկի Ա գրչագիրը Վիրոյի փոխարէն տալիս է «զվիրս» ընթերցումը, իսկ Երից. պատառիկը եւ Միհրդ. գրչագիրը՝ «զՎրաց»: Բայց միեւնոյն է, թէկուզ եւ առանց անուան յիշատակման՝ ժողովին մասնակցած Աղուանից կաթողիկոսը (Վրաց կաթողիկոսի հետ մէկտեղ) այդ տարիներին Վիրոն էր: Ըստ Անանիա Մոկացու եւ Թ դարի Վրաց կաթողիկոս Արսէն Սափարեւու[4]՝ է դարի սկզբի եկեղեցական բաժանումից յետոյ, երբ յուսահատուած Աբրահամ Աղբաթանեցին 609 թ., ի վերջոյ, նզովք ուղղեց Վրաց կաթողիկոս Կիւրիոնին եւ «Աղուանիցին» (այսինքն՝ կաթողիկոս Վիրոյին)[5], Աղուանից եկեղեցին միաբնակութեան էր վերադարձրել Հայոց Կոմիտաս կաթողիկոսը (615-628)[6], ով եւս, ի դէպ, Տիզբոնի «Պարսից ժողովի» մասնակիցն էր (դեռ՝ իբրեւ եպիսկոպոս):

---

[1] Անդ, Գ.իգ /իդ/, էջ 343: Տեղին նշենք, որ վրացական աղբիւրներում եւս որոշ յիշողութիւններ են պահպանուել Խոսրով Ապրուէզի կողմից իր հպատակները դարձած վրաց էրիսթաւներին՝ իրենց տիրոյթների վրայ ժառանգական իրաւունքներ շնորհելու մասին: Տե՛ս Летопись Картли, Пер., введение и примечания **Г. В. Цулая**, Тбилиси, 1982, с. 35 (աշխատասիրող Գիւի Ծուլայան յղում է՝ **Г. С. Мамулиа**, Генезис и политическая тенденция легенды о реформах "царя" Арчила (VIII в.), – В кн.: Разыскания по истории Грузии и Кавказа, Тбилиси, 1976, с. 117 сл. /վրացերէն/):

[2] Վիրոյի այդ «ապստամբութեան» մասին առաւել մանրամասն տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, Թիֆլիս, 1902, էջ 92-93; **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի, էջ 197-200; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 191-192.

[3] **Սեբիոս**, գլ. ԽԴ, էջ 124; Պատմութիւն **Սեբէոսի**, էջ 151: Հմմ. **Հ. Ն. Ակինեան**, Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ, Վիեննա, 1924, էջ 100:

[4] Նրա ժամանակի մասին մանրամասն տե՛ս **А. М. Меликсет-Бек**, К вопросу о датировке Псевдо-Исааковых памфлетов в греко-византийской литературе, – В кн.: **А. М. Меликсет-Бек**, Источниковедческие заметки, Составил и редактировал **П. М. Мурадян**, Ер., 2010, с. 40-43 (յօդուածը սկզբնապէս լոյս է տեսել՝ "Византийский временник", VIII, 1956).

[5] Գիրք թղթոց, Տփխիս, 1901, էջ 193-194; Գիրք թղթոց, Երկրորդ հրատ., էջ 362; **Աբրահամ Աղբաթանեցի**, Թուղթք, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Պ. Մուրադեանի, Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Դ, Անթիլիաս, 2005, էջ 19-20:

[6] **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի**՝ Ցաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն [հրատ.՝ **Գ. Տէր-Մկրտչեան**], – «Արարատ», 1897, էջ 137; **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները, հտ. Ա, էջ 37-38:

Վիրքի համար եւս կարելի է նկատել նման պատկեր, եթէ, իհարկէ, անքննադատաբար չհետեւենք վաղ միջնադարի մասին վրաց ուշ՝ զարգացած միջնադարի շրջանի մատենագիրների (ԺԱ-ԺԲ դդ.) ժամանակագրական պատկերացումներին, որոնք իրականից շեղուած են թւում մի քանի տասնամեակով: Ահա կովկասագէտ Արսէն Շահինեանի ուշագրաւ յօդուածի[1] մի հատուածն այդ խնդրի վերաբերեալ (բաց ենք թողնում հեղինակի յղումներն աղբիւրներին եւ դրականութեանը). «Ահա, համաձայն Վրաց դարձ-ի անանուն հեղինակի տեղեկութիւնների՝ Գուարամ Ա կուրապաղատն իշխել է (Վրաց) Սամոէլ Դ ... եւ Բարթլոմէ ... կաթողիկոսների օրօք: Իսկ ըստ Ջուանշեր Ջուանշերիանիի եւ Սումբաթ Դաւիթիս-ձէի՝ նա սկսել է իր կառավարումը դեռ Սվիմոն ... եւ Սամոէլ Դ ... կաթողիկոսների ժամանակներում եւ նոր միայն իշխել Սամոէլ Դ-ի օրօք: Տեղական աղբիւրներում նմանատիպ տարաձայնութիւնների առկայութիւնը ... առաջացել է այն պատճառով, որ առաջին վրաց հեղինակը Գուարամի իշխանութեան սկիզբ է ընդունում վերջինիս պաշտօնական հաստատումը Մօրիկի կողմից 589-ի կէսերին, մինչդեռ միւս երկուսն իշխանութեան սկիզբն են ընդունում նրա ընտրութեան պահը էրիսթաւների կողմից 571-ին կամ 572-ին: Բանն այն է, որ վրաց ժամանակակից պատմագրութեան մէջ էրիսթաւների առաջին այդ ժողովի դումարումը վաղուց է շաղկապւում 571–572 թթ. Սասանեանների կողմից հերթական անգամ կրօնափոխութեան պարտադրման քաղաքականութեան դէմ Հայոց մարզպանութիւնում վարդան Մամիկոնեանի գլխաւորութեամբ բռնկուած ապստամբութեան հետ, որին միացան նաեւ վրացիները... Յաւելենք նաեւ, որ վրաց անանուն ժամանակագրի հետեւեալ խօսքերը՝ «[Սկզբում — Ա. Շ.] Գուարամին դրեցին էրիսթաւ, ապա նոր՝ կուրապաղատ», ուղղակիօրէն հաստատում են մեր տեսակէտն առ այն, որ Գուարամի իշխանութեան փաստացի (իշխանական ժողովի կողմից ընտրուելու միջոցով) ու իրաւական (կայսեր կողմից հաստատուելու միջոցով) ձեւակերպումները հարկաւոր է իրարից յստակ տարանջատել, բանզի դրամբ տարբեր ժամանակներում են տեղի ունեցել»[2]: *Իսկ մեր կարծիքով՝ ճիշտ կը լինէր Գուարամի՝ «Վրաց իշխան»*

---

[1] **Ա. Կ. Շահինյան**, Ժառանգական իշխանությունների կազմավորումը Իրանի քրիստոնյա մարզպանություններում Բյուզանդիայի հետ հակամարտության ավարտական փուլում (Զ դարավերջ – Է դարասկիզբ), – «ՎԷմ» հասարակական հանդես, ԺԱ (ԺԷ) տարի, 2019, թիւ 1 (61), էջ 33-34:

[2] Ընդգծումը մերն է: Շարունակութեան մէջ ուշագրաւ է նաեւ հետեւեալ հատուածը (էջ 34). «...Ասորի Ցակոբիկեան եկեղեցու Եփեսոս քաղաքի եպիսկոպոս Ցովհանի (մօտ. 507–586) *Եկեղեցական Պատմութիւն*-ում «Պարսկական հայերի մասին, որոնք հոռոմներին յանձնուեցին» խորագրով Զ գրքի ԺԱ գլխում՝ Վարդան (Մամիկոնեանի) գլխաւորութեամբ ապստամբած հայերին միացած հարեւան (վրաց) ազգի առաջնորդ-իշխանի անունն էր *Գորգոնիս*» (Ասորական աղբյուրներ, Ա /Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 8/, Թարգմ ...՝ **Հ. Գ. Մելքոնյանի**, էջ 430–431): Վերջին անունը պիտի սրբագրել *Գուրգէն*, այլ ոչ թէ *Գուարամ*-ի մի տարբերակ, ինչպէս շտապողաբար ենթադրում էր Կ. Թումանովը (Studies in Christian Caucasian History, p. 434). Այս Գուրգէնի անունը վրացերէնով (ԼՒ [GN], ԼՃՐ [GRE] կամ ԼՃԼ [GRG]) պահպանուել է նաեւ իր թողարկած դրամների վրայ (**Д. Г. Капанадзе**, Грузинская нумизматика,

դառնալը կապել 616 թ. «Պարսից ժողովի» համատեքստի հետ, իսկ կուրապաղատի տիտղոս ստանալը վերագրել հէնց Հերակլ կայսեր յաղթարշաւի ժամանակին:

Նշուած տեղեկութիւնները համադրելով՝ առաւել հաւանական է մտածել, որ ոչ միայն Աղուանից, այլեւ Հայոց եւ Վրաց «իշխանների»՝ այսրկովկասեան երկրների լուրջ ինքնավարութիւնը խորհրդանշող հաստատութիւնները (ինստիտուտները) հիմնադրուել են (անկախ նախորդող դարաշրջանների նմանատիպ, բայց աւելի թոյլ հաստատութիւններից[1]) հէնց «Պարսից ժողովի» համատեքստում: Ընդորում, քանի որ այդ հաստատութիւնները ենթադրում էին է՛ւ «իշխանների» իրաւասութիւնների, է՛ւ այն տարածքների յստակ սահմանում, որտեղ դրանք պիտի գործէին, այդ պատճառով էլ՝ որոշակի իմաստով Տիզբոնի ժողովի «ծնունդ» «Աշխարհացոյց»-ը ծրագրային ձեւով եւ հնարաւորինս յստակ սահմանում էր տուեալ տարածքները, մասնաւորապէս՝ Հայք աշխարհ-շահրի դէպքում՝ 385/387 ու 591 թթ. բաժանագծերի անտեսումով, թէպէտ եւ աշխարհագէտ հեղինակը չի խուսափում դրանց մասին իր տեղեկանին հաղորդելուց: Բացի այդ՝ նա նշում է նաեւ այսպէս ասած՝ «վիճելի տարածքները» («որ ի Հայոց հանեալ են» ձեւակերպումով). Գուգարք նահանգը՝ Վիրք/Վարջան աշխարհ-շահրի դէպքում, Արցախն ու Ուտիքը՝ Աղուանքի, Փայտակարանը՝ Ատրպատական աշխարհ-շահրի դէպքում: Ի դէպ, ուշագրաւ է, որ «Պարսից ժողովի» հայ պատուիրակութեան հէնց այս տարածքային «յաւակնութիւնները», ի տարբերութիւն խմբի մնացեալ սպասելիքների, մնացին Տիզբոնի իշխանութեան կողմից «չբաւարարուած»: Այդպէս՝ «Հայոց իշխան»-ը, որի լիազօրութիւնների ճանաչումը Սասանեաններից շուտով որդեգրեց նաեւ Արաբական խալիփայութիւնը[2], իրաւունքներ չստացաւ Գուգարք, Արցախ, Ուտիք եւ Փայտակարան նահանգների նկատմամբ, ու դա շարունակուեց ընդհուպ մինչեւ Աբբասեան խալիփաների կողմից «Արմինիյա»-ի «իշխանաց իշխանի» հաստատութեան սահմանումը Թ դ. առաջին կէսում[3], որն, ի դէպ, բաւականին արագ վերաճեց թագաւորական իշխանութեան. ընդ սմին, Բագրատունի արքաները շատ արագ զիջելով իրենց գերիշխանութիւնը «Արմինիյա»-ի մաս կազմող բուն Վիրքի եւ Բուն Աղուանքի նկատմամբ (դրա պաշտօնական արձանա-

---

Москва, 1955, с. 46-48; **А. В. Акопян**, Новое в грузино-сасанидской нумизматике: второй известный тип монет Гургена I, – "Нумизматика и эпиграфика", 2011, вып. 18, с. 187-190; **Ա. Կ. Շահինյան**, Ժառանգական իշխանությունների կազմավորումը, էջ 38-39):

[1] Համմ., օր.՝ **Ա. Տեր-Ղեւոնդյան**, «Հայոց իշխան» տիտղոսի ծագումը եւ Հայոց տերութիւնը VII դարում, – ԲԵՀ, 1969, հմր 1, էջ 241-247 (վերահրատ.՝ **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Հոդվածների ժողովածո, Եր., 2003, էջ 190-196):

[2] Վերջին անգամ տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2010, էջ 17-26:

[3] Հարկ է նշել, որ «իշխանաց իշխանի» հաստատութեան սաղմերը երեւում են դեռեւս Է դարում, երբ Սեբիոսի վկայութեամբ՝ արաբները Հայոց իշխան Թէոդորոս Ռշտունուն վստահում էին ոչ միայն Հայաստանի, այլեւ Վիրքի եւ Աղուանքի քրիստոնեայ բնակչութեան որոշակի ինքնավարութեան ապահովումը (տե՛ս **Սեբիոս**, գլ. ԽԷ, էջ 146; Պատմութիւն **Սեբէոսի**, էջ 169. «Եւ ետ նմա [Մաւիաս իշխանն Իսմայելի Թէոդորոսին – *Ա. Յ.*] զՀայս եւ զՎիրս եւ զԱղուանս եւ զՍիւնիս, մինչեւ ցԿապկոհ եւ զպահակն Ճորայ»):

գրումը կայ նաեւ Կոստանդին Միրանածին կայսեր մօտ), բաց չթողեցին պատեհութիւնը՝ ծայրամասային Գուգարքը, Արցախը եւ Ուտիքը միասնական Հայոց պետութեան կազմում «վերամիաւորելու» հարցում (կրկին արձանագրուած՝ Կոստանդինի մօտ[1]). այդ պետութիւնն, ըստ Կ. Իւզբաշեանի դիպուկ դիտարկման՝ ոչ պատահականօրէն էր վերստին ստացել «Մեծ Հայք» պաշտօնական անուանումը[2]:

«Աշխարհացոյց»-ի ստեղծումը 610-ական թթ. երկրորդ կէսին վերագրելով (թերեւս, մինչեւ 618 թ., երբ Վաղարշապատում կառուցուեց Ս. Հռիփսիմէի եկեղեցին, որի փոխարէն երկը դեռեւս նշում է «մարտիրոսուհու մատուռ»), գոնէ իբրեւ վարկած՝ հնարաւոր է առաջ քաշել պատմական երկու կարեւոր իրողութեան վերաբերող խնդիրների նորովի քննարկման անհրաժեշտութեան հարցը: Դրանք են.

ա) Արդեօ՞ք հէնց Սմբատ Բագրատունին չէր «Պարսից ժողովից» յետոյ դարձել առաջին «Հայոց իշխան»-ը (ինչպէս Վարազ-Գրիգորն էր դարձել «առաջին Աղուանից իշխան»-ը Վիրոյ կաթողիկոսի միջնորդութեամբ): Գրականութեան մէջ հիմնաւոր փաստարկուած է (Եր. Տէր-Մինասեան եւն) այդ պաշտօնում Սմբատի չլինելը Հայ եւ Վրաց եկեղեցիների բաժանման պահին՝ 607-609 թթ., երբ նա «Վրկանի մարզպան» էր: Բայց 610-ական թթ. սկզբներին քաղաքական լրջագոյն փոփոխութիւններ էին տեղի ունեցել, եւ «Վրկանի մարզպանի» պաշտօնն էլ, հաւանաբար, ցմահ չէր: Նկատենք, որ Սեբէոսը եւ աւելի ուշ աղբիւրներ ուղղակի նշում ունեն Սմբատի որդու՝ Վարազտիրոց Բագրատունու կողմից Հայոց իշխանի պաշտօնն՝ իբրեւ «ամենից արժանաւոր» թեկնածու ստանձնելու մասին, իսկ այդ «արժանաւորութեան» մէջ հնարաւոր է ենթադրել հէնց ժառանգականութեան գործօնը: Ուշադրութեան առնենք նաեւ Յովհան Մամիկոնեանի հաղորդած աւանդապատումը «արժանաւոր» «Հայոց իշխան» Տիրանի մասին[3], որպիսի անուան տակ, մեր կարծիքով, ընկալելի է նոյն Վարազտիրոցը (հմմ. Տիրան – Տիրոց):

բ) Արդեօ՞ք «Պարսից ժողովի» համատեքստում միաբնակութեանը չէր վերադարձուել նաեւ Վրաց եկեղեցին՝ բնականաբար, ժամանակաւորապէս եւ, չի բացառւում՝ ստիպողական տարբերակով: Վերջինը հէնց այն տարբերակն է, որը բառացի մերժում էր կիրառել Սմբատ Բագրատունին 600-ական թթ. (Մովսէս Յուրտաւեցի եպիսկոպոսին ուղղուած վերջին նամակում սրտնեղելով՝ «հո չե՞մ կարող սրի քաշել այդ ամբողջ ժողովրդին»)[4], երբ, շեշտենք, բոլորովին այլ էր պարսկաբիւզանդական ուժերի յարաբերակցութիւնը: Չէ՞ որ, ինչպէս նկատել է դեռեւս Ս. Երեմեանը, «Աշխարհացոյց»-ում Վրաց աշխարհ-շահրի նշանաւոր սրբավայրերը, օր.՝ Մցխիթայի խաչը, նկարագրուած են լիովին դրական եղանակով, այն դէպ-

---

[1] Տե՛ս ստորեւ, էջ 233-235, 241:

[2] **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с. 81.

[3] **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարաւնոյ, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեան**, – ՄՀ, հտ. Դ-Ե, Անթիլիաս, 2005, էջ 1122-1124:

[4] **Սմբատ Բագրատունի**, Թուղթք [3], Հրատ. **Պ. Մուրադեան, Ա. Յակոբեան**, – ՄՀ, հտ. Դ-Ե, Անթիլիաս, 2005, էջ 340:

քում, երբ 609 թ. Աբրահամ Աղբաթանեցին, ի վերջոյ, նզովքի սպառնալիքով արգելեց իր հօտին ուխտի գնալ այդ վայրերը[1]:

«Աշխարհացոյց»-ի այդ՝ փաստօրէն, ուղիղ վկայութեանը կարելի է յաւելել հայ եւ վրաց մատենագրական երկերի (այդ թւում՝ վերը նշուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան») անուղղակի տուեալներն այն մասին, թէ ինչ անողոքութեամբ էր 626-627 թթ. Հերակլ կայսեր լեգիոնների ու նրա դաշնակից թիւրքիտների (վրացական երկում՝ խազարների) հրոսակների դէմ մարտնչում Տփղիսի ամրոցում շրջապատուած «Քարթլիի էրիսթաւ» Ստեփանոզ/Ստեփանէն[2] (հայկական երկում՝ «տեղացի Վրաց իշխանը»): Իսկ դեռեւս Անտիոքոս Ստրատեգոսի երկին նուիրուած իր մենագրութեան մէջ ակադ. Նիկ. Մառը ցոյց է տուել, որ Հերակլ կայսեր նկատմամբ դրական կամ բացասական (անգամ՝ իներտ) վերաբերմունքից կարելի է որոշել հայ եւ վրացի մատենագիրների ու նրանց հերոսների՝ երկաբնակ, թէ հակաքաղկեդոնական լինելը[3]: Տեղին նշենք, որ Վրաց այդ իշխանը 627 թ. մահապատժի ենթարկուեց (մորթազերծ արուեց) Իրանի դէմ ծանր պատերազմում, ի վերջոյ, յաղթանակած բիւզանդացիների կողմից (628-ի գարնանն իր մայրաքաղաքում սպանուեց նաեւ Խոսրով արքան), որից յետոյ, ամենայն հաւանականութեամբ, վիրքը վերադարձուեց քաղկեդոնական դաւանանքին: Ընդ սմին, 632 թ. Կարնոյ ժողովում Հերակլի պարտադրած միակամութեան/մոնոթելիզմի «փոխզիջումային» (բոլոր դէպքերում, իրօք՝ աւելի մեղմ) տարբերակով[4] երկաբնակութեանը զիջումների գնաց նաեւ Հայոց կաթողիկոս Եզր Արահեզացին:

Այս քննութեան արդիւնքները թոյլ չեն տալիս արդարացնել վերջին տարիներին Բաբկէն Յարութիւնեանի եւ Ալբերտ Մուշեղեանի ձեռնարկած ջանքերը՝ փաստարկելու Ե դ. երկրորդ կէսի պատմիչ Մովսէս Խորենացուն «Աշխարհացոյց»-ի հեղինակ անուանող ուշ ձեռագրական աւանդոյթի հաւաստիութիւնը[5]: Ճիշտ է, նշուած ուսումնասիրողների փորձերը վերաբերում են ոչ թէ մեզ հասած բնագրին (գոնէ Ջ դ. վերջին յարող ծաւալուն նիւթով՝ Յառաջաբանը, Մեծ Հայքն իր շրջակայ երկրներով, Պարսից աշխարհը եւն), այլ վերջինիս համար իբրեւ նախագաղափար ծառայած ինչ-որ օրինակի (Ե դարում «լուրջ խմբագրութեան» ենթ-

---

[1] **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 25-26: Այդ հիմքով էր երկի ստեղծումը թուագրում մինչեւ 608-609 թթ., որն, այսպիսով, լրիւ վերապահելի է:

[2] Տե՛ս **Джуаншер Джуаншериани**, Жизнь Вахтанга Горгасала, Пер., введение и примечания **Г. В. Цулая**, Тбилиси, 1986, с. 99-100; Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմութեան հին հայերէն թարգմանութիւնը, Վրացերէն բնագիրը եւ հին հայերէն թարգմանութիւնը ուսումնասիրութեամբ եւ բառգրքով լոյս ընծայեց **Ի. Աբուլաձէն**, Թբիլիսի, 1953, էջ 189-190:

[3] Տե՛ս **Антиох Стратиг**, Пленение Иерусалима персами в 614 г., Грузинский текст исследовал, перевел, издал ... **Н. Марр**, СПб., 1909, с. 60:

[4] Այդ փոխզիջումային տարբերակի մասին վերջերս մանրամասն տե՛ս **Ս. Ռ. Մելքոնյան, Ս. Ս. Մկրտչյան**, Ալեքսանդրիայի 633 թ. ժողովը՝ Արեւելաուոմեական կայսրության միարարական նոր քաղաքականության համատեքստում, – «Վէմ» համահայկական հանդէս, Թ (ԺԵ) տարի, 2017, թիւ 3 (59), էջ 156-173:

[5] **Բ. Յ. Յարութիւնեան**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 2001; **Ա. Վ. Մուշեղեան**, Մովսէս Խորենացու դարը, Եր., 2007:

արկուած)։ Սակայն այդ օրինակի բնութագրիչները (պարամետրերը) նրանք յստակօրէն չեն սահմանում[1]։ Ի դէպ, մեր նախնական տպաւորութեամբ՝ գուցէ, փոխարէնը հեռանկարային կը լինէր «Աշխարհացոյց»-ի հեղինակին փնտրելը «Պարսից ժողովի» այն երկու հայ մասնակիցների թւում (Մատթէոս Ամատունեաց եւ Կոմիտաս Ռշտունեաց եպիսկոպոսներ), որոնց յիշում է Սեբէոսը[2] (նման վարկածը ներկայումս գոնէ պիտի հերքուի յայտնի երկերի ու դաւանաբանական ժողովածոների բանասիրական քննութեամբ, որին անհրաժեշտ է ձեռնարկել)։

«Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան՝ շուրջ չորս տասնեակ գրչագրերում մեզ հասած բնագրի (արդէն՝ վերականգնելի հեղինակային սկզբնագրի մասին որոշակի հաւանականութեամբ պատկերացում տուող համեմատական տարբերակով) համադրական քննութիւնը ցոյց է տալիս, որ համառօտող խմբագիրն ուղղակի իր առջեւ նպատակ չի դրել լուրջ սրբագրման կամ ծրագրային գաղափարախօսական խնդիրներ լուծել։ Նա կատարուել է զուտ կրճատումներ եւ պարզեցումներ, որոնք, բնականաբար, երբեմն յանգեցրել են բովանդակութեան յայտնի խաթարումների, սակայն՝ ամենեւին ո՛չ նպատակամղուած (օր.՝ Իրանշահրի նկարագրութեան հատուածում, ուր համառօտը, իւրօրինակ ձեւով «խուսափելով կրկնութիւնից», չի պահել «Աշխարհ Պարսից» եզակի հատուածը, իսկ նրա չորս մասերի նիւթը լրիւ խմբագրել-բաժանել է յաջորդող՝ Մարքի, Ելիմացիքի, Պարսքի եւ Արիքի գլուխների մէջ, որ համապատասխանում էին պտղոմէոսեան աշխարհներին[3])։ Բացի այդ՝ նկատուած է, որ արաբների հզօրացումն արծարծուած չէ «Աշխարհացոյց»-ի ոչ միայն ամբողջական, այլեւ համառօտ բնագրում, ուստի պարզ է, որ վերջինս էլ է կազմուել 620 կամ 630-ական թթ.։

Ժամանակագրական այս սահմանը թոյլ է տալիս մտածել, որ համառօտութեան հեղինակը կարող էր լինել երիտասարդ եւ դեռ վարդապետական գիտելիքներ ձեռք չբերած Անանիա Շիրակացին (կոչուած նաեւ՝ Շիրակունի. ծնուել էր 610-ական թթ. սկզբներին), որին հետագայ ձեռագրական աւանդոյթը վերագրում է համառօտ «Աշխարհացոյց»-ի մի քանի միաւորների հեղինակումը։ Այս պահին եւս խուսափելով փաստարկումների հանգամանալից քննարկումից՝ հակիրճ նշենք, որ աղբիւրագէտի հայեացքով ամենեւին ընկալելի չէ Շիրակացուն բուն

---

[1] Բնականաբար, «Աշխարհացոյց»-ը մեծապէս արտացոլում է օգտագործուած գլխաւոր աղբիւրների՝ Պտղոմէոսի եւ Պապպոս Աղէքսանդրացու երկերի՝ Բ եւ Դ դարերին վերաբերող ճիւթը (որին Է դարի հեղինակն աւելացրել է այլ աղբիւրներից քաղած իր ոչ պակաս պատկառելի տեղեկանին)։ Եթէ ենթադրենք այդ երկերի արդէն թարգմանուած լինելը Ե-Զ դդ., ապա ասուածին պիտի յաւելենք նաեւ նշուած դարերի «վաղ» ճիւթը։ Սակայն վերջինս, ինչպէս եւ որեւէ այլ վաղ աղբիւրագիտական ճիւթ, չպէտք է մեզ շտապողական ժամանակագրական լուծումներ պարտադրի։

[2] Վերջինիս բնագիրն է. «Դիպեցաւ անդ արք երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք, զորս վասն բռնութեան աշխարհին էին արձակեալ, զի ծանուսցեն թագաւորին՝ Կումիտաս Մամիկոնէից եպիսկոպոս եւ Մատթէոս Ամատունեաց» (**Սեբէոս**, գլ. ԽԴ, էջ 124; Պատմութիւն **Սեբէոսի**, էջ 150)։

[3] Հմմ. **J. Marquart**, Ērānšahr nach der Geographie des Ps. Mosēs Xorenaçi..., 1901; The Geography of **Ananias of Širak** (Ašxarhac'oyc'). The Long and the Short Recensions, p. 226-241.

«Աշխարհացոյց»-ի հեղինակ համարող մասնագիտական վարկածի շարունակական արծարծումը[1]: Կրկնենք, որ, ինչպէս նկատել է Ս. Երեմեանը, այդ վարկածի բացառման համար լիովին բաւարար է 618 թ. հիմնադրուած կամ օծուած Ս. Հռիփսիմէի տաճարի փոխարէն սրբուհու մատուռի յիշատակման փաստը: Իսկ մեր նշած ժամանակագրական տարբերակով (630-ական թթ.) կարող է ընկալելի դառնալ և՛ հետագայ ձեռագիր ժողովածոներում Անանիա Շիրակացու երկերի հետ համատօտ «Աշխարհացոյց»-ի հարեւանութեան փաստը, և՛ նրա այդ երկերում առկայ տիեզերագիտական որոշ պատկերացումների շեղումը «Աշխարհացոյց»-ի հեղինակի պատկերացումներից (որը հանգամանալից ցոյց է տրուած Յ. Մանանդեանի եւ Աշ. Աբրահամեանի կողմից): Թւում է՝ թէ հասուն տարիքում վարդապետը լիովին կարող էր որեւէ կերպ անդրադարձած չլինել պատանի հասակում իր «տեխնիկական» գործերից մէկին (համատօտութեանը), բայց միաժամանակ՝ դա հազիւ թէ խանգարէր նրան յաջորդած «գիտուն» սաներին՝ այդ գործը եւս մեքենայաբար ներառելու իրենց ուսուցչի նորակազմ ժողովածոներում:

Բնականաբար, ի տարբերութիւն «Աշխարհացոյց»-ի նախորդ հրատարակիչների, նոր կէտադրմամբ եւ տողատմամբ 2013 թ. մեր կազմած գիտական բնագրի վերջում կարեւոր ենք դիտել զետեղել երկի երկու հատուածները՝ «Մղոնաչափք»-ը եւ հեղինակային ուշագրաւ՝ «Այս քեզ յինէն ընծայ... Ո՛ղջ լեր ի Տէր» ընծայագրութեամբ փակուող «Աստղաբաշխական երկրաչափութիւն» կամ «Աւդաչափութիւն» վերտառութեամբ աւարտական գլուխը: Համատօտ խմբագրութեան ձեռագրերից մի քանիսում առկայ այդ հատուածների՝ «Աշխարհացոյց»-ի մաս լինելը հիմնաւորապէս ապացուցել են դեռեւս Յ. Մանանդեանը եւ Աշ. Աբրահամեանը[2]:

Մեր բնագիրը կազմել ենք միակ գրչագրով յայտնի մատենագրական միաւորի նախօրինակի վերականգնման սկզբունքներով. երբ անհնար է յատուկ փաստարկել, որ առկայ աղբիւրներից շեղումները հէնց երկի հեղինակի վրիպման հետեւանքը չեն, իսկ համատօտ տարբերակի ընթերցումները հէնց խմբագրման արդիւնքը չեն, նախապատուութիւնը տրուած է միակ չխմբագրուած՝ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի հմր 1245 գրչագրի ընթերցումներին (նշանակուած՝ V տառանիշով): Սակայն դրանց հետ հնարաւորինս մեծ ծաւալով համեմատուել են համատօտ խմբագրութեան առաւել վաղ ընդօրինակութիւնների ընթերցումները[3]: Ընդ որում՝ կարեւոր պատճառներից մէկն այն է, որ V գրչագիրը ցաւալիօրէն առատ պակասներ ունի (երբեմն՝ ամբողջ պարբերութիւններ, այդ թւում՝ Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց նկարագրութիւններում), ո-

---

[1] Վերջին անգամ տե՛ս, օր.՝ **Ա. Մաթեւոսյան**, Անանիա Շիրակացու «Աշխարհագրութեան» հետ կապված մի քանի հարցեր, – ԼՀԳ, 1979, հմր 9, էջ 78-86 եւ նախորդ ծանոթագրութիւնում նշուած՝ Ր. Հիւսընի հիմնարար անգլերէն թարգմանութեան մէջ:

[2] Տե՛ս **Հ. Մանանդյան**, Խորենացու առեղծվածի լուծումը, էջ 84-89; **Ա. Աբրահամյան**, Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, էջ 91-101:

[3] Ամենավաղն, ի դէպ, «Աշխարհացոյց»-ի վերջին հատուածը պահպանած հայերէն հնագոյն թղթեայ ձեռագիրն է (ՄՄ Ձեռ. 2679, հմմ. Մատենաի գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի, հտ. Ա-Բ):

բոնցից իւրաքանչիւրի համար մատնանշել ենք («տե՛ս եւ ... եւ», «հմմ. Գ → Դ» ձեւերով) գրչական հնարաւոր վրիպման հաւանականութիւնը[1]: Բնագրի տողատակում ներկայացրել ենք տարբեր ընթերցումների վրայ չենուած բոլոր միւս մօտեցումները եւ նշել հարցականները՝ թոյլ տալով շահագրգիռ ընթերցողին՝ ինքնուրոյն եզրակացութիւնների յանգելու: Ընդ սմին, «Աշխարհացոյց»-ի հետազօտութեան երախտաւորներ Արսէն Սուքրեանի, Քերովբէ Պատկանեանի, Յոզէֆ Մարկուարտի, Յակոբ Մանանդեանի, Աշ. Աբրահամեանի, Ս. Երեմեանի, Բ. Յարութիւնեանի, Ռ. Հիւսընի բնագրագիտական-բանասիրական եւ պատմաաշխարհագրական դիտարկումները, որ մեծապէս նպաստել են մեր կատարած աշխատանքին, շարունակելու են քննարկելի մնալ հայագէտների նոր սերունդների համար:

Յաւարտս, դնում ենք «Աշխարհացոյց»-ի՝ մեր կազմած բնագրում «Աշխարհ Պարսից»-ի Քուստ-ի կապկոհ սպահպետութեան, Բուն Աղուանք երկրի ու Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք աշխարհների նկարագրութիւնները՝ ձեռագրական տարբ ընթերցումների մի մասով ու կարեւոր ծանօթագրութիւններով[2]:

«Քուստ-ի Կապկոհ *[V Կապկոյ]*, որ՝ Կողմն Կաւկասու լերանց, յորում են աշխարհ[ի] ինգետասան[3]. Ատրապատական, Արմն՝ Հայք, Վարջան, որ է Վիրք, Ռան, որ է Աղուանք, Բալասական, Սիսական, ՈՒէ, Գեղան, [Մոկան], Շանճան, Դլմունք, Դմբաւանդ *[V Բմբօանդ]*, Տապը[ր]ստան, Ռ[ո]ւան, Ամլ, զոր պատմել առաջի կա[յ] մեզ: ...

Աշխարհ՝ Աղբանիա *[V Ախբանիա]*, այսինքն՝ Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիո[յ] առ Կաւկասով, [մինչեւ ցԿասբից *[ABE ի Կասբից]* ծովն եւ] մինչեւ ցՀայոց սահմանն *[VS սահմանաւ]* առ Կուր գետով, թէպէտ եւ աստի [ց]Կուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց: Բայց մեք ասացուք զբուն աշխարհն Աղուանից, որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրա[յ] եւ Կովկաս լերինն: [Եւ ունի Աղուանք *[Pv չիք Աղուանք]* դաշտս արգաւանդս եւ գետս բազումս եւ եղեգունս հզաւրս, եւ խաղաղս եւ բերդս եւ գե[ւ]ղաքաղաքս:

Եւ գաւառք են այսոքիկ.] նախ, առ Վրաւք եխնի գաւառ առ Աղուան գետովն, եւ Քամբէճան առ Կուրաւ. եւ ըստ հարաւո[յ] նորա՝ բերդն Վարազմանաւառ, հանդերձ Կուդրաթ գե[ւ]ղաքաղաքաւ, եւ վայրն անապատ՝ մինչեւ ցԿուր գետ: Յորոյ յելից կող-

---

[1] Հմմ. **Ն. Բիւզանդացի**, Քննութիւն Հայոց հնագրութեան, Հրատ. պատրաստեց՝ **Մ. Մինասեան**, Բեռն, 1986:

[2] **Անանուն (Է դար)**, «Աշխարհացոյց», սն. 121-124, 139-141, 165-166: Օգտագործուած են հետեւեալ փակագծերը եւ նշանները. [...] – վերականգնում *V* ձեռագրի ընդօրինակողի վրիպած եւ լոկ համաոտի պահպանած հատուածներից; [յ] – վերականգնում *V*-ի գրչի վրիպած-բաց թողած տառերի; *[...]* – մեր ծանօթագրումները; ⱼ[ա]Ա... – *V*-ի գրչի վրիպած աւելորդ տառեր: Բաղդատուած բնագրերի եւ համաոտի ձեռագրերի համար օգտագործուած միւս տառանիշերն են. *B* – ՄՄ, ձ^{մր} 2679; *D* – ՄՄ, ձ^{մր} 1267; *E* – ՄՄ, ձ^{մր} 582; *A* – Աշ. Աբրահամեանի տպագրած բնագիր; *P* – Ք. Պատկանեանի տպագրած բնագիր; *S* – Ա. Սուքրեանի տպագիր; *ν* – Վենետիկի 1848 թ. տպագիր; *ν*$^{1-4}$ – Վենետիկի ձեռագրեր, որ օգտագործել են 1848 թ. տպագրում (թուերով՝ տուեալ ընթերցմամբ գրչագրերի քանակն է):

[3] *VS* աշխարհ ԺԳ *փխ* աշխարհ[ք] հնգետասան (վերականգնում՝ ըստ աշխարհ-շահերի իրական թուի. յոգնակին՝ ըստ նախորդների):

մանէ՝ Գլուգաւ բաղաբ առ Աղուան գետով, եւ [Հողմաղ գաւառ, եւ][1] Բիխ գաւառ առ Կաւկասաւ, եւ յելի[ց] ն[որ]ա՝ Շաբէ, եւ Գէգաւու *[V Դէգառու]* գետ, առ որով՝ հոմանուն գաւառ առ Սանի գետով. այս ամենայն հոսին ի Կովկասա[յ], եւ խառնեալ յԱղուան *[V ի յԱղուան]* գետ՝ անկանին *[V անգանին]* ի Կուր գետ: Իսկ ի յելից կուսէ՝ Քավաղակ բաղաբ Աղ[ու]անից՝ մերձ ի Կաւկաս, ընդ որո[յ] մէջն գետն Սէբոջ դէպ ի հարաւ *[V հարաւ]օ[2]* [3][... Հաբանդ, Ոստան-ի Մարծպանան, Քաղայ, *[Հէջար]*[4], Դաշտ-ի Բաղասականն[5]:

Եւ՝ այլ գաւառք, զոր *[DPv գաւառս, զորս]* ի Հայոց հանեալ է. Շակաշէն *[DPv Շիկաշէն]*, Գարդման, Քուստ-ի Փառնէս *[DPv չիք Քուստ-ի Փառնէս]*, Կողթ, Աղուէ *[DPv Ջաւէ]*, Տուչքատակ *[ABE* աստ *Թուչքատակ]*, Ուտ Ռոստակ *[ABE* աստ *Ռտռոստակ]*, Ռոտ Պա[յ]եակ, Մեծ Կուանք, Մեծ Իրանք, Պիանք, Հարճլանք, Պած[կ]անք, Մո[ւ]խանք, Վակունիք, Բերձոր, Փոքր Հաբանդ, Սիսական-ի Կոտակ, *[Տռի] [ABE* աստ *Սիսական, Ռոտաստակ]*, Արանոոտ *[AE* աստ *Աառոտ]*[6] մինչեւ ցխառնումն *[ABE ի խառնումն]* Երասխայ ի Կուր գետ ...]: ...

---

[1] Համաոստում Աղուանքի գաւառաթուարկման խմբագրուած սկիզբն է՝ «Եխնի, Բեխ, Քամբեճան [*D չիք* Քամբեճան], Հողմաղ [*DPv չիք* Հողմաղ], Շաքէ, Գեգաւու [*DPv չիք* Գեգաւու]». սրան նման է Ղեւոնդի թուարկած գաւառացանկի վերջը. «զԳեղաւու, զՇաքէ, զԲիխ, զԽենի, զԿամբեխճան, զԽոզմազ»:

[2] Վերականգնելի է առանց *օ*-ի. գուցէ՝ այս *օ*-ն կապ ունի կորած շարունակութեան հե՞տ:

[3] Յաջորդող 2-3 պարբերութիւնները չկան «Աշխարհացոյց»-ի չխմբագրուած միակ գրչագրում (*V*): Ինչպէս երեւում է բնագրի համեմատութիւնից համաոստ խմբագրութեան ձեռագրերում պահպանուածի հետ, այդ պարբերութիւններից առաջինն անփոյթ գրչի վրիպման արդիւնքում կորսուել է Բուն Աղուանքի նկարագրութեան վերջում, իսկ միւսները՝ Մեծ Հայքի նկարագրութեան սկզբում: Դրա հետեւանքով նախագաղափար օրինակի «ընդ որոյ մէջ՝ գետն Սէբոջ *դէպ ի հարաւոյ* {...}» հատուածին (որից յետոյ, թերեւս, պիտի շարունակուէր՝ «բաժանէ» եւն) յաջորդում են «ըստ Փոքր Հայոց: *Ունին Մեծ Հայք*» բառերը: Համաոստի՝ Մեծ Հայքի նկարագրութեան երկրորդ պարբերութիւնն սկսւում է «Եւ *ունին Մեծ Հայք*» բառերով, իսկ նախորդող նախադասութեան աւարտն է՝ «մինչեւ ցնոյն դարձուածք Եփրատայ *ի հարաւ կոյս* [*var.* հարաւակոյս]»: Պարզ է, որ Վենետիկի ԻՄՐ 1245 գրչագրի նախագաղափար օրինակի (ըստ այդմ՝ «Աշխարհացոյց»-ի բնօրինակի) այս հատուածում եղել է՝ «...դարձուածք Եփրատայ դէպ ի *հարաւոյ* [*փխմ. համաոստի* հարաւ կոյս], *ըստ Փոքր Հայոց*» նախադասութեան աւարտը, եւ «դէպ ի հարաւոյ» բառախմբի (թերեւս, տողավերջում յայտնուած) նոյնութիւնը Բուն Աղուանքի՝ վերը բերուած նկարագրութեան մէջ առկայ հատուածի հետ (էլի տողավերջում յայտնուած) պատճառ է դարձել մեր խիստ անուշադիր գրչի վրիպման համար:

[4] Համաոստի առկայ ձեռագրերը (*ABDEPv*) չեն պահպանել *Հէջար* գաւառանունը, որը վերականգնւում է ըստ Ղեւոնդ պատմիչի ցանկի (գլ. ԼԱ, էջ 132): Մովսէս Դասխուրանցու մօտ կան *Հեջերոյ* եւ *Հեճերու* անուանաձեւերը:

[5] *V*-ի այս ցաւալի թերիի տեղում Աղուանքի վերջին գաւառների մասին համաոստի բնագիրը, ցաւօք, կտրուկ խմբագրուած-համաոստուած է՝ թողնելով լոկ մի քանի գաւառանուան ցանկ *(ABE* Ոստան, Հաբանդ, Իմարծ, Պանան, Քաղաց դաշտ, Իբազկան; *DPv* Ոստան-ի Մարծպան, Դաշտ-ի Բալասական*)*. ուստի մեր վերականգնումը զուտ բովանդակային է եւ պայմանական. գաւառանունները համեմատելի են Աղուանքի գաւառների՝ Ղեւոնդի նոյնանման ցանկի սկզբնամասի ու աւարտի հետ («զՀէջար, զՔաղա[յ], զՀաբանդ, զՈստան-ի Մարզպանեան, ... զցանկալի դաշտն Բաղասական»):

[6] Համաոստի ձեռագրերի *DPv* ենթախումբն ունի «եւ այլ քսան գաւառ» *փխմ. ABE-ի* «Տուչքատակ, Ուտ Ռոստակ ... Արանոոտ» (4 տող):

Ժ.՝ Արցախ. յերի կալով Սիւնեաց՝ ունի գաւառս երկոտասան. զՄիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՄեծիրանս, [զ]Մեծկուանս[1], զՀարեղայլ[ս] [*ABE Հարջլանք, DPv Հարճլանք*], զՄուխանս, զՊիանս, զՊածկանս, զՍիսական-ի[յսլ յգլ]Կոտակ [*AE Սիսականք, Քուակք, DPv Սիսական ոստաննն*], զՔուստ-ի Փառնէս [*VS զՔուստիփառէնս*][2], զԿողթ [*VS զԿոխտ*], յորում լինի հարախունկ [*VS քարախունգ*]: Զայս ամենայն Աղուանիք ունին՝ հանեալ ի Հա[յ]ոց:

[ԺԱ. Փայտակարան...

[3]ԺԲ. Ուտի է [*DPv առ փխ էյ*]. մտից կայ երասխայ, ընդ [*ABE ի փխ ընդ*] մէջ Արցախայ եւ Կուր գետոյ: Ունի [*AB եւ ունի*] գաւառս, զոր Աղուանիք ունին՝ յե[ո]ւթն[4]. Արանոտ [*ABE Արանոռվտ*], Տոի [*v² Տսոի*], Ռոտ Պայեակ [*ABE աստ Ռոտպտակ, DPv Ռոտ Պացեան, v² Ռովտապայակ*], Աղուէ [*AE Աղաւե, v² Աղասէր*], Տուչֆատակ [*ABE Թուչկատակ, v² Ուշանատակ*], Գարդման, Շակաշէն [*DPv Շիկաշէն*], Ուտի Առանձնակ՝ յորում Պարտաւ բաղաք: Լինի ի [*ABE Եւ լինի*] նմա ձիթենի, վարընկենի [*ABE վարանդենի, v² վարդենի*] եւ յասմիկ, եւ [*DPv չիք յասմիկ, եւ*] ի [*ABE չիք ի*] հաւուց՝ կատակ: [*Զայս ամենայն Աղուանիք ունին՝ հանեալ ի Հայոց*][5]]»:

դ) ՄԱՇՏՈՑ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»-Ը

Մաշտոց Եղիվարդեցին, ով Գէորգ Գառնեցուց յետոյ Հայոց կաթողիկոս էր դարձել 897 թ. Յունիսին (մօտ 60-ամեայ տարիքում) եւ պաշտօնավարել 7 ամիս (մինչեւ 898 թ. սկզբները)[6]*, նշանաւոր կազմողն է այսպէս կոչուած «Մաշտոց ծիսարան»-ի, որն արդէն 1100-ից աւելի տարիներ օգտագործում են Հայ առաքելա-*

---

[1] *DPv*-ում հերթականութիւնը հակառակն է. «Բերդաձոր, Մեծկուանք, Մեծիրանք»:

[2] Համաոօտին շատ նման ունի նաեւ Մովսէս Դասխուրանցին, ճիշտ է՝ սեռականով՝ «Քառստ-ի Փառնայ» (Գ.իբ /իգ/, էջ 341, տողատակ 3):

[3] Ամբողջական «Աշխարհացոյց»-ի (չհամաոօտուած կամ «ընդարձակ խմբագրութեան») միակ ձեռագրի *(V)* գրչի վրիպման պատճառով Ուտիք աշխարհի նկարագրութեանը նուիրուած այս ամբողջ պարբերութիւնը բացակայում է, նոյն կերպ նաեւ նախորդը՝ Փայտակարան աշխարհի նկարագրութեամբ. դրանց վերականգնումն ըստ համաոօտի կատարել է դեռեւս Ա. Սուքրեանը՝ ծանօթագրելով. «Պակասին յՕրինակիս Փայտակարան ու Ուտի աշխարհք, զորս մուծաք ըստ այլ օրինակաց եւ վաղ տպագրելոց»:

[4] Համաոօտի բոլոր ձեռագրերը (*ABDEPv*) ունեն «եւթն» *փխ* «ութն»: Ա. Սուքրեանը տողատակում ծանօթագրել է՝ «Ամենայն օրինակք եւթն ասեն եւ թուեն ութ. գուցէ *զՈւտի առանձնակ* ոչ ի կարգէ առաջնոցն համարեալ», եւ նրա վերջին ենթադրութիւնը լայն տարածում է գտել գրականութեան մէջ (Ս. Երեմեան, Բ. Ցարութիւնեան եւն): Բայց աւելի հաւանական է թւում ենթադրել պարզ գրչական վրիպում համաոօտի մայր օրինակում կամ նրանից կատարուած մի վաղ ընդօրինակութեան մէջ (տե՛ս *եւթն → ութն*):

[5] Համաոօտի բոլոր ձեռագրերում բացակայող այս վերջին նախադասութիւնը («Զայս ամենայն ... ի Հայոց») տուել ենք քառակուսի փակագծերում իբրեւ պայմանական վերականգնում (ըստ Արցախի գլխաւորտի արտայայտութեան)՝ համարելով, որ հէնց այսպիսի աւարտն է պատճառ դարձել *V*-ի անփոյթ գրչի համար՝ վրիպելու ամբողջ երկու գլուխ (տե՛ս *ունին՝ հանեալ ի Հայոց ... ունին՝ հանեալ ի Հայոց*). հմմ. **Ա. Ցակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 219:

[6] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, սն. 1181-1184, § 696-697:

կան եկեղեցու սպասաւորները[1]: Ըստ իր աշակերտ Ստեփաննոս կրօնաւորի կողմից դեռ 894 թուականին (Մարտի 28-ին) շարադրուած մի իւրօրինակ վարք-յիշատակարանի («Ստեփաննոսի՝ վերնադիր ինքնագրութեան վասն վարուց երանելոյն Մաշտոցի»)[2] եւ նրա հաղորդածը որոշ չափով լրացնող Ստեփաննոս Օրբէլեանի՝ Մաշտոցը ծնուել է 833 թուին Սիւնիքի Սոթք գաւառում՝ այստեղ «պանդխտութեամբ» ապաստանած Եղիվարդեցի (Արագածոտնի) Գրիգոր երէցի ընտանիքում: Ուսանելու է ուղուել Մաքենոցաց վանքում, ուր Թէոդորոս կրօնաւորի եւ Ստեփաննոս վարդապետի մօտ կրթութիւնն աւարտելուց յետոյ քահանայ է ձեռնադրուել Սիւնեաց Դաւիթ եպիսկոպոսի կողմից, ապա տեղափոխուել Արտաւազի անապատ (Ապարանքում), բայց շուտով հաստատուել է Սեւանայ (Գեղամայ) կղզու վանական միաբանութիւնում: Հէնց որպէս Սեւանի վանահայր՝ իր սրբակրօն վարքի եւ Սեւանայ կղզում ու շրջակայքում ծաւալած եկեղեցաշինական եռանդուն գործունէութեան շնորհիւ շատ արագ նշանաւոր դարձաւ ողջ երկրում եւ իր մասնակցութիւնը բերեց Հայաստանի Թ դ. երկրորդ կէսի բազմաբնոյթ պատմական իրադարձութիւններին (Շիրակաւանի եկեղեցական ժողովին եւն)[3]:

---

[1] Վերջին հրատարակութիւնները տե՛ս ՄՀ, հտ. Թ, Թ դար, Անթիլիաս, 2008, էջ 574-693 (աշխատասիրող՝ **Յակոբ Ռէոսէեան**); Մայր Մաշտոց, հտ. Ա, գիրք Ա, Ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական եւ կանոնացանկային յաւելուածովք, Աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2012:

[2] Տե՛ս **Գարեգին Ա կթղ. [Յովսէփեան]**, Ցիշատակարանք ձեռագրաց (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, սն. 89; Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., Աշխատասիրությամբ՝ **Ա. Ս. Մաթեւոսյանի**, Եր., 1988, էջ 40-41; ՄՀ, հտ. Թ, էջ 695-701 (աշխատասիրող՝ **Յ. Ռեօսէեան**); Մայր Մաշտոց, հտ. Ա, գիրք Ա, ...Աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, էջ 709-737: Ստեփաննոսը նշում է իր ուսուցչի գործի («Մաշտոց»-ի) ընդօրինակումն աւարտելու օրը եւ ժամը. «...յորում ամի Հոռոմ թուականութեան Ո եւ Խ եւ Զ էր [=893/894] եւ Հայոց նոր տոմարիս ՅԽԲ [342=17.04.893-16.04.894], կատարեցի զնուաստ գրչութիւնս զայս, յառաջ քան զհինգ կաղանդին Ապրիլի, որ աւր ԺԶ [16] էր Հրոտի ամսոյ, ի մեծի Հինգշաբթին, ի վեցերորդ ժամու, ի թագաւորութեան Հայոց Սմբատայ, որդոյ Աշաւտոյ Բագրատունւոյ, ի տոհմէ կաթողիկոսութեան տեառն Գէորգեայ Գառնեցոյ, յորում ամի կործանեցաւ Դ[վ]ին քաղաք ի շարժմանէ, եւ բազումք մեռան, եւ եկեղեցիք տապալեցան»: Հայոց 342 թուականի Հրոտից ամսի 16-ը, այսինքն՝ 894 թ. Մարտի 28-ն իրօք Հինգշաբթի էր (հաշուարկն՝ ըստ **Բ. Թումանյան**, Տոմարական հաշվումներ, – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1964, հ[մր] 5, էջ 55-60):

[3] Տե՛ս **Օրբ.**, գլ. ԼԶ, էջ 126-127, գլ. ԽԵ, էջ 177-178 (Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԼԷ, էջ 173-174, գլ. ԽԶ, էջ 243-244); **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 (յետայսու՝ **Դրասխ.**), էջ 147-157, 163-166, 182-183; **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, – ՄՀ, հտ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս, 2010, էջ 448-454, 458-460, 470; **Yovhannēs Drasxanakertc'i**, Histoire d'Arménie, Introduction, traduction et notes par **P. Boisson-Chenorhokian**, Lovanii, 2004, p. 208-211, 222-225; **[Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ]** Ծարից հայրապետացն Հայոց յայտարարութիւնք, Գիտական բնագիրը՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, – ՄՀ, հտ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս, 2010, էջ 608; **Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն Տիեզերական, Աշխատութեամբ՝ **Ստ. Մալխասեանց**, Ս. Պետերբուրգ, 1885 (յետայսու՝ **Ասողիկ**), Գ.գ, էջ 160; **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ՝ **Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի**, Եր., 1961 (յետայսու՝ **Կիրակոս**), էջ 81: Կենսագրութիւնն առաւել մանրամա-

Բացի ծիսարանից՝ Մաշտոցը հեղինակել է նաեւ այլ երկեր, այդ թւում՝ մի պատմական գործ, որի մասին յիշատակում է Ստեփաննոս Օրբէլեանը: ՄՀ հաւաքածոյի Թ դարի հատորում ի մի են բերուել նրա հետեւեալ գործերը. «Սուրբ հաւրն Մաշտոցի՝ խրատք ոգեշահք»[1], «Թուղթ առ Աբաս սպարապետ», «Թուղթ մխիթարութեան առ Դրւնեցիս»[2], «Թուխտ երանելոյն Մաշտոցի, նախ քան զկաթուղիկոսութիւն, առ տէր Գէորգ Հայոց կաթուղիկոս՝ վասն Սիւնեաց խաչին, թէ էր աղագաւ տուաւ»[3]: Օրբէլեանը երկու ուղղակի նշում ունի Մաշտոցի վերջին Թղթի եւ մէկը՝ Պատմութեան մասին: Նրա կարծիքով՝ Գէորգ Գառնեցու խնդրանքով շարադրուած Թուղթը կարեւոր նշանակութիւն ունի Սիւնիքի արքեպիսկոպոսութեան կարգավիճակի խնդիրը փաստարկելիս: Պատմիչի առաջին բնագրերն են. «որպէս հաւաստի ուսաք ի սրբոյն Ուխտանիսէ՝ Սեբաստացւոց եպիսկոպոսէ, եւ ի սրբոյն Սաղոմոնի՝ Մաքենոցաց առաջնորդի Թղթոյն, որ կարգեալ է յԱղուանից պատմութեանն ի միջին հատորն[4], եւ ի սրբոյն Մաշտոցի Թղթոյն, զոր գրեալ է ի տեառն Գէորգայ կաթողիկոսի խնդրոյն»; «զայս փոքր ի շատէ համառօտիւք ցուցի քեզ զբաւականն միայն. եւ թէ զլիովն եւ զերկայնն կամիս լսել՝ ընթերցի՛ր զՈւխտանէսն եւ զԱղուանից Պատմութիւնն եւ ի Գիրս Թղթոցն տեղեկացի՛ր, եւս եւ՝ զտեառն Մաշտոցին, որ ի խնդրոյ Գէորգայ Հայոց կաթողիկոսի գրեալ է»[5]:

«Դադոյի վանքի խորաձորի»՝ Սիւնեաց իշխանների տիրոյթ կամ առնուազն՝ յատակնութեան առարկայ լինելու հանգամանքը քննելիս մենք առիթ ունեցանք՝

սն տե՛ս **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, սն. 1151-1154, § 677-678, սն. 1166-1167, § 687, սն. 1171, § 690, սն. 1181-1184, § 696-697; ՄՀ, հտ. Թ, էջ 555-559:

[1] ՄՀ, հտ. Թ, էջ 560-564: Աղբիւրն է ՄՄ Ձեռ. 601-ը (թ. 195բ-201ա):

[2] ՄՀ, հտ. Թ, էջ 565-568 եւ 569-570: Երկուսն էլ Դրասխանակերտցու բնագրում են:

[3] ՄՀ, հտ. Թ, էջ 571-573: Նախապէս հրատարակուել է այսպէս կոչուած «Էջմիածնական Գիրք թղթոց»-ի զոյգ գրչագրերից (այժմ՝ ՄՄ Ձեռ. 2966, թ. 194բ-196ա եւ ՄՄ Ձեռ. 3062, թ. 111ա-112բ) Յովհ. Գիւլխանդանեանի կողմից (Մայր Աթոռի «Գիրք թղթոց» ձեռագիրների մէջ ամբողջութեամբ անտիպ մնացած թղթեր, – «Արարատ», 1902, էջ 748-753):

[4] Տեղին նշենք, որ պատմիչի լոկ մի թիւր ընկալումից ծնուած այս վերջին միտքը, ցաւօք, թափանցել է նոր գրականութիւն (տե՛ս, օր.՝ **M. van Esbroeck**, Salomon de Mak'enoc', vardapet du VIII siècle, – "Armeniaca", Venice, 1969, p. 33-44). *ՄՀ*-ի Ը դ. հատորում (Զ, Անթիլիաս, 2007, էջ 21-26) Յ. Քեօսէեանն անգամ, բացի «Մեծի գիտնականի տեառն հայր Սողոմոնի Մաքենացոց առաջնորդի՝ Ընդդէմ Քաղկեդոնի» երկից, արտատպել է *ՊԱ*-ի Բ գրքի ԽԸ գլուխը եւս, այնինչ վաղուց նկատուած է, որ Դասխուրանցու այդ գլխի աղբիւրը ոչ թէ Սողոմոն Մաքենացին է (գլխում հէնց բառացի խօսւում է նրա մի արարքի մասին), այլ Մաշտոց Եղիվարդեցու՝ վերը նշուած «Առ տէր Գէորգ...» Թուղթը (տե՛ս **Հ. Ն. Ակինեան**, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1908, էջ 248-249; **Мовсэс Каланкатуаци**, История страны Алуанк, Пер. с древнеарм., предисловие и комментарий **Ш. В. Смбатяна**, Ер., 1984, с. 9; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 204-205). Ի դէպ, Եղիվարդեցու նշած Սողոմոնն էլ ոչ թէ նշանաւոր Տօնականի հեղինակն է, այլ նրա նոյնանուն սանը, ով «պայծառանայր» Ը դ. վերջերին. հմմ. Մաշտոցի Պատմութեան այն կտորը, որը քաղել է Օրբէլեանը. «Բայց կրաւնաւորքն նախիմաց եղեալ եւ յերկուս բաժանեալ՝ կէսքն գնացին ընդ հայրն Սաղոմոնի, *ո՛չ առաջնոյն*, որ Հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին *աշակերտին*, ի գաւառն Շիրակայ, ի սուրբ ուխտն Զրեսկ, յորում պայծառանայր սոյն այս Սաղոմոն՝ ճգնութեամբ սիւնամուտ լեալ» (**Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 34):

[5] **Օրբ.**, գլ. ԻԴ, էջ 72, ԻԵ, էջ 77; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԻԵ-ԻԶ, էջ 99-100, 106:

անդրադառնալու Մովսէս Դասխուրանցու ՊԱ-ում եւ Ստեփաննոս Օրբէլեանի մօտ յիշատակուած՝ Թ դ. 20-ական թթ. յայտնի ողբերգական դիպուածին՝ Վարազ Տրդատ Բ Աղուանից իշխանի ու նրա մանկահասակ որդու սպանութեանը վերաբերող վկայութիւններին՝ այդ առիթով մանրակրկիտ համադրելով երկու պատմիչների բնագրերը: Նրանցից առաջինը բուն բնագրում նշուած դիպուածը նկարագրում է հետեւեալ կերպ. «Ել ի նոյն ամի տէր Ներսեհ ի Փիլիպեան [a Փղիպեան] սպան զՎարազ Տրդատ ի Ստեփաննոսեան, եւ զորդի նորին ի գոգ մաւրն զենին եւ զամենայն ստացուածս նորա յափշտակեցին: Այս Վարազ Տրդատ ի Միրհական տոհմէն էր, որք զԱղուանս ժառանգեցին՝ որդի ի հաւրէ առնլով»[1]: Իսկ երկի նախավերջին գլխում, որտեղ Դասխուրանցին ամփոփում է Աղուանից իշխանների մասին իր տեղեկութիւններն ու գնահատականները, ասւում է մի փոքր այլ կերպ. «Զայս Վարազ Տրդատ եւ որդի իւր Ստեփաննոս Ներսեհ [bclrv Ներսէ] ի Փիլիպեան՝ ազգակիցն իւր, սպան ի միում ժամու ի խորաձորն, որ կոչի Դադոյի վանք»[2]: Ստեփաննոս Օրբէլեանը նոյն դիպուածի մասին գրում է գրեթէ նոյն բառերով, բայց նաեւ մատուցում է մի քանի էական տարբերութիւններ. «Ի սոյն ամի եւ տէր Ներսեհ Սիւնի՝ որդի Փիլիպպէի, սպանանէ վասն ոխութեան ինչ զՎարազ Տրդատ՝ որդի Ստեփաննոսի Աղուանից իշխանի, եւ զորդին եւս նորա ի գոգ մաւրն սատակէ եւ զամենայն ինչս նորա յաւարի առնու: Այս Վարազ Տրդատ ի Միրհական տոհմէն էր, որ ունէր զսեպհական տէրութիւնն Աղուանից»[3]:

Թէպէտ նկարագրուած հաշուեյարդարն իրականացնողի՝ Սիւնի իշխան լինելն արձանագրուած է միայն Օրբէլեանի մօտ, բայց բովանդակային պարզ քննութիւնից երեւում է, որ այդ մանրամասնը, ամենայն հաւանականութեամբ, չի յօրինուել նրա կողմից, քանի որ դժուար է դրա համար որեւէ պատճառ նշմարել: Թերեւս, դա պարզապէս եղել է ենթադրելի սկզբնաղբիւրում, իսկ Մովսէս Դասխուրանցին այն բաց է թողել զուտ անկարեւորութեան եւ աւելորդ մանրամասն ներառելուց խուսափելու մտքով. նոյն մտքով Սիւնեաց պատմիչն էլ բաց է թողել հակամարտող իշխանների՝ ինչ-որ կերպ ազգակից լինելու մասին մանրամասնը: Ահա այս բնագրերի համադրութեան շնորհիւ ի յայտ եկող մեծ նմանութիւնը թոյլ է տալիս մեզ ենթադրել Օրբէլեանի եւ Դասխուրանցու կողմից միեւնոյն աղբիւրը, այն է՝ Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի՝ մեզ չհասած պատմական երկն օգտագործած լինելու հաւանականութիւնը, որին քիչ անց յղում է Սիւնեաց պատմիչը:

Մանրամասնենք, որ Ստեփաննոս Օրբէլեանն իր ամբողջ ԼԲ (ԼԳ) գլխում («Վասն գալոյ Մրվանայ տաճիկ զօրավարին ի Սիւնիս. եւ փեսայանալոյ Բաբանայ պարսկի Սիւնեաց տեառն Վասակայ. եւ այրելոյ զՄաքենոցն, եւ կոտորելոյ զԳեղարքունի եւ զԲաղասականն») ներկայացնում է Թ դ. առաջին կէսի Սիւնիքին վերաբերող տեղեկութիւններ՝ սխալ հաշուարկի արդիւնքում սկսելով դա Հայոց 176 թուականից (որը գուցէ եւ հետագայ գրչական վրիպակ է՝ փխն. 276-ի =

[1] Դասխ., Գ.ժթ /ի/, էջ 326:
[2] Դասխ., Գ.իբ /իգ/, էջ 340:
[3] Օրբ., գլ. ԼԲ, էջ 115; Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 158-159:

827/828 թ.)։ Դրանց մի մասը գրեթէ բառացի համընկնում է ՊԱ-ի Դ գրքի՝ յատակ ժամանակագրութեամբ հաղորդումների հետ։ Ժամանակին նկատելով պատմիչի մօտ Սիւնիքին վերաբերող վկայութիւնների անսպասելի առատութիւնը՝ մենք փորձել էինք ինչ-որ մեկնաբանութիւններ տալ դրան[1]։ Սակայն այժմ հնարաւոր է բաւարար համարել դրանցից միայն մէկը. Դասխուրանցին Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկում առատ նիւթ գտնելով իր խնդրոյ առարկայ «Աղուանից երկրի» մասին՝ մեծ ծաւալով քաղել էր դրանք եւ դրանց արանքում ուղղակի ընդօրինակել նաեւ զուտ Սիւնիքին վերաբերող որոշ նիւթեր։

Թւում է, թէ Մաշտոց կաթողիկոսի՝ նշուած ժամանակագրական հաղորդումների աղբիւրը լինելու իրողութիւնը նախկինում չէր նկատուել պարզապէս այն պատճառով, որ այդ մասին ուղիղ վկայութիւնն Օրբէլեանի շարադրանքի բովում յայտնուել է յաջորդ գլխի (գլխագիրը՝ «Վասն Թանահատի վանիցն եւ հօրն Մխիթարայ») միջնամասում, այն էլ՝ Թանահատի վանքի մասին արուած մի պատմութիւնից յետոյ։ Վերջինն առնուած չէ Մովսէս Դասխուրանցու կողմից, բայց բնագրագիտական ուշադիր ընթերցումից երեւում է, որ ոչինչ չի խանգարում՝ դրա գոնէ մեծ մասը եւս համարելու Մաշտոց Եղիվարդեցու կորսուած պատմական երկին յանգող։ Թանահատին նուիրուած այդ պատմութիւնից յետոյ Սիւնեաց պատմիչը բառացի գրում է. «Եւ զայս ծանոյց մեզ Պատմութիւնն երանելոյն Մաշտոցի, որ ի Սեւան»[2]։ Իսկ դրան անմիջապէս յաջորդում է մի նոր յղում. «Բայց գտաք յիւրոց արձանագրութեանցն, եթէ 400 ամօք յառաջ քան զՀայ թուականն շինեցաւ եկեղեցին յիշխանացն Սիւնեաց՝ յանուն սրբոյ նախավկային Ստեփաննոսի»։ Այս երկրորդ նախադասութիւնը եւս շատ կարեւոր է նրանով, որ ցոյց է տալիս տուեալ գլխի շարադրման համար Օրբէլեանի ձեռքի տակ նաեւ այլ նիւթերի եղած լինելը (անշուշտ, դրանց է յանգում գլխի երկրորդ կէսի առասպելապատումը՝ արջերի ու գայլերի հետ Մխիթար վանահօր «բարեկամութեան» մասին)։ Այլ է եղել նաեւ Սիւնեաց պատմիչի համար այդ «Պատմութիւնն երանելոյն Մաշտոցի» երկի նշանակութիւնն իբրեւ սկզբնաղբիւր։ Եթէ Մովսէս Դասխուրանցին նրա մեծ կտորները դրել է իր երեք գրքահատուածներից վերջինի՝ մեր ճշտումների համաձայն՝ ամբողջ երկրորդ կէսի հիմքում (բացի վերջին երկու գլուխներից եւ դրանց նախորդող երկու պարբերութիւնից ԻԱ գլխում), ապա Օրբէլեանը, ով ակնյայտօրէն խմբագրելով է օգտագործել իր աղբիւրները, բաւարարուել է լոկ իր մէկուկէս ոչ մեծ գլուխների համար (ԼԲ, ԼԳ) տեղեկութիւններ քաղելով։ Ճիշտ է, իր սկզբնաղբիւրը, բարեբախտաբար, յանուանէ յիշատակել է հէնց Սիւնեաց պատմիչը։

---

[1] Տե՛ս А. А. Акопян, Албания-Алуанк..., с. 203, 210.

[2] Օրբ., գլ. ԼԳ, էջ 117; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԼԴ, էջ 160։ Այս տեղեկութեան շնորհիւ Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկի գոյութիւնը ենթադրել են բոլոր հայ մատենագէտները (տե՛ս **Հ. Գ. Ջարբհանալեան**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Գ տպագրութիւն, Վենետիկ – Ս. Ղազար, 1897, էջ 510; **Ն. եպ. Պողարեան**, Հայ գրողներ, Ե-ԺԵ դար, Երուսաղէմ, 1971, էջ 133; **Հ. Կ. Քիպարեան**, Պատմութիւն հայ հին գրականութեան, էջ 326)։

Այսպիսով, հնարաւոր է դառնում ճշտել «Պատմութիւն երանելւոյն Մաշտոցի» կոչուած երկի բովանդակութեան սահմանները, գլխաւորապէս՝ ըստ ՊԱ-ի (եւ միաժամանակ՝ նրա նշանակութիւնը Դասխուրանցու համար՝ իբրեւ մի կարեւոր աղբիւր)։ Մեր վերականգնման տարբերակով՝ ՊԱ-ում Մաշտոց Եղիվարդեցուց քաղուած բնագիրն սկսւում է գլ. Գ.ժե-ի շարադրանքով, որը վերաբերում է է դարի կէսերի իրողութիւններին եւ տալիս է Հայոց թուականով երկու թուագրում։ Իհարկէ, որեւէ հիմք չկայ՝ վստահ լինելու, որ Եղիվարդեցու բուն երկը եւս սկսուել է հէնց այդպէս՝ առանց ենթադրելի նախադրութեան եւ անմիջապէս ժամանակագրական համառօտ թուարկումներով («Բարեյաղթ Հերակղ Հռովմայեցւոց թագաւոր զպէսպէս պատերազմունս վանեալ՝ յիշատակ քաջութեան եթող...» եւն)։ Սակայն Դասխուրանցու բնագրի ուշադիր ընթերցումը թոյլ է տալիս մեծ հաւանականութեամբ ենթադրել, որ նրա նախորդող գլուխներում չկան Մաշտոցի երկի աւելի վաղ կտորներից քաղուած հատուածներ։ Իրօք՝ ԺԵ գլխի բովանդակութիւնը կտրուած է ՊԱ-ի՝ է դարի իրողութիւններին վերաբերող մեծ հատուածներից (Բ գրքում), եւ դա կարելի է բացատրել լոկ նրանով, որ այն ուղղակի կազմել է հետագայ գլուխներում արտագրուած ընդհանուր աղբիւրի սկզբնամասը (Գ.ժզ գլխում ժամանակագրական համառօտ թուարկումները շարունակւում են բաւականին սահուն), որը Դասխուրանցին չի կտրել մնացեալից եւ, բարեբախտաբար, «հեշտացրել է» նորօրեայ հետազօտողի գործը։ Թւում է, թէ պատմիչն այդ աղբիւրից կտրել եւ մի քանի գլուխ առաջ է տարել միայն Աղուանից կաթողիկոս Միքայէլ Շաքեցու (705-742) կողմից իր կանոնազանց իշխաններին նզովելու սիւժէն (գլ. Գ.ժգ), որի շարունակութիւնը գտնւում է Գ.ժԹ գլխում՝ Հայոց Եսայի (Եղիպատրուշեցի՝ 775-788) եւ Աղուանից Սողոմոն (781 թ.[1]) կաթողիկոսների կողմից՝ նզովուած «Վարդանուրհի տիկնոջը» Պարտաւում ներում շնորհելը։ Կտրուած կտորը Դասխուրանցին տեղադրել է Միքայէլի առաջին յիշատակութիւնից յետոյ (գլ. Գ.ժբ-ի վերջում), որը, թերեւս, յանգում է իր՝ «Աղուանից կաթողիկոսացանկ» կամ Գաւազանագիրք» անունով յայտնի ուրոյն գրաւոր աղբիւրին, ապա ընդօրինակել է նաեւ այդ կաթողիկոսի՝ երկաբնակների դէմ ուղղուած ոչ մեծ երկը (գլ. Գ.ժզ)։

Իսկ Եղիվարդեցու երկից քաղուած ժամանակագրական կտորների արանքում (գլ. Գ.ժե-իա) Դասխուրանցին տեղադրել է միայն երկու գլուխ. Գ.ժէ-ն պատմում է Ը դարի նշանաւոր մատենագիր Ստեփաննոս Սիւնեաց արքեպիսկոպոսի կեանքի մասին, իսկ նրա յաջորդը նոյն Ստեփաննոսի մի ոչ մեծ երկն է՝ Իլիոն («Ղիոն») քաղաքի աւերման եւ Հռոմի կառուցման սիւժէով։ Դրանցից առաջինը, անշուշտ, յանգում է Ստեփաննոսի Վարքի վաղ տարբերակին, որն առանձին չի պահպանուել, բայց հետագայում օգտագործուել է նաեւ Մխիթար Այրիվանեցու («Ստորագրութիւն պատմութեան բազմերջանիկ սուրբ եւ փառաւորեալ հայրապետին Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝ յօրինեալ ի տէր Մխիթար վար-

[1] Ըստ ՊԱ-ի Գ.իգ գլխի՝ Սողոմոնն աթոռակալել է կէս տարի։ Ճշգրտուած հաշուարկով՝ դա պիտի ընկնէր 781 թուականի ընթացքում (**А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 277).

դապետէ, յեպիսկոպոսէ սուրբ ուխտին Այրավանաց») եւ Օրբէլեանի կողմից (գլ. Լ. «Վասն Տեառն Ստեփաննոսի Սիւնեցւոյ վարք եւ վախճան. եւ որ ինչ պատմի զնմանէ»)[1]: Ի դէպ, Կիրակոս Գանձակեցին օգտագործել է միայն ՊԱ-ի բնագիրը: Այդ տեղի համար Դասխուրանցին, գուցէ, ուղեցոյց է ընդունել իր նախորդ գլխի (Գ.ժզ) վերջին նախադասութեան թուագրումը՝ «ի ՃՁ թուականին» (731/732 թթ.), այնքանով, որքանով Ստեփաննոս Սիւնեցու եղերական մահը Վայոց ձորի («Աշխարհացոյց»-ում եւ ՊԱ-ում՝ Վայոյ ձոր[2]) Մոզ աւանում վերագրւում է Հայոց թուականութեան ՃՁԴ տարուայ (735/736 թ.) Հրոտից ամսի 15-ին (736 թ. Մայիսի 5):

Հաւանական է մտածել, որ Մաշտոց Եղիվարդեցին իր երկը հասցրել է ընդհուպ մինչեւ իր կաթողիկոսանալու տարին՝ Հայոց ՅԽՁ (897 թ. Ապրիլ – 898 թ. Ապրիլ), որի տակ ՊԱ-ի Գ.իա գլխում պահպանուել է մի քանի իրադարձութիւններ յիշատակութիւն (աւարտն է՝ «Յայնժամ վերափոխի մեծ հայրապետն Հայոց Գիորգ [Գառնեցին] եւ իշխանն Սիւնեաց Աշոտ: Զոր ողբերգական կանայքն կականէին՝ ասելով. «Մի՛ եկեսցէ եւ մի՛ լիցի այսպիսի տարի ի վերայ երկրի, որչափ ազգ մարդկան է»: Եւ հայ թիւն ՅԽՁ էր»): Յատկանշական է, որ եթէ այդ վերջին հատուածներում ՊԱ-ում թուարկւում են գրեթէ ամեն տարուայ իրադարձութիւններ, ապա նշուած աւարտից յետոյ Դասխուրանցու յիշատակած յաջորդ թիւը Հայոց ՅԿԳ-ն է (=914/915 թ.)՝ Սմբատ Ա արքայի նահատակութեան տարին[3]: Դրանից յետոյ, 982-988 թթ. միջակայքում ստեղծագործած պատմիչը ԻԱ գլխի վերջում միմի պարբերութեամբ նշում է լոկ նաեւ դելմիկ Սալարեանների իշխանութեան հաստատումը (մօտ 940 թ.) եւ ռուս – Ռուզիկների կողմից Պարտաւի վեցամսեայ ռազմակալումը (944-945 թթ.)՝ դրանով էլ սպառելով իր պատմական տեղեկանին: Ճիշտ է, յաջորդ գլխի վերջում նա ամենայն շքեղութեամբ նկարագրում է նաեւ իր՝ այսպէս ասած «գլխաւոր հերոս» Յովհաննէս Սենեքերիմի (Փառիսոսի առաջին թագաւորի) գահակալումը, որը տեղի է ունեցել մօտ 960-970-ական թթ., սակայն անգամ դա՝ առանց թուագրութեան: Պարզ է, որ նրա ձեռքի տակ այլեւս չկար Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկի պէս մի անգնահատելի աղբիւր:

Յաւելենք, որ Մովսէս Դասխուրանցին օգտագործել է իր այս աղբիւրը, ըստ ամենայնի՝ նոյն ձեւով, ինչ որ մնացեալի մեծ մասը, այսինքն՝ գրեթէ բառացի արտագրելով[4]: Նրա ամենամեծ միջամտութիւնները սեփական գլխաբաժանում մտցնելը եւ գլխագրերի յաւելումներն են, ինչպէս որ նա անում է նաեւ մեծ ծաւալ ունեցող այլ աղբիւրների նիւթն ընդօրինակելիս: Միայն մէկ դէպքում մենք հիմք

---

[1] Տե՛ս **Գ. արք. Յովսէփեանց**, Մխիթար Այրիվանեցի. ընդարձակ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղէմ, 1931, էջ 17-23; **Օրբ.**, գլ. Լ, էջ 95-105; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԼԱ, էջ 131-144; **Մ. վրդ. Գրիգորեան**, Ստեփանոս Սիւնեցի. իր երկու ընդարձակ մեկնութիւններու հրատարակութեան առիթով, Պէյրութ, 1958; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 210; **Յ. Քեօսէեան**, Ստեփանոս Սիւնեցին եւ նրա մատենագրական ժառանգութիւնը, – ՄՀ, հտ. Զ, Ը դար, էջ 93-104:

[2] **Անանուն (Է դար)**, «Աշխարհացոյց», սն. 137, 147:

[3] **Դասխ.**, Գ.իա, էջ 337:

[4] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 177-211.

ենք տեսնում ենթադրելու, որ Դասխուրանցու գլխագիրը, այն է՝ «Որ ինչ յերկերիւր թուականութեանն Հայոց ցայսր գործք՝ լեալ ի սահմանս Արեւելից» (գլ. Գ.ժթ), հաւանաբար, համապատասխանում է աղբիւրի՝ վերնագրային բնոյթի մի արտայայտութեանը: Բանն այն է, որ յաջորդող բնագրում չի յիշատակւում «յերկերիւր թուականութեանն Հայոց»-ը (որը, սակայն, ճիշտ է), եւ աւելի հաւանական է մտածել, որ այն ոչ թէ հաշուարկուել է Ծ դարի՝ սովորաբար նման բաներ չանող պատմիչի կողմից, այլ ուղղակի գրուած է եղել աղբիւրում:

Մի քանի դէպքերում հնարաւոր է նկատել նաեւ Մովսէս Դասխուրանցու, իրօք, խմբագրական բնոյթի միջամտութիւններ իր աղբիւրի բնագրին: Օր.՝ այդպիսին է թւում Գ.ժթ գլխի միջնամասի նախադասութիւնը. «Այս մինչեւ ցայս վայր»: Նման մի արտայայտութիւն պատմիչն ունի Ա գրքի Դ գլխի վերջում. «Այս մինչ ցայս վայր ցուցումն ազգաբանութեանց», իսկ մէկ ուրիշը՝ Ա.ը գլխում «Սակայն յայսմ վայրի նպաստաւորէ մեզ Քերթողահայրն Մովսէս...»:

Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկը, որն իր շարադրանքի ոճով ամենից աւելի յիշեցնում է Ասողիկի «Պատմութիւն տիեզերական»-ը (բայց շատ աւելի նեղ ընդգրկումով), ուշագրաւ աղբիւրագիտական նիւթ է պարունակում Է-Թ դդ. Հայաստանի եւ յարակից երկրների պատմութեան ու մշակոյթի բազմաթիւ իրողութիւնների (ռէալիաների) մասին, որոշ դէպքերում՝ եզակի: Դրանց համադրութիւնն այլ սկզբնաղբիւրների հետ (հայ եւ օտար[1]) մեծապէս լրացնում եւ ճշգրտում է մեր գիտեցածը: Հետաքրքիր է հեղինակի ինչ-ինչ մօտեցումների քննութիւնը, որը վեր է հանում նաեւ Թ դ. երկրորդ կէսի հայ հասարակական մտքի ուշագրաւ դրսեւորումներ: Այդպիսին է, օր.՝ հետեւեալ եզակի եւ այլուստ անյայտ պնդումը Հայոց դարձի պատմութեան՝ «ի մնացորդաց առեալ» ու «հերձուածեալք» տարբերակների մասին. «Բայց այս իսկ են զարմանք եւ սոսկալի իրք, եթէ սուրբն Գրիգոր ի կեսարիայ առ զձեռնադրութիւնն, որ ընդ Հռոմայեցւոցն է իշխանութեամբ հայրապետացն, եւ ինքն ոչ կարաց աւրհնել ձէթ, այլ ի կեսարիայ առնուին ձէթ Հայք մինչեւ ցժողովն Քաղկեդոնի, ապա ի զաւրանալ հերձուածին՝ ինքեանք բազում հակառակութեամբ եւ հնարիւք ուրեմն հաստատեցին զկարգ աւրհնութեան իւղոյն՝ բաժանմամբ ի նոցանէն»: ՊԱ-ի Գ.ժթ գլխի աւարտական մասի այս միտքը նախորդ հրատարակութիւններում թերի վերծանութեան պատճառով (օր.՝ a լուսաւորութիւն, bclrv լոկ սովորութիւն փխ լուսաւորութեան) մնում էր անընկալելի, իսկ Մ. Էմինի տպագրում հատուածն ընդհանրապէս բացակայում էր: Պարզ է, թէ նման ծայրահեղ մօտեցումների պահերին ինչ էր կատարուելու հակառակ պատկեր ներկայացնող մեր պատմիչների ձեռագրերի հետ: Ի դէպ, թերեւս, հէնց նման մի պահի է Պատմահայր Մովսէս Խորենացու բնագիրը «զրկուել» Հայոց լուսաւորութեան մասին, անշուշտ, ունեցած գլխից կամ գլուխներից: Այդպէս՝ մեզ հասած

---

[1] Բնագիրը կազմելիս մենք մի շարք համեմատութիւններ ենք արել, մասնաւորապէս՝ արաբալեզու մատենագիրների հաղորդումների հետ (ըստ՝ Արաբական աղբյուրներ, Գ, Թարգմ. ... **Ա. Տեր-Ղեւոնդյանի**; **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963 եւն):

նրա բնագիրն ունի լոկ Տրդատի՝ «նահատակութիւնք» կոչուած մեծագործութիւնների մասին գլուխը «յառաջ քան զհաւատալն» (Բ.ձբ), որին յաջորդում է Կոստանդիանոսի դարձի մասին պատմողը (Բ.ձգ), վերջում նաեւ՝ Վրաց դարձի նկարագրութիւնը երանելի Նունէի ձեռքով (Բ.ձզ), որին նախորդող «նահատակութիւնք»-ի մասին երկու գլուխներում (Բ.ձդ-ձե) Հայոց արքան արդէն հանդէս է գալիս իբրեւ քրիստոնեայ: Հայոց դարձի իրական պատմութիւնը (311 թ. Յունիսի 24-ին՝ Լուսաւորչի «ելն ի վիրապէն»[1]) չկայ, եւ պիտի ընդունել, որ այն պարզապէս գիտակցաբար հանուել է մօտաւորապէս ԶԹ եւ ՁԴ գլուխների արանքից:

Բաժին 3
ՄՈՎՍԷՍ ԴԱՍԽՈՒՐԱՆՑՈՒ ԵՐԿԻ Է ԴԱՐԻ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Կրկին յիշենք բազմաթիւ հայագէտների այն համոզումը, որ ՊԱ-ում օգտագործուած նիւթերի ճշգրիտ վերհանումը թոյլ է տալիս գործ ունենալ աւելի վաղ աղբիւրներից բառացի արտագրուած կտորների հետ ու նաեւ ընկալել իր դարի վառ հեղինակ Մովսէս Դասխուրանցու յաւելումները եւ սեփական շարադրանքը: Լոկ այգպէս եւ նոր աղբիւրների բացայայտումով ու երկի պահպանուած բնագրի հետ համեմատութեամբ են մասնագէտները կարողանում ճշմարիտ պատկերացում կազմել ժ դ. վերջերին ստեղծագործած այդ արցախցի պատմիչի՝ հայ մատենագրութեան ուշագրաւ եւ բարդ մի ներկայացուցչի իմացութիւնների, աշխարհայեացքի, նպատակադրումների ու արած ինքնուրոյն աշխատանքի մասին[2]:

Բաւականին ծաւալուն երկու պատմական բնոյթի երկ, որոնք ներկայացնում էին է դարի անցքերը, Մովսէս Դասխուրանցին գրեթէ բառացի արտագրել է իր ՊԱ-ի Ա գրքի վերջում եւ Բ գրքի գլուխների մեծ մասում: Դրանցից առաջինը, որ պայմանականօրէն անուանւում է «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն»՝ Վիրոյի մասի՛ն պատմողի իմաստով, ընդօրինակուած է Բ գրքի Թ-ԺԴ եւ ԺԶ գլուխներում: Դրանց միջեւ դրուած ԺԵ գլխում Դասխուրանցին արտագրել է մի փոքրիկ «Ճառ» («Վասն սաստկացեալ սովոյն, սրոյն եւ գերութեանն ի միասին» գլխագրի տակ)[3], որի հեղինակն է 596-629 թթ. աթոռակալած Աղուանից կաթողիկոս Վիրոն (հմմ. վերջին պարբերութիւնը. «ես՝ Վիրոյ՝ Աղուանից, Լփնաց [a եւ Լփնաց] եւ Ջորայ [a

---

[1] Հմմ. վերեւում, էջ 77-78 եւ **Ա. Ցակոբեան**, Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում, – ՀԱ, ՃԻԵ տարի, 2011, սն. 256-257:

[2] Հմմ. **Ա. Ցակոբեան**, Եղիա Արճիշեցի կաթողիկոսի թղթերը, – ՀԱ, ՃԻԶ տարի, 2012, սն. 1: Ցաւօք, ճման մօտեցման փոխարէն ոմանք դեռ շարունակում են կրկնել այն պարզունակ, հնացած միտքը, իբրեւ թէ ՊԱ-ն շարադրել են երկու հեղինակներ՝ Է եւ Ժ դարերում (տե՛ս, օր.՝ Movses Kaghankatvatsi and/or Movses Daskhurantsi: Moses of Kaghankatuk and/or Moses of Daskhuran, – In: **A. J. Hacikyan, G. Basmajian, E. S. Franchuk, N. Ouzounian**, The Heritage of Armenian Literature, Vol. II: From the 6th to the 18th Century, Detroit, 2002, p. 171-172).

[3] **Դասխ.**, Բ.ժե, էջ 164-166; **Վիրոյ Աղուանից կաթողիկոս**, Վասն սաստկացեալ սովոյն, սրոյն եւ գերութեանն..., Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Ցակոբեանի**, – ՄՀ, հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 363-367:

Զոլա] կաթողիկոս թողում ասել զայլն ամենայն զպէսպէս զազրալիս...»), եւ որը մեր երկի հետ ուղիղ կապ չունի: Հատուածի գլխագրերի մեծ մասը եւս արդիւնք է Ժ դարի պատմիչի ստեղծագործութեան, սակայն Բ.թ գլխագիրը («Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց եւ պէսպէս անցից տիեզերահեծ տագնապին, որ եղեւ աշխարհաց»), ըստ ամենայնի, պատկանում է հէնց Վիրոյի կենսագրի գրչին եւ մտայղացուել է նրա կողմից՝ իբրեւ բուն երկի վերտառութիւն:

Հ. Ն. Ակինեանի դիպուկ բնորոշմամբ՝ «Աղուանից Պատմութեան մէջ գոհար մըն է գրութիւնս, արժէքաւոր իր արժանահաւատութեամբ, վսեմ իր ոճով»[1]: Եւ ապա՝ «փոքրիկ, բայց ոճով չնաշխարհիկ եւ պատմական արժէքով գնահատելի աշխատութիւն մը, որ պատիւ կը բերէ է դարուն հայ մշակոյթին»[2]:

Որոշ հետազօտողների կարծիքով՝ տուեալ պատմական երկի հեղինակը, այնուամենայնիւ, կարող էր լինել հէնց ինքը՝ Վիրոյ կաթողիկոսը[3]: Սակայն ժամանակին ցոյց է տրուել, որ ոչ մի միջնադարեան հայ քրիստոնեայ հեղինակ չէր կարող ինքն իր մասին արտայայտուել այն բարձրագոչ ոճով, որը գտնում ենք երկում[4]: Փոխարէնը՝ պարզ է, որ տուեալ պատմութեան հեղինակը Վիրոյին շատ մօտ կանգնած անձնաւորութիւն է եղել եւ անձամբ մասնակցել է կաթողիկոսի մի շարք գործերին: Երկու հատուածում նրա շարադրանքը դառնում է առաջին դէմքով: Մասնաւորապէս, դրա շնորհիւ յայտնի է դառնում, որ գրողը ծնունդով Ուտիք (=Ուտի Առանձնակ) գաւառի կաղանկատոյք գիւղից է («հասեալ ի մասն ինչ առ ստորոտով լերինն, որ յանդիման գեաւղջն մեծի կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գաւառի, յորմէ եւ ես»), ուստի՝ կարելի է նրան պայմանականօրէն անուանել Անանուն Կաղանկատուացի (հէնց այդ անուամբ էլ 2005 թ. լոյս է տեսել մեր կազմած գիտա-քննական բնագիրը)[5]:

Երկի շարադրանքն աւարտւում է 629 թ. իրադարձութիւններով («Յերկրորդ ամի Արտաշրի՝ որդւոյ Կաւատայ, Պարսից արքայի, մինչ դեռեւս առնէր զիշխանութիւնն ըստ կամս իւր իշխանն հիւսիւսոյ»), սակայն վերջին գլխի մի հատուածում Շահվարազ պարսից զօրավարի հասցէին հեղինակի շռայլած բացասական արտայայտութիւններից պարզ է դառնում, որ նա, ըստ ամենայնի՝ գիտէր 630-ին այդ զօրավարի կարճատեւ արքայանալու եւ անփառունակ վախճանի մասին: Միւս կողմից՝ երկը չէր կարող գրուած լինել 632 թ. յետոյ, քանի որ Կարինի եկեղեցական ժողովում Հայոց Եզր Արահեզացի կաթողիկոսի հետ միասին Հերակլ կայսեր պահանջով երկաբնակութեանը (աւելի ճիշտ՝ նրա մի փոքր մեղմ տարբե-

---

[1] **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի)..., էջ 207:
[2] Անդ, էջ 217-218:
[3] Տե՛ս, օր.՝ անդ, էջ 207-208:
[4] Տե՛ս **Ն. Ադոնց**, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, Աշխատասիրել, ծանոթագրել եւ ներածությունը գրել է **Պ. Հովհաննիսյանը**, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2005, էջ 38 (առաջին կէսը տպագրուել է «Անահիտ» հանդէսում /Փարիզ/ 1939 թ., հմր 3, 4-5, 6 եւ 1940 թ., հմր 1-3. տե՛ս 1939, հմր 4-5, էջ 28-29):
[5] Տե՛ս **Անանուն Կաղանկատուացի**, Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց եւ պէսպէս անցից տիեզերահեծ տագնապին, ... ՄՀ, հտ. Ե, Անթիլիաս, 2005, էջ 369-414: Ի դէպ, Կաղանկատոյքը գտնուել է Վարնկաթաղ գետակի ստորին հովտում:

րակին՝ միակամութեանը) յարեց նաեւ Աղուանից եկեղեցին, այնինչ այդ պահի կաթողիկոս Զաքարիան (629-644) աներկբայօրէն գովերգուած է միաբնակութեան ջատագով հեղինակի մի դրուագում («Եւ քահանայ ոմն՝ անուն Զաքարիա, այր սուրբ, որ էր վանական Պարտաւայ եկեղեցւոյն, հեզ եւ հանդարտ, որ եդ զանձն իւր ի վերայ նոցա եւ երդմամբք եւ ազգի ազգի հնարիւք զերծոյց զբազում անձինս քրիստոնէից՝ աղաւթիւքն իւրովք երաշխի առեալ զնոսա, նաեւ վասն հրէից եւ հեթանոսաց»)[1]: Այսպիսով, «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան» շարադրման հաւանական ժամանակը պէտք է համարել 630-632 թթ. միջակայքը:

Տեղին է նշել այս երկի մի «գրականագիտական» առանձնայատկութիւնը, որը նկատել էինք դեռ տարիներ առաջ[2]: Անանուն կաղանկատուացին հմտօրէն եւ բարձրարուեստ ոճով կերտել է բազմաթիւ օտարազգի գործող անձանց կերպարներ՝ անխտիր տալով նաեւ նրանց անունները: Դա է՛ւ Խոսրով արքայից արքան է, է՛ւ Հերակլ կայսրը (որի նկատմամբ վերաբերմունքն ամենեւին էլ դրական չէ, ըստ Նիկ. Մառի՝ ակնյայտ նշան հեղինակի հակաքաղկեդոնական դիրքորոշման[3]), է՛ւ հիւսիսկովկասեան թիւրքիւտների խաքան Ջեբուի որդի Շաթը, է՛ւ հակամարտող երեք տիրակալների պաշտօնեաներն ու զօրավարները: Այնինչ երկի տեղական հերոսների ցանկը սպառւում է բացառապէս Վիրոյ կաթողիկոսով (որի մասին շատ մանրակրկիտ պատմում է Բ.ժդ ծաւալուն գլուխը) եւ վերջինիս փոխարինած Զաքարիայով՝ լոկ վերը բերուած եզակի դրուագում (դեռ քահանայ եղած պահին): Այս ցուցանիշով խիստ տարբեր է, օրինակ՝ հէնց յաջորդ աղբիւրը:

Մովսէս Դասխուրանցու երկում բառացի արտագրութեամբ պահպանուած է դարի երկրորդ պատմական գործը պայմանականօրէն անուանւում է «684 թուականի պատմութիւն»: Այն ընդօրինակուած է ՊԱ-ի Ա գրքի ԻԷ-Լ եւ Բ գրքի ԺՀ-ԼԱ եւ ԼԳ-ԽԵ գլուխներում[4]: Վերջինների միջեւ ընկած Բ.լբ գլխում Ժ դարի պատմիչը տեղադրել է իր սեփական շարադրանքը՝ հիմնուելով «Աղուանից կաթողիկոսների գաւազանագիրք» անուանուած այն սկզբնաղբիւրի հաղորդումների վրայ, որը, ինչպէս նշել ենք, հաւանաբար, կազմուել է Ժ դ. սկզբներին եւ Դասխուրանցու կողմից հիմնական մասերով դրուել իր աւարտական՝ Գ.իգ գլխի հիմքում, իսկ որոշ տեղեկութիւններ էլ տեղափոխուել են նախորդող գլուխներ: «684 թ. պատմութեան» արտագրութեան հատուածներում առկայ գրեթէ բոլոր գլխագրերը նոյն-

---

[1] **Դասխ.**, Բ.ժ, էջ 132; **Անանուն Կաղանկատուացի**, Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց, էջ 371, նախ. 30: Զաքարիայի այս սխրանքի համաոտ յիշատակութիւնը կայ նաեւ Դասխուրանցու աւարտական գլխում (Գ.իգ /իդ/, էջ 343)՝ Աղուանից կաթողիկոսացանկում («Տէր Զաքարիա՝ այր սուրբ, ամս ԺԵ: Սա երաշխի առ [*bclrv* էառ] զմեծ քաղաքն Պարտաւ եւ աղաւթիւք իւրովք զերծոյց ի գերութենէ զբազում անձինս»): Առաւել մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 188-196; **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի)..., էջ 207, ծն. 1:

[2] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 189.

[3] Տե՛ս **Антиох Стратиг**, Пленение Иерусалима персами в 614 г., с. 60.

[4] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 196-198; **Նոյնի՝** О хронологии последних событий в "Истории 684 года", – КВ, вып. 6, Ер., 1988, с. 24-36; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 795-796:

պէս արդիւնք են ՊԱ-ի հեղինակի ստեղծագործութեան (ըստ ամենայնի՝ բուն երկի վերնագիրը մեզ չի հասել)։ Ոմանց կարծիքով՝ այս երկի շարադրանքին է յանգում նաեւ Բ.ժէ գլուխը, որը պատմում է հետագայում «Միհրանեաններ» յորջորջուած Վարազ Գրիգոր, Ջեւանշէր (Բ խմբի ՁՁ՝ Ջուանշէր) եւ Վարազ Տրդատ Ա Գարդմանից իշխանների՝ իբրեւ թէ Սասանեաններից սերուած լինելու մասին առասպելական տոհմաբանութիւնը։ Իրականում այդ պատմութիւնը հաւաստի գրեթէ ոչինչ չի պարունակում, ունի ժամանակագրական խաթարուած պատկեր, լեզուով ու ոճով էապէս տարբերւում է «684 թ. պատմութեան» (այդպէս նաեւ՝ «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան») կտորներից եւ, անկասկած, շարադրուած է ժ դարի բանաքաղ-պատմիչ Դասխուրանցու կողմից՝ Խաչէն – Փառիսոսի «Առանշահիկ» իշխանների տոհմաբանութիւնների մէջ սպրդած առասպելածին պատկերացումների հիման վրայ (դրա մասին մանրամասն կը խօսենք յաջորդ գլխում)։

«684 թ. պատմութեան» անանուն հեղինակը, թերեւս, մօտ է կանգնած եղել իր՝ մեծ սիրով պատկերուած տեղական հերոսներին՝ Ջեւանշէր եւ Վարազ Տրդատ իշխաններին կամ հոգեւոր առաջնորդներին։ Բ.իե գլուխը, որը Ջեւանշէրի աղօթքն է, յանուանէ յիշատակում է նաեւ վերջինիս ծնողներին, եղբայրներին ու զաւակներին։ Հեղինակը յատկապէս մօտ է եղել Մեծ Կուանք (Մեծ Կողմանք) գաւառի Իսրայէլ/Իսրայէղ եպիսկոպոսին (քահանայական անունը՝ Աբաս)։ Նա առաջին դէմքով է նկարագրում իր հերոսների մի շարք գործեր, այդ թւում՝ Իսրայէլի ուղեւորութիւնը Հոնաց երկիր՝ հիւսիսկովկասեան այդ թիւրքալեզու ցեղին (հետագայի՝ կումիկներ) քրիստոնէութեան բերելու առաքելութեամբ[1]։ Ըստ երեւոյթին, ի վերջոյ, յաջողութեան չհասած այդ առաքելութեանն ենք պարտական «684 թ. պատմութեան» մի հատուածում (ՊԱ-ի վիճակով՝ սկզբում) հոների մի խմբի՝ աւելի վաղ ժամանակներում (Մաշտոցի մահուանը յաջորդած տարիներին) քրիստոնէութեանը յարելու առասպելախառն պատմութեան առկայութեամբ[2]։ Մովսէս Դասխուրանցու Ա գրքի այդ հատուածը բաժանուած է չորս գլխի (Իէ-Լ), որոնց գլխագրերից առաջինը («Յաղագս սրբոյն Մեսրովպայ եւ ընկերաց նորա պատմութիւն վիպասանաբար») եւ երկրորդը («Շարագրած յաղագս աշակերտացն Մաշտոցի ընդ ներգոյս զրոյցատրաբար»), գոնէ մասամբ, է դարի բնագրին յանգելու տպաւորութիւն են թողնում։ Բ.իթ գլխի մի տեղեկութիւնից (նախ. 11) երեւում է, որ այդ հատուածը պարզապէս Իսրայէլ – Աբաս քահանայի տեսիլն է («...զարմացեալ ընդ զրոյցատրութիւն եպիսկոպոսին, որ պատմէր զտեսիլ Աբասուն»[3])։

---

[1] Տուեալ պատմութեան հաւաստիութեան մասին հմմ. **С. Г. Кляшторный**, Моисей Каланкатуйский о верованиях древнетюркских племен, – ИФЖ, 1999, № 1, с. 290-300. Հոնաց թագաւորութեան մասին տե՛ս **Гадло А. В.**, Этническая история Северного Кавказа, с. 141-154; **Л. Б. Гмыря**, Страна гуннов у Каспийских ворот, Махачкала, 1995, с. 53-89.

[2] Հոների այդ «Ոսմոսոսքեան թագաւորի» մասին պատմութեան մէջ 440-ական թթ. սկզբի մի արշաւանքի հետ կապուած պատմական հաւաստի իրողութիւններն առանձնացնելու շատ ուշագրաւ փորձ տե՛ս **И. Г. Семенов**, Генеалогия Картлийских царей, с. 41-48.

[3] **Դասխ.**, Բ.իթ, էջ 203; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 838-839։

«684 թ. պատմութիւն»-ը պարունակում է է դարի 30-80-ական թուականների Աղուանք երկրի (Սասանեան մարզպանութեան ընդգրկումով) բաւական մանրամասն ու չափազանց բարձրարուեստ ոճով շարադրուած պատմութիւնը: Նրանում առկայ են մի ամբողջ շարք պաշտօնական նամակներ եւ պատմական իրադարձութիւնների եզակի յիշատակումներ, որոնց վաւերականութիւնը հէնց այդ եզակիութեան պատճառով կասկածելի էր համարում Նիկ. Ադոնցը[1]: Սակայն, ինչպէս ցոյց է տուել դեռեւս Կիմ Ղահրամանեանը, իրականում հնարաւոր է կասկածել դրանցում եւ ամբողջ երկում առկայ միայն ինչ-ինչ չափազանցութիւնների առիթով, որոնք էլ արդիւնք են իր հերոսներին մեծարելու՝ միջնադարեան հեղինակի համար սովորական ու հասկանալի միտումի[2] (նման միտում է դրսեւորում առանձնապէս այն դէպքերում, երբ հեղինակը ջանում է Ջեւանշէրին աւելի բարձր դասել հարեւան իշխաններից, օր.՝ նրա ամուսնութեան մասին այս դրուագում. «Յայսոսիկ նայելով նախարարացն Հայոց եւ Վրաց աշխարհին՝ խորհէին ի ծննդոց իւրեանց տալ նմա կին: Իսկ նա յԱրուիճան [a յԱրուեւծան] տոհմէն առնոյր կին՝ զդուստր իշխանին [bclrv չիf իշխանին] Սիսականեան աշխարհին, ընդ որ յաւէժ ուրախ եղեն Սիւնիք»[3]): Բացի այդ, համադիր քննութեան ընթացքում անտեղի վրիպում թոյլ չտալու համար հարկ է ճշտել եւ հաշուի առնել իւրաքանչիւր աղբիւրի ստեղծման պահին հասարակական մտայնութիւնների առաջնահերթութիւնները (կարեւորի եւ երկրորդականի ընկալման չափանիշները): Տուեալ դէպքում, եթէ Սեբիոս պատմիչն իր երեք «շնչով» շարադրուած «Պատմութիւն ի Հերակլն»[4] երկն, ի վերջոյ, աւարտում էր 659 թ. վերջերին, այսինքն՝ «Տաճկաց» 30-ամեայ ծառայութեան տարիներին[5] (652-681 թթ.), եւ պատմիչի համար բնական էր արաբական արշաւանքների մանրակրկիտ նկարագրութիւնը, ապա «684 թ.

---

[1] **Ն. Ադոնց**, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 43-44 (նաեւ՝ «Անահիտ», 1939, հմր 6, էջ 4-5):

[2] **К. А. Каграманян**, Источники "Истории страны Агванк", с. 19. Հմմ. **А. А. Акопян**, О хронологии последних событий в "Истории 684 года", с. 24-26.

[3] **Դասխ.**, Բ.ժթ, էջ 179; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 815: Բերուած բնագրի Արուիճան – Արուեւծան տոհմանունը համադրւում է Սիւնիքի Աղահեջք գաւառի իշխանական տոհմի հետ, քանի որ այն յիշեցնում է Ստեփաննոս Օրբէլեանի գիւղացանկից եւ Տաթեւի 1730 թ. պտղացուցակից յայտնի *Արուանան* գիւղանունը, ԺԹ դարում՝ *Արուայեան, Արբիեան* (տե՛ս **А. Карагезян**, К локализации гавара Кашатаг, – ВОН, 1987, № 1, с. 42; **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 204-205):

[4] «Պատմութիւն ի Հերակլն» վերտառութիւնը Սեբիոսն ընտրել է շարադրման սկզբի փուլում, որը վերագրելի է 643 թուականին (ընդ սմին երկրորդ «շնչով» նա վերադարձել է շարադրանքը լրացնելուն 650-ին). տե՛ս **Ա. Յակոբեան**, Սեբիոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը, սն. 213-270:

[5] Հմմ. **Փիլոն Տիրակացի**, Ժամանակագրութիւն, էջ 969, նախ. Գ.411-412 («Ի սորին աւուրս եղեւ շփոթումն Տաճկաց սաստիկ պատերազմաւ: Եւ դադարեցին ի հարկատրութենէ նոցա Հայք, Վիրք եւ Աղուանք՝ ծառայեալ նոցա ամս Լ»); Պատմաբանութիւն **Ղեւոնդեայ**, գլ. Ե, էջ 31 («Եւ ի ժամանակի պատերազմին՝ որ ի մէջ Տաճկաց, դադարեցին ի հարկատրութենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք, ծառայեալ նոցա ամս Լ»); **Ղեւոնդ**, գլ. Դ, էջ 15-16:

պատմութիւն»-ը գրում էր արաբների իշխանութեան բացակայութեան քառասնեայ շրջանում (681-685 թթ.), երբ Այսրկովկասի համար առաջնահերթ (անգամ՝ կենաց-մահու.) խնդիրը հիւսիսից սպառնացող վտանգի կասեցումն էր: Այդ պատճառով էլ անանուն հեղինակն այդքան մեծ տեղ է յատկացնում հիւսիսկովկասեան թիւրքալեզու զանգուածի հետ առնչութիւններին, իսկ «հարաւայնոց բռնակալի», այսինքն՝ անունով չնշուած (!) խալիփայի մօտ «Արեւելից [=Աղուանից] իշխան» Ջեւանշէրի երկու այցելութիւնները նկարագրում է ուրախ արկածի ձեւով, զուտ իբրեւ արտաքին քաղաքական ասպարէզում անխուսափելի դարձած շրջադարձին նրա հերթական իմաստուն արձագանք՝ սկզբում Պարսից արքայ Յազկերտ Գ-ին քաջարի հաւատարմութեամբ ծառայութիւնից (գլ. Բ.ժը), նրա վախճանից յետոյ Յունաց Կոստանդ Բ կայսերն «անձնատուր լինելուց» ու մեծամեծ պատիւներ ստանալուց (գլ. Բ.ժթ-իբ), ապա հոների ներխուժումը Կուրից այն կողմ կանգնեցնելուց եւ Ալփ Իլիթուէր թագաւորի հետ խնամիանալուց (նրա դստերն իր անդրանիկ որդու հետ պսակելով. գլ. Բ.իգ, իզ) յետոյ[1]:

Ի յաւելումն՝ նշենք, որ աղբիւրագիտական նոր տուեալները պակասեցնում են երկի հաղորդումների «եզակիութիւնը»: Օր.՝ նրա այն տեղեկութիւնը, ըստ որի՝ Կոստանդ Բ կայսրը (նաեւ՝ Կոստաս, մեր բնագրում՝ Կոստանդիանոս. 641-668) իր իշխանութեան 19-րդ տարում (այսինքն՝ 659/660 թ.[2]) հասել էր Ատրպատականի Քունգր գիւղ (=կանգաւար) եւ կենտրոնական Հայաստան (Վաղարշապատ)[3], հակառակ հայագէտների մէջ արմատացած կասկածին (Ն. Ադոնցը եւ այլոք գտնում էին, թէ դա շփոթուած է Կոստանդի 652-653 թթ. արշաւանքի հետ, երբ նա հասաւ Դուին, ինչը նշում էր Սեբէոսը[4]), արդէն կարելի է համարել լիովին հաւաստի, քանի որ ՊԱ-ի Գ.ժե գլխում (որը յանգում է 897 թ. գրուած Մաշտոց Եղիվարդեցու «Պատմութեանը»[5]) ուղիղ վկայութիւն է պահպանուել Քաղաքուդաշտ – Վաղարշապատի Ս. Գրիգոր տաճարի (այսինքն՝ Զուարթնոցի) օծման արարողութեանը Կոստանդի մասնակցելու մասին, իսկ դա տեղի էր ունեցել Տայքից Ներսէս Գ Շինող կաթողիկոսի վերադարձից (658 թ.) յետոյ, ճշգրիտ՝ 660 թ. գարնանը[6]: Բացի այդ,

---

[1] **Դասխ.**, Բ.լե, էջ 225-230; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 859-861:

[2] Հմմ. **Ն. Ադոնց**, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 58 (նաեւ՝ «Անահիտ», 1940, հմր 1-3, էջ 26):

[3] **Դասխ.**, Բ.իբ, էջ 183-184; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 819-821:

[4] **Սեբիոս**, գլ. ԽԶ, էջ 140-143; **Սեբէոսի** Պատմութիւն, գլ. ԽԸ, էջ 163: Հմմ. **Ն. Ադոնց**, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, էջ 58 («Անահիտ», 1940, հմր 1-3, էջ 26); **R. Grousset**, Histoire de l'Arménie dès origines à 1071, Paris, 1947, p. 302; **А. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, Ер., 1977, с. 37-39.

[5] Տե՛ս աստ, էջ 140-148:

[6] **Սեբիոս**, գլ. Ծ, էջ 154; **Սեբէոսի** Պատմութիւն, գլ. ՃԲ, էջ 175 («...միանչեւ մեռաւ Ռշտունեաց տէրն, դադարեաց ասպատակ Տաճկին, եւ ապա յետ վեցերորդի ամի հալածանացն տէրն, դադարեաց ասպատակ Տաճկին, եւ ապա յետ վեցերորդի ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղի [*Ե ձեռ.* տեղիս] իւր եւ հաստատեցաւ յաթոռ կաթողիկոսութեան»): Հմմ. **А. А. Акопян**, О хронологии последних событий в "Истории 684 года", с. 36; **Նոյնի՝** Հայ-բիւզանդական յարաբերութիւնները Է դարի կէսերին եւ Զուարթնոցի կառուցման ժամանակը, – ՄՄԱԵԺ, հտ. XXIV, Եր., 2005, էջ 366-427; **Նոյնի՝** Սեբէոսի Պատմութիւն Հերակլի մասին, – ՊԲՀ, 2006, 1, էջ 227-228:

ըստ Միխայիլ Կրիւովի ուշագրաւ դիտարկման՝ 659 թիւն իբրեւ Կոստանդի՝ Ատրպատականում լինելու տարի հաստատւում է նաեւ ՊԱ-ի հաղորդման հետ Մաքսիմոս Խոստովանողի (է դարի երկաբնակութեան գաղափարախօս) նորայայտ ասորական վկայաբանութեան (հեղինակը՝ Գէորգ Ռաշայնացի) այն տեղեկութեան համադրմամբ, ըստ որի՝ Մաքսիմոսը Կոստանդնուպոլիս էր ժամանել ներարաբական երկպառակտչական պատերազմի շրջանում (Ալի – Աբու-Թուրաբ եւ Մուաւիա խալիփաների միջեւ այդ արիւնալի հակամարտութիւնը թուագրւում է 657-661 թթ.), երբ Կոստանդը մայրաքաղաքում չէր, քանի որ Մուաւիայի հետ խաղաղութեան դաշն կնքելուց յետոյ (659-ին) «արշաւանքի էր գնացել Ադուրբադագան»[1]:

Կարելի է յաւելել, որ այս ժամանակը հաստատւում է նաեւ «684 թ. պատմութեան» ժամանակագրական համակարգուած նշումներով, ըստ որոնց՝ կայսեր հետ հանդիպումից 6 տարի անց, այն է՝ 665 թ., լրանում էր Ջեւանշէր իշխանի տիրակալութեան 28-րդ տարին՝ դրա սկիզբը համարելով իր սպարապետ նշանակուելը Կադեսիայի (մեր բնագրի՝ Կատշանի) ճակատամարտի տարում, այն է՝ 637 թ.: Բ.իզ գլխում հեղինակը գրում է. «Եւ ահա այս երկու ամք պակաս յերից տասներրեկաց [30–2+637=665 – Ա. Յ.], յորս աշխարհակալ ասպարապետութեամբն իւրով ի տիոց անտի երիտասարդականաց մինչեւ ցմիջակ արբունս ժամանակի դրուատայեղց, համաշխարհալուր կատարեաց...»[2]: Իսկ նախորդ գլուխներում ունենք տարիների հետեւեալ հաշուարկը. Կոստանդ կայսեր 19-րդ տարուայ (այսինքն՝ 659/660 թ.) յիշատակումից (գլ. Բ.իբ) 2 տարի յետոյ, այսինքն՝ 662 թ., տեղի է ունենում խազարների անյաջող արշաւանքը (Բ.իգ, էջ 186. «Յետ այսորիկ լինելութեան եւ երկուցն հոլովելոց ամաց ելանեն խազիրք յաշխարհս Աղուանից...»); եւս 2 տարի անց, այսինքն՝ 664 թ., օծւում է Գարդմանի բերդի եկեղեցին (Բ.իդ, էջ 187. «Ի յաղթահարելն Ջեւանշերի եւ երկուց ամաց անցելոց զկնի վանելոյն զզաւրսն խազրաց կատարի գեղեցկայարմար շինումն տաճարին... որ աւր մետասան էր Արաց ամսոյ [=664 թ. Նոյեմբերի 20]...»); յաջորդ տարի իշխանը խնամութիւն է հաստատում ներխուժած հոների հետ՝ իր անդրանիկ որդուն պսակելով նրանց արքայադստեր հետ (Բ.իզ, էջ 190-191. «Մինչդեռ նստէր խաղաղացեալ ի գահոյս իւր արին Ջեւանշէր, ի միւս ամին լինէր ձմեռնային եղանակի հասարակաւորութիւն, եւ թագաւորն Հոնաց յոգնահպազար հեծելովք...»); եւ դա նաեւ նրա տիրակալութեան 28-րդ, իսկ արաբներին «ընդ լծով ծառայութեան մտնելու» առաջին տարին էր՝ 665 թ.; դա նաեւ «վեցերորդ ամ էր»՝ հաշուած խալիփայութեան մայրաքաղաքը Դամասկոս տեղափոխելու պահից («հարաւայնոցն [a հարաւային-

---

բիոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը, սն. 230-231; **Գոյնի՝** On the newly-discovered campaign to Armenia and Atropatene in 659-660 by Constans II, – 21st International Congress of Byzantine Studies, London, 21-26 August 2006, Communications, p. 128-129.

[1] **М. В. Кривов**, Об одном малоизвестном походе Константа II в Закавказье, – ВВ, т. 48, Москва, 1987, с. 153-155. Հմմ. **S. Broch**, An early Syriac Life of Maximus the Confessor, – AB, 1973, vol. 91, fasc. 3-4 (Bruxelles), p. 319;

[2] **Դասխ.**, Բ.իզ, էջ 191; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 840, նախ. 14:

ցն] փոխելոյ զթագաւորութիւնն իւրեանց յաշխարհն Ասորեստանի, զի թողեալ զերկիր աղախնոյն՝ արկանէին զաթոռ տէրութեանն ի Դամասկոս»), որը հեղինակը հաւաստիօրէն վերագրում է 659-ին[1]:

«684 թ. պատմութեան» հեղինակն իր երկի մէջ ներառել է նաեւ Հայոց վաղ միջնադարի բանաստեղծութեան մի եզակի նմուշ՝ Դաւթակ Քերթողի «Ողբք ի մահն Ջեւանշերի մեծի իշխանին» ստեղծագործութիւնը, որը գրուած է ակրոստիքոսով («ըստ աղփայփէտաց գլխակարգութեանց»)[2]: Այն պահպանուել է (իսկ մեր կարծիքով՝ առաւել մեծ հաւանականութեամբ հէնց շարադրուել է) մինչեւ Ճ տառի քառեակը ներառեալ: Ժթ դ. սկզբում ՊԱ-ի հնագոյն a գրչագրից (1289 թ., Յովհաննավանք) կատարուած մի ընդօրինակութեան մէջ (միայն պատառիկի տեսքով պահպանուած այդ գրչագրից առաջացել է ձեռագրերի Ար ենթախումբը) Դաւթակի «Ողբք»-ին «շարունակութիւն» է աւելացուած (Մ-Ք քառեակներով), որը, չնայած հնին նմանակուած շարադրելու փորձին, կարող է գնահատուել լոկ իբրեւ ուշ բանաստեղծութեան նմուշ[3]:

684 թ. մեր անանուն հեղինակը, թերեւս, ծագում էր, ինչպէս եւ իր գլխաւոր հերոսներից մէկը՝ Իսրայէլ եպիսկոպոսը, կենտրոնական Արցախի Մեծ Կուանք (կամ Մեծ Կողմանք) գաւառից, քանի որ մանրամասն ծանօթութիւն է դրսեւորում հէնց այդ գաւառին ու յարակից տեղանքներին (այդ թւում՝ միկրոտեղանուններին): Դա՝ ի տարբերութիւն, օր.՝ Գարդմանի գաւառի (այդպէս՝ նաեւ Արցախի եւ Ուտիքի ուրիշ գաւառների), չնայած Գարդմանում էր գտնւում իր միւս գլխաւոր հերոսների՝ «Միհրանեան» – Գարդմանացի իշխանների բուն կենտրոնը:

Երկն աւարտւում է 682 թ. վերջին կամ արդէն 683-ին եղած դէպքերի յիշատակմամբ (Իսրայէլ եպիսկոպոսի վերադարձը Հոնաց երկրից եւ նրա առաքելութեան շարունակման հետ կապուած վէճերն ու նամակագրութիւնը): Վերջնական շարադրանքը կատարուել է հաստատապէս նախքան 685 թ. ամռանը տեղի ունեցած հիւսիսկովկասեան խազարների աւերիչ արշաւանքը, որին զոհ գնացին Հայոց եւ Վրաց իշխանները (686 թ. շարադրուած իր «Ժամանակագրութեան» մէջ Փիլոն Տիրակացին յիշատակում է նրանց զոհուելու օրը՝ «յամսեանն Սահմի, որ աւր Ժ էր ամսոյն, ի ՃԼԴ թուականին Հայոց», այսինքն՝ Օգոստոսի 16-ը[4]): Այստե-

---

[1] **Դասխ.**, Բ.իէ, էջ 194; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 840, նախ. 9: Հմմ. **А. А. Акопян**, О хронологии последних событий в "Истории 684 года", с. 36; **Նոյնի՝** Հայ-բիւզանդական յարաբերութիւնները Է դարի կէսերին..., էջ 399, ծն. 80:

[2] **Դասխ.**, Բ.իէ-իը, էջ 192-201; **Անանուն**, 684 թուականի պատմութիւն, էջ 828-837: Ջեւանշէրի դաւադիր սպանութիւնը եւ Վարազ Տրդատի իշխանութեան սկիզբը ճշգրիտ թուագրում են (անկախ՝ դեռ շրջանառուող սխալներից) 680 թ. Սեպտեմբերով (տե՛ս **А. А. Акопян**, О хронологии последних событий в "Истории 684 года", с. 26-33).

[3] Տե՛ս **Ա. Հակոբյան**, Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմության» ձեռագրերը, էջ 117-122:

[4] **Փիլոն Տիրակացի**, Ժամանակագրութիւն, էջ 969, նախ. Գ.415: Հմմ. **Բ. Առաքելյան**, Ժամանակագրական դիտողություններ, – «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի, 1941, հ՚ 1, էջ 63; **Հ. Ս. Բադալյան**, Օրացույցի պատմություն, էջ 325 (Սահմի ամիսն սկսւում էր Օգոստոսի 7-ին):

ղից էլ բխում է մեր երկի՝ մօտաւորապէս 684-ին շարադրուած լինելու մասին ենթադրութիւնը եւ ըստ այդմ՝ նաեւ նրա պայմանական անուանումը։

Ի դէպ, 685 թ. խազարական արշաւանքի մասին յայտնող՝ ժամանակով ամենից մօտ հայ հեղինակները (Փիլոն Տիրակացին եւ, թերեւս, նրան հետեւող Ղեւոնդ պատմիչը) տեղեկացնում են, որ աւարառուների զոհը դարձան Հայոց, Վրաց ու նաեւ Աղուանից «իշխան»-ները[1]։ Սակայն, ըստ ամենայնի՝ աւելի ճիշտ պէտք է համարել երեք դար յետոյ իր երկը շարադրած Ստեփաննոս Ասողիկի տեղեկութիւնը, ըստ որի սպանուել էին միայն Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնեանը (661-685) եւ անունով աղբիւրներում չարձանագրուած Վրաց իշխանը («Ի ՃԼԴ թուականին տիրեցին հիւսիսային զաւրքն, որ են Խազիրք, եւ սպանին ի պատերազմին զիշխանն Հայոց եւ զՎրացն»)[2]։ Իսկ «Աղուանից իշխան» Վարազ Տրդատի անունը շարունակում է յայտնուել ե՛ւ Ասողիկի, ե՛ւ Մովսէս Դասխուրանցու յաջորդ դրուագներում։ 685 թ. աւերիչ արշաւանքից անմիջապէս յետոյ նրա իշխանութեան մասին անուղղակի վկայութիւն է նաեւ ՊԱ-ի Գ.ժբ գլխում յայտնուած՝ սովի յիշատակութիւնը. «Եւ եղեւ ի նմին աւուրս Վարազ Տրդատայ սով անտանելի յԱղուանից սահմանս։ Վասն որոյ առաքեցաւ ի յոմանց, եթէ՝ «Ես՝ կորեակ, ի Շակաշէն գաւառի ծածկեալ կայի ի վայրին Կակուայ [bclrv Կակուղայ], եւ զանց առնէին զինեւ բազմութիւնք գնողաց եւ ոչ գտանէին զիս։ Եկն ժամ բարի, որ եղբայրն իմ Սուվ տիրանայր, եւ ահա գտայ ես ելեալ [a երեւելի] ի սեղանն Վարազ Տրդատայ իշխանի եւ Եղիազարայ կաթողիկոսի, եւ որք կերանն զիս՝ արիւնաբերք եղեն»»։ Քանի որ «684 թ. պատմութիւն»-ից գիտենք, որ Եղիազար կաթողիկոսի աթոռակալած տարիներից (680-686[3]) առաջին չորսը բարգաւաճ ժամանակ են եղել, ապա դժուար չէ նկատել, որ սովը յաջորդել է 685 թ. խազարական արշաւանքին։ Ղեւոնդ պատմիչի խօսքերից երեւում է, որ այդ տարի սով է տարածուել նաեւ բուն Հայաստանում. Գրիգոր Մամիկոնեանի վախճանից յետոյ (685 թ. Օգոստոս) իշխան դարձաւ Աշոտ Բագրատունին, եւ «յառաջնում ամի իշխանութեան նորա երեւեցաւ աստղն զարմանալի տեսլեամբ վարսաւոր, զի ճաճանչն շողիցն սիւնաձեւ յիւրմէն փողփողէր զլոյսն յետոյ ինքեան, որ անուանեալ կոչէին աստղ գիսաւոր, որ եղեւ նշանակ սովոյ եւ սրոյ եւ մեծի սասանութեան»[4]։

---

[1] **Փիլոն Տիրակացի**, Ժամանակագրութիւն, էջ 969, նախ. Գ.415; Պատմաբանութիւն **Ղեւոնդեայ**, գլ. Ե, էջ 31 (հմմ. **Ղեւոնդ**, գլ. Դ, էջ 16)։

[2] **Ասողիկ**, գլ. Բ.բ, էջ 100։

[3] Տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 277; **նոյնի՝** О хронологии последних событий в "Истории 684 года", с. 29-31.

[4] Պատմաբանութիւն **Ղեւոնդեայ**, գլ. Զ, էջ 35 (հմմ. **Ղեւոնդ**, գլ. Ե, էջ 17)։

ԳԼՈՒԽ Գ

ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ ԻՇԽԱՆԱՏՈՀՄԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՓԱՅՈՒԹԵԱՆ ԹՈՒԼԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Բաժին 1

*«ԻՇԽԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ»-Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ «ԱՌԱՆՇԱՀԻԿ» ՈՒ «ՄԻՀՐԱՆԵԱՆ» ԻՇԽԱՆԱՏՈՀՄԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ինչպէս ցոյց տրուեց վերեւում՝ «Աշխարհացոյց»-ի վերլուծութեանը նուիրուած ենթաբաժնում, այսրկովկասեան քրիստոնեայ երկրների լուրջ ինքնավարութիւնն ապահովող Հայոց, Վրաց եւ Աղուանից «իշխանների»՝ հաստատութիւնները (ինստիտուտները), ամենայն հաւանականութեամբ՝ հրամանագրուել-հիմնադրուել են 615/616 կամ 617/618 թուականներին Սասանեանների տէրութեան մայրաքաղաք Տիզբոնում գումարուած՝ այսպէս կոչուած «Պարսից ժողովում» քննարկուած եւ ընդունուած վարչական ռէֆորմների համատեքստում: Տեսանք նաեւ, որ ըստ Մովսէս Դասխուրանցու երկի զանազան մասերում պահպանուած տոհմաբանական տեղեկութիւնների՝ «Աղուանից իշխան»-ի պաշտօնին առաջինն արժանացել է Գարդմանի տիրակալ Վարազ-Գրիգորը (արքայից արքայ Խոսրով Բ Ապրուէզի առջեւ Աղուանից Վիրոյ կաթողիկոսի միջնորդութեամբ): Հաւանական է ենթադրել, որ «Հայոց իշխան»-ի պաշտօնին «Պարսից ժողովից» յետոյ նշանակուել էր նախկինում «Վրկանի մարզպան» Սմբատ Բագրատունին (իսկ «Վրաց իշխան»-ի պաշտօնին՝ Գուարամ Ա-ն, որն ապա նաեւ կուրապաղատ էր դարձել)[1]:

Գրականութեան մէջ Զ-Թ դարերի Աղուանից երկրի պատմութիւնը սովորաբար դիտարկւում է Հայոց Արեւելից կողմանց երկու խոշոր իշխանական տոհմերի՝ «Առանշահիկների» եւ «Միհրանեաննների» անհաշտ պայքարի յեռնախորքի վրայ: Ընդ սմին նրանց մասին տեղեկութիւնները, որպէս կանոն, քաղուել են միայն Մովսէս Դասխուրանցու շարադրած տոհմաբանական աւանդազրոյցից (յատկապէս երկի Բ.ժէ գլխում), որի մէջ պատմականը վիպականից զատելու քննական յստակ փորձ մինչեւ վերջերս չէր կատարուել[2]:

ՊԱ-ում Առանշահիկներ *(կամ* Եռանշահիկներ*) անուան տակ*[3] *հանդէս են գալիս Խորենացու յիշատակած՝ Հայկ Նահապետից սերող Առան նահապետի ուշ սերունդները, որոնք մի քանի հատուածում կոչուած են ուղղակի «Հայկազնեայք»*

---

[1] Տե՛ս աստ, էջ 132-133:

[2] Հմմ. **Ա. Յակոբեան**, «Առանշահիկների» եւ «Միհրանեաննների» տոհմաբանական առասպելի պատմական հիմքերը, – Հայագիտական համաժողով 2 (Երեւան, հոկտեմբերի 17-19, 2013), Զեկուցումների ժողովածո, Եր., 2014, էջ 118-125:

[3] Տե՛ս **Դասխ.**, Ա.իէ, էջ 97 («վեհազգի ոմն իշխան Վարազ Փերոժ անուն՝ յԱռանշահիկ տոհմէ»); Բ.ժէ, էջ 172 («զնախնական ազգն Հայկազնեաց՝ Եռանշահիկս», «Զարմիհրն Եռանշահիկ»); Գ.ժզ /ժէ/, էջ 320 («զԵռանշահիկն Վաչագան ի Պատրիկեան Աղուանից իշխան»); Գ.ժթ /ի/, էջ 326 («շքեղատեսակն Սահլի Սմբատեան՝ Եռանշահիկն տէր»):

կամ «Հայկազունի»[1]: Ըստ Պատմահօր[2]՝ Մեծ Հայքում Պարթեւ Արշակունիների իշխանութիւնն աւանդաբար Ք. ա. Բ դարում հաստատած Վաղարշակ արքան, որի կերպարի տակ իրապէս հանդէս է գալիս առաւելաբար Տրդատ Ա-ն (Ք. յ. Ա դար[3]), Հայաստանի հիւսիս-արեւելեան «կողմնակալ բիւրաւոր» էր նշանակել Հայկից սերող եւ Սիսական/Սիւնիք նահանգը խորհրդանշող Սիսակի սերնդից Առանին, ումից էլ ծագել են Ուտիք եւ Արցախ նահանգների տարածքի իր ժամանակի չորս իշխանատոհմերը՝ Ուտէացւոց (Ա խմբի ԶԶ՝ Աւտէացւոց), Գարդմանացւոց, Ծաւդէացւոց (Տե՛ս խմբի ԶԶ՝ Ծովդէացւոց) եւ Գարգարացւոց («Զօրանամակ»-ում կոչուած՝ Գ[ո]ր[ո]զճունի, իսկ «Ներսէսեան գահնամակ»-ում՝ Գորոզուայֆ[4]), ընդ որում՝ Սիսակի «աղու» (=«քաղցր», «մեղմ») մականունից այդ տարածքն անուանուել է «Աղուանք»: Ի դէպ, քաղելով Խորենացու պատումը՝ Մովսէս Դասխուրանցին որոշ շեղումներ է արել. օր.՝ «Աղուանք»-ի մէջ ընդգրկել է նաեւ Կուրի ձախափնեայ, կովկասահայեաց տարածքները՝ դրանց վերագրելով այն, ինչ աղբիւրը գրում էր Եգերքի ու Վիրքի հիւսիսակողմերի մասին[5], բացի այդ «աղու» մականու-

---

[1] **Դասխ.**, Բ.ժէ, էջ 172 («զնախնական ազգն Հայկազնեաց»); Գ.իա /իբ/, էջ 336 («Ապու Ալի Աղուանից իշխանն Հայկազնի»); Գ.իբ /իգ/, էջ 338 («ի Հայկազնեաց արանց խնամաւորիլ Միհրական տոհմին»); էջ 340 («...Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ, որ է ի տոհմէն Հայկայ»): Հայկազուն է կոչուած նաեւ Թ դ. վերջի Սիւնի իշխանը. «մեռաւէր Աշոտ իշխանն Հայկազնի», «վերափոխի... եւ իշխանն Սիւնեաց Աշոտ» (Գ.իա /իբ/, էջ 336-337):

[2] **Խոր.**, Բ.ը, էջ 113; ՄՀ, հտ. Բ, էջ 1859:

[3] Հմմ., օր.՝ **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 431-433.

[4] Տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 281-282; **նոյնի**՝ «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զօրանամակ», էջ 537-538, 546: Հմմ. **Ա. Հ. Հակոբյան**, Գարգարացիները ըստ անտիկ եւ հայկական սկզբնաղբյուրների, – ՊԲՀ, 1982, հ՝ր 4, էջ 122-123: Անկասկած, հէնց այս *Գորոզուայք-Գորոզճունի* (=**Գորոզուացի*) իշխանատոհմն է, որ Խորենացու մօտ (գլ. Բ.ը, էջ 113) հանդէս է գալիս *Գարգարացիք* անուան տակ՝ իբրեւ վերջինը (չորրորդը) Մեծ Հայքի հիւսիս-արեւելեան կողմի («առ մեծ գետովն... որ անուանի Կուր... ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն, որ ասի Հնարակերտ») «մեծ եւ անուանի եւ բազմաբիւր» կուսակալութեան չորս ազգակից իշխանութիւններից: Յիշենք, որ այդ անուանատարբերակը առկայ է լոկ Պատմահօր մօտ եւ ստեղծուած է հէնց նրա կողմից, ընդ որում՝ հիմք ունենալով մի գրչական վրիպակ Ագաթանգեղոսի երկի հիմնական խմբագրութեան վաղ ձեռագրերում, որոնցում «Գ*ար*գարացւոց» է կոչուել *Գուգարացւոց* բդեշխը (տե՛ս **Յ. Համբարեան**, Գուգարացի՞ք, թէ՞ Գարգարացիք, – ՀԱ, 1910, էջ 242; **Ա. Հ. Հակոբյան**, Գարգարացիները ըստ անտիկ եւ հայկական սկզբնաղբյուրների, էջ 122-123; **նոյնի**՝ Албания-Алуанк..., с. 64-66). Այժմ պարզ է նաեւ, որ Խորենացու «վրիպման» պատճառների թւում լիովին կարող էր լինել նաեւ *Գորոզուաց* իշխանների տիրոյթներում *Կարկառ* անուանումով (խօսուածքներում նաեւ՝ *Գարգառ*) ճշանակալից քաղաքի մասին իր ունեցած տեղեկանքն (ինֆորմացիան): Հմմ. **Գ. Սարգսեան, Ա. Յակոբեան**, Նորայայտ Կարկառ քաղաքատեղին Արցախում, – «Վարձք», հ՝ր 5, 2012, էջ 58, ծն. 35:

[5] **Դասխ.**, Ա.դ, էջ 8 («ի կարգելն իւրում զհիւսիսայինսն, կոչեաց զվայրենի եկամուտ ազգս, որ ի դաշտին հիւսիսոյ, կամ որ զստորոտովն Կաւկասու, կամ ի հովիտս, կամ ի խորաձորս՝ զհարաւով մինչեւ ցմուտս դաշտին, պատուէր առնէր զաւազակութիւն եւ զմարդադաւութիւն թողուլ եւ հարկաց արքունի հնազանդ կալ. ապա կարգեաց նոցա առաջնորդս եւ վերակացուս...»): Հմմ. **Խոր.**, Բ.զ, էջ 108-109; ՄՀ, հտ. Բ, էջ 1854 («դանձայ զհիւսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց... Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին հիւսիսոյ եւ որ զստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, եւ որ ի հովիտս կամ ի ձորս երկայնաձիգս՝ խորացեալս ի լեռնէն, որ զհարաւով իջեալ

նը վերագրել է Առանին[1] (ցաւօք, այդ շեղումները թէ՛ անցել են որոշ հետագայ պատմիչների, թէ՛ շտապողաբար ընդունուել մերօրեայ գրականութեան մէջ[2]):

Ուշադիր քննութիւնը ցոյց է տալիս, որ Ե դ. վերջերին շրջանառուած եւ Խորենացու օգտագործած[3] այս տոհմաբանական աւանդազրոյցն ուշ ծագում ունի եւ զուրկ է իրական պատմական հիմքից: «Առան» անձնանունն իսկ՝ որպէս թուարկուած չորս հայկական իշխանութիւնների ընդհանուր նախնու անուն, կարող էր ի յայտ գալ լոկ 428 թ. Հայոց Արշակունեաց թագաւորութեան վերացումից յետոյ, երբ Սասանեանները 2-2,5 տասնամեակի ընթացքում Ուտիքն ու Արցախը մտցրին Կուրի ձախափնեակում գտնուող Աղուանից թագաւորութեան (Կապաղակ մայրաքաղաքով) հիմնաբազայի վրայ իրենց ստեղծած «Առան» («Աղուանք», «Ռան») մարզպանութեան մէջ: Դրան յաջորդած տարիներին Կուրի աջափնեակի հայ բնակչութիւնն իր նոր մարզպանութեան այդ անուններն ընդունեց (միջնադարի համար բնորոշ աշխարհընկալմամբ) որպես «իր երկրի» սովորական անուանումներ, ինչի արդիւնքում էլ ի յայտ եկաւ դրանց ստուգաբանման փորձը հայկական լեզուա-պատմա-մշակութային յենքի վրայ (օր.՝ հայերէն «աղու»-ից):

*Ընդ սմին, Մովսէս Դասխուրանցուն ժամանակակից իշխանատոհմի «Առանշահիկ» անուանաձեւի (=«Առանշահեան», «Առանշահական»[4]՝ փխն., օր.՝ «*Առա-*

միևչ ի դաշտաբերանն մեծ, պատուէր տալով զաւազակութիւն եւ զմարդադաւութիւն ի բաց քեցել յինքեանց եւ հրամանաց եւ հարկաց արքունի հպատակ լինել, որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա՝ առաջնորդս եւ իշխանս հանդերձ գեղեցիկ կարգաւք հաստատեսցէ: Եւ արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք եւ վերակացուաւք յիւրմէ: Եւ ինքն արձակեալ զարեւմտեայ բազմութիւնն՝ իջանէ ... մերձ ի սահմանն Ծարայի»):

[1] **Դասխ.**, Ա.դ, էջ 8 («յորոց գլխաւոր ոմն ... կարգի հրամանաւն Վաղարշակայ, Առան [*bclrv* զԵռան] անուն, որ ժառանգեաց զդաշտս եւ զլերինս Աղուանից՝ ի գետոյն Երասխայ միւնչեւ ցամուրն Հնարակերտ: Եւ աշխարհն յաղագս քաղցրութեան բարուց նորա անուանեցան Աղուանք, զի «աղու» ձայնէին զնա վասն քաղցրութեան բարուցն: Ի սորա՝ Առանայ ծննդոց, ասեն, անուանիք եւ քաջք կարգեցան կողմնակալք բիւրաւորք ի Պարթեւէն Վաղարշակայ: Եւ ի սորա զաւակէ, ասեն, սերեալ զազգս Ուտէացւոց, Գարդմանացւոց եւ Ծաւդիացւոց եւ Գարգարացւոց [*a չիք* եւ Ծաւդիացւոց...Գարգարացւոց] իշխանութեանց»): Ի դէպ, Ղազախ քաղաքից արեւմուտք պեղուած Սարիթեփէ հնավայրը (**Д. А. Халилов**, Поселение на холме Сары-тепе: Казахский р-н, – СА, 1960, № 4, с. 68-75; **Ф. А. Османов**, История и культура Кавказской Албании..., с. 89-90), գուցէ, կարող է լինել մեր Հնարակերտը:

[2] Տե՛ս, օր.՝ **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 4, 146.

[3] Արտ. Մաթեւոսեանի ճշտմամբ՝ Խորենացու «Պատմութեան» ստեղծման ժամանակը, ըստ ՄՄ Ձեռ. 2679-ի պահպանած մի եզակի ժամանակագրական աղիւսակի (թ. 162ա. «Մովսէս Խորենացի փիլիսոփա[յ] *և* մատենագիր / ՆՀԴ», հմմ. Մատենաի գիտութեան եւ հաւատոյ **Դաւթի քահանայի**, հտ. Բ, էջ 233)՝ 474 թուականն է: Տե՛ս **Ա. Ս. Մաթեւոսյան**, Մովսես Խորենացին եւ Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը, – ՊԲՀ, 1989, հմր 1, էջ 220-234 (վերահրատ.՝ **նոյնի**՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը, Եր., 1995, էջ 205-222): Բայց, թերեւս, Պատմահայրն իր երկի վերջին գլուխ «Ողբ»-ն աւարտել է լոկ մի քանի տարի անց՝ 483-ին, երբ Ծարմանայնի դաշտում (Գուգարքի Կանգարք գաւառում՝ Տայքի սահմաններից ոչ հեռու, Կուրի ափին, Ձլդրը լճից հիւսիս) զոհուեց նրա մեկենասը՝ հակասասանեան ապստամբութիւնը գլխաւորող (Վահան Մամիկոնեանի հետ միասին) Սահակ Բագրատունի մարզպանը:

[4] Ըստ Մուրտազալի Գաջիեւի (**М. С. Гаджиев**, Гемма-печать царя Албании Асвагена, – ВДИ, 2003, № 1, с. 118)՝ «Առանշահ*իկ*»-ի «*-իկ*»-ը կարող է դիտարկուել իբրեւ փոքրացա-

*նեաՆք»-ի) պատմական հիմքում, հետեւելով Ա. Կրիմսկուն եւ այլոց[1], առաւել մեծ հաւանականութեամբ, պէտք է վերականգնելի համարել Բուն Աղուանքի վերջին Արշակունի թագաւոր եւ Սասանեաններից լայն մարզպանական լիազօրութիւններ եւս ստացած Վաչագան Բ Բարեպաշտի (485-523) պաշտօնի իրանական պաշտօնական «*Առանշահ» անուանումը (=«Առանի թագաւոր»): Վերջին եզրոյթը մեզ հասած աղբիւրներում ուղղակիօրէն արձանագրուած չէ, սակայն կարող է վերականգնուել այն փաստի գուգադրումով, որ ըստ ուշ սասանեան պատմական աւանդոյթից արաբալեզու աղբիւրներին անցած վկայութիւնների (ալ-Բալազուրի, Իբն Խորդադբէհ, Իբն ալ-Ֆակիհ, ալ-Մասուդի, ալ-Իսֆահանի, Իբն ալ-Ասիր, «Դերբենդ-նամէ» եւն)՝ Կովկասեան լեռնաշղթայով ու Ջող/Ճորայ/Դերբենդով ձգուող ռազմավարական սահմանագծի ամրացման միջոցառումների շրջանակում խոսրով Անուշիրուան արքայից արքան (531-579), բայց, ենթադրաբար, արդէն նրա հայր Կաւատ Ա «շահանշահը» (488-496, 498-531) «շահ»-ական, այսինքն՝ թագաւորական տիտղոսով էր օժտում Կովկասեան լեռների այս եւ այն կողմն ընկած ցեղերի ու վասալ պետական կազմաւորումների տիրակալներին[2]՝ կոչելով նրանց (որոշ հեղինակների բառերով՝ «իրենց երկրները») «Շիրւանշահ», «Վայզանշահ» («Վիրանշահ» = Լիփինք), «Խուրսանշահ» (=Լակզ), «Բաբրանշահ», «Վարդանշահ» (=Մասքութ), «Վարազանշահ» («Վահրարզանշահ» = Սարիր), «Ալանշահ», «Ֆիլանշահ», «Ջուրջանշահ» (=Վիրք), «Տումանշահ», «Լուբանշահ», «Տաբարսարանշահ»[3]:

կան (դիմիՆուտիւ) վերջածանց, ինչպէս «ԽՆչիկ» անձնանուան մէջ է (Վաչագան Բարեպաշտի դուստրը ըստ «Վաչագանի վէպ»-ի՝ **Դասխ.**, Ա.իգ, էջ 85. դաղստանցի արեւելագէտը յղում է՝ **Г. А. Климов**, Агванский язык, – В кн.: Памяти Георгия Андреевича Климова. Дагестанский лингвистический сборник, вып. 4, Москва, 1997, с. 12). Սակայն շատ աւելի հաւանական է այն համարել հայերէնում պատկանելութիւն ցոյց տուող *իկ* մասնիկը, որն առկայ է բազմաթիւ ցեղանուններում, օր.՝ «պարս*իկ*», «դելմ*իկ*», «տաճ*իկ*», «հնդ*իկ*», «խուժ*իկ*», «պահլաւ*իկ*», «ռուզ*իկ*», «արապ*իկ*» եւն (ըստ լեզուաբանների՝ նմանատիպ կազմութիւն է ունեցել նաեւ հայերիս «*հայ*իկ*» ինքնանուանումը, որն *Ի*-ի սղմամբ վերածուել է *Հայկ* նահապետի անուան). տե՛ս **Г. Капанцян**, Историко-лингвистические работы, т. II, Ер., 1975, с. 82; **Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 174; **А. Е. Петросян**, Армянский эпос и мифология. Истоки. Миф и история, Ер., 2002, с. 64-69.

[1] Տե՛ս **А. Е. Крымский**, Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании), с. 290, 294-295; **նոյնի՝** Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании): Шеки, с. 371; **М. С. Гаджиев**, Гемма-печать царя Албании Асвагена, с. 118-119.

[2] Սասանեանների տուեալ գործելաոճի սկիզբը գուցէ եւ դրել էր արդէն Յազկերտ Բ արքան՝ 438/439-457 (հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 119-120). Իսկ Իբն Խորդադբէհը վերագրում էր դա դեռ արքայատոհմի հիմնադիր Արտաշիրին (տե՛ս ստորեւ):

[3] Տե՛ս **Н. А. Караулов**, Сведения арабских писателей о Кавказе, – СМОМПК, вып. XXXI, с. 15; вып. XXXII, с. 15; вып. XXXVIII, с. 41, 43; **Баладзори**, Книга завоевания стран, Текст и пер. **П. К. Жузе**, Баку, 1927, с. 7; **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 190-191; **Ибн Хордадбех**, Книга путей и стран, Пер. с арабского, комментарии... и карты **Н. Велихановой**, Баку, 1986, с. 161; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 267; 576; **Իբն ալ-Ասիր**, էջ 42; Дербент-наме (Румянцевский список), – В кн.: **А. Р.**

*Իբն Խորդադբէհն իր «Թագաւորներ, որոնց տիտղոսներ էր տուել Արտաշիր արքան» ենթագլխում «Բուզուրգ Քուշան-շահ»-ի, «Ադարբադգան-շահ»-ի, «Բուզուրգ Արմանիան-շահ»-ի, «Թուրան-շահ»-ի, «Հինդուան-շահ»-ի, «Կաշմիրան-շահ»-ի եւ մօտ երեք տասնեակ ուրիշների շարքում նշում է նաեւ «ալ-Լան-շահ (Մուկանիյայում)» (դուցէ, սրբագրելի՝ «Ար-Րան-շա՞հ») եւ «Բալասաջան-շահ» «թագաւորական տիտղոսներ»-ը[1]: Ալիխ Կոլեսնիկովի դիտարկմամբ՝ Իրանի տէրութեանը ենթակայ մանր պետական կազմաւորումների տիրակալներին «շահ»-ական տիտղոսներ բաժանելու գործելաոճը եղել է կանոնակարգուած եւ արձանագրուել է Սասանեան պաշտօնական գրագրութեան պատկերը ներկայացնող «Տանսարի նամակում»: Այստեղ կարդում ենք. «Եւ ոչ մէկին, որ մեր տոհմից չէ, թոյլատրուած չէ շահ կոչել՝ բացի նրանցից, ովքեր կառավարիչներ են սահմանային մարզերի եւ ալանների եւ արեւմուտքի մարզերի եւ Խորեզմի [իմա՛ Խորասանի – Ս. Յ.]»[2]: Մ. Դաջիեւի ուշագրաւ վարկածով՝ բնագրի բնօրինակ փաստաթղթում (մեզ է հասել նրա լոկ կրկնակի թարգմանութիւնը՝ Ը դարում միջին պարսկերէնից արաբերէն, սրանից էլ ԺԳ դարում՝ նոր պարսկերէն) անգամ կարելի է «ալանների» ընթերցման փոխարէն վերականգնել «*առանների (*l'n'n Ārānān*)», այսինքն՝ աղուանների, նկատի առնելով վերոնշեալ արաբական աղբիւրների տեղեկանին եւ այն, «որ միջին պարսկերէն գրի մէջ l եւ r տառերը դրւում էին նոյն նշանով»[3]:*

Ըստ Դասխուրանցու հրամցրած տոհմաբանական աւանդապատումի (Բ.ԺԷ գլխում, նաեւ՝ Գ.իբ /իգ/ եւն)՝ «Միհրանեան» տոհմը սերում էր իբրեւ թէ Սասանեան Խոսրով Բ Ապրուէզ արքային (590-628) «ազգակից» ոմն Միհրանից, որը Բնեան Խոսրով ու Վստամի 595 թ. խռովութեան ճնշումից յետոյ 30 հազ. «երդով» փախել էր Հիւսիս, բայց խազարների մօտ չհասած՝ Խոսրովի ներման «հրովարտակով» հաստատուել էր Գարդման գաւառում, ուր դաւադրաբար սպանելով տեղի «Առանշահիկներից» 12 իշխանների՝ գրաւել էր նրանց հողերը: Միհրանի թոռան որդի

Шихсаидов, Т. М. Айтберов, Г. М.-Р. Оразаев, Дагестанские исторические сочинения, Москва, 1993, с. 38; **М. А. Гизбулаев**, *Тарих* Халифы ибн Хаййата как источник по истории Дагестана VII–VIII вв., – "Вестник" СПбГУ, Сер. 13, Востоковедение и африканистика, 2016, вып. 4, с. 25-26; **Ղոյնի**՝ Арабский источник о средневековой истории Восточного Кавказа: *Китаб фл-булдан*, с. 133; Дербент-наме [**Мухаммада Аваби Акташи**] в переводе **Алияра б. Казима** с языка тюрки на персидский язык..., [Пер. с перс. языка, предисловие **П. М. Алибековой**...], Москва, 2017, с. 13. Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 119; **М. С. Гаджиев**, Гемма-печать царя Албании Асвагена, с. 118; **А. К. Аликберов**, Эпоха классического ислама на Кавказе. Абу Бакр ад-Дарбанди и его суфийская энциклопедия Райхан ал-хака'ик (XI-XII вв.), Москва, 2003, с. 71-72.

[1] Տե՛ս **Ибн Хордадбех**, Книга путей и стран, с. 61; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 437:

[2] **M. Boyce**, The Letter of Tansar: Tansar-name, Rome, 1968; **А. И. Колесников**, Иран в начале VII века, – ПС, вып. 22 (85), Ленинград, 1970, с. 20, 94; **Ղոյնի**՝ Завоевание Ирана арабами (Иран при "праведных" халифах), Москва, 1982, с. 50. Հմմ. **М. С. Гаджиев**, Гемма-печать царя Албании Асвагена, с. 118.

[3] Անդ, էջ 118-119:

Վարդանը, ով արդէն քրիստոնէութիւն էր ընդունել, իբր նոր հաշուեյարդար էր տեսել միւս Առանշահիկների հետ՝ կենդանի թողնելով լոկ իր փեսայ Ջարմիհրին:

Բ.ժէ գլխի բուն տոհմացանկը Դասխուրանցին, հաւանաբար, քաղել է «684 թ. պատմութիւն»-ից, որի ականատէս հեղինակը 630-680-ական թթ. անցքերը շարադրում է (ՊԱ-ի Բ.ժը-խե գլուխներում) բաւականին հանգամանալից եւ հաւաստի: Սակայն այդ տոհմացանկում Միհրանի 6-8-րդ սերունդներ համարուող է դարի Աղուանից իշխաններ Վարազ Գրիգորի, Ջեւանշէրի եւ Վարազ Տրդատի՝ իբրեւ թէ սասանեան ծագման մասին ո՛չ նոյն «684 թ. պատմութիւն»-ը, ո՛չ էլ այլ հաւաստի աղբիւրներ որեւէ բան չգիտեն: Բացի այդ, Դասխուրանցու Բ.ժէ գլխի շարադրանքն իր լեզուով ու ոճով էապէս տարբերւում է «684 թ. պատմութեան» բառացի արտագրուած կտորներից, ուստի, անկասկած, ամբողջացուած է հէնց ժ դարի պատմիչի կողմից, ով ուրեմն վերապատմել է վերոնշեալ տոհմաբանական աւանդապատումը՝ լոկ կցելով այն Վարազ Գրիգորի նախնիների տոհմացանկին:

Մովսէս Դասխուրանցու ներկայացրած ծագումնաբանական աւանդապատումը լիովին վիպական է եւ, անկախ մերօրեայ գրականութեան մէջ դեռ առկայ մտայնութիւնից[1], նոյնպէս զուրկ է իրական պատմական հիմքից: 595-626 թթ. միջեւ ընկած երեսնամեակում պատկերացնելի չէ ինչպէ՛ս վեց իշխանական սերունդների յաջորդումը, այնպէ՛ս էլ՝ ծնունդով պարսիկ որեւէ իշխանի՝ քրիստոնէութիւն ընդունելը եւ ո՛չ թէ իր իրաւունքներից չզրկուելը, այլ պարզապէս մահուան չդատապարտուելը (հաւատափոխների՝ պրոզելիտների, համար իր պապ Անուշիրուանի «կանոնակարգած» պատժի՝ անյապաղ մահապատժի համեմատ՝ Մօրիկ քրիստոնեայ կայսերը «հայր» կոչող Խոսրով Ապրուէզի միակ մեղմացումն այն էր, որ մեղաւորին նախապէս մէկ տարի բանտում էին պահում՝ մազդէականութեանը վերադառնալու հնարաւորութիւն տալով)[2]: Նման բան, թերեւս, ինչ-որ չափով հնարաւոր էր միայն Վաղարշ արքայից արքայի (484-488) եւ նրանից արքայական պատուանուն ու լրացուցիչ մարզպանական լիազօրութիւններ ստացած Վաչագան Բ Բարեպաշտ Աղուանից թագաւորի (485-523) օրօք, այն էլ լոկ՝ ծնունդով քրիստոնեայի դէպքում, ով նախկինում ստիպուած զրադաշտականութիւն էր ընդունել (գուցէ, այդ մեղմացումը դեռ կար նաեւ Կաւատի առաջին տարիներին):

Նկատենք, որ ՊԱ-ում հէնց Վաչագան Բարեպաշտի ժամանակակից Վարդան Քաջի մասին է ասւում (թող թէ՝ ոչ լրիւ ճշգրիտ). «որ հաւատացեալ ի Քրիստոս»[3] (իսկ ճշգրիտ կը լինէր համարել, որ նա վերադարձել էր քրիստոնեական հաւատին): Վարագ Գրիգորի պապ նոյն Վարդան Քաջի անունն արձանագրուած է Վա-

---

[1] Տե՛ս, օր.՝ **К. В. Тревер**, Очерки по истории и культуре..., с. 235 («Պատմականօրէն հաւաստի կարող է համարուել միայն պատմութիւնն այն մասին, որ VI դ. վերջում Աղուանքում յայտնւում է նոր արքայական կամ իշխանական հարստութիւն, որին ենթարկուած են ոչ միայն Աղուանքի ժողովուրդները, այլեւ «Կովկասի վայրենի ժողովուրդները»»):

[2] Տե՛ս **А. И. Колесников**, Иран в начале VII века, с. 71-72. Սեբէոս պատմիչը եւս համաոստ ներկայացնում է արքայից արքայի այդ «հրամանը» (**Սեբէոս**, գլ. ԺԱ, էջ 47-48; Պատմութիւն **Սեբէոսի**, գլ. ԺԳ, էջ 85):

[3] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 339:

չագան Բարեպաշտի հրաւիրած այն Աղուէնի ժողովի մասնակիցների ցանկում («Վարդան Քաջ՝ Գարդմանայ տէր»)[1], որի յարաբերականօրէն ճշտուած ժամանակը պիտի համարուի 515-523 թթ. միջակայքը[2]: Հմմ. նաեւ երկի Գ.ժ գլխում, որը 704 թ. փաստաթուղթ է («Վախտանգ ի Վարազմանեան, եւ նախնի է սոցա Քաջն Վարդան ի Միհրական տոհմէն, որ յաւուրս Վաչագանայ Աղուանից արքայի յԱղուէն ժողովոյն յարհայէն նախագահ եղեալ՝ բնաւորեցաւ ի Գարդման»)[3] եւ որի «ի ժողովոյն նախագահ եղեալ» խօսքից երեւում է Գարդմանից իշխանի բարձր կարգավիճակը: ՊԱ-ում Վարդան Քաջը երկիցս կոչուած է նաեւ Գարդման բերդի շինող («Վարդ ծնաւ զՔաջն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ զերիս ամս»; «Քաջ Վարդան, որ հաւատացեալ ի Քրիստոս, եւ որ [մեզ հասած ՁՁ գրչական վրիպակով՝ «ոչ» – Ա. Յ.] շինողն Գարդման բերդոյ»)[4]: Ընդ որում՝ արաբական աղբիւրները նոյն կաւատ եւ Խոսրով Անուշիրուան արքայից արքաներին են վերագրում (պիտի ընկալել՝ իրենց ժամանակաշրջանին ու կամքին) «Ջարդաման քաղաք»-ի (այսինքն՝ Գարդմանի[5]), ինչպէս եւ Սուղդաբիլ (=Յուրտաւ՝ Գուգարաց բդեշխութեան կենտրոնը) եւ Կարկառ (Գորոզուաց կողմնապահ իշխանութեան հիւսիսում՝ ԺԸ դարում կառուցուած Շուշիից[6] 3 կմ արեւելք) քաղաքների կառուցումը[7]:

Ուշագրաւ է, որ այդ երեք քաղաքները կարեւոր ռազմավարական («կողմնապահական բդեշխական») կենտրոններ էին՝ ուղղուած Կովկասեան սահմանագծի պաշտպանութեանը[8]: Այս առթիւ կարելի է նշել, որ անկախ գրականութեան մէջ բդեշխական հաստատութեան մասին հնչած տարասեռ կարծիքներից (որ արտացոլում են տարբեր երկրների ու ժամանակների համար տարբեր աղբիւրներում արձանագրուած դրանց գործառոյթները[9])՝ հարկ է նկատել, որ Հայոց բդեշխու-

---

[1] Ան, Ա.իզ, էջ 89-94; Կաւոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 91-100; **Վաչագան Աղուանից արքայ, Սահմանադրութիւն կանոնական...**, էջ 127-140:

[2] Հմմ. **Ա. Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ դարերի Աղուանքում, էջ 116-117, 140-141:

[3] **Դասխ.**, Գ.ժ, էջ 304:

[4] Ան, Բ.ժէ, էջ 172; Գ.իբ /իգ/, էջ 339: Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 160-161.

[5] Իբրեւ վարկած՝ այս քաղաքը ճիշտ կը լիներ տեղորոշել՝ համադրելով ուշ «Ջարդախլու» յորջորջումով յայտնի գիւղի հետ (հմմ. Ջարդախ-լու – Ջարդամ-ան): Նրա նոր կենտրոնից 2 կմ հարաւ-արեւելք ձգուող բլրաշարի վրայ (թերեւս, հէնց բերդակիր, կոորդինատները՝ N.40°43'22,8, E.45°53'52,8, Alt.1342, խորհրդատուութեան համար երախտապարտ եմ հնագէտ Գ. Սարգսեանին) պահպանուել են հին քաղաքագիւղի՝ միջնադարից եկող աւերակները (հմմ. **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, Եր., 2004, էջ 517-518):

[6] Տեղին նշենք Շուշի քաղաքի վիմագրերի եւ այլ յուշարձանների մասին վերջին ամփոփումը. **Հ. Հարությունյան**, Շուշի. քարեղեն անխոս վկաներ, Ստեփանակերտ, 2013:

[7] **Н. А. Караулов**, Сведения арабских писателей о Кавказе, – СМОМПК, вып. XXXI, с. 17; вып. XXXII, с. 15-16; **Баладзори**, Книга завоевания стран, с. 5-7; Արաբական աղբյուրներ, Գ, Թարգմ.՝ ... **Ա. Տեր-Ղեւոնդյանի**, էջ 265-266; 448-449; 495; 560:

[8] **Գ. Սարգսեան, Ա. Յակոբեան**, Նորայայտ կարկառ քաղաքատեղիի, էջ 43-44, 57-58:

[9] Տե՛ս **C. L. Toumanoff**, Studies in Christian Caucasian History, p. 155-192; **R. H. Hewsen**, Introduction to Armenian historical geography IV: The Vitaxates of Arsacid Armenia..., – RÉArm., t. XXI, 1988-1989, p. 271-319; t. XXII, 1990-1991, p. 147-183; **Բ. Յարութիւնեան**,

*թիւնները (հաստատուած դեռ Տիգրան Մեծի օրօք[1] եւ տարբեր ինտենսիւութեամբ դոյատեւած մինչեւ Արշակունիների թագաւորութեան բաժանումը Դ դ. վերջին) կատարել են դասական կողմնապահական-կուսակալական փոխարքայութիւնների դործառոյթը (մեր պատմիչների խօսքերով՝ «կողմնակալք», «սահմանապահք», «սահմանակալք»): Այն է՝ բդեշխն իրաւասութիւն ունէր թագաւորի անունից եւ «թագաւորից յետոյ երկրորդի» (Ստրաբոնի խօսքով՝ ὁ δεύτερος)՝ փոխարքայի պատուով իրականացնելու վարչա-տնտեսական ու զինուորական կառավարումը տէրութեան որոշակի սահմանային նահանգում՝ միաժամանակ իր հրամանատարութեան տակ ունենալով նաեւ դրա սահմանակից կրտսեր դաշնակից (ինչ-որ չափով՝ «սատելիտ») պետութեան ամբողջ զինական ուժն ու կրելով այդ երկրի արտաքին սահմանի պաշտպանութեան ողջ պատասխանատուութիւնը: Համարւում է, որ բդեշխի այդ իւրօրինակ ռազմա-վարչական հաստատութիւնը ձեւաւորուել է Իրանական տէրութեան պետական համակարգում Պարթեւների դարաշրջանում՝ դոյատեւելով մինչեւ Ջ դարի Սասանեան արքայ Խոսրով Ա Անուշիրուանի ժամանակը[2], իսկ Մեծ Հայքի թագաւորութիւն այն բերել է Տիգրան Բ-ն, ըստ ամենայնի՝ հենց արքայից արքայի իրաւունքներն ու պարտականութիւնները ստանձնելիս: Դրանից վաղ՝ Աքեմենեանների օրօք, Հերոդոտոսին եւ այլ յոյն հեղինակների յայտնի էին Պարսից միապետի այն բարձրաստիճան զօրական պաշտօնեաները՝ կոչուած «արքայի աչք»՝ ὀφθαλμός τοῦ βασιλέου (ըստ Անտոնինո Պալիարոյի վերականգնման՝ հենց հին իրան. *pati-axš, որից՝ bitaxš եւ հայ. bdeašx[3]), որոնց նա իրենց զօրախմբերով ուղարկում էր՝ վերահսկելու նահանգների սատրապներին[4]:*

Ե դարի հայկական աղբիւրները նշում են մեր երկրի չորս բդեշխների մասին, որը, ըստ երեւոյթին, արտայայտում է նրանց վաղ՝ դասական կարգավիճակը: Ըստ Ագաթանգեղոսի՝ դրանք էին (հերթականութեան շեղումներով). ա) «Մեծ» կոչուած

Մեծ Հայքի բդեշխութիւնների եւ բդեշխութեան հաստատութեան շուրջ, սն. 97-180; **Э. Ш. Хуршудян**, Государственные институты Парфянского и Сасанидского Ирана. III в. до н. э. – VII в. н. э., Алматы, 2015, с. 21-68; **Նոյնի՝** Армения и Сасанидский Иран, с. 33-72.

[1] Տե՛ս **J. Marquart**, Ērānšahr nach der Geographie des Ps. Mosēs Xorenaçi, S. 165-173; **Ց. Մարկվարտ**, Հայ բդեաշխք, – ՀԱ, 1903, էջ 1-5, 114-119; **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 283; **Ս. Մ. Կրկյաշարյան**, Բդեշխությունների առաջացումը Հայաստանում, – ՊԲՀ, 1966, հմր 4, էջ 257-262: Ըստ Պլուտարքոսի մի հեգնալից պնդման՝ Տիգրանին միշտ ուղեկցում էին չորս հաւատարիմ արքայիկներ, որոնք շատերի կողմից համարւում են հէնց բդեշխները: Տե՛ս **Plut.** Luc. XXI, 6; **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 55 («Նրա մօտ շատ թագաւորներ կային սպասաւորի դրութեամբ, իսկ նրանցից չորսին նա մշտապէս պահում էր իր մօտ որպէս ուղեկից կամ թիկնապահ. երբ նա գնում էր ձիով, նրանք ... վազում էին նրա կողքից, իսկ երբ նստած էր լինում եւ զբաղւում պաշտօնական գործերով, նրանք կանգնում էին նրա շուրջը, ձեռքները կրծքներին»):

[2] **А. П. Новосельцев**, Генезис феодализма в странах Закавказья, Москва, 1980, с. 111; **Э. Ш. Хуршудян**, Государственные институты Парфянского и Сасанидского Ирана, с. 60).

[3] **A. Pagliaro**, Mediopersïano bitaxš, armeno bdeašx: ὁ ὀφθαλμὸς τοῦ βασιλέως, – RSO, Vol. XII, fasc. II, 1929-1930, p. 160-168.

[4] **Her.** I, 114; **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, էջ 50: Հմմ. **Э. Ш. Хуршудян**, Государственные институты Парфянского и Сасанидского Ирана, с. 26.

Աղձնեաց բդեշխը Ասորիքի կողմում, այսինքն՝ որպէս Օսրոյէնէ – Եդեսիայի թագաւորութեան արտաքին սահմանի պաշտպանութեան պատասխանատու[1]; բ) Նոր-Շիրական կողմի բդեշխը, այսինքն՝ Կորճայք նահանգի արեւելեան մասի՝ կադմէացիք կոչուած գաւառախմբի (նաեւ՝ Ծաւդէք, Զաւ գաւառ եւ Զաբդիկէնէ[2]) իշխանը՝ Նոտ-Աւտաշրական պաշտօնական անունով յայտնի ուշ անտիկ եւ վաղմիջնադարեան Ադիաբէնէ – Ասորեստանի թագաւորութեան կողմում[3] (ըստ Դ դարի «Զօրանամակ»-ի՝ նրան էր վստահուած երկրի հարաւային կողմի՝ «Հարաւային Դռան», զօրքերի հրամանատարութիւնը[4]); գ) Կորդուաց կամ Կորդուվտաց իշխանը, այսինքն՝ Կորճայքի արեւմտեան Կորդուք գաւառի տէրը Արուաստանի թագաւորութեան (Beth-Arabaye, Միդդոնիա՝ Մծբին կենտրոնով) կողմում; եւ դ) Գուգարաց բդեշխը («որ Միւս անուանեալ բդեաշխն»[5]) Մասքութների կողմում, այսինքն, ինչպէս բոլորը համարում են՝ վրաց եւ Աղուանից թագաւորութիւնների՝ հիւսիսային տափաստանաբնակների դէմ ուղղուած Կովկասեան լեռների պաշտպանական դծի պատասխանատուն[6]: Յիշենք Ագաթանգեղոսի որոշ բնագրեր. «Եւ ի զինուորական կողմանէն՝ զչորեսին գահերէցսն իւրով տաճարին, որ բդեաշխին կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, եւ զերկրորդ սահմանակալն

---

[1] Ըստ Մովսէս Խորենացու կողմից գրանցուած տեղեկանու՝ Աղձնեաց բդեշխները սերում էին հին Ասորեստանի արքայ Սեներքերիմի տոհմից, Հայաստան եկած նրա որդի Սանասարից (**Խոր.**, Ա.իգ, էջ 70-71; ՄՀ, հտ. Բ, էջ 1814):

[2] *Կադմէացիք – Զաւ գաւառ – Զաբդիկէնէ* այս համադրման մասին տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 290-293:

[3] Ըստ Խորենացու պնդման՝ այդ սահմանագիծը Կադմէացիներին վստահել էր դեռ Հայկեան Արամ նահապետը. «քանզի զարեւելեանն եւ զհարաւայինն նուաճեալ [Արամն], յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ. Սիսակեանցն՝ զարեւելս, եւ որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին» (**Խոր.**, Ա.ժդ, էջ 46; ՄՀ, հտ. Բ, էջ 1790-1791):

[4] **Ա. Յակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ», էջ 546 («Հարաւային դուռն է. / Ա. Կադմէացի – Ա՘ՎՄ [(13200) մարտիկ արք], / Բ. Կորդուացի – Ռ [(1000) մարտիկ արք]...»): Ուշագրաւ է նաեւ, որ ըստ Եղիշէի՝ Պարսից Յազկերտ Բ արքայի նամակները ստացել էին Հայքը, Վիրքը, Աղուանքը, Լփինքը, *Ծաւդէքը, Կորդուքը* եւ *Աղձնիքը* (**Եղիշէ**, յեղ. Ա, էջ 10): Ըստ Պետրոս Պատրիկիոսի (**Petr.** fragm. 14)՝ 298 թ. Մծբինի խաղաղութեան պայմանագրով Հռոմին (տուեալ դէպքում՝ իրապէս Մեծ Հայքին) անցած անդրտիգրիսեան նահանգների ճերթականութիւնն էր՝ Անգեղտուն, Ծոփք (Մեծ), Արզանէնէ, Կորդուք, Ծաւդէք-Զաբդիկէնէ:

[5] Արմազիում (Կուրից հարաւ) պեղուած բդեշխների տապանատան մի երկլեզուեան (արամէերէն եւ յունարէն) վիմագրում Զեւախաս բդեշխը կոչուած է «կրտսեր» (“Ζηουάχου τοῦ νευτέρου πιτάξου”). Տե՛ս **Г. В. Церетели**, Армазская билингва, Тбилиси, 1941, с. 23.

[6] Ըստ Պատմահօր հայթայթած տուեալների՝ Գուգարաց բդեշխները սերում էին Աքեմենեան Դարեհ արքայի նախարար ոմն Միհրդատից (յաւելելով՝ «զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացոց [*var.* Իվերիացոց] ազգացն, զոր էած Նաբուգոդոնոսոր, որպէս Աբիւդենոս պատմէ...») եւ Հայոց առաջին Արշակունի արքայ Վաղարշակի կողմից նշանակուել էին «ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ»՝ վարելու «զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն եւ Պոնտոս ծովու» (**Խոր.**, Բ.ը, էջ 114; Բ.ժա, էջ 121; ՄՀ, հտ. Բ, էջ 1859-1860, 1867-1868): Յաւելենք, որ ըստ «Զօրանամակ»-ի՝ Գուգարաց բդեշխին էր վստահուած երկրի «Հիւսիսային Դռան» զօրքերի հրամանատարութիւնը՝ «ՏԾ [(4500) մարտիկ արք]»-ով (**Ա. Յակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ», էջ 542):

յԱսորեստանեայց[1] *կողմանէն, եւ զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն*[2]*. զմեծ իշխանն Անգեղտան, եւ զթագադիր սպասետն...» (Հռոմ մեկնող «բազում մեծամեծերի» ցանկում)*[3]*; «գումարեաց զգլխաւորս նախարարացն եւ զկուսակալս աշխարհացն. Առաջին՝ իշխանն Անգեղտան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է Բդեաշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան սպասետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զաւրավար Հայոց աշխարհին, վեցերորդ՝ իշխանն Կորդուվտաց*[4] *աշխարհին, եաւթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին, ութերորդ՝ իշխանն Գուգարացւոց աշխարհին, որ* Միւս անուանեալ բդեաշխն, *... մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից աշխարհին...» (Կեսարիա մեկնող «Հայաստան աշխարհի ... ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք» 16 իշխանների ցանկում)*[5]*:*

Ընդ սմին, նմանատիպ գործառոյթներով կուսակալութիւնների թուաքանակն ինչ-որ պահի էապէս աւելացել է՝ թէկուզ եւ, գուցէ, առանց բդեշխութիւն անունը ստանալու: Դա վերաբերում է ե՛ւ հարաւ-արեւմուտքում Անգեղտան կուսակալութեանը, որի վրայ, ըստ «Ջօրանամակ»-ի, դրուած էր երկրի արեւմտեան կողմի («Արեւմտեան Դռան») զօրքերի, այդ թւում՝ Աղձնիքի զինուժի ղեկավարման պարտականութիւնը[6]*, ե՛ւ հիւսիս-արեւմուտքում Սպերի Բագրատունեաց կուսակալութեանը, որի մասին Ագաթանգեղոսի երկի «Գրիգորի վարք» կոչուած տարբերակի՝ Լուսաւորչին Կեսարիա ուղեկցող 16 իշխանների ցանկում ասուած է մի կարեւոր լրացումով. «չորրորդ՝ սպասետութեան իշխանը, որը* պաշտպանում էր Կովկասեան լեռների կողմերը եւ ճանիփը *[Τσάνων]»*[7] *(այդ լրացումը յարում է Պատմա-*

---

[1] Ձեռագրերի մեծ մասում՝ «յԱսորեստանեաց», յունարէնում եւս՝ "ἀπὸ τῶν τῆς *Ἀσσυρίας* μερῶν" (**G. Lafontaine**, La version grecque ancienne du livre arménienne d'Agathange /édition critique/, Louvain-la-Neuve, 1973, p. 336, § 164): Բայց դա հարկ է սրբագրել (կամ գոնէ ընկալել)՝ «յԱսորեաց»: Հմմ. **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 148-151, 153-156, 167:

[2] Յունարէն թարգմանուած է՝ «Մասքթաց Հոնաց». "ἀπὸ τῶν Μασαχοὐτῶν Οὔννων μερῶν" (**G. Lafontaine**, La version grecque ancienne du livre arménienne d'Agathange, p. 336, § 164).

[3] **Ագաթ.**, գլ. ՃԻԶ, § 873, էջ 459-460; ՄՀ, հտ. Բ, էջ 1722-1723:

[4] Ձեռագրերի մեծ մասում եւ Ուխտանէսի մօտ՝ «Կորդուաց» (նաեւ՝ «Կորդուացւոց»):

[5] **Ագաթ.**, գլ. ՃԺԲ, § 795, էջ 414; ՄՀ, հտ. Բ, էջ 1683-1684: Հմմ. նաեւ Փաւստոսի մօտ. «Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա՝ *մեծ իշխանն* Աղձնեաց, որ անուանեալ կոչէր *Բդեաշխն*, որ էր մի *ի չորից*՝ գաւերէց, բարձրէց տաճարին արքունի» (**Բուզ.**, Գ.թ, էջ 32; ՄՀ, հտ. Ա, էջ 287, հմմ. նաեւ **Բուզ.**, Դ.իդ, էջ 149; Դ.ծ, էջ 166; Ե.ժ, էջ 214; Ե.ժզ, էջ 216; ՄՀ, հտ. Ա, էջ 355, 364, 389, 390):

[6] Տե՛ս **Ա. Յակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրաց Հայոց» եւ «Զաւրանամակ», էջ 541 («Արեւմտեան դուռն է. / Ա. Անգեղտուն – ՎՆ [(3400) մարտիկ արք], / Բ. Բդեշխն Աղձնեաց – Տ [(4000) մարտիկ արք]...»):

[7] Տե՛ս **G. Garitte**, Documents pour l'étude du livre d'Agathange, p. 73; Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը..., – «Էջմիածին», 1966, հմր Թ-Ժ, էջ 79; **Ագաթանգեղոս**, Պատմություն Հայոց, Աշխարհաբար թարգմանություն ... **Ա. Տեր-Ղեւոնդյանի**, էջ 178, ծն. 44: Մեր ընդգծած լրացումը կայ նաեւ «Վարքի» արաբերէն տարբերակում (գրչական սխալներով). «չորրորդ՝ իշխանն Ասպետաց՝ ըստ կոչմանն Աս-

*հօր հաղորդմանը Բագարատ Բագրատունու մասին, որին Հայոց Վաղարշակ արքան նշանակել էր «ի ծայրս հայերէն խաւսից կողմնակալ, իշխան բիւրուց եւ հազարաց, յարեւմտից կուսէ»[1]), ե՛ւ արեւելքում Սիւնեաց կուսակալութեանը, որին, ըստ «Ջօրանամակ»-ի՝ վստահուած էր երկրի արեւելեան կողմի («Արեւելեան Դռան») զօրքերի հրամանատարութիւնը[2] (փոխանցուած նրան՝ Մարդպետական կուսակալութիւնից[3]), ե՛ւ յատկապէս հիւսիս-արեւելքում, որի իշխանների համար Խորենացին Բ.ը գլխում օգտագործում է «կողմնակալ բիւրաւոր» եզրոյթը: Այս վերջին կողմում, ըստ ամենայնի՝ Գարդմանացիք իշխանութիւնը (Գարդման կենտրոնով, անտիկ շրջանում՝ Սակասէնէ եպարխիա[4]) պատասխանատու էր հարեւան Աղուանից թագաւորութեան, իսկ Գորոզուի կամ «Գարգարացիք» իշխանութիւնը (Կարկա՞ռ կենտրոնով)՝ Մասքթաց թագաւորութեան (=Բաղասականի, մինչեւ Դերբենդի անցքը) արտաքին սահմանների պաշտպանութեան համար: Հէնց այս վերջինի արքայ Սանեսանի կենտրոնատեղի («ճամբար բանակին»)՝ Վատնեան դաշտ էր հասել ու այնտեղ նահատակուել Գրիգոր Լուսաւորչի թոռ Գրիգորիս Մանուկը, ով «եհաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց»[5] եւ ում մարմինը, ըստ Խորենացու եւ Փաւստոսի տուեալների՝ իր աշակերտները վերադարձրին ու յուղարկաւորեցին Հարաւային Արցախի Հաբանդ կամ Փոքր Սիւնիք գաւառի Ամարաս աւանում: Վերջինս, անշուշտ, Գորոզուի իշխանութեան հոգեւոր կենտրոնն էր, որի եկեղեցու հիմքերը հասցրել էր օծել Լուսաւորիչը[6]:

Հարկ է ընդունել, որ սահմանակից կրտսեր դաշնակից երկրի արտաքին սահմանի պաշտպանութիւնն իրականացնելու դիմաց բդեշխութիւն-կուսակալութիւնները յաճախ իրենց վարչական կառավարման տակ էին ստանում այդ երկրի բուն

պետ, որում յանձն էր պահպանութիւն լերանցն Կասեաց եւ «Մ-տ-զ-ն»եանց [*հմմ.* Τσάνων]» (**H. Mapp**, Крещение армян, грузин, абхазов и аланов, с. 115; Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց եւ Ալանաց ի սրբոյն Գրիգորէ, Ի ռուս հրատարակութենէ, կատարելոյ ... **Նիկողայոսէ Մառ**, թարգմանեաց ի հայ **Յուսիկ արք.**, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1911, էջ 49; **А. С. Жамкочян**, Житие св. Григория Просветителя Армении..., с. 164).

[1] **Խոր.**, Բ.գ, էջ 105; ՄՀ, հտ. Բ, էջ 1851: Ինչպէս տեսանք վերեւում (էջ 165, ծն. 6), «Վարքի» նշած բուն «Կովկասեան լեռների կողմերի» պաշտպանութեան պատասխանատուութիւնը Խորենացին վերագրում էր Գուգարաց բդեշխներին. «Իսկ ընդդէմ լերինն Կասեայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զհզաւր ազգն, եւ նահապետութեանն աւնուն կարդայ բդեաշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նահապետի...» (**Խոր.**, Բ.ը, էջ 114; ՄՀ, հտ. Բ, էջ 1859-1860):

[2] **Ա. Ցակոբեան**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Ջաւրանամակ», էջ 544 («Արեւելեան դուռն է. / Ա. Սիւնի – Ա՞ՔՆ [(19400) մարտիկ արք], / Բ. Ամատունի – Տ [(4000) մարտիկ արք]...»):

[3] Տե՛ս **Ա. Վ. Մուշեղեան**, Մովսես Խորենացու դարը, էջ 219-221 (նաեւ՝ աստ, էջ 63):

[4] Համադրման մասին մանրամասն տե՛ս **Բ. Հարությունյան**, Արցախի, Հայոց Արեւելից կողմերի եւ Ղարաբաղի..., էջ 260; **Ա. Ցակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 416-417:

[5] **Բուզ.**, Գ.ե, էջ 22; ՄՀ, հտ. Ա, էջ 281 (նաեւ՝ «ի հնգետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց եւ Աղուանից, այսինքն՝ սահմանացն Մասքթաց»):

[6] **Բուզ.**, Գ.զ, էջ 7; ՄՀ, հտ. Ա, էջ 283; **Խոր.**, Գ.գ, էջ 260; ՄՀ, հտ. Բ, էջ 2011: Վերջին մտքի համար հմմ. **А. Акопян**, "История Армении" Фавста Бузанда как источник..., с. 72-81.

տարածքի մի սահմանային կետը: Հայաստանի հիւսիսում դա վերաբերում է նախ եւ առաջ Գուգարքին կցուող Մանգլեացփոր, Բողնոփոյր եւ Քուիշափոր գաւառներին: Դրանք «Աշխարհացոյց»-ի մի բաժնում՝ Վիրքի նկարագրութեան մէջ նշւում են իբրեւ Հայոց երկրից հանուած գաւառներ («եւ զՄանգլեացփոր, եւ [զՍամշողդէ քաղաք ի Քուիշափոր, եւ] զԲողնոփոր, մինչեւ ցՊարուար գաւառ, որ պատէ զՏփխիս քաղաքաւ. բայց երեք փոռակդ ի Հայոց հանէ»), իսկ միւս բաժնում՝ Գուգարք նահանգի 9 գաւառների ցանկում, այդ փոռակները չեն յիշատակւում («Ունի գաւառս իննն. զՋորոփոր, զԿողբափոր, զՇորափոր, զՏաշիր, զԹռեղս, զԿանգարս, զՋաւախս Վերի, զԱրտահան, զԿալարճս: ... Ունին արդ Վիրք՝ հանեալ ի Հա[յ]ոց»)[1]: Ընդ որում՝ հաւանաբար, հայ բդեշխների կառավարման տակ գտնուող այդ երեք գաւառների տարածքը հիւսիսում մի պահ հասնում էր Կուր գետին, որի ափին՝ Արմազիում, ձեւաւորուել էր նրանց տոհմական գերեզմանատունը:

Հայաստանի հարաւ-արեւելեան կողմում, ըստ ամենայնի՝ բդեշխական կողմնապահութեան նոյն գործառոյթի հետ էր կապուած Ատրպատականի յարակից մասում հայ Արշակունիների «Ձեռական իշխանութեան» յարափոփոխ կարգավիճակի դէպքը[2] (այն յաճախ ստանում էր Ատրպատականի սահմանների պաշտպանութեան համար եւս պատասխանատու դարձող Հայոց թագաւորը): Դրան նման էր հարեւան Պարսկահայք նահանգի Հեր եւ Ջարեւանդ գաւառների կարգավիճակը, որոնք Իրանի արքաները մի հակառակ տրամաբանութեամբ երբեմն տալիս էին Հայոց սահմանների պաշտպանութեան համար եւս պատասխանատու կարգուող Ատրպատականին: Դրա հետքը կայ դեռ անտիկ շրջանում. ըստ Ստրաբոնի՝ Յուլիոս Կեսարը եւ Անտոնիոսը Ք. ա. Ա դ. 40-ական թթ. հանել էին Ծոմբάκη կոչուած գաւառը (հմմ. Քարաշամբ, Շամբի ձոր Ջարեւանդում) Հայոց Արտաւազդ Բի թագաւորութիւնից ու յանձնել Ատրպատականի աւելի հնազանդ արքային[3]:

---

[1] Տե՛ս **Անանուն** (Է դար), Աշխարհացոյց, սն. 118-119 եւ 142:

[2] Վերջինիս մասին ամփոփ տե՛ս **Բ. Հ. Հարությունյան**, Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը, – ՊԲՀ, 1988, հմր 3, էջ 56-67; հմր 4, էջ 44-60:

[3] Strab. XI, 13, 2; **Ստրաբոն**, 1940, էջ 47: Ի դէպ, սրան որոշ նմանութիւն է ունեցել նաեւ Հռոմի սահմանային ռազմա-վարչական համակարգը: Ըստ Խորենացու՝ Տրդատ Մեծի մահուանից յետոյ Կոստանդին Մեծի «պալատի յարդարիչ», Արեւելքի զօրավար Անտիոքոսը բանակով մտել է Հայաստան, գահին դրել Խոսրով Կոտակին, նշանակել երկրի չորս կողմերի զօրագնդերի սպարապետներին («Առաջին՝ Բագարատ ասպետ, զաւրավար արեւմտեան գնդին. երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց եւ բդեաշխ Գուգարացւոց, սպարապետ հիւսիսային զաւրուն. երրորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց, զաւրավար արեւելեան գնդին. չորրորդ՝ Մանաճիհր նահապետ Ռշտունեաց, սպարապետ հարաւային զաւրուն»), նրանց տալով «զիւրաքանչիւր զաւրս», Գաղատական գնդով ամրապնդել է արեւելեան սահմանը («ունել պահ յարքայէն Պարսից»), ապա շարժուել Փայտակարանում ապստամբած փոխարքայ Սանատրուկի դէմ (**Խոր.**, Գ.Ե-Զ, էջ 261-263): Ըստ Բ. Յարութիւնեանի՝ «Արդէն հռոմէական կայսր Սեպտիմիոս Սեւերոսի օրօք, Հայաստանի ու Հռոմի միջեւ կնքուած պայմանագրի համաձայն՝ Հայոց թագաւորութիւնը, ինչպէս նաեւ նրա ազդեցութեան ոլորտում գտնուող Իբերիայի եւ Ալբանիայի թագաւորութիւնները, ներառուեցին Կապադովկիայի ռազմա-պաշտպանական համակարգի մէջ» (Б. А. Арутюнян, Епархии Армянской церкви в Римской империи и проблема собственных владений армянских Аршакидов, – Международная научная конференция

Հայաստանի հարաւային եւ արեւմտեան կողմերում նոյն բդեշխական դործառոյթի հետ են կապուած թւում Օսրոյէնէի (Եդեսիայի) Աբգարների թագաւորութիւնը եւ Փոքր Հայքն ու կապադովկիական ինչ-ինչ շրջաններ Մեծ Հայքի արքաների հետ կապելու դէպքերը, Աղձնիքին հարեւան՝ «Միջագետք Հայոց» կոչուած եւ աւելի արեւելք ընկած՝ Կադմէացիքին հարեւան Մահկերտուն, Նիխորական, Դասն երկրամասերի վերաբերեալ մեր մատենագիրների պատկերացումները: Յիշենք, թէ ինչպէս էր Խորենացին ներկայացնում Մեծ Հայքի մաս եղած «Միջագետքի»[1] կորուստը. «Բայց Թիկունս առնելով Երուանդայ [վերջինի – Ա. Յ.] զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն վէսպիանու եւ Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս»[2]: Փաւստոսի խօսքերով՝ Հայոց Պապ արքան Վաղէս կայսրից պահանջել էր ե՛ւ Կեսարեան, ե՛ւ Եդեսիան («...եթէ Կեսարեաւ հետ՝ եւ տասն քաղաք մեր լեալ է, արդ՝ ի բաց տո՛ւր, եւ զՈւռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց, արդ՝ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել, տո՛ւր ի բաց, ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ»)[3]: Սրանց յարում է Սեբէոսի կողմից Վահրամ Ջուբինին վերագրուած պատկերացումը Հայոց երկրի հարաւային եւ արեւմտեան սահմանների մասին («Եւ թողում ձեզ զերկիրն ամենայն Հայոց մինչեւ ցկապկոհ եւ ցդուռն Աղուանից. եւ յԱսորւոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄրծուին [իմա՛ Մծբին – Ա. Յ.] եւ զՆոր Շիրական մինչեւ ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. եւ ընդ արեւմուտս մինչեւ ցկեսարիայ կապադովկացւոց»)[4]: Ասորիքի հանդէպ յաւակնութիւնների մասին մի վիպական-նովելային պատում ունի Յովհան Մամիկոնեանը. «Իսկ նա ասէ [իշխան Սմբատը Սուրէն Պարսից զօրավարին – Ա. Յ.]. «Հաւանեմ տրոցդ. բայց հարիւր եւ ութսուն հազար դահեկանի, որ փայտ են տարեալ ի Քարքէոյ, եւ ԴճՌ դահեկանի, որ խոտ են կերեալ ի դաշտէդ, եւ կՌ դահեկանի, որ զեղն եւ զեղջերու եւ զնապաստակ երկրիս որսացեալ են եւ կերեալ, զհացի եւ զջրոյ գինն Թողում, բայց զանոյշ գինին Ասորոց եւ Սալնայ եւ Մորխայ այս երկու տարի է, որ չինէն կտրեալ էին եւ ինքեանք արբին, զայն Թող տա՛ն»[5]: Ուշագրաւ է նաեւ, որ ըստ Թովմա Արծրունու հաղորդած աւանդապատումի՝ Սանասարից սերուող, այսինքն՝ Աղձնիքի իշխանները, որ մասնակցել էին Կիւրոս Ա Աքեմենեան

"Армения и Христианский Восток". 27-30 июня 2001 г. Тезисы докладов, СПб., 2001, с. 25). Մի ուշագրաւ փաստ է նկատել վերջերս Յակոբ Յարութիւնեանը. Կապադովկիայի զօրական ղեկավար եւ պատմիչ Արրիանոսն իր մի երկում գրել է, որ իրենից առաջ (Բ դարի 30-ական թթ.) տեղի բանակում հայկական զօրաջոկատ է եղել (**С. М. Перевалов**, Тактические трактаты Флавия Арриана: Тактическое искусство; Диспозиция против аланов, Москва, 2010, с. 178 /Диспозиция..., § 29/, հմմ. **А. Ж. Арутюнян**, Армения, государства Восточного Средиземноморья и Иран, с. 236), ինչը կապուած է թւում Հռոմի այդ արեւելեան պրովինցիայի ունեցած կողմնապահական-«բդեշխական» գործառոյթի հետ:

[1] **Խոր.**, Բ.լգ, էջ 151-156; Բ.լզ, էջ 160; ՄՀ, հտ. Բ, էջ 1899-1905, 1908:

[2] **Ագդ**, Բ.լը, էջ 164; ՄՀ, հտ. Բ, էջ 1913:

[3] **Բուզ.**, Ե.լբ, էջ 235; ՄՀ, հտ. Ա, էջ 401: Այս տեղեկութեան արժեւորման առումով տե՛ս **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 69-70:

[4] **Սեբէոս**, գլ. Թ, էջ 39; Պատմութիւն **Սեբէոսի**, էջ 78:

[5] **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարաւնոյ (ՄՀ, հտ. Դ-Ե), գլ. Է, էջ 1093:

առաջին արքայի յաղթական պատերազմներին, նրանից որպէս պարգեւ ստացել էին «զՏմորիս ամրոցաւն եւ զգետափնեայսն Նիւնուէի»[1]:

Բդեշխական-կուսակալական գործառոյթի իւրօրինակութիւնը հիմք էր դառնում նաեւ որոշակի սերտութեան յարաբերութիւնների ձեւաւորման համար Հայոց տուեալ նահանգի եւ նրա հարեւան դաշնակից պետութեան միջեւ՝ երբեմն հիմնաւոր, երբեմն անիրական ու կռուախնձորային փոխադարձ յաւակնութիւններ առաջացնելով (օր.՝ «Միջագետք Հայոց» երկրամասի, Գուգարք նահանգի, Հեր եւ Ջարեւանդ գաւառների կամ Ատրպատականում հայ Արշակունիների «Զեռական իշխանութեան» դէպքերում): Այդ սերտութիւնը, ընդհուպ մինչեւ իրար անունով կոչուելը (օր.՝ Գուգարաց բդեշխը՝ «իշխան Վրաց», Կադմեաց կողմնակալութիւնը՝ «Նոր Շիրական») նաեւ պատճառ էր դառնում Հայոց կենտրոնական իշխանութեան թուլութեան պահերին նրա դէմ համատեղ ելոյթների համար, որպէս կանոն՝ հրահրուած օտարի, առաւելապէս՝ Սասանեանների կողմից: Հիւսիսում նման մի համատեղ ապստամբութիւն նկարագրելով («յետ սորա Գուգարաց բդեաշխն, եւ յետ սորա Զորայ գաւառին տէրն, եւ Կողբայ գաւառին տէրն [ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ], եւ ընդ նոսա՝ Գարդմանաձորոյ տէրն»)՝ Փաւստոսը նշում է Գարդմանի ու հարեւան մի քանի գաւառների միանալը Աղուանից թագաւորութեանը եւ պատժուելը սպարապետ Մուշեղ Մամիկոնեանի կողմից («Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից... Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն եւ զձորն Գարդմանայ, զԿողթ եւ այլ, որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս եւ յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից եւ ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. եւ ի գլխաւորացն բազումս սպանանէին»)[2]:

Ընդ սմին, Սասանեան տիրակալները Մեծ Հայքի 387 թ. բաժանման եւ 428 թ. Արշակունիների թագաւորութեան վերացման պահերին ինչ-որ ժամանակով պահպանեցին նախկին հայկական առանձին բդեշխութիւններ ու կուսակալութիւններ (մասնաւորապէս՝ երկրի հիւսիսում)՝ հարեւան երկրների արտաքին սահմանների պաշտպանութեան եւ զօրական առումով նրանց նկատմամբ որոշակի գերակայութեան իրենց աւանդական գործառոյթներով: 428 թ. նրանց ստեղծած Աղուանից մարզպանութեան մէջ մտցուեցին այդ պահի Աղուանից թագաւորութիւնը (Կուրի ձախափնեակում), նրանից արեւելք ընկած ծովափնեայ շրջանները (Մասքութք, Բաղասական եւն), որոնք անտիկ Ալբանիա թագաւորութեան մաս էին կազմում, ու նաեւ Կուրի աջափնեայ Ուտիք հայկական նահանգը կամ առնուազն

---

[1] **Թովմայի վարդապետի Արծրունւոյ** Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887 (յետայսու՝ **Թովմա**), գլ. Ա.ե, էջ 39; **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ **Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի**, Եր.:, 2006, էջ 47; **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, – ՄՀ, հտ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս, 2010, էջ 484: Թովմայի այս պնդման արժեւորման համար տե՛ս **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 88-89:

[2] Բուզ., Դ.ծ, էջ 166; Ե.ժգ, էջ 215; ՄՀ, հտ. Ա., էջ 364, 390:

Նրա հիւսիս-արեւմտեան կէսը կազմող Գարդմանացիք իշխանութիւնը (աշխարհացոյցեան չորս գաւառներով), որը պահպանում էր իր նախկին կուսակալական գործառոյթների գոնէ մի մասը[1]: Այդ նոյն ռէֆորմով ստեղծուեց նաեւ Սասանեան տէրութեան Վիրք – Վարչան մարզպանութիւնը, որի մէջ մտցուեցին Վրաց թագաւորութիւնը եւ Գուգարաց բդեշխութիւնը, ընդ որում՝ վերջինը Մեծ Հայքի Արշակունիների թագաւորութեան կազմից հանուել էր նրա 387 թ. բաժանումից յետոյ, թէպէտ շարունակել էր պահպանել իր կուսակալական գործառոյթը Կովկասեան լեռների սահմանագծի պաշտպանութեան առումով՝ կազմելով հարեւան Վիրքի հետ միասին Սասանեան տէրութեանը ենթակայ նախամարզպանական շրջանի մի իւրօրինակ վարչա-տարածքային զոյգ (վերջինիս բնութագրիչները դեռ պիտի լրացուցիչ հետազօտուեն): Ողջ 6 դարում այդ զոյգի բաղադրիչները պայքարեցին իրար դէմ իրական գերակայութեան համար, ինչը լաւագոյնս արտացոլել է Գուգարքի Վարսկէն (Վազգէն) բդեշխի Շուշանիկ տիկնոջ նահատակութեան պատմութիւնը[2]: Թւում է, թէ նման պայքարը նշմարւում է նաեւ հարեւան Աղուանքում: Ընդ սմին, այդ պայքարի լուծումը տուեցին իրենք՝ Սասանեանները՝ դարավերջին մարզպանական ընդարձակ լիազօրութիւնները վերապահելով թագաւորներին՝ Վրաց մարզպանութեան մէջ Վախթանգ Գորգասալին, Աղուանից մարզպանութեան մէջ՝ Վաչագան Բ Բարեպաշտին: Ճիշտ է, դա տեւեց լոկ մի քանի տասնամեակ, եւ 523 թ., ինչպէս տեսանք վերեւում, կաւատ արքայից արքայի նոր ռէֆորմով երկու երկրներում էլ թագաւորական իշխանութիւնը վերացուեց:

Արդ՝ աւարտելով բդեշխական-կուսակալական իւրայատուկ գործառոյթի քննութիւնը եւ վերադառնալով Գարդմանացի իշխանատոհմի հետագայ «Միհրական/Միհրանեան» անուանման պատմական հիմքերի դիտարկմանը՝ կարելի է հաւանական համարել Ե-Զ դդ. ընթացքում այդ տոհմի մի ճիւղի, թերեւս, խնամիական եւ դաւանափոխութեան ճանապարհներով որոշակի մերձեցումը Սասանեան տէրութեան մէջ Կովկասեան սահմանի պաշտպանութեան լիազօրութեան հիմնական իրագործող, ծագումով պարթեւ, բայց Ատրպատականում հաստատուած Միհրան իշխանատոհմի հետ: Այդ տոհմի մի քանի ներկայացուցչի յիշատակում են հայկական, վրացական եւ ասորական աղբիւրները. Վարդանանց դէմ պատերազմող Միհրներսեհ, 484-ին մի քանի ամիս Հայոց մարզպան Շապուհ Միհրանեան, Գրիգոր Ռաժիկ նահատակ Միհրան տոհմից[3], Ատրպատական շահրի

---

[1] Ինչպէս տեսանք վերեւում, Ուտիքի հարեւան Արցախ ննհանգի տարածքն Աղուանից մարզպանութեան մէջ մտցուեց աւելի ուշ՝ 450-451 թթ.:

[2] Տե՛ս **Պ. Մ. Մուրադյան**, Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը. Բնագրեր եւ հետազոտություն, Եր., 1996: Համմ. Очерки истории Грузии, т. II, с. 63, 70, 493.

[3] Նրա մասին տե՛ս **G. Hoffmann**, Auszüge aus Syrischen Akten Persischer Märtyrer, Leipzig, 1880, S. 78-86; **В. И. Голадзе**, Политическое развитие Картли с начала VI в. до конца 30-х гг. VII в.: Автореф. дисс. ... канд. ист. наук, Тбилиси, 1979, с. 14-17; **Ա. Յակոբեան**, Միծեռնավանքի եկեղեցու անուանումը, նահատակի գերեզմանը եւ շինարարական փուլերը, – ՀԱ, ՃԺԴ տարի, 2000, էջ 146-149, 177-178; **նոյնի՝** Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 162-166:

մարզպան եւ գահի յաւակնորդ Վահրամ Ջուբին եւն: Նշուած մերձեցման շնորհիւ Գարդմանացի իշխանների ձեռքում պիտի մի պահ կենտրոնացուած լինէր Կովկասեան ողջ սահմանի պահպանութեան պատասխանատուութիւնը, որը նախկինում նրանք կիսում էին (այդպէս նաեւ՝ հետագայում) Գուգարքի բդեշխների, Սիւնիքի եւ նրան ենթակայ Գորոզուի «կողմնապահ» իշխանների հետ: Ջ դ. սկզբների գործիչ Վարդան Քաջ Գարդմանացու Արմայէլ պապի հայր եւ «առաջին Միհրանեան» Միհր – Միհրանը[1], ով մեծ հաւանականութեամբ կարող է նոյնացուել Եղիշէի մօտ ու ՊԱ-ում յիշուած Ե դ. կէսերի անցքերի մասնակից, «Ճորայ մարզպան» Սեբուխտ – Մեռսեբուխտի[2] (արդեօ՞ք <*Մե[հ]ր-Սեբուխտ) եւ վրաց աղբիւրների «Ռանի էրիսթաւ» Բերզաբոդ – Բորզաբոդ – Վարազ-Բակուր – Վարդաբակի հետ[3], ժամանակով լիովին կարող էր լինել յաջորդը Մաշտոցին 428-430 թթ. միջակայքում մեծարող Խուրս Գարդմանացի «հայկազուն» քրիստոնեայ իշխանի: Իբրեւ դրան զուգորդուող զուգահեռ՝ հարեւան Գուգարքում հաւատամոռ վարսկէն/Վազգէնը որդին էր Մաշտոցի աջակից Աշուշայ բդեշխի:

Ըստ Մովսէս Դասխուրանցուն հասած պատկերացումների՝ Ը դարից «Միհրանեան/Միհրական» տոհմն աստիճանաբար թուլանում ու մարում է, իսկ նրանց փեսայացած Ջարմիհրի ժառանգները՝ «Առանշահիկները», վերելք են ապրում: Թ դ. 20-ական թթ. սկզբին Դադիվանքի «խորաձորում» սպանւում է «Միհրանեան» վերջին «իշխան Աղուանից» Վարազ Տրդատ Բ-ն, եւ նրա մազապուրծ կինն իր դստերը կնութեան է տալիս Խաչէնի «Առանշահիկ» իշխան Սահլ Սմբատեանի որդի Ատրներսեհին (արաբական երկերում՝ Մուսիա)[4]: ՊԱ-ի նախավերջին գլխի պնդումով[5] այդ «պատուաստութիւնից» ծնուեցին «Աղուանից» հզօր իշխաններ Գրիգոր Ատրներսեհեանը (Թ դ. վերջ), Սահակ Սեւադան (Թ – Ժ դարի սկիզբ) եւ վեր-

---

[1] Դասխուրանցին նրան է վերագրում Միհրաւան քաղաքի կառուցումը (գլ. Բ.ժԷ, էջ 171): Արդեօ՞ք այդ քաղաքը Գարդաբանին էր Վիրքի հարաւ-արեւելքում:

[2] Եղիշէ, յեղ. Գ, էջ 77; ՄՀ, հտ. Ա, էջ 606; **Դասխ.**, Բ.բ, էջ 113-114: Եղիշէի ձեռագրերի «Սեբուխտ» ընթերցումը եւս, գուցէ, պէտք է վերականգնել «*Մեր*սեբուխտ»՝ ըստ պատմիչի դրուագը Ժ դարում բառացի արտագրած Մովսէս Դասխուրանցու բնագրի: Վերջինս այլ աղբիւրներ ուղղակի չի ունեցել (հմմ. **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի)..., էջ 59; **Հ. Սվազյան**, Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, – ՊԲՀ, 1972, հմր 3, էջ 202-203; **К. А. Каграманян**, Источники "Истории страны Алуанк", с. 9; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 202).

[3] Նրանց նոյնացման հնարաւորութիւնն արդէն նկատել է Իգոր Սեմեոնովը (**И. Г. Семенов**, Генеалогия Картлийских царей, с. 50-51). Ըստ Ջուանշեր Ջուանշերիանիի՝ Վարազ-Բակուրի դուստր Սագդուխտը կինն էր Վրաց արքայ Միրդատի եւ մայրը Վախթանգ Գորգասալի (**Джуаншер Джуаншериани**, Жизнь Вахтанга Горгасала, с. 58-60; **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները, հտ. Ա, էջ 188):

[4] Տե՛ս Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, Հաւաքեց եւ թարգմանեց՝ **Բ. Խալաթեանց**, Վիեննա, 1919, էջ 101: Հմմ. **Ա. Եղիազարեան**, Աղուանից թագաւորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ, – ՀԱ, ՃԻԳ տարի, 2009, սն. 163-164; **Ա. Ցակոբեան**, Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում, – ՀԱ, ՃԻԴ տարի, 2010, սն. 74-77:

[5] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 340-341:

ջապէս՝ Փառիսոսի թագաւոր Յովհաննէս Սենեքերիմը (Ժ դ. երկրորդ կէս)։ Թերեւս, հէնց այս վերջին հանգամանքը պիտի համարուի «Առանշահիկների» ու «Միհրանեաննե՛րի» պայքարի եւ խնամիանալու վիպականացուած աւանդապատումների ստեղծման պատճառը։ Թ դ. վերջերից նաեւ Փառիսոսում ու Դարդմանում հաստատուած եւ Մեծ Հայքի Բագրատունի արքաներից անկախ, արքայական շուքով իշխելուն յաւակնող Խաչէնի ու Փառիսոսի տէրերն իրենց ձգտումները «պատմականօրէն» հիմնաւորելու ձգտումով, աւատական մասնատուածութեան շրջանի հայ աւագանու այլ ներկայացուցիչների պէս կարեւոր են համարել սեփական ծագումը կապել առաւել նշանաւոր՝ արքայական նախնիների հետ։ Այդու՝ Թ-Ժ դարերում ձեւաւորուած տոհմաբանական առասպելի մէջ տարածքի խորհրդանշական «կողմնակալ բիւրաւոր» Առանի ու իր սերունդների մասին յայտնի տուեալներին վիպական ոճով միախառնուել է՝ ե դարում միւս «Առանեաննե՛րին» հաւասարազօր, բայց է դարում աննախադէպ հզօրացած Դարդմանացի իշխանների ծագման մասին մի պատում, որի դլխաւոր իմաստը նրանց՝ Սասանեան արքայական տոհմարմատ (թէկուզ եւ, ըստ այդմ՝ եկուորութիւն) վերագրելն էր։

Վերջում կարելի է յաւելել, որ Վարազ Գրիգորի նախնիներին առասպելական «Միհրանեաննե՛րի» հետ միախառնելու եղանակը Մովսէս Դասխուրանցու աշխատանոցում եղակի չէ։ Իր աւելի վաղ գլուխներում (Ա.ժդ-ժե) պատմիչը ճիշտ նոյն եղանակով միախառնել էր Հայկ Նահապետի սերունդներին եւ իրականում Արշակունի վաշագան Քաջի տոհմը, որը թոյլ էր տուել նրան (կամ, գուցէ՝ արդէն իր աղբիւրին) էլ աւելի նշանակալից ու «բազմարժան» ծագումնաբանական պատկեր ստանալ խաչէնցի «Առանշահիկների» համար։

Բաժին 2

ԽԱՉԷՆԻ ԱՌԱՆՇԱՀԻԿՆԵՐԻ ԵՒ ՇԱՔԻԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՀԶՕՐԱՑՈՒՄԸ Թ ԴԱՐՈՒՄ

Ինչպէս անդրադարձանք նաեւ վերեւում, 428 թ. Սասանեան արքայից արքայ Վռամ Ե Գոռը (Բահրամ/Վարահրան Գուր՝ 420-439 թթ.) դեռ 385 (կամ 387) թուականին Հռոմէական կայսրութեան եւ Պարսից տէրութեան միջեւ բաժանուած Մեծ Հայքի արեւելեան հատուածում իր մի ենթադրելի հրամանագրով վերացրեց Արշակունեաց թագաւորութիւնը՝ վերածելով Հայաստանը մարզպանութեան[1], ապա

[1] Ըստ Պատմահօր՝ հայ նախարարների «խնդրանքով» Արտաշէս Գ-ին գահազրկելուց յետոյ Պարսից արքան «մեծապարգեւ զնախարարսն արձակեաց պարսիկ մարզպանաւ, որում անուն էր Վեհմիհրշապուհ» (**Խոր.**, Գ.կդ, էջ 349; ՄՀ, հտ. Բ, էջ 2014)։ Ըստ Ղազար Փարպեցու. «Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշեսի ... Եւ յայնմհետէ առաքեցաւ նախ ի Վռամայ արքայէն Պարսից յաշխարհս Հայոց մարզպան պարսիկ. եւ յայնմհետէ եղեն ի սպառ ի սպուռ անկեալք ընդ լծով ծառայութեան անաւրէն ազգին Պարսից» (**Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Աշխատութեամբ՝ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ս. Մալխասեան**, Տփղիս, 1904, Ա.ժդ-ժե, էջ 25; ՄՀ, հտ. Բ, էջ 2222-2223)։ Վերջերս տե՛ս **Հ. Ա. Խաչատրյան**, Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ, – ԼՀԳ, 2017, հմր 1, էջ 48-62։

կտրելով նրա հիւսիս-արեւելեան Ուտիք նահանգը՝ ընդգրկեց այն իր երկրի նորաստեղծ մարզպանութիւններից միւսի կազմում, որն ստացել էր «Առան» անունը (տարբերակները՝ «Ռան», «Աղուանք», յուն.՝ «Ալբանիա», վրաց.՝ «Ռանի»)։ Նրա որդի Յազկերտ Բ արքայից արքան 450-451 թթ. հակաքրիստոնեական հալածանքների շրջանում նոյն մարզպանութեան մէջ մտցրեց նաեւ Ուտիքի հարեւան Արցախ հայկական նահանգը[1]։ Նշուած նոր վարչական միաւորի «Առան» – «Ռան» անունը վերցուել էր, ամենայն հաւանականութեամբ, Վռամ Ե-ի նոյն հրամանագրով այդ մարզպանութեան մի մասը դարձուած Բուն Աղուանքի (անտիկ Ալբանիայի) թագաւորութեան անուանումից, որը ձեւաւորուել էր Ք. ա. Ա դ. սկզբներին (Կապաղակ – Cabalaca մայրաքաղաքով)՝ տարածուելով Կուր գետից հիւսիս, մինչեւ Կովկասեան լեռները, Դերբենդի լեռնաբազուկ (կոչուած՝ Ջալգան, Ջոլ) եւ Կասպից ծով. ճիշտ է, Գ դարում Սասանեաններին ենթարկուելու պահին (Մեծ Հայքի եւ Վարչան/Վիրուճան/Վիրք ի հետ միասին) Ալբանիա/Առան/Աղուանքի արեւելեան, ծովահայեաց կէսում, մօտաւորապէս Լեանգեաբիզի լեռնաբազուկից (կամ Աղսու գետից) արեւելք եւ Կուրից մինչեւ Դերբենդ առաջացել էին նոր պետական կազմաւորումներ՝ Բաղասականի եւ Մասքթաց թագաւորութիւնները եւն[2]։

428-451 թթ. վարչական փոփոխութիւններից յետոյ մինչեւ Ե դ. վերջերը «Առան»/«Աղուանք» անունն ամբողջովին տարածուեց նաեւ Կուրի աջափնեակի Արցախ եւ Ուտիք հայկական նահանգների վրայ եւ ընդունուեց այդ տարածքի, այսինքն՝ «Հայոց Արեւելից կողմանքի» բնակչութեան կողմից[3]։ Արաբները է դ. աւարտին իրենց ստեղծած «Արմինիյա» կուսակալութեան (ոստիկանութեան) մէջ գրեթէ անփոփոխ պահեցին Սասանեանների վարչա-աշխարհագրական անուանակարգը (նոմենկլատուրան), եւ Արցախն ու Ուտիքը շարունակում էին համարուել Արմինիյայի Առան/Աղուանք հատուածի մաս (հայկական աղբիւրներում՝ «երկիր», «աշխարհ», արաբական աղբիւրներում՝ «Առաջին Արմինիա»)[4], որի քրիստոնեայ բնակչութեան համար շարունակում էին գործել «իշխան Աղուանից»-ի եւ Աղուանից եկեղեցու առանձին հաստատութիւնները[5]։ Սակայն յատկանշա-

---

[1] Հմմ. **Բ. Ուլուբաբյան**, Հյուսիս-արեւելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, էջ 149-164; **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արեւելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը, էջ 77-95; **Б. Арутюнян**, Административное деление закавказских владений Сасанидского Ирана, с. 19-35; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 109-114; **И. Г. Семенов**, Этнополитическая история Восточного Кавказа, с. 14; **Cl. Mutafian**, L'Arménie du Levant, t. I, p. 278.

[2] **Բ. Ուլուբաբյան**, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, էջ 178-182; **Բ. Հարությունյան**, Մազթաց Սանեսան թագաւորի արշավանքը, էջ 65-77; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 100-106; **Հ. Խորիկյան**, Բաղասական երկրի տեղադրութիւնը, էջ 150-168:

[3] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 142-149.

[4] Վերջերս տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 31-33, 36-37, 134-135; **Ա. Շահինեան**, Արմինիյա արաբական նահանգի սահմաններն ու վարչա-տարածքային բաժանումը ըստ արաբագիր սկզբնաղբիւրների, – Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. Լ, Պէյրութ, 2010, էջ 319-328:

[5] Կրկնենք, որ այդ երկու հաստատութիւնների իրաւասութիւնները տարածւում էին Աղուանք կամ Առան երկրի ողջ տարածքի վրայ՝ մինչեւ Կովկասեան լեռներ եւ Դերբենդ:

կան է, որ Խալիփայութեան թուլացման դարաշրջանում (Թ դ. վերջ) Հայոց Արեւելից կողմերի խոշոր աւատական իշխանութիւնները մաս կազմեցին ոչ թէ Բուն Աղուանքում վերականգնուած թագաւորութեան (Շաքի մայրաքաղաքով), այլ Մեծ Հայքի Բագրատունեաց պետութեան: Այդ իշխանութիւններից առաւել նշանաւոր դարձան Խաչէնը՝ Արցախի կենտրոնում, Գորոգուն՝ Արցախի հարաւում (ուշ միջնադարում կոչուած՝ Դիզակ), եւ Փառիսոսը՝ Արցախ եւ Ուտիք նահանգների հիւսիս-արեւմուտքում (աւելի վաղ կոչուած՝ Գարդման, երբեմն նաեւ՝ Սեւորդիք):

Ըստ առկայ աղբիւրների համադրութեան՝ Խաչէնի իշխանատոհմը սերում էր վաղմիջնադարեան «Ծաւդէացի» անունը կրող իշխանութիւնից[1], սակայն, ինչպէս բազմիցս վկայուած է Ժ դ. վերջի տեղացի պատմիչ Մովսէս Դասխուրանցու ՊԱ-ում, այն արդէն որդեգրել էր ուրիշ ինքնանուանում՝ «Առանշահիկ» (var. Եռանշահիկ)[2]: Տեղին յիշենք, որ ըստ Մովսէս Խորենացուն հասած պատկերացումների՝ Գարդմանացի, Ծաւդէացի, Գարգարացի եւ Ուտէացի իշխանական տոհմերի աւանդական նախահայրը համարուող Առանն ինքը ծագում էր Սիւնեաց նախահայր Սիսակից[3]: Հարկ է նկատի ունենալ, որ ապագայ Արցախ աշխարհի հարաւային մեծ հատուածի անջատումն ուշ արտաշիսեան եւ վաղ արշակունեաց Մեծ Հայքի Սիւնիք/Սիսական/Սիսական նահանգից կարող էր կատարուած լինել այն նոյն պահին, երբ տեղի էր ունեցել անտիկ հեղինակների ճանաչած Սոդուկէնէ/Ծաւդէ նահանգի ենթադրելի մասնատումը երկու մասի՝ Սիւնիքի գաւառ Սօդք/Սոթքի եւ նրանից արեւելք ընկած արցախեան գաւառների: Նկատենք նաեւ, որ առնուազն Դ դ. կէսերի պատկերն արտացոլող «Զօրանամակ»-ի համաձայն՝ Սոդացի, այսինքն՝ Սոթքի նախարարական տունը (50 «մարտիկ արանց»-ով) Սիւնեաց գահերէց

Ըստ «684 թուականի պատմութեան»՝ Խալիփայութեան յատկացրած իրաւունքով Ջեւանշէր իշխանը «զորս առ լերամբն Կովկասու՝ զվայրագասունսն, իմաստաբար ածէր ի զգայութիւն: Այսպէս ի սահմանացն Վրաց մինչեւ ի դրունս Հոնաց՝ միահեծան ճոխութեամբ եղեւ տէր մինչեւ ցգետն Երասխ» (**Դասխ.**, Բ.իա, էջ 183; ՄՀ, հտ. Ե, էջ 819):

[1] Հմմ. **Բ. Ուլուբաբյան**, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, էջ 182-186; **Ա. Յակոբեան**, Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը, սն. 74:

[2] **Դասխ.**, Ա.իէ, էջ 97 (բնագրերը՝ մեր որոշ սրբագրումներով). «վեհագգի ոմն իշխան Վարազ Փերոժ անուն՝ յԱռանշահիկ [*bclrv* յԱռանշահիկն] տոհմէ»; Բ.ժէ, էջ 172. «Ի ննջգել ի սիրտ իւր զնախնական ազգն Հայկազեանց՝ Եռանշահիկս... միայն թողոյր ի նոցանէ զփեսայացեալն իւրում ցեղին Զարմիհրին [*bclrv* ազգին Զառմիհրի] Եռանշահիկ»; Գ.ժզ, էջ 320. «զԵռանշահիկն զվաչագան ի Պատրիկեան Աղուանից իշխան»; Գ.ժթ /ի/, էջ 326. «արի եւ շքեղատեսակն Սահլ-ի [*a* Սահղ-ի] Սմբատեան Եռանշահիկն տէր»: Տե՛ս նաեւ Գ.ի /իա/, էջ 330 («Սահլ-ի Սմբատեան, որ յարքայից Զարմիհրական [*blr* Զառմիհրական] տոհմէն էր»); Գ.իա /իբ/, էջ 336 («սպանաւ Ապու Ալի Աղուանից իշխանն Հայկազնի [*lv* Հայկազունի]»); Գ.իբ /իգ/, էջ 338 («ընդ Հայկազնեաց արանց խնամաւորիլ Միհրական [*a* հական, *b* ի Միհրական] տոհմին»); էջ 340 («ամուսնացուցանէ զՍպրամ Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ, որ է [*a* էր] ի տոհմէն Հայկայ [*a* տոհայկա]»):

[3] **Խոր.**, Բ.ը, էջ 113; ՄՀ, հտ. Բ, էջ 1859: Դրուագի մասին վերջերս տե՛ս **Հ. Սվազյան**, Խորենացիական ավանդազրույցի Սիսակ-Առանյան ճյուղը եւ նրա պատմական ատաղձը, – Ծուշին Հայոց քաղաքակրթության օրրան. Ծուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր (Ստեփանակերտ-Ծուշի, 2007), Եր., 2007, էջ 5-19:

իշխանի հրամանատարութեան տակ Մեծ Հայքի Աւեւելեան Դռան պաշտպանողների թւում էր, իսկ արցախեան Ծաւդէացի նախարարական տունը՝ Հիւսիսային Դռան պաշտպանողների (Գուգարաց բդեշխի հրամանատարութեան տակ, 1000 «մարտիկ արանց»-ով եւ հարեւան ու նոյնքան զինուժի տիրապետող Ուտէացի եւ Գարդմանեցի նախարարական տների պէս)[1]: Ի դէպ, կարելի է նկատել նաեւ Աւեւելեան Դռան պաշտպանների այդ ցուցակի (ուր յիշուած են 21 նախարարական տներ աշխարհացոյցեան Սիւնիք, Վասպուրական, Պարսկահայք եւ Այրարատ նահանգներից) Գրզճունի տոհմանունը աշխարհացոյցեան Արցախ նահանգի Հաբանդ գաւառի նշանաւոր Գորոզու բերդի անուան հետ համադրելու հնարաւորութիւնը (զոյգ Ո-երի սղման տարբերակով՝ Գ[ո]ր[ո]զճունի): Յայտնի է, որ Գորոզ-ը կամ Գորոզու-ն հայ եւ օտար զանազան բնագրերում կիրառուած է նաեւ իբրեւ գաւառանուն՝ Դիզակի իշխանութեան ողջ տարածքը նշանակելու համար[2], ուստի տուեալ համադրման դէպքում լրացւում է վաղ շրջանում Սիւնիքի հետ Հարաւային Արցախի յատուկ կապի մասին մեզ հասած աղբիւրագիտական նիւթը[3]: Տեղին նշենք, որ որոշ վերապահումով ենթադրելի են նաեւ մեզ հետաքրքրող հարցադրումներից միւսի՝ աշխարհացոյցեան Սիւնիքի առանձին մասերում իշխանական տների արձանագրման առումով նոյնքան ուշագրաւ, նորերս նկատուած երկու համադրութիւններ. Յողկեպան (100 մարտիկ) – *Ձոր[ք]-Կապա՞ն, եւ Կինան (50 մարտիկ) – Կէնուա՞զ (Կէնաւուզ, Կէնաւնուզ, Գէնուազ [=Կէնուա՞զ]. հմմ. նաեւ խորհրդաւոր Կնէվանքի անունը[4]), Թէկուզ եւ վերջին գաւառանունն «Աշխարհացոյց»-ի եւ բազմաթիւ այլ աղբիւրների Աւեւիճ գաւառի համար (մի դրուագում՝ նաեւ «Աբեւեաց տուն») լոկ ուշ միջնադարում է արձանագրուած[5]:

Արդ՝ 837 թ. Սահլ Սմբատեան խաչէնցի իշխանը, որն արաբական աղբիւրներում կոչուած է Սահլ իբն Սինբաթ[6], իսկ Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան»

---

[1] Տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, с. 251; **Ա. Յակոբեան**, «Գաւիճամակ ազատաց եւ տանուտէրաց Հայոց» եւ «Զաւրանամակ», էջ 544-546:

[2] Դիզակ-Գորոզուի իշխանութեան մասին յայտնի տուեալներին պէտք է յաւելել Ժ դարի արաբ մատենագիր Իբն Հաուկալի 955 թ. հարկացուցակի՝ դեռ թոյլ նկատուած, բայց կարեւոր տեղեկութիւնը, որը տարածաշրջանի իշխանութիւնների շարքում յիշատակում է Ջուրզ – Գորոզուի տէր «Վաշական իբն Մուսա»-ին. տե՛ս **V. Minorsky**, Caucasica IV: II. The Caucasian Vassals of Marzubān, – BSOAS, 1953, XV/3, p. 519; **Ա. Ն. Տեր-Ղեւոնդեան**, Հայաստանի բնաւարկը արաբական ժամանակաշրջանում, – ԼՀԳ, 1969, հմր 2, էջ 58; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 642:

[3] Հմմ. **Գ. Սարգսեան, Ա. Յակոբեան**, Նորայայտ Կարկառ քաղաքատեղին, էջ 43-59:

[4] **Օրբ.**, գլ. ԿԱ, էջ 248; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԿԲ, էջ 338:

[5] Տե՛ս, օր.՝ Դաւիթ-Բէկ կամ Պատմութիւն Ղափանցւոց, Աշխատասիրեց՝ **Հ. Ս. վրդ. Աբրամեան**, Վենետիկ – Ս. Ղազար, 1978, էջ 122-126, 133-134, 152-160: Այս ամբողջի մասին նախապէս տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 282-283; **նոյնի՝** «Գաւիճամակ ազատաց եւ տանուտէրաց Հայոց» եւ «Զաւրանամակ», էջ 545, ծն. 37; էջ 546, ծն. 46:

[6] Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, Հաւաքեց ... **Բ. Խալաթեանց**, էջ 95-96, 101; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 218, 281, 387-388:

հայերէն թարգմանութեան մէջ՝ Սահակ Հայկազուն[1], իր տիրոյթներում ձերբակալեց Ատրպատականի ապստամբ աղանդաւորների առաջնորդ Բաբան/Բաբեկին: Դրա համար նա խալիփայութիւնից արժանացաւ մեծ պարգեւների, աւելի քան մէկ միլիոն դիրհեմ գումարի, շնորհների (ապահարկութեան) եւ, ըստ ամենայնի՝ բուն Խաչէնի իր տիրոյթներին միացրեց հարեւան Սիւնիք նահանգի Սոթք գաւառի տարածքը Սեւանայ լճի հարաւ-արեւելեան ափերին ու Տրտու գետի վերնահովտում՝ Դադիվանքի ձորահովտից (աղբիւրի եզրոյթով՝ «խորաձորից») արեւմուտք, որն, թերեւս, որոշ հիմքերով վիճելի տարածք է եղել Սիւնիքի եւ Արցախի հայ աւատատէրերի միջեւ[2]: Դասխուրանցու բառերով՝ Սահլը «բռնազբաւսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»[3]: Նոյն աղբիւրի հաղորդած միւս տեղեկութեամբ, որը յանգում էր Մաշտոց Եղիվարդեցու «Պատմութեանը»՝ Սահլն ստացել էր նաեւ Հայոց, Վրաց եւ Աղուանից աշխարհների, այսինքն՝ ամբողջ Արմինիյա կուսակալութեան իշխանաց իշխանի պաշտօնը (բնագրում. «Եւ ի նոյն ամին[4] նոյն տէրն Սահլ ի Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բաբան՝ զմարդախողխող, աշխարհաւեր, արիւնարբու գազանն, եւ ետ ի ձեռս Ամիր Մոմնոյ: Եւ ընդ վաստակոցն առնու յարքունեացն վարձս բարիս, զի առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար»)[5]: Ըստ որոշ արաբ հեղինակների (ալ-Քուֆի, ատ-Տաբարի, Իբն ալ-Ասիր)՝ Սահլ Իբն Սինբաթը խալիփայից անգամ «բատրիկի թագ» էր ստացել[6]: Ալ-Քուֆին (թ դ. վերջ), այդ վկայութիւնից բացի, մի կարեւոր մանրամասնութիւն է հաղորդում. «Երբ Մութասիմը [խալիփայ՝ 833-842 թթ.] իմացաւ, թէ ինչ է արել Սահլ Իբն Սումբաթը Բաբաքի հետ, նրան մարգարիտներով եւ գոհարներով զարդարուած ոսկէ թագ ուղարկեց: Թագի գինը 500 հազար դիրհեմ էր: Բացի այդ, նա Սահլ Իբն Սումբաթին նշանակեց [Արմինիյա երկրի] բոլոր բատրիկների գլխաւոր»[7]:

---

[1] Ժամանակագրութիւն **Տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի**, էջ 365 («Եւ ինքն Մահադի [*իմա՛* Բաբեկը] ընկեցեալ զթագն եւ զքողն՝ փախչէր, եւ անկաւ յերկիրն Հայկազնոյն Սահակայ... եւ Սահակ իշխանն Հայազուն ըմբռնեաց զՄահադի...»):

[2] Մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 225-245, 264-270:

[3] **Դասխ.**, Գ.իգ /իդ/, էջ 340:

[4] Նախորդ պարբերութեան մէջ ասուած էր. «յերկու հարիւր ութսուն եւ վեց թուոյն Հայոց...». դա 1.05.837 – 30.04.838 թթ. միջակայքն է:

[5] **Դասխ.**, Գ.ի /իա/, էջ 330:

[6] Tarikh **at-Tabari**, Édition critique par **M. Abu-l-Fath Ibrahim**, T. IX, Le Caire, 1969, p. 54 (ցաւօք, ռուսերէն հատուածական թարգմանութեան մէջ այս դրուագները բաց են թողնուած. տե՛ս История **ат-Табари**, Пер. **В. И. Беляева**, Ташкент, 1987); **Իբն ալ-Ասիր**, էջ 143-144: Սահլի կողմից Բաբեկի ձերբակալման հանգամանքների մասին մանրամասն տե՛ս **Յ. Քիւրտեան**, Բաբակ եւ Սահլ իպն Սնբատ, – «Բազմավէպ», 1958, էջ 9-22, 72-83:

[7] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հտ. 2 (III դարի կեսերից մինչեւ IX դարի կեսերը), Կազմեցին՝ **Պ. Հովհաննիսյան** եւ **Ա. Մովսիսյան**, Եր., 2011, էջ 380 (Ահմադ Իբն Ասիմ ալ-Քուֆիի «Նուաճումների գրքի» հատուածների թարգմանութիւնը՝ Արման Եղիազարեանի՝ ըստ **Ahmad Ibn A'tham al-Kūfī**, Kitāb al-futūh, Vol. 8, Hyderabad, 1971, p. 346); **Абу Мухаммад Ахмад ибн А'сам ал-Куфи**, Книга завоеваний (Извлечения по истории Азербайджана VI-IX вв.), Пер. **З. Буниятова**, Баку, 1981, с. 72.

«Հայոց, Վրաց եւ Աղուանից» իշխանաց իշխանի կամ Արմինիյայի «գլխաւոր բատրիկի» (այլուր՝ «բատրիկ ալ-բատարիկա») պաշտօնը, ըստ ամենայնի՝ փոխանցիկ էր, քանի որ Մովսէս Դասխուրանցու (=Մաշտոց Եղիվարդեցու) պահպանած հէնց յաջորդ տեղեկութեան համաձայն՝ այն արդէն 1-2 տարուց տրուեց «տերանց տէր» կոչուած ոմն Յովհաննէսի («Ի սոյն ամի [իմա՛ 838/839 թ.][1] տերանց տէրն Յովհաննէս, որ Հայոց եւ Վրաց եւ Աղուանից եղեւ տէր, եւ խնդրեաց յարքունեացն կրկին անգամ զԲուլխարխոյ, [նա] տա[յ] փատգոս երիցս այսոցիկ աշխարհաց»)[2]: Հնարաւոր է, որ տուեալ փոփոխութեան պատճառը կապուած է եղել Մուհամմեդ ալ-Ազդի ալ-Սամարղանդի փոխոստիկանապետի դէմ Սահլ Սմբատեանի այն ըմբոստութեան հետ, որի մասին տեղեկութիւն է պահպանել արաբ պատմիչ Եակուբին[3]: Իսկ Ապուսեթի որդի Յուսուփ արաբ ոստիկանի՝ 851 թ. արշաւանքի ժամանակ եւ դրանից էլ շատ առաջ, ըստ Յովհաննէս Դրասխանակերտցու յայտնի վկայութեան՝ իշխանաց իշխանի նոյն պաշտօնն ունէր կենտրոնական Հայաստանի Բագրատունիներից Աշոտ Մսակեր իշխանի որդի[4] Բագարատը («վասն զի ի ժամանակին Բագարատ Բագրատունի հրամանատար եւ իշխան իշխանացս Հայոց գտանէր առ նմա [իմա՛ 841 թ. բանսարկութիւնների թիրախ դարձած Յովհաննէս Ովայեցի կաթողիկոսին – Ա. Յ.]»)[5]: Թովմա Արծրունու մօտ Բագարատ Բագրատունին կոչուած է «իշխան Տարունոյ Բագարատ, վասն զի ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութեան իշխանաց Հայոց, որ էր ի տոհմէն Բագրատունեաց...»[6]: Նրան իշխանաց իշխան են կոչում նաեւ Ապուսեթի եւ Յուսուփի դէմ ապստամբութեան մասին պատմող արաբ հեղինակները՝ Իբն Միսկաւայհը, ատ-

---

[1] Նախորդ պարբերութեան մէջ ասուած էր. «Այլ յերկու հարիւր ութսուն եւ եաւթն թուականին Հայոց...». դա 1.05.838 – 30.04.839 թթ. միջակայքն է:

[2] **Դասխ.**, Գ.ի /իա/, էջ 330-331; **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 43: Այստեղ եւ այլուր «փատգոս» նշանակում է «կուսակալ»: Այս հատուածը (այդպէս եւ՝ նախորդը) պահպանուել է Դասխուրանցու երկի լոկ Բ խմբի ձեռագրերում, որը բաժանւում է 2 ենթախմբի՝ *crv* եւ *bl* (տե՛ս **Ա. Հակոբյան**, Մովսէս Կաղանկատվացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, էջ 110-144; **Ginzi**՝ Албания-Алуанк..., с. 150-161). Երկի 1983 թ. հրատարակիչը տուել է այս հատուածի՝ միայն *crv* ենթախմբի գրչագրերի ընթերցումները, որտեղ գրիչները դարձրել են շփոթեցնող՝ «զԲուլխար, Խոյտա, Փատգոս» *փխն.* «զԲուլխարխոյ, տա[յ] փատգոս», ինչպէս որ առկայ է մեր կողմից համեմատուած *b*, *l* եւ *i* գրչագրերում (վերջինը 1685-ին արտագրուած է *l*-ից):

[3] Տե՛ս Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 388:

[4] Տե՛ս **Վարդան**, էջ 108 («Ցետ այսորիկ վախճանի ի մահիճս Աշոտ, եւ առնու զիշխանութիւն Սմբատ որդի նորա ամ մի... եւ եղբարք նորա Դաւիթ եւ Սահակ եւ Մուշեղ եւ Բագարատ առեալ զմայրն իւրեանց՝ չոգան ի Մուփարղին առ Խալափ ամիրայն...»): Հմմ. **Գ. Ս. Գրիգորյան**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանութիւնը IX-XI դարերում, Եր., 1983, էջ 56:

[5] **Դրասխ.**, էջ 115; **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց Պատմութիւն, Հայերեն բնագիրը վրացերեն թարգմանությամբ եւ ուսումնասիրութեամբ՝ **Ե. Վ. Ցագարեյշվիլու**, Թբիլիսի, 1965 (յետայսու՝ **Հովհ. Դրասխանակերտցի**), էջ 9-10; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XXV, p. 179.

[6] **Թովմա**, գլ. Բ.ե, էջ 107; **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 122; ՄՀ, հտ. ԺԱ, էջ 141: Բնագրի ընդգծուած բառի անհրաժեշտ սրբագրումը կարէն Իւզբաշեանինն է (տե՛ս **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия, с. 54).

Տաբարին եւ Իբն ալ-Ասիրը (տե՛ս, օր.՝ առաջինի մօտ. «[Յուսուփ իբն Մուհամմեդի մօտ] գնաց [Արմինիյայի] իշխաններից մէկը՝ Բագարատ [Բուքրատ] որդի Աշոտի, որ իշխանաց իշխան [բատրիկ ալ-բատարիկա] անունն էր կրում»[1]): Այնուհետեւ 862 թ. իշխանաց իշխան դարձաւ Աշոտ Մսակերի միւս որդի Սմբատ սպարապետի (արաբական աղբիւրներում կոչուած նաեւ՝ Աբու-լ-Աբբաս ալ-Վարիսի) աւագ որդի Աշոտը (ապագայ արքան): Դրասխանակերտցու խօսքերով. «Եւ այսպէս ապա զկարգ սպարապետութեան քաղաքավարեալ՝ մինչեւ համբաւ բարւոյն ի դուռն արքունի հասանէր: Ապա ոստիկան ոմն ի Հայս առաքեալ, որ Ալի Արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա կացուցանէր, բազում զգեստիւք եւ արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս Հայոց եւ ամենայն բեկար արքունի»[2]: Իսկ ըստ Թովմա Արծրունու՝ «...քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան, ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զվրաց եւ զԱղուանից, որ եղեւ իսկ»[3]: Նոյն կերպ է նաեւ Ասողիկի մօտ. «Սա նախ քան զթագաւորութիւնն երեսնամեայ ժամանակաւք իշխան եւ իշխանաց իշխան եղեալ Հայոց եւ վրաց, եւ յաղթող ամենայն ազգացս շուրջանակի»[4]: Աշոտն այդ պաշտօնը վարեց մինչեւ վերջ, այսինքն՝ երբ 884/885-ին (կամ, գուցէ՝ 886 թ.)[5] այն փոխարինեց խալիփայի կողմից ճանաչուած, թէպէտ եւ նրա գերակայութիւնն ընդունող ու նրան հարկատու թագաւորի կարգավիճակով. այդ կարգավիճակի մասին առաւել հանգամանալից տե՛ս կարէն Իւզբաշեանի հիմնարար մենագրութեան մէջ[6]:

Արդէն Ա. Տէր-Ղեւոնդեանի դիտարկմամբ՝ մինչթագաւորական շրջանում պիտի յստակ տարբերակել Հայոց իշխանի եւ Հայոց իշխանաց իշխանի հաստատութիւնները եւ վերջինիս իրաւասութիւնները տարածուած համարել ողջ Արմինիյա ոստիկանութեան տարածքի, այսինքն՝ նաեւ հարեւան Վիրքի եւ Աղուանքի վրայ[7]:

---

[1] Տե՛ս Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, Հաւաքեց ... **Բ. Խալաթեանց**, էջ 77, 97; **Իբն ալ-Ասիր**, էջ 157: Հմմ. **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, – Պատմական ուսումնասիրութիւններ, էջ 123: Ա. Տէր-Ղեւոնդեանի հիմնարար մենագրութեան մէջ Բագարատին մի ամբողջ ենթագլուխ է նուիրուած (**А. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, с. 132-138).

[2] **Դրասխ.**, էջ 133; **Հովհ. Դրասխանակերտցի**, գլ. XXVII, էջ 195:

[3] **Թովմա**, գլ. Գ.ժդ, էջ 206; **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 230; ՄՀ, հտ. ԺԱ, էջ 220:

[4] **Ասողիկ**, Գ.բ, էջ 158: Նշուած պատմիչներին կրկնում են նաեւ աւելի ուշ հեղինակները:

[5] Հմմ. ՀԺՊ, հտ. III, Եր., 1976, էջ 23-24: Մի վերջին աշխատանքում փաստարկւում է 881-883 թթ. միջակայքի հնարաւորութիւնը (**Մ. Գ. Գրիգորյան**, Բագրատունյաց թագավորության սկզբնավորման թվագրության շուրջ, – ԼՀԳ, 2012, հմր 2-3, էջ 114-125): Հմմ. նաեւ **Ա. Եղիազարյան**, Հայոց Սմբատ Ա թագավորի գահակալության շրջանի ժամանակագրությունը, – «Էջմիածին», 2014, հմր Ե, էջ 38-51; նոյնի՝ Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց (թագադրության թվականը եւ գահակալության տարիները, Եր., 2014:

[6] **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия, с. 37, 68-71; **Ա. Շահինեան**, Հայոց վերջին կայսրութեան ծնունդը արաբական գերիշխանութեան պայմաններում, – Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. ԼԲ, Պէյրութ, 2012, էջ 165-183:

[7] **Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան**, «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում, – ՊԲՀ, 1964, հմր 2, էջ 129-130:

Ի դէպ, դրան առարկում էր Գնել Գրիգորեանը[1], սակայն կարծում ենք, որ կասկածի տեղիք կարող է տալ լոկ յարակից երկրների կախուածութեան բացարձակութիւնը, այլ ոչ թէ կախուածութեան որոշ աստիճանն ընդհանրապէս[2]:

Գրականութեան մէջ արմատաւորուած՝ Նիկ. Ադոնցի կարծիքի համաձայն՝ Մովսէս Դասխուրանցու (=Մաշտոց Եղիվարդեցու) «տերանց տէր», այսինքն՝ «իշխանաց իշխան» Յովհաննէսն, իբրեւ թէ, եղել է Սահլ Սմբատեանի որդին եւ Բաբեկին գերելու պահին արաբների կողմից կոչուել է Մուաւիա[3]: Սակայն միանգամից նշենք, որ սա այն աղբիւրագիտօրէն հիմնազուրկ տեսակէտներից է, որոնց մասին 1893 թ. շատ դիպուկ է արտայայտուել յայտնի պատմաբան Էդ. Մեյերը: Նրա խօսքերով՝ հին աշխարհի պատմութեան բնագաւառում մեր ժամանակի հետազօտութիւնները ծնել են բազմաթիւ թիւր կարծիքներ ու վարկածներ, որոնք անցնում են մի աշխատանքից միւսին եւ յաճախ դիտարկւում իբրեւ անվիճելի փաստեր կամ անգամ որպէս աղբիւրների տուեալներ[4]: Իրականում՝ ատ-Տաբարին եւ Իբն ալ-Ասիրը Մուաւիա են կոչել Սահլի այն որդուն, որին իր 853-855 թթ. արշաւանքի ընթացքում գերեվարել էր արաբ ոստիկան-զօրապետ Բուղան, այսինքն՝ մեզ քաջածանօթ Ատրներսեհին[5] (այս ճիշտ ընկալումը հմմ. դեռ Աշ. Յովհաննիսեանի մօտ. «Իբն ալ-Ասիրը նշում է Սահլի որդուն նրա արաբական՝ Մուաւիա, իսկ Դասխուրանցին նրա քրիստոնեական՝ Ատրներսեհ անունով»[6]): Նոյն կերպ՝ աւանդաբար գրում են, թէ ՊԱ-ում յիշուած այդ «տերանց տէր» եւ «Սահլի որդի» Յովհաննէսն է նշուած Մեծարանից Ս. Յակոբավանքի հնագոյն խաչքարի պատուանդանի վիմագրում, թէպէտ նրա բնագիրը լոկ հետեւեալն է. «:ՅԲ: թուականութեանս Հայո[ց] [=27.04.853 – 26.04.854 թթ.], ի ժամանակս Յովանիսի Աղվանից{ից} իշխանի, ես՝ Սողոմ{ոն Մ}եծարանց եպիսկ{ոպոս}, կանգնեցի...»[7]:

Տոհմագրութեան պատկերի լրացման համար յաւելենք, որ Մովսէս Դասխուրանցին (=Մաշտոց Եղիվարդեցին) վկայութիւն ունի Սահլ իշխանի եղբայրների

---

[1] **Գ. Ս. Գրիգորեան**, Տարօնի Բագրատունիների ֆէոդալական իշխանութիւնը, էջ 71-72 (ծն. 53):

[2] Հմմ. **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия, с. 56-57.

[3] Տե՛ս **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 129-130; **V. Minorsky**, Caucasica IV: I. Sahl ibn-Sunbāṭ of Shakkī and Arrān, – BSOAS, XV/3, 1953, p. 509-510; **Ս. Գ. Բարխուդարյան**, Արցախի, Ծաքիի եւ Փառիսոսի իշխանութիւնները IX-X դարերում, – ՊԲՀ, 1971, հմր 1, էջ 64-65; **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 73-74:

[4] Տե՛ս **E. Meyer**, Geschichte des Altertums, Bd. III, Stuttgart, 1954, Aus dem Vorwort zur Auflage von 1893, S. XIII (ըստ՝ **К. К. Зельин**, Борьба политических группировок в Аттике в VI веке до н. э., Москва, 1964, с. 8).

[5] Տե՛ս Tarikh **at-Tabari**, t. IX, p. 54; **Իբն ալ-Ասիր**, էջ 159 («...տարաւ նաեւ [Բուղան] Աբուլ-Աբբաս ալ-Վարիսիին, որի անունն էր Սինբաթ իբն Աշոթ, ինչպէս նաեւ Մուաւիա իբն Սահլ իբն Սինբաթին՝ Առանի բատրիկին»): Հմմ. **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 266-268:

[6] **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հտ. Ա, Եր., 1957, էջ 120:

[7] Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, էջ 12, հմր 1:

մասին («Յայնժամ արի եւ շքեղատեսակն Սահլ [a Սահղ] ի Սմբատեան Տոհմէն հիկն տէր՝ fաջազաւր եղբաւրաւիճն իւրովք եւ զաւրաւքն իւրեանց ի լուսանալ առաւաւտուն ի վերայ յարձակեալ՝ առ հասարակ դիաթաւալ [bclrv դիթաւալ] զնոսա ցիր եւ ցան կացուցանէին եւ որպէս յառիւծու ժանեաց զգերեալսն ի բաց կորզէին»)[1]: Ժ դարի վերջերի արաբ աշխարհագէտ ալ-Մուկադդասին էլ մի դրուագ գիտի Սահլի fոջ մասին, որի հանդէպ Բաբեկը ոտնձգութիւն էր կատարել[2]:

Տեղին նշենք նաեւ, որ վերջերս Կոնստանտին Յուկերմանը, վերյիշելով Յոզէֆ Մարկուարտի արտայայտած վարկածը, հնարաւոր համարեց Սահլ Սմբատեանին համադրել Սիւնեաց իշխան Սահակ Հայկեանի հետ եւ, այդպիսով, վերջինիս որդի Գրիգոր Սուփանին ներկայացնել իբրեւ Սահլի որդի Ատրներսեհի աւագ եղբայրը[3]: Սակայն տուեալ վարկածն անտեսում էր Ստեփաննոս Օրբէլեանի եւ այլ պատմիչների հաղորդած մեծածաւալ աղբիւրագիտական նիւթը, ըստ որի այդ Սահակը որդին էր Խաչէնի հետ ոչ մի կապ չունեցող՝ Թ դ. սկզբի Սիւնեաց գահերէց իշխան Վասակի: Տե՛ս, օր.՝ «Յետ Վասակայ բաժանեն զհայրենի ժառանգութիւն իւրեանց երկու որդիքն՝ Փիլիպպէ եւ Սահակ. եւ լինի Փիլիպպէ գահերէց իշխան Սիւնեաց. եւ Սահակ առնու բաժին զգաւառն Գեղամայ բոլոր: Մեռանի Փիլիպպէ եւ թողու երիս որդիս... Յետ սակաւուց մեռանի եւ Սահակ ի պատերազմի Հաւլ ամիրային, յեզր Հուրազդան գետոյն՝ մերձ կաւակերտոյ աւանին [=831 թ.!, յիշենք, որ Սահլին գերի տարան 855-ին[4] – Ա. Յ.], եւ թողու ժառանգ ինքեան զԳրիգոր որդի իւր՝ Սուփան կոչեցեալ»[5]: Կարելի է նաեւ յաւելել, որ Դասխուրանցին (=Մաշտոց Եղիվարդեցին) Գրիգոր Սուփանի մահը թուագրում է 852-ով, որը Բուղայ ոստիկանի արշաւանքի նախորդ տարին էր. «Եւ տէր Սուփան վախճանեցաւ ի Վայոյ [bcelv Վայոց] ձոր ի նոյն ամի[6]: Եւ ի միւս տարին եկն Բուղխա [bc Բուխայ, l Պուղայ] ի Հայս [bcelv Հայք]»[7]:

---

[1] **Դասխ.**, Գ.ժթ /ի/, էջ 326; **Ա. Ցակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 30-31:

[2] Տե՛ս **Յ. Քիւրտեան**, Բաբակ եւ Սահլ իպն Սնբատ, էջ 21-22: Հմմ. **Իբն ալ-Ասիր**, էջ 143:

[3] **C. Zuckerman**, À propos du Livre des cérémonies, II, 48, – "Travaux et Mémoires", t. 13, Paris, 2000, p. 570-571. Հմմ. **J. Marquart**, Osteuropäische und ostasiatische Streifzüge. Ethnologische und historisch-topographische Studien zur Geschichte des 9. und 10. Jahrhunderts, Leipzig, 1903, S. 457.

[4] Ըստ արաբական աղբիւրների՝ Բուղան Հայաստանից հեռացել էր Հիջրէի 241 թուականին, որն ընկնում է 22.05.855 – 9.05.856 թթ. միջակայքում (հմմ. **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 129, ծն. 1): Հիջրէի թուականն այստեղ եւ ստորեւ տալիս ենք ըստ հետեւեալ ժամանակագրական աղիւսակների. **V. Grumel**, La chronologie, Paris, 1958 (տե՛ս էջ 283); **В. В. Цибульский**, Современные календари стран Ближнего и Среднего Востока, Москва, 1964 (տե՛ս էջ 32):

[5] **Օրբ.**, գլ. ՃԴ, էջ 217; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ՃԵ, էջ 296-297: Այս դէպքերի մասին մանրամասն տե՛ս, օր.՝ **Հ. Ութմազյան**, Սյունիքը IX-X դարերում, Եր., 1958, էջ 305; **А. Карагезян**, Историко-географические уточнения, – ВОН, 1988, № 3, с. 59.

[6] Նախորդող մի պարբերութեան մէջ ասուած էր. «Եւ ի լնուլ երրորդ ճարիւր թուոյ Հայոց...». դա 28.04.851 – 26.04.852 թթ. միջակայքն է:

[7] **Դասխ.**, Գ.ի /իա/, էջ 332-333; **Ա. Ցակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 47:

855 թ. Բուղան բազմաթիւ հայ իշխանների հետ միասին գերեց ու Սամառա տարաւ նաեւ Սահլին[1] եւ նրա որդի Ատրներսեհին. վերջինիս Թովմա Արծրունին կոչում է «իշխան Աղուանից», Յովհաննէս Դրասխանակերտցին՝ «զմեծ իշխանն..., որ բնակեալ էր յամրոցին Խաչենոյ», Ասողիկը՝ «զիշխանն Խաչենոյ» (արաբ հեղինակները՝ «Առանի բատրիկ» եւ «Մուաւիա»): 861 թ., Մութաւաքիլ խալիփայի սպանութիւնից յետոյ, նա ազատուեց ու հայրենիք վերադարձաւ. Սահլի մասին որեւէ տեղեկութիւն չունենք, եւ աւելի հաւանական է ենթադրել, որ նա իր մահկանացուն կնքել էր Սամառայում: Ըստ Մովսէս Դասխուրանցու՝ Ատրներսեհը կառուցեց Հանդաբերդը (Տրտուի ձախ վտակ Լեւագետի հովտում), իսկ նրա կին Սպրամը (վերջին «Միհրանեանի» դուստրը)՝ Սոթք գաւառի Նորավանքը: Նրանց աւագ որդի Գրիգոր Ատրներսեհեանը (Մեծ Մազրայի 881/882 թ. վիթխարի խաչքարը կանգնեցնողը[2]) Հաւախաղաց բերդը կառուցելուց յետոյ (Տրտուի աջ վտակ Թութխուի գետաբերանից հարաւ-արեւելք) իր իշխանութիւնը տարածել էր «այն կողմ» (աղբիւրի բառերով), ըստ ամենայնի՝ Գարդման եւ Քուստ-ի Փառնէս գաւառների վրայ. այս վերջին երկրամասում առաւել ամրապնդուեց (աղբիւրի բառերով՝ «առհասարակ տիրեաց») եւ ժ. դ. սկզբին Փառիսոսի հզօր իշխանութիւնը հիմնադրեց Գրիգորի 5 որդիներից երրորդը՝ Սահակ Սեւադան:

Ուղղելով Բագրատ Ուլուբաբեանի մի սխալը՝ պէտք է արձանագրել, որ Փառիսոսի հետ զուգահեռ հզօրացած Խաչէնի իշխանութիւնն սկիզբ էր առնում ոչ թէ Սահակ Սեւադայի որդուց, այլ նրա մի եղբօրից[3]: Ի դէպ, մերժելի են նաեւ գիտնականի այն պնդումները, իբրեւ թէ հնարաւոր է Սահակ Սեւադայի հայր Գրիգոր Ատրներսեհեանին համադրել Շաքի/Հերէթի թագաւոր Համամի հետ, իսկ դստերը՝ 970 թ. (կամ 987-ին) Սիւնիքի առաջին թագաւոր դարձած Սմբատ Ա-ի կնոջ՝ Շահանդուխտ Ա-ի հետ. ըստ Ստեփաննոս Օրբէլեանի եւ մի քանի վիմագրերի՝ վերջինս, իրօք, դուստրն էր «Աղվանից իշխան» Սեւադայի, բայց դա, անշուշտ, Սահակ Սեւադայի թոռն էր՝ Սեւադայ-Իշխանանունը[4], որի աւագ որդի Յովհաննէս-Սենեքերիմը հիմնադրեց Փառիսոսի թագաւորութիւնը, իսկ միւս դուստրը դար-

---

[1] Բուղա զօրապետի ժամանելու նախօրեակին Սահլի ապստամբած լինելը նշում է ալ-Բալազուրին. «...Իսհակ իբն Իսմաիլ իբն Շուայբը տէր դարձաւ Վիրքին, իսկ Սահլ իբն Սինբաթ պատրիկն ապստամբեց Հայդար իբն Քաուս ալ-Աֆշինի նշանակած կառավարչի դէմ, սպանեց նրա քարտուղարին, իսկ ինքը [կառավարիչը] հազիւ հոգին ազատեց փախուստով» (Արաբ մատենագիրներ, Գ... /Օտար աղբյուրները..., 16/, էջ 281):

[2] Դիվան հայ վիմագրության, պր. IV, Գեղարքունիք, Կազմեց՝ **Ս. Գ. Բարխուդարյան**, Եր., 1973, էջ 334, հմր 1358 («Ձ[Ե]: թվականութեանս Հայոց [=*881/882 թ.*], ես՝ Գրիգոր Ատրներսեհեան՝ Սիւնեաց եւ Աղվանից իշխան, կանգնեցի զ[ս]ուրբ նշանս...»):

[3] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 101-102: Համմ. դեռեւս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 241. Բ. Ուլուբաբեանի վրիպումը չի կրկնել նաեւ Կ. Յուկերմանը (տե՛ս **C. Zuckerman**, À propos du Livre des cérémonies, p. 571, 573).

[4] Տե՛ս Դասխ., Գ.իբ /իգ/, էջ 341: Հր. Աճառեանի վարկածով (Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, Եր., 1944, էջ 386)՝ այս իշխանի անուան ճիշտ ձեւը եղել է «Սեւադայ Իշխան»: Ի դէպ, Բ. Ուլուբաբեանը Սեւադայ Իշխանանունին եւ նրա եղբայր Ատրներսեհին անհասկանալի ձեւով վրիպել-հանել է Մովսէս Դասխուրանցու շարադրած տոհմագրական ցանկից:

ձաւ Կարսի առաջին թագաւոր Մուշեղ Բագրատունու կինը[1]: Սահակ Սեւադայի «խաչէնեան» եղբայրը չէր կարող լինել հինգից աւագը, որին Մովսէս Դասխուրանցին (=Մաշտոց Եղիվարդեցին) կոչում է Ապուլի (կամ՝ Ապու Ալի), եւ ոչ էլ այն Սմբատը, որին պատմիչը վերագրում է աւագ եղբօր սպանութիւնը 898 թուականին: Պատմիչի բնագիրն է. «Իսկ յետ Դ ամաց, յորում տարեմուտն ի սրբումն հանդիպիւր Պասեքին աւր, սպանաւ Ապու Ալի Աղուանից իշխանն Հայկազնի յիւրմէ հարազատէն Սմբատայ»[2]: Իշխանի սպանութեան տարին նշուած է նոյն գլխի յաջորդ պարբերութեան վերջում. «...զոր ողբերգական կանայքն կականէին՝ ասելով. «Մի՛ եկեսցէ եւ մի՛ լիցի այսպիսի տարի ի վերայ երկրի, որչափ ազգ մարդկան է: Եւ Հայ թիւն՝ ՅԽԶ էր»: Հայոց այս 346 թուականն սկսուել է 897 թ. Ապրիլի 16-ին եւ աւարտուել 898-ի Ապրիլի 15-ով, իսկ Ս. Ջատիկն Ապրիլի 16-ին համընկել է 898-ին[3], ուստի դէպքը վերագրելի է 898 թուականին (այլ ոչ թէ 897-ին):

Այսպիսով, աւելի հաւանական է, որ Սահակ Սեւադայի «բուն խաչէնցի» եղբայրը Գրիգոր Ատրներսեհեանի 5 որդիների մէջ եղել է երկրորդը, իսկ նկատի ունենալով իր աւագ թոռան անունը՝ ենթադրելի է (գոնէ իբրեւ վարկած), որ նա կարող էր կրել *Սենեհերիմ անունը: Ստեփաննոս Օրբէլեանի տուեալներից բխում է, որ վերջինս վախճանուել է 906 թ. առաջ: Ըստ պատմիչի՝ այդ տարի Տաթեւի Պօղոս-Պետրոս մայր եկեղեցու օծմանը մասնակցում էին ե՛ւ «Գարդմանայ տէր» Սահակը (իմա՛ Սեւադան), ե՛ւ «Աղուանից» երեք այլ իշխաններ՝ Եսային (իմա՛ Գորոգուի իշխան Եսայի Աբու Մուսէն), Ատրներսեհը (Թերեւս, իրօք, Շաքի/Հերէթի թագաւորութեան հիմնադիր Համամ Բարեպաշտի որդին) եւ Գրիգորը[4], որն, անկասկած, Խաչէնի իշխանն էր: Այս Գրիգորը ոչ մի կերպ չէր կարող լինել Սահակ Սեւադայի որդին՝ ժամանակի անհամապատասխանութեան պատճառով (Սահակի աւագ որդի Գրիգորն իր քրոջ ամուսին Աշոտ Երկաթ արքայի կողմից պիտի կուրացուէր մօտ երկու տասնամեակ անց՝ հօր հետ միասին եւ վերջինիս իշխանութիւնը դեռ չժառանգած[5]), եւ ոչ էլ՝ եղբայրը (ըստ Հր. Աճառեանի իրաւացի դիտարկման՝ «Հայոց մէջ համանուն որդի չի լինում»[6]), այլ միայն՝ եղբօրորդին: 949 թ. «յաշխարհն Աղուանից» այցելած եւ «ի գաւառն Խաչենոյ» հասած Անանիա Մոկացի

---

[1] Տե՛ս **Ասողիկ**, Գ.ժէ, էջ 198 («Իսկ մայր թագաւորին Աբա՛սայ, բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց, որ էր քոյր թագաւորին Փառիսոսոյ Սենեքերիմայ եւ Գրիգորի, ի բաց ընկեցեալ զերկրաւոր պսակն ... ընթանայր զհետ երկնաւորին...»):

[2] **Դասխ.**, Գ.իա /իբ/, էջ 336 (**Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 52); Գ.իբ /իգ/, էջ 341: Ի դէպ, հնարաւոր է, որ «Ապուլի» – «Ապու Ալի» արաբական անուանատարբերակի հայկական հաւանական զուգահեռը կարող էր կրկնել պապի անունը՝ *Ատրներսեհ:

[3] Տե՛ս **Հ. Ս. Բադալեան**, Օրացոյցի պատմութիւն, Եր., 1970, էջ 342, 438:

[4] **Օրբ.**, գլ. ԽԲ, էջ 171; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԽԳ, էջ 234:

[5] **Դրասխ.**, էջ 313-314; **Հովհ. Դրասխանակերտցի**, էջ 247; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. LX, p. 338. Տեղին նշենք, որ ըստ Մովսէս Դասխուրանցու՝ Գրիգորի եղբօր անունը Դաւիթ էր (**Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 341), իսկ քրոջ անունը, որն Աշոտ Երկաթի կինն էր, պատմիչները չեն յայտնում. Կ. Թումանովը նրան կոչում է «Մարիամ» (**C. Toumanoff**, Manuel de généalogie, p. 238), թէեւ մենք չգիտենք դրա աղբիւրը:

[6] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Եր., 1942, էջ 278:

կաթողիկոսին (941-967) մեծ սիրալիրութեամբ դիմաւորում էր նոյն «մեծ եւ փառաւոր, աստուածապահ եւ բարեպաշտ տէր Գրիգոր իշխան»-ը: Նա այդ ժամանակ, թերեւս, յառաջացած տարիքում էր, քանի որ 9 տարի անց՝ 958-ին, նրան արդէն փոխարինել էր որդին («...Սենեքերիմայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի»)[1]:

Մանրամասնելով՝ նշենք, որ Բ. Ուլուբաբեանի սխալը չկրկնած Կ. Յուկերմանը ենթադրում է, թէ բուն Խաչէնի իշխանութեան հիմնադիր Գրիգորը կարող էր լինել Սահլ Սմբատեանի թոռ Գրիգոր Ատրներսեհեանի հէնց աւագ որդի Ապուլիի զաւակը[2]: Սակայն պատմական լայն համատեքստի քննութեան դէպքում այդ տարբերակը պէտք է քիչ հաւանական համարել: Հարկ է նկատել, որ Սահլից մինչեւ Գրիգոր Ատրներսեհեան, ուրեմն եւ՝ մինչեւ նոր-նոր իշխանութեան եկած Ապուլին, մեր առջեւ պատկերւում է միասնական Խաչէնը՝ կենտրոնական Արցախով, Սոթքով ու Քուստ-ի Փառնէսով, ընդ որում՝ նրա կենտրոնը հետեւողականօրէն տեղաշարժւում է դէպի արեւմուտք: Այսպէս, Ատրներսեհը՝ սկզբնապէս միայն Մեծ Իրանք գաւառի ու նրա շրջակայքի տէր Սահլ Սմբատեանի որդին, կառուցում է Հանդաբերդը, որն արդէն Տրտուի Լեւագետ վտակի հովտում է, այսինքն (ինչպէս կը տեսնենք ստորեւ)՝ աշխարհացոյցեան Սոթք գաւառի արեւելեան կէսում: Ընդ որում՝ պատմիչը գրում է այդ կողմերում նաեւ իշխանի պալատի հաստատման մասին («Ատրներսեհ շինէ զբերդն Հանդու, եւ զապարանս իւր եդեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր եւ բաղանիք արքունական են»)[3]: Նրա որդի Գրիգորը, որն իր իշխանութիւնը սկսել էր տարածել նաեւ Փառիսոսի կողմերում, կառուցում է (ըստ Դասխուրանցու) Հաւախաղաց բերդը, որը Տրտուի վտակ Թուխխուի գետաբերանից հարաւ-արեւելք էր, այսինքն, ինչպէս ցոյց ենք տուել վերջերս՝ Սոթքին արեւելքից յարող Հարջլանք գաւառում[4]. եւ թէպէտ պատմիչը «նստոցի» մասին չի խօսում, սակայն տուեալ յիշատակումն ինքնին փաստում է Գրիգոր Ատրներսեհեանի համար Հաւախաղացի շրջակայ տարածքի որոշակի կարեւորութիւնը («...շինէ զՀաւախաղացին բերդն եւ յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեա-

---

[1] Տեառն **Անանիայի Հայոց կաթողիկոսի**՝ Ցաղագս ապստամբութեան..., էջ 134 եւ 144: Շարադրանքի մէջ յիշւում են նաեւ «Աղուանից թագաւոր» (իմա՛ Շաքի-Հերէթի արքայ) Իշխանիկը («ի թագաւորն, որ կոչէր Իշխանիկ, որդի տեառն Ատրներսեհի») եւ այլ իշխաններ («եւ տեառն Վաչագանայ Գորոզուաց իշխանի եւ տեառն Գուրգենայ Արեւելեաց իշխանի»), այդ թւում՝ «իշխանաց իշխան» Սենեքերիմը, որը Դասխուրանցու տոհմացանկում կոչւում է «Յովհաննէս Սենեքերիմ»): Տեղին նշենք Ն. Ադոնցի մի ակնյայտ վրիպումը, որն այս ցանկում «Արեւելեաց իշխան» անուամբ հանդէս եկող՝ ապագայ Լօռի – Ջորագետի հայկական Բագրատունեաց թագաւորութեան հիմնադիր Գուրգէնին շտապողաբար նոյնացնում է Կախէթի թագաւոր Կիւրիկէ Բ-ի հետ (**Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 149, հմմ. նոյնը՝ **Ա. Եղիազարեան**, Կախեթի իշխանությունը IX դարում եւ X դարի սկզբին, – ՄՄԱԵԺ, հտ. XXVII, Եր., 2009, էջ 20):

[2] C. Zuckerman, À propos du Livre des cérémonies, p. 571, 573, 577, 580.

[3] Դասխ., Գ.իբ /իգ/, էջ 340: Այս դրուագում նշուած Վայունիք գիւղը հաւանական է համադրել Տրտուի վերնահովտի Իստիսու-Ջերմաջուր աւանի հետ, հետեւաբար ոչ մի կապ չունի Արցախի Վայկունիք կամ Վաղկունիք անունով գաւառի հետ, որը տարածւում էր Երասխի վտակ Հակարիի Ծալուայ օժանդակի հովտում. տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 52, 220-245:

[4] Անդ, էջ 245-251:

նն»)[1]: Յիշենք նաեւ, որ Գրիգորն իրեն «Սիւնեաց եւ Աղվանից իշխան» է կոչում 881/882 թ. Սոթք գաւառի Մեծ Մազրա գիւղում կանգնեցրած խաչքարի՝ վերը բերուած վիմագրում: Այնինչ Ապուլիի սպանութիւնից յետոյ (898 թ.), արդէն գոնէ 906-ին, տեսնում ենք լրիւ ուրիշ պատկեր, այն է՝ միասնական Խաչէնի փաստացի տրոհուած լինելը երկու ծանրակշիռ իշխանութիւնների՝ բուն Խաչէնի եւ Փառիսոսի միջեւ, ընդ որում՝ դրանց կենտրոնները դուրս էին իրենց միջեւ ընկած Սոթք – Հարջլանքի (հետագայ՝ Ծարի) գօտուց: Այս պատմական համատեքստը բաւարար է թւում՝ մտածելու, որ Ապուլիի որդին (Ալի – *Գրիգորը), ըստ ամենայնի՝ չէր ժառանգել հօր իշխանութիւնը (թերեւս, լինելով մանկահասակ եւ անգամ՝ վաղամեռիկ), ուստի եւ՝ այն բաժանուել էր նրա երկու հօրեղբայրների միջեւ, որոնցից մէկի (ենթադրաբար՝ *Սենեքերիմ) «սեպհական» կալուածքը (իբրեւ՝ իշխանորդու) բուն Խաչէնում էր, իսկ միւսինը (Սահակ Սեւադայ)՝ Փառիսոսում:

Հարկ է նաեւ կրկնել, որ մեր պատմագրութիւնը դեռ կանգնած է աղբիւրագիտական մի լուրջ հակասութիւն լուծելու խնդրի առջեւ: Ըստ Ժ դ. սկզբի վաստուրականցի պատմիչ Թովմա Արծրունու՝ Բուղայ արաբ ոստիկանը բազմաթիւ հայ իշխանների հետ 855 թ. գերի տարաւ նաեւ Սահլ Սմբատեանին (այդպէս է նաեւ Յովհաննէս Դրասխանակերտցու, Մովսէս Դասխուրանցու, Ասողիկի եւ նրանց կրկնող ուշ հեղինակների մօտ), որին պատմիչն անսպասելիօրէն անուանում է «Շաքեոյ տէր»: Բնագիրն է. «Եւ խաղացուցին ի Սամառայ. որոց անուանք ճանաչի սոցա՝ տէր Սմբատ սպարապետ Հայոց, եւ Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնենից տէր, եւ Ատրներսեհ Աղուանից իշխան, եւ Գրիգոր Սիւնեաց տէր, եւ Սահլ [վրիպակով՝ Մահլ – Ա. Յ.]՝ Սմբատայ որդին՝ Շաքեոյ տէր, որ զԲաբաննն կալաւ, եւ Իշխանակն Վասակ՝ Վայոց ձորոյ տէրն, եւ Փիլիպպէ իշխանն Սիւնեաց, եւ Ներսեհ իշխան Գարիթայանից [ուղղելի՝ Գարդմանից[2]], եւ ապա Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար»[3]: Հետազօտողների մեծ մասի իրաւացի կարծիքով՝ վաստուրականցի հեղինակը նկատի ունի Կուր գետից հիւսիս գտնուող Շաքի երկրամասը եւ քաղաքը (նաեւ՝ Շաքէ, Նուխպատոն, Նուխի)՝ այդ դարաշրջանի Բուն Աղուանքի քրիստոնեայ իշխանութեան կենտրոնը, որի տիրակալ Համամ Բագրատունին Թ դ. 90-ական թթ. վերականգնեց Աղուանից թագաւորութիւնը (վրացական աղբիւրներում՝ Հերէթ, արաբալեզու երկերում՝ Շաffի կամ Շաfիճ)[4]: Բայց միւս կողմից՝ մենք ունենք Մովսէս Դասխուրանցու բազմաբնոյթ հաղորդումները, ըստ որոնց՝ Սահլի իշխանութիւնը մինչեւ Բաբեկին գերելը տարածուել է լոկ բուն Խաչէնի վրայ՝ Դադիվանքի «խորաձորից» արեւելք, իսկ դրանից յետոյ՝ նաեւ «Գեղա-

---

[1] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 340-341:

[2] Հմմ. **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 137, ծն. 1:

[3] ՄՄ Ձեռ. 10451, թ. 193բ; **Թովմա**, գլ. Գ.ժա, էջ 191; **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 213; ՄՀ, հտ. ԺԱ, էջ 207:

[4] Արդի դաղստանեան պատմագրութեան մէջ արմատաւորուել է «Երկրորդ Ալբանական թագաւորութիւն» անունը (տե՛ս, օր.՝ **Т. М. Айтберов**, Второе Албанское царство и его роль в истории аварского народа, Махачкала, 2008).

մայ գաւառի» վրայ (հմմ. «Զայս Վարազ Տրդատ եւ զորդի իւր Ստեփաննոս Ներսեհ ի Փիլիպեան՝ ազգակիցն իւր, սպան ի միում ժամու ի խորաձորն, որ կոչի Դադոյի վանք: Ապա յայն աղետիցն զառն զգեցեալ արութիւն կնոջն սպանելոյ՝ առեալ զմնացեալն իւր դուստր Սպրամ, գիշերահէն տաժանելի ուղեւորմամբ մտանէ ի բերդն Խաչենայ, բարուրս խորհեալ տան իւրում՝ ամուսնացուցանէ զՍպրամ Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ, որ էր [a է] ի տոհմէն Հայկայ [a տոհայկա և], տէր Սիւնեաց, որոյ բռնազբաւսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»)[1]: Այսինքն՝ արեւմուտքում Խաչէնի իշխանի նոր տիրոյթները սահմանափակւում էին աշխարհացոյցեան Սիւնիք նահանգի հիւսիս-արեւելեան Սոթք գաւառով եւ վերջինիս յարակից Գեղարքունիք/Գեղամայ գաւառի մի հատուածով, ամենայն հաւանականութեամբ՝ մինչեւ Շողուագ աւան (Ծակքար եւ Երանոս գետերի ստորին հովիտ), ինչպէս արձանագրուած է աւելի ուշ շրջանի՝ ԺԹ-ԺԴ դդ. աղբիւրներում[2]:

Այնուամենայնիւ, սկսած Ն. Ադոնցից, Թովմա Արծրունու վկայութեան հիման վրայ փորձ է արուել՝ իրար կապելու Խաչէնի ու Հերէթի իշխանատոհմերը Կուրի երկու ափերին: Ն. Ադոնցի եւ նրա հետեւորդների կարծիքով՝ Սահլի հայր Սմբատը իր՝ իբրեւ թէ «իւրայատուկ» անուան շնորհիւ կարող է սերուած համարուել Բագրատունի արքայատոհմից[3], մասնաւորաբար՝ այն տոհմաճիւղից, որը երկու-երեք սերունդ առաջ Տարօնից տեղափոխուել էր արեւմտեան Հերէթ («Շակիխ») եւ, ըստ «Քարթլիս ցխովրեբա»-ում պահպանուած տեղեկութիւնների, ստացել այդ երկիրը վրաց Արշիլ թագաւորից: Աղբիւրի բնագիրն է. «Ադարնասէ Կոյրի եղբօրորդիք, երեք եղբայրները, որ այրեցին հօրեղբօր աչքերը, Տարօնից էին եկել Շակի [var. Շակիխ] ու հաստատուել այնտեղ Արշիլի հրամանով, քանի որ Կովկասի բոլոր ծայրերը Ռանի կողմից անբնակ էին դարձել: Իսկ Հերէթը եւ Կախէթը վերածուել էին թաւախիտ անտառների: Եւ երեք եղբայրները հաստատուեցին [այնտեղից] մինչեւ Գուլգուլա»: Հայերէն համառօտ թարգմանութեան մէջ կայ միայն հետեւեալը. «Եկին եւ ի Տար[օ]նոյ եղբարք երեք եւ բնակեցան մինչեւ ցԳաղգաղ՝ հրամանաւ Արչլին»)[4]: Բացի այդ, ըստ Ն. Ադոնցի եւ այլոց՝ «Սահլի որդի» Յովհաննէսը (յիշուած՝ Դասխուրանցու մօտ 838/839 թ., իսկ Մեծարանից Ս. Յակոբավանքի վիմագրում՝ 853/854-ին, արաբական աղբիւրների՝ Մուաիան, որը եւս ճիշտ չէ) իբրեւ թէ կարող է նոյնացուել Շաքի/Հերէթի թագաւորութիւնը 890-ական թթ. հիմնադրած Համամ Բարեպաշտի հետ, որը մի կարեւոր ենթատեքստում կոչուած է Յովհաննէս[5]: Վերջինների՝ ժամանակային հակայական հեռաւորութիւնն իրա-

---

[1] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 340: Նշենք, որ *ՊԱ*-ի Գ.ժթ /ի/ գլխում (էջ 326; **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 30, 32) Սահլի խնամի «Վարազ Տրդատ ի Ստեփաննոսեանի» ու իր որդու վախճանը թուագրուած է. «...ի լինել ՄՀ թուոյ Հայոց [*270 = 821/822 թ.*]»:

[2] Մանրամասն տե՛ս ստորեւ եւ **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 259-265:

[3] Իրականում *Սմբատ* անունը շատ տարածուած էր նաեւ Սիւնիքի տոհմերում եւ այլուր:

[4] Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները, հտ. Ա, էջ 195, 196; Летопись Картли, с. 41.

[5] **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 129-131; **Ս. Գ. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանությունները, էջ 58-72; **C. Zuckerman**, À propos du Livre des cé-

րից եւ Սահլի՝ Առանշահիկից Բագրատունու վերածուելու անհաւանականութիւնը նկատել է դեռ Բ. Ուլուբաբեանը (հմմ. «Թովմա Արծրունին, Սահլի մասին խօսելիս, նրան համարում է «Շաքէոյ տէր», որը, սակայն ժխտում է հայկական առաւել հին աղբիւրների եւ արաբական հեղինակների տեղեկութիւններով», եւ՝ «Ակնյայտ սխալ է Մուսէի՛ն ու Համամ Բարեպաշտի նոյնացումը Նիկ. Ադոնցի կողմից..., քանի որ Մուսէին տաժանակրութեան գնաց Արաբիա, իսկ Համամը մնաց եւ դրանից յետոյ տիրացաւ իշխանութեան»)[1]: Բայց նա էլ, ի վերջոյ, կանգ է առել մի այլ՝ աղբիւրների տուեալներին հակասող վարկածի վրայ եւ հնարաւոր համարել Համամի հետ Սահլի թոռան՝ Գրիգոր Ատրներսեհեանի համադրումը (այդ վարկածն առաջ էր քաշել դեռեւս Ա. Կրիմսկին 1930-ական թուականներին)[2]: Յաւելենք, որ գրականութեան մէջ փորձեր են եղել նաեւ՝ Թովմա Արծրունու բնագրի Շաքէ տիրոյթը նոյնացնելու Կուրից հարաւ ընկած որեւէ տեղանուան հետ՝ Արցախում (Սլ. Սարգսեան)[3], կամ անգամ Սիւնիքում (Զիա Բունիաթով)[4]:

Սակայն թւում է, թէ աղբիւրագիտական նիւթի այս ակնյայտ հակասութեան համար կարելի է սպառիչ բացատրութիւն ստանալ միմիայն այն դէպքում, եթէ պարզապէս ընդունենք, որ գործ ունենք Թովմայի շարադրանքի բովում ի յայտ եկած՝ այսպէս ասած՝ «տեխնիկական» վրիպման հետ: Այսինքն՝ կարծում ենք, որ վաստպուրականցի պատմիչի բանաւոր կամ գրաւոր աղբիւրը Բաբեկին ձերբակալած Սահլին յիշատակել է հէնց որպէս «Խաչենոյ տէր» (գրաւոր աղբիւրի տարբերակում «Խաչենոյ» գաւառանունը կարող էր նաեւ աղճատուած լինել), բայց իրեն լրիւ անծանօթ այդ տեղանունը Թովման «թեթեւաբար» փոխարինել է ինչ-որ չափով ծանօթ (բնականաբար՝ ոչ շատ լաւ) անուամբ՝ «Շաֆեոյ տէր»[5]: Յիշենք, որ «Խաչէն» գաւառանունը դեռեւս ծանօթ չէր նաեւ նրա ժամանակակից Յովհան-

---

rémonies, p. 564; **Ա. Եղիազարեան**, Աղուանից թագաւորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ, սն. 151-156, 166-167:

[1] Տե՛ս ՀԺՊ, հտ. III («Արցախի իշխանությունը» ենթագլխի հեղ.՝ **Բ. Ուլուբաբեան**), էջ 88, ծն. 16 եւ 18:

[2] Տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 74-82 (թէպէտ՝ ՀԺՊ, հտ. III, էջ 89, ծն. 22-ում ուսումնասիրողը ստիպուած է եղել վերապահում կատարել. «Գրիգորի նոյնացումը Համամի հետ կարօտ է աւելի լուրջ հիմնաւորման»): Հմմ. **А. Е. Крымский**, Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании). Шеки, с. 374-375. Նոյն սխալն աւելի ուշ տե՛ս **С. Т. Еремян**, Албания IX-XI вв., – В кн.: Очерки истории СССР. Период феодализма. IX-XV вв., Москва, 1953, с. 648-649; **A. N. Ter-Łevondyan**, Notes sur le Šakē-Kambečan (I^er^-XIV^e^ siècle), – RÉArm., t. XXI, 1988-1989, p. 324-326 (վերահրատ.՝ **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Հոդվածների ժողովածո, Եր., 2003, էջ 674-676); **C. Toumanoff**, Manuel de généalogie, p. 200.

[3] **Ս. Սարգսյան**, Խաչենի ամրոցները, Եր., 2002, էջ 22:

[4] **З. М. Буниятов**, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, с. 184-190; **նոյնի**՝ Ещё раз о локализации Шаки (в связи с публикацией Гурама Гумбы, – "Известия" АН Азерб. ССР, Серия истории, философии и права, 1987, № 1, с. 117-119.

[5] Հմմ. Ստ. Մալխասեանցի կարծիքը. «Արծրունին յայտնի է իբրեւ անհաւաստի մատենագրական եւ պատմական տեղեկութիւններ հաղորդող հեղինակ» (**Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Թարգմ. ... եւ ծանոթագրություններ **Ստ. Մալխասյանի**, էջ XXIX):

նէս Դրասխանակերտցին, որը մէկ անգամ յիշատակում է լոկ այդ անունով ամրոցը: Նրա բնագիրն է. «Իսկ Բուխայի երթեալ՝ ըմբռնէ զմեծ իշխանն Ատրներսեհ, որ բնակեալ էր յամրոցին Խաչենոյ եւ զայլ եւս զհամազգիս նորա: Եւ անտի չուեալ գնայ ի գաւառն Գարդմանայ, եւ պատնէշ եւ պաշարումն շուրջ զԳարդման բերդիւն եդեալ՝ ըմբռնէ անտի եւ զիշխանն Գարդմանայ զԿտրիճն՝ ի կալանս կապանաց արկեալ: Եւ անտի եւս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում եւ Կոն անուանէին զնա. որ ի նախնւոյ իւրմէ Սեւկոյ՝ Սեւորդիք ազգքն անուանէին: Եւ ապա եւս իշխանն Աղուանից Եսայի նենգապատիր լեալ առ ի նմանէ՝ ըմբռնի ի ձեռն նորա հանդերձ համազգեաւք իւրովք. ընդ նմին եւ այլ եւս տեարք եւ իշխանք աշխարհին Աղուանից...»[1]: Համեմատութեան համար բերենք նաեւ Ասողիկի ուշ եւ հիմնականում Դրասխանակերտցուց քաղուած հաղորդման բնագիրը. «... կալաւ [իմա՛ Բուղան] զամենայն իշխանս Հայոց. զիշխանն Արծրունեաց Աշոտ՝ զհայր Դերենկին, եւ զսպարապետն Հայոց Սմբատ՝ զհայր թագաւորին Աշոտոյ, եւ զիշխանն Սիւնեաց Վասակ, եւ զԿտրիճն՝ Գարդմանայ իշխան, եւ զիշխանն Խաչենոյ Ատրներսեհ, եւ զԵսայի՝ Աղուանից իշխան, եւ զիշխանն Սեւորդեաց զՍտեփաննոս, որում Կոնն կոչէին... Զսոսա զամենեսեան եւ զայլս բազումս եւս երկաթի կապանաւք խաղացոյց ի Սամառայ»[2]:

Փաստօրէն, կենտրոնական Հայաստանի մատենագիրներից առաջինը կաթողիկոս Անանիա Մոկացին է, որ 958 թ. յիշատակում է Խաչէն անունով «գաւառը», ուր ինը տարի առաջ այցելել էր անձամբ: Իր թղթում նա գրում է. «...գնացաք յաշխարհն Աղուանից, եւ հասեալ ի գաւառն Խաչենոյ՝ ընդ առաջ եղեւ մեզ մեծ եւ փառաւոր, աստուածապահ եւ բարեպաշտ տէր Գրիգոր իշխան... հրովարտակս գրէր յամենայն գլխաւորս աշխարհին՝ առնուլ հրաման՝ առնել ժողով հանդերձ մեաւք ի տան իւր ի Խաչեան գաւառի»[3]: Քիչ անց՝ խաչէնցի ներկաներին թուարկելիս, յիշատակւում է նաեւ «Խաչինայ» վանքը. «Հայր Մանուշակ՝ Խաչինայ վանական»[4]: Ի դէպ, Մոկացին ճշգրիտ թուագրում է եւ՛ իր այցելութիւնը Խաչէն ու Սիւնիք («Եւ լինէր այս ի թուականութեանն Հայոց ՅՂԸ [398 = 3.04.949 – 2.04.950] տառապանաց մերոց»), որին յաջորդում է Աբաս արքայի (928-953) վախճանի մասին նշումը («Եւ ապա զանհնարին բաժակ մահու արբոյց մեզ Քրիստոս, քանզի հասեալ յամն երեքտասաներորդ մերոյ նուաստ աթոռակալութեանս՝ եբարձ ապա Քրիստոս

---

[1] **Դրասխ.**, էջ 127-128; **Հովհ. Դրասխանակերտցի**, էջ 23-24; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XXVI, p. 190; **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց, էջ 436 (ՄՀ, գլ. ԻԶ): Ի դէպ, Դրասխանակերտցին գուցէ վախճանուել է ոչ թէ 929-ին (դա տարին էր՝ ըստ կաթողիկոսացանկերի, որոնցում տեղապահական տարիները յաւելում էին նախորդ հայրապետի աթոռակալման ժամանակին առանց նշում անելու), այլ մինչեւ 925 թ.: Հակառակ փաստարկումները տե՛ս **Հ. Մ. Բարթիկյան**, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ եւ 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն եւ Սմբատ Ա թագավորին, – ՊԲՀ, 1966, հմր 4, էջ 251-256, հմր 101, 139:

[2] **Ասողիկ**, Բ.բ, էջ 107:

[3] **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի՝** Ցաղագս ապստամբութեան..., էջ 134:

[4] Անդ:

զպսակն աւճոյ մերոյ, զարի եւ զզաւրեղն, զսկայազաւրն եւ զհեզն Աբաս Հայոց թագաւոր, թոռն Աշոտոյ Բագրատունւոյ Հայոց թագաւորի»)[1], ե՛ւ իր այս թղթի շարադրման ժամանակը («Եւ աւարտեալ հաստատեցաւ ջան վաստակոյ մերում եւ աշխատութիւն բազմամեայ տառապանացն, ի շրջանիս Հայոց ի Նէ [407 = 1.04.958 – 31.03.959], կամաւքն Աստուծոյ եւ աղաւթիւք սրբոցն»)[2]:

Արդ՝ փորձելով լրացուցիչ տուեալներ նշմարել Յովհաննէս Բագրատունի անունը եւս կրած Համամ Բարեպաշտ Արեւելցու անմիջական նախորդների, այսինքն՝ ըստ «Քարթլիս ցխովրեբա»-ի՝ Տարօնից Ը դ. երկրորդ կէսում Շաքի տեղափոխուած Բագրատունի եղբայրների սերունդների մասին, հնարաւոր է թւում նորովի վերլուծել 838 եւ 853 թթ. յիշուած Յովհաննէս իշխանի (նաեւ՝ «տերանց տէր», իմա՛ «իշխանաց իշխան») խնդիրը: Վերեւում տեսանք, որ նրան Սահլ Սմբատեանի որդի համարելն իրապէս չունի ուղիղ աղբիւրագիտական հիմք: Այժմ յատուկ արձանագրենք նաեւ, որ նա բաւական լուրջ պատմական դէմք է եղել. ըստ Դասխուրանցու (=Մաշտոց Եղիվարդեցու) վկայութեան՝ Յովհաննէսը խալիփայի արքունիքից ստացել էր Հայոց, Վրաց եւ Աղուանից (իմա՛ Արմինիյա կուսակալութեան) իշխանաց իշխանի բարձր (թէկուզ եւ փոխանցիկ) պաշտօնը, եւ դա՝ շնորհիւ Հիւսիսային կովկասում տարած մի յաղթանակի, որի արդիւնքում «կրկին անգամ» խալիփայութեանն էր վերադարձրել («խնդրեաց յարքունեացն») Բուլխարխոյ անունով տարածքը («...տերանց տէրն Յովհաննէս, որ Հայոց եւ Վրաց եւ Աղուանից եղեւ տէր, եւ խնդրեաց յարքունեացն կրկին անգամ զԲուլխարխոյ, [նա] տա[յ] փառգոս [իմա՛ կուսակալ] երից այսոցիկ աշխարհաց»[3]). այդ երկրանուան «-խոյ» վերջաւորութեան համար (<«-խայ» ուղղականի՞ց), գուցէ, կարելի է համեմատել նշանաւոր Տմուտարականի յունարէն անուանաձեւը՝ «Տամատարխա»[4]: Պատմիչի տեղեկութիւնից նաեւ պիտի հասկանանք, որ 830-ական թթ. վերջին Յովհաննէս իշխանը հասուն տարիքի զինուորական է եղել, ուստի իր ծնունդը հարկ է դնել գոնէ Թ դ. սկզբին: Իսկ Ս. Յակոբաւանքի վիմագրում Մեծ Իրանքի (կենտրոնական խաչէն) եպիսկոպոս Սողոմոնն իր խաչքարը դնելու տարին նշում է՝ «ի ժամանակս Յովանիսի Աղուանից իշխանի» եւ՝ «:ՅԲ: թուականութեանս Հայո[ց]»[5] (302 = 27.04.853 – 26.04.854): Ի դէպ, ուշադիր ընթերցողը նկատում է, որ այդ պահը գոնէ նախօրեակն էր՝ Ծանարքում պարտութիւն կրած Բուղայի՝ Պարտաւ գալու եւ իրեն մէկ տարի դիմադրած Գորոզու/Քթիշի իշխան Եսայի Աբու-Մուսէին հասնելու: Տեղին նշենք, որ վերջինիս Դրասխանակերտցին կոչում է «իշ-

---

[1] Անդ, էջ 139 եւ 139-140:
[2] Անդ, էջ 144:
[3] Դասխ., Գ.ի /իա/, էջ 330-331:
[4] Ըստ՝ **Е. Ч. Скржинская**, Греческая надпись из Тмутаракани, – ВВ, т. 18, 1961, с. 79; **G. G. Litavrin**, À propos de Tmutarakan, – "Byzantion", T. XXXV (1966), p. 221-234. Ի դէպ, արաբական որոշ բնագրեր («Դերբենդ-նամէ» եւն) *Բուլխար* եւ Բալխ են կոչել խազարական Բելենջեր քաղաքը Սուլակ գետի ափին (տե՛ս **В. Г. Котович**, О местоположении раннесредневековых городов Варачана, Беленджера и Таргу, с. 217-221).
[5] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 12, ճ[մր] 1:

խանն Աղուանից»[1], իսկ Թովմա Արծրունին երիցս՝ «զաւրավար Աղուանից»[2] (սիւժէի սկզբում պատմիչը Եսայու մասին գրում է. «...եւ տիրէր յայնժամ մեծի կողմանն Աղուանից Ապումուսէ ոմն, որում ծանութեան յայտնութիւն երիցու որդի ճանաչէր»[3]): Եսային յայտնի էր Մովսէս Դասխուրանցուն (=Մաշտոց Եղիվարդեցուն) եւ արաբ հեղինակներին որպէս Արցախի հարաւային գաւառների համախմբումը կատարած, ապա դաւադիրների ձեռքով սպանուած Ստեփաննոս Աբլ Ասադ իշխանի քրոջ որդի[4], իսկ Բաբեկի եղբայր Աբդալլային գերելու պատմութեան մէջ ատ-Տաբարին նրան կոչում է «Իսայ իբն Յուսուֆ իբն ուխտ Իսթիֆանուս»[5]:

Նկատենք նաեւ, որ աղբիւրները ոչինչ չեն հաղորդում բուն Աղուանքի տարածքում (Շաքիի իշխանութիւնում) Բուղայի հալածանքների մասին, իսկ նրա գերեվարած եւ 855 թ. Սամառա տարած նախարարների թւում Սահլի որդի Ատրներսեհին կոչում են, ինչպէս տեսանք վերեւում, է՛ւ «իշխան Աղուանից» – «բատրիկ» (Թովմա Արծրունի, արաբ հեղինակներ), է՛ւ, որ կարեւոր է մեզ համար՝ միայն «իշխան Խաչենոյ» (Դրասխանակերտցի, Ասողիկ): Եւ եթէ մեր Յովհաննէսին իրօք համարենք ոչ թէ խաչէնցի, այլ շաքեցի, ապա կը ստացուի, որ Ը դարում Տարօնից այստեղ (Շաքի, Բուն Աղուանք, Արեւելեան Կախէթ) եկած Բագրատունիները շուտով հասել են «իշխան Աղուանից»-ի դիրքին, իսկ գոնէ մի պահ՝ նաեւ Արմինիյա կուսակալութեան իշխանաց իշխանի պաշտօնին: Այդ դէպքում՝ մօտ 800 թուին ծնուած, 838/839 թ. որոշ ժամանակով իշխանաց իշխան («տերանց տէր») դարձած, իսկ 853/854-ին լոկ որպէս «իշխան Աղուանից» յիշատակուած Յովհաննէսը (ով նաեւ, հաւանաբար, Բուղայի հալածանքներից ինչ-որ կերպ զերծ էր պահել իր բուն-աղուանական տիրոյթները) ժամանակային առումով լիովին կարող էր լինել 894-ին թագաւորական պատուի արժանացած (անշուշտ՝ հասուն տարիքում) Համամ-Յովհաննէս Բագրատունի «Աղուանից» կամ «Արեւելից» իշխանի պապը:

Այս տարբերակի տրամաբանութեամբ՝ նոյն Յովհաննէսի (կամ, գուցէ, նրա հո՞ր) իշխանութեան օրերին պէտք է վերագրել նաեւ, ըստ դերբենդցի արաբալեզու հեղինակ Մամմուս ալ-Լակզիի «Շիրւանի եւ Բաբ ալ-Աբվաբի պատմութեան» հաղորդման՝ արաբ ոստիկանի դէմ (Խալիդ իբն Յազիդ) «Շաքքիի ժողովրդի», ըստ ամենայնի՝ լուրջ ըմբոստացումը 820/821 թ.[6] (որը Կ. Յուկերմանը շտապողա-

---

[1] **Դրասխ.**, էջ 127; **Հովհ. Դրասխանակերտցի**, էջ 24; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XXVI, p. 190.

[2] **Թովմա**, գլ. Գ.ժ, էջ 183-184; **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 205-206; ՄՀ, հտ. ԺԱ, էջ 202-203:

[3] Անդ, էջ 198:

[4] **Դասխ.**, Գ.ժթ /ի/, էջ 327 («Եսայի անուանեալն Աբու Մուսէ՝ այր խաղաղութեան, քուեր որդի Աբլ Ասադայ [*bclrv* Ստեփանոսի], ըմբռնեալ զնոյն գաւառսն՝ իշխանացաւ ամենայնի»); **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 36-37; Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, Հաւաքեց ... **Բ. Խալաթեանց**, էջ 78, 101:

[5] Tarikh **at-Tabari**, T. IX, p. 52. Հմմ. Արաբական մատենագրեր Հայաստանի մասին, Հաւաքեց ... **Բ. Խալաթեանց**, էջ 96; **Իբն ալ-Ասիր**, էջ 144, 379 (ծն. 136):

[6] Տե՛ս **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 44. Հեղինակի մասին տե՛ս **А. К. Аликберов**, Об авторе исторической хроники XI в. "Та'рих Баб ал-абваб ва Ширван",

բար, աւանդական մօտեցմանը հետեւելով, կապում է Սահլ Սմբատեանի հետ[1]): Մեզ հետաքրքրող բնագրի հատուածն է (թարգմանուած ռուսերէնից). «Խալիփան մէկը միւսից յետոյ Ադարբայջանի, Առանի ու Հայաստանի մի քանի ամիրաներ նշանակեց, մինչեւ որ 205 թուին [Հիջրէի, =17.06.820 – 5.06.821[2]] Մամունն այդ մարզեր ուղարկեց Խալիդին՝ Յազիդ իբն Մազեադ աշ-Շայբանիի որդուն: Շաքքիի ժողովուրդն ապստամբեց նրա դէմ ու սպանեց նրա ներկայացուցչին [՝ամիլին]: Խալիդը շարժուեց նրանց դէմ, եւ թէպէտ նրանք գիշերը յարձակուեցին իր վրայ, նա նրանց պարտութեան մատնեց ու շատերին սպանեց: Նրանք հաշտութիւն խնդրեցին, եւ նա այն շնորհեց նրանց՝ իրեն ամեն տարի 500 հազար դիրհեմ վճարելու պայմանով: Նա պատանդներ վերցրեց ու հեռացաւ»: Համեմատութեան համար՝ հետաքրքրական է նաեւ դերբենդցի հեղինակի տեղեկութեան շարունակութիւնը. «Ապա Վրացիներն ըմբոստացան նրա դէմ. նա շարժուեց նրանց վրայ եւ այնտեղ ճակատամարտեց Սանարեցիների դէմ: Նա ջախջախեց նրանց ու սպանեց շատերին: Ապա պատանդներ վերցրեց ու խաչ հանեց նրանց: Այնտեղից նա ճանապարհ ընկաւ Դաբիլ [Դուին] եւ մնաց այնտեղ մինչեւ Մամունի մահուանից յետոյ իրեն փոխելը՝ մօտ [Հիջրէի] 220 թուին»[3]:

Իհարկէ, իսկապէս ուշագրաւ է (ինչպէս նկատել է Կ. Յուկերմանը), որ Մովսէս Դասխուրանցու [Մաշտոց Եղիվարդեցու] երկում նկարագրուած՝ Սահլ Սմբատեանի առաջին հակաարաբական առճակատումը տեղի է ունեցել փաստօրէն նոյն տարում: Աղբիւրը յայտնում է. «Իսկ ի լնուլ ՄՀ թուոյ [bclrv թուոյն] Հայոց [270 = 5.05.821 – 4.05.822] ելին գաղտաբար [a գաղտարար] ի Պարտաւայ արք ընտիրք ի [bclrv չիք ի] Տաճկաց եւ յաւարի առին զԱմարաս գաւառ, եւ գերի առեալ իբրեւ ոգիս հազարս [bclrv հազար]՝ եւ ի Մեծարանց [bclrv Մեծիւրեանց] սահմանի ամրացան [bclrv ամրացեալք], ի տեղւոջն, որ կոչի [bclrv չիք տեղւոջն... կոչի] Շիկաքար: Յայնժամ արի եւ շքեղատեսակն Սահլ [a Սահղ] ի Սմբատեան Եռանշահիկն տէր քաջազաւր եղբաւրաւքն իւրովք եւ զաւրաւքն իւրեանց ի [bclrv իւրովք ազատովք զաւրաւքն ընդ փխ քաջազաւր... ի] լուսանալ առաւաւտուն ի վերայ յարձակեալ՝ առ հասարակ դիաթաւալ [bclrv դիթաւալ] զնոսա ցիր եւ ցան կացուցանէին [bclrv ցան եւ ցիր կացուցանէր] եւ որպէս յառիւծու ժանեաց [bclrv չիf որպէս ... ժանեաց] զգերեալսն ի բաց կորզէին [bclrv կորզէր]»[4]: Սակայն հայկական աղբիւրի եւ արաբալեզու հեղինակի հաղորդումների այսպիսի զուգահեռից ամենեւին էլ չի կարող մեքենայաբար բխել Շիկաքարի (=Քարագլուխ ամրոց)

– Рукописная и печатная книга в Дагестане. Сб. статей, Махачкала, 1991, с. 119-121; նոյնի՝ Эпоха классического ислама на Кавказе, с. 309-313.

[1] **C. Zuckerman**, À propos du Livre des cérémonies, p. 564-565.

[2] Հմմ. **V. Grumel**, La chronologie, p. 283; **В. В. Цибульский**, Современные календари стран Ближнего и Среднего Востока, с. 32.

[3] **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 44-45. Հիջրէի 220 թուականը = 5.01 – 25.12.835 թ.:

[4] **Դասխ.**, Գ.ժթ /ի/, էջ 326; **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 30-31:

մօտ մարտնչած Սահլ «Մեծարանցու» (=«խաչէնցու»!) եւ Կուրի ձախափնեայ «Շաքքիի» ապստամբների նոյնացման հնարաւորութիւնը: Այն լոկ ցոյց է տալիս, թէ որքան յարմար պահ է եղել 820-ական թթ. սկիզբն Առանի տարբեր կողմերում եւ յարակից երկրներում հակաարաբական շարժումների աշխուժացման համար:

Սրա հետ կարելի է համեմատել մի քանի տասնամեակ առաջ՝ 748 թուին, նոյն «Առռան» երկրի Բայլական եւ Բարդա'ա – Պարտաւ քաղաքներում բռնկուած խռովութիւնը, որի ընթացքում սպանուեց Պարտաւի ամիրան եւ որն այնուհետեւ յաջողութեամբ տարածուեց թէ՛ դէպի հարաւ՝ Արդաբիլի կողմերը, թէ՛ դէպի հիւսիս՝ Շամախի քաղաքի շրջակայքը: Ի դէպ, այստեղ մի քանի տարի տեւած պայքարի ղեկավարը, ըստ ալ-Բալազուրիի տեղեկանու՝ հայազգի Մուշեղն էր (կամ Միքայէլը՝ «Մուշայիլ ալ-Արմանի»), որը զոհուեց միայն 754 թ.՝ նորանշանակ ոստիկան Հասան իբն Կահթաբայի զօրքերի դէմ աւարտական ճակատամարտերից մէկում[1]: Եւ գուցէ, անգամ պատահական չէ, որ ըստ դերբենդցի պատմիչի՝ վերոյիշեալ Խալիդ ոստիկանը Շաքիում ու Վիրքում ունեցած իր «յաջողութիւններից» յետոյ վերադարձել էր ոչ թէ Պարտաւ՝ Ը դ. կէսերից Արմինիյայի ոստիկանների նստոցը, այլ կուսակալութեան նախկին նստոց Դուին քաղաքը: Բացի այդ, ըստ ՊԱ-ի (=Մաշտոց Եղիվարդեցու) յաջորդ ժամանակագրական նշման՝ հէնց նոյն տարում արդէն այնքան էր հզօրացել Խալիփայութեան դէմ այսրկովկասեան երկրներին հարեւան Ատրպատականում բռնկուած Բաբեկի խռովութիւնը, որ վերջինս սկսել էր միջամտել Երասխից հիւսիս ընկած երկրամասերի գործերին (հմմ. բնագիրը «Եւ ի նոյն ամի [bclrv ամին] ասպատակեաց Սեւադայ աշխարհաւերն Տաճիկ, որ Աւառանշան անուն ճանաչիւր, ի սահմանս Հայոց: Եւ յաւարի առեալ զաշխարհս ամենայն՝ դառնայ ի Սիւնիս եւ ամրանայ ի բերդատեղի [bclrv բերդատեղն] աւանին Շաղատու, որ է ի գաւառին Ծղկաց: Եւ տէր Վասակ՝ Սիւնեաց տէր ածեալ զԲաբան ի Պարսից՝ եհար զնոսա եւ արար փախստականս: Եւ Սիւնեաց տէրն ի նմին ամի վախճանեցաւ, եւ նոյնժամայն առ [lrv էառ] Բաբան զդուստր [bclrv զդուստրն] Վասակայ Սիւնեաց տեառն ի կնութեան [crv կնութիւն]»)[2]:

Այսպիսով, Խալիփայութեան համեմատական թուլացման դարաշրջանում (Թ-Ժ դդ.) նրա տիրապետութեան տակ գտնուող Աղուանք/Առան «երկրում» (Կուրի՝ էթնիկապէս հայկական աջափնեակով եւ, անշուշտ, առաւելապէս բուն-աղուանական ձախափնեակով) նշանակալից հզօրութեան հասան երկու աւատական իշխանութիւններ՝ Խաչէնը (կենտրոնական Արցախում)՝ իր «Առանշահիկ» իշխանատոհմով, եւ Շաքին (Ալազանի հովտում)՝ իր տարօնցի Բագրատունիներով (ընդ որում՝ զուգահեռաբար կենտրոնական Հայաստանում էլ անշեղօրէն հզօրանում է-

---

[1] Տե՛ս Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 280-281: Հմմ. **Ս. Տ. Մելիք-Բախշյան**, Հայաստանը VII-IX դարերում, Եր., 1968, էջ 311:

[2] **Դասխ.**, Գ.ժթ /ի/, էջ 326; **Ա. Ցակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 31-32: Այս կտորը նոյն Մաշտոց Եղիվարդեցուց քաղագրող Ստեփաննոս Օրբէլեանը վերջում ունի նաեւ. «Եւ առնէր ընդ ձեռամբ իւրով զգաւառն» նախադասութիւնը (**Օրբ.**, գլ. ԼԲ, էջ 115; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԼԳ, էջ 158), որը եւս, մեր կարծիքով՝ աղբիւրին է յանգում (հմմ. **Ա. Ցակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 32):

ին՝ Բագրատունիները եւ Վասպուրականի Արծրունիները)։ Ողջ Թ դարում այս երկու իշխանատոհմերը փոխնիփոխ էին հասնում «իշխան Աղուանից»-ի կարգավիճակին՝ երբեմն ստանձնելով անգամ Արմինիյա ոստիկանութեան, այսինքն՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից «երկրների» իշխանաց իշխանի պաշտօնը։ Ընդ սմին, նրանց կողքին ամրացել էին նաեւ հարաւային Արցախում Գորոզուի (Ստեփաննոս Աբլ Ասադ, Եսայի Աբու Մուսէ), իսկ Ուտիքի հիւսիսում՝ Գարդմանի եւ Ջորագետ – Սեւորդիքի (Կորիճ, Ստեփաննոս Կոն, Ներսեհ, Մովսէս) իշխանութիւնները։

Բաժին 3
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐՑԱԽԻ (ԽԱՉԷՆԻ) ԳԱՒԱՌԱԲԱԺԱՆՈՒՄԸ ՎԱՂ ԵՒ ՋԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Աշխարհացոյցեան Արցախի կենտրոնական, այսինքն՝ խաչէնեան չորս գաւառներից երկուսը՝ Մեծ Իրանքը եւ Մեծ Կուանքը, բազմիցս յիշուած են հայկական տարաբնոյթ աղբիւրներում, սակայն միւս երկուսի՝ Պիանքի եւ Հարջլանքի յիշատակութիւնները սահմանափակւում են լոկ «Աշխարհացոյց»-ի զոյգ գաւառացանկերով (Բուն Աղուանք երկրին Ե դ. առաջին կէսում միացուած ուտիք-արցախեան 20 եւ Մեծ Հայքի Արցախ աշխարհի 12 գաւառների թուարկումներում)[1]։ Կրկնենք, որ «Աշխարհացոյց»-ում Արցախի կենտրոնական գաւառների թուարկման տրամաբանութեան բացայայտումից յետոյ (առաջին դէպքում մէկընդմէջ գաւառախմբերը կենտրոնական մասում այսպիսին են՝ Ուտ-Ռոստակ → Ռոտ Պայեակ / Մեծ Կուանք → Մեծ Իրանք → Պիանք → Հարճլանք / Պածկանք → Մուխանք, իսկ երկրորդ դէպքում՝ Վայկունիք → Բերձոր / Մեծ Իրանք → Մեծ Կուանք → Հարճլանք / Մուխանք → Պիանք → Պածկանք → Սիսական-ի Կոտակ) աւելի ընդունելի տարբերակ է Պիանքի տեղորոշումը կարկառի ձախ վերին վտակների հովիտներում, այն է՝ Պարեցիքի, Մեղրագետի, Տրակետի եւ Վարարակնի (վերջինիս՝ լոկ ձախափնեակով)։

Պիանք-ի հետ ուշ տեղանունների ակնյայտ համադրումներ չեն նկատւում, իսկ Ս. Երեմեանի՝ նման համադրման փորձը («Պիանք գաւառ – ... Խաչէնագետի եւ Գարգար [իմա՛ Կարկառ] գետերի միջեւ, Բայան գիւղի շրջակայքում»)[2] տեխնիկական մի վրիպման արդիւնք է, քանի որ հեղինակի խօսքը, անշուշտ, Բայաթ տեղավայրի մասին է՝ ԺՀ դ. կէսերին Փանահ խանի կառուցած Շահբուլաղի (կամ Բայաթի) յայտնի բերդով (ներկայումս՝ Արցախի Տիգրանակերտի թանգարան)[3]։ Ընդ

---

[1] Հմմ **Ա. Յակոբեան**, Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի, – Շուշին Հայոց քաղաքակրթութեան օրրան..., Եր., 2007, էջ 44-45; **նոյնի**՝ Սիսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միւս գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի, – ՀԱ, ՃԻԲ տարի, 2008, սն. 91-148; **նոյնի**՝ Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 215-217:

[2] **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 77:

[3] Այս ամրոցի մասին մանրամասն տե՛ս **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., 1999, էջ 226:

որում՝ վերջինիս շրջակայքը (իր Շիկաքար – Քարագլուխ բերդով, Վանքասարով եւ հանրայայտ արցախեան Տիգրանակերտի քաղաքատեղիով) իրականում վերագրելի է Մեծ Իրանք գաւառին[1]: Ամեն պարագայում, անկախ համադրումների բացակայութիւնից, վճռական դեր է խաղում մէկ այլ իրողութիւն՝ այն, որ լոկ մեր առաջարկած տեղորոշման դէպքում են համընկնում «Աշխարհացոյց»-ի երկու բաժինների գաւառախմբերը: Առաջին գաւառացանկում Պիանքը հարաւային Արցախի՝ արեւելքից արեւմուտք թուարկուած երկու գաւառների միջեւ է (Մուխանք → Պիանիճ → Պածկանք), իսկ երկրորդում (Մեծ Իրանք → Պիանիճ → Հարճլանք) նրա դիրքը միջակայ է արդէն կենտրոնական Արցախի երկու գաւառների միջեւ (ընդ որում՝ դրան յաջորդում է հարաւային նոյն՝ Պածկանիճ → Մուխանիճ գաւառախմբի յիշատակումը)[2]: Յաւելենք, որ Յովհ. Կարագեոզեանը հնարաւոր էր համարում «Կարկառի հոսանքի ձախակողմեան վտակների աւազանում» տեղորոշուող Պիանիճ գաւառի անունը բխեցնել Ռուսա Ա-ի՝ Ծովինարի սեպագիր արձանագրութեան՝ սիւնիք-արցախեան «նուաճուած երկրների» շարքում հայերէնի սեռական հոլովով տրուած Պիրուա երկրանունից (միջանկեալ *Պիրկանիճ-ով)[3]:

Յաւելենք նաեւ, որ Պիանքը Կարկառ գետի եւ նրա Վարարակն օժանդակի ձախափնեայ հովիտներում տեղորոշելուց յետոյ կարելի է ուշադրութիւն դարձնել գաւառի հիւսիս-արեւմտեան սահմանահատուածի հետ կապուած մի մանրամասնի վրայ: Խորհրդային շրջանում եւ ներկայումս Կարկառի ձախակողմեան վտակների հովիտներն ընդգրկող Ասկերանի շրջանը հիւսիս-արեւմուտքում տարածւում է Կարկառի ու Խաչէնագետի աւազանների միջեւ ձգուող ջրբաժան լեռնաբազուկից այն կողմ եւ ներառում նաեւ Խաչէնագետի աջ վտակ Քոլատակի-վերնահովիտը (Կոշիկ անապատ վանքի շրջակայքը)՝ հարեւան Մարտակերտի շրջանին թողնելով նրա հովտի միայն ստորին մասը՝ Քոլատակ գիւղի տարածքը: Ըստ պահպանուած ցարական ժամանակաշրջանի քարտէզների՝ մօտաւորապէս այդպիսի գծով է անցել նաեւ Շուշիի եւ Ջեւանշիրի գաւառակ-ուեզդների սահմանը[4]: Արդ՝ քանի որ զանազան դարաշրջաններում վարչական բաժանումների սահմանները յաճախ մեծ ժառանգականութիւն էին հանդէս բերում (իրենց հիմքում պահպա-

---

[1] Նշենք, որ Բաբկէն Յարութիւնեանը որոշ վերապահումով, այնուամենայնիւ, ընդունում էր Պիանքի մասին Ս. Երեմեանի կարծիքը («թերեւս աւելի հաւանական է Ս. Երեմեանի կողմից գաւառիս տեղադրութիւնը Բայան գիւղի շրջակայքում»), թէպէտ գիտէր նաեւ, որ *Մեծիրանից գաւառ*-ի «մէջ էր գտնւում... Շիկաքար բնակավայրը» (**Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, – Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան..., Եր., 2007, էջ 38-39):

[2] Հմմ. **Ա. Յակոբեան**, Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնը..., էջ 49-50: Այս տեղորոշման դէպքում, բնականաբար, «ուշ շրջանի Խոջալուի շրջակայքում» «Հարջլանք գաւառի... տեղադրելու» մասին Բ. Յարութիւնեանի «ենթադրութեան հաւանականութիւնը» այլեւս չի արդարանում (տե՛ս **Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 38):

[3] **Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 203:

[4] Տե՛ս **Е. Кондратенко**, Карта Елисаветопольской губернии с показанием границ уездных полицейских участков и сельских обществ, Тифлис, 1888.

նելով հինաւուրց համայնքների հողատարածքների միջեւ անփոփոխ մնացող բաժանիչ գծերը), ապա ենթադրաբար կարող ենք համարել, որ Քոլատակ վտակի միջնահովտով է անցել դեռեւս աշխարհացոյցեան Պիանքի հիւսիս-արեւմտեան սահմանը: Այդ դէպքում նշուած վտակի անտառոտ վերին աւազանը հիւսիս-արեւմուտքից եզերող լեռնաբազուկով Պիանք-ին կարող էր սահմանակցել աշխարհացոյցեան Արցախի միւս կենտրոնական գաւառը՝ Հարճլանքը (որը ներառել է ոչ միայն Թուխխուի եւ Արագջրի հովիտները, այլեւ Խաչէնագետի վերնահովիտը՝ Արծաթահանք/Խոջայեուրտի լեռնազանգուածից հարաւ-արեւմուտք): Նկատենք, որ Դադիվանքի՝ Լէօի ամփոփած կալուածացանկում յիշատակուած է նաեւ Գանձակ տեղավայրը, որը Խօխանաբերդից մի քանի կմ արեւմուտք Խաչէնագետին հարաւից միացող եւ Քոլատակին զուգահեռ Գանձակ աջակողմեան վտակի հովիտն է[1]:

Ինչպէս նշեցինք, Արցախի կենտրոնական միւս՝ Հարջլանք/Հարճլանք գաւառը, որը նոյնպէս յիշատակւում է միայն «Աշխարհացոյց»-ի երկու գաւառացանկերում, ըստ ամենայնի՝ անհրաժեշտ է տեղորոշել Տրտուի Թուխխու վտակի աւազանում, յարակից ինչ-ինչ տարածքների հետ միասին: Նախ՝ Թուխխուի հովտում Հարջլանք գաւառանունը որոշակի նմանութիւն է դրսեւորում ԺԹ դարից Օրուջլու յորջորջմամբ գիւղի անունը՝ կարասու վտակի գետաբերանում (որի վերնահովտում Սիմէօն Երեւանցու «Ջամբռ»-ում նշուած է Սեւաջուր բնակավայրը)[2]: Օրուջլուի հետ իրաւացիօրէն համադրւում է «Ջամբռ»-ի Հալուճ գիւղանունը[3]: Իսկ հաշուի առնելով Հայաստանի (եւ յարակից երկրների) տեղանուններում հնդ-իրանական Ր→Լ, Լ→Ր հնչիւնական անցումների յաճախակիութիւնը[4]՝ Հալուճ անունը կարող է դիտուել իբրեւ Հարճլանք գաւառանուան հետ ուղիղ կապ ունեցող: Նման ուղղակի կապը նկատելի է նաեւ Հարջանտուս տեղանուան դէպքում, որը յիշուած է Գանձասարի կաթողիկէի 1240 թ. շինարարական վիմագրում (ներքուստ, հիւսիսային պատին, 27 տող)՝ Հասան Ջալալի նուիրատուութիւնները թուարկող տողում. «Հոգացաք զպէտս միաբանիցս՝ գեղորայս Մաշեղ, Հարջանտուս, Բոլորքոչն, :Ա: լուծ ի Խաչինաձոր, Նորաշինական գետն, Այգեստանս, Եղգընգնի, զոր իմ հայրն է տուել...»[5]: Այս բնա-

---

[1] **Լէօ**, Պատմութիւն Ղարապաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1838-1913, Թիֆլիս, 1917, էջ 156: Հմմ. **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 80:

[2] **Սիմէօն Երեւանցի**, Ջամբռ. Գիրք որ կոչի Ցիշատակարան, Վաղարշապատ, 1873, էջ 283: Համադրութեան առումով հմմ. նաեւ **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 78:

[3] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 21; **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 79: Գեղամ Բադալեանի կարծիքով (**Սիմեոն կաթողիկոս Երեւանցի**, Ջամբռ, Թարգմ. **Վ. Գ. Համբարձումյանի**, Պատմա-աշխարհագրական բնույթի ծանոթագրությունները եւ քարտեզները՝ **Գ. Բադալյանի**, Եր., 2003, էջ 516)՝ *Հալուճ* գիւղանունը համադրելի է Մոս գիւղի կողքին գտնուող *Ալուչալու*-ի հետ, սակայն դա հակասում է ցուցակի յստակ հերթականութեանը («...Մոս, Սեւաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուճ»):

[4] **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, Индоевропейские языки и индоевропейцы..., т. I, с. 198-199; **Ց. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 236:

[5] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 38-39; **Բ. Ուլուբաբյան**, Գանձասար, Եր., 1981, էջ 88; **Է. Դանիէլեան**, Գանձասարի պատմութիւն, Եր., 2005, էջ 110: Այս վիմագրի բոլոր

գրում մեր ընդգծած անունները յայտնի չեն Մեծ Իրանքում եղած՝ Գանձասարի վանքին մօտիկ եւ վիմագրական ու այլ յաճախակի յիշատակումներ ունեցող տեղանունների թւում[1], իսկ նրանցից մէկը՝ Նորաշինկան գետ-ը (Խաչինաձոր-ի կողքին), համադրելի է Խաչէնագետի վերնահովտի՝ ԺԹ դարից Թազաբենդ յորջորջուող գիւղի անուան հետ: Դրանից հնարաւոր է ենթադրել, որ Հասան Ջալալի (եւ նրա հայր Վախտանգ Տանգիկի) նուիրաբերած կալուածքները, այդ թւում՝ Հարջանտուս-ը, գտնուել են Խաչէնագետի վերնահովտում: Ընդ սմին, Հարջանիւ գաւառանուան հետ համադրելի կարող է դիտուել նաեւ Գանձասարից քիչ արեւմուտք յառնող լեռան «Խոջայեուրտ» (var. Ղոջաղուրդ) յորջորջումը, որի բարձրութիւնը (2389,3 մ) չի զիջում աւելի արեւմուտքում Թութխուի եւ Խաչէնագետի ջրբաժան Արցախեան լեռնաշղթայի գագաթներին (2100-2300 մ), եւ որը, հիւսիսից սեղմելով, Խաչէնագետի ընդարձակ վերնահովիտը բաժանում է նրա նեղ միջնահովտից: Ի դէպ, այդ լեռանը կարող է վերաբերել Դադիվանքի 3 կալուածագիր-սիկէլներում յիշուած Հարզաfար (var. Հարազաքար, Հարցլուղայա) լեռնանունը[2]:

Խոջայեուրտով դէպի արեւելք ձգուող՝ Տրտուի եւ Խաչէնագետի ջրբաժան շղթայի «Արծաթահանքի լեռներ» անուան[3] առթիւ կարելի է ենթադրել, որ պատահական չէ Հարջանիւ-ի հիմքի նմանութիւնը բնիկ հայերէն «արծաթ» բառի (նաեւ «սպիտակ» նշանակող) հնդեւրոպական *Hark'- հիմքին (որից ունենք՝ խեթ.՝ ḫarki-, հին հնդկ.՝ rajatá-, աւեստ.՝ ərəzata-, յուն.՝ ἄργυρος, հին պրսկ.՝ ardata-, լատ.՝ argentum[4]): Իսկ Յովհ. Կարագեոզեանի հաւանական վարկածով՝ Հարճլանիւ-ը յիշուած է Ռուսա Ա-ի՝ սիւնիք-արցախեան 23 երկրները թուարկող Ծովինարի սեպագրում՝ հայերէնի սեռական հոլովով դրուած (առանց աճական Հ-ի եւ բառամիջում Կ>Ծ>Ճ հնչիւնափոխութեան ենթակայ Կ-ով) Երկիլա անուանաձեւով[5]: Բայց սրա հիմքը «արկտոս» – «արջ» բառով ստուգաբանելու եւ Քիրս (=Խիրս) լեռնանուան հետ այն կապելու փորձը[6] դժուար է ընդունելի համարել. փոխարէնը՝ ընդգծուած սուր եւ բոլոր կողմերից լաւ դիտարկելի ժայռոտ գագաթով Քիրս լեռան անունը հաւանական է թւում բխեցնել պարզապէս հայերէն «քերծ» («ժայռ») բառի նոր պարսկերէն յորջորջումից (շատ տարածուած Ծ>Ս հնչիւնափոխութեամբ):

ընթերցումները ստուգել ենք տեղում՝ վանքի հոգեւոր սպասաւորների սիրալիր օժանդակութեամբ, որոնց յայտնում ենք մեր երախտագիտութիւնը:

[1] Լոկ *Մաչեղ* անուանն է նման Դրմբոն գիւղի մօտ՝ *Մատուռի ձոր* վայրում յիշատակուած *Մաչախ* տեղանունը (տե՛ս **Շ. Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Եր., 1980, էջ 49; **Ш. Мкртчян**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ер., 1988, с. 51; ՀՀՇՏ բառարան, հտ. 3, էջ 697, 716):

[2] **Ս. Քամալյան**, «Աղվանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի կալվածների վերաբերյալ մի ղաբալա-կալվածագիր, – ԿԲ, вып. 2, Ер., 1980, с. 153-154.

[3] **С. Лисицян**, Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк, Ер., 1992, с. 30.

[4] **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, Индоевропейские языки и индоевропейцы..., т, II, с. 713. Հմմ. **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հտ. Ա, էջ 317-318:

[5] **Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 197-198:

[6] Տե՛ս անդ, էջ 259-260:

Յաւելենք, որ ԺԹ դարի մի յիշատակարանում (Զիկագոյի համալսարանի Ձեռ. հմր 949, Աւետարան, 1237 թ.) «Գանձասար մենաստան»-ի մասին ասւում է՝ «ի գլուխս սահմանաց Խաչենոյ»[1], որը կարող է արձագանքը լինել Մեծ Իքանք եւ Հարճլանք գաւառների միջեւ հինաւուրց սահմանի: Օր.՝ նման ձեւով է վարդան Արեւելցին բնորոշել Ուտիքի Գարդման գաւառի ճիշտ հարաւային ծայրամասում ընկած Գետաբակը բերդաւանը՝ գրելով. «...եւ ինքն [մոնոթելիզմին հարած Եզր կաթողիկոսից հալածուած Յովհան Մայրագոմեցին – Ա. Յ.] չոգաւ յԱղուանս, ի գլուխ Գարդման գաւառի»[2], ընդ որում՝ Կիրակոս Գանձակեցին ճշտում է. «երթեալ Յովհաննու՝ ընտրեաց իւր տեղի լուսթեան ի կողմանս Գետաբակս բերդոյ»[3]:

*Վերջապէս, եթէ ընդունելի է Հարջլանք-ի տեղորոշումը Թուխխուի աւազանում ու խաչէնագետի վերնահովտում, ապա կարելի է նաեւ որոշ նմանութիւն նկատել գաւառանուան եւ ուշ միջնադարում յայտնի Մրջմանց տեղանուան միջեւ (1581 թ. սիկէլում՝ «Մարչամանց» [<Մարջամանց][4], 1729 թուականի Մաշտոց ծիսարանի յիշատակարանում՝ «Մրչմանց»[5], ԼԷօի կալուածացանկում՝ «Միրշմանց /տճ. Մարջիմակ/»[6], ԺԹ դարի այլ փաստաթղթերում ու քարտէզներում՝ «Մերջիմեկ», «Մարջումակ»[7])՝ նրա սկզբում, իբրեւ վարկած, դիտարկելով Հայաստանի հիւսիսում տարածուած անուանակերտ Մ- նախդիրի յաւելում (հմմ. Ալգեթի [<*Ագլէթի] – Մանգլեաց փոր, Եգեր – մեգրել, Ազա /երկիր/ – Մազազ): Իսկ դրա հիման վրայ էլ ենթադրելի է, որ աշխարհացոյցեան Հարջլանք գաւառի մէջ կարող էր մտած լինել նաեւ Մրջմանցի գետակի՝ նոյնպէս ուշագրաւ Արագ-ջուր (<*Հա՞րգ) անունով վտակի հովիտը՝ արեւելքում, թերեւս, Արծաթահանք-Խոջայեուրտի լեռնազանգուածից դէպի Տրտու իջնող՝ Խադարավանքի (նաեւ՝ Խաթրավանք, Խնթրավանք, Խադավանք) ձորակով հանդերձ (բայց վերջինիս արեւելքից յարող Բերդաձորի Սուրբ Գրիգոր վանքի ձորակը թողնելով Մեծ Իրանք գաւառի սահմաններում):*

---

[1] Թ. 313ա. «մեք՝ Գրիգոր եւ Վարդան ... քահանայք, յորս եմք տեղեակալ ի գլու{խս} սահմանաց Խաչենոյ, ի ս[ուրբ] ուխ{տս} Գանձասար մենաստանէ, որ է {...} դղեկիսս Խաւխաս...» (ճշգրիտ ընթերցումը տե՛ս ստորեւ, էջ 345. հմմ. **A. K. Sanjian**, A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States, Los-Angeles, 1976, p. 234; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Կազմեց՝ **Ա. Ս. Մաթեւոսյան**, Եր., 1984, էջ 199; **Հ. Հակոբյան**, Արցախի ձեռագիր մատեանների արվեստի մասին, – ԼՂՀ անցյալը, ներկան եւ ապագան. Միջազգային գիտաժողով /Ստեփանակերտ, 2006/, Եր., 2007, էջ 377):

[2] **Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին**, Մոսկվա, 1861 (յետայսու՝ **Վարդան**), էջ 86: Հմմ. **Ասողիկ**, Բ.բ, էջ 88 («Իսկ նորա գնացեալ ի Գարդման, անդ կատարէ զկեանս իւր»):

[3] **Կիրակոս**, գլ. Ա, էջ 55:

[4] **Ս. Քամալյան**, «Աղվանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի ... մի ղաբալա, էջ 154 («ես՝ Գոնցէս... տվի իմ հայրենեացս Խոթասարն, Շարքարն, Հարզաքարն, եկեղեցիս Մարչամանցու մուլքն»):

[5] Տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, Բագու, 1895, էջ 221 («Ես՝ Մրչմանցի տէր Մելիքսեթի որդի Մարկոսըս»):

[6] **ԼԷօ**, Պատմութիւն Ղարապաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 152:

[7] Մանրամասն տե՛ս **Ս. կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 74-75:

Ինչ վերաբերում է այս Հարճլանք/Հարջլանք գաւառից հիւսիս՝ Տրտուի ձախ ափին ընկած ընդարձակ շրջանին (Լեւագետի ստորին հոսանքի «խորաձորից» ու Եանշաղից մինչեւ Հաթերք եւ Ականաբերդ), ապա բոլոր հնարաւոր տարբերակներից առաւել հաւանականն է, որ այն հարկաւոր է վերագրել Մեծ Կուանք *(նաեւ՝ Մեծ Կուենք, Մեծ Կողմանք) գաւառին, ինչպէս որ դա արել են մի շարք ուսումնասիրողներ[1], թէկուզ եւ նշելի է, որ դրա համար առայժմ, ըստ էութեան, չունենք աղբիւրների ուղիղ վկայութիւններ: Կրկնենք, որ կենտրոնական Արցախի Մեծ Ի-*
րանք (նաեւ՝ Մեծ Առանք, Մեծարանք, Մեծիւրեանք) եւ Մեծ Կուանք *գաւառների հիմնական տարածքները, շնորհիւ աղբիւրներում դրանց մասին եղած մեծաքանակ յիշատակումների, նոր գրականութեան մէջ ամենից հաստատունն են տեղորոշում, ընդ որում՝ վաղ շրջանի աղբիւրներում նրանց միջեւ իբրեւ սահման հանդէս է գալիս Տրտու գետի միջին հոսանքը[2]: Վերջինից հարաւ տարածւում էր Մեծ Իրանքը՝ ներառելով նաեւ Խաչէնագետի հովիտն ու Շիկաբար (հետագայ՝ Քարագլուխ) ամրոցի շրջանը[3] արդէն կարկառի աւազանում, իսկ դէպի հիւսիս՝ Մեծ Կուանքը, որը ներառում էր նաեւ Մռաւի լեռնաշղթայի հիւսիս-արեւելեան ընդարձակ փեշերը՝ մինչեւ դաշտաբերան: Սակայն երկու գաւառների համար էլ բուն Տրտուի հովտում դէպի արեւմուտք (դէպի Հարճլանք եւ Սոթք) տարածման սահմանը ճշտող ուղիղ աղբիւրագիտական տուեալները ցաւալիօրէն պակասում են[4]:*

---

[1] Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, Արցախ, Եր., 1993, էջ 48 (վերահրատ.՝ 1988-1990 թթ. «Բազմավէպ»-ից); **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 32; **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 40, 48 եւ ներդիր քարտէզները: Նորերս հմմ. նաեւ Պարոյր Մուրադեանի «Արցախը վրացական նորայայտ ձեռագրերում» մեծարժէք յօդուածում (**Պ. Մուրադեան**, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Հայաստանը, պր. Ա, Եր., 2008, էջ 83):

[2] Այդ սահմանն, այնուամենայնիւ, գետագծից հարաւ (Արծաթահանքի լեռներով) է տարուած Բ. Յարութիւնեանի քարտէզներում (նոյնը տե՛ս նաեւ՝ **R. H. Hewsen**, Armenia, p. 100, "Armenia According to the Seventh-Century Ašxarhac'oyc'" քարտէզում): Սակայն հեղինակը բուն յօդուածի բնագրում զարմանալիօրէն մատուցել է սկզբնաղբիւրներից բխող իրական պատկերը. «Մեծիրանից գաւառը, ինչպէս ճիշտ գտնում են ուսումնասիրողները, տեղադրւում է Խաչէնագետի վերին աւազանում եւ տարածուել է մինչեւ Տրտու կամ Թարթառ գետը: Սրա մէջ էր գտնւում Տրտուի ափին գտնուող ասպարիսաձեւ Ձղախական հովիտը, Շիկաքար բնակավայրը, Դաստակերտը...» (**Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 38):

[3] Ըստ՝ **Դասխ.**, Գ.ժթ /ի/, էջ 326; **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 30-31 («...ի լնուլ ՄՀ թուոյ Հայոց [=*821 թ.*] ելին գաղտաբար [*a* գաղտարար] ի Պարտաւայ արք ընտիրք ի [*bclrv չիք* ի] Տաճկաց եւ յաւարի առին զԱմարաս գաւառ... եւ ի Մեծ Արանց [*bclrv* Մեծիւրեանց] սահմանի ամրացան [*a* ամրացեալք]՝ ի տեղւոջն, որ կոչի [*bclrv չիք* տեղւոջն ... կոչի] Շիկաքար»): Հմմ. նաեւ **Ս. Սարգսյան**, Խաչենի ամրոցները, էջ 5-31:

[4] Տեղին նշենք, որ Մեծ Կուանք գաւառը Աղստեւի հովտում, իսկ Հարջլանքը՝ Երասխի ափին, Քեօնդալաւ վտակից հարաւ տեղորոշելու վերաբերեալ Ս. Երեմեանի՝ աղբիւրագիտական ամբողջական նիւթին հակասող տեսակէտները (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62, 66) ներկայումս կարող են համարուել լիովին յաղթահարուած: Զեն հիմնաւորւում նաեւ ուսումնասիրողի կողմից Ուտիքի հինգ գաւառների չյաջողուած տեղորոշումները. այն է՝ նահանգի ամենաարեւմտեան (Գետիկ – Աղստեւի հովտի) *Աղուէ* եւ հարաւային *Ռոտ Պայեակ* ու *Տրի* գաւառների տեղափոխումը Տրտու գետի միջնահովիտ եւ յարակից շրջաններ (էջ 34, 79, 86), *Գարդմանի* (կենտրոնը՝ Ջագիր գետակի վերնահովտում) տեղաշարժումը Կուրի ափով դէպի հեռու արեւմուտք՝ մինչեւ Աղստեւի

Մանրամասնենք, որ վերն առանձնացուած տարածքում՝ Մռաւի լեռնաշղթայից ու Թրղի վտակի հովիտն արեւմուտքից շրջափակող նրա բազուկից (=Աբասասա՞ր) դէպի Լեւագետ ու Տրտու հոսող Մէյտան, Բուլանդիխ, կեարաք (ԺԹ դարից յորջորջուած՝ «Աղդաբան», բայց ըստ Սարգիս Ջալալեանցի՝ «Ուղտապան»[1]), Պրտողագետ (մի կալուածագրում՝ «Հաթերքոյ գետ»[2]) եւ Ականաջուր ոչ մեծ վտակների հովիտների բազմաթիւ տեղանուններից Մեծ Կուանքի կազմում աղբիւրագիտօրէն վկայուած կարող է համարուել միայն ամենից արեւելք ընկած Սարսանգ-ը: Այդ տեղավայրը մերօրեայ ջրամբարի պատնէշի մօտ է՝ 7 կմ դէպի հարաւ-արեւմուտք Թրղիի գետաբերանից (որի ձախափնեակում գտնուած Աստեղաբլուրը Մովսէս Դասխուրանցու ՊԱ-ում արտագրուած «684 թ. պատմութեան» մէջ նշուած է Մեծ Կուանքի կազմում[3]), եւ նրա իրանական կազմութիւն ունեցող ու թարգմանաբար «Գլուխ/Կատար քարի» նշանակող անունը լիովին համադրելի է թուում է դարում յայտնի «Գլխովանք»-ի հետ[4]: Իսկ վերջինիս՝ Մեծ Կուանքում գտնուելը նոյնպէս ուղիղ նշում է «684 թ. պատմութիւն»-ը. «Ապա հրաման տայր [Ջեւանշէր Աղուանից իշխանը Ուխտանէս կաթողիկոսի հետ միասին – Ա. Յ.] յուղարկել զնա [Իսրայէլ/Աբաս վանականին, հետագայում՝ Մեծ Կուանքի եպիսկոպոս – Ա. Յ.] խաչապայծառ տապանակաւն անդրէն ի վերնակողմ գաւառն Մեծ Կուենից՝ ի

ու Դեբեդի ստորին հոսանքների միջակայքը (էջ 46), եւ վերջապէս՝ ծայր հարաւ-արեւելեան *Արաճ-ոռոտ* գաւառի տեղորոշումը Ուտի Առանձնական ու Շակաշէնի միջեւ (էջ 37)՝ նրա փոխարէն Երասխի ձախափնեակ բերելով գետի՝ ծով մտնող հին հունի աջ ափի Փայտակարան քաղաքը (Զ դ. սկզբին կառուցուած Բայլականի հետ Փայտակարանի՝ Հ. Հիւբշմանից եկող անընդունելի համադրման հիման վրայ, որը հակասում է «Աշխարհացոյց»-ի ուղիղ պնդմանը. «Փայտակարան յելից կայ Ուտիոյ, առ Երասխաւ...: Ուտիք... առ մտից կայ Երասխայ») եւ նոյնանուն նահանգի մի ամբողջ գաւառը (էջ 63, 88):

[1] **Ս. վրդ. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան... ի 1841 ամի, Մաս Բ, Տփխիս, 1858, էջ 221, հմմ. **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 87-88: Ի դէպ, Խ. Դադեանի ճօթերում ունենք. «...քիմբազի մօտով Ադաք, Ղարակեօզլու ղշլաղի մօտով Կարաքիճ գետ կամ Աղտաբանի ջուրը անցայ» (ՀՊՊԿԱ, ֆ. 319, ց. 1, գ. 155, թ. 1. ըստ՝ **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 81):

[2] **Ս. Քամալյան**, «Աղվանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի ... մի ղաբալա, էջ 153-154 («երկրիս հողանիւթն այս է՝ Հաթերքոյ գետն ի վեր մինչեւ ի սարն Ապասայ, Մռաւայ Շարագօլն... Հարազաքարն, Ըռեզա կաշկառն, բերթն Մազրոյ եւ գետն Հաթերքայ»):

[3] **Դասխ.**, Ա.իը, էջ 98-99; ՄՀ, հտ. Ե, էջ 802, նախ. 12-13 («Եւ եկեալ հասանէին [Մաշտոցի՝ Երուսաղէմից վերադարձող աշակերտները – *Ա. Յ.*] ... ի ձորախոխոմ [*bclrv* խորաձոր խոխոմ], անտառայար, ի [*bclrv* եւ ի] մայրաստանիկ աշխարհն Արցախա[յ]՝ գաւառն Մեծ Կուենից: Եւ ի կիրճն [*a* կիրճս] ճանապարհին երկաջոկեալ գունդն, յերկուս բաժանելով՝ նստէին գուպարս յայնմ տեղւոջ, որում Աստեղն կոչեն բլուր՝ ի հիւսիսոյ կողմանէն [*a* կողմանն], եւ գունդն երկրորդ՝ յայնկոյս Տրտուական գետոյն, ի հարաւական [*bclrv* հարաւոյ] կողմանն, ի մայրոլորտ ովտի պուրակի բնակէին՝ Ձղախն անուանեցեալոյ [վերջինս Մեծ Իրանքի «վիճակում» էր – *Ա. Յ.*]»); **Դասխ.**, Ա.իթ, էջ 102; ՄՀ, հտ. Ե, էջ 806, նախ. 28 («զանուն տեղւոյն Աստեղաբլուր անուանեցին մինչեւ ցայսաւր»); **Դասխ.**, Բ.իթ, էջ 205; ՄՀ, հտ. Ե, էջ 840:

[4] Տե՛ս **Գ. Մ. Նալբանդյան**, Պարսկերեն-հայերեն բառարան, Եր., 1987, էջ 339-355; Персидско-русский словарь. Составил **Б. В. Миллер**, Москва, 1960, с. 276-277; Инструкция по русской передаче географических названий Ирана, Москва, 1979, с. 126.

բարձրավանդակ լեառնն, ի տեղի մենաստանի իւրոյ՝ ի Գլխոյ վանս»[1]: Երկի յաջորդ գլխում եւս ունենք. «Ապա զգացեալ Աստուծոյ սպասաւորին, որ էր ի Հին եկեղեցւոջ անդ, զծագումն խաչին, ... քաջայաւժար կամաւ երթայր ի Մեծ Կուենից գաւառն [a Մեծ Կուսենիցն գաւառ] ի Գլխոյ վանաց եկեղեցին»[2]: Իսկ Իսրայէլին եպիսկոպոս ձեռնադրելու պատմութեան մէջ ասւում է մի փոքր այլ կերպ. «եկեալ հասեալ նոքա ի Միջնարցախն գաւառ՝ գտանէին զնա ի Գլխոյ վանս՝ յիւրում մենաստանին»[3]: Աւարտին յիշատակւում է նաեւ Մեծ Կուանքի եպիսկոպոսանիստի «Տաղձանք» անունը («Եւ նոքա եկեալ՝ ի նախնականն հասանէին եպիսկոպոսանոցն, որում Տաղձանսն [bclrv Տաղձանս] անուանէին»)[4], որը, թերեւս, ընկնում էր Գլխովանքից արեւելք՝ աւելի մօտ կաթողիկոսանիստ Պարտաւին:

*Յայտնի է, որ Մ. Բարխուդարեանցը ձախափնեայ այս ողջ շրջանը («Ճանշաղ վտակից» մինչեւ «Թրղի գետակ») վերագրում էր Դասխուրանցու Բ.իթ գլխում մի փոքր անորոշութեամբ յիշատակուած «Ըռստակ (Ռստակ) գաւառ»-ի՝ կոչելով այն նաեւ «Հաթերք»[5]: Սակայն «Աշխարհացոյց»-ը եւ միւս սկզբնաղբիւրներն այդպիսի գաւառի մասին ոչինչ չգիտեն: Իսկ բնագրի ուշադիր ընթերցումից երեւում է («Յայնժամ կամաւորութեամբ յանձն առեալ զհրամանս հայրապետին եպիսկոպոսացն երկոցունց՝ ... գայինն [Պարտաւից] Հոգւոյն Սրբոյ առաջնորդելով, հասանէին [a չիf հասանէին] յՌոստակ [br յըՌոսաստակ, c յըՌոստակ, l յՌոստաստակ] գաւառն Մեծ Կողմանցն այնոցիկ, ի [a չիf այնոցիկ ի] Ձղախեան ովիտն, յասպարիսաձեւ դաշտակն առ աւին Տրտուական գետոյն, որ է ի վիճակին Մեծ Իրանց»[6]), որ բնագրի Ռոստակ-ը (կամ *Ռոտաստակ-ը) յիշատակուած է կա՛մ որպէս Պարտաւից դէպի Մեծ Իրանք ճանապարհին ընկած Մեծ Կողմանք (Մեծ Կուանք) գաւառին վերաբերող բնութագրիչ-ածական[7], կա՛մ էլ որպէս (մասամբ վերականգնման ենթակայ սկզբնօրինակում) Պարտաւի շրջակայ Ուտ-Ռոստակ գաւառ (=Ուտի Առանձնակ), ինչպէս ուշագրաւ դիտարկում էր դեռեւս Վարագ Առաքե-*

---

[1] **Դասխ.**, Բ.լա, էջ 212; ՄՀ, հտ. Ե, էջ 848, ծանօթ. 9:

[2] **Դասխ.**, Բ.լգ, էջ 218; ՄՀ, հտ. Ե, էջ 852, ծանօթ. 26:

[3] **Դասխ.**, Բ.լէ, էջ 234; ՄՀ, հտ. Ե, էջ 865, ծանօթ. 10:

[4] **Դասխ.**, Բ.լէ, էջ 235; ՄՀ, հտ. Ե, էջ 866, ծանօթ. 14: Ուստի ճիշտ չէ Մեծ Կուանքի եպիսկոպոսարանը դնել Խադարավանքում (**Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան,** Խադավանք-Խաթրավանք, – Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. Ժ, Պէյրութ, 1984, էջ 21; **Ա. Ս. Մաթեւոսյան,** Թարգմանչաց ավետարանը, – «Էջմիածին», 1993, հմր Ա-Գ, էջ 106-108), որն, ի դէպ, Տրտուի հարաւային ափին էր, ուր Արցախի Հարճլանք գաւառն էր:

[5] **Մ. եպ. Բարխուտարեանց,** Արցախ, էջ 130; **Ս. Կանայեանց,** Անյայտ գաւառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 128: Սլ. Սարգսեանը հակուած է այս տեսակէտի մի տարբերակի. «...սկսած ներկայիս Եանշաղ բնակավայրից... մինչեւ Թրղի (ներառեալ Հաթերքը) տարածւում է «Աշխարհացոյցում» յիշատակուող Մեծկողմանքի [?!] Ռոստակ գաւառը» (**Ս. Սարգսյան,** Արցախ, էջ 37, հմմ. նաեւ **Հ. Ղ. Ալիշան,** Արցախ, էջ 37):

[6] **Դասխ.**, Բ.իթ, էջ 205; ՄՀ, հտ. Ե, էջ 840, ծանօթ. 25:

[7] «Քաղաքային կենտրոն», «աւան», «շուկայագիւղ», «շրջան» նշանակող *ռոստակ* իրանական եզրոյթի մասին տե՛ս **Գ. Մ. Նալբանդյան,** Պարսկերեն-հայերեն բառարան, էջ 310; Инструкция по русской передаче географических названий Ирана, с. 124; **Э. Ш.** Хуршудян, Армения и Сасанидский Иран, с. 96.

լեանը[1]*: Նշենք, որ ըստ* ՊԱ-ում *բառացի արտագրուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան» մի տեղեկութեան՝ Ուտիք նահանգի այս կենտրոնական գաւառի հիւսիսային սահմանն անցել է մարզպանանիստ Պարտաւից ոչ շատ հեռու դէպի հիւսիս (հմմ. «Եւ իբրեւ անցին [Վիրոն եւ իր ուղեկիցները, Ջարաբերդ/Ջրաբերդից – Ա. Յ.] ընդ ձորս լերանց եւ թափեցան ի գեղեցկատես, վայելուչ, հարթ հաւասար յուռթի դաշտն Յուտի [bclrv Ուտի] գաւառի, ոչ կարէին իմանալ նշմարել զտեղիան [a զտեղին], ընդ որ անցանէին՝ յանթիւ բազմութենէն զաւրացն Շաթայ... Գտին ղնա բանակեալ ի ներքին [bclrv նմին] գաւառի, ըստ հիւսիսոյ կողմանէ, մօտ [a մերձ] ի մեծ քաղաքն Պարտաւ՝ ի մէջ յորդաբուղխ մաւրաջուրցն»)*[2]*: Ըստ այդմ՝ Ուտի Առանձնակի հիւսիսային սահմանի այդ հատուածը (Շակաշէն գաւառին յարող) ճիշտ կը լինէր տանել ոչ թէ Հերան – Կարաչայ գետի ստորին հոսանքով (ինչպէս Բ. Յարութիւնեանի քարտէզներում է), այլ աւելի հարաւ՝ մօտաւորապէս Ինջա գետի ստորին հոսանքի գծով (ինչպէս Ս. Երեմեանի մօտ է):*

Հարկ է նաեւ յիշել, որ Հաթերքից Լեւագետ ձգուող շրջանը գոնէ զարգացած միջնադարում իրօք սերտ կապուած էր Դադիվանքի արեւմտեան՝ Սեւանի ափերին հասնող սոթք-ծարեան *տիրոյթներին: «Թարգմանչաց» Աւետարանի (1232 թ., յետոյ պահուած Բանանցի Թարգմանչաց անապատում)՝ «ի թվ[ականին] Հայոց ՉԿԱ [=1312 թ.]» նորոգման պատուիրատու է յիշատակւում՝ «ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց՝ Գրիգոր մեծ իշխան Հայոց, տէր եւ պ[ատ]ր[ո]ն Փոքր Սիւնեաց, Հանդաբերդոյ եւ Ականոյ եւ բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչեւ ի Շաւղուայգայ»՝ նշելով. «Եւ գաւառք մեր յանուանէ այս է՝ Սոթ Գլուխ եւ Բերդաձոր եւ Ճոխանց, Հոսաբակս, Ատրենիս, Կալեր, Ուռեացփոր եւ Խորուագետ, Դվալանոց, էրքն, Մափռէլանց եւ այլ իւրեանց միջոց Մազրենովն՝ ի մեր նախնեաց մնացեալ հայրենիք է իւրեանց չորս սահմանովն»*[3]*: Ծարայ վանքի*

---

[1] **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմ., առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ **Վ. Առաքելյանի**, Եր., 1969, էջ 285, ծն. 190: Այս հարցում Բ. Յարութիւնեանի մօտ ինչ-որ խառը պատկեր է առաջացել. «...կարելի է կարծել, որ Մեծ Կողմանք ասելով հեղինակն ի նկատի ունի Ուտիք եւ Արցախ սահմանային աշխարհները, քանի որ Մեծ Կողմանց մէջ [?!] է մտնում Ոստակ գաւառը, որն անտարակոյս պէտք է նոյնանայ Ուտի Առանձնակին» (**Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 37): Քիչ վերեւ էլ մի վարկած է առաջ քաշուած, թէ «ինչ-ինչ հանգամանքներում երկու գաւառները միաւորուել են մէկ եպիսկոպոսի ենթակայութեան կամ տեսչութեան ներքոյ»: Սա՝ այն դէպքում, երբ աղբիւրը հէնց այդ հատուածում տալիս է եւ՛ Մեծ Կողմանց Դաւիթ, եւ՛ Մեծ Իրանից Ցովէլ եպիսկոպոսների անունները:

[2] **Դասխ.**, Բ.ժդ, էջ 159; **Անանուն Կաղանկատուացի**, Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց, (ՄՀ, հտ. Դ), էջ 406, նախ. 85-87:

[3] ՄՄ Ձեռ. 2743, թ. 183ա, 184բ (այս գրչագրի մասին մանրամասն տե՛ս **Ա. Մաթեւոսյան**, Թարգմանչաց ավետարանը, – «Էջմիածին», 1992, հ[մր] Թ-Ժ-ԺԱ, էջ 102-114; 1993, հ[մր] Ա-Բ-Գ, էջ 105-118); Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար, Մասն Ա (1301-1325 թթ.), Կազմողներ՝ **Լ. Խաչիկյան, Ա. Մաթեւոսյան, Ա. Ղազարոսյան**, Եր., 2018, էջ 215 (հմմ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 84, որի տեղանունների շարքում կան Սարգիս Ջալալեանցի թերի վերծանածին յանգող վրիպակներ՝ Ականոյ, Ծաղուագայ, Հասկաբակս, Ատրենի*ճ*, Ուռիաձոր, Դուռանոց, իսկ վերջին *Էրքճ* ու *Մափռէլանց* անունները բացակայում են): Յիշուած *Ուռեացփոր* գաւառակը Լեւագետի հովտի

մի խաչքարի վրայ (այժմ՝ քոչուորաբնակների ոչնչացրած) Յ. Շահխաթունեանցը եւ Մ. Բարխուդարեանցն ընթերցել են. «...ես՝ Սայտի, որդի պարոն Շանշին... ի թուին ՊՀԹ [=1430 թ.], տեղեացս տէր եւ պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ եւ Հանդաբերդոյ, եւ ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաճայ, կանգնեցաք զխաչս»[1]: Յիշենք, որ հէնց Հաթերքի տէրերն են կառուցել Դադիվանքի պահպանուած շէնքերը, այդ թուում՝ հոյակերտ կաթուղիկէն, որի շինարարութիւնը 1214 թ. աւարտին հասցրեց տարաբախտ Վախթանգ իշխանի տիկին Արզուխաթունը (նրա վիմագրի սկզբում ասւում է. «ես՝ Արզու խաթունս, նուաստ աղախին Քրիստոսի, դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուսին Վախտանկա[յ]՝ թագաւորազնո[յ] տհաճն Հաթերքո[յ] եւ ամենայն վերին Խաչէնո[յ], յուսով մեծաւ շինեցի զսուրբ կաթողիկէս ի տեղոջ հանգստարանի առն իմո[յ] եւ զաւակաց իմոց...»)[2]:

*Ի տարբերութիւն ԺՀ դարի «Ջամբռ»-ի պատկերի, ըստ որի Դադիվանքի տիրոյթներն արեւելքում հասնում են լոկ մինչեւ Ջափար, Կեարաք ու Նորշէն[3], մեզ հասած որոշ կալուածագրերում «Դատէի վանից» կալուածք է համարւում նաեւ Հաթերքն իր շրջակայքով: Վերոնշեալ սիկէլում Գանձասարի կաթողիկոս Պետրոս Խանձկեցին (1653-1676)[4] այլոց նման «գրում է, թէ վկայ եմ, որ Հաթերքը վախմ է Թադէ առաքելոյն, աջ կողմից էլ կնիքը դրուած: Յետոյ Եսայի կաթուղիկոսի ձեռքն ու կնիքն է՝ վկայ եմ այս բանիս: Երրորդ տեղը՝ Երեմիա կաթուղիկոսի ստորագրութիւնը եւ կնիքը՝ վկայ եմ այս բանին: Չորրորդ տեղը՝ Գանձասարի Գրիգոր կաթուղիկոս, որդի Մէլիք-Բէկին, այս հաստատ բանիս վկայ եմ, կնիքը աջ կողմից: Հինգերորդ տեղը՝ Փիլիպպոս Հայոց՝ վկայ եմ, կնիքը մօտը, վեցերորդ տեղը՝ «Ես՝***

Սեիդլարի (<Սեօյուդլու – *Ուռիաշէն) հետ համադրելու՝ Գեղամ Բադալեանի փորձը (**Սիմեոն կաթողիկոս Երեւանցի**, Ջամբռ, էջ 511-512) վերապահելի է: Նրա հետ, իրօք, համադրելի է «Ջամբռ»-ի եւ 1661 թ. թղթի *Ուռուցփոր*-ը (*var.* Ըռուցփոր), որը «Խութաւանից... վիճակ»-ում դնելով՝ «Ջամբռ»-ը յստակ ընշում է նրա եւ 1312-ին նրա հետ յիշուած *Հոսաբակը*-ի (=Հասկաբակ, ԺԳ դարում՝ *Հաւսաթա՞ղը*) ու *Ատրէնիս*-ի (1312-ի՝ Ատրենիս, 1661 թ. թղթում եւս՝ *Ատրէնիս*) դիրքը. «Սոքա *յայսկոյս* լերինն են, կից Արեգունւոյն Գեղամայն»: Իսկ *կալեր*-ը եւ *Դաւալանոց*-ը (1312-ի՝ Դվալանոց) քիչ վերեւում դրուած են հարեւան «Մաքենեաց վանից... վիճակ»-ում, որը եւս ջրբաժան լեռներից միմիայն արեւմուտք էր (**Սիմէօն Երեւանցի**, Ջամբռ, էջ 283):

[1] **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 408; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 225:

[2] Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Դադի կամ Խութայ վանք, – «Էջմիածին», 1971, հ՝ Զ, էջ 66-70; **P. Cuneo**, Architettura Armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988, p. 451-455; **Մ. Հասրաթյան**, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Եր., 1992, էջ 44-49; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 198-199, հ՝ 708; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 90-110:

[3] **Սիմէօն Երեւանցի**, Ջամբռ, էջ 283:

[4] Աղուանից-Գանձասարի կաթողիկոսների առաւել հաւաստի ցանկը տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Աղվանից եկեղեցի, – ՀՍՀ, հտ. 1, Եր., 1974, էջ 263; **Ա. Մանուչարյան**, Հայոց եկեղեցու պատմության վիմագրագիտական-պատմագիտական ուսումնասիրություններ, Եր., 1992, էջ 178-191; **Լ. Ա. Մկրտումյան**, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Եր., 2006; **Ա. Մաղալյան**, Աղուանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը, – ՊԲՀ, 2008, հ՝ 3, էջ 268-271; **Մ. Բալայան**, Հայ Աղվանից եկեղեցին (Սկզբնավորումից մինչեւ մեր օրերը), Ստեփանակերտ, 2009 (յատկ.՝ էջ 173-176):

Ակոբոս»[1]: Թէպէտ, մի կարճ ժամանակ առաջ, մեր սիկէլում նշուած Հայոց կաթողիկոս Փիլիպպոս Ա Աղբակեցու (1632-1655) կոնդակում Հաթերք գիւղը յիշուած է Եղիշէ Առաքելոյ կամ Ջրվշտիկ կոչուած վանքի թեմի (Մեծ Կուանք, Մեծ Իրանք եւ Կողթ գաւառների տարածքում) գիւղերի թւում. «...Հաթերքու, Ականու, Ջանկաթաղու, Կուլաթաղայ, Մոխրաթաղու, Կխասպատու, Մեծ շինու, Մահմնու, Մալատկանու, Ջարտախին, Վերին Շ[ի]նաթաղու, Ափիտուլա[յ], Սահլապատայ, Թթուտին, Ուղտակաւայ, Կօկթափին, Եղակերու, Ծակառաշինու, Վանքին, Գետաշէնու, Սլուքեցւոյ, Բաղշիքու, Մրցնու, Հաճիշինու, Քօշկայ, Հատիսու, Էիբլօղայ, Միրզիկուայ, Ոսկանապատի..., Ցնծահալայ, Գետամիջու, Համասրապակուց...»[2]:

Ինչ վերաբերում է Տրտուի վերնահովտին (Լեւագետի հովտով), որը զարգացած միջնադարում առաւելապէս հանդէս էր գալիս իբրեւ Ծար «երկիր» կամ «գաւառ» (իր կենտրոնական, իշխանանիստ բնակավայրի անունից[3]), ապա պատմագրութեան մէջ, սկսած Ղ. Ալիշանից եւ Մ. Բարխուդարեանցից, արմատաւորուել է, ցաւօք, աւանդական մի փոխանցիկ սխալ, ըստ որի հետազօտողները նշուած շրջանում տեղորոշել են աշխարհացոյցեան Արցախի Վայկունիք (var. Վակունիք, Վակունիս) գաւառը, իսկ նրանից արեւելք էլ՝ Բերձոր գաւառը[4]: Սակայն չէ՞ որ Մովսէս Դասխուրանցին (=Մաշտոց Եղիվարդեցին) ներկայացնում է այդ երկու գաւառները Եսայի Աբու Մուսէին ենթակայ, այսինքն՝ Գորոզուի իշխանութեան մաս կազմած ութ հարաւային գաւառների ցուցակում («Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական[-ի Կոտակ], Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք եւ Տրի գաւառ»)[5], ուստի աղբիւրագիտական հիմքերը լիովին բաւարար են՝ բացառելու Վայկունիք գաւառի կապը Տրտուի աւազանի հետ եւ տեղորոշելու այն Հակարի գետի Շալուայ ձախ օժանդակի հովտում, նրա միւս՝ Հոչանց օժանդակի եւ Արցախեան լեռնաշղթայի միջեւ (նոյն հովտով աւելի հարաւ էլ՝ տեղորոշելով Բերձոր գաւառը)[6]:

Իսկ որ Տրտու գետի վերնահովիտը վաղ միջնադարում եղել է Սիւնիք նահանգի հիւսիս-արեւելեան Սոթք գաւառի մի մասը, մատնացոյց էր անում դեռեւս Սեդրակ Բարխուդարեանը (թէկուզ եւ սխալուելով Վայկունիքի տեղորոշման խնդրում). «Սահլին Կաղանկատուացին կոչում է Սիւնիքի տէր, եւ իրաւամբ, որովհետեւ Վայկունիքը [իմա՛ Տրտուի վերնահովիտը – Ա. Յ.] միջին դարերում միշտ Սիւնիքի մաս է համարուել եւ Ստ. Օրբէլեանը իր ցանկերի մէջ նրա բոլոր գիւղերը Սիւ-

---

[1] **Ս. Քամալեան**, «Աղվանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի ... մի ղաբալա, էջ 151.

[2] Տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 48:

[3] Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 34; **Ս. Կարապետյան**, Հայ ւշակույթի հուշարձանները, էջ 55:

[4] **Հ. Ղ. Ալիշան**, Արցախ, էջ 10, 14-16; **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 402-403; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 8, 112, 217:

[5] **Դասխ.**, Գ.ժթ /ի/, էջ 325:

[6] Հմմ. **Ա. Յակոբեան**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, սն. 293, 309, ծն. 55; նոյնի՝ Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները, – ՀԱ, ՃԺԳ տարի, 1999, սն. 266; նոյնի՝ Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ, էջ 220-229:

նիքի Սոթք գաւառի վրայ է թուարկել: Ըստ երեւոյթին վայկունիքը, որը նաեւ Ծար գաւառ եւ Ծարայ երկիր է կոչուել, հէնց այս շրջանից սկսած Սոթքի հետ մի ամբողջական միաւոր է կազմել»[1]: Մանրամասնենք, որ Սիւնեաց պատմիչը, օգտագործելով վաղ շրջանի տուեալները (մինչեւ թ դարի փոփոխութիւնները), Ծարը թուարկում է Տաթեւի վանքին պատկանող եւ Աղուանից երկրին (իմա՛ Արցախին) սահմանակից շրջանների շարքում («Հատանէ եւ զսահման Աղուանից՝ Հոմբի խոռն, Ծար գաւառ, Աղահէճ, ընդ որ Աղունոյ գետն հատանէ մինչ ի Քարաւազին կամուրջն [խուդափերինից արեւմուտք – Ա. Յ.], եւ Հաբանդ գաւառ»)[2]: Աղբիւրագէտի համար կարեւոր է, որ դրանից առաջ պատմիչի մօտ բերուած Հայոց Սարգիս Սեւանցի կաթողիկոսի շրջաբերականում ուղիղ խօսւում է հին կարգի եւ հին սահմանների վերականգնման մասին. «...էր բովանդակն 55 նամակ շրջագայական թղթի իւրաքանչիւր հայրապետի կնքով, եւ այն երկար բանիւք եւ հրահոսան նզովիւք գրեալ: Վասն որոյ եւ մեք երկուցեալ յայնպիսի առաքելական հարցն հրամանէ եւ պատկառեալ ի ծերացեալ բազմաժամանակեայ աթոռոյն Սիւնեաց՝ անդրէն դարձուցաք զբոլոր սահման վիճակի նոցա եւ վերստին հաստատեցաք զեդեալ պատիւ նոցա»: Իսկ այնուհետեւ թուարկւում են Սիսական տան գաւառները. «Եւ այս իսկ են գաւառք՝ վիճակեալք հօտի նոցա. Սիւնիք, Բաղք, Արեւեաց տունն, Որդուատ, Արգուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ՝ որքան Երասխայ գետն հատանէ, Ճահուկ, Վայոց ձոր՝ Խաչերոյ խոռովն [Խաչիկ գիւղի շրջակայք – Ա. Յ.], Գեղաքունի՝ Կռզաբակովն, Երիշատ, Ջաղացաձորն եւ Փորակն իսկ բոլորովին, յորում բազում հակառակութիւնք լեալ էին, եւ մեծամեծ նզովիւք ամրացուցեալ էին կաթողիկոսքն Հայոց: Հատանէ եւ զսահման Աղուանից՝ Հոմբի խոռն...»[3]:

Նկատենք, որ Սեւանայ լճից հիւսիս եւ Ոմբի խոռից (Ղեւագետի վերնահովիտ) արեւմուտք ընկած վերջին երեք անունները չնկատած («Երիշատ, Ջաղացաձորն եւ Փորակն») Բ. Ուլուբաբեանը նշում էր, թէ Սոթք գաւառի հատուածը չի յիշուած Սիւնեաց պատմիչի բնագրում, ուստի այն իբրեւ թէ վերագրուել է Արցախ – Խաչէնին[4]: Սակայն Սիմէոն Երեւանցու մօտ եւս Սեւանի հիւսիսային ափին թուարկուած են հէնց Սոթքի Մաքենեաց վանքին ենթակայ միեւնոյն գիւղերը (Սոթ-ից արեւմուտք՝ 3 գիւղից յետոյ). «զՋաղացաձոր, զՀամամթիար, զԴարաւանակս [=Սոթքի հիւղացանկի՝ Դարաւանակ, հետագայում՝ Դարայ], զԱղջաղալայ, զԻրիշատ, զՈկունէս, զՋիլ, զԱրտաւուճ [=հետագայի՝ Արտանիշ], զԳետիկ, զԿարմունջ, զՂարաքեւփանակ [=հետագայի՝ Թոխլուջա, ներկայիս՝ Դրախտիկ]»[5]: Ըստ Բ. Ուլուբաբեանի մի այլ վրիպման՝ նախորդող տեղանունը (երկի երկու ձեռագրահմբերում՝

---

[1] **Ս. Գ. Բարխուդարյան**, Արցախի, Ծաքիի եւ Փառիսոսի իշխանությունները, էջ 73:
[2] **Օրբ.**, գլ. ԾԶ, էջ 227-228; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԾԷ, էջ 310:
[3] **Օրբ.**, գլ. ԾԶ, էջ 227; Պատմութիւն նահանգին Սիսական, ԾԷ, էջ 310:
[4] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 46-47:
[5] **Սիմէօն Երեւանցի**, Ջամբռ, էջ 283: Վերջին գիւղի համար տե՛ս եւ հմմ. նաեւ ՀՀԾՏ բառարան, հտ. 2, Եր., 1988, էջ 465; **Սիմեոն կաթողիկոս Երեւանցի**, Ջամբռ, էջ 509-510:

Գոզայ բակովն եւ Կոզայ բակովն) չկայ այլ աղբիւրներում[1]: Սակայն մեզ հասել է նրա յիշատակումը գոնէ «Ջամբռ»-ում՝ «Շղուաքայ վանքի» գիւղացանկում («Կորզաբակ, Մեծ Ձագ, Փոքր Ձագ, Եսնիստն, Շղուաք, Ծակքար...»)[2]: Ոմանք Կոզաբակը համադրել են միջնադարում յայտնի Կոթ գիւղաքաղաքի հետ[3], բայց աւելի հաւանական է այն տեղադրել Գեղարքունիք գաւառի հարաւ-արեւմուտքում սահմանային դիրք գրաւող՝ Արգիճի գետի ձախ ամենաերկար՝ Քարածի ուշագրաւ անունով (հմմ. Կոզայ) վտակի ընդարձակ հովտում, որը փռուած է Գեղամայ լեռնաշղթայի հարաւային ամենաբարձր Գեղասար գագաթի (3443 մ) տակ եւ որտեղ կար էլի ուշագրաւ Կարայազի յորջորջումով՝ խորհրդային շրջանում լքուած մի գիւղ:

Ինչպէս նկատել է դեռ Ս. Բարխուդարեանը, Օրբէլեանի երկի վերջում՝ Սիւնեաց 12 գաւառների գիւղացանկերի («Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկք եկեղեցւոյ ըստ հին սահմանին» վերտառութեամբ[4])՝ Սոթք գաւառի 75 (կամ 76) գիւղերի ցուցակի վերջնամասում առկայ է ոչ միայն Ծար-ը (15 միաւոր հարկաչափով), այլեւ 7-8 ուրիշ գիւղանուններ[5], որոնք իրապէս համադրելի են Տրտուի վերնահովտի բնակավայրերի հետ: Համմ., օր.՝ Գետաբակի – «Գետամիջոյ վանք» (Ծարի «խորաձորում»)[6]; Երերի – «Ջերմաջուր» (աւելի ուշ՝ Իստիսու)[7]; Հոնջենի – «Հաճաւ» (հմմ. Աղահեջքում Հունչաւ – Հօչանց [<*Հաւչանք] գիւղանուան տարբերակների հետ զուգորդութիւնը); Վարժակի աղբիւր – «Իստիբուլաղ» (Հաճաւից 6 կմ հիւսիսարեւելք)[8]; Եղջերուենի – «Մարալդամի» (խորհրդային շրջանի Բաբաշլարը Լեւա-

---

[1] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 47:

[2] **Սիմէօն Երեւանցի**, Ջամբռ, էջ 284; **Սիմէոն կաթ. Երեւանցի**, Ջամբռ, էջ 500:

[3] Տե՛ս ՀՀՕՏ բառարան, հտ. 3, էջ 186, 242:

[4] **Օրբ.**, գլ. ՀԳ, էջ 371; Պատմութիւն Նահանգին Սիսական, գլ. ՀԴ, էջ 509:

[5] Տե՛ս **Օրբ.**, գլ. ՀԳ, էջ 374; Պատմութիւն Նահանգին Սիսական, գլ. ՀԴ, էջ 514-515:

[6] Սոթքի ցանկում *-բակ / -բակք* վերջաւորութեամբ անունների առատութեան վերաբերեալ Հ. Հիւբշմանի դիպուկ դիտարկումից յետոյ, իրօք՝ 75-ից 14-ը, կարելի է նաեւ նկատել, որ փոխարէնն այս գաւառի ցանկում բացակայում են *-վանք* վերջաւորութեամբ գիւղանուններ, այնինչ միւսներում դրանց թիւը 2-ից 9 է (ընդ որում՝ այնտեղ էլ չկան *-բակ*-ով աւարտուողներ): Թւում է, թէ այս դիտարկումը բաւարար է՝ համարելու, որ «շրջապատուած տեղ, գաւիթ, փարախ, ծիր, պարուակ» նշանակող *բակ* եզրոյթը (տե՛ս Հ. Հիւբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 275-276) այս ենթատեքստում ունեցել է հէնց «վանք» իմաստը: Մեր վարկածն ընդունելու դէպքում, բացի «Գետա*բակք*» – «Գետամիջոյ *վանք*» համապատասխանութիւնից, հնարաւոր է նկատել նաեւ այս ցուցակի «Նորա*բակք*» անուան համապատասխանութիւնը Մովսէս Դասխուրանցու Գ.իբ /իգ/ գլխում յիշատակուած «Նորա*վանք*ի» հետ, որը կառուցել էր «տիկինն Սպրամ... ի գաւառին Սոդէից»:

[7] Ըստ Ցովհ. Կարագեոզեանի (Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 148-151)՝ հետագայում *Իստիսու* դարձած *Ջերմաջրի* հետ համադրելի է Ուռուա Ա-ի՝ Ծովինարի վիմագրի *Երելթուա* երկրանունը՝ կազմուած վաղնջական շրջանի հայերէն *եռ* (<*երս*) արմատով *եռել* (<*եռեալ*) եւ *թուա* – «ջուր» բառերից: Ջերմաջրի միակ յիշատակութիւնը Ծարի Ս. Սարգիս եկեղեցու արեւմտեան պատի մի արձանագրութեան մէջ է. «Ես՝ Կչիկ, տվի իմ Ջերմաջրին ջաղացն...» (Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 219): Իստիսուի հետ համադրութեան առումով հմմ. նաեւ **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 81:

[8] Համադրութիւնը՝ Ց. Կարագեոզեանի (տե՛ս Քարվաճառի /Քելբաջարի/ շրջանի հուշարձանների քարտեզը [հեղինակներ՝ **Ց. Սիմոնեան, Ց. Սանամեան, Ց. Կարագեոզեան**], Եր., 1995): Իստիբուլաղի յուշարձանների եւ վիմագրերի մասին տե՛ս **Ս. Կարապետյան**,

գետի հովտում՝ Հանդաբերդից հիւսիս-արեւմուտք)[1]*; Աւձի գետ եւ Աւձէն – «Օտղլաղ» կամ «Օտաղլու» (երկուսն էլ՝ Քարվաճառ քաղաքից 2-3 կմ արեւմուտք)*[2]*:*

Բացի այս վերջին մասից (Ծարի շրջակայքից)՝ Սոթքի գիւղացանկում Արեւելեան Սեւանի լեռնաշղթայից արեւելք ընկած գիւղանուններ են նշմարւում նաեւ սկզբնամասում: Սկսուելով գաւառակենտրոն Սոթք աւանից՝ թուարկումն, ըստ ամենայնի՝ ընթանում է դէպի արեւելք եւ անցնում Սոթքի լեռնանցքը, որից այն կողմ յիշատակուած են Լեւագետի հովտի, գուցէ, մէկ տասնեակի չափ գիւղեր: Դրանցից Սափչի անապատ-ը *(var. Սափչանապատ) մեծ հաւանականութեամբ համադրելի է Հանդաբերդի դիմացի ձորահովտում ուշ միջնադարում Չափնի անունով յայտնի գիւղի հետ՝ իր ԺԹ դարի եկեղեցով, մահարձանով, խաչքարերով ու վիմագրերով*[3]*: Իբրեւ վարկած՝ Սոթքի գիւղացանկի անունների աղաւաղումներ կարող են դիտուել նաեւ հետեւեալ ուշ յորջորջումները. «Ջալիգեօլ»*[4]*՝ լեւից 1,5 կմ*

Հայ մշակոյթի հուշարձանները, էջ 47-49 (հեղինակը գիւղանունը թարգմանել է՝ *Ջերմաղբիւր*): Նկատենք, որ այս համադրութեան վերաբերեալ Սլ. Սարգսեանի կասկածանքը («որը դարձեալ Սոդք գաւառի բնակավայրերից է», տե՛ս նշ. աշխ., էջ 85), չի կարելի արդարացուած համարել (թէպէտ միւս դէպքերում կան ընդունելի դիտողութիւններ շտապողական համադրումների վերաբերեալ): Այս *վարժակի աղբիւր* տեղանուան հետ լիովին համեմատելի է թուում Արածանիի վերնահովտի յայտնի տաք հանքային աղբիւրների հինաւուրց անունը՝ «Վարշակի ջերմուկներ»: Տե՛ս **Ղազարայ Փարպեցւոյ** Պատմութիւն Հայոց, Գ.հգ, էջ 132; ՄՀ, հտ. Բ, էջ 2327 («ի ջերմկին, որ կոչի Վարշակի»). հմմ. **Հ. Պ. Ալիշան**, Այրարատ, էջ 513; ՀՀՇՏ բառարան, հտ. 4, Եր., 1998, էջ 790:

[1] Համադրուած է դեռեւս Մ. Բարխուդարեանցի կողմից (Արցախ, էջ 404՝ «Եղջերուագոմ»): Հմմ. **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 87; **Ս. Կարապետյան**, Հայ մշակոյթի հուշարձանները, էջ 32 («Եղջերուենիք»):

[2] Վերջին՝ *Աւձէն* գիւղանուան համար հարկ է մանրամասնել, որ Օրբէլեանի՝ մեզ հասած գրչագրերում առկայ անունը «Աւժէն» է եւ այն էլ՝ յաջորդ *Աղահեջք* գաւառի ցուցակի սկզբում: Սակայն ենթադրելի է, որ այստեղ որեւէ գրչի նոյնպիսի սխալ է սպրդել, որպիսի սխալի պատճառով, ըստ մեր դիտարկման (**Ա. Ցակոբեան**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, սն. 276-277)՝ Աղահեջքի վերջին *Աղբաթխէրտ – Աղախիրտ* (*var.* Աղախերդ) գիւղանունը յայտնուել էր յաջորդող *Հաբանդ* գաւառի ցուցակի սկզբում: Նման շփոթը ծագում էր, երբ երկու սիւնակներով գրուած որեւէ գաւառացանկի վերջին գիւղանուան կողքին՝ նոյն տողում էր յայտնուում յաջորդ գաւառի անունը: Իսկ «Աւժէն» անուանաձեւը մենք վերականգնել ենք՝ ենթադրելով, որ Աղահեջքի ցուցակի սկզբում յայտնուելուց յետոյ *Ջ*-ով տարբերակն «Աւժէն»-ի է վերածուել գրչի վրիպման հետեւանքով, յաջորդող «Անէժ» անուան վերջին բաղաձայնի ազդեցութեամբ:

[3] Դրանց նկարագրութիւնը եւ վիմագրերի ընթերցումը տե՛ս **Ս. Կարապետյան**, Հայ մշակոյթի հուշարձանները, էջ 34-39: Հմմ. **Մ. մագ. Տէր-Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դադիի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 93-94: ԺԸ դարի պատմիչը յիշատակում է *Ջաբճի* գիւղի իւզբաշիներից. «Պարսոյ զօրի մէջումն կէր Զ քրիստոնայ, որ Թահմազին ղուլ են կամ իւզբաշի... մինը՝ Գեղաքունու դուն կասեն... Գեղաքունի չորս կողմէն կասեն՝ գեղն Սոթ անուանի, այս սոթեցի Ատումի որդի Աբիջանս, չաբնեցի Այտդէն բէկի որդի Աղայջանըն եւ չաբնեցի Մռավենց Տէր Մուսէսի որդի Բալիգն, եւ Ճաթայկերենց Թօբուզի որդի Հախնազարս» (**Աբրահամ Երեւանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, Հրատ.՝ **Հ. Ս. Ճեմճեմեան**, Վենետիկ – Ս. Ղազար, 1977, գլ. ԺԷ, էջ 75):

[4] Ս. Կարապետեանը նշում է, որ Լեւ «գիւղից 1,6 կմ հիւսիս-արեւելք, 15 մ բարձրութեամբ առանձնացած ժայռի ստորոտում մէջքի վրայ ընկած է գեղաքանդակ, բայց անարձանագիր խաչքար» (**Ս. Կարապետյան**, Հայ մշակոյթի հուշարձանները, էջ 40): Այս եւ յա-

հիւսիս-արեւելք < Աւազան *(12 միաւոր հարկաչափով), «Ջամիլլու»՝ Սեիդլարից 4 կմ հիւսիս-արեւմուտք* < *Համամաբակք (7 միաւորով), «Էլեասալիլար»՝ Սեիդլարի եւ Լեւի միջեւ* < *Աւապսաբակ (var. Արեւիսաբակ, 6 միաւորով), Կոնգուր՝ Ուռիաջուր/Սեօյուդլուչայի ձախ վտակ եւ լեռ նրա ակունքի մօտ* < *Գուկաւինջ (var. Գուկաւինճ [<*Գունկ-աւի՞ճ], 15 միաւորով): Ի դէպ, նշուած լեռը Լէօի կալուածացանկում կրում է «Կոնղուր» անունը[1], իսկ ցարական 5-վերստանոց քարտէզում՝ «Կոմուր-դաղ»: Վերջին լեռնանուան հետ համադրելի է ժէ-ժԸ դդ. յիշուած Գումէր գիւղանունը[2]: Միաժամանակ, իր անունը ի դարում Սեօյուդլուչայ-ից (թարգմանաբար՝ «Ուռիջուր») ստացած Սեիդլարը ԺԹ դարում դեռ կոչւում էր «Բաշ-դամ»[3], այսինքն՝ Մեծ գոմ, եւ դա, գուցէ, բաւարար է՝ ենթադրելու, թէ հէնց այստեղ է եղել ուշ միջնադարի Գումէր գիւղը (աւելի հնում, իբրեւ վարկած՝ Գուկաւիճ): Ահա Լեւագետի հովտի այս գիւղախմբից յետոյ է Սոթքի գիւղացանկի թուարկումը վերադառնում Սեւանի աւազան՝ հասնելով հաստատապէս այստեղ գտնուած Նորաբակի/Նորավանքին եւ Վասակաշէնի/Վարդենիսին[4]:*

Սիւնեաց պատմիչի վերոբերեալ տուեալների հետ համահունչ է Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու հարաւային պատի՝ 1031 թ. ընդարձակ արձանագրութեան տեղեկութիւնը, ըստ որի՝ Հայոց կաթողիկոսութեան կենտրոնական արքեպիսկո-

---

ջորդ ուշ յորջորջումները տալիս ենք ըստ՝ Карта генерального штаба К-38-141, Кельбаджар, масштаб 100000, Москва, 1978.

[1] **Լէօ**, Պատմութիւն Ղարապաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 673:

[2] Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4; ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 240, վաւ. 160, թ. 4ա (նոյն բնագիրն է. «Պետրոս հոգեւոր տէրին հրամանաւն այս քանի գիւղ տրայքս մեզ բաժին տվին Ատրէնիս, Ղոուցփոր, Քաւթառանց, Հաճաւ, Բորու, Քարվաճառ, Գումէրն, Ջուար: ... Գրեցաւ թվին ՌՃԺ [=*1661 թ.*], Յուլիսի 20»); Հայերեն արձանագրությամբ առարկաներ, Աշխատասիրությամբ՝ **Ե. Մուշեղյանի**, Եր., 1964, էջ 69 («Ցիշ[ատակ] է խաչս Կոմերեցի Պաղտասարին եւ կողակցոյն Սիմա[յ]ին եւ որդոյն Դաւիդին, ի դուռըն Դադեու վանքին... թվին ՌՃՂԴ-ին [=*1745 թ.*]»): Հմմ. **Ս. Կարապետյան**, Հայ մշակոյթի հուշարձանները, էջ 121:

[3] Հմմ. անդ, էջ 21:

[4] Հմմ. Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 360; ՀՀԾՏ բառարան, հտ. 4, էջ 782: Ստեփաննոս Օրբէլեանի ԿԱ գլխում (էջ 249; Պատմութիւն տանն Սիսական, էջ 249) Սիւնեաց 30 նշանաւոր վանքերից 15-րդը նշուած է «Դադէի» կամ «Թադէի» անունով վանքը, որին նախորդում են Ծղուկք, Բաղք, Ջորք, Արեւիք, Հաբանդ գաւառների, իսկ յաջորդում են Աղաւնեջքի (աղաւնեջեան Ծիծառնոյ վանքից առաջ յիշուած է այլուստ անյայտ Կուռափաձորի վանքը), Վայոց ձորի եւ Գեղամ գաւառի (որում նաեւ Սոթքի՝ «մեծ մենարանն Մաքենոցն») վանքերը: Նախկինում մենք շտապել էինք ենթադրել, թէ խօսքն անպայման Տրտուի միջնաճովտի յայտնի Դադիվանք-Խութավանքի մասին է եւ դրա հիման վրայ կարելի է վերջինիս շրջակայքը եւս վերագրել Սոթքին (տե՛ս ՀԱ, 2008 թ. տարեգրքում, էջ 106): Սակայն հետագայում ճշտել ենք (Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 238-239, ծն. 56), որ անկախ Սիւնիքի տէրերի՝ Դադիվանքի «խորաձորին» յաւակնելուց (երբեմն՝ նաեւ յաջողուած), քննարկուած գիւղացանկի եւ ըստ այդմ՝ աշխարհացոյցեան Սոթքի արեւելեան սահմանը հասել է լոկ Լեւագետի ստորին հոսանքի «խորաձորին»՝ ներառելով Սափչի/Զափնիի ու Հանդաբերդի ձորալանջերը, սակայն չանցնելով Եանշաղի ու Ծաղիկանց լեռան (>Զիչագու. հմմ. **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 19) կողմը:

պոսութեան[1] սահմանները նկարագրում են այսպէս. «Եւ արդ՝ ... զսահմանահատ վիճակս սորա, որ է՝ յարեւելից ի Ծար գետոյ մինչեւ ի գետն Ախուրեան»[2]: Եթէ ընդունենք, որ այստեղ Ծար գետ է կոչուած Տրտուի վերին հոսանքը, ապա պէտք է նաեւ համարենք, որ հէնց գետի այդ հատուածի գոնէ մի կտորով եւ արեւելքից նրա աւազանն իր Թութխու վտակի հովտից բաժանող լեռնաբազուկով են սահմանակցել աշխարհացոյցեան Սիւնիքի Սոթք գաւառը եւ Արցախի յարակից շրջանը, ճիշտ այնպէս, ինչպէս որ դա ցուցանում էին պատմիչ Ստեփաննոս Օրբէլեանի ձեռքի տակ եղած աղբիւրների հեղինակները[3]:

Զարգացած եւ ուշ միջնադարում եւս Սոթքի արեւմտեան եւ արեւելեան մասերը, որոնք Սիմէոն Երեւանցին բնորոշում էր «յայսկոյս լերինն» եւ «յայնկոյս լերինն» արտայայտութիւններով, յաճախ ընկալւում էին իբրեւ մէկ ամբողջութիւն: Այդպէս է դեռ Վարդան Արեւելցու «Աշխարհացոյց»-ում, որը նշում է. «Սոթից գաւառն Ծարայ երկիրն է»[4]: Ուշագրաւ է նաեւ նոյն ԺԳ դ. կէսերին Կիրակոս Գանձակեցու կողմից նկարագրութեան ձեւը. «Գիւղ մի ի սահմանս Գեղարդունւոյ ծովուն ի կողմ խաչենոյ, հուպ ի բերդն Հանդաբերդ, ուր Ջերմուկն է, Ծար անուն...»[5]: Նոյն կերպ, 1647 թ. յիշատակարանում ԺԵ դարի հին Աւետարանի նորոգման վայրը գրիչ Մովսէս երէցն անուանել է «ի յերկիրըն Ծարայ, ի մայրաքաղաքըն Սոթէի»[6]: Նշելի է լոկ, որ ուշ շրջանում լիովին Դադիվանք/Խութավանքի տիրոյթը հանդիսացող Ծար գաւառն արեւելքում ընդգրկում էր էլ աւելի մեծ տարածք՝ նաեւ Թութխուի հովիտը եւ Ջափար գիւղի ու Խաղարավանք/Խնթրավանքի շրջակայքերը Տրտուի միջնահովտում: Սիմէոն Երեւանցին «Խութավանից» տիրոյթների արեւելեան մասը (Վարդենիսի լեռներից «այն կողմ») նկարագրում է հետեւեալ ձեւով. «Իսկ յայնկոյս լերինն՝ Մեծ Ծար, Կաժ, Անուխս, Խօլօզանց, Դաշտակ, Հաճաւ[7], Ապահէն, Ճումէն, Քարատակ,

---

[1] Հմմ. 1298 թ. Գլաձորում Մկրտիչ Թեղենեցի գրչի ընդօրինակած «Մեկնութիւն կաթողիկէից թղթոց»-ի յիշատակարանում. «Այլ եւ զքեզորդի սորին՝ զտէր Յովհաննէս զարհեպիսկոպոսն Բրջնոյ եւ զվերատեսուչն Այրարատեան ևահանկին...» (ՄՄ Ձեռ. 1409, թ. 330բ; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 824):

[2] Այս եւ Կոտայք գաւառի միւս արձանագրութիւնները գիտական հրատարակութեան է պատրաստել («Դիւան հայ վիմագրութեան» շարքի առաջիկայ հատորի համար) վիմագրագէտ Գագիկ Սարգսեանը:

[3] Իհարկէ, կարեւոր է նաեւ ընդգծել, որ աշխարհացոյցեան *Սոթք-Սաւղք գաւառը* չպէտք է շփոթել նրա ձեւաւորումից առաջ, անկասկած, գոյութիւն ունեցած եւ շատ աւելի մեծ տարածքով *Ծաւդէացւոց իշխանութեան* հետ (տե՛ս վերեւում, էջ 61 եւ **Ս. Տ. Երեմյան**, Ծաւդեացվոց իշխանությունը, էջ 41-52; **Բ. Ուլուբաբյան**, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, էջ 182-186; **Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 189):

[4] Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, Քննական հրատ.՝ **Հ. Պերպերեանի**, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, էջ 12: Այս բնագրում տպագրական վրիպակ է սպրդել՝ «Ծառայ» *փխ* «Ծարայ». հմմ., օր.՝ ՄՄ Ձեռ. 7085 (ԺԳ դար), թ. 151բ:

[5] **Կիրակոս**, գլ. ԽԸ, էջ 322:

[6] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հտ. Գ (1641-1660 թթ.), Կազմեց՝ **Վ. Հակոբյան**, Եր., 1984, էջ 261:

[7] Վերջին անունը բնագրում ակնյայտ վրիպակով է՝ «Հաճար»: Մինչեւ այստեղ թուարկուած են Տրտուի վերնահովտի, ապա գալիս են Թութխուի գետահովտի 12 գիւղերը:

Ջուար, Մոս, Սեւաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուճ, Մոթանց, երկու Դաւաչխուր՝ մեծ եւ փոքր, Լեւ, Եանշաղ, Բարսեղի շէն, Մէյտանն, Երիցի շէն[1]*, Խութավանք, Ջափար, Կեարաք, Նորշէն, Խնթրավանք»*[2]*: Այս 28 գիւղանուններից մի քանիսը յանուանէ յիշատակուած են զանազան ձեռագրերի յիշատակարաններում, վիմագրերում ու սիկէլներում: Դրանք են՝ «Ծար», «Դաշտակ»*[3]*, «Հաճաւ»*[4]*, «Մոս»*[5]*, «Ապահէն»*[6]*, «Խնթրավանք/Խադարավանք», «Եանշաղ»*[7]*, «Ջափար»*[8]*, «Նորշէն»*[9]*, «Խութավանք/Դադի-*

---

[1] Վերջին հինգ գիւղանունները Լեւագետի հովտում են, իսկ յաջորդ հինգը՝ Տրտուի միջնահովտում:

[2] **Սիմէօն Երեւանցի**, Ջամբռ, էջ 283:

[3] Հմմ. ՄՄ Ձեռ. 3601, թ. 229բ («աւարտեցաւ սուրբ մատեանս ա[ստուա]ծային, որ գոչի Մաշտոց, ձեռամբ յոգնամեղ և յանհմաստ գրչի՝ սուտանուն եւեթ Եսայի իրիցու: Գրեցաւ սայ ի յերկիրս Ծարայ, ի գաւղս, որ գոչի *Դաշտակ*, ընդ հովանեաւ Սուրբ Ա[ստուա]ծածնին և Մարդաղօնեաց սուրբ նշանիս և սուրբ Ցակոբիս և այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ: Ի թվիս Հայոց ՌՃԻԲ [=*1673 թ.*]»): Տասը տարի վաղ նոյն Եսայի գրիչը եւ նոյն Դաշտակում էր արտագրել (նման բոլորագրով) նաեւ ՄՄ Ձեռ. 4053-ը, բայց յիշատակարանում գիւղանունը կորսուել է, քանի որ գրչագրում մկրատով կտրուած է վերջին թերթի կէսը՝ 301ա$_2$ սիւնակի բնագրով. իսկ 301ա$_1$-ում ունենք. «...զեղեռնագործ Եսայի Հրէցս... կատարեցի զԱւետարանս ի թվականութեանս Հայոց ՌՃԺ եւ Բ [=*1663 թ.*], ամէն, եւ ի թագաւորութեան Պարսից ազգին Փոքր Շահ Ապազին, եւ ի հայրապետութեան Աղուանից տ[էառ]ն Պետրոսի սրբազան կաթողիկոսի: Ի յերկիրս Ծարայ, ի գաւղն {...}»: Հմմ. **Թ. Մինասյան**, Արցախի գրչության կենտրոնները, Եր., 2015, էջ 38:

[4] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 226 («...տուի զԱնիբուց հողն ի Հաճաւա[յ] եկեղեցին...»); **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 49. «Յիշատակ է նովս Ամիրճանին, Ամիրխանին, Ախինճանին, Հաճաւ գեղս: Թվին ՌՃԻԶ [=*1677 թ.*]» (մեր որոշ սրբագրումներով):

[5] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հտ. Գ, էջ 601. «...բնակեցաւ ի յերկիրս Ծարա[յ], ի գեօղն Մոս...»: Հմմ. **Թ. Մինասյան**, Արցախի գրչության կենտրոնները, էջ 37:

[6] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 198-199 («...գեղս եւ ագարակս իւրեանց սահմանաւքն՝ զԱպահէն եւ զԵզնարածանց, եւ զԲճանց եւ զԿանաչաւորն, որ ի Վայո[յ] ձոր»), էջ 216; Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հտ. Գ, էջ 489 («...եկեալ հասա[յ] ի յերկիրսն Ծարայ, ի գեօղն, որ կոչի Ապահէն», հմմ. **Թ. Մինասյան**, Արցախի գրչության կենտրոնները, էջ 37); **Թ. Մինասյան**, Արցախի գրչության կենտրոնները, էջ 17 («Ի թուականութեանս Հայոց Ռ-երորդի Ճ-երորդի և Ը-երորդի ես՝ պիտակ և տխմար սուտանուամբ Ցոհաննէս իրիցուկս, որ եմ ի գեղջէն Ապահինու, եկի ի Սուրբ աթոռս Գանձասար», ՄՄ Ձեռ. 2277, թ. 154ա); **Ս. Քամալյան**, «Աղվանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի ... մի ղաբալա, էջ 153 («Ես՝ Սէտիս [*var.* Սէյտիս], որդի Գրիգորին, թոռն պարոն Հասանայ, ետու մեր վանորէիցն զԱպահէն, զԽութ, զԽոզենակս...»), էջ 154 («...տվի վախմ բաժնէն իմմէ զԱպահէն իւր մուլքովն»):

[7] **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 221. «յիշատակ է բարեմիտ Ցուրին... ի երկրէն Ծարայ, ի գեղջէն Եանշաղէն...» (հմմ. **Թ. Մինասյան**, Արցախի գրչության կենտրոնները, էջ 59):

[8] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հտ. Գ, էջ 654 («...որ եմ յերկրէն Ծարայ, ի գեղջէն Ջափարու»); Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 133 («տուի զի[մ] գնած հողերն ի Ջափարին ի սուրբ ուխտս...»); էջ 216; **Ս. Քամալյան**, «Աղվանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի ... մի ղաբալա, էջ 153:

[9] **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 135, ծն. 1 («ես՝ Տէր Գրիգորէս... գնացի Նորշէնն, շինեցի երեք ջաղաց... եկի ի դուռն Սուրբ Առաքելոյս, շինեցի զխութ... թվին ՌԷ [= *1558 թ.*]»); Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 215; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 120; **Սիմէոն կաթ. Երեւանցի**, Ջամբռ, էջ 519; **Ա. Ցակոբեան**, Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ, էջ 242-243:

վանք»[1]: Անունների մեծ մասը լաւ համադրւում է ԺԹ դարի յորջորջումների հետ, որ կան ժամանակի քարտէզներում եւ այլ նիւթերում[2]. «Ծար» > Ջաո, «Կաժ» > Կեշդեկ, «Խօլօգանց» > Խոլագէյ, «Հաճաւ» > Խալաշլու (հետագայում՝ Օկտեաբրքենդ), «Ապահէն» > Բենա (հետագայում՝ Քիլսեալու, Տրտուի աջ ափին յառնող 1767 մ բարձրութեամբ՝ Ղալա յորջորջուած լեռնագագաթի հարաւային լանջին), «Ճումէն» > Ջոմարդ, «Ջուար» > Ջուլֆուգարլու, «Մոս» > Մոզքենդ, «Սեւաջուր» > Կարասու (վտակ), «Հալուճ» > Օրուջլու, «Դաւաչխուր» – նոյնը (հետագայում՝ Խալլանլու), «Լեւ» > Լեչքենդ, «Եանշաղ» – նոյնը, «Բարսեղի շէն» > Բաղրսաղ, «Մէյտան» > Մայդանչայ (վտակ), «Երիցի շէն» > Քեշիշքենդ, «Կեարաք» > Գեարաւենդ: Իսկ այն, որ Սիմէոն Երեւանցու «Ջամբռ»-ում բացակայում են յիշատակարաններից ու վիմագրերից յայտնի «Բորու», «Քարվաճառ», «Գոմեր»[3], «Կոդուր» (հետագայում՝ Կոթուրլու)[4], «Տպէլ» (հետագայի՝ Բաշտիբել, Բաշտուբել, խորհրդային՝ Բաշլիբել)[5] անունները, բացատրւում է պարզ՝ ԺԸ դ. վերջերին դրանք արդէն հայաբնակ չէին:

Աղբիւրների համադրումից երեւում է, որ վաղ շրջանում Սիւնիքի մաս կազմած՝ Տրտուի վերնահովիտը, իսկ նրա հետ նաեւ Սոթք գաւառի մնացեալ՝ Սեւանայ լճի ափին ընդգրկող արեւմտեան հատուածը, դուրս է եկել այդ աշխարհի իշխանների տնօրինութիւնից եւ միացուել Արցախ աշխարհի Մեծ Իրանք գաւառի (այդ պահին արդէն՝ Խաչէնի) իշխանների տիրոյթներին: Ըստ Մովսէս Դասխու-

---

[1] «Սիւնիքի Ծար գաւառում» (իբրեւ թէ՝ *ընդ* «Ցրագետ անապատում») է արտագրուած համարուել նաեւ ՄՄ Ձեռ. 4074-ը (Սարգիս Ծնորհալու «Մեկնութիւն կաթուղիկեայց», ճօտրագիր, 1670-ից յետոյ), սակայն դա արդիւնք է անխնամ գրութեան եւ թերթի աջ եզրի քայքայման պատճառով ոչ դիւրին ընթերցուող յիշատակարանի՝ «Որոտան գաւառ»-ին վերաբերող հատուածի թիւր վերծանման: Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա, Կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան**, Եր., 1965, էջ 1143; **Պ. Զոքաեեան**, Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, – ՄՄԱԵԺ, հտ. XX, Եր., 2001, էջ 219: Ահա՛ այդ սխալաշատ բնագրի իրական ընթերցումը (բացելով պատուոյ նշանի տակ գրչի յապաւումները եւ ձեւաւոր փակագծերում նշելով եզրի կորուստները). «ես՝ Ցովաս՚փս, յետինս ի մանկանց եկեղեցւոյ... յերկրին Սիւ[ն]ե՚ց, ի գաւառին Որո{տա}նն, ի գեղջէն Ըղուերծու, գրեցի զՍարգիս {...} ի Մեծ անապատն փոխեալ, ի Ցրագետն կ{...} յիշխանութեեանն Շահ Սլէյմանին, որ թ{...}եցաւ յաւո՚րս ս՚ր՚...» (թ. 417ա₂):

[2] Հմմ. **Е. Кондратенко**, Карта Елисаветпольской губернии..., Тифлис, 1888; Карта Кавказскаго края, Тифлис, 1904 (մասշտաբը՝ 5 վերստ); Пятиверстная карта Елисаветпольской губернии, Тифлис, 1910; Специальная карта Евразийской России. Тифлис, 1911 (մասշտաբը՝ 10 վերստ); **ԼԷօ**, Պատմութիւն Ղարապաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 152-156, 673-678); Карта генерального штаба К-38-141, Москва, 1978.

[3] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն I, էջ 24 («ի հոչակաւոր երկիրս Ծար, ի գեղս Քարավաճառ»); ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 240, վաւ. 160, թ. 4ա; ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, թ. 4 («գիւղ օրայքս Հաճաւ, Բորու, Քարվաճառ, Գումէրն, Ջուար»):

[4] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 204; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 112 («Ես՝ Ցովաննէս երէց Կոդրեցի, իմ հալալ արդեամբք միաբանեցա[յ]...»): Համադրութեան առումով տե՛ս նաեւ **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 80:

[5] ԼԷօ, Պատմութիւն Ղարապաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի, 673-677: Մանրամասն տե՛ս **Ա. Հ. Հակոբյան, Հ. Ե. Սիմոնյան**, Դադիվանքի նորահայտ արձանագրությունը եւ Տպելի տեղադրության հարցը, – ՊԲՀ, 1998, հ՝՛ 1-2, էջ 227-232:

բանցու մի ուղիղ հաղորդման՝ իր մազապուրծ դստերը փրկելու համար Տրտուի միջնահովտում տիրույթներ ունեցող «Միհրական» տոհմի վերջին իշխան Վարազ Տրդատի կինը «ամուսնացուցանէ զՍպրամ Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ, որ է [a էր] ի տոհմէն Հայկայ, տէր Սիւնեաց, որոյ բռնազբաւութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»[1]: Ի դէպ, Գեղամայ գաւառ ասելով՝ հեղինակը, ըստ ամենայնի՝ նկատի ունի ոչ թէ ամբողջ Գեղարքունիք գաւառը, որն «Աշխարհացոյց»-ում ընդգրկում էր Սեւանայ լճի արեւմտեան ու հարաւ-արեւմտեան ողջ աւազանը, այլ նրա լոկ հարաւային մասը՝ հետագայ աղբիւրներում յիշուած սահմանացուցիչ Շողուագ (ներկայումս անհիմն անուանափոխուած՝ Զորագիւղ) գիւղից արեւելք՝ ներառելով նաեւ յարակից Սոթքի լճակողմեան կէսը: Այս ընդգրկումը յայտնի է նաեւ ուրիշ աղբիւրներում, օր.՝ երբ Գեղարքունիքի բնակավայր է կոչւում նշանաւոր Մաքենիսը, որը Ստեփաննոս Օրբէլեանի գիւղացանկում (եւ ըստ այդմ, թերեւս, «Աշխարհացոյց»-ում) Սոթքում էր: Այդպէս է, օր.՝ վարդանի «Աշխարհացոյց»-ում. «Գեղամ Գեղարքունի է, ուր կայ ուխտն Մաքենիս»[2]: Կամ էլ՝ Մաշտոց Եղիվարդեցու վերոյիշեալ «Վարք»-ում. «...ելեալ հայրն նորա ի տիս մանկութեան, եւ գնաց պանդխտութեամբ ի գաւառին Սոթից... Յետոյ ի վախճանելն նորա յարեցաւ մանուկն Մաշթոց ի կրաւնաւորս... եւ հմուտ եղեւ Գրոց Սրբոց եւ նոցին Աստուածազգեցող զաւրութեանցն ի կրաւնաստանին, որ կոչի Մաքենոցք, ի գաւառին Գեղարհունիք»[3]:

Արցախի գաւառների ճիշտ տեղորոշումը թոյլ է տալիս նաեւ կատարել արաբական աղբիւրի յայտնի վկայութեան մասին մի ուշագրաւ դիտարկում: Ալ-Բալազուրին (Թ դ. վերջ) է դ. կէսերի զօրավար Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլիի նուաճումները նկարագրելիս նշում է նաեւ Արմինիյայի արեւելքում ընկած վեց գաւառների հետեւեալ շարքը. «Շակշին [=Շակաշէն], Միսկուան [=Մեծ Կուանք], Ուդ [=Ուտի Առանձնակ], Միսրիան [=Մեծ Իրանք], Հարջալիան [=Հարջլանք], Տիար» (ալ-Բահիլին այնտեղ հեծեալ ջոկատ էր ուղարկել Բայլականի քաղաքացիներին պայմանագրով հպատակեցնելուց եւ ապա Պարտաւ հասնելուց յետոյ)[4]: Այս շարքի վերջին անունը, որպէս կանոն, համադրուել է (աւելի յաճախ՝ «Տաբար» կամ «Տիր» տառադարձութեամբ) Ուտիքի Տրի գաւառանուան հետ[5], որն իրապէս նահանգի ամենահարաւային մասում էր (Կարեագինօ – Ֆիզուլիի շրջակայքում եւ դէպի հարաւ ու արեւելք): Սակայն այժմ, նկատելով արաբական արշաւանքի

---

[1] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 340: Տե՛ս նաեւ վերեւում, էջ 186, ծն. 1:

[2] Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, էջ 12:

[3] ՄՄ Ձեռ. 970, թ. 359ա: Հմմ. **Գարեգին Ա կթղ.**, Ցիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, սն. 89; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 41; ՄՀ, հտ. Թ, էջ 698-699:

[4] Ըստ՝ Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 274 (հմմ. նաեւ էջ 499՝ Իբն ալ-Ֆակիհ): Այս հանրայայտ պատմական դրուագի մասին վերջին անգամ տե՛ս **Ա. Տոնոյան, Հ. Սարգսյան**, Հետմարզպանական Աղվանքում «քուրդ» անվան մի քանի արաբական հիշատակությունների խնդիրը, – Արեւելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածո), հ՝՛ 12. Նվիրվում է պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի ծննդյան 80-ամյակին, Եր., 2016, էջ 262-272:

[5] Տե՛ս, օր., **Ս. Տ. Երեմյան**, Ն. Մառը եւ VII դարի Հայոց «Աշխարհացոյց»-ը, էջ 82:

նկարագրութեան մէջ թուարկուած վեց գաւառներից հինգի սպառիչ համապատասխանութիւնը Ուտիք եւ Արցախ աշխարհների կենտրոնական գաւառախմբերի հետ, գուցէ, կարելի է ալ-Բալազուրիի յիշատակած Տիար տեղանունը փնտրել մեր Պիանիք գաւառի՝ վերը ճշտուած տարածքում: Կարելի է ենթադրել նաեւ նրա կապը Տրակետ (<*Տրագետ) գետանուան հիմքի հետ: Այդ տարբերակով՝ որպէս քաղաքական պատմութեանը վերաբերող հետաքրքրական դիտարկում, կը ստացուէր, որ արաբական տուեալ զօրաշարժը, գոնէ ըստ Թ դարի պատմիչին հասած լուրերի, չի առնչուել հարաւային Արցախի գաւառախմբի հետ եւ ուղղուած է եղել լոկ կենտրոնական հատուածի գաւառների դէմ: Նման տարբերակով Տրակետ գետանուան հիմքի ընկալման փորձը, գուցէ, հնարաւոր է կիրառել դեռ բիւինական Սարդուրէ Բ-ի Գանձագռան տարեգրութեան Տերիա երկրանուան ստուգաբանութեան առիթով, որը սեպագիր բնագրում յիշատակուած է Կուալբա (>Մեծ Կուանիք, Տրտուի հովտում) եւ Ուխունէ (>Խօխանիա/բերդ/, Խաչէնագետի հովտում) երկրներից յետոյ (բոլոր համադրումները՝ ըստ Յովհ. Կարագեոզեանի)[1]:

Բաժին 4
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒՄ

Ինչպէս յայտնի է, Արաբական խալիփայութիւնն սկսեց թուլութեան լուրջ նշաններ ցոյց տալ Աբբասեան արքայատոհմի իշխանութեան գալուց գրեթէ անմիջապէս յետոյ (Ը դարի կէս): Աբբասեան խալիփաների կարեւորագոյն նորամուծութիւններից մէկն իրենց անձայրածիր տէրութեան մէջ ոչ արաբ եւ ոչ մահմեդական խոշոր աւատատէր-հողատէրերի իրաւունքների պաշտօնական ճանաչումն էր եւ ապա նրանց զանգուածային ընդգրկումը պետական կառավարման գործում[2]: Դրա հիման վրայ էր, որ Թ դ. սկզբներից ժառանգական դարձաւ բարձրագոյն աւատատիրական վերնախաւից նշանակուող՝ մարզերի կառավարիչ-ոստիկան-ամիրաների պաշտօնը: Հողատիրական ժառանգական իրաւունքների պահպանումով ու էլ աւելի կանոնակարգումով (խալիփաների կամ ոստիկանների կողմից կնքուած յատուկ պայմանագրերով)[3] նրանք փորձում էին թուլացնել պետական պաշտօնեաների չարաշահումների պատճառով Օմայեանների դէմ ահագ-

---

[1] Յ. Կարագեոզեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 201: Հմմ. աստ, էջ 59, ծն. 3:

[2] Տե՛ս Е. А. Беляев, Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье, Москва, 1957, с. 240; Ա. Պ. Փոլադյան, Քրդերը Աբբասյան խալիֆայության ժամանակաշրջանում (X-XI դդ.), Եր., 1999, էջ 41-43; Ն. Հ. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հտ. Ա, Եր., 2004, էջ 166-170:

[3] Տե՛ս Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան, Հայ նախարարների հողատիրական իրավունքները VII-IX դարերում ըստ խալիֆայության պայմանագրերի, – ՊԲՀ, 1974, հմր 4, էջ 195-212; նոյնի՝ Հայ ժողովրդի իրավական վիճակը խալիֆայության տիրապետության ներքո, – ԼՀԳ, 1975, հմր 4, էջ 76-78:

նացած հասարակական բողոքը, եւ ընդլայնելով տէրութեան հասարակական ու հարկային հիմնաբազան՝ խթանել տնտեսութեան զարգացումը: Սակայն հէնց այդ պատճառով արքունիքը նպաստեց տեղական աւատատէրերի հզօրացմանը եւ տարբեր մարզերում կիսանկախ ամիրայութիւնների առաջացմանը:

Նուաճուած երկրներում խալիփայութեան տարածքային ծաւալմանը զուգընթաց յայտնւում էին արաբական ցեղային բնակչութեան մեծ զանգուածներ, որոնց զգալի մասը բնաւորւում էր այնտեղ[1]: Դրա հետեւանքով տեղաբնիկների մի որոշ մասը ստիպուած լքում էր հայրենի տարածքները կամ ընդունում նուաճողների մահմեդական դաւանանքը: Արաբ վերաբնակիչները սովորաբար հողատարածքներ էին զբաղեցնում այն քաղաքային խոշոր բնակավայրերի շուրջը, որոնք վերածուել էին խալիփայութեան տեղական վարչական կենտրոնների: Այդպէս ձեւաւորւում էր ազգակիցների ու դաւանակիցների հաւատարիմ ուժ, որի վրայ յենւում էին նուաճուած երկրներում խալիփայի նշանակած բարձր պաշտօնեաները՝ ոստիկանները եւ զօրահրամանատարները: Այդ ուժը յուսալի յենարան էր դառնում նաեւ Թ դարից սկսած աւելի ու աւելի մեծ ինքնագլխութիւն ձեռք բերող տեղական խոշոր աւատատէր-կուսակալների համար, ում ժառանգական դարձած տիրոյթներն աստիճանաբար վերածւում էին կիսանկախ պետական կազմաւորումների՝ ամիրայութիւնների: Նշուած եղանակով Թ դ. վերջերին Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց տարածքներում կազմաւորուեցին ու որոշակի հզօրութեան հասան երեք՝ Շամախիի, Գանձակի եւ Դերբենդի ամիրայութիւնները:

Դրանցից առաջինը՝ Շամախիի կամ Շիրւանի արաբական ամիրայութիւնը, ձեւաւորուեց վաղմիջնադարեան Ճիղբքի բուն-աղուանական փոքրիկ թագաւորութեան հիմնաբազայի վրայ՝ Շամախի եւ Յրի (Սաղիան) քաղաքների շուրջը[2], բայց շուտով տարածուեց դէպի Կասպիականի ողջ ծովափը՝ Կուրի գետաբերանից մինչեւ Դերբենդի ամիրայութեան սահմանը Սամուր գետի ընթացքով: Անտիկ շրջանում եւ վաղ միջնադարում այս տարածքը բնակեցնում էին բուն-աղուանական եւ իրանական ցեղեր ու ժողովուրդներ, մասնաւորապէս՝ ժամանակին հզօր թագաւորութիւն ստեղծած մասքութները: Նրանք շարունակում էին դաւանել քրիստոնէութիւն եւ զրադաշտականութիւն, որոնցից երկարատեւ անցումը դէպի մահմեդականութիւն կայացաւ միայն մասնակի (մասնաւորապէս՝ զրադաշտական կրակապաշտութեան հետքերը պահպանուեցին ընդհուպ մինչեւ նոր ժամանակները՝ ԺԹ դար), այնինչ նուաճող արաբ վերաբնակիչները արագօրէն լուծուեցին տեղական

---

[1] Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 141-145:

[2] Ճիղբք-Ճիրւան համադրման տե՛ս **Ա. Հակոբյան**, «Ճիրվան» տեղանվան ծագման մասին, – Երիտասարդ պատմաբանների 20-րդ գիտական նստաշրջան, Զեկուցման թեզեր, Եր., 1986, էջ 5-6; **նոյնի՝** Албания-Алуанк..., с. 90; **նոյնի՝** К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании, с. 39-41; **Ա. Պ. Հակոբյան**, «Ճիրվան» տեղանվան ծագման հարցի շուրջ, – ՄԱ, IV, Եր., 2007, էջ 61-65; **նոյնի՝** К постановке вопроса об этническом облике царства Лайзан, – Albania Caucasica, Сб. статей, вып. I, Предисловие, подгот. **А. К. Аликберов, М. С. Гаджиев**, Москва, 2015, с. 154-159.

էթնիկ զանգուածի մէջ[1]՝ իրենց մասին յիշատակներ թողնելով լոկ տարածքի մի քանի գիւղանունների մէջ (Արաբալի, Արաբհաջի, Արաբշամլի եւն)[2]:

Խալիփայութեան կենտրոնական իշխանութեան թուլացման ժամանակաշրջանում՝ Թ դ. երկրորդ կէսին, Շամախիի ամիրայ Խայսամ իբն Խալիդ իբն Յազիդը՝ արաբական Շայբանի ցեղից, իրեն անկախ հռչակեց եւ հիմք դրեց Շիրւանի մահմեդական ամիրայութեան, որը կարեւոր դեր ստանձնեց Արեւելեան Այսրկովկասի մի քանի դարերի քաղաքական ու պատմա-մշակութային կեանքում: Ծագումով դերբենդցի արաբալեզու հեղինակ Մամմուս ալ-Լակզին (ԺԱ դ. վերջ – ԺԲ դ. սկիզբ) իր «Շիրւանի եւ Բաբ ալ-Աբվաբի պատմութեան» մէջ, որ յաճախ կոչւում է նաեւ «Թարիխ ալ-Բաբ» (այն պահպանուել է ԺԷ դարի օսմանցի պատմագիր Մունեջջիմ-բաշիի հեղինակած «Պատմական գրադարան» ժողովածոյում)[3], հաղորդում է, որ Շիրւանի արեւմտեան հարեւան լայզան երկրամասի ամիրայ Մուհամմադ իբն Խալիդի «եղբայրը՝ Խայսամ իբն Խալիդը, տիրակալ էր Շիրւանում: Երբ 247 թուականին [իմա՛ Հիջրէի, = 861 թ. – Ա. Յ.] Մութավաքիլ [խալիփայ]ի սպանութիւնից յետոյ անկարգութիւններ սկսուեցին, Խայսամն ինքնագլուխ [իստակալլա] դարձաւ Շիրւանի գործերում... Նա ճանաչուեց որպէս Շիրւանշահ եւ որոշ ժամանակ անց վախճանուեց... Իշխանութիւնը ժառանգեց նրա որդին՝ Մուհամմադ իբն Խայսամ իբն Խալիդը, որը շարունակեց իր հօր աւանդները»[4]:

Նոյն ժամանակ, ըստ նոյն աղբիւրի յաջորդ հատուածի՝ Խայսամի եղբայր Յազիդ իբն Խալիդ իբն Մազեադը հիմնաւորուել էր Շիրւանի հարեւան լայզանում («երբ Խայսամ իբն Խալիդն ինքնագլուխ դարձաւ Շիրւանում, նրա եղբայր Յազիդ իբն Խալիդն անկախացաւ լայզանում: Խայսամին անուանում էին Շիրւանշահ, իսկ նրա եղբայր Յազիդին՝ լայզանշահ»): Ժ դ. սկզբին լայզանշահ Աբու Թահիր Յազիդ իբն Մուհամմադ իբն Յազիդ Մազեադեանը պատերազմի մէջ մտաւ Շիրւանշահ Ալի իբն Խայսամի դէմ, յաղթեց նրան եւ տարածեց իր իշխանութիւնը նաեւ Շիրւանում («գրաւեց Շիրւանը 305 թուին [Հիջրէի, = 917 թ. – Ա. Յ.]»[5])՝ այդպէս միաւորելով երկու ամիրայութիւնները: Ժ դարի հեղինակ ալ-Մասուդին Հիջրէի

---

[1] Ինչպէս նշեցինք վերեւում, նշուած զանգուածի մեծագոյն մասը զարգացած եւ ուշ միջնադարում էթնիկապէս պարսկացաւ, իսկ ԺԹ դարում (Ռուսական կայսրութեան կազմ մտնելուց յետոյ) այդ գործընթացն աւարտուեց «թաթեր» անուամբ պարսկալեզու, շիա մահմեդական էթնոսի՝ ժողովրդի ձեւաւորմամբ, որի մի մասն Ի դարում ենթարկուեց թիւրքացման-ադրբեջանացման (հմմ. **Ա. Акопян**, К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании, с. 43-44; **նոյնի՝** Этнические процессы в Кавказской Албании в период античности и в раннем средневековье, – ВА, 2015, № 2 /8/, с. 69-83).

[2] Հմմ. **Ս. Գ. Բարխուդարյան**, Դերբենդի Հայ-աղվանական թագաւորությունը, – ՊԲՀ, 1969, հ՝ 3, էջ 125-148; **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 138-139.

[3] Հեղինակի մասին տե՛ս **А. К. Аликберов**, Об авторе исторической хроники XI в. "Та'рих Баб ал-абваб ва Ширван", с. 119-121; **նոյնի՝** Эпоха классического ислама на Кавказе, с. 309-313. Հմմ. նաեւ **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Մունեջջիմ-բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի եւ Գանձակի Շադդադյանների մասին, – ԲՄ, 6, Եր., 1975, էջ 471-486:

[4] Տե՛ս **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 47.

[5] Անդ:

332, այսինքն՝ 943 թուականի կտրուածքով նկարագրելով Կովկասեան տարածաշրջանը՝ անդրադառնում է նաեւ Շիրւանշահերին, եւ սկսելով իր պատմութիւնը Սասանեան արքայ Խոսրով Անուշիրուանի օրերից (531-579)՝ իր ժամանակի մասին մասնաւորապէս յայտնում է հետեւեալը. «Ներկայումս նրա թագաւորն է... Մուհամմադ իբն Յազիդ անունով մի մահմեդական, որը սերում է Բահրամ Գուրից, եւ նրա ծագումնաբանութեան հարցում կասկածանքներ չկան»[1]:

Շիրւանշահերի այս պետութիւնը, որի մայրաքաղաքը ԺԲ դարում Շամախիից տեղափոխուեց ծովափնեայ Բաքու քաղաք (աշխարհացոյցեան Բագանի ազգագաւառում[2]), իր լեզուա-մշակութային եւ էթնիկ պատկերով աւելի ու աւելի իրանացուելով եւ մի քանի թագաւորական (ամիրայական, շահական) ազնուատոհմեր փոխելով՝ գոյատեւեց մինչեւ ԺՋ դ. սկզբները, երբ վերջնականապէս գրաւուեց Սեֆեան շահերի կողմից ու մաս կազմեց նրանց լայնածաւալ տէրութեան[3]: Իբրեւ ուշագրաւ փաստ՝ կարելի է արձանագրել, որ Շիրւանշահերի պետութիւնը հայ հեղինակների երկերում յիշատակութեան է արժանացել, այն էլ, ի տարբերութիւն, օր.՝ վրաց մատենագիրների՝ ոչ շատ յաճախակի (հիմնականում՝ «Շրուան» կամ «Շրւան» ձեւերով), միայն ԺԳ դարից սկսած[4]: Օր.՝ Կիրակոս Գանձակեցին, վերաշարադրելով Մովսէս Դասխուրանցու տեղեկութիւնները թիւրքիւտների մասին՝ «լրացնում» է նրան մի այսպիսի նախադասութեամբ. «Սա [Վիրոյ կաթողիկոսը՝ 628 թ. – Ա. Յ.] թափեաց զգերեալսն Հայոց, Վրաց եւ Աղուանից ի Շաթայ խազրէ՝ յորդւոյն Ջերու խաքանայ, որ գերեաց զաշխարհս: Սա շինեաց քաղաքս հինգ [var. վեց] յանուն Շաթայ՝ զՇաթառ, զՇամքոր [var. զՇամքառ], զՇաքի, զՇրուան [var. զՇիրուան, զՇիրվան], զՇամախի, զՇապաւրան [var. զՇապօրան, զՇապորան]»[5]:

Շիրւանի հարաւային հարեւան Գանձակի ամիրայութիւնը ձեւաւորուեց Կուրի աջափնեայ հարթավայրային տարածքներում, կենտրոնը՝ աշխարհացոյցեան Ուտիք նահանգի հիւսիս-արեւմտեան Շակաշէն գաւառում: Սկսած Ը դ. երկրորդ կէսից՝ արաբ ոստիկանների նստոցը գտնւում էր Առռան – Աղուանք երկրի նախ-

---

[1] Անդ, էջ 191, ալ-Մասուդիի «Մուրուջ ադ-Ջահաբ» երկում՝ XVII, 4:

[2] **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 115:

[3] Մանրամասն տե՛ս **В. В. Бартольд**, Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, с. 45-47 (վերահրատ.՝ **В. В. Бартольд**, Сочинения, т. III, Москва, 1970); **И. П. Петрушевский**, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв., Ленинград, 1949, с. 64-78; **С. Ашурбейли**, Государство Ширваншахов (IX-XVI вв.), Баку, 1983; История Азербайджана, т. I, Баку, 1958, с. 224-226; **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 169-183.

[4] Իհարկէ՝ չհաշուած Է դարի «Աշխարհացոյց»-ը, որը Ասիական Սարմատիայի հարաւարեւելեան ազգագաւառների թւում նշում է «Շրւան եւ Խսրւան ազգ[ք]»: Տե՛ս **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 114:

[5] **Կիրակոս**, գլ. Ժ, էջ 195: Եթէ քաղաքանունների թուի ճիշտ ընթերցումն, իրօք, «հինգ»-ն է (ինչպէս համարել է քննական բնագիրը կազմող Կ. Մելիք-Օհանջանեանը)՝ *փխմ.* թուարկուած *վեցի*, ապա, գուցէ, կարելի է մտածել, թէ քաղաքներից որեւէ մէկը պիտի ընկալուի երկանո՞ւն ձեւով (օր.՝ «զՇրուան՝ զՇամախի»): Հմմ. նաեւ՝ Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**, էջ 10 («Ալանք [*var.* Աղուանք] Շրվան է, զոր Ատըլ Նուշիրուան շինեաց եւ կոչեցաւ Շարուան եւ Շամախի»):

կին մարզպանանիստ Պարտաւ քաղաքում, սակայն մօտաւորապէս Թ դ. կէսերին, երբ վերջինս որոշ չափով թուլացել էր, նրանք աւելի հիւսիս-արեւմուտք հիմնադրեցին նոր վարչական կենտրոն՝ Գանձակ կամ Ջանզա անունով: Մովսէս Դասխուրանցու (=Մաշտոց Եղիվարդեցու) մի վկայութեան համաձայն՝ դա տեղի էր ունեցել Հայոց ՄՂԵ՝ 295 թուականին (=29.04.846/28.04.847 թ.), կամ, ըստ ՊԱ-ի ձեռագրերի Բ խմբի (հնագոյն՝ ԺԹ դարի a գրչագրում թուականի հատուածը, ցաւօք, պակասում է) միւս ենթախմբի՝ ՄՂԷ՝ 297-ին (=28.04.848/27.04.849 թ.)[1]. բոլոր դէպքերում դա նախորդում էր Հայոց 300 թուականին (851/852 թ.) եւ Բուղայի արշաւանքին (853-855 թթ.), որոնց մասին խօսւում է երկի յաջորդող պարբերութիւններում: Հատուածի վերականգնուած բնագիրն է. «Յետ այսորիկ անցանելոյ եւս երկուց ամաց եկն Խաղթ [a Խազը, b Գաղտ, crv Վիլթ, l Աղթ] փատգոս՝ այր շամշոտ եւ անողորմ, եւ ի նմին [bclrv չիք ի նմին] սատակեցաւ: Իսկ նորին որդին եկեալ՝ էառ զաշխարհս սրով եւ գերութեամբ, եւ եկեղեցիս բազումս հրով կիզեաց եւ գնաց ի Բաղդատ [crv Բախտատ, l Բաղտատ]: Եւ անտի դարձեալ՝ եկն [a եկեալ], արքունի հրամանաւ [crv հրամանաւն] եւ գանձով շինեաց [bclrv շինէ] զքաղաքն Գանձակ յՄՂԵ [crv ՄՂէ] թուին [a չիք յՄՂԵ թուին] յԱրշակաշէն գաւառի»: Գանձակը կառուցած այս ոստիկանի հօր «Խաղթ» անունը (=Խալթ, այսինքն, անշուշտ՝ Խալիդ) վերականգնուած է ըստ մի յաջորդ հատուածի, որտեղ տրուած է նաեւ հէնց իր անունը՝ «Մահմադ» («Ապա ի չորրորդում[2] ամին եղեւ գալն Մահմադայ [bclrv Համադայ]՝ Խաղթի [bl Խալթի] որդւոյ եւ մահն [bclrv մահ] տեառն Վասակայ Գաբռին»)[3]: Անշուշտ, սա արաբ հեղինակներին ծանօթ՝ Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդն է[4]:

Արաբալեզու մատենագրութեան մէջ Գանձակի կառուցումը թուագրւում է 844 կամ 859 թուականներով: Յիշատակուած «Շիրւանի եւ Բաբ ալ-Աբվաբի պատմութեան» հաղորդման համաձայն՝ «245 թուին [Հիջրէի, = 859 թ. – Ա. Յ.] կառուցեց [Մուհամմադ իբն Խալիդը] Ջանզա քաղաքը Առանի մարզում [կուրայում]»[5]: Ի դէպ, այդ քաղաքը գտնւում էր ներկայիս Գանձակ (նաեւ՝ Գեանջա, ի դարում՝ Կիրովաբադ) քաղաքից 6 կմ հեռու, իսկ այս նորը 1607 թ. հիմնադրել է Սեֆեան արքայ Շահ Աբբաս Ա-ն (սկզբնապէս կոչելով այն հէնց Աբբասաբադ)[6]:

Գանձակի ամիրայութեան ծագման մասին յայտնում է «Շիրւանի եւ Բաբ ալ-Աբվաբի պատմութիւն»-ը: Ըստ նրա հաղորդման. «Մուհամմադը պարտաւորուեց

---

[1] Դասխ., Գ.ի /իա/, էջ 331; **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 43-44:

[2] Ձեռ. *a*-ում՝ *չորրորդ*: Այս թիւը կապուած է երկի նախորդ պարբերութեան այն նշման հետ, ըստ որի՝ Բուղան Հայաստանում մնացել էր 3 տարի. «Եւ զամս Գ կալաւ զՀայս՝ մինչ զիշխանսն ազատ կանամբք խաղացուցանէր ի Բաղդատ» (տե՛ս **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 47): Նշանակում է՝ Մուհամմադի երկրորդ ժամանումն ընկնում էր Բուղայի հեռանալու յաջորդ տարում, այն է՝ 856 թուականին:

[3] Դասխ., Գ.ի /իա/, էջ 331; **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 47:

[4] Հմմ. **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 46-47, 82.

[5] Անդ, էջ 46:

[6] Տե՛ս **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 141.

վերադարձնել գումարները [Գանձակ քաղաքի շինարարութեան վրայ ծախսուած – Ա. Յ.], բայց այն պայմանով, որ խալիփան իրեն ու իր երեխաներին իբրեւ ժառանգական [տիրոյթ] կը յանձնի քաղաքը եւ նրա հանրայայտ կալուածքները [դիյա'], որոնք մինչեւ հիմա էլ կոչւում են խալիդիյաթ: Խալիփան հաստատեց այդ նուիրատուութիւնը, եւ Մուհամմադը վերադարձաւ Ջանզա: Նա թողեց Արմինիյայի կառավարումը եւ բաւարարուեց [միայն] Ջանզա քաղաքով ու կալուածքներից ստացուող եկամուտով»[1]:

Ժ դ. կէսերին Հայաստանի պատմութեան մէջ մուտք գործեց մի նոր օտար իշխանատոհմ՝ Ատրպատականի կողմից յայտնուած ազգութեամբ քուրդ Շադդադեանները: Ինչպէս հաղորդում է նոյն Մունեջջիմ-բաշիի ժողովածոյի կազմում պահպանուած՝ Գանձակի Շադդադեաններին նուիրուած ոչ մեծ պատմական երկը, նրանց առաջին ներկայացուցիչը Մուհամմադ իբն Շադդադ իբն Կուրտակն էր, որը 951 թ. դարձաւ Դուինի ամիրան (քաղաքացիների հրաւէրով՝ իբրեւ վարձկան), բայց 3 տարի անց պարտութիւն կրելով Ատրպատականում Բուվեյհեանների դէմ պայքարում նորից ամրապնդուած Սալարեաններից (Կասպից ծովի հարաւ-արեւմտեան ափի Դեյլեմի լեռներում բնակուող արեւմտաիրանական ցեղերից ծագող այս տոհմը յայտնի է նաեւ Մուսաֆիրեաններ անունով[2])՝ հեռացուեց քաղաքից[3]: Ըստ նոյն աղբիւրի յաջորդ տուեալների՝ Շադդադեանները մի քանի տասնամեակ պայքարում էին կենտրոնական Հայաստանի Բագրատունի արքաների եւ Ատրպատականի մահմեդական ամիրաների դէմ՝ ձգտելով տիրապետութիւն հաստատել Դուինում կամ մի որեւէ այլ մեծ քաղաքում: Վերջապէս 970 թ. նրանք կարողացան մուտք գործել աջափնեայ Աղուանք (Առան) եւ իրենց իշխանութիւնը հաստատել Գանձակում: Դա արեց Լաշկարի իբն Մուհամմադ Շադդադեանը (Ալի-Լաշկարի Ա՝ 971-979), որը սպանեց այդ քաղաքում Սալարեանների նշանակած ամիրային, ինչից յետոյ նրա իշխանութիւնը տարածուեց նաեւ մօտակայ Պարտաւ/Բարդա'ա եւ Բայլական քաղաքների վրայ[4]: Լաշկարիի մահուանից

---

[1] Տե՛ս **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 47.

[2] Տե՛ս **V. Minorsky**, La domination des Dailamites, Paris, 1932; **К. Э. Босворт**, Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии, Пер. с английского и примечания **П. А. Грязневича**, Москва, 1971, с. 127-129.

[3] Տե՛ս **V. Minorsky**, Studies in Caucasian History, London, 1953, p. 9-12; **Ахмед ибн Лютфуллах (Мунаджим-Баши)**, "Джами' ад-Дувал", **Ибн ал-Азрак ал-Фарики**, Из "Истории Майяфарикина", Введение и пер. с арабского **А. Дж. Мамедова**, – "Труды" Института истории АН Азерб. ССР, т. XII, Баку, 1957, с. 210-211; **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Մունեջջիմ-բաշիի XI-XII դդ. աննման աղբյուրը, էջ 475-476: Հմմ. նոյնի՝ Արաբական ամիրայութիւնները Բագրատունեաց Հայաստանում, Եր., 1965, էջ 166-172: Ցայտնի է, որ հետագայում Մուհամմադ իբն Շադդադն ամբողջ ընտանիքով անցաւ Վասպուրական, որտեղ եւ վախճանուեց 955 թ.: Մանրամասն տե՛ս **В. П. Лебедев, Д. Б. Марков, А. А. Койфман**, Монетное дело и монетное обращение Ганджийского эмирата Шаддадидов (сер. X – XI вв.), Москва, 2006, с. 7.

[4] Հմմ. **Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան**, Արաբական ամիրայութիւնները Բագրատունեաց Հայաստանում, էջ 177, 206-207:

յետոյ իշխանութիւնն անցաւ նրա եղբայր Մարզուբանին, որին էլ մի քանի տարի անց նենգաբար սպանեց եւ Գանձակում տիրակալեց եղբայրներից կրտսերը՝ Փադլ Ա-ն (986-1031)[1]:

Վերջին իրադարձութիւնների մասին աւելի համառօտ եւ գրեթէ չշեղուելով արաբալեզու աղբիւրի հաղորդած տեղեկանուց, բայց լրացնելով դրանք ուշագրաւ մանրամասներով՝ յայտնում է նաեւ ԺԹ դարի հայ պատմիչ Վարդան Արեւելցին (Բարձրաբերդցին). «Ի սոյն աւուրս կին մի՝ Մամ անուն, գայ ի Պարսից երեք որդւովք ի գաւառն Փառիսոսոյ առ Գրիգոր փառաւոր իշխանն: Եւ տան որդիքն պատանդ զմայրն եւ առնուն զՇօթս եւ զբերդն Շամիրամայ. եւ անտի ընտանեցեալ ընդ Ալազիզ [var. ընդացեալ ընդ Ազախինն] ամիրայն Գանձակայ՝ սպանին զնա եւ առին զԳանձակ եւ տիրեցին: Երէց որդին Պարզուան [resp. Մարզուան. = Մարզուբան] մեռաւ կարճ, եւ իշխանացաւ ի տեղին Լէլքարի [resp. Լէլքարի. հմմ. բոլորագիր շ → լ – Ա. Յ.]՝ միւս եղբայրն, եւ առնու զՊարտաւ եւ զՇամքոր ի Սալարէն: Եւ եղբայր նորա կրտսեր, որ Փատլուն կոչիւր՝ սպանեալ զնա յորսին, առնու զիշխանութիւնն: Եւ սիրոյ աղագաւ գնացեալ առ նա Փիլիպէ [Փառիսոսի թագաւորը – Ա. Յ.]՝ որդի Գրիգորոյ, ըմբռնէ [Փատլունն] զնա ի կապանս»[2]: Յիշենք, որ արաբալեզու հեղինակը երեք եղբայրներից աւագ էր ճանաչում Լաշկարիին (Վարդանի մօտ սրբագրումով՝ Լէլքարի), այլ ոչ թէ հայ հեղինակի Պարզուանին (սրբագրումով՝ Մարզուան/Մարզու[բ]ան): Նշենք նաեւ, որ Վլ. Մինորսկու եւ Ա. Տէր-Ղեւոնդեանի կարծիքով՝ որպէս Վարդան պատմիչի տեղեկանու աղբիւր կարելի է դիտարկել ԺԹ դ. առաջին կէսի Հայոց Արեւելից կողմանց նշանաւոր մատենագիրներից մէկի՝ Վանական վարդապետի պատմական երկը, որը մեզ չի հասել[3]:

Շադդադեանները ոչ միայն կարողացան ամրապնդուել Գանձակի դաշտային շրջանում, այլեւ լրջօրէն յաւակնութիւններ դրսեւորեցին հարեւան հայկական եւ վրացական տարածքների նկատմամբ: Ըստ Ստեփաննոս Ասողիկի տեղեկութեան՝ 1004 թ. տարեսկզբին Փատլուն ամիրան (այսինքն՝ Փադլ Ա-ն) ստացաւ Փառիսոսի թագաւորութեան տարածքի կէսը՝ միւս կէսը թողնելով Հայոց արքայ Գագիկ Ա Շահնշահին[4] (ով, ըստ ճշտուած ժամանակագրութեան, իշխել է 989-1018 թթ.): Մօտաւորապէս 1020 թ. Շադդադեան Աբու-լ-Սուվարն իշխանութեան գլուխ ան-

---

[1] **V. Minorsky**, Studies in Caucasian History, p. 16; **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Մուհեջջիմ-բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը, էջ 479: Նոր գտածոների հիման վրայ Շադդադյանների ճշտուած ժամանակագրութիւնը (Կ. Բոսուորտի համեմատ) տե՛ս **В. П. Лебедев, Д. Б. Марков, А. А. Койфман**, Монетное дело и монетное обращение Ганджийского эмирата, с. 5-10. Խորհրդատուութեան համար շնորհակալ եմ արաբագէտ Արամ Վարդանեանին:

[2] **Վարդան**, էջ 134-135:

[3] **V. Minorsky**, Studies in Caucasian History, p. 79; **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Մուհեջջիմ-բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը, էջ 472:

[4] **Ասողիկ**, Գ.խը, էջ 286 («ի թուաբեր ժամանակս ՆԾԲ [452 = *21.03.1003 –19.03.1004 թ.*], իշխանքն Փառիսոսոյ ... սպառեցան մահուամբ: Զորոց աշխարհս բաժանեալ հակառակութեամբ ի մէջ իւրեանց արքայն Հայոց Գագիկ եւ Փատլուն ամիրան Գանձակայ»):

ցաւ Դուինում[1]: Սելջուկների արշաւանքների ժամանակաշրջանում Շադդադեանները պարբերաբար տիրում էին նաեւ Շիրւանին ու Դերբենդին, ինչպէս նաեւ Հայոց Բագրատունիների կործանուած պետութեան մայրաքաղաք Անիին (Մանուչէ ամիրայ եւն)[2]: Ստեփաննոս Օրբէլեանի մօտ անուղղակի տեղեկութիւններ են պահպանուել ԺԱ դարում նաեւ Բաղք – Սիւնիքի թագաւորութեան եւ Շադդադեան ամիրաների միջեւ սահմանային բախումների մասին[3]:

Սակայն ԺԱ դ. վերջին սելջուկների քաղաքականութիւնը փոխուեց, եւ սկսուած ճնշումների հետեւանքով Շադդադեան տոհմը կորցրեց իշխանութիւնը Գանձակում ու 1075 թ. վերջնականապէս իջաւ Արեւելեան Այսրկովկասի քաղաքական ասպարէզից: ԺԷ դարի պատմագիր Մունեջջիմ-բաշին այդ մասին գրում է. «Նրանց իշխանութիւնը տեւեց 128 տարի, եթէ սկիզբը հաշուենք Մուհամմադ իբն Շադդադ իբն Կուրտակի յայտնուելուց եւ Դուինը գրաւելուց 340 թուին [իմա՛ Հիջրէի, = 951 թ. – Ա. Յ.]... Ալ-Փադլ իբն Շաւուրը [իմա՛ Փադլ Բ-ն՝ 1067-1073/1075 թթ. – Ա. Յ.] որոշ ժամանակ շրջապատուած մնաց [սելջուկների կողմից] Խարակ ամրոցում [=Զարե՞ք], բայց շուտով այն [էլ] խլուեց նրանից, եւ նա ձերբակալուեց: Այդպէս ջնջուեց յիշողութիւնը նրանց [Ջանզայի Շադդադեանների] մասին»[4]:

Շիրւանի հիւսիսային հարեւան Դերբենդի ամիրայութեան մասին եւս ամենից մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում ԺԱ-ԺԲ դդ. դերբենդցի արաբագիր հեղինակ Մամմուս ալ-Լակզիի «Շիրւանի եւ Բաբ ալ-Աբվաբի պատմութիւն»-ը՝ պահպանուած Մունեջջիմ-բաշիի «Պատմական գրադարան»-ում[5]: Ըստ նրա եւ այլ մահմեդական աղբիւրների՝ Դերբենդի կամ այլ կերպ՝ Բաբ ալ-Աբվաբի ամիրաները պատկանում էին Հաշիմեան տոհմին, որը սերում էր արաբական ազնուազարմ Սուլամի կամ Սուլայմ ցեղից: Մամմուսը համապատասխան հատուածի սկզբում յայտնում է հետեւեալը. «Առաջինը նրանցից, ով ինքնագլխութեան հասաւ [Բաբ

---

[1] Հմմ. **Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան**, Արաբական ամիրայություններ Բագրատունյաց Հայաստանում, էջ 177, 206-207-209:

[2] Անդ, էջ 210-215; **V. Minorsky**, Studies in Caucasian History, p. 20-21, 79-90; **նոյնի՝** История Ширвана и Дербенда, с. 78, 108, 118; **В. П. Лебедев, Д. Б. Марков, А. А. Койфман**, Монетное дело и монетное обращение Ганджийского эмирата, с. 8-9.

[3] **Օրբ.**, գլ. ԾԹ, էջ 238-239; Պատմութիւն Նահանգին Սիսական, գլ. Կ, էջ 326-327 («այս իմ գիր է Հասանայ՝ Գրիգորկայ որդւոյ... ես զիմ բերդն ի Մշտաքախթենէն առի եւ զկովսական գաւառ իմ արեամբս յամիրայ Փատլնոյ թափեցի»): Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 111-112: Տե՛ս նաեւ ստորեւ, էջ 270, ծն. 3:

[4] **V. Minorsky**, Studies in Caucasian History, p. 25; **Ахмед ибн Люткуллах (Мунаджим-Баши)**, "Джами' ад-Дувал", с. 222; **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Մունեջջիմ-բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը, էջ 485-486: Նշենք, որ Քարակ – Զարեք համադրութիւնը Վլ. Մինորսկունն է՝ աստղանիշով (*Charek): Ի դէպ, ուշագրաւ է, որ 1075 թուականով աւարտում են նաեւ Գանձակում Շադդադյանների անունով հատուած դրամները (տե՛ս **В. П. Лебедев, Д. Б. Марков, А. А. Койфман**, Монетное дело и монетное обращение Ганджийского эмирата, с. 56-70).

[5] Տե՛ս **А. К. Аликберов**, Об авторе исторической хроники XI в. "Та'рих Баб ал-абваб ва Ширван", с. 121.

ալ-Աբվաբի] կառավարման գործում, Հաշիմ իբն Սուրակա իբն Սալիս իբն Խայյուն իբն Նաջմ իբն Հաշիմն էր՝ Բանու Սուլայմ ցեղից: Նա ալ-Բաբի ամիրայ դարձաւ 255 թուին [իմա՛ Հիջրէի, = 869 թ. – Ա. Յ.]... Երբ Մութավաքիլի սպանութիւնից յետոյ [861 թ.] խալիփայութիւնը քայքայուեց, քանի որ կառավարումը զաւթել էին թիւրք վարձկանները [մաւալիները], ալ-Բաբի բնակիչները եւ սահմանային մարզերի ղազիները հաւաքուեցին ու Հաշիմին դարձրին իրենց ամիրան եւ հաւատարմօրէն հնազանդւում էին նրան: Նա նոյնպէս նրանց հանդէպ իրեն հիանալի էր պահում... հարցերը վճռում էր միայն իմաստուն ծերերի ու պետերի [ռուՙասա] հետ խորհրդակցելով... Նրա կառավարումը տեւեց 16 տարի»[1]: Ի դէպ, դեռ մինչեւ Հաշիմ իբն Սուրակայի իշխանութեան անցնելը խալիփայութեան նշանակած պաշտօնեաների թւում եղել էր նաեւ Գանձակ քաղաքի կառուցող ոստիկանը՝ Մուհամմադ իբն Խալիդը, որի մասին այս նոյն աղբիւրը նախորդ հատուածում գրում էր. «Այդ նոյն տարում, 237 թուին [իմա՛ Հիջրէի, = 851 թ. – Ա. Յ.] Մութավաքիլը Մուհամմադ իբն Խալիդին իբրեւ աւատ յատկացրեց Բաբ ալ-Աբվաբը՝ նրան ենթակայ հողատարածքներով»[2]:

Դերբենդի ամիրայութեան տարածքը համեմատաբար փոքր էր, սակայն նրա ռազմավարական կարեւոր դիրքը՝ մահմեդական աշխարհի եւ հիւսիսկովկասեան տափաստանաբնակ հորդաների միջեւ, լուրջ հնարաւորութիւններ էր ստեղծում այդ պետական կազմաւորման բազմակողմանի զարգացման համար: Միեւնոյն ժամանակ, սա մի կռուախնձոր էր ինչպէ՛ս Հարաւի ու Հիւսիսի, այնպէ՛ս էլ խալիփայութեան տարածքում ձեւաւորուած մի շարք կիսանկախ իշխանութիւնների միջեւ, որոնք ձգտում էին օգտագործել Դերբենդի ռազմավարական դիրքը, եւ հանդէս գալով հիւսիսային խազարներից ու այլ կիսաքոչուոր ժողովուրդներից մահմեդական աշխարհը պաշտպանողների դերում՝ ամրապնդել սեփական վարկը: Դա վերաբերում էր ե՛ւ Շիրւանշահերին (Շամախի, ապա ԺԲ դարից՝ Բաքու կենտրոնով), ե՛ւ աջափնեայ Առանի տիրակալներին (Գանձակ կենտրոնով), ե՛ւ Ատրպատականի Սաջեան, ապա Սալարեան ամիրաներին[3]: «Թարիխ ալ-Բաբ»-ը բազում դէպքեր է յիշատակում, երբ նշուած պետական միաւորները հաւակնում էին՝ իրենց ենթարկելու Դերբենդի ամիրայութիւնը ուղիղ ձեւով կամ գոնէ անուանապէս: Միւս կողմից՝ այս հզօրների ոտնձգութիւններից ու հակամարտութիւններից լաւ օգտւում էին Դերբենդի ամիրայական գահի տեղացի բազմաթիւ յաւակնորդներ, ովքեր երբեմն հասնում էին յաջողութեան, ապա կրկին կորցնում գահը:

Դերբենդի ամիրայութեան տարածքը հիւսիսում յարում էր կենտրոնական Դաղստանի բազմաթիւ մեծ եւ փոքր ցեղային պետական կազմաւորումներին[4],

---

[1] Տե՛ս **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 64-65.

[2] Անդ, էջ 46:

[3] Հմմ. **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 145.

[4] Այդ կազմաւորումների մասին տե՛ս **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 125-142; **А. Р. Шихсаидов**, Ислам в средневековом Дагестане (VII-XV вв.), Махачкала, 1969, с. 31-46; **А. К. Аликберов**, Эпоха классического ислама на Кавказе, с. 109-180.

իսկ հարաւում հասնում մինչեւ Սամուր գետի աջափնեակում ընկած Մասքաթ երկրամասը, որի կենտրոնն այս դարաշրջանում Շապորան կամ Շաբարան քաղաքն էր: Այն գտնւում էր Սամուրին հարաւից զուգահեռ հոսող Կուդիալ գետի ստորին հովտի հարթավայրային հատուածում: Գետի հոսանքով աւելի վեր գտնւում են Խաչմաս քաղաքը եւ նոյնանուն գիւղը[1], որն ամբողջովին հայաբնակ էր մինչեւ ի դարի սկզբները: Նրա շրջակայքում, ամենայն հաւանականութեամբ, տարածուած է եղել Վատնեան կամ Վատնեայ դաշտը, որը Դ դարի սկզբներին Մասքթաց Սանեսան թագաւորի կենտրոնատեղին էր, եւ որտեղ վերջինիս հրամանով, ինչպէս տեսանք վերեւում, նահատակուեց Բուն Աղուանքի առաջին եպիսկոպոսներից մէկը՝ Գրիգոր Լուսաւորչի թոռ Գրիգորիս Մանուկը:

«Թարիխ ալ-Բաբ»-ի բազմաթիւ հաղորդումներից երեւում է, որ Մասքաթ/Մասկաթ մարզը եւ Շապորան քաղաքն ամենից յաճախ էին կռուախնձորի կարգավիճակում յայտնւում Դերբենդի եւ Շիրւանի ամիրայութիւնների միջեւ: Այդ մարզի մասին դերբենդցի հեղինակը գրում է հետեւեալը. «Մասկաթը երկիր է, որն ունի բազմաթիւ ամրոցներ, բնակավայրեր ու դաշտեր [արօտավայրեր] եւ սահմանակից է Սամուր գետին, [Կասպից] ծովին, լակզ երկրին եւ Շաբարանին: Հին ժամանակներում այն ունէր ինքնագլուխ տիրակալներ [խուկկամ], սակայն նրանց իշխանութիւնը դադարեց 218 թուին [իմա՛ Հիջրէի, = 833 թ. – Ա. Յ.], երբ այն գրաւեցին Բաբ ալ-Աբվաբի եւ սահմանակից մարզերի ամիրաները»[2]: Մասքաթի անկախ իշխանութեան վերացման մասին տեղեակ էր նաեւ Թ դարի արաբ պատմիչ ալ-Բալազուրին, ով գրում էր. «Անուշիրուանը թագաւորներ նշանակեց ըստ կարգի... Այսպէս՝ [նշանակուեց...] լակզերի թագաւորը, որը կոչւում է Խուրսանշահ [var. Ջարշանշահ], Մասկաթի թագաւորը, որի իշխանութիւնն այժմ վերացած է...»[3]:

Թ-Ժ դարերում՝ Վլ. Մինորսկու կարծիքով. «Մասկաթը, ըստ ամենայնի՝ խառը բնակչութիւն ունէր, իսկ մ. թ. VIII դ. սկզբին Մարւան իբն Մուհամմադը «լակզ երկրում՝ Սամուրի ու Շաբարանի միջեւ», այսինքն՝ Մասկաթում, բնակեցրեց նաեւ մահմեդականութիւն ընդունած խազարների (տե՛ս ալ-Բալազուրի, 1866, էջ 208)»[4]: Իսկ այն «դաշնակիցները [մու՛ախիդին]», որոնց մօտաւորապէս 1067 թ. Շապորան քաղաքի շրջակայքում, ըստ մեր աղբիւրի՝ թալանել էին «թիւրքերը», հաւանաբար, պիտի համարուեն տեղացի քրիստոնեաներ: Նա մէջբերում է նաեւ

---

[1] Այս *Խաչմաս* տեղանունը սովորաբար ստուգաբանում են իբրեւ հայերէն «խաչ» եւ «մասունք» բառերից կազմուած, սակայն հնարաւոր է մտածել (անունների նմանութեան հիմքով), որ սկզբնապէս կամ բուն հիմքում այն կապ ունէր վաղմիջնադարեան հայ հեղինակներին յայտնի «Հեճմատակ» ցեղանուան հետ (**Եղիշէ**, յեղ. Դ, էջ 94; ՄՀ, հտ. Ա, էջ 629; **Բուզ.**, Գ.Է, էջ 27; ՄՀ, հտ. Ա, էջ 284; **Անանուն (Է դար)**, Աշխարհացոյց, սն. 115: **Տե՛ս В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 64.

[2] **Баладзори**, Книга завоевания стран, с. 7; **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 114; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 267:

[3] **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 111. Համմ. Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 278:

ալ-Մուկադդասիի ուշագրաւ խօսքերը. «Շաբարանը միջնաբերդ չունի. այնտեղ գերակշռում են քրիստոնեաները. տեղաբաշխուած է սահմանի վրայ»[1], իսկ մէկ այլ հատուածում արտայայտում է հետեւեալ ուշագրաւ տեսակէտը. «Յանկարծակի Յազիդեանների [Շիրւանի] ընտանեկան անունների աւանդոյթը փոխուել է, եւ նախկին «Խալիդներն» ու «Յազիդներն» իրենց տեղը զիջել են այնպիսի իրանական անունների կրողներին, ինչպիսիք են՝ Անուշիրուան, Մանուչիհր, Կուբադ եւն: Ինչպէս արդէն նշուել է, այդ փոփոխութեան բացատրութիւնն անհրաժեշտ է փնտրել հին տիրակալների (գուցէ՝ Շաբարանի) մի որեւէ տոհմի հետ ամուսնական կապերի մէջ»[2]:

Դերբենդի ամիրայութիւնը գոյատեւեց մինչեւ մոնղոլական արշաւանքների ժամանակաշրջանը՝ ԺԳ դ. առաջին կէս: Ընդ որում, ի տարբերութիւն հարեւան պետական կազմաւորումների՝ Շիրւանի ու Առանի, այստեղ մեծ զարգացում չապրեց պարսկականացման գործընթացը, եւ մասնաւորապէս՝ ամիրաների տոհմը, ըստ ամենայնի՝ մնաց արաբական, ինչպէս կարելի է դատել տիրակալների ընտանեկան անուններից: Ուշագրաւ է նաեւ, որ այս ամիրայութեան մասին ԺՌ-ԺԳ դարերի մատենագրական աղբիւրների տեղեկութիւններն էապէս պակասում են, եւ աւելի կարեւոր են դառնում բաւականին առատ ու ոչ պակաս բովանդակալից դրամագիտական նիւթերը[3]:

---

[1] **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 111, прим. 11.

[2] Ա.Ձդ, էջ 155: Հմմ. Նաեւ էջ 109:

[3] Տե՛ս **Е. А. Пахомов**, О Дербендском княжестве XII-XIII веков, – "Известия" Азерб. гос. научно-исследовательского института, т. I, вып. II, Баку, 1930, с. 1-12; **D. K. Kouymjian**, A numismatic history of Southeastern Caucasia and Adharbayjān based on the Islamic coinage of the 5th/11th to the 7th/13th centuries, New York: Columbia University Philos. Dissertation, 1969; **V. Lebedev**, A dirham of the ruler of Darband, Maymūn bin Ahmad (bin 'Abd al-Malik bin Hāshim), – JONS, № 202, 2010 (London), p. 11-12; **А. К. Аликберов**, Эпоха классического ислама на Кавказе, с. 218-231; **Г. В. Злобин**, Дербентский эмират Суламидов и его монеты. 530-600 г. х. / 1135-1203 гг., Москва, 2012.

ԳԼՈՒԽ Դ

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔՈՒՄ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔՈՒՄ Թ-Ժ ԴԱՐԵՐՈՒՄ

Բաժին 1

ՀԱՄԱՄ ԲԱՐԵՊԱՇՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ ՇԱՔԻՈՒՄ

«Շաքիի» կամ «Արեւելից» իշխան Համամ Բարեպաշտ Բագրատունու գլխաւորութեամբ Աղուանից թագաւորութեան վերականգնումը ուսումնասիրողները հիմնականում թուագրել են Թ դ. վերջին տասնամեակով՝ չկարողանալով հաստատապէս ճշտել տարին եւ համարելով, որ այն ուղիղ ձեւով նշուած չէ աղբիւրներում: Օր.՝ Ն. Ադոնցի կարծիքով՝ Համամը «տակաւին թագ չէր կապել 893 թուին»[1], իսկ ըստ Հր. Աճառեանի՝ նա «թագաւոր էր 894 թուին»[2]: Ս. Բարխուդարեանի հաշուարկներով՝ Համամի թագաւորանալը կարելի է թուագրել «Սմբատ Բագրատունու օծումից յետոյ 885-894 թթ. միջեւ»[3]: Ա. Կրիմսկին, Զ. Բունիաթովը եւ Բ. Ուլուբաբեանը, վստահելով ՊԱ-ի հեղինակի մի արտայայտութեանը, հաւանական են համարում հէնց «885 թ., Աշոտ Ա-ի հետ միաժամանակ»[4]. դրան մօտ ժամանակ է նախընտրում նաեւ Բ. Առաքելեանը. «Աշոտ Ա-ի օրօք, մինչեւ 887 թ.»[5]: Ա. Տէր-Ղեւոնդեանը խուսափել է որոշակի թուական նշելուց («Թ դարի վերջին»)[6], ի տարբերութիւն «Վրաստանի պատմութեան ակնարկներ»-ի հեղինակների, ովքեր կանգ են առել «893 թ.» վրայ[7]: Կ. Յուկերմանը գերադասում է դրա յաջորդող տարին («894 թ. վերջին – 895 թ. սկզբին»)[8]:

Սակայն թւում է, թէ Մովսէս Դասխուրանցու ժամանակագրական հերթականութեամբ շարադրուած նշումների ուշադիր քննութեամբ կարելի է նկատել, որ պատմիչի ձեռքի տակ եղած աղբիւրում, այսինքն՝ Մաշտոց Եղիվարդեցու «նորայայտ» պատմական երկում, Համամի թագաւոր հռչակուելը եղել է ուղիղ թուագրուած, եւ դա եղել է «Հայոց ՅԽԲ» (342) թուականը (=893/894 թ.): Ուշադրութեան առնենք, որ ՊԱ-ի Գ.իա գլխում նախ ասւում է Հայոց թագաւորութեան վե-

---

[1] **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 131:

[2] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, Եր., 1946, էջ 25: Այս ճիշտ (ինչպէս կը տեսնենք ստորեւ) թուականն է տալիս նաեւ Ա. Եղիազարեանը (Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից եւ Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, – ԲԵՀ, «Հայագիտություն», 2011, հմր 1, էջ 18-19):

[3] **Ս. Գ. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանությունները, էջ 68:

[4] Տե՛ս **A. E. Крымский**, Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании): Шеки, с. 376; **З. М. Буниятов**, Азербайджан в VII-IX вв., с. 189; **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 80:

[5] Տե՛ս ՀԺՊ, հտ. III, էջ 25 (գլխի հեղ.՝ Բ. Ն. Առաքելեան):

[6] **A. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, с. 239.

[7] Տե՛ս Очерки истории Грузии, т. II, с. 274 (յղելով՝ **Թ. Պապուաշուիլի**, IX-XII դդ. Հերէթի քաղաքական պատմութիւնից, – «Մացնէ», 1967, հմր 3, էջ 70-71 /վրացերէն/):

[8] **C. Zuckerman**, À propos du Livre des cérémonies, p. 568.

րականգնման մասին («յերեք հարիւր երեսուն եւ վեց թուին [=887/888 թ.][1] եղեւ Աշոտի Բագրատունւոյ [abc Բագրատունոյ] նստուցանել զաթոռ թագաւորութեանն իւրոյ [a իւր] ի մէջ Հայաստանեացն [bcev Հայաստանեայց]»), ապա յիշւում է արաբների՝ 893 թ. արշաւանքը («գալուստ Տաճկին ի Հայս եւ գրաւել զաշխարհն [bcelv գրաւելոյ զաշխարհս] ընդ լծով ծառայութեամբ [bcelv ծառայութեան] հարկաց՝ թուականն Հայոց ՅԽԲ [bcelv երեք հարիւր քառասուներկու թուին (=893/894 թ.)] լինէր»), որն աւարտուեց Գէորգ Գառնեցու գերեվարմամբ («ըմբռնեալ եղեւ [a լինէր] հայրապետն Հայոց [a չիխ Հայոց] Գիորգ [bcev Գէորգիոս]. ի կապանս երկաթի [elv երկաթիս] պարփակեալ՝ ածաւ ի Պարտաւ»)[2]: Եւ անմիջապէս դրանից յետոյ խօսւում է Աղուանից թագաւորութեան վերականգնման մասին Համամի կողմից, ով նաեւ կարողացաւ Սաջիկ («Սաջկայ»[3]) ամիրայի ձեռքից ազատել կաթողիկոսին մեծ փրկագնով (իրականում, ըստ ամենայնի՝ արաբների պահանջած հարկի կամ դրա պահանջուած չափի վճարումով, որը, թերեւս, գոնէ սկզբնապէս հրաժարուել էր անել Սմբատ Ա-ն)[4]: Բնագիրն է. «Ապա բարեպաշտն Համամ, որ եւ Աղուանից եղեւ թագաւոր. նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն [bcelv տանս] Աղուանից Համամ նորոգէ [bcelv նորոգեաց], որպէս Աշոտ Բագրատունի զՀայոց թագաւորութիւնն»[5]: Ահա սրան անմիջապէս յաջորդում է «այսք ի միում ժամանակի գործեցան» արտայայտութիւնը[6], եւ պարզ է, որ այն չէր կարող գրած լինել նոյն մարդը (աղբիւրի հեղինակը), ով քիչ առաջ նշել էր 6-7 տարուայ տարբերութիւն ցոյց տուող 887/888 (կամ՝ 885/886) եւ 893/894 թուականները:

Փոխարէնը՝ դա լիովին կարող էր իր աղբիւրի ինչ-որ մի արտայայտութեան փոխարէն գրել ինքը՝ Մովսէս Դասխուրանցին, ով իր երկի մնացեալ մասերում էլ պարբերաբար փորձում է, «անմեղ սրբագրումներ» կատարելով, գոնէ հաւասա-

---

[1] Թերեւս, այս թուականի փոխարէն, որը, ի դէպ, պահպանուել է *ՊԱ*-ի ձեռագրերի միայն Բ խմբում, անհրաժեշտ է վերականգնում կատարել՝ «յերեք հարիւր երեսուն եւ [չորս] թուին» (=885/886 թ.): Համմ. նաեւ **Ա. Եղիազարյան**, Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց (Եր., 2014):

[2] **Դասխ.**, Գ.իա /իբ/, էջ 335; **Ա. Ցակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 51:

[3] «Սաջկայ», այսինքն՝ Սաջեաններ, ամիրայական յայտնի տոհմանուան փոխարէն Բ խմբի մէկ ձեռագրում (*l*, ԺԷ դարի) առկայ է «Տաճկաց» ընթերցումը, որը, ցաւօք, շտապողաբար նախընտրել է *ՊԱ*-ի՝ 1983 թ. հրատարակիչ Վ. Առաքելեանը:

[4] Գէորգ Գառնեցու ազատման մասին մանրամասն տե՛ս նաեւ **Դրասխ.**, էջ 170-171; **Հովհ. Դրասխանակերտցի**, էջ 72; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XXXIII, p. 228.

[5] **Դասխ.**, Գ.իա /իբ/, էջ 335; **Ա. Ցակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 51:

[6] Դրան յաջորդում է բուն սիւժէի շարունակութիւնը. «Եւ նոյն ինքն Համամ՝ սակս առ Աստուած մեծապէս [*bcelv* մեծ] յանցանացն, որ վասն սնոտի այս [*bcelv չիք* այս] կենացս զպարտ [*bcelv* եղեւ պարտապան] արեան եղբարւն ժողովեալ յանձինն [*bcelv* յանձին] իւրում, մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս եւ առ ամենայն կարաւտեալս [*bcelv* կարօտս] եւ չքաւորս առատագուարթ անսպառ կատարէր: Որ եւ զմեծ հայրապետն Հայոց Գիորգ [*bcelv* Գէորգ] յանաւրէն Սաջկայ [*l* Տաճկաց] կապարանէն բազմաբաշխ գանձիւք տայր արձակել, եւ յոգնամեծար զնա արարեալ՝ առողջ առ Հայաստանայսն [*a* Հայաստան, *l* Հայաստանեայսն] առաքէր» (**Դասխ.**, Գ.իա /իբ/, էջ 336; **Ա. Ցակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 51-52):

րեցնել իր պատկերացրած «աղուանական» եւ «հայկական» իրողութիները (ռէալիաները)։ Համմ., օր.՝ Ա.թ գլխում Տրդատ Մեծի կողմից՝ Հայաստանի, իսկ Ուռնայրի կողմից՝ Աղուանքի քրիստոնէացման առիթով ասուածը. «Եւ այսմ ի միում ժամանակի եղեն հրաշք յԱստուածուստ»[1]։ Դժուար չէ ենթադրել, որ մեր կտորում աղբիւրի՝ Դասխուրանցի պատմագրին «անճիշտ թուացած» եւ այդ պատճառով «սրբագրուած» արտայայտութիւնն ուղղակի կրկնել է մի քանի տող վեր տրուած նոյն տարեթիւը՝ «Հայոց ՅԽԲ [342 = 17.04.893 – 16.04.894]»՝ որպէս ո՛չ միայն Գէորգ Գառնեցու գերեվարման, այլ նաեւ Համամի թագաւոր դառնալու տարի[2]։ Նշենք յատուկ, որ դա չէր կարող լինել որեւէ մի յաջորդ տարի, քանի որ Համամ Բարեպաշտի սիւժէին անմիջապէս յաջորդում է. «Իսկ յետ Դ [4] ամաց ... սպանաւ Ապու Ալի Աղուանից իշխանն [a իշխան] Հայկազնի [elv Հայկազունի]» սիւժէն, ապա քիչ յետոյ այդ ողբերգութեան տարի է նշւում, ինչպէս տեսանք, 897/898 թիւը («Եւ Հայ թիւն ՅԽԶ [346] էր»)[3]։ Այսպիսով, Համամ Արեւելցու թագադրումը կարելի է վստահօրէն վերագրել 04.898 – 4 տարի = 894 թուականի սկզբներին։

ԺԹ դարի պատմիչ Մխիթար Այրիվանեցու մի վկայութիւնից յայտնի է, որ Համամ Բարեպաշտը կրել է նաեւ Յովհաննէս անունը («Համամ, որ եւ Յովհաննէս Բագրատունի. մեկնեաց զԱռակսն եւ եդ զվերջի գուբղայսն ի գլուխ Սաղմոսացն»)[4]։ Նոյնը տե՛ս նաեւ ՄՄ երկու գրչագրերում՝ ՀՄՐ 2152 (ԺԹ դար, թ. 210ա. «Ո՞վ է Համամն, Առակաց մեկնիչն։ Պատասխան – Բագրատունեաց իմաստասէր աբեղա[յ]՝ Յոհաննէս անուն»), եւ ՀՄՐ 5128 (ԺԷ դար, թ. 249բ. «...մեծ վարժապետն Հայոց Համամ-Յովհաննէս՝ աւծող թագաւորին Աշոտոյ Բագրատունոյ»)։ Փաստօրէն, այս համադրումը կասկածի առարկայ չի եղել դասական հայագիտական աշխատանքներում, որտեղ մանրամասն վերլուծուած են Համամ Բարեպաշտ թագաւորի գրական գործունէութիւնը եւ նրա ոչ անամպ կեանքի ինչ-ինչ դրուագներ (հարազատ եղբօր սպանութիւն, ապաշխարանք եւն)[5]։

Ափշին Սաջեան ոստիկանի հարկապահանջութեան եւ Գէորգ կաթողիկոսի փրկագնման պատմութեան մէջ Յովհաննէս Դրասխանակերտցին դեռ, ըստ ամենայնի՝ չթագադրուած Համամին կոչում է «մեծ իշխանն Արեւելից»։ Բնագիրն է.

---

[1] **Դասխ.**, Ա.թ, էջ 14:

[2] Գէորգի գերեվարման ժամանակի մասին, թերեւս, կարելի է դիտարկել, որ հարկապահանջ արաբ ոստիկանները սովորաբար Հայաստան էին արշաւում ձմեռնադէմին: Տե՛ս, օր.՝ «Իսկ ոստիկանն առկայացեալ որջանայր ի Դւին՝ զդառնաշունչ եղանակս ձմերայնոյն ի նմա անցուցանել» (**Դրասխ.**, էջ 216; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XL, p. 250).

[3] **Դասխ.**, Գ.իա /իբ/, էջ 336, 337; **Ա. Յակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 52, 54:

[4] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 55: Համմ. **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 557 («93. Յովհաննէս, երկրորդ անուն Համամ իշխան Արեւելցու (894 թ.) ըստ Մխ. Այրիվ. 70»):

[5] Տե՛ս **Н. Адонц**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. CXVI-CXVII (բնագիրը՝ էջ 251-285); **Կ. Կոստանեանց**, Համամ Արեւելցի, Վաղարշապատ, 1896; **Ս. վրդ. Ամատունի**, Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականները, Վաղարշապատ, 1911; **Ա. Ծ. Մնացականեան**, Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, էջ 183-204:

«եւ ժողովեալ միանգամայն զինդիր պահանջման ոստիկանին՝ վաղվաղակի առաքեցաք ըստ հրամանի արքայի Սմբատայ առ մեծ իշխանն Աբեւելից Համամ... Իսկ նա յինքն հայցեալ զհայրապետն առնոյր, եւ յառաքեալ գանձն առ յիւրմէն եւս յաւելեալ ի լրումն սակին՝ տայր տանիլ ոստիկանին»[1]: Ի դէպ, պատմիչի այս եզակի վկայութեան հիման վրայ է նոր գրականութեան մէջ արմատաւորուել Համամ Բարեպաշտ Բագրատունի արքայ-մատենագրի միւս՝ «Արեւելցի» մականունը[2]: Բերուած բնագրի «Արեւելից» անուանումը, որը, իհարկէ, ունի «Հայաստանի արեւելք» իմաստը, Ս. Բարխուդարեանի կարծիքով՝ շարունակել է տրուել նորաստեղծ Աղուանից թագաւորութեանը նաեւ աւելի ուշ, մասնաւորապէս՝ 906-908 թթ. միջակայքում, Սմբատ Ա-ի՝ աբխազական արշաւանքին «իշխան յԱրեւելից Սմպատ»-ի մասնակցութեան առիթով, որին նա համարում է Համամի եղբայրը[3]: Նա ենթադրում է նաեւ, որ այս նոյն անձը յիշատակուած է Սոֆուլուի գերեզմանոցից (Արցախի Տիգրանակերտից 10 կմ հիւսիս՝ Խաչէնագետի ձախ վտակ Թխկոտի ստորին հովտում, իմա՛ ՊԱ-ի Սոհառն, Սուհառ) Բաքուի թանգարան տարուած կոտրտուած տապանաքարի քառատող վիմագրում իբրեւ՝ «{...եղբայր Հ}ամամի... Սնպատ»[4]: Սակայն հետագայում Աբրահամ Շահինեանի ընթերցման շնորհիւ պարզուեց, որ տուեալ տապանագիրը Համամ Բարեպաշտի հետ կապ չունի. նրանում ուղղակի յիշատակուած են «ճորտ հասակում» մահացած ոմն «{Հ}ամամ իշխան», ապա՝ Տէր Փղիպէն, Տէր Պետրոսը եւ վերջինի հայր Դաւիթը, ընդ որում Սոհառն/Սոֆուլուի վիմագիրը գրուած է Համամ արքայից երկու-երեք դար յետոյ[5]:

Ս. Բարխուդարեանի տեսակէտը բոլոր դէպքերում դժուար է հիմնաւոր համարել: Թւում է, թէ խնդրոյ առարկայ «Արեւելից» անուանումն արտացոլում է միմիայն ոչ երկարատեւ այն պահի իրական պատկերը, երբ Շաքի երկրի տարածքը մտնում էր ընդարձակ Արմինիյային շարունակող՝ Աշոտ Ա-ի եւ Սմբատ Ա-ի առաջին տարիների թագաւորութեան համակարգի մէջ, որն ընդգրկում էր նաեւ Վիրքը եւ Բուն Աղուանքը, մինչեւ Սեւ ծով եւ Կովկասեան լեռներ: Այդ պահի արտացոլու-

---

[1] Դրասխ., էջ 171 (տե՛ս նաեւ շարունակութեան մէջ. «Եւ հաւատոց պաշտպանութեամբ թեւակոխեալ փափաքմամբ իշխանն ի տեսանել զհայրապետն մեծ, եւ մարմնաւոր պիտոյից բովանդակապէս բաւականացեալ, ի հեռաւոր աւտարութեան եւ յարբանեկութեան պայմանի սպասաւորեալ՝ առաքէ զնա ի Հայս»); **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց, էջ 463 (ՄՀ, գլ. ԼԳ); **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XXXIII, p. 228. Նոյն սիւժէն յիշելիս՝ աւելի ուշ հեղինակ Ստեփաննոս Ասողիկը Համամին արդէն թագաւոր է կոչում (գլ. Գ.գ, էջ 161. «Այս այն Ափշին է, որ զՏէր Գէորգ գերի տարաւ, զոր գնեաց Համամ Աղուանից *թագաւորն*»):

[2] Հմմ., օր.՝ **Կ. Կոստանեանց**, Համամ Արեւելցի (Վաղարշապատ, 1896):

[3] **Ս. Գ. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանությունները, էջ 68; **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 79. Հմմ. **Շապուհ Բագրատունւոյ Պատմութիւն**, Էջմիածին, 1921, էջ 81 (բնագիրը՝ ստորեւ): Տե՛ս նաեւ **Ա. Եղիազարյան**, Հայոց Սմբատ Ա թագավորի ափխազական արշավանքը, – ԼՀԳ, 2010, հ՝ 1-2, էջ 122-126:

[4] Տե՛ս սկզբնապէս՝ **Ս. Գ. Բարխուդարյան**, Տապանագիր Համամ իշխանի անունով, – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1964, հ՝ 1, էջ 61-64:

[5] **Ա. Շահինյան**, Բաքվի քաղաքային թանգարանի հայերեն արձանագրությունները, – ԼՀԳ, 1976, հ՝ 6, էջ 89-94:

մը կայ, օր.՝ Դրասխանակերտցու երկի յայտնի դրուագում. «...եւ մեծ կուրապաղատն Վրաց եւ համախոհք իւր՝ գեղեցիկ կարգաց ուղղութեամբ հաւանեալք եւ հնազանդեալք լինէին... Եւ այսպէս ձգտեալ աճեցուցանէր [Սմբատ Ա-ն՝ մինչեւ Դուինի 893/894 թ. աւերիչ երկրաշարժը – Ա. Յ.] զշաւիղ տէրութեան իւրոյ յարեւմտից հիւսիսոյ մինչեւ ցկարնոյ քաղաք, եւ անդր եւս քան զկղարջս՝ քերեալ մինչեւ առ ափն ծովուն մեծի, եւ մինչեւ ցսահմանս Եգերացւոց եւ մինչեւ ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս եւ զՇանարս մինչեւ ցդուռն Ալանաց՝ առեալ եւս յինքն եւ զամրոց դրան պահակի նոցա. եւ անտի ի հարաւակողմն կոյս՝ զկուր գետով մինչեւ ի քաղաքն Տփխիս. եւ զՈւտի գաւառ...»[1]: Այդ նոյն պահի իրավիճակն արտացոլուած է նաեւ Թովմա Արծրունու մօտ («Յայնժամ թագաւորն [Սմբատը՝ 898-ին կամ 902-ին – Ա. Յ.] դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեանն Հայոց, Վրաց եւ Աղուանից, եւ առ քաղաքացիսն եւ հազարապետս եւ գաւառակալս, եւ որք սիրողաբար առ նա զհնազանդութեանն հարկ հարկանէին»)[2], ինչպէս նաեւ Շապուհ Բագրատունու (=Անանուն զրուցագրի) «Պատմութեան» մէջ («Եւ մեռաւ Աշոտ Բագրատունի, եւ թագաւորեաց տանն Հայոց Սմպատ, որդի Աշոտոյ... Եւ նա տիրեաց ամենայն աշխարհին Հայոց եւ ընդ ձեռամբ էած զՀայք եւ զՏայք, զՎիրք եւ զԱղուանք եւ զՎրաց դաշտ եւ զՓարիսունք եւ զԱղորնիս եւ զԱրեւիս եւ զԲաղս եւ զաւան Պարտաւայ: Եւ առեալ տիրեաց նմա զՓայտակարան, որ է Տփխիս, զՎաղարշապատ եւ զԴվին, եւ զՎայոց ձոր եւ զՆախջվան...») եւ ուշ պատմիչների երկերում[3]: Սակայն միեւնոյն ժամանակ հնարաւոր չի թւում փաստարկել, որ նոյն վիճակը շարունակուել է նաեւ հետագայում, մասնաւորապէս՝ հարեւան Ատրպատականում Սաջեան ամիրաների հզօրացումից յետոյ: Արդէն Հայոց Դրասխանակերտցի կաթողիկոսը, ով 908 թ. յետոյ վտարանդի դարձած հիւրընկալուեց Ատրներսեհ Համամեանի երկրում, նման եզրութաբանութիւնն օգտագործում է զուտ աշխարհագրական նկարագրութեան ձեւով. «...հալածեալ շրջեցայ ի քաղաքէ ի քաղաք ի կողմանս արեւելեայ՝ Աղուանից, առ մեծ իշխանն Սահակ երթեալ, եւ առ թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արեւելից հիւսիսոյ կովկասու...»[4]: Պատահական չի թւում նաեւ, որ Կոստանդին Միրանածինն իր «Արարողութիւնների մասին» Բ գրքում կոչում է այդ երկիրը, ըստ ամենայնի՝ հէնց իր պաշտօնական անուանումով՝ «Ալբանիա»:

Վերջին աղբիւրի ներկայացրած՝ Բիւզանդիայի կայսրերի հասցէատէրերի «ալբանական» երկրացուցակը, որը յաջորդում է «Հայաստանի» եւ «Իբերիայի» երկրացուցակներին, ունի հետեւեալ տեսքը. «Ալբանիայի իշխանին [εἰς τὸν ἄρχον-

---

[1] **Դրասխ.**, էջ 161; **Հովհ. Դրասխանակերտցի**, էջ 64; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XXXI, p. 220.

[2] **Թովմա**, գլ. Գ.իգ, էջ 236-237; **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 262; ՄՀ, հտ. ԺԱ, էջ 244:

[3] **Շապուհ Բագրատունւոյ** Պատմութիւն, էջ 65: Հմմ. **Վարդան**, էջ 116-117 («Ցորում աւուր ընդարձակեալ Մեծին Աշոտի ի Վիրս եւ յԱղուանս, եւ զկովկասայինսն հնազանդեալ...»):

[4] **Դրասխ.**, էջ 217; **Հովհ. Դրասխանակերտցի**, էջ 130; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XLIV, p. 264.

τα Ἀλβανίας]։ Կրեւատադէսների [Κρεβατάδων] իշխանին՝ Կրեւատաս կոչուածին։ Կէդոնիայի [Κηδωνίας] իշխանին։ Ծանարիայի [Τζαναρίας] իշխաններին։ Սարւանի [Σαρβάν] իշխանին, որոնք գտնւում են Ալանիայի եւ Ծանարիայի միջեւ։ Իշխաններին Ազիայի [Ἀζίας], որի մէջ են գտնւում կասպից դռները։ Խրիւսայի [Χρύσα] իշխանին։ Վրեզանի [Βρέζαν] իշխանին։ Մօկանի [Μωκᾶν] իշխանին (Մօկանից է սկսւում Մէոտիս լիճը)»[1]։ Այս եւ մնացեալ բոլոր աղբիւրներից երեւում է, որ Համամ Բագրատունու ստեղծած Ալբանիա/Աղուանք (վրացական աղբիւրներում՝ «Հերէթ», դաղստանցի պատմաբանների նախընտրած պայմանական եզրոյթով՝ «երկրորդ Աղուանից») թագաւորութիւնը (Շաքի մայրաքաղաքով) ընդգրկում էր անտիկ եւ վաղմիջնադարեան Բուն Աղուանքի թագաւորութեան լոկ ծայր արեւմտեան մասը։ Դա Ալազան եւ Խորի գետերի միջին ու ստորին հովիտներն էին, կուրից հիւսիս եւ քորեպիսկոպոսական կախէթի թագաւորութիւնից արեւելք։ Բուն Աղուանքում կենտրոնական դիրք զբաղեցնող հինաւուրց կապաղակ մայրաքաղաքի շրջանում՝ նոյն «Կաբալա» անուան տակ ձեւաւորուած առանձին եւ մահմեդական տիրակալներով (թէպէտ եւ առաւելապէս քրիստոնեայ ազգաբնակչութեամբ) պետական կազմաւորումը (գուցէ՝ Կոստանդին Միրանածնի «Ազիա»-ն, արաբական աղբիւրների Աբսիյա/Անբասիյան) սահմանակցում էր Համամի թագաւորութեան հետ արեւելքից։ Բազմաթիւ արաբալեզու հեղինակներից բերենք լոկ ալ-Իսթահրիի (Ժ դ. սկիզբ) նկարագրութիւնը[2]. «Շիրւանի եւ Լիրանի [=Լայզանի] միջեւ կայ սահման, Լիրանի եւ Մոկանի միջեւ [կայ] սահման, ինչպէս եւ Աբսիյա երկրի հետ. սա մարզ է՝ բնակավայրերի ոչ մեծ քանակով։ Այնտեղ [մի] հզօր ամրոց կայ, իսկ նրա յետեւում, լեռների ուղղութեամբ՝ մի տեղանք, որը յարում է Լակզ երկրին։ Նրանք [Լակզի բնակիչները] պաշտպանում են այդ ամրոցը, քանի որ Աբսիյայի տիրակալը նրանց հանդէպ յատուկ հակում է տածում եւ բարիդրացիական յարաբերութիւններ է պահում իրենց հետ»։ Գրեթէ նոյնն է կրկնում այլ դէպքերում եւս ալ-Իսթահրիին հետեւող ալ-Մուկադդասին[3]։

Համամ Բարեպաշտի որդի Ատրներսեհի եւ վերջինիս որդի Իշխանիկի մասին հայկական, վրացական եւ արաբական աղբիւրներում մեծաթիւ (թէպէտ եւ ոչ կա-

---

[1] Տե՛ս **Const. Porph.**, De Cerem. II, 48; **Constantini Porphyrogeniti imperatoris** De Ceremoniis aulae byzantinae libri duo. Graece et latine e recensione **I. I. Reiskii**, Vol. I, Bonnae, 1829, p. 688; **Կոստանդին Միրանածին**, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին. Գիրք II, Թարգմ. բնագրից, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ **Հ. Բարթիկյանի** (Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ), Եր., 1970, էջ 152: Աւարտը եւ յաջորդ պարբերութիւնն է. «Բոլոր վերոյիշեալներին ուղղուած նամակը վերնագրում է այսպէս. «Քրիստոսասէր տէրերի հրամանքը այսինչ իշխանին, այսինչ երկիր»: / Հայոց կաթողիկոսին, Իբերիայի կաթողիկոսին, Ալբանիայի կաթողիկոսին: Երեք կաթողիկոսին էլ ուղղուած նամակների վերնագիրն է. «Քրիստոսասէր տէրերի հրամանքը այսինչ երկրի ամենաբարեպաշտ այսինչ առաջնորդին»:

[2] Ըստ **А. Р. Шихсаидов**, Вопросы исторической географии Дагестана X-XIV вв. (Лакз, Гумик), – Восточные источники по истории Дагестана (Сборник статей и материалов), Махачкала, 1980, с. 67. Հմմ. **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 191.

[3] **Н. А. Караулов**, Сведения арабских писателей о Кавказе, – СМОМПК, вып. XXXVIII, с. 31.

նոնաւոր) տեղեկութիւններ են պահպանուել: Ըստ Ստեփաննոս Օրբէլեանին հասած տուեալների՝ 906 թ. Տաթեւի Պօղոս-Պետրոս մայր եկեղեցու օծմանը բազմաթիւ պատուաւոր հիւրերի թւում մասնակցում էին Աղուանից կաթողիկոս Սիմէոնը (902-923), Գարդմանի (Փառիսոսի) իշխան Սահակը (իմա՛ Սահակ Սեւադան) եւ «Աղուանից իշխաններ» Գրիգորը (իմա՛ Խաչէնի իշխանը), Եսային (իմա՛ Գորոզուի իշխանը) եւ Ատրներսեհը[1], ընդ որում՝ ուսումնասիրողները վերջինիս վստահաբար համարում են Շաքի/Հերէթի թագաւորը՝ Համամ Բարեպաշտի որդին (թէպէտ նրա՝ միայն «իշխան» կոչուելը գուցէ եւ առեղծուածային է): 908 կամ 909 թ. Ատրներսեհի երկրում հիւրընկալուեց վտարանդի Հայոց կաթողիկոս Յովհաննէս Դրասխանակերտցին, որը դա նշում է այսպէս. «...առ թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արեւելից հիւսիսոյ կովկասու, զի եւ նոքա ի ժողովրդենէն մերմէ եւ խաշն արաւտի մերոյ էին»[2]: Շուտով՝ 915 թ., վրացական աղբիւրների հաղորդմամբ՝ Ատրներսեհը (Ադարնասէ) թշնամացել էր վրացական երկու տիրակալների հետ՝ Աբխազաց եւ Կախէթի, սակայն կարողացաւ մեծ պատերազմից խուսափել՝ նրանց որոշ տարածքներ զիջելով Ալազանի վերնահովտում (Արիշի, Գաւազնի եւ Օրչոբի ամրոցները)[3]: Ճիշտ է, ըստ Վախուշտի Բագրատիոնիի (ԺՀ դար) ձեռքի տակ եղած տեղեկանու՝ դէպի Կախէթ Ատրպատականի Սաջեանների արշաւանքին (որը վերագրւում է 936 թ.) յաջորդեց նոյն ուղղութեամբ «Հերէթի թագաւորի» յարձակումը, որի արդիւնքում նա յետ գրաւեց երկու տասնամեակ առաջ կորցրած ամրոցները[4]: Արաբ հեղինակ ալ-Մասուդին «Շաքին» անունով երկրի՝ իր օրերի (943 թ.) թագաւոր է նշում «Հումամի որդի Ադզար-Նարսա»-ին[5]: Իսկ արդէն 949 թ. Խաչէն գաւառ այցելած Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին «Աղուանից աշխարհի» «գլխաւորների» ու «հզաւրների» թւում յիշատակում է Իշխանակ թագաւորին՝ Ատրներսեհի որդուն՝ Համամ Բարեպաշտի թոռանը[6]:

Շաքի/Հերէթի թագաւոր Իշխանիկին գիտեն նաեւ արաբ եւ վրացի հեղինակները: Ժ դ. երկրորդ կէսի արաբ հեղինակ Իբն Հաուկալը Հիջրէի «երեք հարիւր

---

[1] **Օրբ.**, գլ. ԽԲ, էջ 171; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԽԳ, էջ 234:

[2] **Դրասխ.**, էջ 217; **Հովհ. Դրասխանակերտցի**, էջ 130; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. XLIV, p. 264.

[3] Матиане Картлиса, Пер., введение и примечания **М. Д. Лордкипанидзе**, Тбилиси, 1976, с. 33; Летопись Картли, с. 52; **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 133; Очерки истории Грузии, т. II, с. 275-276.

[4] **Вахушти Багратиони**, История царства Грузинского, Перевел, снабдил предисловием, словарем и указателем **Н. Накашидзе**, Тбилиси, 1976, с. 127. Հմմ. Очерки истории Грузии, т. II, с. 267.

[5] Տե՛ս **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 211.

[6] **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի՝** Ցաղագս ապստամբութեան..., էջ 131 եւ 144 («ունէր զաթոռ թագաւորութեան յայնժամ Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսեհի, թոռն երանելոյն Համամայ բարեպաշտ թագաւորին Աղուանից, եւ էր դարձեալ յաղանդն Քաղկեդոնի եւ մոռացեալ զհարցն դաւանութիւն», եւ՝ «...ծագեաց ի սիրտս հզաւրացն Աղուանից, ի թագաւորն, որ կոչէր Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսեհի, եւ Սեմեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, եւ նորին ամուսնոյ եւ քեռ նորին...»):

քառասունչորս թուին» (=27.04.955-14.04.956 թ.) դեյլեմցի ամիրայ (Ատրպատականի ոստիկան) Մարզուբան իբն Մուհամմադ Սալարեան – Մուսաֆիրեանի հարկատուների ցանկում նշում է նրան երկրորդը եւ կոչում. «Շաքքիի տէր Իշխանիկը [Իշխանիք], որը յայտնի է որպէս Աբու Աբդ ալ-Մալիք»[1]: Աղբիւրում նշուած տարեթուի առիթով ուշադրութեան արժանի է Ա. Տէր-Ղեւոնդեանի դիտարկումը, ըստ որի՝ հարկացուցակում Ներքին Արմինիյայի համար ասուած է. «Համաձայնեց [Մարզուբանը] Սինբաթի երկու որդիների հետ...», որը «նկատի ունի Սմբատ Ա-ի երկու որդիներին՝ Աշոտին եւ Աբասին», հետեւաբար՝ «հարկացուցակը, թէեւ ըստ իբն Հաուկալի կազմուած է 955 թ., ամենայն հաւանականութեամբ արտացոլում է Աբաս թագաւորի ժամանակ (928-953) տիրող դրութիւնը, երբ մասնատուած եւ թուլացած Հայոց թագաւորութեան տարբեր մասերը հարկ էին վճարում հարեւան Ատրպատականի Սալարեաններին դելմիկ հրոսակների ասպատակութիւնից զերծ մնալու համար»[2]: Ընդ սմին, պէտք է նաեւ նկատի ունենալ, որ ցուցակը կարող էր կազմուած լինել 949 թուից յետոյ, քանի որ այն «խաչինի տէր» է նշում Սենեքերիմին (Սանհարիբ), իսկ 949-ին խաչէնում, ըստ Անանիա Մոկացու, դեռ վերջինիս հայր Գրիգորն էր իշխում (բայց 958-ին՝ արդէն հաստատապէս Սենեքերիմը)[3]:

Իբն Հաուկալի նշած Աբու Աբդ ալ-Մալիք անունն արաբական ընկալմամբ նշանակում է «ալ-Մալիք անունով [աւագ] որդի ունեցողի հայր», եւ քանի որ արաբերէն Մալիք-ի իմաստն է ոչ միայն «թագաւոր», այլեւ «իշխան», ենթադրելի է, որ Համամ Աղուանից արքայի († մինչեւ 906 թ.) թոռ Իշխանիկը 950-ական թթ. ունեցել է ոչ միայն որդի[4], այլեւ արդէն թոռ, ընդ որում՝ կոչուած իր պապի անունով՝ Իշխան/Իշխանիկ – «ալ-Մալիք»: Ըստ վրաց աղբիւրների՝ Ատրներսեհի-որդի Իշխանիկի մայրը Աջարայի եւ Կուէլիի (Վիրքի հարաւ-արեւմուտքում) իշխանաց իշխան Գուրգէնի քոյր Դինարն էր (տե՛ս, օր.՝ «ի չիշատակ Ադարնասէ անունով պատրիկի եւ նրա տիկնոջ՝ Դինար իշխանուհու, եւ նրանց որդի Իշխանիկի»), ով իր որդուն եւ ողջ երկիրը դարձրել էր երկաբնակ. իսկ մինչ այդ նրա բոլոր նախնիները, աղբիւրի խօսքերով՝ «եղել են հերձուածող», իմա՛ հակաքաղկեդոնական[5]:

Ինչպէս նշեցինք, Կոստանդին Ծիրանածինը (913-959) իր՝ 949 թ. աւարտած «Արարողութիւնների մասին» երկում, Բ գրքի գլ. 48-ում («Այլազգիներին ուղարկուող նամակների վերնագրերը») «Ալբանիայի» արխոնտին, այսինքն՝ իշխանին, դնում է նոր պարբերութեան սկզբում՝ Հայաստանի, Իբերիայի, Աբազգիայի (Ա-

---

[1] Տե՛ս V. Minorsky, Caucasica IV: II. The Caucasian Vassals of Marzubān, p. 519, 521-522; **Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան**, Հայաստանի բնաիարկը, էջ 58; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 641: Մարզուբան Սալարեանն իշխել է 941-957 թթ. (К. Э. Босворт, Мусульманские династии, с. 127).

[2] **Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան**, Հայաստանի բնաիարկը, էջ 59; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 641-642:

[3] **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի**՝ Ճաղագս ապստամբութեան..., էջ 134-135, 144:

[4] Ջուտ իբրեւ վարկած՝ վերջինս կարող էր կոչուել իր պապի անունով՝ Ատրներսեհ:

[5] Տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Գ, Եր., 1955, էջ 39-40, հմմ. հտ. Ա, էջ 98, 203; **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 132-133:

*բեւմտեան Վրաստան եւ Աբխազիա) եւ Ալանիայի պարբերութիւններից յետոյ: Այդտեղ նա թուարկում է նաեւ վերը նշուած ութ ոչ մեծ «երկրները»՝ Կէդոնիա (resp. Դէդոնիա – Դիդոնիա, արաբ. աղբիւրներում՝ Դուդանիյա); Ծանարիա (Ծանարք, Թերեւս, բուն Կախէթի հետ); Սարւան (Շիրւան, վաղ միջնադարի՝ Ճիղբք[1]); Ազիա («որի մէջ են գտնւում Կասպից դռները»[2]); Խուրսան (Χρύσα); Վարսան (Βρέζαν, ե դարում՝ Վատն); Մօկան (իմա՛ Մուվական); եւ ամենադժուար համադրելի Կրեբատադներ (Κρεβατάδων)՝ «Ալբանիա»-ից անմիջապէս յետոյ եւ «Կէդոնիա»-ից առաջ («Կրեւատադէսների իշխանին՝ Կրեւատաս կոչուածին»)[3]: Կ. Յուկերմանի փորձը՝ անունների որոշ նմանութեան հիման վրայ այս «Կրեբատադներին» համադրելու ԺԱ-ԺԲ դդ. յայտնի Ռավվադեան սելջուկ ամիրաների հետ[4], որոնց տիրոյթներն ընկած էին Երասխից հարաւ (!), պիտի համարել չյաջողուած: Իսկ ուշադրութեան առնելով ցուցակի նախորդ անուան մէջ հեղինակի կամ հետագայ գրչի թոյլ տուած «Կէդոնիա» – «Դէդոնիա [<Դիդոնիա]» ակնյայտ սխալը, Թերեւս, պէտք է հնարաւոր համարել նոյնանման տարբերակով «Կրեբատադ – *Դրեբատադ» վրիպակի վարկածը՝ այդ Դրեբատադ-ից էլ վերականգնելի համարելով «*Դերբատադ» < «*Դերբա[ն]տադ» < «*Դերբե[ն]դ» տեղանուանաձեւը:*

Յիշենք, որ Միրանածնի նշած պահին (ըստ Անանիա Մոկացու՝ հէնց 949-ին) Աղուանից թագաւորը (բիւզանդացիների համար՝ «արխոնտը») Իշխանիկ Բագրատունին էր՝ Ատրներսեհի որդին եւ Համամ-Յովհաննէս Բարեպաշտի թոռը: Նոյն ժ դ. կէսի համար բուն Աղուանքի ողջ տարածքի նկարագրութիւններ են տալիս նաեւ ալ-Մասուդին (943 թ. համար) ու այլ արաբ հեղինակներ, որոնց ունեցած տեղեկանիով՝ «Հումամի որդի Ադզար-Նարսայի» թագաւորութիւնը քրիստոնեական էր, իսկ միւսները՝ Սարւան – Շիրւանը (արեւմուտքից յարող Լայզանի[5] հետ), Ազիա – Աբսիյա/Անբասիյան (Կաբալա/Կապաղակ կենտրոնով), Վարսանը (Մասքաթի հետ), Խրիւսա – Խուրսանը, Մուկանիյան (Միրանածնի՝ Մօկանը, վրաց աղ-

---

[1] Հմմ. ատտ, էջ 213, ծն. 2:

[2] Վերջինը, թերեւս, Սալաւաթ II լեռնանցքն է՝ Կապաղակ քաղաքից հիւսիս, քանի որ Դերբենդը քիչ է հաւանական: Լեռնանցքի եւ «Ազիա» – «Աբսիա» համադրման մասին տե՛ս **А. Акопян**, К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании, с. 42-43; **նոյնի**՝ К хронологии завершения этноконсолидации удинов и лезгин, с. 141. Հմմ. **S. Runciman**, The Emperor Romanus Lecapenus and his Reign, Cambridge, 1929, p. 171-172.

[3] **Const. Porph.**, De Cerem. II, 48; **Constantini Porphyrogeniti imperatoris** De Ceremoniis..., Vol. I, p. 688; **Կոստանդին Միրանածին**, Բիւզանդական արքունիքի արարողութիւնների մասին. Գիրք II, էջ 152 (տե՛ս նաեւ էջ 312-313, ծն. 96-104): Հմմ. **C. Zuckerman**, À propos du Livre des cérémonies, p. 532-537.

[4] Նոյն տեղում, էջ 532-533:

[5] Տեղին նշենք, որ ամենեւին հասկանալի չեն Լայզանը Գիրդիմանի գետաճովտի փոխարէն Լագոդեխի եւ Կախի քաղաքների շրջակայք տանելու՝ Ալիկբեր Ալիկբերովի վերջին փորձի հիմքերը (նոյն կերպ անհիմն է թւում նաեւ *Վարդան/Վարսան* ազգագաւառը Կասպիցի ափերից Վարդաշէն եւ Կաբալա քաղաքների մօտ տանելը): Տե՛ս **А. К. Алиев**, Эпоха классического ислама на Кавказе... գրքի Քարտէզ 1-ում ("Закавказье и Северный Кавказ в эпоху классического Ислама"), առջեւի ֆորզացի (կազմաստառի) վրայ:

բիւրների՝ Մովականը), ալ-Լակզը (նաեւ՝ Լակզան) եւ Բաբ ալ-Աբվաբը (Դերբենդ)՝ մահմեդական, թէպէտ նրանք էլ ունէին նաեւ քրիստոնեայ բնակչութիւն՝ մի դէպքում՝ աննշան, միւս դէպքում՝ հոծ (օր.՝ Անբասիյան ուղղակի՝ կիսով չափ)[1]:

Դրանցից մէկի՝ Մուկանիյայի, համար նշենք, որ Թ դարի յոյն ժամանակագիր Թէոփանէսի մօտ՝ 686 կամ 688 թթ. բիւզանդական մի արշաւանքի նկարագրութեան հատուածում, ըստ ամենայնի՝ գրչական պարզ վրիպման արդիւնքում յայտնուել է այդ երկրի «Բուկանիա» անուանաձեւը (բնագիրն է. «Հայաստան ուղարկեց [Յուստինիանոս Բ կայսրը] Լէոնտիոս զօրավարին, որն այնտեղի սարակինոսներին ջարդ տալով, երկիրն իրեն հպատակեցրեց, ինչպէս նաեւ՝ Իբերիան, Ալբանիան, Բուկանիան եւ Մարաստանը [Մեդիան]»)[2]: Հեղինակի ենթատեքստից երեւում է, որ Մուկանիա երկրանուան տակ արդէն է դարում ընկալուել է անտիկ Բուն Աղուանքի արեւելեան, ծովափնեայ հատուածը, որը վաղ միջնադարի տարալեզու աղբիւրներում կոչուած է Բաղասական, Բալասագան, Բազգուն կամ Մասքթաց աշխարհ, իսկ հետագայ վրացական պատմական աւանդոյթին անցել է Մովական անուանատարբերակով (աշխարհացոյցեան Արցախի Մուխանք գաւառի անուան եւ հետագայ մերձերասխեան Մուղան դաշտանուան հետ զուտ պատահական նմանութիւնների պատճառով, փաստօրէն՝ դեռ չստուգաբանուած): Վերջինիս տարածքային ընդգրկումը մի փոքր տարբերւում էր Բաղասական երկրի նեղ ընդգրկումից՝ Կուրի ստորին հոսանքի ձախափնեայ շերտում (ներառեալ Ապշերոնը). արեւմուտքում Մովականն աւելի ընդարձակ էր ընկալւում եւ հասցւում էր մինչեւ Ալազանի ու Կուրի գետակիցը (հմմ. Լէոնտի Մռովելու բնագիրը. «[Թարգամոսը] Մովականին տուեց Կուրից հիւսիս [ընկած երկիրը], Փոխր Ալազանիի գետաբերանից մինչեւ ծովը»)[3]: Իսկ նեղ ընդգրկումով Բաղասականի կամ Բաղասիճք ազգագաւառի հետ ամբողջապէս համընկնում էր արաբագիր հեղինակների (ալ-Իսթահրի, ալ-Մասուդի, Իբն Հաուկալ, Իբն ալ-Ֆակիհ, ատ-Տաբարի, ան-Նասաւի եւն) յիշատակած Մուկանիյա երկիրը (նոյն Միրանածին կայսեր Μωκᾶν-ը)[4]: Ուշադրութեան առնելով Մուկանիյա/Մովական երկրամասի այս իրական տեղորոշումը եւ յիշելով լեզուաբանական այն իրողութիւնը, որ հայերէնում «Մոգ-ը փոխա-

---

[1] Տե՛ս, օր.՝ **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 106-117, 191-192, 211-212.

[2] **Թէոփանէս Խոստովանող**, Ժամանակագրություն, էջ 75:

[3] Տե՛ս **Мровели Леонти**, Жизнь Картлийских царей, с. 22; **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբիւրները, հտ. Ա, էջ 144-145, 165-166: Հմմ. **Д. Л. Мусхелишвили**, Из исторической географии Восточной Грузии (Шаки и Гогарена), Тбилиси, 1982, с. 65.

[4] Տե՛ս, օր.՝ **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 191, 211; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 294, 362, 623: Ըստ Իբն ալ-Ֆակիհի՝ «[Խազարականի/Կասպից] ծովը տարածւում է մինչեւ *Մուկան*, Տաբարիստան, Խորեզմ, Բաբ ալ-Աբվաբ» (**М. А. Гизбулаев**, Арабский источник о средневековой истории Восточного Кавказа: *Китаб фл-булдан*, с. 134). Հմմ. նաեւ **М. А. Гизбулаев**, Сведения о Дагестане в арабском историческом сочинении *Тарих ар-русул вал-мулук* ат-Табари, – "Вестник" СПбГУ, Востоковедение и африканистика, 2019, т. 11, вып. 4, с. 519 («Կաբխի լեռների Մուկանիյայի բնակիչներին» շնորհած խաղաղութեան պայմանագիրը):

ռութիւն է պարթեւերէնից, իսկ մով-ը՝ միջին պարսկերէնից»[1], թերեւս, կարելի է առաւել հաւանական համարել Մովական անուան մէջ մոգ/մով արմատի («զրադաշտական դենի կրօնաւոր, կախարդ, աստղագէտ»[2]) վերականգնումը եւ այդ տեղանուան վերջնական համադրումը է դարի «Աշխարհացոյց»-ի յիշատակած Բագանք ազգագաւառի հետ՝ Ասիական Սարմատիայի ծայր հարաւ-արեւելեան անկիւնում, այսինքն՝ մինչեւ Կուրի գետաբերան, Ապշերոն եւ Բաքու (վերջինիս անունը, հնարաւոր է, առաջացել է հէնց Բագաւիճ-ից): Իսկ միւս հայ հեղինակների մօտ Բագանքին համապատասխանում է Բաղասիճ ազգագաւառը կամ Բաղասականը՝ նեղ ընդգրկումով (ինչպէս տեսանք նախորդ գլուխներում):

Բաժին 2

ՓԱՒՒՍՈՍԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՋՄԱՒՈՐՈՒՄԸ ԵՒ ՆՐԱ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԽՆԴԻՐԸ

*Ժ դ. կէսին Բիւզանդիան, յանձին Կոստանդին Ծիրանածին կայսեր, արդէն լաւ գիտէր նաեւ Խաչէնի իշխանութեան որոշակի անկախ կարգավիճակի մասին (թերեւս, այդպէս՝ նաեւ գոնէ Փառիսոսի): «Արարողութիւնների մասին» երկի նոյն գլխում կայսրը Հայաստանին վերաբերող առանձին պարբերութիւնը դնում է Արաբական խալիփայութիւնից յետոյ եւ Իբերիայի, Ալանիայի, Աբազգիայի եւ Ալբանիայի պարբերութիւններից առաջ: Իսկ նրանում «Մեծ Հայքի» ու Վասպուրականի («Ասպուրականի, այն է՝ Վասպարականի») «արխոնտների արխոնտներին» (հայկական աղբիւրների ընկալմամբ՝ թագաւորներին) ուղարկուող նամակներից յետոյ հեղինակը գրում է երկրի կիսանկախ միաւորների տէրերին (ընդամենը՝ 8 կամ 10 «արխոնտի») առանձին ուղարկուող նամակների մասին: Այս շարքում Կոգովիտից (Κοκοβίτ), Տարօնից (Ταρώ), Մոկսից (Μῶεξ), Անձեւացիքից (Ἀύζαν < *Ἄνζαυ), Սիւնիքից (Συνῆς) ու Վայոց ձորից (Βαϊτζώρ) յետոյ նա հաղորդում է հետեւեալ վերջին երկու անունները. «Խաչէնի [Χατζιένης] իշխանին՝ Հայաստան, Սեւորդեաց, այսինքն՝ Սեւ որդիներ [Σερβοτιῶν] կոչուող երեք իշխաններին»[3]:*

Ի դէպ, այս հատուածում աղբիւրը չի նշում թուարկուած «արխոնտների» նկատմամբ «Մեծ Հայքի» կենտրոնական իշխանութեան որոշակի գերակայութեան մասին, սակայն նմանատիպ նշում կայ Իբերիայի պարբերութեան մէջ («Իբերիայի կուրապաղատին՝ երկու սոլիդանոց խրիսովուլլով [նամակ]... Կուրապա-

---

[1] **Լ. Ծովհաննիսեան**, Փաւստոս Բուզանդի Պատմութեան մէջ վկայուած իրանական ծագում ունեցող մի քանի բառերի շուրջ, – ՀԱ, ՃԻԹ տարի, 2015, սն. 32; **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հտ. Գ, էջ 337 («*Մոգպետ* գալիս է պհլ. moγpet /գրուած magupat/ ձեւից, ... այս բառը Սասանեանների ժամանակ դարձաւ movpet կամ maupet...»):

[2] Անդ, էջ 337:

[3] **Կոստանդին Ծիրանածին**, Բիւզանդական արքունիքի արարողութիւնների մասին, էջ 151, տե՛ս նաեւ էջ 310-312, ծն. 78-89: Հմմ. **E. Honigmann**, Die Ostgrenze des byzantinischen Reiches, Bruxelles, 1961, S. 147-148; **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия, с. 87; **C. Zuckerman**, À propos du Livre des cérémonies, p. 589.

ղատին են ենթարկում չորս այլ արխոնտներ, որոնց դիմում են հետեւեալ կերպ. Վերիասախի իշխանին, Իբերիա, Կարնատայսի իշխանին, Իբերիա, Կուէլի իշխանին, Իբերիա, Ացարայի իշխանին, Իբերիա: «Քրիստոսասէր տէրերի հրամանքը այսինչին»)[1], եւ դա լիովին բաւարար է Թուում՝ Հայաստանի վրայ եւս նոյնը տարածելու համար: Թերեւս, Հայոց հատուածում նմանատիպ արտայայտութիւնը բաց է թողնուել գուտ հեղինակի շարադրանքի բովում, եւ կոնկրետ պատճառը եղել է՝ հէնց այդ տեղում «Ասպուրականի արխոնտ»-ին իշխանաց իշխանի պատիւ տալու մասին «լրացուցիչ» նախադասութիւն տեղաւորելու անհրաժեշտութիւնը:

Կոստանդին Միրանածնին ծանօթ Սեւորդիների առիթով օգտակար է մէջբերել Հր. Բարթիկեանի հայերէն թարգմանութեան ծանօթագրումը (մեր լրացումներով)[2]. «Բնագրում τῶν Σερβοτιῶν (ճիշտը՝ Σεβορτιῶν՝ ուղղումը Մարկուարտի) τῶν λεγομένων Μαύρα παιδία: Միրանածինը տալիս է բառի ճշգրիտ թարգմանութիւնը: Ինչպէս ցոյց է տալիս Յովհաննէս Դրասխանակերտցին, Բուղան 852-855 թթ. Հայաստանում գործած ասպատակութիւնների ժամանակ գրաւում է եւ Գարդմանը, դերի վերցնում նրա իշխանին «եւ անտի եւս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում եւ կոն անուանէին զնա, որ ի նախնւոյ իւրմէ Սեւկոյ՝ Սեւորդիք ազգին անուանէին» (Դրասխանակերտցի, էջ 127, հմմ. Ասողիկ, էջ 107: Վերջինս Հաղբատն ու Սանահինը եւս դնում է Սեւորդեաց իշխանութեան կազմում, էջ 181)[3]: Հասկանալի է, Սեւորդեաց իշխանութեան տակ ենթադրւում է Ուտիքի իշխանութիւնը: Սեւորդիներին յիշատակում է նաեւ Գրիգոր Մագիստրոսը (տե՛ս Թղթեր, էջ 133)[4]: Սեւորդիներին յիշատակում է արաբ պատմիչ Եակուտ ալ-Համաւին Սիավարդ ձեւով (Հ. Թ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները [Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, Եր., 1965], էջ 208), իսկ Մասուդին նրանց երկիրը՝ Սիյավուրդիյա ձեւով (հմմ. Минорский, История, стр. 214), որոնց նա համարում է «հայոց մի ճիւղը»: Նրանք քաջ են եւ հզօր: Աչքի են ընկնում տապարների արտադրութեամբ, որոնք «սիյավուրդի» են կոչւում: Կոստանդին Միրանածինն իր «Կայսրութեան կառավարման մասին» աշխատութեան 38-րդ գլխում գրում է, որ թուրքերի (իմա՛ հունգարացիների) հին անունը Սաբարտի ասֆալի (Σαβάρτοι ἀσφαλοι) էր, «Սպիտակ սաբարտներ» (VIII-IX դդ.): Պեչենեգների ճնշման տակ այս հունգարացիների մի մասը, ըստ Միրանածնի՝ «բնակուեց Պարսից մի վայրում»: Ուսումնասիրողները գտնում են, որ նրանք քրիստոնէութիւն ընդունեցին, հայացան եւ նրանց յետնորդներն են «Սեւորդիքը»: Թէպէտ Սեւորդիների

---

[1] Կոստանդին Միրանածին, Բիւզանդական արքունիքի արարողութիւնների մասին, էջ 151:

[2] Տե՛ս անդ, էջ 311-312, ծն. 89: Ընդգծումները թարգմանիչ Հր. Բարթիկեանինն են, ով «մանրամասն գրականութիւնը» տեսնելու համար յղում է Գ. Մորաւչիկի, Ց. Մարկուարտի, Ա. Գրեգուարի, Վ. Մինորսկու եւ Ա. Արտամոնովի աշխատանքները:

[3] Հմմ. Հովհ. Դրասխանակերտցի, էջ 23; Yovhannēs Drasxanakertc'i, chap. XXVI, p. 190; Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 436 (ՄՀ, գլ. ԻԶ):

[4] Հմմ. Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Բնագիրն առաջաբանով եւ ծանօթութիւններով... լոյս ընծայեց՝ Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, 1890, էջ 133; Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Աշխատութեամբ՝ Գ. Մուրադեանի, – ՄՀ, հտ. ԺԶ, ԺԱ դար, Եր., 2012, էջ 318:

մասին կայ բաւական ստուար գրականութիւն, այնուամենայնիւ այդ ենթադրութիւնը մնում է սոսկ ենթադրութիւն, եւ հարցը դեռեւս լուծուած չէ»:

Արդ՝ Կոստանդին Միրանածնի «հայաստանեան» ցուցակն ուշադիր համեմատելով հայկական աղբիւրներից յայտնի նիւթի հետ՝ կարելի է, իբրեւ ամենից հաւանական վարկած, մտածել, որ կայսեր կամ նրա երկի մի ընդօրինակողի մօտ ինչ-որ շփոթութիւն է սպրդել, իսկ իրականում «Սեւ որդիներ» – «Սեւորդիք» են կոչուել կայսրերի «Հայաստանեան թղթակիցներից» ոչ թէ վերջին երեք իշխանութիւնները, այլ այդ երեքից առաւելագոյնը երկուսը, այն է՝ Թ-Ժ դարերում հայ հեղինակներին լաւ յայտնի Տաւուշ – Ջորագետը (իրօք՝ Սեւորդեաց կամ նաեւ՝ Ուտեաց գաւառ կոչուած) եւ Գարդման – Փառիսոսը: Եթէ այս վարկածն ընդունելի համարուէր, ապա Միրանածնի «երրորդ թղթակցի» տակ հնարաւոր կը լինէր ենթադրել, անշուշտ, Գորոգուի իշխանին, որն այդ տարիների իր կարգավիճակով ոչնչով չէր զիջում Խաչէնին, Փառիսոսին եւ Տաւուշ – Սեւորդիքին[1]: Ի դէպ, Կ. Յուկերմանի փորձը՝ Սեւորդիքի «արխոնտներին» տեսնելու է՛ւ կայսեր հայաստանեան թղթակիցներից, է՛ւ էթնիկապէս ու տարածքով էլ Հայաստանից դուրս[2], հակասում է թէ՛ Միրանածնի բնագրին, թէ՛ աղբիւրագիտական մնացեալ նիւթին (բերուած՝ նաեւ իր յօդուածում), թէ՛ գոնէ տուեալ դարաշրջանի պատմական իրողութիւններին, ուստի պիտի համարուի առնուազն շտապողական: Իսկ τῶν Σερβοτιῶν-ի կողքին միւս 7 դէպքերի պէս «Հայաստան» բառը չնշելու պատճառն իրականում եղել է ընդամենը յաջորդող «[այսինքն՝] Սեւ որդիներ կոչուող» լրացումը շարադրանքի բովում զուտ տեխնիկապէս տեղաւորելու թեթեւակի բարդութիւնը:

Ինչպէս տեսանք վերեւում, Իբն Հաուկալի մօտ պահպանուել է 955 թուականին Հայաստանի եւ հարեւան երկրների պետական կազմաւորումների՝ դեյլեմցի Մուսաֆիրեան – Սալարեան ամիրայ Մարզուբանին (իհարկէ, յանձին նրա՝ Արաբական խալիփայութեանը) վճարած հարկերի ցուցակը: Դրանում խառը հերթականութեամբ՝ Շարուան, Շաքքի (Բուն Աղուանք), Ահր – Վարազական (Ատրպատականի հիւսիսում), «Ներքին Արմինիյա» (Բագրատուհեաց Մեծ Հայք), Վասպուրական («ալ-Դայրանի»), Վայոց ձոր («ալ-Վայզուր») եւ մասնագէտների համար ոչ լրիւ ընկալելի «Ջիդան»[3] երկրների կողքին յիշւում են նաեւ Հայոց Արեւելից կողմանց երեք ապագայ թագաւորութիւնների «տէր»-երը: Դրանք էին.

ա) «ար-Ռուբի տէր» (al-Rb'-ը, մեր կարծիքով, ըստ ամենայնի՝ Սեւորդիք – Փառիսոսի պարզապէս աղճատուած յիշատակումն է[4]) «Սանհարիբը, յայտնի որ-

---

[1] Ստորեւ կը տեսնենք նաեւ, որ Գորոգուի իշխանութիւնը նշւում է Կոստանդին Միրանածնի ցուցակի հետ յարակարծ (պարադոքսալ) ձեւով զուգորդուող Կարծեցեալ Շապուհ Բագրատունու ցուցակում:

[2] C. Zuckerman, À propos du Livre des cérémonies, p. 589-592 (տե՛ւ յատկապէս էջ 591):

[3] Մեր կարծիքով՝ «Աբու-լ-Կասիմ ալ-Ջիդանի»-ն համադրելի է Տփղիսի մահմեդական ամիրայի հետ, որը ի պաշտօնէ դիտւում էր որպէս ողջ Ջուրզան-վիրքի կառավարիչը:

[4] Հմմ. նաեւ Ա. Տէր-Ղեւոնդեանի թարգմանութեան մէջ (Արաբ մատենագիրներ, Գ... /Օտար աղբյուրները..., 16/, էջ 641, ծն. II): Կ. Յուկերմանը եւս (À propos du Livre des cérémonies, p. 580) բաց է թողնում նախորդ ուսումնասիրողների կողմից այս տեղանունան

պէս Իբն Սաւադա» (այսինքն՝ Սեւադա-Իշխանանունի որդի Յովհաննէս-Սենեքերիմը)՝ 300 հազ. դիրհեմ հարկաչափով;

բ) «ալ-Ջուրզի տէր» (անկասկած՝ Գորոզուի աղճատուած յիշատակումն է) «Վաշական Իբն Մուսան» (Մովսէսի որդի Վաչագանը)՝ 200 հազ. դիրհեմով;

գ) «Խաջինի տէր Սանհարիբը» (առանց հօր անուան)՝ 150 հազ. դիրհեմ հարկով[1]. պարզ է, որ սա Խաչէնի Սենեքերիմ իշխանն է, ում գիտէր նաեւ Անանիա Մոկացին («իշխանաց իշխան» [Յովհաննէս-]Սենեքերիմի եւ «Գորոզուաց իշխան» Վաչագանի կողքին)[2]:

Իբն Հաուկալն այս երեքին դեռ «թագաւոր» (mālik) չի կոչում, այլ լոկ՝ «տէր» (ṣāḥib): Թէպէտ նկատենք, որ արաբ աշխարհագէտը նոյն կերպ է վարուում նաեւ Ներքին Արմինիայի, Վասպուրականի եւ Շաքիի դէպքերում (բնագրում «թագաւոր», աւելի ճիշտ՝ «տէր եւ թագաւոր» է կոչուած միայն ցուցակի սկզբում յիշատակուած մէկ մլն դիրհեմ հարկաչափով Շիրուան – «Շարուան-շահ»-ի տիրակալ «Մուհամմադ իբն Ահմադ ալ-Ազդի» Մազեադեանը), այնինչ դրանցում թագաւորական իշխանութեան գոյութիւնը 950-ական թուերին մասնագէտների մօտ որեւէ կասկած չի յարուցել:

Ի դէպ, ար-Ռուբ կամ ար-Ռաբ (al-Rb') եւ Խաչէն (Khajin) տեղանուններն իրար կողքի մէկ անգամ էլ յիշատակում է ժ դարի արաբ մատենագիր (ծագումով՝ Խորասանից) Աբու Դուլաֆը[3]: Նրա բնագիրն է (թարգմանուած ռուսերէնից). «Այնտեղից [«Շիրւանին պատկանող» Բակոյա = Բաքու վայրից – Ա. Յ.] ես գնացի հայերի երկրով, մինչեւ հասայ Թիֆլիս... Այնտեղից՝ Արդաբիլ: Ես անցայ ալ-Վայզուրի [=Վայոց ձոր], Կաբանի [=Կապան – Բաղք], Խաջինի [=Խաչէն], ար-Ռուբի [var. al-Ry'], Խանդանի [?] եւ ալ-Բազզայնի լեռներով»[4]: Այս երկրների հերթակա-

---

անիրական համադրումները, սակայն ինքն էլ՝ զուտ իբրեւ վարկած (կարծում ենք՝ քիչ հաւանական)՝ առաջարկում է Սեւադայի որդի Սենեքերիմի տիրոյթի անուան al-R.y' (al-Ray') տարբերակի մէջ դիտարկել Arrān / al-Rān անուանաձեւի (=Ալբանիա, Աղուանք) *al-Rangh նախնական [?] ձեւից ծագած ընթերցում:

[1] **V. Minorsky**, Caucasica IV: II. The Caucasian Vassals of Marzubān, p. 519; **Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան**, Հայաստանի բնաճարկը, էջ 58-59; Արաբ մատենագիրներ, Գ... (Օտար աղբյուրները..., 16), էջ 641-642: Անունների եւ եզրոյթների արաբատառ ձեւերն ստուգելու պատեհութեան համար (ըստ՝ **Ibn Ḥauqal**, Kitāb al-masālik wa al-mamālik, Edit. **J. Kramers**, Leiden, 1939 տպագրի) երախտապարտ եմ արաբագէտ Արամ Վարդանեանին:

[2] **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի**՝ Ճաղագս ապստամբութեան..., էջ 144: Հմմ. նաեւ **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 83-84; **A. N. Ter-Łevondyan**, Notes sur le Šakē-Kambečan, p. 326-327, n. 32; **C. Zuckerman**, À propos du Livre des cérémonies, p. 571; **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 53-55; **Ա. Ցակոբեան**, Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնները, սն. 222-235:

[3] Նրա մասին մասնաւորապէս տե՛ս **Ա. Ն. Տեր-Ղեւոնդյան**, 10-րդ դարի արաբ մատենագիրը հայկական սովորոյթների եւ երաժշտության մասին, – ԼՀԳ, 1965, հմր 10, էջ 75-78:

[4] Տե՛ս **Abū-Dulaf Mis'ar Ibn Muhalhil's** Travels in Iran (circa A. D. 950). Arabic text with an English translation and commentary by **V. Minorsky**, Cairo, 1955, p. 35; Вторая записка **Абу Дулафа**. Издание текста, пер., введение и комментарии **П. Г. Булгакова и А. Б. Халидова**, Москва, 1960, с. 36 (թ. 184բ): Այլ աղբիւրներում չհանդիպող «Խանդան» տեղանու-

նութեան մասին թարգմանիչներն իրաւացիօրէն ծանօթագրել են. «Աբու Դուլաֆն անկանոն է թուարկում զանազան աշխարհագրական կէտեր, որոնք իբրեւ թէ ընկած են Թիֆլիս Արդաբիլ ուղու վրայ»[1]: Բայց մեզ հետաքրքրող ենթատեքստում այդ անկանոնութիւնը, ըստ էութեան, չի խանգարում՝ նշուած երկրանունները համադրելու հեղինակին ծանօթ դարձած Վայոց ձոր, Կապան – Բաղք, Խաչին – Խաչէն եւ նրա կողքին, ըստ ամենայնի՝ ար-Ռուբ – Փառիսոս երկրամասերի հետ:

Փառիսոսի թագաւորութեան ստեղծման (Յովհաննէս-Սենեքերիմի թագադրման) մասին պահպանուել է ՊԱ-ի նախավերջին գլխի հաղորդումը. «Ջերէց որդին Իշխանաննոյ՝ զՅովհաննէս, որ եւ Սենեքերիմ [a Սինէքարիմ] կոչեցաւ, ընտրեաց աջ Բարձրելոյն՝ կոչելով ի թագաւորութիւն. զվաղնջուց խափանեալ թագաւորութիւնն Տէր ամենակալ ի ձեռն սորա [bcelv նորա] նորոգեաց. զոր թագաւորն Պարսից մեծամեծ զարդուք զարդարեաց զնա [a չիf զարդարեաց զնա], տայ նմա եւ զթագ հաւր իւրոյ եւ զնորին երիվարն. ի նոյն ամի եւ որ Յունացն էր մագիստրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանազան եւ ծիրանիս թագաւորական առաքէր ի պատիւ եւ ի գովեստ աստուածայաջող առն [bcelv առնն] այնորիկ. եւ ի ձեռն հայրապետական աջոյն առնոյր զաւծումն թագաւորական ի փառս Քրիստոսի»[2]:

Այս թագաւորութեան հաստատումը (ըստ ամենայնի՝ Փառիսոս, ներկայիս՝ Ղալաքենդ, կենտրոնով[3]), հնարաւոր է թուագրել Մովսէս Դասխուրանցու երկի շարադրմանը նախորդած ժամանակահատուածով, այսինքն՝ ըստ առկայ թուերի՝ մինչեւ 976 կամ 982 թուականը: Ն. Ադոնցի կարծիքով՝ Կայսրութեան անունից Յովհաննէս-Սենեքերիմին թագ ուղարկողը Տայքի յայտնի իշխան Դաւիթ Կուրապաղատն է եղել (մահ. 1000/1001 թ.[4]): Նրա հաշուարկով՝ այդ իրադարձութիւնը վերագրելի է 967-978 թթ. միջակայքին, երբ Դաւիթը Բիւզանդիայից դեռ չէր ստացել կուրապաղատի տիտղոս ու մագիստրոսի կոչում էր կրում (չնշելով աղբիւրը)[5]: Ըստ վրաց մատենագիր Սումբատ Դաւիթիս-Ձէի «Բագրատիոնների պատմութիւն» երկի ռուսերէն թարգմանչի ծանօթագրութեան՝ «973 թուին նա [Դաւիթը] յիշատակւում է իբրեւ մագիստրոս, իսկ 977 թուականին՝ կուրապաղատ»[6]: Այս տարբերակով արդէն լրիւ հաստատւում է Ն. Ադոնցի կարծիքը, որ հէնց Դաւիթ Տայե-

---

ընը, գուցէ, կարելի է համարել (գոնէ՝ իբրեւ վարկած) Գորոզուի հայկական իշխանութեան՝ «Հաբանդ» հնարաւոր անուանատարբերակի աղճատման արդիւնք:

[1] Вторая записка **Абӯ Дулафа**, с. 77, прим. 72.

[2] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 341:

[3] Հմմ. **S. Karapétian**, Parissos, capitale du royaume septentrional, – Les douze capitales d'Arménie, Paris – Marseille, 2010, p. 266-271.

[4] Տե՛ս, մասնաւորապէս՝ Պատմութիւն **Արիստակիսի Լաստիվերտցւոյ**, Աշխատասիրութեամբ՝ **Կ. Ն. Իւզբաշեանի**, Եր., 1963, էջ 36-38; **Сумбат Давитис-дзе**, История и повествование о Багратионах, Пер., введение и примечания **М. Д. Лордкипанидзе**, Тбилиси, 1979, с. 37. Հմմ. Повествование **вардапета Аристакэса Ластивертци**. Пер. с древнеармянского, вступительная статья, комментарий и приложения **К. Н. Юзбашяна**. Москва, 1968, с. 143, прим. 13.

[5] **Ն. Ադոնց**, Բագրատունեաց փառքը, էջ 138-140; **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 213-214.

[6] **Сумбат Давитис-дзе**, История и повествование о Багратионах, с. 55, прим. 126.

ցին է եղել կայսրութեան անունից Յովհաննէս-Սենեքերիմին «թագ զարմանազան եւ ծիրանիս թագաւորական» ուղարկողը (եւ ուրեմն՝ 973-977 թթ. միջակայքում):

Կարծեցեալ Շապուհ Բագրատունու «Պատմութիւնն» աւելի ուշ՝ ԺԱ դ. սկզբներին վերարտադրած ու լրացրած հեղինակի մօտ (պայմանականօրէն կոչուած՝ Անանուն Ջրուցագիր) առկայ է երկու հաւասարազօր հասցէատէրերի ակնարկող մի ուշագրաւ արտայայտութիւն, որով Հայոց արքան դիմում է Հերի մահմեդական ամիրային. «պարտ է ձեզ ձայն ի խորասան ընկենուլ եւ առ իս»[1]: Մեր կարծիքով՝ այդ արտայայտութիւնը մի հետաքրքիր զուգորդութիւն է յուշում Փառիսոսի նորընծայ գահակալի թագադրումը հաստատելու իրողութեան հետ: Ժ դ. երկրորդ կէսին կենտրոնական Իրանում հզօրացած Բուվեյհեան/Բուիդեան իշխանապետութիւնն ստանձնել էր Խալիփայութեան փաստացի կառավարումը (945-ին Բաղդադին եւս տիրելուց յետոյ), անգամ որոշակի պայմանաւորուածութիւն կնքել Բիւզանդիայի հետ (981-ին) եւ լուրջ դերակատարում ձեռք բերել Այսրկովկասում[2]: Ըստ ամենայնի՝ հէնց Բուվեյհեան տիրակալն էր այն «Պարսից թագաւորը», ով, Մովսէս Դասխուրանցու խօսքերով. «...մեծամեծ զարդուք զարդարեաց զնա [Յովհաննէս Սենեքերիմին – Ա. Յ.], տայ նմա եւ զթագ հաւր իւրոյ եւ զնորին երիվարն»[3]: Ըստ Ստեփաննոս Օրբէլեանի՝ «խորասան»-ի տիրակալների (այսինքն՝ հաւանաբար, նոյն Բուվեյհեանների) հետ էր կապուած նաեւ Սիւնիքի (Բաղաց) նորընծայ արքայի թագադրումը («...յարեալ ի մեծ աթապէկն [var. Աթաբակն], որ էր ի Դավրէժ [var. Թավրէժ] յԱտրպատական աշխարհի, նաեւ յՌ[ա]նայ [var. յՌայ] ամիրայն, որ իշխէր եւ դրանն Դարբանդոյ [var. Դարբանդու], եւս եւ Աղուանից տերանցն, որք վասն առաւել սիրոյ ծանուցանեն մեծի սուլտանին խորասանու, եւ հրաման առեալ ի նմանէ՝ թագ կապեն գեղեցկահասակ եւ վայելչագիտակ առնն Հայկազնոյ Սմբատայ՝ Սիւնեաց տեառն»)[4]: Սիւնիքում Սմբատ Ա-ի թագադրուելու այս պատմական իրադարձութիւնը թուագրւում է հիմնականում 970 կամ 978 թուականներով (թէեւ կան նաեւ այլ թուագրումներ)[5]:

Տեղին նշենք, որ Փառիսոսի իշխանի թագադրման դասխուրանցիական նկարագրութեան մէջ կայ մի խիստ նշանակալի հանգամանք: Աջափնեայ Աղուանքի էթնիկապէս հայկական տարածքում ծնուած ու նախ եւ առաջ այդ տարածաշր-

---

[1] **Շապուհ Բագրատունւոյ** Պատմութիւն, էջ 65 (§ 83): Հմմ. **Անանուն Ջրուցագիր (Կարծեցեալ Շապուհ Բագրատունի)**, Պատմութիւն, Թարգմ., առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ **Վ. Առաքելեանի**, Խմբ.՝ **Ա. Ցակոբեան**, Եր., 2011, էջ 120 եւ 178-179, ծն. 210 (խմբագրի):

[2] Տե՛ս, օր.՝ **H. Busse**, Iran under the Buyids, In: Cambridge History of Iran, Vol. 4, Cambridge, 1975, p. 250-305; **Վ. Բայբուրդյան**, Իրանի պատմություն, Եր., 2005, էջ 202-205:

[3] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 341:

[4] **Օրբ.**, գլ. ՃԴ, էջ 219; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ՃԵ, էջ 300:

[5] **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը (պատմա-աշխարհագրական առումով), Եր., 1966, էջ 58; ՀԺՊ, հտ. III, էջ 117-119, 973; **Բ. Հարությունյան**, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, – ԲԵՀ, 1969, հ՝ 1, էջ 145-153; **Գ. Մ. Գրիգորյան, Ս. Գ. Հախվերդյան**, Սյունիքի պատմություն (հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը), Եր., 2001, էջ 79:

ջանի հայ աւատական (աշխարհիկ եւ եկեղեցական) վերնախաւի՝ Ժ դարում մեծապէս կենտրոնախոյս (Անիի Բագրատունիների եւ Հայոց կաթողիկոսութեան հանդէպ) ձգտումներն ու շահերն արտայայտող հայ պատմիչը նախորդ գլխում Համամ Բարեպաշտի թագադրումը (ձախափնեայ Շաքիում, այսինքն՝ առաւելապէս դեռ բուն-աղուանական էթնիկ միջավայրում) ներկայացրել էր խիստ բնութագրական, այսպէս ասած՝ «աղուանամէտ» եզրութաբանութեամբ. «...որ եւ Աղուանից եղեւ թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից Համամ նորոգէ, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն. այսք ի միում ժամանակի գործեցան»: Իսկ այստեղ՝ երկի վերջերգը պսակող եւ այդ իմաստով իր «գլխաւոր հերոս» Փառիսոսի տիրակալի թագաւորանալու շքեղապաճոյճ նկարագրութեան մէջ, Մովսէս Դասխուրանցին ամբողջապէս ձեռնպահ է մնում նմանատիպ եզրութաբանութեան եւ ուղղակի՝ Աղուանք անուան կիրառումից: Ըստ ամենայնի՝ դրա պատճառը պէտք է համարել ոչ միայն պետական միաւորումների միջեւ, անշուշտ, պաշտօնապէս համաձայնեցուող ու «միջազգայնօրէն» պարտադիր՝ կրկնութիւն չհանդուրժող անուանակարգը (նոմենկլատուրան) խախտելու վտանգը, այլեւ Կուրի աջափնեակի հայ հասարակութեան մէջ էթնոպաշտպանիչ միտումների զուգահեռ գործառութիւնը: Այստեղ դա արտայայտուած է նշուած «աղուանամէտ» եզրութաբանութիւնը մինչեւ ինչ-ինչ էթնովտանգաւոր ու խրտնեցնող սահման չչարաշահելու հասարակական պարտադրանքի մէջ (այդ թւում՝ վերնախաւի գոնէ մի էական մասի կողմից), թէպէտ ինքը՝ Դասխուրանցի պատմագիրը, կարող է դիտուել իբրեւ հէնց «չարաշահողների» շարքերում ամենից աւելի առաջ գնացած անհատ:

Մանրամասնելով՝ նշենք, որ մեր նախորդ աշխատանքներում հանգամանալից խօսուել է Աղուանից աշխարհի աջափնեայ շրջանների հայ բնակչութեան մօտ Զ-է դդ. առաջացած՝ այսպէս կոչուած «աղուանական աշխարհայեացքի»՝ զուգահեռ զարգացող երեք կողմերից վերջինի («աղուանական» իրողութիւնների հակադրումը «հայկական» իրողութիւններին՝ նկատի ունենալով կենտրոնական Հայաստանը) էթնովտանգաւոր միտումների մասին՝ ընդհուպ մինչեւ Ժ դարում՝ աւատական կենտրոնախոյս ուժերի հզօրացման պահին, հայ էթնոսից էթնոմասնատման (էթնոսեպարացիայի) եղանակով «աղուան» կամ «արեւելցի» ինքնանուամբ (էթնոնիմով) դուստր էթնոսի ձեւաւորման իրական հեռանկարը (այդ միտումները մարեցին ԺԱ դարի ընթացքում եւ՛ արտաքին, եւ՛ ներքին գործօնների ազդեցութեան տակ)[1]: Իսկ այստեղ նշենք, որ «աղուանական աշխարհայեացքի» երկրորդ կողմը,

---

[1] Տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 268-272, 274-276; **նոյնի՝** К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании, с. 45-46; **А. А. Акопян, П. М. Мурадян, К. Н. Юзбашян**, К изучению истории Кавказской Албании (по поводу книги Ф. Мамедовой "Политическая история и историческая география Кавказской Албании"), – ИФЖ, 1987, № 3, с. 169-175; **A. Akopyan, A. Galstyan**, Concerning the study of ethnic processes in the Caucasian Albania, p. 5-12; **Հ. Գալստյան**, Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ..., էջ 147-157:

այսինքն՝ որոշակի քամահրական (պեյորատիւ) վերաբերմունքի դրսեւորումը Կուրի ձախափնեակի բուն-աղուանական բնակչութեան նկատմամբ՝ իբրեւ, ասես՝ «ո՛չ- [կամ «պակաս-»] աղուաններին», ամենայն հաւանականութեամբ, հէնց այս շրջանում նպաստել է, որպէսզի քրիստոնեական հաւատը եւ առանձին ցեղային ինքնագիտակցութիւնը երկար դարեր պահպանած բուն-աղուանական մետաէթնիկ ընդհանրութեան մէջ աշխատեն էթնոպաշտպանիչ մեխանիզմները եւ ընթանայ էթնոհամախմբման ինտենսիւ գործընթաց, որի արդիւնքում էլ ձախափնեակում վերջապէս ձեւաւորուեց միասնական ժողովուրդ՝ «ուդիներ» կամ «ուտէացիներ» ինքնանուանմամբ (էնդոէթնոնիմով): Այդ նոր էթնոսի առկայութիւնն առաջինն արձանագրել էր Յովհաննէս Դրասխանակերտցին՝ գրելով. «...քանզի դրացիք մեր եւ ազգք, որ շուրջ զմեաւք են՝ Յունականք եւ Եգերացիք եւ Գուգարացիք եւ Ուտէացիք՝ հիւսիսական ազգք՝ բնակեալք առ ոտամբն Կովկասու... կորուսանել եւ յատակել ջանացան առ ստորոտով իւրաքանչիւր աշխարհաց իւրեանց»[1]:

Ի դէպ, նշենք նաեւ, որ ուդիների համախմբմանը զուգահեռ էթնոհամախմբման գործընթաց է տեղի ունեցել նաեւ բուն-աղուանական՝ մահմեդականութիւն ընդունած ցեղերի շրջանում, որի արդիւնքում նոյն՝ Արաբական խալիփայութեան թուլացման ժամանակաշրջանում ձեւաւորուեց «լակզ» կամ «լեզգի» ինքնանուամբ էթնոսի նոր, աւելի ընդարձակ ընդգրկումը՝ Հարաւային Դաղստանում եւ Արեւելեան Այսրկովկասի ողջ հիւսիսում, Կովկասեան լեռնաշղթայի երկու լանջերին (անտիկից վաղ միջնադար «լեգ», «լեկ», «ղեկ» անունով՝ աղուանական 26 ցեղերից մէկը բնակւում էր միայն Սամուր գետի զոյգ ափերին, շատ աւելի փոքր ընդգրկումով): Ճիշտ է, այդ էթնոսի կողքին իրենց լեզուները (լեզգիական խմբին պատկանող) եւ ինքնութիւնը պահպանեցին եւս մի քանի աղուանական ցեղային ոչ մեծ մահմեդական էթնոսներ՝ թաբասարանցիները, ռութուլները, ծախուրները, ագուլները, կռիզները, բուդուղները, խինալուղցիները եւ խապուտցիները[2]:

Ազգագրական տեսութեան եւ մեթոդաբանութեան լոյսի ներքոյ[3] լիովին կարելի է հասկանալ, որ ձախափնեակի քրիստոնեայ բուն-աղուանական բնակչութեան միտումները, որը պահպանել էր իր թէկուզ եւ արդէն ոչ գրաւոր լեզուն (կամ լեզուները) եւ էթնո-մշակութային ինքնութիւնը (թէկուզ եւ միայն էթնոպոտեստար հաւաքականութեան շրջանակում), իր սեփական՝ Համամ Բագրատունու կամ այսպէս կոչուած «Երկրորդ Աղուանից» թագաւորութեան ստեղծման դարա-

---

[1] **Դրասխ.**, էջ 256; **Հովհ. Դրասխանակերտցի**, էջ 177; **Yovhannēs Drasxanakertc'i**, chap. LII, p. 295. Նկատենք, որ *Ուտէացիք*-ին նախորդող՝ *Գուգարացիք* անուամբ հայ պատմիչը կոչում էր կախէթցիներին, որոնք հարեւան էին ծաւարներին ու վրացիներին:

[2] Այս ամենի մասին մանրամասն տե՛ս **А. Акопян**, К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании, с. 43-44.

[3] Ամփոփ ձեւով տե՛ս, օր.՝ **Н. Н. Чебоксаров**, Проблемы типологии этнических общностей в трудах советских ученых, – СЭ, 1967, № 4, с. 94-110; **В. И. Козлов**, Проблема этнического самосознания и ее место в теории этноса, – СЭ, 1974, № 2, с. 79-92; **Ю. В. Бромлей**, Очерки теории этноса, Москва, 1983.

շրջանում (թէկուզ եւ Տարօնի հայ Բագրատունիների արքայատոհմով) ամենեւին էլ չի ոգեւորել աջափնեակի հայութեան հետ (ընդ որում՝ հէնց նրա էթնո-մշակութային հիմքի վրայ) իբրեւ «աղուան» կամ «արեւելցի» միաձուլուելու հեռանկարը: Հաւանաբար, իր որոշակի դերն է կատարել նաեւ այսպէս ասած «ներաղուանական» աւատական բնոյթի պայքարը, օր.՝ այն կարեւոր հարցի շուրջ, թէ ո՞վ պիտի վարէր «իշխան Աղուանից»-ի պաշտօնը՝ ձախափնեակի Բագրատունի իշխանատոհմի՞, թէ՞ աջափնեակի Առանշահիկների ներկայացուցիչը: Բայց դրան զուգահեռ, թւում է, թէ հնարաւոր է տեսնել, որ 894 թ. Շաքի – Հերէթի տարածքում թագաւորութեան հռչակումը Համամ Բարեպաշտի գլխաւորութեամբ, ով դրանից առաջ հէնց «իշխան Աղուանից»-ն էր, նշանաւորում էր մի կողմից՝ իրենց սեփական ճակատագրով ապրելու՝ ձախափնեայ քրիստոնեայ բուն աղուանների կամ արդէն ուդիների ձգտումների իրականացումը (թէպէտ եւ ինքը՝ հայ Բագրատունիների տոհմից սերող Համամ թագաւոր-մատենագիրը, ըստ ամենայնի՝ շարունակում էր դասել իրեն հայ էթնոսին), միւս կողմից՝ առաւելապէս էթնոձիգ միտումների դրսեւորումը աջափնեայ հայ բնակչութեան շրջանում, որը նախընտրեց լինել «Հայք» քաղաքական համակարգի մէջ, ինչպէս որ ուղիղ արձանագրուած է ժ դ. կէսերին Կոստանդին Միրանածնի մօտ (մասամբ՝ նաեւ հայ եւ արաբ հեղինակների երկերում): Ճիշտ է, դրանով ամբողջապէս չվերացաւ նաեւ «Աղուանք» քաղաքական համակարգը (յենուած 6 դարից եկող վարչական աւանդոյթի իներցիայի եւ Աղուանից եկեղեցու շարունակական գործառութեան վրայ), որն արձանագրում են է՛ւ կենտրոնական Հայաստանը ներկայացնող Անանիա Մոկացին, է՛ւ Հայոց Արեւելից կողմանքը ներկայացնող Մովսէս Դասխուրանցին: Առաջինի վկայութեամբ՝ իր հետ ժ դարի կէսերին համախումբ բանակցում էին «Աղուանից» թագաւոր Իշխանիկը (Շաքի), «Աղուանից» իշխանաց իշխան [Յովհաննէս-]Սենեքերիմը (Փառիսոս) եւ իշխաններ Գրիգորը (Խաչէն), Վաչագանը (Գորոզու) եւ Գուրգէնը (Լօռի – Ջորագետ)[1]: Իսկ երկրորդը նոյն դարի վերջին ուղղակի փորձում էր Մովսէս Խորենացուն նմանուելով-ընդօրինակելով ստեղծել ա՛յդ «Աղուանք» երկրի (այլ ամենեւին էլ ո՛չ միայն ձախափնեայ) պատմութիւնը՝ իբրեւ «Քերթողահայր» Խորենացու մեծարած «Հայք»-ին բոլոր ցուցանիշներով գոնէ հաւասար էթնո-եկեղեցա-քաղաքական միաւորի, թէպէտ եւ անում էր դա լեզուա-մշակութային ու դաւանական ամբողջապէս նոյն՝ հայկական հիմքի վրայ:

Վերադառնալով Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնների խնդրին՝ յաւելենք, որ Փառիսոսի յաջորդ թագաւորների՝ Յովհաննէս-Սենեքերիմի եղբայր Գրիգորի ու նրա որդի Փիլիպպէի մասին տեղեկութիւններ են պահպանել Ստեփաննոս Ասողիկը, Վարդան Արեւելցին եւ Մատթէոս Ուռհայեցին: Նրանցից առաջինի տառացիօրէն վերջին ժամանակագրական հաղորդման համաձայն՝ Փառիսոսի արքայատոհմը, իբրեւ թէ, սպառուել էր Գրիգորով («Յայսմ ժամանակի, ի սոսի արքայատոհմը, իբրեւ թէ, սպառուել էր Գրիգորով («Յայսմ ժամանակի, ի թուաբեր ժամանակս ՆԾԲ [452 = 21.03.1003 – 19.03.1004], իշխանքն Փառիսոսոյ, որ

[1] **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի**՝ Ցաղագս ապստամբութեան..., էջ 144:

ի Հայկազեա[յ] ազանց, բաւեալ մինչեւ ցՍենեքերիմ եւ ցԳրիգոր՝ սպառեցան մահուամբ: Զորոց աշխարհս բաժանեալ հակառակութեամբ ի մէջ իւրեանց արքայն Հայոց Գագիկ եւ Փատլուն ամիրան Գանձակայ»)[1]: Սակայն նշելի է, որ Ասողիկն իր շարադրանքն աւարտել է (գուցէ եւ՝ քիչ անց վախճանուել) արդէն յաջորդ տարի եւ ուղղակի չի հասցրել տեղեկութիւն ստանալ Գրիգորի որդի Փիլիպպէի թագաւորանալու մասին (պարզ է, հայրական ո՛չ բոլոր տիրոյթների, այլ մի մասի վրայ), որը մեզ յայտնի է, մասնաւորապէս, Վարդան պատմիչից[2]:

Թերեւս, պէտք է համարել, որ նոյն փաստին՝ Գագիկ Ա-ի եւ Փատլուն Շադդադեանի միջեւ Փառիսոսի մասնատմանն է վերաբերում նաեւ Ասողիկի նախորդ՝ Գագիկ Ա-ի գահ բարձրանալու առիթով արած ընդհանրացնող բնոյթի պնդումը. «...իսկ եւ իսկ զկնի Սմբատայ, նոյն աւր թագաւորեաց Գագիկ եղբայր նորա ի Նիւ թուականին [438 = 24.03.989 – 23.03.990], յաւուրս ձմերայնոյ, ի քաղաքին Անւոյ: Եւ տիրեաց յոլով բերդից եւ գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչկենոյ եւ Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր. եւ ո՛չ ոք էր, որ զարհուրեցուցանէր զՀայաստանայսս մինչեւ ցաւր գրելոյ իմոյ զբան յիշատակիս այսորիկ»[3]: Իսկ այս Խաչէնի (Խաչկենի) «բերդերի ու գաւառների» գրաւման ուշագրաւ յիշատակութեան առիթով կարելի է նշել, որ դա, հաւանաբար, պիտի վերագրել Վերին Խաչէնի, աւելի կոնկրետ՝ Սոթք – Ծարի տարածքի գրաւմանը, որն, այդպիսով, մինչ այդ մաս է կազմել Փառիսոսի (այլ ոչ թէ Խաչէնի) թագաւորութեան:

Բաժին 3

ԳՈՐՈՂՈՒԻ ԵՒ ԽԱՉԷՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՉՄԱՒՈՐՈՒՄԸ

Մինչեւ վերջին երկու տասնամեակը հայագիտութեան մէջ ընդունուած էր համարել, որ զարգացած միջնադարի Հայոց Արեւելից կողմանքում թագաւորական իշխանութիւն գոյութիւն է ունեցել լոկ Փառիսոսում: Նրա հարեւան շրջաններում աղբիւրների արձանագրած «թագաւոր» անուանակոչումները պարզապէս անտեսւում էին կամ արժանանում առաւելագոյնը՝ բնագրերի հրատարակիչների կցկտուր ծանօթագրումների: Սակայն 1990-ական թթ. ընթացքում հարաւային Արցախում մեծ թուով նոր վիմագրական միաւորներ յայտնաբերուեցին, եւ դրանց պատշաճ արժեւորումը թոյլ տուեց մեզ ընդունել (առաջին անգամ՝ 1998 եւ 1999 թթ.՝ «Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը» եւ «Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահման-

---

[1] **Ասողիկ**, Գ.խը, էջ 286: Որոշ ընթերցումներ այստեղ եւ ստորեւ տուել ենք ըստ Ասողիկի երկի միակ հին ձեռագրի՝ ՄՄ Ձեռ. 2865 (ԺԳ դար, տե՛ս **Գ. Մ. Մանուկյան**, Արիստակես Լաստիվերցի /մատենագրության բանասիրական քննություն/, Եր., 1977, էջ 237-238): Հմմ. գլ. Գ.ժԷ, էջ 198 («մայր թագաւորին [Կարսի] Աբասայ, բարեպաշտուհի ի բարեպաշտ ծննդոց, որ էր քոյր թագաւորացն Փառիսոսոյ Սենեքերիմայ եւ Գրիգորոյ...»):

[2] **Վարդան**, էջ 134-135 (բնագիրը տե՛ս ստորեւ, էջ 274-275): Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 92-95:

[3] **Ասողիկ**, Գ.լ, էջ 255-256:

ներըե» յօդուածներում[1]) աւանդական գնահատականների կտրուկ սրբագրման անհրաժեշտութիւնը: Այդպիսով՝ մենք կարող ենք անվերապահօրէն խօսել Ժ-ԺԱ դդ. սահմանագծին Փառիսոսի թագաւորութեան կողքին Հայոց Արեւելից կողմանց եւս երկու՝ Գորոզուի (հարաւային Արցախում) եւ Խաչէնի (կենտրոնական Արցախում) համարժէք թագաւորութիւնների ի յայտ գալու մասին:

Հարաւային Արցախի կամ Գորոզուի թագաւորութեան մասին պահպանուել են լոկ վիմագրական փաստեր 997 եւ 1000 թուականներից: Առաջինը Հադրութի շրջանի Տումի գիւղի մօտ կարմիր եղցու լուսամուտի ճակատին փորագրուած 5-տողանոց արձանագրութիւնն է, որի հեղինակը՝ «թագաւորի քոյր» Սոփին, ասում է. «Ի ։ՆԽԹ։ Թվ[ին] Հ[ԱՅՈՑ] [449 = 21.03.1000 – 20.03.1001 թ.] ԵՒ Ի / ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ ՏԵԱՌՆ ԳԱԳԻԿԱ[Յ], ՈՐԴ[Ի]Ո[Յ] / ՄՈՒՍԷԻ, ԵՄ՝ ՍՈՓԻ, ԴՈՒՍՏՐ ՄՈՒՍԷԻ, ՇԻՆԵՑԻ / ՏՈՒՆ Ա[ՍՏՈՒԱԾ]Ո[Յ] Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՒՈ[Յ] ԻՄՈ[Յ] ԵՒ / ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ»[2]: Քանի որ նշուած թուականին Փառիսոսում կամ որեւէ այլ երկրամասում «Մուսէի որդի Գագիկ թագաւոր» չկար, պարզ է, որ յիշատակուած է տեղի (այն է՝ Գորոզուի)՝ թագաւորական տիտղոս կրող տիրակալը: Իսկ ԱՀ Մարտունու շրջանի Թաղավարդ գիւղի մօտ գտնուող (Մանաս գետի հովտում՝ յորջորջուած Քեօնդալան) Ջոխտ Պըռաւածառ վանքի (կոչուած նաեւ՝ Բարեւածառ)՝ ներկայումս կորած երկու խաչքարերից մէկի վրայ Առաքել Բաբախանեանցը (Լէօն), Մ. Բարխուդարեանցը եւ Եր. Լալայեանը ընթերցել են. «Թուին ։ՆԽՋ։ էր» թուականը (446 = 22.03.997 – 21.03.998 թ.), որից յետոյ նաեւ յիշատակուած էր նոյն տիրակալը՝ «[Մուսէի որդի] տէր Գագիկը» («Սուրբ Պաւղոս: Յամս Աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Յովհաննիսի՝ Ամարասա[յ] եպիսկոպոսին, եւ պետութեան տեառն Գագիկայ՝ Աղուանից իշխանաց իշխանի, ես՝ հայր Կիրակոս, առաջնորդ սուրբ ուխտիս, եղբաւրորդի Կոկոնա[յ]...»[3]: Այստեղ Գագիկը կոչուած է ոչ թէ «թագաւոր», այլ «իշխանաց իշխան» (թէպէտ՝ երկու եզրոյթների իմաստն այս դարաշրջանում, ըստ էութեան, նոյնն էր), բայց փոխարէնն ուշագրաւ է նրա երկրի (կամ, գուցէ, կարգավիճակի՞) անուանման ձեւը՝ «պետութիւն»:

Վերյիշելով նոյն երկրամասի տիրակալների մասին նախորդիւ նշուած տեղեկութիւնները, թերեւս, կարող ենք ամփոփել, որ Գորոզուի իշխաններից (հետագայում՝ նաեւ դարձած թագաւորներ) աղբիւրներում վկայուած են հետեւեալ անուններով տիրակալները՝ Ստեփաննոսի որդի Յովսէփ երէցը՝ Մովսէս Դասխուրանցուն (=Մաշտոց Եղիվարդեցուն) եւ արաբ հեղինակներին յայտնի Ստեփաննոս Աբլ Ասադ իշխանի քրոջ ամուսինը; նրա որդի Եսայի Աբու Մուսէն, արաբ հե-

---

[1] Տե՛ս ՀԱ, 1998, սն. 269-324 եւ ՀԱ, 1999, սն. 247-300: Այս յօդուածները լրամշակումներով ամփոփուած են մեր «Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք)» մենագրական ժողովածոյում՝ Վիեննա-Եր., 2009):

[2] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 173, ՖՊ 604: Ներկայումս այս քարը պահպանւում է Ստեփանակերտի պատմա-երկրագիտական թանգարանում:

[3] Ա. Բաբախանեանց, Ուխտաւորի յիշատակարանը, Շուշի, 1885, Ցաւելուած (առանձին էջակալմամբ), էջ 5; Մ. եպ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 91; Ե. Լալայան, Վարանդա, – Երկեր, հտ. 2, Եր., 1988, էջ 14; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 169, ՖՊ 587:

ղինակների մօտ՝ «Իսայ իբն Յուսուֆ իբն ուխտ Իսթիֆանուս»; նրա աւագ որդի Մուսէն (=Մովսէս), ում շնորհիւ էլ հայրը կոչւում էր «Աբու Մուսէ»; 906-ին Տաթեւում յիշատակուած երեք «Աղուանից իշխաններից» մէկը՝ Եսային (որը, թերեւս, Աբու Մուսէի նոյնանուն թոռն էր); 955 եւ 958 թթ. յիշատակուած Վաչագանի հայր Մուսան (=Մովսէս); ինքը՝ Վաչագանը (արաբական տարբերակով՝ «Վաշական իբն Մուսա»); Մատթէոս Ուռհայեցու աղբիւրի՝ «Վաչագանի որդի ... Գորոգուի Գագիկ»-ը (վերածուած՝ «Գոշագգակ»-ի[1]); 997/998 եւ 1000/1001 թթ. յիշատակուած Գագիկ թագաւորի եւ Սոփիի հայր Մուսէն; եւ վերջապէս ինքը՝ Գագիկ թագաւորը:

Տեղին նշենք, որ վերջերս Արման Եղիազարեանի արտայայտած տեսակէտի համաձայն[2]՝ հնարաւոր է վստահել Շապուհ Բագրատունու (Անանուն Զրուցագրի) պահպանուած բնագրում Սմբատ Ա-ի՝ Աբխազաց թագաւոր Դաւոս/Դոտասի դէմ (Կոստանդին Գ՝ 893/894-929 թթ.) մօտաւորապէս 906-908 թթ. միջակայքում իրականացրած արշաւանքի մասնակիցների մէջ յիշատակուած «իշխան Գորոգվա[յ]» Վասակ-ի պատմական հաւաստիութեանը եւ այդ անունը եւս ընդգրկել Գորոգուի ժ դ. առաջին կէսի տիրակալների շարքում: Սակայն Շապուհ Բագրատունու մատուցած ցուցակի քննութիւնը («Իշխան յԱրեւելից Սմպատ բազում զաւրաւք, իշխան Փառիս[ոս]ոյ Հյը[մա[յ]եկ բազում հեծելաւք, իշխան Աղձնե[ա]ց Գրիգոր բազում զաւրաւք, իշխան Գորոգվա[յ] Վասակ բազում հեծելաւք, իշխան Վայո[յ] ձորոյ Ապուշամբ բազում զաւրաւք, իշխանն Տայոց Գոռամ բազում հեծելաւք, իշխանն Ճողբաց բազում զաւրաւք, իշխանն Տարունոյ Գագիկ բազում հեծելաւք, իշխան Վասպուրականի Գորգէն բազում զաւրաւք, իշխան Մոկաց Աշոտ բազում հեծելաւք, իշխանն Անձեւացե[ա]ց Համակար բազում զաւրաւք, իշխանն Կորդվաց բազում հեծելաւք, եւ ի աշխարհէն Պարսից այլք բազումք»)[3] ստիպում է մեծ վերապահութեամբ մօտենալ այդպիսի վստահութեանը: Աւելի հաւանական է թւում, որ «զրուցագիր» պատմիչը միախառնել է ինչ-ինչ յիշողութիւններով իրեն հասած՝ Հայոց երկու տարբեր արքաների արշաւանքների մասին տուեալները՝ Սմբատ Ա-ի (որի մասին տեղեկութիւններ է տալիս նաեւ Յովհաննէս Դրասխանակերտցին) եւ նրա կրտսեր որդի Աբաս արքայի: Վերջինի մասին յայտնում է Ստեփաննոս Ասողիկը, ըստ որի. «Եւ զվրաց եւ զՍարմատացւոց ասպատակն դադարեցոյց [Աբաս] յաշխարհէս Հայոց. որ ի միում աւուր բազմախուռն բանակաւք բիւրաւոր զաւրաւք ելանէր Բէրն բէլապէս ամբարտաւանութեամբ, իշխանն Ափխազաց, ի Սարմատացւոց աշխարհէն, որ յայնկոյս քան զԿովկասեան լերինսն: Խաղայ գայ անթիւ բազմութեամբ առ ափն գետոյն, որ Կուրն կոչի՝ անապատացուցանել կամելով զաշխարհս Հայոց: Դեսպան առաքէ առ թագաւորն Հայոց... Եւ զայս պատգամ լուեալ թագաւորին Աբասայ՝ գումարտակ զաւրաց արարեալ այրուձիոյն Հայոց՝

---

[1] Այդ մասին տե՛ս ստորեւ, էջ 276-277:

[2] **Ա. Եղիազարյան**, Հայոց Արեւելից կողմանց իշխանությունները IX-X դարերում, – ԲԵՀ, «Հայագիտություն», 2010, հ՝՝ր 1, էջ 25-36 (տե՛ս յատկ.՝ էջ 31-33). հմմ. **նոյնի**՝ Հայոց Սմբատ Ա թագավորի ափխազական արշավանքը, էջ 122:

[3] **Շապուհ Բագրատունւոյ** Պատմութիւն, էջ 81:

հասանէ ի գետն Կուր, բանակի ընդդէմ բանակին Բէրայ...»[1]*: Ըստ պատմութեան շարունակութեան՝ Կուրի ափին տեղի ունեցած ճակատամարտում Հայոց արքայ Աբասն անձամբ մենամարտում եւ յաղթում է «Բէրին», հետապնդում ու ջախջախում նրա զօրքերին, իսկ նրան ձերբակալելով՝ բերում է Կարս մայրաքաղաքի նորաշէն եկեղեցու առջեւ, որը Բէրը հոխորտանքով սպառնացել էր օծել քաղկեդոնական կարգով, կուրացնում է ու ապա յետ վաճառում իր ազգակիցներին*[2]*:*

Ըստ ամենայնի՝ Ասողիկը Բէր անունով կոչում է Աբխազքի արքայ Գիորգիի (Կոստանդին Գ-ի որդի, 929-957) որդուն՝ անհաւասարակշիռ բնաւորութեան տէր Կոստանտինէին, իշխանաց իշխան Գուրգէնի փեսային: Ըստ «Քարթլիս ցխովրեբա»-ի՝ հայրը նրան կարգել էր Վիրքի թագաւոր, բայց երեք տարի անց նա ապստամբեց ու փորձեց խլել հօր գահը, եւ վերջինս, երկարատեւ պաշարումից յետոյ խորամանկութեամբ գրաւելով որդուն պատսպարած Ուփլիսցիխէ ամրոցը (Գօրիի մօտ), գերեց նրան եւ սկզբում կուրացրեց, ապա թլփատելով սպանեց: Ի դէպ, հետաքրքրական է, որ աղբիւրների խօսքով՝ պարտուած զօրքի մի խումբ՝ «տբեթցիները» (?), ներում ստացան եւ վերադարձան «Վասպուրական»(!)[3]*: Կոստանտինէի թագաւորութիւնը մօտաւորապէս թուագրւում է 930-ական թթ. կէսերով (իսկ Վասպուրականի Գագիկ Ա արքան վախճանուել է 938-ին կամ 943-ին):*

Վերեւում բերուած՝ Սմբատի զօրացուցակի պարբերութիւնը Շապուհի նախնական բնագրում ուշ ներմուծման տպաւորութիւն է թողնում: Նրանից առաջ հեղինակը խօսում է հակամարտութեան պատճառների ու հանգամանքների եւ Սմբատ Ա-ի՝ մեծ զօրք հաւաքելու, ապա «ի վերայ աշխարհին Ափխազաց» դուրս գալու, «ի գեղն, որ կոչի Գաւրին» հասնելու եւ այն շրջապատող գետի սառցակալման պատճառով «քաղաքն» ապարդիւն պաշարելու մասին (աւարտը՝ «Եւ ոչ կայր ճառ մըտանել ի քաղաքն ի պաղէն, զի կապեալ էր զամենայն դաշտն»)[4]*: Դրանից յետոյ գալիս է զօրացուցակի առաջաբանը, որտեղ անսպասելիօրէն ունենք բացայայտ կրկնութիւն եւ Գօրի քաղաքից շատ հեռու գտնուող Արտահան գաւառի (աշխարհի) յիշատակութիւն. «Մտաւ Սըմպատ ի աշխարհն Ափխազաց եւ աւար էհար զերկիրն առհասարակ եւ էրեկ հասաւ ի յաշխարհն Արտահան եւ հետ նմա ամբոխ բազում», որից յետոյ սկսւում է ցուցակը: Ընդ որում՝ ցուցակին յաջորդում է նախորդող պարբերութեան պարզ շարունակութիւնը. «Եւ պատել են շուրջ զպաղովն: Ոչ եղեւ նարա [=նորա, իմա՛ Սմբատի] ճար՝ առնուլ զգեղըն Գաւրի, եւ կայր**

---

[1] **Ասողիկ**, Գ.է, էջ 171-172:

[2] Անդ, էջ 172-173: Վարդան Արեւելցին մի հատուածում այս «Բէրին» անուանում է «Թեւտաս»՝ համադրելով սուրբգրային հրէայ հոխորտացող ապստամբի հետ (**Վարդան**, էջ 124): Ստեփաննոս Ասողիկն այդպիսի բնորոշում էր տալիս Յուսուփ Սաջեան ոստիկանին (**Ասողիկ**, գլ. Գ.ե, էջ 168):

[3] Матиане Картлиса, с. 34-35; Летопись Картли, с. 41.

[4] **Շապուհ Բագրատունեոյ** Պատմութիւն, էջ 80-81: Նկարագրելով Սմբատի յաղթական պատերազմը Կոստանդին Գ-ի դէմ (906-908 թթ. միջեւ)՝ վրացական աղբիւրները եւս գրում են Ուփլիսցիխէի ճակատամարտի մասին, որը ՝էնց Գօրիի մօտ էր (տե՛ս Матиане Картлиса, с. 32; Летопись Картли, с. 51).

ի տարակուսի թագաւորն Սմբատ»: Ի դէպ, սրանից յետոյ՝ նոյն 128 պարբերութեան վերջում, պատմիչը տալիս է մի ուրիշ՝ արիաւիրտ վասպուրականցի իշխան Գորգենի (արքայի եղբօր, թէպէտ բնագրում Գագիկ Ա-ն միայն «իշխան» է կոչուած) հետ վճռական ճակատամարտի գնացող իշխանների ցուցակը. «քաջ մարդիկք [յ]ազէէն Գնունեաց, յազգէն Քաջբերո[ւ]նեաց, [յ]ազգէն Գաբեղենից, յազգէն Զիւնական, յազգէն Գաղրիկան, յազգէն Գնդունե[ա]ց»[1]: Ամենեւին ո՛չ միայն վասպուրականցի այս վեց իշխանատոհմերի թուարկումը թողնում է արքայական զօրքի մի հատուածի սովորական նկարագրութեան տպաւորութիւն, ինչը խիստ դժուար է ասել խնդրոյ առարկայ՝ 13 անունից բաղկացած («Արտահանեան») զօրացուցակի մասին: Վերջինս աւելի շատ յիշեցնում է ուղղակի Բագրատունեաց արքային պաշտօնապէս (դէ-իւրէ) ենթակայ կիսանկախ միաւորների ցանկ եւ դրանով մեծ նմանութիւն դրսեւորում Կոստանդին Միրանածնի տուած՝ «Արմենիայի» 11 երկրների ցուցակի հետ: Դրանցում նաեւ կրկնւում են գոնէ 7 անուններ (Վասպուրական, Տարօն, Մոկք, Անձեւացիք, Վայոց ձոր, Փառիսոս – Սեւորդիք եւ ենթադրաբար՝ Գորոզու), եւ եթէ պայմանականօրէն ձեռնպահ մնանք այլ համադրումներից, ապա զօրացուցակում բացակայում են կայսեր տուածից միայն՝ Կոգովիտը, Սիւնիքը, Խաչէնը եւ Սեւորդեաց կոչուած երեք արխոնտներից մէկը:

Ի դէպ, ոմանք Միրանածնի ցուցակը կապում են հէնց 930-ական թթ. ժամանակահատուածի հետ[2]: Բայց պէտք է նշել, որ երկու ցուցակի նմանութիւնների կողքին կայ նաեւ գոնէ մէկ նշանակալի հակասութիւն, այն է՝ Տայքի պատկանելութիւնը, որից երեւում է ժամանակային առումով նրանց լրիւ համընկնման անհնարինութիւնը: Ինչպէս տեսանք, ըստ Շապուհի՝ «Գոռամ» Տայոց իշխանը «բազում հեծելաւք» մասնակցում էր, ըստ էութեան, Վիրքի արքայի դէմ Հայոց արքայի ձեռնարկած արշաւանքին (մեր վարկածով՝ 930-ական թթ. կէսեր)[3], իսկ Միրանածնի մօտ «Իբերիայի կուրապաղատին ենթարկուող չորս այլ իշխանութիւններից» երկրորդի համար՝ «Կարնատայսի արխոնտին, Իբերիա» նշումն այս կամ այն տարբերակով վերաբերում է Տայքին[4]՝ ցոյց տալով, որ մինչեւ 940-ականների վերջ տեղի է ունեցել նահանգի անցումը դէպի՝ իբրեւ Վիրք ընկալուող վարչա-աշխարհագրական համակարգ (գոնէ բիւզանդական արքունիքի պատկերացմամբ):

---

[1] **Շապուհ Բագրատունւոյ** Պատմութիւն, էջ 82: Անկասկած՝ «Գաշրիկան» = Գազրիկան, իսկ «Գնդունեց» = Գնթունեաց, որոնք լաւ յայտնի են «Գահնամակ»-ից, «Ջօրանամակ»-ից եւ այլ աղբիւրներից:

[2] Տե՛ս, օր.՝ **B. Martin-Hisard**, Constantinople et les archontes du Monde Caucasien dans le Livre des Cérémonies, II, 48, – "Travaux et Mémoires", 13, Paris, 2000, p. 362.

[3] **Շապուհ Բագրատունւոյ** Պատմութիւն, էջ 81:

[4] **Կոստանդին Միրանածին**, Բիւզանդական արքունիքի արարողութիւնների մասին, էջ 151: Ըստ աշխատասիրող Հր. Բարթիկեանի ծանօթագրութեան (էջ 312, ծն. 91)՝ «Բնագրում εἰς τὸν ἄρχοντα τοῦ Καρνατάης. Խօսքը Տայքի մասին է (վրաց՝ Տաո), որ վրացիները կոչում են նաեւ Տաոս Կաո[ն]ի: Ցունարէնում տեղի է ունեցել մետաթեսիս եւ դարձել Կաոնի-Տայս (յունարէնը տալիս է Տայքի հայերէն արտասանութիւնը): Հմմ. **C. Toumanoff**, Studies [in Christian Caucasian History, Georgetown, 1963], p. 493-494»:

Ինչ վերաբերում է զօրացուցակում առկայ 10 իշխանանուններին, ապա պիտի նկատել, որ Շապուհի հաղորդածներից մի քանիսը, մեղմ ասած, լուրջ շեղումներ ունեն իրական պատմական անձանց անուններից, որոնք ժ դ. առաջին տասնամեակների համար բաւականաչափ յստակ յայտնի են տարատեսակ աղբիւրներից: Այս պատճառով հնարաւոր է ենթադրել, գոնէ իբրեւ վարկած, որ Շապուհի անուններն (ինչպէս եւ հէնց ամբողջ զօրացուցակը) ունեն բանաւոր ծագում, ուստի կարող են դիտարկուել իբրեւ՝ երբեմն մօտաւոր անուանաձեւերով աւանդուած, որոշ դէպքերում՝ տեղերով շփոթուած, կամ ուղղակի՝ գրառող պատմիչի կողմից լրացուած-«ստեղծագործուած» (բացի այդ՝ գոնէ երեք անձնանուն ուղղակի բաց է թողնուած): Նշուած իրողութեան զգացողութեամբ՝ Ա. Եղիազարեանը փորձել է որոշ զգոյշ համադրումներ կատարել (մի դէպքում՝ հետեւելով Ս. Բարխուդարեանին)[1], սակայն, թւում է, թէ դրանք լրացուցիչ ստուգման կարիք ունեն, առնուազն՝ ժամանակագրական այլ (վերը նշուած) ընկալման լոյսի ներքոյ: Մասնաւորապէս, Գորոզուի իշխանի՝ «Վասակ» անուան ի յայտ գալու պատճառը (այդ անունն այս շրջանում էլ առաւելապէս տարածուած էր Սիւնիքի իշխանական ընտանիքում[2]), կարծես թէ, հնարաւոր է դիտարկել՝ այլ աղբիւրներում 955 եւ 958 թթ. յիշատակուած (Անանիա Մոկացի եւ Իբն Հաուկալ) Վաչագան/Վաշական իշխանի մասին պահպանուած յիշողութիւնների՝ ոչ ճշգրիտ գրառման տարբերակով (այդ անուան տարածուած ձեւերն էին նաեւ՝ «Վաչական» եւ «Վաչակ»): Մի ուրիշ տարբերակով՝ «Իշխան յԱրեւելից Սմպատ»-ը, կարծես թէ, կարող է համադրուել Սիւնեաց գահերէց իշխան Սմբատի հետ (որդի Աշոտի, ապագայ առաջին թագաւոր Սմբատ Սահակեանի հօրեղբայրը), որի իշխանութեան աւարտը դրւում է 942-949 թթ. միջեւ[3] (նրա մասին Օրբէլեանը գրում է. «Սմբատ առեալ զգահերէց իշխանութիւնն՝ եւ բազում ցուցեալ գործս գովելիս հոգեւորս եւ մարմնականս՝ վախճանի... Իսկ Սահակայ՝ եղբօր Սմբատայ, էր որդի մի Սմբատ անուն»)[4]:

Նշենք, որ այս ժամանակահատուածում պակաս հաւանական է երկու միւս տարբերակները դիտարկելը, այն է՝ «Արեւելից իշխան»-ի տակ ընկալել կա՛մ Բուն Աղուանքի – Շաքի/Հերէթի թագաւորութեան ներկայացուցչին, կա՛մ Տաշիր – Զորագետի ձեւաւորուող իշխանութեան փոխարքային, ինչպէս արդէն Անանիա Մոկացու մօտ է[5]: Բնականաբար, մեզ հետաքրքրող նիւթի համար շահեկան կը լինէր «իշխան Փառիս[ոս]ոյ Հըմաեկ»-ի համադրումը, որը, սակայն, խիստ դժուար է (Համայեակ անունն առաւելապէս տարածուած էր Մամիկոնեան իշխանական ըն-

---

[1] **Ա. Եղիազարյան**, Հայոց Սմբատ Ա թագավորի ափխազական արշավանքը, էջ 122-126: Հմմ. **Ս. Գ. Բարխուդարյան**, Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանությունները, էջ 68; **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия, с. 79.

[2] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, Եր., 1962, էջ 46-50:

[3] Տե՛ս ՀԺՊ, հտ. III, էջ 115-116 («Սյունիքը IX-XI դարերում» գլխի հեղ.՝ Բաբկէն Ցարութիւնեան):

[4] **Օրբ.**, գլ. ԾԴ, էջ 218; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԾԵ, էջ 298:

[5] Տե՛ս **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի**՝ Ցաղագս ապստամբութեան..., էջ 144 («...եւ տեառն Գուրգենայ Արեւելեաց իշխանի»):

տանիքում[1]): Կանգ չառնելով որեւէ վարկածի վրայ՝ լոկ կրկնենք, որ 930-ական թթ. Փառիսոսի գահերէց իշխանը (գուցէ եւ արդէն՝ իշխանաց իշխանի կարգավիճակով, ինչպէս որ 949 թուին Մոկացին արձանագրում է [Յովհաննէս-]Սենեքերիմի համար), հաւանաբար, պիտի լինէր կա՛մ Սահակ Սեւադայի՝ Աշոտ Երկաթի կողմից կուրացուած աւագ որդի Գրիգորը (նրա եղբօր անունը Դաւիթ էր), կա՛մ վերջինիս որդի Սեւադայ-Իշխանանունը (ըստ Դասխուրանցու մատուցած մանրամասն ու հաւաստի տոհմագրութեան՝ նա ունէր կրտսեր եղբայր՝ Ատրներսեհ անունով)[2], այսինքն՝ ի վերջոյ, թագաւոր դարձած Յովհաննէս-Սենեքերիմի հայրը: Ըստ այդմ, «իշխան Գորոգվա[յ] Վասակ»-ի համադրումը «Ջուրզի տէր» Վաչագանի հետ, թերեւս, կարող է դիտարկուել իբրեւ ամենահաւանական վարկածը:

Ի տարբերութիւն Փառիսոսի եւ Գորոգուի՝ Խաչէնում թագաւորութեան հաստատման մասին աղբիւրների ուղիղ վկայութիւններ չեն պահպանուել: Սակայն կան հարեւան երկու թագաւորութիւնների հետ զուգահեռները եւ Ստեփաննոս Օրբէլեանի անուղղակի տեղեկութիւնները, որ վերաբերում են Սիւնիքի արքայատոհմի խնամիական կապերին: Մասնաւորապէս, նրանից գիտենք, որ Բաղք – Կապանի թագաւոր Գրիգոր Ա-ի (1051-1072)[3] աներն էր «Աղուանից [այս դէպքում՝ Խաչէնի] թագաւոր» Սեւադան. նա հայրն էր Շահանդուխտ թագուհու («ի տանէն Աղուանից՝ դուստր նոցին թագաւորազինն մեծին Սեւադայի»)[4] եւ նրա եղբօր՝ «թագաւորազն մանուկ» Սենեքերիմի, որին անժառանգ Գրիգորից յետոյ վստահուեց Սիւնիքի գահը (1072-1094/1096): Վահանավանքի (նաեւ՝ Յովհաննու վանք) կրկնայարկ եկեղեցու շինարարական վիմագրում իր հօր՝ թագաւոր լինելու մասին գրում է նաեւ Շահանդուխտը. «ի :Շվ: թուականիս [=1086 թ.]. ես՝ Շահանդուխտ, դուստր Սեւադա[յ]ի Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւորի...»[5]: Համեմատաբար վերջերս Վահանավանքի արքայական գերեզմանատունը յայտնաբերուել է նաեւ Գրիգոր թագաւորի «զոքանչ» կոչուած՝ «Աղուանից թագուհի» Սոփիի (ըստ այսմ՝ Սեւադայ թագաւորի կնոջ) տապանաքարը, որի գիրն է. «Սոփի՝ Աղվանից թագուհի, զոքանչ Գրիգոր թագաւորի՝ որդ[ւ]ոյ Աշոտակայ, մայր Շահանդխտո[յ]: Թուին :Շվ: [=1081 թ.]»[6]: Սոփին (Սոփիան) յիշատակուած է նաեւ իր որդու՝ Սիւնեաց Սենեքերիմ թագաւորի մի ընծայագրում, որը պահպանել է Ստեփաննոս Օրբէլեանը («ընծայեցի սուրբ ուխտիդ Տաթեւոյ յաղագս փրկութեան հոգւոյ իմոյ եւ քաւութեան մեղաց իմոց եւ հարազատաց իմոց քերց, եւ որդեկաց իմոց կենաց եւ փրկութեան՝ Գրիգորոյ, Սմբատայ եւ Սեւադայի, եւ մօր իւրեանց եւ

---

[1] Հմմ. **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 90-91:
[2] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 341:
[3] Բաղաց արքաների ճշտուած ժամանակագրութիւնը տե՛ս **Գ. Մ. Գրիգորյան**, Սյունիքի թագավորությունը (X-XII դարեր), – ՊԲՀ, 2006, հմր 2, էջ 141:
[4] **Օրբ.**, գլ. ԾԸ, էջ 233; Պատմութիւն Նահանգին Սիսական, գլ. ԾԹ, էջ 318:
[5] Դիվան հայ վիմագրության, պր. II, Կազմեց՝ **Ս. Գ. Բարխուդարյան**, Եր., 1960, էջ 138, հմր 405:
[6] **Գ. Մ. Գրիգորյան**, Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, – ՊԲՀ, 1980, հմր 2, էջ 162-163; **նույնի՝** Սյունիքի թագավորությունը (X-XII դարեր), էջ 141:

քեռն։ Եւ կարգեցի քառասունք մի, որ ամ յամէ կատարեն ի սուրբ եկեղեցիքն ի տէրունի Քառասունքն՝ զքսան օրն թագաւորին Գրիգորոյ՝ որդւոյ Աշոտոյ, եւ զքսան օրն իմ մօրն Սոփիայ՝ որչափ մեք կենդանի եմք, եւ յետ ելիցն մերոց՝ զքսան օրն իմ քուերն Շահանդխտոյ առնեն, եւ զքսան օրն ինձ՝ Սենեքերիմայ»)[1]։

Վերլուծելով առկայ աղբիւրագիտական նիւթը՝ կարելի է նկատել, որ Խաչէնի եւ Գորոգուի իշխանութիւնների վերաճումը թագաւորութիւնների, ըստ ամենայնի՝ նոյնպէս տեղի է ունեցել ժ դ. վերջերին[2]։ Դա այն դարաշրջանն էր, երբ Բագրատունեաց թագաւոր-շահնշահերն, ըստ էութեան, հաշտուել էին իրենց «Մեծ Հայք» պետութեան (այդպիսին էր երկրի պաշտօնական անուանումը[3]) տարածքում փոքր աւատական թագաւորութիւնների առաջացման իրողութեան հետ եւ, ապահովելով դաշնակցային հիմունքներով Անիի որոշակի գերակայութիւնը, հէնց իրենք էլ հաստատում էին նրանց արքայական լիազօրութիւնները՝ ինվեստիտուրան (աղբիւրները նկարագրում են նմանատիպ հաստատումը Լօռու եւ Կարսի թագաւորութիւնների համար)[4]։

Հաւանաբար, Խաչէնի տիրակալի արքայական թագադրումը չի յիշատակուել Մովսէս Դասխուրանցու երկում (ի տարբերութիւն Փառիսոսի) զուտ այն պատճառով, որ այդ իրադարձութիւնը պարզապէս յաջորդել է ՊԱ-ի շարադրման պահին, որն, ինչպէս ճշտել ենք դեռ 1987 թ., ընկնում էր պատմիչի օրերում աթոռակալած վերջին կաթողիկոս Տէր Մովսէսի վեց («ամս Զ») տարիների միջակայքում, այսինքն՝ 982-988 կամ 976-982 թթ. միջեւ[5]։ Սակայն թագադրման այդ ենթադրելի ակտը, թւում է, թէ լիովին կարող էր տեղի ունենալ միւս մօտաւոր ժամանակակից հեղինակի երկի՝ Ստեփաննոս Ասողիկի «Պատմութիւն Տիեզերական»-ի շարադրման պահից (1004 թուականին) առաջ, քանի որ տարօնեցի պատմիչը «զլացել է» տեղեկութիւն տալ ոչ միայն դրա, այլ նաեւ Գորոգուի թագաւորութեան հռչակման մասին, իսկ այդ հռչակումը, ինչպէս երեւաց թուագրում պարունակող վերոյիշեալ վիմագրերից, տեղի էր ունեցել 1000 կամ գուցէ եւ 997 թուականից աւելի վաղ։ Այսպիսով, թերեւս, կարող ենք ամփոփել, որ Գորոգուի ու Խաչէնի իշխանների թագադրման եւ ինվեստիտուրաների ընդունման ժամանակը, իբրեւ առաւել հաւանական վարկած՝ վերագրելի է ժ դարի 80-90-ական թթ. սահմանագծին։

---

[1] **Օրբ.**, գլ. ԾԹ, էջ 237; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. Կ, էջ 323։

[2] Հմմ. **A. Hakobian**, Khatchen, capitale du royaume central, – Les douze capitales d'Arménie, Paris – Marseille, 2010, p. 277-282.

[3] Հմմ. **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи Багратидов и Византия, с. 81.

[4] Տե՛ս **Ռ. Ի. Մաթեւոսյան**, Տաշիր-Զորագետ (X դար – XII դարի սկիզբ), Եր., 1982, էջ 74-75, 120-123։

[5] ՊԱ-ի երկու ձեռագրախմբում էլ այս Տէր Մովսէսին («ամս Զ. յառաջնորդութենէն Փառիսոսայ վանաց») նախորդած Տէր Պետրոս կաթողիկոսի («յեպիսկոպոսութենէն Գարդմանայ») տարիների քանակը «ամս ԺԸ» է՝ 18 (**Դասխ.**, Գ.իգ /իբ/, էջ 347), սակայն Մխիթար Գօշի կաթողիկոսական ցանկում վերջին թիւը «ԺԲ» է՝ 12 (տե՛ս **Դասխ.**, Յաւելուած, էջ 351)։ Ուրեմն Պետրոսը գահակալել էր 964-ից մինչեւ 982 թիւը կամ (ըստ Գօշի՝ 6 տարով պակաս) 976-ը (հմմ. նաեւ **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 215-216, 222-223, 277).

ԳԼՈՒԽ Ե

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆ

Բաժին 1

ՆՈՐԱՅԱՅՏ ՎԻՄԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

2000 թ. Յունիսին մեր հետազօտած փոքր չափերի եկեղեցիով պարսպապատ վանական համալիրը եւ մօտակայ հանգստարանը (նոր յայտնաբերուած՝ Շալուայի Րախիշ/Ղորչուչայ վտակի վերնահովտում գտնուող նորաբնակ Աղբրաձոր/Ղորչուբուլաղ եւ Հայթաղ/Ղորչու քաշաթաղեան գիւղերի[1] բնակիչների կողմից) գտնւում են Աղբրաձորի դիմաց Րախիշի մէջ աջից թափուող առուակի ակունքներից քիչ ներքեւ, ձորակի հիւսիսային լանջին, ռազմական քարտէզներում Քեշիշթափա – «Քահանայի բլուր» կոչուող գագաթից 1,5 կմ հիւսիս, խիտ անտառի մէջ (հետաքրքիր անունով՝ Գադիմկիմեշա – «Հինաւուրց անտառ»), ծովի մակերեւոյթից 1850 մ բարձր: Աղբրաձոր գիւղից այն ուղիղ գծով հեռու է 2,5 կմ, բայց հարկ է նշել, որ ԺԹ դարի քարտէզներում կիւրջաբուլաղ գիւղը տեղադրուած է Րախիշի աջ ափին, այսինքն՝ եկեղեցու հարեւան ձորակի ներքեւի մասում, որտեղ ցայսօր պահպանւում են ուշմիջնադարեան տապանաքարեր: Եկեղեցուց 150 մ հիւսիս՝ նոյն լեռնալանջի համեմատաբար հարթ մասում, փռուած է ընդարձակ հանգստարանը:

Ներկայումս եկեղեցու թաղը եւ ամբողջ պարսպապատը թափուել են ու ծածկել պատերի գրեթէ կէսը: Ջնայած դրան, առաջին իսկ հայեացքից պարզ երեւում է, որ կոպտատաշ քարերով շարուած եկեղեցին ԺԱ-ԺԲ դարերի շինարարական ոճի ակնյայտ տարրեր ունեցող (պատերի սլացիկ բարձրութիւն, պայտաձեւ խորան, արեւմտեան միակ դռան վերեւում կիսակլոր բացուածք, պատերի վերին թաղատակի մասում ամբողջ եզրագծով կրածեփ խողովակաձեւ խոռոչներ) կառոյց էր: Պատերը ներսից սուաղուած են ուշ շրջանում, հաւանաբար՝ ԺԷ դարում: Չափերը ներսից. երկարութիւնը 420 սմ է, լայնութիւնը՝ արեւմուտքում 220 սմ, խորանի առջեւ՝ 240 սմ: Խորանի բացուածքը 200 սմ է, խորութիւնը՝ 215 սմ: Արեւմտեան միակ դռան բացուածքը 75 սմ է: Եկեղեցու մուտքի առջեւ ընկած են արձանագիր երկու մեծադիր, կոտրուած խաչքարեր (3 եւ 2 կտորով), որոնք կարող են դասուել նախորդ եւ յաջորդ դարերի խաչքարերից իւրայատուկ ոճով առանձնացող ԺԱ դարի խաչքարերի լաւագոյն (Յաղաց քարի զուգահեռով) օրինակների շարքում: Ձորակով մօտ 30 մ ներքեւ գլորուած են խաչքարերից մէկի ուղղանկիւն արձանագիր պատուանդանը եւ մի խորանազարդ պատուանդանի անարձանագիր քարերից մէկը: Խաչքարերի արձանագրութիւնները փորագրուած են ճակատի ստորին մասում գտնուող վարդեակների երկու կողմերում: Յաւօք, առաջինի (աւելի փոքր, երկու կտորի կիսուած) ձախ ներքեւի կտորը ջարդուած է, եւ կարող ենք ընթերցել միայն աջ կողմում երեւացող տառերը, որտեղ երկու տողով գրուած է.

---

[1] ԺԹ դարում առաջին գիւղը կոչուել է՝ *Կիւրջաբուլաղ*, իսկ երկրորդը՝ *Ղարաչաճի*:

ՇԺԷ / ԷՐ [=1068 թ.]։

Երկրորդ (քիչ աւելի մեծ եւ երեք կտորի կիսուած) խաչքարի վարդեակի երկու կողմերի տառերն էլ պարզ ընթերցւում են (ձախ կողմում 3 տող է, աջում՝ 5)։ Արձանագրութիւնն ունի հետեւեալ բովանդակութիւնը.

Թվականն Հայոց / ՇԺՀ / ԷՐ [=1069 թ.]։ ԵՄ՝ Գ//ՐԻԳՈՐ՝ / ԻՇԽԱՆ/ԱՅ ԻՇԽ/ԱՆ, ՈՐԴ/Ի ԱՏՐ//{...}

Ակնյայտ է, որ այս Գրիգոր իշխանաց իշխանի հայրանունը կիսատ է, հետեւաբար արձանագրութիւնը շարունակուել է խաչքարի պատուանդանի վրայ։

Զորակում գտնուող ուղղանկիւն, չորս կողմից սրբատաշ պատուանդանի վրայի արձանագրութիւնը գրուած է արեւմտեան եւ հարաւային նիստերին, չորսական տողով։ Այն անվնաս է, գրեթէ առանց յապաւումների[1] եւ վերծանւում է ամբողջութեամբ՝ այսպէս.

ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐՆ ԻՄ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՍՈՍԹԵՆԷՍ ՓՈԽԵՑԱՒ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ։ ԵՄ՝ ՆՈՐԻՆ ԵՂԲԱՒՐՈՐԴԻՍ ՍՏԵՓԱՆՈՍ // ԿԱ[Ն]ԳՆԵՑԻ ՋՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻԻՆ ՏԵԱՌՆ ԻՄՈ[Յ], ՋՈՐ ԴԱՍԵՑԷ ՔՐԻՍՏՈՍ ՀՆԴ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏՄՆ ԻՒՐ։ ԱՄԷՆ։

Բերուած բնագրերի համեմատութիւնից երեւում է, որ ուղղանկիւն պատուանդանի վրայ շարունակւում է առաջին խաչքարի արձանագրութիւնը։ Համընկնում են նաեւ խաչքարի ելուստի եւ պատուանդանի փոսի չափերը։ Դրա հիման վրայ կարող ենք վստահօրէն պնդել, որ այլուստ մեզ անծանօթ Սոսթենէս վարդապետի եղբօրորդի Ստեփան[ն]ոսի արձանագրութիւնը գրուած է Հայոց ՇԺԷ թուականին (=1068/1069 թ.)։

Ինչ վերաբերում է Գրիգոր իշխանաց իշխանի կիսատ հայրանունը, որի շարունակութիւնը կրող պատուանդանը կորել է աւերակների մէջ կամ հեռացուել վանքից, ապա միանգամայն պարզ է, որ յստակ ընթերցուող ԱՏՐ տառերը «Ատրներսեհ» անուան սկիզբն են։ Թ-ժ դարերում այդ անուան բազմաթիւ յիշատակութիւններ ունենք թէ՛ Սիւնիքում, թէ՛ Արցախում։ Դա էր Խաչէնի եւ Փառիսոսի իշխանների նախապապ Սահլ Սմբատեանի որդու անունը Թ դ. կէսերին[2]։ Վերջինիս որդիներից մէկը Մեծ Մազրայի նշանաւոր խաչքարի թիկունքին 881/882 թ. («ՅԼ։ թուականութեանս Հայոց») գրուած արձանագրութեան մէջ իրեն Գրիգոր Ատրներսեհեան կոչող «Սիւնեաց եւ Աղվանից» իշխանն է[3]։ Ատրներսեհ անունն էին կրում

---

[1] Կցագրման միակ դէպքը ճակատի վերջին տողի ԵՂԲԱՒՐՈՐԴԻ բառի մէջ է, որտեղ Ւ-ի հորիզոնական գծիկը կցուած է ձախորդ Բ-ին (!)՝ իբրեւ երկրորդ հորիզոնական ելուստ։

[2] Տե՛ս Դասխ., Գ.իբ /իգ/, էջ 340։

[3] Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 334, ճ՝ր 1358։

վերջինիս երկրորդ որդի Սահակ Սեւադայի (Ժ դ. առաջին կէսին Փառիսոսի հզօր իշխանութեան հիմնադրի) թոռը եւ սրա եղբօր երրորդ որդին[1]: Ընդ սմին, Մովսէս Դասխուրանցու շարադրանքն աւարտւում է Ժ դ. վերջով, եւ ԺԱ դարի համար Արցախի իշխանների անուններ յիշատակող սկզբնաղբիւրները սակաւ են. օր.՝ միայն վրացական աղբիւրն է պահպանել Լօռու Կիւրիկեան թագաւոր Դաւիթ Անհողինի (996-1048) չորս որդիներից կրտսերի Ատրներսեհ անունը[2]: Բայց փոխարէնը՝ Ստեփաննոս Օրբէլեանի եւ վիմագիր մի քանի վկայութիւններից գիտենք, որ Սիւնեաց իշխանաց իշխան Աշոտիկի որդի, 1051-1072 թթ. Բաղաց թագաւոր Գրիգոր Ա-ի անները Խաչէնի իշխանաց իշխան (=թագաւոր) Սեւադան էր՝ Սիւնեաց բարեպաշտ տիրուհի դարձած Շահանդուխտ Բ-ի հայրը («ի տանէն Աղուանից՝ դուստր նոցին թագաւորազինն մեծին Սեւադայի»)[3]: Նշենք նաեւ, որ Փառիսոսի թագաւորութիւնն այդ տարիներին արդէն գոյութիւն չունէր (վերջին իշխանը Գրիգորի որդի Փիլիպպէն էր՝ իշխած մինչեւ 1040-ական թթ.), իսկ տարածքը բաժանուած էր Լօռու Կիւրիկեանների եւ Գանձակի Շադդադեանների միջեւ[4]:

Այսքան սուղ տուեալների պայմաններում մենք այնուամենայնիւ հնարաւոր ենք համարել ենթադրել, որ Աղբրաձորի արձանագրութեան մէջ 1069 թ. իրեն յիշատակում է ո՛չ Խաչէնի, եւ ո՛չ Փառիսոսի կամ Լօռու, այլ Գորոզուի (ուշ միջնադարում՝ Դիզակ)՝ այլ աղբիւրներից մեզ անյայտ «իշխանաց իշխան» Ատրներսեհի որդի Գրիգորը[5]: Ինչպէս տեսանք վերեւում, Բագրատունեաց թագաւորութեան որոշ թուլացման արդիւնքում Ժ դ. երկրորդ կէսին Հայաստանի արեւելեան մասում ինքնուրոյն պետութիւններ դարձան ինչպէ՛ս Լօռի – Զորագետը, Փառիսոսը, Խաչէնը, Սիւնիքը (Բաղքը), այնպէ՛ս էլ Գորոզուն, որպիսի փաստն ամենից քիչն է արտացոլուած հայ պատմագրութեան մէջ: Թ դ. առաջին կէսին Ստեփաննոս Աբլ Ասադի եւ

---

[1] **Դասխ.**, Գ.իբ /իգ/, էջ 341:

[2] Матиане Картлиса, с 54; **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները, հտ. Ա, էջ 207: Հմմ. **Ռ. Ի. Մաթեւոսյան**, Տաշիր-Զորագետ, էջ 87:

[3] **Օրբ.**, գլ. ՃԸ, էջ 233; Պատմութիւն Նահանգին Սիսական, գլ. ՃԹ, էջ 318; **Գ. Մ. Գրիգորյան**, Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, էջ 164-165:

[4] **Վարդան**, էջ 134-135: Հմմ. **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 92-95:

[5] **Ա. Յակոբեան**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, սն. 296-300; **նոյնի՝** Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 61-64; **նոյնի՝** Gorozou, capitale du royaume méridional de Dizak, – Les douze capitales d'Arménie, Paris – Marseille, 2010, p. 276. Հմմ. **Cl. Mutafian**, L'Arménie du Levant, t. I, p. 279, t. II, p. 18 (tabl. 6). Գուցէ, Գորոզուի իշխանաց իշխան Գրիգորն էր թողել Դռնավարզ գիւղից 2 կմ արեւելք, Աղիի նահատակ կոչուած եկեղեցու 1071 թ. այն վիմագիրը, որը ԺԹ դ. վերջին նկարագրուել ու թերիներով ընթերցուել է այսպէս. «Եկեղեցուցս փոքր-ինչ վերեւ է սրբատաշ չիչ քարով շինուած բեմն [=որմնափակ խաչքարեր – *Ա. Յ.*], որ ունի 3 մետր լայնութիւն, 2 հաստութիւն եւ 5 մետր բարձրութիւն: Բեմիս արեւմտահայեաց նկատում զետեղուած է երեք գեղեցկաքանդակ եւ նրբագործ խաչարձան, որոց վերեւ գրուած էր. «Թվ. ՈԻ [=*1071 թ.*]. կամաւ ամենակալին Աստուծոյ ես... Գրիգոր... Աստուծոյ միաբան եղբարքս լա... զխաչս իշխանութեան... եւ հայրապետութեան... Օհանէսի տէր Ներսէսի ո... աղաւթեցէ՛ք» (**Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 131): 2004 թ. Քոասնիի գիւղացիների հետ մեր այցելութեան պահին այս կառոյցը գետնայատակ աւերուած էր, իսկ աւազաքարից (իրօք՝ «չիչ») կոթողների բեկորները՝ ամբողջովին հողմահարուած:

Եսայի Աբու Մուսէի օրօք ստեղծուած այդ իշխանութեան տիրակալը ժ դ. վերջերին արդէն երկիցս կոչուած է «թագաւոր» կամ «իշխանաց իշխան» (Տումիի մի վիմագրում եւ Թաղավարդի մօտ, Ջոխտ Պըռաւածառ վանքի մի խաչքարի վրայ)[1]:

Տեղին նշենք, որ Եսայի Աբու Մուսէին ենթակայ՝ Դասխուրանցու (=Մաշտոց Եղիվարդեցու) թուարկած ութ գաւառներից («Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական[-ի Կոտակ], Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք եւ Տրի գաւառ»[2]) Վերին Վայկունիքն ու Բերձորը գտնւում են ամենից հիւսիս-արեւմուտքում՝ տարածուելով Հակարի գետի ձախ, արեւելեան վտակների աւազանում: Բերձոր գաւառանունն «Աշխարհացոյց»-ից յետոյ առաջինը յիշատակում է Մաշտոց Եղիվարդեցին 829 թ. դէպքերը նկարագրելիս. «...զՍտեփաննոս՝ զկոչեցեալն Աբլ Ասադ, որ էածն զԲաբան եւ եհար զԲաղականեցիսն (bclrv զԲաղանիկեցիս), որ ի սուր նիզակաց կոտորեցին զԲերձոր գաւառի զաւանսն զՈւռեաց, զԿառնակաշ, զՀակարի եւ զՏափատ»[3]: Այս թուարկման մէջ երրորդը յիշուած Հակարի «աւանը» («աւան» տուեալ դէպքում նշանակում է «ամրոցագիւղ») մասնագէտների կողմից իրաւացիօրէն համադրուել է ԺԹ դարում Աֆեղու յորջորջուած գիւղի հետ (Ի դարում լքուած), որը գտնւում է ներկայումս էլ շէն Հարար գիւղի միջով հոսող վտակի ստորին հովտում՝ Հակարիի հետ նրա գետակիցից 3 կմ հիւսիս[4] (դրա հիման վրայ գաւառը ճիշտ են տեղորոշել նաեւ Բ. Ուլուբաբեանը եւ Սլ. Սարգսեանը)[5]:

ԺՋ-ԺԷ դդ. մի քանի յիշատակարաններում նշւում են «Հակարու», «Հաքարի», «Հաքարու» կամ «Հագարեան» «երկրի»[6] երեք գրչօջախ գիւղերը՝ Փարաջանց (մեզ է հասել այստեղ ընդօրինակուած 3 գրչագիր)[7], Գետուզ (մեզ հասել է մէկ գրչա-

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 173, ֆմ 604; **Ա. Բաբախանեանց**, Ուխտաւորի յիշատակարանը, Ցաւելուած, էջ 5; **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 91; **Ե. Լալայան**, Վարանդա, էջ 14; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 169, ֆմ 587:

[2] **Դասխ.**, Գ.ժթ /ի/, էջ 327; **Ա. Ցակոբեան**, Մաշտոց Եղիվարդեցի, սն. 36:

[3] Նոյն տեղերում: Բերել ենք գրչական սխալներից զերծ՝ Բ խմբի ձեռագրերի ընթերցումը:

[4] Տե՛ս, օր.՝ ՀՀԾՏ բառարան, հտ. 1, էջ 134, 665:

[5] **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 35; **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 42:

[6] Տեղին նշենք, որ Ս. Կարապետեանը արցախեան «Հակարի երկրի» հետ է կապում նաեւ ԺԴ դարի մի յիշատակարանում նշուած *Հայքարայ Ջորը* իր Անապատիկ գիւղով (**Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 125. ձմմ. ՄՄ Ձեռ. 8256, թ. 113բ; ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 450): Սակայն բնագրի քննութիւնից երեւում է, որ իրապէս դա Կորճայք աշխարհի *Հաքեարի* յայտնի շրջանն է՝ Մեծ Ջաբ գետի միջնահովտում (տե՛ս **Ա. Ցակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 286-290):

[7] **Ս. Տէր-Աւետիսեան**, Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա, Վիեննա, 1970, էջ 127 («սկսայ սուրբ Աւետարանս եւ աջողմամբն կատարեցի ի դուռս Սուրբ Աստուածածնին եկեղեցուս, ի գեղջս, որ կոչի Փարաջանց, ի երկիրս Հաքարու, ի ոտս Դիզափայտու, ի թվին ՌԻԳ [=*1574 թ.*]: Գրեցաւ ձեռամբ սուտանուն կրաւնաւոր Աբրահամ աբեղի, ի կաթողիկոսութեան տանն Աղվանից տէր Գրիգորիսի, որ... Թաւեայմազ փաթշահ... անկամայ տաջկացուց», ձմմ. **Թ. Մինասյան**, Արցախի գրչության կենտրոնները, էջ 44); **Ց. Թօփճեան**, Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, Մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 31 («ես՝ Աբրահամ կրաւնաւորս... սկսայ զսուրբ Աւետարանս... ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսի, ի յերկիրս Հաքարի, ի գեղս, որ անուանի Փարաճանց... ի թվին Հայոց ՌԻԵ-ին [=*1576 թ.*], ի կաթուղիկոսութեան տանն

գիր)[1] եւ Հարար (3 գրչագիր)[2]: Յաւելենք, որ ԺԹ դ. վերջում Գտչավանքի վանահայր Առաքել վրդ. Կոստանդեանցը (նաեւ՝ Կոստանեանց) իր ձեռագիր պատմական աշխատութեան մէջ մի շարք տեղեկութիւններ է հաղորդում Ագարի, այսինքն՝ մեր Հակարի/Հագարեան «գաւառի» մասին. նա, մասնաւորապէս, դրա մէջ է մտցնում Օձաբերդ բնակավայրը, այսինքն՝ Խծաբերդ գիւղը Ջինգեանակապ/Խաչգետիկ վտակի վերնահովտում[3]: Մ. Բարխուդարեանցն այս տարածքում տալիս է Աքերլուից 3-4 կմ արեւելք գտնուող մի ամրոցի նկարագրութիւն, որը համադրելի է Դասխուրանցու յիշատակած Կաուռնակաշ-ի հետ. «Ղալալու բերդ, որի սարն առանձնացած է Բաշարաթ սարի արեւմտեան հանդէպ եւ Բազմին (Բեզմին) սարի հարաւային հանդէպ: Առանձնացած է իւր շրջապատից եւ բերդասարս, որ ունի 3600 ոտք բարձրութիւն եւ որի շուրջն ահագին քերծեր են: Հնուց պարսպուած են մուտքի կողմերն եւ հարկ եղած տեղերն: Ամրոցիս մէջ եւս կան հին շինութեանց շատ բեկորներ եւ աւերակ մատուռ»[4]: Ամրոցը նկարագրել է նաեւ երախտաշատ Շահէն Մկրտչեանը՝ որպէս «Ղալալուի բերդ-քարայր». «...Քերծի գլխին աւերակ գիւղատեղին է: «Գիւղամիջում» մի շինութիւն կայ, առանց դռների եւ լուսամուտ-

---

Աղվանից տէր Յոհաննէս կաթողիկոսի, յիշխանութեան Խուդապանդային»; **Օ. Եգանեան**, Աշխատութիւններ, Հրատ. պատրաստեց՝ **Գ. Տէր-Վարդանեան**, Եր., 2014, էջ 339 («[ՄՄ պատառիկ] 1578 թ. – Հմր 937. Տեղ՝ Փարաճանց գիւղ (Հաքարի երկիր). Գրիչ՝ Աբրահամ. Կազմող՝ Պետրոս. Ստացող՝ Ղոչի»):

[1] ՄՄ Ձեռ. 4932, թ. 267բ-268ա («...կատարեցաւ սուրբ Աւետարանս ի երկիրս Հակարու, ի գեղս Գետուզ{այ} [տողավերջում կայ բոլորագիր *Ա*-ի լոկ ձախ ստեղնը, որը կարող է լինել նաեւ {ոյ} – *Ա. Յ.*], ի դուռս սուրբ եկեղեցոյս Սուրբ Ստեփանոսի: Թվ[ին] ՌԺՁ [= 1567 թ.], ի ղաւնու{թեան} Շահ Թահմազ{այ} [երեւում է բոլորագիր *Ա*-ի լոկ ձախ ստեղնը – *Ա. Յ.*], որդո[յ] Իսմա[յ]էլի, ի կաթողիկոսութիւն {Ա}ղուանից տանս տեառն Գրիգորիսի»):

[2] ՄՄ Ձեռ. 3437, թ. 239ա («Գրեցաւ սուրբ գիրքս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ մեղապարտ... Պաղտասար դպրի, ի թուականութեանս Հայոց ՌՃԺԵ: [=*1666 թ.*], ի յերկիրս Հագարեաց, ի գեօղս, որ կոչի Հարար, ընդ հովանեաւ Սուրբ {...}, ի հայրապետութեան տանս Աղուանեաց տեառն Պետրոսի բազմահանճար կաթողիկոսի, եւ բռնակալութ*իւն* Տաճկաց Փոքր Շահապազի»); **Հայկունի**, Ուղեգնացական ակնարկներ, – «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1885, հմր 94 (1 Դեկտեմբերի), էջ 1 («...այցելեցի պ. Վահան Տէր-Գրիգորեան Դադեանին, որոյ մօտ բաւականին գրչագիր մատեաններ կան: Ահա դրանց համառօտ ցուցակը... 7. Էլի «Մաշտոց». թղթեայ, ՌՃԺԸ թուին [=*1668 թ.*] գրուած «յերկիրս Հագարեան ի գեօղն, որ կոչի Հարար»); **Վ. Ներսիսյան**, Ցուցակ հայերեն ձեռագրաց Լոնդոնի Վելքոմ ինստիտուտի գրադարանի, – ԲՄ, 15, էջ 323 («գրեցաւ կենսաբեր սուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ... Պաղտասար դպրի, ի թուաբերութեանս Հայոց ՌՃԻ [=*1671 թ.*], ի յերկիրս Հագարեան, ի գեօղս, որ կոչի Հարար, ընդ հովանեաւ Սրբոյս Ստեփաննոսի, ի հայրապետութեան տանս Աղուանեաց տեառն Պետրոսի եւ բազմահանճար կաթողիկոսի, եւ բռնակալութեան Տաճկաց Շահ Սլեմանին»): Հմմ. **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 161:

[3] Տե՛ս ՄՄ Ձեռ. 7822, թ. 149բ: Հեղինակի եւ նրա երկերի մասին տե՛ս **Առաքել Վրդ. [Կոստանեանց]**, Դիզակի մելիքութիւնը. Նիւթեր հայ մելիքութեան մասին, պր. Ա, Վաղարշապատ, 1913; **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 104; **Ա. Մաղալյան**, Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտչայ վանուց» աշխատությունը, – ԲՄ, 18, Եր., 2008, էջ 283-305:

[4] **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 402; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 198:

ներին: Շէնքի ներսից քերծի միջով քարէ սանդուղքը իջնում է դէպի ստորգետնեայ գետակը»[1]: Այդտեղ՝ խաչգետիկ վտակի ձախափնեայ մի հսկայ, ձեռակերտ կոթողի նման ժայռի (բարձրութիւնը՝ աւելի քան 150 մ, վերին հարթակի չափերը՝ 20x100 մ) ողջ գագաթը գրաւող ամրոցի մեր նախնական հետազօտութիւնը 2007 թ. Սեպտեմբերին (քաշաթաղցիների եւ գրող Կիմ Բակշիի ուղեկցութեամբ)[2] յստակ ցոյց տուեց, որ այն կառուցուած է խաչէն-գորոզեան դարաշրջանի բերդաշինական տեխնիկայով: Պարիսպների պահպանուած կտորները շարուած են տեղի բազալտի կիսասրբատաշ, միջին չափսի քարերով եւ կրաշաղախով: Շրջակայքում թափուած են զարգացած միջնադարին բնորոշ խեցեղէնի բեկորներ:

Գորոզուի իշխանութեան մաս կազմած միւս՝ Վայկունիք գաւառի համար («Աշխարհացոյց»-ում՝ նաեւ Վակունիք, Վակունիս, իսկ Դասխուրանցու աղբիւր՝ Մաշտոց Եղիվարդեցու ներկայացրած ութ գաւառների ցանկում՝ Վերին Վայկունիք) նախորդ գլխում արդէն նշեցինք, որ այն պէտք է տեղորոշել ոչ թէ Տրտուի վերնահովտում՝ Ծարում (ինչպէս անում էին Ղ. Ալիշանը, Մ. Բարխուդարեանցը, Ս. Երեմեանը եւն[3]), այլ Բերձորից հիւսիս՝ Հակարի գետի Շալուայ օժանդակի հովտում, Արցախը Սիւնիքից բաժանող նրա միւս՝ Հոչանց աջ օժանդակի եւ Արցախեան լեռնաշղթայի միջեւ, հիւսիսում մինչեւ Հակարիի եւ Տրտուի ջրբաժան Բեւեռաթափի լեռները (յորջորջուած՝ «Միխթոքեան»)[4]: Կրկնենք, որ Շալուայի հովտում իր անունը ցայսօր անփոփոխ պահպանած Վաղազին շէն գիւղի (Քաշաթաղի շրջանի Բերձոր շրջկենտրոնից 30 կմ հիւսիս) մերձակայքում գտնուած Վաղազնոյ գետը Վակունիս բնակավայրի հետ միասին է հանդէս գալիս դեռեւս Գտչավանքի՝ 1246 թ. շինարարական վիմագրում. «Վակունիս ի Վաղազնո[յ] գետովն»[5]: Դրա շնորհիւ առաջանում է Վակունիս տեղանունը Վաղազին գիւղից 4 կմ հիւսիս-արեւմուտք (Շալուայ օժանդակի Նաղդալի յորջորջուած, ներկայումս՝ Մաղդանց կոչուող վտակի դիմացի ձորալանջին) «Բչանիս» յորջորջմամբ գիւղանուան հետ համադրելու հնարաւորութիւնը: Հէնց այս Բչանիս/Վակունիսից 9 կմ դէպի հիւսիս-արեւմուտք գտնուող եւ ներկայումս էլ շէն Աւախիշ գիւղում (որի անունը ԺԹ-ի դդ. վերածուել

---

[1] **Շ. Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, էջ 91; **Ш. Мкртчян**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, с 103.

[2] **А. Акопян**, Крепость Карнакаш – Галалу у села Хакари в Кашатахском районе, – "Голос Армении", 11. 10. 2007, էջ 7 (հայերէնը՝ «Գոլոս Արմենիի», 20.10.2007, էջ 6):

[3] **Հ. Ղ. Ալիշան**, Արցախ, էջ 10, 14-16; **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 402-403; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 8, 112, 217:

[4] Տե՛ս **Ա. Ծակոբեան**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, սն. 293, 309, ծն. 55; նոյնի՝ Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը..., սն. 266; նոյնի՝ Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 220-229:

[5] **Ա. Ծակոբեան**, Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը..., սն. 250-256, 261: Վիմագրի նախորդ՝ Եսայի Հասան-Ջալալեանց կաթողիկոսի (ՄՄ Ձեռ. 7821, թ. 8ա-բ, ՄՄ Ձեռ. 9923, թ. 11ա), Խաչիկ Դադեանի (ՀՊԿՊԱ, ֆ. 319, ցուց. 1, գործ 107, թ. 21բ-22ա), Մ. Բարխուդարեանցի (Արցախ, էջ 80-81) եւ Ս. Բարխուդարեանի (Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 182-183) ընթերցումներն արդէն պիտի հնացած համարուեն:

*էր Արիխլու-ի, թէպէտ գիւղի առջեւ ռազմական մեծամասշտաբ քարտէզներում կայ «Արախշուն» անունով հանդամասը) ԺՋ դարում ընդօրինակուել են 2 ձեռագրեր, եւ նրանցից մէկում գրչութեան տեղը նշուած է՝ «ի յերկիրն Վկունիս, ի գ[ե]աւղս, որ կոչի Աւախիշ»[1]: Վերջին գիւղանունն առանց սկզբի ձայնաւորի տարբերակով յիշատակուած է 1653 թ.՝ «ի յերկիրս Ծարա[յ], ի գեօղն Մոս» ընդօրինակուած ձեռագրում, որի ստացող Թադէոս երէցը կոչուած է՝ «բնական ի յերկրէն Մաղաւզայ, ի գեղջէն Րախիշոյ»[2]: Ուշմիջնադարեան այս Մաղաւուզ (var. Մաղայոզ, Մաղայուզ) գաւառի տեղորոշումը Շալուայի գետահովտում կասկածի ենթակայ չէ, քանի որ յիշատակարաններում ու վիմագրերում վկայուած են նրա Արտաշիբի (var. Արտաշիպի, ներկայիս շէն՝ Արտաշաւի, Վաղազինից 2 կմ հարաւ)[3] եւ Բազմատուս (հմմ. Բիւլիւղուզ [<*Բիւրատո՞ւս] յորջորջումով գիւղը՝ եւս 6 կմ հարաւ)[4] բնակավայրերը: Ըստ ԺՋ դարի յիշատակարանի՝ «Վակունիս երկրի» Հովատուս գիւղը (երկու այլ ձեռագրերում՝ «Հաւատուս» եւ «Հաւայտուն») իր երկրորդ անունով կոչւում էր «Հընկուզակ», «Հինգուզակ» կամ «Հենգուզակ»[5], որը համադրելի է թուում* Կոզլու

---

[1] ՄՄ Ձեռ. 4181 (Աւետարան, 1568 թ.), թ. 257ա: Արախիշի նոյն եկեղեցում եւ նոյն Կարապետ գրչի կողմից 1578 թ. արտագրուած միւս Աւետարանը ՄՄ Ձեռ. 2537 ձեռագիրն է (յիշատակարանը՝ թ. 288ա-բ):

[2] ՄՄ Ձեռ. 3647 (Աւետարան, գրիչ՝ Մարտիրոս Խաճորեկցի), թ. 342բ:

[3] Տե՛ս ՄՄ, պատառիկ ՒՄՐ 1015, թ. 3բ («...ի երկիրս Մաղայուզ, ի գ*ա*ւղս Արտայշիբի»); **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 140 («Ի երկիրս Մաղայոզ, ի գեւղս Արտաշիպի...»); Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, Կազմեցին՝ **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, հտ. Ա (1601-1620 թթ.), Եր., 1974, էջ 561, հտ. Բ, Եր., 1978, էջ 699:

[4] Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 129 (Գեղարքունիքի Վանքով խարաբայ եկեղեցու մի շիրմաքարի 4-տողանոց վիմագրում. «Սուրբ խաչս բարէխօս Հաճուբին, ... երկրէն Մաղաւուզոյ, ի գեղչէն Բազմայտուսոյ. թվին ՈՃՃԸ [=*1659 թ.*]»); պր. V, Արցախ, էջ 56 (Գանձասարի գաւթի արտաքուստ հիւսիսային պատի արեւելեան մասում 7-տողանոց, այժմ կորսուած վիմագրում. «Ես՝ Իսուբ, տվի Բազմայտվեց նովերին հող ի սուրբ ուխտս. ... թվին ՋԼՆԴ [=*1495 թ.*]»): Բնագրի «նովերի» հետ կարող է կապուել Բիւլիւղուզ յորջորջուած՝ ներկայիս շէն Բազմատուս գիւղից 2 կմ հիւսիս բարձրացող սարի Новыбаш անունը (1779,7 մ), եթէ ենթադրենք, որ այն առաջ է եկել հայերէն «Նովի գլուխ» հիմքից:

[5] Այդ յիշատակարանը Քերթ գիւղի Աւետարանից 1890 թ. արտագրել է Խ. վրդ. Դադեանը (ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 240, վաւ. 134, թ. 1-2. «...գրեցաւ ի գաւառս Վակունիս, ի գե[ւ]ղս, որ կոչի Հովատուս, որ Հընկուզակս անուանի»): Միւս գրչագրի յիշատակարանը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Կազմեց՝ **Հ. Յ. Աճառեան**, էջ 68 («...գ*ր*եցաւ սբ. Աւետարան ի գեղոյս Հաւատուս կոչի, որ է Հինգուզակս»): Երրորդ ձեռագիրը Կուրի ձախափնեայ Ղալակեայ գիւղում էր (**Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 208. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ փէծուն եւ բազմամեղ գրչի եւ սուտանուն վարդապետ Աբեթէի ի գեղս Անուզ Հաւայտուն Հենգուզակ [*սրբագրելի եմ՝ «Մաղաւուզ... Հաւայտուս... Հընկուզակ» – Ա. Յ.*] ի դուռն սբ. եկեղեցւս մասն Պանդալիոն բժշկի եւ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի ղանութեան Շահ Թահմազին որդոյ Շահ Իսմայիլի, ի թուականութեան Հայ տումարիս ՌԺԳ [=*1564 թ.*]...»): Այն յիշուած է նաեւ Մ. արք. Սմբատեանցի «Նկարագիր Շամախւոյ թեմի...» գրքում, ըստ՝ **Օ. Եգանեան**, Աշխատութիւններ, էջ 72 («ՀՄՐ Ը. «Աւետարան». տեղ՝ Անուզ Հաւայտուն Հենգուզակ: Գրիչ՝ Աբեթ վրդ.: Նկարագրութեան պահին եղել է Ղալակայ գիւղի Տէր Սարգիս քհ.յի տանը»): Հմմ. **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 223-224; **Թ. Միհաւյան**, Արցախի գրչության կենտրոնները, էջ 81:

գիւղատեղիի յորջորջմանը՝ Արտաշաւիից 5 կմ հարաւ-արեւմուտք (պրսկ. «գո՛զ» – «ընկոյզ» բառից[1]):

Մէկ այլ ենթատեքստում, այն է՝ կուրի ձախափնեայ կապաղակ գաւառի Մեծ Սեօգիւթլու գիւղի եկեղեցում Մ. Բարխուդարեանցին հանդիպած՝ «Ծար գիւղաքաղաքում» Հայոց «ԹՎ. ՊՀՋ»-ին (=1387 թ.) ընդօրինակուած Աւետարանի գրիչ Սարգիս վարդապետը Վակունիս եւ Ծար գաւառանունները յիշատակել է կողք կողքի, ինչն ուղղակիօրէն ստիպում է բացառել նրանց նոյնացման հնարաւորութիւնը: Այդ յիշատակարանում «թաթարաց հրոսակների խուժած ժամանակի» մասին «բնիկ» ծարեցի գրիչը տրտնջում էր հետեւեալը. «Նախ հալածուելով փախայ Վակունիս գաւառ, ապա Ղարաբաղ՝ Ծափանիս գիւղաքաղաք, հուսկ ուրեմն վերստին եկի բնիկ երկիրս Ծար»[2]: Վայկունիքի եւ Ծարի համադրումը նոյնքան բացառող պիտի համարել նաեւ աղբիւրների այն ենթատեքստերը, որոնք կողք կողքի յիշատակում են Ծար գաւառը եւ Մաղաւուզը (որի համապատասխանութիւնը աշխարհացոյցեան Վայկունիք-ին նկատեցինք վերեւում): Այդպէս է, օր.՝ 1728 թ. օսմանեան Սարը-Մուստաֆա փաշայի հրապարակած հրովարտակում, որը Գանձակի («Գեանջայի»), Ծարի («Ջարուզիբիլի») եւ Մաղաւուզի հայ բնակչութեանը, մելիքներին ու գեղջաւագներին ծանուցում էր Գանձասարի վախճանուած կաթողիկոս Եսայու փոխարէն նրա եղբայր Գրիգոր վարդապետի աթոռակալելու մասին[3]:

Այսպիսով, Բերձոր եւ Վայկունիք գաւառների արեւմտեան սահման պէտք է համարել Հակարիի գետագիծը, եւ նոյնքան միանշանակ է Օրբէլեանի բազմաբնոյթ տեղեկութիւնների (այդ թւում՝ գիւղացանկերի) հիման վրայ աշխարհացոյցեան Սիւնիքի Հաբանդ եւ Աղահեջք գաւառները հարաւից դէպի հիւսիս այդ գետի ու նրա Հոչանց օժանդակի աջափնեակում տեղորոշելու անհրաժեշտութիւնը[4]: Հնարաւոր չէ համաձայնել Ղ. Ալիշանի, Մ. Երեմեանի, Բ. Յարութիւնեանի եւ Ռ. Հիւսընի հեղինակած քարտէզներում այդ գաւառների արեւելեան սահմանները Արցախեան լեռնաշղթային հասցնելու հետ[5], որը հակասում է միջնադարեան աղ-

---

[1] **Հ. Աճառեան**, Հայերէն արմատական բառարան, հտ. Բ, Եր., 1973, էջ 130; **Գ. Մ. Նալբանդյան**, Պարսկերեն-հայերեն բառարան, էջ 493; Персидско-русский словарь. Составил **Б. В. Миллер**, с. 429; Инструкция по русской передаче географических названий Ирана, с. 112.

[2] **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 220: «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» գրքում այս յիշատակարանը չի ընդգրկուել:

[3] ՀՊԿՊԱ, ֆ. 57, ցուց. 1, գործ 4, թ. 1: Հմմ. **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 12; **Պ. Զոբեանյան**, Քարվաճառի էթնիկ դիմագծի հարցի շուրջ, էջ 220-221:

[4] Հմմ. **Ա. Ցակոբեան**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, սն. 277-279; նոյնի՝ Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 301-302:

[5] **Հ. Ղ. Ալիշան**, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, էջ 265-271; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 32; **R. H. Hewsen**, Armenia, p. 100. Այս հարցում հետեւողականօրէն ճիշտ տարբերակն էր պնդում Թադ. Ցակոբեանը (**Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը /պատմա-աշխարհագրական առումով/, Եր., 1966, էջ 155): Ցաւելենք, որ հնարաւոր չէ նաեւ որեւէ չափով ընդունելի համարել Բերձոր գաւառը («Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան որոշ ձեռագրերում՝ Բերդաձոր)

բիւրների վկայութիւններին եւ լոկ կրկնում է ԺԹ դ. Ռուսական կայսրութեան ստեղծած Զանգեզուրի գաւառակի (ուեզդի) արեւելեան սահմանի պատկերը:

Եսայի Աբու Մուսէին ենթակայ ութ գաւառների դասխուրանցիական ցուցակում ամենից արեւելեան տեղորոշումն ունի ուտիքեան միակ՝ Տրի գաւառը (var. Տռի)[1], որը, ըստ ՊԱ-ի (=Մաշտոց Եղիվարդեցու) վկայութիւնների, մի կողմից յարում էր Սիսական-ի Կոտակ գաւառին, միւս կողմից՝ Ամարաս եւ Մխանք գաւառներին[2]: Այդ պատկերը լրացնում է Դասխուրանցու կողմից բառացի արտագրուած «Տեսիլն Վեհկի» վերնագրով մի յիշատակագրութիւն (Ադրիանէի գրառած), ըստ որի՝ սրբոց նշխարները («ծածկեալ ի գաւառին Արցախայ, ի Մխանց տոհմին, ի վայրս Կաղսետու [a կաղսետոյ]») հանելու եւ Պարտաւի աթոռանիստ հասցնելու յանձնարարականը Ջ դարի Աղուանից հայրապետ Աբասից ստացել էր «Դանիէլ մեծահասատ քահանայն Տրիոյ»[3]: Ըստ այսմ, Գտչավանքի շինարարական վիմագրին նուիրուած յօդուածում նշել ենք, որ Տրին կարելի է քարտէզագրել Ֆիզուլի – Կարեագինօ քաղաքի շրջանում եւ դէպի արեւելք ու հարաւ, արեւմուտքում՝ մօտաւորապէս Ուրեանսար – Կաւաքասար – Խորադիզ գծից մինչեւ Գեաւուրարխի ջրանցքն արեւելքում[4]: Նշելի է, որ իրաւացիօրէն ուղղելով Տրին Ուտիքի հարաւային մասից խիստ անբաւարար փաստարկներով Տրտու գետի միջին հոսանք («հեռագայ Ջրաբերդ գաւառի տեղում») տեղափոխած Ս. Երեմեանի սխալը[5]՝ ուսում-

---

Տրտու գետի միջնահովտի երկու ափերին տեղորոշող ուսումնասիրողների տեսակէտը (Խ. Դադեան, Ս. Տ. Երեմեան, Բ. Յարութիւնեան, Ռ. Հիւսըն)՝ յենուած բացառապէս «Բերդաձորի Սուրբ Գրիգոր» կոչուած վանքի անուանաձեւի վրայ:

[1] «Աշխարհացոյց»-ի համաոօտ խմբագրութեան ձեռագրերում, որոնք պահպանել են Բուն Աղուանքին միացուած ուտիք-արցախեան 20 գաւառների ցանկը, մի հին գրչի վրիպման արդիւնքում *Տրի* գաւառանունը կորսուել է (մէկընդմէջ խմբերը հարաւային մասում այսպիսին են. *Պածկանք → Մուխանք / Վայկունիք → Բերձոր / Փոքր Հաբանդ → Սիսական-ի Կոտակ →* [*Տրի*] *→ Արաև-ռոտ*), բայց որոշ գրչագրեր նրա հետքերը պահել են յաջորդ՝ Արաևռոտ (*var.* Ասռոտ) գաւառանուանն սկզբին կցուած *ՍՏ* կամ *ՈՏ* տառերի տեսքով (**Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 23):

[2] **Դասխ.**, Գ.ժթ /հ/, էջ 327 («...Ամարաս, Պազկանք, Մխանք, Տրի գաւառ»); Գ.ի /իա/, էջ 331 («...եկին հասին Բաղականացիքն [*crv* Քաղաքականացիքն, *իմա՛* բայլականցիները – *Ա. Յ.*] եւ արարին վնաս Սիս[ակ]ան, Տրւոյ եւ Ամարաս գաւառաց»):

[3] **Դասխ.**, Բ.զ, էջ 120-121: Կաղսետ գիւղանունը կարելի է համեմատել Խոնաշէնն գետակի վերնահովտի ներկայիս «*Կաղարծի*» գիւղանուան կամ, գուցէ, նոյն գետակի հիւսիսային ջրբաժան լեռնաշղթայի հիւսիսային լանջին գտնուող Բերդաշէնն գիւղի նախկին «*Կալաքենդ*» յորջորջման հետ: «Տր*խոյ*» (*փխմ.* Տրւոյ) զուգահեռ տարբերակի համար, որը յարուցել է Բ. Յարութիւնեանի կասկածանքը (**Բ. Հ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 29)՝ ընդհուպ մինչեւ «Տր*խոյ*» անձնանուն ենթադրելը (չնկատելով, որ աղբիւրը տալիս է Տրիի քահանայի Դանիէլ անունը), հմմ., օր.՝ **Ս. Ա. Ավագյան**, Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ-ԺԳ դարերի վիմական արձանագրություններում, – Մաոր եւ հայագիտության հարցերը, էջ 129-166 (վերահրատ.՝ **Ս. Ա. Ավագյան**, Վիմագրական պրպտումներ /խմբ.՝ **Պ. Մ. Մուրադեան**/, Եր., 1986, էջ 169-203, յատկ.՝ էջ 169-170):

[4] Տե՛ս **Ա. Յակոբեան**, Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը..., սն. 270 եւ 299 (քարտէզը):

[5] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 86:

նասիրողներն այն, որպէս կանոն, քարտէզագրել են Կուրի ափերին, «Կարկառ գետի ստորին աւազանում»[1]: Սակայն պարզ է, որ ՊԱ-ի երեք ուղղակի վկայութիւնների հիման վրայ դա էապէս ուղղելի է դէպի հարաւ-արեւմուտք, այսինքն՝ դէպի Գորոզուի իշխանութեան մաս կազմած արցախեան գաւառներին յարող տարածքը: Իսկ Գտչավանքի շինարարական վիմագրում «Բէլուկան»-ի (=Բայլական) վերագրումը այդ վանքի տիրոյթներին, թերեւս, դէպի արեւելք Տրիի առաւելագոյն ձգուածութեան մասին աղբիւրագիտական միակ կռուանն է. ըստ այդմ՝ հիւսիս-արեւելքում այդ գաւառը կարող էր սահմանակցել Ռոտ Պայեակ, իսկ արեւելքում՝ Արաւռոտ – Առաւ-ռոտ *ուտիքեան գաւառներին, այլ ոչ թէ Կուրին:*

Ի դէպ, Բուն Աղուանքին միացուած 20 ուտիք-արցախեան գաւառների՝ աշխարհացոյցեան թուարկման խմբաշարերի ուշադիր դիտարկումից (...Ուտ-Ռոստակ → Ռոտ Պայեակ / Մեծ Կուանք → Մեծ Իրանք... /.../ ...Սիսական-ի Կոտակ → Տրի → Արաւռոտ)[2] երեւում է, որ Ռոտ Պայեակ-ը (var. Ռոտ Պացեան) գտնուել է Ուտիք նահանգի կենտրոնական Ուտի Առաւձնակ գաւառից անմիջապէս հարաւ, ուստի կարող է տեղորոշուել մօտաւորապէս կարկառի ստորին հովտում, թերեւս, մինչեւ «Աղգեօլ» յորջորջուած ճահճալճերի շրջանը: Ըստ այսմ՝ պէտք է սրբագրել նոր գրականութեան մէջ գրեթէ առանց բացառութեան կրկնուող սխալը, երբ, չնկատելով կամ անտեսելով Ռոտ Պայեակ-ի մասին միակ աղբիւրի ուղիղ ցուցումը եւ հիմք ընդունելով աղբիւրների հետ կապ չունեցող երկրորդական հանգամանքներ (օր.՝ տեղանուան ստուգաբանութեան այլապաճոյճ տարբերակներ[3])՝ գաւառը թեթեւօրէն տեղափոխում են Կուր – Երասխի միջագետքի հարաւ-արեւելեան անկիւնը: Այնինչ այդ անկիւնում «Աշխարհացոյց»-ն իրականում աւարտում է 20 գաւառների թուարկումը, ընդ որում՝ Տրի-ով եւ վերջին Արաւռոտ-ով:

Կարեագինօ – Ֆիզուլի քաղաքից 10 կմ հարաւ-արեւելք գտնուող «Քիւրդլար» յորջորջուած գիւղի տակով (որը գուցէ եւ հէնց Գտչավանքի վիմագրում յիշատակուող Քրդագետ բնակավայրն է) անցնում է մի գետակ, որն սկսւում է Հադրութից հիւսիս բարձրացող Վնեսայ լեռան (նաեւ՝ Արգունաշ) հիւսիսային լանջերից, Քիւրաթաղ (նաեւ՝ Հիւքիւրաթաղ), Դուդուկչի եւ Իսէկեցիք (նաեւ՝ Էդիլլու) գիւղերից վեր: Ֆիզուլիի շրջագծի մէջ այդ գետակը մօտենում է Իշխանագետի եւ Մանասի (յորջորջուած՝ Քեօնդալան, Գտչավանքի վիմագրում, ըստ ամենայնի՝ Հզարագետ[4]) ձո-

---

[1] Տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբյան**, Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության, էջ 37-38; **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 25 եւ քարտէզը; **Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 28-29; **R. H. Hewsen**, Armenia, p. 100, բայց հմմ. էջ 41-ի "The Kingdom of Caucasian or Caspian Albania (Aluank')" քարտէզում՝ հարցական նշանով:

[2] Ուտիքի գաւառացանկում այս շարքը սկզբում է. «Արաւռոտ → Տրի → Ռոտ Պայեակ...»:

[3] Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Դրվագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության, էջ 38 եւ **Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 30-31 (մի բանավէճ է այն մասին, թէ ինչից բխեցնել «Պացեան» բաղադրիչը՝ *պարսիկ*-ի՞ց, *պատել*-ի՞ց, թէ՞ «չպահածոյացուած» *պահակ*-ից):

[4] Տե՛ս **Ա. Ցակոբեան**, Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը..., սն. 270:

*րակներին, մի քանի կմ հոսում նրանց զուգահեռ, բայց յետոյ հեռանում է եւ իր առանձին, տարուայ մեծ մասը ցամաք հունով իջնում դէպի Երասխ: Այդպէս են նաեւ միւս երկու գետերը, եւ բնութեան այս հետաքրքիր պատկերը՝ երեք գետերի մօտենալը մի կէտում, ապա հեռանալը, հիմք է տուել մեզ՝ ենթադրաբար առաջ քաշելու մի վարկած, ըստ որի՝ հնարաւոր է հէնց դրանից բխեցնել գաւառի «Տրի» անունը: Այն ուղղակի կարող էր «երեք» նշանակել (գուցէ՝ *Տրի-ռոտ-ի՞ց = «Երեք գետ», հմմ. Արաճռոտ, Ռոտ Պայեակ, Աղանդ-ռոտ, Բաղան-ռոտ, Ճուաշ-ռոտ եւն), ինչպէս ունեն հնդեւրոպական մի քանի, այդ թւում՝ որոշ իրանական լեզուներ[1]:*

Գորոզուի իշխանութեան Պազկանի/Պածկանի գաւառը (նաեւ՝ Պարսկանի, Պարզկանի), ըստ ամենայնի՝ հիւսիսային դիրք ունէր: Այն ձգւում էր Մուխանքից (որի՝ ամենից հիւսիս-արեւելեան տեղորոշման հարցում մասնագէտները միակարծիք են[2]) դէպի արեւմուտք, սկսած Քեաթուկ (պրսկ.՝ «գեղուկ» – «լեռնանցք») գիւղի հատուածից, Կարկառի եւ նրա վարարակն օժանդակի աջափնեակով: Ս. Երեմեանը, ի տարբերութիւն նախորդ եւ յաջորդ բազմաթիւ գիտնականների, էապէս արժեւորեց այս «Պարսկանքի» (=Պազկանի, որն այլ քարտէզներում նա կոչում էր նաեւ «Բազկան»[3]) տեղորոշումը Կարկառի վերնահովտում՝ կատարուած Ղ. Ալիշանի կողմից, ով գրում էր. «Եւ ո՛չ մի շէն կամ վայր նշանակի ի պատմչաց յայս գաւառ, որով բաց ի սահմանակցութենէ Ամարասայ՝ չէ մարթ գիտել ինչ զհանգամանաց նորին: Այլ թուի թէ ունէր սա զձորահովիտն Գարգարայ, յականց նորա մինչեւ ի դաշտաբերանն Գարգարացւոց... ի հարաւոյ կուսէ առեալ զամենայն հովիտս արեւելագնաց վտակաց, մինչեւ ի ջրբաժին գետոցն, որք ի հարաւ յԵրասխ իջանեն: Եւ ըստ այսմ գրաւի ի սմա հիւսիսային ծայր այժմեանս մեծի Վառանդինայ գաւառի, զոր եւ համարիմք բնիկ վիճակ Շուշայ, յանուն մեծի քաղաքին»[4]:

---

[1] **Ա. Յակոբեան**, Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը..., սն. 271-272: Հմմ. **Հ. Աճառյան**, Հայերէն արմատական բառարան, հտ. Բ, էջ 576-577; **Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов**, Индоевропейские языки и индоевропейцы..., т. II, с. 845. «Ռոտ» բաղադրիչի մասին տե՛ս **Հ. Հիւբշման**, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 284-285:

[2] Հմմ. **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 71; **Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 39; **R. H. Hewsen**, Armenia, p. 100. Ընդ սմին, գաւառն աւելի հարաւ-արեւելք տեղորոշող եւ Երասխի ափերի Մուղան-Միլի դաշտերի հետ ինչ-որ կերպ կապող մասնագէտների մօտեցումները (**Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 22-24; **Բ. Ուլուբաբյան**, Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը, Եր., 1994, էջ 10-11; **Բ. Հարությունյան**, Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն..., էջ 39; **Ս. Սարգսյան**, Արցախ, էջ 57-61), որ զուտ վարկածների արդիւնք են եւ աղբիւրագիտական փաստերի մատնանշման անգամ յաւակնութիւն չունեն, ներկայումս կարելի է էապէս յաղթահարուած համարել:

[3] Ըստ Յովհ. Կարագեոզեանի՝ *Պազկանք* գաւառանունը հնարաւոր է բխեցնել բիւհինական Ռուսա Ա արքայի՝ Ծովինարի սեպագիր արձանագրութեան *Պազուա* երկրանունից՝ տրուած «հայերէնի սեռական հոլովով» եւ միջանկեալ **Պազիկանք* տարբերակով (**Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 202):

[4] **Հ. Ղ. Ալիշան**, Տեղագրութիւն Հայաստանի – Արցախ, – «Բազմավէպ», 1989, էջ 211 (վերահրատ. մէջ՝ Եր., 1993, էջ 107-108): Հմմ. **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 77; **R. H. Hewsen**, Armenia, p. 100.

Միայն թէ՝ Ղ. Ալիշանի եւ Ս. Երեմեանի պատկերացրած գաւառատարածքից հարկ է, որոշ սրբագրում կատարելով, հանել Վարարակն – կարկառ գետագծի ձախափնեայ հատուածները (որտեղ Արցախի կենտրոնական գաւառներից մէկն էր՝ Պիանքը) եւ փոխարէնը ներառել Կուրի ու Երասխի աւազանների ջրբաժան Բովուրխանի լեռնագագաթից նաեւ հարաւ-արեւելք ընկած՝ Մանաս (Քեօնդալան) գետի ու նրա Ամարաս վտակի վերնահովիտները՝ Աւետարանոցի եւ Հերհերի գիւղախմբերը: Հէնց այս վերջին տարածքում է 9 դ. սկզբում շարադրուած «Վաչագանի վէպ»-ը յիշատակում «Արցախա[յ] Պազկանք աշխարհի» (իմա՛ գաւառի)՝ Ամարաս գիւղաքաղաքից ոչ շատ հեռու գտնուած Վե[հ]կերտ բնակավայրը, որտեղից մշտապէս Ամարաս էր այցելում Յոբ երէցը[1]: Ըստ ամենայնի՝ դա ներկայիս Քերթ գիւղն էր Ամարաս գետակի վերնահովտում[2], որի անունը, թերեւս, առաջացել է իր վաղ անուանաձեւի սկզբնամասի «վե[հ] – բեհ» իրանա-հայկական բաղադրիչի անկումով եւ բաղաձայնների շնչեղացմամբ (Կ→Ք, Տ→Թ): Քերթից 2 կմ հարաւ գտնուող ներկայիս Քարահունջ գիւղը եւս Քարուէճ վաղնջական տարբերակով յիշատակուած է նոյն աղբիւրի յարակից երեք հատուածներում՝ իբրեւ Ամարասից ոչ շատ հեռու «աւթի տեղ», թէպէտ եւ առանց գաւառի անունը նշելու[3]:

Այսպիսով, Կարկառի Վարարակն օժանդակի ողջ աջափնեակում սկսւում էր մշտապէս Ամարասի կամ Գտչավանքի եպիսկոպոսութեանը ենթակայ հարաւային Արցախի հատուածը, որտեղ ուշ միջնադարում առաջացան Դիզակի, Վարանդայի եւ Քոչիզի մելիքութիւնները (վերջինը՝ շուտով նախորդին միաւորուած)[4]: Վարարակնի ձորակից անմիջապէս հարաւ աղբիւրները յիշատակում են Ջառիստ գիւղը (Գտչավանքի շինարարական վիմագրի այս տեղանուան համադրումը հետագայի Ջառիսլու յորջորջմամբ գիւղի հետ որոշակի թէականութեամբ է) եւ Շուշու-ն (=

---

[1] **Դասխ.**, Ա.իբ, էջ 75; ՄՀ, հտ. Գ, էջ 100, նախ. 1-2 («Երէց մի Վե[հ]կերտու՝ Յոբ անուն, ճգնաւոր եւ յոյժ առաքինի վարուք կեցեալ յաշխարհի ... բազմաջան աշխատութեամբ իւրով, հաւատովն եւ սիրովն Քրիստոսի զմեծագոյն աշխարհ մի Արցախա[յ]՝ Պազկանք [*a* Պարսպականս, *l* Պազկանց, *z* Պարզկանք] անուն, դարձուցանէր ի ճանապարհէն մոլորութեան... եկեալ կատարէր բազում անգամ զյիշատակ սրբոյն Գրիգորիսի եւ ասէր...»):

[2] Հմմ. **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 309; **Մ. Մանուկյան**, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները, քաղաքները, գյուղերը, Եր., 2015, էջ 358:

[3] **Դասխ.**, Ա.իա, էջ 72-73; Ա.իգ, էջ 84; ՄՀ, հտ. Գ, էջ 97-98 («...հասեալք ի Քարուէճ փոքրագոյն գիւղ մի [*bclrz* փոքրագոյն ագարակն Քարուէճ] ... ի Քարուիճա[յ] չուե[ա]լ բանակին, յայնմիկ յայտ [*a* չուեալ ի Քարուիճէ, կանգնեալք յառաջ] ելանէին ի գեղաքաղաքն յԱմարաս», էջ 110 («...մինչեւ ցՔարուէճ՝ աւթի տեղ»): Հին Քարուէճ գիւղատեղիի մասին տե՛ս **Ш. Мкртчян**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, с. 121-122.

[4] Հարաւային Արցախի վաղմիջնադարեան մնացեալ գաւառների (Միւս Հաբանդ, Սիսական-ի Կոտակ, Ամարաս, Մուխանք) կոնկրետ տեղորոշումների մասին մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 272-318: Արցախի մելիքութիւնների մասին առաւել մանրամասն տե՛ս **Ա. Մաղալյան**, Արցախի մելիքությունները եւ մելիքական տները XVII–XIX դդ., Եր., 2007 (ռուսերէնը՝ Եր., 2007, ցաւօք, հեղինակը Քոչիզ գաւառին անհրաժեշտ ուշադրութիւն չի յատկացրել); **Գ. Աթայան**, Տող բերդաքաղաքի պատմություն, Եր., 2010, էջ 30-137:

Շուշի)[1]*։ Վերջինիս անուան Շօշ, Շօշի կամ Շօշու տարբերակները վկայուած են առաւելապէս ԺԸ-ԺԹ դդ. երկերում ու փաստաթղթերում։ Բերենք մի վկայութիւն՝ «Թալիշու մահլն, Աղջայքանդ» գիւղում Ոսկան ատենադպրի գրած հետագայի խիստ տեղեկաշատ յիշատակարանից. «Ի թուականութեանս մերում ՌՄՀ-ն էր [=1759 թ.], զոր մահ անկաւ ի յերկիրն Խամսայ, ի գիւղն Հատրութ, որ է Տիզաղ։ Յետ այնորիկ անկաւ գիւղն Շօշվու եւ ապայ Դարնավազ, այլ եւ Շահբուլաղն...»*[2]*։*

Գորոզուի իշխանութեան այսպիսի լայն ընդգրկումը հաստատում է նաեւ Ամարասի (հարաւային Արցախի) եպիսկոպոսութեան սահմանները նկարագրող Գտչավանքի՝ 1246 թ. շինարարական վիմագիրը՝ յիշատակելով Հակարի գետից (հնում՝ նաեւ «Աղաւնոյ», «Աղունոյ») արեւելք ընկած վայրերը՝ ընդհուպ մինչեւ «ԴԻՋԱԿՈ[Յ] ԲՂՂՈՒԿԱՆ»։ Քանի որ նրա տեղեկութիւնները չափազանց կարեւոր են Արցախի հարաւային հատուածի, այսինքն՝ Գորոզուի իշխանութեան տարածքը ճիշտ պատկերացնելու համար, ուստի մեր ամբողջական վերծանութիւնը կրկնում ենք այստեղ[3]*՝ հնարաւորինս պահպանելով հեղինակի գրելաոճի առանձնայատկութիւնները, տողավերեւում բացելով նրա նշած յապաւումները, յաւելելով լոկ կէտադրութիւնը, 2 ակնյայտ բաց թողած տառերը՝ [Խ], [Մ], եւ 2 դէպքում՝ թէկուզ եւ, գուցէ, յապաւուած Յ կիսաձայնը (տե՛ս գրչանկարը՝ յաւելուած Ա).*

[1] *ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴՈ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՅՆ, ԵՍ՝ ՏԷՐ ՍԱՐԳԻՍ ԵՒ ՏԷՐ ՎՐԹԱՆԷՍ,*

[2] *ԱՄԱՐԱՍԱ ԻՊԻՍԿՈՊՈՍՔ, ՀԻՄՆԵՑԱՔ ՋԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՎԻՍ ։ՈՂ։ [=1241 թ.]։ ՇԱՏ ԱՇ-*

[3] *ԽԱՏՈՒԹԱՄԲ ԻՆՁ ՋԱՒԱԳ ԽՈՐԱՆՆ ԽՓԵՑԱՒ, ԵՂԲԱՅՐ ԻՄ ՏԷՐ ՍԱՐԳԻՍ Ի ՔՐԻՍՏՈՍ ՓՈԽ-*

[4] *ԵՑԱՒ։ ԵՍ՝ ՏԷՐ ՎՐԹԱՆԷՍ, ԿԱՏԱՐԵՑԻ ԲԱՋՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԱՄԲ Ի ՄԵՐ ՀԱՒ-*

[5] *ԱՒ ԱՐԴԻՒՆԻՑ, Ի ։ՈՂԵ։ ԹՎԻՍ [=1246 թ.], Ի ԴԱՌՆ ԵՒ ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՅԱՋԳԷՆ ՆԵՏՈՂԱՑ,*

[6] *ՈՐ ՋԲԱՋՈՒՄ ԳԱՒԱՌՍ ԱՒԵՐԵԱՑ, ԵՒ ՄՆԱՑ ԱՅԼԱՍԵՌԻՑՆ ԱՓՈՌՍ ԵՒ ՎԻՃԱԿՍ*

[7] *{ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐ Է ՀԱՍՏԱՏԵԱԼ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԱԻՍ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՋՈՎՆ ԵՒ ԳԱՒԱՋԱՆՈՎՍ,*

[8] *{ՎԻՃԱԿԱՒ ԵՒ ՍԱՀՄԱՆՈՎ Ի ԱՂՈՒՆՈ ԳԵ}ՏՈ ԻՆՁՈՒ Ի ԵՐԱՍԽ, ԻՆՁՈՒ Ի ԱՒԱՋՆ ԳԵՏԱՀԱՏԻ,*

---

[1] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն I, էջ 384 (Աւետարան, 1428 թ., գրիչ՝ Մանաւէլ. «...ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գե[ւ]ղս Ծուշու կոչեցեալ»):

[2] Տե՛ս Հ. Ս. Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Է, Վենետիկ – Ս. Ղազար, 1996, էջ 321 (Ձեռ. ՒՄՐ 1064, էջ 51):

[3] Տե՛ս Ա. Յակոբեան, Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը..., սն. 261; նոյնի՝ Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 91-93 (հմմ. Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 182-183):

[9] {ՎԱԿՈՒՆԻՍ Ի ՎԱՂԱՋՆՈ ԳԵՏՈՎՆ, ՔԱՐԱ}ՏՆԻՄՆ ԽՈՋԱԲԵՐԴՈՎ, ՋԱՌԻՍՏ ԻՒՐ ԿԵՐՈՎ, ՀԱԿԱՐԻ

[10] ԻՒՐ ԿԵՐ}րՈՎՆ, ԴԻՋԱԿՈ ԲՂՂՈՒԿԱՆ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՓԱՐԱԽՆ, ԳՈԴԱՆՈՅՆ

[10ա] ՀՋԱՐԱԳԵՏՈ, ՔՐԴԱԳԵՏ ԻՒՐ

[10բ] ԿԵՐՈՎՆ,

[11] ԵԿԵՂՑԱՋՈՐ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ, ։Ա։ ԼՃՈ ՀՈՂ Ի ՏԱՀԻՍ, ։Ա։ ԼՃՈ՝ Ի ՏՈՂ, ։Ա։՝ Ի ԳԱՔՍ, ։Ա։՝ Ի ՄՈԽԵՆ-

[12] ԻՄՆ, ԽԱՋԻՆԱՄԱՐԳ՝ ԽՈՏՈ ՏԵՂ։ ՈՐ ՅԱՅՍ ՎԻՃԱԿԷՍ ԵՒ Ի ՍԱՀՄԱՆԷՍ Ի ՅԵՏ ՈՒՆԻ՝ ԿԱՄ ԹԱԳԱՒՈՐ,

[13] ԿԱՄ յ}ԻՇ[Խ]ԱՆ, ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ, ։Գ։ Ս<u>ՈՒՐԲ</u> ԺՈՂՈՎՈՅՆ ՆՋՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ՛, ՅԱ<u>ՍՏՈՒԱԾՈՅ</u> ԵՒ ՅԱ[Մ]ԷՆ ՍՐԲՈ-

[14] Յ ԱՆԻԾԵԱԼ ԵՂԻՑԻ՛, ՄԱՄՆ ԵՒ ԲԱԺԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱ[Յ]Ի ԵՒ ԸՆԴ ԽԱՋԵՑՈՂՄՆ ԵՂԻՑԻ՛ ԵՒ ԸՆԴ ԿԱ[Յ]ԵՆ։

Արդ՝ վերադառնալով Աղբրաձորի վանքին՝ նշենք, որ նրա մերձակայ գերեզմանատան տապանաքարերը նույնպէս կարող են համարուել հազուագիւտ գտածոներ։ Նախ եւ առաջ՝ դա վերաբերում է այն խաչքարին, որը յար եւ նման է եկեղեցու առջեւի՝ Գրիգոր իշխանաց իշխանի եւ Սոսթենէս վարդապետի եղբօրորդի Ստեփաննոսի խաչքարերին։ Կոտրուածքի պատճառով վարդեակի հատուածը չունեցող այդ կոթողը ընկած է պատուանդանի՝ գլանաձեւ զարդանախշեր ունեցող մեծ (աւելի մեծ, քան ձորակում ընկածը) քարերի առջեւ, որից երեւում է, որ դա եղել է յուշարձանախմբի առաւել նշանակալի կոթողը[1]։

Գերեզմանատան ամենամեծ, վիշապանման տապանաքարը խիստ ուշագրաւ արձանագրութիւն է կրում նիստերի վրայ. երկու տող՝ հարաւայինի, մէկ տող՝ հիւսիսայինի։ Բնագիրը պարզ է եւ հեշտ ընթերցուող.

ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Ի ՄԵԾԻՆ ՎԱՐԴԿՈ[Յ]
ՄԱՅՐԷՋՐԵՑՈ[Յ], ՀԱՒՐ ՍՈՍԹԵՆԻՍԻ, //
ՈՐ ՏԱՅԷ Ք<u>ՐԻՍՏՈՍ</u>Ս ԱՐՔԱ[Յ]ՈՒԹԻՒՆ։

Երեւում է, որ գրիչը սղել է ձայնաւորներին յաջորդող Յ-երը. այդպէս է ոչ միայն ՎԱՐԴԿՈ[Յ] եւ ՄԱՅՐԷՋՐԵՑՈ[Յ], այլեւ ԱՐՔԱ[Յ]ՈՒԹԻՒՆ բառի մէջ։ Առաջին տողում է օժանդակ բայի փոխարէն, թերեւս, պարզ սխալմունքի հետեւանքով գրել է Ի (ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Ի), իսկ երկրորդում սեռական հոլովը ճիշտ է թեքել (ՍՈՍԹԵՆԻՍԻ, թէպէտ կարող էր բազմաթիւ ուրիշ փորագրողների նման պահպանել անձնանուան վերջածանցի է-ն։ Վերջին տողի սկզբում սպասելի էր Զ տառի առկայութիւն (ՏՈՒՐ ՏԱՅԷ Ք<u>ՐԻՍՏՈՍ</u>Ս), ինչպէս որ վերեւում ունենք Սոսթենէս վարդապետի տապանագրի 7-րդ տողում՝ ՁՈՐ ԴԱՍԵՑԷ Ք<u>ՐԻՍՏՈՍ</u>Ս։ Ենթադրելի է, որ վիմագրում չիշատակուած Սոսթենէսը նոյն այն վարդապետն է, որի վախճանուելու կա-

[1] Ենթադրելի է, որ խաչքարի ներքեւի՝ արձանագիր հատուածը շինաքար են դարձրել։

պակցութեամբ եկեղեցու առջեւ խաչքար է դրել նրա եղբօրորդի եւ աշակերտ Ստեփաննոսը: Իսկ Սոսթենէսի հօր՝ Վարդկո[յ] (<Վարդի՞կ) Մայրէջրեցու՝ Մեծ յորջորջումը թոյլ է տալիս մտածել, որ վերջինս, հաւանաբար, եղել է տեղի յայտնի իշխանը (գուցէ, նաեւ իր որդու վանքի հիմնադրման նախաձեռնո՞ղը):

Վիմագրում յիշատակուած «Մայրէջուր» տեղանունը յայտնի է ուսումնասիրողներին ԺԱ դարի երկու այլ յիշատակումներով (Մարէջուր ձեւով) Սիւնիքի հոգեւոր կենտրոններից մէկում՝ Վահանավանքում: Վերջինիս շրջակայ գերեզմանատան ուղղանկիւն տապանաքարերից մէկի վրայ 6 տողով առկայ է. «ՀԱՅՈՑ ԹՈՒԱԿԱՆՆՈՒԹԵԱՆՆ ՇԻԵ [=1076 թ.]: / ՋՔՈՒՐԴԻԿ / ՄԱՐԷՋՐԵՑԻ / ՅԱՂԱԻԹՍ ՅԻ/ՇԵՑԷՔ, ԱՂ/ԱՋԵՄՔ»[1]: Մէկ ուրիշ տապանաքարի վրայ եռատող արձանագրութիւն են թողել Մարէջրեցի Սողոմոնի յիշատակին. «ՋՍՈՂՈՄՈՆ ՄԱՐ/ԷՋՐԵՑԻ ՅԱՂԱԻԹ/Ս ՅԻՇԵՑԷՔ: ԹՈՒԻՆ ՇՂԳ [=1084 թ.]»[2]: Քուրդիկ եւ Սողոմոն Մարէջրեցիների մասին այլ աղբիւրներից ոչինչ չգիտենք: Բացի այդ, որքանով կարող ենք դատել Ստեփաննոս Օրբէլեանի հաղորդած հարուստ նիւթից, Սիւնիքում «Մայրէջուր» տեղանուն վկայուած չէ, ուստի մասնագէտներն այդպիսին իրաւացիօրէն փնտրում են Արցախում (եւ Աղբրաձորի նորայայտ արձանագրութիւնը հաստատում է այդ կարծիքը)[3]: Ընդհանրապէս, յայտնի է, որ Գանձակի սելջուկեան ամիրաների առաջխաղացման ու աննախադէպ հալածանքների պատճառով ԺԱ դ. վերջին տասնամեակներին Բաղք են տեղափոխուել եւ, մասնաւորապէս, Վահանավանքում թաղուել արցախցի աշխարհիկ ու հոգեւոր բազմաթիւ այրեր (պատմիչի խօսքերով՝ «բազում թագաւորք եւ թագուհիք Աղուանից»[4]): Նրանց թւում էին, օր.՝ Աղուանից թագուհի Սոփին, որի տապանագիրը թուագրուած է 1081-ով[5], եւ Ստեփաննոս կաթողիկոսը, ում անթուակիր տապանագիրը («Ես՝ տէր Ստեփանոս՝ Աղվանից կաթողիկոս, նեղեալ ի Տաճկաց՝ եկա[յ] հանգեալ ա[ստուած]ասէր թագուհեայ Շահանդխտին եւ Կատա[յ]ին շինած եկեղեցոյս գաւթիս...») վերագրւում է 1086 թուին յաջորդած տարիներին[6]: Ըստ Օրբէլեանի՝ «յորոց [Սենեքերիմի ու իր Շահանդուխտ, Կատայ քոյրերի – Ա. Յ.] աւուրս եկն երջանիկ կաթողիկոսն Աղուանից տէր Ստեփաննոս, եւ անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգեաւ ի տեղւոջն եւ եդաւ ի նմին [Վահանավանքի] սրբարանի»[7]:

Վահանավանքի տապանագրերում յիշատակուող Մարէջուրը նաեւ համադրւում է Հայոց Արեւելից կողմերից մօտ 1073/1074 թ. Կիլիկիա արտագաղթած Օշին Հեթումեանի հայրենի (ժառանգական) «Մայրեաց ջուրք» անունով կալուածքի

---

[1] **Գ. Գրիգորյան**, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (1966-1970 թթ.), – ԼՀԳ, 1970, հմր 10, էջ 89:
[2] Դիվան հայ վիմագրության, պր. II, էջ 139:
[3] Հմմ. **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 96; ՀՀԾՏ բառարան, հտ. 3, էջ 677:
[4] **Օրբ.**, գլ. ԽԴ, էջ 175; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԽԵ, էջ 240:
[5] Տե՛ս **Գ. Մ. Գրիգորյան**, Վիմագրութիւններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, էջ 162:
[6] Դիվան հայ վիմագրության, պր. II, էջ 139; **Գ. Գրիգորյան**, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, էջ 90; **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 97:
[7] **Օրբ.**, գլ. ԽԴ, էջ 176; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԽԵ, էջ 241:

հետ, որի մասին Սամուէլ Անեցին ծանօթագրում է՝ «հանդէպ Գանձակայ» («ի ՇԻԲ ամին ի բռնութենէն Տաճկաց եւ Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ, որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ...»)[1]: Գանձակ քաղաքի յիշատակութիւնը պատճառ է եղել, որպէսզի Հեթումեանների «ժառանգութիւն» Մայրեաց ջուրքը տեղադրուի Մեծ Հայքի Ուտիք նահանգի Շակաշէն (որտեղ Գանձակն էր) կամ Գարդման (մի փոքր արեւմուտք) գաւառներում, կամ մի փոքր հարաւ՝ Արցախ նահանգի Կողթ գաւառում[2]: Սակայն «Մեծն Վարդիկ (կամ՝ Վաւդկոյ) Մայրէջրեցու» տապանաքարի յայտնաբերումը Րախիշի հովտում՝ Աղբրաձորի վանքի գերեզմանատան եւ գեղանախշ խաչքարերի հարեւանութեամբ, հնարաւորութիւն է տալիս ենթադրելու, որ Մայրէջուրը հէնց այդ տեղանքի, այսինքն՝ Արցախի Վայկունիք/Վակունիս գաւառի մի յայտնի տեղանուն է եղել[3]: Իսկ Սամուէլի շարա-

---

[1] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն. Ադամից մինչեւ 1776 թ., Աշխատասիրությամբ՝ **Կ. Մաթեւոսյանի**, Եր., 2014, էջ 195 (յետայսու՝ **Սամուէլ**); **Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., Ցառաջաբանով... եւ ծանօթութիւններով Ա. Տէր Միքելեանի**, Վաղարշապատ, 1893, էջ 117: Հմմ. **Հ. Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ – Ս. Ղազար, 1885, էջ 46: Ի դէպ, Ա. Տէր-Միքելեանի բնագրում *ՇԻԲ*-ի փոխարէն առկայ է *ՇՀԲ* թիւը, որը լոկ տպագրական վրիպակ է (բայց գրքի վերջում դրուած «Ուղղուելիք»-ում տեղ չգտած), քանի որ *ՇԻԲ* ընթերցումն ունենք եւ՛ երկի բոլոր գրչագրերում, եւ՛ նրան յանգող ուշ բնագրերում (տե՛ս, օր.՝ Ժամանակագրութիւն /XI-XVIII դդ./, Տպագրութեան պատրաստեց՝ **Ն. եպ. Պողարեան**, – ԲՄ, 9, Եր., 1969, էջ 258. «ՌՀԵ = ՇԻԲ. – Օշին իշխանն այսմ ամի ի բռնութենէն Տաճկաց եւ ի ժառանգութենէն իւրմէ, որ կոչի Մայրեաց Ջուրք, հանդէպ Գանձակայ, ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր եւ ազատագունդ իշխանօք եւ ամենայն կաճիւքն»): Ի դէպ, այդ վրիպակը կայ գրքի 114-117 էջերի բոլոր 4 դէպքերում («ՇՀ-» *փխ* «ՇԻ-»): Խորհրդատուութեան համար շնորհակալ եմ Կարէն Մաթեւոսեանին (տե՛ս նաեւ **Կ. Մաթեւոսյան**, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Եր., 2009, էջ 70; **Սամուէլ**, էջ 399-400, ծն. 277):

[2] Տե՛ս, օր.՝ ՀՀՇՏ բառարան, հտ. 3, էջ 677; ԳԱԹ, Սարգիս Քամալեանի ֆոնդ, տետր ՀՄՐ 1, VI-II, թ. 18-19 (խորհրդատուութեան համար շնորհակալ եմ Սամուէլ Կարապետեանին): Հմմ. **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, Եր., 2004, էջ 65-66, 135-136: Վերջերս Սամուէլ Գրիգորեանը փորձեց հիմնաւորել Մայրեաց ջուրքը Կողթում տեղորոշելու վարկածը՝ նկատելով, որ Գանձակից 40 կմ հարաւ-արեւմուտք ընկած Խաչակապ – Ղուշչի գիւղի մի արտում 1965 թ. գտնուած խաչքարի վրայ («մեծ եւ պարզ, [Ծատախ] գիւղատեղի մօտ, «Նահատակի ձոր» կոչուող հանդամասում. ճակատին 4 տող») արձանագրուած է *Հեթում* անունը («ՀԵԹՈՒՄ / ԿԱՆԳ[Ն]ԵԱ/8 ՋԽԱՉՍ / :ՆԼ: [=*981 թ.*]». Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 254, ՀՄՐ 942), ինչն այդ ժամանակի եզակի դէպքերից է (**С. Григорян**, Ошин из страны Армянской: О локализации Майреац-джурк'а, восточно-армянской прародины Гетумянов, – «Գարդմանի եւ Շիրվանի հայության պատմա-մշակութային ավանդները...», Հանրապետական գիտաժողով, Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ, Եր., 2016, էջ 60-68, տե՛ս նաեւ **Ա. Ստեփանյան**, Օշին Գանձակեցու գաղթը Կիլիկիա 1073 թ., – «Ակունք», Իջեւան – Եր., 2018, թիւ 1 /18/, էջ 57-65): Սակայն վերջնական եզրայանգումից առաջ հարկ է յիշել, որ ի տարբերութիւն Աղբրաձորի՝ Ծատախում վաղ շրջանի այլ լուրջ յուշարձաններ չկան, եւ որ ինքը՝ Ս. Բարխուդարեանը չէր տեսել վիմագիրը, ուստի եւ ծանօթագրել է «Գծագիրն ստացանք Խաչկապի գիւղացի Դալլաքեան Սուրէնից: Նամակում յիշատակում է, որ բարձրութիւնը մէկուկէս մետրից աւելի է, իսկ լայնութիւնը՝ մէկ մետրից աւելի»:

[3] Գուցէ՝ *Մայրէջուր* անուան ինչ-որ աղաւաղումներից առաջ են եկել Աղբրաձորից 4 կմ հարաւ՝ Րախիշի (Ղորչուչայի) եւ Շալուայի հովիտների միջեւ յառնող սարահարթին գտնուող գիւղատեղիի (ուշմիջնադարեան հանգստարանով)՝ *Մունջուխլու*, կամ Րա-

դրանքի բովում Գանձակի յիշատակումը բացատրելի է նրանով, որ ԺԲ դարի ժամանակագրին հասած գրաւոր կամ բանաւոր պատմութեան մէջ, թերեւս, խօսուել է հէնց «Գանձակից» (այսինքն՝ այդ քաղաքի մահմեդական ամիրաներից «մայրեցաջուրքցիներին» պատճառած աղէտների մասին («ի բռնութենէն Տաճկաց»):

2001 թ. Հոկտեմբերի 8-ին՝ Մայրեջրի վանքի նոր այցելութեան օրը (Արմէն-Քլօդ Մութաֆեանի եւ Ազատ Բոզոյեանի հետ), յաջողուեց գտնել եւս 2 արձանագիր խաչքար՝ ընկած գերեզմանատան ներքեւի ծայրամասում: Դրանցից առաջինը չափազանց պարզ ձեւ ունի՝ կիսասրբատաշ մշակուած, սեղանաձեւ բազալտեայ քարի ճակատի մէջտեղում երկու ուղղահայեաց գծերով նկարուած խաչով եւ նրա շուրջը, քարի եզրագծին զուգահեռ փորագրուած գրութեամբ, որի թուականը եւ փորագրողի անունը չորս տողով գրուած են խաչի ներքեւում՝ ասես վարդեակի փոխարէն: Իսկ երկրորդ խաչքարը կրկնում է այն հրաշագեղ քանդակազարդ երեք խաչքարերին, որոնցից երկուսի ջարդուած կտորների վրայ յաջողուել էր ընթերցել Հայոց ՇԺԷ (=1068/1069 թ.) եւ ՇԺԸ (=1069/1070 թ.) թուականները, վերջինի վրայ նաեւ՝ Ատրներսեհի որդի, Գորոգուի «իշխանաց իշխան» Գրիգորի անունը[1]: Առաջին նորայայտ խաչքարի վիմագրում փորագրողի վրիպումները չնչին են, եւ բնագիրը հեշտութեամբ վերծանւում է այսպէս.

Խաչի շուրջը, կիսակլոր՝

Ա<u>ՍՏՈՒԱ</u>Ծ ՈՂՈՐՄԵԱՅ ՍՊԱՏԱ[Յ] ԵՒ ՈՒՐ ԾՆՈՂԱՅՆ, ԵՒ ՈՅ[Ք] ԿԱՐԴԱՅՔ՝ ՅԱՂ[ԱԹՍ ՅԻՇԵՅԵ՛Ք]:

Իսկ խաչի ներքեւում՝ չորս տողով.

Տ [=Թ+Վ՞] ՇԻԴ: [=1075/1076 թ.] / ԵՄ՝ ՍԱՐԳԻՍ, / ԿԱՆԿ[Ն]ԵՅԻ / ԽԱՉՆ:

Վիմագրի առաջին նախադասութիւնը ՅԱՂ բառահատուածից յետոյ կիսատ է թողնուել՝ գրադաշտն աւարտուելու պատճառով, սակայն անկասկած է, որ այդտեղ կարող էր լինել միայն «յաղաւթս յիշեցէք» աւարտը: Միւս սխալը՝ ՈՅ[Ք] բառի մէջ վերջին տառի բացակայութիւնն է: Դա հնարաւոր է բացատրել ոչ միայն Ք յետնալեզուային բաղաձայնի պարզ վրիպումով (յաջորդ՝ Կ յետնալեզուայինից առաջ), այլեւ, գուցէ, բնագրի հեղինակի կողմից քերականական ձեւի անկանոն ըն-

---

խիշի ձախ օժանդակի՝ *Մամելի* յորջորջումները, կամ անգամ հէնց *Մաղաւուզ* ուշմիջնադարեան գաւառանունը: Հաւանական է, որ *Մաղաւուզ* գաւառի նոյնանուն գիւղը գտնուել է Ծալուայի ձախ, *Բչանիս* կամ *Նաղդալի* կոչուած (այսօր արդէն՝ *Մաղդանց*) մեծ վտակի երկու օժանդակների գետկիցի մօտ, ԺԹ-ի դդ. *Ալեակչի* անունը կրած գիւղի տեղում: Վերջին յորջորջումը թարգմանւում է «Մաղագործ, մաղավաճառ», եւ ենթադրելի է, որ իր ծագմամբ այն պարտական է հէնց *Մաղաւուզ – մաղ* զուգորդութեանը: Ցիշենք նաեւ, որ Վայոց ձորի *Մայրադուրք* գիւղանունը (հայցականով՝ **Մայրադուրս*), աղաւաղուելով, ԺԹ դարում յորջորջւում էր *Մարաթուզ* (գիւղ եւ լիճ, տե՛ս **Орբ.**, գլ. ՀԳ, էջ 372; Պատմութիւն Նահանգին Սիսական, գլ. ՀԴ, էջ 511; ՀՀՇՏ բառարան, հտ. 3, էջ 676, 717, հմմ. **П. М. Мурадян**, Винительные формы в именительном по данным топонимики Армении, – ВОН, 1971, № 4, с. 21-38), Ծղուկի *Տոլորս* գիւղանունը մի այլ տարբերակով վերածուել էր *Տուլուս*-ի, իսկ Աղահեջքի *Լսորք*-ը՝ *Սուս*-ի:

[1] Նրանց մասին տե՛ս վերեւում, էջ 250-253 եւ ստորեւ, էջ 273-275: Հմմ. **Ա. Ցակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 31-72:

կալմամբ՝ եզակի «nr կարդայք» կարծրատիպի հետ զուգորդութեամբ («nրf»-ի փոխարէն «nյf» դերանուան օգտագործման պարագայում)։ Այլուստ լրիւ անծանօթ է թուականի տառերից առաջ ԹՈՒՒՆ կամ Թվ գրելու փոխարէն մեծ, գլխատառի չափսի բոլորագիր Տ-ի նմանուող, ըստ ամենայնի՝ պայմանական նշան կամ իւրօրինակ կցագիր Թ+Վ փորագրելը (տ ϢՒԴ)։ Իսկ ՈՒՐ ԾՆՈՂԱՅՆ ձեւը պիտի համարել ուղղակի բարբառային-խօսուածքային՝ ԻՒՐ ԾՆՈՂԱՅՆ-ի փոխարէն[1]։

Վիմագրի ՍՊԱՏ անուանաձեւի տակ, անկասկած, պէտք է հասկանալ Սմբատ արական անձնանունը (var. Սնպատ, Սմպատ)։ Այն այդպէս՝ առանց սկզբնատառին յաջորդող Մ-ի (կամ Ն-ի), հանդէս է գալիս նաեւ այլ վիմագրերում, ընդ որում՝ երբեմն հրատարակիչները ՍՊ կամ ՍԲ տառերի միջեւ վերականգնման փակագծերի մէջ յաւելում են պակասող Մ-ն։ Օր.՝ Արցախի Վաճառ գիւղի մօտ «Խէնչալ խաչ» վայրում խաչքարանման կոթողի վրայ ունենք. «...Թվիս ։ՈԿԵ։ [=1216 թ.] / Ե[ս]՝ Սպատ, որդի / Վախտա/նգայ, տ[ե]ն խաչինո/յ...»[2]։ Վաղուհասի մօտ՝ «Եղցու թալա» հին գիւղատեղիում, ժայռաբեկորի վրայ քանդակուած խաչի շուրջ գրուած վիմագրում առկայ է. «Թիվ ։ՈՒԳ։ էր [=1194 թ.]։ / Ես՝ Սադուն, / կանգ[ն]եցի զխաչս / որդոյ ի/մոյ Սպատայ...»[3]։ Վայոց ձորում՝ Սպիտակաւոր Աստուածածին եկեղեցու հարաւային պատի՝ վերոնշեալ վիմագրում, ասւում էր. «...ես՝ Սբատ, որդ/ի Լիպարտի, միաբանեցա[յ] աւ/ագ անապատիս...»[4], ընդ որում՝ ՍԲ տառերը տրուած են կցագիր, բայց պէտք չէ մտածել, թէ նրանց հետ կցագրուած է նաեւ Մ, քանի որ բնագրի բոլոր՝ մէկ տասնեակից աւելի կցագրերն ունեն երկու տառից ոչ աւելի։ Գեղարքունիքում՝ Շողուագայ վանքի գերեզմանատան խաչքարի քիւին, եւս ունենք. «Ես՝ Սպատ, կանգնեցի զխաչս... թուին ՈԿԵ [=1216 թ.]»[5]։ Հաղբատի Ս. Նշան եկեղեցու հիւսիսային պատին՝ արտաքուստ, լուսամուտի գլխի յայտնի շինարարական վիմագրում, առկայ է այլ ուշագրաւ անուանատարբերակ («Ի Նխ թակ[անութեանս] [=991 թ.] Սիմեւոն հայր ե/ւ Տիրանուն երեց շինեցաք / զեկեղեցիս / փրկու/թեան Սիբատա[յ] եւ Գուր/գենա[յ]»[6]), գաղտնավանկ Ը-ի փխն. Ի-ով։ Կ. Ղաֆադարեանն այստեղ ծանօթագրել է. «Սմբատի անուան Մ-ի փոխարէն Ի գիրը համարում ենք ոչ թէ փորագրողի սխալ, այլ բարբառային ձեւ»[7], իսկ նոր հրատարակութեան կազմողների կարծիքով՝ «անուան այդօրինակ գրութիւնը ա-

---

[1] Նոյն ձեւը տե՛ս Եզնագոմերի գրչագրի յիշատակարաններում (1735 թ. եւ յաջ.). Ա. Ցակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 390:
[2] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 83-84, հմր 253:
[3] Անդ, էջ 113, հմր 375:
[4] Դիվան հայ վիմագրության, պր. III, Վայոց Ձոր, էջ 98, հմր 274:
[5] Դիվան հայ վիմագրության, պր. IV, Գեղարքունիք, էջ 243, հմր 1021:
[6] **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները եւ վիմական արձանագրությունները, Եր., 1963, էջ141-142, հմր 1, նկ. 37; Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին՝ **Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան**, Պատ. խմբ.՝ **Գ. Սարգսյան**, Եր., 2012, էջ 127, հմր 231, լուսանկ. հմր 231:
[7] **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, էջ142:

րաբական արտաբերութեան արդիւնք է»[1] *(թէպէտ նրանց յղած աղբիւրում լոկ յիշուած է ԺԶ դարի իշխան Սնբատ Որոտնեցին*[2]*)։ Վերջապէս՝ Սբատ անուանաձեւի օգտագործման առնուազն մէկ դէպք է յայտնի նաեւ գրչագիր մատեանում, այն է՝ Լազարեան Աւետարանի յիշատակարանում, որի գրիչ Սահակ Վանանդացին յայտնում էր. «Գրեցաւ սուրբ եւ կենսաբեր Աւետարանս այս ՅԼԶ թուականութեան Հայոց [=887 թ.], ի հայրապետութեան Գեորգայ Հայոց կաթողիկոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի եւ ի տերութեանն Սբատայ Բագրատունւոյ...»*[3]*։*

Յաւելենք, որ Յովհաննէս Զմշկիկ կայսերն օգնելու համար Աշոտ Գ Բագրատունի արքայի բանակում հաւաքուածներից մէկին՝ «Թոռնեցի» իշխանին, Ուռհայեցու ձեռագրերի մի խումբ կոչում է «Ստատ» անուանաձեւով, իսկ միւսը՝ «Սմբատ»[4]*։ Այդ ձեւերը համեմատելով՝ հաւանական է ենթադրել, որ ձեռագրերի նախօրինակում եղել է հէնց Սպատ անուանաձեւը, որի անսովորութեան պատճառով արտագրող գրիչներից մէկն «ստիպուած ուղղել է» այն Ստատ-ի, իսկ միւսը՝ Սմբատ-ի։ Ընդ սմին, «Ժամանակագրութեան» աշխարհաբար թարգմանիչն առաջարկում է Ստատ-ի հիման վրայ հեղինակային նախօրինակում վերականգնել Եւստաթ – Եւստատ անձնանունը*[5]*, բայց այդ վարկածն էլ, անշուշտ, շտապողական է։*

Նշելի է, որ Հր. Աճառեանն անձնանունների իր բառարանի ՍՄԲԱՏ բառյօդուածում չի դիտարկում մեզ հետաքրքրող անուանաձեւը[6]*։ Եթէ չհաշուենք Հաղբատի վիմագրի հրատարակիչների վերոբերեալ կարծիքները, ապա չենք հանդիպել նման անդրադարձի նաեւ այլ բանասէրների աշխատանքներում։ Սակայն բերուած օրինակներից յետոյ կարելի է համարձակուել՝ գոնէ վարկածի կարգով ենթադրելու (հետագայ հանգամանալից քննութեան համար), որ Սմբատ-ն առանց Մ-ի գրելու երեւոյթը կարող էր կապուած լինել հեղինակների (գուցէ՝ քերականների մի դպրոցի՞) կողմից տուեալ անձնանուան մէջ այդ տառի սխալ (յամենայն դէպս՝ անկանոն) ընկալմամբ՝ իբրեւ Բ, Պ երկշրթնային բաղաձայններից առաջ գոյացած աւելորդ աճական հնչիւն։ Նրանց համար լեզուական այդ երեւոյթի օրինակներ կարող էին ծառայել «Աբբակում» – «Ամբակում»*[7]*, «Հաբանդ» – «Համբանդ»*[8]*, «Լաբրոն» – «Լամբրոն»*[9] *եւ այլ՝ իրաւացի կամ սխալ ընկալուած դէպքերը։*

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. IX, էջ 127:

[2] Տե՛ս **А. Хачатрян**, Корпус арабских надписей Армении VIII-XVII вв., Ер., 1987, с. 176.

[3] ՄՄ Ձեռ. 6200, թ. 220ա-բ: Հմմ. **Գարեգին Ա կթղ.**, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, սն. 84; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 40:

[4] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, [Կազմեցին՝ **Մ. վրդ. Մէլիք-Ադամեան, Ն. սրկ. Տէր Միքայէլեան**], Վաղարշապատ, 1898 (յետայսու՝ **Ուռհ.**), էջ 18, ծն. 1:

[5] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ **Հր. Բարթիկյանի**, Եր., 1991, էջ 486, ծն. 43:

[6] Հմմ. **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 537-563:

[7] Հմմ. անդ, հտ. Ա, էջ 115-116:

[8] Տե՛ս Օրբէլեանի երկի 1513 թ. ինագոյն ձեռագրի գիւղացանկում (ՄՄ 6271, թ. 333ա):

[9] **Սամուէլ**, էջ 195; **Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք, էջ 117; ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 68 («...պարոն Հեթմոյ, որ տէր էր Լապրունին»):

Մայրեջրի վանքի գերեզմանատան ներքեւի ծայրամասում ընկած նորայայտ գեղաքանդակ խաչքարի վարդեակի ձախ կողմում (խաչքարի ներքեւի աջ ջարդուած կտորն այդպէս էլ չի յայտնաբերուել) 5 տողով փորագրուած է հետեւեալը.

Տ{ԷՐ ... ...} / {... ... ՈՂ-} / ՈՐՄ{Ի} / ՍՊԱ/ՏԱՅ:

Առաջին տողի սկզբում նշմարուող Տ տառը թոյլ է տալիս ենթադրել, որ դա սկզբնատառն է ՏԷՐ Ա<u>ՍՏՈՒԱ</u>Ծ յապաւուած բառերի («Աստուած» բառի փոխարէն կամ անգամ նրա կողքին կարող էր լինել նաեւ Ք<u>ՐԻՍՏՈ</u>Ս-ը): Այդ յապաւուած բառերից յետոյ երկրորդ տողի վերջում կարող էին տեղաւորուել ՈՂ/ՈՐՄԻ բառի սկզբի՝ ներկայումս ամբողջովին հողմահարուած երկու տառերը: Նոյնքան հողմահարուած է նաեւ այդ բառի վերջին տառը երրորդ տողի վերջում: Թերեւս, հնարաւոր չէ կասկածել, որ դա եղել է -Ի, այլ ոչ թէ -ԵԱ բառաւարտը (ինչպէս ունենք քննարկուած նախորդ բնագրում՝ ՈՂՈՐՄԵԱՅ[), քանի որ կորուստը մէկ տառի չափան ունի:

Արդ՝ արդեօ՞ք այս Սպատ անունը կրողը կարող է չնոյնացուել նախորդ, պարզաոճ խաչքարի վրայ յիշատակուած Սպատի հետ, գուցէ, օր.՝ լինելով նրա պապը: Յաւելենք, որ գերեզմանատան ներքեւի ծայրամասի մեր վերջին խաչքարն իր հրաշազարդ քանդակներով յարում է վանքի պարսպապատի ներսում ընկած Սոսթենէս վարդապետի եղբօրորդի Ստեփաննոսի եւ Գրիգոր իշխանաց իշխանի կանգնեցրած նոյնատիպ գեղանախշ խաչքարերին (այդպիսի երրորդն էլ ընկած է գերեզմանատան կենտրոնական հատուածում՝ առանց ջարդուած վարդեակի կտորի), որոնց վրայ պահպանուել են 1068 եւ 1069 թուականները: Եւ, միեւնոյն ժամանակ, Սարգիս անունով անձի կողմից «Սպատի եւ իր ծնողների յիշատակին» կանգնեցուած ու 1075-ով թուագրուած (Հայոց՝ ՇԻԴ) սեղանաձեւ խաչքարն իր պարզաոճ իրագործումով, կարծես թէ, խորհրդանշում է նախորդ ծաղկուն ժամանակին յաջորդած հէնց այն օրհասական տարիները, երբ սելջուկներին ենթակայ Գանձակի Շադդադեանների կամ էլ նրանց եւս հալածող սելջուկ սուլթանի ամիրաների «բռնութիւնների» հետեւանքով իր այս Մայրեաց ջուրբ (=Մայրէջուր) կալուածքից ընտանիքով ստիպուած կիլիկիա էր արտագաղթել Օշին իշխանը. յիշենք, որ ԺԲ դարի հեղինակի՝ Սամուէլ Անեցու (կամ նրա շարունակողի), խօսքերով՝ դա տեղի էր ունեցել Հայոց ՇԻԲ, այսինքն՝ 1073/1074 թուականին[1]:

Ի դէպ, եթէ վերեւում բերուած՝ Մայրեաց ջուրբ – Մայրէջուր համադրման մասին մեր մեկնաբանութիւնն ընդունելի է, ապա, անշուշտ, պիտի նաեւ ենթադրենք, որ «հանդէպ Գանձակայ» ասելով՝ անեցի ժամանակագիրը (կամ նրա աղբիւրը) նկատի է ունեցել ոչ թէ պարզապէս այդ քաղաքի անմիջական մերձակայքը, այլ Առան կամ նաեւ՝ այդ պահին իր զարգացման ամենից ծաղկուն ժամանակաշրջանը թե-

---

[1] **Սամուէլ**, էջ 195 («1073 / ՌՀԵ 1075 / ՇԻԲ 522 / Ի ՇԻ̄Բ̄ ամին ի բռնութենէն Տաճկաց եւ Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ, որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ, ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր՝ ազատագունդ իշխանօքն եւ ամենայն աղխիւն, ունելով ընդ իւր եւ զմատն սուրբ առաքելոյն Պետրոսի: Եւ եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց եւ աջողմամբ Քրիստոսի եւ սուրբ մատին առաքելոյն՝ էառ ի Տաճկաց եւ զականաւոր բերդն Լամբրօն»); **Սամուէլի քահանայի Անեցւոյ** Հաւաքմունք, էջ 117:

ւակոխած քաղաքի անունով հէնց Գանձակ կոչուող երկրի շատ աւելի մեծ հատուած: Իսկ գուցէ եւ՝ դա ամբողջ Հայոց Արեւելից կողմանքն էր ընդհանրապէս՝ իր արդէն վարչական կենտրոն եւ կաթողիկոսանիստ Գանձակ քաղաքով[1]:

Մանրամասնենք նաեւ, որ ըստ «Շիրւանի եւ Դերբենդի պատմութեան»՝ Առանի Շադդադեաններին վերաբերող հատուածի մի դրուագի եւ այլ արաբական աղբիւրների վկայութիւնների՝ երկարատեւ պայքարից յետոյ սելջուկ սուլթանները, ի վերջոյ, կարողացել են դադարեցնել Փադլունեան ամիրաների տիրապետութիւնը Գանձակում, իսկ վերջին ամիրաներ Փադլ Բ-ին ու նրա որդի Փադլ Գ-ին հեռացնելով Առանից՝ պատուաւոր աքսորեալի վիճակում պահել են մերձկասպեան Թալիշ երկրամասում: Ընդ որում՝ այդ դրուագը թուագրւում է Հիջրէի 469, այսինքն՝ 1075 թուականով[2]*: Համադրելով այս փաստը հայ հեղինակների՝ Սամուէլ Անեցու, Մատթէոս Ուռհայեցու եւ Վարդան Արեւելցու վկայութիւնների հետ (թէպէտ եւ խառնակ ժամանակագրութիւններով)՝ հնարաւոր է մտածել, որ Օշին Մայրեջրեցու հեռանալը Գանձակի երկրից դէպի Կիլիկիա կարող էր կապուած լինել նրա տիրոյթների դէմ ոչ թէ Փադլունեանների (ինչպէս ընդունուած էր հայագիտութեան մէջ*[3]*), այլ վերջիններիս եւս հալածող սելջուկեան ամիրաների (Բուզան, հաջիբ Սաու Թեգին) ասպատակութիւնների հետ: Համմ. օտար աղբիւրում. «Տեղաւորուեցին թուրքերը Առանի երկրում, նրա դաշտերում ու սարերում եւ նրա բոլոր գաւառներում ու բերդերում: Ջնջուեց Շադդադեանների տունը...»*[4]*:*

Ըստ Սամուէլ Անեցու՝ «ի ՇԼԲ թվին [թերեւս, սրբագրելի կամ ընկալելի է 10 տարուայ շեղումով՝ ՇԻԲ = 1073/1074 թ. – Ա. Յ.] Բուզան ամիրայ էառ զԳանձակ, զՓատլուն կալաւ եւ ի սուլտանն տարաւ»[5]*: Ուռհայեցին աւելի մանրամասն է (ու էլի՝ ժամանակագրական շեղումով). «Յայսմ ամի [իմա՛ ՇԼԶ – 536 = 1087/1088 թ. –*

---

[1] Համմ. **Ա. Յակոբեան**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, էջ 312; **նոյնի՝** Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 69-70:

[2] Տե՛ս **V. Minorsky**, Studies in Caucasian History, p. 24-25, 33, 67-68, 72-73; **Ա. Տեր-Ղեւոնդյան**, Մուհեջջիմ-բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը, էջ 485-486; **В. П. Лебедев, Д. Б. Марков, А. А. Койфман**, Монетное дело и монетное обращение Ганджийского эмирата, с. 10.

[3] Տե՛ս, օր.՝ **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 111-112: Նա բերում է Օրբէլեանի մի նշումը՝ Սիւնեաց Սեներքերիմ արքայի օրօք (1072-1094/1096) «Փատլուն ամիրայի» հետ արիւնալի բախման մասին. «...այս իմ գիր է Հասանայ՝ Գրիգորկայ որդւոյ ... Աստուած ինձ յաջողումն երեւ, եւ ես զիմ բերդն ի Մշտաքախթենէն առի եւ զկովսականն գաւառ իմ արեամբս յամիրայ Փատլոյ թափեցի, զՆորաշինիկ եւ զՁեռատի վանս այլ ի Տաթեւոյ սուրբ նշանս դարձուցի՝ իմ թագաւորիս Սեներքերիմայ հրամանաւ» (**Օրբ.**, գլ. ԾԹ. էջ 238-239; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. Կ, էջ 326-327): Բայց դեռ պիտի ճշտել, թէ իրապէս ո՛ր Փատլունի (=Փադլի) ժամանակի անցքեր են ընկած այս վկայութեան հիմքում: Մի խառնակ տեղեկութիւն էլ հաղորդում է Վարդան Արեւելցին (էջ 137-138). «Ի 523 թուին [=1074/1075 թ.] Փատլուն ամիրայ առաքեաց Գանձակայ զՊահլաւն Վասակ... ամենայն զօրօք առ նա յանառիկ ամուրսն Բաղաց եւ կապանին. որք եւ խաբէութեամբ մտին անդր եւ սպանին զՍեներքերիմ արքայ հայկազն [sic! – †1094/1096 թ. – *Ա. Յ.*]... զոր եւ սպանեալ հրամանաւ Փատլոյ՝ շիջաւ ճրագն որ անդ»:

[4] **Ա. Տեր Ղեւոնդյան**, Մուհեջջիմ-բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը, էջ 485:

[5] **Սամուէլ**, էջ 197, 401, ծն. 291:

Ա. Յ.] գնաց սուլտանն [Մէլիքշահ] բազմութեամբ զօրօք եւ բանակեցաւ ի վերայ քաղաքին, որ կոչի Գանձակ՝ ի յաշխարհին Հայոց ... եւ ժողովեաց զամենայն պարսիկք ի վերայ նորա ... եւ այնպիսի պատերազմաւ առին զքաղաքն Գանձակ եւ արարին կոտորած զփոքր մասն քաղաքին. եւ հրամայեաց Պուզանն եւ վերացոյց զսուրն եւ արար խաղաղութիւն»[1]: Ճմմ. նաեւ Վարդան Արեւելցու մօտ. «Ի Շլէ թուին [537 = 1088/1089 թ.] Պուղայ ամիրայ հրամանաւ Մելիքշահի առ զԳանձակ ի Փատլնեացն, որ Շատատիք կոչէին»[2]: Թերեւս, նշելի է, որ գրիչները յաճախ էին շփոթում է եւ Բ տառերը, ուստի կարելի է պատմիչի երկի սկզբնօրինակում վերականգնելի համարել ՇԼԲ թիւը (=1083/1084 թ.), որն էլ Անեցու դէպքի պէս, ըստ ամենայնի՝ պիտի ընկալելի դիտուի ՇԽԲ (=1073/1074 թ.): Ստեփաննոս Օրբէլեանը եւս իբրեւ Սիւնեաց Սենեքերիմ թագաւորի հակառակորդ ու նաեւ նրա մահուան պատճառ (1094 կամ 1096 թ.) նշում է «Պարտաւայ, Ռանայ եւ Գանձակայ» մի անանուն ամիրայի («խանդագեալ անիծեալ Իսմայէլականացն ընդ գեղեցիկ եւ ամուր թագաւորութիւնս Բաղաց, զոր խոչ մեծ համարէին ինքեանց, եւ ելեալ ամիրայն Պարտաւայ եւ Ռանայ եւ Գանձակայ՝ բազում զօրօք գայ ի պատերազմ ընդ Սենեքերիմայ, ընդ որում էր Շիրակայ իշխանն Գրիգոր Ապիրատեան»)[3]:

Այսպիսով, Փադլ Բ իբն Շաւուրի (1067-1073/1075), նրա որդի Փադլ Գ-ի եւ որոշ իմաստով նրանց ստորակայ Օշին իշխանի ընտանիքի գրեթէ միաժամանակեայ հեռացումն իրենց տիրոյթներից մտածել է տալիս, որ այդ հայ եւ պարսիկ (Շատատիք – Շադդադեանները ծագումով քրդեր էին, բայց ԺԱ դարում, անշուշտ՝ լիովին պարսկացած) աւատատէրերի դէմ հալածանքները փոխկապակցուած են եղել: Թերեւս, սելջուկ ամիրաների զոհն են եղել նաեւ միւս հայ իշխանները: Ինչ վերաբերում է հայ եւ արաբական աղբիւրների թուագրումների միջեւ 1-2 տարի շեղմանը, ապա դա կարող էր առաջ գալ նրանց ժամանակագրական համակարգերի իւրայատկութիւններից (օր.՝ յայտնի է, որ Սամուէլ Անեցու Փրկչական թուականը 2 տարով տարբերւում է իրական ժամանակագրութիւնից):

Վերջում ամփոփենք, որ Մայրեջրի հանգստարանի սեղանաձեւ խաչքարը կանգնեցնող Սարգիսը չի նշում իր ազգակցական կապը «Սպատի եւ իր ծնողների» հետ, հետեւաբար նա Սպատի՝ առնուազն որդին չէր: Թերեւս, ենթադրելի է, որ վերեւում ներկայացուած երկու դամբանական յուշարձանները նուիրուած են եղել միեւնոյն Սպատ/Սմբատ անունով երկու ազգականների. բացառուած չէ, որ այդ իշխանները պապ ու թոռ են եղել (ըստ Հր. Աճառեանի դիտարկման՝ «Հայոց մէջ համանուն որդի չի լինում»[4]) եւ նրանցից երկրորդը պատմական ողբերգական ժամանակների բերումով է վախճանուել առաջինից ընդամենը մի քանի տա-

---

[1] **Ուռհ.**, էջ 237: Հետաքրքիր է նաեւ շարունակութիւնը. «Եւ Տէր Ստեփաննոս կաթուղիկոսն Աղուանից էր յայնժամ ի քաղաքն, եւ զերծաւ խաղաղութեամբ օգնականութեամբն Աստուծոյ, վասն զի պահեալ եղեւ ի Հայոց զօրացն, որք էին զհետ Պուզանին»:

[2] **Վարդան**, էջ 141:

[3] **Օրբ.**, գլ. ՃԸ, էջ 234; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ՃԹ, էջ 319-320:

[4] **Հ. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 278:

*րի անց: Իբրեւ հարցադրում՝ հետագայում հարկ կը լինի ճշտել մինչեւ 1070-ական թթ. ապրած երկուական ներկայացուցիչներով մեզ յայտնի (*Վարդկոյ – Սոսթենէս, Օշին – Հալկամ, Սպատ/Սմբատ – Սարգիս՝ *որոշ վերապահումով) Մայրեջրեցի երեք ընտանիքների, ինչպէս նաեւ նոյն ժամանակահատուածում Սիւնիքում վախճանուած (1076 եւ 1084 թթ.) ու նրա հոգեւոր կենտրոն Վահանավանքում թաղուած* Քուրդիկ եւ Սողոմոն Մարէջրեցի-ների *միջեւ ազգակցական կապի հնարաւորութեան խնդիրը: Իսկ առայժմ նկատենք միայն, որ* Սմբատ *անձնանունը բաւականին տարածուած է եղել Կիլիկիայում հաստատուած Օշին իշխանի յետնորդների՝ Հեթումեանների ընտանիքներում. այդ անունն են կրել Հեթում Ա արքայի աւագ եղբայրը, իր աշխարհիկ կեանքում՝ Ներսէս Լամբրոնացին եւն*[1]:

Բաժին 2
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ ԺԱ ԴԱՐՈՒՄ

Ժ դ. երկրորդ կէսին Շաքի – Հերէթը միացուեց Կախէթ – Ծանարքի թագաւորութեանը, ընդ որում՝ առայժմ մասնագէտների համար, փաստօրէն, անյայտ պարագաներում, որի պատճառը աղբիւրագիտական նիւթի գրեթէ իսպառ բացակայութիւնն է[2]*: Փոխարէնը՝ յայտնի է, որ ԺԱ դ. սկզբներին Կախէթ – Հերէթում (վրաց աղբիւրներում հէնց այդպէս էլ կոչուած՝ «Կախերի եւ հերերի» կամ «Ռանների եւ կախերի թագաւորութիւն»), արքայատոհմի փոփոխութիւն է տեղի ունեցել եւ գահն անցել է Լօռու հայ Բագրատունիների ներկայացուցչին՝ Դաւիթ Անհողինի որդի Գագիկին, ով փեսայացել էր Կախէթի նախորդ տիրակալին*[3]*: Ուշագրաւ է, որ այդ արքաները հայ եւ վրաց աղբիւրներում երբեմն կոչուած են պարզապէս «թագաւոր Աղուանից»: Այդպէս է, օր.՝ Վարդան Արեւելցու մի հաղորդման մէջ, որը վերաբերում է (ճիշտ է, որոշակի շփոթով) նշուած Գագիկին («զօրացեալ [իմա՛ Շադդադեան ամիրան – Ա. Յ.]՝ տիրէ Խաչենոյ եւ Գորոզոյ եւ Սեւորդեացն եւ գոռ դնէ ընդ Գագկայ թագաւորին Ջորոյ գետին եւ ընդ Կիւրիկէի թագաւորին Աղուանից [իմա՛ Կախէթ – Հերէթի; բայց ուղղելի է. Կիւրիկէի թագաւորին Ջորոյ գետին եւ Գագկայ թագաւորին Աղուանից*[4]*] եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց»):*

---

[1] Տե՛ս անդ, հտ. Դ, էջ 538-558:

[2] Հմմ. **В. Ф. Минорский**, История Ширвана и Дербенда, с. 117.

[3] Կախէթ-Հերէթում Լօռու հայ Բագրատունիների արքայատոհմի տիրապետութեան մասին (1039-1105 թթ.) տե՛ս **Հ. Ղ. Մովսէսեան**, Լօռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, էջ 83-87; **Г. Г. Мкртумян**, Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв., с. 109-119, 130-131.

[4] Վարդան պատմիչի շարադրանքի բովում (էջ 135) այս երկու վերջին արքաների անունների տեղերը շփոթուել են: Ցայտնի է, որ Լօռի – Ջորագետում Գագիկ թագաւոր չի եղել (մանրամասն տե՛ս ստորեւ, էջ 275), իսկ «Ջորոյ գետին» (Լօռու) Կիւրիկէ թագաւորը, իրօք, իշխել է 1048-1089 թթ., Կախէթ – Հերէթի («Աղուանից») Գագիկ թագաւորն էլ՝ 1038-1058 թթ.: Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 93-95; **Г. Г. Мкртумян**, Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв., с. 119, 123, 127, 130.

Ի տարբերութիւն Շաքիի հայ Բագրատունիների կամ «Երկրորդ Աղուանից» թագաւորութեան՝ Հայոց Արեւելից կողմանց երեք թագաւորութիւնները (Փառիսոս, Խաչէն եւ Գորոգու) գոյատեւեցին նաեւ յաջորդ՝ ԺԱ դարում: Թերեւս, Փառիսոսի վերջին թագաւոր Փիպէ/Փիլիպպէն է (1003-1049), որ մէկ ուրիշ «Աղուանից» թագաւորի՝ Ատրներսեհ-ի հեղինակակցութեամբ թղթակցել է այդ ժամանակի յայտնի վարդապետ Տիրանունի (անուան միւս տարբերակը՝ Տիրան) հետ: Երկու արքաների 200 հարցերին վերջինիս գրած «Պատասխանի»-ն պահպանուել է մի քանի գրչագրերում եւ նորերս հրատարակուել ՄՀ-ում Ազատ Բոզոյեանի կողմից[1]: Երկի բուն վերտառութիւնն է. «Տիրաննոյ [var. Տիրանայ] Հայոց վարդապետի՝ Պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից Ատրներսեհի եւ Փիպէի»[2]. իսկ նրա բնագրի սկիզբն է. «Ընկալեալ զհրամանս եւ զխնդիրս ձեր յոյժ փութով եւ յաւէրժ ըղձալի փափաքանաւք՝ ուրախ եղեաք ի սմա իբրեւ ի պարգեւս եւ ի ձիրս երկնառաքս, եւ որպէս որք բաժանեն զաւար եւ որպէս ի հունձս, կամ ի զգաւնութեան ստացեալ զաւետիս բարեաց ի հեռաստանէ եկեալ անընչին կարաւտելոյ, զի այնչափ անդուլ իմաստութեամբ եւ զանազան ընտրողութեամբ շարյարեալ էին յոճ ըստ կարգի գրեալքս առ ի ձէնջ»[3]:

Ինչ վերաբերում է Փիլիպպէի հետ յիշատակուած Ատրներսեհ արքային, ապա նա, հաշուի առնելով ժամանակային համապատասխանութիւնը, մեծ հաւանականութեամբ կարող է համադրուել Րախիշ գետակի հովտում գտնուող Մայրեջրի վանքում յայտնաբերուած եւ նախորդ բաժնում ներկայացուած 1069 թ. խաչքարի կանգնեցնող «Գրիգոր իշխանաց իշխանի» հայր Ատրներսեհի հետ: Վիմագրի պահպանուած կէսում, ինչպէս տեսանք, առկայ են վերջինիս անուան առաջին երեք տառերը՝ ԱՏՐ{...} («...ես՝ Գրիգոր իշխանաց իշխան, որդի Ատր{...}»), եւ դժուար է կասկածել, որ այդ անունը հէնց Ատրներսեհ-ն է: Ընդ որում՝ Գրիգորը եւ իր հայրը, ըստ ամենայնի՝ Գորոգուի՝ ԺԱ դ. կէսերի «իշխանաց իշխաններն» են, այսինքն՝ թագաւորները:

Յայտնի է նոյն Տիրանունի (var. Տիրան) մէկ այլ «Պատասխանի» եւս, որն ուղղուած է Սենեքերիմ (Սենեքարիմ, Սինաքերեմ) անունով մի անձի (բնագրի 8 ոչ մեծ կտորները պահպանուել են Վարդան Այգեկցու քաղուածքների շնորհիւ)[4]: Այս Սենեքերիմը, թէպէտ եւ մեծ թէականութեամբ, սակայն կարող է համարուել թագաւոր, եւ այդ դէպքում՝ գուցէ, ո՛չ թէ Վասպուրականի (վերջին), այլ, ինչպէս եւ վերը նշուած Փիլ[իպ]պէն ու Ատրներսեհը՝ հէնց Աղուանից (Հայոց Արեւելից

---

[1] **Տիրան(ուն) վարդապետ**, Պատասխանի հարցմանց, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Բոզոյեանի**, – ՄՀ, հտ. Ժ, Ժ դար, Անթիլիաս, 2009, էջ 955-996:

[2] Տե՛ս ՄՄ Ձեռ. 497, ՄՄ Ձեռ. 625, ՄՄ Ձեռ. 3006, ՄՄ Ձեռ. 3710, ՄՄ Ձեռ. 3824, ՄՄ Ձեռ. 6380: Հմմ. **Գ. Տէր-Մկրտչեան**, Հայկականք. Ժ, – «Արարատ», 1894, էջ 22-26; **Ա. Ծ. Մնացականեան**, Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, էջ 204-210:

[3] **Տիրան(ուն) վարդապետ**, Պատասխանի հարցմանց, էջ 957:

[4] **Վարդան Այգեկցի**, Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ, Քննական բնագիրը կազմեց **Ծ. քհ. Հայրապետեանը**, ներածութիւնը՝ **Յ. Քեօսէեանի**, Եր., 1998, էջ 206, 383: Հրատարակուել է նաեւ ՄՀ-ում (հտ. Ժ, Ժ դար, Անթիլիաս, 2009, տե՛ս էջ 997):

կողմանց) թագաւոր։ Եւ նման վարկածի՝ աւելի հիմնաւոր փաստերով հաստատման դէպքում մենք հակուած կը լինէինք նրան նոյնացնել ոչ թէ Փառիսոսի թագաւորութեան հիմնադիր Յովհաննէս-Սենեքերիմի (ժ դ. երկրորդ կէս) կամ էլ նրա ժամանակակից եւ Անանիա Մոկացուն ու Իբն Հաուկալին յայտնի՝ Խաչէնի իշխան Սենեքերիմի հետ, այլ վերջինիս՝ այլուր չվիշատակուած, բայց որոշ հաւանականութեամբ ենթադրելի նոյնանուն թոռան, որը ժամանակային առումով լիովին կարող էր լինել հայրը վերոնշեալ Սեւադայ թագաւորի (ԺԱ դ. առաջին կէս, կինը՝ Սոփի, զաւակները՝ Շահանդուխտ, Կատայ եւ Սենեքերիմ)։

Այստեղ հարկ է կրկնել, որ ըստ Ստեփաննոս Ասողիկի հաղորդած վերջին ժամանակագրական տուեալի՝ Փառիսոսի արքայատոհմը, իբրեւ թէ, սպառուել էր Սենեքերիմ եւ Գրիգոր Հայկազունի եղբայրների մահուանով Հայոց ՆԾԲ թուականին [1003/1004 թ.], ինչից յետոյ նրանց թագաւորութիւնը բաժանուել էր Անիի թագաւոր Գագիկ Ա Բագրատունու եւ Գանձակի Շադդադեաններից մէջ իւրեանց արքայն Հայոց Գագիկ եւ Փատլուն ամիրան Գանձակայ»)[1]։ Սակայն, ինչպէս նշեցինք վերեւում, տարօրինակ պատմիչն աւարտել էր իր երկը (եւ գուցէ նաեւ վախճանուել) հէնց յաջորդ տարի՝ 1004/1005-ին, ուստի, հաւանաբար, ուղղակի չէր հասցրել տեղեկանալ Գրիգոր արքայի որդի Փիլիպպէի թագաւորանալու մասին (թէկուզ եւ, ըստ ամենայնի՝ մասնատուած հայրական տիրոյթների լոկ մի կտորի վրայ), ում մասին յայտնում են Մատթէոս Ուռհայեցին եւ Վարդան Արեւելցին։

Արդ՝ ինչ վերաբերում է Փառիսոսի, Խաչէնի եւ Գորոզուի աւատական թագաւորութիւնների անկման ժամանակին, ապա դրա գոնէ սկիզբը, առաւել մեծ հաւանականութեամբ, կարելի է կապել 1048 թ. սելջուկեան սուլթան Ալփ-Արսլանի աւերիչ արշաւանքի հետ։ Ըստ պատմիչ Վարդան Արեւելցու՝ Բիւզանդիայի կողմից 1045-ին Անիի գրաւմանը յաջորդած տարիներին Գանձակի ամիրայ Փատլունը (իրականում՝ Աբու-լ-Սուվար Իբն Փադլ Շադդադեանը, որը, ըստ արաբական աղբիւրների տեղեկութիւնների՝ 1022-1049 թթ. իշխել էր Դուինում, իսկ 1049 թ. կարողացել էր խլել Գանձակը իր ազգական, մանկահասակ Անուշիրուան Իբն Լաշկարի Շադդադեանից[2]), անկասկած, սելջուկների հետ համագործակցելով ու դառնալով նրանց առաջապահը Կուրի հովտում, իր տիրապետութիւնն էր հաստատել Փառիսոսում եւ շրջակայ գաւառներում՝ լուրջ սպառնալիք դառնալով արդէն Լօռու (Տաշիր – Զորագետի), Կախէթ-Հերէթի եւ Քարթլիի (Աբխազաց եւ Վրաց) թագաւորների համար։ Պատմիչի բնագիրն է. «Եւ սիրոյ աղագաւ գնացեալ առ նա Փիլիպէ [Փառիսոսի թագաւորը]՝ որդի Գրիգորոյ, ըմբռնէ [Աբու-լ-Սուվար – «Փատլունը»] զնա ի կապանս զկնի մահուան հօրն եւ առնու ի նմանէ զՇաշուաղ

---

[1] Ասողիկ, Գ.խը, էջ 286: Մանրամասն տե՛ս աստ, էջ 241-242:

[2] Տե՛ս V. Minorsky, Studies in Caucasian History, p. 19-22, 50-64; К. Э. Босворт, Мусульманские династии, с. 132; В. П. Лебедев, Д. Б. Марков, А. А. Койфман, Монетное дело и монетное обращение Ганджийского эмирата, с. 8-9.

եւ զՇօթս[1]: Կոչեցեալ առ ինքն զԳագիկ՝ որդի Համամայ, զտէրն Գանձեայ[2]՝ սպանանէ եւ առնու զերկիր նորա: Եւ այսպէս զօրացեալ՝ տիրէ Խաչենոյ եւ Գորոզոյ եւ Սեւորդեացն եւ գոռ դնէ ընդ Գագկայ թագաւորին Զորոյ գետին եւ ընդ Կիւրիկէի թագաւորին Աղուանից [իմա՛ Կախէթ-Հերէթի] եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց [1027-1072], եւ նեղէր զնոսա, տիրէր եւ Դունայ»[3]: Ինչպէս նշեցինք վերեւում, այստեղ պատմիչի շարադրանքի բովում նախավերջին երկու թագաւորների անունների տեղերի շփոթութիւն է սպրդել, ուստի պէտք է ուղղակի սրբագրել եւ ընկալել հակառակը. «Կիւրիկէի թագաւորին Զորոյ գետին» (իշխել է 1048-1089 թթ.) եւ «Գագկայ թագաւորին Աղուանից» (իշխել է 1038-1058 թթ.):

Դժուար չէ ենթադրել, որ Աբու-լ-Սուվար ամիրայի կողմից Գանձակի խլումն իր եղբօր թոռանից, ինչպէս նաեւ շրջակայ քրիստոնեական տարածքների գրաւումը, ըստ ամենայնի՝ սելջուկների օժանդակութեամբ միեւնոյն նուաճողական (էքսպանսիոն) առաջխաղացման բաղադրիչներն են եղել: Պարզ է նաեւ, որ Վարդան Արեւելցու՝ «տիրէ Խաչենոյ եւ Գորոզոյ» արտայայտութիւնը պիտի հասկանալ ոչ միայն Խաչէն եւ Գորոզու երկրամասերի ռազմակալման, այլեւ նրանցում թագաւորական իշխանութեան վերացման իմաստով, ինչպէս որ դա հաստատապէս գիտենք երրորդը նշուած Սեւորդիք – Փառիսոսի համար, որտեղ Գրիգորի որդի Փիլիպպէից (1003-1049) յետոյ թագաւորութեան մասին այլեւս ոչինչ յայտնի չէ: Այնուամենայնիւ, հաւանական է, որ Գորոզուի դէպքում (ուրեմն՝ գուցէ եւ Խաչէնի) թագաւորութիւնը պահպանուել է մի փոքր աւելի երկար՝ հասնելով մինչեւ 1070-ական թթ. կէսերը[4] (անշուշտ, Վարդան պատմիչն էլ կարող էր իր ունեցած տուեալները ներկայացնել ուղղակի ընդհանրացուած ձեւով): Ընդ որում՝ Խաչէնի թագաւորներից վերջինը յիշուած է Սիւնիքի (Բաղք – Կապանի) արքայ Գրիգոր Ա-ի (1051-1072) աներ Սեւադան (կինը՝ «Սոփի թագուհի»), որը նաեւ Սիւնեաց յաջորդ՝ Սենեքերիմ արքայի հայրն էր, իսկ Գորոզուի վերջին թագաւորը Ատրներսե-

---

[1] Այս *Շօթը*, գուցէ, իրօք, ճմանաճուն Սոթք գաւառն է, իսկ Շաշուաղը (տարբերակ՝ Շաշուազ)՝ գուցէ, իրօք, ճշանաւոր Շողուագն է աշխարհացոյցեան Գեղարքունի գաւառում՝ Սեւանայ լճի հարաւ-արեւմտեան անկիւնում (հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 92): Թէպէտ եւ պէտք է ճկատի ունենալ, որ ուշ աղբիւրներում (ալ-Ցակուտ, Համդալլահ Ղազվինի, ան-Նասաւի) ունենք *Շութուր* անունով մի ամրոցի յիշատակութիւն, որը գտնուել է Գանձակից արեւելք (տե՛ս **Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави**, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Пер. с арабского, предисловие, комментарии... **З. М. Буниятова**, Баку, 1973, с. 163, 365).

[2] Թերեւս, այս *Գանձեաց* տեղանունը կա՛մ սրբագրելի է *Տանձեաց*՝ համադրելով *Տանձիք* գաւառակի հետ, որը, հաւանաբար, համապատասխանում էր Քարվաճառ քաղաքից 10 կմ արեւմուտք գտնուող *Արմուդու* («արմուդ» – թիւրքերէն՝ *տանձ*) գիւղի շրջակայքին (տե՛ս **Դասխ.**, գլ. Բ.ծ, էջ 280; Ցաւելուած, էջ 353. «Զալլի գնաց ի կողմ Խաչինոյ, *Տանձեաց* եւ Ադախայ»), կա՛մ էլ համադրելի է Գեղարքունիքի *Գանձաղ-անտառ* գիւղանուան հետ (ներկայիս *Գանձակ* գիւղը՝ Գաւառ քաղաքից 2 կմ հարաւ), որի անունը պահպանուել է Ստեփաննոս Օրբէլեանի գիւղացանկում (**Օրբ.**, գլ. ՀԳ, էջ 373; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ՀԴ, էջ 513):

[3] **Վարդան**, էջ 134-135:

[4] Հմմ. նախորդ ենթագլխում, էջ 270-272:

հի որդի Գրիգոր «իշխանաց իշխան»-ն էր (Մայրեջրի՝ 1069 թ. արձանագրութեան մէջ եւ, գուցէ, Աղին նահատակ եկեղեցու կորսուած՝ 1071 թ. վիմագրում[1]):

Բաժին 3

ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅՈՒԱԾԻ ԱՄԻՐԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԺԱ-ԺԲ ԴԱՐԵՐՈՒՄ ԵՒ ԴԵՐԲԵՆԴԻ ՀԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Այս գլխի վերջում կարիք կայ՝ անդրադառնալու նաեւ խնդրոյ առարկայ դարաշրջանի աւարտին նախկին Աղուանից մարզպանութեան (որը գոյատեւեց 428 թուականից մինչեւ Սասանեանների տէրութեան վախճանը՝ 652 թ.[2]) հիւսիս-արեւելեան հատուածի մահմեդական պետական կազմաւորումների վիճակին եւ Մատթէոս Ուռհայեցու յայտնի հակասական պնդմանն այդ տարածքի հայազգի թագաւորների մասին: Սկսենք վերջինից. ըստ Մատթէոս պատմիչի խօսքերի՝ «էին եւ այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի կապանք, սահմանակից Օզաց եւ Աղուանից [իմա՛ Ալանից – Ա. Յ.], որք էին թագաւորք անարատք եւ սրբակրօնք, որք յիշատակին ի սուրբ պատարագն ընդ այլ աստուածասէր սուրբ թագաւորքն, որք էին անուանք այսոքիկ՝ Վաջագան, եւ Գոշակտակն [միւս ճատուածում՝ Գոշազգակն անուանաձեւն է – Ա. Յ.]՝ նորին որդին, Փիլիպէ որդի Գոշակտակին, Սեւադա[յ] որդին Փիլիպէի, Սենեքարիմ որդի Սեւադայի, Գրիգոր որդի Սենեքարիմայ, որ դեռ եւս կենդանի էր՝ մինչեւ գրէաք զայս մատենագրութիւնս մեր»[3]:

Այս ցուցակի վեց թագաւորներից երրորդի՝ Փիլիպպէի մասին պատմիչն ունի նաեւ երկու առանձին տեղեկութիւն: Դրանցից առաջինը նա կապում է իր թուագրմամբ՝ «Յամի թուականութեանս Հայոց ի Նժ [410 = 961/962 թ.]... Յայսմ ամի...» տեղի ունեցած երկու իրադարձութիւնների՝ Անին մայրաքաղաք հռչակելու («Եւ յայնմ աւուր եղեւ ժողով ահագին եւ մեծ ի քաղաքն Յանի, որ եղեւ այժմիկ թագաւորանիստ քաղաք Հայոց») եւ Անանիա Մոկացի կաթողիկոսի (941-967) ձեռքով Աշոտի որդի Գագիկ Բագրատունի թագաւորի օծման արարողութեան («...եւ ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեան որդւոյն Աշոտի Գագկայ ըստ առաջին օծման հարցն իւրոց, վասն զի չեւ եւս [իմաստն է՝ վաղուց – Ա. Յ.] էր նստեալ յաթոռ թագաւորութեան տանն Հայոց եւ ոչ էր եդեալ թագ ի վերայ

---

[1] Տե՛ս աստ, էջ 252, ծն. 5:

[2] Վերջերս արտայայտուել է աղբիւրագիտօրէն լրիւ անհիմն ու անհասկանալի մի տեսակէտ, իբրեւ թէ Աղուանից մարզպանութիւնը «VI դարի 90-ական թուականներին այլեւս գոյութիւն չուներ» (տե՛ս **Ա. Վարդանյան**, Աղվանքը VII դարի կեսերին, – ՊԲՀ, 2015, հմր 2, էջ 241): Ինչպէ՞ս կարելի է անտեսել, օրինակ, որ Աղուանից վերջին մարզպաններից մէկի՝ Սեմաւշնասպի ուղիղ յիշատակութիւնն ունի 629 թ. դէպքերի առիթով Անանուն կաղանկատուացին (**Դասխ.**, Բ.ժդ, էջ 154; ՄՀ, հտ. Դ, էջ 401. «Յայնժամ առաքէր պատգամս ըստ բանի հաւրն իւրոյ առ կուսակալ իշխանն Պարսից, որ էր *մարզպան Աղուանից աշխարհին*, Սեմաւշնասպ անուն նորա եւ առ նոյն կաթողիկոսն Աղուանից Վիրոյ»):

[3] **Ուռհ.**, էջ 231:

գլխոյ իւրոյ»[1]. այսպիսով, իրապէս՝ 989/990 թուից ոչ վաղ) առիթներով կազմակերպուած տօնախմբութեանը մեծ թուով պատուաւոր հիւրերի հրաւիրման հետ: Ըստ մեզ հասած բնագրի՝ «Հարկաւորեալ կոչեցին զամենագովելին զՏէր Յովհաննէս կաթողիկոսն Աղուանից աշխարհին, եւ քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա, եւ մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս՝ զթագաւորն Աղուանից՝ զայր աստուածային եւ զսուրբ, զորդին Գոշազգակայ [ձեռ.՝ Գողազգակայ] որդւոյ Վաչագանայ, որք էին թագաւորք Աղուանից աշխարհաց»[2]: Յընթացս նշենք, որ Ուռհայեցու այս ամբողջ հատուածը համառօտ նրանից քաղում է յաջորդ դարի պատմիչ Սմբատ Գունդստաբլը («Իսկ ի թուականութեանն Հայոց 410 հարկաւորեալ հայրապետն սուրբ [=Անանիա] եւ ամենայն իշխանք Գագկայ, եւ առաքեալ դեսպան առ կաթողիկոսն Աղուանից Տէր Յովհաննէս եւ առ թագաւորն նոցա Փիլիպպէ, կոչեցին գալ ի յօծումն թագաւորին Գագկայ: Որոց եկեալ քառասուն եպիսկոպոսօք եւ բազում իշխանօք, եւ միաբանեալ օծեցին զԳագիկ թագաւոր Հայոց»)[3]:

Մատթէոս Ուռհայեցին քիչ յետոյ շարունակում է. «Եւ յայսմ ամի օծաւ որդի Աշոտի Գագիկ արքայ յօծումն հարց իւրոց եւ նստաւ ի գահոյս առաջին թագաւորացն Հայոց ազգիս, եւ լինէր ուրախութիւն մեծ ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ թագաւորութեան աշխարհիս Հայոց՝ ըստ առաջին հարցն... Եւ յայնմ աւուր լինէր հանդէս զօրաց նորա հարիւր հազարաց վառելոց ընտիր արանց ի մարտ պատերազմաց անուանեաց եւ քաջ կորովեաց... Եւ լուեալ զայս ամենայն շուրջակայք եւ ամենայն թագաւորք ազգաց՝ Ափխազաց եւ Յունաց, Բաբելացւոց եւ Պարսից, տուրս եւ սէրս հանդերձ պատուական ընծայիւք յուղարկէին ի փառաւորութիւն Հայոց թագաւորութեանն»: Եւ աւարտելով պարբերութիւնը՝ պատմիչը նշում է Փիլիպպէ թագաւորին ու Աղուանից կաթողիկոսին յետ ճանապարհելու մասին այսպէս. «Եւ յայնժամ զթագաւորն Աղուանից զՓիլիպպէ եւ զկաթողիկոսն զՏէր Յովհաննէսն, զեպիսկոպոսունսն եւ զզօրսն, որ եկին զհետ թագաւորին եւ հայրապետին, եւ յուղարկեցին մեծամեծ տրօք եւ սիրով յաշխարհն Աղուանից, որ էր աթոռ սուրբ առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի, որք են նահապետք առաջինք Հայոց Մեծաց»[4]: Հարկ է շեշտել, որ Ուռհայեցին նկատի ունի հէնց Գագիկ Ա Շահնշահ արքայի «զօծումն»-ը՝ հակառակ մի նախկին չյաջողուած վարկածի: Խօսքը Մ. արք. Օրմանեանի առաջ քաշած եւ Հր. Աճառեանի եւ Հր. Բարթիկեանի կողմից թեթեւօրէն ընդունուած վարկածի մասին է, ըստ որի՝ Ուռհայեցու տուեալներն իրապէս վերագրւում են Աշոտ Ողորմածին, ով իբրեւ թէ կարող էր կրկնակի՝ Աշոտ-Գագիկ անունն ունենալ[5]: Ի դէպ, նորերս այդ

---

[1] Անդ, էջ 3-4:
[2] Անդ, էջ 4:
[3] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի** Տարեգիրք [Հրատարակեց՝ **Հ. Ս. վրդ. Ագըլեան**], Վենետիկ – Ս. Ղազար, 1956 (յետայսու՝ **Սմբատ**), էջ 2:
[4] **Ուռհ.**, էջ 4:
[5] Տե՛ս **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, սն. 1294, § 766; **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 100; **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Աշխարհաբար թարգմանությունը... **Հ. Բարթիկյանի**, էջ 484, ծն. 11:

վարկածը կրկնեց Կարէն Մաթեւոսեանը՝ յաւելելով, որ Սամուէլ Անեցու «ժամանակագրութեան» լրացումները պարունակող՝ ՄՄ երկու գրչագրերում այսպիսի նշում կայ. «Հայոց ՆԺԱ [=962/963 թ.]. Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է նոյն Աշոտ որդի Աբասայ»[1]. իրականում պարզ է, որ Սամուէլի անանուն խմբագրողը լոկ ոչ բարդ տրամաբանական տեսքի է բերել իր աղբիւր Ուռհայեցու ասածը: Իսկ պատմիչն ընդամենը երկու էջ անց նշում է իր հերոսի վախճանը եւ, ի դէպ, հէնց նոյնչափ վրիպեալ թուագրմամբ. «Իսկ ի վերանալ թուականութեանս Հայոց ի ԴՃի [420 = 971/972 թ.] մեռանէր Գագիկ արքայն խաղաղական մահուամբ: Եւ եղեւ հակառակութիւն եւ աղմուկ մեծ ի մէջ երկու որդւոց թագաւորին Գագկայ՝ ընդ Յովհաննէս[-Սմբատ] եւ ընդ Աշոտ...»[2]: Համմ. նոյնը Սմբատի մօտ. «Իսկ յորժամ եղեւ թուականն Հայոց 420, մեռանէր արքայն Հայոց Գագիկ խաղաղական մահուամբ: Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ որդւոց իւրոց Յովհաննիսի եւ Աշոտոյ...»[3]:

Տեղին նշենք նաեւ, որ ըստ Ասողիկի վկայութեան՝ 989/990 թ. ձմռանը գահակալած Գագիկ Ա-ի մահուան տարին, հետեւելով Հ. Միք. Զամչեանին, աւանդաբար համարւում է 1020 թ.[4]: Սակայն Կարէն Իւզբաշեանն արդէն ցոյց է տուել, որ 29 տարի տեւած նրա գահակալութիւնը, անկասկած, աւարտուել է 1017/1018-ին[5], քանի որ Արիստակէս Լաստիվերտցին 1018-1019 թթ. տեղի ունեցած երկու դէպք վերագրում է Գագիկի որդի Աշոտի օրերին[6], իսկ Տեկորի՝ 1018/1019 թ. մի վիմագիր նշում է «Յէվանէս թագաւոր»-ին, այսինքն՝ Յովհաննէս-Սմբատին («Ի Նկէ թուականին [467 = 1018 թ.]. Յանուն Աստուծոյ, ես՝ Թաթուլս, թողեալ եմ զՏեկորո[յ] հարկն վասն Յէվանէս թագաւորի եւ իմ որդ[ւ]ոյն երկար արեւշատութեան...»)[7]:

Արդ՝ փորձելով հասկանալ Մատթէոս Ուռհայեցու տեղեկութիւնների ժամանակագրական ակնյայտ հակասութեան պատճառները՝ նկատում ենք, որ դա հնարաւոր է միմիայն հետեւեալ դէպքում. ուշադիր քննութեան լոյսի ներքոյ անհրաժեշտ է ընդունել, որ աւելի քան մէկուկէս դար յետոյ գրող պատմիչի նկարագրած երկու իրադարձութիւնները (Անիի հռչակուելը մայրաքաղաք եւ Գագիկ Ա-ի

---

[1] **Կ. Մաթեւոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածո), Եր., 2010, էջ 10, հմմ. **նոյնի՝** Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, էջ 145, 151-152; **նոյնի՝** Անիի ազնվականության պատմությունից կամ երբ Գրիգոր Մագիստրոս, Եր., 2015, էջ 18:

[2] **Ուռհ.**, էջ 7:

[3] **Սմբատ**, էջ 5:

[4] **Ասողիկ**, Գ.լ, էջ 255: Վերջին անգամ տե՛ս, օր.՝ ՀԺՊ, հտ. III, էջ 134, 144:

[5] **К. Н. Юзбашян**, К хронологии правления Гагика I Багратуни, – Античная древность и средние века, вып. 10, Свердловск, 1973, с. 195-197; **նոյնի՝** Армянские государства эпохи Багратидов и Византия, с. 156-157, прим. 68.

[6] Պատմութիւն **Արիստակիսի Լաստիվերտցւոյ**, էջ 26-27:

[7] Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, Շիրակ. Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ – Ս. Ղազար, 1881, էջ 134: Ի դէպ, այս թուագրումն արդէն ընդունւում է նորագոյն գրականութեան մէջ (տե՛ս **Սամուէլ**, էջ 182, 389-390; **Կ. Մաթեւոսյան**, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 22-25; **նոյնի՝** Գրիգոր Մագիստրոսը եւ կաթողիկոսական աթոռի անցումը Պահլաւունիներին, – ՀԱ, ՃԻԹ տարի, 2015, սե. 90; **նոյնի՝** Անիի ազնվականության պատմությունից, էջ 9:

հանդիսաւոր թագադրումը), լինելով տարաժամանակեայ, կարող էին պարզապէս միախառնուել հէնց շարադրող հեղինակի երեւակայական պատկերացումներում: Ըստ այդմ՝ աղբիւրագէտի հայեացքով պարզ է, որ Ուռհայեցու կողմից «մշակուած»՝ առկայ բնագրի ինչ-ինչ մանրամասներ իրենց հիմքում պէտք է վերագրուեն առաջին իրադարձութեանը (Անիի օծուելը «թագաւորանիստ քաղաք», ընդ որում՝ հէնց Անանիա Մոկացի «սուրբ հայրապետի» ձեռամբ, ինչպէս ընդունուած է պատմագրութեան մէջ), իսկ միւսները՝ երկրորդին: Կարեւոր է, որ պատմիչի պատկերացմամբ՝ երկրորդ իրադարձութիւնը՝ Գագիկ Ա-ի «զօծումն թագաւորութեան»-ը, տեղի է ունեցել նրա մահուանից ուղիղ 10 տարի առաջ (Հայոց՝ իբրեւ թէ «Նի» թուից հանած «Նժ» թիւը): Այսինքն՝ եթէ ենթադրենք, թէ տարիների հէնց այդ քանակն է Ուռհայեցին իմացել (իսկ, գուցէ, հիւրերի անունները ե՞ւ) մի որեւէ լաւ տեղեկացուած աղբիւրից (գուցէ՝ նաեւ գրաւո՞ր), ապա հնարաւոր է թուում մտածել (գոնէ իբրեւ վարկած), որ այլ աղբիւրներին անյայտ մնացած մի իրադարձութիւն՝ Գագիկ Ա-ի թագադրում-օծումը, իրօք, կարող էր տեղի ունեցած լինել 1007 կամ 1008 թուականին (1017/1018-ից հանած 10 տարի): Ընդ որում՝ պարզ է, որ այդ օծման արարողութիւնը պիտի կատարած լինէր ոչ թէ Անանիա Մոկացին, այլ Սարգիս Սեւանցի Հայոց կաթողիկոսը (992-1019) եւ, իհարկէ, շատ ուրիշների (այդ թուում՝ Աղուանքի կաթողիկոսի ու նրան ուղեկցող թագաւորի) ներկայութեամբ եւ այս կամ այն ծաւալի մասնակցութեամբ:

Երկրորդ անգամ Մատթէոս Ուռհայեցին Փիլիպպէ թագաւորին առանձին յիշատակում է Յովհաննէս Զմշկիկ կայսեր («թագաւորին Զմշկիանն», «Զմշկիկ, որ ասէին Կիւռժանն» – 969-976) զօրքերի՝ իր թուագրմամբ (անհամեմատ՝ աւելի իրական)՝ «ի Հայոց թուականութեանն՝ յամին ՆիԱ [421 = 972/973 թ.]... Եւ յետ սակաւ աւուրց... ի նոյն ամին...»[1] դէպի Հայաստան եւ Միջագետք արշաւանքի մասին պատմելիս: Մինչ բնագրին անցնելը նախ նշենք այն ուշագրաւ հանգամանքը, որ պատմիչն ինչ-որ աղբիւրից ճշգրիտ է քաղում-դնում Զմշկիկի գահակալելու, այսինքն՝ Նիկեփոր Բ Փոկասին սպանելու տարին (թէկուզ եւ Գագիկ Շահնշահի մահուան մասին պատմող պարբերութեանը նախորդողում). «Դարձեալ ի թուականութեանս Հայոց Նժհ [418 = 969/970 թ.] ոմն մահապարտ... որում անունն կոչէին Զմշկիկ... անխնայ գազանաբար խողխողէր զամենաբարի արքայն... Եւ նստաւ յաթոռ թագաւորութեանն Յունաց անօրէն Զմշկիկն...»[2]: Իսկ մեզ հետաքրքրող բնագիրն է. «Յայնժամ ամենայն թագաւորազունքն Հայոց՝ ազատքն եւ իշխանքն եւ ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն Արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի [=«Ողորմած» – 953-977]. թագաւորն Կապանին Փիլիպպէ եւ թագաւորն Աղուանից Գուրգէն [=Լօռի – Ջորագետի – մօտ 957-996, թագաւոր՝ 978-ից], Աբաս կարուց տէրն [984-1029] եւ Սեներքերիմ Վասպուրականիս տէրն [990-1021] եւ Գուրգէն Անձեւացեաց տէրն [977-1003] եւ բովանդակ ամենայն

---

[1] Ուռհ., էջ 14, 15, 17:
[2] Անդ, էջ 6-7:

տունն Սասյաւնու. եւ բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրեւ ութսուն հազար»[1]: Նոյնը հմմ. Սմբատ Գունդստաբլի մօտ. «Յայնժամ ժողովեցան առ արքայն Հայոց Աշոտ Կապանին թագաւորն Փիլիպպէ, եւ թագաւորն Աղվանից Գեորգի [<Գուրգէն – Ա. Յ.], եւ Աբաս՝ կարուց տէրն, եւ Սենեքերիմ՝ վասպուրականի տէրն, եւ Գուրգէն՝ Անձեւացեաց տէրն, եւ ամէն տուն Հայոց...»[2]:

Արդ՝ Մատթէոս Ուռհայեցու բնագրում քառակուսի փակագծերի մէջ մեր ծանօթագրած թուականներից (գրականութեան մէջ առկայ վերջին ճշգրտումներով) երեւում է, որ չնայած հիմնական հաղորդման՝ ընդհանուր առմամբ հաւաստիութեանը (ժամանակով հանդերձ), որը յուշում է հեղինակի կողմից գրաւոր աղբիւրի օգտագործման հաւանականութիւնը՝ Աշոտ Գ Ողորմածի զօրաժողովի կոնկրետ մասնակիցների առումով լիովին կարելի է ենթադրել պատմագիր Ուռհայեցու էական «ստեղծագործական աշխատանքը»՝ ենթադրեալ աղբիւրի պարունակած հաւաստի, բայց, հաւանաբար՝ աւելի համառօտ տեղեկանու համեմատ: Նրա այդ աշխատանքի շնորհիւ ցուցակում յայտնուել են, ինչպէս տեսնում ենք, պարզապէս ժ դարի վերջերի առաւել յայտնի թագակիր անձինք:

Սակայն հարկ է նշել, որ բերուած երկու դէպքերում էլ, թէպէտ բնագրերում նկատւում են մեծ կամ փոքր ժամանակավրէպ փաստեր ու անհամապատասխանութիւններ, առկայ վկայութիւնների ամեն մի առանձին մանրամասնի հաւաստիութեան խնդիրը պիտի քննարկուի յատուկ եւ շատ ուշադիր: Բանն այն է, որ, ինչպէս արդէն պարզաբանել է Լեւոն Խաչիկեանը, Մատթէոս Ուռհայեցին իր «ժամանակագրութեան» երեք մասերից առաջինում (այն ընդգրկում է 951-1051 թթ. ժամանակահատուածը) իբրեւ աղբիւր, ամենայն հաւանականութեամբ, օգտագործել է նաեւ իր աւագ ժամանակակից, Հայաստանի եւ յատկապէս նրա հիւսիս-արեւելեան երկրամասերի իրողութիւններին քաջածանօթ ու մի շարք կարեւոր իրադարձութիւնների անմիջական մասնակից Յակոբոս Սանահնեցի վարդապետի (կոչուած նաեւ՝ Քարաբնեցի, Քարափնեցի, Քարահատայ որդի, Մեծքարեցի)՝ մեծանուն Դէոսկորոս Սանահնեցու աշակերտի կորսուած ժամանակագրական երկը[3]: Դրա մի

---

[1] Անդ, էջ 17: Նախավերջին տեղանուան վերականգնման համար տե՛ս նշուած էջի տողատակ 6 եւ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, էջ 486, ծն. 41 («Բնագրում՝ «Սասանու»: Առանձին ձեռագրեր տալիս են «Սասնու» ընթերցումը, այսինքն՝ Սասուն, որ ճիշտ է»):

[2] **Սմբատ**, էջ 9:

[3] **Լ. Խաչիկյան**, Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, – ԲԵՀ, 1971, հմր 1, էջ 22-48 (վերահրատ.՝ **Լ. Խաչիկեան**, Աշխատութիւններ, հտ. Ա, Եր., 1995, էջ 128-155): Հմմ. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» եւ նրանց ինքնությունը. Հայ-վրացական հարաբերությունները (պատմական հետազոտության փորձ), Վրացերենից թարգմանեց **Հ. Բայրամյանը**; Խմբագրութեամբ **Գ. Տէր-Վարդանեանի**, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2016, էջ 105-114; **Հր. Բարթիկյան**, Մատթեոս Ուռհայեցի, – Հայ մշակոյթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Եր., 1976, էջ 237-238; **Ռ. Ի. Մաթեւոսյան**, Տաշիր-Զորագետ, էջ 72; **Պ. Մուրադեան**, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դաւանական խնդիրները եւ Մխիթար Գօշի «Առ վրացիսն» թուղթը. Աղբիւրագիտական քննութիւն եւ բնագրեր, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2011, էջ 23-25:

փոքրածաւալ հատուած պահպանուել է ՄՄ 9832 ձեռագրում (ժողովածոյ, ԺԷ դար)՝ «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագրով (թ. 25բ-27ա), որը համապատասխանում է Ուռհայեցու վաղարշապատեան հրատարակութեան էջ 49-50 եւ 52-55-ի բովանդակութեանը: Լ. Խաչիկեանն այն հրատարակել է իր յօդուածի վերջում՝ զուգադիր համեմատելով 3 հատուածներ՝ ա) Յովհաննէս Կոզեռնի «Տեսիլքից» (ՄՄ Ձեռ. 1324-ից, ժամանակը՝ 1281 թ., խորագիրը՝ «Պատմութիւն նշանաց, որ եղեն ի գուշակս առաջիկա[յ] աւուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կոզռան՝ Հայոց վարդապետի»), որն անմիջականօրէն յանգում է Սանահնեցուն (1320 թ. մի պակաս ընտիր գրչագրից դա հրատարակել էր նաեւ Նիկ. Մառը[1]); բ) Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ից, որը եւս անմիջականօրէն քաղուած է Յակոբոսից; գ) Սմբատ Գունդստաբլից, որն օգտագործել է Ուռհայեցու երկի մի վաղ տարբերակ[2]:

Արդ՝ բազմաթիւ ուսումնասիրողներ նկատել են վերեւում բերուած Դարբանդ – Կապան – Աղուանքի արքայացանկի հակասականութիւնը, ընդ որում՝ այդ պատճառով, որպէս կանոն, խուսափել են նրա առանձին տարրերի հաւաստիութեան քննարկումից: Ճիշտ է, մի դէպքում Կ. Թումանովը, եւ միւս դէպքում՝ Ս. Բարխուդարեանը, ինչ-ինչ ձեւերով լուծելով ակնյայտ հակասութիւնները, փորձել են այդ ցուցակն ամբողջութեամբ համարել՝ առաջինը՝ «Հաբանդ»-ի (որից էլ՝ իբրեւ թէ > «Դարբանդ»), այսինքն՝ Գորոզուի 6 տիրակալների ցանկ[3], իսկ երկրորդը՝ Դերբենդում գոյատեւած «Հայ-աղուանական թագաւորութեան» գահակալների[4]: Վերջինս իբրեւ հիմք է մատնանշում Սամուր գետից հարաւ, հայաբնակ Խաչմաս գիւղի մօտ (Կուդիալ գետի ափին, որտեղ տեղորոշւում է նաեւ Մասքթաց թագաւորութեան Արշակունի արքաների կենտրոնատեղի Վատնեան դաշտը) գտնուող գերեզմանատան երեք քարերի վրայ՝ «Այս է տապան Սենեքերիմ արքայի», «Գրիգոր կրեյսար» եւ «Յովհաննէս կրեյսար» հայերէն տապանագրերը, որոնցում յիշուած Սենեքերիմին ու Գրիգորին դեռեւս ԺԹ դարում դրանք տեսած ու ընթերցած երկրագիրները (Սարգիս Ջալալեանց, Մեսրոպ Սմբատեանց, Մակար Բարխուդարեանց) համադրել են Ուռհայեցու ցանկի վերջին երկու թագաւորների հետ[5]: Այդ համադրումը,

---

[1] **Н. Марр**, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне (Из материалов для истории средневековой армянской литературы), С. Петербург, 1895 ("Восточные заметки": Сборник факультета восточных языков), с. 19-26 (թարգմանութիւնը՝ էջ 26-34, խորագիրը՝ «Տեսիլ սուրբ վարդապետին Յոհաննիսի, որ մականուն Կոզեռն կոչի»):

[2] **Լ. Խաչիկյան**, Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, էջ 40-44, վերահրատ. մէջ՝ էջ 146-150: Մանրամասն տե՛ս նաեւ մեր յօդուածում. **Ա. Յակոբեան**, Մատթէոս Ուռհայեցու վկայութիւնը 961 թուականին Անիի մայրաքաղաք հռչակելու մասին (նոր աղբիւրագիտական քննութիւն), – ՄՄԱԵԺ, հտ. XXIX, Եր., 2014, էջ 309-331:

[3] **C. Toumanoff**, Aranšahikides ou Haykides? Derniers rois de Siounie, – ՀԱ, Ղ տարի, 1965, էջ 169-176:

[4] **Ս. Գ. Բարխուդարյան**, Դերբենդի Հայ-աղվանական թագաւորութիւնը, էջ 125-148; **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 97-148.

[5] Տե՛ս **Ս. վրդ. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, էջ 420; **Մ. արք. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վա-

անշուշտ, իրաւացի է, սակայն միաժամանակ աւելի հաւանական է մտածել, որ Խաչմասի տապանագրերում տուեալ արքայանունների յայտնուելու հիմքը զուտ գրական է: Այսինքն՝ ենթադրելի է, որ հասարակական ինչ-որ վերելքի պահին տեղի հայութիւնը, հէնց Մատթէոս Ուռհայեցի պատմիչի հաղորդումների ոչ բարդ մեկնութեամբ «պարզելով» իր երկրի հին արքաների անունները («Թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին... սահմանակից Օզաց եւ Ալանից»), «վերականգնել» է նրանց տապանաքարերը մի առաւել յարմար, գուցէ՝ հին աւանդութեան հետ կապուած վայրում (եթէ վարկածը ճիշտ է, ապա տեղում պիտի լինէին նաեւ Ուռհայեցու ցանկի միւս 4 արքաների կենոտաֆները): Նման հաւանական պահ կարող էր լինել ողջ ԺԵ դարը, երբ Աղուանից կաթողիկոսութիւնը ձախափնեայ Ճալէթում էր (թերեւս, հակաթոռ կարգավիճակով)[1]՝ վարդաշէնից քիչ արեւմուտք, այսինքն՝ հոծ ուդիական միջավայրում (եւ ուդիների էթնո-մշակութային վերելքի նշաններով), կամ՝ ԺԶ դ. կէսերը, երբ Սեֆեանների ամրապնդումն Այսրկովկասում, ինչպէս երեւում է բազմաթիւ վիմագրերից ու յիշատակարաններից, նպաստեց տնտեսութեան, շինարարութեան եւ հայ գրաւոր մշակոյթի զարգացմանը[2]:

Հետագային թողնելով Կ. Թումանովի փաստարկների մանրամասն քննութիւնը՝ նշենք, որ իրականում Ուռհայեցու ցանկը ճիշտ է թւում դիտարկել պարզապէս իբրեւ տարբեր, այդ թւում՝ բանաւոր աղբիւրների հիման վրայ հէնց իր՝ պատմիչի կողմից ի մի բերուած-մշակուած հաւաքածոյ: Այսպիսի մօտեցման դէպքում աղբիւրագէտի խնդիրը պիտի լինի նախ՝ մեզ հասած ստուգելի սկզբնաղբիւրների նիւթով պարզել իւրաքանչիւր անուան կամ անունների խմբի համար Ուռհայեցու ձեռքի տակ եղած հաւանական աղբիւրի գոնէ բնութագրիչները (պարամետրերը), իսկ ապա՝ դրա հիման վրայ ճշտել այդ անուան ու նրա տեղի հաւաստիութեան աստիճանը: Ահա այս եղանակով մենք փորձել ենք պարզաբանել, որ.

ա) ցանկի առաջին երկու անունների համար (Վաչագան եւ Գոշազգակ[3]) պատմիչին, ըստ ամենայնի՝ հիմք է ծառայել ինչ-որ խիստ հետաքրքիր բնագրական կտոր (գուցէ եւ՝ արդէն խաթարուած), մօտաւորապէս՝ «Վաչագանի որդի եւ իշխան Գուռզ{ոյ} Գա{գի}կն [կամ Գուռզ{ուայ} Գա{գի}կն]» բովանդակութեամբ, որի՝ մեր կողմից ձեւաւոր փակագծերի մէջ վերցուած փոքրիկ հատուածների կորստով ու շեղուած 2 տառերի այլափոխումով Ուռհայեցու մօտ ստացուել է՝ «Վաչագան, եւ Գոշազգակն՝ նորին որդին» շարքը: Այս վարկածը ենթադրում է, որ Գուռզուի, ըստ ամենայնի՝ առաջին թագաւոր «Մուսէի որդի Գագիկ»-ը (յիշուած՝ 997 եւ 1000 թուերին), նոյնանուն պապ է ունեցել, ում մասին գրաւոր վկայութիւն մեզ

ցօրէից, էջ 544; **Մ. վրդ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 134; **Ցոյնի՝** Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, էջ 195:

[1] Դրա մասին մանրամասն տե՛ս **М. Г. Балаян**, Антипрестольный албанский католикосат в Чалете, – Albania Caucasica, Сб. статей, вып. I, Предисл., подгот. **А. К. Аликберов, М. С. Гаджиев**, Москва, 2015, с. 252-259

[2] Հմմ. **С. Бархударян**, Страницы из истории Арцаха..., с. 148 (տողատակի ծն.՝ խմբագրի):

[3] *Գոշազգակ* կամ *Գոշակտակ* անձնանուն չկայ ո՛չ հայերի, ո՛չ այլ ժողովուրդների մօտ:

չի հասել, բայց նրա հայր Վաչագանին, ինչպէս տեսանք վերեւում, 950-ական թուականներին ճանաչում էին Անանիա Մոկացին եւ Իբն Հաուկալը (վերջինիս մօտ վկայուած է նաեւ հայրանունը. «Վաշական Իբն Մուսա» – «Մովսէսի որդի»):

բ) ցանկի երրորդ անուան համար հիմք է ծառայել, ամենայն հաւանականութեամբ, Յակոբոս Սանահնեցու երկում Փիլիպպէ Աղուանից (Փառիսոսի) թագաւորին յիշատակող մի հատուած, որը վերաբերուել է այդ թագաւորի՝ Յովհաննէս Աղուանից կաթողիկոսի ընկերակցութեամբ, բայց ոչ թէ 961 թուին, այլ կէս դար անց տեղի ունեցած ինչ-որ կարեւոր իրադարձութեան առիթով Անի գալուն (գուցէ եւ՝ հէնց վերեւում մեր ենթադրած վարկածով՝ Գագիկ Ա-ին 1007/1008 թ. թագադրելու-օծելու), սակայն պատմիչի մօտ դա սխալմամբ տարուել է շատ առաջ:

Մանրամասնենք, որ Ուռհայեցին եւս երկու անգամ յիշատակում է Յովհաննէս կաթողիկոսին (բաւականին շփոթեալ ու խառնակ մանրամասներով)՝ որպէս իբր թէ 976 եւ 983 թթ. Անիում տեղի ունեցած եկեղեցական ժողովների մասնակից-նախագահողի: Առաջին դէպքում դա իբրեւ թէ եղել էր՝ «հրամանաւ Անանիայի [Մոկացու – 941-967!], Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց թագաւորացն [1017/1018-1041 թթ.!]» («Իսկ ի շարժել յաւելմամբ թուականս Հայկազունեաց ազգիս ի յամս Նիե [425 = 976/977 թ.] եղեւ կոչումն յԱստուծոյ սրբոյ հայրապետին Հայոց Անանիայի. եւ ձեռնադրեցին հանդերձ բազմութեամբ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց զլաւն ի բնաւիցս զերանելին զՎահան [967-969]. որ էր գլուխ ժողովոյն կաթուղիկոսն Աղուանից տէր Յովհաննէս: Արդ՝ ի յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեան տանն Հայոց տէր Վահան ի մեծն Արգինա[յ] հրամանաւ Անանիայի, Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց թագաւորացն»)[1]: Իսկ երկրորդ դէպքում նշւում է. «...ընդ ժամանակս վասլին՝ Յունաց թագաւորին [976-1025], եւ Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց արքայից [1017/1018-1041!], եւ Սենեքերիմայ որդւոյ Ապուսահլի...» («Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆԼԲ [432 = 983/984 թ.] մեռանէր սուրբ հայրապետն Հայոց Վահան, կացեալ զամս հինգ ի յաթոռ սրբոյն Գրիգորի. եւ ձեռնադրեցին յաթոռ կաթողիկոսութեան Հայոց զտէր Ստեփանոս [Սեւանցի (969-971), գահընկէց առուած Վահան Ա Սիւնեցու հակառակորդը!]՝ զայր աստուածազգեաց... նստուցանեն զնա հայրապետ Հայոց հրամանաւ եւ օրհնութեամբ տեառն Վահանայ [?!]. որ էր իսկ գլուխ ժողովոյն կաթուղիկոսն Աղուանից տէր Յովհաննէս, ընդ ժամանակս վասլին՝ Յունաց թագաւորին, եւ Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց արքայից [1017/1020-1041!], եւ Սենեքերիմայ [990-1021!] որդւոյ Ապուսահլի, որդւոյ Աշոտոյ, որդւոյ Դերենկանն, որդւոյ Գագկայ Արծրունեաց՝ յազգէն Սարասարայ»)[2]:

---

[1] Ուռհ., էջ 33:

[2] Անդ, էջ 34: Նոյնը հմմ. նաեւ Սմբատի մօտ. «Ի թուին Հայոց ՆԻԷ [*427 = 978/979 թ.*] փոխեցաւ յաշխարհէ սուրբ հայրապետն Անանիա. եւ հրամանաւ Բ թագաւորացն Հայոց Յովհաննիսի եւ Աշոտոյ ձեռնադրեցաւ ի տեղի նորա Վահան...», եւ՝ «Ի թուին Հայոց ՆԼԲ [*432 = 983/984 թ.*] մեռանի սուրբ հայրապետն Վահան, եւ ձեռնադրի ի տեղի նորա ի Յովհաննիսէ Աղվանից կաթողիկոսէ Ստեփաննոս, այր բարի եւ հեզ, հրամանաւ Բ թագաւորացն՝ Յովհաննիսի եւ Աշոտոյ...» (Սմբատ, էջ 15 եւ 16):

Թուում է, թէ Աղուանից կաթողիկոսների շարքում Յովհաննէսը, անկախ անգամ այս ժամանակավրէպ նշումներից, չէր կարող լինել աւելի վաղ, քան Մովսէս Դասխուրանցու օրօք իշխած ու նրա կողմից չիշատակուած վերջին՝ Տէր Մովսէս կաթողիկոսը, որի աթոռակալութեան 6 տարիներն ընկնում են 982-988 (կամ Մխիթար Գօշի տարբերակով՝ 976-982) թուականներին («Տէր Դաւիթ՝ ամս Զ [6]... սա առ ձեռնադրութիւն յԱնանիայէ՝ Հայոց կաթողիկոսէ [իմա՛ 958 թ. – Ա. Յ.]: Տէր Պետրոս՝ ամս ԺԸ [18][1]. յեպիսկոպոսութենէն Գարդմանայ: Տէր Մովսէս՝ ամս Զ [6]. յառաջնորդութենէն Փառիսոսայ վանաց»)[2]: ԺԲ դ. վերջերին իր կոթողային «Դատաստանագրքի» մի հեղինակային արտագրութեան առաջաբանում Աղուանից կաթողիկոսացանկի լրացմանը ձեռնարկած Մխիթար Գօշը, ում տեղեկացուածութիւնը ժ դ. վերջերի իրողութիւնների մասին, իհարկէ, պիտի զիջէր հէնց այն պահին ապրած Դասխուրանցու իմացածին, Տէր Մովսէսից յետոյ դնում է Տէր Մարկոսին՝ առանց նշելու երկուսի ժամանակները, ապա Տէր Յովսէփին («տէր Դաւիթ՝ ամս Զ, տէր Պետրոս՝ ամս ԺԲ, սորա ի կենդանութեանն հրաժարեալ յաթոռոյն, յաջորդէ յաթոռ իւր զտէր Մովսէս՝ վանական ի Փառիսոսոյ: Իսկ զկնի տեառն Մովսիսի կալաւ զաթոռ հայրապետութեան այրն Աստուծոյ տէր Մարկոս: Եւ յետ նորա՝ տէր Յովսէփ...»)[3]: Տուեալ վկայութիւնը Գօշի երկից (նաեւ՝ Դասխուրանցուց) քաղել են Կիրակոս Գանձակեցին («Տէր Դաւիթ՝ ամս վեց. սա առ ձեռնադրութիւն յԱնանիայէ՝ Հայոց կաթողիկոսէ: Տէր Պետրոս, ամս վեշտասան: Տէր Մովսէս, ամս վեց, յառաջնորդութենէն Փառիսոսոյ վանացն: Ապա տէր Մարկոս, այրն Աստուծոյ, եւ յետ նորա Յովսէփ...»)[4] ու հետագայ ցուցակագիրները:

Եւ ահա, վերջին՝ Յովսէփ կաթողիկոսը, ըստ Ուռհայեցու տեղեկանու (ըստ ամենայնի՝ նոյն Յակոբոս Սանահնեցուն յանգող), մասնակցել է ու նախագահել Անիի՝ 1038 թ. եկեղեցական ժողովին, որտեղ Դէոսկորոս Սանահնեցու կարճատեւ աթոռակալութեամբ (1037-1038 թթ.) ընդմիջուելուց յետոյ Պետրոս Գետադարձը (1019-1054) կրկին գրաւեց Հայոց հայրապետական գահը («Եւ եղեւ ի թուականութեանս Հայոց ՆՁԷ [487 = 1038/1039 թ.] լինէր մեծ ժողով ի քաղաքն յԱնի եպիսկոպոսաց, հայրապետաց, կրօնաւորաց եւ վարդապետաց, ազատաց եւ իշխանաց իբրեւ չորք հազարաց. որ էր գլուխ ժողովոյն ծերունին Յովսէփ՝ կաթուղիկոսն Աղուանից. եւ սուգ մեծ հասուցանէին Դէոսկորոսի եւ յոյժ պարտաւորեցին զնա եւ մերժեցին ի պատուոյ եւ ընկեցին յաթոռոյ հայրապետութեան... եւ հաստատեցին զՏէր Պետրոսն յաթոռ հայրապետութեան իւրոյ, եւ եղեւ խաղաղութիւն սուրբ եկեղեցւոյն Հայաստան աշխարհին»)[5]: Ի դէպ, պատմիչն ունի եւս մի նման հաղոր-

---

[1] Գօշի ցուցակում այս թիւը «ԺԲ» է՝ 12 (**Դասխ.**, Յաւելուած, էջ 351): Հմմ. աստ, էջ 249, ծն. 4:

[2] **Դասխ.**, Գ.իգ /իդ/, էջ 347: Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 215-216, 277.

[3] Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, Հայապատում, հտ. Բ, Վենետիկ – Ս. Ղազար, 1901, էջ 385; **Դասխ.**, Յաւելուած Բ, էջ 351; **C. Dowsett**, The Albanian Chronicle of Mxit'ar Goš, – BSOAS, XXI/3, London, 1958, p. 479.

[4] **Կիրակոս**, գլ. Ժ, էջ 199:

[5] **Ուռհ.**, էջ 77-78:

դում, որը վերաբերում է Աղուանից կաթողիկոսի կողմից արդէն Բարսեղ Անեցու (1081-1113, մինչեւ 1105-ը՝ Գրիգոր Վկայասէրին հակաթոռ) ձեռնադրմանը («Դարձեալ ի թուականութեանն Հայոց ի յամի ՇԼ [530 = 1081/1082 թ.] արքեպիսկոպոսն Շիրակայ, որ էր ի քաղաքն Անի, որոյ անուն ասէին Տէր Բարսեղ, յարուցեալ գնայր յաշխարհն Հայոց ի յԱղուան գաւառի, ի լօռէ քաղաք՝ առ թագաւորն Հայոց Կիւրիկէ՝ որդի Անհողինին Դաւթի. եւ խնդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց: Զոր ժողովեալ թագաւորն Կիւրիկէ զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին եւ բերեալ զՏէր Ստեփանոս կաթողիկոսն Աղուանից ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զՏէր Բարսեղ կաթողիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի ի վերայ ամենայն աշխարհին Հայոց՝ հրամանաւ Կիւրիկէ թագաւորին եւ Տեառն Ստեփանոսի, որ ունէր զաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի»)[1]:

Արդ՝ փորձելով լուծել խնդիրը՝ առաւել մեծ հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ Յովհաննէս Աղուանից կաթողիկոսն իրականում աթոռակալել է Մարկոսի (հաստատապէս՝ 980-990-ական թթ.) եւ Յովսէփի (հաստատապէս՝ 1030-ական թթ.) միջեւ, սակայն նրա անունն ուղղակի ինչ-որ պատահականութեամբ դուրս է մնացել աւելի քան 150 տարի անց Մխիթար Գօշի կազմած կաթողիկոսացանկից: Ինչ վերաբերում է Մատթէոս Ուռհայեցու պնդումներին՝ 960-970-ական թթ. Անիի եւս երկու եկեղեցական ժողովների՝ իբրեւ թէ Յովհաննէսի մասնակցութեամբ կայանալուն, ապա կարելի է ենթադրել, որ պատմիչը զուտ իր երեւակայութեամբ է լրացրել-ձեւաւորել դրանք, ընդ որում՝ յենուելով կա՛մ պարզապէս Գագիկ Ա-ի թագադրման արարողութեանը Փիլիպպէ արքայի ու Յովհաննէս կաթողիկոսի մասնակցելու մասին իր աղբիւրի (=Յակոբոս Սանահնեցու) հաղորդման վրայ (որը եւ սխալմամբ միախառնել է Անին թագաւորանիստ հռչակելու 961 թուականի արարողութեան հետ), կա՛մ, որ թւում է աւելի հաւանական՝ ունենալով այդ աղբիւրի եւս գոնէ մէկ տեղեկութիւն (գուցէ՝ ինչ-որ չափով խաթարուած բնագրով)՝ Յովհաննէսի իրական մասնակցութեան մասին Անիի մի ուրիշ եկեղեցական ժողովի՝ հրաւիրուած Հայոց կաթողիկոսի ընտրութեան առիթով: Ի հարկէ, նկատի ունենք Սարգիս Սեւանցուն 1019 թ. յաջորդած Պետրոս Գետադարձի ընտրութիւնը, որի մասին պատմիչն ունի զարմանալիօրէն յակիրճ գրառում, այն էլ՝ արդէն կաթողիկոսացած Պետրոսի ու Վասիլ կայսեր հանդիպմանը վերաբերող ծաւալուն պարբերութիւնից յետոյ (ընդ որում՝ այդ պարբերութեամբ սկսւում է Յակոբոսի «Ժամանակագրութեան» մեզ հասած բնագրական պատառիկը) եւ իրականից 3 տարի շեղուող թուագրումով. «Ի թուականութեանս Հայոց ՆՀԱ [471 = 1022/1023 թ.] մեռաւ Տէր Սարգիս կաթողիկոսն Հայոց [992-1019] եւ հաստատեաց յաթոռ իւր հայրապետ զՏէր Պետրոս»: Այնինչ Յակոբոս Սանահնեցու կորսուած բնագրում այդ նշանակալից իրադարձութեան՝ նմանատիպ միւսներից ոչ պակաս հանգամանալից ներկայացուած լինելը պիտի աւելի քան սպասելի լինէր: Ի դէպ, եթէ մեր վարկածը հաստատուի, ապա եւս մի լրացուցիչ փաստարկով կ՝ա-

[1] Անդ, էջ 220-221:

պացուցուի Կ. Իւզբաշեանի վերոնշեալ ճշգրտումը, ըստ որի՝ Գագիկ Ա-ի մահը հարկաւոր է թուագրել 1017/1018-ով, այլ ոչ թէ աւանդական 1020 թուականով, քանի որ աւանդականը յաջորդում է Պետրոս Գետադարձի ընտրութեանը (1019 թ.), որը կայացել էր, ինչպէս վեր է հանւում Ուռհայեցու (=Յակոբոս Սանահնեցու) նշումներից, «հրամանաւ... Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց թագաւորացն»:

Յաւելենք, որ «Հայաստանի եւ Աղուանքի թագաւորութիւններն ու Բիւզանդական կայսրութիւնը Ժ դարում» հայ-ֆրանսիական գիտաժողովում (Երեւան, 20-22 Սեպտեմբեր, 2010) Մելանիա Բալայեանը իր «Հայ-աղուանից կաթողիկոսութիւնը Ժ դարի երկրորդ կէսին» զեկուցման մէջ կրկին փորձեց հիմնաւորել՝ Աղուանից Յովհաննէս կաթողիկոսի աթոռակալութիւնը ըստ Ուռհայեցու տուեալների 960-970-ական թթ. վերագրելու հնարաւորութիւնը (Դաւիթ եւ Պետրոս կաթողիկոսների միջեւ, ինչպէս ենթադրում էին դեռ Մ. Բարխուդարեանցը եւ Հր. Աճառեանը[1]): Սակայն պարզ է, որ մեր ներկայացրած վարկածը թոյլ է տալիս աւելի ամբողջական մեկնաբանել Աղուանից Փիլիպպէ արքայի ու Յովհաննէս կաթողիկոսի հետ կապուած պատմական իրողութիւնների եւ դրանց մասին ԺԲ դարի հեղինակի պատկերացումների գոնէ մեծ մասի անհամապատասխանութեան խնդիրը[2]:

գ) Դարբանդ – կապանի արքայացանկի չորրորդ անուան՝ Սեւադայի համար Մատթէոս Ուռհայեցուն հիմք է ծառայել, ըստ ամենայնի՝ «[Բաղք–] կապանի» արքայ Սենեքերիմի (բնագրում՝ «Սենեքարիմ») հօր մասին ինչ-որ մի գրաւոր կամ բանաւոր եւ լիովին իրական տեղեկութիւն, որում նա ներկայացուած է եղել իբրեւ «Աղուանից թագաւոր»: Այս տարբերակով նաեւ պարզւում է, թէ, ի վերջոյ, ի՛նչ հանգամանք է պատճառ դարձել պատմագիր Ուռհայեցու համար՝ մի այդպիսի վրիպմամբ միախառնելու «Աղուանք»-ի եւ «Կապանք»-ի Հայոց արքայատոհմերը, որից յետոյ նա իր ստացած «Կապանք»-ը նաեւ թեթեւօրէն կապել է «Դարբանդ աշխարհի» հետ («սահմանակից Օզաց եւ Ալանից»):

դ) Ուռհայեցու ցուցակի հինգերորդ եւ վերջին՝ վեցերորդ, իրականում՝ Սիւնեաց (Կապանի) արքաներ Սենեքերիմի ու նրա որդի Գրիգոր Բ-ի անունների համար հիմք է ծառայել, ինչպէս նշեցինք նախորդ կէտում, Սենեքերիմի՝ «Աղուանից թագաւոր Սեւադայ»-ի որդին լինելու վերաբերեալ լիովին սպասելի ու հաւաստի մի տեղեկութիւն, որը պատմիչն, իհարկէ, կարող էր իմանալ՝ գոնէ իբրեւ դէպքերի ժամանակակից: Գրիգորի մասին նա հէնց այդպիսի՝ ժամանակակցի յատուկ նշում ունի. «...որ դեռ եւս կենդանի էր՝ մինչեւ գրէաք զայս մատենագրութիւնս մեր»: Եւ այդ նշումը ճիշտ է, քանի որ Գրիգոր Բ արքայի երկարատեւ իշխանու-

---

[1] Տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, էջ 170-172; **Հ. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 560. «Սա [Յովհաննէս Ե-ն – *Ա. Յ.*] օծեց հայոց Աշոտ Ողորմած թագաւորին (961 թ.) եւ ապա վաճառ կաթողիկոսին 968 թ. – Ուռհ. 3, 4, 33, 34, 231. Սմբ. պտմ. էջ 22»):

[2] Հմմ. **Ա. Յակոբեան**, Մատթէոս Ուռհայեցու վկայութիւնը..., էջ 318-322: Ի դէպ, առայժմ զուտ իբրեւ վարկած՝ արդեօ՞ք Խաչմասի գերեզմանատան «Յովհաննէս կրեյսար» տապանագիրը պէտք է կապենք այս Յովհաննէս կաթողիկոսի մասին յիշողութիւնների հետ:

թիւնն սկսուել էր սելջուկների կողմից նրա հօր (Սենեքերիմի) ուխտադրուժ սպանութիւնից յետոյ (1094 կամ 1096 թ.), իսկ Ուռհայեցու երկը, ըստ ժամանակագրական վերջին ճշգրտման՝ աւարտուած է 1128 կամ 1131/1132 թուականով[1] (մեզ հասած ձեռագրում այն մինչեւ 1162/1163 թ. շարունակել է Գրիգոր Քեսունցի երէցը):

Ի դէպ, անզաւակ Գրիգոր Բ-ի իշխանութեան աւարտն աւանդաբար դրւում է 1066 թ.՝ ըստ Օրբէլեանի գլ. Կ-ի (միւս տարբերակում՝ ԿԱ) մատուցած ժամանակագրութեան: Գրիգորի մահից յետոյ չորս տարի կապանում թագաւորեց Խաչէնից փեսայ բերուած՝ Բաղաց վերջին արքայ Հասանը (անուանուած նաեւ «Գեռաքարեցի»), աւանդաբար՝ մինչեւ 1170 թ. (բնագրերն են. «ի 619 թուին կրկին բարկացաւ Աստուած Բաղաց աշխարհիս եւ Սիւնեաց նահանգիս եւ զապաւէնն ամենեցուն եւ զտեղի ապաստանի զանառիկ ամուրն զԲաղաբերդ մատնեաց ի ձեռս Իսմայէլի անիծեալ եւ գիշախանձ առն...», եւ՝ «բայց Գրիգորն, որ իշխէր Բաղաց, ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի՝ Հասան անուն, ի Գեռաքարեցեացն. եւ ետ զդուստր իւր կատայն նմա ի կնութիւն եւ կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ. եւ ինքն եւ եղբայր իւր Սմբատ յառաջ քան զառնուլ բերդին մեռանին ի 615 թուին: Իսկ մինչ զբերդն կամէին առնուլ, Հասան կացոյց բերդապահս, եւ ինքն առեալ զկին իւր եւ զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն եւ անց գնաց ի գաւառ իւր եւ ի տուն՝ ի Խաչէնք»)[2]: Սակայն մենք փորձել ենք ցոյց տալ, որ հաշուի առնելով հետագայ խաչէնեան իրողութիւնները (այդ թուում՝ վիմագիր դժուար-հերքելի նիւթերը)՝ նշուած թուերն անհրաժեշտ է սրբագրել՝ յետ տանելով շուրջ 15 տարով[3]:

Յաւարտս այս բաժնի, օգտագործելով պատեհութիւնը, կարելի է անդրադառնալ այն ուշագրաւ իրողութեանը, որը շօշափուեց քիչ վերեւում՝ Փիլիպպէ Աղուանից (Փառիսոսի) թագաւորի մասին Ուռհայեցու հաղորդումների քննութեան առիթով: Ինչպէս տեսանք, դէպքերին ժամանակակից Յակոբոս Սանահնեցու վկայութիւնների հիման վրայ (թէկուզ եւ մեզ առանձին չհասած) ԺԲ դարի պատմիչի կողմից արձանագրուած են փաստեր՝ ԺԱ դ. առաջին տասնամեակների Աղուանից կաթողիկոսներ Յովհաննէսի եւ Յովսէփի ձեռքով (աւելի ճշգրիտ՝ Անի մայրաքաղաքում նրանց նախագահութեամբ կայացած ժողովներում) Հայոց հայրապետների, ըստ ամենայնի՝ փոխադարձութեան սկզբունքով ձեռնադրուելու մասին (մի նոյնանման տեղեկութիւն վերեւում նշեցինք նաեւ 1081 թ. Ստեփան-

---

[1] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը եւ Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Եր., 1988, էջ 28-30 (նախորդ ուսումնասիրողների մօտ նշւում էր 1136/1137 թուականը):

[2] **Օրբ.**, էջ 246, 247; Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 335-337: Հմմ. Ողբք եւ հառաչանք ի դիմաց Մօր մերոյ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: Արարեալ Տեառն **Ստեփաննոսի նախագահ մետրապօլտին Սիւնեաց**՝ որդւոյ Տարսայիճ իշխանին, ի խնդրոյ շնորհազարդ սուրբ վարդապետին Խաչատրոյ Կեչառացւոյ ի ՉԽԸ թուականիս մերոյ, Նոր Նախիջեւան, 1790, էջ 20 («Որոց վերջին՝ Սենեքարիմ, / նաեւ Գրիգոր որդի նորին, / Ապա եւ զայս ի բարձ բարձին / ի ժամանակս Ելտըկուզին՝ / Ազգն այլազեւ եւ պարսկային, / որք հրով զաշխարհս տոչորեցին / Ի վեց հարիւր մեր թուականին / եւ տասն եւ հինգ յաւելուածին»): Հմմ. **Գ. Մ. Գրիգորյան, Ս. Գ. Հախվերդյան**, Սյունիքի պատմություն, էջ 79, 263:

[3] Հմմ. **Ա. Յակոբեան**, Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը, էջ 115-124: Տե՛ս նաեւ ստորեւ, էջ 317-318:

նոս կաթողիկոսի կողմից Բարսեղ Անեցուն Հաղբատի ժողովում ձեռնադրելու վերաբերեալ)։ Արդ՝ դա, ըստ էութեան, հէնց այն պահանջն էր, որ ժ դ. վերջերին մեծ եռանդով առաջ էին քաշում Աղուանից եկեղեցական (եւ ենթադրաբար՝ նաեւ որոշ աւատական աշխարհիկ) շրջանակները՝ ի պատասխան Հայոց կաթողիկոսութեան փորձերի (յանձին, օր.՝ Անանիա Մոկացու ջանքերի)՝ վերականգնելու Թ դ. վերջից – ժ դ. կէսերի ժամանակաշրջանում խաթարուած աւանդական կարգը, ըստ որի՝ Աղուանից եկեղեցու աթոռակալի օրինակարգ (լեգիտիմ) ձեռնադրութիւնը պիտի կատարուէր «հաւասարների մէջ առաջինի» (primus inter pares) գերակայ կարգավիճակ ունեցող Հայոց հայրապետի կողմից։

Նախ՝ նշենք, որ նախորդ դարերի բազմատեսակ աղբիւրներն առանց բացառութեան արձանագրում են միմիայն այդ աւանդական կարգը։ Դա սկսւում էր հէնց քրիստոնէութեան պաշտօնական ընդունումից, որը Հայաստանում իրագործուեց Գալերիոս կայսեր՝ 311 թ. Ապրիլի 30-ին Սարդիկէում հրապարակուած «Հանդուրժողութեան մասին» էդիկտից մօտ 2 ամիս անց (Գրիգոր Լուսաւորչի «ելն ի վիրապէ», այսինքն՝ 311 թ. Յունիսի 24-ին)[1]։ Իսկ Աղուանքի դարձը վերագրելի է 315 թ. կէսերին, երբ Կապադովկիական Կեսարիայի Ղեւոնդիոս արքեպիսկոպոսի նստոցում անցկացուած 20 եպիսկոպոսների ժողովում (314 թ. Սեպտեմբեր) Մեծ Հայքի քահանայապետ ձեռնադրուելուց յետոյ Լուսաւորիչը, ըստ «Գրիգորի վարք»-ի տեղեկութիւնների՝ այդ երկիր ուղարկեց Թովմա Սատաղեցի եպիսկոպոսին (ըստ Գիւտ Արահեզացու «Թղթի»՝ «այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն, ի Հռովմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքային»[2])՝ Հայոց արքայի կանչով Հայաստան ժամանած, Գրիգորին ձեռնադրութեան ճանապարհած, ապա դիմաւորած ու նրա կողմից Արածանիում մկրտուած (Մեծ Հայքի, Վիրքի եւ Լազիկայի արքաների, բազմաբիւր ժողովրդի ու զօրքերի հետ միասին) Աղուանից թագաւորի ուղեկցութեամբ (որը, ըստ ամենայնի՝ մօտ 298-318 թթ. իշխած Վաչագան Ա Արշակունին էր, այլ ոչ թէ շուրջ 338-373 թթ. գահակալած Ուռնայրը, ում վրիպմամբ Աղուանից դարձի իրագործող է հռչակել ուշ՝ է դարում ծնունդ առած աւանդոյթը)[3]։ Դրանից յետոյ յայտնի են Գրիգոր Լուսաւորչի Գրիգորիս թոռանը՝ Աղուանից «կաթողիկոս» ուղարկելը (330 թ.), Զ դ. կէսերի ասորի պատմիչ Զաքարիա Հռետորի վկայութիւնը այսրկովկասեան երկրների եկեղեցիների՝ Հայոց կաթողիկոսի ենթակայութեան տակ գտնուելու մասին, է դ. սկզբին Հայոց հայրապետութեան նուիրապետական կառոյցում Աղուանից եկեղեցու համար արքեպիսկոպոսութեան կարգավիճակի սահմանումը (ճիշտ է, այս տեղեկանու արձանագրումը մեզ է հասել լոկ Ը դարի աղբիւրներում), Ը դ. սկզբում Եղիա Արճիշեցու ծանր

---

[1] Հմմ. աստ, էջ 77-80 եւ **M.-L. Chaumont**, Recherches sur l'histoire d'Arménie, p. 159-161; **Մ.-Լ. Շոմոն**, Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութիւնը Կեսարիայում եւ մկրտութիւնը Բագաւանում, սն. 29-31; **J.-P. Mahé**, Die Bekehrung Transkaukasiens, S. 111; **A. Mardirossian**, Le Synode de Vagarshapat, p. 249-260; **Կ. Իւզբաշեան**, Հայագիտութեան ներածութիւն, էջ 12:

[2] Տե՛ս **Դասխ.**, Ա.ժա, էջ 20; **Գիւտ Արահեզացի**, Թուղթ առ սուրբն Վաչէ, էջ 1081:

[3] Հմմ. աստ, էջ 76-77 եւ **Ա. Յակոբեան**, «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը, սն. 70-84:

պայքարը Աղուանից ինքնընծայ կաթողիկոս Ներսէս Բակուրի դէմ (ով նաեւ քաղկեդոնականութեան էր յարել) եւ աղբիւրագիտական նման այլ փաստեր:

Անանիա Մոկացու ներկայացրած պատկերից երեւում է, որ աւանդական կարգը չի վիճարկուել նաեւ Թ դ. վերջին – Ժ դ. առաջին տասնամեակներին, երբ քաղաքական խառնակ իրավիճակից ելնելով՝ չորս Աղուանից կաթողիկոսներ (սկսած Սիմէոն Բ-ից՝ 902-923) ձեռնադրուել էին սեփական եպիսկոպոսների կողմից, առանց Հայոց հայրապետների համաձայնութեան[1]: Սակայն արդէն կարճ ժամանակ անց Մովսէս Դասխուրանցին այնքան ոգեշնչուած էր Ժ դ. երկրորդ կէսի՝ վերոնշեալ գաղափարով (կաթողիկոսների փոխադարձ ձեռնադրութիւն), որ չէր խորշում անգամ իր աղբիւրի բնագիրը կեղծելուց: Օր.՝ ՊԱ-ի Գ.է գլխում նա արտագրել էր 704 թ. Պարտաւի ժողովի ընդունած մի փաստաթղթից («Ձեռնարկ, զոր խնդրեաց Եղիա՝ Հայոց կաթողիկոս ի ժողովոյն Աղուանից վասն միաբանութեան եւ ուխտի հաստատութեան Հայոց եւ Աղուանից»՝ պահպանուած նաեւ առանձին, այսպէս կոչուած «Էջմիածնական Գիրք թղթոց»-ի երկու գրչագրերում)՝ «...պայմանեցաք առաջի Աստուծոյ եւ ձերոյ հայրութեանդ, եթէ ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի՝ միաբանութեամբ աշխարհիս», որին յաջորդող բնագրի փոխարէն իր կողմից շարադրել էր. «...եւ Հայոց աթոռոյն ձեռնադրութիւն յԱղուանից աթոռակալէն լիցի, զի այս երիցագոյն է քան զՀայոցդ»[2]: Գուցէ, խորհրդանշական է, որ Դասխուրանցու այս պնդումը պահպանուել է ՊԱ-ի լոկ Բ խմբի ձեռագրերում եւ Ա խմբի միակ վաղ՝ 1730 թ. ընդօրինակութիւնում (հ), քանի որ ԺԸ դ. երկրորդ կէսին Ղուկիանոս դպիրը, երկի հնագոյն ձեռագրում (a, ԺԳ դարավերջ) «բնագրագիտական վերականգնում» կատարելով, քերել էր իր կարծիքով «յետնամոյծը» եւ փոխարէնը վերոնշեալ «էջմիածնական» գրչագրերից դրել Ը դարի սկզբնաղբիւր-փաստաթղթի բնագիրը («որպէս եւ էրն ի սրբոյն Գրիգորայ անտի, զի անդ ընկալաք զլուսաւորութիւն եւ ճշմարտութեամբ գիտեմք, թէ զոր դուք ընտրէք՝ հաճոյ Աստուծոյ է եւ մեզ»)[3]:

Սակայն մեզ համար տուեալ դէպքում կարեւոր է ոչ այնքան Ժ դարի Աղուանքի եկեղեցական շրջանակների պատասխան պահանջի պատմական հիմնաւորուածութիւնը (թէպէտ վերջինի խախուտութիւնը եւս կարեւոր ցուցիչ է, որպէսզի վստահութեամբ վերաբերուենք նախորդող դարերի աւանդոյթի հաւաստիութեանը), որքան այն, որ այդ՝ թէկուզ եւ անհիմն պայմանը փաստօրէն ընդունուել է[4]: Ու դա, կարծես թէ, ակնյայտօրէն ցոյց է տալիս ոչ այլ ինչ, քան այն օրինակելի

---

[1] Տե՛ս **Դասխ.**, Գ.իգ /իդ/, էջ 346; **Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի՝** Ցաղագս ապստամբութեան..., էջ 139: Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 221.

[2] Տե՛ս **Դասխ.**, էջ 302, տողատակ 7-9; **Ա. Ցակոբեան**, Եղիա Արճիշեցի կաթողիկոսի թղթերը, սն. 21-22:

[3] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 152-153. Ղուկիանոս դպրի (հետագայում՝ արքեպիսկոպոս) մասին տե՛ս, օր.՝ **Ա. Է. Հարությունյան**, Գրիչ Ղուկիանոս Աշտարակեցու տապանագիրը եւ մատենագրական վաստակը, – «ՎԷմ» համահայկական հանդէս, Ը (ԺԴ) տարի, 2016, թիւ 2 (54), էջ 105-119:

[4] Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 262-263.

խնամքն ու խորաթափանցութիւնը, որոնցով ժամանակի ազգային ընտրախաւի պատասխանատու ներկայացուցիչները մօտենում էին աւատական մասնատուածութեան տարածման պայմաններում էթնիկ համախմբուածութեանը սպառնացող վտանգաւոր հասարակական միտումներին եւ անհրաժեշտութեան դէպքում չէին խորշում ամենալուրջ փոխզիջումների դիմելուց: Այստեղ տեսնում ենք, որ փոխզիջումն արտայայտուել է անգամ այնպիսի նրբանկատ ոլորտում, ինչպիսին եկեղեցական կառոյցի աստիճանակարգն էր (իսկ վերեւում նշեցինք նմանատիպ մի իրողութիւն աշխարհիկ ոլորտում, երբ կենտրոնական Բագրատունեաց իշխանութիւնն ինքը սկսեց ճանաչել եւ ինվեստիտուրայով ապահովել տեղական մանր թագաւորութիւններին): Ի դէպ, բացի Աղուանից կաթողիկոսների նախագահած եկեղեցաժողովների մասին վերեւում բերուած փաստերից, թերեւս, կարելի է նշուած փոխզիջման անուղղակի արտացոլումը դիտարկել ԺԱ դ. կէսին Թոնդրակեցիների աղանդի դէմ Գրիգոր Մագիստրոսի շարադրած երկու Թղթերում, որտեղ անթաքոյց շեշտուած է Աղուանից եկեղեցու հեղինակութիւնը (բնագրերն են. «...որ աւելի քան զհարիւր եւ զեաւթանասուն ամ մինչ ցայս անիծեալ զնոսա բոլոր Հայաստանաց եւ Աղուանից քահանայապետացն, զգուշացուցին ոչ մերձենալ իսկ առ նոսա...» եւ՝ «...զհարիւր եւ զեաւթանասուն ամ երեքտասան քահանայապետք Հայոց Մեծաց, նոյնչափ եւ Աղուանիցն եւ բիւր եպիսկոպոսք եւ անթիւ քահանայք եւ սարկաւագունք բողոքեցին ձեզ, եւ ոչ լուայք»)[1]:

Արդ՝ ինչպէս արդէն նկատուած է գրականութեան մէջ, հէնց Մատթէոս Ուռհայեցու՝ ԺԲ դարի առաջին կէսում շարադրած «Ժամանակագրութեան» արձանագրումների բովանդակութիւնից ու ոճից է ամենից լաւ երեւում (այդպէս նաեւ՝ Հայոց Արեւելից կողմանքում ծնուած եւ հիմնականում ԺԲ դ. երկրորդ կէսում ստեղծագործած Մխիթար Գօշի երկերից), որ Ժ դարի վերջին իր՝ ասես բարձրակէտին հասած՝ էթնոմասնատմանը միտուած ճգնաժամային գործընթացը (այդ պահին Հայոց Արեւելից կողմանքում կարող էր անգամ ձեւաւորուել հայ էթնոսից անջատուած դուստր էթնիկ միաւոր՝ «աղուաններ» կամ «արեւելցիներ» նոր ինքնանուն-էթնոնիմով[2]) ԺԱ դարում թուլացել էր ու մարել[3] (անշուշտ, այդ մարմանը որոշ չափով նպաստել էր նաեւ արտաքին գործօնը, այն է՝ սելջուկների արշաւանքները, որ մահացու սպառնալիք էին թէ՛ կենտրոնական Հայաստանի, թէ՛ ծայրամասային քաղաքական միաւորների համար): Եւ Մատթէոս Ուռհայեցին հետեւողականօրէն առիթներ է գտնում՝ բազմատեսակ ձեւերով շեշտելու իր ժամանակի «Աղուանք»-ի

---

[1] **Գրիգոր Մագիստրոսի** Թղթերը, Բնագիրն ... լոյս ընծայեց **Կ. Կոստանեանց**, էջ 154, 167; **Գրիգոր Մագիստրոս**, Թղթեր, Ներածութիւնը եւ բնագիրը **Գ. Մուրադեանի**, էջ 197, 207:

[2] Մանրամասն տե՛ս **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 268-272; **նոյնի՝** К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании, с. 45-46; **А. А. Акопян, П. М. Мурадян, К. Н. Юзбашян**, К изучению истории Кавказской Албании, с. 169-175; **A. Akopyan, H. Galstyan**, Concerning the Study of ethnic Processes in the Caucasian Albania, p. 10-12.

[3] Տե՛ս, օր.՝ **Ա. Ծ. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 221-233:

պատկանելութիւնը «Հայոց աշխարհին», օր.՝ գրելով. «...ոչ կարաց մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի Խորին աշխարհ Հայոց, որ է աթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի»[1], կամ (Աղուանից Յովսէփ կաթողիկոսին ուղղուած Դաւիթ Անհողինի կոչի մէջ). «Արդ՝ ժողովեա՛ զամենայն եպիսկոպոսունսդ Հայոց աշխարհիդ, որ յԱղուանսն են եւ ի բանակ այսր հասի՛ր»[2], կամ (Բարսեղ Անեցու ձեռնադրման նկարագրութեան մէջ). «գնայր յաշխարհն Հայոց ի յԱղուան գաւառի...»[3]: Հմմ. նաեւ Մխիթար Գօշի՝ «Վկայաբանութիւն Խոսրովու Գանձակեցւոյ» երկում. «Ի ժամանակս բռնակալութեանն Ղեմացւոց, յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպառսպուռ եւ անտերունչք շրջէին մնացորդք իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհիս վարատեալք՝ ոչ հնազանդելով միմիանց, մանաւանդ այնոքիկ, որ քնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ»[4]: Հետաքրքիր է նաեւ, որ Միջագետքի Ուռհայ քաղաքում ապրած Մատթէոս պատմիչը, փաստօրէն, ոչինչ չգիտի Կուրի՝ էթնիկապէս բուն-աղուանական ձախափնեակի մասին, որտեղ արդէն մի քանի դար առաջ աղուանական հաւաքական ընդհանրութեան՝ քրիստոնէութիւնը պահպանած հատուածի էթնոհամախմբման ճանապարհով կայացել էր նոր՝ «ուդիներ» ինքնանուանմամբ էթնոսի ձեւաւորումը[5]:

Ընդ սմին, Մատթէոս Ուռհայեցու եւ Մխիթար Գօշի համանման մօտեցումները տեսնում ենք դեռեւս ԺԱ դ. երկրորդ կէսին, օր.՝ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու խօսքերում («...ի մերում սեփհականին իսկ յԱղուանեանն աշխարհի աւանն՝ կոչեցեալ Ծար»)[6]: Բնականաբար, նոյնն է նաեւ հետագայում, օր.՝ Յովհաննէս Վանական Վարդապետ Տաւուշեցու մօտ (ԺԳ դ. առաջին կէս)[7], վերջինիս աշակերտ Կիրակոս Գանձակեցու (ԺԳ դ. կէս), Վարդան Արեւելցու (ԺԳ դ. երկրորդ կէս), ինչպէս նաեւ հետագայ մատենագիրների երկերում[8]:

---

[1] **Ուռհ.**, էջ 230:
[2] Անդ, էջ 81:
[3] Անդ, էջ 221:
[4] Տե՛ս Հայոց նոր վկաները, Աշխատութեամբ՝ **Ց. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի**, Վաղարշապատ, 1903, էջ 23: Հմմ. **А. А. Акопян**, Албания-Алуанк..., с. 271-272.
[5] Այդ էթնոսը, ինչպէս տեսանք վերեւում, առաջինը յիշատակել է Յովհաննէս Դրասխանակերտցին (**Դրասխ.**, էջ 258. «քանզի դրացիք մեր եւ ազգք, որ շուրջ զմեզ են՝ Յունականք եւ Եգերացիք եւ Գուգարացիք եւ *Ուտէացիք*, հիւսիսական ազգք՝ բնակեալք առ ոտամբն Կովկասու...»):
[6] **Գրիգոր Մագիստրոսի** Թղթերը, Բնագիրն ... լոյս ընծայեց՝ **Կ. Կոստանեանց**, էջ 221; **Գրիգոր Մագիստրոս**, Թղթեր, Ներածութիւնը եւ բնագիրը՝ **Գ. Մուրադեանի**, էջ 250:
[7] Վանականի մասին, որի ձեռագրական ժառանգութեան էական մասը դեռ հրատարակուած չէ, մասնաւորապէս տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» եւ նրանց ինքնութիւնը, էջ 247-251:
[8] Մանրամասն տե՛ս **Ա. Ծ. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 219-230:

ԳԼՈՒԽ 2

ԽԱՉԷՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԲ-ԺԳ ԴԱՐԵՐՈՒՄ

Բաժին 1

ԽԱՉԷՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԶՕՐԱՑՈՒՄԸ ԺԲ ԴԱՐՈՒՄ

Մեծ Հայքի 15 նահանգներից 10-րդի՝ Արցախի գրեթէ կենտրոնում՝ Խաչէնագետի միջնահովտի աջ (հարաւային) ափին՝ կաթողիկոսանիստ Գանձասարի դէմ դիմաց յառնող անտառապատ լեռան ժայռոտ գագաթին, բազմած է Հայոց Արեւելից կողմերի նշանաւոր ամրոցներից մէկը՝ Խօխանաբերդը (Խաւխանաբերդ)։ Ըստ է դարի «Աշխարհացոյց»-ի՝ դա Արցախի կենտրոնական գաւառներից մէկի՝ Մեծ Իրանքի (կոչուած նաեւ՝ Մեծ Առանք, Մեծարանք, Մեծիւրեանք) արեւմտեան մասն է[1]։

Խօխանաբերդը զբաղեցնում է ծովի մակերեւոյթից 1812 մ բարձրութեամբ լեռան (որը շրջակայ ժողովուրդը կոչում է Թարխանաբերդ) ներկայումս անտառապատ գագաթը՝ մօտ 0,6 հա տարածքով։ Պահպանուել են ժամանակին անմատչելի պարիսպների առանձին կտորներ՝ մինչեւ 5 մ բարձրութեամբ, երկու քառանկիւն, կրաստաղ պատերով ջրամբարների փոսերը՝ 2-2,5 մ խորութեամբ, արեւելքում գտնուող կենտրոնական մուտքով անցնող ժայռափոր, 2-3 մ լայնութեամբ աստիճանները եւ բազմաթիւ շինութիւնների փոսահետքերը («նախնական հաշուումներով՝ կացարանների թիւն անցնում է յիսունից»[2])։ Համարւում է, որ այդ միջնաբերդը կառուցուել է Սահլ Սմբատեան իշխանի ժամանակներում, որի յիշողութիւնը պահպանուել է լեռան ստորոտին գտնուող Սահլատափ հանդամասի անուան մէջ։ Հմմ. «Այս բերդից փոքր-ինչ դէպի արեւելք տարածւում է մի հարթ եւ բաւական ընդարձակ գետին, որ մինչեւ այսօր սոյն Սահլ իշխանի անուամբ կոչւում է Սահլատափ (Սահլի գետին)։ Այստեղ կան բազմաթիւ տների աւերակներ՝ կարգաւ խաչէն գետի երկարութեամբ դասաւորուած»[3]։ Միջնաբերդից ներքեւ՝ լեռան լանջին, փռուած են վարելահողի վերածուած տափարակներ, սակայն նրանց շրջագծով պահպանուել են շինութիւնների ու պարիսպների որոշ հետքեր։

Աւելի ներքեւ՝ լանջի մի բարձունքի վրայ՝ Գառնաքար գիւղից մի փոքր վերեւ, գտնւում է Հաւապտուկ կամ Հաւոց պտուկ անունով վանքը, որի եկեղեցիներից մէկի շինարարական արձանագրութիւնը գրուել է 1163 թ. («Յիշխանութեան Հասանա՝ որդո Վախտանգա»)[4], եւ շրջակայ ընդարձակ գերեզմանոցը, որի տապանագրերը ԺԲ-ԺԳ դարերի թուագրումներ ունեն։ Վանքից դէպի արեւմուտք՝ մէկ ուրիշ ժայռոտ բարձունքին, գտնւում են իշխանական ապարանքի աւերակներ, որոնք

---

[1] **Ա. Ղանձուն** (Է դար), Աշխարհացոյց, սն. 139։

[2] **Ս. Սարգսյան**, Խաչենի ամրոցները, էջ 77։ Հմմ. **Շ. Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Եր., 1985, էջ 19։

[3] Տե՛ս **Գ. Տէր-Յովհաննիսեանց**, Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, – «Փորձ», 1880, հ՝տր 5, էջ 133-134, ծն. 2։

[4] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 33, հ՝տր 70։ Հմմ. ստորեւ, էջ 316։

ժողովուրդն անուանում է Դարպասներ: «Պահպանուել են ապարանքի պարսպի մեծ մասի հիմքերը՝ կիսակործան անկիւնային բուրգերով ու դարպասով, երկու սենեակի պատերն ու ծածկի որոշ մասեր, ինչպէս նաեւ մի քանի այլ սենեակների մնացորդներ»[1]: Բուն ապարանքի շինութիւնից «մի քանի մետր հեռու, կողք կողքի կառուցուած են երկու եկեղեցիներ: Դրանք միջին մեծութեան բազիլիկներ են, որոնցից հարաւայինին կից է փոքրիկ գաւիթ-սրահը»[2]: Տեղագրական երկերում այդ կառոյցը համարում էին լոկ Հասան-Ջալալեան իշխանատոհմի ապարանք[3], սակայն արդէն Գարեգին Յովսէփեանն իրաւացիօրէն դիտարկել է այն Խօխանաբերդի ամրոց-բնակավայրի համալիրի մէջ՝ Քոլատակ վտակի հովտում[4]:

Խօխանաբերդի անուան հիմքը յայտնի է դեռեւս Բիւրինակաի պետութեան ժամանակներից: Ք. ա. 741 թ. արշաւանքի առիթով այն յիշատակւում է Բիւրինեէլէի Սարդուրէ Բ արքայի՝ Գանձադռան սեպագիր տարեգրութեան մէջ՝ իբրեւ Ուխունէ երկրանուն: Վերջինիս տեղը, անկասկած, Խաչէնագետի հովտում էր, քանի որ նրանից առաջ նշուած Կու-Ալբա երկրանունը համապատասխանում է Տրտուի հովտի Մեծ Կուանք գաւառի անուանը, իսկ նրանից յետոյ նշուած Տերիա երկրանունը՝ կարկառ գետի ձախակողմեան Տրակետ (<*Տրա-գետ) վտակի անուան հիմքին (աշխարհացոյցեան Արցախի՝ նոյնպէս կենտրոնական Պիանք գաւառում)[5]: Իսկ Խաչէն անունն սկզբնապէս, ամենայն հաւանականութեամբ, կրում էր նոյնանուն գետի ափին գտնուող այն ամրոցը, որը շուտով դարձաւ Արցախի Մեծ Իրանք գաւառի իշխանների գլխաւոր նստավայրը:

Նախորդ գլխում խօսեցինք ժ դարում Հայոց Արեւելից կողմանքում ձեւաւորուած Խաչէնի, Փառիսոսի եւ Գորգուզի թագաւորութիւնների անկման մասին ԺԱ դարի ընթացքում: Իսկ այստեղ հարկ է փաստել, որ, ի տարբերութիւն, օր.՝ Փառիսոսի, Խաչէնի արքայական տոհմը, ըստ ամենայնի, գոյատեւել է՝ թէկուզ եւ բաժանուած մանր տիրոյթների: Այդ իրողութիւնն է շեշտում Մխիթար Գօշը խօսրով Գանձակեցու վկայաբանութեան սկզբում. «Ի ժամանակս բռնակալութեանն Ղեմացւոց, յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպառսպուռ,

---

[1] **Ա. Ղուլյան**, Խաչենի իշխանական ապարանքը, – ԼՀԳ, 1984, հմր 3, էջ 51:

[2] **Շ. Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, էջ 20: Հմմ. նաեւ **Գ. Տէր-Յովհաննիսեանց**, Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, էջ 134 («Այս աւերակների մէջ է նոյնպէս Ջալալ մեծ իշխանի ընդարձակ պալատը, որ տեղացիներից կոչւում է Դարբասներ, եւ որոյ մէջ կառուցած է գեղեցիկ եկեղեցի – բայց այժմ կիսաւեր»):

[3] **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 181; **Հ. Ս. Էփրիկեան**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. Ա, Վենետիկ – Ս. Ղազար, 1903, էջ 599:

[4] **Գ. կաթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 15-17: Հայ միջնադարեան կենտրոնական բերդ-ամրոցների շուրջը ձեւաւորուած բնակավայրերի ընդարձակ համալիրների մասին տե՛ս **Ա. Զարյան**, Ակնարկներ հին եւ միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Եր., 1986, էջ 93-95, 106-108, 112-120, 139-141:

[5] **Յ. Կարագեոզեան**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, էջ 138, 200-201, 206; **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 317-318, 404-405:

եւ անտերուչք շրջէին մնացորդք իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհիս վարատեալք՝ ոչ հնազանդելով միմիանց, մանաւանդ այնոսիկ, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ»[1]: Այդ «վարատեալ» վիճակի մի ակնառու օրինակ Գօշը ներկայացնում է իր մի այլ գրուածքում՝ անուանուած «ժամանակագրութիւն»: Նրա տեղեկութիւնը վերաբերում է ԺԲ դ. կէսերին «Խաւախան բերդի» (իմա՛ Խօխանաբերդի) տէր Վասակի որդի Գրիգորին, որը փորձեց իր եղբայր Սմպատի սպանութեան վրէժը լուծել՝ «ի Հասանա[յ]՝ որդւոյ Դեսըմոյ», ընդ որում՝ Տօղան անունով թուրքմէն ցեղապետի օգնութեամբ («որդի Դարին Տաւղան անուն՝ իշխան աշխարհին Ճարաբերդոյ»)[2]: Ե՛ւ Գրիգորը, ե՛ւ Հասանը, որ Բ. Ուլուբաբեանի կարծիքով ազգականներ էին, իրենց դուստրերին կնութեան էին տուել Արցախի ցածրադիր մասերին տիրացած թուրքմէն ցեղապետներին. Հերհան ամրոցի եւ Կայծոյ ծառ ու Դիւախոռ լեռների մօտ տեղի ունեցած ճակատամարտում Տաւղանը եւ Գրիգորը սպանուեցին, եւ միայն մէկ տարի անց իշխանի մարմինը կարողացան բերել ու թաղել Գանձասարի վանքում, «որ էր տապանատուն նախնեաց նորա»[3]:

*Ի դէպ, Բ. Ուլուբաբեանը Գրիգորի եւ Հասանի իշխանաճիւղերի հետ ազգակից է համարում նաեւ Խաղբակեաններին ու Դլենեաններին[4]: Սակայն այդ տարբերակին պէտք է վերապահումով մօտենալ, քանի որ 1232 թ. Գետիկի վանքում ընդօրինակուած Աւետարանի ստացող՝ Խաղբակի որդի Ջաջուռի դուստր Վանենին, նուիրելով ձեռագիրը Հաւապտուկ վանքին («ետ ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն Սբ[ո]յ Աստուածածնին եւ է բնական տուն եւ շիրիմ Ջաջոյ իշխանին եւ նախնեաց իւրոց, եւ է ի գաւառին Արցախոյ, եւ է հանդէպ ամրոցին, որ կոչի Խաւխանաբերդ, ի տէրութիւն երից հարազատացն՝ բարեպաշտ իշխանացն Ջալալին, Ջաքարիայի, Իւանէի»), յիշատակարանում իր իշխանատոհմը ծագեցնում է Վարդան Մամիկոնեանի զինակից Բակից. «...եւ ելեալ ի գիշերի եւթն հարիւր արամբ գնաց [Բակը] փախստեայ յերեսաց Շապհոյ [!] արքա[յ]ին Պարսից յամուրսն Արցախայ, եւ կեցեալք բարեպաշտութեամբ ... մինչեւ**

---

[1] Հայոց նոր վկաները (1155-1843), էջ 23:

[2] Տե՛ս **Դասխ.**, էջ 354 (Ցաւելուած Բ); The Albanian Chronicle of **Mxit'ar Goš**, p. 486. Ցստակ տարեթիւ չկայ. «Ժամանակագրութեան» վերջին թուականը 3-4 դրուագ առաջ եռաձեւ նշուած 1147-ն էր («Եւ էր թուականն ՇՂԶ, եւ Հոռոմին՝ ՑԿԷ, իսկ Պարսիցն՝ ՇԼԶ»): 3-4 դրուագ յետոյ նշուած է Վրաց Դեմետրէ թագաւորի մահը, որը տեղի է ունեցել 1156-ին:

[3] **Դասխ.**, էջ 354-355 (Ցաւելուած Բ); The Albanian Chronicle of **Mxit'ar Goš**, p. 486. Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 120; **Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան**, Գանձասարի վանքը, – Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. Ե, Պէյրութ, 1974, էջ 91-92; **Հ. Մարգարյան**, Հերգ գավառի եւ Հերք (Հերքան) բերդի տեղորոշման շուրջը, – ԲԵՀ, 1984, ՙմր 3, էջ 123-129: Ի դէպ, *Հերքան/Հերգ* ամրոցի տեղը պիտի որոշել՝ նրա անունը համադրելով Ա.Հ (Լ.Ղ.Հ) Շահումեանի շրջանի արեւմուտքում ընկած *Էրքեջ* գիւղի անուան հետ՝ Թնագետի (Կուրակչայ) Բուզլուխ վտակի ափին: Սա *-ոջ/-եջ – -ան/-աւան* (>*-ան*) վերջածանցների նոյն հերթագայութիւնն է, որը առիթներ եղան դիտարկելու նաեւ վերեւում՝ *Գայէգոճ – Գըւգան* (էջ 51), *Հոնջենք – Հաճան* (էջ 205): Հմմ. այլ օրինակներ եւս. *Աղահեջ* (գաւառ) – *Աղաւնոյ* (գետ), *Դարահոջ* (Ե դար) – *Դարհան* (ներկայիս):

[4] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 123:

յայս բարեպաշտ իշխանս Ջաջուռ»[1]: Իհարկէ, Վանենիի սերունդը կարող էր եւ լաւ չիմանալ հին իրականութիւնը: Բայց եթէ դրկից Հասանեաննների հզօրութեան պահին այդ սերունդն իրեն վերագրում է ոչ թէ հէնց նրանց հետ ազգակցութիւն, այլ մէկ ուրիշ տոհմակունք, ուրեմն դա՛ էլ պիտի համարուի մեծ չափով հաւաստի:

*Արդ՝ Մխիթար Գօշի «Ժամանակագրութեան» մեզ հասած բնագիրը երեք դրուագ անց նշում է նաեւ. «...սակայն զմարտ պատերազմի ոչ դադարեցուցանէր [իմա՛ էլտկուզեան աթաբէկը – Ա. Յ.] ընդ թագաւորին Վրաց [Դեմետրէ] եւ ընդ իշխանսն Խաչինոյ, զի ուրումն երթեալ գաղտագողի եւ առեալ զամրոցն Հարու [<*Հ[ն]արու[՞] – Ա. Յ.]...», իսկ եւս 4-5 դրուագ յետոյ մնում է ուղղակի կիսաւարտ: Այդպիսով, ցաւօք, մենք չգիտենք՝ ցանկացե՞լ է, արդեօք, հեղինակն այլ փաստեր էլ հաղորդել Խօխանաբերդի իշխանների մասին (գրելու պահին Գօշի համար շատ հարազատ էր նրանցից սերուած Հաթերիի ճիւղը): Սակայն նշենք, որ Գրիգորին յիշատակելը չի կարող քիչ կարեւոր դիտուել, քանի որ երկում Խաչէնի թագաւորազարմ այլ իշխաններ չեն արժանացել յանուանէ յիշատակման:*

Խօխանաբերդի այս Գրիգոր Մեծ իշխանի (ինչպէս նա կոչուած է իր դստեր՝ 1215 թ. վիմագրում) յաջորդի մասին տեղեկութիւնը պահպանուել է Գանձասարում Նրջիս իշխանուհու՝ 1174 թ. կանգնեցրած խաչքարի վրայ, որը ժէ դարում աջից օվալաձեւ կտրուել էր ու դրուել վանքի սեղանատան յետեւի դռան վերեւում: Յ. Օրբէլին եւ Ս. Բարխուդարեանը կիսատ էին ընթերցել բնագիրը (լոկ 14 տողը) եւ, ըստ էութեան, թերի վերծանելով՝ թողել էին առանց մեկնաբանութեան[2]: 2010 թ. Մարտին հնարաւորութիւն ունեցանք՝ տեղում ուսումնասիրելու դիւրընթեռնելի դարձած վիմագիրը. Գանձասարի վանական շինութիւնները նորոգելիս սեղանատան դռան վրայ նոր բարաւոր էին դրել, իսկ հանուած խաչքարը տեղափոխել հարաւային պարսպապատի տակ: Պարզուեց, որ ժէ դարում լոկ վերջին 5 տողաւարտներն էին վնասուել՝ 1-2-ից 5-6 տառերով: Խաչի ստորին թեւից ձախ եւ աջ՝ համապատասխանաբար 9 եւ 16 կարճ տողերով (ամենաերկարը՝ 8 տառ) վիմագիրը վերծանւում է հետեւեալ ձեւով (գրչանկարը տե՛ս Յաւելուած Բ).

«Թիւն / :ՈԻԳ: էր [=1174 թ.]: Վա/խտանգ՝ տէ/ր Խաչինո[յ], / յերիտաս/արդ հաս/ակի փոխ/եցաւ ի / Քրիստո[ս]: // Ես՝ Նրջի/ս, դուստր Հ/ասանա[յ], թոռ/ն Աբաս[յ] թ/ագ[ա]վորին, / մայր որդոցս, / որ Աստուծո[յ] անդ/ունդք կոր/ծանեց/ան, կան/գնեցի / աւար{...[1 կամ 2 տառ]} / իմ մաւր{...[2 կամ 3 տառ]} / զի{...[4 կամ 5 տառ]} /ւա{...[4 կամ 5 տառ]} /եռ{...[5 կամ 6 տառ]}»:

---

[1] Տե՛ս **Գարեգին Ա կթղ.**, Ցիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, սն. 881-883; **Ղոյնի՝** Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 14-15; 343-344; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 182:

[2] Տե՛ս **И. Орбели**, Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII и XIII веков, – В кн.: **И. Орбели**, Избранные труды, Ер., 1963, с. 199-203՝ ըստ Բ. Ուլուբաբեանի (ըստ Ս. Բարխուդարեանի՝ «Ճշ. ժող., էջ 33»); Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 69, ՀՍՊ 198 (վերծանել է մինչեւ «թագվորին» բառը, յաւելել՝ «եւ կանգնեցի զխաչս», ապա նշել. «Վերջից 2-3 տող պատի մէջ են»); **Բ. Ա. Ուլուբաբյան**, Գանձասար, էջ 149-150 (Ղոյնը):

Վիմագրի 15-րդ տողում «որդոցս» բառի առաջին տառերը՝ ՈՐԴ-, փորագրողն սկզբում վրիպել, ապա նկատել ու աւելի փոքր չափերով տեղաւորել է ՄԱՅՐ բառի վերջին Ր-ի եւ -ՈՑՍ բառաւարտի Ո տառի վերեւում: 22-րդ տողում փորագրողը ՄԱԻՐ բառի առաջին տառը սկզբում վրիպել, ապա նկատել ու տեղաւորել է (աւելի փոքր չափերով) ԻՄ բառի Մ-ի աջ հորիզոնական ստեղնի տակ: Վերջին 5 վնասուած տողերի վերականգնման առաւել հաւանական տարբերակը հետեւեալն է. «կան/գնեցի / աւար{տ} / իմ մաւր{ս եւ} / զի{մոց զա}/ւա{կացս հ}/եռ{ացեալոց}»: Ճիշտ է, վիմագրերում մեզ, իրօք, չի հանդիպել «կանգնեցի աւարտ» բանաձեւը՝ «շիրմաքար դնելու» իմաստով, այն չկայ նաեւ «Հայկազեան բառարան»-ում, թէպէտ, թւում է, թէ անհարազատ չէ լեզուին[1]:

Այս բնագրում հանգուցեալին տրուած՝ «տէր Խաչինո[յ]» եւ «յերիտասարդ հասակի փոխեցաւ» բնութագրումներն ուշադիր քննելու դէպքում, թւում է, թէ առկայ փաստերը հնարաւոր չէ մեկնաբանել այլ կերպ, քան ենթադրելով, որ 1174 թ. մահացած Վախտանգը եղել է Գրիգոր Մեծի որդին ու յաջորդը, իսկ Նրջիսը՝ Գրիգորի կինը: Իշխանուհին ասում է, որ Վախտանգից բացի (երեւի՝ նրանից առաջ) կորցրել է նաեւ այլ զաւակների (կամ գոնէ մէկին)՝ «որդոցս, որ Աստուծոյ անդունդք կործանեցան»: Նրա միւս նշումից՝ «Ես՝ ... թոռն Աբասա[յ] թագ[ա]վորին», բխում է, որ իր մայրը (այսինքն՝ Գրիգոր Մեծի զոքանչը, որի անունը, ցաւօք, նշուած չէ) եղել է կիւրիկեան վերջին արքաներից մէկի՝ Աբաս Ա-ի (1113-1145) դուստրը: Նրջիսի հայր Հասանի, այսինքն՝ Գրիգոր Մեծի աներոջ մասին աղբիւրագիտական ուղիղ տուեալների բացակայութեան պատճառով ներկայումս դժուար է վերջնական կարծիքի գալ. պարզ է լոկ այն, որ նա չէր կարող որեւէ անշան իշխանատոհմից լինել: Հնարաւոր է, որ դա Խաղբակեան Հասան Ա-ն էր՝ եղբայրը Դարպասների ճանապարհի 2 խաչքարերի վիմագրերում յիշուած Ջաջուռ Ա-ի[2]: Հաւապտուկի գերեզմանատանը նրա կանգնեցրած՝ մորուքով ու սաղաւարտով հեծեալի քանդակով մեծ խաչքարի վիմագիրն է (վերջից վնասուած). «:ՈԼԳ: [=1184 թ.]: / Ես՝ Հաս/ան, որդի Խ/{աղ}բակայ, / կան{գն}/եցի զխա/{չե}րս ի վ/{երայ...}»[3]: Այս վարկածով՝ Աբաս թագաւորի փեսան լինելու փաստից նաեւ բխում է, որ Հասանը Խաղբակ Ա-ի հէնց աւագ որդին է եղել, որը, թերեւս, ի տարբերութիւն Ջաջուռ անունով աւելի յայտնի եղբօր, չի թողել որդի-ժառանգ: Իսկ նրան Բաղաց արքայադստէր ամուսին «Հասան Գեռաքարեցու» հետ համադրող Գար. Յովսէփեանի միտքը[4] շտապողական է թւում (տե՛ս ստորեւ). ճիշտ չէ նաեւ այս Ջաջուռ Ա-ին իր համանուն թոռան հետ (=վանենու հօր) նոյնացնելը:

---

[1] Հմմ. Հայերեն բացատրական բառարան, Կազմեց՝ **Ս. Տ. Մալխասյանց**, հտ. Ա, Եր., 1944, էջ 293:

[2] Տե՛ս Գ. կաթ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 16; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 74, ՀՎ 217, 218 (առաջին վիմագիրը թուագրուած է 1173-ով, տե՛ս ստորեւ, էջ 322):

[3] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 34, ՀՎ 76:

[4] **Գ. կաթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 16-17:

Նկատելի է, որ Նրջիսի վիմագրի թուականի երկրորդ տառը մի փոքր տարբերւում է բնագրի միւս Ի-երից: Լրիւ հասկանալի չէ նաեւ նրանից աջ մէկ կէտը (թուականի կրկնակէտ կայ միայն Գ-ից յետոյ): Եթէ իբրեւ վարկած՝ մտածէինք, թէ գրողը կամեցել է «Ո» եւ «Գ» թուանշանների միջեւ, ասենք, կցագիր «և» գրել (նմանուած՝ Ի-ի), ապա թուականը կը լինէր «Ո եւ Գ», այսինքն՝ 1154 թ., որը չէր հակասի աղբիւրների մի խումբ տուեալների: Բայց եթէ կասկածի տակ չառնենք վիմագրի թուականի հաւաստիութիւնը, ապա պիտի որոշակի վերապահումով մօտենանք Գրիգոր Մեծի որդի եւ «խաչինոյ երիտասարդ տէր» Վախտանգին յաջորդած Հասան Մեծ կրօնաւորեալի պնդմանը՝ իր «աւագութեան» 40 (կամ 30) տարիների մասին[1], եւ նրա՝ Խաչէնի իշխանաց իշխան («տէր») դառնալու աւելի իրական թուական համարենք 1174-ը:

Ինչ վերաբերում է Հասան Դեսումեանին, ով, ըստ Մխիթար Գօշի՝ սպանել էր Գրիգոր Մեծին ու նրա Սմպատ եղբօրը, ապա հնարաւոր է ենթադրել, որ նրա տիրոյթներն ընդգրկել են Խաչէնագետի Քոլատակ վտակի վերնահովտում գտնուող Կոշիկ անապատի շրջակայքը (դա Կարկառի ձախակողմեան վտակների աւազանների հետ միասին կազմում էր աշխարհացոյցեան Արցախի կենտրոնական Պիանք գաւառի հիւսիս-արեւմտեան անկիւնը[2]), քանի որ այդ վանքի երկու վիմագրերում յիշուած է Դեսում անունը: Դրանցից մէկը (մեծ գրանիտէ խաչքարի թեւերի շուրջը 20 կարճ տողերով) թուագրուած է 1179-ով. «Թուականին ՈՒԸ: [=1179 թ.]: Ես՝ Շահան, որդի[յ] Դեսումա[յ], կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմո[յ] տէր Գրիգորո[յ]»[3]: Մէկ այլ մեծ, գեղաքանդակ խաչքարի վրայ պահպանուել է նաեւ, ըստ ամենայնի՝ սրանում յիշուած Շահանի 6-տողանոց տապանագիրը. «Թիվ ՈՃԲ: է [=1203 թ.]: Ես՝ Տէր Գագիկ եւ եղբայր իմ Գրիգո[ր], որդիք Շահանայ, կանգնեցաք զխաչս հաւր մերո[յ]...»[4]: Ի դէպ, տէր Գագիկի անունը յուշում է, որ Դեսումեանների հետ կարելի է կապել ու կոտրուածքի տեղում աւագ Դեսումի անունը վերականգնել վերջերս Կարկառի Պտրեցիք (Բադարա) վտակի հովտում գտնուող Օխտը եղցի հնավայրում յայտնաբերուած մի խաչքարի վիմագրում. «Թիւն ՈԺԲ: էր [=1163 թ.]. Գագիկ՝ որդի Հասանա[յ], թոռն {Դեսումայ՞...}»[5] (այստեղ պիտի հաշուի առնել, որ Գագիկ անունն Արցախում քիչ է հանդիպում. բացի

---

[1] Մանրամասն տե՛ս ստորեւ, էջ 307, 316-318:

[2] Տե՛ս **Ա. Յակոբեան,** Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 311-316: Վանքի՝ «Կոշիկ» անունը դեռեւս ԺԳ դարում արձանագրուած է երիցս. տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 28, ՀՄՐ 56 («:ՈՂԳ: [=*1244 թ.*]. յանուն Աստուծոյ, ես՝ Պողջ, որդի իշխանին Վասա{ա}կա[յ], յուսով միաբանեցա[յ] Կոշիկ անապատոյ. տ(ի)...»); էջ 30, ՀՄՐ 61 («Ես՝ Վասակ, գնեցի հող ի Վաճառատեղս, ետու Կոշիկ անապատ. միաբանքս տ(ի)ն...»); էջ 32, ՀՄՐ 68 («ես՝ Տպէղ [վերծանուած՝ *Տղէղ*, որը, սակայն, ուղղելի է ըստ լուսանկար 22-ի եւ գրչանկարի – *Ա. Յ.*], որդի {...}այ, իմ ընչից գնեցի հող, {մի}աբանեցայ Սուրբ Նշանիս կամակցութեամբ եղբարցս Կոշիկ ան[ա]յպատոյ. ե{ւ} տ(ի)ն ինձ...»):

[3] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 25, ՀՄՐ 45:

[4] Անդ, էջ 26, ՀՄՐ 49:

[5] Տե՛ս **Ս. Սարգսյան, Յու. Առաքելյան,** Պատարա, Եր., 2006, էջ 10:

Պիանք գաւառի այս դէպքերից, այն առկայ է նաեւ որպէս Գորոգուի՝ ԺԴ դ. վերջի թագաւորի անուն)։ Սրա հետ կարելի է կապել եւ նոյն Հասանի (որը լիովին կարող էր լինել Գրիգոր Մեծ Խօխանաբերդցու թշնամին) տապանագիր համարել մօտակայքի միւս խաչքարի վիմագիրը. «Ի ։ՈԺԴ։ թուականի[ի] [=1165 թ.]. կանգնեցա[յ] խաչս ի տապանի Հասանա[յ]՝ որ{դոյ[ը]...} ակ{[ը]... որք} երկրպագէք, յաղաւթս յ{իշեցէ՛ք}»[1]։ Ջափազանց հրապուրիչ է նաեւ մօտակայ տապանատանը կանգնած խաչքարի 10-տողանոց վիմագիրը («Թիւ / ։ՈԼ։ էր [=1158 թ.]։ Ես՝ Ս/մպատ՝ որդի / Վասակա[յ], կան/գնեցի զխ/աչս որդ/ոյ իմոյ Դաւ/թնխս, որ կիս/աւրեա[յ] փոխ/եցաւ ի Քրիստոս»)[2], կապել Հասան Դեսումեանի թշնամի Գրիգոր Մեծի եղբայր Սմպատ Վասակեանի հետ. տեղը յարմար է, թէպէտ ոչ մեծ խնդիր կայ լոկ ժամանակի առումով (իսկ, գուցէ՝ պէտք է ընթերցել՝ «Թիւ ։ՈԲ։[ը] էր [=1153 թ.]»՝ հաշուի առնելով գոնէ գրչագրերում Բ → Է յաճախադէպ շփոթը)։

Իսկ նոյն Դեսումի երկրորդ վիմագիրը (Կոշիկ անապատի սրահի հիւսիսային պատի մեծ խորշի մէջ՝ հողմահարուած, 7-տողանոց, Խաղբակեան Վասակ իշխանի որդի Պռոշի՝ 1244 թուակիր վիմագրի կողքին) յայտնում է մեծածաւալ նուիրատուութիւնների մասին. «{Յուս}ովն Աստուծոյ, ես՝ Դեսում, որդի Սիսաքին, ամուսին իմ՝ Մամա[յ], միաբանեցաք սուրբ ուխտիս եւ տվաք Սուրբ Գերգա[յ] ի մեր հայրենեացս նովս Ղ{...} Ածերածու Սուրբ Գերգի մեր տնաջաղաց[3] իւր հողի խոշոտլարէն ու զՁկնաւազն ու {...}... Միաբանք տվին ։Գ։ ժ{ամ...} ...»[4]։ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ մօտաւորապէս 1250 թ. Հասան Ջալալ իշխանի գլխաւորութեամբ Սարթախ մոնղոլ փոխարքայի մօտ ժամանած 5-6-հոգանոց խմբի մէջ էր «եւ զԴեսում իշխանն՝ պարկեշտ պատանի»[5], որին հնարաւոր է համադրել վերջին արձանագրութեան մէջ յիշատակուած՝ Սիսաքի որդի եւ Մամայի ամուսին Դեսումի հետ։ Նշենք նաեւ, որ, ինչպէս յայտնի է Հաղբատի Ս. Աստուածածնին (անուանուած՝ Խաթունաշէն) եկեղեցու 6-տողանոց ընդարձակ, ցաւօք, անթուակիր շինարարական վիմագրից («Կամաւն Աստուծոյ, շինեցաւ եկեղեցիս արդեամբք Խաթունին՝ {դստե}ր Հասանայ, յազգէ Դեսմեանց, որ բերաւ ի Խաչենոյ յամուսնութի[ւն] Զաքարիա, որ էր տէր Գագա[յ] եւ Տաւշո[յ], Գարդմանա[յ] եւ Տէրունականին եւ այլոց գաւառաց։ Ընդ որում եկեալ եղբարք իւր՝ Սենեքերիմ եւ Սեւադա[յ], եւ փոխեալ ի Քրիստոս՝ եդան առ դրան կաթողիկեիս. իսկ Խաթունն վա[ս] յիշատակի նոցա եւ իւր շինեաց զսա...»[6]), Դեսումեանների մի ճիւղը ԺԲ դ. վերջին կամ ԺԳ դ.

---

[1] Անդ։

[2] Անդ, էջ 9։

[3] Գուցէ եւ՝ ընկալելի է *Մերտնա ջաղաց* (կամ *մերձ Ա ջաղաց*՞) փխ *մեր տնաջաղաց*։

[4] Դիւան հայ վիմագրության, պր. V, էջ 28, ՀՄ 57։

[5] **Կիրակոս**, գլ. ԾԵ, էջ 359։ Պատմիչը յանուանէ նշում է նաեւ Գրիգոր Տղայ իշխանին, Մարկոս վարդապետին եւ Գրիգոր եպիսկոպոսին։

[6] **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, էջ 220, ՀՄ 111։ Շարունակութեան մէջ. «Եւ ես՝ տէր Յովհաննէս եւ միաբանքս Հաղբատա[յ], տուաք սոցա Ի-ունք մի պատարագ ի տարոջն»։ Այս վանահայր-եպիսկոպոսը կարող է լինել ԺԲ դ. վերջից մինչեւ 1220-ական թթ. պաշտօնավարած Յովհաննէս Ա-ն՝ Գրիգոր Ա Ծարեցի իշխանի որդին, կամ նրան յաջոր-

սկզբին տեղափոխուել է Լօռի (Բլուզ Զաքարէ Վահրամեանը զոհուել է 1204/1205 թ.[1]): Հաղբատի տապանատան կենտրոնական շարքի շիրմաքարերի մէջ կան «Սեւադայ» եւ «Մինաքերիմ՝ թ[ո]ռն աւագ Սենաքերիմա[յ]» տապանագրերով շիրմաքարեր (դրանց միջեւ միայն երկու տապանաքար կայ)[2], որ կարող են վերագրուել Խաթուն Դեսումեանի եղբայրներին. այդպէս յայտնի է դառնում նաեւ նրանց՝ Սենեքերիմ անունով պապը, որը, թերեւս, կարող է համարուել Կոշիկ անապատում երկիցս վկայուած Շահան իշխանի հայր Դեսումի եղբայրը կամ հօրեղբօրորդին:

Ընդ սմին, Դեսում անունը մէկ անգամ յիշատակուած է նաեւ Զարեքդարի վանքի, ըստ ամենայնի՝ ԺԴ դարի մի փոքրածաւալ նուիրատուական վիմագրում (եկեղեցու հիւսիսային պատին, ներքուստ, 6-տողանոց եւ անթուակիր). «Աստուածովվ, ես՝ Դեսում, միաբանեցա[յ] սուրբ ուխտիս, տվի :Ա: գիրք... {տվ}ին :Ա: ժամ սուրբ Ակոբի տաւնին»[3]: Սակայն այդ տարածքի տարբերակն աւելի քիչ է հաւանական նաեւ այն պատճառով, որ հէնց նրանից մի փոքր հեռու՝ Վաղուհասին արեւմուտքից հարեւան Վարդանագոմեր (Վարդանկու) գիւղատեղիի եկեղեցու բարաւորին է պահպանուել արձանագրութիւն՝ գրուած «Տաւղան իշխանի ամուսին» եւ Գրիգոր Մեծ իշխանի դուստր Հասանի (բնագրում՝ «Հասն») անունից, որն արդէն Բ. Ուլուբաբեանի կողմից իրաւացիօրէն համադրուել է Մխիթար Գօշի նշած թուրքմէն ցեղապետի այրու հետ[4]: Տեղին նշենք, որ այդ շինարարական վիմագիրը ժամանակին ընթերցուել է Մեսրոպ Տէր-Մովսիսեանի կողմից[5], իսկ վերջերս այն լուսանկարել եւ ճշգրիտ վերծանել-սրբագրել է ճարտարապետ Սամուէլ Այվազեանը (բաւականին միաձեւ յստակ տառերով եւ լաւ պահպանուածութեամբ վիմագրի 10 տողերից ութը կիսակլոր են, իսկ վերջին երկու՝ բարաւորի կիսաշրջանի կենտրոնում տեղադրուած կարճ տողերը՝ հորիզոնական): Լուսանկարը եւ վերծանութիւնը սիրալիր տրամադրելու համար մեր երախտագիտութիւնը յայտնելով ուսումնասիրողին՝ օգտագործում ենք առիթը՝ այդ ուշագրաւ բնագիրը հրատարակելու ամբողջութեամբ (գրչանկարը տե՛ս սոյն աշխատութեան Յաւելուած Բ-ում).

«Ի թվիս :ՈԿԴ: էր [=1215 թ.]: Ի վերջին եւ ի նվաղել ժամանակիս, / ես՝ Հաս[ա]ն[ը], դուստր Մեծին Գրիգորոյ, ամուսին Տաւղան/այ իշխանի, շինեց[ի] զեկեղեցիս ի փրկութիւն իմ / եւ առն իմո[յ]: Առաջն՝ որ լինի զաւագ եկ[եղ]եցի/ն՝ առն

դած նոյնանուն եղբօրորդին (Հասան Ա-ի եւ Դօփի որդին), որի յաջորդ Համազասպ եպիսկոպոսի առաջին թուակիր վիմագիրը 1242-ից է (տե՛ս ստորեւ, էջ 323):

[1] Տե՛ս **Ա. Ի. Շահնազարյան**, Վահրամյանների իշխանութիւնը, Եր., 1990, էջ 67-68, 128: Հեղինակի կարծիքով (էջ 70-71)՝ Խաթունաշէնի եկեղեցու շինարարական վիմագիրը գրուած կարող էր լինել մինչ Զաքարէի եւ Խաթունի որդի Վահրամ Գագեցու կողմից Շամքորի ազատագրումը (բնագիրը Վահրամեանների տիրոյթների թում այդ քաղաքը չի յիշատակում), այսինքն՝ 1205-1216/1217 թթ. միջեւ: Վահրամը վախճանուել է մոնղոլների դէմ 1249 թ. անյաջող ապստամբութեան ժամանակ կամ դրանից ոչ շատ անց, ըստ Արտ. Շահնազարեանի՝ մօտաւորապէս 1250/1251 թ. (անդ, էջ 127-128):

[2] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, էջ 187, ճ՝մր 54, ԻԲ, Ի:

[3] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 133, ճ՝մր 444:

[4] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 121:

[5] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 115, ճ՝մր 383:

*իմոյ արասցեն: Եթէ ոք յիմ/ոց կամ յաւտարաց խափանել ջ/անայ՝ մեր մեղացն պարտակ/ան է. կատարիչ[ք]ն աւրհ/նին / յԱ<u>ստուածոյ</u>»: Բնագրում պահպանում ենք Հաս[ա]ն բառի կողքին Մ. Տէր-Մովսէսեանի դրած հարցական նշանը, քանի որ տուեալ անձնանունն արական է եւ մեզ յայտնի չէ նրա իգական տարբերակի օգտագործման ուրիշ դէպք (այդպէս՝ նաեւ Հր. Աճառեանին)[1]: Վիմագրի 4-5-րդ տողերի «Առաջն՝ որ լինի զաւագ եկ[եղ]եցին՝ առն իմոյ արասցեն» հատուածը հնարաւոր է թւում հասկանալ իբրեւ՝ «Առաջին [հերթին]՝ երբ [պատրաստ] լինի եկեղեցու աւագ [խորան]ը՝ թո՛ղ [պատարագն] իմ ամուսնու [հոգու յիշատակի] համար անեն»[2]: Համմ., օր.՝ Գրիգոր Հեջուբի՝ Գօշավանքի Ս. Գրիգոր կաթուղիկէի շինարարական վիմագրում՝ «{ե}տուն զաւագ խորան՝ ինձ պատար{ագել}»[3], նաեւ Դադիվանքի շինարարական վիմագրում՝ «...հաստատեցաք կամակցութ<u>եամբ</u> եղբարցս՝ զաւագ խորանի զպատարագն յանուն վերագրելոցս կատարել»[4], կամ Խորանաշատում Ներսէս կաթողիկոսի վիմագրում՝ «Ի ՈՂԵ: [=1246 թ.]... ես՝ տէր Ներսէս Աղուանից կաթողիկոս, միաբանեցա[յ] ի Խորանաշատո[յ] Ս<u>ուրբ Ա</u><u>ստուա</u>ծածնիս: Յիշատակ հաստատեցին զաւագ յեկեղեցիս իւր խորանաւքս ձեռամբ Վանական վարդապետին՝ շինողի վանիցս, ի տաւնի ս<u>ուրբ</u> ժողովոյն Նիկիա[յ]...»[5]:

Արդ՝ Մխիթար Գօշը, կիրակոս Գանձակեցին եւ ԺԲ-ԺԳ դարերի տարատեսակ աղբիւրներ բազմաթիւ առիթներով յիշատակում են Խօխանաբերդը (նաեւ՝ Խաւխան բերդ, Խաւախան բերդ, Խոյախան բերդ ձեւերով)՝ իբրեւ Խաչէն երկրամասի, ապա նրա Ներքին Խաչէն կոչուած հատուածի իշխանատոհմի[6] կենտրոնական ամրոց: Սակայն այն իրականում գոյութիւն ունէր շատ վաղուց (մասնագէտներն ամրոցի հիմնադրումը վերագրում են վաղ միջնադարի ժամանակաշրջանին), պարզապէս Թ-ԺԱ դդ. աղբիւրներում, մեր կարծիքով, աւելի տարածուած էր նրա «Խաչէն» անուանումը: Մեզ հասած աղբիւրներից այդ բերդանունն առաջին անգամ յիշում է (Յովհաննէս Դրասխանակերտցուց մի փոքր վաղ)՝ 982-988 (կամ 976-982) թթ. միջեւ գրուած Մովսէս Դասխուրանցու երկի մի աղբիւր: Ըստ ՊԱ-ի նախաւերջին գլխի (Գ.իբ /իգ/) տեղեկութեան՝ 827 թ. Դադիվանքի «խորաձորում»՝ վերջին «Միհրանեան» կոչուած Վարազ Տրդատ Բ իշխանն իր մանկահասակ որդու հետ

---

[1] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 51:

[2] Վերծանութեան ինչ-ինչ բարդ տեղիներ քննարկել եմ լուսահոգի ուսուցչիս՝ Պարոյր Մուրադեանի հետ:

[3] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, Իջեւանի շրջան, Կազմեցին՝ **Ս. Ա. Ավագյան, Հ. Մ. Ջանփոլադյան**, Եր., 1977, էջ 106, հմր 236, լուսանկ.՝ տախտ. ԽԸ:

[4] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 198-199, հմր 708, լուսանկ.՝ տախտ. XXIX; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 110, հմր 1:

[5] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Պատմա-հնագիտական դիտողություններ Նոր բերդի Կյուրիկյան իշխանության մասին, էջ 100 (վերահրատ.՝ **Կ. Ղաֆադարյան**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի եւ պատմության, Խմբ.՝ **Պ. Մուրադյան**, Եր., 2007, էջ 221): Տե՛ս նաեւ ստորեւ (էջ 314) վերծանուած բնագրում. «...առաջ՝ {որ երկր}պագանէք՝ Հասանա[յ] յաղաւթս յիշէ՛ք»:

[6] Այս տոհմը Գանձասարի կառուցող Հասան Ջալալ Վախտանգեանի անունով կոչուեց *Հասան-Ջալալեաններ*:

սպանուել է իր ազգական Ներսեհ Սիւնեցի իշխանի կողմից. այդ ողբերգական դիպուածը շարադրում է նաեւ Ստեփաննոս Օրբէլեանը, իսկ բուն աղբիւրը Թ դ. վերջի Հայոց կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու՝ մեզ չհասած պատմական երկն է[1]: Դասխուրանցին Գ.իբ (իգ) գլխում յաւելում է, որ Վարազ Տրդատի սպանութիւնից յետոյ նրա այրին իր Սպրամ դստեր հետ կարողացել է փախչել եւ գիշերային ծանր ուղեւորութիւնից յետոյ ապաստանել «ի բերդն Խաչէնայ», որտեղ Սպրամն ամուսնացել է տեղի նշանաւոր իշխան Սահլ Սմբատեանի որդի Ատրներսեհի հետ:

Խաչէն ամրոցն առաւելապէս համադրուել է այլ բերդերի հետ՝ Կաչաղակաբերդի (նաեւ՝ Հաւախաղաց, Սախսաղան՝ Խաչէնագետի վտակ Քոլատակի ու Կարկառի վտակ Պտրեցիքի ջրբաժան լեռնաշղթայի վրայ) կամ Հաւախաղացի (նաեւ՝ Հաւախաղաց, Լաչին-ղայա՝ Տրտուի Թութխու եւ Արագջուր վտակների ջրբաժան լեռնաշղթայի վրայ)[2]: Սակայն Կիրակոս Գանձակեցու տուեալները չեն հաստատում այդ աւանդական համադրումները: Նա յայտնում է, որ մոնղոլները Կարկառի հովիտն ասպատակելուց յետոյ, նախ նուաճեցին Հաւախաղաց ամրոցը (=Կաչաղակաբերդ) եւ դաժան հաշուեյարդար տեսան նրա պաշտպանների հետ, ապա հասան Խօխանաբերդին (Գանձասարի դիմաց գտնուող) ու պաշարեցին այնտեղ Հասան Ջալալ Վախտանգեան իշխանի գլխաւորութեամբ պատսպարուած բնակչութեանը: Պատմիչը, երիցս յիշատակելով Խօխանաբերդը, երկիցս նշում է, որ ամրոցն այդպէս էր կոչւում «ըստ պարսկական բարբառոյն», «ըստ բարբառոյն Պարսից» (այսինքն՝ «մահմեդական[արաբ, պարսիկ կամ թիւրք ժողովուրդ]ների լեզուով»). հաւանաբար՝ նա նկատի ունէր «դեղձ» կամ «սալոր» նշանակող արաբերէն «խոխ», «խուխ» բառը[3] կամ մի ուրիշ օտարալեզու եզրոյթ: Իսկ դրանից բխում է, որ Գանձակեցու իմացած՝ ամրոցի «հայերէն» անուանումը մի հանրայայտ անուն էր, որը յիշատակելը նաեւ պարզապէս կրկնութիւն կը լինէր. դժուար չէ կռահել, որ դա հէնց «Խաչէն»-ն է: Այն նաեւ ողջ երկրամասի անունն էր՝ իբրեւ այդպիսին բազմիցս կրկնուած երկի շարադրանքի բովում, այդ թուում եւ մեր նշած գլխի վերտառութեան մէջ. «լ. վասն կոտորածին, որ ի կողմանս Խաչենոյ...» (հմմ. նաեւ բուն շարադրանքը. «Այս իմաստուն իշխանս, իբրեւ ետես զյարձակումն անօրինացն, ամրացոյց զբնակիչս իւրոյ աշխարհին ի բերդն, որ կոչի Խօխանաբերդ՝ ըստ բարբառոյն Պարսից»[4]): Շեշտենք, որ Խօխանաբերդ – Խաչէն համադրութեան օգտին վկայող է նաեւ Մովսէս Դասխուրանցու՝ վերը բերուած տեղեկութիւնը Սահլ Սմբատեանի «Խաչէն» բերդի մասին, քանի որ Խօխանաբերդն աւելի մօտ է Դադիվանքի «խորաձորին», քան Կաչաղակաբերդը (յիշենք, որ ՊԱ-ի տեղեկու-

---

[1] Տե՛ս վերեւում, էջ 140-148:

[2] **Մ. Յովհաննիսեան**, Հայաստանի բերդերը, Վենետիկ – Ս. Ղազար, 1970, էջ 452; **Ե. Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, էջ 23; ՀՀՇՏ բառարան, հտ. 2, էջ 665, 945; **Ս. Սարգսյան**, Խաչենի ամրոցները, էջ 39-45:

[3] Տե՛ս **Հ. Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 481; Հայոց լեզվի բարբառային բառարան, հտ. Բ, Եր., 2002, էջ 247:

[4] **Կիրակոս**, էջ 267-269:

թեան համաձայն՝ Դադիվանքին շատ մօտ գտնուող միւս՝ Հաւախաղաց ամրոցը կառուցուել է աւելի ուշ՝ Գրիգոր Աարներսեհեանի կողմից):

Նշուած համադրութեան օգտին է խօսում, գուցէ, նաեւ Անանիա Մոկացու յիշատակած «Խաչինայ» վանքի գոյութեան փաստը, եթէ նկատի ունենանք, որ Խօխանաբերդի անմիջապէս լանջին գտնուում է Հաւապտուկ կոչուած նշանաւոր վանական համալիրը, իսկ Կաչաղակաբերդին մօտիկ նման հոգեւոր հաստատութիւն յայտնի չէ: Վերջապէս, թւում է, թէ կարելի է ուշադրութեան առնել այն հանդամանքը, որ Խօխանաբերդի լեռնազանգուածը յառնում է անմիջապէս Խաչենագետի հովտի վերեւում, իսկ Կաչաղակաբերդը նրա Քոլատակ վտակի հովտի միջնամասում է, ընդ որում Խաչենագետ գետանունը եւ նրան յարող Խաչինաձոր-ը յիշուած են արդէն ԺԲ-ԺԴ դդ. վիմագրերում (հմմ. «:Ա: լուծ ի Խաչինաձոր...»[1]; «տվաք զ[հողս]... ի Խաչենագետի...»[2]. տե՛ս նաեւ աւելի ուշ շրջանի՝ ԺՀ դ. կէսերի վիմագրում. «:ՌՄՋ: թվ[ին] [=1757 թ.]. կամաւն Ա[ստուծո]յ, ես՝ Ղուկաս վ[ա]րդ[ա]պ[ե]տս, շինեցի մէկ ճաղաց [ի] Խաչանակետ...»[3], ինչպէս նաեւ 1473 թուականի (սկզբնապէս սխալմամբ ընթերցուած՝ 1493) մի յիշատակարանում. «...գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս Խաչենաձորոյ, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոսի...»[4]): Նշենք նաեւ, որ Խաչէն – Խօխանաբերդ համադրումն իրենց քարտէզներում հետեւողականօրէն կատարում են Ս. Երեմեանը եւ Բ. Յարութիւնեանը[5]:

Հայկական աղբիւրներից յետոյ անդրադառնանք նաեւ Խաչէնի բերդի մասին ԺԹ դ. առաջին կէսի արաբալեզու հեղինակ Մուհամմադ ան-Նասաւիի «Սուլթան Ջալալ ադ-Դին Մանկբուրնայի կենսագրութիւնը» վերտառութեամբ երկի վկայութեանը: Ըստ աղբիւրի՝ մեր կողմից օգտագործուած ռուսերէն թարգմանութեան բնագրի՝ մոնղոլներից փախչելով Առաջաւոր Ասիա հասած Ջալալ ադ-Դին Խորեզմշահի վեզիր Շարաֆ ալ-Մուլքի բանակը 1227 թ., անցնելով Արաքս գետից հիւսիս, «կանգ առաւ Խաչէն ամրոցի մօտ, որտեղ գտնւում էր Ջալալ ադ-Դինը [resp. Ջալալ Դօլան]՝ Իւանէ ալ-Գուրջիի [իմա՛ Իւանէ Ջաքարեանի – Ա. Յ.] քրոջորդին: Շարաֆ ալ-Մուլքն սկսեց սպառնալ ու սարսափեցնել նրան, մինչեւ որ հաշտութեան մասին համաձայնութեան եկաւ՝ այն պայմանով, որ իրեն կը վճարեն 10 հազար դինար բերքերի եւ ազատ կ'արձակեն նախկինում ու վերջերս գերուած 700 մահմեդականներին» (շարունակութեան մէջ. «Դրանց մէջ կային եւ այնպի-

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 38, ին՝ 82:
[2] Անդ, էջ 214, ին՝ 755:
[3] Անդ, էջ 138, ին՝ 460:
[4] Տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 247; ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն III (1481-1500 թթ.), Կազմեց՝ **Լ. Ս. Խաչիկյան**, Եր., 1967, էջ 344:
[5] Տե՛ս **Иоаннес Драсханакертци**, История Армении, Пер. с древнеармянского, вступ. статья и комментарий **М. О. Дарбинян-Меликян**, Ер., 1986 (ներդիր "Армения и сопредельные страны в 701-862 гг." քարտէզը՝ Ս. Տ. Երեմեանի); **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի պատմության ատլաս, էջ 81: Ըստ այսմ՝ պէտք է ուղղել նաեւ մեր՝ 2009 թ. գրքի՝ «Արցախի կենտրոնական եւ Սիւնիքի հիւսիս-արեւելեան գաւառները ըստ «Աշխարհացոյց»-ի» ներդիր-քարտէզում:

սիք, որ գերեվարուել էին մանուկ հասակում, իսկ գերութիւնից ազատուեցին արդէն ծերունի»)[1]: «Խաչէն... միջնադարեան ամրոցի» համար թարգմանիչը եւս ծանօթագրում է. «Ճիշտը՝ Խօխանաբերդ»[2]:

*Ան-Նասաւիի նման՝ *Խաչէն «նահանգի» ամուր բերդի յիշատակութիւն է պահպանել նաեւ ԺԳ դ. առաջին կէսի պարսկալեզու անանուն հեղինակն իր «Աշխարհի զարմանալիքները» աշխարհագրական երկում, որի ստեղծման ժամանակն արեւելագէտ Ն. Միկլուխո-Մակլայը համարում է 1220-ական թթ. կէսերը[3]: Բառարանի ձեւով կազմուած այդ երկի ռուսերէն թարգմանութեան մէջ արաբերէն «խա» տառի տակ շարադրուած է նաեւ, ըստ ամենայնի՝ «Խաչէն» բառայօդուածը, թէեւ պահպանուած ձեռագրերում վերնագիր-բառի տեղը բաց է թողած), որում ասւում է. «Այդ նահանգը [վիլայաթ] դժուարամատչելի է, լեռների եւ անտառների մէջ. պատկանում է Առանի մարզերին [ա՛մա՛լ]. այնտեղ հայեր են [ապրում]. Աբխազի [իմա՛ Վիրք] մարդիկ նրանց փադիշահին տագաւեր [իմա՛ թագաւոր] են անուանում. նրանք աբխազների հետ խռովութիւններ են անում: Նրանք ամուր բերդ ունեն: Իսլամի տիրակալ-փադիշահը՝ յաղթանակող աշխարհիկ ու հոգեւոր գործերում, 611 թ. [Հիջրէի, = 1214/1215 թթ.] արշաւեց կիրճի [դարէ] խորքը. նրա զօրքերը յաղթանակ տարան եւ համատարած կոտորած արին» (շարունակութիւնը. «...նրանք ստրուկներ ու հարուստ ռազմաւար բերեցին եւ հրի մատնեցին այն բազմաստուածների տներն ու բնակավայրերը. [այդպէս] դրսեւորուեց [փադիշահի] ողջ վեհութիւնը: Այդ վայրի ապրանքներն են՝ հաճելի գինիները, բուրաւէտ խնձորը, խաղողը եւ քաղցր նուռը»)[4]: Բերուած շարադրանքի բովում «Խաչէն նահանգի» «ամուր բերդի» մասին նշելու եւ միաժամանակ անունը չտալու հանգամանքը որոշ հաւանականութեամբ թոյլ է տալիս մտածել, թէ պատճառը, գուցէ, երկու աշխարհագրական միաւորների նոյնանունութիւնն է եղել: Թէպէտ բացա-*

---

[1] **Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави**, Жизнеописание султана Джалал ад-Дина, с. 211-212.

[2] Անդ, էջ 388: Ծանօթագրութեան մէջ թարգմանիչ Զ. Բունիաթովը շարունակում է նաեւ. «Կիրակոս Գանձակեցի. «Ամրոցը, որ պարսկերէն կոչւում էր Խօխանաբերդ («Տիրակալի քարէ բնակարան»)»: Վերջին «թարգմանութիւնը» լիովին անհասկանալի է (այս առիթով խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում նաեւ իրանագէտ Արմանուշ Կոզմոյեանին):

[3] **Н. Д. Миклухо-Маклай**, Географическое сочинение XIII в. на персидском языке (Новый источник по исторической географии Азербайджана и Армении), – Ученые записки Института востоковедения, т. IX, Москва-Ленинград, 1954, с. 184-185 (վերնագրի եւ հեղինակի մասին տե՛ս էջ 177-184):

[4] Անդ, էջ 204-205; ‘Аджā’иб ад-Дунйā (Чудеса мира). Критический текст, пер. с персидского, введение, комментарий и указатели **Л. П. Смирновой**, Москва, 1993, с. 199. Այս բնագրի՝ «այնտեղ հայեր են [ապրում]» արտայայտութեան փոխարէն (Ս. Պետերբուրգի Արեւելագիտութեան ինստիտուտի Ձեռ. А-253, թ. 202բ՝ «արմանի անդ») առաջին ռուսերէն թարգմանութեան՝ «այնտեղ հայեր կան» սխալի մասին տե՛ս **П. М. Мурадян**, История – память поколений, с. 87. Հմմ. **В. А. Захаров**, История Кавказской Албании в исследованиях академика И. А. Орбели и проблема искажения истории Армении и Арцаха в Азербайджане, Москва, 2012, с. 8-9.

ռուած չէ եւ մէկ այլ տարբերակ։ Պարսիկ անանուն հեղինակի մօտ Խաչէնի վրայ Աւրպատականի սելջուկ աթաբէկի (Ն. Միկլուխո-Մակլայը ծանօթագրում է, որ դա, հաւանաբար, եղել է էլտկուզեան Մուզաֆար ադ-դին Ուզբէկը) 1214/1215 թ. արշաւանքի նկարագրութիւնը եզակի կը մնար (առանց որեւէ աղբիւրում զուգահեռի), եթէ չփորձէինք համադրել դրա եւ Վերին ու Ներքին Խաչէնների իշխանների մահուան ժամանակները. ըստ Վարդան պատմիչի՝ նոյնանուն Վախթանգները մահացել են նոյն տարում՝ Հայոց 663 թուին[1] (27.01.1214-26.01.1215 թթ.), այսինքն՝ 1214-ին։ Եթէ նման համադրումը բաւարար է՝ կասկածի տակ չառնելու էլտկուզեանների արշաւանքի ժամանակի հաւաստիութիւնը (ուստի եւ՝ արշաւանքի հետ Խաչէնցի իշխանների վախճանի՝ թէկուզ եւ անուղղակի կապը), ապա, գուցէ, ճիշտ կը լինի պարսիկ հեղինակի աւարառու տեղեկատուների տեսած «ամուր բերդի» տակ ընկալել այդ պահին Խաչէնի իշխանապետութեան իրաւասութեամբ օժտուած Վախթանգ Հաթերքցու կենտրոնական ամրոցը, այսինքն՝ Հաթերքը։

Տեղին նշենք, որ էլտկուզեանների նոյն արշաւանքի մասին մէկ այլ զուգահեռ, թերեւս, կարող է դիտուել նաեւ 1214 թ. Դադիվանքի շինարարական վիմագրում Արզուխաթուն իշխանուհու թողած վկայութիւնը՝ իր անդրանիկ որդի Հասանի զոհուելու հանգամանքների մասին. «...սպանաւ ի թուրքաց պատերազմին վասն քրիստոնէական հաւատոյս»[2]։ Բացի այդ, վերջերս մենք հնագէտ Գագիկ Սարգսեանից որակեալ լուսանկարով ստացանք եւ վերծանեցինք Զարդախաչ գիւղի նորայայտ խաչքարի (այն իջեցուել է Տրտուի միջնահովտի ձախափնեայ բարձրադիր լանջերից եւ կանգնեցուել գիւղամիջում) ընդարձակ վիմագիրը, որը եւս լրացուցիչ տեղեկանի է պարունակում նոյն էլտկուզեան արշաւանքի վերաբերեալ։ Բնագրի հիմնական մասը զետեղուած է խաչքարի թիկունքին 17 տողով, իսկ շարունակութիւնը եւ աւարտը՝ աջ եւ ձախ կողերին՝ 18 եւ 17 կարճ (3-7 տառ) տողերով։ Կողային վերեւի եւ ներքեւի 2-3-ական տողերը լրիւ հողմահարուած են ու անընթեռնելի, բայց դրանց միջնամասերից երեւում է, որ գրուածն աւարտական զեղումներ են («...{Յ}ԱՐԵԱՆ / Ի ՔՐԻՍՏՈՍ, ԵՒ Ս/ՈՒԳ ՄԵԾ / ԷԹՈՂ ԻՆ/Ջ ԵՒ ՍԻ-Ր/ԵԼԵԱՅ Ի/ՄՈՅ, ԵՒ Յ/ԱՒՈՒՐ ՏԷ/ՐՈՒՆԱԿԱՆ / ՏԱՒՆԻ ՄԵ/ԾԻ ՋԱՏԿ/ԻՍ, ՄԵԾ {...}» // «{...}Ո/Վ ՀԱՆԴ/ԷՍԻՍ Ա/ՒՐԷՆ, Ե{Ի} / ՅԻՇԵԱՑ / ՔՐԻՍՏՈՍ, ՈՐՔ / ԵՐԿԻՐ Պ/ԱԳԱ-ՆԷՔ՝ / ՅԱՂԱԹ/Ս ՅԻՇԵՑ/Է՛Ք, ԵՒ ՈՐՔ {...}»)։ Իսկ թիկունքի հատուածի (որտեղ հողմահարուած են լոկ մի քանի հեշտ վերականգնուող տառեր) ամբողջական վերծանութիւնը հետեւեալն է (ընդգծել ենք կցագրերը).

[1] ՅԱՄԻ ՝ՈԿԱ՝ ԹՎԱԿԱՀՆ}-

[2] ԻՍ [661 = 28.01.1212-27.01.1213]՝ ՅԱՆՑՄԱՆ ԵՒ Ի ՎԵՐՋԻՆ Ժ{Ա}-

[3] ՄԱՆԱԿԻՍ, Ի ՏԱՐՏԱՐՈՍ ԵՒ Ի ՇՓ{Ո}-

[4] Թ ԱՄԻՍ, ՅԱՄԻ՝ ՅՈՐՈՒՄ ԵԼԱԻ ԱՋ-

[1] **Վարդան**, էջ 184:

[2] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 199, ճ՝ր 708; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 108, ճ՝ր 1:

[5] *Գն Շանթաց՝ թոռն Ջաբոի խաք-*

[6] *Ականաց[1] անթիի <u>եի</u> անհամար բ-*

[7] *աջմոիթ[ա]ամբ <u>եի</u> տիրեաց աշխարհիս*

[8] *հայոց <u>եի</u> աղվանից, քակեց <u>եի</u> ա-*

[9] *էրեց ջբաջոիմ քաղաքս, եհաս մ-*

[10] *ինջ<u>եի</u> ի քաղաքն գանջակ, հիմն ի*

[11] *{վե՞}ր տապալեաց <u>եի ի</u> սոիր սոիսեր-*

[12] *{ի՞} մաշեաց ջամենեսեան <u>եի</u> հասա-*

[13] *{ի ի՞} ջինջաքար[2]. ի սոյն ամի եմ՝ հաս-*

[14] *ան՝ որդի սեհադի, թոռն մեծ-*

[15] *ին վարհամաց, կանգնեցի*

[16] *ջհաջս ամոիմնոյ իմոյ խա-*

[17] *{թոռի՞}ին {... ...} //*

Այս բնագրում առաջին դէմքով հանդէս եկող ՀԱՍԱՆ-ի հայր ՍԵՀԱԴ-ը կարող է համադրուել Ջարեքդարի մի վիմագրի («Դիւան»-ում՝ հմր 443) հեղինակ ՍԵՀԱԴԱ-ի հետ[3], ով իր քոյր Շահանդուխտի հետ միասին խաչքար է կանգնեցրել «...ի տապանի Գրիգորա[յ] իշ{խանի}, ... որդոյն հզաւր եւ յաղթող իշ{խանի...}, որ բազում քաջութեամբ եհար զտա{ճիկ}ք ... եւ երթէր յերուսաղէմ, զոր գիտացին վ{...}ք եւ չթողին վ[ր]անց Դեդան բերդո {...} սմա էր եւ մեծ պատերազմ, որ անկաւ {...}ՌՅԿ տաճիկ. եւ անդր նահ{ատակ}եցաւ Գրի{գոր} ...»: Ս. Բարխուդարեանը սխալներով է վերծանել այս վիմագիրը եւ Սեւադային էլ, հետեւելով նախորդներին, դարձրել է նահատակ (եղբօր փոխարէն) ու համադրել Վարդան պատմիչի յիշատակած՝ մոնղոլների կողմից 1260 թ. Նփրկերտի ճակատամարտի մասնակից Սեւադայի հետ[4]:

---

[1] Այս «խաքա*կան*այ» ձեւը (*փխճ.* «խաքանայ») անսովոր է (չի հանդիպել): Հեղինակը, անշուշտ, «գրական» յղում է անում Մովսէս Դասխուրանցու (=նրա աղբիւր Անանուն Կաղանկատուացու) «Ջերու խաքան»-ին: Վերջինիս որդին էր Աղուանք մտած «Շաթ»-ը, ուստի Ատրպատականի թիւրք-սելջուկներին ԱՋԳՆ ՇԱ ՆԹԱՑ կոչելիս կանոնաւորը պիտի գրուէր՝ ՇԱԹԱՑ: Բայց ստորեւ տե՛ս նաեւ *Ջինջաքար* փխճ., թերեւս, **Ջիջաքար*:

[2] Այլուսւ գոնէ այս անուանաձեւով չհանդիպող ՋԻՆՋԱՔԱՐ տեղանունը (այդ ճիշտ ընթերցումը յուշելու համար երախտագիտութիւնս պիտի յայտնեմ Համլետ Պետրոսեանին), ամենայն հաւանականութեամբ, բերդանուն է («քար» = *ամրոց*): Այն հնարաւոր է համադրել հետագայում Դադիվանքի սիկէլ-կալուածագրերում արձանագրուած «Ձիջայ» – «Ծաղիկանց» բերդի հետ (տե՛ս KB, вып. 1, с. 153-154; Դիվան հայ վիմագրության, պր. V, հմր 765, էջ 216), որը տեղորոշւում է Լեւագետ – Տրտու գետկիցից հիւսիս-արեւելք յառնող *Ձիչագլու* լեռան լանջին կամ գագաթին (2268 մ. տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, ներդիր անգոյն քարտէզում): Կարելի է նաեւ ենթադրել հետեւեալ անցումները. *Ջինջաքար* – **Ձիջաքար* (սիկէլում վկայուած է «Ձիջաբեր*թ*» եւ «բեր*թն* Ձիջայ») – *Ձիչագլու* (թիւրքերէն յորջորջումով), որից էլ թարգմանութիւն հայերէնի՝ *Ծաղիկանց*:

[3] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 132-133, լուս. 93: Նրա մասին խօսք կը լինի նաեւ ստորեւ:

[4] **Վարդան**, էջ 199 (բնագիրը տե՛ս ստորեւ, էջ 321):

Սակայն բնագիրն ուշադիր ընթերցելիս երեւում է, որ այն իրականում պատմում է ԺԲ դ. վերջերին սելջուկների դէմ մղուած կռիւների մասին (մինչեւ Երուսաղէմի անկումը 1187 թ.), իսկ իրական նահատակ Գրիգորը, թերեւս, Սեւադայի եւ Շահանդուխտի աւագ եղբայրն էր. ընդ որում՝ նրանց հօր անունն էլ կորսուած է աջ ջարդուածքում: Բայց շարունակելով համադրել երկու վիմագրերը եւ ուշադրութեան առնելով «Մեծն» բնութագրումը՝ հաւանական է մտածել, որ Ջարդախաչի մեր վիմագրի հեղինակ ՀԱՍԱՆ-ի պապ «Մեծն Վարհամը» (այսինքն՝ Գրիգորի, Սեւադայի եւ Շահանդուխտի հայրը) ժամանակով լիովին կարող էր լինել Հասան Մեծ Կրօնաւորեալի այն «Վարհամ» եղբայրը, որի տապանագիրը («թուին ՈԼԱ [=1182 թ.]. ես՝ Հասան, կանգնեցի զխաչ եղբաւր իմոյ Վարհամայ. յաղաւթս յիշեցէ՛ք») նա գրել է Դադիվանքում իր կանգնեցրած խաչքարի վրայ[1]: Այսպիսով, Ջարդախաչի վիմագրի ՀԱՍԱՆ-ն իրօք կարող էր լինել «չարեքդարցի» Սեւադայի որդին (Տրտուի հովտի այս երկու գիւղերը տեղորոշուած են գրեթէ իրար դիմաց՝ մի քանի կմ հեռաւորութեամբ): Իսկ մեր ՀԱՍԱՆ-ի որդին էլ, գուցէ, «չարեքդարցի բարեպաշտ իշխան» ԽՈՍՏՐՈՎԻԿ-ն էր, ով իր տապանագրում կոչուած է «որդի Հասանայ»[2]: Բայց վերոնշեալ խնդրի համատեքստում մեզ համար աւելի կարեւորն այն է, որ «յանցման եւ ի վերջին ժ[ա]մանակիս, ի տարտարոս եւ ի շփ[ո]թ ամիս» տեղի ունեցած աւերիչ արշաւանքը (երբ «ելաւ ազգն Շանթայ՝ թոռն Ջաբու խաքա}կ[նայ անթիւ եւ անհամար բազմութեամբ եւ տիրեաց աշխարհիս Հայոց եւ Աղվանից, քակեց եւ աւերեց զբազում քաղաքս, եհաս մինչեւ ի քաղաքն Գանձակ, հիմն ի {վե}ր տապալեաց եւ ի սուր սուսեր[ի] մաշեաց զամենեսեան եւ հասա{ւ ի} Ջինջաքար»[3], այսինքն՝ Տրտուի ձորահովտի՝ «դարէ»-ի, բաւական խորքերը) թուագրուած է Հայոց 661, այսինքն՝ 1212 թուականով, որը լոկ երկու տարով է շեղւում էլտկուզեանների՝ 1214 թ. խաչէնեան արշաւանքի տարուց: Եւ այդ շեղումը, թերեւս, կարող է լոկ տարբերուող տոմարական հաշուարկների հետ կապուել:

Արդ՝ հայկական աղբիւրներում մեր խնդրոյ առարկայ բերդանուան «խաչէն» տարբերակի վերջին յիշատակումներից մէկը գտնում ենք ԺԲ դ. երկրորդ կէսի հզօր եւ բարեպաշտ իշխան, վախտանգի որդի Հասան Կրօնաւորեալի՝ Դադիվանքում անձամբ տեղադրած («եւ բերի զխաչսաfաru յաղուաշատ աշխատութեամբ եւ բազում հնարիւք») մեծադիր խաչքարի (նախկինում կոչուած՝ «խաչվիմ») թիկունքին փորագրուած 1182 թուակիր («թուին {Ո}ԼԱ») ծաւալուն վիմագրում[4]: Այդ բնագրի խաչինաբերդի եւ այլ աղբիւրների խոխանաբերդի համապատասխանութեան

---

[1] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 115, ճմ 57 (հմմ. ճմ 52՝ «Ա[ստուած / ող/որ/մի / վ/արճ/ամա[յ]»): Հմմ. Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 215, ճմ 760 (յղելով Մեսրոպ ՏԷր-Մովսիսեանին):

[2] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 135 («Այս է հանգի/ստ բարէպաշ/տ իշխանին Խ/ոստրովկայ, / որդոյ Հասա/նայ»):

[3] Մեր ամբողջական վերծանութիւնը աշխարհաբար թարգմանութեամբ հանդերձ տե՛ս **Գ. Մ. Սարգսյան**, Արցախի վանքերն ու եկեղեցիները. Քարտեզ-ալբոմ, Եր., 2014, էջ 28:

[4] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 118, ճմ 72; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 198, ճմ 707 (այստեղ վերծանուած է որոշ վրիպումներով):

վերաբերեալ կասկածները փարատելու համար կարեւոր է հանգամանալից քննարկել վերջին տասնամեակներում մեր պատմագրութեան մէջ արմատաւորուած մի վրիպում: «Խաչվիմի» վիմագրում Հասանը յայտնում է, որ 40 տարի աւագութիւն է վարել («կացի յաւագութեան ամս Ի»): Այնինչ Հասանի կին Մամախաթունը նոյն «:ՈՀԱ:» – 1182 թուականին Դադիվանքում իր դրած, բայց, ցաւօք, ներկայումս կորած խաչքարի բաւականին նմանաբովանդակ (լոկ առանց բերդանուններին վերաբերող հատուածների) վիմագրում (որտեղ ներկայանում է. «Ես՝ Մամայ թագուհի, ամուսին Հասանայ, դուստր Կուրիկայ թագաւորին») նշում է. «Կացաք յաւագութեան յամս :Լ: [=30!]»[1]: Հասանը շարունակում է, որ յաղթական պատերազմներով եղել է տէրն իր երկրի չորս ամրոցների («ես՝ Հասան, որդի Վախտանգա[յ], տէր Հաթերքո[յ] եւ Հանդաբերդո[յ], Խաչինաբերդո[յ] եւ Հաւախաղացին»), բայց այժմ բաժանել է երկիրն ու ամրոցները («զբերդերս եւ զգաւառս ետու») իր վեց («Զ») որդիներին եւ կնոջ հետ եկել՝ կրօնաւորելու Դադիվանքում՝ իր եղբօր մօտ («մաւտ յիմ եղբայրս՝ ի տէր Գրիգորէս»[2]: Մամախաթունի վիմագրում եւս ասւում է. «...թողեալ զհայրենիքս որդւոց մերոց՝ եկաք ի վանքս՝ մօտ տէր Գրիգորիս եւ որդին մեր համանուն նորին [իմա՛ Գրիգորիս]»[3]): Մխիթար Գօշի ճանաչած այս «Հասան կրօնաւորեցեալը», թերեւս, հէնց Դադիվանքում էլ վախճանուել է, ընդ որում՝ մինչեւ 1190 թիւը (տապանաքարը չի գտնուած. ըստ Գօշի՝ 1184-ին նա դեռ ողջ է եղել), քանի որ այդ տարում նրա եղբայր «տէր Գրիգորէս» վանահայրը միայնակ է երկու խաչքար կանգնեցրել՝ իր Սմպատ եղբօր եւ Շուշիկ անունով մօր համար: Առաջին խաչքարի (այն հետագայում դրուել է Դադիվանքի գմբեթաւոր փոքր եկեղեցու պատի մէջ) 6-տողանոց բնագիրն է. «Թուին :ՈՀԹ: [=1190 թ.]. Ես՝ տէր Գրիգորէս, / առաջնորդ սուրբ ուխտիս, / կանգնեցի զխաչս եղբ/այր իմո[յ] Սմպատա[յ], որդո[յ] / Վախտանգա[յ]...»[4], իսկ երկրորդի (այն ընկած է եղել Կաթուղիկէի մուտքի առջեւ՝ սիւնասրահի մէջ) 4-տողանոց բնագիրն է. «Թուին :ՈՀԹ: [=1190 թ.]. Ես՝ տէր Գրիգորէս, որ{դի} / Վախտանգա[յ], կան[գն]եցի զխա/չս մաւր իմո[յ] Շուշկանն...»[5]:

ԺԲ-ԺԳ դդ. մատենագիրների մօտ, ինչպէս նաեւ վիմագրերում ու յիշատակարաններում, իբրեւ Հասանի եւ Մամախաթունի (Տաւուշի Մածնաբերդի Կիւրիկէ Գ թագաւորի դստեր, որ կոչուած է նաեւ՝ «Մամայ», «Մամ» եւ «Մամքան») ամենից նշանաւոր որդի, հանդէս է գալիս Հաթերքի «բուն տէր» Վախտանգը: Նրա մահուա-

---

[1] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 215, ճմ 762 (Սեդրակ Բարխուդարեանցն առել է Եսայի Հասան-Ջալալեանցի տետրակից); **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 120, ճմ 81: Մակար Բարխուդարեանցի մօտ («Արցախ», էջ 204) կամայականօրէն դարձուած է՝ «յամս Խ»:

[2] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 118, ճմ 72; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 198, ճմ 707:

[3] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 215, ճմ 762; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 120, ճմ 81; **Մ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 204:

[4] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 115, ճմ 44:

[5] Անդ, էջ 117, ճմ 71: Հմմ. Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 213, ճմ 752 (քաղած է Մեսրոպ Տէր-Մովսիսեանի հրատարակածից):

նից յետոյ է (1214 թ.), որ իր՝ մինչ այդ նաեւ երկու որդիներին կորցրած Արզուխաթուն տիկինը («ամուսին Վախտանկա[յ]՝ թագաւորազնո[յ] տ[ուռ]ն Հաթերքո[յ] եւ ամենայն վերին Խաչենո[յ]»)՝ իշխանաց իշխան Քուրդ Արծրունու դուստրը, միանձնուհի է դառնում Դադիվանքում, որտեղ իր թողած ծաւալուն վիմագրի խօսքերով՝ նոյն տարում աւարտին է հասցնում կաթուղիկէն («կատարեցաւ ս[ուրբ] քաւարանս ի թուականութեանս Հայոց ՈԿԳ։ [=1214 թ.]»)[1]։ Իր նշանաւոր «Դատաստանագրքի» ստեղծման ժամանակի մասին Մխիթար Գօշը գրում է հետեւեալ ձեւով. «...ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան եղեւ ի թուականութեանն Հայոց ՈԼԳ [=1184 թ.], եւ շրջանին երթալոյ ի բաց ճԱ, որ կոչի Փոքր [=1184/1185 թ.], իսկ Հոռոմին՝ Նե [=1184/1185], յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ, ի վաղընջուց ժամանակի մնացելոց սակաւ իշխանացս ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ, որդւոյ Վախտանկայ [var. Վախտանգայ]՝ կրաւնաւորեցելոյ, եւ որդւոյ նորա Վախտանկայ, ի դղեկին, որ անուանեալ կոչի Հաթերք [var. Հայթերք], գլխաւորի այլոց իշխանացն, եւ կողմանցն Կիւղիկեայ՝ մեծի իշխանին Ռոբենի, յամի, յորում մեռաւ յաղթող թագաւորն Վրաց Գեաւրգե [1156-1184]...»[2] («Դատաստանագրքի»՝ նոյնպէս հեղինակային՝ Բ խմբագրութեան մէջ տուեալ հատուածն աւելի համառօտ է. «...ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրաւնաւորեցելոյ եւ որդւոյ նորա Վախտանգայ, ի դղեկին, որ անուանի Հայթերք»[3])։

Մխիթար Գօշի մասին իր աշակերտ Կիրակոս Գանձակեցին հաղորդում է. «...նեղեալ ի տաճկաց [Մխիթարը]՝ ի սադրելոյ կաթողիկոսին Աղուանից Ստեփաննոսի, եւ եկեալ նորա յաշխարհն Խաչենոյ առ Վախթանկ իշխանն Հաթերոյ եւ առ եղբարս նորա, որք բազում պատուով պատուեցին զնա, եւ անդ դադարեալ ամս ինչ»[4]։ Յաջորդ գլխում պատմիչը յայտնում է. «Յայսմ ամի եղեւ աւարտ հռչակաւոր եւ խնդատես եկեղեցւոյն Գետկայ, զոր շինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօքն՝ ձեռնտուութեամբ Վախթանկայ Խաչենեցւոյ՝ տեառն Հաթերոյ, եւ եղբարց իւրոց՝ Գրիգորոյ եւ Գրիգորիսի եւ Խոյդանայ եւ Վասակայ, եւ այլոց իշխանաց

---

[1] Արզուխաթունի շինարարական արձանագրութեան բնագիրը տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 198-199, ին՝ 708; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձաններ, էջ 108-110, ին՝ 1։ Տեղին նշենք, որ Հանդաբերդում վերջերս ի յայտ եկած վիմագրում (ժամատան բարաւորի վրայ, 7 տող) կայ Հաթերքի իշխանների մասին մի ուշ յիշատակում. «:ՉԻԵ: թ[ուին] [=*1276 թ.*], Ա[ստուծո]վ շինեցաւ ժամատունս եւ եկեղեցիքս Դ[ուխ]թ վ[արդապ]ետի ձեռաւք: Ազատեցին զսա հաթերքեցիքն յամ[ենայն] չարէ, Ա[ստուա]ծ աւրհնէ զնոսա: Ով խափանէ՝ դատի» (**Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 27; **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը եւ նրա պեղումները, Եր., 2009, էջ 70)։ Վերջին հեղինակները դա փորձում են կապել ԺԳ դ. երկրորդ կէսին մոնղոլների օգնութեամբ իբրեւ թէ հաստատուած ինչ-որ փոքր իշխանատոհմի հետ (տե՛ս էջ 15, 70)։ Սակայն բնագիրը թոյլ է տալիս մտածել, որ իրականում խօսքն ուղղակի *Հախկիհում* եղած հզօր իշխանների մասին է։

[2] **Մխիթար Գօշ**, Գիրք դատաստանի, Աշխատասիրությամբ՝ **Խ. Թորոսյանի**, Եր., 1975, էջ 25, 546, ծն. 33; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., էջ 242-243։

[3] **Մխիթար Գօշ**, Գիրք դատաստանի, էջ 546, ծն. 34։

[4] **Կիրակոս**, գլ. ԺԳ, էջ 209 (փոքր ինչ փոխել ենք կէտադրութիւնը)։

բարեպաշտաց, որդւոց Քրդին..., նաեւ քոյր սոցա, որում անուն էր Արզու Խաթուն՝ կին Վախթանկայ Հաթերքեցւոյ»[1]: Գօշավանքի կաթուղիկէի շինարարական արձանագրութեան մէջ այս նոյն փաստի մասին յիշատակուած է հետեւեալ ձեւով. «*Ի :ՈԽ: [=1191 թ.], զկնի :Դ: ամաց առնլո[յ] զԵ[րուսաղէ]մ Սալահադնին, սկսեալ եկեղեցիս ս[ուր]բ ի Նորո[յ] Գետիկ եւ կատարի յամս :Ե: ... ձեռամբ վ[ար]դ[ապետին] Մխիթարա[յ]..., ձեռնտուո[ւթեամբ] բարեպաշտ իշխանի Վախտանգա[յ] եւ նորին զուգակցի Արզու Խաթունի, եւ նորին եղբարցն՝ Սմպատա[յ], Վասակա[յ], Խոյդանա[յ], Գրիգոռո[յ], Գրիգորիսի, եւ նոցին զաւակացն: Լիցի նոցա պատարագ յեկեղեցիս ի տաւնի Ա[ստուա]ծածնին :Գ: աւուրսն, բայց զ:Ա:՝ Հասանա[յ]՝ հաւր Վախտանգա[յ], եւ զ:Ա:՝ մաւր նոցին Մամին, եւ :Բ:՝ հաւր Արզու Խաթունի՝ Քրդին բարեպաշտին...»*[2]: Նոյն Վախտանգին նուիրած իր «Դատաստանագրքի» օրինակի (իմա՛ Բ խմբագրութեան մայրը՝ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի Ձեռ. հ[այ] 1237) յիշատակարանում Գօշը նշում է. «*...իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ», նաեւ շարունակութեան մէջ՝ «Յիսուս Քրիստոս... նորագեա՛ հոգով եւ մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախտանգ եւ զամուսին իւր զԱրզու Խաթունն ի կեանս անմահս...»*[3]:

Նոյն տարիներին իբրեւ Ներիին Խաչէնի տիրակալ է հանդէս գալիս Վախտանգ Տանգիկը *(կինը՝ Սարգիս Ջաքարեան ամիրսպասալարի դուստր Խորիշահ)*՝ Գանձասարի հոյակերտ տաճարի կառուցող Հասան Ջալալ Դօլայի հայրը եւ որդին «Հասան Մեծի»: Ըստ Կիրակոս Գանձակեցու. «*Այլ եւ բարեպաշտուհի մայր սորա [իմա՛ Հասան Ջալալի], յետ մահուան առն իւրոյ Վախթանկայ [9-10 ձեռ.՝ Վախտանգայ], զոր Տանկիկն [4 ձեռ.՝ Թանկիկն] կոչէին, կարգաւորեաց զերեսին որդիսն իւր՝ զՋալալն եւ զՋաֆարէ եւ զԻւանէ, չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ...»*[4]: Այս Վախտանգը մօտ 1212 թ. ընդօրինակուած Աւետարանի պատուիրատուն է, որի յիշատակարանում ասւում է. «*Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ հրաշապատում մատենիս այսորիկ սրբոյ Աւետարանիս հրամանաւ եւ ծախիւք բարեսէր եւ աստուածահաճոյ առն Վախտանգա[յ], որդւոյ Հասանա[յ], որդո[ւ]յ Վախտանգա[յ], եւ քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի»*[5]: Ի դէպ, շարունակութեան մէջ ասւում է նաեւ. «*Արդ, ես՝ Վախտանգ եւ լծակից իմ Խորիշահ, ըստ կամացն Աստուծոյ քաղաքավարեալ, ծնաք ե-*

---

[1] Անդ, գլ. ԺԴ, էջ 215:

[2] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. VI, Իջեւանի շրջան, էջ 64-65, ճ[այ] 127, լուս. 27: Հրատարակիչները բնագրի թուականը շտապողաբար «1197» են վերծանել: Վախտանգի մօր անուան *Մամիհ* ձեւը կարելի է նաեւ տալ վերականգնումով՝ *Մամ[այ]հ* կամ *Մամ[ախաթուն]հ*:

[3] Տե՛ս **Մխիթար Գօշ**, Գիրք դատաստանի, էջ 548, ծն. 34:

[4] **Կիրակոս**, գլ. Լ, էջ 268:

[5] ՄՄ Ձեռ. 378, թ. 308ա: Հմմ. **И. Орбели**, hАсан Джалал, князь Хаченский, – В кн.: **И. Орбели**, Избранные труды, Ер., 1963, с. 148; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 94:

ռիս ուստերս եւ երիս դստերս...»: Բ. Ուլուբաբեանը այս նշումը՝ ստացողներ Վախտանգի ու Խորիշահի կողմից եկեղեցի կառուցած լինելու մասին («շինեցաք զեկեղեցիս եւ երեւելի սպասիւք զարդարեալ ներքո[յ] եւ արտաքո[յ] եւ հաստահեղուն յաւրինուածովք») իրաւացիօրէն կապում է Մեծարանից Ս. Յակոբավանքի արեւմտեան եկեղեցու պատի վրայ Խորիշահի թողած՝ 1212 թուակիր 12-տողանոց վիմագրի հետ, որում ասուած է. «:ՈԿԱ: թիւ [=1212 թ.]. ես՝ Խորիշահ, ամուսին Վախտա[ն]գա[յ]՝ տէր Խաչենոյ, դուստր մեծին Սարգսի, քոյր Զաքարի եւ Իւանոյ, վերըստին շինեցի զեկեղեցիս Մեծարանից ի փրկութիւն հոգոյ իմոյ, ի բարեխաւս զաւակաց իմոց... զՎախտանգ եւ զիս յաղա[ւ]թս յիշեցէ՛ք»[1]:

Վախտանգի երեք որդիների մասին է նշուած նաեւ Վանենի Խաղբակեանի՝ 1232 թ.՝ վերը բերուած յիշատակարանում («ի տէրութիւն երից հարազատացն՝ բարեպաշտ իշխանացն Զալալին, Զաքարիայի, Իւանէի»)[2], *իսկ Վարդան պատմիչի բնագրում ասուած է նրա երկու որդիների մասին («մեռաւ... եւ միւս Վախթանկն Սակռեանց՝ փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչենոյ՝ թողլով երկու տղայս»)*[3]: *Ընդ սմին, Գանձասարի կաթուղիկէի շինարարական՝ 1240 թուակիր վիմագրում (թէպէտ նրանում նշուած է՝ «...աւարտումն եղեւ շնորհաւք ողորմութեամբ ամենայգութ Տեառն :ՈՁԷ: թվի [=1238 թ.]») յիշուած են Վախտանգի ու Խորիշահի չորս որդիները՝ «Զալալ Դաւլայ Հասան», «Զաքարէ», «Դաւլայ», «Իվանէ» հերթականութեամբ, եւ վերջինից առաջ՝ միակ դուստրը՝ Մարինը (=Մարինէ. «:Ա: շաբաթն՝ իմ քուերն Մարինո[յ]»)*[4]: *Դրանից բխում է, որ Վախտանգի չորրորդ որդին՝ Իւանէն, ծնուել է Վանենիի՝ խնդրոյ առարկայ յիշատակարանը գրելուց յետոյ, ուրեմն, ենթադրաբար, 1212-ի եւ 1214-ի միջակայքում: Իսկ նրա 3 դուստրերից երկուսն էլ պէտք է վախճանուած համարուեն մինչեւ 1238 թ.: Եւ իրօք, Գանձասարի երկու պահպանուած, 1202 թուակիր խաչքարեր կանգնեցուել են իշխանի վաղամեռիկ զաւակների շիրիմների վրայ: Դրանցից մէկի ստորին կտորը, որ հետագայում իբրեւ սալաքար դրուել է գաւթում, ունի 6-տողանոց հետեւեալ տապանագիրը. «Ես՝ Վախտան/գ, որդի Հասա/նա[յ] կանգնեց/ի զխաչս ի տա/պանի որդոյ իմոյ. [յ]աղ/աւթս յիշէ՛ք. {թուին} :ՈՄԱ: [=1202 թ.]». միւս խաչքարի պահպանուած ստորին կտորի (տաճարի հիւսիսային պատի տակ դրուած) կիսատ տապանագրում խաչի հորիզոնական թեւի վերեւում երկուական տողով՝ «Թի/ւն / :ՈՄ/Ա:» նշումից յետոյ առկայ է տառացիօրէն նոյն բնագիրը, սակայն այն պակաս է մնում 4-րդ տողի «ի տապան/{ի...}» բառերից յետոյ*[5]: *Պարզ է, որ դրանցից յետոյ բնագրում դժուար*

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 12, ին 2: Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 143-144:

[2] Տե՛ս **Գարեգին Ա կթղ.**, Ցիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, սն. 881-883; **նոյնի՝** Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 14-15; 343-344; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 182:

[3] **Վարդան**, էջ 184:

[4] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 38-40, ին 82, լուսանկ.՝ տախտ. X:

[5] Անդ, էջ 63, ին 172 եւ էջ 67, ին 187:

չէ վերականգնել «դստեր իմոյ...» բառերը: Իսկ ինչ վերաբերում է առաջին տապանագրին, ապա կա՛մ պէտք է հաւանական համարուի, որ փորագրողը, «որդոյ իմոյ» ասելով, այնուամենայնիւ, նկատի է ունեցել Վախտանգի մանկահասակ դուստր զաւակին, կա՛մ պիտի ենթադրենք, թէ 1212-1214-ի երկամեայ միջակայքում ծնուել են իշխանի երկու կրտսեր որդիները, այսինքն՝ ոչ միայն Իւանէն, այլեւ՝ Դօլան: Տեղին նշենք նաեւ, որ դժուար է ընդունել Բ. Ուլուբաբեանի կարծիքը, թէ 1202 թ. վախճանուած որդին կարող էր լինել Դօլան, քանի որ Գանձասարի՝ 1240 թուակիր շինարարական վիմագրում վերջինիս յիշատակումը, ըստ էութեան, անհաւանական է դարձնում նրա վաղամեռիկ լինելը[1]: Բայց վերջին հանգամանքը չի բացառում Դօլայի (որի երկրորդ անունը, ինչպէս կը տեսնենք ստորեւ, Սմբատ է եղել) վախճանուած լինելը մինչեւ 1232-ին Վանենի Խաղբակեան իշխանադստեր յիշատակարանի գրուելը, որում թուարկուած են նրա միայն երեք եղբայրները («ի տէրութիւն երից հարազատացն... Ջալալին, Ջաքարիայի, Իւանէի»):

Արդ՝ ըստ Վարդան պատմիչի վկայութեան՝ երկու Վախտանգները վախճանուել էին միեւնոյն տարում. «Ի ՈԿԹ թուին [=1214 թ.] ... մեռաւ Վախթանկ՝ բուն տէր նորա [իմա՛ Հաթերքի], եւ որդիքն իւր տարաժամ, եւ միւս Վախթանկն Սակռեանց՝ փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչենոյ՝ թողլով երկու տղայս...»[2]: Ժամանակին Յ. Օրբէլին զգուշօրէն փորձ կատարեց՝ ցոյց տալու ԺԹ դ. մասնագէտների մօտ այդ երկու Վախտանգներին չտարանջատելու հետ կապուած լուրջ խնդիրները[3]: Ջարմանալիօրէն, դրան ի պատասխան՝ արդէն Հր. Աճառեանի ու Գար. Յովսէփեանի, ապա եւ Խ. Թորոսեանի, Բ. Ուլուբաբեանի ու նրանց հետեւորդների ջանքերով պատմագրութեան մէջ բաւականին անզգուշաբար ներմուծուեց մի ծայրայեղացուած դրոյթ՝ իբրեւ թէ տարբեր անձինք են եղել նաեւ Հաթերքի իշխանաց իշխանի հայրը՝ «Վախտանգի որդի Հասան Կրօնաւորեալը», եւ Ներքին Խաչէնի Վախտանգ Տանգիկի հայր Հասան Մեծը, ով իբրեւ թէ «Սակռ» կոչուած մի այլ Վախտանգի որդին էր[4]:

Սակայն այսօր աւելի ամբողջական աղբիւրագիտական նիւթի հիման վրայ հարկ է ուղղել նշուած վրիպումը: Ժամանակին դեռեւս Մարի Բրոսէն եւ Մակար Բարխուդարեանցը նկատել էին (թէկուզ եւ որոշ չափով խառնակ ձեւով), որ Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգը եղել է նոյն Հասան Կրօնաւորեալի պարզապէս երկրորդ կնոջ՝ Կիւրիկէ թագաւորի դուստր Մամախաթունի որդին, իսկ Ներքինխաչէնցի Վախտանգ Տանգիկը՝ նրա առաջին կնոջ՝ Բաղաց արքայադուստր Կա-

---

[1] Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 141:

[2] **Վարդան**, էջ 184:

[3] **И. Орбели**, hАсан Джалал, князь Хаченский, с. 147, 163.

[4] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 53-54; **Գ. կաթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 167, ծն. 2; **Մխիթար Գօշ**, Գիրք դատաստանի, էջ 546-549 (ծն. 34); **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 135-152: Հմմ. նաեւ նորագոյն աշխատանքներում՝ **Է. Լ. Դանիէլեան**, Գանձասարի պատմութիւն, էջ 99; **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 16-17, 62:

տայ – Թագուհու զաւակը[1]: Այս դիտարկումը փորձել է մերժել (եւ խիստ անյաջող հիմքերով) դեռ Կարապետ եպ. Տէր-Մկրտչեանը[2], բայց այն անվերապահօրէն ընդունուել է Կ. Թումանովի կողմից, ապա մասամբ նաեւ՝ Բ. Ուլուբաբեանի[3]: Որ Կատան վաղ է հեռացել կեանքից, երեւում է 1181 թ. մահացած նրա խաթուն դստեր տապանագրից՝ Գանձասարի Ս. Յովհաննէս կաթուղիկէի հիւսիսային պատի տակ կանգնած մեծադիր խաչքարի վրայ, որը 6 տողով ասում է. «Թի/ւն / :Ռ.: էր [=1181 թ.]: Ես՝ Հասան, որդի Վախտա/նգա[յ], կանգնեցի զխաչս ի տապան/ի դստեր ի-մո[յ] խաթունին եւ մաւր ի/ւր Թագուհո[յ]՝ դստեր Թագ[ա]վորին Բաղաց»[4]: Ուշադիր ընթերցումից երեւում է, որ հայրն իր դստեր մօրը կարող էր «ամուսին իմ» չանուանել (փոխարէնը՝ «մաւր իւր Թագուհո[յ]») միմիայն այն դէպքում, եթէ տուեալ պահին նա կենդանի չէր, իսկ իր «պսակեալ ամուսինն» արդէն ուրիշ կին էր (այն է՝ Մամախաթունը): Իսկ որ Խաչէնի իշխանուհի, Բաղաց Թագաւորի դուստր Կատան կարող էր նաեւ պարզապէս «Թագուհի» կոչուել (առանց բուն անուան նշման), երեւում է մօտակայ զուգահեռից. Տրտուի աջ ափին գտնուող Ս. Աստուածածին վանքի վիմագրերում Հասան Մեծի երկրորդ կին Մամախաթունը կոչուած է ե՛ւ «Մամայ Թագուհի» (ինչպէս Դադիվանքի կորած վիմագրում էր), ե՛ւ պարզապէս (երկիցս)՝ «Թագուհիս՝ դուստր Կիւրիկէ Թագաւորի»[5]: Ի դէպ, իբրեւ վարկած, հնարաւոր է մտածել, որ Հասանի աւագ որդի Վախտանգի՝ Տանգիկ (Թանգիկ) մականունը կապ ունի, գուցէ, ոչ թէ իր անուան երկրորդ կէսի հետ՝ Վախ-տանգիկ (ինչպէս աւանդաբար ենթադրուել է մինչ այժմ[6]), այլ իր մօր անուան մի տարբերակի՝ Թագուհի – *Թագիկ – Թանգիկ:

Թւում է, թէ կատարուած քննութիւնից յետոյ որեւէ հիմք չի մնում՝ կասկածելու, որ միասնական Խաչէնի բաժանումն աւելի փոքր իշխանութիւնների (Ներքին ու Վերին Խաչէն, Ծար եւն) կապուած է եղել լոկ 1182 թ. Հասան Մեծի՝ կրօնաւոր դառնալու, այլ ոչ թէ դրան նախորդած ինչ-որ անորոշ ժամանակի ու անորոշ հանգամանքների հետ, ինչպէս փորձել է ամփոփել Բ. Ուլուբաբեանը[7]: Հասանն էր, որ կեանքի մայրամուտին, իր իսկ եւ իր կնոջ վկայութեամբ, աշխարհիկին նախընտրեց կրօնաւորեալի կենցաղավարութիւնը եւ իր վեց որդիներին բաժանեց (թէպէտ եւ ոչ հաւասարաչափ) իր «գաւառը» («հայրենիքը»), «բերդերը» եւ «հողանիւթը»: Վերջին եզրոյթն, ի դէպ, Դադիվանքի վիմագրերին եւ ժբ-ժէ դդ. տարբեր փաստաթղթերի յանգող (ցաւօք, սխալաշատ ու խառնակուած) մի ուշ, բայց ուշա-

---

[1] **M. Brosset**, Histoire de la Siounie par Stéphannos Orbélian, t. II, S.-Pétersbourg, 1866, p. 158; **Մ. եպ. Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, էջ 140:

[2] **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1914, էջ 49-52:

[3] **C. Toumanoff**, Manuel de généalogie, p. 238; **Բ. Ա. Ուլուբաբյան**, Գանձասար, էջ 155:

[4] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 67, ին 186:

[5] Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 77-78:

[6] Տե՛ս, օր.՝ **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 140; **Է. Լ. Դանիէլեան**, Գանձասարի պատմութիւն, էջ 87, ծն. 360:

[7] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 123 եւ յետոյ:

գրաւ նիւթեր պարունակող կալուածագրից է, որի բաժիններից մէկում ի մասնաւորի արձանագրուել է. «Ես՝ Հասան՝ որդի Վախտանկա[յ], եւ եղբայր իմ Գրիգոր՝ առաջնորդ սուրբ ուխտիս ըստ[ը] Դատէի վանիցս եւ սակս...[ը] Սմբատ եւ եղբարքս մեր բաժանեալ տաք զՄեծն Խաչէն...[ը] Սակառա[յ] եւ երկիրս Ծար ի Վերին Խաչէն տվաւ Հասանայ, եւ կանգնեցաք խաչ մի Մատաղիսոյ վերն, բոլոր բթին սահման Խաչենոյ եւ Ծարայ: Ես՝ Հասան կացի աւաւրութեան ամս քառասուն, եւ եղեւ ինձ Զ որդիս, եւ շինեցի Գ [resp. Դ] բերթս՝ Հաթերքաբերթ, Զիջաբերթ, Հաւախաղացին եւ Դաշտաբերթ: Զբերթերս եւ զգաւառս ետու որդոց իմոց եւ ես եկի ի վանքս՝ մօտ տէր Գրիգորի եւ տէր Աթանիսի եւ եղէ կրօնաւոր. եւ երկրիս հողանիւթն այս է՝ Հաթերքոյ գետն ի վեր...»[1]:

Պարզ է, որ «հողանիւթի», «բերդերի» ու «գաւառի» այս բաժանումով Մեծ կամ Ներքին Խաչէնում (Խօխանաբերդ/Խաչինաբերդ նստոցով ու Գանձասարի վանքով) հաստատուել է Թանգիկ Վախտանգը, իսկ Վերին Խաչէնում (Հաթերքաբերդ՝ իշխանաց իշխանի նստոցով ու Դադիվանքով)՝ նրա կրտսեր եւ մօր կողմից խորթ, համանուն եղբայրը: Սակայն հայրն ինչո՞ւ էր վերջինիս եւս կնքել նոյն Վախտանգ պապանունով. թւում է, թէ այս արտառոց փաստը պէտք է համադրուի Հաթերքի իշխանապետական նոր կենտրոնի ձեւաւորման բազմանշանակ իրողութեան հետ եւ, թերեւս, մեկնաբանուի Հասանի երկրորդ ամուսնութեան՝ ոչ այնքան անձնական, որքան ինչ-որ մի «քաղաքական» պարտաւորուածութեան համատեքստում: Այս առթիւ զուգահեռներ փնտրելով՝ կարելի է յիշել հեռաւոր Կիլիկիայի մասին Լեւոն Տէր-Պետրոսեանի վերջին հիմնարար աշխատութեան որոշիչ դիտարկումը. «Մեծ հօր եւ անդրանիկ թոռան անունների նոյնութիւնը քարացած աւանդոյթ էր հայ միջնադարեան ազնուական գերդաստաններում: Յամենայն դէպս Ռուբինեան եւ Հեթումեան ընտանիքների ազգաբանութիւնն այս առումով համարեա բացառութիւն չի ճանաչում. բոլոր այն դէպքերում, երբ հաստատուած է, որ թոռն անդրանիկն է, նա անպայման կրում է պապի անունը»[2]:

Հասան Մեծի կողմից իր միաանական իշխանութիւնը մաս-մաս անելու արտառոց փաստի պատճառների ու գնահատականի հարցում, թերեւս, կարող են լինել ամենատարբեր վարկածներ: 1182 թ. «յազուաշատ աշխատութեամբ» կանգնեցրած իր «խաչաքարի» ձախ նիստին Հասանը թողել է գաղտնագիր (վերծանուած Համլետ Պետրոսեանի կողմից)[3], որն ակնարկում է լոկ անհատի հոգեվիճակից բխող պատճառ: Նրա սկիզբը յուշում է, որ դա, գուցէ, ինքնագիր է. «Ձեռնայգիր է իմ՝ Հասանայ» (տառերը՝ խաչքարի թիկունքի վիմագիրը փորագրողի երկաթագիրը չեն եւ, ասես, լինեն շղագրով քերծած): Ապա Հասանը գրում է. «Եղ-

---

[1] **Ս. Քամալեան**, «Աղվանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի... մի ղաբալա, էջ 153:

[2] **Լ. Տեր-Պետրոսեան**, Խաչակիրները եւ հայերը, հտ. Բ, Եր., 2007, էջ 79: Հմմ. նաեւ **Կ. Մաթեւոսեան**, Անիի ազնվականության պատմությունից, էջ 23-24:

[3] Տե՛ս **Հ. Պետրոսեան**, Դադի վանքի ծածկագիր արձանագրութիւնը, – «Իրան-Նամե», 1998, հմր 1-3, էջ 38-40; **Ս. Կարապետեան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 118, լուսանկ.՝ էջ 119:

բա՛յրք, զգաստ կացա՛յք, ես յաշխարհայս չե տարա[յ] ոչինչ, դուք այլ չտանի՛ք»։ Ուշագրաւ են նաեւ Վաղուհասի եկեղեցու մէջ հիւսիսային պատի 9-տողանոց վիմագրի արտայայտութիւնները. «։ՈԼԲ։ թուականութեանս / Հա[յ]ոց [=1183 թ.] եւ հայրապետութե/ա՛նս տէր Գրիգորո[յ], ես՝ Հասան, / որդի Վախտանգա[յ], շինեցի / զեկեղեցիս {բարեխաւս՞} վա/սն յանցանաց իմոց հատութե/ա՛ն եւ իմ հոգոյ արարեն {...}. առ/աջ՝ {որ երկր}պագանէ՛ք՝ Հասա/նա[յ] յաղաւթս յիշէ՛ք {...}»[1]։

Վերեւում տեսանք, որ Հասան Մեծը կարող է նոյնացուել այն «Հասան Գեռաքարեցի» (ինչպէս իրաւացիօրէն գտնում են՝ Գառնաքար գիւղից, Խօխանաբերդի տակ) խաչէնեան իշխանի հետ, ով, ըստ Ստեփաննոս Օրբէլեանի՝ ամուսնացել էր Բաղաց Գրիգոր Բ թագաւորի «միակ» դուստր Կատայի հետ («Գրիգորն, որ իշխէր Բաղաց, ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի՝ Հասան անուն, ի Գեռաքարեցեացն, եւ ետ զդուստր իւր Կատայն նմա ի կնութիւն»). երբ իր աներն ու նրա Սմբատ եղբայրը նոյն տարում մահացան, Հասանը 4 տարի եղաւ Սիւնեաց թագաւորը, իսկ Բաղաբերդի անկման նախօրէին ընտանիքով հազիւ հեռացաւ «...ի գաւառ իւր եւ ի տուն ի Խաչէն [var. Խաչէնք]»[2]։ Նշենք նաեւ, որ որոշ վիմագրեր Հասան Ջալալին կոչում են «Թոռն Բաղաց թագաւորին»[3]։ Ճիշտ է, այդ բնորոշումը յաճախ վերագրել են իր կողքին նշուած կնոջը՝ Մամքանին, բայց դատելով անունից՝ վերջինս իրապէս Լօռուց էր ու, թերեւս, Դսեղի Մամիկոնեաննների տոհմից, մեր ճշտմամբ՝ դուստրը Սարգիս Ա Մամիկոնեանի ու Սթէ տիկնոջ Թոռ Ասլանբէկի[4]։

Յաւելենք, որ Գանձասարի շքեղ տաճարը կառուցած իշխանը վիմագրերում կոչուած է ե՛ւ «Հասան», ե՛ւ «Ջալալ», ե՛ւ «Դաւլա», ե՛ւ «Հասան Ջալալ», ե՛ւ «Ջալալ Դաւլա» (Դովլա)։ «Դիւան»-ի V պրակ մտած բազմաթիւ վկայութիւններին վերջին տարիներին աւելացել են Առաջաձորի նորայայտ (Համլետ Պետրոսեանի վերծանած) 10-տողանոց վիմագիրը («Թվի՛ն ՈՂՀ [=1257 թ.]։ Իշխանութի՛ւն Ջալալ/ին, պատրոնութե՛ամբ Հասանայ, / ես՝ Սահլուն, գնացել եմ ի Մուղո/ւդն[5] ու գնացել եմ ի Սոնեթ ու գն/ացել եմ ի Կասարիայ, ու ։Բ։ հետի / ի առագմ եմ մտել ու խաղաղութ/ի՛ւ դուս եկել։ Կանգնեցի խաչս ինձ եւ ա/մուս[ն]ոյ իմո[յ]. յաղաւթս յիշ/է՛ք. յաղաւթս յիշեցէ՛ք»)[6] եւ Բերձոր քաղաքից 35 կմ հիւսիս՝ Արջաձոր գիւղի՝ խաչերով

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 113, ին՝ 373։

[2] *Օրբ.*, գլ. Կ, էջ 247; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԿԱ, էջ 337։

[3] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 29, ին՝ 59 (Կոշիկ անապատ), էջ 40-41, ին՝ 83 (Գանձասարի գաւթի մէջ, տաճարի արեւմտեան պատին. «...Ես՝ Ջալալ / Դաւլայս, որդի Վախտանգա[յ], կողմնակալ Ա/րցախայ, եւ ամուսին իմ Մամքան, թոռն Բաղուց / թագաւորին, եւ հարազատ որդին իմ Աթաբակ Իւա/նէ...»), էջ 80, ին՝ 239 (Վաճառ. «Ես՝ Մամքան, ամուսին Ջալալ Դաւլին, թոռ[ի]ն Բաղ/աց թագաւոր[ին], շինեցի զեկեղեցիս...»)։

[4] Տե՛ս ստորեւ, էջ 347-349։ Այս *Մամքան* անունը «սիրեցին» նաեւ Արագածոտնում, երբ Վաչուտեան Քուրդ իշխանի կինը դարձաւ Սարգսի որդի Մարծպանի դուստր Խորիշահը։

[5] Թերեւս, ԺԳ դ. այս անունը վերծանելի է *Մուղուգ* (հմմ. բոլորագիր ȝ → յ եւ գ → դ), որը յուշում է չեչենների *Մըչըգիշ/Միչիկիչ* անուանումը (**Н. Г. Волкова**, Этнонимы и племенные названия Северного Кавказа, Москва, 1973, с. 143-144; **А. Бакиханов**, Гюлистан-Ирам, с. 6, 194)՝ զուգորդուելով *Իչկերիա*-ին (վերոնշեալ «Մ-» տեղանուանակերտ նախածանցով)։

[6] Տե՛ս **Г. А. Петросян**, Новонайденный хачкар из Арачадзора, – ВОН, 1991, № 4, с. 147.

ժայռակոթողի 9-տողանոց բնագիրը՝ վերծանուած Սամուէլ Կարապետեանի կողմից («ի թ[ո]ւիս / ՈՁԴ։ [=1235 թ.], / թագա/ւորութ[եամ]բ / Ջալալիս, ե/ս՝ Սարգիս, կանգ[ն]եց/ի խաչս զայս ինձ եւ ամ[ու]ս/նոյ իմո[յ]. յաղաւթս / յիշեցէ՛ք»)[1]։ Ինչ վերաբերում է մեր իշխանի եւ նրա բազմաթիւ ժամանակակիցների երկանուանութեան երեւոյթին (որոշ դէպքերում՝ անգամ եռանուանութեան), ապա կարելի է կրկնել իր նոր աշխատանքի «Գրիգոր Ապիրատ երկանունը» ենթագլխում անուանակոչման տուեալ տարբերակին մանրամասնօրէն անդրադարձած Կարէն Մաթեւոսեանի[2] որոշիչ դիտարկումը. «Երկանուանութեան երեւոյթի տեսական վերլուծութիւնը գտնում ենք ժամանակի հանրայայտ գիտնական իշխանի՝ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու (Բջնեցու) «Մեկնութիւն քերականին» գործում, որտեղ նա գրում է՝ «Երկանուն է, որպէս անունք երկու եղեալ ի վերայ միոյ մարդոյ», ապա մի օրինակ բերելով Աստուածաշնչից՝ «Եղիազարոս Աւարան», պարզաբանում է, որ երկու անունները միշտ միասին չեն գործածւում, կարող է նշուել մէկը կամ միւսը՝ «...Եղիազարոս, նոյն եւ Աւարան կարէ կոչիլ»[3]։

Խաթունի՝ 1181 թ. տապանագիրը քննելիս Հասան «Մեծի» ու «Գեռաքարեցու» նոյնութիւնը, ի վերջոյ, ընդունում է նաեւ Բ. Ուլուբաբեանը. «Առաւել հիմնաւոր է ճանաչւում Գարեգին Յովսէփեանի կարծիքը, որի համաձայն՝ Հասանը պէտք է լինէր Գեռաքարի տէր Խաղբակեաններից, եւ նրա արձանագրութիւնները էլ պահպանուել են Գեռաքարի կողմերում՝ նրան ներկայացնելով իբրեւ Խաղբակեան Ջաջուռի եղբօր եւ Խաղբակի որդու (Գ. կաթ., Խաղբակեանք..., Անթիլիաս, 1969, էջ 16, 41)։ Սակայն յիշեալ վարկածներից եւ ոչ մէկը չի հիմնաւորւում աղբիւրագիտական ստոյգ նիւթերով։ Եւ ահա այս խաչքարի արձանագրութիւնը գալիս է հաստատելու, որ Բաղաց Կապան թագաւոր գնացած-վերադարձածը, որն ամուսնացել էր Բաղաց թագաւորի դստեր հետ, եղել է Խօխանաբերդի տէր Վախտանգի որդի Հասանը։ Ստ. Օրբէլեանի կողմից նրան տուած «գեռաքարեցի» որոշիչը չի խանգարում մեր տեսակէտին, քանի որ Գեռաքարը (ներկայումս՝ Գառնաքար) գտնւում է Խօխանաբերդի մօտ եւ մտնում էր Խօխանաբերդի կամ Ներքին Խաչէնի իշխանութեան տիրոյթների մէջ։ Ջարմանալի չէ նաեւ Ստ. Օրբէլեանի կողմից Թագուհուն տրուած Կատա անունը։ Պէտք է մտածել, որ կա՛մ Բաղաց թագաւորի դուստրն ունեցել է կրկնակ անուն, կա՛մ էլ պատմիչն է անունը շփոթել... Նոյն Օրբէլեան պատմիչի միւս տեղեկութիւններից գիտենք, որ միայն Գրիգոր Թագաւորի միակ դուստրն է ամուսնացել Խաչէնի իշխանազունի հետ, որի անունն էլ եղել է Հասան»[4]։

Յաւելենք, որ Ստեփաննոս Օրբէլեանը Բաղքում Հասանի քառամեայ գահակալումը թուագրում է 1166-1170 թթ.[5], ինչը հակասում է «խաչվիմի» եւ Մամախա-

---

[1] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 173 (մեր որոշ ճշտումներով)։
[2] **Կ. Մաթեւոսյան**, Անիի ազնվականության պատմությունից, էջ 16-21։
[3] Անդ, էջ 19 (յղում է տրւում՝ **Գրիգոր Մագիստրոս**, Մեկնութիւն քերականին, Ներածութիւնը եւ բնագիրը՝ **Գ. Մուրադեանի**, – ՄՀ, հտ. ԺԶ, ԺԱ դ., Եր., 2012, էջ 445)։
[4] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Գանձասար, էջ 155։
[5] **Օրբ.**, գլ. Կ, էջ 246-247; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԿԱ, էջ 335-337։

թունի վիմագրի բառերին՝ 40 կամ 30 տարի խաչէնում «յաւագութեան» լինելու մասին (=1143-1182 կամ 1153-1182 թթ.): Սակայն նկատելի է, որ Բաղաց պետութեան անկման պահի մասին սիւնեցի պատմիչի տուեալները որեւէ այլ աղբիւրագիտական հաստատում չունեն եւ կարող են դիտուել իբրեւ՝ իրականից մինչեւ 1,5 տասնամեակով շեղուող: Դժուար է, օր.՝ առանց վերապահման ընդունել նրա մատուցած պատկերը, ըստ որի՝ Գրիգոր Բ-ի «նուազ եւ ընդաղօտ»[1] թագաւորութիւնը տեւել է աւելի քան 70 տարի՝ 1094/1096-1166 թթ.: Վահանավանքի վերջին տարիների պեղումներից գտնուած տապանագրերը ցոյց են տալիս, որ իրական ժամանակագրութեան հետ Օրբէլեանի պատկերացումները մեծ շեղումներ ունեն նաեւ նախորդ արքաների ժամանակի դէպքում[2]: Նշելի է, որ պատմիչը, հաւանաբար, սխալուել է նաեւ Գրիգոր Բ-ի «միակ» դստեր մասին իր պնդման մէջ: Բանն այն է, որ Արագածոտնի Յովհաննավանքի վիմագրերից մէկն ունի հետեւեալ բնագիրը. «Թուին :ՈՒԷ: [=1178 թ.]. ողորմութ<u>եամբ</u> Ա<u>ստուծո</u>յ, ես՝ Շուշիկ, դուստր Գրիգորո[յ] թագաւորին Բաղաց, հալածեալ ի մերմէ գաւառէ, եկի յաշխարհս Հայոց, ի վանս Յոհանու, յորում զկատարումն եւ զթաղումն առի մարբ իմով»[3]: «Զկատարումն եւ զթաղումն առի» խօսքերից բխում է, որ Գրիգորի, ըստ ամենայնի՝ կրտսեր եւ Օրբէլեանին անյայտ մնացած դուստր Շուշիկը մահացել է հայրենիքից հեռու՝ Արագածոտնում, 1178-ին, դրանից առաջ վախճանուած է եղել նաեւ իր մայրը («մարբ իմով»), որի անունը, ցաւօք, չունենք, իսկ տապանագիրը գրել են Շուշիկին յուղարկաւորողները (թէպէտ եւ առաջին դէմքով, նորոգ հանգուցեալի անունից):

Ընդ սմին, Մխիթար Գօշը խոսրով Գանձակեցու վկայաբանութեան մէջ նրա նահատակութեան տարին՝ 1167 թուականը, նշում էր նաեւ Հասան Մեծի ժամանակով. «Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յաշխարհն Առանայ, ի մայրաքաղաքն, որ կոչի Գանձակ, ի թուականին ՈԺԶ [=1167 թ.] ... յիշխանապետութեանն Հասանայ, որդւոյ Վախտանգայ՝ կողմանցն Խաչէնոյ...»[4]: Աւելի վաղ՝ 1163-ը իբրեւ նրա իշխանութեան թիւ է նշուած Հաւապտուկի մի եկեղեցու բարաւորի 9-տողանոց վիմագրում՝ թէկուզ եւ գրականութեան մէջ յաճախ (բայց յանիրաւի) քննառու համարուած, քանի որ կինը կոչուած է ոչ թէ Մամայ, այլ Մամխան անուանատարբերակով. «Թիւն :Ո/ԺԲ: էր [=1163 թ.]: Յիշխանու/թեան Հասանա[յ]՝ որդո[յ] Վախտ/անգա[յ], եւ ամուսնո[յ] նորա Մամխա/նա[յ], ես՝ Յոհան քվերորդի տէր Գրիգ/որո[յ] եւ Գեորգ եղբաւրորդի եւ այլ միա/բանքս շինեցաք զեկեղեցիքս...»[5]: Հաւա-

---

[1] Հմմ. **Օրբ.**, գլ. ԾԸ, էջ 235; Պատմութիւն Նահանգին Սիսական, գլ. ԾԹ, էջ 320-321:

[2] Բաղաց արքայացանկի առաւել հաւաստի տարբերակը տե՛ս **Գ. Մ. Գրիգորյան, Ս. Գ. Հախվերդյան**, Սյունիքի պատմություն (հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը), էջ 79; **Գ. Մ. Գրիգորյան**, Սյունիքի թագավորութիւնը (X-XII դարեր), էջ 144:

[3] **Կ. Ղաֆադարյան**, Հովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները, Եր., 1948, էջ 77, ճ^ր 4:

[4] Տե՛ս Հայոց նոր վկաները (1155-1843), էջ 31:

[5] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 33, ճ^ր 70: Հմմ. **Գ. կաթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 15:

նական է, որ Հասան Մեծն է դրել Գանձասարի նաեւ այն խաչքարը, որի կոտրուած ստորին մասում առկայ է 1174 թ. վիմագրի հետեւեալ 3-4-տողանոց սկիզբը. «Թիւն ՈՀԳ [=1174 թ.]. ես՝ Հա/սանս, կանգ/{նեցի...}»[1]: Ի դէպ, գուցէ, վերջերս Հասանի հայր Վախտանգի 6-տողանոց տապանագիրն է ընթերցուել Դադիվանքի փոքր գմբեթաւոր եկեղեցու արեւմտեան ճակատի մէջ դրուած ոչ մեծ խաչքարի վրայ. «Թիւն ՈՒԱ [=1172 թ.]. ես՝ աղբայր, կանգն/եցի զխաչս հաւր իմ / Վախտանգա[յ]. որք {.../...}, յաղաւթս / {յիշեցէ՛ք}»[2]: Իհարկէ՝ սա այն դէպքում, եթէ բնագրի «աղբայր»-ը միջնադարում հանդիպող Եղբայր անձնանունը չէր[3] («Դիւան»-ի արցախեան պրակում այն չկայ), եւ նրա տակ հնարաւոր է ընկալել Խաչէնի «տէր» կամ «աւագ» Հասան Մեծի եղբօրը, այսինքն՝ Գրիգորէս վանահօրը:

Բերուած տուեալներին, ինչպէս վերեւում նշեցինք, հակասում է միայն Գրիգոր Մեծի կնոջ՝ Նրջիսի արձանագրութեան՝ 1174 թուականը, եթէ, իհարկէ, լիովին վստահում ենք նրա «ՈՒ.Գ:» ընթերցման հաւաստիութեանը. երկրորդ տառը՝ իր յաջորդող կէտով, մի փոքր տարբերւում է բնագրի միւս Ի-երից եւ, գուցէ, կարող է դիտարկուել իբրեւ կցագիր «և» դրելու անյաջող փորձ («*ՈևՀ Գ» =1154 թ.): Իսկ հակառակ դէպքում պէտք է պարզապէս վերապահումով վերաբերուել Հասան Մեծի՝ 1182-ին նախորդած «աւագութեան» 40 կամ 30 տարիներին եւ այդ բառի տակ հասկանալ ոչ թէ Խաչէնի իշխանապետութիւնը («տէր-ութիւն»-ը), այլ լոկ պապական ընտանիքում, այսինքն՝ Գրիգոր Մեծի ու վերջինիս, անշուշտ, կրտսեր եղբայր Վախտանգի (գրականութեան մէջ, սկսած Եսայի Հասան-Ջալալեանցից, կոչուած՝ «Սակռ») բոլոր որդիների մէջ «աւագի» ու, գուցէ, խնամակալի յարգը վայելելու իրողութիւնը: Բայց համադրելով առկայ բոլոր տուեալները՝ կարելի է մտածել, որ Խաչէնի «երիտասարդ տէր» Վախտանգ եղբօրորդու իշխանապետութեան օրօք (մօտ 1150-1174 կամ թէկուզ աւելի կարճատեւ միջակայքում) Հասանն ամեն դէպքում, շնորհիւ իր զինական քաջութեան («շատ պատերազմաւ եւ յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբն Աստուծոյ») ու կեանքի լուրջ փորձառութեան (4 տարի եղել էր Բաղքի թագաւորը), հեռու չի կանգնել մեծ գործերից եւ, ի դէպ, ամենայն հաւանականութեամբ, հէնց այդ տարիներին է ձեռնարկել՝ իր նստոցը հաստատելու հաթերքում (թերեւս, արդէն երկրորդ ամուսնութիւնից յետոյ):

Այսպիսով, թւում է, թէ կարելի է ամփոփել, որ Հասան Մեծ Կրօնաւորեալը, ամենայն հաւանականութեամբ, եղել է որդին՝ Հերքանի ճակատամարտում զոհուած Խաչէն-Խօխանաբերդի իշխան Գրիգոր Մեծ Վասակեանի կրտսեր եղբայր Վախտանգի (եւ Շուշիկի), որի բուն կալուածքը Գառնաքար/Գեռաքարում էր: Պատանի հասակում հրաւիրուելով Սիւնիք եւ ամուսնանալով Բաղաց արքայադուստր Կատայի հետ՝ նա շուտով թագադրուել է Բաղաց թագաւոր, ապա 4 տարի անց՝ Բաղաբերդի անկման օրերին, ստիպուած է եղել վերադառնալ հայրենի Խա-

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 67, ՀՄ 185:
[2] Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 115, լուսանկ.՝ էջ 92:
[3] Հմմ. **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 73:

չէն: Թերեւս, մանկահասակ զաւակներ թողած Գրիգոր հօրեղբօր զոհուելուց յետոյ (մօտ 1150-1154 թթ. միջեւ) նա ստանձնել է պապական տոհմի «աւագութիւնը», իսկ ինչ-որ ժամանակ անց՝ նաեւ Խաչէնի իշխանապետութիւնը: Իր Վախտանգ (Տանգիկ) եւ Խաթուն զաւակների մօր՝ Կատայ – Թագուհու վաղաժամ մահուանից յետոյ Հասանը երկրորդ անգամ ամուսնացել է Մածնաբերդի Կիւրիկէ Գ Թագաւորի դուստր Մամախաթունի հետ եւ ունեցել եւս 6 որդիներ, որոնցից աւագին կրկին կնքել է հօր անունով՝ Վախտանգ: 1182 թ. նա սքեմ է հագել ու մտել Դադիվանք՝ իր Գրիգորէս եղբօր եւ Գրիգոր որդու մօտ, իսկ երկիրը բաժանել է միւս վեց որդիներին՝ ներառեալ առաջին կնոջից ունեցած Տանգիկ-Թանգիկ Վախտանգին, սակայն իշխանապետութեան իրաւունքը փոխանցել է Հաթերքի տէր կրտսեր Վախտանգին: Ընդ սմին, վերջինս 1214 թ. վախճանուեց անժառանգ, եւ Խաչէնի իշխանապետութիւնը վերստին անցաւ Խօխանաբերդի տիրակալին՝ Վախտանգ Տանգիկի որդի եւ «Բաղաց Թագաւորի թոռ» Հասան Ջալալին:

Բաժին 2
ՇԱՐԻ ԻՇԽԱՆԱՃԻՒՂ ԺԳ ԴԱՐՈՒՄ (ԴՕՓԵԱՆՆԵՐ)

Հասան Մեծի այս «խճճուած» խնդրի պարզաբանումից յետոյ էական ճշտելիք կայ նաեւ Դօփեան կոչուած (աղբիւրներն առաւելապէս ներկայացնում են Դաւփ – Դօփ անուանաձեւը, բայց երբեմն նաեւ՝ Դոփ) Շարի իշխանութեան ծագման հարցում, որը եւս Բ. Ուլուբաբեանի կողմից անորոշացուած է՝ նոյն Հասան կրօնաւորեալի անիրաւացի «երկատման» ու անգամ «եռատման» հետեւանքով:

Իրականում, հակառակ ԺԸ-ԺԹ դարերում եղած պատկերացումների[1]՝ Զաքարէ եւ Իւանէ նշանաւոր ամիրսպասալարների քոյր Դօփ իշխանուհու ամուսինը եղել է ոչ թէ Հասան Մեծի որդի ոմն «Ղարա-Գրիգոր», այլ Հասան անունով իշխանը, քանի որ նրանց որդին մի փրկագնուած եւ 1244 թ. Խադարավանքին նուիրաբերուած Աւետարանի վերջում ուղիղ ձեւով յիշատակագրել է հետեւեալը. «...եւ զհեծելազաւրս ընդ ինքեանս տանէին՝ ուր եւ երթային [իմա՛ մոնղոլները], ընդ որս եւ գրաւեցայ ես՝ Գրիգոր, որդի Հասանայ եւ Դօփին, քուերորդի սպարապետացն Հայոց եւ վրաց Զաքարիայի եւ Իւանէի»[2]: Կիրակոս Գանձակեցին երկիցս յիշում է այս Գրիգորին մոնղոլական արշաւանքներին մասնակցած հայ իշխանների թւում («...եւ Գրիգոր Խաչենեցի՝ Դօփին որդի, որ էր այր երկիւղած ի Տեառնէ»; «...եւ

---

[1] Տե՛ս ՄՄ Ձեռ. 821, թ. 2ա-բ (Եսայի Հասան Ջալալեանցի՝ 1718 թ. կազմած «Դօփեանց տոհմաբանութիւնը»); **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 195; **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, էջ 49:

[2] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 228: Հմմ. **Գ. կաթ. Ցովսէփեան**, Խաղբակեանք կամ Պոռշեանք, էջ 9-10; **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 154-155; **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386-1500 թթ.), Եր., 1997, էջ 169 (տե՛ս նաեւ հեղինակի նախորդ գործերում):

խաչենեցիքն՝ Ջալալն Հասան եւ զօրք իւր եւ ազգականքն, եւ Գրիգոր՝ Դօփին որդի, մօրաքուեր որդի Ջալալին»)[1]: Ստեփաննոս Օրբէլեանը եւս Տարսայիճ իշխանի եւ Մինախաթունի դուստր Ասփայ իշխանուհու պսակի առիթով գրում է. «...դստեր երկու, յորոց զաւագն ետ ի կնութիւն մեծի եւ փառաւորեալ իշխանին Խաչենոյ [իմա՛ Վերին Խաչէնի եւ Ծարի] Գրիգորոյ [1287-1317]՝ որդւոյ Հասանայ, որդւոյ Մեծի Գրիգորին, որ էր ſեռորդի աթաբէկ Իւանէի»[2]:

Անկասկած, այս Մեծ Գրիգորինն է Դադիվանքի կաթուղիկէի արեւմտեան պատի հարաւային կողմի 13-տողանոց, 1224 թուակիր վիմագիրը, որում առաջին անգամ յիշուած է Դադի առաքեալի գերեզմանը (ըստ Թադէոս/Թադէ առաքեալի անունը դարեր ի վեր կրած վանքի անուան տեղական՝ Դադէ հնչողութեան հիման վրայ լոկ ԺԹ դ. սկզբներին ծագած «առաքեալ Դադիի»՝ իբրեւ «եօթանասնից» մէկի առ֊ասպելի)[3]. «ես՝ Գրիգոր, որդի Հասանա[յ], որ մեծ յուսով տուի ի Դադի գերեզմանս :Դ: տուն շինակ[ան] վ֊ս֊ն հոգո[յ] իմո[յ], յառաջնորդութեանն տ֊ռ֊ն Գրիգորիսի...: Արդ՝ ով խափանի յառաջնորդաց զիմ ժամն, կա՛մ յաւագաց յիմոց, կա՛մ յաւտարաց՝ զշինական յետ առնլով... մասն նորա ընդ Յուդայի եղիցի՛. :ՈՀԹ: [=1224 թ.]»[4]: Մեր ընդգծած «յաւագաց յիմոց» բառերը, կարծես թէ, ուղղակի ցոյց են տալիս պատուիրատուի՝ երիտասարդ լինելը: Ըստ այդմ, կարելի է նկատել, որ բերուածի անմիջապէս ներքեւի՝ 10 հողմահարուած տողասկիզբներով վիմագիրը (որի՝ պահպանուած «{...}Գ»-ով թուականը Ս. Բարխուդարեանը վերականգնում է նոյն «:{ՈՀ}Գ: [=1224 թ.]») փորագրուած է հէնց այս Գրիգորի հայր (ուրեմն՝ Դօփի ամուսին) Հասանի կողմից[5]: Ընդ որում՝ վերջինս իրեն կոչում է «Հասան, որդի Գրիգորա[յ]», ուրեմն՝ ԺԹ դարի Մարեցի երեք Գրիգոր իշխաններից առաջինի: Այս արձանագրութիւնը պարունակող արեւմտեան պատի վիմագրերի ուղղաձիգ շարքը, ըստ ամենայնի՝ փորագրուել է ներքեւից դէպի վեր, ուստի հաւանական է, որ ամենավերեւի 19-տողանոց, վնասուած սկզբնամասով (դրանից՝ գուցէ, թուականը կորցրած) վիմագիրը հէնց Դօփի որդի Գրիգորի կին Մամքանինն է («...ե{ս՝ Մա}/մքան, դուստր {.../...}անց{.../...}ա Դադէ {.../... ի}մ հայրենիքն զ{.../...}

---

[1] **Կիրակոս**, գլ. ԼԴ, էջ 280; գլ. ԼԵ, էջ 284 (այս հատուածում պատմիչը ձշում է նաեւ Իկոնիայի սելջուկեան սուլթանութեան դէմ ուղղուած եւ հայ իշխանների մասնակցութեամբ տուեալ մոնղոլական արշաւանքի տարին. «Եւ այս եղեւ ի ՈՂԲ թուականիս Հայոց [=*1243 թ.*]»):

[2] **Օրբ.**, գլ. ԿԵ, էջ 311; Պատմութիւն նահանգին Սիսական, գլ. ԿԶ, էջ 424:

[3] Այդ առասպելի ձեւաւորման մասին տե՛ս **Ա. Ցակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, էջ 272-273: Նշենք, որ նոյն պահին նկատելի է նաեւ Գանձասարի համար Ցովհաննէս Մկրտչի մասունքի (գլխի) հայթայթման վանական առասպելի ծագման զուգահեռը: Անշուշտ, այս ամենը ցուցանում են հզօրացող վանքերի ու նրանց աշխարհիկ մեկենասների միջեւ մի իւրօրինակ մրցակցութիւն:

[4] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 201, ﬕ 711; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 112, ﬕ 29: Հմմ. **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 13, ծն. 13:

[5] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 201, ﬕ 712; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 113, ﬕ 30:

իմ եղբարքն ե{տո}ւն ինձ {եւ ես} / կամաւք տուի սբք կաթուղիկէս :Ա: / չորեցաց հող, :Ի: շինակնատուն, :Ա: / ջաղաց, ս{...}անա գաւտի, արծաթի տ/ուի եւ տառաշուրջառ պատուական, / յառաջնորդութեանս տէր Գրիգորիսի, որդ/ւո[յ] Վասակա[յ], եւ սոքա ետուն ինձ / :Գ: աւր զամենայն {եկ}եղեցիքս զՆոր / կիրակէն եւ զհետ {...}ան: կատ/արիչքն գրոյս աւրհ{նեալ ե}ղիցի՛ն յԱստուծոյ, / եւ ով խափանէ՝ յաւ{տա}րաց կամ ի ծ/անաւթից, նզովեալ եղիցի՛ն...»[1]:

Խադարավանքի մի խաչքարի վրայ եւս Դօփի ամուսին Հասանն է գրել. «Թուին :ՈԿՀ: [=1219 թ.]. ես՝ Հասան, որդի Գրիգորոյ, կանգնեցի զխաչս եղբաւր իմոյ Շամսադինին: Տվի... զԹողակերտն ի խադարի վանս»[2]: *1986 թ. առիթ ենք ունեցել՝ այս բնագիրը ստուգելու տեղում (լուսահոգի Սամուէլ Կարապետեանի ընկերակցութեամբ), ուստի ուղղում ենք 3-4-րդ երկար տողերի «զխաչս» բառը, որի Ա-ի պահպանուած մասնիկը Ս. Բարխուդարեանը չի նկատել (ՋԽ/[Ա]ՋՍ): Բնագիրը շարունակութիւն էլ ունի. 5-րդ (հրատարակչի՝ վերջին) տողում «վանս» բառին յաջորդում է տողաւարտի ԾԱՌՋԱՐ/ բառակտորը, նաեւ առկայ է միւս տողաւարտը, որտեղ 8-9 կորած տառերից յետոյ ընթերցւում է. «{...} ԱՒՐՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՋԱՆ{...}ՐՍ / {...}»: Ընդ սմին, Դօփի ամուսին նոյն Հասանն էր օգնել իր Յովհաննէս եղբօրը՝ կառուցելու Խադարավանքի գմբեթաւոր եկեղեցին (հմմ. «Ի ՈՇԳ թուիս [=1204 թ.], ես՝ տէր Յոհաննէս, շինեցի զեկեղեցիս... եւ ետու զվանքս իւր ամէն սահմանաւ իմ աւագ աղբաւրն Հասանա[յ] եւ իւր որդեաց՝ Հաթերքո[յ] տեառնն միջնորդութեամբ...»*[3], *եւ՝ «այս իմ գիր է Հասանա[յ], որ երբ իմ աղբէրս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ երետ, ես զինձորաբակս իւր սահմանովն ի յեկեղեցիս տուի...»*[4]):

Տեղին նշենք նաեւ, որ 1244 թ. վիմագրում յիշուած Դադիվանքի Գրիգորիս վանահայրը, որին նախորդել էին Հասան կրօնաւորեալի եղբայրն ու որդին (Գրիգորէսը եւ Գրիգորը), նոյն Հասանի թոռն էր եւ քանիցս կոչուած է «որդի նահատակին Վասակայ»[5], *թէպէտ մի քանի տեղ լոկ՝ «տէր Գրիգորիս»*[6]: *Օր.՝ կաթուղիկէի արեւմտեան մուտքի ճակատաքարին ունենք. «Ես՝ Մամա[յ], դուստր Վաղտանկա[յ]՝ տեառն Հաթերքոյ, ետու զիմ հայրենի Պաչոյ [ա]գարակ եւ սպասք եկեղեցոյս... յառաջնորդութեան տեառն Գրիգորիսի... :ՈՂ: Թվին [=1241 թ.]»: Այստեղ յիշուած Մաման, ըստ իր մայր Արզուխաթունի շինարարական վիմագրի («վասն փրկութեան ոգոց նոցա եւ իմո[յ] եւ դստերաց իմոց»)՝ բացի Գրիգոր ու Հասան վաղամեռիկ եղբայրներից, ունեցել է եւս գոնէ մէկ քոյր: Վախտանգի եւ Արզու-*

---

[1] Տե՛ս նոյն տեղերում, էջ 200, ճմ 710 եւ էջ 112, ճմ 28:
[2] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 126, ճմ 418:
[3] Անդ, էջ 121, ճմ 401:
[4] Անդ, էջ 122, ճմ 402: Հմմ. **Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան**, Խադավանք-Խաթրավանք, էջ 23-24; **Կ. Բակշի**, Արցախի հոգեւոր գանձերը, Եր., 2015, էջ 50-52:
[5] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 200, ճմ 710, էջ 210, ճմ 739, 740; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 112, ճմ 28, էջ 116, ճմ 61, 63:
[6] Նոյն տեղերում, էջ 119-120, ճմ 709, էջ 201, ճմ 711, էջ 202, ճմ 714, էջ 204, ճմ 718; եւ՝ էջ 111, ճմ 15, էջ 111-112, ճմ 16, էջ 112, ճմ 26, 29:

խաթունի դուստրերին Նոր Գետիկի (Գօշավանքի) Ս. Աստուածածին եկեղեցու կառուցմանը («սկսեալ ի Ոխ թուականին Հայոց [=1191 թ.], զկնի չորս ամաց առնլոյ զԵրուսաղէմ Սալահադնին, եւ կատարի յամս հինգ») սատարելու առիթով յիշատակում է նաեւ Կիրակոս Գանձակեցին. «...նաեւ քոյր սոցա, որում անուն էր Արզու Խաթուն, կին Վախթանկայ Հաթերքեցւոյ: Սա... արար եւ վարագոյր գեղեցիկ՝ դստերաւք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց... Եւ ո՛չ միայն այս եկեղեցւոյս արար ծածկոյթ, այլ եւ այլոց եկեղեցեաց՝ Հաղբատայ եւ Մակարայ վանից եւ Դադի վանից...»[1]: Իսկ 1250 թ. («ի ՈՂԹ թուականիս Հայոց»)՝ Մարում տարածուած Դաւիթ Մոլորեցուցչի աղանդի յաղթահարման առիթով, գանձակեցի պատմիչը ներկայացրել է նաեւ Դադիվանքի վերոնշեալ Գրիգորիս եպիսկոպոս-վանահօր ձեռնարկած քայլերը. «Եկն եւ Դադի վանից եպիսկոպոսն տէր Գրիգորէս, եւ վարդապետն Վարդան... բազում քահանայիւք ի գիւղն յայն, քանզի ի նոցա վիճակին էր...»[2]:

Համլետ Պետրոսեանը եւ իր հեղինակակիցները համարում են, թէ Դօփի որդի Գրիգորի որդի Սեւադայի եւ դուստր Շահանդուխտի կողմից է գրուած Ջարեքդարի մեծ խաչքարի ճակատի ներքեւում՝ 9, եւ կողին՝ 6 տողերով (ձախից 3-4-ական տառ կորցրած, որի մէջ եւ՝ սկզբնատողի թուականը) տապանագիրը. «Սեւադան՝ Գրիգորի որդին, իրեն անուանում է «որդի հզաւր եւ յաղթող իշխանի, որ բազում քաջութեամբ եհար զտաճիկք...»: ... Սեւադան, որը զոհուել է 1260 թ., երբ մոնղոլական զօրքերի կազմում գրոհում էր Մարտիրոսաց քաղաքը..., հօր տապանի վրայ կանգնեցրած խաչքարի արձանագրութեան մէջ յայտնում է, որ հայրը զոհուել է Երուսաղէմ մեկնելու ճանապարհին բռնկուած մի կռուի ժամանակ»[3]: Սակայն բնագրի Սեւադան իրապէս ներկայանում է (Շահանդուխտի հետ, թերեւս, քրոջ) իբրեւ «յԵրուսաղէմ» գնացող եւ «Դեդան բերդո[յ]» (այլ ոչ թէ՝ «Դեդ Անբերդո», ինչպէս վերծանել է Ս. Բարխուդարեանը) «յ[ղ]անց»-ի (՞) մօտ զոհուած Գրիգորի եղբայր, իսկ «քաջութեամբ եհար զտա{ճիկ}ք» խօսքը յուշում է ԺԲ դ. վերջի իրողութիւններ[4]: Ինչ վերաբերում է 1260 թուականին Վարդան պատմիչի նշած «երիտասարդին» («սպանաւ գեղեցիկ երիտասարդն Սեւադա[յ] Խաչենեցի, որդի մեծ իշխանին Գրիգորի, քաջապէս մարտուցեալ եւ յայնոսիկ պսակեալ՝ հաւատ եւ երկիւղ պահելով զԱստուածոյն եւ զէլղանին»)[5], ապա նա պիտի զոհուած լինէր առաւելագոյնը 16 տարեկանում: Վերոյիշեալ 1244 թ. յիշատակարանում Դօփի որդի Գրիգորը թուարկում է իր եւ Մամքանի որդիներին, որ դեռ երկուսն են՝ Հասան եւ Յովհաննէս (իսկ հեղինակակիցների մօտ կայ՝ «Ըստ յիշատակարանի՝ Գրիգորն ունեցել է երեք որդի՝ Հասան, Սեւադա, Յովհաննէս», որը պարզ վրի-

---

[1] **Կիրակոս**, գլ. ԺԴ, էջ 215-216, հմմ. էջ 212:
[2] Անդ, գլ. ԽԸ, էջ 327:
[3] **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 13-14, ծն. 16-18:
[4] Հմմ. Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 132, հմր 443, լուսանկ.՝ տախտ. XXV: Տե՛ս նաեւ աստ, էջ 305-306:
[5] **Վարդան**, էջ 199:

պում է[1]: Ընդ սմին, վաղամեռիկ Սեւադայ որդու հարցում որոշիչ է այն, որ Վարդանը «Մեծ իշխան» է կոչում Գրիգորին[2], ուստի, իրօք՝ Դօփի որդուն:

Աղբիւրներում յիշատակուած են Հասանի եւ Դօփի միայն երկու որդիները՝ Գրիգոր Բ Ծարեցի իշխանը (Օրբէլեանի մօտ եւս կոչուած՝ «Մեծ») եւ Հաղբատի եպիսկոպոս Յովհաննէսը: Վերջինիս՝ Հաղբատի գաւթում, շուրջ չորս տասնեակ տապանաքարերի շարքում (արձանագիր են 37-ը) պահպանուած դերեզմանաքարի (5-տողանոց տապանագիրը՝ «Ջաքարէի եւ Իւ/անէի քվերորդի/ն՝ Յովհանն[է]ս / եպիսկոպոս տեղ/ոյս») աջ կողքին գտնւում է նաեւ նրա մօր շիրիմը՝ «Ջաքարէի եւ Իւանէի / քոյրն է՝ Դաւին» երկտող տապանագրով[3]: Ի դէպ, գաւթի խիտ թաղումների շարքում նշուած տապանաքարերի դիրքը՝ կողք կողքի եւ ձախից աջ, թոյլ է տալիս ենթադրել, թէ, ըստ ամենայնի՝ Դօփ իշխանուհին Ծարից Հաղբատ է մեկնել իր վաղամեռիկ եպիսկոպոս-զաւակի յուղարկաւորութեանը մասնակցելու առիթով, ընդ որում՝ տեղ հասնելուց ոչ շատ ժամանակ անց ինքն էլ է վախճանուել, եւ դա թոյլ է տուել՝ նրան թաղելու որդու շիրիմի անմիջապէս աջ կողքին:

Բ. Ուլուբաբեանը համարում է, թէ Դօփի ու Հասանի որդիներն են եղել նաեւ Գրիգորն ու Գերգը (Գիորգ), որոնցից երկրորդի՝ Դադիվանքի փոքր գմբեթաւոր եկեղեցու արեւմտեան պատի մէջ ագուցուած եւ 1181 թուակիր ոչ մեծ խաչքարի 5-տողանոց տապանագրում առաջին եղբայրն իրեն կոչել է «քուէրորդի» («Թուին :Ռկ:. ես՝ Գրիգոր քուէրորդի, կանգնեցի զխաչս եղբաւր իմո[յ] Գիորգա[յ]. որք երկրպագէք, յաղաւթս յիշեսջի՛ք»)[4]: Սակայն իրականում ժամանակային տեսանկիւնից այդ վիմագիրը վերագրելի է Հասան Մեծ կրօնաւորեալի (իմա՛ տարածքի ոչ պակաս հզօր ու նշանաւոր «թագաւոր»-իշխանի)՝ թէկուզ եւ այլուր չյիշուած մի քրոջ զաւակներին, այլ ոչ թէ Ջաքարէի ու Իւանէի «քուէրորդի»-ներին, որոնց մեծ մասն այդ տարում, թերեւս, դեռ ծնուած էլ չէր[5]: Իսկ Հասան Մեծի «արքայական» հզօրութեան ընկալման առումով նշենք, օր.՝ Դարպասներ տեղավայրի խաչքարի վնասուած բնագիրը. «ի թվիս :ՈՒԲ: [=1173 թ.]. ի հա{յրապե}տութեան տ<u>ե</u>ռն / Ստեփանոսի եւ ի թագաւորո{ւթեան ...[անշուշտ՝ *Հասանի – Ա. Յ.]}, ես՝ Սրահան/-գս, որդի Ջաջուա[յ] {...}, կանգն/եցի զխաչս...»[6]:

Հասկանալի չէ նաեւ Բ. Ուլուբաբեանի ձգտումը՝ Հաղբատի եպիսկոպոս, Դօփի որդի Յովհաննէսին ներկայացնելու հէնց իբրեւ ԺԲ դ. վերջում ապրածի: Դե-

---

[1] **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 14: Հմմ. դեռեւս **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշաւանքների շրջանում, էջ 178-182:

[2] **Վարդան**, էջ 199 (հեղինակակիցները ճիշտ են ուղղել Բ. Ուլուբաբեանի այն վրիպեալ պնդումը, իբրեւ թէ պատմիչը Գրիգորին Մեծ է կոչել քանիցս):

[3] **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, էջ 184-185, ճմբ 54, ԺԴ, ԺԵ:

[4] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 211, ճմբ 742; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 115, ճմբ 43:

[5] Հմմ. **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշաւանքների շրջանում, էջ 178-181:

[6] Տե՛ս **Գ. կաթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 16; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 74, ճմբ 217:

ռեւս Կ. Տէր-Մկրտչեանի դիտարկմամբ՝ արդէն Կիրակոս Գանձակեցու մօտ մանրամասն տարբերակուած են ԺԲ-ԺԳ դդ. Հաղբատի եպիսկոպոս եղած երեք Յովհաննէսները (երրորդը՝ ԺԳ դարավերջին), որոնցից երկրորդին է պատմիչը կոչում «fուեռորդի իշխանացն Զաքարէի եւ Իւանէի եւ եղբօրորդի առաջնոյ Յովհաննէսի»[1]: Իսկ դրանից առաջ պատմիչը նշում էր. «...սուրբն Գրիգորիս... Եւ յետ նորա՝ Յովհաննէս, այր հեզ եւ առաքինի, ազգական իշխանացն Խաչենոյ: Սա քակեաց զգաւիթն փոքրագոյն... եւ շինեաց մեծ եւ գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ: Եւ յետ նորա՝ միւս Յովհաննէս՝ fուեռորդի իշխանացն...»[2]: Միւս դրուագում, պատմելով Հաղբատի Գրիգորիս եպիսկոպոսի հանդէպ Զաքարէ ամիրսպասալարի հալածանքների մասին, պատմիչը լրացնում է. «Եդ զնա ի բանտի, եւ զՅովհաննէս կացոյց փոխանակ նորա եպիսկոպոս Հաղբատայ, ա՛յն, որ յառաջն եթող զաթոռն եւ գնաց ի Խաչէն: Եւ այր առաքինի էր Յովհաննէս, եւ բազում գործս արժանի յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս եւ զհռչակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն»[3]:

Կ. Տէր-Մկրտչեանը ճշտօրէն պարզաբանել է նաեւ, որ Դօփի որդի Յովհաննէսը Հաղբատի եւ Խադարավանքի եպիսկոպոս Յովհաննէսի եղբօրորդին էր եւ Կայան կոչուած ոչ մեծ բերդի (Հաղբատի ձորում) ու նրա ներսի եկեղեցու կառուցողը: Ընդ սմին, վերջինիս շինարարական վիմագիրը 1233-ով է թուագրուած. «Ի թ[ո]ւին :ՈՁԲ: [=1233 թ.]... ես՝ տէր Յոհաննէս, առաջնորդ Հաղբատա[յ], fուեռորդի մեծ պատրոնացն Զաքարէի եւ Իւանէի, ի ժամանակի, որ եհաս սասանումն աշխարհիս մերոյ անաւրէն խորազմե[ա]նցն... շինեցի զամրոցս եւ զեկեղեցիս Հաղբատա[յ] Սուրբ Նշանիս...»[4]: Իսկ այս Յովհաննէս Բ-ի յաջորդ՝ Համազասպ եպիսկոպոսի վիմագրերից ամենավաղի թուագրումը 1242-ն է[5], ուստի է՛ւ իր, է՛ւ Դօփի վախճանը պէտք է դիտարկել 1233-1242 թթ. միջակայքում: Ինչ վերաբերում է նրա եպիսկոպոսութեան սկզբի ժամանակին, ապա դա, հաւանաբար, 1220-ական թթ. երկրորդ կէսն է: Յովհաննէս Ա-ին 1211-ից մինչեւ 1221 թ. յիշատակող Հաղբատի բազմաթիւ թուակիր վիմագրերից հէնց առաջինում (Ս. Գրիգոր եկեղեցու մուտքից վեր՝ պատուհանի գլխին, 6 տող) խօսւում է եկեղեցու վերանորոգման մասին (որը յայտնի էր նաեւ Կիրակոս Գանձակեցուն). «Թուին :ՈԿ: [=1211 թ.]. Նորոգեցաւ եկեղեցիս ի ձեռն տէր Յոհաննիսի եւ միաբան եղբարցս. յիշեցէ՛ք ի Քրիստոս»[6]: Իսկ

---

[1] **Կիրակոս**, գլ. Ա, էջ 99: Հմմ. **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, էջ 56-59:

[2] **Կիրակոս**, գլ. Ա, էջ 98-99:

[3] Անդ, գլ. Ե, էջ 173-174:

[4] **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, էջ 250, ճ՝ր 173. հմմ. **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, էջ 57-58: Հմմ. նաեւ՝ «Սա շինեաց բերդ մի ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ եւ ընդ Սանահինն... Իբրեւ մեռաւ եպիսկոպոսն Յովհաննէս, քակեցին զպարիսպ բերդին հրամանաւ թաթարին» (**Կիրակոս**, գլ. Ա, էջ 99):

[5]

վիմագրերից վերջինում կայ հետեւեալ ընդարձակ, 21-տողանոց բնագիրը. «Յամս ա՘ստուա՘ծազաւր թ՘գ՘որացս Թամարա[յ] եւ որդո[յ] իւրո[յ] Գեորգէ եւ ։Բ։ հարազատաց Զաքարէի եւ Իանէի, հրամանաւ սոցա կոչեցա[յ] յեպիսկոպոսութի՘ւն ս՘ուրբ աթոռոյս Հաղբատա[յ]։ Ես՝ Յոհաննէս ի Խաչենո[յ], ներողութի՘ամբ Ա՘ստուծոյ կացե[ա]լ իմ ամս բազում յառաջնորդութեանս, եւ ըստ իմում կարողութեանս սպասաւորեցի սրբոցս ի շինութի՘ւն եւ յառաջդիմութի՘ւն տանս Ա՘ստուծոյ։ Նախ՝ ի ձեռն շինուածոց ի ս՘ուրբ Նշանս, ի մատե[ա]նս, ի սպաս զարդուց, զկաթուղիկէս սալե[ա]լ եւ զդուռնս կազմե[ա]լ, զՍ՘ուրբ Գրիգորն նորոգե[ա]լ, զդաւիթս շինե[ա]լ, զգաւթի ս՘ուրբ սեղանոյն եւ զ։Գ։ ս՘ուրբ Նշանս։ ... որք կատարեն զաղաչանս մեր՝ աւրհնեցին ի Տ՘եառնէ. ամէ՛ն. ։ՈՀ։ [=1221 թ.]»[1]։ Ակնյայտ է, որ եթէ գրողը լինէր Յովհաննէս Բ-ն՝ Դօփի որդին, ապա չէր կարող բաւարարուել լոկ «ի Խաչենո[յ]» ծանօթութեամբ եւ կը նշէր «։Բ։ հարազատաց Զաքարէի եւ Իանէի» հետ իր ազգակցութիւնը։ Վերջապէս, Սանահինում Գրիգոր Տուտէորդի վարդապետի մահարձան-խաչքարի կողքին կանգնած խաչքարի թիկունքին ունենք, ամենայն հաւանականութեամբ, նոյն Յովհաննէս Ա-ի թողած 9-տողանոց վիմագիրը. «Ի թվի՘ն ։ՈՀԶ։ [=1227 թ.]. ես՝ տէր Յոհաննէս, առաջնորդ ս՘ուրբ ուխտին Հաղբատա[յ], կանգնեցի զխաչս ի հանգստարանի սնուցողի իմո[յ] Յովաննէս քահանա[յ]ի...»[2]։

Այսպիսով, համադրելով Կիրակոս Գանձակեցու խօսքերը («որ յառաջն եթող զաթոռն [Հաղբատայ] եւ գնաց ի Խաչէն») խադարավանքի վերաբերեալ վիմագրերի հետ՝ կարող ենք չկասկածել, որ Յովհաննէս Ա-ն նախ՝ Հաղբատի վանահայր-եպիսկոպոս է ձեռնադրուել ԺԲ դ. վերջերին, ինչ-որ ժամանակ անց վերադարձել է հայրենիք, կառուցել խադարավանքի գմբեթաւոր եկեղեցին եւ եղել նրա վանահայրը, ապա 1204 թ. յետ է բերուել Հաղբատ։ Այդժամ նա խադարավանքը յանձնել է «իր եղբայր Հասանին ու իր որդիներին», այսինքն՝ Դօփի որդի Յովհաննէսին, որը նրա մահուանից յետոյ ինքն էլ պիտի դառնար Հաղբատի եպիսկոպոս։

Վերադառնանք Դօփի սկեսրայր Գրիգորին, որի յիշատակումն իր որդի Հասանի կողմից տեսանք խադարավանքի եւ Դադիվանքի վիմագրերում (1219 եւ 1224 թթ.)։ Եթէ ընդունենք ճարտարապետ Սամուէլ Այվազեանի այն դիտարկումը, որ Դադիվանքի համալիրում «տաճար» կոչուած կառոյցի՝ 1211 թ. շինարարական արձանագրութեան հեղինակ՝ «Հասանի որդի» Գրիգորէսը (բնագիրն է. «Թ՘ուին ։ՈԿ։ [=1211 թ.]. ես՝ Գրիգորէս, որդի Հասանա[յ], շինեցի զտաճարս յիշատակ հոգո[յ] իմո[յ]. յաղաւթս յիշեցէ՛ք»[3]) եղել է ոչ թէ հոգեւորական (այն է՝ Հասան Մեծի ու Մամախաթունի քահանայ որդի Գրիգոր/Գրիգորիսը), այլ աշխարհական[4] (վերա-

---

[1] Անդ, էջ 180, ճ՘ր 50։

[2] **Կ. Ղաֆադարյան**, Սանահինի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Եր., 1957, էջ 180-181, ճ՘ր 170։

[3] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 212, ճ՘ր 749; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 116, ճ՘ր 58։

[4] **Ս. Այվազյան**, Դադիվանքի հոգեւոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը, – ՊԲՀ, 2006, ճ՘ր 3, էջ 204։

պահում ենք անում, քանի որ տուեալ դիտարկումն աղբիւրագիտօրէն լրացուցիչ հիմնաւորելու կարիք կայ. իրականում վիմագրերում կան հոգեւորականի՝ առանց «տէր» նշումի, լոկ անունով հանդէս գալու որոշ այլ դէպքեր եւս[1]), ապա կարող ենք համարել, որ Գրիգորէս անուանաձեւով մենք ունենք նաեւ Հասան Կրօնաւորեալի՝ Ծարի իշխան դարձած որդու, այսինքն՝ Դօփ իշխանուհու սկեսրայրի ինքնայիշատակումը: Այսպիսով, նրա ամուսին Հասանի հայրը ոչ մի կերպ չի դառնում «Վախտանգ» (ԺՒ դ. կէսի՝ մի «երրորդ»!), ինչպէս վերոնշեալ թիւրըմբռնման հիմքով պնդում է Բ. Ուլուբաբեանը[2], եւ նրա կարծիքը, ցաւօք, թեթեւօրէն կրկնւում է նաեւ նորագոյն աշխատանքներում[3]: Դա մնում է նոյն Գրիգորը (ԺԸ-ԺԹ դդ. հեղինակների մօտ՝ Ղարա-Գրիգոր)՝ Հասան Մեծի եւ Մամախաթունի 6 որդիներից մէկը, ով 1182 թ. հօրից պէտք է ստացած լինէր իր բաժին «հողանիւթը» եւ դրանով սկիզբ դնէր Ծարի իշխանութեանը (որին 1214 թուից յետոյ միացաւ, ի դէպ, ոչ առանց Զաքարեանների ջանքերի, նաեւ Վերին Խաչէնը):

Տեղին անդրադառնանք Սամուէլ Այվազեանի մի քննառու դիտարկմանը: Հիմնաւոր ճշգրտումներ կատարելով Դադիվանքի կառոյցների ճարտարապետական վերլուծութեան եւ աւանդական թուագրումների մէջ[4]՝ նա որոշ փաստարկներով փորձում է մերժել «տաճարի» արեւելեան պատին կից շինութեան հարաւային մուտքի բարաւորի 5-տողանոց վիմագրում յիշուած անձանց՝ մեր եւ Յակոբ Սիմոնեանի համադրումները[5]: Այդ ծաւալուն արձանագրութեան բնագիրն է.

«Յուսովն Աստուծոյ, ես՝ տէր Գրիգորէս եւ տէր Աթանաս՝ եղբէր իմ, որդիք Հասան պարոնի, շինեցաք զտներ/ես եւ զսրահս: Եւ արդ, աղերսիւ հայցեմ՝ որ զկնի մեր տաղաւարի աստ՝ յիշեսցէ՛ զմեզ յողորմած/ն Աստուածծ: Ընդ նմին [զ]հաւրեղբայրն մեր՝ [զ]տէր Գրիգոր, նայ եւ զեղբարսն մեր եւ զժառանգ[աւ]որք[6] այսմ տա/նս՝

---

[1] Տե՛ս, օր.՝ Գանձասարի գաւթի հիւսիսային դռան բարաւորին՝ «...ես՝ *Յոհաննէս*, որդի Իւանէի, առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարա[յ]...» (Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 50, հմր 122); Բերդաձորի Ս. Գրիգորի հիւսիսային պատին Տէր Գրիգորի վիմագրում՝ «ես՝ *Գրիգորս*, որդի Սակոի, վերստին շինեցի զեկեղեցիս...» (անդ, էջ 116, հմր 387); Մեծարաւից Ս. Յակոբավանքի սրահի հարաւային պատի վիմագրում. «...ես՝ Սմպատ, որդի Հեջբին, տվի էգատեղ *Գրիգորոյ*. ևս ի տարումն :Դ: ժամ *իրետ*...» (անդ, էջ 15, հմր 12):

[2] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 155-156:

[3] Տե՛ս, օր.՝ **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 11: Հեղինակների մատնանշած (էջ 12, ծն. 8)՝ Հաղբատի յայտնի Աւետարանի հետագայի յիշատակարանի (ձեռագիրը 1223 թ. ոմն Սարգիս նուիրել է Մեծ Կողմանց եպիսկոպոսարանին) նշումն իրականում կապ չունի Հասան Ծարեցու հետ եւ վերաբերում է Ներքին Խաչէնի իշխան Հասան Ջալալին («Ի յիշխանութեանս հզաւրին Հասանայ, որդոյ Վախտանգա[յ] եւ ի հայրապետութեանս տեառն Յոհաննիսի»): Համմ. **Գարեգին Ա կթղ.**, Ցիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա, սն. 830; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 134; **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 217:

[4] Իսկ աւանդական թուագրումները տե՛ս, օր.՝ **Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան**, Դադիվանք, – Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. Ը, Պէյրութ, 1980, էջ 7-54; **Մ. Հասրաթյան**, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Եր., 1992, էջ 44-61:

[5] **Ս. Այվազյան**, Դադիվանքի հոգեւոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը, էջ 204:

[6] Այս «ժառանգ[աւ]որք»-ը պիտի հասկանալ որպէս «վիճակաւոր», «սարկաւագ», «դպիր»՝ *փխն.* ևախկինում մեր շտապողաբար վերականգնած «զժառա[ն]գոր[դ]ք»-ի:

զՏպէլն եւ զՇալուայն եւ զԳրիգ[որ], պահեսցէ՛ Քրիստոս ընդ երկայն աւուր/ս: Եւ ով զմեզ յիշէ, ինքն լիցի՛ յիշե[ա]լ առաջի Քրիստոսի»[1]*: Ս. Այվազեանը գտնում է, որ բնագրում յիշուած են ոչ թէ Հասան Մեծի (կոչուած՝ «պարոն») հոգեւորական որդիները («Այս Հասանի վեց որդիների մէջ Աթանաս անունով որդի չկայ») եւ Գրիգորէս եղբայրը, այլ 1261-ից մինչեւ 1291 թ. բազմիցս յիշատակուած Աթանաս վանահայրը (կոչուած՝ «որդի Հասանա[յ]», իմա՛ Դօփի թոռ «Հասան Արիականի»*[2]*) իր Գրիգորէս՝ այլուստ անյայտ եղբօր եւ Գրիգոր՝ այլուստ անյայտ հօրեղբօր հետ: Այդպիսով՝ հեղինակը Դադիվանքի «տների եւ սրահի» կառուցումը թուագրում է ԺԳ դ. երկրորդ կէսով, ինչպէս կարծում էր դեռ Ս. Կարապետեանը*[3]*: Սակայն չէ՞ որ նման թուագրումը հակասում է հէնց իր իսկ՝ Ս. Այվազեանի իրաւացի դիտարկմանը, ըստ որի՝ «տների եւ սրահի» հիւսիսային պատը 1211 թ. աւարտուած «տաճարի» հիւսիսային պատի հետ միասին «հարաւային կողմից ծառայում են որպէս յենապատ» այն արհեստական հարթակի համար, որի հիւսիսային կողմում 1214 թ. կառուցուել է կաթուղիկէն, իսկ միջնամասում՝ «յենապատից» ընդամենը 1,5 մ հեռու՝ գմբեթաւոր փոքր եկեղեցին*[4]*: Վերջինիս ժամանակը (նրա պատերի մէջ դրուած են 1172-1190 թթ. խաչքարեր*[5]*) հնարաւոր չէ շատ հեռացնել «տաճարի» կառուցումից, եւ Ս. Այվազեանը, ի վերջոյ, գերադասելի է համարում 1214-1224 թթ. միջակայքը: Բայց չէ՞ որ հէնց մինչ այդ պէտք է արդէն շարուած լինէր «տների եւ սրահի» հիւսիսային պատը:*

Իսկ որ Հասան Մեծի զաւակների մէջ «Աթանաս անունով որդի չկայ», ապա, թւում է, թէ ճիշտ կը լիներ մտածել, որ նրանցից մէկը, այնուհանդերձ, այդ ա-

---

[1] Տե՛ս **Ա. Հ. Հակոբյան, Հ. Ե. Սիմոնյան**, Դադիվանքի նորահայտ արձանագրությունը, էջ 229: «Պարոն» («պատրոն») բառի կիրառման մասին՝ սկսած 1003 թուականից, տե՛ս **Գ. կաթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 37:

[2] «Արիական» Հասանի որդի Աթանաս վանահայրը յայտնի է նախ եւ առաջ Դադիվանքի զանգակատան մէջ իր կանգնեցրած զոյգ որմնափակ նրբաքանդակ խաչքարերով, որոնց վիմագրերն են. «Զտէր Աթանաս յիշեսջի՛ք ի Քրիստոս: Է-ին Աստուծոյ զաւրութեամբն, եւ՝ տէր Աթանաս, որդի Հասանա[յ], առաջնորդ սուրբ ուխտիս, կանգնեցի զսուրբ նշանս յիշատակ հոգո[յ] իմ: Թիվն Հա[յ]ոց :ՉԼԲ: [=*1283 թ.*]», եւ «Տէր Գրիգոր սնո[ւ]ցող տէր Աթանասի յիշեցէք» (Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 213, ին 750; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 120, ին 74. հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 243): Նրա՝ Հասան «Արիականի» որդին լինելու հարցում Գ. Կիրակոսեանի կասկածը (նշ. աշխ., էջ 191-193), անշուշտ, մերժելի է: Իսկ մի նորայայտ վիմագիր՝ «Սբ. Դադի եկեղեցու հիւսիսային աւանդատան ներսում, կամարաձեւ առաստաղի մակերեսին մէկ տողով խոշոր եւ ուռուցիկ տառերով. ՏԷՐ ԱԹԱՆԷՍ» (տե՛ս **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 117, ին 67), իբրեւ ամենահաւանական վարկած՝ կարող է համարուել տապանագիր-«յուշատախտակ»՝ հէնց այս վանահօր այն շիրիմի «վրայ» («վերեւում»), որը հնագէտները վերջերս պեղել են այդ բաց եկեղեցու խորանի առջեւ: Իսկ թաղումը եղել է յիրաւի եզակի գտածոյ՝ այն աթոռով, որն այժմ ցուցադրւում է Ստեփանակերտի պատմա-երկրագիտական թանգարանում եւ ոմանց կողմից շտապողաբար վերագրւում «Դադի առաքեալին»:

[3] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 102:

[4] Հմմ. **Ս. Այվազյան**, Դադիվանքի հոգեւոր շինութիւնների կառուցման ժամանակագրական յաջորդականութիւնը, էջ 204-205:

[5] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 115:

նունն ստացել է, իհարկէ, հոգեւորական ձեռնադրուելիս: Դա կարող էր լինել Գօշավանքի՝ 1191 թ. վիմագրում[1] յիշուած՝ ոչ քրիստոնեական անուններ ունեցող երկու եղբայրներից մէկը՝ Սմպատը կամ Խոյդանը (երկու անունների ծագումն էլ յայտնի չէ[2]): Սակայն առաջինի որդիների՝ Վաղտանգի (կինը՝ Նանա, որդին՝ Հասան, սրա կինը՝ Ռուզուման) եւ Սեւադայի (կինը՝ Թաճեր)՝ 1241 թ. հնգական տողանոց վիմագրերն ունենք Դադիվանքի կաթուղիկէի հարաւային եւ արեւելեան ճակատներին (բնագրերն են. «Կամաւն Աստուծոյ, ես՝ Վաղտանգ, որդի Սմպատա[յ], ծառա[յ] Յիսուսի, եւ ամուսին իմ Նանա՝ աղախին Քրիստոսի, միաբանեցաք / Դադէ վանց եւ տուաք ի հայրենեաց մերոց զՇեչաչորեցն եւ այգի մի ի Խոզենեկն[3] ի Մանանամարգ / եւ մեծածախ մասամբ խաչ մի մեծաւ յուսով: Եւ բնակիչքս՝ տէր Գրիգորիս եւ միաբանքս սահմանեց/ին մեզ :Բ: աւր ժամ զամենայն եկեղեցիքս, զտաւն Յովաննու՝ Նանա[յ]ին, եւ զտաւն Վարդանեանց[4]՝ Վաղտա/նգա[յ]. ով խափանէ... ի թուէն :ՈՂ: էր [=1241 թ.]», եւ՝ «Կամաւն Աստուծոյ, ես՝ Սեւադա իշխան, որդի Սմպատա[յ], եւ ամուսին իմ Թաճերն, տուաք ի հայ{րենեաց / մե}րոց ի Դադի վանս զկարմնջատափա[յ] այգենն ի Խոզենակուց ի նշխարատունն մեծ յուս/ով. տէր Գրիգորիս եւ միաբանքս ետուն մեզ :Բ: ժամ զամեն եկեղեցիքս, զտաւն Տեառնընդառաջն՝ ինձ, / {զ}Աւագ հինգշաբաթ աւրն՝ Թաճերին ... / ...Թիւն :ՈՂ: [=1241 թ.]»)[5]: Այս պատճառով, անշուշտ, գերադասելի է Խոյդան – Աթանաս համադրումը:

Ի դէպ, խառնակուած բնագրերից քաղագրուած վերոյիշեալ կալուածագիրս հիկէլում եւս Խաչէնի ու Ծարի «հողանիւթի» սահմանաբաժանման առիթով (այսինքն՝ մօտաւորապէս 1210-ական թթ. կէսերին) վանահայր Գրիգորի հետ յիշուած է (կրկնենք՝ խառնակ ձեւով) վանահայր Աթանասը. «...Սմբատ եւ եղբարքս մեր

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. VI, Իջեւանի շրջան, էջ 64-65, հմր 127 (տե՛ս աստ, էջ 309, ծն. 2):

[2] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 516, հտ. Դ, էջ 537:

[3] Վրիպմամբ հրատարակուած է *Խոզենեկս*:

[4] Վրիպմամբ հրատարակուած է *Վարդանանց*:

[5] Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 110, հմր 2, էջ 111, հմր 15; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 202-203, հմր 715, 714 (լուսանկարները՝ տախտ. XXXIII): Վաղտանգի ու Նանայի որդի Հասանը մի անթուակիր վիմագիր է թողել Գեղարդավանքում. «Ես՝ Հասան, որդի Վաղթանկայ, թոռն մեծի Սմբատայ թագաւորազին, միաբանեցաք սուրբ ուխտիս, եւ ետու պատուական Աւետարան եւ Տաւնական: Եւ սպասաւորք սորա խոստացան ի տարւոջն :Ջ: աւր պատարագ Զատկին, :Ա:՝ ինձ, :Գ:՝ իմ մաւրն Նանային, :Բ:՝ Ռուզուքանայ՝ կենակցի իմոյ» (**Հ. Պ. Ալիշան**, Այրարատ, էջ 340, հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 151): Իսկ նրա կնոջ (ով դուստրն էր 1260 թ. Նփրկերտի գրաւման ժամանակ սպանուած Էլիկում Օրբէլեանի)՝ 1264 թուակիր 11-տողանոց, վերջում թերի թողած վիմագիրը պահպանուել է Մեծարանից Ս. Յակոբավանքի գաւթի արտաքուստ հիւսիսային պատին «Թուին :ՉԺԳ: [=*1264 թ.*]: Կամաւ ամենակալին / Աստուծոյ, ես՝ Ռզուքան, անարժան աղախ/ին Քրիստոսի, ամուսինն Հասանայ, դուստր մե/ծ իշխանին Էլիգումին, պարոն մաւրն Թամթէի, միաբ[ա]/նեցա[յ] տանս Մեծիրանց ընծա[յ]իւք: Տէր վաղ, / միաբանքս :Գ: աւր ժամ տ/ին Յայտնութեան / Տեառն մերոյ Քրիստոսի, որչափ ես կենդանի եմ՝ {իմ մաւ}/րն առնեն եւ յետ իմ անցման ինձ առնեն: / Որ զժամն խափանէ...» (Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 16, հմր 14; **Հ. Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 85, հմր 14):

բաժանեալ տաք զՄեծն Խաչէն... Սակռա[յ], եւ երկիրս Ծար ի Վերին Խաչէն տվաւ Հասանայ, եւ կանգնեցաք խաչ մի Մատաղիսոյ վերն, բոլոր բթին սահման Խաչենոյ եւ Ծարայ: Ես՝ Հասան կացի [յ]աւաճութեան..., զբերթերս եւ զգաւառս ետու որդոց իմոց եւ ես եկի ի վանքս՝ մօտ տէր Գրիգորի եւ տէր Աթանիսի եւ եղէ կրօնաւոր. եւ երկրիս հողանիւթն այս է...»[1]: Ի դէպ, սիկէլում ներառուած է եղել նաեւ Դադիվանքի՝ 1214 թ. շինարարական վիմագիրը, եւ, ըստ Սարգիս Քամալեանի՝ «Արզուխաթունի այս գրութիւնից ետ կան հետեւեալ ստորագրութիւնները. «Ես՝ Աթանէս եպ̄կ̄ս, Գրիգոր եպ̄կ̄ս, վկայ ենք, որ վանքին վերայ գրած հաստատը վախմ են»: Կնիքները եւս կան իրենց»[2]: Բայց վերջին անձինք կապ չունեն ԺԹ դարի հետ եւ եղբայրներ են, որ ԺԷ դարում յիշուած են Սոթք գաւառի Ազատ գիւղի (ԺԹ-ի դարերում՝ Աղքիլիսա) եկեղեցու երկու վիմագրերում՝ հարաւային պատի (ներկայումս՝ կորած) եւ տանիքի քառակուսի կոթողի նիստերի վրայ[3]:

Կրկին վերադառնալով Ծարի իշխանութեան հիմնադիր Գրիգորին՝ նշենք, որ աղբիւրների առկայ նիւթին կարող է հակասող թուալ Խադարավանքի Յովհաննէս անունով վանահայրերից մէկի տապանագիրը (ներկայումս՝ կորած), եթէ նրան նոյնացնենք 1204 թ. յիշուած՝ նաեւ Հաղբատի եպիսկոպոս (եւ Հասան իշխանի եղբայր) վերոյիշեալ առաջին Յովհաննէսի հետ: Վիմագիրը ԺԹ դարում ընթերցուած է հետեւեալ ձեւով. «Սուրբ Պռոկոպոս. զմեծ տէր Յովհաննէս՝ շինուող եկեղեցւոյս, որդի Դաւիթին, եղբայր մեծ իշխանին Հասանայ, յաղաւթս յիշեցէ՛ք»[4]: Քանի որ Դօփ իշխանուհու ամուսինը Հասան անունն է կրել, ապա նրանց որդին, իրօք, չէր կարող նոյն կերպ կոչուել (ըստ Հր. Աճառեանի վերոնշեալ դիտարկման): Ի դէպ, նշենք, որ Դօփն արդէն 1225 թ. մի վիմագրում (Խադարավանքի մատուռի հիւսիսային պատին արտաքուստ, 10 տող) ներկայանում է առանց ամուսնու՝ անգամ յիշատակման. «Թո՛փն :ՈՀԴ: [=1225 թ.], ես՝ Դոփս, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի եւ Իւանէի, շինեցի զգաւիթս եկեղեցոյս եւ զմատուռս. եւ տվի զԱւետարանս եւ Յանկաբակուց երկիրն եւ զիմ Հակուդենայ մատաղիսն յեկեղեցիս՝ իմ հոգոյ...»[5]: Ըստ այսմ՝ Հասան Ա Ծարեցու, թերեւս, վաղաժամ մահը կարելի է, ինչպէս տեսանք նաեւ վերեւում, վերագրել 1224-1225 թթ.: Դօփը յիշուած է նաեւ Հաղբատի

---

[1] **Ս. Քամալյան**, «Աղվանից աշխարհի» Թադէ կամ Խոթա վանքի... մի ղաբալա, էջ 153:
[2] Անդ, էջ 152:
[3] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. IV, Գեղարքունիք, էջ 371, ճ՟ր 1495 («...ես՝ Յոհաննէս վարդապետս՝ որդի Մելքոնին, որդոյ Միրզաջանին, որդոյ Ջանշահի, յորդւոյ Պռոշոյ, յորդւոյ Հասանայ, որդւոյ Մեծ Շահնշահի, որդւոյ Սարգսի, թոռնեայն Դոփայ, քոյր Մեծին Իւանէի եւ սպասալար Զաքարէի, հանդերձ հարազատ եղբարորդւովք իմովք Աթանաս եպիսկոպոսիւ եւ Գրիգոր եպիսկոպոսիւ... շինեցաք զՍ՟ր Աստուածածինն...»); էջ 370, ճ՟ր 1487 («Ս՟ր նշանս բարէխաւս յԱթանաս եպիսկոպոսին, Գրիգոր եպիսկոպոսին. թվ՟ն :ՌՂԲ: [=1643 թ.]»):
[4] **Ս. վրդ. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան... ի 1841 ամի, Մասն Ա, Տփխիս, 1842, էջ 206; **Յ. եպ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի, հտ. Բ, էջ 362; **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 195; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 128, ճ՟ր 427:
[5] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 127, ճ՟ր 420:

մօտերքում ընթերցուած մի վիմագրում, որն անթուակիր է. «...հրամանաւ պարոնացն եւ Դաւիթին, ես՝ Ջամալարինս, միաբանեցա[յ] սուրբ Քառասնից»[1]:

Սակայն նկատուած հակասութիւնը լուծելի է. չբացառելով ԺԹ դարի ընթերցումների՝ երբեմն լրջօրէն սրբագրելի լինելու հանգամանքը՝ այս դէպքում պէտք է նաեւ նշել, որ Դօփ անձնանունով աղբիւրներում վկայուած է ամենեւին էլ ո՛չ միայն յայտնի իշխանուհին: Օր.՝ «քուերորդի սպարապետացն... Զաքարիայի եւ Իւանէի» «Մեծն Գրիգորին» ոչ մի կերպ չի կարող վերաբերուել «Թարգմանչաց» Աւետարանի (ընդօրինակուած՝ «Թիւն ՈՁԱ [=1232 թ.]»[2]) նկարազարդման մասին 1312 թուականի յիշատակարանի նշումը. «Ջմեծ եւ զամենաւրհնեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դաւիթին եւ զամենագով եւ զբարեպաշտ ամուսինն իւր զպարոն Ասփայն՝ ստացաւղք եւ զարդարիչք սուրբ Աւետարանիս, յիշեսջի՛ք ի Քրիստոս»[3]: Չնայած «որդի Դաւիթին» արտայայտութեանը՝ մասնագէտներն իրաւացիօրէն իբրեւ ձեռագրի ստացողներ գիտեն ԺԳ դ. վերջին – ԺԴ դ. սկզբին Ծարում իշխած ամուսիններ Գրիգոր Գ-ին (կոչուած՝ «Զինուոր»)՝ վախճանուած 1317-ից յետոյ, եւ Ասփային (Սիւնեաց Տարսայիճ Օրբէլեանի դուստր)՝ վախճանուած 1311 թ. (Ձեռագրի թ. 113բ-ի յիշատակարանում Ասփայի մասին ասուած է. «...ստացաւ եւ զսուրբ Աւետարանս յարդար ընչից իւրոց եւ ընձայեաց ի սուրբ ուխտն իւր Խադարի վանս, որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դուխանց, եւ ինքն կարճաւրեայ կենաւք փոխի մահուամբ յաշխարհէս առ Քրիստոս, եւ դնի ի դանբանի ի նոյն վերասացեալ սուրբ ուխտն»[4]): Ուրեմն՝ այստեղ «որդի Դաւիթին» է կոչուել Դօփ Զաքարեան նշանաւոր իշխանուհու թոռան (Հասանի Բ «Արիականի») որդին:

Տեղին նշենք, որ այս Գրիգոր Զինուորի իշխանութեան արեւելեան սահմանագիծը նշող մի նոր տուեալ են նկատել Համլետ Պետրոսեանը եւ իր հեղինակակիցները. «Մռաւի փեշերին գտնուող Մեսիս վանքի իր մի ընդարձակ արձանագրութեան մէջ Հասանի որդի Գրիգորը նշում է, որ թէեւ Զարաբերդը (=Զրաբերդը) գտնւում էր տաճիկների ձեռքին, իրեն յաջողուել է Աստծոյ օգնութեամբ պահել Ականան»[5]: Ս. Կարապետեանը եւ Հ. Պետրոսեանն ու հեղինակակիցները նաեւ իրաւացիօրէն ուղղել են Դադիվանքի կաթուղիկէի բեմի գոգաւորութեան սուաղի վրայ կարմիր ներկով 9-տողանոց վիմագրի սկզբի տասնաւորը («Աւգնութեամբ Աս-

---

[1] Տե՛ս **Ս. վրդ. Զալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Ա, էջ 118:

[2] ՄՄ Ձեռ. 2743, թ. 311ա: Հմմ. **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 317, ծն. 94: Ի դէպ, նոյնն է եւ ձեռագրի թերթ 9բ-ի յիշատակարանում՝ «...ի թիւս :ՈՁԱ: [=*1232 թ.*] ծաղկազարդեցաւ սուրբ Աւետարանս», բայց Արտ. Մաթեւոսեանը շտապողաբար չի ընդգրկել այս բնագրերը «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի ԺԳ դարի հատորում:

[3] ՄՄ Ձեռ. 2743, թ. 293ա; ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 84; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար, Մասն Ա, էջ 215; **Կարապետ եպ.**, Դօփեանք եւ Մելիք-Ծաճնազարեանք, էջ 72-74; **Գ. կաթ. Ցովսէփեան**, Խաղբակեանք կամ Պոռշեանք, էջ 436; **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 317:

[4] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար, Մասն Ա, էջ 214: Ասփայի մօր՝ Հասան Զալալի կրտսեր դուստր Միհա – Միհախաթունի մասին (մահացած 1298-ին) աղբիւրների տուեալները տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 226-227:

[5] **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 17:

տուծոյ, ես՝ Մամքան, ամուսին Արիականին Հասանա[յ] եւ որդի մեր Գրէգոր, տէրք գոլով տեղոյս հայրենաւք, եւ մեր պարոնէքն հաստատեցին, ի ՈՁԺՋ թվին [=1267 թ., ոչ թէ՝ 1307] տվաք ի սուրբ ուխտիս զՇովատեղ, զՋաջուռանց, զՋոլբէկանց»), որը Ս. Բարխուդարեանը շտապել էր վերծանել «Ծ»[1]: Իրօք, տառը տարբերւում է գրութեան սկզբում եւ վերջում առկայ Ծ-երից ու նմանւում է «զժամն» բառի ժ-ին: Ճիշտ է, պէտք է նկատել, որ գրուածի երկրորդ մասն աւելի ուշ շրջանում է յաւելուել («Ես՝ Գրիգոր, տվի զՋագունանց հողերն զմեր բաժին իւր չորեցովն: Որդի [ի]մ տէր Սուքիաս եւ միաբանք սահմանեցին... որ լինի իմ մաւրն եւ ամուսնո[յ] իմ Ասփին...»), իսկ վերջին տողը («...Մոխրաբաքս մեր բաժին տվաք. Թ[ո]ւխ ՈՁԿԱ: [=1312 թ.]»)՝ էլ աւելի ուշ: Հրատարակչի վրիպումը կրկնել է նաեւ Գ. Կիրակոսեանը՝ պնդելով, թէ Մամքանը դեռ կենդանի էր 1307-ին[2]: Իրականում՝ Հասան Արիականի կնոջ 9-տողանոց շիրմաքարի վրայ, որն ընկած է Դադիվանքի «ժամատան» մէջ (կէսից ճաքած), ընթերցւում է. «Այս է հանգի/ստ Մամքանի/ն, ամուսնո[յ] Հա/սանա[յ], դստե/ր Քրդին եւ խոր/իշահի, մաւրն / Գրէգորո[յ]: Աղա/չեմ յիշեցէ՛ք / առ [Քրիստոս] [ո՛չ թէ՝ «յիշել ի բարի»]. Թվին ՈՁԾԵ: [=1306 թ.]»[3]: Ի դէպ, Ս. Բարխուդարեանը չի տեսել վիմագիրը եւ օգտուել է Մ. Բարխուդարեանցից[4] ու Մեսրոպ Տէր-Մովսիսեանից՝ անելով շատ անյաջող վերականգնումներ. «Բարխուդարեանցը Թուականը նշանակել է ՈՀԷ:, ... Տէր-Մովսիսեանը՝ միայն ՈՁ: Մեզ Թւում է, որ սխալւում են, որովհետեւ հէնց Դադի վանքում ՈՁԿԱ: (1312 թ.) ունի նուիրատուական մեծ եւ կարեւոր արձանագրութիւն, հետեւաբար տապանագրի վրայ տասնաւորը սխալ է վերծանուել, այն պէտք է լինի ՈԿ:[!]»[5]:

Արդ՝ մի քանի այլ բնագրեր «Դօփի որդի» են կոչում արդէն Գրիգոր Զինուորի հօրը՝ Հասան Բ «Արիականին» (վերջինիս կին Մամքանը դուստրն էր Արագածոտնի յայտնի իշխան Քուրդ Վաչուտեանի[6]): Օր.՝ Խաչատուր Կեչառեցին 1295 թ. իր «Ողբ վասն աւերման տանս Արեւելեան» երկում գրում էր. «Զհասանն յիշեմ զխաչենեցի, / Որ մականուամբ էր Որդի Դօփի...»[7]: Երկի միւս ձեռագրական տարբերակում մի փոքր այլ կերպ է. «Զհասանն յիշեմ ըզխաչենցի, / Որ մականունն էր Զալալ-Դօլի, / Զմիւս Հասանըն՝ զորդի Դօփի, / Զհաւատարիմն եւ զերկիւղալի»[8]: Ամ-

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 206-207, ին 724: Հմմ. **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 114; **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 15, ծն. 23:

[2] **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, էջ 187-188:

[3] **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 117, ին 64:

[4] Տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 206:

[5] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 214-215, ին 758:

[6] Աղբիւրների առատ տուեալները տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 234-243 (մասամբ լրացնելի է՝ Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 315, ին 1294, էջ 317, ին 1299, 1300, էջ 328, ին 1334, էջ 355, ին 1427):

[7] Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, Հայապատում, հտ. Բ, էջ 527; **Գ. կաթ. Ցովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 391:

[8] Տե՛ս **Մ. Թ. Ավդալբեգյան**, Խաչատուր Կեչառեցի, XIII-XIV դդ., Եր., 1958, էջ 132:

*րի Ս. Սարգիս եկեղեցու՝ 6 տողով պահպանուած շինարարական վիմագրի սկզբում ունենք. «Թ<u>ուին</u> :ՉԻՀ: [=1279 թ.]: / Ի հայրապետութի<u>ն</u> տէր Աթ/անասի, ի պարոնութի<u>ն</u> Դուփին որդ/ոյն, Ոհան երէց ու Ոհաննէս շինե/ցաք զՍ<u>ուրբ</u> Սարգիսս...»[1]: Ծարից ոչ հեռու գտնուող Գետամիջոյ վանքի հարաւային ճակատին եղած 5 ծաւալուն տողերով 1301 թուակիր շինարարական վիմագրում ի մասնաւորի գրուել է. «...մեք՝ տէր Յովհաննէս Դոփեան [իմա՛ Դոփի զաւակ]..., հասաւ մեզ հրաման ի նախահարցն մերոց՝ գնալ ի մեր հայրապետացն յառաջնոց յաթոռն հռչակելին Հաղբատ, այլ դարձ արարեալ ի մեր հայրենական եւ բնիկ տունս հարազատ աւագ եղբաւր Հասանա[յ] քաջ զաւրականին եւ հռչակաւոր Արիացելոյն, որ եւ որդի իւր Գրիգոր՝ սիրող եկեղեցո[յ] եւ քահանայից, եւ ամուսինն իւր բարեհամբաւ Ասփա, դուստր մեծի կոմսի Տարսայիճին...»[2]: Իսկ Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու պատին Գրիգոր Գ Ծարեցու թողած նուիրատուական վիմագրում կարդում ենք. «Ի :ՉՄԲ: [=1303 թ.]. կամաւ ամենակալին Ա<u>ստուա</u>ծոյ, ես՝ Գրիգոր իշխան, որդի Հասանա[յ] իշխանի, թոռն Դաւփին, միաբանեցա[յ] Ս<u>ուրբ</u> Նշանիս եւ ետու արդիւնս... հաստատեցին ի տարին :Բ: աւր պատարագ. :Ա: Հասանա[յ] առնեն եւ :Ա: Մամքանա[յ] անխափան»[3]: Տեղին նշենք նաեւ Հանդաբերդի նորայայտ վիմագրի մասին. «[Չ]աս<u>ն</u> եւ [Մ]ամքան յիշեցէ՛ք ի Ք<u>րիստո</u>ս: Գրիգ<u>որ</u>»[4]:

Շատ աւելի ուշ՝ ԺԴ դ. աւարտին, Դօփ էր կոչւում նաեւ Լանկ-Թամուրի արշաւանքին 1387 թ. զոհ գնացած «վերջին» Հասան Մեծ-ը (օր.՝ 1411 թ. Աւետարանի յիշատակարանում եւ Գրիգոր Խլաթեցու մօտ)[5]: Դադիվանքի կաթուղիկէի արտաքուստ հարաւային պատի վիմագրերի մէջ ունենք նաեւ անթուակիր (բայց Քուրդ Անբերդցու նշման հիման վրայ մօտ 1330-1340-ական թուերին վերագրելի), փակագրերով հարուստ մի բնագիր. «Կամաւն Ա<u>ստուածո</u>յ, ես՝ Գոնցէս ու որդիքս՝ Հասան ու վարհամ, թոռն Դաւփանց, տվաք ի Դադի վանս զմեր հայրենիքն զԽուդ իւր սահմանովն, խասովն, վերին մարգով, վ<u>ա</u>ս<u>ն</u> սիրական հարսին եւ մեր Թաթունին՝ դստերն Քրդին Անբերդեցի, ամուսնո[յ] Հասանա[յ]: Եւ միաբանքս սահմանեցին :Ը:-աւրեցն :Ը: պատարագ անխափան վ<u>ա</u>ս<u>ն</u> Լունին[ը]...»[6]: Բ. Ուլուբաբեանը, թերեւս, շտապել է ընդունել Եսայի կաթողիկոսի «Տոհմաբանութեան» տարբերակը՝ այս վիմագրում յիշուած Հասանին համադրելով 1387 թ. զոհուած Հասան Մեծի

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 218, հմր 766; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 65: Այս վիմագրում յիշուած Աթանաս «հայրապետն» իրականում Դադիվանքի վերոնշեալ յայտնի *վանահայրն* է (տե՛ս աստ, էջ 326, ծն. 2):

[2] **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 407-408; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 223-224, հմր 798; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 67-68:

[3] **Ց. եպ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի, հտ. Բ, էջ 185. հմմ. **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 17:

[4] Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 28; **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան**, Հանդաբերդի վանքը, էջ 77:

[5] Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն I, էջ 122, 275:

[6] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 203, հմր 716; **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 110, հմր 3:

հետ (կինը՝ Խոնձայ)[1]: Վերջինս, ըստ ամենայնի՝ եղել է նախորդ Հասանի թոռը, իսկ այս վիմագրի Գոնցան եղել է կինը Գրիգոր Զինուորի Սարգիս անունով թոռան: Յիշենք նաեւ «Թոռն Դաւիթին» բառերի ուշ գրական արձագանքը Սոթքի Ազատ գիւղի եկեղեցու՝ ժէ դ. վիմագրում. «Որդւոյ Սարգսի, թոռնեայն Դոփայ, քոյր Մեծին Իւանէի եւ սպասալար Զաքարէի»[2]: Այս բոլոր փաստերն ամփոփելով՝ տեսնում ենք, որ ոչինչ չի խանգարում՝ Դօփ Զաքարեան իշխանուհու ամուսին Հասանին համարելու հէնց Հասան Մեծ կրօնաւորեալի «հողանիւթի»՝ Ծարի բաժինը ժառանգած Գրիգոր («Ղարա-Գրիգոր») որդու առաջնեկը:

Յաւելենք, որ «Թարգմանչաց» Աւետարանի վերոնշեալ 1312 թ. յիշատակարանում Գրիգոր Դ Ծարեցու որդի Սարգիս եպիսկոպոսն ասում է. «Ամուսնացեալ [իմա՛ իր հայրը] ընդ դստեր Տարսայիճ իշխանի, ընդ ամենաւրհնեալ պարկեշտի տիկնոջն Ասփային՝ ծնանի ի նմանէ ուստերս եւ դստերս...»[3]: Ըստ այդմ՝ հնարաւոր է Սարգսի եղբայրներ համարել է՛ւ Վահրամին, որը հայրն էր եղեգիսում թաղուած օրիորդ Խոշի եւ Սարգիս իշխանի (ըստ Եսայի Հասան-Ջալալեանցի՝ «Դօփեանց տոհմաբանութեան»), է՛ւ այն «վախախ հանիկի» անանուն ամուսնուն (նրա Վարդան որդու 5 զաւակները յիշուած են 1330 թ. Ջղաւնայ անապատի Աւետարանի յիշատակարանում), որին Բ. Ուլուբաբեանը փորձում է «դարձնել» Զաքարեան Դօփ իշխանուհու անյայտ որդի[4]: Բայց Վահրամն էլ, թերեւս, պիտի համարուի Գրիգոր Զինուորի երեք որդիներից ո՛չ անդրանիկը. աւագ որդին (ենթադրաբար՝ վաղամեռիկ) պիտի ստացած լինէր «Արիական» պապի անունը՝ Հասան:

Բաժին 3
ՆԵՐՔԻՆ ԽԱՋԷՆԻ – ԽՕԽԱՆԱԲԵՐԴԻ ԻՇԽԱՆԱՃԻՒՂԸ (ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՆԵՐ)

Դօփեան իշխանատոհմի վերաբերեալ այս կարեւոր ուղղումից յետոյ էապէս ուղղելի են թւում նաեւ Սակո իշխանի եւ, այսպէս կոչուած՝ Սակռեան իշխանատոհմի մասին գրականութեան մէջ արմատաւորուած ու Բ. Ուլուբաբեանի գրքում ամփոփուած մտայնութիւնները[5]: Դրանց վերաբերեալ արդէն բաւականին հան-

---

[1] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 233-234:
[2] Դիվան հայ վիմագրության, պր. IV, էջ 371, ին 1495, էջ 370, ին 1487 (հմմ. աստ, էջ 328):
[3] ՄՄ Ձեռ. 2743, թ. 183բ; ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 84; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ դար, Մասն Ա, էջ 215:
[4] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 321-327: Իրականը հմմ. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 224-225; **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, էջ 78; **Գ. կաթ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 437; **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, էջ 199-200: Տե՛ս նաեւ **Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները, էջ 121. «Համաձայն զանգի վրայ [Լուսակունք գիւղի եկեղեցու – *Ա. Յ.*] փորագրուած արձանագրութեան՝ այն ՉԿԳ (1314) թուականին [Դադի] վանքին էր նուիրել Դօփեան Վահրամ իշխանի որդի Սարգիսը»:
[5] **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 157-159:

դամանալից վերապահում է արել երջանկայիշատակ Գեղամ Կիրակոսեանը[1]: Ի մասնաւորի, նա ցոյց է տուել, որ Հին Վաղուհաս գիւղաւորեղիի խաչքարի եւ Բերդաձորի Ս. Գրիգոր վանքի միանաւ եկեղեցու հիւսիսային պատի վիմագրերում (առաջինը յայտնի է միայն Խ. Դադեանի ընթերցմամբ[2]) 1216 եւ 1224 թթ. Սակռ անունով իշխանն իրեն կոչում է «որդի Վախտանգա[յ]», այսինքն՝ պարզապէս Տանգիկի, եւ «եղբայր Հասանա[յ]», այսինքն՝ պարզապէս Ջալալ Դօլայի:

Նշուած առաջին վիմագրում ընթերցուել է. «Թիւն :ՈԿԵ: [=1216 թ.]: Ես՝ Սակռ, որդի Վախտանգա[յ], կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգո[յ] իմո[յ] եւ ետու զԹղեկրա[յ] այգին իւր հողով եւ կատապանաւ եւ Եզնանստին երկիրն ի Սուրբ Գրիգոր Բերդաձորա[յ] եւ զբախերին Մատաղիսն եւ զճաքեցանց երկիրն եւ :Ա: ջաղաց, <u>ի ժամատուն քե</u> [փխն. վերջին 3 անիմաստ բառերի, գուցէ, վերծանելի է՝ «:Ի: ժամ ետուն վասն» – Ա. Յ.] հոգո[յ] փրկութիւն ամուսնո[յ] իմո[յ], ի հայրապետութեանն տէր Յոհաննիսի...»[3]: Երկրորդ վիմագրում 16 տողով ասւում է. «Թիւն :ՈՀԳ: էր [=1224 թ.]: Ես՝ Սակռ, որդի Վախտանգա[յ], եղբայր Հասանա[յ], շինեցի զեկեղեցիս եւ ետու զորդի իմ զԳրիգորս՝ սպասաւոր, եւ զիմ արկած այգին ի ճաք իւր կատապանովն՝ իմ հոգոյս...»[4]: Անկասկած, երկրորդ վիմագրում նշուած նոյն Գրիգոր որդին է տարիներ անց եկեղեցու նորոգման առիթով նոյն պատի կենտրոնում 7 տողով արձանագրել. «Յիշխանութեան բարեպաշտ արքա[յ]ին Ջալալ Դաւլին եւ որդ[ոյ] իւրոյ Իւանոյ Աթաբակին, ես՝ Գրիգորս[5], որդի Սակռի, վերստին շինեցի զեկեղեցիս ի թուէս :ՉԸ: [=1259 թ.], եւ սպասաւորք սորա պարտին ի տարրոջ :Ա: ժամ Մեծ հնգշաբաթին ինձ՝ Գրիգորէս»[6]: Ս. Բարխուդարեանն այս վիմագրի թուականը վերծանել է «ՉԼ» (=1281), որը սրբագրելի է թուում՝ «ՉԸ» (=1259 թ.): Այդ տարում՝ Իւանէ Աթաբակի հայր Հասան Ջալալի նահատակուելուց 2 տարի առաջ, «տէր Գրիգորէս»-ը յիշուած է նոյն եկեղեցու հարաւային պատին Ամարասի եպիսկոպոսի թողած 13-տողանոց վիմագրում, որը նշում է շէնքի, անշուշտ, նոյն նորոգումը («Թվին :ՉԸ: [=1259 թ.]. ես՝ տէր Գրիգոր Ամարասա[յ] եպիսկոպոս, միաբանեցա[յ] սուրբ ո[ւ]խտիս եւ ետու զամէն վարձս վարդպետին, որ շինեց զեկեղեցիս: Առաջնորդ տեղիս տէր Գրիգորէս եւ ա[յ]լ միաբանքս կարգեցին ինձ ի

---

[1] **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, էջ 171-175:

[2] **Խ. Վ[րդ. Դադեան]**, Արցախ. Երկասիրեց՝ Մ. եպ. Բարխուդարեանց, – «Արարատ», 1896, էջ 81 (վերահրատ.՝ **Խ. ծ. վրդ. Դատեան**, Երկերի ժողովածոյ, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2006, էջ 200):

[3] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 114, հմր 382:

[4] Անդ, էջ 115-116, հմր 384: Հմմ. **Գ. Ե. Կիրակոսյան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, էջ 174-175:

[5] Սեդրակ Բարխուդարեանը վերծանել է «Գրիգորիս», թէպէտ ստորեւ եւ երեք հարեւան վիմագրերում արձանագրուած անուանաձեւն է «Գրիհորէս» (տե՛ս նաեւ Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 117, հմր 388) եւ «տէր Գրիգորէս» (անդ, էջ 116-117, հմր 385, 389):

[6] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 116, հմր 387: Սեդրակ Բարխուդարեանը վերջին բառը քերականական համապատասխանութեան նկատառումով վերականգնում է «Գրիհորէս[իս]»:

տարոջն ։Գ։ ժամ»)[1]. վրիպումը, գուցէ, Ը տառի աջ ստեղնը թուականին յաջորդող կրկնակէտի հետ շփոթելուց է։ Բերդաձորի Ս. Գրիգոր վանքի այս նոյն միանաւ եկեղեցու գաւթում պահպանուել է նաեւ Սակո իշխանի գերեզմանաքարը՝ 9-տողանոց, ցաւօք, անթուակիր տապանագրով («Այս է հանգիստ բարեպաշտ պատրոնին Սակոի, զոր տացէ Քրիստոս սմայ զարքա[յ]ութիւն երկնից. ամէ՛ն»), որը Ս. Բարխուդարեանն իրաւացիօրէն վերագրում է ԺԳ դ. կէսերին[2]։

Այսպիսով, Վախտանգ [Տանգիկ]ի որդի եւ Հասան [Ջալալ]ի եղբայր «Սակո» իշխանը ոչ մի կապ չունէր Ծարի իշխանաճիւղի հետ, ինչպէս յաճախ կրկնւում է գրականութեան մէջ։ Փոխարէնը՝ նա, ինչպէս կը տեսնենք, պարզապէս պէտք է նոյնացուի Հասան Ջալալի՝ Գանձասարի շինարարական եւ այլ վիմագրերից, Կիրակոս Գանձակեցուց ու Վարդան Արեւելցուց՝ Ջահարէ եւ Նասրադօլա (Նասր-Դօլա) անուններով յայտնի եղբօր հետ[3]։ Մեծարանից Ս. Յակոբաւանքի երկու վիմագրերում Ջաքարէն հանդէս է գալիս իբրեւ նուիրատու։ Դրանցից մէկում (հիւսիսային եկեղեցու մուտքի մօտ, 23 տող, որ ընթերցել է Խ. Դադեանը) յիշատակւում է նաեւ նրա կին Արզուխաթունը, ինչպէս նաեւ վանահայր Սարգիսը, որը թուագրուած յիշատակումներ ունի 1223, 1225 եւ 1241 թթ. վիմագրերում (վերջինում՝ տէր Վարդանի հետ)[4]. «Ես՝ Ջաքարէ, որդի Վախտանգա[յ], տ[ուռ]ն Խաչինո[յ], տվի զխնձորիտակոռ երկիրն ի տունս Մեծարեանց։ Տէր Սարգիս ետ մեզ ։Ժ։ աւր ժամ ի տարում, ։Ե։՝ ինձ, ։Ե։՝ ամուսնո[յ] իմո[յ] Արզուխաթունին...»[5]։ Նոյն եկեղեցու սրահի մէջ բացուող մուտքի մօտ՝ անկիւնի 17-տողանոց վիմագրում, նշւում է. «Ես՝ Ջաքարէ, որդի Վախտանգա[յ], տվի զջաղացն Մխիթարա[յ] հոգոյն։ ։Ջ։ ժամ տվին։ Որ ի Ս[ուր]բ Նշանէս հանէ՝ ։ՅԺՀ։ հայրապետացն նզոված է։ Ջհասան յիշեցէ՛ք։ Ժամս Ս[ուր]բ Գիորգա[յ] տաւնին առնեն»[6]։ Բնագրի վերջում յիշուած Հասանն, անշուշտ, Հասան Ջալալն է, իսկ սկզբում յիշատակուած Մխիթարը, ըստ ամենայնի՝ Ջաքարէ իշխանի վաղամեռիկ որդին։

Ընդ սմին, Արագածոտնի Յովհաննաւանքի մի, ցաւօք, չթուագրուած վիմագրից երեւում է, որ վերը նշուած Արզուխաթունը Ջաքարէի միակ կինը չի եղել (որ Ջաքարէն առաջին կին է կորցրել, նախ եւ առաջ ուղղակի երեւում է վերը բերուած Բերդաձորի Ս. Գրիգորի 1216 թուակիր վիմագրի՝ «հոգո[յ] փրկութի[ւն] ամուսնո[յ] իմո[յ]» բառերից)։ Վանքի ժամատան ներսի արեւելեան պատին 7 տո-

---

[1] Անդ, էջ 116, ճ[մր] 385։
[2] Անդ, էջ 120, ճ[մր] 399։
[3] Անդ, էջ 40, ճ[մր] 82 («իմ եղբաւրն Ջաքարէի»); **Կիրակոս**, գլ. Լ, էջ 268 («զՋաքարէ»); **Վարդան**, էջ 184 («զՋաքարէ, որ եւ Նասրատալէ»)։
[4] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 13, ճ[մր] 4, 5 («Տէր Սարգիս»), ճ[մր] 6 («տէր Սարգսի եւ տէր Վարդանի»)։ Սարգիս անունով վանահայր Ս. Յակոբաւանքում եղել է նաեւ 1270-1290-ական թթ., տե՛ս անդ, էջ 16, ճ[մր] 15 («տէր Սարգիս»), էջ 16-17, ճ[մր] 16, 17, 18 (վերջին երեքում, գուցէ, ճիշտ կը լիներ վերծանել ոչ թէ «տէրս», այլ «տէր Սարգիս»)։ Անթուակիր երկու վիմագրերն էլ տե՛ս էջ 27-28, ճ[մր] 28, 29 («տէր Սարգիս»)։
[5] Անդ, էջ 20, ճ[մր] 29։
[6] Անդ, ճ[մր] 28։

ղով փորագրուած է. «Ողորմութ֍ Աստուծոյ, ես՝ Զաքարիա, որդի Վաղթ/անկա[յ], եղբայր Զալալին, եւ ամուսին իմ Խորի/շահ, դուստր Վասակա[յ], միաբանեցաք սուրբ ուխ/տիս. եւ գնեցաք զԱշ[տ]արակո[յ] Նորքն եւ / տվաք ի սբ բքս, եւ սոքա խոստացան :Զ: / աւր ժամ ի տաւնի Թէոդոսի Թագաւորին: / Ով խափանէ, դատի՛ ի Տ֍է»[1]: Իսկ Յովհաննավանքի կաթուղիկէ եկեղեցու արտաքուստ արեւմտեան պատին 8 տողով վիմագիր է պահպանուել միայն Զաքարէի անունից (տողասկիզբները ծածկուած են պատին յենուած մեծ խաչքարի յետեւում). «{...} ես՝ Զաքարիա, որդի Վախթա/{նկա[յ], ե}ղբայր Զալալի՝ տէր ամեն/{այն խաչէնո[յ], քեռո}դի մեծ սպարապետին / {Իւանէի[՞], միաբանեցայ[՞]} սբ ուխտիս վանացս / {Յովհաննու[՞], ...}մութեան եղբարցս գնե/{ցի ...} եւ ետու ի սբ եկեղեցիս, ս/{ոքա խոստացան[՞] ...} աւր ժամ ի տաւնի Թէոդոսի / {Թագաւորին[՞] ... ն}զովեսցի՛. ամήν»[2]: Երկրորդ բնագրում «մեծ սպարապետին» բառերը, անշուշտ, վերաբերում են նուիրատուի նշանաւոր քեռի Իւանէ Զաքարեանին, ով աւագ եղբայր Զաքարէի վախճանից յետոյ (1212/1213), ի տարբերութիւն նախորդ տասնամեակների, մինչեւ իր մահը (1233-ին) իբրեւ սպարապետ յիշատակւում է արդէն մենակ[3]:

Այս բնագրերից երեւում է, որ Զաքարէն Խաչէնից Արագածոտն էր հասել հէնց խնամախօսութեան առիթով: Այդ պատճառով սկզբում (երկրորդ նուիրատուական վիմագրում) նա հանդէս է գալիս միայնակ, բայց՝ իր եւ իր հարազատների բոլոր տիտղոսների թուարկումով, իսկ այնուհետեւ (առաջին վիմագրում)՝ արդէն նորապսակ կնոջ, ըստ ամենայնի՝ հէնց տեղի ոմն վասակ իշխանի դուստր Խորիշահի հետ[4]: Վերջում նշենք նաեւ, որ, առաւել մեծ հաւանականութեամբ, Զաքարէ – Սակռի այս երկրորդ՝ Խորիշահ կնոջն է պատկանում Զարեքդարում Մեսրոպ Տէր-Մովսիսեանի կողմից ընթերցուած անթուակիր վիմագիրը. «Կամաւն Աստուծոյ, ես՝ Խորիշահ, ամուսին Զաքարո[յ], տուի զիմ Աւետարանն Աստուածածնին, տէրս եւ այլ միաբանքս :Բ: աւր պատարագ տուին ինձ Աւետեաց Աստուածածնի»[5]:

---

[1] **Կ. Ղաֆադարեան**, Յովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները, էջ 105, ճ֍ 55:

[2] Անդ, էջ 96, ճ֍ 37: Որոշ սրբագրումներ ենք կատարել տողատման ու կէտադրման մէջ (ըստ լուսանկարի ու գրչանկարի) եւ հաւանական վերականգնումներ արել կորսուած տողասկիզբներում:

[3] Զաքարեանների իշխանատոհմի մասին տե՛ս **Աս. Ծաճնազարեանց**, Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դէպի Ջորագետ եւ նախորդները (ԺԱ-ԺԲ դար), – «Ծողակաթ». Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածոյ, գիրք Ա, Վաղարշապատ, 1913, էջ 66-83; **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», էջ 61-66; **Հ. Գ. Մարգարյան**, Զաքարյանների ծագումը, էջ 156-175: Իսկ նրա ուշմիջնադարեան շառաւիղների վերաբերեալ (Երկայնաբազուկ – Մխարգրձելի – Արղութեաններ) նոր դիտարկումներ տե՛ս **Р. Абраамян**, Очерки по армянской генеалогии, Москва, 2016, с. 61-69.

[4] Վերջինս Կ. Թումանովի մօտ ներկայացուած է իբրեւ դուստր «Վասակ-Սմբատի», այսինքն՝ ըստ հեղինակի՝ Հասան Կրօնաւորեալի՝ 1201-ին զոհուած Վասակ Նահատակ որդու (**C. Toumanoff**, Manuel de généalogie, p. 238). Սակայն այդ՝ նաեւ մօտ հարազատութեան առումով անհաւանական վարկածի համար որեւէ աղբիւրագիտական հիմք մատնանշել հնարաւոր չէ:

[5] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 134, ճ֍ 450:

Գանձասարի շինարարական վիմագրում Հասան Ջալալը Ջաքարէից բացի նշել է նաեւ իր Մարին քրոջը («իմ քուերն Մարինո[յ]») եւ միւս երկու եղբայրներին՝ Դօլային («իմ եղբաւրն Դաւլին») եւ Իւանէին («իմ եղբաւ[ր]ն Իւանէին»): Կրկին մանրամասնելով՝ նշենք, որ Գանձասարի պարսպապատի մէջ հետագայում դրուած երեսապատման երկու քարերի վրայի վիմագրում (ներկայումս առկայ է լոկ երկրորդը, իսկ Յ. Օրբէլին տեսել էր ամբողջը) յիշուած է Հասան Ջալալի կրտսեր եղբայր Իւանէի որդին («{կամաւն Աստուծոյ[?], ես}ս՝ Վասո[ա]կ, որդի Իւանէի, թոռն / {Վախտա}նգա[յ], միաբանեցա[յ] սուրբ ու/{խոխս, տվի[?]} զԲարուտանց այգին... / ի մեր տապանատունս...»)[1]: Գուցէ, այս Վասակն է Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցու հիւսիսային պատին թողել նուիրատուական հետեւեալ 5-տողանոց անթուակիր վիմագիրը. «Ես՝ Վասակ, տվի ի սուրբ ուխ[տ]ս զՀավախաղացն ի Շատլոյսին կալէն ի վեր ի վերա[յ] Գուրակա[յ]...»[2] (Հավախաղաց տեղանուան մէջ, որ այստեղ կաչաղակաբերդն է, Ս. Բարխուդարեանը երկաթագիր Վ-ն վրիպմամբ վերծանել է իբրեւ բոլորագիր յ տառախումբ՝ «զՀայլախաղացն»): Այս Իւանէի միւս որդի Յովհաննէսը Գանձասարի վանահայրն էր (Ա-ն), ով 9-տողանոց մի վիմագրում (գաւթի արեւմտեան մուտքի բարաւորին) ի մասնաւորի ասում էր. «Թիւ ՈՀ: [=1271 թ.]. կամաւն Աստուծոյ, ես՝ Յոհաննէս, որդի Իւանէի, առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարա[յ], հրամանաւ տեառն Խաչինո[յ] Աթաբակին, ի յիմ հալալ արդեանց գնեցի զվարդանաթաղս»[3]:

Ինչ վերաբերում է Հասան Ջալալի նախավերջին եղբօրը՝ Դօլային, ապա թւում է, թէ հէնց նա է եղել Հասան Ջալալի «եղբէր» այն Սմբատը, որի՝ Վաճառի ու Ծմակահողի միջեւ գտնուող խենչալ խաչ վայրում կանգնեցրած 1216 թուակիր խաչքարի վիմագրում ունենք. «Թվիս ՈԿԵ: [=1216 թ.]: Ես՝ Սպատ, որդի Վախտանգայ՝ տեառն Խաչինոյ, եղբէր արքէին Հասանայ, տէր Մեղրենեցն, շատ ա[շ]խատութեամբ շինեցի զկարմիր քա[ր]ն...»[4]: Դժուար չէ նկատել, որ այս նոյն Սմբատի որդին եղել է նոյն Մեղրենեցի (նաեւ՝ Մեղրենիս) տէր Գրիգոր Հեջուբը, որին Կիրակոս Գանձակեցին անուանում է նաեւ Գրիգոր Տղայ («զոր Տղայն կոչէին գգուանօք, յազատացն Խաչենոյ»)[5] եւ որի՝ Մեծարանից Ս. Յակոբավանքի սրահի հարաւային պատին թողած 13-տողանոց վիմագրում ունենք. «Ես՝ Գրիգոր, որդի Սմպատա[յ], միաբանեցա[յ] տանս Մեծարեանց... եւ տուի... :Ա: կիսավար իւր հողով ի Մեղրենիսն յիմ հայրենաբաժինէն, իմ հաւր տուած վասուրանց հողն՝ Ջալալա[յ]

---

[1] Անդ, էջ 71, հմր 204 (լուսանկ.՝ տախտ. XXI):
[2] Անդ, էջ 118, հմր 392:
[3] Անդ, էջ 50, հմր 122:
[4] Անդ, էջ 83-84, հմր 253: *Սմբատ – Սմպատ* անձնանուան «Սպատ» ձեւի մասին մանրամասն տե՛ս աստ, էջ 266-268:
[5] **Կիրակոս**, գլ. ԺԷ, էջ 222, գլ. ԻԶ, էջ 256, գլ. ՃԵ, էջ 358-359 («չոգաւ առ նա եւ մեծ իշխանն Խաչենոյ եւ կողմանցն Արցախու Հասան, զոր Ջալալն կոչէին գգուանօք... Եւ նա [Սարթախը 1250-ին] սիրով եւ մեծարանօք ընկալաւ զնա եւ զորս ընդ նմայն էին՝ զիշխանն Գրիգոր, զոր սովորութեամբ Տղայն կոչէին, եւ էր ծեր յայնժամ, եւ զԴեսում իշխանն՝ պարկեշտ պատանի, եւ զվարդապետն Մարկոս, եւ զեպիսկոպոսն Գրիգոր»):

Դաւիթն իշխանութեամբ... թ֍ին :ՈՂ: [=1241 թ.]»[1]: Գօշավանքի Ս. Աստուածածին եկեղեցու խորանի մէջ մինչ այդ իր թողած 7-տողանոց վիմագրում նա ի մասնաւորի յայտնում էր. «Ես՝ Գրիգոր՝ հեջուբ ամիրսպասալար Աւագին, որդի Սմպատա[յ], որդոյ Մեծին Վախտանգա[յ]՝ կողմնապետաց աշխարհին Արցախա[յ], առեալ աթաբակի Իւանէի՝ սնոյց զիս եւ իւր տանն եւ Աւագին առաջնորդ կացոյց: Զի ոչ ունեի զաւակ, յուսով խնդրեցի զայս եկեղեցի՝ ինձ շիրիմ հանգստեան. Աւագն ինձ երեսս...»[2]: Թէպէտ արձանագրութիւնն անթուակիր է (Կ. Կոստանեանցն էլ վրիպմամբ վերագրել է 1198-ին), բայց իրականում նրա ժամանակը պիտի յաջորդի Իւանէ ամիրսպասալարի մահուանը եւ նախորդի Հեջուբի կառուցած Գօշավանքի Ս. Գրիգոր կաթուղիկէի աւարտին, այսինքն՝ թուագրուի մօտաւորապէս 1233/1234 – 12̄37 թթ. միջակայքով[3] (վերջին կոթողի շինարարական վնասուած երկտող վիմագրի առաջին տողում մասնաւորապէս ընթերցւում է. «Ի թվ֍ին :ՈՁՁ: [=1237 թ.]. ես՝ Գրիգոր, որդի Սմպատա{...}»[4]):

Հետագայում Գրիգոր Հեջուբն, այնուամենայնիւ, ունեցել է որդիներ: Նրանցից Սմպատը (կինը՝ Թամար) Մեծարանից Ս. Յակոբավանքի սրահի հարաւային պատի արեւմտեան կողմի իր 10-տողանոց վիմագրում ասում է. «Թագ[աւ]որ Ջալալայ Դովլին հրամանով, ես՝ Սմպատ, որդի Հեջբին, տվի էգատեղ Գրիգորոյ. նա ի տարումն :Դ: ժամ իրետ Յայտնութ֍ն, :Բ:՝ ինձ, :Բ:՝ Թամարին...»[5]: Համմ. նաեւ վանքի սրահի մէջ արեւելեան եկեղեցու արտաքին պատի վրայի խիստ վնասուած 9-տողանոց վիմագրում, որի առաջին տողում յստակ ընթերցւում է՝ «Թվ֍ին :ՈՂԹ: էր [=1250 թ.]», ապա երկրորդում՝ «ԵՍ՝ ՍՄ{...}»[6], որից կարելի է վերականգնել ՍՄ{ՊԱՏ} անունը (Ս. Բարխուդարեանը ենթադրում է ՍՏ{ԵՓԱՆՈՍ}-ի հնարաւորութիւնը): Նոյն պատին՝ մուտքի մօտ, պահպանուել է նաեւ Սմբատի Վարհամ եւ Հասան որդիների 16-տողանոց նուիրատուական վիմագիրը. «Թ֍ին :Ջ: [=1251 թ.!?]. Ջալալին հրամանաւ, ես՝ Վարհամ, Հասան, որդիք Սնպատա[յ], տվաք զԾովատեղին հողն մեր հոգոյն ի Մեծիրենց աթոռս. Տէր վ֍ն, միաբա֍քս տվին :Գ: ժամ Վարդէվառին, :Ա:՝ Հասանա[յ], :Ա:՝ Սնպատա[յ], :Ա:՝ Թամարի...»[7]: Այս բնագրի թուականի մէջ, անկասկած, պակասում է գոնէ տասնաւորը (Խ, Ծ, Կ կամ Հ), քանի որ Ներքին Խաչէնի Ջալալ իշխանն իր հօրը՝ Իւանէ Աթաբակին, փոխարինել է նրա մահուանից յետոյ, որը, ըստ Ստեփաննոս եպիսկոպոսի (Օրբէլեանի)

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 13, ճ֍ 6:
[2] Դիվան հայ վիմագրության, պր. VI, Իջեւանի շրջան, էջ 70, ճ֍ 140 (լուսանկ.՝ տախտ. ԼԲ):
[3] Գրիգոր Հեջուբի գործունէութեան մանրամասն քննութիւնը տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 197-201 (այստեղ տե՛ս նաեւ մէկ այլ՝ Հոռոմոսի Հեջուբի հետ չշփոթելու խնդրի մասին):
[4] Դիվան հայ վիմագրության, պր. VI, էջ 105-106, ճ֍ 236 (լուսանկարի մի մասը՝ տախտ. ԽԸ):
[5] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 15, ճ֍ 12:
[6] Անդ, էջ 14, ճ֍ 8:
[7] Անդ, էջ 14, ճ֍ 10:

տարեգրութեան՝ ընկնում է 1287 թուին[1]: Թերեւս, այդ տասնաւորը վրիպել է հէնց փորագրողը՝ իրեն տուած «պատուիրաթղթի» բնագիրը քարի վրայ փոխադրելիս: Յաւելենք, որ Գրիգոր Հեջուբի միւս որդի Մուշեղի՝ նոյն Ս. Յակոբավանքի գաւթի արեւելեան պատին թողած 10-տողանոց վիմագրում ընթերցւում է. «Ես՝ Մուշեղ, որդի Հեջբին, միաբանեցա[յ] սբ-ոբ ուխտիս, գնեցի զսբ-ոբ նշանս եւ զչեղացա[յ] ակն եւ տվի ի վանքս... Թվ[ին] :ՉԽԲ: [=1293 թ.]»[2]: Այսպիսով, վերը նշուած հարցադրման առումով էլ պարզ է դառնում, որ Վախտանգ Տանգիկի ու Խորիշահի երրորդ որդի Դօլան կամ Սմբատը 1212 թուականից շատ աւելի վաղ է ծնուել:

Արդ՝ Ջաֆարէ Վախտանգեանի անուան Սակառ ձեւը (արաբ. «որսի բազէ»), թւում է, թէ ոչ այլ ինչ էր, քան *Ջաֆառ անուանաձեւի մի տարբերակ: Նաեւ հաւանական է, որ այդ մականունը հանդէս է եկել դեռ Ջաքարէ – Սակոի մայր Խորիշահ Ջաքարեան/Երկայնաբազուկի պապի՝ Ջաֆարէ Ա-ի օրերում եւ ապա «ուղեկցել» է հէնց Խորիշահին. այս ձեւով է պարզ դառնում Վարդան պատմիչի կողմից՝ Վախտանգ Տանգիկին «Սակռեանց» կոչելու հիմքը[3]: Դա արդէն կարող է հեշտութեամբ կապուել այն իրողութեան հետ, որ վերջինիս կինը Սակռեան – Ջաֆարեան էր (հմմ. նոյնպէս կնոջ առիթով՝ Դօփեանց տոհմանուան ծագման զուգորդութիւնը):

Նշուած մօտեցմանը հակասում է լոկ այն հանգամանքը, որ ենթատեքստերից մէկում Սակառ է կոչուած նաեւ Հասան կրօնաւորեալի հայր Վախտանգը՝ իր մի թոռանը՝ «նահատակ» Վասակին յիշատակող վիմագրում, որը ներկայումս կորած է[4]: Եսայի Հասան-Ջալալեանցի վիմագրական տետրակին յանգող այդ բնագիրն է. «Յորժամ էր թուականն :ՈԾ: [=1201 թ.], բարեպաշտ պատրոնիկն Վասակ, թոռն կիւրիկայ թագաւորին, որդի Հասանայ [իմա՛ Մեծի], որդւոյ Սակառայ, ու[ռ]ն Հաթերքոյ, Հանդաբերթու, Հաւխախաղացին, եղբայր Վախթանկայ՝ նորին աթոռակալի, եբեր զխաչս եւ ոչ կարաց կանգնել վասն անպարապութեան. քանզի երթեալ եղեւ ի Գոլաշտեան [Սիւնիքում] եւ առ զնա յանօրինաց օգնութեամբն Աստուծոյ եւ բնակեցոյց անդ զորդին իւր եւ ինքն նահատակեցաւ ի վերայ քրիստոնէից, եւ իջեալ լոյս ի վերայ ի տեսութիւն բազմաց, եւ յետոյ :ՈԾ: թվին [=1201 թ.] կանգնեցին որդիք նորա Խոյդան եւ Խօչաղն յիշատակ հոգւոյ նորա եւ յերկարութիւն կե-

---

[1] Մանր ժամանակագրութիւններ, հտ. Ա, Կազմեց՝ **Վ. Ա. Յակոբեան**, Եր., 1951, էջ 48:

[2] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 16, ին 16:

[3] **Վարդան**, էջ 184: Սարգիս ամիրսպասալարի հօր եւ պապի համար տե՛ս, օր.՝ Սանահինում Ջաքարեանների տոհմական տապանատանը նրա գերեզմանին կանգնեցրած խաչքարի ճակատին սկսուող վիմագրում («Նշա՛ն Աստուծոյ, բարեխաւս լե՛ր ամիրսպասալար Հա[յ]ոց [եւ] Վրաց Սարգսի»), որի աւարտը խաչի տակ է (4 տողով). «Ի :ՈԼԶ: թուի [=*1187 թ.*] կատարեցաւ ի Քրիստոս Մեծն / Սարգիս, որդի Ջաքարէի, թոռն աւ/ագ Սարգսի: Որդիքս՝ Ջաքարէ եւ Իւ/անէ կանգնեցաք զխաչս. յիշեցէ՛ք» (**Կ. Ղաֆադարյան**, Սանահինի վանքը եւ նրա արձանագրությունները, էջ 178-179, ին 166-167:

[4] Դեռեւս Կ. Տէր-Մկրտչեանն է ստիպուած եղել գրել (**Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, էջ 51, ծն. 2), թէ Հասան Մեծի հայր Վախտանգի այդ անունը կարելի է համարել նրա երկրորդ անունը («...երեւի կամ պապի անունն է, կամ Վախտանգի երկրորդ անուն»):

նաց իւրեանց. որք յերկրպագէք, յաղօթս յիշեցէ՛ք»[1]: Սեդրակ Բարխուդարեանի ծանօթագրումներն են. «Ջումի տակի խաչքարի վրայ, [Խաղարայ] վանքից ներքեւ, Թարթառ գետի ափին, հին կամուրջի մօտ... Առնում ենք Եսայի կաթողիկոսի ձեռագրի արտագրութիւնից: Յուշարձանի գտնուած վայրն իսկ այժմ անյայտ է»[2]:

Արդ՝ ենթադրութիւնների մէջ խորանալուց առաջ, թերեւս, անհրաժեշտ է ուշադրութեան առնել այս Վախտանգին Սակաո կոչելու փաստի եզակիութիւնը: Մեզ հասած բնագիրն ակնյայտօրէն պատմողական, նովելային շարադրանքի տպաւորութիւն է թողնում: Բոլոր հրատարակիչներն այն քաղել են Եսայի Հասան-Ջալալեանցի սեւագիր տետրակից (կամ իրարից), ուստի «որդւոյ Սակառայ» ընթերցումը, որոշ հաւանականութեամբ, կարող է դիտուել իբրեւ ԺՀ դարի գիտնական-կաթողիկոսի կարողացած-վերծանածը՝ բուն վիմագրի «*որդւոյ Վախտանդայ» սպասելի ընթերցման հատուածում: Յիշենք, որ Վախտանգի հայրանունը, ըստ ամենայնի՝ պիտի գրուէր «Վասակայ», եւ դրա ընդգծուած տառերը եւս կարող էին Եսայի կաթողիկոսի համար վրիպման պատճառ դառնալ (բնօրինակի՝ «...որդի Հասանայ, որդւոյ [Վախտանգայ, որդւոյ Վասակայ], տեառն Հաթերքոյ...» ենթադրելի տարբերակում): Սրանից յետոյ կրկին նկատենք, որ արդէն հաւաստի պատմիչ Վարդանի բուն խօսքերը՝ «եւ միւս Վախթանկն [իմա՛ Տանգիկը] Սակռեանց՝ փեսայն Իւանէի», փաստօրէն, ուղիղ ցուցում է հէնց այն մասին, որ Սակռ անունը չի կարելի կապել Վախտանգ պապի հետ. չէ՞ որ վերջինիս «նոյնարժէք» թոռն էր նաեւ Հաթերքի Վախտանգը, իսկ նա, ըստ պատմիչի՝ Սակռեանց չէր:

Այստեղ տեղին է կատարել մի պատմաաշխարհագրական դիտարկում. եթէ Հասան Մեծի բաժանած «հողանիւթի» կալուածքներից մէկի մէջ (Վախտանգ Տանգիկ Սակռեանցի բաժնի) մտել է Բերդաձորի Ս. Գրիգոր վանքը՝ շուտով անցած Տանգիկի ու Խորիշահի երկրորդ որդի Ջաքարէ – Սակռ – Նասրադօլային, իսկ միւս կալուածքի մէջ (Ծարեցի Գրիգորի՝ Դօփ իշխանուհու սկեսրայրի բաժնի մէջ)՝ այդ վանքից ընդամենը մի քանի կմ արեւմուտք գտնուող Խադարավանքը, ապա կարելի է մտածել, որ Խադարայ եւ Բերդաձորի Ս. Գրիգորի վանական տիրոյթների սահմանաբաժան գիծը գալիս է շատ աւելի հին ժամանակներից ու դեռեւս վաղ միջնադարում իրարից բաժանել է աշխարհացոյցեան Հարճլանք եւ Մեծ Իրանք գաւառները: Ըստ այս մօտեցման՝ պէտք է ուղղում կատարել մեր «Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ» գրքի «Արցախի կենտրոնական եւ Սիւնիքի հիւսիս-արեւելեան գաւառները ըստ «Աշխարհացոյց»-ի» քարտէզում, որտեղ ոչ միայն Խադարավանքը, այլեւ նրանից արեւելք ընկած Բերդաձորի Ս. Գրիգորի վանքը շտապողաբար տեղադրել էինք Հարճլանք գաւառի մէջ:

Տեղին նշենք նաեւ նոյն գրքում շօշափուած մէկ այլ խնդրում սրբագրում կատարելու անհրաժեշտութիւնը: Հետեւելով նախորդ հետազօտողներին՝ մի դրուա-

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 129-130, ճ՝ր 432: Հմմ. Մ. եպ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 196 (անուանը ընթերցումն այստեղ «Սակոայ» է *ինքն.* «Սակառայ»-ի):

[2] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 129-130:

գում կրկնել էինք այն մտայնութիւնը, թէ ԺԹ դ. սկզբներին Տրտուի միջնահովտի աջափնեայ (հարաւային) մասը մինչեւ Արծաթահանքի լեռնաշղթան, հաւանաբար, եղել է ոչ թէ Ներքին, այլ Վերին Խաչէնի կամ Վախտանգ Հաթերքցու իշխանութեան տարածքում (էջ 247, ծն. 85)։ Բայց ներկայումս աղբիւրագիտական նիւթը հիմք է տալիս՝ պնդելու հակառակը[1]։ Օր.՝ Տրտուի աջափնեայ ձորալանջի կճողուտ գիւղից վեր գտնուող Ամենափրկիչ եկեղեցու դռան ճակատաքարի 8-տողանոց վիմագրում (նրա որոշ տառերի ընթերցումներ 1986 թ. ճշտել ենք տեղում՝ լուսահոգի Սամուէլ Կարապետեանի հետ) ունենք, առաւել մեծ հաւանականութեամբ, Վախտանգ Տանգիկի յիշատակումը. «Ի հայրապետութեան տէր Յա/կոբոսայ եւ յիշխանութեան Վախտան/գայ, որդոյ Հասանայ, ես՝ Յոհան/էս ու Սերոբ ու Սարգիս ու Գրիգոր որդ/ի Հարբածայրայ, շինեցաք զԱ̲ստուա̲ծածինս / ի մեր հայրենե[ա]ցս...»[2]։ Նոյնն է մի քանի կմ արեւմուտք ընկած Վաղուհաս գիւղի՝ «Մայրաքաղաք» կոչուած եկեղեցու բակի խաչքարի (ներկայումս՝ կորած) վիմագրում. «Ես՝ Յոհան դրան էդէցս Վախտանկայ կանգնեցի զխաչս... Թիվն ՈԿԲ։ էր [=1213 թ.]»[3]։ Ի դէպ, Ս. Բարխուդարեանը շտապողաբար ընդունել է Թուականի՝ Ս. Ջալալեանցի՝ ընթերցումը (ՈԿէ։ = 1218 թ.)՝ «խոտանելով» Մ. Բարխուդարեանցինը[4], որն աւելի իրական է թւում։ Տեղին հմմ. Վախտանգ Տանգիկի որդու դրան երէցի 7-տողանոց տապանագիրը Գեղարքունիքի Կոթ գիւղի գերեզմանատանը. «Թվին ՈՂ։ [=1257 թ.]։ Այս է հանգիստ Յոհանիսի՝ դրան երէցոյ Ջալալին...»[5]։ Վաղուհասի «Մայրաքաղաք» եկեղեցու գաւթի խորանի ճակատին ընթերցուել է նաեւ Կոստանդին Բարձրաբերդցի Հայոց կաթողիկոսի (1221-1267) պատուիրած ուշագրաւ արձանագրութիւնը (ներկայումս՝ կորած), որում մասնաւորապէս նշւում էր. «...միաբանեցայ եպիսկոպոսարանիս ի ձեռն հոգեւոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին, յիշխանութեան Մեծի Ջալալ Դաւլին եւ յառաջնորդութեան սորայ տեառն Ներսիսի Աղուանից կաթուղիկոսի... Ի թվիս ՈՂԵ։ էր [=1246 թ.]»[6]։

Ամփոփելով՝ չմոռանանք, որ Հասան Ջալալի հոգեւոր-մշակութային բազմակողմանի գործունէութեան վկայութիւններ են նաեւ Յայսմաւուրքը խմբագրելու՝ տէր Իսրայէլի ձեռնարկի հովանաւորումը եւ Վանական Վարդապետի հետ թղթակցութեան նորայայտ փաստը։ Վերջինիս՝ «Հարցմունք եւ պատասխանիք» երկի մի հատուածի մեզ հասած խորագիրն է. «Խնդիրք Վահրամա[յ] իշխանի եւ Ջալա[լ] Հայկենոյ գաւառի եւ պատասխանի Վանական վարդապետի»[7]։

---

[1] Իսկ հին միտքը դեռ տե՛ս **Ա. Մանուչարյան**, Հայոց եկեղեցու պատմության վիմագրագիտական-պատմագիտական ուսումնասիրություններ, էջ 178:

[2] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 91, հմր 278:

[3] Անդ, էջ 114, հմր 380:

[4] **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 192:

[5] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. IV, Գեղարքունիք, էջ 280, հմր 1186:

[6] **Մ. եպ. Բարխուտարեանց**, Արցախ, էջ 192; Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 114, հմր 377:

[7] Տե՛ս ՄՄ Ձեռ. 2189, թ. 211ա (ըստ՝ **Ա. Ի. Ծաճնազարյան**, Վահրամյանների իշխանությունը, էջ 174):

Անցնենք Ներքին Խաչէնի իշխանատոհմի հզօրութեան աւարտական փուլին: Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ Խօխանաբերդը հիմնայատակ աւերուել է մոնղոլների կողմից դեռեւս Հասան Ջալալ իշխանի կենդանութեան օրօք, եւ գրականութեան մէջ աւանդաբար ընդունուած է թուագրել դա մօտաւորապէս 1246-1247 թթ. (Յ. Օրբէլի, Բ. Ուլուբաբեան եւ ուրիշներ)[1]: Ըստ պատմիչի տեղեկութեան՝ Բուղայ հարկահանի գլխաւորած մոնղոլական զօրախումբը «քակեաց զանմարտնչելի բերդս նորա, զոր Խոյախաւանայ բերդ կոչէին, ըստ պարսկական բարբառոյն, եւ զԴեդն, եւ զՇիրանաքարն, եւ զայլ ամրոցս նորուն: Եւ այնպէս յատակեաց զնոսա, մինչեւ հետք անգամ ոչ երեւէին, թէ բնաւ շէն լեալ իցէ»[2]:

Սակայն դէպքի աւանդական թուագրմանը հակասում է մի տուեալ, որ տալիս է Կեչառոյքի արձանագրութիւնը՝ «ժամատան երդիկի կամարի [հարաւահայեաց] գարնէզի վերայ»[3]: Գաւթի երդիկի տակ՝ 7 մ բարձրութեան վրայ «կախուած» այդ վիմագիրը (որի որոշ տառեր մի վաղ նորոգման կրասուաղի տակ լոկ մօտիկից են «շօշափւում») ստուգել ենք տեղում 2010 թ.՝ վանքի ծառայողների սիրալիր օգնութեամբ, ուստի նրա վերծանութիւնը բերում ենք ամբողջութեամբ: Կամարի երկու շարք քարերի վրայի 6-տողանոց ծաւալուն բնագիրն ընթերցւում է այսպէս.

[1] *ԱԻԳՆՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱՅՆՈՒԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵ[Ա]ՆՆ, ԵՄ՝ ՋԱԼԱԼ ՀԱՍԱՆ, ՈՐԴԻ ՎԱԽԹԱՆԳԱՅ, ՈՐԴՈՅ ՄԵԾԻՆ ՀԱՍԱՆԱՅ, ՏԷՐ*

[2] *ԽՈՅԱԽԱՆ ԲԵՐԴՈՅ ԵՒ ԽԱՋԵՆՈՅ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԱՄՔԱՆ, ԴՈՒՍՏ[4] ԲԱՂԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ, ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ՄԵԾ ԵՒ ՀՈՂԱԿԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՈՒԽՏ-*

[3] *ԻՍ ԿԵՁԱՌՈՒԱՅ, ԵՒ ՏՈՒԱՔ[5], ՅԱՒԵՐՄԱՆ ՆԵՏՈՂԱՅ ԲԱՋՈՒՄ ԳԱՆՁԻՒՔ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ, ԵՒ ՏՈՒԱՔ ՅԱՄԷՆ ԱՄԻ Ի ՀԱՐԱՒՈ[Յ] ՎԱՃԱՌԷՆ Ի ԴԱՒԿԱՍ[6]*

---

[1] **И. Орбели**, hАсан Джалал, князь Хаченский, с. 154; **Բ. Ա. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 195-196:

[2] **Կիրակոս**, գլ. ԽԴ, էջ 313 (գլխի վերնագիրն է. «Վասն հարկահանացն, որ եկին ի ղանձէն», էջ 312): Բնագրում յիշատակուած բերդերի մասին մանրամասն տե՛ս Սլ. Սարգսեանի «Խաչենի ամրոցները» (2002 թ.) մենագրութեան մէջ: Իսկ *Դեդ* բերդանուան մի վիմագիր յիշատակութեան վերականգնման («Դեդան» տեսականով) մեր փորձի մասին տե՛ս աստ, էջ 305-306, 321:

[3] Տե՛ս **Գ. կաթ. Ցովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռոշեանք, էջ 168, 317: Հմմ. **Յ. եպ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի, հտ. Բ, էջ 195; **Կ. Կոստանեանց**, Վիմական տարեգիր. Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 92; **Է. Լ. Դանիէլեան**, Գանձասարի պատմութիւն, էջ 128-129:

[4] ԴՈՒՍՏՐ բառն այս բնագրում յայտնուել է, թերեւս, «գրագէտ» փորագրողի «նախաձեռնութիւն-վրիպակի» արդիւնքում: Նրան տրուած «պատուիրաթղթում», անշուշտ, պիտի լինէր ԹՈՒՆ, ինչպէս որ վերոնշեալ մի քանի վիմագրում (տե՛ս աստ, էջ 314, ծն. 3) կոչուած է Հասան Ջալալը, ճիշտ է, երբեմն՝ մի այնպիսի շարադասութեամբ, որ շփոթեցնում է ընթերցողին եւ հասկացւում լոկ փակագծերի յաւելումով. օր.՝ «Ես՝ Ջալալ Դաւլայս՝ որդի Վախտանգայ (եւ ամուսին իմ Մամքան), թոռն Բաղուց թագաւորին...»:

[5] ՏՈՒԱՔ բառի վերջին 3 տառերի փորուածքները կրասուաղով են լցուած, բայց մօտիկից «շօշափւում» են (Գ. Ցովսէփեանի մօտ՝ *տ(ե)սի* էր):

[6] Գ. Ցովսէփեանն այս տողի ՀԱՐԱՒՈ[Ց] բառի *փխմ.* հրատարակել է յամաւրէն»: Ճշգրիտ ընթերցել է արդէն վիմագրագէտ Գագիկ Սարգսեանը (որին խորհրդատուութեան

[4] *(Թվին ։ՈՂԷ։ [=1248 թ.]) ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՆ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ։ ՎԱՐԴԱՅ-ՊԵՏԵՐՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱՅԲԱՆՔՍ ԸՆԿԱԼԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՄԵՋ՝ ։Բ։ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ՋԱՄԷՆ ԵԿԵՂԵՑ-*

[6] *ԻՔՍ, ՋԱՒԱԳ ՋԱՏԻԿՆ ԻՆՁ ԵՒ ։Գ։ ՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ ՄԱՄՔԱՆԱՅ։ ԿԱՏԱՐԻՋՔ ԳՐՈՅՍ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ, ԻՍԿ ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ Ի ՄԵՐՈՅ ԿԱՄ ՅԱՒԱԳ-*

[7] *ԱՅ ԿԱՄ ՅԻՇԽԱՆԱՅ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴԱՅ, ՄԵՐ ՄԵՂԱՅՍ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԵՒ ։ՅԺԸ։ ՀԱՅՐԱՅՊԵՏԱՅՆ ՆՁՈՎԱԾ Է։ ԿԱՏԱՐԻՋՔՆ ԱՒՐՀՆԻՆ։*

Արդ՝ ակնյայտ է, որ կեչառոյքում Հասան Ջալալի եւ իր կնոջ փառահեղ նուիրատուութիւնը հնարաւոր չէ վերագրել մոնղոլների սկսած ծանրագոյն հալածանքներին անմիջապէս յաջորդող ժամանակին։ Հետեւաբար՝ այդ հալածանքները (ուստի եւ՝ Խաչէն-Խօխանաբերդի կործանումը) կարող են թուագրուել 1248 թուականից ոչ վաղ։ Ի դէպ, դա ինչ-որ չափով երեւում է նաեւ Կիրակոս Գանձակեցու շարադրանքի տրամաբանութիւնից։ Պատմիչի նշած վերջին թիւը դրուած է իր նախորդ (եւ հալածանքների նախօրեակին վերաբերող) գլխում եւ 1247-ն է. «Եւ ի գալ ամին երկրորդի, յորժամ ՈՂՋ էր թուականս Հայոց [=19.01.1247-18.01.1248 թթ.], առաքինի կաթողիկոսն Կոստանդին առաքէ եկեղեցեացն Արեւելից ընծայս... եւ մեծագոյն նափորտս ի սպաս պատարագին սրբոյ... Այլ եւ ամենայն զօրքն թաթար ոչ էին թշնամի խաչի եւ եկեղեցւոյ, այլ եւ յոյժ պատուէին եւ ընծայս մատուցանէին...»[1]։ Իսկ յաջորդն արդէն հալածանքների մասին գլուխներից մէկում նշուած 1249 թիւն է. «Յարձակեցան ի կողմանս Վրաց ի վերայ բազում գաւառաց... եւ զբազումս կոտորեցին եւ զեւս բազմագոյնս գերի վարեցին. զարս եւ զկանայս եւ զմանուկս գետամոյն առնէին անթիւ ի բազմութենէ։ Եւ այս գործեցաւ ի ՈՂԸ թուականին Հայոց [=1249 թ.]»[2]։

Կիրակոս Գանձակեցու նկարագրած աւերիչ «հարկային» արշաւանքից յետոյ (այսպիսով, 1248 կամ 1249 թ.) որեւէ աղբիւրում այլեւս չի տրւում նշանաւոր ամրոցի Խօխանաբերդ կամ Խաչէնաբերդ անունը։ Սակայն, այնուամենայնիւ, աւելի հաւանական է, որ մոնղոլ հարկահանների աւերածութիւնը վերաբերուել է միայն միջնաբերդին, իսկ նրա լանջին գտնուող իշխանական ապարանքի հատուածը

եւ իր վերծանութիւնը սիրալիր տրամադրելու համար յայտնում ենք մեր երախտագիտութիւնը)։ Այս *Հարաւ*-ը Գանձասարից 8 կմ արեւելք գտնուող Առաջաձոր գիւղի արեւմտեան եզրի մանրատեղանուններից է, որտեղ կայ սրբատեղի՝ աւերակ մատուռ (տե՛ս **Գ. Մ. Սարգսյան**, Արցախի վանքերն ու եկեղեցիները. Քարտեզ-ալբոմ, նկար 19)։ Վիմագրի այս տողի նախավերջին բառը վրիպակով է փորագրուած՝ ՎՃՈՒԵՆ *փխմ.* ՎՃԱՌԵՆ, որը հրատարակիչներն իրաւացիօրէն սրբագրել են։ Իսկ տողի վերջին բառը հրատարակիչները վերծանել են ԴՈՒԿԱՏ *փխմ.* ԴԱԻԿԱՏ, որը եւս արդէն ճշտել է Գ. Սարգսեանը։ Երրորդ տողաւարտի այս բառից յետոյ նախադասութիւնը շարունակւում է, ըստ ամենայնի՝ յաջորդ տողասկզբում նախապէս գրուած թուականից յետոյ (դա նաեւ կամարի քարերի երկրորդ շարքի սկիզբն է)։ Թուականի բոլոր վեց տառերն էլ քիչ աւելի մեծ են։ Փակագծով առանձնացնելու փոխարէն (ինչպէս արել ենք մենք), թուականի նշումը կարելի էր վերականգնել նաեւ բնագրի սկզբում։

[1] **Կիրակոս**, գլ. ԽԳ, էջ 311-312։

[2] Անդ, գլ. ԽԷ, էջ 320-321։

շարունակել է գոյատեւել եւ ծառայել իբրեւ Ներքին Խաչէնի Հասան-Ջալալեան իշխանատոհմի նստոց. այդ մասին պահպանուել են գոնէ ժողովրդական աւանդապատումները[1] (բայց խնդրի վերջնական լուծմանը կարելի է յանգել միայն հնագիտական պեղումների օգնութեամբ):

Աղբիւրագիտական համադիր քննութեամբ, թւում է, թէ յաջողւում է վեր հանել 1261 թ. մոնղոլների դաւադիր քաղաքականութեան հերթական շրջապտոյտին զոհ գնացած Հասան Ջալալի միակ որդի Իւանէ Աթաբակի հետ կապուած որոշ նոր իրողութիւններ: Կիրակոս Գանձակեցին խօսում է նրա մասին հօր նահատակութեան պահից սկսած եւ նշում լոկ երկրորդ անունը. «Այսպէս կատարեցաւ այրն անարատ եւ աստուածապաշտ՝ յընթացս կատարեալ եւ զհաւատոն պահեալ յԶԺ թուականին Հայոց [=1261 թ.]: Եւ առաքեաց որդի նորա Աթաբէկն [var. Աթապակն] առս հաւատարիմս եւ ետ գողանալ զնշխարս հօր իւրոյ, զի ընկեցեալ կայր ի ջրհոր մի ցամաք, զի պարսիկն, որ ի տան իւրում ունէր զնա ի կապանս... եցոյց խնդրողացն զմարմին նորա եւ պատմեաց զսքանչելի երեւումն: Եւ նոցա ժողովեալ խնդութեամբ եւ բարձեալ տարան զնա ի տուն իւր եւ թաղեցին ի վանքն Գանձասար, ի գերեզմանս հարց իւրոց... Եւ կալաւ զիշխանութիւն նորա Աթաբէկն [var. Աթապակն]՝ որդի նորա, հրամանաւ Հուլաւուին եւ Արղունին, այր սրբասնունդ, պարկեշտ եւ խոնարհամիտ եւ աղօթական, որպէս զմի ի սուրբ միայնակեցաց, զի ծնողքն նորա այսպէս սնուցին զնա»[2]: Իսկ իր եղերական մահուանից քիչ առաջ Աղուանից կաթողիկոսարանին նուիրաբերած Աւետարանի յիշատակարանում Հասան Ջալալը յատուկ գրում էր միակ որդու մասին այսպէս. «Ե{ս՝ Հասան Ջալալ Դաւլա[ր]}, չոգա[յ] յարեւելս առ արքայն Նետողաց, եւ ի կողմն հիւսիսոյ՝ տոհմիւ աղխաւորն իմով անձամբս վասն խաղաղութեան եկեղեցոյ: Ես եւ ամուսին իմ {Մամքան} եւ տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արեւելս հիւսիսոյ, եւ ես ընդ եզր աշխարհի գնացի առ թագաւորն, որ Մանգու խանն»[3] (ժամանակի նշումն է. «ի թ[ո]ւին Հայոց ԶԺ [=1261 թ.] տուի զսուրբ Աւետարանս ծաղկազարդ, յիշատակ աստուածասէր տիկնոջն {Մամքանայ} ի մեր լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից, ի հոգեւոր տէրն Ներսէս»[4]), վերջին հատուածում. «եւ միոյ մանկանս իմոյ Իվանի Աթաբակին պարգեւէ՛ զքո զառատ ողորմութիւնդ եւ զամենայն թշնամիս, որ ընկրկեալ սատակէ՛ եւ յամաւթ արա՛»[5]:

Սակայն կոշիկ անապատի երեք կից միանաւ եկեղեցիներից համեմատաբար մեծի (հարաւայինի) մուտքի առջեւ՝ արեւմուտքից կցուած սրահի մէջ, ունենք մի մեծ, տափակ գերեզմանաքար, որի վրայ կայ հետեւեալ ուշագրաւ 7-տողանոց

---

[1] Տե՛ս ՀՀԾՏ բառարան, հտ. 2, էջ 764-765; **Ս. Սարգսյան**, Խաչենի ամրոցները, էջ 76-77:

[2] **Կիրակոս**, գլ. ԿԳ, էջ 391-392:

[3] Տե՛ս ՄՄ Ձեռ. 378, թ. 8բ-9ա; **И. Орбели**, hАсан Джалал, князь Хаченский, с. 155-156; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 311:

[4] Տե՛ս թ. 9ա:

[5] Անդ: Իւանէիին յիշատակող վիմագրերից տե՛ս, օր.՝ Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 50, հմ 122; էջ 116, հմ 387; էջ 50, հմ 122: Մոնղոլ փոխարքայ Սարթախի մօտ Հասան Ջալալի գլխաւորութեամբ 1250 թ. մեկնած խմբի մասին տե՛ս **Կիրակոս**, գլ. ԾԵ, էջ 359:

տապանագիրը. «Այս է հան/գիստ իշխա/ն Խերխանին, / որդոյ Հասանին, / թոռին Բա/ղաց թագաւորին: / Թվին :ՉԼԵ: [=1286 թ.]»[1]: Բնագրի այս՝ «Թոռին Բաղաց թագաւորին» իւրայատուկ նշման շնորհիւ դժուար է չնկատել, որ խօսքը կարող է վերաբերել միայն Հասան Ջալալի «միոյ մանկանը»: Դա աւելի յստակ երեւում է նոյն եկեղեցու բեմի ճակատի ծաւալուն արձանագրութեան բովանդակութիւնից: Գրականութեան մէջ այդ վիմագիրը լաւ յայտնի է, բայց հիմնականում՝ շնորհիւ բնագրում յիշուած Մամիկոնեան իշխանների, որոնց անունները նշուած են նաեւ Զիկագոյի ծաղկազարդ Աւետարանի (1237 թ.) հետագայի յիշատակարանում[2] (Մաշտոցեան Մատենադարանում, բարեբախտաբար, կայ ձեռագրի մանրաժապաւէնը[3]): Վերջինիս 2բ էջի՝ ներկայումս գրեթէ լրիւ մաշուած բոլորագրից[4] ԺԹ դարի հապշտապ շղագրով 19 տողով արտագրուած (թ. 3ա), խօսուածքաբանութիւններով հարուստ եւ դժուարընթեռնելի, բայց ուշադիր վերլուծելու դէպքում գրեթէ ամբողջովին վերականգնուող բնագիրն է.

«Յուս{ովն Աստուծոյ[՞] [10-12 տառ]...ս[՞]} / ու Մարծպանս, Մամիկոնս ընկ/ալաք Շիկայքարայ Աստուածածինս, / որ էս որ առաջ եւ էլ մէզ ում[՞] յարկ/ից զէս եկեղեցիս ընդ խալանի / են արարել, արդ՝ մէք զէս խոստացաք / ու զՇիկայքարայ Աստուածածինն ետ իւր / ամենայն հողովն թերխան արարաք. եւ տվ{ին մե[՞]}/զ սպասաւորք եկեղեցոյս Ի աւր ժամ Զ{ատկ[՞]}/ին, Ա աւրն՝ հաւր մերոյ Հասանայ եւ {Ա[՞]} / աւրն՝ եղբաւր մերոյ Սեւադէի եւ / Բ աւրն՝ մաւր մերոյ Մամխաթուն{ին[՞]}: / Արդ՝ թէ յիմոց կամ յաւտարաց, / կամ ելազգե[ա]ց զէս գիրս խափանել / ջանայ ու զէս եկեղեցիս էլ ընդ հարկիւ / անել ջանա[յ]՝ մեր ազգի ու տակի մեղաց / տէր եղէցի, մասն եւ բաժին ընդուն/եսցի եւ ընդ Արիոսիցն առցէ. / գրեցաւ գիրս ի Թվ{ին[՞]... [6-8 տառ]}»: Բարեբախտաբար, թ. 15բ-ում նոյն բոլորագրով երկրորդ յիշատակարանի աւարտը չի կորցրել թուականը. «...եւ Աստուած զձեր / մեղս թողու իւր միւս անկամ գալըստ[ե]անն / յաշխարհս. Թվին ՉԻԴ [=1275 թ.], / Հոռի Ի գրեցաւ»: Ծանօթագրենք, որ Յ. Քիւրտեանը չի կարողացել վերծանել Հոռի ամսանունն ու նախորդող թուանշանները եւ ստացել է իրականութեան հետ կապ չունեցող «1461» թուականը[5]: Արտ. Մաթեւոսեանը բաց է թողել այս վերջին յիշատակարանը (Աւ. Սանջեանը՝ նոյնպէս), ինչպէս նաեւ առաջինի աւարտը (նախորդ ընթերցումների միւս ոչ քիչ վրիպումներն անօգտակար ենք համարում նշել):

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 29, հմր 59: «Թոռն Բաղաց թագաւորին» արտայայտութեան մասին տե՛ս աստ, էջ 314, ծն. 3 եւ ստորեւ:

[2] Տե՛ս Յ. Քիւրտեան, Չիքակոյի համալսարանին հայերէն ձեռագիրները, – «Սիոն», 1971, հմր 7-8, էջ 273-274; A. K. Sanjian, A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States, p. 234; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 905:

[3] ՄՄ, դրսի մանրաժապաւէններ, հմր 612:

[4] Իհարկէ, հրաշալի կը լիներ, եթէ մօտ ապագայում փորձ կատարուէր՝ մաշուած բոլորագիրը (այդպէս՝ նաեւ թ. 4բ-ի նոյնանման բոլորագրի հետքերը) ընթերցելու ճառագայթային յատուկ եղանակով:

[5] Յ. Քիւրտեան, Չիքակոյի համալսարանին հայերէն ձեռագիրները, էջ 274:

Ի դէպ, 1237 թ. այս ձեռագրի ստացողներ Գրիգոր եւ Վարդան եղբայրների (Գերգ Փառաշի ու Շահանդուխտի որդիներ) յիշատակարանը (թ. 313ա-բ բաց էջերում, «անցման երկաթագրով», միասիւն, ըստ ամենայնի՝ ինքնագիր. գրիչ-ծաղկողի էջերը երկսիւն են, ձեռագործիրը՝ տարբեր) ունի կարեւոր հատուած (աջ եզրում մի քանի տառի չափով վնասուած), որն ուշադիր ընթերցմամբ վերծանւում է այսպէս. «...յորս եմք տեղեակալ ի գլու{խս} / սահմանաց Խաչենոյ, ի սուբ ուխ{տս} / Գանձասար մենաստանէ, որ է {[5-6 տառ]} / դղեկիս Խաւխան ան{[2-3 տառ]}խա{[4-5 տառ]}/աջնորդուքեան {[5-6 տառ]}/տիս տեառն Յո{[5-6 տառ]}/ղթ վարդ{[5-6 տառ]} / աստուածարեալ {[5-6 տառ]} [թ. 313բ]//ղ պսակ եկեղեցոյ Քրիստոսի»: Յ. Քիւրտեանն այստեղ ընթերցել է. «...տեղակալ ի գլու(խ) սահմանաց Խաչենոյ, ի սուբ ուխ(տէն) Գանձասար մենաստան, որ ... Դղեկիս Սխրյազան հ... (առ)աջնորդուք(եան սուբ ուխ)տիս տեառն Յո(վանիսի անյա)ղթ վարդա(պետի) աստուածարեալ...»[1]: Ա. Սանջեանն ընթերցել է. «...ի գլու(խ) սահմանաց Խաչենոյ, ի սուբ ուխ(տէն) Գանձասար մենաստանէ, որ (է հանդէպ?) դղեկիս Սխոաղան (Սխսաղան?) Հ(աւքա)խա(ղաց), առաջնորդուք(եամբ սուբ ուխ)տիս տեառն Յո(վհանիսի անյա)ղթ վար(դապետի եւ) աստուածարել...»[2]: Գրեթէ նոյնն է Արտ. Մաթեւոսեանի մօտ[3] (մեր 2009 թ. գրքի էջ 250-ում, ցաւօք, լոկ կրկնել ենք այդ ընթերցումը): Բայց նշուած կարեւոր կտորի ճիշտ վերականգնումն է թւում հէնց այսպէս. «...որ է {հանդէպ} / դղեկիս Խաւխան ան{ուն} Խա{չէն, յառ}/աջնորդուքեան {սուբ ուխ}/տիս տեառն Յո{հանու անյա}/ղթ վարդ{ապետի}...»: Նկատելի է, որ «Դղեկիս» ձեւի նման՝ ս ստացական յօդը բնագրում չարաշահուած է ամենուր (օր.՝ յորս, վերոգրեալքս, զհարազատքս, եղբարս, զծերս, զորդիացեալս):

Իսկ Կոշիկ անապատի բեմի ճակատի 12-տողանոց վիմագիրն ամբողջապէս հասկանալի է դառնում, երբ բաւականին պարզ բովանդակութեան վերլուծութեան շնորհիւ ճշտում ենք առաջին շարքի կէս քարակտորի տեղը այդ շարքի վերջում, այլ ոչ թէ պակասող քարերի սկզբնամասում, ինչպէս որ դա, նոր ժամանակներում պահպանուած դիրքից ելնելով, արել է Ս. Բարխուդարեանը (նրա ծանօթագրումն է. «Գրուած է երեք շարք քարերի վրայ. Ա շարքից մնացել են երկուսը՝ առաջին քարի [ուղղելի՝ նախավերջին – Ա. Յ.] կէս մասը եւ վերջին քարը. Բ շարքի չորս քարերից պակասում է վերջինը. Գ շարքի չորս քարերն էլ տեղում են: Արձանագրութիւնն այս վիճակում է եղել նաեւ Մ. Բարխուդարեանցի ժամանակ»)[4]: Այդ դէպքում բնագիրը վերականգնւում է հետեւեալ ձեւով.

---

[1] Ց. Քիւրտեան, Չիքակոյի համալսարանին հայերէն ձեռագիրները, էջ 276:

[2] A. K. Sanjian, A Catalogue of medieval armenian Manuscripts in the United States, p. 233.

[3] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 199:

[4] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 29, հմր 58 (լուսանկ.՝ տախտ. VIII): Բարեբախտաբար, մենք հնարաւորութիւն ենք ունեցել՝ համեմատելու նաեւ Համլետ Պետրոսեանի՝ վերջերս արուած որակեալ լուսանկարները (որի համար մեր երախտագիտութիւնն ենք յայտնում հետազօտողին): Ըստ դրանց՝ ներկայումս եկեղեցու յատակին են ընկած նաեւ երկրորդ շարքի ճակատաքարերը:

[1] *{...[9-10 բառ, այդ թում՝ թերեւս] ...ՀԱՍԱՆ՝ ՀԱՅՐՆ ԻՄ, ՄԻՆԱՅԻՆ, ՈՋՈՒ-ՔԱՆ[՞]}ԱՅ ԵՒ ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ, ԹՈՌՆ*

[2] *{ԲԱՂԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ[՞]... [եւս 7-8 բառ, այդ թում՝ թերեւս] ... ԵՒ ՄԱՐԲ[՞] ԻՄՈ}Վ ։Գ։ ՀԵՏԻ Ի ՂԱՆՆ ԳՆԱՅԻ ՅԱՐԵՒ-*

[3] *{ԵԼՍ ՀԻՒՍԻՍՈՅ[՞]... [եւս 7-8 բառ]...}ՔԻ Ի{ՆՋ[՞]} ԻՄ ԱՋԳԷՆ ԹԱՓԵՅԻ Դ-*

[4] *ԱՏԱՍՏԱՆԱՒ։ ՋՋՐԿԱՆՔՆ ՄԵՐ Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՏՈ{ՂԱՅ... [եւս 6-7 բառ, այդ թում՝ թերեւս]...ՄԵՔ՝ ՍԵՒԱԴԱ[՞],}*

[5] *ԽԷՐԽԱՆ, ՄԱՐԾՊԱՆ, ՄԱՄԻԿՈՆ ԿԱՄԵՅԱՔ ՆՈՐՈԳԵԼ ՋՄԵՐ ԳԵՐԵՋՄԱՆԱ-ՏՈՒՆՍ։ ԵՄ՝ ԽԷՐԽԱՆՍ {...[2-3 բառ]... ՇԻՆ-}*

[6] *ԵՅԻ ՋՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՅԻ ՋԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ ՋԱՐԴԱՐԵՅԻ՝ ՄԽԻԹԱՐՔ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ{Յ ԱՄՈՒՍՆՈՅՆ[՞] ԱՍ-}*

[7] *Թէ[Ի]Մ՝ ՄԱՐՏԻՐՈՍԱ[Յ]։ ԵՄ՝ ՍԵՒԱԴԱ ՏՎԻ ՋԳՐ[Ի]ԳՈՐԱՆԱՆՅ, ՋՄՈՐԸՆԴԱ-ՆԱՆՅ, ՋԳԵՎՎԱՐԴԱՆՅ Ի ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ։ {[2-3 բառ՝ թերեւս] ՄԻԱԲԱՆՔ ՏՈՒԻՆ[՞] ՅԱ-}*

[8] *ՄՆ ։Ժ։ ԱՒՐ ԺԱՄ. ։Բ{։}՝ ՀԱՍԱՆԱ[Յ]՝ ՋԱՏԿԻՆ, ։Բ։՝ ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ՝ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ, ։Ա։՝ ՈՋՈՒ{ՔԱՆԱՅ, ։Ա։՝ ՍԵՒԱԴԱՅԻՆ,[՞]}*

[9] *։Բ։՝ ԽԷՐԽԱՆԻՆ՝ Յ{Ա}ՅՏՆՈՒԹԵԱՆՑՆ, ։Բ։՝ ԱՍԹԻՆ։ ՈՐՋԱ{Փ ՈՐ ... [եւս 4-5 բառ] ...ԹՈ՛Ղ}*

[10] *ԿԱՏԱՐԵՆ։ ՈՐ ՀԱԿԱՌԱԿԻ ԿԱՄ ՋՐԿԵԼ ՋԱՆԱՅ ՋԱՅՍ ՏԵՂԵՐՍ Ի ՍՈՒՐԲ ԳՒՈՐ-ԳԱՅ, ՈՍՈՒՆ ՆՈՐԱՅ ԱՍՏՈՒԱԾ ԵՂԻՑԻ՛,*

[11] *ԵՒ ԻՆՔՆ ՋՐԿԵ[Ա]Լ ԼԻՑԻ՛ ՅԱԻԻՏԵՆԻՑ ՀԱՅՐԵՆԵ[Ա]ՅՆ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՅՆ՝ ՊԱՐՏԱՊԱՆ ԱՌԱՋԻ ՔՐԻՍՏՈՍԻ։ ԳՐԵՅԱԻ ԳԻՐՍ*

[12] *Ի ԹՎԻՍ ՀԱՅՈՑ ։ՉԺԴ։ [=1265 թ.]։*

Արդ՝ երկու բնագրերից երեւում է, որ Սեւադայ, Մարծպան *եւ* Մամիկոն *եղբայրները կոշիկ անապատի շրջակայքի Մամիկոնեան իշխաններն էին, որոնց հայրը կոչուել է* Հասան, *իսկ մայրը՝* Մամախաթուն *(յիշատակարանում՝* Մամխաթուն*). Խաչէնում հաստատուած այդ* Հասան Բ Մամիկոնեանը *թոռն էր Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանքը 1221 թ. կառուցած Սարգիս Ա իշխանի եղբայր* Հասան Սմբատեանի *(նրանք թոռներն էին տոհմի հիմնադիր համարուող* Համազասպ-Մարծպանի*)*[1]*։ Մեր վիմագրի* Խէրխանը, *որը հանդէս է գալիս իբրեւ վանքի ամենամեծ նուիրատուն, իսկ բնագրի սկզբում ներկայացնում է իր հայրական ընտանիքը եւ նշում մոնղոլ «ղանի» մօտ երեք անգամ («։Գ։ հետի») գնալու մասին, եղել է ամուսինը բնագրում* երկիցս *յիշուած* Ասթիի *(այս անձնանուան այլ տարբե-*

---

[1] Մանրամասն տե՛ս **Ց. Քիւրտեան**, Դսեղի կամ Համազասպեան Մամիկոնեաններու տունը, – «Սիոն», 1970, հմր 3-4, էջ 161; **նոյնի՝** Նամակ խմբագրութեանը, – ԼՀԳ, 1971, հմր 5, էջ 95; **Գ. Սարգսյան**, Նոր նյութեր Մամիկոնյան-Համազասպյան տան վերաբերյալ, – ԼՀԳ, 1979, հմր 3, էջ 77-78; **Ռ. Մաթեւոսյան**, Պողչան ֆեոդալական տոհմի ծագումնաբանությունը, – ԼՀԳ, 1986, հմր 11, էջ 68; **Ս. Սարգսյան**, Խաչենի ամրոցները, էջ 87:

րակներ են՝ Ասթէ, Սիթի, Սթէ), որն էլ, ամենայն հաւանականութեամբ, եղել է տեղի Մամիկոնեան տան իշխանադուստրը եւ որի հոգեւորական եղբայրը յիշուած է Մաւտիրոս անունով: Սթէ (var. Աստի) անունն էր կրում նաեւ Դսեղի իշխան Սարգիս Ա Մամիկոնեանի կինը[1]:

Մեր կարծիքով, թերեւս, Դսեղի Մամիկոնեան-Համազասպեանների տոհմից է եղել նաեւ Հասան Ջալալի կինը՝ Մամքանը: 2012 թ. մենք վերստին ընթերցեցինք Գանձասարից 5 կմ արեւելք գտնուող Վաճառի Ս. Ստեփաննոս եկեղեցու միակ՝ հարաւային մուտքի արեւելեան կողի քարերից մէկի վրայ 13 կարճ տողերով գրուած, ցաւօք, անթուակիր վիմագիրը, որտեղ ասուած է. «Ես՝ Ասլան / ո[ւ] Մամաք / տվաք :Դ: հա/մադկի տեղ / ի Սբբ Ըստեփան/ոս. ի տարումն :Բ: / աւր ժամ սպասաւ/որքս տվին: Ա/րդ, ո[վ] ժամս խ/ափանէ կամ զհ/ողս խլէ՝ դա/տի Աստուծոյ եւ ամե/նայն սբբոց»[2]: *Եթէ մեր ենթադրութիւնը ճիշտ է, ապա այս բնագրերում յիշատակուած Մամքանը, ով իրեն կոչում է նաեւ Մամաք անուանատարբերակով, եղել է դուստրը Դսեղի Մամիկոնեաններից Ասլանբէկի (Լօռու վիմագրերում եւս նաեւ՝ Ասլան եւ Ասլանպէկ)*[3]*, որը վերոնշեալ Սարգսի ու նրա առաջին կին Սթէի որդի Մարծպան Բ-ի առաջնեկն էր (կինը՝ Մլքան)*[4]: *Կարծես թէ, անսովոր չէ նաեւ այն, որ իշխանազուն հայրն ուղեկցում էր հարսնացու տարուող դստերը ու նրա հետ միասին նուիրատուութիւններ թողնում փեսայի երկրի վանքերում:*

Ասլան/Ասլանբէկն ուղիղ ձեւով Իւանէ Աթաբակի մայր Մամքանի հայր է կոչուած Առաջաձոր գիւղի բարձրադիր լանջին ընկած ժայռաբեկորի վիմագրում, ո-

---

[1] **Հ. Քյուրտյան**, Նամակ խմբագրությանը, էջ 94-95: Հմմ. նաեւ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 491; **Ս. Ա. Ավագյան**, Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը, էջ 129-166; **նոյնի՝** Վիմագրական պրպտումներ, էջ 194-196; Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, էջ 56, հմր 63:

[2] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 79, հմր 237 (լուսանկ.՝ հմր 73, տախտ. XXI); **Ա. Յակոբեան**, Խաչէնի վիմագրերի Յովսէփ Օրբելու վերծանութիւնները. մէկ դար անց, – Միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադ. Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին (Ծաղկաձոր, 13-16 հոկտեմբերի, 2012 թ.), Զեկուցումների դրոյթներ, Եր., 2012, էջ 83-84: Վաճառի վանքի նորայայտ, «արդէն ընթերցուած եւ առաւել կարեւոր» 8 վիմագրերը տե՛ս **Հ. Պետրոսյան**, Վաճառի Ս. Ստեփաննոս վանքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները եւ նորահայտ արձանագրությունները, – Սեդրակ Բարխուդարեան-120. Գիտական հոդվածների ժողովածո, Խմբագրությամբ՝ **Գ. Գ. Սարգսյանի** եւ **Ա. Է. Հարությունյանի**, Եր., 2019, էջ 11-30:

[3] Մանրամասն տե՛ս **Ա. Յակոբեան**, Հասան Ջալալի կին Մամքանը դուստրն էր Դսեղի Մամիկոնեան Ասլանբէկի, – ՀԱ, ՃԻԹ տարի, 2015, սն. 159-186:

[4] Ասլանբէկի մասին (որի եղբայրներից Գրիգոր Բ-ն աւելի է յայտնի Դսեղի ու այլ վիմագրերից, ըստ ամենայնի՝ տոհմի աւագութիւնը շարունակած լինելու պատճառով) տե՛ս **Գ. Սարգսյան**, Բարձրաքաշ վանքը եւ նրա վիմագրությունը, – «Էջմիածին», 1951, հմր Թ-Ժ, էջ 45, հմր 14, հմր ԺԱ-ԺԲ, էջ 45, հմր 18, էջ 51, հմր 40, հմր 42; Դիվան հայ վիմագրության, պր. VI, Իջեւանի շրջան, էջ 85, հմր 177; Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, էջ 376, հմր 816, էջ 378, հմր 820, էջ 381, հմր 826, էջ 386, հմր 838, էջ 389, հմր 846; **Ց. Քիւրտեան**, Դսեղի կամ Համազասպեան Մամիկոնեաններու տունը, էջ 171, 174, 176-177; **նոյնի՝** Նամակ խմբագրությանը, էջ 94-95; **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 225; **Cl. Mutafian**, L'Arménie du Levant, t. II, p. 301.

րն ամենից ուշադիր ընթերցել է Խ. վրդ. Դադեանը[1]: 2015 թ. Սեպտեմբերին մենք կարողացել ենք տեղում թէկուզ եւ հապշտապ ստուգել վիմագիրը, ընդ որում՝ ձեռքի տակ ունենալով հնագէտ Գագիկ Սարգսեանի արած որակեալ լուսանկարները (որի համար յայտնում ենք նրան մեր երախտագիտութիւնը): Կրճատումներով բերում ենք Խ. Դադեանի՝ «Արարատ»-ի փոքրիկ յօդուածի մի կտորը. «...Խաչենու Առաջաձոր գիւղի ճապին ձորի քարաժայռի արձանագրութիւնն է: Տարաբաղդաբար Գեր. Մակար եպիսկոպոսի – Արցախ աշխատութեան մէջ միանգամայն աղաւաղուած է: Տե՛ս Արցախ, եր. 288-289: ... Քարաժայռի հիւսիս-արեւմտեան գրութիւնն է՝ «Յորժամ նկարեցան / Հզարահանքս թիւն .ՈՂԸ. էր [=1249 թ.]: Տէր Խաչինոյ Ջալալ: ... Հարաւ-արեւելեան ճակատի գրութիւնը՝ «Որս յարքայ Ջալալայ Դաւլայ եւ Աթաբակ որդի նորայ իշխան Խաչինոյ / և Ըռանայ ուքան[2] մանուկն Հասանայ սաղար՞ գոլած ու[3] մեծ փաթշայ[4] Ասլան պարոն հա/յր Մամմանայ սիրով ի սմայ այլ մեծամեծք իշխանք եւ զաւրք նոցա միայ/համուռ համակից միմեանց աւրհնեալ եւ զաւրացեալ եղիցին ի կամս Աստուծոյ...»[5]:

Նշենք, որ Ս. Բարխուդարեանը եւս վերծանել է տեղ-տեղ բաւականին քայքայուած այս արձանագրութիւնը: Սակայն, ըստ ամենայնի՝ նա արել է դա խիստ հապճեպ (ընդ սմին, առանց լուսանկար տեղադրելու) եւ այդ պահին ձեռքին ունենալով միայն Մ. Բարխուդարեանցի ընթերցումը (թէպէտ «Դիւանում» յղում է տալիս նաեւ Խ. Դադեանի յօդուածին)[6]: Այդ պատճառով նրա վերծանած «ավան պարոն հայր Միրանայ»-ի փոխարէն, անշուշտ, պիտի գերադասելի համարուի Խ. Դադեանի «Ասլան պարոն՝ հայր Մամմանայ» բնագիրը: Առաջին դէպքում պատճառը Սլ տառերի՝ բաւական լաւ երեւացող կցագրումն է ԱՍԼԱՆ բառի մէջ:

Ի դէպ, Առաջաձորի ժայռաբեկորի վիմագրի հատուածներից մէկի ուշադիր դիտարկումից կարելի է կատարել եւս մի կարեւոր (թէպէտ, միեւնոյնն է՝ վարկածային) եզրայանգում՝ Մամքան իշխանուհու՝ հէնց այս տեղում թաղուած լինելու մասին: Այդ հատուածը ժայռաբեկորի հարաւ-արեւմտեան կողի ներքեւի ձախ անկիւնում է եւ Խ. Դադեանի կողմից ընկալուել է իբրեւ տուեալ կողմի վերջին երեք՝ 8-10-րդ տողեր: Սակայն նախորդ՝ 3-7-րդ տողերից (բնագիրը՝ «ՏԷՐ ԵՂԻԱՅ ՇԻՆԵՑ ՋՍՈՒՐԲ ԱՆԱՊԱՏՍ ... ԱՅԼ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ ՄԻԱԲԱՆ») այն բաժանուած է կրկնաշրջանագծի մէջ ոճաւորուած հաւասարաթեւ խաչի պատկերով եւ, ի տար-

---

[1] Խ[աչիկ] Վ[արդապետ], Առաձ երկիր կամ աշխարհ, – «Արարատ», 1896, էջ 233-234:

[2] Անշուշտ, պիտի ընկալել՝ «եւ Ըռանայ *ու քան*», այսինքն՝ «եւ Առանի ու դեռ աւելի»:

[3] Իրականում փորագրուած է ոչ թէ «սաղար գոլած ու» կամ Ս. Բարխուդարեանի ենթադրած «սաղար պլած ու» (Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 89), այլ Մ-Ա կցագրով ՍԱՂՄ ԱՊՐԱԾ ԱՌ (այսինքն՝ «Աթաբակ ... մանուկն Հասանայ, սաղմ՝ ապրած առ մեծ փառշայ...»):

[4] Իրականում փորագրուած է ոչ թէ «փաթշայ», այլ ՓԱՌՇԱՑ (կամ գուցէ եւ՝ ՓԱԴՇԱՑ), որը, թերեւս, սեռական հոլովն է «փառաշ» տիտղոսի կամ պաշտօնի (հմմ. աստ, էջ 345՝ «Գերգ Փառաշ»): Պարսկերէն նշանակում է «ունակ», «կարող», «վարիչ» (Персидско-русский словарь. В 2-х томах. Под ред. **Ю. А. Рубинчика**, т. II, Москва, 1970, с. 225).

[5] Խ[աչիկ] Վ[արդապետ], Առաձ երկիր կամ աշխարհ, էջ 233-234: Ընդգծումը մերն է:

[6] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 87-89, ճ՝՞ 268:

բերութիւն նրանց՝ չունի տողատման գծեր: Իսկ այդպիսի գծերով են օժտուած նաեւ նոյն կողի ամենավերեւի (ՏԷՐ ԵՂԻԱՅ-ի գրառումից 5 մեծ եւ 4 փոքր խաչերով բաժանուած) 1-2-րդ տողերը (բնագիրն է. «ԳՐԵՑԱՆ, ՆԿԱՐԵՑԱՆ, ԿԱՏԱՐԵՑԱՆ ... ԲԱՐԵԽԱԻՍ ՀՈԳՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ Ի ՊԱՐԾԱՆՍ»), ինչպէս նաեւ հարաւ-արեւելեան կողի 10 տողերը (բնագիրն է. «ՈՐ Ա[ՍՏՈՒԱԾ]Յ[Ի] ԱՐՔԱՅ ՋԱԼԱԼՍ ԴԱԻԼԱՅ ԵՒ Ա-ԹԱԲԱԿ ՈՐԴԻՆ ՆՈՐԱՅ, ԻՇԽԱՆ ԽԱՋԻՆՈՅ / և ԸՌԱՆԱՅ ՈՒ ՔԱՆ ... ՏԱՅՂ Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՋԲԱՐԵՄՏՈՒԹԻՆ / ՀՈԳՈՅ և ՄԱՐՄՆՈՅ ԻՐԱՅՆ[Ի] ... ԱՄԷՆ»): Մեզ հետաքրքրող երեք տողերից առաջինը շեղութեամբ իջնում է ժայռաբեկորի եզրին զուգահեռ գծով եւ ուղղւում հաւասարաթեւ խաչի տակ, իսկ միւս երկու տողերը փորագրուած են միայն առաջինի ուղղուած կէսի տակ: Բնագիրն է. «ՄԱ՛ՅՐ Տ[ԵԱՌ]Ն, ՈՂՈՐՄԵԱՅ ՄԱՒՐՆ ԻՄ՝ ՅՈՒՍԱ/ՅԵԱՒ Ի ՄԻԱԾԻՆԴ ՔՈ, ԼՈՒՍ/ԱՒՈՐԵԱՅ ԸՆԴ Ս[ՈՒՐԲ]Ս ՔՈ»: Թւում է, թէ սա Իւանէ Աթաբակի իւրօրինակ որդիական մաղթանքն է, ով մի ահաւոր ծանր քաղաքական պահի (երբ հայրը բանտարկուած էր Թաւրիզում ու սպասում էր իր՝ ուխտադրուժ մոնղոլ իշխանաւորների պարագայում անխուսափելի մահկանացուին) ստիպուած է եղել թաղել իր վաղամեռիկ բարեպաշտուհի մօրը Առաջաձորի այս ժայռի տակ եւ թողնել նման համեստ տապանագիր՝ անգամ առանց հանգուցեալի անուան յիշատակման[2]: Նշենք նաեւ, որ հէնց ժայռաբեկորի մօտ ընկած է միջին չափերի մի խաչքարանման տապանաքար՝ բարձրաքանդակ, բայց անշուք մշակուած մեծ խաչապատկերով, որը ենթադրաբար կարող է լինել Մամքան իշխանուհու համեստ գերեզմանաքարը: Իսկ թէ արդեօ՞ք հանգուցեալի մարմինը թողնուել է այդ շիրիմում նաեւ յաջորդ՝ ոչ նոյնքան ողբերգական տարիներին, դա կարելի է ճշտել միայն խնամքով պեղելուց յետոյ:

Արդ՝ երբ Կոշիկ անապատի վիմագրում վանքի գլխաւոր նուիրատու Խէրխան իշխանն իր աներձագերի հետ միասին ասում է՝ «նորոգել զմեր գերեզմանատունս», նա նկատի ունի, անշուշտ, այն «տունը», որտեղ ինքն ընդամենը փեսայ էր: Մատուցուելիք պատարագների կտորում առաջինը նշուած Հասանը եւ Մամախաթունը, առաւել մեծ հաւանականութեամբ, Մամիկոնեան եղբայրների ծնողներն էին՝ ըստ Ջիկագոյի՝ 1237 թ. Աւետարանի յետագայի յիշատակարանի (եթէ այդտեղ

---

[1] Այս «ՈՐ Ա[ՍՏՈՒԱԾ]Յ ԱՐՔԱՅ ՋԱԼԱԼՍ» ընթերցում-վերծանումը մերն է, մասամբ՝ ըստ Մակար Բարխուդարեանցի (հմմ. «Արցախ», էջ 189):

[2] Յաւելենք նաեւ, որ յիրաւի երանելի Մամքան Մամիկոնեան բարեպաշտուհի իշխանուհին եւ իր հայր Ասլանբէկ Մամիկոնեան-Համազասպեանը ինչ-որ իւրայատուկ կապերով են կապուած եղել Գանձասարի վանքից արեւելք ընկած այս գիւղախմբին, որտեղ ցայսօր յիշւում է նաեւ Մամքան եկեղեցին կամ Մամքաեղցին: Հմմ. Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, էջ 83 («ՄԱՄՔԱԵՂՑՈՒՑ հիւսիս-արեւելք, գետակի միւս ափին...»; «ՄԱՄՔԱԵՂՑՈՒՑ դէպի Վանք գիւղը տանող ճամփին...»); **Ш. Мкртчян**, Историко-архитектурные памятники, с. 24 ("**Церковь Манка** (правильнее – Мамакан, по имени княгини Хачена) в Цмакаохе..."; նոյնը տե՛ս նաեւ **Ш. Мкртчян**, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха /Второе издание/, Ер., 1989, с. 24); **Գ. Մ. Սարգսյան**, Արցախի վանքերն ու եկեղեցիները. Քարտեզ-ալբոմ, նկար 128 («*Ծմ-2*, գ. Ծմակաւոր, Մարտակերտի շրջան, Եկեղեցի «Մամքան», հս. եզրին, 12-13-րդ դդ., կանգուն, խարխլուած: Կոորդինատները՝ N. 40 03 45,4, E. 46 35 02,2, Alt. 1108»):

յիշուած լինէր, օր.՝ Հասան Ջալալը, ապա սպասելի կը լինէր նաեւ իր կնոջ՝ Մամքանի մասին նշումը)։ Խէրխան – Իւանէի քոյրերից երկու անգամ է նշուած միայն Ռ[ու]զուխանը. առաջին տողում պահպանուել է լոկ նրա անուան սեռական հոլովի «{...}Ա3» վերջաւորութիւնը (այդ պահպանուած կտորի հիման վրայ Ս. Բարխուդարեանը շտապողաբար առաջարկում էր «{ՀԱՍԱՆ}Ա3» վերականգնումը[1], որը, սակայն, բովանդակութեան հաւանական կապ չի ստեղծում)։ Հնարաւոր չէ՞, արդեօք, դրանից ենթադրել, թէ նրա մոնղոլ ամուսինը վախճանուել էր 1261 թ. յետոյ (յիշենք Կիրակոս Գանձակեցու մօտ. «Իսկ դուստր Ջալալին, Ռուզուքան անուն, որ կին լեալ էր Բաւրա-նուինին՝ որդոյ Ջարմաղունին, առաջին գլխաւորի թաթարին, գնաց առ Տաւղուս խաթունն՝ կին Հուլաւուին, զի թափեսցէ զհայր իւր...»[2]) եւ նա ամուսնացել էր Խաչէնի Մամիկոնեան եղբայրներից մէկի հետ։ Եթէ այո՛, ապա դա, աւելի մեծ հաւանականութեամբ, կարող էր լինել աւագ եղբայր Սեւադան, որի անունով է, թերեւս, մէկ պատարագ խոստացուել բնագրի 8-րդ տողաւարտի կորած հատուածում՝ Ռզուխ{ան}-ի պատարագի նշումից յետոյ եւ Խէրխան ու Ասթի ամուսինների երկուական պատարագներից առաջ։ Ըստ Սեդրակ Բարխուդարեանի՝ Հասան Ջալալի այս դստերն է վերաբերում նաեւ Գանձասարի գաւթի կամարների յենակ արեւելեան որմնամոյթի խոյակի վերեւի 2-տողանոց վիմագիրը. «Ռզուքան/ին է խաչ[ս]»[3]։

Արդ՝ ինչո՞ւ պէտք է Իւանէ եւ Աթաբակ անունները մանկուց կրող Խաչէնի իշխանն ինչ-որ պահի ընդունէր նաեւ երրորդ՝ Խէրխան անուն։ Այս հարցին պատասխանելով՝ կարելի է ենթադրել, որ ինչ-որ չափով ինքնուրոյնութիւն դրսեւորող հայկական եւ վրացական ուժերի դէմ 1260-ական թթ. սկզբին կրկին ահագնացած մոնղոլական հալածանքները (որոնց զոհ գնացին Հասան Ջալալը եւ շատ ուրիշներ), հաւանաբար, ստիպել են դրանց թուլացման գործին լծուած Իւանէին (հմմ. «։Գ։ հետի ի ղանն գնացի», «զզրկանքն մեր ի ժամանակի Նետողաց», «[...] իմ ազգէն թափեցի դատաստանաւ»)՝ բռնատիրողներին ներկայանալու մի աւելի յարմար, «մոնղոլանման» անունով։ Ըստ Հր. Աճառեանի՝ ԺԳ դարում երիցս կիրառուած Խէրխան անուան ստուգաբանութեան մէջ յստակը հէնց խան/ղան թիւրքական բաղադրիչն է (հմմ. «կարելի է դնել հյ. խէր «հայր»+խան բառերից, այսինքն «նա՛ որի հայրը խան է, խանի որդի», ինչպէս կայ Խէրբէգ «բէգի որդի»)[4]։

Միւս հարցին՝ թէ ինչո՞ւ պիտի Հասան Ջալալի որդի Իւանէ Աթաբակ Խերխանը թաղուէր ոչ թէ ընտանիքի տոհմական գերեզմանատուն Գանձասարում, այլ կոշիկ անապատում, շատ աւելի դժուար (կամ պարզապէս անհնար) է պատաս-

---

[1] Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 29:
[2] Կիրակոս, գլ. ԿԳ, էջ 391:
[3] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 61, ին. 162: Ռուզուքանի քոյրերի՝ Ումեկի երկրորդ կինը դարձած Մամախաթունի (որդին՝ Վախտանգ) եւ Տարսայիճի կին Միհանջի (զաւակները՝ Ջալալ, Ասփա, Մամքան) մասին ողջ նիւթը տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 220-229:
[4] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 510-511:

խանել: Այն փաստը, որ Գանձասարի տարածքում նրա գերեզմանը չունենք, դեռ չի կարող հարցի սպառիչ պատասխանին օգնել: Այնտեղ գտնուած չեն նաեւ իր ծնողների եւ պապերից շատերի գերեզմանները, թէպէտ հաւաստի աղբիւրներից գիտենք, որ գոնէ նրանցից շատերը հէնց Գանձասարում են թաղուել:

Եւ վերջում. եթէ Հասան Ջալալի որդի Իւանէ Աթաբակը եւ Կոշիկ անապատի՝ «Բաղաց թագաւորի թոռ Հասանի» որդի Խերխանը նոյն անձնաւորութիւնն են, ապա մենք պէտք է ընտրութիւն կատարենք նաեւ Խաչէնի այդ իշխանի մահուան տարեթուի ճիշտ տարբերակի հարցում: Տապանագրի ՝ԶԼԵ: Թիւը (=9.01.1286-8.01.1287 թթ.) համադրելով Ստեփաննոս եպիսկոպոսի (Օրբէլեանի) հաղորդած թուերի հետ՝ ՌՄՁԹ/1289 [–2] կամ ԶԼՁ/736 [+551] = 1287 թ. (իսկ ամբողջական ադիւսակային բնագիրն է. «ՌՄՁԹ. / Ձմեռն խիստ եղեւ: Մեռան մեծ իշխանք ի Խաչէն՝ Աթաբակ, որդի Ջալալին, եւ Հասան, թոռն Դաւիթին, եւ ապա մեռաւ Ճարն ի Տփխիս: / ԶԼՁ [=9.01.1287-8.01.1288 թթ.]»)[1], թւում է, թէ կարելի է համոզուել, որ ո՛չ ճշգրիտ, այլ մօտաւոր պէտք է դիտուի հէնց վերջին աղբիւրի նշումը: Քանի որ այդտեղ աւելում է տուեալ տարուայ «ձմռանը» երեք անձանց վախճանի մասին, ապա նրանցից մէկնումէկի հարցում հեղինակն իր շարադրանքի բովում կարող էր նաեւ «կլորացնել». այնինչ հայկական տապանագրերը, կարծես թէ՝ առանց բացառութեան, արձանագրում են հանգուցեալի մահուան հէնց ճշգրիտ տարին: Նկատենք նաեւ, որ Հայոց «ԶԼՁ» – 736 թուականի (որը տեւել է 1287 թ. Յունուարի 9-ից մինչեւ 1288 թ. Յունուարի 8-ը[2]) առաջին ձմեռն սկսուել էր դեռ նախորդ՝ 1286 թ. Դեկտեմբերով: Ըստ այսմ՝ Իւանէ Աթաբակ Խերխան Հասան-Ջալալեան իշխանի մահուան իրական ժամանակը, մեծ հաւանականութեամբ, կարող է վերագրուել կա՛մ 1286 թուականի Դեկտեմբեր ամսին, կա՛մ, որպէս է՛լ աւելի «հաշտեցուցիչ» տարբերակ՝ 1287 թ. Յունուարի առաջին ութ օրերին[3]:

---

[1] Մանր ժամանակագրութիւններ, հտ. Ա, էջ 48:

[2] Տե՛ս **Հ. Ս. Բադալեան**, Օրացոյցի պատմութիւն, էջ 375:

[3] Իւանէ Աթաբակի Ջալալ որդու եւ միւս ժառանգների ու յաջորդների մասին ԺԴ եւ հետագայ դարերում մանրամասն տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբեան**, Խաչենի իշխանութիւնը, էջ 296-314; **Գ. Ե. Կիրակոսեան**, Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշաւանքների շրջանում, էջ 231-248; **Ա. Մաղալեան**, Արցախի մելիքութիւնները եւ մելիքական տները XVII–XIX դդ.:

մարզպանութիւնից այդ պահին կտրելով նրա հիւսիս-արեւելեան սահմանային Ուտիք, իսկ շուրջ երկու տասնամեակ անց նաեւ հարեւան Արցախ նահանգը (450-451-ին)՝ Սասանեաններըդրանք միացրին նորաստեղծ Առան/Աղուանք մարզպանութեանը: Մինչեւ 6 դարավերջ նոր երկրանուններն ընդունուեցին աջափնեակի հայ բնակչութեան կողմից, որը նաեւ փորձ արեց՝ դրանց մեկնաբանումը (ստուգաբանութիւնը) կատարելու հայկական լեզուա-մշակութային չենքի վրայ (Հայկեան Սիսակի եւ Առանի մասին առասպելը Խորենացու մօտ): Դրանից կարելի է նաեւ եզրակացնել, որ ձախափնեակի բուն-աղուանական մետաէթնոսի համախմբումն այդ պահին էլ դեռ չէր աւարտուել միասնական էթնոսի կազմաւորումով եւ «Աղուանք» ցեղանունը շարունակում էր մնալ լոկ հաւաքական արտանուն: Մաշտոցի եւ Բենիամին աղուան վարդապետի ստեղծած ու երկրում տարածած աղուաներէն գիրը (ճիշտ այնպէս, ինչպէս դրանից մէկ դար առաջ երկրի քրիստոնէացումը) պիտի նպաստէր այդ մետաէթնիկ ընդհանրութեան համախմբման աւարտմանը, սակայն, ըստ երեւոյթին, նոր գրի զարգացումը պակաս յաջող ընթացաւ, քան հարեւան Հայաստանում եւ Վիրքում (Քարթլի):

ե) Ջ դ. առաջին տասնամեակներին Աղուանից մարզպանութեան վարչական եւ հոգեւոր կենտրոնների տեղափոխումը էթնիկապէս հայկական աջափնեակ (դարասկզբին Կաւատ Սասանեան արքայի հրամանով կառուցուած Պարտաւ մայրաքաղաք) պայմանաւորեց այդ «երկրի» հետագայ զարգացումն առաւելապէս հայկական էթնո-քաղաքական եւ լեզուա-մշակութային աւանդների չենքի վրայ: Է դ. սկզբներին հիմնուած (թերեւս՝ 616/618 թ. «Պարսից ժողովում») «իշխան Աղուանից»-ի ինքնավարական հաստատութիւնը վստահուեց աջափնեայ Գարդմանացի հայկական իշխանատոհմին՝ առասպելական Հայկեան Առանի յետնորդներից մէկին (հետագայում՝ «Միհրանեաններ»), ապա Թ դարում՝ Շաքիի Բագրատուններին եւ կենտրոնական Արցախի՝ Խաչէնի «Առանշահիկներին», որ սերում էին վաղմիջնադարեան Ծաւդէացի հայկական իշխանատոհմից (առասպելի Առան նախահօր միւս յետնորդից): Վերջինիս նոր անուանումը, թերեւս, ստեղծուել էր գրական հողի վրայ, երբ Բուն Աղուանքի պետութեան վերջին Արշակունեաց թագաւոր Վաչագան Բարեպաշտի պաշտօնի իրանական կիսամոռացուած պաշտօնական «Առանշահ» (=«Առանի թագաւոր») անունը վրիպմամբ կապուել էր խորենացիական Առանի անուան հետ:

զ) Աւատական մասնատուածութեան շրջանում թագաւորութիւնների կարգավիճակ էին ձեռք բերել ոչ միայն Շաքիի (Բուն Աղուանքում) եւ Փառիսոսի (նախկին՝ Գարդմանացիք երկրամասում), այլեւ Գորոզուի (հարաւային Արցախում, հետագայում՝ Դիզակ) եւ Խաչէնի իշխանութիւնները: Դրանցից առաջինը տեղի Բագրատունեաց հայկական արքայատոհմի գլխաւորութեամբ հիմնադրուել էր, ըստ Մաշտոց Եղիվարդեցու «Պատմութեան» վերականգնուած բնագրի՝ 894 թ., իսկ վերջին երեքը՝ Ժ դարի երկրորդ կէսին: Ընդ որում, եթէ Շաքի – Հերէթի կամ «Երկրորդ Աղուանից» թագաւորութիւնը վերացաւ (միացուեց Կախէթի թագաւորութեանը) Ժ դարի վերջերին, ապա միւսները գոյատեւեցին մինչեւ ԺԱ դ. երկ-

րորդ կէսը եւ կործանուեցին սելջուկների հարուածներից: Ընդ սմին, կարելի է վերջնականապէս յաղթահարուած համարել Շաքիի Բագրատունեաց արքայատոհմի եւ Կուրի աջափնեակի Առանշահիկների ազգակցական կապի մասին նախկին վրիպեալ պատկերացումները, քանի որ, ինչպէս ճշտւում է, 838 եւ 853 թթ. յիշատակուած «Աղուանից իշխան» Յովհաննէսը եղել է ոչ թէ Սահլ Սմբատեան Առանշահիկի որդին (Սահլի միակ որդին Ատրներսեհն էր, ում արաբները կոչում էին Մուաւիա), այլ Շաքիի թագաւորութեան հիմնադիր Յովհաննէս-Համամ Բագրատունու (Համամ Արեւելցի) նոյնանուն պապը:

է) Ներքին ու Վերին Խաչէնի իշխանութիւնների բաժանումը ԺԲ դարի վերջերին անհրաժեշտ է կապել երկու անգամ ամուսնացած Հասան Մեծ Կրօնաւորեալի (որը նոյն՝ Բաղք – Սիւնիքի վերջին թագաւոր Հասան Գեռաքարեցին կամ Խաչէնցին էր) նոյնանուն որդիների՝ Վախտանգ Խօխանաբերդցու եւ Վախտանգ Հաթերքցու հետ: Նրանց մայրերը՝ Կատան ու Մամախաթունը, դուստրերն էին, համապատասխանաբար՝ Բաղաց նախավերջին թագաւոր Գրիգոր Բ-ի եւ Տաւուշի Մածնաբերդի Կիւրիկեան վերջին արքաներից մէկի՝ Կիւրիկէ Գ-ի:

ը) Դօփեաննների արեւմտահայէնեան իշխանատոհմի հիմքում նոյն Հասան Կրօնաւորեալի միւս որդին էր՝ Գրիգոր Ա Ծարեցին, ում որդի Հասանի հետ էր ամուսնացել Զաքարէ եւ Իւանէ նշանաւոր ամիրսպասալարների քոյր Դօփ իշխանուհին (հայրը՝ Սարգիս Զաքարեան)՝ Գրիգոր Բ Ծարեցու մայրը:

*թ) Գրականութեան մէջ շրջանառուող (սակայն՝ ոչ հաւաստի աղբիւրներում) Սակռեան իշխանատոհմի հիմքում ընկած էր ոչ թէ Հասան Կրօնաւորեալի պապի կամ հօրեղբօր անունը, այլ նրա առաջնեկի՝ Զաքարէի եւ Իւանէի քոյր Խորիշահի հետ ամուսնացած Վախտանգ Խօխանաբերդցու (Ներքին Խաչէնում) երկրորդ որդի եւ Գանձասարի կառուցող Հասան Զալալ Դօլայի կրտսեր եղբայր Զաքարէ – Նասրադօլայի մականունը: Այն, հաւանաբար, գալիս էր նրա կամ իր Խորիշահ մօր պապի՝ Զաքարէ Ա-ի՝ մեզ հասած աղբիւրներում չվկայուած մի անկանոն անուանակոչման ձեւից՝ *Զաքառ – Սակառ:*

ժ) Հասան Զալալ Դօլայի եւ Մամքանի (ով, հաւանաբար, դուստրն էր Դսեղի Մամիկոնեաններից Ասլանբէկ Մարծպանեանի) որդի Իւանէ Աթաբակն ունեցել է նաեւ մի երրորդ՝ «մոնղոլահունչ» անուն՝ Խերխան, որն արձանագրուած է իր աներձագերի՝ Խաչէնի Մամիկոնեանների տիրոյթներում գտնուող Կոշիկ անապատ վանքի վիմագրերում:

SUMMARY

Attempting to describe the work done in monography studying the royal and princely houses of Proper Albania and Eastern regions of Armenia from antiquity to the 13th century, the following main points can be concluded:

1) Proper Albanian lezgian-speaking tribes (according to Strabo – 26 of them) living on the territory of the left bank of the Kura River created a united kingdom only at the very beginning of the 1st century BC. Apparently, its governing family line was actually ethnically proper Albanian. In the northeast, the border of the state passed along the Derbent Pass and the Jalgan Range, that were included in the detailed listing of the rivers and cities of Albania by Claudius Ptolemy, which can already be successfully located. As for the mingled, but mostly Indo-European (protoarmenian-speaking) population of the right bank of the Kura river (subsequently – Utik' and Artsakh), it participated in the primary stage of formation, i.e. ethnoconsolidation of the Armenian ethnos (which happened as a result of the ethnomixation of the Biaina/Urartian kingdom), which is was completed in the first half of the 7th century BC.

2) The eastern, coastal half of the Albanian kingdom separated from it at the end of the ancient period (in the first half of the 3rd century AD), where the kingdoms of Masquts, Balasakan, etc. were formed. Thereafter, the sources stop calling the inhabitants of these areas as "Albanians", which leads us to the conclusion that the process of consolidation of proper Albanian tribes united to a single kingdom (it should have ended with the formation of a single ethnic group within an endoethnonym "Albanians") was not yet completed and "Albanians" continued to be a collective name, describing only metaethnical community, which united the entire population of this administrative-territorial unit as an exoethnonim.

3) A change of the royal dynasty took place in the Albanian kingdom at the end of the 3rd century (probably in 298) replacing the ancient dynasty which was originated from one of the proper Albanian tribes, by representatives of Parthian royal lineage of Arsacides (Vachagan 1st the Brave). They, probably, were akin to the Arsacides dynasty from the neighboring Masqut kingdom. In the 4th century the kingdoms/viceroyalties of the Eastern side of Armenia (Gardmanatsik', Tsavdēatsik' and Gorozuayk' – "Gargaratsik" who were separated from Syunik) - on behalf of the king of Greater Armenia, performed military Bdeshkh (Pitiashkh) functions with respect to the Albanian and Balasakan kingdoms on the left bank of the Kura, bearing supreme responsibility for the protection of their external (northern) borders.

4) In 428 A.D. shahanshah of Iran Bahram (Varahran) Gur abolished Arsacides kingdom in the Greater Armenia, and formed a new marzpanate instead. The Armn/Armenia Sassanids then separated the northeastern province of Utik' and approximately two decades later Artsakh (in 450-451), to include them in the newly formed neighboring marzpanate of Aran/Albania. By the end of the 5th century new names of that kingdom were accepted by the Armenian population on the right bank of the Kura, who even attempted to represent the meaning (semantics) of the names on the Armenian linguistic and cultural grounds (the legend of Sisak and Aran Haykids per Khorenatsy). It leads us to the conclusion that at this point the process of consolidation of proper Albanian metaethnical population was still not completed with the formation of a single ethnic group within endoethnonym "Albanians" and its exonym continued to remain collective. The creation and the outspreading of the Albanian language alphabet by Mashtots and Albanian priest Beniamin (as well as the Christianization of the country a century before) could have facilitated the completion of Albanian ethnoconsolidation. However, the development of the new alphabet has passed apparently less successful than in neighboring Armenia and Iberia (Kartli).

5) At the beginning of the 6th century the administrative and ecclesiastical center of the Albanian marzpanate have been moved from the left bank of the Kura River to the ethnically Armenian right bank (to the capital city Partaw, which was newly rebuilt by order of the Sasanid shahanshah Kavad).

This led to a further development of this "country" primarily on the basis of the Armenian ethno-political, cultural and linguistic traditions. Established in the beginning of the 7th century (apparently, on the so-called "Persian Council" in 616/618), the "Albanian prince" self-government institute was entrusted to the right-bank Armenian princely family of Gardmanatsi, a branch of the descendants of the legendary Aran Haykid (subsequently called "Mihranids"). In the 9th century the title moved to the Armenian Bagratids from Shaqi and "Aranshahiks" from central Artsakh (Khachēn), dating back to the early medieval Armenian princely family Tsavdēatsi, another branch of the descendants of the legendary Aran. The new family name "Aranshahiks" was created on literary grounds as a result of the erroneous associated matching of the half-forgotten official Iranian name of the position of the last Arsacid Albanian king Vachagan the Pious ("Aranshah") with the name of the eponym for Aran per Movsēs Khorenatsi.

6) In the period of feudal fragmentation a kingdom status was given not only to the Duchies Shaqi/Herethi (in Proper Albania) and P'arisos (early medieval region Gardmanatsik', on the right bank of the Kura), but also to Gorozu (in southern Artsakh, later – Dizak) and Khachēn. The first kingdom led by a local Armenian royal family Bagratids was founded (according to the restored original text of "The History" by Mashtots Ełivardetsi) in 894, and the last three were founded in the second half of the 10th century. Whereas the kingdom of Shaqi or "The Second Albanian kingdom" ceased to exist by the end of the 10th century (as a consequence of accession to the kingdom of Kakhethi), the three kingdoms on the right bank of the Kura lasted until the second half of the 11th century, and fell under the onslaught of saljuks. Thus, we can conclude that the existed erroneous assumption of kinship between the royal family Bagratids in Shaqi and Aranshahiks of the right bank of the Kura in the literature has already been overcome, as it is clarified that "Albanian prince" Yovhannēs mentioned in 838 and 853 was not the son of Sahl Smbatean Aranshahik (his only son Atrnerseh was called Mu'awiya by the Arabs), and he was the homonym grandfather of Yovhannēs-Hamam Bagratid (Hamam Areveltsi), the founder of the Shaqi kingdom.

7) The separation of Duchies of Lower and Upper Khachēn at the end of 12th century should be associated with the two elder homonym sons of Hassan Great the Hermit (also known as – Hassan from Gerakar or from Khachēn, the last king of Bałk' – Siunik'), who married twice and named both his firstborns after his father (Vakhtang from Khokhanaberd and Vakhtang from Hatherk'). Their mothers Kata and Mamakhathun were daughters of, respectively, the penultimate king of Bałk' Grigor II and one of the last kings of Kiurikids from Tawush, Matsnaberd Kiurikē III.

8) The founder of the West Khachēn princely family of Dop'eans was another son of the same Hassan the Hermit – Grigor I from Tsar, whose son Hassan I married Princess Dop' – the sister of famous amirspasalars Zak'arē and Ivanē (amirspasalar Sargis Zak'arean's sons) and the mother of Grigor II from Tsar.

9) The title of princely family Sakreants/Sakareants appearing in the literature (but not in the authentic sources) owed its origins not to the name of Hassan the Hermit's grandfather or uncle, but his grandson Zak'arē – Nasradola who was the younger brother of Hassan-Jalal Dola – the famous churchwarden of the Gandzasar temple. The father of the latters – Vakhtang from Khokhanaberd (Hassan the Hermit's eldest son), was married to Khorishah, the daughter of amirspasalar Sargis – the son of Zak'arē I, and the third name (nickname) of junior Zak'arē was apparently related to the non-standard form, unattested in the sources that reached us, of his name or his maternal great-grandfather (*Zak'ar – Sakar).

10) Ivanē-Athabak, son of Hassan-Jalal Dola and Mamqan (who, apparently, was the daughter of Aslanbēk son of Martspan Mamikonean from Dsel), also had the third, "mongolian sounding" name – Kherkhan, attested in lapidary inscriptions in Koshik-anapat monastery, which was in the possessions of his brothers-in-law Khachēn Mamikonids.

РЕЗЮМЕ

Пытаясь обобщить проделанную в монографии работу по рассмотрению проблем царских и княжеских родов Собственно Албании и Восточных краев Армении с античности до XIII века, можно прийти к следующим основным заключениям:

1) Проживавшие на левобережье реки Кура собственно албанские лезгиноязычные племена (согласно Страбону – 26) лишь в нач. I в. до н. э. объединились в едином царстве. Его правящий род, вероятно, был этнически именно собственно албанским. На северо-востоке граница государства проходила по Дербентскому проходу и Джалганскому хребту, куда доходило и подробное перечисление Клавдием Птолемеем рек и городов Албании, которые уже успешно локализуются. Разноплеменное же, но в основном индоевропейское (протоармяноязычное) население правобережья Куры (впоследствии – Утик'а и Арцаха) приняло участие в основной стадии образования армянского этноса (произошедшего в результате этноконсолидации – этномиксации в Биайнийском/Урартском государстве), которое завершилось в первой пол. VII в. до н. э.

2) В конце античного периода (в первой пол. III в. н. э.) от Албанского царства отделилась его восточная, приморская половина, и там образовались царства Маскутов, Баласакан и т. д. После этого источники перестают называть насельников этих областей "албанцами", из чего можно заключить, что процесс консолидации объединившихся в едином царстве собственно албанских племен еще не завершился образованием единого этноса под самоназванием (эндоэтнонимом) "албанцы", и это название продолжало оставаться собирательным, характеризуя лишь метаэтническую общность, объединявшую всё население данной административно-территориальной единицы, как иноназвание (экзоэтноним).

3) В конце III в. (вероятно, в 298 г.) в Албании сменилась царская династия, и вместо династии, восходящей к одному из собственно албанских племен, на престол воссели представители парфянского царского рода Аршакидов (Вачаган I Храбрый). Они, возможно, были родственны династии Аршакидов из соседнего Маскутского царства. В IV в. княжества-наместничества Восточной стороны Армении (Гардманацик', Ц'авдэацик' и отделившийся от Сюника Горозуайк' – "Гаргарацик") от имени царя Великой Армении выполняли военные бдешхские (питиашхские) функции по отношению к Албанскому и Баласаканскому царствам на левобережье Куры, неся верховную ответственность за защиту их внешних (северных) границ.

4) В 428 г. шаханшах Ирана Бахрам (Варахран) Гур упразднил царство Аршакидов в Великой Армении, и из образованного тогда же на его месте марзпанства Армн/Армения Сасаниды отделили северо-восточную провинцию Утик', а примерно через два десятилетия и Арцах (в 450-451-ом), включив их в состав новообразованного соседнего марзпанства Аран/Албания. К концу V в. новые названия этой страны были приняты армянским населением правобережья Куры, в среде которого даже появились попытки представить смысл (семантику) этих названий на армянской культурно-языковой почве (легенда о Сисаке и Аране hАйкидах у Хоренаци). Из этого можно заключить, что также и к этому времени процесс консолидации собственно албанской метаэтнической общности еще не завершился образованием единого этноса под этнонимом "албанцы", а это его иноназвание продолжало оставаться лишь собирательным. Завершению албанской этноконсолидации могло способствовать создание и распространение в стране Маштоцем и иереем-албанцем Бениамином письмен для албанского языка (также как и за век до этого христианизация страны), однако развитие новой письменности прошло, по-видимому, менее удачно, чем в соседней Армении и Иверии (Картли).

5) В начале VI в. административный и церковный центры Албанского марзпанства были перенесены с левобережья Куры на этнически армянское правобережье (во вновь построенную по

приказу шаханшаха Кавада Сасанида столицу Партав), и это обусловило дальнейшее развитие "страны" преимущественно на базе армянских этно-политических и культурно-языковых традиций. Учрежденный в нач. VII в. (вероятно, на "Персидском соборе" 616/618 г.) институт самоуправления "Князь Албании" был доверен правобережному армянскому княжескому роду Гардманаци, ветви потомков легендарного Арана hАйкида (впоследствии – "Миhраниды"), а в IX веке он перешел к армянским Багратидам из Шаки и "Араншаhикам" центрального Арцаха – Хачэна, восходящим к раннесредневековому армянскому княжескому роду Ц'авдэаци, другой ветви потомков легендарного Арана. Новое название их рода "Араншаhик" возникло на литературной почве, когда подзабытое официальное иранское название должности последнего Аршакидского царя Албанского государства Вачагана Благочестивого "Араншаh" было ошибочно связано с именем эпонима Арана по Мовсэсу Хоренаци.

6) В период феодальной раздробленности статус царств получили княжества не только Шаки/Эрети (в Собственно Албании) и П'арисоса (в раннесредневековом крае Гардманацик', на правом берегу Куры), но и Горозу (в южном Арцахе, впоследствии – Дизак) и Хачэна. Первое царство во главе с местным армянским царским родом Багратидов было основано (по восстановленному тексту "Истории" Маштоца Ел'ивардеци) в 894 г., а последние три – во второй пол. X в. При этом, если царство Шаки или "Второе Албанское царство" перестало существовать к концу X в. (вследствие его присоединения к царству Кахети), то три царства на правобережье Куры просуществовали до второй пол. XI века и пали под натиском сельджуков. Можно считать, что уже преодолено бытовавшее в литературе ошибочное допущение о родственной связи между царским родом Багратидов в Шаки и Араншаhиками правобережья Куры, так как уточняется, что "князь Албании" Йовhаннэс, упомянутый в 838 и 853 гг., был не сыном Саhла Смбатяна Араншаhика (его единственного сына Атрнерсеha арабы звали Муавией), а одноименным дедом Йовhаннэса-hАмама Багратида (hАмам Аревелци), основателя царства Шаки.

7) Разделение княжеств Нижнего и Верхнего Хачэна в конце XII в. необходимо связать с двумя одноименными старшими сыновьями hАсана Отшельника Великого (он же – hАсан Геракарский или Хачэнский, последний царь Бал'к'а – Сюник'а), который женился дважды и обоих своих первенцев назвал именем своего отца (Вахтанг Хоханабердский и Вахтанг hАтерк'ский). Их матери Ката и Мамахат'ун были дочерьми, соответственно, предпоследнего царя Бал'к'а Григора II и одного из последних царей Кюрикидов Тавушского Мац'наберда Кюрикэ III.

8) Основателем западнохачэнского княжеского рода Доп'янов был другой сын того же hАсана Отшельника – Григор I Ц'ареци, за сына которого hАсана вышла замуж княгиня Доп', сестра знаменитых амирспасаларов Зак'арэ и Иванэ (сыновей амирспасалара Саргиса Зак'аряна) и мать Григора II Ц'арского.

9) Название княжеского рода Сакрянц (Сакарянц), фигурирующего в литературе (но не в аутентичных источниках), было обязано своим возникновением имени не деда или дяди hАсана Отшельника, а его внука Зак'арэ – Насрадолы, который был младшим братом знаменитого ктитора Гандзасарского храма hАсан-Джалала. Отец последних – Вахтанг Хоханабердский (старший сын hАсана Отшельника), был женат на Хоришаh, дочери амирспасалара Саргиса, сына Зак'арэ I, и третье имя (прозвище) младшего Зак'арэ, вероятно, было связано с незасвидетельствованной в дошедших до нас источниках нестандартной формой его имени или имени его прадеда по матери – *Зак'ар – Сакар.

10) Иванэ-Атабак, сын hАсан-Джалала Долы и Мамк'ан (которая, видимо, была дочерью Асланбэка, сына Марц'пана Мамиконяна из Дсеха), имел еще и третье, "монголозвучное" имя – Херхан, засвидетельствованное в лапидарных надписях центральноарцахского монастыря Кошик-анапат, который находился во владениях его шуринов – Хачэнских Мамиконидов.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

Աբրահամ Աղբաթանեցի, Թուղթք, Գիտա-քննական բնագիրը՝ **Պ. Մուրադեանի, Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Դ, Անթիլիաս, 2005, էջ 3-20

Աբրահամ Աղբաթանեցի, Պատասխանի ի Հայոց թղթոյն Մխիթարա Ամարասա եպիսկոպոսի, Գիտա-քննական բնագիրը՝ **Ա. Յակոբեանի**, – ՄՀ, հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 21-37

Աբրահամ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, Հրատ. **Հ. Ս. Ճեմճեմեան**, Վենետիկ – Ս. Ղազար, 1977

Աբրահամ Խոստովանող, Վկայք Արեւելից, Թարգմանութիւն յատորականէն, Աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Մկրտչեան**, Վաղարշապատ, 1897

Աբրահամյան Ա. Գ., Անահիտ Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944

Աբրահամյան Աշ., Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, Եր., 1940

Աբրահամյան Ռ., Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Եր., 1965

Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ՝ **Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց**, Տփղիս, 1909

Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Աշխարհաբար թարգմանությունն ներածականով ու ծանոթություններով՝ **Ա. Տեր-Ղեւոնդյանի**, Եր., 1977

Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), Թարգմ. հուն. բնագրից՝ **Հ. Բարթիկյանի**, Առաջաբան եւ ծանոթագրություններ՝ **Ա. Տեր-Ղեւոնդյանի**, – «Էջմիածին», 1966, հմր Է, էջ 28-34, հմր Ը, էջ 46-51, հմր Թ-Ժ, էջ 79-87

Ադոնց Ն., Պատմական ուսումնասիրութիւններ, Լոյս ընծայեց **Ա. Խոնդկարեան**, Պարիս, 1948

Ադոնց Ն., Քննութիւն Մովսէս Կաղանկատուացւոյ, Աշխատասիրել, ծանոթագրել եւ ներածությունը գրել է **Պ. Հովհաննիսյանը**, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 2005

Աթայան Գ., Տող բերդաքաղաքի պատմություն, Եր., 2010

Ալիշան Հ. Ղ., Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ – Ս. Ղազար, 1890

Ալիշան Հ. Ղ., Արցախ, Եր., 1993

Ալիշան Հ. Ղ., Հայապատում, հտ. Բ, Վենետիկ – Ս. Ղազար, 1901

Ալիշան Հ. Ղ., Շիրակ. Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ – Ս. Ղազար, 1881

Ալիշան Հ. Ղ., Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ – Ս. Ղազար, 1893

Ալիշան Հ. Ղ., Սիսուան, Վենետիկ – Ս. Ղազար, 1885

Ալիշան Հ. Ղ., Տեղագրութիւն Հայաստանի – Արցախ, – «Բազմավէպ», Վենետիկ – Ս. Ղազար, 1988, էջ 228-273 1989, էջ 186-220, 1990, էջ 73-100, 346-365

Ախվերդյան Գ., Նամակներ (Գրական ժառանգութիւն. 3), Եր., 1964

Ակինեան Հ. Ն., Բանասիրական հատակոտորներ. 3. Ե՞րբ գրած է Ուխտանէս իր Պատմութիւնը – «Աւետիք», Բէյրութ, 1944, հմր 5-8, էջ 57

Ակինեան Հ. Ն., Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920

Ակինեան Հ. Ն., Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1908

Ակինեան Հ. Ն., Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970

Ակինեան Հ. Ն., Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ, – «Մատենագրական հետազօտութիւններ», հտ. Բ, Վիեննա, 1924

Աղաբեկյան Մ. Ա., Ստուգաբանական դիտողություններ «Աղուանք» տեղանվան վերաբերյալ, – ՊԲՀ, 1990, հմր 1, էջ 168-177

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հտ. Ա, Եր., 1971, հտ. Բ, Եր., 1973, հտ. Գ, Եր., 1977, հտ. Դ, Եր., 1979

Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913

Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Եր., 1942, հտ. Բ, Եր., 1944, հտ. Գ, Եր., 1946, հտ. Դ, Եր., 1948, հտ. Ե, Եր., 1962

Աճառյան Հ., Հայոց գրերը, Եր., 1984

Ամատունի Ս. վրդ., Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականները, Վաղարշապատ, 1911

Ամիրանաշվիլի Շ., Վաղ-սասանեան դարաշրջանի արծաթեայ սկիհը Արմազիսխեւիի պեղումներից, – Թբիլիսի 1500. Յոբելեանական ժողովածոյ, Թբիլիսի, 1958, էջ 85-93 (վրացերէն)

Այվազյան Ս., Դադիվանքի հոգեւոր շինությունների կառուցման ժամանակագրական հաջորդականությունը, – ՊԲՀ, 2006, հմր 3, էջ 199-218

Անանեան Հ. Պ., Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վենետիկ – Ս. Ղազար, 1960 (վերահրատ.՝ Վենետիկ – Ս. Ղազար, 1998)

Անանեան Հ. Պ., Քննութիւն հայ եկեղեցւոյ պատմութեան Ե եւ Զ դարերու շրջանին, Վենետիկ – Ս. Ղազար, 1991
